

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**Դ. ԶԱՀՈՒԿՅԱՆ**

**ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՏՈՐ II**

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՑԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1962

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

Г. ДЖАУКЯН

И С Т О Р И Я  
Я З Ы К О З Н А И Я

Т О М II

ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА  
ЕРЕВАН—1962

## ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Սույն ամսատուրյան առաջին հատորը, որը բնդգրելում էր նին ժամանակներից մինչև XIX դարի վերջն ընկած շրջանը, մեր հրատարակությամբ լույս է տեսել 1960 թ.։  
Ներկա հատորում նենայում է XX դարը, ներառյալ նաև սովետական լեզվաբանությունը։

Գիրքը նախատեսված է բանասիրական Փակուլտետների ուսանողների, ասպիրանտների և բնդիաներապես լեզվաբանության հարցերն ուսումնասիրողների համար։

Հրատարակում է  
Օթևական համալսարանի  
Խմբագրական-հրատարակչական խորհրդի  
որոշմամբ

Գ

ՍԻՍՏԵՄԱՅԻՆ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ  
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆ

(Եռագույն լեզվաբանություն—XX դար)

## ԱՌԱՋԻՆ ՀԱՏՎԱԾ

# ՆԱԽԱՍՊՈՎԵՏԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա.Ի.Ա.ՉԻ. ԵՆԹԱՇՐՋԱՆ  
(1900—1920-ական թվականներ)

## ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԻՆՔՈՆԻՉԴՄ

### ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ենթաշրջանի լեզվաբանական ուղղությունները և նրանց ձևավորման նախադրյալներն ու պայմանները.— Այս ենթաշրջանը համընկնում է իմպերիալիզմի տիրապետության և Հռկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեռլյուցիայի հաղթանակի դարաշրջանի հետ: *XIX* դ. վերջում և *XX* դ. սկզբում կապիտալիզմը վերջնականացնես գերածում է իմպերիալիզմի՝ իր զարգացման բարձրագույն և միաժամանակ վերջին փուլին: Գտեսնված չափով սրվում են բուրժուական հասարակության հակասությունները, որոնք իրենց հերթին տանում են դեպի իմպերիալիստական պատերազմներ և դասակարգային պայքարի աննախընթաց սրում: Առաջին համաշխարհային պատերազմը ցնցում է կապիտալիստական հասարակության հիմքերը: Հռկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեռլյուցիան բաց է անում կապիտալիզմի կործանման և սոցիալիզմի հաղթանակի դարաշրջանը, աշխարհը բաժանում երկու լագերի՝ կապիտալիստական և սոցիալիստական: Այս հանգամանքը իր կնիքն է դնում գիտության, այդ թվում և լեզվաբանական գիտու-

թյան զարգացման վրա՝ հանգեցնելով այդ գիտության զարգացման երկու տարբեր ընթացքների:

Նախասովետական շրջանում և սովետական շրջանին ժամանակակից արտասահմանյան իրականության մեջ տեղի ունեցած տնտեսական, քաղաքական և ընդհանուր իդեոլոգիական փոփոխությունները բնականարար ազդում են լեզվաբանության ընթացքի վրա: Եթե լեզվաբանությունը մի կողմից՝ մեծ նվաճումների է հասնում լեզվական հետազոտության եղանակների կատարելագործման, լեզվի և մյուս երեսույթների փոխհարաբերությունների բացահայտման, առանձին լեզուների ու լեզվախմբերի ուսումնասիրության մեջ, ապա մյուս կողմից՝ լեզվական երեսույթների մեկնաբանության մեջ խորանում են իդեալիզմը և պատմականությունից կատարվող նահանջը: Լեզվաբանական հոսանքների ձևավորման մեջ առանձնապես կարևոր գեր են խաղում իդեոլոգիական բնագավառում կատարված տեղաշարժերը, որոնք վերջին հաշվով պայմանավորված են տնտեսական տեղաշարժերի բնույթով:

Այս ենթաշրջանի լեզվաբանության համար նախադրյալներ են ստեղծվում փիլիսոփայության, տրամաբանության, հոգեբանության և այլ գիտությունների զարգացման ողջ ընթացքով: Մարդաբանության, ազգագրության և այլ գիտությունների զարգացումը ևս որոշակի ազդեցություն է թողնում լեզվաբանության վրա, որտեղ շատերը լեզվի հարցերը սերտորեն կապում են մարդու զարգացման, ժողովուրդների կուլտուրայի զարգացման առանձնահատկությունների հետ: Լեզվաբանության մեջ այս ենթաշրջանում նկատվում է մի կողմից՝ երիտքերականների սկզբունքների և հետազոտության եղանակների նկատմամբ քննադատության ուժեղացում, մյուս կողմից՝ լեզվական նյութի սիստեմավորման նոր, ուացիոնալ սկզբունքների որոնումներ, պատմական ու ստատիկ հայեցակետերի փոխհարաբերությունը պարզելու տենդենցներ: Առաջատար է դառնում լեզվի ֆունկցիոնալ քննության հայեցակետը՝ այդ բառի լայն առումով: Լեզվի՝ հասարակական հաղորդակցական ֆունկցիան, լեզվի արտահայտչական կողմը (ֆունկցիան), լեզվի կազմիշ տարրերի ֆունկցիոնալ արժեքը և այլն,—այս բոլորը դառնում են քննության առարկա:

Այս ենթաշրջանում տարածում գտած գիտությական-տրամաբանական որոշ հոսանքներ լեզվաբանության վրա ազդեցություն են թողնում հատկապես հաշորդ ենթաշրջանում: Այդ պատճառով էլ դրանց մասին կխոսենք վերջինիս հետ կապված: Այս-

տեղ, սակայն, անհրաժեշտ ենք համարում խոսել մի քանիսի մասին՝ նկատի ունենալով նրանց ընդհանուր ազգեցությունը նաև այս ենթաշրջանի մտքերի վրա։ Իհարկե, այս դեպքում մենք խոսելու ենք այդ հոսանքների այն կողմերի մասին, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվում են լեզվաբանության ու նրա պատմության հետ։ Դրանցից հատկապես նշելի են XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին տարածում գտած՝ Թերգոսոնի ալոգիկական ինտուիտիվիզմը, Հուսեղի ֆենոմենոլոգիական փիլիսոփայությունը, մախիզմը, նեոկանտականությունը, նեոհեգելականությունը, այլև ամերիկյան պրագմատիզմը։ Նշելի է, որ XX դ. փիլիսոփայության մեջ տրամաբանության հարցերը հատուկ ուշադրության առարկա են դառնում։

Ֆրանսիացի փիլիսոփա Անրի Թերգոսոնը (1859—1941) հանդես է գալիս տրամաբանական մտածողության, ինտելեկտի քննադատությամբ<sup>1</sup>։ Ըստ Թերգոսոնի՝ մարդկային բանականության (ինտելեկտի) նպատակը իրականության իմացումը չէ, իրականություն, որը ոչ մի կայուն բան չունի, որի մեջ ամեն ինչ փոփոխության ենթակա է։ Իմացության պայմանը փոփոխականն ու շարժականը անփոփոխի ու անշարժի, անընդհատականությունը ընդհատականի վերածելն է, որ հիմք է տալիս իրականության վերաբերյալ հասկացություններ կազմելու համար։ Հասկացությունները ոչ թե իրերի, այլ նրանց հարաբերությունների պատկերներն են, որոնք բավարար չեն իրականության ճանաշման համար։ Տրամաբանական գիտության մեջ բանականության առարկան ինքը բանականությունն է, նրա ձևերն ու հասկացությունները։ Վերջիններս հանդես են գալիս ոչ թե որպես պատկերներ, այլ որպես սիմվոլներ, որոնք միանալով կազմում են սիմվոլների աշխարհը։ Տրամաբանությունը իրականության ճանաշման համարժեք գործիք չէ, նա չի համապատասխանում կյանքի և մտածողության իրական պրոցեսներին։ Իրերի բնույթի հսկական իմացումը տեղի է ունենում նրանց անմիշական ըմբռնման՝ ինտուիցիայի ճանապարհով։ Ճիշտ է, Թերգոսոնը իր քննադատությունն ուղղում է մեխանիզմի դեմ, բայց այդ բանը կատարում է իդեալիզմի դիրքերից։

Գերմանացի իդեալիստ փիլիսոփա Էդմունդ Հուսեղի (1859—1938) ֆենոմենոլոգիական փիլիսոփայությունը նորագույն ուսցիու-

<sup>1</sup> Հմատ. Վ. Փ. Ասմուս, Критика суржувазных идеалистических учений логики эпохи империализма. „Вопросы логики“ Ժողովածու, Մոսկվա, 1953, էջ 195—203.

նալիզմի տարատեսակներից մեկն է և իր որոշ կողմերով հիշեցնում է պլատոնականությունը: Հուսեռլի հանդես է գալիս փիլիսոփայությունը իսկական գիտություն դարձնելու պահանջով, ընդորում, նրա կարծիքով՝ այն պետք է կառուցվի ապրիորի հիմունքներով և հիմնված լինի բացարձակ ճշմարտությունների վրա:

Հուսեռլը սկզբնապես տրամարանությունը կապում էր մտածողության հոգերանության հետ, սակայն շուտով, իր «Տրամարանական ուսումնասիրություններից»<sup>1</sup> սկսած, հանդես է գալիս տրամարանության հոգերանական (հետեարար և ֆիզիոլոգիական, ըստ մատերիական) հիմնավորման բոլոր կարգի փորձերի դեմք: Հուսեռլի փիլիսոփայական սիստեմը «օբյեկտիվ» իդեալիստական սիստեմ է: Խիստ տարրերակում անցկացնելով մտածողության «օբյեկտիվ» («առարկայական») բովանդակության և մտածողության սուրյեկտիվ պրոցեսի միջև՝ նա առաջինն ըմբռնում է որպես «իդեալական-տրամարանական» բովանդակություն, երկրորդը՝ որպես «իրական-հոգերանական» պրոցես և մերժում տրամարանության հոգերանական մեկնաբանության ամեն մի փորձ: Տրամարանությունը նա դիտում է որպես «մաքուր» ապրիորի նորմատիվ մի գիտություն, որ գործ ունի հավերժական ու բացարձակ ճշմարտությունների հետ. նրա նպատակը ոչ թե իմացության ծագման պարզաբանումն է, այլ իմացության կառուցվածքի, մտածողության օրենքների ներքին կապի բացահայտումը: Տրամարանական օրենքները Հուսեռլի համար զուտ իդեալական ինքնակա գոյություն ունեցող բացարձակ՝ օրենքներ են, որոնք ոչ կախված են սուրյեկտիվ գիտակցությունից և ոչ էլ ենթադրում են մատերիական առարկաների գոյություն:

Բայտ Հուսեռլի՝ «մաքուր» տրամարանության նախապատրաստման և պարզաբանման համար անհրաժեշտ են ֆենոմենոլոգիական ուսումնասիրություններ, որոնց և նա մեծ ուշադրություն է հատկացնում: Ֆենոմենոլոգիան Հուսեռլի մոտ գիտակցության երեսույթների (ֆենոմենների), — այդ թվում և լեզվական երեսույթների, լեզվական արտահայտությունների, — ուսումնասիրությունն է՝ առնված այդ գիտակցության «առարկաների» նկատմամբ ունեցած հարաբերությամբ, ընդ որում գիտակցությունը նրա մոտ «մաքուր» գիտակցություն է և քննվում է անկախ իր ֆիզիոլոգիական և հասարակական հիմքերից: Հուսեռլյան տրամարանության

E. Husserl, Logische Untersuchungen, I-II, 1900—1901.

Համար միակ հավաստի փաստը մտածողական ակտերի հավաստիությունն է, ընդ որում այդ ակտերը բնութագրվում են իրենց ուղղածությամբ (ինտենցիոնալ բնույթով)` որպես «առարկայական» ակտեր, որոնք միշտ ուղղված են դեպի որևէ առարկա: Սակայն առարկան Հուսեղի համար նյութական առարկա չէ, այն ենթակա չէ որևէ «մետաֆիզիկական» բնութագրման: Հուսեղի այս առումով տարրերում է իր քննած «ինտենցիոնալ առարկաները»: Մտածողությունն ուղղված է լինում կամ դեպի մեր երեան եկող էմպիրիկ բովանդակությունը, կամ դեպի երեւութների էությունը: Երեւութների հիմքում ընկած էությունները բացարձակ և ինքնակա էություններ են, որոնք ոչ հոգեկան և ոչ էլ ֆիզիկական բնույթ ունեն. ի տարրերություն Պլատոնի, որ էյգոսներին կամ իդեաներին գոյություն էր հատկացնում, Հուսեղի բացառում է դրանց ամեն կարգի «մետաֆիզիկական» մեկնաբանություն: Այդ էությունները իմացվում են ինտուիտիվ, հայեցողական ճանապարհով. էության հայեցողությունը (ինտուիցիան, Anschauung) փորձնական տվյալների վրա չի հիմնվում և զուտ մտածողական պրոցես է: Իմացության առարկան Հուսեղի համար այդ էություններն են, «գոյության իդեալական տեսակները». այդ էությունների հայեցողությամբ գիտակցությունը հասկանում է իր իսկ վիճակները, իր երեան գալու ձևերը, ֆենոմենները:

Այսպիսով՝ մեր գիտակցությանը ներկայացնող երեւութները (ֆենոմենները) Հուսեղի համար մեր գիտակցության իսկ վիճակներն են, նրա դրսեորումները: Հուսեղի փիլիսոփայությունը կարևոր դեր է խաղացել ժամանակակից ստրուկտորալիզմի, հատկապես Կոպենհագենի ստրուկտորալիստական դպրոցի (Յլմսլե), այլև գերմանական էթնոլինգվիստիկայի (Վ. Պորցիգ և Յ. Վայսգերբեր) ձևավորման համար: Ստրուկտորալիստական լեզվաբանության վրա Հուսեղի ազդեցությունը որոշվում է առաջին հերթին նրանով, որ նա իմաստային ակտերը քննում է որպես անկախ, ինքնակա բնագավառ կազմող մեծություններ և փորձում դրանք ենթարկել մաթեմատիկական ճշգրիտ ստատիկ վերլուծության. այլ կերպ ասած՝ Հուսեղը հասնում է քննության բացարձակ իմաննեալության: Պայքարելով տրամաբանության և լեզվաբանության հոգեբանական հիմնավորման փորձերի դեմ՝ Հուսեղը վերջինիս դեպքում վերադառնում է XVII—XVIII դդ. ընդհանրական բերականության գաղափարին և լեզվի քննությունը վերածում ընդհանրական վերացական սխեմաների: Սակայն, ի տարրերություն Ա. Մար-

տիի, որ կարծում է, թե ընդհանուր քերականությունը պետք է հիմնվի փորձի վրա, նկարագրի լեզուների մեջ եղած ընդհանուրը, էմպիրիկ լինի, Հուսենը այն դիտում է ապրիորի-ռացիոնալիստական դիրքերից: Լեզվաբանության համար զգալի դեր է խաղացել Հուսենի կողմից լեզվական արտահայտության քննության հետ կապված՝ նշանների դասակարգման փորձը:

Պրագմատիստական փիլիսոփայությունն սկիզբ է առել XIX դ. վերջին քառորդում՝ Ամերիկայում և XX դ. դարձել ամենից ավելի տարածված փիլիսոփայական ուղղություններից մեկը: «Պրագմատիզմ» տերմինն առաջին անգամ օգտագործել է 1878 թ. Զառլ Պիրսը (1839—1914): Հետագայում հանդես են եկել պրագմատիզմի որոշ տարատեսակներ. այսպես, Զոն Դյուին իր ուսմունքը կոչում է ինստրումենտալիզմ, Շիլերը իր ուղղությունը որակում է «Հումանիզմ» տերմինով և այն: Փորձը համարելով «ապրումների հոսանք», պրագմատիստները մերժում են այս կամ այն հարցում միայն մեկ ճշմարտության գոյությունը և առաջ քաշում ամեն մարդու համար սեփական ճշմարտության գոյության դրույթը, հանգում ճշմարտությունների «պլուրալիզմի» դաշտափարին: Ըստ պրագմատիստների՝ ճշմարիտ է այն, ինչ օգտակար է, ինչ տվյալ մարդու պրակտիկայում արդարացնում է իրեն: Պրագմատիզմը ակնհայտ ուղյատիվիստական ուղղություն է:

XX դ. լեզվաբանության, հատկապես սոցիոլոգիական ուղղության ձևավորման մեջ կարևոր դեր է խաղացել նեոկանտականությունը, որի ներկայացուցիչները հանդես են եկել «ետ դեպի Կանտը» նշանաբանով: Նեոկանտականությունը ձևավորվել է XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին՝ Մարքուրգի և Բադենի դպրոցների մեջ. Մարքուրգի դպրոցի ներկայացուցիչները (Մ. Կոհեն, Պ. Նատորպ, է. Կասսիրեր) իրենց սկզբունքները փորձել են հիմնավորել բնական, Բադենի դպրոցի ներկայացուցիչները (Վինդելբանդ, Հ. Ռիկկերտ)՝ հասարակական գիտությունների տվյալներով, նրանց մեթոդների ու հասկացությունների վերլուծության միջոցով: Նեոկանտականները փաստորեն Կանտին ազատում են մատերիալիստական տարրերից՝ «ինքնին իրերը» դիտելով յոկ որպես «սահմանային» հասկացություններ, որոնց մենք աշխատում ենք հասնել տրամաբանական սինթեզների միջոցով: Օգտագործելով մաթեմատիկայի ներթափանցումը բնական գիտությունների մեջ՝ Մարքու-

գի դպրոցի ներկայացուցիչները փորձում են ժխտել հասկացությունների օբյեկտիվ հիմքերը, դրանք մեկնաբանում են ապրիորիզմի դիրքերից։ Մարբուրգի դպրոցի ներկայացուցիչները բնական գիտությունների «ընդհանրացնող» մեթոդին հակադրում են պատմության «անհատականացնող» մեթոդ։ Պատմաբանը գործ ունի բազմաթիվ անհատական և անկրկնելի փաստերի հետ, որոնցից նախարրում է մեկը կամ մյուսը որպես պատմական փաստ՝ հիմք ընդունելով «արժեքի» գաղափարը։ Պատմական փաստ հանդիսացնող կուտուրական «արժեքները» իմացության առանձին տիպի օբյեկտներ են, որոնք իրականության աշխարհին չեն պատկանում։ Նրանք ոչ թե «գոյություն ունեն», այլ «նշանակում են», ընդունում նշանակում են ոչ թե ըստ սուբյեկտի գնահատման, այլ այն անհրաժեշտության շնորհիվ, որին ենթակա է սուբյեկտը իր գնահատականով։

Լեզվաբանության վրա նեռկանտականների ունեցած ազդեցությունը արտահայտի է ոչ միայն «արժեքի» գաղափարի առաջքաշման, այլև բառի, հասկացության և առարկայի հարաբերության ըմբռնման, լեզվական նշանի գաղափարի մեկնաբանության մեջ։ Բայց նեռկանտականների՝ բառը ունի երկու կողմ՝ «իմաստ» (Bedeutung) և «նշանակություն» (Meinung «նկատի ունենալը»)։ առաջին կողմը հարաբերակցվում է հասկացության հետ, երկրորդը՝ ունալ իրականության այս կամ այն առարկայի հետ։ Փիլիսոփայությունը և լեզվաբանությունը գործ ունեն միայն առաջին կողմի հետ, իսկ երկրորդ կողմը կազմում է տարբեր գիտությունների առարկան։ Այսպիսով, լեզվական նշանը նեռկանտականների մոտ կտրվում է առարկայական հիմքից և առնվում լոկ հասկացության հետ ունեցած հարաբերությամբ։

XIX դ. վերջում և XX դ. սկզբում հանդես եկած բուրժուական փիլիսոփայության շատ ներկայացուցիչներ, փորձելով հաղթահարել մատերիալիզմի և իդեալիզմի «միակողմանիությունը», իրականում հանդես են գալիս որպես բացահայտ իդեալիստներ։ Ավստրիացի փիլիսոփա Էռնստ Մախը (1838—1916) փորձում է իրի հասկացությունը հանգեցնել զգայությունների գումարին։ Գիտության նպատակը նա համարում է ոչ թե բացատրությունը, այլ նկարագրությունը, որովհետեւ բացատրությունը ենթադրում է պատճառականության հնացած «դիցաբանական» ըմբռնման ընդունում։ Բայց Մախի՝ գիտությունը պետք է պատճառի ու գործողության հնացած զգափարների փոխարեն գործի ֆունկցիոնալ հարաբե-

բության գաղափարով, ընդ որում ֆունկցիոնալ հարաբերությունները կարող են արտահայտվել մաթեմատիկական գաղափարներով։ Գիտության զարգացումն արտահայտվում է ոչ-հարկավորը զեն նետելով՝ ուժերի տնտեսման կամ նվազագույն ճիգերի սկզբաբություն կամ նվազագույն ճիգերի սկզբանացական հասկացությունները պետք է մի կողմ թողնվեն։ Մասի «նվազագույն ճիգերի սկզբունքը» ուժեղ ազեցություն է թողնում լեզվի զարգացման պրոցեսի մեկնարանության փորձերի, այդ թվում և ֆունկցիոնալիստական լեզվաբանության վրա։

Լեզվաբանության հետագա բախտի համար կարենոր նշանակություն ունեցավ մաթեմատիկական տրամաբանության և այսպես կոչված «հարաբերությունների տրամաբանության» ստեղծումը։ Դեռևս *XIX* դարում անգիտած մաթեմատիկոս Ա. Մորգանը (1806—1871) հանգում է այն եզրակացությանը, որ տրամաբանությունը ուսումնասիրում է հարաբերություններն ու նրանց տրամաբանական հատկությունները՝ անկախ առարկաների մասնակի հատկություններից։ Մորգանը պահանջում է տրամաբանությունը դարձնել իսկապես ձևական՝ վերանայով մի կողմից՝ կոնկրետ բովանդակությունից, մյուս կողմից՝ լեզվական արտահայտության պատահականություններից։ Ա. Մորգանի, Զ. Բուլի, Զ. Պիրսի կողմից նախադրյալներ են ստեղծվում տրամաբանության հանր՝ հաշվի ստեղծման համար, որ կատարվում է է. Շոեռդերի (1801—1902) կողմից *XIX* դ. վերջերին։ Ֆուգեի, ապա և Պեանոյի, Պադուայի, Գիլբերտի, Ակկերմանի, Ուայթհեդի, Ռասսելի կողմից դարգացվում է այն միտքը, որ մաթեմատիկան լոկ տրամաբանության մի մասն է, որ մաթեմատիկական բոլոր գիտելիքները կարելի է հիմնավորել և դեղուկատիվ կերպով արտածել որոշակի տրամաբանական տարրերից, ելնելով աքսիոմաների որոշակի շրջանակից և առանց դիմելու ինտուիցիային։ Ֆորմալիզմը, մաթեմատիկայի լիակատար ձևականացումը դիտվում է որպես այն հակասություններից ազատելու նախապայմանը։ Ռասսելի և Ուայթհեդի «Մաթեմատիկայի սկզբունքների» մեջ տրվում է մաթեմատիկական տրամաբանության ընդարձակ շարադրանքը (նախադասությունների տեսությունը, կարգերի տեսությունը և հարաբերությունների տեսությունը)։ Մրանով մի քայլ առաջ է կատարվում արիստոտելյան տրամաբանությունից, թեև մեկնարանության մեջ հեղինակները հանդես են գալիս որպես իդեալիստներ։

*XIX* դ. վերջի և *XX* դ. սկզբի բովածուական սոցիոլոգիայի

քնագավառում հատուկ հիշատակության արժանի է ֆրանսիացի սոցիոլոգ Էմիլ Դյուրկինյեմի (1858—1917) ուսմունքը, որը կարևոր դեր է խաղացել լեզվաբանության սոցիոլոգիական դպրոցի ձևավորման մեջ։ Այդ ուսմունքը իր ակունքներն ստանում է փիլիսոփայական իդեալիզմից, կանտականությունից և համաքայլ է ընթանում մախիզմին։ Դյուրկինյեմի համար հասարակականը վերջիվերջո հոգեբանական հիմք ունի. հասարակությունը նա համարում է «յուրատեսակ հոգեբանական էակ, բազմաթիվ գիտակցությունների ասոցիացիա»։

Խնչպես Կանտը, Դյուրկինյեմը սուբստանցիան, տարածությունը, ժամանակը, թիվը համարում է լոկ «բանականության կատեգորիաները»՝ վերջինիս վերագրելով հավերժական անփոփոխ գոյություն։ Սակայն Դյուրկինյեմը փորձում է մախիսսների նման հաղթահարել իդեալիզմի և մատերիալիզմի «միակողմանիությունը»։ Այս կապակցությամբ նա իր ուսմունքի հիմքում դնում է հասարակության գաղափարը. հասարակությունը որպես «կոլեկտիվ գիտակցություն», նրա կարծիքով, վերացնում է մատերիայի և գիտակցության առաջնայնության հարցի դրման անհրաժեշտությունը։ Հասկանալի է, սակայն, որ հասարակականը դիտելով որպես հոգեկան, գիտակցական հիմք ունեցող ամբողջություն՝ Դյուրկինյեմը դրանով իսկ մնում է մաքուր իդեալիզմի դիրքերում։ Այս առումով է հենց, որ Դյուրկինյեմը բացահայտորեն հակադրվում է հասարակական երևությների մարքսիստական մատերիալիստական ըմբռնմանը՝ ժխտելով տնտեսական գործոնի՝ առաջադիմության աղբյուր լինելու գաղափարը։ Դյուրկինյեմը շի ընդունում տնտեսական գործոնի առաջնությունը, այլ նշում է հասարակական միջավայրի առանձնահատկությունների բազմազանությունը։ Հասարակությունը Դյուրկինյեմը պատկերացնում է որպես տարբեր տարրերի մի ներդաշնակ ամբողջություն, որը գոյություն ունի ինքնակա կերպով, իմանենտորեն, որպես վերանհատական մի բան։ Զարդարողանալով կամ շցանկանալով ըմբռնել առանձինի և ընդհանուրի, անհատականի և հասարակականի դիալեկտիկան՝ Դյուրկինյեմն ընդհանուր-հասարակականը կտրում է առանձին-անհատականներից և դարձնում անհատներից դուրս գտնվող ինքնակա էություն՝ «հասարակական փաստ», որը պարտադրվում է անհատներին որպես արտաքին անհրաժեշտություն։ Հասարակության բնույթը և առանձնահատկությունները Դյուրկինյեմը բացատրում է մեխանիստորեն՝ դրանք հանգեցնելով հաս-

րակական միավորների ծավալին ու խտությանը. ծավալը (անհատ-ների քանակը) որոշում է կապերի ուժեղությունն ու բազ-մազանությունը, խտությունը՝ հասարակության «բարձրության» աստիճանը: Հասարակագիտության բուն առարկան համարելով հասարակական միջավայրի այս մեխանիստական օրինաշափու-թյունների, հասարակության՝ որպես փակ սիստեմի ուսումնասի-րությունը՝ Դյուրկհեյմը, հետևելով Կոնտին, տարբերում է օրինա-շափ ուսումնասիրության ստատիկան և դինամիկան. բայց սիստե-մի օրինաշափությունները հասկանալու տեսակետից առավելու-թյուն է տալիս ստատիկային: Հասարակության զարգացումը, Դյուրկհեյմի կարծիքով, աշխատանքի բաժանման վրա է հենված, ընդ որում այդ բաժանումը նրա մոտ քննվում է ինքնին՝ հասարա-կությունը կազմող միավորների փոխհարաբերության տեսակետից, և չի հանգեցվում հասարակության գոյապայմանների տնտեսական հիմքին: Հասարակական օրենքներին Դյուրկհեյմը վերագրում է երկու պահանջ՝ ընդհանրականությունն և հրամայականությունն, ընդ որում կանտյան կատեգորիկ իմպերատիվի նման, դրանք առնվում են ժամանակից դուրս, վերացականորեն, որպես ամեն մի հասա-րակության և ամեն մի էպոխայի նկատմամբ կիրառելի պա-հանջներ:

Լեզվաբանության համար նշանակություն է ունենում նաև Գ. Տարդի (1843—1903) տեսությունը, որով հասարակությունը հանգեցվում է իրար նմանվող անհատների գումարի, մեծ տեղ է արվում հոգեբանական գործոնին. Տարդի տեսությունը արտացո-լում է գտել ոչ միայն Շուխարդտի, այլև հետագա լեզվաբան-ների մոտ:

Լեզվաբանական ուսմունքների հետագա ընթացքի վրա զգալի ազդեցություն է թողնում հոլանդացի բուսաբան-հակադարվինիստ դե-Ֆրիզը, որ 1900—1910 թթ. առաջ է քաշում մուտացիոն տե-սությունը, ի հակադրություն Դարվինի բնական ընտրության էվո-լյուցիոնիստական տեսության: Այս տեսության համաձայն՝ նոր տեսակները ծագում են հանկարծակի թուլքած փոփոխություննե-րի՝ մուտացիաների ձևով (առանց միջանցիկ ձևերի՝ այդ փոփոխու-թյունների միջև), որոնք պայմանավորված են ներքին պատճառ-ներով և կախված չեն արտաքին պայմաններից: Հատկանշական է, որ Պլեխանովը դե-Ֆրիզի մուտացիաների տեսության մեջ տեսնում է դիալեկտիկական կողմ, այնինչ այս դեպքում պարզ չէ որակա-կան հանկարծակի փոփոխությունների քանակական նախապատ-րասառումը: Ամեն ինչ փաստորեն կապվում է ժառանգականության

Հատուկ մասնիկների՝ պանդենների հետ, իսկ ձեռքբերովի հատկությունների ժառանգումը ժխտվում է: Մուտացիոնիզմը հետագայում ազդել է Մաոի և ստրուկտուրալիստների հայացքների ձեռնորման վրա:

Այս ենթաշրջանի լեզվաբանական ուղղություններն արդեն սկսում են մեծ շափով տարրերվել *XIX* դ. լեզվաբանական ուղղություններից՝ լեզվական երևույթների նկատմամբ ունեցած իրենց մոտեցմամբ, լեզվաբանության ու նրա ուսումնասիրության առարկայի իրենց մեկնաբանությամբ: *XIX* դ. ուղղությունները բնորոշվում էին լեզվի ու լեզվաբանության բնույթի, տեղի ու դերի ըմբռուսան տարրերությամբ, այն բանով, թե ի՞նչ տեղ են հատկացնում լեզվին հարակից երևույթների և լեզվաբանությանը՝ հարակից գիտությունների մեջ: *XX* դ. լեզվաբանական ուղղությունները բնորոշվում են առաջին հերթին լեզվի նկատմամբ ունեցած մոտեցման հայեցակետերի տարրերությամբ, նրանով, թե ո՞ր կողմից են լեզվին մոտենում, լեզվի ո՞ր կողմն են բննության նյութ դարձնում, լեզվական ո՞ր ֆունկցիան են պահում ուշադրության կենտրոնում: *XIX* դ. լեզվաբանները հիմնականում զուրկ էին լեզվաբանության՝ այլ գիտություններից անկախ և ինքնուրույն բնագավառ լինելու ըմբռնումից: *XX* դ. լեզվաբանները և լեզվի ուսումնասիրությամբ զբաղվող մյուս գիտնականները աստիճանաբար մոտենում են այդ ըմբռնմանը: Հնարկե, պետք է նկատի ունենալ հայեցակետը. նախ՝ կոնցեպցիան որոշում է հայեցակետը, ուստի և *XIX* դ. ուղղությունները ոչ միայն լեզվի ու լեզվաբանության բնույթի, տեղի ու դերի տարրերը ըմբռնումներ են, այլև լեզվին ո՞ր կողմից մոտենալու հայեցակետեր. երկրորդ՝ հայեցակետը մեծ դեր է խաղում կոնցեպցիայի ձեռավորման մեջ, ուստի և *XX* դ. ուղղությունները, մանավանդ բննվող ենթաշրջանում, որոշ առումով նաև կոնցեպցիայի տարրերություններ են. երրորդ՝ լեզվաբանության՝ այլ գիտություններից անկախ բնագավառ լինելու ըմբռնումը ֆնընվադ ենթաշրջանում նոր է միայն ճանապարհ հարթում, ուստի և լեզվական տարրեր ուղղությունները այս ենթաշրջանում նաև կոնցեպցիայի տարրերություններ են՝ որոշ դեպքերում կապված լինելով *XIX* դ. վերջի կոնցեպցիաների հետ և հանդես գալով որպես նորանց օրգանական շարունակությունը: Հաջորդ ենթաշրջանում լեզվաբանության՝ այլ գիտություններից անկախ բնագավառ լինելու ըմբռնումը դառնում է տիրապետող, և լեզվաբանական ուղղությունների տարրերությունները փաստորեն վերածվում են «բոլ»

լեզվաբանության ու լեզվաբանական միջդիսցիպլինների տարբերությունների:

Այս ենթաշրջանում կարելի է առանձնացնել լեզվաբանական ուղղությունների երկու խումբը: Առաջին խումբը կազմում են այն ուղղությունները, որոնք լեզվական երկույթների մեկնաբանության մեջ հիմք են ընդունում լեզվաբանության հետ կապված գիտությունների ու գիտական դիսցիպլինների նորագույն նվաճումները, հենվում դրանց վրա կամ լեզուն քննում դրանց տեսանկյունով: Երկրորդ խումբը կազմում են այն ուղղությունները, որոնք լեզուն քննում են անկախ այլ գիտություններից ու գիտական դիսցիպլիններից: Իհարկե, այս բաժանումը որոշ պայմանականություն ունի, որովհետև մի կողմից՝ առաջին կարգի ուղղությունների մեջ արդեն առկա են երկրորդ կարգի ուղղությունների սաղմերը, մյուս կողմից՝ երկրորդ կարգի ուղղությունների ներկայացուցիչները հենվում են նախորդների վրա, շարունակում արդեն առկա տրադիցիաները: Առաջին խմբի ուղղությունները գրեթե այնքան են, որքան լեզվաբանության հետ մերձավորապես առնչվող և լեզվական երկույթների մեկնաբանության հնարավորություն տվող գիտություններ ու գիտական դիսցիպլիններ կան, այսինքն՝ 1) պսիխոլոգիզմ, 2) լոգիզմիզմ, 3) անթրոպոլոգիզմ և կուլտուր-էթնոլոգիզմ (էթնոգրաֆիզմ), 4) էսթետիզմ և 5) սոցիոլոգիզմ: Երկրորդ խմբի ուղղությունները երկուսն են՝ 6) ֆունկցիոնալիզմ<sup>1</sup> և 7) ֆորմալիզմ: Ֆունկցիոնալիստները նպատակ են դնում բացատրել լեզվի կառուցվածքային փոփոխությունը՝ ելնելով լեզվական ֆունկցիայի գաղափարից, ֆորմալիստները նպատակ են դնում նկարագրել լեզուն՝ ելնելով իր իսկ լեզվի ձևերից: Ֆունկցիոնալիզմը հանդես եկել սոցիոլոգիզմի և բիոլոգիզմի, ֆորմալիզմը՝ պսիխոֆորմալիզմի և սոցիոլոգիական իմանենտիզմի բազայի վրա:

Այս ենթաշրջանի լեզվաբանական բոլոր ուղղությունները ձևաշղորիել են նախ՝ երիտքերականների քննադատության ու նրանց թերությունների հաղթահարման, երկրորդ՝ ժամանակակից գիտության, հատկապես հասարակական գիտությունների բնագավառում հանդես եկած նոր պատկերացումների ու տենդենցների, երրորդ՝ կուտակված լեզվաբանական նյութի, լեզվաբանության նախորդ նվաճումների օգտագործման, այն հակասություններից զերծ կերպով սիստեմավորելու և գիտականորեն մեկնաբանելու ձգտման

<sup>1</sup> Այստեղ «ֆունկցիոնալիզմ» բառը գործածված է նեղ իմաստով:

բաղայի վրա: Այս ենթաշրջանի պսիխոլոգիզմը և լոգիցիզմը, XIX դ. որոշ հիմքեր ունենալով հանդերձ, առաջին հերթին հանդես են եկել երիտքերականների միակողմանի ֆոննետիզմը հաղթահարելու, լեզվի ներքին կողմին ավելի մեծ ուշադրություն հատկացնելու, շարահյուսության և իմաստաբանության հարցերին պատշաճ տեղ տալու որոնումների հետ կապված: Անթրոպոլոգիզմը և կուլտուրէթնոլոգիզմը հանդես են եկել երիտքերականների կողմից լեզվի և ժողովրդի, լեզվի ու կուլտուրայի պատմության կապի անտեսումը հաղթահարելու, լեզվի ծագման հարցը կրկին առաջ քաշելու հետ կապված: Էսթետիզմը հանդես է եկել առաջին հերթին երիտքերականների ատոմիզմի ու ֆոնետիզմի հաղթահարման, լեզվի և գրականության ու կովուրայի կապի անտեսումը վերացնելու, սճաբանության հարցերը անուշադրության մատնելու հետևանքները վերացնելու ձգտման հետ կապված: Սոցիոլոգիզմը հանդես է եկել երիտքերականների ինդիվիդուալիզմը հաղթահարելու, ստատիկ վերլուծության հարցերը կրկին առաջ քաշելու և ստատիկ ու պատմական հայեցակետի փոխհարաբերությունը պարզելու, լեզվաբանության առարկայի մասնատումը վերացնելու որոնումների հետ կապված: Ֆոնկցիոնալիզմը հանդես է եկել լեզվական կառուցվածքի փոփոխության պատճառները բացահայտելու, այդ փոփոխությունները մեկնաբանելու, այսինքն՝ երիտքերականների և իրենց նախորդող այլ լեզվաբանների՝ այս հարցում հանդես բերած թերությունը. հաղթահարելու ձգտման հետ կապված: Վերջապես՝ ֆորմալիզմը հանդես է եկել լեզվաբանության առարկան ինքնուրույնացնելու, լեզվի նկարագրության մեջ կանխակալ սխեմաներից հրաժարվելու, լեզվական երկույթների սիստեմավորման համար իր իսկ լեզվի տվյալները հիմք ընդունելու ձգտման հետ կապված, մանակավանդ որ մի կողմից՝ ստատիկ վերլուծության հարցերը երիտքերականների մոտ ուշադրության շէին արժանանում և մյուս կողմից՝ երիտքերականներն ու շատ այլ լեզվաբաններ լեզվի նկարագրությունը կատարում էին տրադիցիոն ձևով, ֆիլոլոգիական ու տրամարանական քերականության տրադիցիոն սխեմաներով, զանց առնում քննվող լեզուների կառուցվածքային առանձնահատկությունները:

Լեզվաբանական ուսմունքների զարգացման էտապներ.— Այս ենթաշրջանի լեզվաբանական ուսմունքների զարգացման մեջ կարելի է առանձնացնել երկու էտապ. 1) 1901—1915 թթ., երբ ուժեղ է երիտքերականության քննադատությունը, երբ լեզվաբա-

նությունը նոր ուզիների արոնումներ է կատարում, երբ Հոգիբանության ազգեցությունը դեռևս ուժեղ է, երբ ընդհանրապես նախորդ լեզվաբանության տրադիցիան դեռևս շարունակում է, հանդես գալ և երբ լեզվի պատմական քննությունը դեռևս դերակշռող է.

2) 1916—1928 թթ., երբ լեզվի հասարակական բնույթի ըմբռնումը ուժեղանում է, առաջանում է լեզվաբանության առարկայի սահմանագատման և իմանենտիզմի տենտենց, հիմքեր Են նախանդապատրաստվում հաջորդ շրջանին անցնելու համար. որպես երկու էտապների սահմանագատիչ հանդես է գալիս Սասլուրի «Բնդհանուր լեզվաբանության գասընթացը» (1916 թ.):

## I. Լեզվաբանական ՌԻՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿՈՆՑԵՊՑԻԱՆԵՐ

### 1. ՊՍԻԽՈԼՈԳԻՉԸ ԵՎ ՊՍԻԽՈՖԻՌԻՉԸ

Լեզվանուր տեղեկություններ.— Պսիխոլոգիզմը և պսիխոֆիզիզմը այս ենթաշրջանում շարունակում են մնալ սրպես լեզվաբանական տարածված կոնցեպցիաներ. Պսիխոֆիզիզմը հանդես է գալիս երիտքերականների ու նրանց հետեռդղների մոտ: Պսիխոլոգիզմը հենվում է մասամբ երիտքերականների վրա, մասամբ գալիս է Շտայնթալից, Պոտեբնյայից ու երիտքերականների քննադատներից, մասամբ էլ արդյունք է երիտքերականների ֆորմալիզմի դեմ ուղղված քննադատության: Լեզվի հոգեբանական ըմբռնման կռոմնակիցները, ի տարբերություն երիտքերականների, ուշադրությունը կենտրոնացնում են լեզվի ներքին, իմաստային կողմի վրա, մեծ տեղ տալիս իմաստաբանական ու շարահյուսական հարցերին: Պսիխոլոգիզմը այս շրջանում միատարր ու միօրինակ չէ. այստեղ առկա են և ինդիվիդուալիստական պսիխոլոգիզմը. և էթնիկական պսիխոլոգիզմը. սոցիոլոգիական դպրոցը ևս մեծ շափով տուրք է տալիս պսիխոլոգիզմին: Լեզվի հոգեբանական մեկնաբանությունը կատարվում է հոգեբանական տարբեր կոնցեպցիաների հիման վրա. դրանցից գեշտալտհոգեբանության և բինեվիորիզմի ազգեցությունը դրսենորվում է հատկապես հաջորդ շրջանում. այսպես, ամերիկացի նշանավոր լեզվաբան Բլումֆիլդը, որ սկզբնապես (այս ենթաշրջանում) վաւնդաի հետեղորդ է, հետագայում անցնում է բինեվիորիզմի դիրքերը: Այս ենթաշրջանում զգալի ազգեցություն է ձեռք բերում Փանկցիոնալիստական հայեցակետը, որ դրսենորվել է Բրենտանոյի, Մարտիի և այլոց մոտ:

Նշելի է, որ Գոգերանական ուղղության շատ ներկայացուցիչներ՝ Վան-Գիմննեկեն, Ա. Մարտի, այս ենթաշրջանում պատմական քննության հետ միասին անհրաժեշտ են համարում լեզվի ստատիկ քննությունը, ընդ որում կրկին առաջ են քաշվում (Ա. Մարտի) ընդհանրական քերականության հարցերը։ Ավելորդ չէ հիշել, որ պսիխոլոգիզմը այս ենթաշրջանում սկսում է հանդես գալ ոչ միայն որպես լեզվի բնույթի ըմբռնում, այլև որպես լեզվի հոգեբանական կողմի ուսումնասիրություն. այլ կերպ ասած, լեզվի՝ որպես հոգեբանական պրոցեսի՝ միակողմանի ըմբռնմանը սկսում է փոխարինել լեզվի հոգեբանությունը, որպես յուրատեսակ միջդիսցիպիլին։ Լեզվի հոգեբանությամբ զբաղվողները լեզուն ամբողջովին վերցրած՝ ոչ միշտ են համարում հոգեբանական երևույթ, բայց ուշադրություն են դարձնում լեզվի այն կողմի վրա, որ հոգեբանական մասնագիտական ուսումնասիրության առարկա է։ Ճիշտ է, այս խնդիրը կատարվում էր և նախորդ ենթաշրջանում, բայց այդ դեպքում լեզուն ամբողջովին ընդգրկվում էր հոգեբանական երևույթների մեջ, և լեզվաբանությունը ձուլվում հոգեբանության հետ։

Պսիխոլոգիզմը հանդես է գալիս ոչ միայն որպես ինքնուրույն ուղղություն, այլև հաճախ էկլեկտիկորեն զուգորդվում է այլ ըմբռնումների հետ կամ դառնում այս կամ այն ըմբռնման աստաղը։ Այսպես, օրինակ, ոմանց մոտ Հանդես է գալիս լոգիկո-պսիխոլոգիզմը (Դ. Ն. Օվսյանիկո-Կուլիկովսկի), սոցիոլոգիզմը հաճախ դրսենորվում է որպես պսիխոսոցիկոլոգիզմ (Ֆ. դը-Սոսյուր), ոմանց մոտ էլ տեղ է գտնում յուրատեսակ բիոպսիխոլոգիզմ (Վան-Գին-նեկեն)։ Պսիխոլոգիզմը ոմանց մոտ ծայրահեղ արտահայտություն է գտնում. այսպես, Թ. Կալեպկին լեզվի ողջ քերականական սիստեմի հիմքում դնում է խոսողական ակտի ժամանակ խոսողի ունեցած հոգեվիճակը։

Հետագա քննության մեջ մենք կանգ կառնենք պսիխոլոգիզմի ամենից ազելի աշքի ընկնող ներկայացուցիչների վրա, բայց անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք ասել և ուրիշների մասին։

Ուսասատանում պսիխոլոգիզմի մի տարատեսակը հենվում է Պոտերնյայի վրա։ Պոտերնյայականության ներկայացուցիչներից հիշատակելի են Դ. Ն. Օվսյանիկո-Կուլիկովսկին և Դ. Ն. Կուղրյավսկին<sup>1</sup>. Օվսյանիկո-Կուլիկովսկին հանդես է գալիս որպես լոգիկո-

<sup>1</sup> Д. Н. Овсяннико-Куликовский, Синтаксис русского-языка, 1912. Д. Н. Кудрявский, Введение в языкознание, Юрьев, 1912.

պսիխոլոգիստ, փորձում հաշտեցնել Պոտեբնյայի հօգեբանական կոնցեպցիան տրամաբանական քերականության սկզբանքների հետ։ Այս առումով քերականական ձևերի վերլուծությունը նա փաստորեն փոխարինում է հոգեբանական «ակտերի» վերլուծությամբ, լեզվի և «քերականական մտածողության» հիմքում դնում «անգիտակցական ոլորտում» կատարվող ակտերը։ Քերականական ձևը և քերականական իմաստը նրա մոտ դառնում են հավասարանշանակ հասկացություններ։ Օվսյանիկո-Կովիկովսկին, Պոտեբնյայի նման, կարեոր տեղ է հատկացնում քերականական ձևերի ծագման ու զարգացման հարցին։ Կուղրյավսկին, ի տարբերություն Օվսյանիկո-Կովիկովսկու, հանդես է գալիս որպես հետևողական պսիխոլոգիստ՝ խնամքով անջատելով լեզվի հոգեբանական ըմբռնումը տրամաբանականից։ Հենվելով Պոտեբնյայի վրա՝ Կուղրյավսկին գրեթե նույնացնում է խոսքի մասերը նախադասության անդամների հետ։ Նրա կարծիքով՝ միայն բայի և ստորոգյալի տարբերակումը պետք է պահպանվի, մնացած դեպքերում խոսքի մասերի և նախադասության անդամների անվանման տարբերությունը չի արդարացնում իրեն։

Պոտեբնյայականության հետ միասին զգալի տարածում ունի Բողուեն-դե-Կուրտենեի սուբյեկտիվ պսիխոլոգիզմը։ Բացի Բողուեն-դե-Կուրտենեից և Բոգորոդցեցիուց, որոնք շարունակում են գործել, այս ենթաշրջանի հեղինակներից հատուկ հիշատակման արժանի է Լ. Վ. Շլերբան, որի գործունեության ծավալումն ընկնում է սովետական շրջանում։ Նշենք միայն, որ Շլերբայի հնչույթի ըմբռնումը, որ մի նոր գիծ էր ավելացնում Բողուեն-դե-Կուրտենեի ըմբռնման վրա, շեշտում հնչույթի իմաստատարբերիչ ֆունկցիան, կարեոր գեր է խաղում հաջորդ ենթաշրջանում տարածված հնչույթաբանական ուսմունքների ձևավորման համար։

Վունդտի հոգեբանական կոնցեպցիան այս ենթաշրջանում գտնում է և՛ քննադատներ, և՛ կողմնակիցներ։ քննադատների թվում նշելի են ոչ միայն երիտթերականները (Բ. Դելբյուկ, Հ. Պաուլ), այլև ամենատարբեր ըմբռնումների տեր այլ գիտնականներ. քննադատությամբ հանդես են գալիս և՛ սոցիոլոգիզմի հետևողները (Ա. Սեղեե), և՛ լոգիցիզմի ներկայացուցիչները (Զյուտտերլին) և ուրիշներ։ Ոմանք էլ, քննադատելով Վունդտին, օգտագործում են նրա ուսմունքի այս կամ այն կողմը. վերջիններիս մեջ նշելի է, որինակ, լե՞ լեզվաբան Յան Ռազվադավսկին։ Իր

«Բառակազմությունը և բառիմաստը» գրքում<sup>1</sup> նա զարգացնում է վունդտի իմաստաբանական տեսության որոշ կողմերը, հատկապես բառերով արտահայտված պատկերացումների երկանդամության գաղափարը: Ըողվադովսկին յուրաքանչյուր լեզվական կազմավորման մեջ տեսնում է երկու անդամ՝ նույնացնող և տարբերող. դրանցից առաջինը արտահայտում է տիյալ հասկացության ծավալի մեջ մտնող պատկերացումների ընդհանուր կողմը, երկրորդը՝ տվյալ պատկերացումը նույն տիպի պատկերացումներից տարբերող կողմը: Ածանցավոր բառի մեջ որպես նույնացնող անդամ հանդես է գալիս արմատը, որպես տարբերիչ՝ ածանցը. բարդության մեջ՝ սովորաբար բարդության երկրորդ բաղադրիչը նույնացնող մասն է, առաջինը՝ տարբերիչը (Հմմտ. գերմ. Wind-mühle, հայ. հողմաղաց). նախադասության մեջ ենթական նույնացնող անդամն է, սառողելին՝ տարբերիչը: Ըստ Ըողվադովսկու՝ բաղադրյալ բառերը ծագում են բարդություններից, վերջիններս էլ՝ շարահյուսական կապակցություններից:

Ֆրեյդիզմը (Ֆրեյդի պսիխոանալիտիզմը) և լեզվաբանության մեջ կողմնակից է գտնում հանձին Շպերբերի: Հաջորդ ենթաշրջանում Բոումանը փորձում է Ֆրեյդի ուսմունքը կիրառել լեզվի «ներքին ձևի» գաղափարի նկատմամբ<sup>2</sup>:

Փիլիսոփայության և հոգեբանության մեջ այս ենթաշրջանում սկսում է տիրապետող դառնալ ֆունկցիոնալիստական հայեցակետը, որ նշանավորվում է իդեալիզմի և ագնոստիցիզմի խորացմբ: Ուշադրության կենտրոնում գտնվում են «մաքուր» ֆունկցիոնալ կախումները: Հոգեբանության գլխավոր առարկան ֆունկցիոնալիստները համարում են հոգեվիճակների, հոգեկան ֆունկցիաների նկարագրությունը: Քննության մաթեմատիկականացումը օգտագործվում է մատերիական աշխարհն ու նրա օրինաշափությունները «մաքուր» հասկացությունների և մաթեմատիկական բանաձևերի ձևով արտահայտելու և մատերիայի գաղափարը դուրս մղելու համար:

Անտոն Մարտին.— Մարտին մեծ շափով հենվում է իր ուսուցիչ Ֆր. Բրենտանոյի էմպիրիկ հոգեբանական դրույթների վրա. Բրենտանոն փորձում էր հայեցողական փիլիսոփայությանը հակառել իսկական գիտական «ներքին փորձի» վրա հենվող փիլի-

<sup>1</sup> I. Rozwadowski, Wortbildung und Wortbedeutung, 1904.

<sup>2</sup> Հմմտ. A. C. Bouman, Das Problem der inneren Sprachform und die Psychoanalyse, „Lingua“, 1952, III, 2, էջ 147—161.

սովայությունը, որի միջուկը պետք է լինի հոգեբանությունը: Հինգերով այսպես կոչված ֆունկցիոնալ հոգեբանության հիմնագիրը՝ թրենտանոն «ապրումի անմիջական տվյալների» մեջ տարբերում է երկու կողմ՝ բովանդակություններ կամ ֆիզիկական երևույթներ (գգայություններ, հիշողական պատկերներ, երևակայություններ և այլն) և ակտեր (ըստ Շտումֆի՝ ֆունկցիաներ՝ բովանդակությունների և դրանց հատկությունների միացումն ու ֆիքսացիան որպես պատկերացումներ, դատողություններ, հույզեր և այլն). Հոգեբանության նպատակը ակտերի ուսումնասիրությունն է, իսկ բովանդակությունները վերաբերում են բնական գիտություններին, հատկապես ֆիզիկային: Ավելորդ չէ հիշել, որ թրենտանոն տարբերում է երկու կարգի հոգեբանական գիտություն՝ նկարագրական և գենետիկ, մի հանգամանք, որ թերևս նույնպես դեռ է խաղում լեզվի քննության երկու հայեցակետերի հետագա հակադրության համար (թեկուզ և ոչ անմիջաբար). այս տարբերակումը արտահայտություն է գտել Մարտիի լեզվափիլիսոփայության, լեզվի հարցերի նրա մեկնաբանության մեջ:

Իր աշխատություններում<sup>1</sup> Մարտին առաջ է քաշում և աշխատում նոր, ֆունկցիոնալիստական մեկնաբանություն տալ լեզվափիլիսոփայական կարեռագույն հարցերին, թեև շատ բանով դեռևս հենվում է հին պատկերացումների վրա: Մարտին հնչյունական լեզվի ծագման քննության համար հիմք է ընդունում այն լեզվական դրսեռումները, որոնք կարող են դիտվել և արդի էտապում: Մարդկային լեզվի կազմավորման վճռական գործոնը հաղորդակցման և հասկանալիության (Mitteilung und Verständigung) մտադրությունն է, որ ըստ նրա ոչ այլ ինչ է, եթե ոչ տարբեր անհատների հոգեկան փոխազդեցություն: Լեզուն ոչ թե միայն սեփական հոգեկան կյանքի հաղորդման, այլ ուրիշների վրա ազդելու միջոց է: Հենց լեզվ մանկան զարգացման էտապների ուսումնասիրության վրա՝ Մարտին պնդում է, որ լեզուն և մտածողությունը միաժամանակ չեն առաջանում, այլ մտածողությունը նախորդում է լեզվին: Հետեաբար՝ գոյություն ունի ոչ-լեզվական մտածողություն. բայց լեզվի առաջացումը մտածողությանը մեծ շափով օգնում է, և լեզուն ու մտածողությունը հետագայում զարգանում են փոխապակցված:

<sup>1</sup> A. Martы, Ursprung der Sprache, 1875. Grundfragen der Sprachphilosophie, 1904. Untersuchungen zur Grundlegung einer allgemeinen Grammatik und Sprachphilosophie, I., 1908. Nachgelassene Schriften. Psyche- und Sprachstruktur, Bern, 1940.

Այս փոխկապակցումն էլ Մարտին այն ձևով չի պատկերացնում, թե լեզուն մտածողության բացարձակապես համարժեք արտահայտությունն է. ըստ նրա՝ այսպիսի բացարձակ համարժեքությունը և համանշությունը: Լեզվի զարգացումը Մարտին քննում է նպատակարանական (տելեռոգիական) դիրքերից՝ որպես յուրատեսակ նպատակադիր գործունեություն, որի հիմքում ընկած է ձգտումը դեպի հասկանալիությունը, պարզորշությունը, հարմարությունը, խնայողությունը (Ersparnis), այլև գեղեցկությունը: Տարբեր լեզուներով խոսող ժողովուրդների մտածողության տարբերությունը ոչ թե հիմնական է (fundamental), այլ աստիճանական (graduell): Չի կարելի լեզվակառուցվածքային տարբերություններից բխեցնել դրանց ճշգրտորեն համապատասխանող մտածողական տարբերություններ. լեզուները տարբերվում են հնչունական ձևավորմամբ, երևակայության տարբեր գործողությամբ, իմաստային կողմի որոշ տարբերություններով. սրանք էլ կապված են հակումների, փորձի, կանխամիտումների (Disposition), պատմական բազմատեսակ դեպքերի հետ: Լեզվակառուցվածքը ստատիկորեն առնված մի միասնական ամբողջություն չէ, այլ հնի ու նորի գոյակցություն: Սրան միանում է և այն, որ լեզվի մեջ առկա են հասարակայնորեն տարբերակված լեզվական շերտեր: Լեզվի և մտածողության կապը այնպես պարզ և անմիջական չէ, ինչպես այն ներկայացնում են Հումբոլդտը, Շտայնթալը, Վունդտը:

Մարտիի համար իմաստային կողմը, նշանակությունը, որպես լեզվի հոգեկան կողմ, ավելի էական է, քան մտածողության արտահայտման ձևը: Նա իր լեզվափիլիսոփայությունը կոչում է «ընդհանրական իմաստաբանություն»: Այստեղից էլ այն կարևոր նշանակությունը, որ Մարտին հանկացնում է իմաստափոխության հարցին: Հումբոլդտյան «ներքին ձևի» հասկացությունը մեկնաբանելով որպես իմաստի և արտահայտության կապերի ամբողջություն՝ Մարտին տարբերում է 2 տեսակ ներքին ձև. 1) այսպես կոչված «պատկերավոր ներքին ձևը» (figürliche innere Sprachform) նրա համար այն օժանդակ պատկերացումն է, որ հիմք՝ է տալիս հին իմաստը նոր իմաստին փոխանցելու, այլ կերպ ասած՝ բառը փոխարերաբար գործածելու. ներքին ձևը Մարտիի համար, այսպիսով, ամենից առաջ լեզվական արտահայտության պատկերավոր կողմն է. եթե Հումբոլդտի համար «ներքին ձևը» դինամիկ սկզբունք է, ապա Մարտիի համար այն նկարագրական արժեք

ունի<sup>1</sup>. 2) «կոնստրուկտիվ ներքին ձևը» Մարտին քննում է իմաննենորեն և տելեոլոգիապես. ըստ նրա՝ կոնստրուկտիվ լեզվագործունեությունը արտահայտվում է որպես նշանի պարզեցում և տընտեսում:

Հակադրվելով Շտայնթալի և ուրիշների ըմբռնմանը՝ Մարտին լեզուն դիտում է ոչ միայն խոսողի, այլև լսողի դիրքերից. լեզվական միջոցները ծառայում են ոչ միայն սեփական հոգեկան կյանքը դրսերելու, այլև լսողի վրա ազդելու համար. Հետեաբար լեզվական միջոցների իմաստը հոգեկան երևույթներ են (պատկերացումներ, դատողություններ, սրտի շարժումներ՝ Gemütstätigkei ten), որոնք արթնացվում են (wachterufen) կամ պետք է արթնացվեն լսողի մեջ: Հենվելով Բրենտանոյի վրա, որ տարբերում էր հոգեկան 3 հիմնական երևույթներ՝ պատկերացողական (vorstellende), դատողական (urteilernde) և շահագրգողական (interessenehrende)<sup>2</sup>՝ Մարտին լեզվի ստատիկ քննության հայեցակետից տարբերում է ինքնանշանակ (autosemantischi) արտահայտության 3 կարգի միջոցներ՝ 1) պատկերացում արտահայտողներ (Vorstellungssuggestive) [«գոյականներ»՝ առանձին, որոշիչով կամ որոշիչ (հարաբերական) նախադասությամբ], 2) ասույթներ (Aussagen) (դատողություններ և դատողությունների կոմպլեքսներ արտահայտողներ) և 3) հուզականներ (Emotive=interessheischende Ausserungen) (հրաման, խնդիր, հարց, ցանկություն արտահայտողները): Ինքնանշանակ լեզվամիջոցներին, որոնք «առանձին վեցրած ևս ինքնին հաղորդելի հոգեկան երևույթի արտահայտությունն են»<sup>3</sup>, հակադրվում են նշանակակիցները (Synsemantika)՝ շաղկապները, նախդիրները, գոյականացված ածականները, դիմավոր բայաձեւերը (բացի հրամայականից), թեք հոլովածեւերը, երկրորդական նախադասությունները. սրանք գործում են միայն նախորդ տիպի արտահայտություններ կազմելու համար: Մարտիի դրույթներից ժամանակին ընդունելություն շգտան հատկապես երեքը՝ ընդհանուր քերականության ստեղծման նրա ձգտումը, լեզվի ու մտածողության փոխհարաբերության ըմբռնումը և «ներքին ձևի» նրա մեկնաբանությունը<sup>3</sup>: Սակայն ընդհանուր քերականության ստեղծման նրա ձգտումը փաստորեն կանխում է կոպենհա-

<sup>1</sup> Հմմա. O. Funke, Studien zur Geschichte der Sprachphilosophie, 1927, էջ 129.

<sup>2</sup> A. Marty, Grundfragen der Sprachphilosophie, 1904, էջ 103.

<sup>3</sup> Հմմա. H. Arens, Sprachwissenschaft, München, 1955, էջ 388.

գենյան ստրուկտուրալիստների փորձերը. Մարտին այն պատկերացնում է որպես նորմատիվ դիսցիպլին և հակադրում լեզվի կոնկրետ պատմությանը: Ընդհանուր քերականության ստեղծման հնարավորության ապացուցումը Մարտին հիմնում է մտածողության՝ ընդհանուր մարդկային բնույթի ունենալու դրույթի վրա:

Ավելորդ չէ նշել, որ Մարտին, քննադատելով Շլայխերի նատուրալիզմը, խոսում է բառի՝ կամայական նշան լինելու մասին. սրանով իսկ նա կանխում է Սոսյորի՝ նշանի կամայականության դրույթը:

Մարտին հետեւողներից առանձնապես հիշատակելի է Օ. Ֆունկեն:

Յա. Վան-Գիննեկեն.— Հոլլանդացի ականավոր լեզվաբան Վան-Գիննեկենը XX դ. սկզբներին հանդես է գալիս իր «Հոգեբանական լեզվաբանության սկզբունքները» նշանավոր աշխատությամբ<sup>1</sup>: Գիննեկենի կարծիքով լեզվաբանությունը պետք է կառուցվի հոգեբանական հիմունքներով, նրա սկզբունքները պետք է րնդհանուր մարդկային բնույթի ունենան: Ի տարբերություն երիտրեբականների, որոնք լեզվաբանության խնդիրը սահմանափակում էին փաստագրմամբ, Վան-Գիննեկենը լեզվաբանության նպատակը համարում է «բոլոր լեզվաբանական երեսությների ավելի խոր պատճառների հետազոտումը՝ դրանց ներքին լինելիության մեջ»<sup>2</sup>: Այս առումով Գիննեկենը լեզվաբանությունը տարբերում է և՛ ֆիլոլոգիական քերականությունից, և՛ համեմատական քերականությունից, որոնք չեն թափանցում պատճառների մեջ: Ինքը Վան-Գիննեկենը այդ պատճառները որոնում է հոգեբանական ոլորտում: Բայց Վան-Գիննեկենի՝ լեզվաբանությունը հասարակագիտության (սոցիոլոգիայի) և էսթետիկայի հետ միացնելու փորձերը հարցը թողնում են կես ճանապարհին, որովհետև այդ երկու բնագավառն էլ վերջիվերջո հոգեբանական հիմք ունեն, ներկայացնում են «հոգեբանական դաշտում կամայականորեն առանձնացված երկու փոքրիկ հողամասեր»<sup>3</sup>: Այսպիսով, Վան-Գիննեկենի համար լեզվա-

<sup>1</sup> J. van Ginneken. Principes de linguistique psychologique, essai de synthèse, 1907 (բնագիրը լույս է տեսել 1904—1906 թթ., „Leuvenische Bijdragen“, VI—VII. Փրանսերեն հրատարակությունը վերանայված է, փոփոխված ու լրացված):

<sup>2</sup> J. van Ginneken. Principes de linguistique psychologique, 1907, էջ I:

<sup>3</sup> Նույն տեղը, էջ II:

բանությունը հոգեբանական լեզվաբանություն է: Նա տարբերում է ընդհանուր և մասնակի հոգեբանական լեզվաբանություններ՝ վերշինիս առարկան համարելով լեզուների տիպուգիան:

Հանդես գալով երիտքերականների էմպիրիզմի քննադատ թյամբ, նշելով, որ երիտքերականները ուշադրությունը կենարունացնում են լեզվի հնչյունական կողմի վրա և ֆետիշացնում հնչյունական օրենքը, Վան-Գիննեկենը խիստ կարևոր է համարում և ներքին կողմի ուսումնասիրությունը, իմաստաբանության հարցերի քննությունը: Վան-Գիննեկենի կարծիքով, հնչյունական խիստ օրենքների սահմանումը հակասում է լեզվի մշտափոփոխականության սկզբունքին: Քերականությունը պետք է դրվի խկական հոգեբանական հիմքերի վրա, մարդկանց հոգեկան գործունեությունը պետք է դառնա այն հիմքը, որից ելնելով կարելի կլինի թափանցել լեզվի քերականական կառուցվածքի մեջ: Լեզվի քերականական կառուցվածքի քննության մեջ Վան-Գիննեկենը պահանջում է առաջնություն տալ իմաստային կողմին: Նա առաջ է քաշում «իդեոդինամիկ օրենքների» գաղափարը՝ նշելով, որ դրանք երևան են գալիս տարբեր լեզուների կառուցվածքի մեջ:

Ընդունելով լեզվաբանության՝ հոգեբանական գիտություն լինելը՝ Վան-Գիննեկենը բնականաբար ելնում է լեզվի հոգեբանական ըմբոնումից, լեզվական պրոցեսի էությունը որոնում անհատական խոսողական ակտերի հոգեբանական հիմունքների մեջ: Ըստ Վան-Գիննեկենի՝ ամեն մի լեզվական երեսույթ կոնկրետ գոյություն ունի հաղորդակցման երկկողմանի ակտի մեջ, այսինքն՝ այն ժամանակ, երբ մեկը խոսում կամ գրում է և խոսակիցը կամ ընթերցողը նրան հասկանում է: Այստեղից էլ բխում է, որ քերականական արտահայտության եղանակներն ու կանոնները կայուն էություններ չեն: Լեզուն ներկայացնում է նշանների մի սիստեմ և որպես այդպիսին առաջին հայացքից անփոփոխ է թվում. սակայն իրականում խոսքի պրոցեսում այն փոփոխվում է անհատից անհատ և րոպեից րոպե՝ ըստ անհատական և րոպեական արամագրությունների: Գիննեկենը իրեն նպատակ է դնում պարզաբանել հաղորդակցման ակտերի, սովորական խոսակցության հոգեբանական հիմքերը՝ սկսած խոսող անհատի մոտ խոսքի սկզբնավորումից և հետագա էվոլյուցիայից մինչև հաղորդվող մտքերն ու դգացմունքները խոսողի կողմից կատարելապես ըմբոնվելը<sup>1</sup>:

<sup>1</sup> Հմմա. N. Dragani. Istoria syntaxei, 1945, էջ 237—238.

Ի՞ր աշխատության մեջ Վան-Գիննեկենը ձգտում է տալ տարրեր՝ այցակետերի համադրությունը և խուսափել լեզվաբանական տարրեր կանցեացիաների միակողմանիությունից։ Այսպես կոչված պողիտիվիստների և իդեալիստների (իմա՝ երիտքերականների և ֆուլերականների) հայացքների մեջ Վան-Գիննեկենը տեսնում է և՛ դրական կողմեր, և՛ թերություններ. առաջիններից նա հնարավոր է համարում վերցնել հավաստի մեթոդ, երկրորդներից՝ ամբողջականության դրույթը։ Միաժամանակ Վան-Գիննեկենը նպատակ է դնում հաղթահարել և՛ ծայրահեղ իստորիզմը, և՛ ծայրահեղ ստատիզմը՝ քննադատելով Պաուլի միակողմանի պատմականությունը, բարբառագետների և հնչյունագետների զուտ ստահիկ-նկարագրական մոտեցումը. ըստ նրա՝ առաջինները օգտակար կարող են լինել այն բանի բացատրության դեպքում, թե ինչպես է ծագում ու փոփոխվում լեզուն, երկրորդները՝ այն բանում, թե «ինչպես է կազմված լեզուն իր մանրամասնությունների մեջ»<sup>1</sup>:

Իր հետագա աշխատությունների մեջ Վան-Գիննեկենը ոչ միայն հկուսում է պսիխոլոգիզմից, այլև կանգնում է լեզվի բիո-լեզվական մեկնաբանության հողի վրա։ 1927 թ. և հետագայում Հրատարակած իր մի շարք հոդվածներում<sup>2</sup> նա հնչյունական փոփոխությունների պատճառները որոնում է բիոլոգիական ժառանգորդականության մեջ։ Բանը հասնում է այնտեղ, որ Վան-Գիննեկենը լեզվաստեղծագործության հարցում տեղ է տալիս ռասայական մոմենտին՝ այն զուգորդելով սուրստրատի տեսության հետ։ Սատ Վան-Գիննեկենի հնչյունական փոփոխությունների պատճառները պետք է որոնել երեխաների ժառանգած միատեսակ բնամուր հնչյունական-արտասանական տենդենցների մեջ, ընդ որում այդ տենդենցներն ու առանձնահատկությունները դիտվում են որպես սուրստրատային ժառանգություն։ Նրա կարծիքով՝ նախքան հնչյունական փոփոխությունների հաստատվելը լինում է անցման շրջան, որի ժամանակ գոյակցում են հինն ու նորը և որից հետո ընդհանրանում են ոչ բոլոր դեպքերը, այլ դրանց միայն մի մասը։

1930-ական թվականներին գրած գործերում Վան-Գիննեկենը

<sup>1</sup> J. van Ginneken, Principes de linguistique psychologique, 1907, էջ 532.

<sup>2</sup> J. van Ginneken, Die Erblichkeit der Lautgesetze, 1F, XLV, 1927. La biologie de la base d'articulation, PL. Հմատ. և JP, 1933, „Atti del III Congresso dei linguisti“, 1935, էջ 29 և հաջուկ.

մեծ ուշադրություն է հատկացրել լեզվի ծագման և վաղ գարգացման հարցերին՝ աշխատելով բացահայտել մարդկային լեզուների կառուցվածքային վաղ առանձնահատկությունները<sup>1</sup>: Այս հարցի լուծման որոնումների մեջ նա փորձում է հենվել լեզուների կառուցվածքային արխարիկ տարրերի բացահայտման ուղղությամբ կատարվող ուսումնասիրությունների վրա: Վան-Գիննեկենը տարբերում է լեզվի գարգացման 3 շրջան՝ 1) «աւեսողական» լեզվի շրջան, 2) «կլիֆսային» (ճթթոցային հնչյունների) լեզվի շրջան և 3) «լսողական» լեզվի շրջան: Առաջին շրջանում իշխել են ժեստերը և միմիկան, որոնք սիմվոլավորել են հասկացությունները և անմիջական պարզություն են ունեցել՝ ի տարբերություն «լսողական» լեզվի: Վան-Գիննեկենը այս շրջանի արտացոլում է համարում շինական հիերոգլիֆները և ընդհանրապես պատկերագրական-գաղափարական սիստեմները, որոնք նախորդել են «կլիֆսային» լեզվին: Շատ վաղ ժամանակներից սկսած ժեստերը և միմիկան ուղեկցվել են զանազան «կլիֆսներով»՝ շուրջերի, լեզվի, կոկորդի ճթթոցային հնչյուններով, որոնք նախապես օգտագործվել են այն դեպքում, երբ շարժումների լեզուն չէր կարող օգտագործվել (օրինակ՝ մթնում) և որոնց մնացորդները առկա են բուշմենների, ամերիկյան հնդիկների, կոկկասցիների և այլ ժողովուրդների մոտ: «Կլիֆսները» ունեցել են ձայնարկությունների արժեք. Հետագայում միայն դրանք ձեռք են բերել բառային արժեք՝ փոխարինելով ժեստերին ու միմիկային: Սկզբնական բառարմատները առաջացել են «կլիֆսների» տրոհման հետևանքով և կազմված են եղել միայն բաղաձայններից. Կոկորդայինները ծառայել են որպես ձայնավորների փոխարինողներ, որոնցից հետագայում առաջացել են ձայնավորները. այսպիսով՝ ձայնդարձի զրո աստիճանը նախորդել է լիաձայն աստիճանին: Սեմական և այլ կարգի գրային սիստեմները, որոնց մեջ ձայնավորները չեն նշանակվում, Վան-Գիննեկենը համարում է բաղաձայնական շրջանի արտացոլում: Ձայնավորների ներմուծումը Վան-Գիննեկենը բացատրում է

<sup>1</sup> J. van Ginneken, La reconstruction typologique des langues archaïques de l'humanité, VKNAW, NR, XLIV, 1939. Contribution à la grammaire comparée des langues du Caucase, նույն ակղթ, XLIII, 1938. Les elics, les consonnes et les voyelles dans l'histoire de l'humanité, „Proceedings of the III International Congress of Phonetic Sciences“, Gent, 1939. Ein neuer Versuch zur Typologie der älteren Sprachstrukturen, TCLP, VIII, 1939.

ավելի մեծ տարածության վրա լսելի լինելու կարիքը բավարարելու անհրաժեշտությամբ: «Հսողական» լեզուների առաջացումը, ըստ Վան-Գրիննեկենի, տեղի է ունեցել մ. թ. ա. 5—4-րդ հազարամյակից (հին քաղաքակրթության կենտրոնների առաջացման շրջանից ոչ ուշ): «Հսողական» լեզվի առաջացումը մեծ առաջընթաց քայլ էր, որ հնարավորություն տվեց ստեղծելու մեծ թվով բառեր՝ որոշակի բառային իմաստով<sup>1</sup>:

Ա. Ա. Շախմատով.— Ա. Ա. Շախմատովը (1864—1920) ուսական լեզվաբանության ականավոր դեմքերից մեկն է: Լինելով ֆորտունատովի ամենից աշքի ընկնող աշակերտներից մեկը և պատմա-համեմատական լեզվաբանության հետեւրդը՝ Շախմատովը, սակայն, հանդես է բերում նշանակալից ինքնուրույնություն. նա զերծ է ֆորտունատովին հատուկ ֆորմալիզմից և քերականական երեսութների մեկնաբանության մեջ ուշադրությունը կենտրոնացնում է իմաստային կողմի վերլուծության վրա: Նրա լեզվաբանական աշխատանքի գլխավոր բնագավառը ուսւաց լեզվի պատմությունն ու շարահյուսությունն են: 1908—1911 թթ. վիմագրական հրատարակությամբ երեան է. եկել նրա «Խուսաց լեզվի պատմության դասընթաց» (Ներածությունը, հնչյունաբանությունը և ձևաբանության մի մասը), 1915 թ. լույս է տեսել հնչյունաբանության մասի վերամշակումը «Խուսաց լեզվի հնագույն շրջանի պատմության ուրվագիծ»<sup>2</sup> վերնագրով: Մի տարի անց լույս է տեսել «Խուսաց լեզվի պատմության դասընթացի ներածությունը»<sup>3</sup>: Ետմահու հրատարակվել են Շախմատովի «Խուսաց լեզվի շարահյուսությունը»<sup>4</sup>, «Փամանակակից ուսւաց գրական լեզվի ուրվագիծը»<sup>5</sup> «Խուսաց լեզվի պատմական ձևաբանությունը»<sup>6</sup>:

<sup>1</sup> Հմմտ. Վ., Պիզանի, Общее и индоевропейское языкознание, նույնանուն ժողովածուում, Մ., 1956, էջ 126—127.

<sup>2</sup> А. А. Шахматов, Очерк древнейшего периода истории русского языка, Петроград, 1915.

А. А. Шахматов, Введение в курс истории русского языка, I II, 1916.

<sup>4</sup> А. А. Шахматов, Синтаксис русского языка, вып. I—II, 1925—1927, II հր., 1941.

А. А. Шахматов, Очерк современного русского литературного языка, 1930, այլկ. «Из трудов А. А. Шахматова по современному русскому языку», Մ., 1952:

<sup>6</sup> А. А. Шахматов, Историческая морфология русского языка, Մ., 1957.

Ռուսաց լեզվի պատմության վերաբերյալ մինչ այդ եղած աշխատություններից նշելի է միայն Ա. Ս. Սորոկսկու «Դասախոսություններ ռուսաց լեզվի պատմության վերաբերյալ» գործը<sup>1</sup>:

Շախմատովի կոնցեպցիան բնութագրվում է որպես ինդիվիդուալիստական պսիխոլոգիզմ: Նրա ինդիվիդուալիզմը հիմք ունի երիտրերականների լեզվաբանական ուսմունքը: Անհատական լեզվագործածությունը և, վերջին հաշվով, իր իսկ լեզվաբանի լեզուն Շախմատովը քննության միակ հավաստի առարկան է համարում. «Ես կկենտրոնացնեմ իմ ուշադրությունը այն փաստերի վրա,— զրում է Շախմատովը,— որոնք ինձ հայտնի են անմիջական դիտողությունից, այն է՝ առաջին հերթին իմ բառագործածությունից: Այդպիսի ինքնասահմանափակումը կարող է և որոշակի հետաքրքրություն ներկայացնել մեթոդոլոգիական պահանջների տեսակետից. ոեալ գոյություն ունի յուրաքանչյուր անհատի լեզուն. գյուղի, քաղաքի, նահանգի, ժողովրդի լեզուն դուրս է գալիս որոշակի գիտական ֆիկցիա, որովհետև այն բաղադրվում է լեզվի այն փաստերից, որոնք մտնում են անհատների այս կամ այն տերիտորիալ կամ ցեղային միավորի կազմի մեջ. մինչդեռ այդ անհատների թիվը անորոշ է, նրանց լեզվի սպառիչ ուսումնասիրությունն անհնարինաց<sup>2</sup>:

Լեզվաբանական երևույթների ինդիվիդուալիստական մեկնաբանությանը միանում է պսիխոլոգիզմը: Լեզվապրոցեսը, որն, ինչպես անհանգ, Շախմատովի համար առաջին հերթին անհատական լեզվապրոցես է, իր հիմքով հոգեկան է և որոշվում է մարդկային պսիխիկայով. սակայն լեզվական երևույթների այսպիսի ինդիվիդուալիստական հոգեբանական մեկնաբանությունը չի կարող հակասության մեջ ըլնկնել իսկական պատմականության հետ. «Ամեն մի մշակված սիստեմ,— գրում է Շախմատովը, — կարտացւեր պատմական զարգացման էտապները, իսկ սրանք կհեռացնեին այն հիմքից՝ մարդկային պսիխիկայից: Այս պատճառով էլ մենք ստիպված ենք սահմանափակվել իր իսկ լեզվի երևույթների վերլուծությամբ և արդեն դրանցով անել այս կամ այն եզրակացությունը այդ երևույթների հոգեբանական հիմքերի մասին»<sup>3</sup>: Այդ

<sup>1</sup> А. С. Соболевский, Лекции по истории русского языка, 1888.

<sup>2</sup> А. А. Шахматов, Очерк современного русского литературного языка, 1930, էջ 5.

<sup>3</sup> А. А. Шахматов, Синтаксис русского языка, I, 1925, էջ 11.

առումով՝ և' բարականական կատեգորիաները նաքնում է հոգեբանական դիրքերից. բառիմաստները նրա մոտ հարաբերակցվում են պատկերացումների հետ, իսկ բերականական կատեգորիաները համարվում են պատկերացումներ բառերի առաջացրած հիմնական իմաստների (իմա՝ պատկերացումների) հարաբերությունների մասին:

Շախմատովի պսիխոլոգիզմը տարբերվում է և՝ ֆորտունատովի, և՝ Պոտեբնյայի պսիխոլոգիզմից: Ինչպես նշեցինք, ի տարբերություն ֆորտունատովի և ի նմանություն Պոտեբնյայի, նա ուշադրությունը կենտրոնացնում է և բերականական երևույթների իմաստային քննության վրա. սակայն նա հեռու է խոսքի մասերի ու նախադասության անդամների պոտեբնյայական նույնացումից, Պոտեբնյայի նման առաջնություն տալով՝ նախադասությանը՝ որպես կենդանի խոսքի միավորի՝ բառի հանդեպ. գերծ է բառը «արհեստական պրեպարատ» համարելուց: Քերականության գլխավոր բնագավառը Շախմատովի համար շարահյուսությունն է՝ որպես նախադասության կառուցվածքի ուսմունքի: Բառերը, խոսքի մասերը նրա կողմից արժեքավորվում են նախադասության հետ կապված, բերականական կատեգորիաները՝ դիտվում են շարահյուսական առումով. «Լեզուն, — գրում է նա, — իր տարրերով ծնունդ է առել և զարգացել նախադասության կազմում, որովհետև նախադասությունը մտածողության՝ բառի մեջ դրսերվելու եղանակն է»<sup>1</sup>: Շախմատովի կարծիքով՝ նախ գոյություն են ստացել նախադասությունները, ապա նրանց անդամատմամբ ծագել են բառագուգորդումներն ու բառերը: Նախադասության հիմքում նա դնում է «հաղորդման» (կոմունիկացիայի) գաղափարը, որը սահմանում է հոգեբանորեն՝ որպես ուրիշներին հաղորդվելու համար նախասեսլած երկու պատկերացումների գուգորդում. «Հաղորդմանը» Շախմատովը փորձում է ամելի լայն առում տալ, քան նախադասությանը և դատողությանը, այս բառերի նեղ իմաստով. այս դեպքում նա տրադիցիոն կերպով նախադասություն ասելով՝ հասկանում է երկակազմ նախադասությունը, դատողություն ասելով՝ որևէ բանի հաստատումը՝ կամ ժխտումը. «Հաղորդման» գաղափարի նկրմուծմամբ Շախմատովը փորձում է ընդարձակել քննության շրջանակները և իբրև «հաղորդաւմ» քննել նաև միակազմ նախադասությունները և ընդհանրապես բոլոր հաղորդումները, որոնց մեջ

<sup>1</sup> А. А. Шахматов, Синтаксис русского языка, I, 1941, էջ 18.

կարևորը որևէ բանի հաստատումը կամ ժխտումը չէ (հարց, հրաման, զգացմունք արտահայտող «հաղորդումները»):<sup>1</sup>

## 2. ՀՈԳԻՑԻԶՄ

Ընդհանուր տեղեկություններ.—Տրամաբանության զարգացումը պյս ենթաշրջանում հասցնում է արիստոտելյան տրամաբանության քննադատությանն ու լրացմանը, մաթեմատիկական տրամաբանության լայն արմատավորմանը, տրամաբանության դերի ու նպատակների ըմբռնման ընդլայնմանը, այն հոգեբանությունից սահմանազատելու փորձերին, տրամաբանական հետազոտության ձեւականացմանը: Տրամաբանության նկատմամբ հետաքրքրության աճման պայմաններում բնականաբար փորձեր են արվում տրամաբանության նորագույն նվաճումները լեզվաբանության նկատմամբ կիրառելու Այդ փորձերը կատարվում են մասսամբ փիլիսոփատրամաբանների կողմից, որոնց համար լեզվական լեզուուժությունը հաճախ խիստ կարևոր դեր է ստանում, մասսամբ էլ լեզվաբանների կողմից: Վերջին կարգի փորձերը շարունակվում են ուղիղ ավելի լայն շափեր են ընդունում հաշորդ ենթաշրջանում: Լեզվաբանության մեջ տրամաբանության նորագույն կոնցեպցիաների օգտագործումը տեղի է ունենում երկու ճանապարհով՝ կամ տրամաբանության մեջ հանդես եկած տեսնենցների հետեւղությամբ լեզվական քննությունը ձեւականացնելու, հակասություններից զերծ պահելու, մաթեմատիկականացնելու, կամ տրամաբանական այս կամ այն ուղղության ու կոնցեպցիայի տվյալները լեզվական քըն-նության մեջ արմատավորելու, լեզվական երևույթների բացատրության նկատմամբ կիրառելու, լեզվական երևույթները տրամաբանորեն մեկնաբանելու, լեզվական ու տրամաբանական երևույթների միջև որակական տարբերություն շտեմնելու ձեռվ. վերջին դեպքում հանդես եկող լոգիցիզմը լեզվական երևույթների նկատմամբ հանդես եկած մոտեցմամբ սկզբունքորեն շի տարբերվում *XIX* դարի լոգիցիզմից. տարբերությունը լոկ այն բանի մեջ է, թե ո՞ր տրամաբանական սիստեմն է հիմք ընդունվում լեզվական երեվույթների մեկնաբանության համար:

<sup>1</sup> Միակազմ անվանական նախագասության գաղափարը հաստատուն կերպով գրվել է դեռև *XIX* դ. վերջերին Դորիաշի կողմից. հմտ. А. Добиаш, Опыт семасиологии частей речи и их форм на почве греческого языка, Прага, 1897:

Հարկավոր է նշել, որ որոշ լեզվաբաններ լեզվաբանության և տրամաբանության կապի հարցը առաջ են քաշում առաջին հերթին որպես երիտքերականական ֆորմալիզմի (ավելի ճիշտ՝ ֆոնետիզմի) հակադրություն։ Երիտքերականների հնչյունաբանական ֆորմալիզմը, իմաստային կողմի վրա ուշադրություն շդարձնելը առաջ է բերում հակազդեցության տարբեր կարգի փորձեր. ոմանք հակավում են դեպի պսիխոլագիզմը, երկրորդները՝ դեպի լոգիցիզմը, երրորդները՝ դեպի էթնոլոգիզմը (էթնոգրաֆիզմը), չորրորդները՝ դեպի սոցիոլոգիզմը. որոշ դեպքերում էլ հանդես են գալիս լոգիկո-պսիխոլոգիզմի (հմմտ. Օվայանիկո-Կուլիկովսկի), լոգիկո-սոցիո-լոգիզմի (հմմտ. Ա. Սեշեն), լոգիկո-բիոլոգիզմի (հմմտ. Օ. Եսպերսեն), այսինքն՝ տարբեր կոնցեպցիաներն ու սկզբունքները՝ էկլեկտիկորեն կամ օրգանապես զուգորդելու տենտենցները. Լոգիցիզմը առանձին դեպքերում հանես է գալիս որպես պսիխոլոգիզմի հակադրություն, ուղղվում մանավանդ լեզվական երեսութները նախ՝ որպես ենթագիտակցական հոգեկան ակտեր պատկերացնելու և երկրորդ՝ ինդիվիդուալիստորեն, անհատների դիրքերից մեկնաբանելու դեմ։ Ինչպես տեսանք, հոգեբանական ուղղության շատ ներկայացուցիչներ լուելայն կամ բացահայտորեն պայքարում էին լեզուն տրամաբանորեն մեկնաբանելու, լեզվական և քերականական կատեգորիաների միջև լիակատար զուգահեռ անցկացնելու, լեզվի և մտածողության միջև ուղղագիծ համապատասխանություն տեսնելու փորձերի դեմ, փորձեր, որոնք հանդես են եկել սկսած Արիստոտելից, դրսևորվել միջնադարյան հայեցողական քերականության, XVII—XVIII դդ. ընդհանրական քերականության, XIX դ. լոգիցիզմի, այլև նույնիսկ պատմա-համեմատական քերականության վաղ ներկայացուցիչների մոտ որպես «զուգահեռականության» տեսություն։ Լեզվի հոգեբանական մեկնաբանության շատ կողմնակիցներ ժխտում եին այդպիսի «զուգահեռականությունը»։ Ծտայնթալը, Պոտերնյան, ապա և Պառլը արմատական տարբերություն էին տեսնում տրամաբանական և քերականական կատեգորիաների միջև՝ մինչև գրեթե ամեն մի կապի ժխտում. Ծովարդուը նշում էր, որ տրամաբանությունը լեզվաբանության բնագավառից հանելը լեզվաբանների հոգուց ծանր քար կհաներ. Մարտին քննադատության էր ենթարկում լեզվի և մտածողության զուգահեռականության տեսակետը. Այս ենթաշրջանի լոգիցիզմի որոշ ներկայացուցիչներ հանդես են գալիս նման ծայրահեղությունների

դեմ, համապատասխանություններ սրոնում, փորձում հաշտեցնող գիծ տանելը Այսպես, Եսպերսենի լոգիզիզմը ոչ թե այս կամ այն կոնկրետ տրամաբանական կոնցեպցիան լեզվաբանության նկատմամբ կիրառելու փորձ է, այլ լեզվի և մտածողության, քերականական և տրամաբանական կատեգորիաների առնչությունները բացահայտելու ձգտման արտահայտություն. «Քերականությունը,— գրում է նա,— չի պարունակում դպրոցական տեսական տրամաբանությունը կամ համենայն դեպս այն ամբողջովին չի ներառում. բայց նա պարունակում է այն, ինչ կարեցի է կոչել ամենօրյա գործնական տրամաբանություն։ Նա մարմնավորում է անթիվ սերունդների առողջ բանականությունը՝ կիրառած մարդկային կյանքի այն երեսությների նկատմամբ, որոնք արտահայտություն և հաղորդում են պահանջում։ Այսպիսով, Եսպերսենը բողոքում է և տրամաբանական ուամունքները լեզվի նկատմամբ մեխանիկորեն կիրառելու, և քերականությունն ու տրամաբանությունը, քերականական ու տրամաբանական կատեգորիաները իրարից լիսվին անջատելու, իրար հակադրելու փորձերի դեմ։ Եսպերսենի լոգիզմը տեղեռլոգիական (նպատակաբանական) և բիոլոգիական լոգիզմի է. լեզվի մեջ Եսպերսենը տեսնում է տրամաբանական կատարելության հասնելու ներքին ձգտում. միաժամանակ նա կարևոր աեզ է տալիս բիոլոգիական գործոնների գերին։ Այս բոլորը նա էլլեկտիկորեն գուգորդում է սոցիոլոգիզմի հետ։

Լոգիզմի տեսդենցներ այս Էնթագրզանում հանդես են եկել նաև Նորենի<sup>1</sup>, Ջյուտտերլինի<sup>2</sup>, Պոյշբայնի<sup>3</sup>, մասամբ և սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցիչներ Բրյունոյի<sup>4</sup>, Սեշենի մատ և այլն։

Իր սկզբնական շրջանի աշխատություններում Դոյչը այն հանդես է, գալիս որպես Հուսենովի ֆենոմենոլոգիական փիլիսոփայու-

<sup>1</sup> O. Jespersen, Logic and Grammar, 1924, էջ 4.

<sup>2</sup> A. Noreen, Einführung in die wissenschaftliche Betrachtung der Sprache. Beiträge zur Methode und Terminologie der Grammatik, Halle (Saale), 1923 [Եղբայրի շնորհանքի քերականության („Wårt Språk“) ընդհանուր բնույթ ունեցող մասերի թարգմանությունը].

<sup>3</sup> L. Sütterlin, Die deutsche Sprache der Gegenwart, V Aufl., Leipzig, 1922.

<sup>4</sup> M. Deutschbein, Sprachpsychologische Studien, I—II. Götthen, 1918—1919. System der neuenglischen Syntax, 1931.

F. Brunat. La Pensée et la langue. Paris, 1922.

թյան հետևորդ. Նա ձգուում է ստեղծել մաքուր և ապրիորի քերականություն՝ կառուցվածքի ֆենոմենությական հիմունքներով։ Այս քերականությունը պետք է տարբերվի ինչպես պատմական, այնպես էլ տարածված նկարագրական քերականություններից, ունենալուամբանական-հոգերանական հիմնավորվածություն։

Տարբերելով սուրյեկտիվ մտածողությունը՝ «բյեկտիվ» և շեղոք մտածողությունից՝ Դոյշբայնը գտնում է, որ ավելի շատ ուշադրություն պետք է նվիրվի սուրյեկտիվ մտածողությանը, լեզվի ներքին ձևին։ Դրանով իսկ մենք կդադարենք մտածողության լեզվական ձևին կառշելուց և կզբաղվենք ինչպես նրա փիլիսոփայական կողմով, այնպես էլ էսթետիկական արժեքով<sup>1</sup>։

Դոյշբայնի լեզվաբանական սկզբունքները հանգեցնում են տրամաբանական և քերականական կատեգորիաների սահմանների շնչմանը, լեզվի քերականությունը տրամաբանական սխեմաների մեջ խցկելում, լեզվական ձևի արհամարժմանը։ Այսպես, իր «Նոր անգլերենի շարահյուսության սիստեմը» աշխատության մեջ նա առանձնացնում է բայական 16 եղանակ՝ հաշվի առնելով նկարագրական բոլոր զուգորդումների մեջ բայի հանդես բերած եղանակային իմաստների առում բայի շիմաստները։ Բոռն բայի եղանակային ձևերը Դոյշբայնը հաշվի չի առնում՝ ամբողջովին հենվելով իմաստի վրա և միանույն մակարդակի վրա դնելով եղանակային իմաստի արտահայտման բոլոր կարգի եղանակները։ Քերականական ձևը որպես այդպիսին անուշադրության է մատնվում, դադարում ուսումնասիրության ինքնուրույն առարկա լինելուց։

Լեզվի պատմական զարգացման մեջ Դոյշբայնը կրկին գերակոռություն է տալիս իմաստին, ընդ որում իմաստային փոփոխությունները մեկնաբանում է իդեալիզմի ու ապրիորիզմի դիրքերից։ Քերականական այս կամ այն ձևի գարգացումը նա բոլոր դեպքերում փորձում է մեկնաբանել այնպես, որ բացահայտվի այդ ձևի առաջացման իմաստային, տրամաբանական-հոգերանական հիմքը։ Այս տեսակետից առանձնապես հիշատակելի է անվանական նախադասության առաջացման վերաբերյալ նրա կարծիքը, որ անքննադատարար յուրացվել է նաև Մաոի որոշ հետեւրդների (Ս. Գ. Կացնելսոնի) կողմից<sup>2</sup>։ Ըստ Դոյշբայնի՝ անվանական նախադասու-

<sup>1</sup> Հմմ. N. Dragani, Isteria syntaxei, էջ 82.

<sup>2</sup> Հմմ. В. В. Флагоградов, Критика концепции стадиальности в развитии языка и мышления, „Против вульгаризации и извращения марксизма в языкоznании“, I, М., 1951, էջ 120—130.

թյան առաջացումը կապված է իրականության առարկաները որպես սուբստանցներ գիտակցելու հետ, որի բազայի վրա հանդես է գալիս և ուղղական (postinatius, բառացի՝ անվանական) հոլով։

Բրյունոն իր «Մտածողություն և լեզու» գրքում փորձում է պարզել լեզվի և մտածողության փոխարաբերության հարցը նոր ձևով. սակայն շատ դեպքերում նրա արտահայտած մտքերը համընկնում են ժիրարի մտքերի հետ։ Բրյունոն ընդհանուր առմամբ նիհիլիստական դիրք է բռնում խոսքի մասերի նկատմամբ՝ շկարողանալով գտնել նրանց դասակարգման բավարար տրամաբանական հիմքեր։ Նա տարբերում է գոյականներ, բայեր, ածականներ, մակրայներ և մասնիկներ։

Նորեենը ձգտում է խնամքով առանձնացնել լեզվի իմաստային կողմի ուսումնասիրությունը (լինի այն բառային թե քերականական իմաստ) և ուշադրությունը կենտրոնացնում է դրա վրա։ Նա տալիս է քերականության (լայն առումով) բաժինների հետեւյալ խմբավորումը՝<sup>1</sup> 1) հնչյունաբանություն կամ «ֆոնոլոգիա»՝ լեզվի հնչյունական, ֆիզիկական կողմի ուսմունքը (օժանդակ դիսցիպլին). 2) իմաստաբանություն կամ «սեմիոլոգիա»՝ լեզվի իմաստային կողմի ուսմունքը՝ անկախ այդ իմաստների արտահայտման միջոցներից, այն է՝ լեզվի հոգեբանական-տրամաբանական տեսությունը. 3) ձևաբանություն կամ «մորֆոլոգիա»՝ լեզվական ձևերի ուսմունքը՝ անկախ նրանց արտահայտած իմաստից։ Լեզվի իմաստային կողմի քննության մեջ նորեենը ելնում է որոշակի տրամաբանական սխեմաներից՝ առանց հաշվի առնելու լեզվի իրական տվյալները և տվյալ լեզվի առանձնահատկությունները։ Այսպես. շվեդերենի բայական ժամանակների նորեենյան սխեման չի ընդգրկում շվեդերենի բայական ժամանակային ձևերի լույսը ունալ իմաստները, որպնք ոչ միշտ են համապատասխանում այդ վերացական սխեմային։ Նորեենի ուշագրության կենտրոնում այս դեպքում միայն ստատիկ քննության հարցերն են, որպնք նախնամքով առանձնացնում է պատմական կողմից։

0. Եսպերսեն. — Դանիացի գիտնական Եսպերսենը (1860—1942) պատկանում է երիտքերականության սկզբունքների՝ նկատմամբ օպոզիցիոն դիրք բռնած և ինքնուրացն ուղիներ որոնող լեզվաբանների թվին։ Լեզվի ստատիկ ուսումնասիրության հարցերն

<sup>1</sup> Հմատ. Ս. С. Մասլովա-Լաշանская. Шведский язык. I., Л., 1953, էջ 10.

Հետ միասին նա ուշադրություն է հատկացրել նաև պատմական ուսումնասիրության հարցերին, ընդ որում նրան հետաքրքրել են և՛ ընդհանուր լեզվաբանական, և՛ առանձին լեզուների հետ կապված պրոբլեմները:

Իր գործունեությունն սկսելով դեռևս *XIX* դարում՝ երիտքերականների տիրապետության շրջանում, ԾԱՊԵՐՍԵՆԸ՝ այն շարունակում է ընդհուպ մինչև մեր օրերը, ընդ որում հանդես է բերում հայացքների զգալի էվոլյուցիա: ԾԱՊԵՐՍԵՆԸ լեզվաբանական հայացքների քննությունը դնելով այս ենթաշրջանում՝ մենք այնուամենայնիվ անհրաժեշտ ենք համարում նշել այս բանի որոշ պայմանականությունը. ԾԱՊԵՐՍԵՆԸ շատ կողմերով կապված է ժամանակակից լեզվաբանության հետ և զգալի դեր է կատարել այդ լեզվաբանության ձևավորման գործում:

ԾԱՊԵՐՍԵՆԸ ընդհանուր լեզվաբանական հայացքները արտահայտություն են գտել նրա այնպիսի աշխատություններում, ինչպիսիք են «Առաջադիմությունը լեզվի մեջ», «Լեզու. Նրա բնույթը», «Պարզացումը և ծագումը», «Քերականության փիլիսոփայությունը», «Քերականության սիստեմը», «Վերլուծական շարահյուսություն», «Արդյունավորությունը լեզվական փոփոխության մեջ», «Մարդկությունը, ազգը և անհատը լեզվաբանական հայեցակետից»<sup>1</sup> և այլն: Սրանց մեջ ԾԱՊԵՐՍԵՆԸ զարգացրել է նաև իր քերականական վերլուծության եղանակների ուսմունքը:

ԾԱՊԵՐՍԵՆԸ ականավոր հնչյունագետներից մեկն է: Հնչյունաբանությանը նվիրված նրա աշխատություններից հիշատակելի են «Հնչյունաբանությունը», «Հնչյունաբանական հիմնական հարցերը», «Հնչյունաբանության դասագիրքը»<sup>2</sup> և այլն:

ԾԱՊԵՐՍԵՆԸ հայտնի է նաև անգլերեն լեզվին նվիրված իր աշխատություններով, որոնց մեջ հիշատակելի են «Անգլերենի զար-

<sup>1</sup> O. Jespersen, Progress in Language, with Special Reference to English, London, 1894. Language; its Nature. Development and Origin, London, 1922. The Philosophy of Grammar, London, 1924. The System of Grammar, „Linguistic“ ժողովածուում, Copenhagen, 1933. Analytic Syntax, Copenhagen, 1937. Efficiency in Linguistic Change, HFM, XXVII, 4, 1941. Mankind, Nation and Individual from a Linguistic Point of View, London, 1946.

<sup>2</sup> O. Jespersen, Fonetik, en systematisk fremstilling af læren om sproglyd, København, 1897—1899. Phonetische Grundfragen, Leipzig, 1904. Lehrbuch der Phonetik. Leipzig—Berlin, 1904.

գացումն ու կառուցվածքը». «Անգլերենի քերականության էական կողմերը», «Ժամանակակից անգլերենի քերականությունը»<sup>1</sup> և այլն:

Եսպերսենը ևս պատկանում է այն լեզվաբանների թվին, որոնք օպողիցիոն դիրք են գրավել երիտքերականների հնչյունական օրենքի ըմբռնման հանդեպ<sup>2</sup>: Նա կասկածի տակ է առնում հնչյունական օրենքների՝ բացառություն շճանաշելու դրույթը և կասկած հայտնում, որ լեզվի ավելի խոր հետազոտությունը հաստատի երիտքերականների տեսակետը: Դեռևս 1887 թ. իր «Հնչյունական օրենքի հարցի շուրջը»<sup>3</sup> հոդվածում երիտքերականների խիստ հնչյունական օրենքների փոխարեն նա առաջ է քաշում անխստապահանց հնչյունական բանաձևերի դրույթը՝ բավարար համարելով, որ ստուգաբանողը իր մեկնաբանությունը հիմնավորի համատիպ հնչյունական փոփոխություն կրած բառերի օրինակով: Իր այս հոդվածին որպես լրացում գրած ավելի ուշ շրջանի (1937 թ.) հոդվածում նա նշում է, որ հնչյունական փոփոխություններն իրոք մեծ մասամբ կանոնավոր բնույթ ունեն, բայց այդ կանոնավորության պատճառը ոչ թե մեխանիկական է, այլ հասարակական: այս դեպքում էլ, սակայն, հասարակական զարգացման մեջ Շոլիարդտի նման Եսպերսենը գլխավոր գործոնը համարում է նմանողությունը: «Հնչյունափոխության կանոնավորությունը աեղի չեր ունենա, եթե լեզուն առաջին հերթին հասարակական փաստ, և նրա էական դրսեորումը նմանողությունը շիներ: Առանց նմանողության լեզու չկա»<sup>4</sup>: Նույն այդ 1886 թ. հոդվածում Եսպերսենը մտցնում է «արժեքի սկզբունքի» (Wertprinzip, Principle of value) գաղափարը, որ հետագայում զարգացնում է նաև իր «Լեզու. նրա բնույթը, զարգացումը և ծագումը» գրքում (1922) և 1933 թ. հոդվածում: Ի տարրերություն Շոլիարդտի, որը բառերի

<sup>1</sup> O. Jespersen, The Growth and Structure of the English Language, Leipzig, 1905. Essentials of English Grammar, 1954. A Modern English Grammar on Historical Principles, I—VII, 1909—1949. Մինչև 1930 թ. Եսպերսենի հրապարակած աշխատությունների մատենագրական ցանկը տե՛ս „A Grammatical Miscellany offered to Otto Jespersen on his Seventieth Birthday“ գրքում, Copenhagen—London, 1933, էջ 433—457.

<sup>2</sup> Հմմա. I. Fónagy. Über den Verlauf des Lautwandels, ALASH, VI, 1—3, 1956, էջ 175—176.

<sup>3</sup> O. Jespersen. Zur Lautgesetzfrage, TIZS, 1887. այլէ „Linguistica“ ժողովածուում, Copenhagen, 1933.

<sup>4</sup> Նույն աղջը, էջ 227.

մաշումը կապում էր գործածության՝ հաճախության հետ, նսպի-  
սենը «մեխանիկական բացատրության» փոխարեն փորձում է տալ  
«հոգեբանական բացատրություն»։ Ըստ ծապերսենի՝ բառը են-  
թարկվում է արտակարգ համառոտման և մաշման այն դեպքում,  
երբ այն հեշտությամբ կարող է հասկացվել կոնկրետ իրադրության  
հետ կապված (հմմտ. ողջույնի, հրաժեշտի և այլ կարգի բառերը)  
և հաղորդակցման նպատակի համար արժեքազրկվում է։ Առանձ-  
նապես խիստ կերպով է բողոքում ծապերսենը հնչյունափոխու-  
թյունը բառիմաստից կտրելու երիտքերականական տեսության ու  
պրակտիկայի դեմ. այս կապակցությամբ դեռևս 1904 թ. նա  
նշում էր, որ լեզվի արտաքին և ներքին կողմերը, հնչյունը և իմաս-  
տը սերտ փոխհարաբերության մեջ են։

Հնչյունաբանության բնագավառում ծապերսենի կատարած աշ-  
խատանքի մեջ հատուկ կարևորություն ունի վանկի ուսմունքը։  
Վանկը սահմանելիս ծապերսենը ենում է հնչյունական շղթայից  
և ոչ թե առանձնակի հնչյունից։ Շղթայի մեջ վանկերի առանձնաց-  
ման, վանկարար ու ոչ վանկարար հնչյունների տարրերման և  
վանկերի սահմանների որոշման համար նաև հիմք է ընդունում  
լիահնչության (Schallfülle) սկզբունքը։ Որոշ աստիճանավորու-  
թյուն հաստատելով հնչյունների միջև ըստ լիահնչության՝ ամենա-  
լիահունչ հնչյունից (a-hg) մինչեւ ամենանվազ լիահունչ հնչյուն-  
ները (p, t, k)՝ ծապերսենը գտնում է, որ խոսքի շղթայի մեջ շրջա-  
կա հնչյունների համեմատությամբ ավելի լիահունչ հնչյունը վանկ  
է կազմում և դառնում այդ վանկի գլխավոր (վանկարար) հնչյունը։

Ծապերսենը պատկանում է այն լեզվաբանների թվին, որոնք,  
ի տարրերություն երիտքերականների, կարեռ տեղ են տալիս  
լեզվի և՝ պատմական, և՝ ստատիկ ուսումնասիրության հարցերին։  
Եթե հոգեբանական ուղղության ներկայացուցիչները՝ Շտայնթալը  
և շատ երիտքերականներ, քերականությունը կտրում էին տրա-  
մարանությունից, ապա ծապերսենը ամենայն խստությամբ դնում  
է քերականական ու տրամարանական կատեգորիաների կապի հար-  
ցը, անհրաժեշտ համարում լեզվի արտաքին կողմը սերտորեն զու-  
գակցել ներքինի հետ և իր առաջարկած՝ ստատիկ վերլուծման  
եղանակների մեջ ելնում այդ անխղելի կապից։

Լեզվի տրամարանական բովանդակության գլխավոր «խան-  
գարիչը» ծապերսենը համարում է հուզականությունը, որին նա  
կարեռ դեր է հատկացնում։ Ամեն մի քերականության տրամարա-

նական իդեալն է ամեն մի ֆունկցիայի համար մեկ արտահայտություն և ամեն մի արտահայտության համար մեկ ֆունկցիա ունենալը. սակայն լեզուն այս իդեալը չի իրականացնում, որովհետեւ հոգական տարրը պարսպում և երանգավորում է մտքի արամաբանական արտահայտությունը:

Իր երկարատև գործունեության ընթացքում ծափերսենը մեծ ուշադրություն է դարձրել լեզվի ծագման ու զարգացման, լեզվի պատմական փոփոխությունների բնույթի, տենդենցների և պատմառների հարցերի վրա: Այս հարցերի լուծման մեջ նա նշանակալից շափով տուրք է տալիս բիոլոգիզմին, որ երևան է գալիս հատկապես երեխայի լեզվի զարգացման և խառն (հիբրիդային) լեզուների քննության մեջ: Դեռ ավելին. լեզվաբանության մեթոդը ծափերսենը համարում է «բիոլոգիական»՝ այս տեսակետից հեռու շգնալով XIX դ. բիոլոգիզմի ներկայացուցիչներից: Սակայն այս բոլորով հանդերձ՝ ծափերսենը լեզուն դիտում է որպես հասարակականորեն պայմանավորված երեսութ, լեզվական պրոցեսի բացատրության մեջ կարեռ տեղ է տալիս հաղորդակցման կարիքներին:

Ծափերսենի լեզվաբանական կոնցեպցիայի մեջ էկլեկտիկորեն կուգորդվում են լեզվի ինդիվիդուալիստական և սոցիոլոգիական մեկնաբանության տարրերը, որոնք նա հետագայում փորձում է ավելի օրգանական կապի մեջ դնել՝ Սույուրի լեզվի և խոսքի փոխհարաբերության ուսմունքի ազդեցության տակ<sup>1</sup>: Լեզվական պրոցեսը ծափերսենը պատկերացնում է որպես որոշակի նպատակով, այն է՝ հաղորդակցման նպատակով կատարվող գործողություն: Լեզվական յուրաքանչյուր միավոր, յուրաքանչյուր բառ գոյություն ունի ոչ թե ինքնին, այլ որպես այդ հաղորդակցման կարիքներին ծառայող մի միջոց. բառը ինքնակա կյանք չունի, այլ գոյություն է ստանում հաղորդակցման պրոցեսի հետ կապված, որպես մի բառ, որ արտասանվում է, լսվում և հիշողության մեջ պահվում, այսինքն՝ կամ անմիջաբար մասնակցում է հաղորդման ակտին, կամ նախատեսվում է հետագա մի այդպիսի ակտի համար: Լեզվական (իմա՞ խոսքային) ամեն մի ակտ անհատական ակտ է, սակայն այդ ակտը կատարող անհատը կազմում է նման սովորություններ ունեցող հանրության բաղկացուցիչ մասը. հետևաբառ-

<sup>1</sup> Հմա. O. Jespersen, Mankind, Nation and Individuality from a Linguistic Point of View, London, 1946.

լեզուն հասարակական բնույթ ունի: Լեզվական պրոցեսի էությունը բացատրելու համար անհրաժեշտ է ստեղծել մի բիոլոգիական կամ, ավելի ճիշտ, կենսագրական (բիոգրաֆիական) լեզվաբանություն, որի նպատակն է ուսումնասիրել խոսող մարդու կենսագրությունը: Դատելով այս կերպ՝ ծապերսենը մեծ տեղ է տալիս երեխայի լեզվական զարգացման ուսումնասիրությանը, աշխատում պարզել երեխայի կողմից մայրենի լեզվի յուրացման պրոցեսի առանձնահատկությունները և, հենվելով սեփական տվյալների վրա, որոշ հասակային էտապներ առանձնացնել: Նա տարրերում է երեխայի զարգացման 3 շրջան՝ ճիշերի, թոթովանքի և իսկական լեզվի: Թոթովանքի շրջանը դիտելով որպես ավելի քաղցր ու ավելի հարմար հնչյուններ արձակելու շրջան՝ ծապերսենը սրանով իսկ փորձում է կապ ստեղծել երեխայի լեզվի զարգացման և մարդկային լեզվի՝ նախնական երգից ծագելու իր տեսակետի միջև: Սրանով ծապերսենը տարրերում է մանկական լեզուն, այն է՝ երեխայի լեզվի անհատական շրջանը ընդհանուր լեզվից, այն է՝ հասարակական շրջանից<sup>1</sup>:

Լեզվի ծագման հարցում ծապերսենը կարծես թե իստ բացասական դիրք է գրավում հատկապես ձայնարկությունների տեսության նկատմամբ: Ըստ նրա՝ բառի և ձայնարկության միջև կա ոչ միայն մեծ տարրերություն, այլև հակադրություն. մարդու դիմում է ձայնարկությանը, եթե խոսել չի ուզում, և դիմում է բառին, եթե խոսել է ուզում: Սակայն նույնպիսի խիստ վերաբերմունք ծապերսենը հանդես չի բերում հնչյունների սիմվոլիկայի հանդեպ, որ բնածայնությունների տեսության մի տարատեսակն է, այսպես. նա պնդում է, որ չ-ն փոքրության գաղափար է արտահայտում:

Ծապերսենը հեղինակ է լեզվի ծագման մի յուրահատուկ տեսության, որ որոշ շափով կապված է ժամանակական արժարժած գաղափարների հետ: Ըստ ծապերսենի՝ լեզուն սկիզբ է առնում նախնական երգից, որ նույնպիսի բնական մի երգ էր, ինչպիսին կատունների սիրահարական երգն է տանիքների վրա: Այս երգերը կազմող հնչյունական զուգորդումները, որոնք նախապես որոշակի իմաստ չունեն, հետագայում սկսում են դառնալ հատուկ անուններ՝ ըստ այն բանի, թե ո՞ւմ են ուղղված: Լեզվի հետագա քայլերը ծապերսենը տեսնում է այդ հատուկ անունների՝ հասարակների.

<sup>1</sup> Հմմտ. N. Dragănu, Istoria syntaxei, Lucrare postuma, București, 1945.

վերածվելու մեջ՝ նշելով, որ դրանցից էլ հնչյունական ու իմաստային փոփոխությունների միջոցով քերականական ու բառակազմական մասնիկներն են ծագում: Որպես իր տեսության ապացույց եսպերսենը բերում է հին և նոր լեզուների ունեցած տարրերությունների փաստերը. ըստ եսպերսենի՝ հին լեզուներն ավելի բարդ, անկանոն են, քան նորերը, հին լեզուները երաժշտական ու բանաստեղծական են, նորերը՝ տրամարանական: Այստեղից էլ, ըստ եսպերսենի, բխում է հին լեզուների՝ նախնական շտարորշված երգին մոտ լինելը: Այս տեսակետը լայն ընդունելություն չի գտել գիտական շրջաններում:

Ավելի տարածված է եսպերսենի տեսակետը՝ լեզուների դարգայման ուղղության ու լեզուների զարգացածության շափանիշների մասին, մի տեսակետ, որ ունեցել է և՛ իր կողմնակիցները, և՛ հակառակորդները: Ըստ եսպերսենի՝ լեզվական փոփոխությունները քննելիս պետք է նկատի առնել նրանց արդյունավետությունը, այն հանգամանքը, թե որքան' աշխատանք է գնում խոսելու և լսելու պրոցեսում և որքան' վ են լեզուները զարգացման ընթացքում դրանք նվազեցնում: Նա տեսնում է լեզվի զարգացման երկու հակադիր տենդենց՝ հարմարության ձգտում, որ անհատական բնույթի գործոն է, և պարզության ձգտում, որ հասարակական բնույթի գործոն է: Լեզուն դիտելով յուրատեսակ նպատակավորության (տելեոլոգիայի) դիրքերից, այն համարելով նպատակադիր գործունեություն՝ եսպերսենը կարծում է, որ լեզվի փոփոխությունները պետք է գնահատվեն այդ նպատակներին համապատասխանելու տեսակետից: Ոչ առանց կանխակալ կարծիքի և նացիոնալիզմի զգացումի՝ եսպերսենը այս առումով ավելի կատարյալ է համարում վերլուծական (անալիտիկ) տիպի լեզուները և անցումը համադրականությունից վերլուծականություն համարում առաջադիմություն. որպես այդպիսի կատարյալ լեզվի օրինակ նա դիտում է անգլերենը: Վերլուծականության զարգացումը համադրականության համեմատությամբ առաջադիմություն համարելու եսպերսենյան տեսակետը առաջին փորձն էր վերանայելու Շլեգելից սկսած տարածում գտած այն տեսակետը, թե վերլուծականությունը համադրականության համեմատությամբ ներկայացնում է ետադիմություն, թեքական հարուստ ձեերի քայլայում և հողմահարում: Ըստ եսպերսենի՝ լեզուների պատմական զարգացման մեջ նկատելի են՝ 1) համառոտության, 2) քերականական բազմաձևու-

թյունը պակասեցնելու, 3) անկանոնությունները վերացնելու, 4) համադրականությունից դեպի վերլուծականություն գնալու (մի բառով շատ բան ասելուց դեպի ամեն բան առանձին ասելու), 5) քերականական ձևերի պակասեցման, 6) ազատ շարադասությունից կայուն շարադասության անցնելու միջոցով երկդիմության վերացման և 7) համաձայնության կանոնների պարզման ու կանոնավորման միջոցով կրկնություններից խուսափելու ձգողումները:

Եսպերսենի տեսակետները, բնականաբար, ունեցել են և հակառակորդներ: Մասնավորապես նման կարծիքի դեմ է Վանդրիեսը, որը լեզվի զարգացումը դիտում է որպես բոլոր էտապներում անընդհատ փոփոխվող հավասարակշռություն. բնական լեզուն երբեք չի կարող հասնել այնպիսի տրամաբանական կատարելության, ինչպիսին ունեն արհեստական լեզուները: Բ. Կոլլինդերը «Լեզվի վերլուծական զարգացումը և լեզվաբանական նպատակաբանությունը» հոդվածում<sup>1</sup> ցույց է տալիս վերլուծականության զարգացման հետ միասին համադրականության զարգացման տեսնեցները, ճշտում է կցական լեզուների բնույթի հարցը:

Լեզվական սուբստրատին՝ լեզվական փոփոխության մեջ եսպերսենը միայն որոշ տեղ է հատկացնում՝ գտնելով, որ այն չի կարելի ունիվերսալացնել և նրանով բացատրել ամեն ինչ: Եսպերսենը աւարբերում է փոփոխությունների 2 խումբ՝ 1) փոփոխություններ, որոնք առաջանում են լեզվի փոխանցումից այն սերունդներին, որոնք լեզուն նոր են յուրացնում, այսինքն՝ օատարերկրացիներին և երեխաններին. առանձնապես կարենոր տեղ է տալիս եսպերսենը երեխանների դերին. 2) փոփոխություններ, որոնք կախված չեն լեզվի այդպիսի փոխանցումից:

Եսպերսենը առաջ է քաշում լեզվի ստատիկ վերլուծության նոր եղանակ, որ զգալի ազդեցություն է գործել քերականական նորագույն ուսմունքների վրա՝ մրցելով թլումֆիլդի վերլուծման եղանակի հետ: Եսպերսենն ամենից առաջ հրաժարվում է խոսքի մասերի տրադիցիոն ուսմունքից և առաջարկում վերլուծության նոր սկզբունք, որտեղ փաստորեն առաջնություն է տրվում ֆունկցիոնալ-շարահյուսական շափանիշներին: Իստ նրա՝ կարելի է տարրերել վերլուծման 3 կատեգորիա, որոնց տակ կարող են բեր-

<sup>1</sup> B. Collinder. Analitische Sprachentwicklung und linguistische Teleologie, „Mielvitudományi Közlemeneyek, L, 1935, էջ 51–63.

վել և՝ բառերը, և՝ նախադասությունները. վերլուծման ժամանակ առանձնացվող այդ երեք կատեգորիաները կամ կարգերը (ranks) նա կոչում է առաջնային (primary), երկրորդային (secondary) և երրորդային (tertiary). 1) առաջնային են համարվում զուգորդման գլխավոր, անկախ անդամները. այս ֆունկցիայով կարող են հանդես գալ առավելապես գոյականները. բայց կարող են հանդես գալ և այլ խոսքի մասեր. այսպիսին են և որոշիչ երկրորդական նախադասություն ունեցող գլխավոր նախադասությունները. 2) երկրորդային են համարվում առաջնային կարգի բառերը կամ նախադասությունները լրացնող, որոշող բառերը և նախադասությունները՝ առանձնապես բայերը, ածականները և որոշիչ երկրորդական նախադասությունները. 3) երրորդային են համարվում երկրորդ կարգի բառերը և նախադասությունները լրացնող բառերն ու նախադասությունները, այն է՝ հիմնականում մակրայները կամ պարագայական ֆունկցիա կատարող այլ խոսքի մասերն ու նախադասությունները. Վերլուծման այս սկզբունքը, Եսաւերսնի կարծիքով, հնարավորություն է տալիս խուսափելու բառերի խոսքիմասային պատկանելությունը որոշելիս առաջ եկող դժվարություններից: Զուգադրելով իր Յ կարգեր՝ նախադասության անդամների տրադիցիոն բաժանման և բառերի հոլովական ձևավորմամբ որոշվող ֆունկցիոնալ ըմբռնումների հետ՝ Եսպերսենը առաջին կարգի է համարում ենթակայի, խնդրի, ստորոգելիի հոլովները, երկրորդ կարգի՝ հատկացուցչի հոլովը կամ սեռականը, երրորդ կարգի՝ ժամանակի, տեղի, շափի, ձևի և միջոցի հոլովները: Ինչպես տեսնում ենք, այս վերլուծման ժամանակ դժվարություններ են ծագում խնդիրների հարցում, որոնք մի դեպքում կախյալ անդամ են (որպես բայ-ստորոգյալի լրացում), մյուս դեպքում՝ անկախ անդամ (իրենց լրացումների նկատմամբ): Եսպերսենի վերլուծության հիմքում դրված է կախվածության սկզբունքը:

Բառազուգորդման կարգերի այս ուսմունքը Եսպերսենն անհրաժեշտաբար լրացնում է ստորոգման գաղափարով և տարբերում նախադասությունը այլ կարգի բառազուգորդումներից: Նա տարբերում է բառազուգորդման երկու տիպ՝ կցույթ (pexus) և հարում (junction). առաջինը ստորոգելիական զուգորդումն է, նախադասություն առաջ բերող կապակցությունը (ենթակայի և ստորոգյալի կապակցությունը), երկրորդը՝ ոչ ստորոգելիական, որոշիչ-որոշյալային կապակցությունը. այսպես, օրինակ՝ A furiously barking dog «կատաղորեն հաջող շուն» և The dog barks furiously «շունը կատաղորեն հաջում է» կապակցությունները եր-

կու տարբեր տիպի կապակցություններ են, մեկը՝ հարում (junction), մյուսը՝ կցույթ (pexus). առաջին կապակցության մեջ (a) dog-ը («շուն») առաջին կարգի բառ է, barking-ը («հաշող»)՝ երկրորդ, furiously-ն («կատաղորեն»)<sup>1</sup> երրորդ:

Կցույթի դեպքում ծապերսենը ենթական դիտում է որպես առաջնային անդամ, ստորոգյալը՝ երկրորդային, ընդ որում ենթական սահմանում է որպես անդամ, որի մասին խոսվում է, ստորոգյալը՝ որպես այն, ինչ խոսվում է ենթակայի մասին. խնդիրները դիտվում են որպես երկրորդ առաջնայիններ, բայիմաստը լրացնող բառեր:

Նշելի է, որ nexus և junction բառերը ծապերսենը գործածում է որոշ երկիմաստությամբ, մի կողմից՝ նշանակելով կապի բնույթը, մյուս կողմից՝ կապակցությունն ինքը (անդամներով հանդերձ):

Ի տարբերություն ստրուկտուրալիստական ուսմունքների, հատկապես Բլումֆիլդի սիստեմի, ծապերսենը մեծ ուշադրություն է դարձնում իմաստային կողմին, իմաստային-տրամաբանական կախվածությանը: Մյուս կողմից՝ նա առաջարկում է եռամասնյա վերլուծման եղանակ, մինչդեռ Բլումֆիլդի և ամերիկյան այլ ստրուկտուրալիստների մոտ կիրառվում է երկնասնյա վերլուծությունը: Ծապերսենի սիստեմի թերությունը մի կողմից՝ տրամաբանական ու քերականական կատեգորիաների շփոթումն է, մյուս կողմից՝ բայ-ստորոգյալի բնույթի անբավարար լուսաբանությունը, բայ-ստորոգյալն անվերապահորեն երկրորդային կարգի մեջ դնելը: Սրա հետ միանում է և վերևում նշված՝ ինդրի բնույթի անբավարար լուսաբանությունը: Անգլերենին նվիրված իր աշխատություններից մեկում ծապերսենը առաջնային, երկրորդային և երրորդային կարգերի տարբերությունը համարում է զուտ տրամաբանական (իմա՞ Փունկցիոնալ տրամաբանական), իսկ դրանց հետ կապվող 3 խոսքի մասերի՝ գոյականների, ածականների և մակրայների տարբերությունը՝ զուտ քերականական. վերջին տարբերությունը այդ պատճառով էլ լեզվից լեզու փոփոխվում է<sup>1</sup>:

Լեզվի ուսումնասիրության բաժինների փոխհարաբերության սահմանման հարցում ծապերսենը հենվում է լեզվի հնչունական և իմաստային կողմերի տարբերման վրա: Նա տարբերում է առաջին հերթին հնչունաբանությունը և իմաստաբանությունը՝ որպես հնչունական և իմաստային կողմերի ուսումնասիրություն: Հստ ժապերսենի՝ քերականության (նեղ իմաստով) երկու բաժիններից

<sup>1</sup> Հմմա. O. Jespersen. A Modern English Grammar, II, էջ 5:

առաջինը ձեւաբանությունը՝ ձերի ուսմունքն է, երկրորդը՝ շարացյուսությունը՝ ֆունկցիաների ուսմունքը: Դրանց տարրերությունը եսպերսենը հանգեցնում է լոկ օբյեկտի նկատմամբ ունեցած հայցակետի տարրերությանը՝ նրան, որ ձեւաբանության մեջ հնչյունից գնում ենք դեպի իմաստը (ֆունկցիան), շարացյուսության մեջ՝ իմաստից (ֆունկցիայից) դեպի հնչյունը. ձեւաբանությունը ձերի ուսմունքն է, շարացյուսությունը՝ ֆունկցիաների<sup>1</sup>:

Իմաստաբանության պատմության համար կարեոր էր եսպերսենի «էլեզու» գրքում հայտնված այն միտքը, թե բառերը հանդես են բերում խմբեր կազմելու տեսնդենց: Սակայն եսպերսենը այս տեսնդենցի հիմքերը չեն պարզում:

### 3. ԷՍԹԵՏԻՉԱԼ

Ընդհանուր տեղեկություններ. Բ. Կրոշե.—Այս ենթաշրջանի լեզվաբանական ուղղություններից մեկի՝ էսթետիզմի ձևավորման համար կարեոր դեր է խաղում նեոհեղեղլական իդեալիստական էսթետիկան: Էսթետիկայի բնագավառում նեոհեղեղլական թենեդետո կրոշեն առաջ է քաշում նոր սկզբունք՝ լեզուն նույնացնելով արվեստի, լեզվաբանությունը՝ էսթետիկայի հետ<sup>2</sup>: Լեզվի մեջ, այսպիսով, միակողմանիորեն շեշտվում է նրա էսթետիկական կողմը: Կրոշեի ուսմունքը մեծ դեր է խաղացել այսպես կոչված իդեալիստական նեոֆիլոլոգիայի և նեոլինգվիստիկայի ձևավորման մեջ: Իր աշխատություններում, հատկապես իր ««էսթետիկան որպես արտահայտության գիտություն և որպես լոնդհանուր լեզվաբանություն»<sup>3</sup> գործում կրոշեն հոգեկան գործունեության հիմքում դնում է ինտուիցիան՝ ի հակագիր բանականության: Կրոշեի ուսմունքի համաձայն՝ արվեստը ծարայում ինտուիցիայի արտահայտությանը, և արտահայտությունը (== ար-

<sup>1</sup> Հմայ. O. Jespersen, Philosophy of Grammar, էջ 40, 45:

<sup>2</sup> Դեռևս XIX դ. կեսերին Գերբերը հանդիս էր եկել իր «էլեզու» որպես արվեստ („Die Sprache als Kunst“) գրքով, որի մեջ էսթետիզմը զուգորդված էր գործնական բանասիրության հետ: Սակայն Գերբերի գիրքը լայն արձագանք չդադար:

<sup>3</sup> B. Croce, Estetica come scienza dell' espressione e linguistica generale. Brevario die estetica, Palermo, 1902 (գերմ. թարգմ. Aesthetik als Wissenschaft des Ausdrucks und als allgemeine Linguistik, 1902. ռուս. թարգմ. Б. Кроche, Эстетика как наука о выражении и как общая лингвистика, I, M., 1920): Տե՛ս և B. Croce, Filosofia del linguaggio, „Conversazioni critiche“-ում, I սերիա, II հր., Bari, 1924, էջ 87—113.

տահայտչականությունը, expressione) ինտուիտիվ հիմք ունի. ինտուիցիան միաժամանակ և՝ արտահայտություն է, և՝ արվեստ: Լեզուն որպես ոգու ամենասկզբնական արտահայտություն նույնանում է արվեստի հետ, հետևաբար լեզվաբանությունը և էսթետիկան ինչ-որ տարրեր բաներ չեն. լեզվաբանությունը նաև էսթետիկա է. և՝ լեզուն, և՝ արվեստը ծառայում են ինտուիցիայի արտահայտությանը, միայն թե օգտվում են տարրեր միջոցներից, որ տվյալ դեպքում էական չէ: Էսթետիկան որակների գիտություն է և կարեռորություն չի տալիս արվեստագետի ու սովորական մարդու ինտուիցիայի տարրերությանը, որ բանակական և էմպիրիկ բնույթ ունի: Կրոշեն, այսպիսով, ուշադրությունը կենտրոնացնում է լեզվի ներքին, «հոգեկան» կողմի վրա. «Արվեստի գիտությունը և լեզվի գիտությունը, էսթետիկան և լեզվաբանությունը,—գրում է Կրոշեն, —բառիս բուն իմաստով որպես իսկական գիտություններ դիտված, ինչ-որ անջատ բան չեն, այլ միայն միասնական բան: Ոչ թե այն, թե գոյություն չունի լեզվաբանությունը որպես հասուն բնագավառ, այլ որ լեզվի իսկական գիտությունը՝ բնդհանուր լեզվաբանությունը, այն շափով, որ շափով կարող է հարաբերակցվել փիլիսոփայությանը, ոչ այլ ինչ է, եթե ոչ էսթետիկա: Ընդհանուր լեզվաբանության, այն է՝ փիլիսոփայական լեզվաբանության բնագավառի հետազոտողը գործ ունի էսթետիկական պրոբլեմների հետ, և ընդհակառակն: Լեզվի փիլիսոփայությունը և արվեստի փիլիսոփայությունը նույն բանն են»<sup>1</sup>: Կրոշեն բողոքում է լեզվի հոգեբանական մեկնաբանության, լեզվի զարգացման հիմքում ասոցիատիվ կապեր տեսնելու դեմ. Նոր բառի կազմությունը հնի հիման վրա, լեզվական նմանողությունը (իմիտացիան) ոչ թե ասոցիացիա է, այլ ստեղծագործություն: Կրոշեն պահանջում է լեզվի բննության միասնություն և լեզվական միակ իրականությունը համարում է «նախադասությունը»՝ դրան տալով խիստ լայն առում (ձայնարկությունից մինչև ամբողջական պոեմ՝ «նախադասություններ» են): Այս առումով նա քննադատում է նորմատիվ քերականությունը լեզվի մասնաւում, ոչ էսթետիկական քննության համար, լեզուն խոսրի մասների և քերականական կանոնների բաժանելու համար:

Էսթետիկմը միավորում է ոչ միայն ֆուլերի իդեալիստական նեոֆիլոլոգիայի դպրոցը, այլև այսպես կոչված նեոլինգվիստիկայի ներկայացուցիչներին, որոնք, իրենց ողջ էկլեկտիզմով հանդերձ,

<sup>1</sup> B. Croce, Estetica come scienza dell' espressione e linguistica generale, Bari, 1922, էջ 155—156.

լեզվին մոտենում են որպես էսթետիկական երևույթի՝ լեզվական հետազոտության բուն հարցերի քննության մեջ մեծ շափով տարբերվելով իդեալիստական նեռֆիլոլոգիայի ներկայացուցիչներից:

### ա) Իդեալիստական ռեոֆիլոլոգիա

Կարլ Ֆուլերը.— Ֆուլերը (1872—1947) լեզվաբանության մեջ հանդես է եկել XX դ. սկզբներից: Իր առաջին իսկ ընդարձակ տեսական աշխատության մեջ, որ կոչվում է «Պողիտիվիզմը և իդեալիզմը լեզվաբանության մեջ»<sup>1</sup>, նա գլխավոր հարվածն ուղղում է երիտքերականների դեմ: Պողիտիվիստ է նա համարում այն անձանց, որոնք զբաղվում են պատմական նյութի հավաքմամբ ու նկարագրությամբ՝ առանց խորանալու պատճառական կապերի մեջ, իդեալիստ՝ այն անձանց, որոնք մտահոգված են առավելապես պատճառական կապերի սահմանմամբ: Լավ պատմմաբանը, Ֆուլերի կարծիքով, պետք է հաշտեցնի այդ երկուսի պահանջները: Երիտքերականներին Ֆուլերը համարում է արմատական (ուղիկալ) պողիտիվիստներ՝ մեղադրելով նրանց տեսական կուրության մեջ, նախնական նպատակը (նյութերի հավաքումը) գլխավոր նպատակ դարձնելու մեջ: Այս կապակցությամբ ավելորդ շենք համարում նշել, որ Ֆուլերի ուսմունքի «իդեալիստական նեռֆիլոլոգիա» անվանումն ուղղված է «երիտքերականություն» (այլ հորչորշմամբ «նոր քերականություն» կամ «նեռգրամատիզմ») անվան դեմ: Հարցերի նեղ քերականացմանը Ֆուլերը հակադրում է լեզվի ուսումնասիրության լայն ֆիլոլոգիական պլանը՝ լեզվի և գրականության կապի մեջ:

Ֆուլերի այս առաջին ծրագրային աշխատությանը հետևում են մի շարք այլ աշխատություններ, որոնց մեջ նա կամ զարգացնում ու մանրամասնում է իր գիտական դրույթները, քննում լեզվի հարաբերությունը կուլտուրայի զանազան բնագավառների հետ, կամ դրանք կիրառում կոնկրետ պատմական երևույթների բացարձության մեջ: Նրա մյուս տեսական աշխատություններից են հետեւյալները՝ «Լեզուն որպես ստեղծագործություն և զարգացում»<sup>2</sup>, «Ընտիր հոգվածներ լեզվափիլիսոփիայության շուրջը»<sup>3</sup>, «Ոգին և

<sup>1</sup> K. Vossler, Positivismus und Idealismus in der Sprachwissenschaft, 1904.

<sup>2</sup> K. Vossler, Sprache als Schöpfung und Entwicklung, 1905.

<sup>3</sup> K. Vossler, Gesammelte Aufsätze zur Sprachphilosophie, 1923.

կուլտուրան լեզվի մեջ»<sup>1</sup>: «Ֆրանսիայի կուլտուրան իր լեզվական զարգացման հայելու մեջ»<sup>2</sup> աշխատությունում, որ հետագայում վերանվանվում է «Ֆրանսիայի կուլտուրան և լեզուն»<sup>3</sup>, Ֆուսլեր նպատակ է դնում իր տեսական դրութները կիրառել ֆրանսերեն լեզվի պատմության նկատմամբ: Ֆուսլերն ունի նաև գրականագիտական աշխատություններ:

Ֆուսլերն իր աշխատությունները գրում է մշուշապատ լեզվով՝ ընդունված տերմինները հաճախ գործածելով՝ տարբեր իմաստով՝ կամ երկիմաստորեն: Սրան միանում են այն հաճախակի փաստական անձշտությունները, որ նա թույլ է տալիս իր դրութները հիմնավորելու փորձերի մեջ: Հասկանալի է, թե ինչո՞ւ էին Ֆուսլերն ու նրա հետևորդները ենթարկվում այդպիսի խիստ քննադատության ու հարձակումների՝ տարբեր լեզվաբանների կողմից (Շյուրի. Յաբերգի և այլոց)<sup>4</sup>:

Ֆուսլերի սակավաթիվ հետևորդները գերազանցապես ոռմանագիտության բնագավառում են աշխատել: Օյգեն Լերխը ֆրանսերենի շարահյուսության մասնագետ է, լեռ Շպիցերը հեղինակ է ոռմանական լեզուների ոճաբանությանը, իմաստաբանությանը և ստուգաբանությանը նվիրված աշխատությունների, էտյեն Լորկը՝ անուղղակի խոսքին նվիրված մի աշխատության:

Իր յուրահատուկ կողմերով հանդերձ՝ Ֆուսլերի կոնցեպցիան մեկուսի չէր կանգնած լեզվաբանության զարգացման ընդհանուր ընթացքից և մեծ շափով պայմանավորված էր լեզվաբանական ու փիլիսոփայական նախորդ կոնցեպցիաներով: Ֆուսլերի լեզվաբանական կոնցեպցիայի բոլոր հիմնական կողմերը՝ նրա էսթետիզմը, իդեալիզմը, ժայրահեղ սուբյեկտիվիզմն ու ինդիվիդուալիզմը իրենց հիմքերն ունեն նախորդ հոսանքների մեջ, թեև Ֆուսլերը դրանք յուրատեսակ սինթեզի է ենթարկում և ներկայացնում նոր կերպարանքով:

1) Ինչպես տեսանք, Ֆուսլերն իր հարվածի գլխավոր ուղղությունը դարձնում է երիտքերականների դեմ, որպես նախորդ լեզվաբանության գլխավոր հոսանքի: Նա քննադատում է երիտ-

<sup>1</sup> K. Vossler, Geist und Kultur in der Sprache, 1925.

<sup>2</sup> K. Vossler, Frankreichs Kultur in Spiegel seiner Sprachentwicklung, 1913.

<sup>3</sup> K. Vossler, Frankreichs Kultur und Sprache, 1929.

<sup>4</sup> Հմմա. օբյեկտ, K. Jäberg, Idealistische Neufilologie, „Germ.-rom. Mon.“, 1926, 1—2.

քերականներին՝ լեզվական հարցերի քննության նեղացման, տարերային «մատերիալիզմի» ու պազիտիվիզմի, մանրախնդրության ու «ատոմիզմի», մեխանիզմի ու հակապատմականության համար։ Սակայն այս բոլորով հանդերձ ֆուլերը յուրացնում է երիտքերականների սուբյեկտիվիզմն ու ինդիվիդուալիզմը՝ լեզվական երևույթների քննության մեջ նրանց հանդես բերած այդ գծերը հասցնելով վախճանակետի։ Ֆուլերի համար լեզուն անհատական հոգեկան ստեղծագործություն է, և լեզվի գաղտնիքների բանալին պետք է որոնել այդ անհատական ստեղծագործական ակտերի մեջ։ Միաժամանակ նա Պառլի նման տարբերում է հոգեկան և լեզվական կատեգորիաները, բայց դրանց կամայական մեկնաբանություն է տալիս։

2) Ֆուլերի իդեալիստական կոնցեպցիան նշանակալից շափով կապված է Հումբոլդտի կուտուր-պատմական իդեալիզմի հետ։ Հումբոլդտից Ֆուլերը յուրացնում է ամենից առաջ լեզվի պատմության՝ կուտուրայի պատմության մի մասը լինելու դրութը, ընդ որում կուտուրայի զարգացման պրօցեսը դիտում է իդեալիստորեն՝ որպես տվյալ ժողովրդի ոգու արտահայտությունը։ Երկրորդ՝ ինչպես Հումբոլդտը, Ֆուլերը ևս լեզուն դիտում է որպես անընդհատ ստեղծագործական գործունեություն, միայն թե այս ստեղծագործական գործունեությանը նեղ-սուբյեկտիվ հիմքեր է հաղորդում։ Երրորդ՝ լեզուն համարելով մտքի կազմակերպող օրդան, ենելով լեզվի բնույթից սրապես մարդու ներքին պահանջներով պայմանավորված երևույթի՝ Հումբոլդտը մարդկանց հաղորդակցման և իրար հասկանալու հնարավորությունը, այլ կերպ ասած՝ անհատականի և հասարակականի հակասությունը լուծում էր նրանով, որ ընդունում էր «մարդկային բնության նույնությունը»։ Ֆուլերը գրեթե նույնությամբ յուրացնում է մարդկային բնության նույնության այս մետաֆիզիկ-իդեալիստական դրույթը։ Մարդկանց այս ընդհանուրությունը, նրա կարծիքով, հնարավոր է դարձնում անհատական ստեղծագործական ակտերի մեջ ընդհանուր գծերի առկայությունը։ Չորրորդ՝ Ֆուլերը յուրացնում է Հումբոլդտի ուսմունքը ներքին ձևի մասին։ Սակայն եթե Հումբոլդտը ներքին ձևը ըմբռնում էր լայն պլանով, ապա Ֆուլերը ներքին ձևը հանգեցնում է լեզվական ճաշակին, հաշտեցնում այն իր ընդհանուր էսթետիկական կոնցեպցիայի հետ։

3) Ֆուլերի վրա մեծ ազդեցություն է գործել՝ իտալացի իդեալիստ Փիլիսոփա և գրականագետ Բենեդետո Կրոչեն, որին

Նա համարում է իր անմիշական ուսուցիչը: Յուրացնելով Կրոշեի էսթետիզմը, Ֆուլերը նախ՝ նրան հաղորդում է ավելի սուրյեկտիվ-ինդիվիդուալիստական բնույթը, երկրորդ՝ ընդլայնում է արտահայտության ըմբռնումը և ավելի շեշտում ստեղծագործական մոմենտը. Կրոշեն լեզուն դիտում էր որպես արտահայտություն, Ֆուլերը այն համարում է անհատական հոգեկան ստեղծագործություն:

Այսպիսով, եթե Ֆուլերի լեզվաբանական կոնցեպցիան մի կողմից՝ պայմանավորված է լեզվաբանական որոշ կարգի սկրզբունքների առկայությամբ, ապա մյուս կողմից՝ այն արդյունք է նախորդ լեզվաբանության մեջ որոշ անհրաժեշտ հարցերի պարզաբանման անբավարարության և որոշ կողմերի բացակայության, երիտքերականների լեզվաբանական պրակտիկան կլանված էր հնչյունաբանական, մասսամբ ձևաբանական և շատ քիչ՝ շարահյուսական և իմաստաբանական ուսումնասիրություններով: Ոճաբանության հարցերը կամ բոլորովին ուշադրություն չէին գրավում, կամ ուշադրություն էին գրավում երկրորդաբար, կողմնակի կերպով: Ֆուլերը իր ուշադրության կենտրոնը դարձնում է հենց ոճաբանությունը, որը նրա մոտ վերածվում է լեզվաբանության առաջատար դիսցիպլինի: Այս բանը լիովին համաձայնվում է Ֆուլերի ընդհանուր կենցեցիայի հետ, որ ակոնք է առնում Կրոշեի ուսմունքից: Միաժամանակ երիտքերականների մոտ գրական լեզվի խնդիրները դադարել էին լայն ուշադրության առարկա լինելուց. ուշադրության կենտրոնում պահելով բանավոր խոսքի ուսումնասիրությունը և հնչյունական կողմը՝ երիտքերականները հեռացել էին գրական լեզուների տառմնասիրության կոնկրետ խնդիրներից: Ֆուլերն այս հարցում ևս հակառակում է երիտքերականներին և գրական լեզվի ու գրականության լեզվի հարցերը դարձնում իր հոգածության կարևոր առարկաները:

Ինչպես նշեցինք, Ֆուլերը պայքար է ծավալում երիտքերականների «պոզիտիվիզմի» և ատոմիզմի դեմ: Նա մեղադրում է վերջիններիս այն բանում, որ մի կողմից՝ տարվելով նյութի նկարագրությամբ՝ կորցնում են ընդհանուրի զգացումը, մյուս կողմից՝ մանրատելով երևույթը, զրկում են այն իր ոգուց: Եթե լեզվաբանության գիտավոր նպատակն է հոգևոր արտահայտության բացահայտումը, եթե լեզվի պատմությունը նպատակ ունի տալ արտահայտության հոգեկան ձևերի պատմությունը, ապա երիտքերականների վերլուծական մեթոդը հաջցնում է հակառակ արդյունքին: Խօսելով լեզվի պատմական ըմբռնման մասին՝ երիտքերականները

փաստորեն վարվում են հակապատմականորեն, լեզուն գրկում կենդանի զարգացումից, մանրատում և գրկում ոգուց. «Նրա նկատմամբ անատոմիական օպերացիա են կատարում,—գրում է Ֆուլերը: —Կենդանի խոսքը բաժանվում է նախաղասությունների, նախաղասության անդամների, բառերի, վանկերի և հնչյունների»<sup>1</sup>: Օրգանիզմի ամբողջությունը նրա «հոգու» մեջ է և ոչ թե անդամների ու հոգերի: Որպես օրինակ վերցնելով Մեյեր-Լյուբեկի «Ռոմանական լեզուների քերականությունը», որի մեջ հեղինակը աստիճանաբար բարձրանում է հնչյունաբանությունից դեպի ձևաբանությունը, ձևաբանությունից դեպի բառակազմությունը, բառակազմությունից դեպի շարադրանությունը, սրանից էլ դեպի իմաստաբանությունը, իսկ ոճաբանությունը համարում է ավելի շուտ գրականագիտական դիսցիպլին, —Ֆուլերը գտնում է, որ իսկական քննությունը պահանջում է հակառակ կարգը. «Փոխանակ մանր միավորներից բարձրանալու դեպի ավելի խոշորները, հարկավոր է, միանգամայն հակառակ ձևով, ենելով ոճաբանությունից, շարադրանության միջոցով՝ իշխել ձևաբանությունն ու հնչյունաբանությունը»: Ոճաբանության, որպես բարձրագույն դիսցիպլինի, մեջ պետք է իսկական մեկնություն ստանան լեզվական մյուս, ավելի ստորին կարգի դիսցիպլինների (հնչյունաբանության, ձևաբանության, բառակազմության, շարադրանության) տվյալները: Այսպիսով, «այսպես կոշված քերականությունը պետք է լիովին լուծվի լեզվի էսթետիկական քննության մեջ»<sup>2</sup>:

Ոճաբանությունը դարձնելով լեզվական գլխավոր դիսցիպլինը՝ Ֆուլերը սրանով՝ իսկ ձգտում է՝<sup>1</sup>) բացահայտել լեզվի էությունը՝ որպես անհատական հոգեոր ստեղծագործության, ցույց տալ անհատական լեզվաստեղծագործության դերը լեզվի զարգացման մեջ, մանավանդ որ ոճը նրա համար զուտ անհատական երևույթ է՝ «անհատական լեզվագործածություն», «անհատական հոգեկան արտահայտություն»: 2) վեր հանել լեզվական երևույթների կապը կուլտուրայի պատմության հետ և, վերջին հաշվով, ժողովրդի ոգու հետ, քանի որ ոգին «բռնոր լեզվական ձևերի ծագման միակ գործող պատճառն է»: 3) լեզվական բոլոր երևույթները՝ և հնչյունական, և քերականական, քննել իրենց էսթետիկական արժեքի տեսակետից, էսթետիկական կողմը դարձնել լեզվական բոլոր երե-

<sup>1</sup> K. Vossler, Positivismus und Idealismus in der Sprachwissenschaft, 1904, էջ 10.

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 11.

վույթների քննության հիմք. Ֆուլերի համար «քերականությունը գրականության կամ ոճերի պատմության մի մասն է, որն իր հերթին մտնում է համընդհանուր հոգեր պատմության կամ կոլտուրայի պատմության մեջ»<sup>1</sup>:

Ֆուլերը լեզվաբանությունը դնում է պատմական գիտությունների շարքը և գտնում, որ որոշակի կապ գոյություն ունի լեզվի պատմության և կոլտուրայի պատմության միջև։ Նրա կարծիքով՝ լեզվական փաստերի պատճառական կապի բացահայտումը, որին ձգտում է «իդեալիզմը», հնարավոր չէ զուտ լեզվական-քերականական քննության դեպքում։ Այն հնարավոր է լեզվի էսթետիկական քննության դեպքում, որ հենվում է ոճաբանության վրա։ «Ամեն մի լեզվական արտահայտություն,—գրում է Ֆուլերը,—իր էությամբ անհատական հոգեկան ստեղծագործություն է»<sup>2</sup>։ Հետեւ վաբար՝ լեզվի ֆունկցիավորման էությունը և փոփոխության պատճառները հասկանալու համար պետք է սկսել անհատից։ Լեզվական ընդհանուրը անհատական լեզվագործածությունների գումարն է, ոճը՝ «անհատական լեզվական գործածությունն է՝ ի տարրերություն ընդհանուրի»<sup>3</sup>։ Քանի որ լեզվի փոփոխության հիմքում ընկած են անհատական ստեղծագործական ակտերը, ուստի և լեզվի իսկական քննությունը պահանջում է ոճաբանությունից գնալ դեպի շարահյուսությունը։ Ոճաբանությունը գործ ունի անհատական լեզվագործածության՝ որպես ստեղծագործական ակտերի հետ, շարահյուսությունը՝ արդեն նորմայի վերածված հասարակական սահմանման հետ։ Վերջինս կարող է ցույց տալ լեզվի զարգացման պայմանները, բայց ոչ՝ պատճառները։ Իսկական գիտական մեթոդը, որպես ինտուիտիվ մեթոդ, պահանջում է անհատականից գնալ ընդհանուրը, առանձին դեպքերից դեպի նորման։ «Հետևաբար,—բացականում է Ֆուլերը,—նախ ոճաբանությունը, ապա շարահյուսությունը։ Արտահայտության յուրաքանչյուր միջոց նախքան նորմատիվ և շարահյուսական դառնալը, արդեն վաղուց եղել է անհատական և ոճական... Այլ կերպ ասած՝ լեզվի բոլոր տարրերը արտահայտության ոճական միջոցներ են»<sup>4</sup>։

Այսպիսով, Ֆուլերի մոտ անհատականի և հասարակականի

<sup>1</sup> K. Vossler. Positivismus und Idealismus in der Sprachwissenschaft, 1904, էջ 11.

<sup>2</sup> Նույն աեղը, էջ 37.

<sup>3</sup> Նույն աեղը, էջ 15.

<sup>4</sup> Նույն աեղը, էջ 16.

փոխհարաբերության պրոբլեմը լուծվում է սուբյեկտիվ-ինդիվի-գուալիստական դիրքերից: Ըստ նրա՝ լեզվական փոփոխություն-ների հիմքում ընկած են ոչ թե հասարակական լեզվագործածությունը, սամ-ը, հասարակական նորման, այլ անհատական լեզ-վագործածությունը, անհատական ստեղծագործական ակտերը: Ան-հատները, հատկապես շնորհալի անհատները, լեզվի փոփոխության կրողներն են: Հասարակությունը, ըստ Ֆուլերի, լոկ պասսիվ յուրացնողի դեր է կատարում՝ եղած ստեղծագործական ակտերը վերածելով կամ շվերածելով նորմայի: Սակայն ինչպես է անհա-տականը վերածվում հասարակականի, ո՞ր անհատական նորամուծություններն են նորմայի ուժ ստանում, ինչո՞ւ է մի արտահայտություն դառնում ավելի հաճախակի, մյուսը՝ ոչ: Այս հարցերին պատասխանելու համար Ֆուլերը դիմում է «ժողովրդի ոգու» և «մարդկային բնության նույնության» հումքության ըմբռնմանը: Անհատական ստեղծագործական նորամուծությունը ընդհանուր բնույթ է ստանում, եթե ընդառաջ է գնում ժողովրդի հոգեկան պահանջներին: Եթե անհատական ոճի հիմքում ընկած է անհա-տական հոգեկան ստեղծագործությունը, ապա շարահյուսական կանոնը հենվում է ժողովրդի ոգու առանձնահատկությունների վրա, բխում նրանից: Դնելով անհատական ստեղծագործական ակ-տի՝ մի դեպքում հասարակական նորմայի վերածվելու, մյուս դեպ-քում՝ շվերածվելու հարցը՝ Ֆուլերը պատճառը որոնում է այն բա-նի մեջ, որ «առաջինը ավելի համապատասխան դուրս եկավ խոսող անհատների մեծամասնության պահանջներին և տենդենցներին, քան վերջինը: Շարահյուսական կանոնը հիմնվում է ժողովրդի գերիշխող հոգեկան յուրահատկության վրա: Այն առաջանում է ժողովրդի ոգուց»<sup>1</sup>:

Սակայն եթե լեզուն անհատական հոգեկոր ստեղծագործություն է և հիմք ունի անհատի ներքին հոգեկան պահանջների մեջ, ապա ինչպես են մարդիկ իրար հասկանում: Այս հարցի լուծման համար Ֆուլերը դիմում է, մի կողմից, ինչպես նշեցինք, «մարդկային բնության նույնության» հումքության դրույթին, մյուս կողմից՝ «լեզվական շնորհի» իդեալիստական դրույթին: Մարդիկ իրար հաս-կանում են, որովհետև նրանց բնությունը նույնական է, որովհետև գոյություն ունի լեզվամտածողական զուգահեռություն, որի հիմ-քում ընկած է բոլոր մարդկանց հատուկ «լեզվական շնորհը»: Լե-

<sup>1</sup> K. Vossler, Positivismus und Idealismus in der Sprachwissenschaft, 1904, էջ 17.

գուն ոչ թե յուրացվում է, այլ, ինչպես Հումբոլդտն է ասում, «արթ-նացվում»: «Լեզվական շնորհի» դրույթով էլ Ֆուլերը բացատրում է և՛ լեզվի ծագումը, և՛ մարդկանց հաղորդակցման, իրար հասկա-նալու հնարավորությունը. «Երբ մարդիկ հաղորդակցվում են իրար հետ լեզվի միջոցով,—գրում է նա,—ապա այդպիսի հաղորդակ-ցումը հիմնվում է ոչ թե լեզվական պայմանականության կամ լեզ-վական նյութի շարահյուսական կառուցվածքների ընդհանության վրա, այլ լեզվական շնորհի ընդհանրության վրա: Ընդհանրապես իրականության մեջ գոյություն չունի ոչ մի լեզվական հանրու-թյուն, բարբառ և այլն...: Ամենատարբեր լեզվական հանրություն-ների պատկանող և ոչ մի ընդհանուր լեզվական հմտություն չունե-ցող երկու կամ մի քանի անհատների դրեք կոնտակտի պայման-ների մեջ, և նրանք շատ շուտով, շնորհիվ այն բանի, որ նրանցից յուրաքանչյուրը լեզվական շնորհ ունի, կսկսեն խոսել իրար հետ: Այսպես է ծագել անգլերենը և մնացած բոլոր լեզուները...»<sup>1</sup>: Այս գեպքում Ֆուլերը մոռանում է, որ իրար հետ փակված անհատ-ները արդեն որոշակի զարգացման ճանապարհ են անցել, ունեն որոշակի գիտակցություն և լեզվական հմտություններ, կարողանում են կողմնորոշվել կոնտեքստի ու շրջապատի միջոցով: Նշելի է, որ իր ավելի ուշ շրջանի աշխատություններում Ֆուլերը լեզվական փոփոխության բացատրության հարցում տեղ է տալիս կոլեկտիվ հոգեոր գործունեությանը, լեզուն փորձում է քննել փոքր-ինչ ավելի լայն կուլտուրական պլանով: Իր «Լեզուն որպես ստեղծագործու-թյուն և զարգացում» գրքում Ֆուլերը նշում է, որ խոսքը, կա-պակցված բառերը (Worte) «բողբոջում ու ապրում են անհատի հայեցողության (Anschabung) մեջ, զարգանում են նրանք փոխ-հաղորդակցման մեջ»<sup>2</sup>:

Ֆուլերի կարծիքով, իսկական գիտական քննությունը պահան-չում է լեզվի քննություն անհատի դիրքերից: Լեզվի հասարակա-կան քննությունը գիտական չէ, ուստի և միակ իսկական գիտական դիսցիպլինը, որ քննում է լեզուն կյանքի մեջ, ոճաբանությունն է: Մնացած դիսցիպլինները զրկում են լեզուն կյանքից, այն վերա-ծում մեռած մասերի. «Քննել լեզուն որպես հասարակական սահ-մանում և որպես նորմա,—գրում է Ֆուլերը,—նշանակում է ենել

<sup>1</sup> K. Vossler, Positivismus und Idealismus in der Sprachwissenschaft, 1904, էջ 37—38.

<sup>2</sup> K. Vossler, Die Sprache als Schöpfung und Entwicklung, 1905, էջ 106.

ոշ գիտական հայացքներից։ Այստեղից բխում է, որ շարահյուսությունը գիտություն չէ, ինչպես և ձեսքանությունն ու հնչունաբանությունը։ Քերականական դիսցիպլինների ողջ համակցությունը անխոնց պողիտիվիստների կողմից կառուցված հսկայական մի գերեզմանոց է, որտեղ լեզվի մեռած մասերը՝ մաս-մաս կամ մասսայաբար թաղված են շքեղ դագաղներում, իսկ դագաղները համարակալված են և օժտված մակագրություններով։ Ո՞վ չի շնչահեղձվել այդ պողիտիվիստական ֆիլոլոգիայի գերեզմանային մթնոլորտում... Կամուրջ կառուցել շարահյուսությունից դեպի ոճաբանությունը, նշանակում է արթնացնել մեռելներին»<sup>1</sup>:

Ֆուլերի հնդիվիդուալիզմը սերտորեն զուգակցվում է իդեալիզմի հետ։ Ե՛վ անհատական ստեղծագործական ակտերը, և' հասարակական նորմաները վերջիվերջո բացատրվում են հոգեկան հիմունքներով, հանգեցվում հոգեկանի։ Առաջինը հոգեկան ինտուիտիվ ակտ է, անհատական արտահայտություն, անհատական հոգեկոր ստեղծագործություն, պայմանավորված ներքին հոգեկան պահանջներով։ Երկրորդը՝ ժողովրդի ոգու արտահայտություն է, որոշվում է ժողովրդի հոգեկոր պահանջներով։

Հումբորդտի նման Ֆուլերը լեզուն դիտում է որպես գործունեություն, անընդհատ փոփոխվող կենդանի ուժ, որ իր էությամբ հոգեկան երեսույթ է։ Լեզվի պատմաբանի նպատակը պետք է լինի զանազան պատճառական օղակների միջոցով վերջիվերջո հասնել էսթետիկականին, փնտրել լեզվական փաստի հիմքում ընկած բանաստեղծական միտքը՝ կուլտուրայով պայմանավորված իր փոփոխությունների մեջ։ Լեզվի իսկական գիտական պատմությունը պետք է «պատճառների ողջ գործնական շարքի միջով հասնի էսթետիկականին, այնպես որ պարզ և հասկանալի դառնա լեզվական ճշմարտությունը, լեզվական ճաշակը, լեզվական զգացողությունը կամ, ինչպես այդ կոչում է Վ. Հումբորդտը, ներքին լեզվական ձևը իր բոլոր հոգեկան, ֆիզիկական, քաղաքական, տնտեսական և ընդհանրապես կուլտուրապես պայմանավորված փոփոխությունների մեջ»<sup>2</sup>։ Իսկ ի՞նչ է ներկայացնում այդ լեզվական միտքը։ Հստ Ֆուլերի՝ այն իր էությամբ բանաստեղծական միտք է, որի իդեալը նույնն է արվեստագետի իդեալի հետ, այսինքն՝ ամենաբացառիկ ինդիվիդուալիզմի միացումը ամենաբացառիկ ունիվերսալիզմի

<sup>1</sup> K. Vossler, Positivismus und Idealismus in der Sprachwissenschaft, 1904, էջ 38.

<sup>2</sup> K. Vossler, Aufsätze zur Sprachphilosophie, 1923, էջ 10.

Հետ: Լեզվական ճշմարտությունը գեղարվեստական ճշմարտություն  
է, բովանդակալից գեղեցկություն: Հետևաբար քերականությունը,  
ձուլվելով ոճաբանությանը, սպասարկում է լեզվին որպես ար-  
լեստի: Հումքությունը ներքին ձեզ հանգեցնելով լեզվական ճաշակին՝  
Ֆուլերը միաժամանակ փորձում է լեզվի քննությունը կապել լայն  
կուլտուրական ֆոնի հետ. «լեզվի պատմությունը,—գրում է Ֆու-  
լերը,—լեզվական ճաշակի պատմություն է, այսինքն՝ ազդակների,  
շարժառիթների, ազդեցությունների, շրջապատումների պատմու-  
թյուն, որոնք կազմում են լեզվի արտաքին պատմությունը: Այն  
ժամանակ լեզվի պատմությունը չի կտրվում կուլտուրայի պատմու-  
թյունից, այլ մասամբ կլանվում է նրա կողմից»<sup>1</sup>:

Իր «Լեզուն որպես ստեղծագործություն և զարգացում» գրքում  
Ֆուլերը նշում է, որ յուրաքանչյուր անհատի մեջ դրսենորվում է  
երկու կարգի ձգուում՝ ստեղծել իր սեփական ոճը և խոսել ուրիշ-  
ների (կոլեկտիվի) նման. սրանով իսկ լեզուն հանդես է գալիս որ-  
պես ստեղծագործություն և որպես զարգացում: Մրա հիման վրա էլ  
լեզվի պատմական ուսումնասիրության հետևողական իդեալիստա-  
կան սիստեմը Ֆուլերը հանգեցնում է 2 բաժնի՝ 1) լեզվի էսթետի-  
կական ուսումնասիրության (լեզվի քննությունը որպես ստեղծա-  
գործություն) և 2) լեզվի էսթետիկա-պատմական ուսումնասիրու-  
թյան (լեզվի քննությունը որպես զարգացում): Առաջինն զբաղվում  
է բացարձակ առաջադիմության, այն է՝ նորամուծությունների  
ծագման հարցերով, երկրորդը՝ հարաբերական առաջադիմության,  
այն է այդ՝ նորամուծությունների տարածման հարցերով: Քանի որ  
նորամուծությունները արդյունք են անհատական ստեղծագործու-  
թյան, ուստի և բացարձակ առաջադիմությունը էսթետիկական  
բնույթ ունի: Միաժամանակ, քանի որ նորամուծությունները տա-  
րածվում են լեզվի մեջ ժամանակի ընթացքում, ուստի և հարաբե-  
րական առաջադիմությունը էսթետիկական-պատմական բնույթ  
ունի: Այս ուսմունքի լուսի տակ էլ Ֆուլերը մեկնաբանում է հըն-  
ցունական օրենքի և անալոգիայի սկզբունքները՝ առաջինը հատ-  
կացնելով բացարձակ առաջադիմության և էսթետիկայի բնագա-  
վառին, երկրորդը՝ հարաբերական առաջադիմության և էսթետիկա-  
պատմական բնագավառին. առաջինը ստեղծագործություն է, երկ-  
րորդը՝ զարգացում: Առաջինը ակտիվ բան է, երկրորդը՝ պասսիվ.  
Լեզուն որպես զարգացում կոլեկտիվ հոգեկան գործունեություն է:

<sup>1</sup> K. Vossler, Aufsätze zur Sprachphilosophie, 1923, էջ 25.

Հնչյունական երևութների պատմական քննության հիմքում Ֆուլերը դնում է ակցենտի գաղափարը՝ Գաստոն Պարիսի օրինակով այն համարելով բարի ոգին: Լեզվի ոգին, ներքին ինտոփիցիան, հոգեկան բովանդակությունը հնչյունական տեսակետից հանգեցվում են ակցենտին, ընդ որում վերջինս լայն մեկնարանություն է ստանում՝ գրեթե նույնացվելով արտասանական բազայի ըմբռնման հետ: Հնչյունական փոփոխությունները այս առումով կապվում են ակցենտի բնույթի հետ, որն իր հերթին կապվում է ժողովրդի հոգեկան առանձնահատկությունների հետ:

Զեարանության բնագավառում ֆրանսերենի կրած փոփոխությունների մասին խոսելիս՝ Ֆուլերն աշխատում է անցկացնել այն գաղափարը, որ զարգացումը տեղի է ունենում ոացիոնալիզացիայի ուղղությամբ. այս բանը նա տեսնում է և՛ ֆրանսերենի կայուն շարադասության ստեղծման ու հոլովման սիստեմի քայլայման, և՛ հոգերի զարգացման, և՛ այլ հարցերում: Բանն այնտեղ է հասնում, որ XVII դարում այսպես կոչված անիրական եղանակի (πόδους irrealis) գործածության մեջ մտնելը (հոգեկան ապրումներ արտահայտող բայերի հետ սկսում է դրվել զայ-ով ստորադասկան՝ փոխանակ սահմանականի) Ֆուլերը կապում է Դեկարտի «Տրակտատ հոգու մասին» աշխատության գաղափարների տարածման հետ:

Եթե գնահատելու լինենք Ֆուլերի լեզվական գործունեությունը, ապա որպես դրական կողմեր կարող ենք մատնանշել՝ 1) երիտքերականների ատոմիզմի ու մանրախնդրության քննադատությունը, 2) լեզվի պատմությունը կուլտուրայի պատմության հետ կապելը, 3) լեզվի պատմության հարցերը գրականության պատմության հետ կապելը, գրական լեզվի ու գրականության լեզվի հարցերի ուսումնասիրության կարևորության մատնանշումը, 4) լեզվական ոճի ուսումնասիրության, ոճաբանության հարցերի առաջքաշումը: Սակայն այս մասնակի արժանիքների հետ միանում են բազմաթիվ թերություններ, որոնցից կարևոր է նշել հատկապես հետեւյալները. 1) Ֆուլերի փիլիսոփայական բազան խախուտ է, ոչ միասնական ու միատարր: Լեզվի քննության մեջ եղած նախորդինդիվիդուալիզմն ու իդեալիզմը նա հասցնում է ծայրահեղության՝ հանդես գալով որպես ծայրահեղ սուրյեկտիվ իդեալիստ: Այս կապակցությամբ լեզվի էության և լեզվի պատմության հարցերը նրա մոտ հաճախ սխալ ու միակողմանի մեկնարանություն են ստանում: 2) Սրան միանում են Ֆուլերի մեթոդի թերություն-

Ները և գործնական հարցերի լուծման մեջ թույլ տված բազմաթիվ սխալները: Լեզվի պատմության կոնկրետ հարցերի նկատմամբ իր սկզբունքները կիրառելիս նա գրեթե անճարակություն է ցուցաբերում, հիմք ընդունում ինտուիցիան և ոչ թե փաստերի ուսումնասիրության կարևորությունը: 3) Նշելով ոճաբանական հարցերի ուսումնասիրության կարևորությունը՝ Ֆուլերը հասնում է ծայրահեղության և ոճաբանությունը դարձնում է լեզվաբանական գլխավոր դիսցիպլին, որ, իշարկե, ճիշտ չէ: 4) Վերջապես, նշելի է Ֆուլերի տերմինաբանության կամայականությունը, բառերի երկիմաստ գործածությունը, որ ոչ միայն թյուրմբոնում է առաջացնում, այլև դուր բաց անում ամեն կարգի սխալների համար:

Լեռ Շպիցեր.— Շպիցերն սկզբնապես զբաղվում էր ոճաբանական հարցերով՝ անկախ Ֆուլերից: Այսպես, Ռաբլեին նվիրված իր աշխատության մեջ նա դեռևս Ֆուլերի հետևորդ չէ: Իր այս առաջին աշխատությունից հետո Շպիցերը հարում է Ֆուլերին՝ քննադատելով, ուսկայն, նրա հետեւորդների ծայրահեղություններն ու վրիպումները: Շպիցերը, ի տարբերություն Ֆուլերի մյուս հետեւորդների, միայն ֆրանսերենով չի զբաղվում, այլ հետաքրքրության ավելի լայն շրջանակ ունի: Յուրաքանչյուր լեզվական հարցի քննության ժամանակ Շպիցերը, մեկնակետ է ընդունում ոճական կողմը, ընդ որում ոճական առումով նա քննում է և՛ գրական երկերը, և՛ խոսակցական լեզվի փաստերը: Միաժամանակ, չնայած պատմական փաստերի քննության մեջ ամեն ինչ անհատական սկզբնավորմանը հանգեցնելու ձգտմանը, Շպիցերը հանդես է բերում հարցերն ավելի բազմակողմանիորեն ուսումնասիրելու ձևգտում:

Շպիցերն զգալի ուշադրություն է հատկացնում իմաստաբանական և ստուգաբանական հարցերին: Ստուգաբանության մեջ Շպիցերն առաջ է քաշում այն սկզբունքը, որ բառը նախ պետք է քննել ուսումնասիրվող լեզվի մեջ, ապա դիմել այլ լեզուների տվյալներին:

Շպիցերը ևս անհրաժեշտ կապ է տեսնում լեզվի պատմության և գրականության պատմության միջև: Արվեստագետի և սովորական մարդու լեզվի միջև, ըստ Շպիցերի, և՛ նմանություն կա (երկուսն էլ արտահայտում են իրենց խառնվածքն ու մտավորությունը), և՛ տարբերություն (սովորական անհատն արտահայտում է իր մտքերն ու զգացմունքները՝ առանց հատուկ էսթետիկական նպատակադրման): Ե'վ գրողի, և՛ սովորական անհատի լեզվի քննության

դեպքում Շպիցերը պահանջում է պարզել այդ գրողի և անհատի հոգեվիճակը և արտահայտության ձևի մեջ գտնել գրողի կամ խոսողի հոգեվիճակի բանալին։ Շպիցերը յուրատեսակ կամուրջ է նետում լեզվաբանության և գրականագիտության միջև ոճաբանության միջոցով. ըստ Շպիցերի՝ գրական երկի ուսումնասիրության մեջ առաջին տեղը պետք է տալ լեզվին։

### Բ) ՆԵՈՂԻՆԳՎԻՍՏԻԿԱ (ՄԱՐԱԾԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՑՈՒԹՅՈՒՆ)

Ընդհանուր տեղեկություններ.—Նեոլինգվիստիկական ուղղությունը հիմնականում ձևավորվել է 1920-ական թվականներին։ «Նեոլինգվիստիկա» անվանումը նպատակ ունի ընդգծել այս ուղղության հակադրությունը «նեոգրամատիզմին»։ Այս վերջին անվամբ նեոլինգվիստները կոչում են երիտքերականներին։ Նեոլինգվիստիկան էկլեկտիկական լեզվաբանական ուղղություն է, որտեղ ի մի են բերված գրեթե այն բոլոր լեզվաբանական ուղղությունների տարրերը, որոնք ուղղված են երիտքերականների սկզբունքների այս կամ այն կողմի դեմ. այստեղ կրոշեի ու ֆուլերի սկզբունքները զուգացվում են Հումբուլտի, Ասկոլիի, Շուխարդտի ու Ժիլերոնի սկզբունքների հետ։ Առանձնապես կարևոր տեղ են հատկացնում նեոլինգվիստները լեզվաբանական աշխարհագրությանը, որի պատճառով էլ նեոլինգվիստիկան կոչում են նաև տարածական լեզվաբանություն (արեալ լինգվիստիկա—linguistica spaziale)։ Հանդիպում է և «գերլինգվիստիկա» տերմինը (Պիզանի)։

Մ. Բարտոլի, Զ. Բերտոնի, Զ. Վիդոսի, Զ. Բոնֆանտե, Վ. Պիզանի։—Նեոլինգվիստիկական ուղղությունը ներկայացված է գերազանցապես իտալական ծագում ունեցող լեզվաբաններով՝ Մ. Բարտոլի, Զ. Բերտոնի, Զ. Վիդոսի, Զ. Բոնֆանտե, Վ. Պիզանի և այլն։ Նեոլինգվիստների առաջին գլխավոր տեսական աշխատությունը Մ. Բարտոլի (1873—1946)<sup>1</sup> իտալական լեզվաբանական առլասի հրատարակչի «Նեոլինգվիստիկայի ներածությունն» էր (1925 թ.)<sup>2</sup>։ Այդ նույն թվին նա Զ. Բերտոնիի հետ միասին լույս է ընծայում «Նեոլինգվիստիկայի առձեռն գիրքը»<sup>2</sup>, Սակայն նեո-

<sup>1</sup> M. Bartoli, Introduzione alla neolinguistica. Principi, scopi, metodi. Ginevra, 1925.

<sup>2</sup> G. Bertoni e M. Bartoli, Brevario di neolinguistica (I. G. Bertoni, Principi generale. II. M. Bartoli, Criteri tecnici), Made-na, 1925.

յինգլիստիկայի սկզբունքների կիրառման որոշ փորձ Բարտոլին կատարել էր գեռևս 1910 թ. լույս ընծայած իր «Նոր լատիներենի աղբյուրների շուրջը»<sup>1</sup> հոդվածում: Հետագա տեսական աշխատություններից առանձնապես նշելի է Զ. Բոնֆանտեի «Նեոլինգվիստիկայի դիրքը»<sup>2</sup>, որը երբեմն համարվում է այս ուղղության մանիքստը և ուղղված է Ռ. Ա. Հոլի քննադատական հոդվածի<sup>3</sup> դեմ: այստեղ մեկ առ մեկ բերվում են նեոլինգվիստների ծրագրային դրույթները և համառոտակի բնութագրվում: Նեոլինգվիստների դրույթների հանգամանալից քննադատությունը տրված է նաև Ալվին Կունի «Ծոմանական լեզուները» աշխատության մեջ<sup>4</sup>: Նեոլինգվիստիկական այլ կարգի աշխատություններից հարկավոր է նշել Մ. Բարտոլիի և Զ. Վիդոսսիի «Տարածական լեզվաբանության ուրագագերը», Մ. Բարտոլիի «Տարածական լեզվաբանության ուրագագերը», Վ. Պիկանիի «Մ. Բարտոլին և տարածական լեզվաբանությունը», Զ. Վիդոսսիի «Մ. Բարտոլիի տեսության թեր և դեմ»-ը և այլն<sup>5</sup>:

Նեոլինգվիստիկայի ներկայացուցիչներից մեկը՝ Զուլիո Բերտոնին նախքան Բարտոլիի հետ միասին նեոլինգվիստիկայի սկզբանքների շարադրանքին նվիրված գրքի հրատարակումը հանդես էր եկել «Ծոմանական ֆիլոլոգիայի՝ որպես իդեալիստական գիտության ծրագիրը» աշխատությամբ<sup>6</sup>, որը զգալի շափով նախապատրաստում է նրա հարելը նեոլինգվիստիկային. այս աշխատության և երկու տարի հետո Բարտոլիի հետ միասին լույս ընծայած աշխատության միջև սկզբունքային կարեոր տարբերություններ չկան: Այստեղ ևս Բերտոնին հանդես է գալիս որպես էկլեկտիկ,

<sup>1</sup> M. Bartoli, Alla fonti del neolatino. „Miscellanea in onore di Attilio Hortis“, 1910.

<sup>2</sup> G. Bonfante. The Neolinguistic Position. „Language“, XXIII, № 4, 1947.

<sup>3</sup> R. A. Hall, Bartoli's Neolinguistica. „Language“, XXII, 1946.

<sup>4</sup> A. Kuhn. Die romanischen Sprachen.

<sup>5</sup> M. Bartoli e G. Vidossi, Lineamenti di linguistica spaziale, 1943. M. Bartoli, Saggi di linguistica spaziale, Torino, 1945. V. Pisani, M. Bartoli e la linguistica spaziale, I, 1946. G. Vidossi, Pro e contro le teorie di M. Bartoli, ASNSP LSF, II, 27, 1947. Հմա. & R. A. Hall, Bibliography of Italian Linguistics, Baltimore, 1944. Մ. Բարտոլիի աշխատությունների բերենողագիրն արված է նրա „Saggi“-ում, էջ XXI—XXXII:

<sup>6</sup> G. Bertoni. Programma di filologia romanza come scienza idealistica, Geneva, 1923.

որը զուգորդում է Ֆուլերի, Կրոշեի և Զենտիլեի «իդեալիստական» կոնցեպցիան Շուխարդտի և Ժիյերոնի սկզբունքների հետ։ Մրա հետ միասին թերտոնին զգալի տուրք է տալիս և երիտքերականական «պողիտիվիստական» կոնցեպցիային։

Նման էկլեկտիզմը հատուկ է ընդհանրապես բոլոր նեոլինգվիստներին, այդ թվում և նեոլինգվիստիկայի հիմնադիր Բարտոլիին<sup>1</sup>։ Նա փոխ է առնում նախ՝ Կրոշեի և Զենտիլեի այն դրույթը՝ թե որակական տարբերություն չկա լեզվի տարբեր կողմերի (բառապաշտի, քերականական կառուցվածքի, հնչյունների) ուսումնասիրության սկզբունքների միջև։ Երկրորդ՝ Կրոշեի հմիտացիայի սկզբունքը, ըստ որի մեկի կողմից այս կամ այն բառին, քերականական ձևին և հնչյունին նմանվելը (իմիտացիան) ոչ թե պարզ վերաբերադրություն է, այլ վերաստեղծում։ Այս երկու սկզբունքները առկա են և Ֆուլերի կոնցեպցիայում։ Սակայն Բարտոլին, լեզվական ստեղծագործության էսթետիկական արժեքն ընդունելով հանդերձ, չի խոսում ինտուիցիայի և արտահայտության, էսթետիկայի և լեզվաբանության նույնության կրոշեական սկզբունքների մասին<sup>2</sup>։ Բարտոլին տուրք է տվել նաև Մեյեի և ուրիշների այն դրույթին, թե լեզվաբանական ազգեցությունը մի ժողովրդի կամ հասարակական խմբի կողմից պայմանավորված է նրա հեղինակությամբ, այն բանով, թե նա որքան է ներշնչում նմանվելու ձրգառում։ Ժիյերոնից Բարտոլին վերցնում է ոչ թե նրա մտքերը լեզվական ստրատիգրաֆիայի, բառերի անհետացման կամ փոխարինման պատճառների մասին, այլ աշխարհագրական-տարածական գործոնի կարեռության սկզբունքը՝ փորձելով հաստատել որոշ նորմաներ։ Միաժամանակ լեզվական փոփոխությունների պատճառների հարցում Բարտոլին մեծ շափով օգտվում է լեզվական սուբստրատի և խառնուրդի վերաբերյալ Ասկոլիի և Շուխարդտի գաղափարներից։ Ֆուլերի նման Բարտոլին հակադրվում է երիտքերականներին, բայց այդ հակադրությունը վերաբերում է նրանց ուսմունքի ոչ բոլոր կողմերին։ Ժիստելով երիտքերականների հնչյունական օրենքների սկզբունքը, նրանց «մատերիալիզմին» հակառակութիւնը «իդեալիզմը», մերժելով քննության ատոմիզմը և աշխարհագրական գործոնի անբավարար հաշվառումը՝ Բարտոլին այնուամենայնիվ մնում է պատմա-համեմատական հետազոտու-

<sup>1</sup> Հմմտ. I. Jordan, Introduction to Romance Linguistics, 1937, էջ 275 և հաջուկ։

<sup>2</sup> Հմմտ. նույն տեղում։

թյան դիրքերի վրա և շատ բանով օգտվում Ասկոլիից ու Մեյեր-Լյուբերկից:

Նեռլինգվիստիկայի ներկայացուցիչները զգալի աշխատանք են կատարել ընդհանուր լեզվաբանության և հնդկրոպական լեզուների համեմատական քերականության զանազան հարցերի (հատկապես հնդկրոպական նախալեզվի բարբառային տեղաբաշխման և զանազան երեսությների աշխարհագրական բնութագրման հետ կապված) պարզաբանման ու ամփոփման ուղղությամբ։ Կարենոր է հիշատակել ջ. Բոնֆանտեի «Հնդկրոպական բարբառները», Վ. Պիզանիի «Հնդկրոպական լեզվաբանությունը», այլև «Ուսումնասիրություններ հնդկրոպական լեզվի նախապատմության մասին», «Գեոլինգվիստիկան և հնդկրոպականությունը», «Ստուգաբանությունը (պատմությունը, պրոլեմները, մեթոդը)» և «Ընդհանուր և հնդկրոպական լեզվաբանությունը»<sup>1</sup>. Վերջին երկուսը թարգմանվել են ոռուսերեն և հրատարակվել 1956 թ.: Նշելի է, որ ընդհանրապես Պիզանին պատկանում է Նեռլինգվիստների շափակորթներին և որոշ հաշտեցում է փնտրում երիտրերականների և նեռլինգվիստների միջև։

Նեռլինգվիստները ավելի ուշ շրջանում փոխ են առնում ստրուկտուրալիստների որոշ սկզբունքները՝ լեզվական միության, լեզվական երեսությների իմանենության, ֆոնեմայի (հնչութի), լեզվական սիստեմի և ստրուկտուրայի ամբողջականության դրույթները։ Սակայն ընդհանուր առմամբ նրանք օպոզիցիոն դիրք են գրավում ստրուկտուրալիզմի, հատկապես կոպենհագենյան ստրուկտուրալիզմի նկատմամբ՝ այն նմանեցնելով XVIII դ. ընդհանրական քերականությանը և մեղադրելով «վերացական, լեզվական մարմնավորմանը նախորդող սխեմաներ ստեղծելու մեջ»<sup>2</sup>։ Նեռլինգվիստիկայի սկզբունքները հտալիայից դուրս հայտնի են դառնում

<sup>1</sup> G. Bonfante, Dialetti indoeuropei, ARION, Napoli, 1931. V. Pisani, Glottologia indoeuropea, 1949. Studi sulla preistoria delle lingue indoeuropee, ARANL, ser. VI, vol. IV, fasc. 6, Roma, 1933. Geolinguistica e Indoeuropeo, ARANL, vol. IX, fasc. 2, Roma, 1942. L'etimologia, storia—quesconi—metodo, Milano, 1947 (ռուս. թարգմ. В. Пизани, Этимология, история-проблемы-метод, М., 1956). Linguistica generale e indoeuropea, 1947 (գերմ. թարգմ. V. Pisani, Allgemeine und vergleichende Sprachwissenschaft—Indogermanistik, WF, II. ռուս. թարգմ. В. Пизани, Общее и индоевропейское языкознание, համանուն ժողովածում, Մոսկվա, 1956).

<sup>2</sup> V. Pisani, August Schleicher und einige Richtungen der heutigen Sprachwissenschaft, „Lingua“, IV, 4, 1935, էջ 349.

Համեմատաբար ուշ. Ամերիկայում նրա մասին սկսում են խոսել միայն 1940-ական թվականներին:

Նեռլինգվիստիկական ուղղության ձևավորման համար առանձնապես կարենոր դեր են խաղացել Բենեդետո Կրոչեի փիլիսոփայական դրույթները և լեզվաբանական աշխարհագրության սկզբունքները. առաջինը հիմք է ծառայել տեսական հարցերի լուսաբանության, երկրորդը՝ մեթոդական սկզբունքների հիմնավորման համար: Նեռլինգվիստիկայի ուսումնասիրության բնագավառը սահմանափակվում է պատմական լեզվաբանության խնդիրներով, լեզվական փոփոխությունների հարցերով: Ստատիկ վերլուծության հարցերը նեռլինգվիստներին գրեթե չեն զբաղեցնում: Նրանց ուսումնասիրության գլխավոր բնագավառը ուժմանական լեզուների պատմությունն է:

Ինչպես նշեցինք, նեռլինգվիստիկան հանդես է եկել որպես նեոգրամատիզմի (երիտքերականության) հակադրություն: Նեռլինգվիստները երիտքերականներին քննադատում են առաջին հերթին այն բանի համար, որ լեզվաբանության մեջ նրանք հանդես են գալիս որպես «մատերիալիստներ»<sup>1</sup>, որ նրանց կոնցեպցիան «լիովին մատերիալիստական և դետերմինիստական է»<sup>2</sup>: Այս առումով նեռլինգվիստները հետևում են Կ. Ֆուլերի բնութագրմանը՝ նրա «պողիտիվիզմ» տերմինի կողքին դնելով «մատերիալիզմ» տերմինը և այդ տերմինին տալով միևնույն իմաստը: Քննադատելով երիտքերականների կոնցեպցիան որպես «նեղաճակատ մատերիալիստական դոգմատիզմ»<sup>3</sup> և փաստամոլություն՝ նրանք փորձում են դուրս մղել երիտքերականների տեսության բոլոր մատերիալիստական տարրերը և լեզվական գործունեության հիմքում տեսնել միայն հոգեկան գործոններ: Ինչպես Կրոչեն և Ֆուլերը, նեռլինգվիստները լեզուն քննում են սուբյեկտիվ-ինդիվիդուալիստական, իդեալիստական դիրքերից, Կրոչեի նման հիմք ընդունում «ոգին» և «հոգեկան ակտիվությունը». Նրանք լեզուն համարում են «անհատների էսթետիկական ստեղծագործության արդյունք», լեզվի փոփոխության պատճառները որոնում հոգեկան գործոնների մեջ: Նրանց կոնցեպցիայի մեջ կարենոր դեր է խաղում Բ. Կրոչեի և Կ. Ֆուլերի դրույթը լեզվի՝ հոգեոր գործոննեության գեղարվեստական

<sup>1</sup> M. Bartoli, Introduzione alla neolinguistica, 1925, էջ 8, ժան. 8:

<sup>2</sup> G. Bonfante, The Neolinguistic Position, „Language“, XXIII, 4, 1947, էջ 346.

<sup>3</sup> Նույն սեղը, էջ 356:

ստեղծագործություն լինելու մասին։ Այս իդեալիզմին միանում է որոշ ագնոստիցիզմը, լեզվաբանական գիտելիքների և ընդհանրապես գիտելիքների հավաստիության ժխտումը։

Նեռլինգվիստները երիտքերականներին հակադրվում են նաև նրանց վերլուծական մեթոդների մեջ հանդես եկող «ատոմիզմի» և «դոգմատիզմի» համար. խորանալով լեզվական առանձին փաստերի վերլուծության մեջ՝ երիտքերականները մոռանում են ամբողջականությունը. միաժամանակ այս վերլուծության ընթացքում նրանք օգտվում են տրադիցիոն քերականության ըմբռնումներից ու տերմիններից։ Այս առումով նեռլինգվիստները նշում են, որ երիտքերականները հենց իրոք միայն քերականներ են, իսկ իրենք հակադրվում են նրանց որպես լեզվաբաններ (լինգվիստներ), ուզում են իրոք լեզվաբաններ լինել. «Նեռլինգվիստների համար,— գրում է Թոնֆանտեն, —լեզուն լեզու է, այսինքն՝ նրա էսթետիկական արտահայտության ամբողջությունը. մենք այն գտնում ենք ողջ լրիվությամբ պոեմի յուրաքանչյուր տողում, յուրաքանչյուր խոսքում, յուրաքանչյուր ասացվածքում։ Ոչ մի ամենալավ անգլիական քերականություն չի կարող փոխարինել Շեքսպիրի կամ Շելլիի ընթերցմանը կամ լոնդոնցու ամենահամեստ խոսակցությանը»<sup>1</sup>: Լեզվի քերականական վերլուծությունը, հնչյունաբանության, շարահյուսության և բառագիտության առանձնացումը, նեռլինգվիստների կարծիքով, մասնատում են լեզուն և այն զրկում իր իսկական բնույթից, իր միասնությունից ու կենդանությունից. Երիտքերականները խոսում են լեզուն որպես պրոցես քննելու և պատմականության մասին, բայց իրականում այն քննում են որպես պատրաստի իր («օրոն») և ոչ որպես գործունեություն («նշորշչություն»)։ Երիտքերականների համար լեզուն իր է, —նեռլինգվիստների համար՝ հոգեկան գործունեություն, անընդհատ գեղարվեստական ստեղծագործություն. Երիտքերականները խոսում են կենդանի լեզուների ուսումնասիրության կարենության մասին, բայց իրենց ողջ պրակտիկայով ձգտում են դեպի հին լեզուները, աշխատում քնտրել հին վիճակները, նոր լեզուներն ուսումնասիրում են հին մեթոդներով, —կեռլինգվիստները հիմք են ընդունում միշտ կենդանի լեզուները. Երիտքերականները պահպանում են Շլայխերի նատուրալիզմի գծերը, խոսում լեզուների կյանքի ու մահվան մասին, —նեռլինգվիստները գտնում են, որ լեզուներն իրենց բնույ-

<sup>1</sup> G. Bonfante. The neolinguistic Position, „Language“, XXIII, 4, 1947, էջ 367.

թով խառնածին են, որ լեզուներն անհետ չեն կորշում, չեն «մեռնում», այլ հարյուրավոր կողմնակի, թաքնված և անորսալի եղանակներով ապրում են կենդանի լեզուների մեջ. երիտքերականները նյութի հավաքումն ու պիտակավորումը խառնում են բացատրության հետ, նեռլինգվիստները այս «պազիտիվիզմին» հակադրում են ֆուլերյան տիպի «իդեալիզմը». երիտքերականների համար հետազոտության գիմավոր բնագավառը հնչյունաբանությունն է, — նեռլինգվիստների համար՝ իմաստաբանությունը. ելնելով լեզվական իմաստների զմից՝ նեռլինգվիստները նույնիսկ պնդում են, որ «հնչյունաբանությունը, որպես փորձնական և ֆիզիոլոգիական գիտություն, լեզվաբանության մեջ չի մտնում. երիտքերականները շանասիրաբար տարրերում են «կանոնավոր» և «անկանոն» բառերն ու ձևերը, — նեռլինգվիստները ժխտում են այդպիսի տարրերությունը. նրանց կարծիքով՝ ամեն ինչ կյանքում կանոնավոր է որշափով գոյություն ունի, և անկանոն, որշափով գոյության պայմանները տարրեր են:

Խոսելով լեզվի քննության պատմականության մասին՝ նեռլինգվիստները նշում են, որ երիտքերականների համար պատմականությունը մի արստրակցիա է, հնչյունական օրենքների մի շարք. մինչեռ իսկական պատմականությունը նեռլինգվիստները տեսնում են այն բանի մեջ, որ լեզուն քննվի որպես ժողովրդի կուլտուրայի ու ժողովրդի ոգու էական մասը:

Նեռլինգվիստները երիտքերականների լեզվաբանական կոնցեպցիան զրկում են լեզվի հասարակական բնույթին վերաբերող բոլոր տարրերից. ուզուար և փոխադարձ հաղորդակցումը, որոնք Պաուլի և որոշ այլ երիտքերականների կոնցեպցիայի մեջ դեռևս նշանակալից դեր էին խաղում, նեռլինգվիստների մոտ դադարում են լեզվական երևույթների բացատրության մեջ որևէ աշքի ընկնող դեր խաղալուց: Թանն այնտեղ է հասնում, որ նեռլինգվիստները մեղադրում են երիտքերականներին լեզուն որպես «կոլեկտիվ երեվույթ», «կոլեկտիվի օրենքներով կառավարվող» երեսույթ դիտելու համար: Նեռլինգվիստների կարծիքով՝ անգերենը, իտալերենը և այլն լոկ արստրակցիաներ են: Լեզվական կոլեկտիվը պասսիվ ֆունկցիա է միայն կատարում. լեզվի փոփոխության և նորարարությունների (իննովացիաների) հեղինակները անհատներն են, ընդ որում այնքան կարենոր է անհատի դերը, որքան նա աշքի ընկնող է. լեզուն ստեղծվում և փոփոխվում է անհատների կողմից: Լեզվական այս կամ այն նորույթի, այս կամ այն նորագոյացման հաղթանակի

ապահովումը կապված է մի այնպիսի գործոնի հետ, ինչպիսին է հեղինակությունը (պրեստիժը), որը իր բնույթով հոգեկան երևույթ է և հանդեմ է գալիս ամենաբազմազան բնագավառներում:

Երիտքերականներին և ստրուկտուրալիստներին մեղադրելով վերացականության մեջ՝ նեղինգվիստներն իրենք հանգում են այդպիսի վերացականության, հենց ոք յեզուն քննում են որպես կոլեկտիվի ընդհանուր ունեցվածք: Լեզվաբանական աշխարհագրությունից առնված իզոգլուսների մեթոդը նրանց համար դառնում է լեզվական ընդհանրության միակ ցուցանիշը, իսկ իզոգլուսները դիտվում են որպես ինքնակա, կոնկրետությունից զերծ բաներ, որոնք է՛լ ավելի վերացական են, քան նրանց կողմից քննադատվող երիտքերականների հնչյունական օրենքների բանաձևերը. «Իզոգլուսներ կոչելով այն աարերեր,—գրում է Պիգանին,—որոնք կազմում են տվյալ լեզվաբանական ընդհանրության ունեցվածքը տվյալ մոմենտում, մենք լեզուն կարող ենք սահմանել որպես անհատական լեզվական ակտերը միացնող իզոգլուսների մի սիստեմ»<sup>1</sup>: Այս նույն ձևով էլ «Հնդկրոպական լեզուն» դիտվում է որպես այն բարբառները միացնող իզոգլուսների մի սիստեմ, որոնցից զարգացել են պատմական շրջանի հնդկրոպական լեզուները: Այս առումով Պիգանիի և Մյուս նեղինգվիստների համար հնդկրոպական լեզուն լոկ «լեզվաբանական հասկացություն» է:

Լեզուների ցեղակցության ու փոխհարաբերության հարցերի մեկնաբանության մեջ նեղինգվիստները զուգորդում են լեզուների խառնման ու սուբստրատի, լեզվաբանական աշխարհագրության և լեզվամիության (Sprachthesenoid) տեսության սկզբունքները. Վերջին գաղափարը նրանք փոխ են առնում Պրագայի լեզվաբանական դպրոցից: Նեղինգվիստները այն կապակցությամբ ենում են կոլեկտիվի լեզվի գոյության ժխտումից, մերժում ժողովրդային և ազգային լեզուների՝ որպես իրական մեծությունների առկայության գաղափարը: Եթե երիտքերականների համար ֆրանսերենը, անգլերենը, իտալերենը միանգամայն ռեալ միասնություններ են, ապա նեղինգվիստների կաթճիքով՝ այս դեպքում այդպիսի ռեալ միասնություն չկա. Կա միայն «տարբեր տեսակ բարբառների, իզոգլուսների, փոխանցումների, տատանումների մի հսկայական քանակություն, մրցակից ուժերի և հակամարտ տեսնենցների մի անապահ մրցկածուի օվկիանոս»<sup>2</sup>:

<sup>1</sup> V. Pisani, Linguistica generale e indo-europea, 1947, էջ 12.

<sup>2</sup> G. Bonfante, էջ. աշխ., էջ 348.

Նեռլինգվիստները ցեզերի խաշավորումն ու խառնումը դիտում են որպես լեզուների փոփոխության և նոր լեզուների առաջացման կարևոր գործոն։ Այս կապակցությամբ նրանք քննադատության են ենթարկում երիտրերականների պատկերացումը ցեղակցության մասին, լեզվի միակտուրության (մոնոլիթության) նրանց ըմբռնումը, լեզուների ցեղակցության՝ ծննդաբանական ծառի ձևով պատկերացնելուն տուրք տալը։ Նեռլինգվիստների համար յուրաքանչյուր լեզու ներկայացնում է տարրեր տարրերի մի խառնուրդ։ Ամեն մի լեզվի մեջ կարելի է առանձնացնել նրա նախնական ծագումային տարրերի հետ միասին նաև այն տարրերը, որոնք նա ձեռք է բերել խաշավորման ճանապարհով, մտնելով այս կամ այն լեզվամիության մեջ։ Նեռլինգվիստները պնդում են, որ անխառն լեզու չկա, որ բոլոր լեզուները խաշավորված են. այսպես, օրինակ, թոնֆանտեն գտնում է, որ որոշ պարզեցում թույլ տալով կարելի է պնդել, թե ֆրանսերենը լատիներենն է + գերմաներենը (ֆրանկերենը), իսպաներենը՝ լատիներենը + արաբերենը, իտալերենը՝ լատիներենը + հունարենը և օսկա-ումբրերենը, ուումիներենը՝ լատիներենը + սլավոներենը, չեխերենը՝ սլավոներենը + գերմաներենը, բուլղարերենը՝ սլավոներենը + հունարենը, ուուսերենը՝ սլավոներենը + ֆիննա-ուգրերենը և այլն։ Անհրաժեշտ է նշել, որ նեռլինգվիստները խոսելով էթնիկական խառնուրդի դերի մասին, հասկանում են ոչ թե ուսայական, այլ կուլտուրական խառնուրդ, ընդ որում կուլտուրականին տալիս են հոգեկան հիմք. Վերջիվերջո էթնիկական խառնուրդը նրանց համար հոգեկան խառնուրդը է։ Ժխտելով լեզվի ոեալ միասնությունը և բոլոր լեզուները համարելով խառնածին՝ նեռլինգվիստները ժխտում են լեզուների միջև կտրուկ սահմանների գոյությունը։ Նրանց կարծիքով չի կարելի խոսել այդպիսի սահմանների մասին ոչ միայն միևնույն ընտանիքի լեզուների, այլև տարբնտանիք լեզուների դեպքում։ Այսպիսով, չունենալով հարցի դիալեկտիկական ըմբռնում՝ նեռլինգվիստները շեն կարողանում նկատել որպակական անցումները և պատմական, և տարածական առումով։ Միաժամանակ նրանք ժխտում են լեզվի մեջ «Հիմնական» և «ոչ-Հիմնական» տարրերի առկայությունը, բացասում դրանց տարրերակման հնարավորությունը, լեզուների բոլոր տարրերը համարում հավասարապես խոցելի և հավասարապես փոխառության ենթակա։ Ընդհանուր առմամբ նրանք գտնում են, որ ճիշտ չէ տարրերել «բնիկ» և «փոխառյալ» բառեր, որ բոլոր բառերը փոխառություններ են. ամեն

մի բառ վերջիվերջո փոխ է առնվում մի ուրիշից, մի այլ տեղից, մի այլ սերնդի կողմից: Եթե նկատի առնենք, որ նեոլինգվիստները լեզվի փոփոխության պատճառները որոնում են անհատական ստեղծագործության մեջ, ապա պարզ կլինի, որ յուրաքանչյուր բառ նրանց կողմից դիտվում է որպես այդ բառի տարածում՝ անընդհատ փոփոխությունների ճանապարհով: Այս կապակցությամբ նրանք դնում են բառերի ծագման աղբյուրները, յուրաքանչյուր բառի կոնկրետ պատմությունը պարզելու անհրաժեշտության հարցը: «Փօխառության» երիտքերականական գաղափարին նեոլինգվիստները հակադրում են նմանողության (իմիտացիայի) գաղափարը, որը Շուխարդտի հետևողությամբ փոխ են առնում իդեալիստ սոցիոլոգ Տարդից: յուրաքանչյուր լեզվական երևույթ տարածվում է նմանողությամբ. բայց նմանողությունը պատճենում չէ, այլ վերաստեղծում, որի մեջ լեզվական փաստն ստանում է նոր ձև և նոր ոգի, արտացոլում խոսողի անձնավորությունը: Դրսից միայն ազդակ (իմպուլս) է տրվում:

Նկատի առնելով սուբստրատի և Վարտբուրգի առաջ քաշած սուպերստրատի գաղափարները, Բարտոլին խմբավորում է լեզուների խառնման բոլոր դեպքերը և ավելացնում ադստրատի գաղափարը. եթե սուբստրատը բնիկների լեզվի տարրերի մնացորդն է, ևթե սուպերստրատը տեղացիների մեջ ձուլված եկվորների լեզվի տարրերի մնացորդն է, ապա ադստրատը այն տարրերն են, որոնք տարածվում են լեզվի մեջ՝ սահմանային շրջաններում տեղի ունեցող էթնիկական խառնուրդների ճանապարհով<sup>1</sup>:

Առանձնապես անհաշտ դիրք են բռնում նեոլինգվիստները երիտքերականների գլխավոր սկզբունքի՝ հնչյունական օրենքի սկզբունքի նկատմամբ: Նշելով, որ հնչյունական օրենքի սկզբունքը երիտքերականների հայտնագործությունը չէ՝ նեոլինգվիստները վիճարկում են այս հարցում երիտքերականների առաջ քաշած սկզբունքները հնչյունական օրենքի ֆիզիոլոգիական բնույթի ու ծագման և կույր անհրաժեշտություն ներկայացնելու մասին: Նրանք պնդում են, որ՝ 1) յուրաքանչյուր լեզվական երևույթ մարդուն հատուկ հոգեկան երևույթ է, ուստի և ֆիզիոլոգիան ոչ մի լեզվական երևույթի պատճառ չի կարող բացատրել. այն կարող է տալ միայն երևույթի պայմանները. 2) լինելով հոգեկան երևույթ՝ հնչյունական օրենքը չի կարող կապվել ֆիզիկական կամ ֆիզիո-

<sup>1</sup> Հմմա. M. Bartoli, Substrato, superstrato, adstrato, „Rapports au 5-me congrès international des linguistes“, Bruges, 1939, էջ 59—65.

լոգիական անհրաժեշտության հետ. լեզուն ստեղծում է անհատը յուրաքանչյուր տվյալ մոմենտում՝ իր կամքի և երևակայության ուժին համապատասխան. լեզուն մարդուն չի պարտադրվում որպես արտաքին անհրաժեշտություն: Լեզուն նեռլինգվիստների համար ներկայացնում է իր բոլոր կողմերով հոգեկան, ուստի և միշտ գիտակցական և նպատակագիր (գիտումնավոր) երևույթ: Խոսելով հնչյունական օրենքների գործողության կույր անհրաժեշտության մասին՝ երիտքերականները դրանով իսկ հնչյունական օրենքները տեսնում են և՛ լեզվի մեջ, և՛ լեզվից դուրս. նեռլինգվիստները հնչյունական փոփոխությունները տեսնում են միայն բառերի մեջ: Հնչյունական բանաձևը բառերից անկախ, ինքնակա գոյություն չունի, ուստի և բանաձևերի տակ կարող են ընկնել տարասեռ և տարածամանակյա երևույթներ, որոնք անհրաժեշտ է պարզել հոգատար ուսումնասիրության միջոցով, բանաձևն ինքնին ոչինչ չի բացատրում: Այս կապակցությամբ նեռլինգվիստները պահանջում են՝<sup>1)</sup> հաշվի առնել աշխարհագրական գործոնի գերը, պարզել վերականգնվող ձևերի սկզբնական աշխարհագրական տեղաբաշխումը. ամեն բառ ունի ոչ միայն իր պատմությունը, այլն իր աշխարհագրությունը. այլ կերպ ասած՝ նրանք ժամանակագրաւեկան հաջորդականությունը ձգտում են հանգեցնել տարածական տարբերությունների. 2) երևույթները քննելիս միշտ ձգտել պարզելու, թե երևույթների միշկ ինչ ժամանակագրական հաջորդականություն կա և որն է ավելի հին. 3) շրավարարվել ենթադրական, աստղանիշերով օժտված ձևերի և անալոգիական գործոնների մատնանշումով, այլ շարունակել հետազոտությունը, ավելի լավ պարզել հնչյունական պայմանները և հնչյունական փոփոխության պատճառները. երիտքերականները կոնստատացիայի են ենթարկում, որ X-ը իտալերենում տալիս է որոշ պայմաններում չչ այլ պայմաններում՝<sup>2)</sup> SS, բայց զանք չեն թափում պարզելու, թե ինչու X-ը նախաշեշտ վիճակում տալիս է շեշտահաջորդ վիճակում՝<sup>3)</sup> SS. 5) հետևելով ստրուկտորալիստներին՝<sup>4)</sup> ա) յուրաքանչյուր հնչյունական փոփոխություն քննել մյուսների հետ կապված, ոչ թե անկախ, ինչպես անում են երիտքերականները. բ) հնչյունները և հնչյունական փոփոխությունները քննել հնչույթի (Փոնեմատիկական) տեսության լույսի տակ. նեռլինգվիստները հնչույթը (Փոնեման) դիտում են որպես գիտակցական հոգեկան ակտ, որ գիտակցարար հակադրվում է մյուսներին. սրանով իսկ նրանք հակադրվում

են երիտքերականների սկզբունքին՝ հնչյունական օրենքների՝ անգիտակցական-մեխանիկական ակտ լինելու մասին:

Երիտքերականներին մեղադրելով ժամանակագրական և աշխարհագրական գործոնների անբավարար հաշվառման մեջ՝ նեռլինգվիստները ձգում են լեզվական երևութների քննության դեպքում ժամանակագրականորեն տարրերել հին ու նոր, վաղ ու ուշ, նախորդ (fase anteriore) ու հաջորդ (fase posteriore), սաղմնավորվող ու անհետացող (fase sparita) փուլեր, տարածական տեսակետից՝ մեկուսացված (area isolata) ու շմեկուսացված, կենտրոնական (area di nezzo) ու եզրային (area laterall), մեծ թե փոքր տարածական ընդգրկում ունեցող (area maggiore e area piùolare), հին բնակության և ուշ բնակեցված (area seriore) շրջաններ և այլն, ընդ որում նրանք փորձում են կապ հաստատել ժամանակագրական փուլերի և տարածական շրջանների միջև: Բարտոլին իր «Նեռլինգվիստիկայի ներածության» մեջ տալիս է «լեզվաբանական փուլերի» (fasi linguistichie), այն է՝ լեզվական փոփոխության ժամանակագրական փուլերի որոշման մի շարք նորմաներ, որոնք մեծ մասամբ հենվում են այդ փոփոխությունների տարածման շրջանների (առեջ դիրքի ու փոխհարաբերության սահմանման վրա). 1) լեզվական փոփոխության փուլերից ավելի վաղ գրանցվածը սովորաբար ավելի հինն է («վաղ գրանցման» սկզբունք). 2) նախորդող փուլը սովորաբար պահպանվում է տարածական շրջաններից ավելի մեկուսացվածում («մեկուսացված շրջանի» սկզբունք). 3) եզրային շրջաններում վկայվածը սովորաբար ավելի վաղ փուլն է, եթե միայն կենտրոնական շրջանը ավելի մեկուսացված չէ («եզրային շրջանի» սկզբունք). 4) երկու շրջաններից մեծը սովորաբար պահպանում է զարգացման ավելի վաղ փուլը, եթե միայն փոքր շրջանը ավելի մեկուսացված չէ և բաղկացած չէ եզրային շրջաններից («մեծ շրջանի» սկզբունք). 5) զարգացման վաղ փուլը սովորաբար պահպանվում է ավելի ուշ բնակեցված (դրավված, գաղութացված) շրջանում (առեջ շրջանը՝ սկզբունք). 6) եթե զարգացման երկու փուլերից մեկը գտնվում է անհետացման ճանապարհին, սովորաբար անհետացման փուլն է ավելի հինը («անհետացման փոփի» սկզբունք): Բարտոլիի հաստատած այս նորմաները հենվում են մեծ մասամբ դեպքերի վիճակագրական գերակշռության վրա, ընդ որում հակառակ փաստերին Բարտոլին բավարար ուշադրություն շի դարձ-

նում: Հենվելով իր այս սկզբունքների վրա՝ Իարոռովին երիտքերականների կողմից գոյակից համարվող շատ երևությներ տարբերում է ըստ ժամանակագրական և աշխարհագրական տարածման. այսպես, նա չի ընդունում հնդկոպական \*Ձ-ն, լատիներեն թագավորական ի-ն դիտելով որպես նորագոյացում. ժիտում է հնդկոպական հատուկ քմային ետնալեզվայինի (կ) գոյրությունը և քմայնացումը համարում ուշ երևությ և այլն:

Ելնելով լեզվի՝ անհատական հոգեկան ստեղծագործություն, գեղարվեստական արտահայտություն լինելու գաղափարից՝ նեռլինգիստները պաշտպանում են հնչյունական սիմվոլիզմի գաղափարը, այսինքն՝ ընդունում են հնչյունների և իմաստների միջն ներքին «խորհրդավոր» կապի գոյրությունը: Նեռլինգիստների կարծիքով՝ հնչյունական սիմվոլիզմը բացատրում է բանաստեղծական ներդաշնակության գաղտնիքը և համապատասխանում է նեռլինգիստների կարծիքին՝ լեզվի բանաստեղծական ստեղծագործություն լինելու մասին. այսպես, Թոնֆանտեն, կանգնելով Կրատիլոսի և Ավգուստինոսի դիրքերի վրա՝ պնդում է, որ ի-ն առաջացնում է մանր իրերի և էակների պատկերացում, օ-ն և ձ-ն՝ մեծերի, ծ-ն՝ սայթաքող առարկաների ու գործողությունների, այլև արհամարհանքի և այլն:

Եթե երիտքերականները խոսում են բացառություն շճանաշող հնչյունական օրենքների մասին, ապա նեռլինգիստները պնդում են, որ ամեն բառ, ամեն ձև բացառություն է, որ բացառությունը կյանքի կանոն է. այս պատճառով էլ ամեն բառ և ամեն ձև արժանի է առանձին հոգածությունության: Օրինաշափության ժխտումը նեռլինգիստների ագնոստիցիզմի ամենավառ արտահայտություններից մեկն է:

Հանդիպելով տարբեր լեզուներում նույնական նորագոյացման հետ՝ երիտքերականները հակում են ցույց տալիս դրանք մեկուսացված քննելու. մինչդեռ նեռլինգիստները կարծում են, որ այս դեպքում մենք գործ ունենք միևնույն պատճառով պայմանավորված երևութիւնութիւն: Ենթադրական նախալեզվի և նոր լեզուների հնչյունների համընկնելու դեպքում երիտքերականները հակում են ցույց տալիս դրանք բացատրելու որպես հետադարձ պրոցես. նեռլինգիստները գտնում են, որ այս դեպքում կարող է լինել ուղղակի կախում, եթե նկատի առնենք աշխարհագրական գործոնը:

Նշելով, որ երիտքերականները փաստորեն միայն մեկ մեթոդ

Են կիրառում՝ հնչյունական օրենքների մեթոդը, նեռլինգվիստները փորձում են դրան հակադրել մի քանի մեթոդ։ Բարտոլին, «Նեռլինգվիստիկայի ներածության» մեջ (1925) նշում է երկու մեթոդ՝ հուշարձանների ժամանակագրական հարաբերությունները և տարածական շրջանների (արեալների) աշխարհագրական հարաբերությունները։ Բոնֆանտեն քննելով մեթոդների հարցը<sup>1</sup>, ավելացնում է ևս ութը՝ հասցնելով դրանց թիվը տասի Ընդհանուր առմամբ նեռլինգվիստները գտնում են, որ երեսույթը պետք է քննել հնարավորին շափ շատ կողմերից և հնարավորին շափ շատ մեթոդներով։ Այս տեսակետից նեռլինգվիստները նշում են լեզվական երեսույթների բարդությունը։ Երիտքերականների մեթոդը հեշտացնում է հարցի լուծումը, մինչդեռ նեռլինգվիստների կարծիքով՝ իրենց մեթոդը պահանջում է մեծ լարում և ընթերցողի ուշադրությունը գրավում է դեպի պատմական, աշխարհագրական, կուտուրական և էսթետիկական բազմազան պրոբլեմները։

#### 4. ՍՈՑԻՈԼՈԳԻԶՄ

**Ընդհանուր տեղեկություններ.**— Սոցիոլոգիզմի երկան գալը լեզվաբանության մեջ պայմանավորված էր մի կողմից՝ երիտքերականների ինդիվիդուալիզմի դեմ հանդես եկած քննադատությամբ, մյուս կողմից՝ սոցիոլոգիական որոշ հոսանքների, հատկապես Դյուրկհեյմի սոցիոլոգիական դրույթների ձևավորմամբ։ Սոցիոլոգիզմի փիլիսոփայական հիմունքների ձևավորման (հատկապես լեզվական նշանի գաղափարի մեկնաբանման) մեջ մեծ դեր խաղաց ներկանտականությունը՝ դառնալով նրա աղբյուրներից մեկը։

Սոցիոլոգիական ուղղության հիմնադիրը շվեյցարական լեզվաբան Ֆերդինանդ դը-Սոսյուրն է։ Սոցիոլոգիզմի անվան տակ հիմնականում միավորում են երկու դպրոց՝<sup>1)</sup> 1) Ժնևի կամ շվեյցարական դպրոցը, որին բացի Սոսյուրից պատկանում են նաև նրա աշակերտներ Ալբեր Սեշենն, Շառլ Բալլին, վերջիններիս աշակերտ Ս. Կարցեսկին<sup>2</sup>, և 2) Փարիզի կամ ֆրանսիական դպրոցը, որի գլուխը Անտուան Մեյեն է և որին, բացի նրանից, հարում են ժակ Վանդրիեսը, Էմիլ Բենվենիստը, Մարուզեն, Մարսել Կոհենը, հըն-

<sup>1</sup> Հմմտ. Word, I, 1945, էջ 132—161։

<sup>2</sup> Եղել է Պազարի ստրուկտուրական հեղվարանական խմբակի անդամներից մեկը, ուստի և նրա հայացքների շարադրանքը կտրվի այդ խմբակի քննության մեջ։

շյունաբան Մորիս Գրամմոնը և ուրիշները: Սակայն նախ՝ սոցիո-լոգիզմը հետևորդներ ունի նաև այլ երկրներում, և երկրորդ՝ հիշված անվանումները չեն բացահայտում սոցիոլոգիզմի տարատեսակների էռլիթյունը, ուստի և մենք երբեմն հարկադրված ենք դիմելու լրացուցիչ բնութագրումների և անվանումների:

Ժնկի սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցիչների կոնցեպցիան կարելի է բնութագրել որպես ստատիկ իմանենտիզմ: Դնելով լեզվի քննության պատմական և ստատիկ հայեցակետերի հարցը՝ Սոսյուրը և մյուսները, այնուամենայնիվ, գերադասություն են տալիս ստատիկ քննությանը. միաժամանակ, լեզուն դիտելով որպես հասարակական երևույթ՝ Սոսյուրը և նրա հետևորդները հակված են այն քննելու իմանենտորեն, որպես ինքնակա, ինքն իր համար գոյություն ունեցող սիստեմային ամբողջություն: Այլ է հարցը Փարիզի սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցիչների և նրանց այլ կողմանակիցների մոտ. Մեյեն և մյուսները նախ՝ խիստ կարևոր տեղ են տալիս պատմական հետազոտությանը, և երկրորդ՝ լեզուն քըն-նում են ոչ թե իմանենտորեն, այլ որպես հասարակության զարգացումից կախված մեծություն: Այս առումով նրանց կոնցեպցիան կարելի է կոչել պատմական դեպեղենտիզմ: Ի՞արկե, պետք է նկատի առնել, որ այս կամ այն ուղղության ներկայացուցիչներին ոչ բոլոր դեպքերում կարելի է ուղղագծորեն դնել հիշյալ անունների տակ կամ նրանց մեջ տեսնել հակասություններից զերծ հայացքների տեր մարդկանց: Ժնկի դպրոցը կարևոր դեր է խաղացել լեզվաբանական երկու կարևոր հոսանքի՝ Փունկցիոնալիզմի և ապա ստրուկտուրալիզմի ձևավորման մեջ. թերևս այս բանը նկատի ունենալով է, որ ոմանք Շառլ Բալլիին, Ալբեր Սեշեին համարում են Փունկցիոնալիզմի հետևորդներ, մյուսները Ժնկի դպրոցը դիտում են որպես ստրուկտուրալիզմի վաղ արտահայտություններից մեկը: Սակայն մենք, ընդունելով հանդերձ դրանց սերտ առընչությունը, բուն Փունկցիոնալիզմի անվան տակ նպատակահարմար համարեցինք քննել միայն Բալլիի աշակերտ Անրի Ֆրեյի հայեցքները (գերմանական Փունկցիոնալիզմի ներկայացուցիչների հետ միասին), իսկ ստրուկտուրալիզմն առանձնացնել որպես նոր էտապի արտահայտություն: Ժնկի դպրոցի գլխավոր ներկայացուցիչները ավելի շուտ նախապատրաստում են հիշյալ ուղղությունները, քան հարում դրանց:

Սոցիոլոգիական ուղղությանը հարում են և Մեյեի աշակերտ

Սրմմերֆելտը, որի «Հեզու և հասարակություն» գիրքը<sup>1</sup> նշանակալից ազգեցություն է թողել «լեզվի նոր ուսմունքի» որոշ հետևորդների վրա, ի. Մխրիյնենը և ուրիշները:

Սոցիոլոգիական ուղղությունը հետևորդներ է գտել նաև ուսական և հայ իրականության մեջ. ուսւ իրականության մեջ սոցիոլոգիզմին մեծ շափով տուրք են տվել Ռ. Օ. Շորը, Գ. Վինոկորը և ուրիշները, հայ իրականության մեջ՝ Մեյեի աշակերտ Հ. Աճառյանը:

Սոցիոլոգիական ուղղությանը մոտ են կուլտուր-էթնոլոգիզմի որոշ ներկայացուցիչների, հատկապես է. Սեպիրի հայացքները:

### ա) Փճկի գպրոց

Ֆերդինանդ դը-Սոսյուրը.— Շվեյցարացի լեզվաբան Ֆերդինանդ դը-Սոսյուրը (1857—1913) նոր լեզվաբանության խոշորագույն ներկայացուցիչներից մեկն է: Նա, ինչպես նշեցինք, ընդհանուրապես սոցիոլոգիական ուղղության և մասնավորապես ժնկի դրագոցի հիմնադիրն է. հաճախ խոսում են նաև սոսյուրականության մասին: Սակայն Սոսյուրի դերը սրանով չի սպառվում. նրա գաղափարները մեծ ազգեցություն են թողել ժամանակակից լեզվաբանական գրեթե բոլոր ուղղությունների վրա: Կարելի է ասել, որ ամենից ավելի տարածված լեզվաբանական ուղղության՝ ստրուկտուրալիզմի ակունքները վերջիվերջո հանդում են Սոսյուրի լեզվաբանական գլխավոր դրույթներին: Իր գործունեության տարրեր շրջաններում Սոսյուրի արտահայտած գաղափարները և լեզվաբանական ընդհանուր կոնցեպցիան հիմք են տալիս նրա հետ կապելու և՝ պատմա-համեմատական, և՝ ստատիկ-վերլուծական լեզվաբանությունների ներկայացուցիչներին, որոնք հաճախ անհաշտ դիրք են բռնում իրար. նկատմամբ:

Սոսյուրի լեզվաբանական գործունեության մեջ կարելի է տարրերել երկու շրջան, որոնք իրարից բաժանվում են XIX և XX դարերի սահմանագծով: Առաջին շրջանում Սոսյուրն աշխատում է հնդկրոպաբանական նեղ պրոբլեմների վրա և հարում երիտրերականության լայպցիգյան դպրոցին: Այս շրջանում նա գրում է իր «Ուսումնասիրությունն հնդկրոպական լեզուների ձայնավորների նախնական սիստեմի մասին»<sup>2</sup> և «Բացարձակ սեռականը սանս-

<sup>1</sup> A. Sommerfelt, La langue et la société. Caractères sociaux d'une langue archaïque, Oslo, 1938.

<sup>2</sup> F. de Saussure, Mémoire sur le système primitif des voyelles dans les langues indo-européennes, 1879.

կրիտում»<sup>1</sup> աշխատությունները: Եթե սրանցից երկրորդը առանձին հետք չի թողել, ապա առաջինը նշանակալից դեր է խաղացել պատմա-համեմատական հետազոտության մեթոդի կատարելագործման մեջ՝ երևույթների սիստեմային քննության փայլուն «րինակ» տալու տեսակետից: Սոսյուրի այս գրքի հիմնական արժանիքը հնդկուական արմատների հնչյունական կառուցվածքի և հերթագայությունների սիստեմի հետ կապված մի շարք կարևոր հարցերի պարզաբանումն է: Սոսյուրը ձգտում է հնդկուական ձայնավորների սիստեմը հանգեցնել մեկ հիմնական՝ ձայնավորի՝ օ-ին: Հընդկուական արմատների մեջ առանձնացնելով պարզ է ձայնավորի հանգող տիպը՝ մնացած արմատները նա բաժանում է 3 խմբի՝ 1) ձայնորդներով (ներառյալ նաև ի-ին և ս-ն) վերջացող տիպ՝ \*strey-, \*ther և այն. 2) ձայնորդ+բաղաձայն կապակցություններով վերջացող տիպ՝ \*lelk-, \*derk-, \*bhendh- և այլն. 3) բաղաձայններով վերջացող տիպ՝ \*ret-, \*sek- և այլն: Յուրաքանչյուր խմբի ձայնավորը կարող է հերթագայվել <sup>0-ի</sup> և զրոյի հետ, ընդորում առաջին և երկրորդ խմբերի արմատներում զրո աստիճանն արտահայտվում է ի, ս, ր, լ, դ, ն հնչյուններով, որոնք Սոսյուրը կոչում է «ձայնորդային գործակիցներ»: Սրանց շարքում Սոսյուրը դնում է նաև իր կողմից A, () տառերով նշանակված հնչյունները, որոնք, նրա կարծիքով, հնդկուական նախալեզվում տվել են օ-ի հետ հերթագայվող ա և օ: «Ձայնորդային գործակիցները» զուգորդվելով օ-ի և նրա հետ հերթագայվող <sup>0-ի</sup> հետ, այլև մնալով միայնակ, տալիս են հնդկուական ձայնավորների սիստեմի ողջ բազմազանությունը: Այսպիսով, ու, ու, էր, էլ, էմ, ու երկբարբառները այնպես են հարաբերում ի, ս, ր, լ, դ, ն «ձայնորդային գործակիցներին», ինչպես երկար ձայնավորները՝ A, Q «ձայնորդային գործակիցներին». Հետևաբար, ըստ Սոսյուրի, երկար ձայնավորները կարճ ձայնավորների և A-ի ու (Q-ի զուգորդման արդյունք են, ընդորում զրո աստիճանում մնում են որպես A, (): Սոսյուրի այս A-ն և Q-ն հետագայում սկսում են նշանակել օ-պ (այսպես կոչված schwa indogermanicum-ը): Այս իրացիուալ A, Q հնչյունների առանձնացման հետ կապված՝ Սոսյուրը միավանկ արմատների կողքին տարբերում է նաև երկվանկ արմատներ՝ դրանք համարելով միավանկ արմատների և schwa-ի միացում: Սրանով իսկ հին հնդիկների կողմից առանց օ-ի և օ-պ

<sup>1</sup> F. de Saussure, Le génitif absolu en sanscrit, 1881.

**արմատների** (անտ արմատներ և սէտ արմատներ) տարբերակումը դուրս է գալիս ընդհանուր հնդկրոպական երևույթ և բացատրում հնդկական ի-ով արմատների համապատասխան վիճակունը հունական առողջ, է-ով, օ-ով արմատներին (ծաբաձ-չաւ, չալէ-չաւ, ձօթ-չաւ): **Միաժամանակ** պարզվում է, «որ հնդկական բայերի խոնարհման խմբերից V-ը, VII-ը և IX-ը ունեն մի ընդհանուր գիծ՝ կազմվում են ու միշտանցով, որի բնույթը առաջին անգամ մատնանշվում է Սոսյուրի կողմից: Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ Սոսյուրը հստակ տարբերակում չի անցկացնում հերթափայության զրո և թուլացած աստիճանների միջև<sup>1</sup>: Սոսյուրի գրքի գաղափարները թրուգմանի և այլ երիտքերականների մոտ առանձին ընդունելություն շգտան՝ ազդեցություն ձեռք բերելով աստիճանաբար՝ ավելի ուշ շրջանում:

Իր գործունեության երկրորդ շրջանում Սոսյուրն զբաղվում է ընդհանուր լեզվաբանական հարցերով՝ դնելով և լուծելով լեզվաբանական մի շարք կարևոր պրոբլեմներ: Այդ հարցերը Սոսյուրը առաջ է քաշում նախ Փարիզի բարձրագույն գիտելիքների դպրոցում (École des Hautes Études) 1881—1891 թթ. և մանավանդ ժնկի համալսարանում 1906—1912 թթ. կարդացած իր դասախոսություններում. որոնք ուսանողական գրանցումների հիման վրա հրատարակվում են նրա աշակերտներ Շ. Բալլիի և Ա. Սեշեիի կողմից 1916 թ.<sup>2</sup> «Բնդհանուր լեզվաբանության դասընթաց» վերնագրով<sup>2</sup>: Այս գիրքն է, որ Սոսյուրին մեծ տեղ է տալիս լեզվաբանական ընդհանուր տեսության մշակման մեջ և դառնալու է մեր առաջիկա քննության հիմնական առարկան:

Սոսյուրի լեզվաբանական կոնցեպցիան կարելի է բնութագրել որպես սոցիալ-հոգեբանական իմաննենտիզմ, որի հիմքում ընկած է վերջիվերջո փիլիսոփայական իդեալիզմը: Եթե նրա սոցիոլոգիզմը հակադրվում է երիտքերականների ինդիվիդուալիզմին ու սուբյեկտիվիզմին և հենվում է միլ Դյուրկհեյմի ուսմունքի վրա, ապա նրա պսիխոլոգիզմը ներդաշնակում է և մեկի, և մյուսի հետ. ինչպես նշել ենք, Դյուրկհեյմի համար ևս հասարակականը վերջին հաշվով հոգեկան հիմք ունի:

Սոսյուրի լեզվաբանական կոնցեպցիան ամենից առաջ բնու-

<sup>1</sup> Հմմտ. Բ. Վ. Գորնունզի առաջարանը է. Բենվենիտի «Հնդկրոպական անունների կազմության ծագումը» գրքում (Է. Բենվենիտ, Ինдоевропейское именное словообразование, 1955, էջ 9).

<sup>2</sup> F. de-Saussure. Cours de linguistique générale, 1916.

թագրվում է որպես իմանենտիզմ։ Սոսյուրի համար լեզուն մի ինքնարավ, ներփակ սիստեմ է, որը լեզվաբանության առարկա է հենց իրեւ պարագաներին։ Սոսյուրը լեզվաբանության իսկական առարկայից հանում է այն բոլորը, ինչ այդ սիստեմի հետ արտաքին առնչություն ունի, ինչ անմիջապես չի շոշափում սիստեմի բնույթը։ «Լեզվաբանության միակ և իսկական առարկան,—գրում է նա, — լեզուն է՝ քննված ինքն իր մեջ և իր համար»<sup>1</sup>։ Լեզվաբանության իր այս ըմբռնումը Սոսյուրը հակադրում է նախորդ լեզվաբանական դպրոցների ըմբռնումներին, որոնց մեջ լեզվաբանությունը, նրա կարծիքով, կորցնում է իր իսկական առարկան, լուծված զանազան գիտությունների մեջ, իր առարկան քննում այս կամ այն կողմնակի գիտության հայեցակետից։

Սակայն ի՞նչ բան է լեզվաբանության ուսումնասիրության իսկական առարկան՝ լեզուն։ Այս հարցին պատասխանելու համար Սոսյուրը փորձում է պարզել լեզվի հետ առնչվող երեք հասկացությունների<sup>2</sup> խոսողական գործունեության (language), լեզվի (language) և խոսքի (ratiōne) բնույթն ու փոխհարաբերությունը։

Խոսողական գործունեությունը Սոսյուրի մոտ պարունակում է այն բոլորը, ինչ կապված է մարդկային գործունեության այս բնագավառի հետ։ Խոսողական գործունեությունը տարասեր բնույթ ունի, ինքնին միասնական չէ, բազմաձև է և տարասիստեմ, որ ներխուժում է ֆիզիկայի, ֆիզիոլոգիայի և հոգեկանի բնագավառը, պատկանում է և՛ հասարակական, և՛ անհատական ոլորտին։ Խոսողական գործունեությունը փաստորեն դիտվում է որպես յուրատեսակ ապրիորի ընդունակություն, որ արտահայտություն է գրտնում լեզվի և խոսքի ձևով։ այն հատուկ է մարդուն ընդհանուրապես։ «Խոսողական գործունեության իրականացումը, — ասում է Սոսյուրը, — հանգում է բնությունից մեզ հատուկ ընդունակության վրա, այն ժամանակ, եթե լեզուն յուրացված և պայմանական մի բան է»<sup>2</sup>։ Խոսողական գործունեությունը բաժանվում է երկու մասի՝ լեզու (language) և խոսք (ratiōne). դրանցից առաջինը խոսողական գործունեության հասարակական կողմն է, երկրորդը՝ անհատականը, ըստ որում մեկը չի կարելի հասկանալ առանց մյուսի։ Խոսողական գործունեությունը, Սոսյուրի կարծիքով, ինքնին անձանաշելի է. որպեսզի կարողանանք թափանցել նրա բնույթի մեջ,

<sup>1</sup> Ф. де Соссюр. Курс общей лингвистики, 1933, № 207.

<sup>2</sup> Նույն տեղը, № 35.

պետք է լեզուն առանձնացնենք և քննենք որպես լեզվաբանության բուն առարկա:

Եթե խոսողական գործունեությունը բազմասեռ է և ներխուժում է զանազան երկույթների բնագավառը, ապա լեզուն միասնական է ու միասեռ և կազմում է ներփակ մի ամբողջություն. «Լեզուն, — նշում է Սոսյուրը, — մի կողմից՝ խոսողական ընդունակության հասարակական արդյունքն է, մյուս կողմից՝ այն անհրաժեշտ պայմանների ամբողջությունը, որոնք յուրացվել են հասարակական կոլեկտիվի կողմից՝ այդ ընդունակությունը առանձին անձերի մոտ իրականացնելու համար»<sup>1</sup>: Որպեսզի կարողանանք լեզվաբանությունը ճիշտ կերպով սահմանազատել մյուս գիտություններից և ճշտիվ որոշել նրա առարկան, անհրաժեշտ է խստիվ կերպով տարրերակել լեզուն խոսողական գործունեության մյուս բնագավառներից. միայն լեզուն է, Սոսյուրի կարծիքով, հնարավերություն տալիս ինքնարավ սահմանման և նեցուկ տալիս հետազոտական մտքի զարգացման համար:

Լեզուն հակադրվում է խոսքին, որպես հասարակականը՝ անհատականին, էականը՝ կողմնակիին և ավելի կամ պակաս շափով պատահականին: Լեզուն և խոսքը պայմանավորում են միմյանց. Եթե լեզուն անհրաժեշտ է խոսքը հասկանալի դարձնելու համար, ապա խոսքն անհրաժեշտ է լեզուն հաստատելու համար. սակայն «պատմականորեն խոսքի ակտը միշտ նախորդում է լեզվին», — պնդում է Սոսյուրը՝ խախտելով իր իսկ կառուցած ներդաշնակությունը: Հիմնավորելով այդ միտքը՝ Սոսյուրը նշում է, որ՝ 1) հասկացության և բառապատկերի լեզվականացողիացիան հնարավոր չէր լինի, եթե նրան չնախորդեր խոսքի մեջ տեղի ունեցող ասուցիացիան. 2) ուրիշներին լսելով և բազմաթիվ փորձերի միշտով ենք առվորում լեզուն. 3) լեզվական հմտությունները ձևափոխվում են ուրիշներից ստացած տպավորություններից: Լեզուն մտքի և գործիքն է, և՝ արդյունքը. բայց սրանով հանդերձ նրանք տարբեր բաներ են:

Անհատական խոսողական ակտը, որ հնարավորություն է տալիս վերստեղծելու խոսքի շրջապտույտը, ենթադրում է առնվազն երկու անձի՝ խոսողի և լսողի առկայությունը: Շրջապտույտն սկսվում է խոսողի ուղեղում որպես հոգեկան պրոցես (հասկացության զուգորդում ակուստիկական պատկերի հետ), որին հաջորդում է ֆիզիոլոգիականը (ուղեղի կողմից այդ պատկերին համա-

<sup>1</sup> Ф. де-Соссюр, Курс общей лингвистики, 1933, § 24.

պատասխան իմպովսի հաղորդում խոսքի օրգաններին): Խոսով՝ բերանի և լսողի ականջի միջև ընկած է ֆիզիկական պրոցեսը (հնչունական ալիքների տարածում): Լսողի մոտ տեղի է ունենում խոսովի մոտ տեղի ունեցածի հակառակ պրոցեսը: Այսպիսով, խոսողական ակտը հոգեկան, ֆիզիոլոգիական և ֆիզիկական պրոցես է: Խոսողական գործունեության ուսումնասիրությունն սկսել, այսպիսով, խոսքից՝ ճիշտ չէ. վերջինս խոսողական գործունեության սաղմն է միայն: Նշված շրջապտույտով կապված անհատների միջև սահմանվում է մի միջին գիծ: Առանձին անհատների վերարտադրած նշանները լիովին նույնական չեն, բայց մոտավորապես նույնն են և կապվում են միենույն հասկացությունների հետ: Ֆիզիկական, կողմը լեզվին չի վերաբերում. անծանոթ լեզվի հնչունները մենք լսում ենք, բայց չենք հասկանում, որով և գուրս ենք մնում հասարակական փաստից: Հոգեկանը ևս լիովին չի մասնակցում. կատարողական կողմը անհատական երևույթ է և լիովին գտնվում է անհատի տրամադրության տակ:

Լեզուն համարելով ներփակ հասարակական սիստեմ և խընամբով տարբերակելով անհատական խոսքից՝ Սոսյուրն, այնուամենայնիվ, մնում է հոգեբանական դիրքերի վրա: Լեզուն նրա համար նշանների մի սիստեմ է, որի մեջ էականը իմաստի գուգորդումն է ակուստիկական պատկերի հետ. սակայն «նշանի այդ երկու տարրերն էլ հավասար չափով հոգեկան են»<sup>1</sup>: Լեզուն որպես հասարակական փաստ նրա համար մնում է որպես հոգեբանական երևույթ, հասարակականը դիտվում է որպես հոգեկան: Եթե խոսքային գործունեության մի կողմը՝ խոսքը հոգեֆիզիկական երեւվույթ է, ապա լեզուն հոգեկան երևույթ է: Այսպիսով, խոսողական գործունեության ուսումնասիրության այն մասը, որը վերաբերում է լեզվին, այսինքն՝ լեզվաբանությունը, բառիս սոսյուրյան իմաստով, «զուտ հոգեկան գիտություն է»<sup>2</sup>:

Այսպիսով, Սոսյուրի լեզվաբանական սիստեմում, որ հենվում է Դյուրկհեյմի կանոնական սոցիոլոգիայի վրա, խոսողական գործունեությունը ներկայացնում է ապրիորի ընդունակություն, որը ակտիվանում է անհատի մեջ լեզվական միջավայրի ազդեցությամբ. այդ լեզվական միջավայրն էլ Սոսյուրի սիստեմում կատարում է մոտավորապես նույն գերը, ինչ ինքնին իրը՝ Կանադականում:

<sup>1</sup> Ф. де-Соссюр, Курс общей лингвистики, 1933, § 39.

<sup>2</sup> Նույն տեղը, § 42.

<sup>3</sup> Հմատ. նույն տեղը, Դ. Ն. Վահեկնակու առաջարանը, § 13—14.

Սոսյուրի Կիդեալիստական կոնցեպցիան առանձնապես ցցուն կերպով երևան է գալիս այն պնդման մեջ, թե լեզվաբանության մեջ «առարկան չի կանխորոշում հայեցակետը. ընդհակառակը, կարելի է ասել, որ հայեցակետն է ստեղծում առարկան ինքը»<sup>1</sup>:

Սոսյուրի կարծիքով՝ միայն լեզուն է, որ մեկուսացվելով խոսողական գործունեության մյուս տարրերից՝ կարող է քննվել առանձնացված ձևով: Լեզուն խոսողական գործունեության հասարակական տարրն է, որ անհատի նկատմամբ արտաքին երևույթ է. անհատը չի կարող լեզուն ոչ ստեղծել և ոչ փոփոխել:

Լեզվի ներփակ սիստեմ լինելու այս ըմբռնման հետ սերտորեն կապված է «Ներքին լեզվաբանության» և «արտաքին լեզվաբանության» առանձնացումը՝ ոչ առանց XIX դ. լեզվաբան Գաբելնցի «Լեզվաբանության սիստեմը» գրքի ազդեցության: Այն բոյորը, ինչ անմիջական կապ չունի լեզվական սիստեմի հետ, կազմում է լեզվի այսպես կոչված արտաքին տարրը, Սոսյուրը հատկացնում է արտաքին լեզվաբանությանը. սրան են վերաբերում լեզվի կապը ազգի պատմության, ուսայի և քաղաքակրթության, դպրոցի, եկեղեցու և գրականության, աշխարհագրական տարրածման և բարբառային տրոհման հետ: Այս բոլորը կարենոր մոմենտներ են, և խոսելով խոսողական գործունեության մասին՝ սովորաբար դրանցից են սկսում: Սակայն այդ մոմենտների ուսումնասիրության կարենորությունն ընդունելով հանդերձ՝ Սոսյուրը գտնում է, որ, այնուամենայնիվ, լեզուն կարելի է ուսումնասիրել և առանց դրանց: Լեզուն իրու սիստեմ ներկայացնում է հենց ներքին լեզվաբանության առարկան (Գաբելնցի համար այդպիսին է քերականությունը). լեզվի համար ներքին կողմ է այն, ինչ որևէ շափով ներքնապես կապված է սիստեմի հետ: Արտաքին և ներքին լեզվաբանության փոխհարաբերությունը Սոսյուրը համեմատում է շախմատի խաղի հետ. ներքինն այն է, ինչ կապվում է սիտեմի և խաղի կանոնների հետ. արտաքինն այն է, ինչ վերաբերում է շախմատի պատմությանը, ֆիգուրների նյութին, ձևին, գույնին և այլն:

Խոսողական գործունեությունը բաժանելով խոսքի և լեզվի՝ Սոսյուրը վերջինս էլ իր հերթին բաժանում է սինխրոնիայի և դիխրոնիայի: Լեզվաբանական գիտությունը նա պատկերացնում է հետեւյալ ձևով.

<sup>1</sup> Ф. де Соссюр, Курс общей лингвистики, 1933, т. 33.

Խոսողական գործաւնեություն (language)	<i>լեզու</i> (langue)	<i>սինխրոնիա</i> <i>դիախրոնիա</i>
	<i>խոռք</i> (parole)	


Լեզվի ուսումնասիրությունը, այսպիսով, բաժանվում է սինխրոնիկ լեզվաբանության և դիախրոնիկ լեզվաբանության, ինչպես որ Դյուրկհեյմը, Կոնստի Հետեղությամբ, անշատում էր ստատիկան և դինամիկան։ Այդ երկուսի առարկան Սոսյուրը սահմանում է հետեւյալ կերպ։

«Սինխրոնիկ լեզվաբանությունը կզբաղվի սրամաբանական և հոգեբանական այն հարաբերություններով, որոնք կապում են գոյակցող տարրերը և սիստեմ են կազմում, ուսումնասիրելով դրանք այնպես, ինչպես ընկալվում են միևնույն կոլեկտիվ գիտակցության կողմից։»

Դիախրոնիկ լեզվաբանությունը, ընդհակառակը, կուսումնասիրի այն հարաբերությունները, որոնք կապում են տարրերը միևնույն կոլեկտիվ գիտակցության կողմից շրնկալվող հաջորդականության կարգով, տարրեր, որոնք փոխարինվում են մեկը մյուսով, բայց սիստեմ չեն կազմում»<sup>1</sup>։

Այս սահմանումից պարզ է դառնում, որ Սոսյուրը ոչ միայն հրաժարվում է միակողմանի պատմականությունից, այլև սինխրոնիկ հայեցակետը համարում է գլխավորը։ Լեզվի սինխրոնիկ քըննությունն է, որ բացահայտում է լեզվի էությունը որպես սիստեմի։

Լեզվի քննության սինխրոնիկ (համաժամանակյա) և դիախրոնիկ (տարածամանակյա) հայեցակետերը Սոսյուրը հակադրում է միմյանց՝ գծելով երկու առանցքի ձևով՝ միաժամանակության (AB) և տարածամանակության (CD)։



Միաժամանակության առանցքը, որից հանված է ժամանակի միջամտությունը, վերաբերում է գոյություն ունեցող բաների հարաբերություններին։ Հաջորդականության առանցքի վրա միանգամից կարելի է տեսնել միայն մեկ բան, և այդ առանցքի վրա

<sup>1</sup> Ф. де-Соссюр, Курс общей лингвистики, 1933, т. 108.

դասավորվում են առաջին առանցքի երեսույթները՝ իրենց բոլոր փոփոխություններով։ Այսպիսով, սինխրոնիկ քննության դեպքում երեսույթները քննվում են կապակցված, որպես սիստեմի տարրեր, դիախրոնիկ քննության դեպքում՝ առանձնացված, որպես ժամանակային հաջորդականության շղթայի օլակներ։

Առաջ առանձին սինխրոնիայի և դիախրոնիայի հակադրության գաղափարը՝ Սոսյուրը պնդում է, որ տվյալ լեզվի սինխրոնիկ ուսումնասիրության եղանակները ավելի մոտ են մի այլ լեզվի սինխրոնիկ ուսումնասիրության եղանակներին, քան այդ նույն լեզվի դիախրոնիկ ուսումնասիրության եղանակներին։ Սա էլ բիեցվում է այն դրույթից, որ տարրեր լեզուների սինխրոնիկ վիճակներն իրար ավելի մոտ են, քան միևնույն լեզվի սինխրոնիկ և դիախրոնիկ վիճակները։ Սոսյուրի այս դրույթն է, որ հետագայում հիմք է տալիս ստրուկտուրալիզմի «պանխրոնիայի» հասկացության համար, որը այն մոտեցնում է ընդհանրական-ուսցիոնալիստական քերականությանը և տարրեր լեզուները զրկում իրենց սպեցիֆիկայից։ Պատահական չէ, որ Սոսյուրը գովում էր Պոր-Ռոյալի քերականության հետևողական ստատիզմը՝ նշելով միայն դրա կիրառման անկատարությունը։

Սինխրոնիայի և դիախրոնիայի տարրերակումը Սոսյուրը կապում է արժեքի (value) գաղափարի հետ։ Հստ նրա՝ այն գիտությունները, որոնք գործ ունեն արժեքի կատեգորիայի հետ և որոնց մեջ խսսքը վերաբերում է տարրեր կարգի բաների համարժեքությունների սիստեմին, ներքին երկվություն ունեն։ Տնտեսական գիտությունների հետ միասին Սոսյուրը այդպիսի երկվությունը է հատկացնում և լեզվաբանությանը։ մյուս գիտությունների մեջ այդպիսի սուր երկվություն, սինխրոնիայի և դիախրոնիայի նման սուր հակագրություն չի նկատվում։

Ի՞նչ է գնում Սոսյուրը լեզվաբանական արժեքի հասկացության տակ։ Արժեքը Սոսյուրի համար ոչ այլ ինչ է, եթե ոչ լեզվական միավորի ֆունկցիան՝ սիստեմում։ արժեքը որոշվում է տվյալ միավորի՝ այլ միավորների հետ ունեցած հակադրությունների սիստեմով, նրա շրջապատով։ լեզուն սիստեմ է, որի տարրերը մի ամբողջություն են կազմում և պետք է քննվեն սինխրոնիկ կապի մեջ։ ուստի և այս կամ այն միավորի արժեքը որոշվում է այլ տարրերի միաժամանակյա առկայությամբ։ Արժեքը Սոսյուրը տարրերում է իմաստից (նշանակությունից)։ տվյալ լեզվի տվյալ միավորի իմաստը կարող է համընկնել մի այլ լեզվի համապա-

տասիսան միավորի իմաստի հետ, բայց գրանք կարող են ապրենը արժեք ունենալ՝ նայած այն բանին, թե ի՞նչ շրջապատի մեջ են գտնվում, ի՞նչ հարաբերություն ունեն տվյալ լեզվի սիստեմի այլ տարրերի հետ։ Ֆրանսերեն ուստու բառի իմաստը կարող է համընկնել ուսա. բարահ բառի իմաստի հետ, բայց այդ բառերը համարժեք չեն, որովհետև, ասենք, ֆրանսերեն բառը ունի և «օչխարի միս» իմաստը, մինչդեռ ուստերենում այս իմաստի համար կա բարանահ բառը։ Ֆրանսերենի հոգնակի թվի արժեքը չի համընկնում սանսկրիտի հոգնակի թվի արժեքի հետ (թեև իմաստով դրանք հաճախ համընկնում են), որովհետև ֆրանսերենում կա միայն եզակի և հոգնակի թիվ, մինչդեռ սանսկրիտում կա նաև երկակի թիվ։

Արժեքի գաղափարը Սոսյուրի և նրա հետևորդների մոտ սերտորեն կապվում է ֆունկցիայի և նշանի գաղափարների հետ։ Նրանց կարծիքով՝ այդ գաղափարները հնարավորություն են տալիս հասնելու լեզվաբանության առարկայի քննության միասնության, լեզվական միավորները դիտելու միայն լեզվաբանական հայեցակետով, լեզվաբանությունը սահմանազատելու հարակից գիտություններից։ Ինչպես տեսանք, լեզվական միավորի արժեքը որոշվում է նրա՝ սիստեմում կատարած ֆունկցիայով, տվյալ միավորը լեզվաբանության քննության առարկա է դառնում շնորհիվ այն ֆունկցիայի, որ նա կատարում է լեզվական սիստեմում։ Փունկցիայի գաղափարը հնարավորություն է տալիս լեզվական միավորը ոչ թե քննել մերթ ըստ իմաստի, մերթ ըստ ձեւի և դրանով ներխուժել տարրեր գիտությունների բնագավառը, այլ դիտել որպես մեկ ամբողջություն, որը լեզվի համար կարեոր է իր ֆունկցիայով։

Խոսելով լեզվական նշանների արժեքի և սիստեմային բնույթի մասին՝ Սոսյուրը քննադատաբար է մոտենում Հումրուդտի «ներքին ձեւ» ուսմունքին։ Ինչպես հայտնի է, Հումրուդտը ներքին ձեւ սահմանում էր որպես հնչյունի միացում հասկացության հետ, մի սահմանում, որի մեջ բավարար չափով հաշվի չէր առնվում լեզվական միավորների հանդես գալը որպես սիստեմի տարր։ ...Մեծ մոլորություն է հայացքը լեզվական տարրի՝ պարզապես որպես որևէ հնչյունի և որևէ հասկացության միացում լինելու մասին, — գրում է Սոսյուրը։ — Սահմանել այն այդպես կնշանակի մեկուսացնել սիստեմից, որի կազմի մեջ մտնում է, այդ հանգեցնի այն սիսալ մտքին, թե իրը կարելի է սկսել լեզվական տարրերից և նրանց գումարից կառուցել սիստեմը, այն դեպքում, երբ իրակա-

նում հարկավոր է, ելնելով հավաքական ամբողջությունից, վերլուծության միջոցով հասնել նրա մեջ եղած տարրերին»<sup>1</sup>:

Լեզվական միավորը կատարում է իր այս կամ այն ֆունկցիան որպես նշան: Նշան ասելով Սոսյուրը հասկանում է «հասկացության և ակուստիկական պատկերի գուգորդումը (կոմբինացիան)»<sup>2</sup>: Այսպիսով, նշանի գաղափարը նրան հնարավորություն է տալիս մեկ հասկացության տակ միավորել լեզվական միավորի երկու կողմը՝ ներքին-իմաստայինը և արտաքինը. ակուստիկական պատկերը, հասկացության հետ միասին, Սոսյուրի մոտ հոգերանական ըմբռնում է, որից նա խնամքով հանում է նյութական-հնչունական կողմը. «Այս վերջինը, — նշում է Սոսյուրը՝ նկատի ունենալով նշանը, — նյութական հնչյունը չէ, զուտ ֆիզիկական մի բան, այլ հնչունի հոգեկան դրոշմվածքը, մի պատկերացում, որ մեր կողմից ստացվում է նրա մասին՝ մեր գգայարանների միջոցով. այն գգայական պատկեր է, և եթե մեզ պատահում է այն «նյութական» կոչել, ապա միայն այդ իմաստով և ելնելով այն հակադրությունից, որ նա ունի զուգորդման երկրորդ, ընդհանրապես ամելի վերացական մոմենտին՝ հասկացությանը»<sup>3</sup>: Նկատի ունենալով նշանի՝ որպես ամբողջության հետ հասկացության և ակուստիկական պատկերի ունեցած փոխհարաբերությունը՝ Սոսյուրն առաջարկում է վերջիններս կոչել «նշանակվող» (*Signifiant*) և «նշանակիչ» (*Signifié*): Այսպիսով, լեզվական նշանը «երկկողմանի հոգեկան էություն» է, բայց որպես նշան նա միասնական է: Լեզվական նշանը, ըստ Սոսյուրի; երկու առանձնահատկություն ունի. 1) այն կամայական է, ոչ թե այն իմաստով, որ խոսողը կարող է «նշանակիչ» քմահաճ ընտրություն կատարել, այլ այն առումով, որ նշանը բնական կապ չունի նշանակվողի հետ, պատճառարանված չէ. «Եթե նշանակիչը իր պատկերացրած գաղափարի նկատմամբ ներկայացնում է ազատ ընարված մի բան, — գործ է Սոսյուրը, — ապա, ընդհակառակը, լեզվական կոլեկտիվի նկատմամբ, որ նրանից օգտվում է, այն ազատ չէ, այլ պարտադրված է»<sup>4</sup>. այս առումով Սոսյուրը ճիշտ շի համարում նշանակիչի համար գործածել սիմվոլ բառը. վերջինս մինչև վերջ քմահաճ չէ, այլ որոշ բնական կապ է դրսեռում նշանակիչի և նշանակվողի միջև: Միաժամանակ

<sup>1</sup> Ф. де-Соссюր, Курс общей лингвистики, 1923, тг. 113.

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 78.

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 77—78.

<sup>4</sup> Նույն տեղը, էջ 81:

այս կապակցությամբ Սոսյուրը նշում է, որ բացականշությունները և բնածայնությունները լեզվասիստեմի օրգանական տարրեր չեն, իրենց նշանակությամբ երկրորդական են և չեն կարող այս դրույթը խախտել: 2) Նշանակիլը գծային բնույթ ունի, այսինքն՝ ծավալվում է ժամանակի մեջ և որպես այդպիսին ձգվում է որպես գիծ. միաժամանակ չի կարելի երկու միավոր արտահայտող նշանների մի սիստեմ»<sup>1</sup>, որը նման է նշանների այլ սիստեմներին, միայն թե նրանցից ամենակարևորն է: Այս կապակցությամբ նա առաջ է քաղում մի այնպիսի գիտություն ստեղծելու անհրաժեշտությունը, որն ուսումնասիրում է «նշանների կյանքը հասարակության կյանքի ներսում»: Այդ գիտությունը Սոսյուրը կոչում է սեմիոլոգիա (նշանաբանություն) և լեզվաբանությունը համարում նրա մի մասը. հոգեբանի խնդիրն է համարվում սեմիոլոգիայի տեղի որոշումը գիտությունների մեջ, լեզվաբանի խնդիրը՝ լեզվի սիստեմի տեղի որոշումը սեմիոլոգիական երևույթների մեջ:

Սոսյուրի իդեալիստական պսիխոլոգիզմին միանում է նքառող ագնոստիցիզմը: Խոսելով լեզվաբանական օրենքների մասին՝ Սոսյուրը նշում է, թե այդ մասին խոսել՝ նշանակում է «ուրվականներ բռնել»: Նրա կարծիքով՝ լեզվաբանական օրենքների մասին կարելի է խոսել միայն խիստ հարաբերական առումով. ոչ սինխրոնիան, ոչ էլ դիախրոնիան բառիս բռն իմաստով օրենքներ շռնեն: Հենվելով Դյուրկհեյմի վրա, Սոսյուրը նշում է, որ հասարակական օրենքը երկու հատկանիշ ունի՝ հրամայականություն և ընդհանրություն: Ոչ սինխրոնիկ, ոչ էլ դիախրոնիկ «օրենքները» այս երկու հատկանիշը շռնեն. «Սինխրոնիկ փաստերը,—գրում է Սոսյուրը,—ինչպիսին էլ որ դրանք լինեն, ներկայացնում են որոշակի կանոնավորություն, բայց ոչ մի հրամայական բնույթ շռնեն. ընդհակառակը, դիախրոնիկ փաստերը լեզվի նկատմամբ հրամայականություն ունեն, բայց շռնեն ընդհանրության բնույթ»<sup>2</sup>:

Լեզվի սինխրոնիկ վերլուծությունը Սոսյուրը հիմնում է որոշ հարաբերություններ հաստատելու վրա: Նա տարբերում է երկու տիպի հարաբերություններ՝ սինտագմատիկ և ասոցիատիվ, 1) սին-

<sup>1</sup> Ф. д е - С о с с и о р, Курс общей лингвистики, 1933, էջ 40.

<sup>2</sup> Նույն աեղը, էջ 99.

տագմատիկ հարաբերությունները հենվում են լեզվի («նշանակիչի») գծային բնույթի վրա, այն բանի վրա, որ արտասանության ժամանակ լեզվի տարրերը շղթա են կազմում, դասավորվում մեկ գծի վրա։ Մեկ կամ մի քանի հետևողական միավորներից կազմված կապակցությունները Սոսյուրը կոչում է սինտագմաններ (1. վերը նթերցել, 2. բոլորի գեմ 3. մարդկային կյանքը, 4. եթելավեղանակ լինի, մենք կգնանք զբունելու և այլն). 2) ասոցիատիվ հարաբերությունները այդպիսի գծային բնույթ չունեն և առկա են ոչ թե արտասանվածքի մեջ, այլ ուղեղում. ասոցիատիվ հարաբերությունները լեզվական միավորների միջև եղած բազմազան առնվազյուններն են ըստ այս կամ այն կողմի ընդհանրության։ Տվյալ բառը կարող է ասոցիացիայի մեջ մտնել այլ բառերի հետ արմատների, հիմքերի, ածանցների ընդհանրության, իմաստային կամ հնչյունական ընդհանրության հիման վրա (հմմտ. 1. սովորել և սովորեական, 2. սովորել և գրել, 3. սովորել և ռւսանել, 4. սովորել և կառուցել և այլն):

Դիախրոնիկ վերլուծությունը Սոսյուրը հիմնում է հնչյունական փոփոխությունների, անալոգիայի, կցման (ագյուտինացիայի) և ժողովրդական ստուգաբանության վրա։ Հնչյունական փոփոխությունները Սոսյուրը դիմում է որպես քերականական ձևերը քաջրայող գործոն, որի գործողությունը սահմանափակվում է անալոգիայով, որպես հավասարակշռող գործոնի։ Անալոգիայի մեջ Սոսյուրը տեսնում է լեզվական նորագոյացումների հիմքը, որ սկիզբ է առնում անհատական խոսքի ոլորտում։ Սակայն անհատի այս ակտիվ ստեղծագործությունը պայմանավորված է լեզվասիստեմի հարաբերությունների բնույթով։ Անալոգիան քերականական գործոն է, որ ենթադրում է ձևերը միացնող կապի գիտակցում։ Անալոգիան որպես նորագոյացման գործոն՝ Սոսյուրը հակադրում է նորագոյացման մի այլ գործոնի՝ կցմանը. այս անունով Սոսյուրը կոչում է այն, ինչ կազմանի դպրոցի ներկայացուցիչները կոչում են պարզեցում (օպրօշենու)։ «Կցումը կայանում է նրանում, — գրում է Սոսյուրը, — որ սկզբնապես տարբերվող, բայց ֆրազի ներսում միևնույն սինտագմայի մեջ հաճախ հանդիպող երկու կամ ավելի տարրերը ձուվում են որպես մի բացարձակ կամ դժվարությամբ վերլուծելի միասնություն»<sup>1</sup> (հմմտ. այժմ)։ Անալոգիան

<sup>1</sup> Ф. де-Соссюр, Курс общей лингвистики, 1983, № 162.

գործում է ասոցիատիվ հարաբերությունների հիման վրա, կցումը՝ սինտագմատիկ. անալոգիան ակտիվ պրոցես է, կցումը՝ պասսիվ, մեխանիկական։ Ժողովրդական ստուգարանությունը այս առումով մոտենում է անալոգիային՝ տարբերվելով նրանից այն բանով, որ առաջին դեպքում վերլուծումը հենվում է հիշելու վրա, երկրորդ դեպքում՝ մոռացման։

Լեզվի շարժումը ժամանակի մեջ Սոսյուրը պատկերացնում է որպես անընդհատ էվոլյուցիոն փոփոխություն։ Քանի որ լեզվական նշանի երկու կողմերը ապրում են առանձին-առանձին, ուստի փոփոխման պատճառները Սոսյուրը տեսնում է այն բազմաթիվ ուժերի մեջ, որոնք ազդում են մերթ մեկի, մերթ մյուսի վրա։ Լեզվի վրա արտաքին միջամտությունը բացառվում է շնորհիլ՝ 1) լեզվական նշանի կամայականության, 2) լեզվական սիստեմի մեջ այդ նշանների բազմազանության, 3) լեզվական սիստեմի բարդության և 4) կոլեկտիվի լեզվական իներտության։

Լեզվի ըմբռնումը որպես սիստեմի Սոսյուրին հանգեցնում է լեզվաբանության ու քերականության տրադիցիոն բաժինների վերանայմանը։ Նա մերժում է քերականության տրադիցիոն բաժանումը ձևաբանության ու շարահյուսության և գտնում, որ նպատակահարմար չէ բառագիտությունը հանել քերականությունից։ Միևնույն բազմագույթյունը կարելի է արտահայտել և՛ քերականորեն, և՛ բառագիտորեն։ Միաժամանակ բառը կարող է քննվել և՛ այսպես, և՛ այնպես՝ նայած հայեցակետին։ Ընդհանուր առմամբ Սոսյուրը ժխտում է տարրեր բաժինների միջև որոշակի սահմանների գույնությունը։ «Ձևաբանության, շարահյուսության և բառագիտության փոխներթափանցումը բացատրվում է բոլոր սինխրոնիկ փաստերի՝ ըստ էության նույնական բնույթով։ Նրանց միջև չի կարող լինել ոչ մի կանխագծված սահման։ սինտագմատիկ և ասոցիատիվ հարաբերությունների՝ վերելում սահմանված տարրերումն է միայն հիմք տալիս դասակարգման համար, որ թելադրվում է իրենցով—փաստերով և այն միակն է, որի վրա կարող է կառուցվել քերականական սիստեմը»<sup>1</sup>։ Ձևաբանությունը Սոսյուրը հատկացնում է ասոցիատիվ հարաբերությունների բնագավառին, շարահյուսությունը՝ սինտագմատիկային։ այդպես էլ Սոսյուրը պահանջում է լեզվական յուրաքանչյուր երկութ հանգեցնել ասոցիատիվ կամ սինտագմատիկ շարքերից մեկին։

<sup>1</sup> Ф. де-Соссюр, Курс общей лингвистики, 1933, § 131.

Իր ընդհանուր սկզբունքներից ելնելով է Սոսյուրը քննում նաև հնչյունաբանության հարցերը, թեև չի կարելի ասել, որ այստեղ նա լիակատար հետևողականություն է հանդես բերում: Հենվելով լեզվի և խոսքի տարրերման վրա՝ Սոսյուրը տարրերում է հնչյունաբանությունը (Փոնետիկան) ձայնախոսությունից (Փոնոլոգիա)<sup>2</sup>: Առաջինը պատմական դիսցիպլին է, որ զբաղվում է հնչյունների էվոլյուցիայով, երկրորդը՝ հնչյունների ֆիզիոլոգիան է, որ լեզվաբանության համար օժանդակ արժեք ունի: Ինչպես տեսնում ենք, այս բաժանման մեջ Սոսյուրը դեռևս անհրաժեշտ շափով չի պարզում հնչյունական կողմի սինխրոնիկ քննության հարցերի տեղը: Ելնելով լեզվական երևույթների կապակցվածության գաղափարից՝ Սոսյուրը պահանջում է հնչյունական միավորները քննել խոսողական շղթայի (la chaîne parlée) մեջ: Նկատի առնելով այն ընդհանուրը, որ կա խոսողի արտասանվածքի տարրերի և լսողի ակուստիկական տպավորությունների միջև, Սոսյուրը առաջ է քաշում Փոնեմայի գաղափարը. «Նախնական այն միավորները, որոնք ստացվում են խոսողական շղթայի վերլուծությամբ, բաղկացած են Ե-ից (=լսողական ժամանակը—Գ. Զ.) և Ե<sup>1</sup>-ից (=արտասանական ժամանակը—Գ. Զ.). Դրանք կոչում են ֆոնեմաներ: Ֆոնեման լսողական (ակուստիկական) տպավորությունների և արտասանական (արտիկուլյացիոն) շարժումների՝ լսվող միավորի և արտասանվող միավորի գումարն է, որոնցից մեկը պայմանավորված է մյուսով. այսպիսով՝ դա բարդ միավոր է, որ գտնվում է և՛ մեկ, և՛ մյուս շղթայում»<sup>2</sup>:

Ամփոփելով մեր ասածները Սոսյուրի մասին՝ կարող ենք նշել հետևյալը.

1) Սոսյուրը հակադրվելով երիտքերականների ինդիվիդուալիզմին, այնուամենայնիվ, չի կարողանում կանգնել լեզվի հետևողական հասարակական քննության դիրքերի վրա. ա) Նա լեզուն դիտում է որպես իմանենտ սիստեմ՝ կտրելով այն հասարակության զարգացման կոնկրետ պայմաններից. արտաքին և ներքին լեզվաբանության հակադրումը հանդիսանում է Սոսյուրի իմանենտիզմի ապոթեոզը. բ) Սոսյուրի սոցիոլոգիզմի հիմքում ընկած է Դյուրկ-հեյմի իդեալիստական սոցիոլոգիական կոնցեպցիան, որի փիլիսո-

<sup>1</sup> Այս բառը հետագայում թարգմանում ենք այլ կերպ՝ «հնչույթաբանություն» բառով՝ նկատի ունենալով նրա մեջ դրվագ իմաստի տարրերությունը:

<sup>2</sup> Ф. де-Соссюр, Курс общей лингвистики, 1983, № 57.

փայական հիմքը կանտականությունն է. Հասարակությունը Սույուրի մոտ վերջիվերջո դիտվում է որպես հոգեկան ընդհանրություն, որի նյութական հիմքերը շեն բացահայտվում. գ) շկարողանալով ներթափանցել ընդհանրությունի և առանձինի, Հասարակականի և անհատականի դիալեկտիկայի մեջ՝ Սույուրը հասարակականը պատկերացնում է որպես անհատներից դուրս գտնվող և նրանց պարտադրվող մի բան. անհատներին վերագրվում է լոկ պասսիվ ընկալողի ֆունկցիա. այս առումով լեզվի և խոսքի սոսյուրյան հակագրությունը կաղում է. խոսքը զուտ անհատական ակտ չէ, ոչ էլ լեզուն զուտ հասարակական բան. խոսքը հնարավոր է ընդհանուր հասարակական հիմունքով, լեզուն վերանհատական բան չէ և հանդես է գալիս ոչ այլ կերպ, բան անհատական խոսքերի միջոցով:

2) **Փորձելով հաղթահարել** մի կողմից՝ նախորդ լեզվաբանական դպրոցների թերությունը, որ աթուահայտվում էր լեզվաբանության առարկան տարբեր գիտությունների մեջ ձուկելու մեջ, մյուս կողմից՝ լեզվաբանական միավորների քննության երկվության մեջ,—Սույուրը առաջ է քաշում լեզվական նշանի միասնության գաղափարը, և սրանով նա՝ ա) լեզվաբանությունից դուրս է մղում բառիմաստի և առարկայի, բառիմաստի և նրա առարկայական հիմքի, լեզվի և նյութական աշխարհի փոխհարաբերության պրոբլեմը՝ լեզվի կամայականության դրույթը հիմք է տալիս ոմանց հասնելու ծայրահեղության և ժխտելու լեզվական նշանի ու հասկացության ամեն մի կատ. Սույուրն արդեն խոսում է լեզվի մասին՝ որպես «զուտ լեզվաբանական հարաբերությունների սիստեմի» մասին. բ) լեզվական նշանի գաղափարին տալիս է հոգեբանական մեկնաբանություն, այն համարում բոլոր կողմերով հոգեկան երեսությունը կամայական լինելու վերջիվերջո բացատրելով հոգեբանության դիրքերից. գ) խոսելով լեզվական նշանի կամայականության և շպատճառաբանվածության մասին՝ մոռանում է բառերի պատմական պայմանավորվածության ու պատճառավորվածության առկայությունն ընդհանրապես, բաղադրյալ բառերի պատճառավորվածությունը մասնավորապես:

3) **Դնելով լեզվի ուսումնասիրության սինխրոնիկ** և դիախրոնիկ հայեցակետերի տարրերման հարցը, Սույուրը՝ ա) նահանջ է կատարում լեզվի պատմական քննությունից և դերականություն տալիս սինխրոնիային դիախրոնիայի հանդեպ. բ) պատմա-

կան երեսըթների քննությունը փաստորեն զրկում է սխստեմայշնությունից՝ դիախրոնիկ ուսումնասիրությանը հատուկ համարելով երեսըթների առանձնակից քննությունը. գ) հնարավոր է համարում լեզվի պանխրոնիկ ուսումնասիրությունը, այսինքն՝ լեզուների քննությունը ժամանակից ու տարածությունից դուրս, նրանց կոնկրետ գոյից կտրված, սպեկուլյատիվ հիմունքներով. դ) դիախրոնիայի հարցում մինչև վերջ չի հաղթահարում երիտքերականների ֆոնետիզմը՝ շարունակելով հնչյունաբանությունը դնել դիախրոնիայի հիմքում:

Նաոլ Բալլի.— Շառլ Բալլին իր ուսումնասիրության հիմնական առարկան դարձրել է ոճաբանության և լեզվի արտահայտչականության ու արտահայտչական միջոցների հարցերը։ Դեռևս 1909 թ. նա լույս է ընծայում իր երկհատոր «Ֆրանսիական ոճաբանությունը»<sup>1</sup> (առաջին հատորը՝ տեսությունը, երկրորդը՝ գործնական վարժությունները), 1913 թ.<sup>2</sup> «Լեզուն և կյանքը»<sup>3</sup> ընդհանուր տեսական աշխատությունը. ավելի ուշ լույս է տեսնում նրա «Ընդհանուր լեզվաբանություն և ֆրանսիական լեզվաբանություն»<sup>3</sup> աշխատությունը։

Հենվելով սինխրոնիայի և դիախրոնիայի սոսյուրական հակադրության վրա և էլ ավելի առաջ տանելով այն՝ Բալլին պահանջում է ժամանակակից լեզվական երեսըթների քննության ժամանակ ընդհանրապես մի կողմ թողնել լեզվի պատմությունը, քանի որ վերջինս գործ ունի ոչ թե սիստեմի, այլ առանձնակի երեսըթների քննության հետ։ Դեռևս իր վաղ գործերում, հատկապես իր «Լեզուն և կյանքը» աշխատության մեջ, Բալլին դնում է լեզվի քննությունը մարդու առօրյա կյանքի հետ կապելու, լեզուն որպես մարդու մտքերի և հույզերի արտահայտության միջոց քննելու պահանջը. կենդանի ժողովրդական խոսակցական լեզվի կամ այսպես

<sup>1</sup> Ch. Bally, *Traité de stylistique française*, I—II, 1909. որան նախորդում է «Ուսարանության ուրվագիծ» (Precis de stylistique, Genève, 1905).

<sup>2</sup> Ch. Bally, *Le langage et la vie*, Genève, 1913 (II գերանային և ընդարձակված հրատարակությունը 1926 թ.).

<sup>3</sup> Ch. Bally, *Linguistique générale et linguistique française*, Paris, 1932. առև. Թարգմ. Ռ. Բալլի, Общая лингвистика и вопросы французского языка, М., 1955. Շ. Բալլի մինչև 1939 թ. լույս ընծայած կարեղ աշխատությունների ցանկը ունի «Melanges de linguistique offerts à Charles Bally» ժողովածուի մեջ, Genève, 1939, էջ X—XII.

կոչված «բնական լեզվի» ուսումնասիրությունը նա համարում է լեզվի սինխրոնիկ ուսումնասիրության մեկնակետը՝ նրան բացարձակ գերազշղություն տալով գրավոր լեզվի ուսումնասիրության հանդեպ: «Բնական լեզուն» ոչ այլ ինչ է, եթե ոչ անհատական և հասարակական կյանքի արտահայտությունը. սրանցով էլ հենց որոշվում են լեզվի ֆունկցիավորման և գարգացման հիմնական գծերը: Կյանքի երևույթների մեջ, ըստ Բալլիի, գերազշղում են հուզական և կամացին տարրերը, իսկ բանականությունը (intelligence) խաղում է միայն միջակա դեր. «Բնական լեզուն» այս կապակցությամբ երբեք չի կարող լինել զուտ ինտելեկտուալ մի կառուցվածք: Լեզուն անհրաժեշտ է, այսպիսով, քննել նաև որպես զգացմունքների արտահայտություն և որպես գործողության միջոց. այս պահանջն է հենց, որ Բալլին աշխատում է կատարել իր ոճարժանական աշխատություններում: «Լեզվի տրամաբանական ձևերը երբեք առաջին պլանում չեն. հուզականություն և արտահայտչականություն—սրանք են, որ իշխում են. անհրաժեշտ է հասկանալի դարձնել իրեն, և բանականությունն է ծառայում այս նպատակին, բայց նրա դերը միջնորդի դեր է»<sup>1</sup>: Լեզուն կապելով կյանքի և նրա բոլոր արտահայտությունների հետ՝ Բալլին լեզվի ֆունկցիան համարում է ոչ միայն հասարակական, այլև բիոլոգիական. լեզվի «ֆունկցիան բիոլոգիական է և հասարակական»,—գրում է նաև: Լեզվի զարգացումը, նրա էվոլյուցիան Բալլին կապում է հակադիր գործոնների հետ՝<sup>2</sup> 1) արտահայտչական տենդենցը, որ հարստացնում է լեզուն կոնկրետ տարրերով, և 2) ինտելեկտուալ ու վերլուծական տենդենցը, որ, ընդհակառակը, վերացնում է լեզվի մաքուր գաղափարականին խորթ տարրերը, փոքրացնում լեզվարանական տարրերի ծավալը. վերջին տենդենցը Բալլին կապում է լեզվի հաղորդակցական ֆունկցիայի հետ:

Անհրաժեշտ է նշել, որ իր առաջադրած հարցերի լուծման մեջ Բալլին ոչ միայն չի կարողանում հաղթահարել սոսյուրական կոնցեպտիայի հակասությունները, այլ, ընդհակառակն, դրանք ավելի է խորացնում: Մի կողմից՝ նա Սոսյուրի նման լեզվական սիստեմը պահանջում է քննել որպես ինքնակա սիստեմ, մյուս կողմից՝ աշխատում է լեզվական երևույթները կապել առօրյա կյանքի կարիքների հետ. մի կողմից՝ նա պահանջում է սինխրոնիան ինամքուլ

<sup>1</sup> Ch. Bally, Le langage et la vie, Paris, 1926, էջ 23.

<sup>2</sup> Նույն աելլը, էջ 18.

առանձնացնել դիախրոնիայից, մյուս կողմից՝ խոսում է լեզվական գանազան «տենդենցների» մասին։ Սակայն իր «Ընդհանուր լեզվաբանություն և ֆրանսիական լեզվաբանություն» աշխատության մեջ Բալլին, ելնելով լեզվի քննության ֆունկցիոնալ հայեցակետից, որ ցայտուն արտահայտություն է գտել հատկապես նրա աշակերտ Անրի Ֆրեյի մոտ, լեզվական «տենդենցները» կապում է «կարիքների» կամ «պահանջների» հետ՝ դրանով իսկ պատմական շարժումը փորձելով դնել սինխրոնիկ քննության մակարդակի վրա։ Նոր եվրոպական լեզուների, հատկապես ֆրանսերենի ֆունկցիավորման շարժիչ ուժերը, ինչպես «Լեզուն և կյանքը» գրքում, նա հանգեցնում է երկու հակադիր տենդենցների՝ «հաղորդակցման տիեզենցի» (Հմմտ. «ինտելեկտուալ և վերլուծական տենդենց») և «արտահայտչականության տենդենցի»։ Առաջինի գաղափարը Բալլիի մոտ համահունչ է «մարդկային ջանքերի խնայողության» տեսակետին։ Նրա կարծիքով՝ առաջինը միշտ հանգեցնում է պարզեցման, երկրորդը՝ բարդացման՝ բազմազանեցման։ Բալլին այնքան է առաջ տանում այս գաղափարը, որ փորձում է անալոգիա անցկացնել լեզվի զարգացման այս տենդենցի և ժամանակակից արդյունաբերության ռացիոնալիզացիայի ու «ստանդարտիզացիայի» տենդենցի միջև։ Նշելի է, որ Բալլին կասկածով է նայում ընդհանրապես լեզվի առաջադիմության գաղափարին՝ դիտելով այն սկեպտիկի և ռելյատիվիստի դիրքերից։

Ուշադրությունը կենտրոնացնելով ոճաբանության վրա՝ Բալլին հակադրվում է Կրոշեի և Ֆուսլերի կոնցեպցիային, որը, նրա կարծիքով, հիմնված է ոճի ուսումնասիրության և ոճաբանության նույնացման վրա։ Ոճի հարցերը Բալլին համարում է գրականագիտության ու էսթետիկայի խնդիրը՝ գտնելով, որ լեզչիններս պետք է զբաղվեն առանձին հեղինակների լեզվական առանձնահատկությունների ուսումնասիրությամբ։ ոճաբանությունն, ընդհակառակը, լեզվաբանական դիսցիպլին է, որի նպատակը պետք է լինի լեզվի լզացական կողմի ուսումնասիրությունը։ «Ոճաբանությունը, — գրում է Բալլին, — ուսումնասիրում է կազմակերպված լեզվի արտահայտչական փաստերը նրանց հուզական բովանդակության տեսակետից»<sup>1</sup>։ Որպես այդպիսին ոճաբանությունը տեղավորվում է քերականության (որպես խոսքի տրամաբանության) և էսթետիկայի ու գրականագիտության (որպես գրական-գեղարվեստական արտա-

<sup>1</sup> Ch. Bally, Traité de stylistique française, I, Էջ 16.

հայտության ուսումնասիրության) միջև։ Այս առումով Բալիկ «ներքին ոճաբանությունը» սահմանազատվում է նաև «արտաքին ոճաբանական» այնպիսի ուսումնասիրություններից, որոնք համեմատության մեջ են դնում մի լեզվի սպեցիֆիկ կողմերը մյուսի հետ<sup>1</sup>, թեև, իհարկե, Բալիկն շի ժխտում նման ուսումնասիրությունների կարենորությունը։ Այսպիսի գուգադրական ուսումնասիրությանը Բալիկն ուշադրություն է հատկացնում ավելի ուշ։ Սահմանազատելով ոճը և ոճաբանությունը՝ Բալիկն նախ՝ փաստորեն դրանով իսկ սոսյուրյան տիպի սահմանազատում է անցկացնում անհատական խոսքային ոճի և լեզվական ոճի միջև՝ ոճաբանության բուն բնագավառը համարելով այս վերջինը, երկրորդ՝ տարբերում է արվեստավոր խոսքը բնական խոսքից և իր ուշադրությունը կենտրոնացնում վերջինի վրա։ Բալիկն նպատակ է դնում ուսումնասիրել լեզվի որպես հասարակական երեսութիւններուած արտահայտչական միջոցները, որոնցից օգտվում են և առանձին հեղինակները։ Այս առումով նա հիմք է ընդունում ամենօրյա կենդանի խոսակցական լեզուն, տվյալ էտապում (ստատիկ կտրվածքով) լեզվի ունեցած միջոցները։ Ոճաբանության խնդիրները հանգեցնելով լեզվի հուզական-զգացական կողմի քննությանը՝ Բալիկն որոշ քննադատությամբ է վերաբերվում Սոսյուրի «ինտելեկտուալիզմին» և գգտում կենդանի խոսակցական լեզվի տարրեր բնագավառուած ցույց տալ զգացական-հուզական տենդենցների դերը։ Նրա կարծիքով՝ լեզվի սիստեմի հավասարակշռությունը խախտընում է կոնկրետ հաղորդակցման պրոցեսում, որի մեջ մարդը հանդես է գալիս ոչ թե որպես անտարբեր արձանագրող, այլ իր խոսքը միշտ օժտում է զգացական-հուզական գունավորմամբ.. այս վերջինն առկա է նաև այն դեպքերում, երբ տեքստն արտաքսացնելու մեջ է լուսական-զգացական վերաբերմունքը իր ասածի հանդեպ։ Միևնույն տրամաբանական իմաստն արտահայտող ասվածքները ամենից առաջ տարբերվում են իրենց զգացական-հուզական գունավորմամբ։ Այս առումով Բալիկն իր վերլուծության հիմքում դնում է ոչ թե առանձին բառը, այլ մի դեպքում բառի ձևաբանական կազմիները, մյուս դեպքում բառերի գուգորդումները՝ բառերն

<sup>1</sup> Հմագ., օրինակ, Strohmeyer, Der Styl der französischen Sprache. Berlin, 1910։

առնված իրենց անմիջական կենդանի միջավայրում։ Վերլուծությունը պետք է կատարվի այնպես, որ բառերը կապվեն իրենց գործածության իրական հանգամանքների հետ։ Բացի լեզվի հուզական-զգացական կողմից՝ Բալլին մեծ տեղ է տալիս այն բառերի ուսումնասիրությանը, որոնք առնված են մասնագիտական լեզուներից, ծածկալեզուներից (արգո) և այլն։ Բալլին պահանջում է որոշակի տարրերություն անցկացնել մի կողմից՝ գրական և գրավոր լեզուների, մյուս կողմից՝ գրավոր և խոսակցական լեզուների միջև։ Իր ուշադրությունը, ինչպես նշվեց, Բալլին կենտրոնացնում է վերջինիս վրա որպես բուն կենդանի լեզվի։ այս լեզուն է հանդես բերում արտահայտչականության ձևերի ողջ հարստությունը և նա է համապատասխանում մեր դատողությունների անգիտակցական նորմային։ Բալլին բացի արտահայտչականության «ուղղակի» միջոցներից, գրաղվում է նաև «անուղղակի» միջոցներով։ Նշելի է, սակայն, որ նախ՝ Բալլին բավականաշափ հստակությամբ շի տարրերում բառերի հուզական արժեքի երկու կողմը, որոնցից մեկը հենց բարիմաստի անհրաժեշտ մասն է, մյուսը պայմանավորված է կոնտեքստի բնույթով։ Երկրորդ՝ ծայրահեղության է հասնում հուզական-զգացական կողմի դերի բնութագրման մեջ։ Բալլիի արտահայտչականության ուսմունքը ազդել է Ֆ. Բրյունոյի, Վան-Գիննեկենի, Ա. Ֆրեյի հայացքների ձևավորման վրա։

Իր «Ընդհանուր լեզվաբանություն և ֆրանսիական լեզվաբանություն» աշխատության մեջ Բալլին, ֆրանսերենի և գերմաներենի զուգադրական ուսումնասիրության հիման վրա, դնում է քերականական մի շարք կարևոր հարցեր։ Դեռևս 1928 թ. Բալլին նշում էր, որ որևէ լեզվի լիակատար սինիրոնիկ գործնական քերականությունը շպետք է լինի ոչ պատմական և ոչ էլ հոգեբանական, այլ պետք է հիմնվի հենց քերականության մեջ գործադրվող տեխնիկական նշանների խստիվ մշակման վրա<sup>1</sup>։ Իր այս աշխատության մեջ Բալլին նպատակ է դնում հենց տալու քերականության «տեխնիկական» վերլուծությունը։ Այս կապակցությամբ նա փորձում է տալ արտահայտման (*enonciation*) տեսությունը և նշանի երկու կողմերի՝ նշանակվողի ու նշանակիչի փոխհարաբերության տեխնիկան։

Բալլին իր աշխատության մեջ Սոսյուրի հետևողությամբ հան-

<sup>1</sup> ՀԱՅՄ. Actes du premier congrès international de linguistes à la Haye du 10—15 avril 1928, Leyden, 1928, էջ 37 և 45.

դես է բերում քերականության խիստ լայն ըմբռնում<sup>1</sup> նրա մեջ գնելով այն բոլոր միջոցները, որոնք հանդես են գալիս կենդանի խոսքի մեջ որպես խոսքի ձևավորման միջոցներ (քերականական ձևը, ինտոնացիան, ուղեկցող ժեստը և այլն): Առանձնապես մեծ ուշադրություն է դարձնում թալլին վերլուծական լեզվի արտահայտման միջոցների և նշանի երկու կողմերի փոխհարաբերության հարցին:

Իր վերլուծությունը թալլին հենում է ակտուալիզատորների և տրանսպոզիցիայի գաղափարների վրա: Ակտուալիզատորների գաղափարը կապված է լեզվի և խոսքի սոսյոլրյան տարրերման հետ. եթե դիախորոնիկ առումով խոսքը նախորդում է լեզվին, ապա սինխրոնիկ առումով, ըստ թալլիի, գոյություն ունի հակառակ հաջորդականությունը: Բառը, որ լեզվի մեջ գոյություն ունի վերացական ձևով, հանդես գալով խոսքի մեջ վերլուծական լեզուներում, կարիք է զգում իմաստը կոնկրետացնող ու մասնավորող ակտուալիզատորների (հոդ, ցուցական դերանուն, ածական և այլն), մինչդեռ թեքական լեզուներում դրանց կարիքը քիչ է զգացվում. Թալլին հանգում է այն մտքին, որ բառը առանձին ունալ գոյություն չունի առանց ակտուալիզատորի, ընդ որում վերջինս կարող է առկա լինել կամ ենթադրվել (էքսպլիցիտացին և սիմպլիցիտացին առկայություն): Այերե «ծառ» բառը առկա է կենդանի խոսքի մեջ որևէ ակտուալիզատորի առկայությամբ, ուղեկցվում է իմաստը կոնկրետացնող որևէ բառով, հանդես է գալիս այլ խոսքի մասերի ուղեկցմամբ և այլն: Տրանսպոզիցիա ասելով թալլին հասկանում է խոսքի մասերի փոխանցումները վերլուծական լեզուներում. այս կապակցությամբ նա հակադրվում է Բրյունոյին,—որը ժխտում էր խոսքի մասերի գոյությունը վերլուծական լեզուներում,—նշելով, որ տրանսպոզիցիան, ընդհակառակը, հաստատում է նրանց գոյությունը:

Իր «լեզվաբանական նշանների պատճառաբանվածության մասին» հոդվածում<sup>1</sup> թալլին հենվելով Սոսյոլրի նշանների ուսմունքի վրա՝ առաջ է քաշում նոր սկզբունք: Ըստ Սոսյոլրի ուսմունքի, պետք է տարրերել կամայական նշանը պատճառաբանված նշանից. այսպես, օրինակ՝ այերե «ծառ» բառը որպես լեզվական նշան կամայական է; իսկ ասենք, թուրք-իշ «տանձ-ենի» կամ ձի-

<sup>1</sup> Ch. Bally, Sur la motivation des signes linguistiques, BSL, XL, 1, էջ 72—88.

ունի «տասն-ինը» բառերը, որպես լեզվական նշաններ, պայմանավորված, պատճառաբանված, մոտիվավորված են բաղադրիչների բնաւյթով։ Շառլ Բալլին զարգացնելով այս ուսմունքը՝ տարբերում է նշանի երկու կարգի պատճառաբանվածություն (մոտիվավորվածություն)՝ արտաքին ձևով որոշվող (բացականշություն քնածայնություն, հնչումական սիմվոլիզմ) և ներքին հարաբերություններով որոշվող (իմաստների ասոցիատիվ հարաբերություններով պայմանավորվող)։ Այստեղից էլ Բալլին սահմանում է հետեւյալ սկզբունքը. լիովին պատճառաբանված նշանի սպեցիֆիկան այն է, որ նա հենվում է ներքնապես անհրաժեշտ որոշակի ասոցիացիայի վրա, իսկ լիովին քմահաճ նշանի սպեցիֆիկան՝ այն, որ նա կապվում է բոլոր մնացած նշանների հետ արտաքին օժանդակ ասոցիացիաների հիման վրա։ Նշանի կյանքն անցնում է այս երկու ծայրահեղ բևեռների միջև։

Ալբեր Սեշեն. — Սեշեն ավելի շատ հայտնի է իր ընդհանուր լեզվաբանական և շարահյուսական հետազոտություններով՝ «Տեսական լեզվաբանության ծրագիրն ու մեթոդները», «Կոնստրուկտիվ մեթոդը շարահյուսության մեջ», «Նախադասության տրամադրանական կառուցվածքը»<sup>2</sup> և այլն։ Սեշեն առանձին ուսումնասիրություն է նվիրել նաև Սոսյուրի և Նրա հետեւորդների լեզվաբանական դպրոցի (Ժնևի դպրոցի) սկզբունքների բնութագրմանը («Ընդհանուր լեզվաբանության ժնևյան դպրոցը»)<sup>3</sup>։

Ալբեր Սեշեն իր լեզվաբանական աշխատություններում հատուկ քննության առարկա է դարձնում քերականության ընդհանուր տեսությունը, ընդ որում լեզվի քերականական կառուցվածքի քըննության հիմքում նա դնում է տրամաբանական վերլուծության սկզբունքները։ Այս բանը նրան չի խանգարում մնալու լեզվաբանության հոգեբանական ըմբռնման հողի վրա։ Սեշեն ելնում է իր դաշտական սկզբունքի գիտությունների և գիտական դիսցիպլինների փոխներթափանցման (emboîtement) և ստորադասության վերաբերյալ։ Եթե Բալլիի ուշադրության կենտրոնում

<sup>1</sup> Հմամ. Յ. Պիզանի, հիշ. աշխ., էջ 13—14։

<sup>2</sup> A. Séchehaye, Programme et méthodes de la linguistique théorique. Psychologie du langage, Paris—Genève—Leipzig, 1908. La méthode constructive en syntaxe, RLR, LIX, 1916. Essai sur la structure logique de la phrase, Paris, 1926.

<sup>3</sup> A. Séchehaye, L'école genevoise de linguistique générale, IF, XLIV, 1927.

կենդանի խոսակցական լեզվի հարցերեւ են, առաջ Սեշենն իր ուշադրությունը կենտրոնացնում է կոլեկտիվի լեզվի ընդհանուր կազմակերպական սկզբունքների վրա. այլ կերպ ասած՝ առաջինի ուշադրության կենտրոնում լեզվի հոգերանական-հուզական կողմն է, երկրորդի ուշագրության կենտրոնում՝ լեզվի տրամաբանական-ինտելեկտուալ կողմը, մեկը լեզուն կապում է կյանքի հետ, մյուսը՝ տրամաբանության հետ:

Իր առաջին գլխավոր տեսական աշխատության մեջ («Տեսական լեզվաբանության ծրագիրն ու մեթոդները») Հենվելով Արգիեն Նավիլի գիտությունների բաժանման սկզբունքի վրա<sup>1</sup>, որի հիմքում վերջին հաշվով ընկած է 0. Կոնտի պողիտիվիստական բաժանումը, Սեշենն տարրերում է փաստական գիտություններ (sciences des faits) և օրենքային գիտություններ (sciences des lois). առաջինները բնորոշվում են օբյեկտիվ-գգայական հայեցակետով, երկրորդները՝ սուբյեկտիվ-ինտելեկտուալ: Լեզվաբանությունը առաջին հերթին պատմական փաստերի կամ պարզապես փաստական գիտություն է. սակայն այն անհրաժեշտորեն պետք է լրացվի օրենքային գիտությամբ, որ Սեշենն կոչում է տեսական լեզվաբանություն (linguistique théorique): Տեսական լեզվաբանության կառուցման մինչ այդ եղած փորձերը, Սեշենի կարծիքով, շաշափելի ազդեցություն չեն գործել փաստական լեզվաբանության վրա, որի մեջ մեղավոր են մասամբ քերականները, մասամբ հոգերանները. առաջինները բավարարվում են սխոլաստիկ և էմպիրիկ գիտությամբ, երկրորդները բավարար ուշագրություն չեն դարձնում լեզվի հարցերին: Վունդտի փորձը Սեշենն համարում է անբավարար, մանավանդ որ նա չի հասկացել քերականական պրոբլեմի կարևորությունը. Վունդտը լեզվական փաստերը բերում է տրադիցիոն ձևով, որ երբեմն հակասության մեջ է գտնվում նրա սկզբունքների հետ: Տեսական լեզվաբանությունը Սեշենն համարում է մի այնպիսի օրենքային գիտության մասը, ինչպիսին ֆիզիոլոգիական հոգերանությունն է: Խոսակցական լեզուն, ըստ Սեշենի, բաղկացած է քերականական և արտաքերականական տարրերից (éléments grammaticaux et exgrammaticaux). առաջինների իմացությունը վերաբերում է կոլեկտիվ հոգերանությանը (psychologie collective), երկրորդներինը՝ անհատականին: Հենվելով գիտու-

<sup>1</sup> Հմմ. A. Naville, Nouvelle classification des sciences, Paris, Alcan, 1901.

Քունների ներթափանցման դրույթի վրա՝ Սեշեն նշում է, որ ֆիզիոլոգիական հոգեբանությունը թափանցում է բիոլոգիայի մեջ, կողեկտիվ հոգեբանությունը՝ անհատականի մեջ: Այսպիսով, Սեշեն վերջին հաշվով հասարակականը հանգեցնում է անհատական հոգեբանական ակտերի պարզ գումարին, հասարակական օրենքները՝ անհատականներին, հասարակականի հիմքում դնում հոգեկանը, հասարակականը բխեցնում անհատականից: Խոսակցական լեզվի երկու կարգի տարրերի սահմանագատումը, դժվար լինելով հանդերձ, ըստ Սեշենի, որոշ դեպքերում հնարավոր է: Եթե նկատի ունենալով խոսակցական լեզվի մեջ առկա տարրերի գոյակցությունը (ստատիկ հայեցակետով), Սեշեն տարրերում է քերականական և արտաքերականական տարրեր, ապա ըստ առաջացման հաջորդականության (պատճական հայեցակետով)<sup>1</sup> տարրերում է նախաքերականական լեզու և կազմակերպված լեզու (*langage prégrammatical et langage organisé*): Վերջինիս կազմակերպական սկզբունքը, այսինքն՝ քերականությունը առաջանում է նախաքերականական լեզվի ընդերքում. այն նախաքերականական լեզվի առանձնահատուկ ձևափոխության պես մի բան է: «Թանի որ կոլեկտիվ հոգին ոչ այլ ինչ է, քան մի արստրակցիա, այն չի կարող ոչ մի բան ստեղծել, —գրում է Սեշենն. —ամեն ինչ քերականության մեջ գենետիկորեն հանգում է անհատական ստեղծագործության, այսինքն՝ նախաքերականական կամ արտաքերականական ակտի. այն ձևափոխվում է քերականության գրեթե որպես իներտ նյութ, որը ներծում է կենդանի արարածը իր կյանքի ընթացքում (*entre à son tout dans la vie*): Սակայն նախաքերականական գործոնները (*agents*) երբեք չեն դադարում գործելուց. այն երեսույթները, որոնց նրանք տեղ են տալիս (auquelles ils donnent lieu), մշտապես նորոգվում են»<sup>1</sup>: Նախաքերականական գործոնները Սեշենն համարում է հուզական կյանքի արդյունքը, քերականականները՝ ինտելեկտուալ կյանքինը: Նախաքերականական լեզուն անմիջական արտահայտություն է բնական նշաններով. Նրա դեպքում արտահայտման նշանները ստեղծվում են, իսկ կազմակերպված լեզվի դեպքում օգտագործվում են եղածները: Վերջին հաշվով՝ այս վերջին դեպքում մենք գործ ունենք գաղափարների սիմվոլների հետ, սիմվոլների լեզվի հետ: Եթե հուզական լեզվի ուսումնասիրությունը անհատական հոգեբանության բնագավառն

<sup>1</sup> A. Séchéhaye, Programme et méthodes de la linguistique théorique, 1908, t. 71.

է, ապա ինտելեկտուալինը՝ կոլեկտիվ հոգեբանության խնդիրն է, ընդ որում վերջինիս մեթոդը Սեշեն համարում է գեղուկտիվ։ Այսպիսով, տեսական լեզվաբանության երկու բաժիններից մեկը՝ հուզական լեզվի ուսումնասիրությունը Սեշենն առնչում է անհատական հոգեբանության հետ, մյուսը՝ կազմակերպված լեզվի խոսակցական ձևի ուսումնասիրությունը (science du langage organisé sous sa forme parlée)՝ կոլեկտիվ հոգեբանության հետ։ Կազմակերպված լեզվի քերականության կազմակերպող սկզբունքը Սեշեն համարում է տրամաբանությունը։ «Քերականության բարձրագույն կարգ ու կանոնը (la règle suprême), որը կազմակերպում է և որը զարգանում է, տրամաբանությունն է»<sup>1</sup>։ «Քերականությունը գործնական և կիրառական տրամաբանությունն է»<sup>2</sup>։ Հասկանալի է, որ Սեշեն լեզվի և մտածողության միջև ուղղագիծ համապատասխանություն է տեսնում՝ մինչև դրանց նույնացման աստիճան. դեռ ավելին. «Բացարձակ նույնություն գոյություն ունի մտածողության և քերականության միջև»<sup>3</sup>, — գրում է Սեշենն՝ նշելով միայն, որ մտածողությունը միշտ ավելի հարուստ է, քան քերականությունը։

Շարունակելով տեսական լեզվաբանության քննությունը՝ Սեշեն հետագա ենթաբաժանումների հիմքում դնում է՝ 1) լեզվի վիճակների ու էվոլյուցիաների միջև եղած տարրերության և 2) մտածողության՝ ձևի ու ռազյամանականության» (convention et convention), այսինքն՝ ձևի ու հնչման տարրերության սկզբունքները։ Այս առումով նաև կազմակերպված լեզվի ուսումնասիրության մեջ տարրերում է 4 դիսցիպլին՝ երկու ստատիկ դիսցիպլին՝ 1) ստատիկ ձևաբանություն ու 2) ֆոնոլոգիա<sup>4</sup> (իմա՝ ստատիկ հնչյունաբանություն) և 2 էվոլյուցիոն դիսցիպլին՝ 3) էվոլյուցիոն ձևաբանություն ու 4) հնչյունաբանություն (իմա՝ էվոլյուցիոն հնչյունաբանություն)։ Էվոլյուցիոն ձևաբանության մեջ առանձնացնում է՝ ա) իմաստաբանությունը և բ) էվոլյուցիոն շարահյուսությունը, հնչյունաբանության մեջ՝ ա) ֆոնոլոգիական «ինդուկցիաների» (ասիմիլացիայի ու դիսիմիլացիայի) գիտությունը և բ) հնչյունաբանությունը բուն-

<sup>1</sup> A. Séchey, Programme et methods de la linguistique théorique, 1908, էջ 104։

<sup>2</sup> Նույն տեղը։

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 120։

<sup>4</sup> Այս բառը Սեշեն գործածում է դեռև ոչ հետագայում ընդունված իմաստով, այլ Սոսյուրի նման նրա տակ հասկանում է հնչյունների գիտության։

իմաստով: Այս դիսցիպլիններն էլ նա ենթարկում է նույն «ներթափանցման» սկզբունքին: Աֆեկտիվ (հոգական) լեզուն զնելով կազմակերպվածի, վերջինիս ստատիկ վիճակն էլ էվոլյուցիայի հիմքում՝ Սեշեեն դրանով իսկ առաջնություն է տալիս սինխրոնիային՝ դիախրոնիայի հանդեպ. «...էվոլյուցիան հասկանալու համար,—գրում է նա, —պետք է նախ իմանալ այն, ինչ էվոլյուցիայի է ենթարկվում»<sup>1</sup>:

Իր այս աշխատության մեջ Սեշեեն դեռևս հաշվի չի առնում լեզվի և խոսքի սոսյուրյան տարրերակումը, մի տարրերակում, որ հետագայում կարեռ գեր է խաղում և նրա մոտ. Սեշեեն հետագայում իր սկզբնական մտքերը զարգացնում է՝ հենվելով այս տարրերակման վրա և աշխատելով հաղթահարել նրա մեկնաբանության սոսյուրյան թերությունները:

Հաջորդ կարեռ՝ «Նախադասության տրամաբանական կառուցվածքը» աշխատության մեջ Սեշեեի ուշադրության կենտրոնում են «կազմակերպված լեզվի» քերականական կառուցվածքի ստատիկ ուսումնասիրության հարցերը: Այստեղ ընդունելով լեզվի և խոսքի սոսյուրյան տարրերակումը՝ նա լեզուն դիտում է որպես «հասարակության պրոդուկտ». սակայն Սեշեեի համար ևս հասարակականը վերջիվերջո հոգեբանական հիմքեր ունի. լեզվի «կազմակերպությունը» նա շարունակում է դիտել որպես կոլեկտիվ հոգեբանության բնագավառ: «Քերականություն» բառը Սեշեեն հասկանում է լայն առումով. «Ֆ. դը Սոսյուրի հետ միասին,—գրում է նա, —քերականություն տերմինը մենք օգտագործում ենք իր ամենաընդհանուր իմաստով: Քերականությունը մեզ համար այն բոլորն է, ինչ վերաբերում է լեզվի, հնչյունների, բառապաշտիք, շարահյուսության կազմակերպությանը»<sup>2</sup>: Ընդունելով սինտագմատիկ և ասոցիատիվ հարաբերությունների սոսյուրյան տարրերակումը՝ Սեշեեն իր քերականությունը կոչում է սինտագմատիկ, ընդ որում նշում է, որ սինտագմատիկ քերականությունը, ինչպես ստատիկ լեզվաբանությանը վերաբերող ամեն ինչ, նկարագրական բնույթ ունի: Նրա նպատակը քերականական կառուցվածքի ուսումնասիրությունն է ինքնին առնված՝ անկախ լեզվական էվոլյուցիայի և խոսքի հոգեբանության հարցերից: Այսպիսով, Սեշեեն ձգտում է քերականության՝ որպես լեզվի կազմակեր-

<sup>1</sup> A. Séchehaye, հետ. աշխ., էջ 128.

<sup>2</sup> A. Séchehaye, *Essai sur la structure logique de la phrase*. Paris, 1926, էջ 4.

պող սկզբունքի իմանենտ քննության, ընդ որում քերականական վերլուծությունը կատարում է տրամաբանական հիմունքով: Սակայն Սեշենն ընականաբար չի կարողանում հասնել այսպիսի իմանենտ քննության և, ենելով լեզվի բնույթի հոգեբանական ըմբռնումից, դիմում է նաև հոգեբանական հիմնավորման: «Քերականական ձևերը, —գրում է նա, —միշտ պահպանում են իրենց ֆունկցիայի՝ իրենց տրամաբանական դերի առնվազն մի մասը. իսկ այս տրամաբանական դերը ածանցված է նրանց սկզբնական և հիմնական հոգեբանական դերից» (rôle psychologique originel et fondamental):<sup>1</sup>

Սեշենն փաստորեն այստեղ փորձում է շարունակել Սոսյուրի սինտագմատիկ վերլուծության սկզբունքը և տալ նման վերլուծության կոնկրետ օրինակ: Հենվելով իր նախորդ աշխատության վրա և այն լրացնելով Սոսյուրի դրույթներով՝ Սեշենն «կազմակերպված լեզուն» կամ պարզապես «լեզուն» սոսյուրյան իմաստով դիտում է երկու կողմով՝ հնչյունական կողմը և արտահայտվող գաղափարները: Սակայն եթե հնչյունական կողմը իր նախորդ աշխատության մեջ նա անվանում էր «սիմվոլիկա»՝ «սիմվոլ» ասելով հասկանալով պարզապես նշանը, ապա այստեղ Սոսյուրի ուսմունքի լույսի տակ այն փոխում է, որովհետև «սիմվոլ» բառով չի կարելի կոչել կամայական նշանը (signe arbitraire): Լեզվի նշանները (իմա՞-հնչյունները) Սեշենն կոչում է սեմաներ կամ սեմանտեմաներ, իսկ նշանների ուսմունքը՝ սեմանտիկա, սեմասիոլոգիա, սեմիոլոգիա: Վերջինս նա նույնացնում է ասոցիատիվ քերականության հետ: Ի տարբերություն սրա՝ սինտագմատիկ քերականության առարկան Սեշենն համարում է ձևույթները (մորֆեմաներ), այսինքն՝ բոլոր այն նշանները, որոնք գոյություն ունեն միայն սինտագմաների (սոսյուրյան իմաստով) միջոցով և նրանց համար ձևույթներ ասելով Սեշենն հասկանում է սինտագմայի (սոսյուրյան իմաստով) բաղադրիչները: Սինտագմատիկ եղանակը (procédé), ըստ Սեշենի, հենվում է ասոցիատիվ եղանակի վրա, այնպես ինչպես + և - նշանները արժեքավորվում են շնորհիվ զանազան թվային կապերի առկայության: Սինտագմատիկ կապի և կոմբինացիայի միջոցները Սեշենն համարում է ոչ միայն հանգույցը, նախդիրները, շաղկապները, վերջամասնիկները և տարբեր ցուցիչները (indices divers), այլև շարադասությունն ու հարակցությունը

<sup>1</sup> A. Séchehaye, Essai sur la structure logique de la phrase Paris, 1926, էջ 133.

(construction). Վերջին անվան տակ նա հասկանում է շեշտակիր բառի և նրան հարող անշեշտ բառերի, բառի և նրան հարող մասնիկ-բառերի (particules) կապը:

Սեղենի այս աշխատության գլխավոր դրույթն այն է, որ նախադասության քերականական ձևը հաճախակի ընդհարման մեջ է գտնվում մտքի շարժման հետ և որ միևնույն նախադասությունները կարող են միանգամայն տարրեր բաներ արտահայտել. ինտոնացիան և շարադասությունն այս տարրերության մեջ հատուկ դեր են խաղում:

Ինչպես նշել ենք, Սեղեն լեզվի կազմակերպական սկզբունքը համարում է տրամաբանությունը: Այս հարաբերությունը նա պատկերացնում է հետեւյալ ձևով. «...լեզուն կազմակերպվելու համար խոսքի կենդանի նյութը ենթարկում է տրամաբանությանը, բայց նա հանդիպում է դիմադրության և այդ բանը իրագործում է մասսամբ միայն»<sup>1</sup>: Սեղեն այս հարաբերությունը ներկայացնում է որպես «կոնֆլիկտ տրամաբանության և կյանքի միջև»<sup>2</sup>: Լեզվի քերականական կազմակերպման սկզբունքը համարելով տրամաբանական՝ Սեղեն այս սկզբունքի իրականացման մեջ տեղ է տալիս և հոգերանական գործոնին՝ պատկերացմանը կամ երևակայթյանը (imagination). «Քերականական արտահայտությունը,—գրում է նա, —ինչպես մտածողությունը, որ փորձում է ձևակերպվել ինքնին (se formeuler à lui-même), ոչ այլ ինչ է, եթե ոչ տրվածի (արտաքին աշխարհից եկող պերցեպցիաների և սուլյեկտիվ աշխարհի դպայությունների) մեկնաբանություն այն շրջանակներում, որ բնականորեն ընձեռում է խոսող անձի ինտելեկտուալ և երևակայական ակտիվությունը»<sup>3</sup>: Երևակայությունը Սեղեն համարում է բառերի՝ նախադասության մեջ ունեցած տրամաբանական ֆունկցիաների, և նրանց քերականական արտահայտության միջնորդը: Խոսքի մասերը դիտվում են որպես երևակայության կատեգորիաների քերականական արտահայտություն, և սինտագմատիկ քերականության նպատակը համարվում է դրանց տարրերակումն ու փոխհարաբերության ուսումնասիրությունը. «Այն, ինչ որ մենք կոչում ենք բառերի խմբեր՝ գոյական, բայց, ածական և այլն,—գրում է Սեղեն, —ոչ այլ ինչ են, եթե ոչ երևակայության որոշակի կատեգորիաների

<sup>1</sup> A. Séchehaye, Essai sur la structure logique de la phrase, 42 214.

<sup>2</sup> Նույն ակզբ:

<sup>3</sup> Նույն ակզբ:

քերականական արտահայտությունը՝ զննության որոշ ձևով կոնկրետացած ողջ մասձողությունից անբաժան (inseparables de toute pensée concretisée en une sorte de spectacle): Քերականական հիմնարկությունը (institution) իր սինտագմատիկայով, իր գերակշռող մասով, թերեւ նույնիսկ ամբողջովին, հանգում է բառերի խմբերի տարրերմանը (distinction) և նրանց փոխադարձ համապատասխանությունների (propriétés respectives) իմացությանը<sup>1</sup>: Սինտագմատիկայի առարկան կազմող ստորադասական հարաբերությունները Սեղենն ծագումով հանգեցնում է նախնական համադասությանը, որը համարում է ամեն մի ինտելեկտուալ գործողության սկիզբ:

Զբաղվելով ձեմ ուսումնասիրությամբ՝ Սեղենն հնչյունների ուսումնասիրությունը հատկացնում է Յ բնագավառի՝ ասոցիատիվ հնչյունաբանությանը, սինտագմատիկ հնչյունաբանությանը և խոսքի հնչյունաբանությանը՝ առանց, սակայն, դրանցով զբաղվելուս

Այս աշխատության մեջ հենվելով լեզվի և խոսքի տարրերման սկզբունքի վրա՝ Սեղենն, սակայն, տարրեր ձևով է ըմբռնում դրանց փոխհարաբերությունը. «Մոյսուրի համար,—գրում է նա,— լեզուն գոյություն ունի խոսքի համար, բայց նա նաև ծնվել է խոսքից. նա նրանից սկիզբ է առնում և այն հնարավոր դարձնում, և մեզ ոչինչ չի ստիպում մեկը դնել մյուսից առաջ կամ մյուսից լիբր: Սա մի կոմպլեքս է, որ միայն արստրակցիան է վերլուծում: Մենք, ընդհակառակն, հենց այս արստրակցիայի մեջ տեսնում ենք ստորադասության ու դասակարգման մի սկզբունք և խոսքը՝ իր նախաքերականական ձևով՝ դնում լեզվից առաջ»<sup>2</sup>. Այս տեսակետը, ինչպես կտեսնենք, Սեղենն հետագայում հիմք է դարձնում լեզվաբանական դիսցիպլինների փոխհարաբերության՝ Սույուրից տարրեր ըմբռնման համար:

Իր «Օրգանական էվոլյուցիա և կոնտինգենտալ էվոլյուցիա» հոդվածում<sup>3</sup> Սեղենն լեզվական փոփոխության պատճառները տեսնում է ոչ թե իր իսկ լեզվի մեջ, այլ այդ լեզուն կրող հասարակության պատճության մեջ, այսինքն՝ լեզվի հասարակական-հաղոր-

<sup>1</sup> A. Séchehaye, Essai sur la structure logique de la phrase, էջ 44.

<sup>2</sup> Նույն եղբ, էջ 219.

<sup>3</sup> A. Séchehaye, Evolution organique et évolution contingentielle, „Mélange de linguistique offerts à Ch. Bally“, 1938, էջ 12—20.

դակցական ֆունկցիան համարում է լեզվական փոփոխությունների տենդենցները որոշող գործոնը:

Իր հետագա «Սոսյուրյան երեք լեզվաբանությունները» ուսումնասիրության մեջ<sup>1</sup> Սեղեեն, ամփոփելով իր նախորդ ուսումնասիրությունները, փորձում է վերանայել սոսյուրյան 3 լեզվաբանությունների (սինխրոնիկ լեզվաբանություն, դիախրոնիկ լեզվաբանություն և խոսքի լեզվաբանություն) ուսմունքը: Եթե Սոսյուրը խոսքը կախման մեջ է դնում լեզվից, ապա Սեղեեն վարդում է հակառակ ձևով. լեզոն ծագում է խոսքից, հանդես գալիս որպես նրա կազմակերպվելու տեսնդենցի արտահայտությունը և հանդիսանում է բոլոր խոսողների գիտակցության մեջ առկա սիստեմատիկ գոյակցություն (coherence systematique): «Լեզվի գիտությունը», ըստ Սեղեեի, պետք է հենվի «խոսքի գիտության» վրա և ունենա 3 տեսակ՝ ստատիկ լեզվաբանություն, «կազմակերպված խոսքի» ուսումնասիրություն և էվոլյուցիոն լեզվաբանություն.  
1) ստատիկ լեզվաբանությունն զբաղվում է լեզվական փաստերի ընդհանուր կողմերի քննությամբ. նրա քննության սահմաններում կարելի է և պետք է խոսել լեզվական փաստերի՝ տրամաբանությանը ենթարկված լինելու մասին. 2) «կազմակերպված խոսքի» լեզվաբանությունը զբաղվում է այն հարցերով, թե ինչպես է ֆունկցիավորվում լեզուն մարդկային կյանքի կարիքները բավարարելու համար. սրան են վերաբերում այն փաստերը, որոնք գործ են ստատիկ լեզվաբանությանը վերաբերող ընդհանուր, տրամաբանությանը ենթակա փաստերի շրջանակներից. 3) էվոլյուցիոն լեզվաբանությունն զբաղվում է այն բանի բացատրությամբ, թե ինչպես է պատահաբար ծագած հնչյունը կամ ձեզ տեղ գրտնում այն ձևերի և հնչյունների մեջ, որոնց գործածությունն օրինականացված է, ինչպես է ստանձնում այս կամ այն ֆունկցիանը Սեղեեն ճիշտ չի համարում սինխրոնիան և դիախրոնիան տարբեր հարթությունների վրա տեղավորելը. նրա կարծիքով՝ լեզվի զարգացումը չպետք է կտրել խոսող սուրյեկտների հոգեբանությունից, այլ խոսքի հոգեբանությունը և բոլոր սինխրոնիկ ուժերը օրդանական գործուններով հանդերձ պետք է տեղափոխել ժամանակային հարթության վրա: «Լեզվական վիճակը» յուրաքանչյուր տվյալ մոմենտում միայն փոխանցիկ օղակ է երեկվա և վաղվա վիճակների՝ միջն, անցողիկ և անընդունակ ուղղություն:

<sup>1</sup> A. Séchehaye, Les trois linguistiques saussuriennes, „Vox romanica“, V, 1940, էջ 1—48.

Նշելի է, որ Սեղենն քննադատաբար է մոտեցել թավիկի կողմից զգացական տարրերի դերի շափազանցմանը:

### Բ) Փարիզի զուրոց

Անտուան Մեյե.— Անտուան Մեյեն (1866—1936) նոր ժամանակների խոշորագույն լեզվաբաններից մեկն է: Նա հետաքրքրությունների ամենաբազմազան շրջան է ունեցել՝ զբաղվելով և՛ ընդհանուր լեզվաբանությամբ, և՛ հնդկրոպահան լեզվաբանությամբ, և՛ հնդկրոպահան լեզվաբանութերի ու առանձին լեզուների ուսումնասիրությամբ: Մեյեն իր ընդհանուր լեզվաբանական հայացքներով հարել է ընդհանրապես սոցիոլոգիական դպրոցին՝ շարունակելով հատկապես Սուսյուրի գործունեության առաջին շրջանի գիծը: Մեյեն առաջին հերթին պատմահամեմատական լեզվաբանության ներկայացուցիչ է:

Մեյեի ընդհանուր լեզվաբանական աշխատություններից նշեցի են Մարսել Կոհենի հետ միասին հրատարակած «Աշխարհի լեզուները»<sup>1</sup> գիրքը, որ պարունակում է մոտ մեկ և կես հազար լեզվի համառոտ տեսությունը, այլև «Պատմական լեզվաբանություն և ընդհանուր լեզվաբանություն» ժողովածուն<sup>2</sup>, «Համեմատական մեթոդը պատմական լեզվաբանության մեջ»<sup>3</sup> աշխատությունը:

Հնդկրոպահան լեզվաբանության ընդհանուր խնդիրներին ու պրոբլեմներին նվիրված աշխատություններից առաջին հերթին հիշատակելի է «Հնդկրոպահան լեզուների համեմատական ուսումնասիրության ներածությունը»<sup>4</sup>, որը հնդկրոպահան լեզուների համեմատական քերականության երրորդ ամփոփիչ շարադրանքն է և, չնայած իր սեղմությանը, տալիս է այդ բնագավառի գլխավոր նվաճումների հանրագումարը: Հնդկրոպահանության զարգացման համար կարևոր դեր է խաղացել նաև նրա «Հնդկրոպահան բարբառները»<sup>5</sup> աշխատությունը, որտեղ նա առաջին փորձն է կատա-

<sup>1</sup> Les langues du monde, Paris, 1925, II հր. 1932.

<sup>2</sup> A. Meillet. Linguistique historique et linguistique générale, Paris, I—II, 1921—1926.

<sup>3</sup> A. Meillet, La méthode comparative en linguistique historique, Oslo, 1925 (ռուս. հր. А. Мейе, Сравнительный метод в историческом языкознании, М., 1952).

<sup>4</sup> A. Meillet. Introduction à l'étude comparatice des langues indo-européennes, 1903 (ռուս. հր. А. Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков, 1913, II հր. 1938).

<sup>5</sup> A. Meillet. Les dialectes indo-européens, Paris, 1908.

րել ի մի հավաքելու այն բոլոր տվյալները, որոնք վկայում են հնդկրոպական սկզբնական բարբառների գոյության մասին, և ամփոփելու այդ ուղղությամբ կատարված ուսումնասիրությունների արդյունքները:

Մեյեն բազմաթիվ մենագրություններ ու հոդվածներ է նվիրել հնդկրոպական առանձին լեզվաճյուղերին ու լեզուներին և նրանց այս կամ այն կողմի լուսաբանությանը: Առանձնապես նշելի են նրա աշխատությունները՝ նվիրված հունարենին և լատիներենին («Լատինական հոլովման մի քանի նորագոյացումների մասին»<sup>1</sup>, «Հունարեն լեզվի պատմության ակնարկ»<sup>2</sup>, Վանդրիսսի հետ՝ «Դասական լեզուների համեմատական քերականությունը»<sup>3</sup>, «Լատիներեն լեզվի պատմության փորձ»<sup>4</sup>, Էռնուի հետ՝ «Լատիներեն լեզվի ստուգաբանական բառարանը»<sup>5</sup>), հին պարսկերենին («Հին պարսկերենի քերականությունը»<sup>6</sup>), թոխարերենին («Թոխարերենը»<sup>7</sup>), հին հայերենին («Դասական հայերենի համեմատական քերականության փորձ»<sup>8</sup>, «Հին հայերենի տարրական դասագիրք»<sup>9</sup>), գերմանական լեզուներին («Գերմանական լեզուների հիմնական առանձնահատկությունները»<sup>10</sup>), սլավոնական լեզուներին («Ընդհանուր սլավոներենը»<sup>11</sup>), եվրոպական նոր լեզուներին («Լեզուները նոր Եվրոպայում»<sup>12</sup>) և այլն:

<sup>1</sup> A. Meillet, De quelques innovation de la déclinaison latine, Paris, 1906.

<sup>2</sup> A. Meillet, Aperçu d'une histoire de la langue grecque, Paris, 1913.

<sup>3</sup> A. Meillet et J. Vendryes, Traité de grammaire comparée des langues classique, Paris, 1925.

<sup>4</sup> A. Meillet, Esquisse d'une histoire de la langue latine, Paris, 1928.

<sup>5</sup> A. Ernout et A. Meillet, Dictionnaire étymologique de la langue latine, Paris, 1932.

<sup>6</sup> A. Meillet, Grammaire du vieux-perse, Paris, 1915, II հր. (գերմանական և ընդհանուր հայերենի կողմէց) 1931.

<sup>7</sup> A. Meillet, Le tokharien, „Indogermanisches Jahrbuch“, I.

<sup>8</sup> A. Meillet, Esquisse d'une grammaire comparée de l'arménien-classique, Vienne, 1903, II հր. 1936.

<sup>9</sup> A. Meillet, Altarmenisches Elementarbuch, Heidelberg, 1913.

<sup>10</sup> A. Meillet. Les caractères généraux des langues germanique, Paris, 1917, առև. հր. 1952.

<sup>11</sup> A. Meillet, Le slave commun, Paris, 1924, առև. հր. 1951.

<sup>12</sup> A. Meillet, Les langues dans l'Europe nouvelle, Paris, 1928.

Մեյեն զուգորդում է Սոսյուրի սոցիոլոգիզմը երիտքերական-ների հետազոտության սկզբունքների հետ։ Սակայն այդ զուգորդումն էկլեկտիկ զուգորդում չէ. դեռևս 1906 թ. Մեյեն նշում էր, որ երիտքերականների սկզբունքները (հնչյունական օրենք, անալոգիա և փոխառություններ) «բացատրում են միայն մասնակի դեպքերը, բայց բացատրությունները սիստեմ չեն կազմում և երբեք ալյահիսին չեն կարող կազմել»<sup>1</sup>։ Այսպիսով, Մեյեն որդեգրում է երիտքերականների որոշ սկզբունքները՝ մի կողմից՝ դրանց տալով հասարակական մեկնաբանություն, մյուս կողմից՝ փորձելով պարզել դրանց հարաբերությունը լեզվի սիստեմի հետ. այս վերջին առումով նա շարունակում և խորացնում է Սոսյուրի առաջին շրջանի հետազոտական սկզբունքները<sup>2</sup>: Մեյեն զգալի շափով հաղթահարում է նաև Սոսյուրի իմաննենտիզմը և նշանակալից արդյունքների է համում լեզվական երևույթների հասարակական բնույթի մեկնաբանության մեջ։

Մեյեն յուրացնում է Սոսյուրի ուսմունքի երկու կարևոր դրույթը լեզվի հասարակական բնույթի և նշանների սիստեմ լինելու մասին։ Սակայն նա լեզվի հասարակական էությունը շատ ավելի հստակ կերպով, քան Սոսյուրը, կապում է լեզվի հաղորդակցական ֆունկցիայի հետ։ Այն հանգամանքը, որ մի կողմից՝ լեզուն ենթակա է անընդհատ փոփոխության, մյուս կողմից՝ այն անհրաժեշտաբար հանդես է գալիս որպես սիստեմ, Մեյեն համարում է լոկ թվացող հակասություն, որը լուծվում է հաղորդակցման անհրաժեշտությամբ։ Լեզվի նշանների օգտագործման ազատությունը սահմանափակված է իրար հասկանալու անհրաժեշտությամբ. այսպիսով, Մեյեն լեզվանշանների անհատական օգտագործումը ենթակում է հասարակական հաղորդակցման կարիքներին։ Լեզվի զարգացման պրոցեսը կախված չէ անհատների կամքից. անհատական նորամուծությունները ընդհանուր լեզվական արժեք են ստանում այն ժամանակ, երբ համապատասխանում են հասարակական նորմային, ընդհանուր գնում հասարակության պահանջներին, նրա զարգացման ընդհանուր տեսնդենցներին և լեզվական սիստեմին։ Այս տեսակետից Մեյեի կարծիքը հակադրում է նախորդ լեզվաբանական պատկերացումներին, հատկապես երիտքերականների այն կարծիքին; ըստ

<sup>1</sup> A. Meillet. Linguistique historique et linguistique générale, I, էջ 7.

<sup>2</sup> 1881—1891 թթ. Սոսյուրը գասավանդել է Էcole des Hautes Études-ում, որտեղ սովորել է և Մեյեն։

որի լեզվական նորույթների տարածման գործոնը նմանողությունն է: Այլ կարգի նորամուծումները մնում են լոկ որպես անհատական երանգներ և տարածում չեն ստանում: Լեզուն արտահայտության միջոցների մի բարդ սիստեմ է, որի զարգացման օրենքները ընդհանուր հասարակական բնույթ ունեն, բայց միաժամանակ հանդես են գալիս որպես սպեցիֆիկ լեզվաբանական օրենքներ: Լեզվի զարգացման օրենքները պետք է բացատրեն ոչ թե առանձին փաստերը, այլ այն ընդհանուր պայմանները, որոնց ենթարկվում է լեզվական երևույթների զարգացումը: Այդ օրենքները Մեյեն, ի տարրերություն երիտքերականների, չի համարում ոչ ֆիզիկական-ֆիզիոլոգիական, ոչ էլ հոգեբանական բնույթի: Մարդկանց ֆիզիոլոգիական և հոգեկան պայմանները ամենուրեք միատեսակ են և չեն կարող բացատրել լեզվի փոփոխության պատճառները: Լեզվի զարգացումը պայմանավորվում է հասարակական գործոններով: Այս կապակցությամբ Մեյեն վճռական կերպով դուրս է դարձիս լեզվական և ուսայական ընդհանրությունը շփոթելու դեմ: Լեզվաբանությունը նպատակ ունի պարզել լեզուների զարգացման այն ընդհանուր օրենքները, որոնք հատուկ են լեզուների զարգացմանն ընդհանրապես: Քանի որ լեզվական փոփոխությունները հասարակական բնույթ ունեն, կապված են հասարակության կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունների հետ, ուստի և լեզվաբանությունը անհրաժեշտորեն պետք է դիմի սոցիոլոգիային: Մեյեի կարծիքով, լեզվաբանությունը հասարակական գիտություն է և կազմում է հասարակագիտության (սոցիոլոգիայի) մի մասը: Մեյեն լեզուն դիտում է որպես տարրեր հասարակական ու տերիտորիալ խմբավորումների մասնատված մի ամրողացություն, ընդ որում ամեն մի խմբավորման հատկացվում է իր լեզուն՝ իր առանձնահատկություններով հանդերձ: Նշելի է, որ Մեյեն բավարար չափով հաշվի չի առնում լեզվի՝ որպես տվյալ ժողովրդի ընդհանուր ունեցվածքի և առանձին խմբերի «լեզուների» միջև եղած որակական տարրերությունը: որոշ դեպքերում էլ նա չափազանցնում է հասարակական տարրերի լեզվական տարրերությունները:

Մեյեն տարրերում է լեզվական փոփոխությունների երկու խումբ: Մի խումբը կազմում են այն փոփոխությունները, որոնք բացատրվում են լեզվի զարգացման ընդհանուր օրենքներով: Լեզվաբանության զարգացման հետագա կարևոր խնդիրը Մեյեն համարում է զարգացման ընդհանուր օրենքների բացահայտումը և փոփոխության այնպիսի ընդհանուր բանաձևեր հաստատելը, որոնք

բացատրվում են մարդկության ընդհանուր պայմաններով կամ՝ գոնե, քաղաքակրթության որոշակի տիպին հատուկ պայմաններով: Իր պրակտիկայում փորձելով որոշել այդպիսի ընդհանուր բանաձևեր՝ Մեյեն, այնուամենայնիվ, նշում է, որ դրանք ավելի շուտ հասարակություն են, քան անհրաժեշտություն: Փոփոխությունների երկրորդ խումբը կազմում են այն երկույթները, որոնք ավելի սահմանափակ քնույթ ունեն, հանդես են գալիս որոշակի ժամանակաշրջանում և որոշակի պայմաններում:

Լեզվի զարգացման տեսնենցները Մեյեն փորձում է բացատրել հասարակական զարգացման պայմաններով և դրանց հետ կապված՝ մտածողության զարգացման բնույթով: Եվրոպական նոր լեզուների մեջ վերլուծականության (անալիտիզմի) և նկարագրական ձևերի զարգացումը Մեյեն կապում է քաղաքակրթության զարգացմամբ պայմանավորված վերացական մտածողության զարգացման պահանջների հետ. այս պահանջները հանգեցնում են ավելի կոնկրետ քերականական կատեգորիաների վերացմանը և այն կատեգորիաների զարգացմանը, որոնք համապատասխանում են տվյալ պահանջներին:

Լեզվի հասարակական ըմբռնումից ելնելով էլ Մեյեն բացատրում է և՛ հնչունական օրենքների, և՛ անալոգիայի, և՛ փոխառությունների երկույթները:

Հնչունական օրենքի հարցում Մեյեն յուրահատուկ դիրք է բռնում: Նա երիտքերականների նման ընդունում է հնչունական փոփոխությունների կանոնավորությունը և նշում, որ համեմատության պրակտիկայում պետք է դիմել այդպիսի օրինաշափականություն հաստատող բանաձևերի. սակայն նա փորձում է միաժամանակ արդարացնել և երիտքերականների հակառակորդների հարձակումները հնչյունական օրենքի դեմ: Հենվելով լեզվի և խոսքի սոսյուրյան տարրերակման վրա՝ Մեյեն գտնում է, որ երկու կողմն էլ արդարացի են յուրովի կամ, ավելի ճիշտ, երկու կողմն էլ անարդարացի են, որովհետև նկատի են ունենում կամ միայն լեզուն, կամ միայն խոսքը: Հնչունական օրենքները, Մեյեի կարծիքով, հնչունական փոփոխությունների էությունը շեն բացատրում, այլ իրենք կարուտ են բացատրության: Հնչունական փոփոխությունները առաջին հերթին հասարակական պատճառներ ունեն, իսկ հնչունական օրենքները այդ փոփոխությունների արդյունքն են միայն: Խնշակես տեսանք, անհատական փոփոխությունները Մեյեն կարենը է համարում այն շափով, որ շափով դրանք համա-

պատասխանում են հասարակության ընդհանուր տենդենցներին ու տարածվում: Ընդհանուր առմամբ Մեյեն հնչյունական օրենքները դիտում է որպես որոշակի հնչյունական համապատասխանություններ. Նրանք տարբերվում են և՛ բնական օրենքներից, որոնք արտահայտում են պատճառական հարաբերություն, և՛ հասարակական օրենքներից, որոնք արտահայտում են հաջորդականության հարաբերություն: Հստ Մեյեի՝ հնչյունական օրենքները հենքում են կանոնավորության փաստի վրա, բայց ոչինչ չեն ասում այդ կանոնավորության պատճառների մասին, որոնք տարբեր դեպքերում տարբեր կարող են լինել<sup>1</sup>:

Ընդունելով փոխառությունների կարևորությունը լեզվի զարգացման մեջ՝ Մեյեն այդ երկույթին շատ ավելի լայն բնույթ ու դեր է հատկացնում, քան երիտքերականները: Նրա կարծիքով՝ փոխառությունները տեղի են ունենում ոչ միայն լեզուների միջև, այլև հասարակական տարբեր խմբավորումների «լեզուների» ու բարբառների և գրական լեզվի միջև: Միաժամանակ Մեյեն այս դեպքում է բոլոր կարգի փոխառությունները՝ հատուկ ուշագրություն դարձնելով նաև իմաստային փոխառությունների հարցին: Փոխառության երկույթի հետ կապված՝ Մեյեն քննում է և լեզվական խառնուրդի հարցը: Մեծ նշանակություն տալով սուրստրատի փաստին և լեզվական խառնուրդին՝ Մեյեն, այնուամենայնիվ, խառնման գործոնին այն դերը շի վերագրում, ինչ, ասենք, նեռուինքիստները: Լեզուների խառնվածության աստիճանը կարող է տարբեր լինել, և ընդհանրապես մաքուր լեզուներ չկան: Սակայն Մեյեն ընդհանրապես գրեթե անհնար է համարում ձևաբանական խառնուրդները: Լեզուների փոխարաբերության և մի լեզվի՝ մյուսի վրա գործած ազդեցության աստիճանի հարցում Մեյեն կարևոր տեղ է տալիս այնպիսի գործոններին, ինչպիսիք են ժողովրդի կուտարականության աստիճանը, քաղաքական ազդեցությունն ու քաղաքական տիրապետությունը, վերջին հաշվով՝ մի լեզվի հեղինակությունը մյուսի համար: Լեզվական հեղինակության սկզբունքն ընդհանրապես կարևոր դեր է խաղում Մեյեի ու նրա հետևողների մոտ: Փոխառությունների առատությունը ևս, ըստ նրա, կապված է այս գործոնի հետ: Լեզվական խառնուրդն առանձնապես

<sup>1</sup> Հմմա. A. Meillet, Les méthodes de la linguistique, RM, 1910, juillet-decembre.

ուժեղ է լինում բարբառների միջև։ Նույն այդ հեղինակությամբ է Մեյեն բացատրում ընդհանուր լեզվի և կենտրոնական բարբառի՝ մյուս բարբառների մեջ թափանցելով և դրանք դուրս մղելու փաստը։ Մեյեն ընդունում է լեզվաբանական աշխարհագրության և ալիքների տեսության որոշ սկզբունքները։

Մեյեն տարբերում է բառերի իմաստափոխության 3 պատճառ՝  
1) պատմական՝ գիտությունների, տեխնիկայի, հիմնարկների, բարբերի փոփոխությունը, 2) լեզվաբանական՝ հնչյունական, ձևաբանական և շարահյուսական գործոնների դրսերումը՝ «վարկումը» (contagion), ժողովրդական ստուգաբանությունը, համանունների ընդհարումը և զեղչումը (էլլիպսը), 3) հասարակական՝ հասարակական փոխառություններ և բառի հասարակական տարածավայրի (այրե) տեղափոխություն՝ բառիմաստի ընդհանրացում և մասնավորում, լայնացում և նեղացում<sup>1</sup>։

Առանձնապես կարեղը է Մեյեի դրույթը բառիմաստի փոփոխությունների հասարակական պայմանավորվածության մասին։ Բառիմաստի փոփոխությունները Մեյեն կապում է բառի՝ մի հասարակական խմբավորումից մյուսին, բարբառից կամ սոցիալական ժարգոնից ընդհանուր լեզվին և ընդհանուր լեզվից դրանց անցնելու հետ։ Նեղ խմբավորումից լայնին անցնելիս բառը լայն իմաստ է ստանում, և ընդհակառակն Միաժամանակ հասարակական տարբեր խմբերը ունեն իրենց հոգեբանությունը, որ դեր է խաղում բառիմաստի մեջ։ Այն հանգամանքը, որ տարբեր լեզուների մեջ տեղի են ունենում այդպիսի միատիպ փոփոխություններ, Մեյեն բացատրում է միատիպ հասարակական խմբավորումների հոգեբանության միջև ընդհանուր գծերի առկայությամբ։


Լեզուների ցեղակցության պրոբլեմի լուծման մեջ Մեյեն հանդես է բերում խիստ զգուշավորություն։ Ընդունելով, որ ցեղակից են այն լեզուները, որոնք ներկայացնում են միևնույն լեզվի

<sup>1</sup> Հմմա. A. Meillet. Comment les mots changent des sens, AS. 1905—1906, Նիբոպէ, Grammaire historique de la langue française, IV, Сémantique, 1913. ավելացնում է նաև հոգեբանական պատճառները՝ արտահայտչականության ձգտումը, թարուն և էվֆեմիզմը, հուզական ուժը։

Ավելորդ չէ նշել, որ Մեյեն մի այլ գեպքում ժխտում է իմաստային օրենքներ սահմանելու հնարավորությունը և խոսում է միայն դասակարգման հնարավորության մասին։ անմ. A. Meillet. Linguistique historique et linguistique générale, I, 1926. էջ 234—235.

տարբեր էվոլյուցիաների արդյունք, Մեյեն, այնուամենայնիվ, ժխտում է նախալնգում հավաստիորեն վերականգնելու հնարավորությունը: Ցեղակից լեզուների հիմքի մասին կարելի է գաղափար կազմել միայն ենթադրությունների միջոցով, որոնք ստուգել հնարավոր չեն. այստեղից էլ բխում է Մեյեի այն դրույթը, թե միակ իրականը և համեմատական քերականության առարկան կազմում են լեզուների միջև եղած համապատասխանությունները: Պատմահամեմատական մեթոդը պետք է կիրառվի ոչ թե նախալեզուն վերականգնելու, այլ լեզուների միջև եղած համապատասխանությունների սիստեմը բացահայտելու համար: Նախալեզվի իրական պատկերը լիովին վերականգնելու հնարավորությունը հերքելու նպատակով Մեյեն դիմում է ոռմանական լեզուների պատմությանը. այդ լեզուների համեմատական ուսումնասիրությունը հնարավորություն չէր տա բացահայտելու բայական շատ ձևերի առկայությունը, այլև ընդհանրապես հոլովման սիստեմի պատկերը,— երևույթներ, որոնք մեզ հայտնի են լատիներենից, և որոնցից շատ հեռացած չէր լինելու ժողովրդական լատիներենը:

Ցեղակից լեզուների հիմքում ընկած լեզուն (*«նախալեզուն»*) Մեյեն պատկերացնում է որպես մի ընդարձակ տարածության վրա խոռվող և բարբառային տարբերակումներ ունեցող ամբողջություն: Այդ լեզուն այնքան նախնական չէ, ինչպես կարծում էին նախկինում, այնպես որ նրա քննությունը լեզվի գոյության սկզբնական շրջանի վերաբերյալ ոչ մի հարց չի կարող լուծել: Հնդկութական նախալեզուն հին եղիպտերենից կամ հին բաբելոներենից արխայիկ և նախնական չէ: Այդ նախալեզվին Մեյեն հատկացնում է բարբառային այնպիսի տարբերություններ, որոնք բնորոշվում են և՛ հնչումական, և՛ ձեաբանական, և՛ բառապաշտարային գծերով: Ցեղակից լեզուների փոխհարաբերության հարցը պարզելիս Մեյեն դիմում է և՛ Ժիլերոնի դպրոցի նվաճումներին ու իզոգլուների սկզբունքին, և՛ Շմիդտի ալիքների տեսությանը: Նախկին ծննդաբանական ծառերի փոխարեն Մեյեն առաջարկում է հնդկութական լեզուների ցեղակցության հետեւյալ պատկերը.



Սակայն նշելի է, որ Մեյեն իր գգուշության մեջ այնքան հեռու է գնում, որ համապատասխանությունների հիման վրա վերականգնված ենթադրական ձևերը դիտում է լոկ որպես գիտականորեն հարմար բանաձևեր: Այս դեպքում Մեյեն բավարար շափով հաշվի չի առնում այդ վերականգնումների տարապլանայնությունը, այն հանգամանքը, որ այդ բանաձևերը համապատասխանում են իրականությանը, բայց ոչ ժամանակային միենույն մակարդակի վրա և ոչ տարածական ողջ ընդգրկումով: Այսուհանդերձ Մեյեն միշտ անհրաժեշտ գգուշություն է հանդես բերում համապատասխանությունների սիստեմը բացահայտելու, պատմա-համեմատական մեթոդը կիրառելու և այդ կիրառումից արված եզրակացությունների մեջ: Նա պահանջում է ըստ հնարավորության ճշգրիտ լինել, զուգադրել ոչ թե առանձնակի փաստերը, այլ ցեղակից չեզունների սիստեմները: Միաժամանակ նա անհրաժեշտ է համարում տարրերել ընդհանուր գծերը և չվերագրել նախնական ընդհանրությանը «այն, ինչ զուգահեռ, բայց անկախ զարգացումներից է առաջանաւմ»<sup>1</sup>:

Այն հարցը, թե ինչպե՞ս և ինչո՞ւ է փոխվում նախալեզվային նյութը ցեղակից լեզուներում, Մեյեին հետաքրքրող կենտրոնական պրոբլեմներից մեկն է: Նա փորձում է որոշել հնդկրոպական լեզուների առանձին ճյուղերի զարգացման ընդհանուր տեսնգենցները, ցույց տալ նախալեզվային նյութի փոփոխությունները, նախալեզ-

<sup>1</sup> A. Meillet, Linguistique historique et linguistique générale, I, էջ 102.

վից և կող և նախալեզվից չեկող գծերը: Նախալեզվային նյութի փոփոխության և նորագոյացումների ծագման հարցում՝ Մեյեն մեծ տեղ է տալիս արտաքին գործոններին՝ խառնմանն ու սուբստրատին: Այսպես, օրինակ, հայոց լեզվի բաղաձայնական սիստեմի կազմավորումը նա կապում է կովկասյան սուբստրատի հետ: Մեյեն լեզվի մեջ նշում է տարրերակման և միասնականացման հակադիր տեսնենցների առկայությունը՝ փորձելով վերջինիս պայմանավորել լեզվի հասարակական ֆունկցիայով. «Յուրաքանչյուր տարրերակման,—գրում է նա,—վաղ թե ուշ, և երբեմն անմիջապես հետևում է մի հակազդում, որը փորձում է վերականգնել կամ հանգեցնել լեզվամիասնության այնտեղ, որտեղ առկա է կուտուրական միասնությունը»<sup>1</sup>:

Լեզվական համապատասխանությունների իրական բնույթը պարզելու որոնումների մեջ Մեյեն առաջ է քաշում իր սկզբունքը ծայրամասային համապատասխանությունների մասին, որ կապված է Մ. Թարտոլիի «Եզրային շրջանների նորմայի» սկզբունքի հետ: Քանի որ ծայրամասային, իրարից հեռու ընկած լեզուները պետք է ամենից ավելի վաղ հեռացած լինեն, ուստի և Մեյեն ենթադրում է, որ նրանց ունեցած համապատասխանությունները կարենոր արժեք ունեն հին վիճակը պարզելու տեսակետից. այսպես, օրինակ, նա նշում է լատինական սեռականի ։-ի և սանսկրիտի համապատասխան որոշ ձևերի զուգահեռությունը՝ մատնացուցյանելով երեսույթի հնության վրա: Որպես արխայիզմ Մեյեն նշում է ։-ով մեղիոպասսիվի (միջին-կրավորական սեռի) առկայությունը իտալա-կելտականում՝ մի կողմից և խեթերենում ու թոխարերենում՝ մյուս կողմից: Իտալա-կելտականում այն նախկինում համարվում էր նորագոյացում, բայց թոխարերենի և խեթերենի հայտնաբերումը հնարավորաթյուն տվեց հարցը զնելու նոր ձևով: Մեյեն առաջ է քաշել և այն տեսակետը, որ հնդկոպական լեզուն սկզբնապես միայն շնչավորի և անշունչի տարրերություն էր անցկացնում և որ արականի ու իգականի տարրերությունը հետագայում է առաջացել՝ շնչավորի տարրերակման ու անշունչի՝ որպես շեղոք վերահիմաստավորվելու միջոցով:

Ընդհանուր առամբ Մեյեն առաջին լեզվաբաններից մեկն է, որ տշաղրություն է հատկացրել լեզվի մեջ տվյալ էտապում գոյակցող ձևերի ժամանակագրության հարցին:

<sup>1</sup> A. Meillet. Linguistique historique et linguistique générale, I, էջ 120.

**Ժակ Վանդրիես.** — Ժակ Վանդրիեսը ի մի է բերել ու սիստեմավորել սոցիոլոգիական դպրոցի ներկայացաւցիչների հայացքները լեզվի տարրեր բնագավառների նկատմամբ և դրանք զարգացրել այն ուղղություններով, որոնք Սոսյուրի, Մեյեի և այլոց մոտ անհրաժեշտ լուսաբանություն չեն ստացել: Վանդրիեսի գլխավոր աշխատությունը «Հեզու. պատմության լեզվաբանական ներածություն» աշխատությունն է<sup>1</sup>. այստեղ նա շոշափում է լեզվաբանական գրեթե բոլոր կարևոր պրոբլեմները և դրանք լուծում սոսյուրականության ու սոցիոլոգիզմի դիրքերից: Ժակ Վանդրիեսի նեղ մասնագիտությունը դասական և կելտական լեզուներն են, որոնց նվիրված աշխատություններ ունի. դասական լեզուների համեմատական քերականությունը գրել է Մեյեի հետ միասին:

Ժակ Վանդրիեսը ևս ընդունում է Սոսյուրի և Մեյեի լեզվաբանական հիմնական սկզբունքները՝ լեզվի հասարակական բնույթի, նշանների սիստեմ լինելու, նշանների քմահաճության և շպատճառաբանվածության, լեզվի և ուսայի շհամընկնելու մասին և այլն: Սրանց հետ միասին Վանդրիեսը կանգ է առել Սոսյուրի և Մեյեի կողմից քիչ ուշադրություն գրաված այնպիսի հարցերի վրա, ինչպիսիք են լեզվի և մտածողության փոխհարաբերությունը, գրական լեզուների, բարբառների ու հասարակական զանազան խմբավորումների լեզվական առանձնահատկությունները, հուզական խոսքը և բնաձայնությունը, լեզվի ծագումը, լեզուների փոխհարաբերությունն ու զարգացումը և այլն:

Լեզուն համարելով հասարակական փաստ՝ Վանդրիեսը նրա ծագման, զարգացման ու ֆունկցիավորման հարցերը սերտորեն կապում է հասարակության գոյության հետ, թեև, իհարկե, հասարակության զարգացման օրենքների մասին նրա ունեցած պատկերացումները հենվում են իդեալիստական սոցիոլոգիայի վրա: Ճիշտ է, նա քննադաշտաբար է վերաբերվում ազգի իդեալիստական տեսությանը, ըստ որի այն միասնության ձգտման և պատկանելակցության գիտակցության արդյունք է, և տեղ է տալիս տեսենական գործոնին, բայց վերջիվերջո հասարակությունը նրա համար լոկ հոգեկան գործոններով, կոլեկտիվ գիտակցությամբ պայմանավորված հանրություն է: Ըստ Վանդրիեսի կոնցեպցիայի՝ լեզվաբանության իսկական առարկան կազմում է լեզուն, որպես հասարա-

<sup>1</sup> J. Vendryes, Le langage; introduction linguistique à l'histoire, 1921, ռուս. հր. Ջ. Վանդրիես, Язык; лингвистическое введение в историю, М., 1987:

կական հիմնարկություն, որի ծագումը և գոյությունը կապված են մարդկանց հաղորդակցման կարիքների հետ։ Հասարակության գոյության ու զարգացման օրենքները երևան են գալիս լեզվի գոյության ու զարգացման մեջ նրա առաջին իսկ քայլերից։ լեզուն հասարակական կայուն ձևեր է ընդունում այդ օրենքների ուժով։ Անհատական փոփոխությունները ընդհանուր լեզվական արժեք են ստանում, եթե համապատասխանում են հասարակության ընդհանուր տեսդենցներին, ընդառաջ են գնում դրանց։ Լեզվական ընդհանրությունը որպես հասարակական փաստ կապված չէ ուսայական ընդհանրության հետ։ լեզուն և ուսան շեն համընկնում։ Ենելով լեզվի առկա, սինխրոնիկ վիճակի ուսումնասիրության առաջնության սոսյուրյան սկզբունքից՝ Վանդրիեսը փորձում է իր ժամանակի հասարակական գոյությամբ պայմանավորված օրինաշափություններն ունիվերսալացնել, վերագրել բոլոր ժամանակներին և բոլոր ժողովուրդներին։ Թարրառների և հասարակական գանագան խմբավորումների լեզուների բնույթի պատմական փոփոխությունները անհրաժեշտ ուշադրություն չեն գրավում։ Վանդրիեսը ևս, Դյուրկհեյմի նման, լեզվի զարգացումը կախման մեջ է դնում ազգաբնակչության խտությունից, աշխատանքի բաժանումից և միջազգային կապերի զարգացումից։ Վանդրիեսը խիստ կարևոր դեր է հատկացնում հասարակական տարրեր խավերի լեզվական տարրերություններին՝ դրանք շափազանցնելով գրեթե մինչև ժողովրդի լեզվի ընդհանրության ժխտման աստիճան։

Եթե Հումբոլդտը և ուրիշները, ենելով լեզվի և մտածողության զուգահեռականության տեսությունից, փորձում էին լեզուների կառուցվածքային առանձնահատկությունների հիման վրա որոշել ժողովուրդների մտածողության ու հոգեկան կերտվածքի առանձնահատկությունները, ապա Վանդրիեսը ժխտում է այդպիսի անմիջական կապի առկայությունը։ Լեզվական փաստերի վերլուծության հիման վրա նա ցույց է տալիս, որ այդպիսի անմիջական կապի դրույթը հիմնված է մակերեսային դիտողությունների ու հապճեպ ընդհանրացումների վրա։ Վանդրիեսի կարծիքով քերականական կատեգորիաները, որոնք իրենց ծագմամբ կապված են հասարակության հետ, չեն վկայում այդ ժողովրդի կուլտուրական զարգացման աստիճանի մասին, առավել ևս՝ ոչ մի կապ չունեն ուսայական առանձնահատկությունների հետ։ Լեզվի զարգացման տվյալ մակարդակի, քերականական կառուցվածքի բնույթի, այս կամ այն քերականական կատեգորիաների առկայության կամ բա-

ցակայության հիման վրա չի կարելի խոսել տվյալ ժաղովրդի մտածողության զարգացման աստիճանի մասին։ Այս կապակցությամբ Վանդրիեսը մանրամասն վերլուծության է ենթարկում լեզուների ձևաբանական դասակարգման սկզբունքները և ցույց տալիս, որ մի կողմից՝ լեզուներում առկա են բազմաթիվ անցողիկ օղակներ, ոչ մի լեզու մարուր ձևով չի դրսկորում այս կամ այն տիպը, մյուս կողմից՝ այդ տիպերը չեն արտացոլում մտածողության զարգացման տարբեր էտապները։ Այդպիսի կապի բացակայությունը Վանդրիեսը շեշտում է առանձնապես ուշ շրջանի զարգացման համար։ Նշելի է, որ Վանդրիեսը քերականական կառուցվածքի փոփոխությունների պրոցեսը շի դիտում որպես իսկական զարգացում, այլ ավելի շուտ որպես յուրատեսակ ինքնակա շարժում որոշ շրջանի մեջ։

Լեզվի ծագման հարցը Վանդրիեսը լուծում է նույնպես լեզվի հասարակական բնույթի հետ կապված։ Լեզվի ծագումը նա պայմանավորում է՝ հասարակության հաղորդակցման կարիքներով։ Սակայն այս դեպքում նա դեռևս չի կարողանում նախամարդուն տեսնել իր իսկական աշխատանքային գործունեության, գոյամիշոցների հայթայթման կոնկրետ պայմանների մեջ։ Անհատական գիտակցությունը պայմանավորելով հասարակական գիտակցությամբ՝ Վանդրիեսն, այնուամենայնիվ, լեզվի ծագման գաղտնիքը փնտրում է անհատական հոգեբանության մեջ։ «Լեզուն գոյություն շունի նրանցից դուրս, ովքեր մտածում ու խոսում են նրանով։ Նա արմատացած է անհատական գիտակցության խորքերի մեջ։ այդտեղից է նա ստանում իր ուժը՝ մարդկային լեզվի հնչունների մեջ մարմնավորվելու համար։ Բայց անհատական գիտակցությունը անհատին իր օրենքները թելադրող կոլեկտիվ գիտակցության տարրերից մեկն է միայն։ Հետևաբար լեզվի զարգացումը հասարակական զարգացման տեսակներից մեկն է։ Նրա մեջ շի կարելի տեսնել անընդհատ շարժում դեպի որոշակի նպատակ։ Լեզվաբանի գործը կատարված է, եթե նա լեզվի մեջ հայտնաբերել է հասարակական-պատմական ուժերի ու փոխազդեցությունների խաղը»<sup>1</sup>։ Վանդրիեսն այս կապակցությամբ հակում է ցույց տալիս լեզվի ծագումը փնտրելու սկզբնական հասարակական ճիշերի և քայլելում ու աշխատանքին միմիկորեն ուղեկցող երգի մեջ։ Ճիշը, ստանալով խորհրդանշանի բնույթ, սկսում է ուրիշների կողմից կրկըն-

<sup>1</sup> Ж. Вандриес, Язык, 1937, № 322.

վող ազդանշանի դեր խաղալ, և մարդն այն օգտագործում է հաղորդակցման կարիքների համար: Լեզվի ծագման վճռական քայլը կատարվում է նշանի գիտակցումով և զարգանում հետագա տարբերակմամբ: Վանդրիեսը լեզվի ծագումը կապում է նաև արվեստների նախնական սինկրետիզմի և նախամարդու գեղարվեստական ստեղծագործության հետ: Նշելի է, որ Վանդրիեսը նախ՝ տարբերում է լեզվի ծագման հարցը խոսքի ծագման հարցից, երկրորդ՝ լեզվի ծագման հարցը լեզվաբանության պրոբլեմատիկայի շարքը չի դնում:

Լեզվի զարգացումը Վանդրիեսը պատկերացնում է որպես երկու հակադիր ուժերի՝ տարբերակման և միասնականացման տենդենցների գործունեություն: Այս վերջին դեպքում նա կարենոր տեղ է տալիս խառնուրդին, բայց գտնում է, որ լեզուն այդ դեպքում էլ իր ինքնատիպությունը չի կորցնում: Մեյեր նման, Վանդրիեսը լեզուների փոխհարաբերության մեջ կարենոր տեղ է տալիս այնպիսի մի մոմենտի, ինչպիսին հեղինակությունն է: Քերականական զարգացման մեջ Վանդրիեսը տեսնում է շարժում կոնկրետից և մասնակից դեպի վերացականն ու ընդհանուրը: Անալոգիային նա վերագրում է քերականական ձևերը միօրինակացնողի ու պարզեցնողի դեր: Հնչյունական փոփոխությունների դերը, Վանդրիեսի կարծիքով, չպետք է գերազնահատել, երբ առանձնապես խոսքը վերաբերում է դրանց խաղացած դերին ներքին-իմաստային փոփոխությունների մեջ: Նշելի է, որ Վանդրիեսը տուրք է տվել առանձին բառերի ուսալականության բացառման տեսակետին:

Արտահայտվելով Հնչյունական օրենքների հարցի շուրջը<sup>1</sup> Վանդրիեսը տարբերում է «Հնչյունական տենդենցներ» և «Հնչյունական օրենքներ». վերջիններս, ըստ նրա, առաջինների դրսեռուման առանձին դեպքերն են: «Հնչյունական տենդենցները» լինում են երկու տեսակ՝ 1) ընդհանուր ու արտաքին (բնածայնություն, առնմանում, տարնմանում, դրափոխություն և այլն) և 2) առանձին ու ներքին. վերջին տիպի տենդենցները հատուկ են առանձին լեզուների և կախված են միայն ֆիզիոլոգիական-արտասանական գործուններից. նրանք տարբեր են անհատից անհատ, բայց անհատների փոխազդեցությամբ ի մի են բերվում, և ամեն մի հասարակական խումբ ունենում է իր տենդենցները: Լեզվաբանը սրանք քննելիս նախ պետք է վերլուծի տենդենցների արդյունքնե-

<sup>1</sup> Հմմա. J. Vendryes, Reflexions sur les lois fonétiques. „Mélanges linguistiques offerts à M. Antoine Meillet“, Paris, 1902.

բը, պարզի փոփոխությունների ֆիզիոլոգիական գծերը, ապա որոշի այն տեսնդենցները, որոնք պատճառ են դառնում տվյալ հետեւանքների համար:

Վանդրիեսը խիստ քննադատական վերաբերմունք է ցույց տալիս խոսքի մասերի տրադիցիոն դասակարգմանը: Ամենից առաջ նա իսկական խոսքի մասերի թվից հանում է միջարկությունը՝ որպես ինտելեկտուալ խոսքի կառուցվածքից դուրս մնացող տարր: Դրանից հետո նա բացառում է նախդիրների, շաղկապների, հոդերի և անձնական ու հարաբերական դերանունների ինքնուրույն խոսքի մասեր լինելու: Հնարավորությունը՝ դրանք դիտելով որպես «ձեռութներ», որոնք այլ լեզուներում կարող են արտահայտվել շարադասությամբ, վերջավորություններով և այլ կարգի ձևաբանական միջոցներով: «Ձեռութներ» ասելով Վանդրիեսը հասկանում է քերականական իմաստ ունեցող, այսինքն՝ գաղափարների հարաբերություններ արտահայտող տարրերը՝ ի տարրերություն սեմանտեմների, որոնք գաղափարներ են արտահայտում և որոնց քննությունը վերաբերում է բառապաշարին: Տարբեր լեզուների համեմատությունը, Վանդրիեսի կարծիքով, ցույց է տալիս, որ հստակ չէ սահմանը նաև մի շարք այլ խոսքի մասերի միջև՝ հատկապես նրանց դրսերման ձևաբանական առանձնահատկությունների առումով: «Շարունակելով այս ընտրությունը,—գրում է Վանդրիեսը,—մենք գալիս ենք այն մտքին, որ գոյություն ունի միայն երկու խոսքի մաս՝ բայ և անուն: Նրանց են հանգում մնացած բոլոր խոսքի մասերը»<sup>1</sup>: Սակայն բայի և անվան տարրերակումն էլ ոչ բոլոր լեզուներում է հստակ կերպով արտահայտված: Մրանց տարրերակման ամենից ավելի հավաստի հիմքը համարվում է շարահյուսականը՝ անվանական և բայական տիպի նախդասությունների տարրերակման վերաբերյալ վրա, որ գիմնական լեզուների քերականություններում հակասություն չի գտնում: Սակայն Վանդրիեսը հնարավոր է համարում և հոգեբանական դասակարգումը, որ հիմնված է ոչ թե բառերի արտահայտած պատկերացումների, այլ այն արժեքի վրա, որ գիտակցությունը վերագրում է այդ պատկերացումներին. նման դասակարգում կատարելիս բառերը կարելի են դասավորել ըստ նրանց բանաստեղծական ուժի և հիշելիության. այդ գեպքում ամենակոնկրետ բառերի (հատուկ անունների) և

<sup>1</sup> Ж. Вандриес, Язык, М., 1987, № 116.

ամենավերացական բառերի (նախդրի, հոդի և ժխտական բառի) միջև հիերարխիայով կդասավորվեն մնացած բառերը:

Լեզվական միավորների՝ իրարից ոչ կտրուկ կերպով առանձնանալու գաղափարը Վանդրիեսն անցկացնում է և այլ դեպքերում. այսպես, ըստ նրա՝ Հստակ տարբերություն շկա ձայնավորների և բաղաձայնների բնության միջև, այլ կա միայն ֆունկցիոնալ տարբերություն. և՛ ձայնավորները, և՛ բաղաձայնները կազմում են, ինչպես Ռուսլոն է ասում, այն բնական շարքի մի մասը, որի վերջնային տարրերն են միայն Հստակ տարբերվում. մի բևեռում են ա, ե, օ ձայնավորները, մյուսում՝ թ, տ, և խուլ պայթականները:

Ելնելով լեզվի հասարակական երևոյթ լինելու գաղափարից՝ Վանդրիեսը մեծ ուշադրություն է նվիրում բառապաշարի հասարակական տարբերակման, բառապաշարի փոփոխության հասարակական պատճառների, բառիմաստի փոփոխության հասարակական (իմա՝ «Հասարակական հոգեբանական») հիմքերի, լեզվի հասարակական տարբերակումների (մասնագիտական լեզուների) բնույթի հետ կապված հարցերին:

Իր գործունեության համեմատաբար ուշ շրջանում Վանդրիեսը, սոցիոլոգիական դպրոցի այլ ներկայացուցիչների նման, հակում է ցույց տալիս դեպի տիպոլոգիական-ստրոկտուրային վերլուծությունը: Իր հոդվածներից մեկում՝ նա դնում է մի այնպիսի «ընդհանուր լեզվաբանություն» ստեղծելու խնդիրը, որ պատմա-համեմատական մեթոդի փոխարեն օգտվի ընդհանրական-համեմատական մեթոդից. սա լեզուները կհամեմատի ոչ թե ծագումնային (գենետիկ) առումով, այլ նման և տարբեր, զուգահեռ և ոչ զուգահեռ երևոյթների առումով, ընդ որում գործ կունենա ոչ միայն ցեղակից, այլև ոչ ցեղակից լեզուների հետ:

Մորիս Դրամմեն.—Մորիս Գրամմոնի ուշադրության կենտրոնում հնչյունաբանության հարցերն են: Դեռևս 1911 թ. ձգտելով հնչյունական ընդհանուր օրենքներ հաստատել՝ Գրամմոնը պնդում էր, որ լեզուն մարդկային երևոյթ է, որ մարդիկ օրգանապես նույն են, որ ու լեզուն մարդկային օրգանիզմի ֆունկցիաներից մեկն է» և որ, հետևաբար, միևնույն պատճառների ազդեցության տակ տեղի են ունենում միևնույն փոփոխությունները<sup>1</sup>: Այսպիսով, սկզբնապես նա հնչյունական փոփոխությունները փորձում էր բա-

<sup>1</sup> J. Vendryès, La comparaison en linguistique, BSL, LXII, 1, № 124, 1945.

<sup>2</sup> Հմտ. RVR, XVII, 1911, էջ 323.

ցատրել մարդկանց անատոմիական-ֆիզիոլոգիական ընդհանրությամբ, տուրք էր տալիս լեզվի բիոլոգիական ըմբռնմանը: Հետագայում նա լիովին կանգնում է սոցիոլոգիական դպրոցի սկզբանքունքների վրա, ընդունում լեզու-խոսք սույուրյան հակադրությունը, թեև շարունակում է պահպանել և զարգացնել ընդհանուր հնչյունական օրենքների գոյության գաղափարը: 1914—1924 թթ. նա հրատարակում է մի շարք հոդվածներ<sup>1</sup>, որոնք մեծ մասամբ մտցնում է իր 1933 թ. լույս տեսած «Հնչյունաբանության ուրվագծի» մեջ<sup>2</sup>:

Մորիս Գրամմոնը Մեյեի նման յուրատեսակ հաշտեցնող գիծ է տանում երիտքերականական և սոցիոլոգիական դպրոցների միջև: Երիտքերականների նման նա ևս լցված է հնչյունական այնպիսի օրենքներ բացահայտելու ձգտումով, ինչպիսի օրենքներ առկա են բնական գիտությունների մեջ: Սակայն սրա հետ միասին նա հեռու է երիտքերականների ինդիվիդուալիստական ըմբռնումից և կանգնած է լեզվի հասարակական բնույթի ըմբռնման վրա: Մեյեի նման, Գրամմոնը փորձում է բացահայտել հնչյունափոխական համընդհանուր օրենքներ, որոնք հատուկ են բոլոր լեզուներին: Իր «Հնչյունաբանության ուրվագծում» նա տարբերում է հնչյունափոխության երկու տիպ՝ 1) հնչյունի՝ բառի մեջ գրաված դիրքից անկախ փոփոխություններ և 2) դիրքից կախված փոփոխություններ: Անկախ փոփոխություններ են համարվում այս կամ այն լեզվին հատուկ, տվյալ լեզվում իր ուղղությունն ունեցող պատմական այնպիսի փոփոխությունները, ինչպիսիք են, օրինակ, «Գրիմի օրենքով» հաստատված բաղաձայնական տեղաշարժերը գերմանական լեզուներում: Գրամմոնը հակված է այս կարգի փոփոխությունները բացատրելու սուբստրատի ազդեցությամբ: Կախյալ փոփոխությունների դեպքում, ըստ Գրամմոնի, գործում են երկու կարգի գործոններ. առաջին կարգի գործոնը համընդհանուր օրենքների բնույթ ունի և ազդում է մարդկանց հոգեկանի վրա ընդհանուր ու պարտադիր ձևով՝ քիմիական ու ֆիզիկական օրենքների ձևով. երկրորդ գործոնը լեզվի հնչույթային սիստեմն է, որ խանգարում է համընդհանուր օրենքների ազդեցությանը, դադարեցնում, ձևափոխում կամ տալիս այս կամ այն կոնկրետ բնույթը: Ուշադրությունը կենտրոնացնելով համընդհանուր օրենքների վրա՝ Գրամմոնը այս կապակցությամբ տարբերում

<sup>1</sup> MSL. 1914—1924.

<sup>2</sup> M. Grammon. Traité de phonétique, Paris, 1933.

է երկու կարգի փոփոխություններ՝ անմիջական ու միջնորդված և փորձում պարզել դրանց հիմքերը. անմիջական են համարվում կից հնչյունների փոփոխությունները, միջնորդված՝ ոչ կից հնչյունների փոփոխությունները: Տարբերվում են յուրաքանչյուր դեպքի համար 3 տիպեր՝ 1) առնմանում, տարբերակում ու ինտերվերսիա և 2) հարասություն, տարնմանում և դրափոխություն:

Այս կապակցությամբ Գրամմոնը տարբերում է «հնչյունական օրենքների» և «հնչյունական բանաձևերի» գաղափարները: Առաջին անվամբ նա կոչում է յուրաքանչյուր լեզվում ներկայացվող հիշյալ ընդհանուր տենդենցիաները (առնմանում, տարնմանում, դրափոխություն և այլն). Երկրորդ անվամբ նշվում են ընդհանուր տենդենցիաների կիրառումները առանձին լեզուներում և առանձին դեպքերում: Սույուրի բաժանման համեմատ՝ «հնչյունական օրենքները» վերաբերում են լեզվին (langue), գոյություն ունեն թաքնված ձևով և սպասում են դրսերվելու դեպքի. «հնչյունական բանաձևերը» վերաբերում են խոսքին (parole) և իրական գոյություն ունեն. ի տարբերություն հնչյունական օրենքների սրանք փոփոխվում են բարբարից բարբար և դեպքից դեպք:

## 5. ԿՈՒԼՏՈՒՐ-ԷԹՆՈԼՈԳԻՉՄ ԵՎ «ԷԹՆՈԳՍԻՆՈԼՈԳԻՉՄ»

Ընդհանուր տեղեկություններ.— Թեև այս ենթաշրջանի հոսանքների որոշ մասի համար գեռևս բնորոշ են ինդիվիդուալիզմն ու սուբյեկտիվիզմը, բայց լեզվաբանների մեծ մասը փորձում է հաղթահարել այս նեղ հարցադրումը: Ոմանք (է. Կասսիրեր), ոչ առանց Վունդտի ազդեցության, փորձում են երիտքերականների ինդիվիդուալիստական պսիխոլոգիզմին հակադրել էթնոպսիխոլոգիզմը՝ հիմք ընդունելով «ժողովրդի հոգի կամ ոգի» գաղափարը և դրան տալով այս կամ այն մեկնաբանությունը. Երկրորդները (Սոսյուր, Մեյե և ուրիշներ) դիմում են բովժուական սոցիոլոգիական տեսություններին. Երրորդները (Ֆ. Ն. Ֆինկ) փորձում են կրկին վերադառնալ Հումբոլդտի այն գաղափարներին («ժողովրդի ոգի», «ներքին ձև» և այլն), որոնք երիտքերականների կողմից մի կողմ էին դրվել որպես լեզվական կոնկրետ հետազոտությամբ շրացահայտվող, անըմբոնելի մետաֆիզիկական էություններ, մասնավանդ որ վերջիններիս ուշադրության կենտրոնում հնչյունաբանության ու ձևաբանության և ոչ թե շարահյուսության ու իմաստաբանության հարցերն էին: Դեռևս 1899 թ. «Գերմանական

լեզվակառուցվածքը որպես գերմանական աշխարհայեցողության արտահայտություն» բնորոշ վերնագիրը կրող գրքում<sup>1</sup> Ֆինկը (1867—1910) փորձում է լեզուների դասակարգման հիմքում գնել լեզվական արտահայտության մեջ պատկերացումների թե զգացմունքների (իմա՝ մտավորականության թե զգացականության) գերակշռություն ստանալը։ Հումբուլտի ազդեցությամբ պետք է բացատրել և այն, որ Ֆինկը իր «լեզվաբանության խընդիրը և անդամատումը» աշխատության մեջ<sup>2</sup> տարրերում է լեզուն որպես խոսք (Sprechen) և որպես արտահայտության միջոցների միասնական ամբողջություն, ընդ որում խոսքը որպես գործունեություն համարում է լեզվաբանության իսկական առարկան, միաժամանակ, ոչ առանց կրոշի և ֆուլերի ազդեցության, նա խոսքը համարում է «արտահայտչական շարժում» և «արվեստի ակտ»։ Եվ այս աշխատության մեջ, և՛ հնտագա «լեզվակառուցվածքի հիմնական տիպերը» գործում Ֆինկը լեզվաբանության նպատակը համարում է խոսող հանրության (sprechende Gemeinschaft) խոսքի ձևը նրա հոգեոր յուրահատկությամբ բացատրելը։ Ֆինկի նեռհումբուլտական հայացքները հետագայում ազդեցություն են թողնում գերմանական նեռհումբուլտական էթնոլինգվիստիկայի ձևավորման վրա։

Բուրժուական շատ սոցիոլոգներ, կուլտուրայի պատմաբաններ և ազգագրագետներ թեև չեն զբաղվել հատկապես լեզվի հարցերով, բայց մեծ շափով ազդել են լեզվաբանական ուսմունքների զարգացման վրա։ Մրանց թվում կարելի է հիշել ֆրանսիացի սոցիոլոգ Լյուսիեն Լի-Բրյուլին (1857—1939), որ զգալի դեր է խաղացել Մարի լեզվաբանական ուսմունքի ձևավորման մեջ։ Մախիստական դիրքերից նույնացնելով հասարակական գոյը և հասարակական գիտակցությունը՝ նա խոսում է նախնադարյան հասարակությունների «կոլեկտիվ պատկերացումների» մասին։ Հստ Լի-Բրյուլի՝ նախնադարյան այդ կոլեկտիվ պատկերացումները նախատրամարանական բնույթ ունեին և որակապես տարրերվում էին ժամանակակից քաղաքակրթված մարդկանց տրամարանական մտածողությունից։ Այդ պատկերացումները նա ոչ թե բխեցնում է հասարակական գոյից, այլ համարում է այսպես կոչված «պար-

<sup>1</sup> F. N. Fineck, Der deutsche Sprachbau als Ausdruck deutscher Weltanschauung, 8 Vorträge, Marburg, 1899.

<sup>2</sup> F. N. Fineck, Die Aufgabe und Gliederung der Sprachwissenschaft, Halle, 1905.

տիցիպացիայի օրենքի» և «գերբնականի աֆեկտիվ կատեգորիայի» միջոցով ձևավորված մի բան։ Կամա թե ակամա կամ մի թիզուլի ուսմունքը հիմք է տվել ռասայական եղբակացությունների համար։

Ամերիկացի ազգագրագետ և լեզվաբան Բոուըզը (Boas), որ մեծ դեր է խաղացել ամերիկյան նկարագրական լեզվաբանության ձևավորման մեջ, կողմ է լեզվաբանական և ազգագրական ուսումնասիրությունների սերտ գուգակցման, հանդես է գալիս որպես ազգագրա-լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչ։ Նա նշում է լեզվական, կուլտուրական և տնտեսական «շարքերի» գոյակցությունը՝ առանց դրանց միջև պատճառական կապ հաստատելու։

Է. Կասսիրեր. — Նեոկանտական է. Կասսիրերը (1874—1945) ազգել է ոչ միայն արտասահմանյան նորագույն փիլիսոփայական ու լեզվաբանական ուղղությունների, այլև Ն. Յա. Մառի հայացքների ձևավորման վրա։

Լինելով Մարբուրգի դպրոցի ներկայացուցիչ՝ Կասսիրերը փորձում է Կանտի փիլիսոփայությունն ազատել իր մատերիալիստական տարրերից, դեն նետել կանտյան «ինքնին իրը» և մատերիական աշխարհն ու նրա օրինաշափությունները հանգեցնել «մաքուր» հասկացությունների, մաթեմատիկական բանաձևերի։ Մատերիայի փոխարեն Կասսիրերը առաջ է քաշում ոչ մատերիական ֆունկցիոնալ կախումները՝ հետևելով այսպես կոչված ֆունկցիոնալիզմի տեսությանը, ինչպես այն դրսնորվում է Մարբուրգի դպրոցի ներկայացուցիչների մոտ (Կոնեն, Նատորպ, Կասսիրեր), որպես իդեալիստական և ազնոստիկական ուամունք։ Հստ այդ ուսմունքի՝ ամեն մի գիտություն ոչ թե օբյեկտիվ իրականության արտացոլումն է, այլ հիերարխիկ կերպով կապված հասկացությունների մի տրամաբանական սխեմա, որտեղ ամեն մի ավելի ընդհանուր հասկացություն որպես արգումենտ որոշում է ավելի քիչ ընդհանուրը։ Գիտական իմացության նպատակն է հասկացությունների ֆունկցիաների պարզաբանումը։

Թեև Կասսիրերը գտնում է, որ լեզուն և ոգու մյուս դրսնորումները՝ կուլտուրական հիմնարկությունները պետք է բացահայտվեն իրենք իրենցով և ոչ թե նախապես առնված դոգմատիկ դրույթներով, բայց նրա լեզվաբանական ուսմունքը փաստորեն ներկայացնում է վոնդտի էթնոպսիխոլոգիզմի դրույթների հարմարեցումը նեոկանտականության ընդհանուր սկզբունքներին։ Իր «Սիմվոլիկ ձևերի փիլիսոփայության» մեջ, հատկապես նրա առաջին գրքում

(«լեզու»)<sup>1</sup> նա լեզուն դիտում է որպես սիմվոլիկ ձեւ, որ մարդկացին ոգին ստեղծել է ինչպես աշխարհը, այնպես էլ ինքն իրեն գիտակցելու համար։ Հստ Կասսիրերի՝ լեզուն կրոնի (Mythos), գիտության և արվեստի հետ միասին կազմում է հոգեկան ֆունկցիաների մի սիստեմ, որը ոչ թե պասսիվորեն արտացոլում է աշխարհը, այլ կազմակերպում այն։ Լեզվի և հոգեկան մնացած ֆունկցիաների զարգացումը տեղի է ունենում նրանց մեջ դրված ինքնազարգացման ստեղծագործ սկզբունքով, ընդ որում լեզվի զարգացումը Կասսիրերը պատկերացնում է որպես նրա ձևերի ավելի ու ավելի ուժեղացող սիմվոլականացում։ Սիմվոլը, ըստ Կասսիրերի, զգայականի և հոգեկանի միացումն է, ընդ որում զգայական կողմն անհրաժեշտ է ճանաչողության համար։ Սիմվոլի կարևորությունն այն է, որ «հոգեկանի մաքուր ֆունկցիան ինքը զգայականի մեջ պետք է որոնի իր կոնկրետ իրականացումը (Erfüllung), պետք է փնտրի և այդ կատարումը միայն այստեղ կարողանա գտնել»<sup>2</sup>։

Կասսիրերի գիտավոր դրույթն այն է, որ ոգին իր կուլտուրական գործողությունների (Betätigungen) ընթացքում, ինչպես որ դրանք երևան են գալիս դիցաբանության (Mythos) կամ կրօնի (Relegion), արվեստի, գիտության, այլև լեզվի մեջ, զգայական նշաններով կամ սիմվոլներով աշխարհի սեփական պատկերներն է ստեղծում։ Այդ բնագավառները փոխադարձաբար կախված իմաստների ամբողջություններ են՝ իրենց սեփական հիմնադրական (konstitutiv) սկզբունքներով։ Լեզուն Կասսիրերի սիստեմում ծառացում է որպես իմացության կամ մեկնաբանության, իսկական փոխադրամիջոց «եսի» և «աշխարհի» միջև։ Լեզվի, լեզվական նշանի միջնորդությամբ է ոգին զգայական ընկալումից (sinnliche Empfindung) բարձրանում դեպի հայեցողությունը (Aschauung), ապա դեպի հասկացական մտածողությունը (begriffliches Denken) և, վերջապես, դեպի դատողությունը։ Լեզուն արտացոլում է հոգեվոր զարգացման այս աստիճանները, և նրա միջոցով կարելի է դրանք բացահայտել։ Լեզուն սկզբնապես ընկած է կոնկրետ-զգայական ոլորտում (sinnlich-konkrete Sphäre)։ Հետագայում պահպանելով այս զգայական տարրը՝ այն լցնում է հոգևոր բովանդակությամբ և, վերջապես, դառնում մաքուր հոգևոր-մոտավորի խորհրդանշանը (Symbol des rein Geistig-Intellektualen)։

<sup>1</sup> E. Kassirer, Philosophie der symbolischen Formen. I. Die Sprache, Berlin, 1923.

<sup>2</sup> Նույն աեղը, էջ 16—17.

**Այսպիսով, Կասսիրերն ընդունում է լեզվի զարգացման 4 փուլ.**

1) Զգայական արտահայտության շրջան (die Phase des sinnlichen Ausdrucks), երբ լեզուն դեռ գտնվում է զգայականորեն-կոնկրետ ոլորտում: Սա համապատասխանում է Շտայնթալի «նոմատոպեզիայի փուլին»:

2) «Պատկերավոր» լեզվական արտահայտության փուլ (die Phase des «anschaulichen» Ausdrucks), երբ լեզուն գտնվում է հայեցողության (Anschabung) ոլորտում. արտաքին աշխարհի կամ օբյեկտիվ իրականության հայեցողությունը հենվում է տարածության, ժամանակի և թվի նշանակման լեզվական միջացների վրա. սուրյեկտիվ աշխարհի ներքին հայեցողությունը լեզվի մեջ դրսկորպում է նախ իմպլիցիտային արտահայտություններով (լինի այն անվանական կամ բայական արտահայտություն), ապա էքսպլիցիտային լեզվամիջացներով (տարրեր տիպի ստացական դարձվածքներով), ընդ որում անվանական և բայական լեզվատիպերի կազմավորումը (Ausbildung) ցուց է տալիս ոգու՝ աշխարհի ճանաշման տարրեր ուղիները:

3) Հասկացական մտածողության (begriffliches Denken) արտահայտման փուլ, երբ ընդհանուր հասկացողությունը հենվում է առանձինի վրա. այս փուլին լեզվականորեն համապատասխանում է Հատկանիշի նշանակումը (Merkmalsbezeichnung) կամ «որակավճրող» լեզվաընկալումը (quaifizierende Sprachauffassung): Միևնույն իրի կամ գործողության տարրեր տեսակների համար կան առանձին անվանումներ. այս շրջանին է վերաբերում և սուպլետիվմը. սակայն դասանիշերի առկայությունը խոսում է արդեն այն մասին, որ լեզուն գտնվում է «ընդհանրացման» («Generalisation»), «սեռային ընդհանրության» («genetische Allgemeinheit») աստիճանի վրա. սրանից անցում է կատարվում ձևական խմբավորմանը (օր. սեռային խմբերը):

4) Մաքուր վերաբերական ձևերի (Beziehungsformen) արտահայտման փուլ, երբ լեզուն ավելի ու ավելի սիմվոլիկ բնույթ է ընդունում. այն սկսում է արտահայտել բառերի շարադասությամբ (շինարենում), նախադասության վերլուծական կամ համադրական կառուցվածքային տիպերով, համադասությունից անցումով ստորադասությանը, հարաբերական դերանվան առաջացմամբ և, վերջապես, հանգույցի (Կորուլա) ստեղծմամբ որպես համադրության արտահայտություն:

**Կասսիրերը մի կողմից՝ Հումբոլդտի, Շտայնթալի և Վունդտի**

նման հանգում է լեզվի և մտածողության որոշ նույնացման, լեզվի ներքին-իմաստային կողմի քննությունը նույնացնում ընդհանրապես լեզվի քննության հետ, մյուս կողմից՝ անհրաժեշտ լափով հաշվի չի առնում բառի կառուցվածքի հասարակական կողմը և հատկապես լեզվական նշանի ու սիմվոլի տարրերությունը<sup>1</sup>:

Վերջինվերջո ամեն մի իմացության, ամեն մի գիտության հիմքում կասսիրերը դնում է «ինքնաստեղծ սիմվոլները». «Ամեն մի գիտության հիմնական ըմբռնումները,—գրում է Կասսիրերը,—այն միջոցները, որոնցով նա իր հարցերն է դնում և լուծումները ձևակերպում, այլևս չեն երևում որպես մի առկա գոյի պասսիվ արտապատկերները (Abbild), այլ որպես ինքնաստեղծ մտացի (intellecuell) սիմվոլներ»<sup>2</sup>: Եթե մի կողմից՝ Կասսիրերը լեզուն նույնացնում է մտածողության հետ, ապա մյուս կողմից՝ այն կտրում է մտածողությունից ու գիտակցությունից, վերջիններս հնարավոր համարում և առանց լեզվի: Նրա կարծիքով լեզվական «սիմվոլիկ ձևերը» նույնիսկ կաշկանդում են գիտությունը, որը ձգտում է նոր սիմվոլիկ ձևի՝ թվերի «լեզվի». Վերջինիս մեջ նյութականը վերածված է միայն ֆունկցիոնալի: Սա էլ վերջիվերջո կհանգեցնի ոչ միայն անհատական, այլև ազգային տարրերությունների վերացմանը, և լեզվական տարրերությունները կդադարեն գոյության իրավունք ունենալուց: Ի տարրերություն Հումբոլդտի, որը այդ լեզվական տարրերությունները կապում է ազգային ոգու առանձնահատկությունների հետ, Կասսիրերը դրանք դիտում է որպես ոգու կողմից զգացականը քմահաճ մասնատման ենթարկելու արդյունք<sup>3</sup>: Կասսիրերի լեզվական կառուցումների հիմքում դրված է եսը. նա ևս Վունդտի նման լեզվի զարգացման մեկնակետը համարում է ժեստերը, այն է՝ ցուցական ժեստերը. սակայն այդ ժեստերը Կասսիրերի համար լոկ միջոց են, որոնցով եսը իրենից հեռացնում է պատկերացված ու պահանջված բովանդակությունը (vorgestellter und begehrter Inhalt), այն վերածում «առարկայի» և օբյեկտիվ բովանդակության: Մի ամբողջ շրջան անհատը ամեն ինչ անվանում է՝ կողմնորոշվելով դեպի իր սեփական մարմինը, այն դարձնելով յուրատեսակ օրինակ, որի հիման

<sup>1</sup> Հմմա. Р. О. Шօր, Кризис современной лингвистики, ЯС, 1926, էջ 68, ծան. 1:

<sup>2</sup> E. Kassirer. Philosophie der symbolischen Formen, I, Die Sprache, Berlin, 1923.

<sup>3</sup> Հմմա. G. Pätsch. Grundfragen der Sprachtheorie, 1955, էջ 30:

վրա նա հաշվում է, խմբավորում. այս շրջանում իշխում է անթրոպոմորֆիզմը, ամեն ինչ որոշում է երկակայությունը, ընդ որում այս շրջանն իր դիցաբանական ու մոգական բնույթով մարդու ճանաշողական հնարավորությունների արդյունք է: Քերականական ձևերը, Կասսիրերի կարծիքով, ոգու ներքին ապրիորի հնարավորությունների դրսերումն են. Կանտի հետեղությամբ, Կասսիրերը ժամանակը և տարածությունը դիտում է որպես հայեցողության ձևեր:

Յ. Մառլեներ.—մեխանիցիզմի և ագնոստիցիզմի զուգորդման յուրատեսակ փորձ պետք է համարել մի այլ նեռկանտականի՝ Յ. Մառլեների «Լեզվի քննադատությունը»<sup>1</sup>, որն զգալի շափով ազդել է ամերիկյան և՝ մենտալիստների, և՝ մեխանիցիստների վրա: Մառլեները լեզվի և գիտակցության կապն ըմբռնում է մեխանիստրեն. բառերը նրա համար լոկ զգայական տպավորությունների հուշանշաններ են. զգայական տպավորությունները աստիճանաբար են հասել իրենց առկա ձևին և կարող էին դրոշմվել այլ ձևերի մեջ: Սակայն կապվելով լեզվի հետ՝ գիտակցությունը ազդում է նրա վրա, որոշում վերջինիս բնույթը. «Եթե Արիստոտելը խոսեր շինարեն կամ դակոտայի լեզվով, նա կստեղծեր բոլորովին այլ տրամաբանություն կամ համենայն դեպս, բոլորովին այլ ուսմունք կատեգորիաների մասին»<sup>2</sup>: Ո՛չ զգայական տպավորություններն իրենք, ո՛չ էլ դրանց հուշանշանները շեն կարող հավաստի իմացության ազբյուր համարվել: Քանի որ ամեն անհատ կապված է իր զգայությունների և իր հիշողությունների հետ, ուստի և բառը որպես հուշանշան չի կարող զուտ սուբյեկտիվ ապրումը ուրիշներին հաղորդելու միջոց ծառայել<sup>3</sup>:

Էդուարդ Սեպիր.—էդուարդ Սեպիրը (1884—1939) ամերիկյան նորագույն լեզվաբանության ականավոր գեմքերոց մեջն է: Կարելի է ասել, որ նրանից է սկիզբ առնում այն գիծը, որ ժամանակակից ամերիկյան լեզվաբանության մեջ միավորում է այսպես կոչված «մենտալիստներին»՝ ի հակառակություն Բլումֆիլդից եկող «մեխանիզմի» գծի. սակայն սա չի խանգարում Բլումֆիլդին՝ Սեպի-

<sup>1</sup> F. Mauthner. Beiträge zu einer Kritik der Sprache. I Sprache und Psychologie. II. Zur Sprachwissenschaft. III. Zur Grammatik und Logik. 1901—1902 (II հր. 1906—1913).

<sup>2</sup> F. Mauthner. հիշ. աշխ., III, II հր., 1913, էջ 4.

<sup>3</sup> Հմմա. G. Pätzsch. Grundfragen der Sprachtheorie. 1955. էջ 48—49.

րին համարելու իր ուսուցիչը. վերջիվերջո և՝ մենաւիստների, և՝ մեխանիցիստների լեզվաբանական կոնցեպցիան միավորվում է լեզվական հարցերի միևնույն իդեալիստական մեկնաբանությամբ։ Մենաւիստները լեզվական վերլուծության մեջ կարեար տեղ են տալիս իմաստային կողմին, մեխանիցիստները փորձում են գուրս մղել այն ընդհանրապես։ Նշելի է, որ մենաւիստները փորձում են պարզել այսպես կոչված «արտաքին լեզվաբանության» («մետալինգվիստիկայի») այնպիսի կարնոր հարցերը։ ինչպիսիք են լեզվի և կուլտուրայի, լեզվի և ռասայի, լեզվաբանության և մարդաբանության, ազգագրության ու հոգեբանության փոխհարաբերության հարցերը և այլն։ Սեպիրը կարող է համարվել ժամանակակից ամերիկյան նկարագրական (դեսկրիպտիվ) լեզվաբանության հիմնադիրներից մեկը, մի լեզվաբանություն, որը ստրուկտուրալիզմի տարատեսակներից մեկն է։ Լինելով միաժամանակ նաև մարդաբան (անթրոպոլոգ) ու ամերիկյան լեզուների աշքի ընկնող հետազոտողներից մեկը՝ Սեպիրը զգալի ուշադրություն է դարձրել լեզվաբանական և մարդաբանական հարցերի առնչությանը՝ նշանակալից ազդեցություն գործելով արդի ամերիկյան «ազգագրական լեզվաբանության» (էթնոլինգվիստիկայի) ձևավորման վրա։

Սեպիրը ավելի հայտնի է իր «լեզու. խասքի ուսումնասիրության ներածություն» աշխատությամբ<sup>1</sup>։ Այս աշխատության մեջ Սեպիրը էկլեկտիկորեն զուգորդում է ամենատարբեր լեզվաբանական ուղղությունների դրույթները՝ կրելով և Կրոշեի, և՝ Սոսյուրի, և՝ Կասսիրերի ազդեցությունը։ Լեզվի հասարակական բնույթի սոսյուրյան դրույթը նա զուգորդում է լեզվի արվեստային բնույթի կրոշեական դրույթի հետ, և լեզուն սահմանում որպես «արտահայտության կոլեկտիվ արվեստ»<sup>2</sup>։ Առանձնապես նշելի է Սոսյուրի՝ լեզվի իմաստնենտության և սինխրոնիայի առաջնության դրույթների ազդեցությունը։ Սակայն կարելի է նշել, որ այս գրքում Սեպիրը եթե մի կողմից՝ հանդես է բերում լեզվական երեսույթների վերլուծման լուրջ կարողություն, ապա մյուս կողմից՝ առաջ է քաշում այնպիսի դրույթներ, որոնք հիմք են տալիս հետագա ռեակցիոն ու ռասայական եղանակացությունների համար։ Ամերիկյան նկարագրական լեզվաբանության հնչյունաբանական վերլուծության

<sup>1</sup> E. Sapir, Language: an Introduction to the Study of Speech, 1921, ռուս. թարգմ. Է. Սեպիր, Язык; введение в изучение речи, М., 1934.

<sup>2</sup> Է. Սեպիր, Язык, 1934, էջ 176.

պրակտիկայի համար կարելոր դեր է խաղացել նաև Սեպիրի «Հընցունային կաղապարները լեզվում» հոդվածը<sup>1</sup>:

Իր գրքում Սեպիրը հանդես է գալիս լեզվի և մտածողության փոխարաբերության կոնցեպտուալիստական ըմբռնմամբ, որ միահյուսվում է կանտականության հետ<sup>2</sup>: Այդ ըմբռնման համաձայն՝ ինքնակա գոյություն ունեն և՝ առանձին առարկաները, և՝ այդ առարկաների ընդհանուր խմբերը նշանակող հասկացություն-սիմվոլները. Վերջիններս սիստեմի են վերածվում դատողությանը հատուկ անփոփոխ օրենքների գործողությամբ, իսկ մտածողության պրոցեսը ոչ այլ ինչ է, եթե ոչ հասկացությունների կազմավորման դատողական մեխանիզմ: Բառերն իրենց հերթին այդ հասկացություն-սիմվոլների սիմվոլներն են, իսկ կոնկրետ խոսքը՝ այդ սիմվոլների կապակցված ֆիքսացիան: Լեզուն էլ, այսպիսով, Սեպիրի համար լիովին մարդկային, ոչ բնագդական մի մնթող է՝ դիտումով ստեղծված սիմվոլների մի սիստեմի միջոցով պատկերացումները, զգացմունքները և ցանկությունները հաղորդելու համար:

Լեզվի այս ըմբռնումը Սեպիրի մոտ զուգակցվում է մի կողմից՝ լեզվի իմանենտության սոսյուրյան ըմբռնման հետ, մյուս կողմից՝ իր իսկ Սեպիրի «լեզվական կաղապարի» (pattern) ուսմունքի հետ<sup>3</sup>: Յուրաքանչյուր լեզու նրա համար մի ներփակ սիստեմ է, որի անհատական ձեր, «կաղապարը» խիստ կայուն է: Լեզվի «կաղապարը» անկախ է բառապաշարից և հիմնվում է հնչյունական-ձևաբանական կառուցվածքի վրա. Եթե «կաղապարը» կախված չէ այդ լեզվով խոսող հանրության կուլտուրայի բնույթից ու աստիճանից, ապա բառապաշարը կուլտուրական փոխազդեցության շափանիշ է: Զեի գաղափարը հիմնելով սիստեմի գաղափարի վրա՝ Սեպիրը լեզվին այն հատկացնում է, կուլտուրային՝ ոչ: Լեզվի փոփոխության պրոցեսը դիտելով որպես տարերային պրոցես, որի մեջ անգիտակցաբար ընտրվում են «մի ընդհանուր կանխորոշված ուղղության» համապատասխանող անհատական շեղումները, Սեպիրը այդ կանխորոշող ուղղությունը համարում է հենց լեզվի «կաղապարը». Լեզվի շարժումը ոչ թե արտաքին գործուներով

<sup>1</sup> E. Sapir, Sound Patterns in Language. „Language“, 1925. էջ 37—51:

<sup>2</sup> Հմմտ. Սեպիրի գրքի սուս. հրատարակության՝ Ս. Բելկիցկու առաջարանը:

<sup>3</sup> Հմմտ. Ս. Բելկիցկու առաջարանը և Ա. Սուխոտինի „Эдуард Сепир и его место в лингвистике“ հոդվածը. Թ. Սեպիր, Язык, 1984, էջ V—XX:

պայմանավորված պրոցես է, այլ ինքնաշարժում, լեզվին ներքնապես հատուկ տենդենցիների գործողություն։ Լեզվի «կաղապարը» Սեպիրի մոտ հանդես է գալիս որպես ինքնակա գոյություն ունեցող, լեզվի բնույթը, առանձնահատկությունները և շարժման ուղղությունը որոշող, փորձի մեջ տրված առանձին փաստերը միավորող կոնցեպտուալ կատեգորիա։ Լեզվի էությունը պրակտիկայում երբեք մաքուր ձևով չի իրականանում, այլ հանդես է գալիս միայն «կաղապարի» մեջ։ Այդ «կաղապարը» Սեպիրը զրկում է նյութական արժեքից, դիտում որպես ֆունկցիոնալ հարաբերությունների սիստեմ։ ցեղակից լեզուները կարող են հնչյունապես միանգամայն տարբեր լինել, բայց նրանց հնչյունական սիստեմների կաղապարները, այնուամենայնիվ, կհամընկնեն. այսպես, մի լեզվի Յ, Շ, Ո և Շ հնչյունները, բայց նրանց փոխհարաբերությունների սիստեմը կարող է համընկնել։ Լեզվի «կաղապարն», այսպիսով, Սեպիրը պատկերացնում է որպես անփոփոխ էություն, որ որոշում է, սակայն, փոփոխությունների բնույթն ու ուղղությունը։ Այն հանգամանքը, որ լեզուն և «մտքի կաղապարները» Սեպիրը համարում է սերտորեն միայնուաված՝ հետագայում նրան և նրա հետեւորդներին հիմք է տալիս ուսայական եղանակացությունների համար, տարբեր լեզուներով խոսող ժողովուրդների՝ տարբեր մտածողական կարողություն ունենալու մասին խօսելու համար։

Սեպիրը մեծ ուշադրություն է դարձնում տարբեր լեզուների մեջ ընդհանուր քերականական պրոցեսների (արտահայտության միջոցների) վրա՝ տարբերելով Յ տիպ՝ շարադասություն, բարդություն, մասնիկավորում, ներքին թեքում, կրկնության, շեշտի և ինտոնացիայի փունկցիոնալ փոփոխություններ։ Անցնելով այդ «պրոցեսների» արտահայտած քերականական իմաստների վերլուծությանը, քննադատելով լեզուների տրադիցիոն ձեւաբանական դասակարգումը (անշատական, կցական և թեքական տիպերի առանձնացումը) և նշելով լեզուների վերլուծական ու համադրական տիպերի առանձնացման պայմանականությունը՝ Սեպիրը տալիս է իր կոնցեպտուալիստական դասակարգումը։ Քերականական հասկացությունները նա դասակարգում է բատ նրանց ֆունկցիոնալ արժեքի և իր դասակարգման մեջ հիմք ընդունում դրանց առկայության ու բացակայության փաստը ևոր Նշելի է, որ Սեպիրի այս դասակարգումը մասսամբ էլ բացատրվում է նրա որոշ սկեպտիցիզմով՝ դեպի պատմական հայեցակետը։

Առաջ քաշելով լեզուների դասակարգման կոնցեպտուալիստական սկզբունքը՝ Սեպիրը տալիս է լեզուների բնութագրման 3 հայեցակետ՝ 1) իմաստների ի՞նչ տիպեր են արտահայտվում տվյալ լեզվում, 2) լեզվական ի՞նչ տեխնիկայով են դրանք արտահայտվում և 3) համադրության (դրա բացակայության դեպքում՝ վերլուծության) ի՞նչ աստիճան գոյություն ունի։ Առաջին հայեցակետով Սեպիրը տարբերում է իմաստների 4 տեսակ՝ ա) կոնկրետ (նյութական), բ) ածանցական (գերիվացիոն), գ) խառը-վերաբերական (խառը-ռելյացիոն)՝ հոգնակիություն, քերականական սեռ և դաս, դ) մաքուր-վերաբերական (մաքուր-ռելյացիոն)՝ հոլով, բայասեռ և այլն։ Երկրորդ հայեցակետով տարբերվում է լեզվական տեխնիկայի (քերականական արտահայտության միջոցների կամ «պրոցեսների») նույնպես 4 տեսակ՝ ա) մեկուսացում (իզոլյացիա), սպասարկութառերի գործածություն, շարադասություն, բ) կցում, գ) ձուլում (ֆուզիա) և դ) սիմվոլացում (սիմվոլիզացիա)՝ ներքին թեքում, շեշտ։ Երրորդ հայեցակետով տարբերվում է համադրության 3 տեսակ՝ ա) բազմահամադրականություն (պոլիսինթետիզմ), բ) համադրականություն (սինթետիզմ) և գ) վերլուծականություն (անալիտիզմ):

1920-ական թվականների վերջերին սկսվում է Սեպիրի լեզվաբանական գործունեության երկրորդ շրջանը, երբ մի կողմից՝ նրա լեզվափիլիսոփայական հայացքներն ավելի ռեակցիոն բնույթ են ստանում Օգդենի և Ռիչարդսի փիլիսոփայության ազդեցության տակ, մյուս կողմից՝ նա ենթարկվում է բիհկորիզմի ակնհայտ ազդեցությանը, որը նրան երբեմն հանգեցնում է ակնհայտ բիոլոգիզմի. վերջին դեպքում դեռ է խաղում նաև նրա համատեղ աշխատանքը Բլումֆիլդի հետ<sup>1</sup>: Իր «Լեզվաբանության դրությունը որպես գիտության» հոդվածում<sup>2</sup>, լեզվական նշան-սիմվոլների իր հայեցակետը միացնելով բիհկորիզմի հետ՝ Սեպիրը լեզվական երևույթները դիտում է որպես նշանային (լիմվոլիկ) վարմունքի առանձին ձևեր: Լեզվական նշանները Սեպիրի ըմբռնմամբ չեն տարբերվում այս կամ այն վարմունքն առաջ բերող զանազան ազդանշ-շաններից: Լեզուն Սեպիրը դիտում է լոկ որպես նշան-սիմվոլների ամենից ավելի բարդ կարգ: Եթե իր «Լեզու» գրքում Սեպիրը լեզվի

<sup>1</sup> *Смит. М. М. Гухман, Э. Сепир и этнографическая лингвистика*, ВЯ, 1954, № 1, 49–116.

<sup>2</sup> E. Sapir, The Status of Linguistics as a Science, „Language“, 1929, № 4.

և կուլտուրայի միջև պատճառական կապ չէր տեսնում, լեզուն սահմանում էր որպես այն, թե ինչպ ե՞ս է տվյալ հանրությունը մտածում, իսկ կուլտուրան՝ որպես այն, թե ի՞նչ է մտածում և անում, ապա այստեղ Սեպիրը գտնում է, որ լեզվի սիմվոլները արտահայտում են «կուլտուրայի կաղապարները». «Լեզուն,—գրում է նա, —ավելի ու ավելի արժեքավոր է դառնում յուրաքանչյուր կուլտուրայի գիտական հետազոտության ժամանակ այն իմաստով, որ յուրաքանչյուր քաղաքակրթության կուլտուրային կաղապարների ցանցը (network) ցուցչավորվում է (նև indexed) լեզվի մեջ, որ արտահայտում է այդ քաղաքակրթությունը»<sup>1</sup>:

Սեպիրը նշում է ոչ միայն «կուլտուրայի կաղապարների ցանցի» ազդեցությունը լեզվի վրա, այլև լեզվի ազդեցությունը կուլտուրայի վրա. ըստ նրա՝ «լեզուն շատ խիստ կերպով պայմանավորում է մեր խորհրդածությունները հասարակական պրոբլեմների մասին»<sup>2</sup>: Եթե առաջին դեպքում Սեպիրի հայացքները հանդես են գալիս որպես նեռհումբուդտականության տարատեսակ, ապա երկրորդ դեպքում համահունց են դառնում Օգդենի և Ռիչարդսի հայացքների ու հետագա ամերիկյան սեմանտիկների գաղափարների հետ, որոնք հասարակական շարիքները փնտրում են լեզվի մեջ: Ոչ պակաս շափով զգացվում է նաև Մառլիների ազդեցությունը՝ Օգդենի և Ռիչարդսի միջնորդությամբ: Լեզվի և կուլտուրայի կապի դրույթով էլ Սեպիրը որոշում է լեզվաբանության տեղը հասարակական գիտությունների մեջ: Նշելի է, որ Սեպիրը ևս չի լուծում Սոսյուրի մոտ նկատվող հակասությունը լեզվի հասարակական բնույթի վերաբերյալ դրույթի և լեզվի իմանենտության դրույթի միջև. ըստ Սեպիրի՝ «լեզվի կաղապարումը (rattegning) նշանակալից շափով ինքնուրույն է և կախված չէ ոչ-լեզվաբանական տիպի խաշաձևկող կաղապարներից»<sup>3</sup>: Ըստ Սեպիրի՝ յուրաքանչյուր լեզու ունի իր սեփական կառուցվածքային կաղապարը, որով նա տարբերվում է մյուսներից և մեծ շափով որոշում տվյալ ժողովրդի հասարակական ըմբռնումների բնույթը (ամեն լեզու ունի իր «իրական աշխարհը»). Լեզվի և կուլտուրայի կաղապարներն էլ Սեպիրը, բիհերիզմի դիրքերից ելնելով, վերջիվերջո պայմանավորում է տվյալ հասարակությունը կազմող անհատների

<sup>1</sup> E. Sapir. The Status of Linguistics as a Science, „Language“, 1929, էջ 209.

<sup>2</sup> Նույն տեղը:

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 212.

բիո-հոգեբանական վարմունքով։ Այս դրույթները հիմք են տալիս ռասայական եզրակացությունների համար, որ անում են և՛ Սեպի-ըր, և՛ նրա հետեւորդները (Ուորֆը և ուրիշները):

Վ. Շմիդտը և նրա «կուտուրական շրջանների» ուսմունքը.— 1926 թ. կարդինալ Վ. Շմիդտը հանդես է գալիս «Երկրի լեզվաընտանիքները և լեզվաշրջանները» գրքով<sup>1</sup>, որի մեջ քննադատության է ենթարկում լեզուների ծագումաբանական դասակարգման տրադիցիոն ուսմունքը և փորձում հիմնավորել այն դրույթը, թե ծագումաբանական դասակարգմանը չի կարելի առաջնություն տալ տիպոլոգիական դասակարգման հանդեպ։ Շմիդտն առանձնացնում է այսպես կոչված տիպոլոգիական շրջաններ՝ հիմք ընդունելով լեզուների հնչունական, ձևաբանական և շարահյուսական ընդհանուր առանձնահատկությունները։ Ամեն մի տիպոլոգիական շրջան, ըստ Վ. Շմիդտի, ներկայացնում է այնպիսի լեզվական տարրերի որոշակի մի ամբողջություն, ինչպիսիք են ձայնավորներն ու բաղաձայնները, վերջիններիս խուլ և ձայնեղ տեսակները (հնչունական ընդհանրություններ), թվի և սեռի ձևավորման բնույթը (ձևաբանական ընդհանրություններ), բառերի շարադասությունը, հատկապես հատկացուցիչն արտահայտող սեռականի դրույթյունը (շարահյուսական ընդհանրություններ):

Շմիդտը պատկանում է ազգագրագետների կուտուր-պատմական դպրոցին, որի ներկայացուցիչներից են նաև Գրյորները, Շմիդտ-Կոպպերսը, և որի օրգանն է եղել «Անթրոպոս» ժուռնալը։ Այս դպրոցը գալիս է դեռևս Հեռլանդից և Ռատցելից ու բնութագրովում է Հետեւյալ դրույթներով։ 1) Կուտուրական դիֆուզիաների (Կուտուրական հիմնարկների՝ ընդհանուր կենտրոններից տարածվելու) ուսմունքով։ 2) միգրացիաների և փոխառությունների համընդհանուր բնույթի ուսմունքով։ 3) Կոմպլեքսների (տարասեռ կուտուրական հիմնարկների կապվածության) ուսմունքով։ 4) փակ կուտուրական շրջանների տեսությամբ։ 5) առանձին կուտուրական (ոչ միայն նյութական, այլև հասարակական) հիմնարկների քարտեզագրման եղանակով<sup>2</sup>։ Այս սկզբունքները իր գրքում Շմիդտը փորձում է կիրառել լեզվի նկատմամբ։ Հենվելով Շմիդտ-Կոպպերսի

<sup>1</sup> W. Schmidt, Die Sprachfamilien und Sprachenkreise der Erde, Heidelberg, 1926.

<sup>2</sup> Հմմա. Լ. Յ. Շտերներ, Современная этнология, „Этнография“, 1926, 1:

վրա<sup>1</sup> Շմիդտը տարբերում է 4 տիպի կուլտուրական շրջան՝  
1) նախակուլտուրական՝ բույսերի հավաքման կուլտուրայով՝ առանց հողագործության և անասնապահության. 2) նախնական (առաջնային, պրիմիտիվ) կուլտուրական՝ անասնապահությամբ, հողագործությամբ, արվեստով, արհեստներով. 3) երկրորդային և երրորդային կուլտուրական՝ առաջին երկու կուլտուրական շրջանների տարրերով խառնված, ամանեղենի պատրաստմամբ, զուլհակությամբ, մետաղների մշակմամբ և գրությամբ. 4) նախապատմական կուլտուրական, որ առանձին կողմերով մերձենում է առաջին երեքին: Այս շրջանների մեջ էլ տարբերվում են ենթաշրջաններու փոքր շրջաններ՝ ըստ աշխարհագրական տարածման և այլ կարգի առանձնահատկությունների: Նշելի է, որ կուլտուրական շրջանները Շմիդտը բնութագրում է բազմազան գծերով՝ տընտեսական տիպով, ընտանիքի ձևերով (մատրիարխատ, պատրիարխատ և այլն), հավատալիքներով և այլն: Միաժամանակ որոշվում են կուլտուրական բուն կենտրոնների առանձնահատկությունները, միգրացիաների դերն ու կուլտուրական փոխազդեցությունները:

Շմիդտը համապատասխանաբար տարբերում է լեզվական շրջաններ, որոնք կապված են կուլտուրական շրջանների հետ և բնութագրվում են հնչյունական, ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունների որոշ կոմպլեքսով: Առանձնապես կարող է համարում Շմիդտը հետեւալ առանձնահատկությունները. 1) հնչյունական՝ «նորմալ» (ա, ի, Ա) և «աննորմալ» (պ, օ, Ա) ձայնավորների ֆունկցիոնալ տարբերությունները, ձայնեղ ու խուլ և պայթական ու շփական բաղաձայնների տարբերությունը, ձայնավորների, ձայնորդների ու բաղաձայնների դիրքը բառի սկզբում և վերջում. 2) ձևաբանական՝ անունների ու գերանունների թվի, դերանունների երկակի և հոգնակի ձևերի ինկլյուզիվ և էքսկլյուզիվ ձևերի, արական և իգական սեռի, շնչավորի և անշունչի, անձի և իրի տարբերությունները; Հաշվման սիստեմները. 3) շարահյուսական՝ հատկացուցի նախադաս և ետադաս գործածությունը, ստացական և անձնական գերանունների գործածությունը: Նկատի ունենալով լեզվի սիստեմային բնույթը՝ Շմիդտը փորձում է հատկացուցի նախադաս և ետադաս դիրքը կապել նաև վերջամասնիկավորման և նախամասնիկավորման, ուղիղ խնդրի՝ ստորոգյալի նկատմամբ գրաված դիրքի, անձնական դերանվան՝ ստորոգյալի մոտ դրվելու կամ շդրվելու և բայի բնույթի հետ:

<sup>1</sup> Schmidt-Koppers, Völker und Kulturen, Regensburg, 1924.

Շմիդտը փորձում է կուլտուրական շրջանները կապել ոչ միայն լեզվական կառուցվածքի բնույթի, այլև լեզվական տարրերակվածության և միավորվածության, լեզվական խառնվածության երեվույթների հետ, այսպես, ըստ նրա՝ երկրորդական և երրորդական կուլտուրական շրջանների լեզուները այլևս մանր լեզուների և բարբառների խմբեր չեն, այլ դրանց մեջ արդեն առկա են լեզուների և լեզվական ընտանիքների մերձակցության փաստերը. լեզվական ընտանիքները կազմվում են միավորման ու խառնուրդի ճանապարհով, ընդ որում պահպանվում են զարգացման նախորդ փուլի հետքերը:

Շմիդտի ուսմունքը զգալի շափով մոտենում է Մաոի տեսությանը. նա ևս լեզվական ընտանիքների կազմավորումը դիտում է որպես մերձակցության ու խառնման և ոչ թե նախալեզվի բաժանման պրոցես, հաշվի է առնում հարեթական լեզուների՝ հնդկրոպականի կազմավորման մեջ խաղացած դերի մասական դրույթը, լեզվի բոլոր կողմերը կապում տնտեսական ու կուլտուրական փոփոխությունների հետ և այն:

Բերենք մի օրինակ, թե ինչպես է Շմիդտը կապում կուլտուրանեսական և լեզվական երեւյթները: Ըստ նրա՝ նախակուլտուրական շրջանների (*Թասմանիայի, Ավստրալիայի մի մասի, պապուասների մի մասի, Հրո երկրի, Հնասիական, սամոյեդական, հոտենտոտա-բուշմենյան, Հնամերիկյան՝ ալգոնկինյան*) լեզուները ունեն հետեւյալ առանձնահատկությունները. 1) ունեն պարզ և նորմալ վոկալիզմ (ա, ե, ի, օ, ու). 2) բացակայում է ձայնեղ ու խուլ, պայթական ու շփական ձայնավորների ֆունկցիոնալ տարրերությունը. 3) բառասկզբի բաղաձայնները հանդիպում են և բառավերջում. 4) կա թվի հարուստ տարրերակում (եզակի, երկակի, եռակի, հոգնակի). 5) հաշվման սիստեմը երկուրդական է. 6) կան դերանունների ինկուպազիվ և էքսկլյուզիվ ձևեր. 7) սեռային դասային դասակարգումները բացակայում են. 8) հատկացուցիչը նախադաս է և համապատասխանաբար ուղիղ խնդիրը դրվում է բարից, անձնական դերանուն-ենթական՝ ստորոգյալից առաջ: Այս բոլորը, ըստ Շմիդտի, վկայում են հոգեկան ու մտավոր ոչ բավարար տարրերակվածության (*Հնչյունների շտարբերակվածությունը*), սեռի և տեսակի հասկացությունների բացակայության (*հատկացուցիչի նախադասությունը*), գույզգային ընտանիքի (*հաշվման երկուրդական սիստեմը*), էքզոգամ ամուսնության մասին *ինկուպազիվ և էքսկլյուզիվ դերանուններ*). շեն տարրերակվում

մարդիկ և կենդանիները, տղամարդիկ և կանայք. վերջիններիս հասարակական գոյության պայմանները շեն տարբերվում (բույսերի հավաքումը՝ առանց հողագործության և անասնապահության): Նախնական կուլտուրական շրջանի լեզուներում բարդանում է հաշվման սիստեմը, հանդես է գալիս շնչավորի և անշոնչի անձի և իրի, արականի և իգականի տարբերակում, փոխվում է հատկացուցչի տեղը. 'սրանք Շմիդտը փորձում է կապել հասարակական-տնտեսական և կուլտուրական փոփոխությունների հետ:

Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ Շմիդտի մոտ՝ 1) մեծ մասամբ արհեստականորեն են կապվում՝ լեզվական և կուլտուրական երեսությները. 2) լեզվական հատկանիշները առնվում են ոչ թե իրենց սիստեմային կապերի մեջ, այլ զուգորդվում են տարբեր կոմքինացիաներով՝ առանց լեզվական սիստեմների իրական բնույթի խոր հաշվառման. 3) պարզեցվում են և արհեստականորեն միացվում տարբեր լեզուների առանձնահատուկ գծերը:

Առանձնացնելով լեզվի տիպոլոգիական շրջաններ և դրանք կապելով՝ կուլտուրական շրջանների հետ՝ Շմիդտը գտնում է, որ լեզվի տիպոլոգիական ձևերի զարգացումը կապված է մտածողության ձևերի զարգացման հետ, ընդ որում մտածողության այդ ձևերն էլ պայմանավորված են մարդկային կուլտուրայի, նրա հասարակական-տնտեսական զարգացման տարբեր շրջանների բնույթով։ Տվյալ լեզվի տիպոլոգիական ամբողջության տարրերը, Շմիդտի ուսմունքի համաձայն, առաջանում են կուլտուրայի և հասարակական-տնտեսական զարգացման բնագավառում տեղի ունեցած տեղաշարժերի և մտածողության ձևերի համապատասխան փոփոխությունների հետ կապված։ Այսպես, արական և իգական սեռերի տարբերակումը Շմիդտը կապում է մայրիշխանական տնտեսության հետ, երբ կինը համդես է եկել որպես առաջին հոգագործը և դրանով իսկ կարևոր տնտեսական դեր կատարել. Հնչավոր և անշոնչ առարկաների տարբերակումը Շմիդտը համապատասխանաբար կապում է որսորդական և ձկնորսական տնտեսության հետ և այլն։ Սակայն հարցի մատերիալիստական լուծման այս փորձը Շմիդտի մոտ մնում է լոկ որպես փորձ. նախ՝ նա լեզվի և մտածողության կապը տնտեսական այս կամ այն տիպի հետ պատկերացնում է մեխանիկորեն ու տուրք տալիս որոշ վուլ գար սոցիոլոգիզմի. երկրորդ՝ հասարակության զարգացման օրի նաշափությունների ըմբռնման մեջ նա վերջիվերջո մնում է իդեալիզմի դիրքերում. մարդու կուլտուրական զարգացման հիմքում նա

ղնում է հոգեկան զարգացումը և մարդու տրամաբանական մտածողության այնպիսի ձևերը, ինչպիսիք են ընդհանուր հասկացությունները, դրական ու բացասական դատողություններն ու մտահանգումները, համարում է մարդկային հոգեկան ապրիորի, զգայական փորձով շրացատրվող կարողություն. երրորդ՝ մարդու մտածողության ու լեզվական կարողությունների զարգացման հարցում նա զերծ է հետեւողական պատմականությունից, անդունդ է տեսնում մարդու և կենդանու միջև. մարդու տրամաբանական մտածողության սաղմերը նա ոչ միայն չի տեսնում կենդանիների մոտ, այլ, ինչպես տեսանք, այդ մտածողության հատկությունները դիտում է որպես ապրիորի ընդունակության դրսերում<sup>1</sup>:

Ծմիդտի ուսմունքը որոշ առումով կապված է Մարի ստադիալականության տեսության հետ և զգալի ազդեցություն է թողել Պրագայի ստրուկտորալիստների «լեզվամիության» ուսմունքի ձևավորման վրա:

## 6. ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼԻԶՄ

### ա) ՇՎԵՅԳԱՐԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼԻԶՄ

Ընդհանուր տեղեկություններ.—Ֆունկցիոնալիզմ անունը գործածվում է իրարից մեծ շափով տարբերվող երկու ուղղության համար, որոնցից մեկը ձևավորվել է Շվեյցարիայում (Ժնևում), մյուսը՝ Գերմանիայում: Շվեյցարական ֆունկցիոնալիզմը հանդես է եկել սոսյուրականության բազայի վրա՝ նրա ուսմունքի հակասական կողմերը վերացնելու որոնումների մեջ: Գերմանական ֆունկցիոնալիզմը հանդես է եկել որպես երիտքերականության քննադատության արտահայտություններից մեկը, ընդ որում ֆունկցիայի գաղափարն ըմբռնվում է որպես բիոլոգիական ֆունկցիայի գաղափարի երկվորյակը: Շվեյցարական ֆունկցիոնալիստները առաջնությունը տալիս են սինխրոնիային, աշխատում պատմական հարցերը մեկնարանել՝ հիմք ընդունելով սինխրոնիան: Գերմանական ֆունկցիոնալիստները զբաղվում են պատմական հարցերով: Թեև երկու ուղղության մեկնակետն էլ ֆունկցիայի գաղափարն է, բայց այն հանդես է գալիս տարբեր ըմբռնմամբ: Եթե պարզեցնենք հարցը, ապա շվեյցարական ֆունկցիոնալիզմը կարելի է

<sup>1</sup> Հմմտ. Д. Введенский, Ф. де-Соссюр и его место в лингвистике, Ф. де-Соссюр-ի „Կորս общей лингвистики“ գրքում, М. 1933, էջ 9—10.

կոչել սինխրոնիստական-սոցիոլոգիական, գերմանականը՝ դիախրոնիստական-բիոլոգիական:

Ցունկցիոնալիզմը հանդես է եկել դեռևս Սոսյուրի աշակերտներ Շառլ Բալլիի և Ալբեր Սեշեի, հատկապես առաջինի մոտ: Բալլիի «Լեզուն և կյանքը» գիրքը ֆունկցիոնալիզմի առաջին արտահայտություններից մեկն է, իսկ նրա ուշ շրջանի գործերում, հատկապես «Ընդհանուր լեզվաբանություն և ֆրանսիական լեզվաբանություն» աշխատության մեջ այն դրսերվում է ամենայն ցցունությամբ: Սակայն շվեյցարական ֆունկցիոնալիզմի բուն ծրագրային փաստաթուղթը Բալլիի աշակերտ Անրի Ֆրեյի «Միաւների քերականությունն»<sup>1</sup>: Նկատի ունենալով Բալլիի և Սեշեի սերտ կապը Սոսյուրի հետ՝ մենք ավելի նպատակահարմար համարեցինք նրանց հայացքները քննել սոցիոլոգիզմի ուղղության հետ կապված: Կարելի է ասել, որ այս դեպքում սոցիոլոգիզմը խաշաձևվում է ֆունկցիոնալիզմի հետ, թեև շվեյցարական դպրոցի ներկայացուցիչների իմաննենտիզմը հիմք է տալիս ֆունկցիայի գաղափարի իմաննենտացման:

Շվեյցարական ֆունկցիոնալիստներն ընդունում են Սոսյուրի հիմնական դրույթները. նրանք ևս լեզուն դիտում են որպես նշանների սիստեմ, որ իր բնույթով հասարակական երևույթ է, հակադրում են սինխրոնիան ու դիխրոնիան՝ սինխրոնիայի ակնհայտ գերադասությամբ և այլն: Սակայն, ինչպես նշեցինք, նրանց կարծիքով՝ Սոսյուրի ուսմունքը գեռես պատասխան չի տալիս լեզվական փոփոխության պատճառների հարցին, չի բացահայտում այն գործոնները, որոնք որոշում են լեզվական շարժման ուղղությունը. սինխրոնիկ լեզվաբանությունը ընդհանրապես այդ հարցերով չի դրադվում, դիխրոնիկ լեզվաբանությունն էլ Սոսյուրի մոտ ավելի շուտ փոփոխությունները գրանցող դիսցիպլին է, քան դրանք բացատրող: Իրենց վրա վերցնելով այս խնդրի կատարումը՝ շվեյցարական ֆունկցիոնալիստները լեզվի փոփոխության պատճառները տեսնում են նման փոփոխության «պահանջների» կամ «կարիքների» (*besoins*) մեջ: Պահանջների ուսմունքը նպատակ ունի սինխրոնիկ երևույթների շարժումը, «լեզվի անընդհատ վերանորոգումը» բացատրել մնալով իր իսկ սինխրոնիայի սահմաններում, առանց դիմելու դիխրոնիկ-պատմական բացատրության: Ընդհանուր առմամբ շվեյցարական ֆունկցիոնալիստները խորացնում

<sup>1</sup> H. Frei. La grammaire des fautes. Introduction à la linguistique fonctionnelle. Paris, 1929.

Հն Սոսյուրի նահանջը պատմականությունից՝ լեզվի սինխրոնիկ տառամասիրությանը բացահայտ գերակշռություն տալով դիախրոնիկ ուսումնասիրության հանդեպ:

Նվեյցարական ֆունկցիոնալիստները ևս իրենց հետազոտության մեջ ենում են ֆունկցիայի գաղափարից, լեզվական երեւույթները քննում են ըստ դրանց ֆունկցիոնալ արժեքի, ըստ լեզվական սիստեմի մեջ դրանց կատարած ֆունկցիայի, ըստ դրանց արտահայտչական արժեքի, ըստ ֆունկցիայի նմանության ու մերձավորության (համարժեքության), ըստ ֆունկցիոնալ նպատակահարմարության: Ամենատարբեր բնույթի լեզվական երեւույթները նշանք դնում են միևնույն մակարդակի վրա՝ նկատի ունենալով ֆունկցիոնալ ընդհանրությունը և բավարար շափով հաշվի շառներով դրանց միջև եղած տարբերությունները:

Անըի Ֆրեյ.— Որպես ֆունկցիոնալ լեզվաբանության ներածություն նախատեսված իր վերոհիշյալ աշխատության մեջ Ֆրեյը լեզվական փոփոխություններն ու փոխանցումները փորձում է բացարել ամենատարբեր բնույթի «կարիքներով» կամ «պահանջներով» (besoins): «Ֆունկցիոնալ լեզվաբանության» նպատակն է համարվում այնպիսի «պահանջների» բացահայտումը, ինչպիսիք են «ասիմիլացիայի պահանջը» (այստեղ է քննվում և անալոգիայի երևույթը), «տարբերակման (պարզության—clarité) պահանջը», «համառոտության պահանջը», «անփոխականության (invariabililité) պահանջը» և «արտահայտչականության պահանջը»: Բայց Ֆրեյի՝ այս «պահանջները» փոփոխվում են լեզվից լեզու, դասակարգից դասակարգ և ժամանակաշրջանից ժամանակաշրջան՝ կապված տվյալ լեզուն գործածող կոլեկտիվի հասարակական վիճակի հետ. տվյալ լեզվով խոսողները, տվյալ դասակարգի ներկայացուցիչները, տվյալ ժամանակաշրջանը առաջադրում են իրենց «պահանջները», որոնք վերջին հաշվով պայմանավորում են լեզվական փոփոխությունների ընդհանուր ուղղությունը. հասարակության ազդեցությունն արտահայտվում է «պահանջների» դոզավորումը (dosage) որոշելու մեջ:

Ֆրեյը ֆունկցիան հակադրում է նորմային և, հետեւաբար, «ֆունկցիոնալ լեզվաբանությունը»՝ նորմատիվին: Դյուրկհեյմի և Սոսյուրի հայեցակետը համարելով նորմատիվ՝ Ֆրեյը ֆունկցիոնալիստական մոտեցման օրինակներ է տեսնում սկանդինավյան մի շարք մտածողների մոտ՝ Տեգներ, Նորեեն, Վերզիններս «Ճիշտ» են համարում ոչ թե նորմային համապատասխանողը, այլ հեշտ

արտասանվողը և հեշտ հասկացվողը, այսինքն՝ լեզվի հաղորդակցական ֆունկցիայի կատարմանը, հաղորդակցման «պահանջներին» ամենից ավելի համապատասխանողը: Ցուրացնելով այս հայեցակետը և զարգացնելով այն՝ Ֆրեյը լեզվի մեջ տեղ գտնող սխալներն ու շեղումները (նորմայի դեմ կատարվող մեղանշումները) համարում է հենց հաղորդակցման «պահանջներից» բխող երևույթները. այստեղից էլ նրա գրքի «Սխալների քերականություն» անվանումը:

Եթե «Փունկցիոնալ լեզվաբանությունը» մի կողմից՝ հակադրվում է նորմատիվին, ապա մյուս կողմից՝ այն հակադրվում է պատմականին: Պատմական լեզվաբանությունը, ըստ Ֆրեյի, բավարարվում է փոփոխությունների փաստագրումով, մինչդեռ «Փունկցիոնալ լեզվաբանությունը» բացատրում է փոփոխությունների պատճառները՝ հիմք ունենալով ֆունկցիաները (=«պահանջները»). Վերջիններս Ֆրեյը կոչում է «լեզվի կոնստանտներ» (les constantes du langage), լեզվի հաստատուն մեծություններ: Սրանով էլ, սակայն, Ֆրեյը փորձում է հաղթահարել ստատիկ նկարագրության միակողմանիությունը:

### Բ) Գերմանական ֆունկցիոնալիզմ

Ընդհանուր տեղեկություններ.—Գերմանական ֆունկցիոնալիզմը որպես ձևավորված ուղղություն հանդես է եկել 1920-ական թվականներին: Նրա առաջին ցայտուն արտահայտությունը Վ. Հոռնի «Լեզվական մարմին և լեզվական ֆունկցիա» գիրքն<sup>1</sup> է: Սակայն լեզվական փոփոխությունների ֆունկցիոնալիստական մեկնաբանության փորձեր տեղ են գտել և նախորդ լեզվաբանների, այդ թվում նաև երիտքերականների աշխատություններում: Ինքը Հոռնը հնչույնական փոփոխությունների, բառերի քերականական վերջավորությունների անկման ու թուլացման փաստերի ֆունկցիոնալիստական բացատրության օրինակներ է բերում Օ. Բեհագելի, Վ. Մեյեր-Լյուգեկեի, Գ. Ն. Հացդիակիսի և նույնիսկ Վ. Շերերի ու Գ. ֆոն գեր Գաբելենցի աշխատություններից: Ֆունկցիոնալիստական մեկնաբանության տարրեր Հոռնը տեսնում է կցականության և աղապտացիայի տեսությունների, այլև լեզվական կրճատումների բացատրության փորձերի մեջ: Ընդհանուր առմամբ Հոռնը բազմաթիվ այլ անձերի է նշում, որոնք այս կամ այն ձևի վերացումը կա-

<sup>1</sup> W. Horn. Sprachkörper und Sprachfunktion, Berlin, 1921.

պում են այդ ձեի իմաստի կորստի, մի ձեի ֆունկցիայի՝ մի ուրիշին անցնելու, նախորդ տարբերակումը պահպանելու անհրաժեշտ վիճելու հետ:

Ֆունկցիոնալիստներն իրենց գլխավոր սլաքն ուղղում են երիտք բերականների էմպիրիզմի դեմ՝ առաջ քաշելով լեզվական փաստերից արվող տեսական ընդհանրացումների ու եզրակացությունների կարևորության հարցը: Եթե երիտքերականները տարվում էին միմիայն փաստերով, ուշադրությունը կենտրոնացնում հնչյունական օրենքների հայտնաբերման վրա, նկատի առնում միայն այն, ինչ բացատրվում է հնչյունական օրենքի և անալոգիայի սկզբունքներով, ապա ֆունկցիոնալիստները նպատակ են դնում բացատրել լեզվական փոփոխությունների հիմքերը, ցույց տալով այս կամ այն երևույթի երևան գալու կամ անհետանալու պատճառները: Ֆունկցիոնալիստների կարծիքով՝ հնչյունական օրենքներն ինքնին ոչ միայն չեն բացատրում լեզվական փաստերը, այլև հենց իրենք կարիք են զգում բացատրության: Լեզվական պրոցեսի և լեզվական փոփոխությունների հիմքերը ֆունկցիոնալիստները որոնում են լեզվական երևույթների ֆունկցիոնալ նպատակահարմարության, լեզվի հաղորդակցական ֆունկցիայի առաջադրած պահանջներին դրանց ո՛ր շափով համապատասխաննելու մեջ: Սակայն միավորվելով լեզվի ֆունկցիոնալ ըմբռնման բազայի վրա՝ այս ուղղության ներկայացուցիչները հանդես են բերում զգալի տարբերություններ առանձին հարցերի մեկնարանության մեջ: Ֆունկցիոնալիզմի որոշ տարատեսակները մոտենում են ստրուկտուրալիզմին՝ մինչև նրանց հետ ձուլվելու աստիճան: Նշելի է, որ մեկնակետային ֆունկցիա բառը նրանց մոտ ըմբռնվում է երկու կերպ՝ որպես լեզվի՝ տվյալ հասարակական կոլեկտիվում ունեցած ֆունկցիա և որպես լեզվական նշանների՝ տվյալ լեզվասիստեմում ունեցած ֆունկցիա:

Եթե երիտքերականների հետազոտության գլխավոր բնագավառը հնչյունաբանությունն էր, ապա գերմանական ֆունկցիոնալիստների ուշադրության կենտրոնում ընկած են բերականության հարցերը: Երիտքերականները բերականական փոփոխությունները հակված են բացահայտելու հարկադիր հնչյունական գործոններով. ֆունկցիոնալիստները, ընդհակառակը, հնչյունական փոփոխությունների պատճառները փորձում են բացատրել հնչյունների բերականական ֆունկցիայով: Ըստ նրանց՝ յուրաքանչյուր բերականական կատեգորիա, որ «լեզվական մարմնի» մեջ այս կամ այն որոշակի ֆունկ-

ցիայի կրողն է, արտաքնապես արտահայտվում է հնչյունով կամ հնչյունակոմպլեքսով. քերականական ֆունկցիայի կորուսար ավելորդ է դարձնում այն արտահայտող հնչյունի կամ հնչյունակոմպլեքսի առկայությունը, և սա ավելի կամ պակաս արագությամբ կորչում է<sup>1</sup>: Գերմանական ֆունկցիոնալիստների տեսության մեջ կարեր է մի քանի մոմենտ: 1) Նրանք լեզուն դիտում են որպես մի միասնական ամբողջություն, հանգում են լեզվի սիստեմայնության գաղափարին. ճիշտ է, Հոռնը և մյուսները՝ լեզվի այս սիստեմային ամբողջականությունը համեմատում են օրգանական մարմնի ներքին ամբողջականության հետ, անալոգիա են անցկացնում օրգանական մարմինների և «լեզվական մարմինների» միջև, լեզվաբանության կողմից լեզվի պատմության պրոցեսի բացատրության եղանակները նույնացնում են ֆիզիկոգիայի մեջ հայտնի գաղափարների հետ, բայց և այնպես բոլոր դեպքերում ելնում են լեզվի սիստեմայնության գաղափարից. այս կապակցությամբ նշելի է, որ նրանք բառը կոնկրետ ֆունկցիավորման պրոցեսում առնում են նախադասության ամբողջության մեջ. Ֆունկցիայի գաղափարը նրանք կապում են նախադասության որպես ամբողջության մեջ այս կամ այն մասի իմաստային լիարժեքության հետ, ելնում են շարահյուական կապակցության առաջնությունից: Այս նույն ամբողջականության ու սիստեմայնության գաղափարն է, որ Հոռնին հանգեցնում է «ակցենտի» կարենության մատնանշմանը որպես բառը միավորող ու ամբողջականացնող գործոնի: 2) Ֆունկցիոնալիստները փորձում են կամուրջ գտնել իմաստի և հնչյունական ձևի, լեզվական միավորների ներքին և արտաքին կողմերի միջև. Փունկցիան նրանց համար ոչ այլ ինչ է, եթե ոչ «բառամարմնի և իմաստի հարաբերություն»<sup>2</sup>. Սրանով իսկ հնչյունական կողմի՝ քերականական և իմաստային կողմից անկախ քննելուն նրանք հակադրում են դրանց կապակցված քննությունը: 3) Ֆունկցիոնալիստների ուշադրության կենտրոնում պատմական հետազոտության հարցերն են, ընդ որում եթե ֆունկցիայի գաղափարը ստրուկ-

<sup>1</sup> Նման բացատրության փորձ արգեն առկա է Պոտերնյայի մոտ, որը, օրինակ, գրում է. «Բանի որ այդ հնչյունը մակրայական դերբայի մեջ արգեն իմաստ չունի, ապա նրա պահպանումը միայն առանց կարիքի կզանդակեցներ խոսքի և մտքի ընթացքը». Из записок по русской грамматике, 1887, № 57. հմտ. Э. А. Макаев, Понятие системы языка, УЗ I МГПИИЯз, IX, № 18-ի ծան..

<sup>2</sup> W. Horn. Laut und Leben. I. 1954, № 56.

տուրալիստների մոտ հիմք է տալիս սինխրոնիկ քննությանը առաջնություն տալու համար (ֆունկցիան լեզվի սինխրոնիկ սիստեմաւմ), ապա գերմանական ֆունկցիոնալիստները ֆունկցիայի գաղափարը օգտագործում են պատմական փոփոխությունների պատճառների բացատրության նպատակով։ Սրանով իսկ, սակայն, լեզուն նրանց համար դառնում է ներփակ ամբողջություն, որտեղ փոփոխությունները պայմանավորված են լեզվի տարրեր կողմերի փոխհարաբերությամբ։ 4) Ֆունկցիոնալիստների պահանջի կենտրոնը լեզվաբանական մեթոդի բարելավումն է, մեթոդական կողմը։ լեզվի բնույթի հարցը ֆունկցիոնալիստների համար երկրորդական հարց է։ 5) Ֆունկցիոնալիստները որոշ առումով ֆետիշացնում են ֆունկցիայի հասկացությունը և քննում ինքնանպատակորեն, բացատրում ինքն իրենով։ 6) Ֆունկցիոնալիստների համար հնչյունաբանությունը դադարում է ինքնուրույն բնագավառ լինելուց։ առաջին պլանի վրա են քաշվում շարահյուսությունն ու իմաստաբանությունը։

Սակայն առաջ քաշելով ֆունկցիոնալ նպատակահարմարության դրույթը՝ ֆունկցիոնալիստները, այնուամենայնիվ, բավարար շափով չեն կարողանում բացատրել, թե ինչո՞ւ այս կամ այն փոփոխությունը մի լեզվում նպատակահարմար է, մյուսում՝ ոչ։ Զբաղվելով միայն այս կամ այն լեզվի ներքին ֆունկցիոնալ նպատակահարմարության զարգացման հարցերով՝ գերմանական ֆունկցիոնալիստները բավարար շափով չեն գուգադրում առանձին լեզուների փաստերը։ Կարելի է նշել նաև, որ նրանք մեծ ուշադրություն հատկացնելով աննպատակահարմար լեզվական միջոցների հեռացման հարցին՝ բավարար շափով չեն զբաղվում դրանց փոխարինող միջոցների ծագման պատճառներով։ բացի ֆունկցիոնալ նպատակահարմարությունից՝ որևէ այլ գործոն նրանք չեն տեսնում։ Սա բխում է ֆունկցիայի գաղափարի ինքնապարփակ քննությունից։

Գերմանական ֆունկցիոնալիստները մեծ աշխատանք են կատարել առանձին լեզուների ուսումնասիրության բնագավառում, ընդ որում նրանք զուգորդում են մի կողմից՝ փաստերի բազմակողմանի վերլուծությունը տեսական հիմնավորման ու ընդհանրացումների հետ, մյուս կողմից՝ լեզվի պատմական քննությունը՝

<sup>1</sup> Հմմա. Т. А. Дегтерева, Краткий обзор лингвистических учений (в XIX—XX веках в Европе), „Проблемы изучения языка”, М., 1957, էջ 32.

լեզվի սիստեմային բնույթի առանձնահատկությունների հաշվառման հետ:

Օ. Թեհագելը, որին սովորաբար համարում են երիտքերականների սերնդի ներկայացուցիչ և որը, սակայն, հնչյունական փոփոխությունների մեկնաբանության մեջ տարերայնորեն, թե գիտակցաբար դիմում է ֆունկցիոնալիստական սկզբունքին, իր «Գերմաներեն լեզվի պատմության» մեջ հատուկ տեղ է նվիրում այն դեպքերի քըննությանը, որտեղ «ֆունկցիայից զրկված կից վանկերում (in funktionslos gewordenen Nebensilben) վերջավորության ձայնավորներն ընկնում են»<sup>1</sup>: Թեհագելը լեզվական փոփոխությունների ֆունկցիոնալիստական մեկնաբանությունը կիրառել է շատ վաղ և Հոռնից անկախ: Հոռնը որպես օրինակ բերում է նրա «Կորուսը և փոխարինումը գերմաներենում» հոդվածը<sup>2</sup>:

Մ. Լեներտը Հոռնի սկզբունքները նույնպես փորձում է կիրառել անգլերենի պատմության մի այնպիսի շրջանի նկատմամբ, երբ տեղի է ունենում լեզվի քերականական վերջավորությունների թուլացման ու անկման պրոցես<sup>3</sup>. Նա իրեն նպատակ է դնում ոչ թե պարզապես արձանագրել եղած փաստերը, այլ ցույց տալ փոփոխության պատճառները՝ հենվելով Հոռնի տեսակետի վրա. այս պատճառները նա տեսնում է նախադասության՝ որպես ամբողջության մեջ, քերականական ձևերի ֆունկցիոնալ լիարժեքության աստիճանի մեջ:

Կարլ Մայերը ֆունկցիոնալ լեզվաբանության դիրքերից քննության է ենթարկել բուլղարերենի վերլուծական ձևերի զարգացման պրոցեսը: Իր «Հոլովման անկումը բուլղարերենում» աշխատության մեջ<sup>4</sup> նա ցույց է տալիս, թե ինչպես են հոլովների ֆունկցիան իրենց վրա վերցնում նախդիրները, թեև լավ չի բացատրում, թե նախ՝ ինչո՞ւ է այդ բանը սլավոնական լեզուներից միայն բուլղարերենում լրիվ կերպով տեղի ունենում և երկրորդ՝ ինչպե՞ս է տեղի ունենում հոլովներին փոխարինելու եկող նախդիրների ձևավորման պրոցեսը:

<sup>1</sup> O. Behaghel, Geschichte der deutschen Sprache, V հր., 1928, էջ 339.

<sup>2</sup> O. Behaghel, Verlust und Ersatz in der deutschen Sprache, WM, 61, 1916—1917.

<sup>3</sup> M. Lehner. Sprachform und Sprachfunktion in „Orrmulum“ (սմ 1200). Die Deklination, Berlin, 1933.

<sup>4</sup> K. H. Mayer. Der Untergang der Deklination im Bulgarischen, 1920.

Վ. Հառն.—Գերմանական ֆունկցիոնալիզմի գլխավոր տեսաբանը, ինչպես նշել ենք, անգլերենագետ Վ. Հոռնն է, որն իր «Լեզվական մարմին և լեզվական ֆունկցիա» գրքում զարգացրել է ֆունկցիոնալ լեզվաբանության հիմնական դրույթները։ Այս դրույթները որոշ առումով կապված են դեռևս 1906 թ. Վակերնագելի առաջ քաշած՝ բառիմաստի և բառաձեկի («նշյունական ձեկի» ծավալի փոխհարաբերության դրույթի) և ծապերսենի դավանած արժեքի սկզբունքի հետ։ Հոռնի հայացքները ազդել են կոպենհագենյան ստրուկտորայիզմի վաղ ներկայացուցիչներից մեկի՝ Վ. Բրյոնդալի հայացքների ձևավորման վրա։

Հակադրվելով երիտքերականներին այն բանում, որ նրանք ֆետիշացնում են հնշյունական օրենքը՝ Հոռնը առաջ է քաշում հնշյունական օրենքի բնույթի բացատրության հարցը։ Նրա կարծիքով՝ հնշյունական օրենքը որոշվում է այն ֆունկցիայով, որ փոփոխվող հնշյունը կամ հնշյունախումբը կատարում է «լեզվական մարմնի» մեջ։ Հնշյունական օրենքը ինքնին չի բացատրում լեզվական պրոցեսի էությունը. այլ հանդիսանում է լեզվական ֆունկցիայի արտահայտությունը։

Եթե նախորդ լեզվաբանները փորձում էին այս կամ այն քերականական ձեկի կորուստը կապել իմաստային ֆունկցիայի կորստի հետ, ապա Հոռնը հնարավոր է համարում ընդարձակել ֆունկցիոնալ մեկնաբանության բնագավառը, քերականական ձեվերի պահպանումը ևս բացատրել նրանց ֆունկցիոնալ արժեքով, ամեն ինչի բացատրության հիմքում դնել ֆունկցիայի գաղափարը։ «Եթե ճիշտ է, որ խոսքի՝ ֆունկցիայից զուրկ մասերն անհետանում են՝ հակառակ «հնշյունական օրենքների», — գրում է Հոռնը, — ապա անշուշտ կարելի է նաև մտածել (dann is es auch sehr wohl denkbar), որ ֆունկցիայով կարելոր բաղադրամասները պահպան են՝ ի հեճուկս «հնշյունական օրենքների»։ Ֆունկցիան է իշխում հնշյունական օրենքին»<sup>2</sup>։

Հոռնը պահանջում է քերականական թեքույթների պատմական փոփոխությունների բննությունը կատարել ոչ թե մեկուսացված, ինչպես սովորաբար անում են, այլ տվյալ թեքման ձեերի շրջապատի և ուղեկցող ձեերի հետ կապված։ Քննության մեկնակետը ոչ թե առանձին ձեկ պետք է լինի, այլ այն կապակցությունը, որի

<sup>1</sup> M. Wackernagel, Wortumfang und Wortform, NGAW, 1906.

<sup>2</sup> W. Hören, Sprachkörper und Sprachfunktion, II հր., 1923, էջ 131։

մեջ հանդես է գալիս տվյալ ձևը: «Այստեղ նշված մեթոդը,—գրում է նա,—հետազոտում է թեքման ձևերը ոչ թե մեկուսացված, այլ քննում է այն կենսական ընդհանրության մեջ (Lebensgemeinschaft), որի մեջ նրանք աճել են (erwachsen)»<sup>1</sup>: Շարահյուսական իմաստը Հոռնի համար դառնում է վճռական գործոնը:

«Լեզվական մարմնի» զարգացումը Հոռնը լիակատար կախման մեջ է դնում նրա ներքին (innewöhnenend) ֆունկցիայից: Հստ նրա՝ լեզվի գիտական քննությունը անհրաժեշտաբար պետք է տարրերի լեզվի երկու կարգի ֆունկցիա՝ նպատակ և արտահայտություն: Խոսքի տարրերը մասերը տարրեր ֆունկցիոնալ արժեք ու կարևորություն ունեն. այդ էլ որոշում է նրանց բախտը: Հոռնը սահմանում է լեզվական ձևերի ֆունկցիոնալ կախումների հետևյալ 5 տիպերը. 1) եթե որևէ բառի կամ բառակապակցության մասերը ֆունկցիայից զուրկ են, ապա կարող են թուլանալ կամ լիովին անհետանալ. 2) եթե որևէ բառի կամ բառակապակցության մասերը ֆունկցիայով աղքատ են, ապա կարող են պահանջել, նույնիսկ եթե մնացյալ (im übrigen) հավասար պայմաններում նրանց անհետացումն սպասելի է. 4) եթե մի որևէ լեզվական մարմին շատ թույլ է իր կողմից կրած ֆունկցիայի համար, ապա կարող է հարմարվել դրան իր մարմնի ուժեղացմամբ (բառերի կցմամբ կամ տվյալ բառի ընդարձակմամբ՝ ձայնավորներով, թե բաղաձայններով). 5) եթե լեզվական մարմինը ֆունկցիաներով գերծանրաբեն վում է, ապա կարող է կործանվել: Այս բոլոր եզրակացությունները Հոռնը անալոգիական է համարում օրգանական մարմինների մասին ֆիզիոլոգիայի տվյած տվյալների հետ և գտնում է, որ «օրգանական բնության և լեզվական կյանքի ըննության եղանակի միջև զուգահեռականություն կա»<sup>2</sup>: Նա մեծ շափով տուրք է տալիս բիոլոգիզմին, խոսում «լեզվական մարմնի» մասին և այդ մարմնի զարգացումն ու մահացումը կապում նրա կատարած «լեզվական ֆունկցիաների» հետ: Հոռնը փաստորեն վերականգնում է Շբայխերի կոնցեպցիան, ըստ որի բարը ներկայացնում է կենդանի օրգանական միավոր: Ինչպես տեսանք, ըստ Հոռնի՝ «լեզվական մարմնի» հնչյունական կողմը պայմանավորված է այդ մարմնի ֆունկցիալով. մարմնի, նրա մա-

1 W. H o g n , հիշ. աշխ., էջ 123.

2 Նույն տեղը, էջ 138.

սերի ֆունկցիայի թուլացումը կարող է հանգեցնել դրանց թուլացմանն ու վերացմանը, ֆունկցիայի կարևորությունը՝ ուժեղացմանը:

Հոռնի տեսակետը խստորեն քննադատվել է լուկիկ (Լոյկ) կողմից<sup>1</sup>: Լեզվի մեջ Հոռնը ամեն ինչ ենթարկում է ֆունկցիային, որոշում ու բացատրում նրանով: Լեզվի զարգացման պրոցեսը նաքնում է որպես ֆունկցիոնալ նպատակահարմարության աճման պրոցես. լեզվի զարգացումն ընթանում է այն ուղղությամբ, որպեսզի որքան հնարավոր է ավելի ու ավելի լավ կատարվի լեզվական ֆունկցիան: Այդ պատճառով էլ լեզվի մեջ մնում է այն, ինչ ավելի լավ է համապատասխանում այդ ֆունկցիային, անօգուտը դեն է նետվում, թիշ տարածվածը, բայց օգտակարը ավելի լայն տարածում է ստանում: Լեզվի զարգացման ուղղությունը որոշվում է որպես նրա այնպիսի հատկությունների ձևավորման պրոցես, որոնք նպաստում են իմաստի ավելի լավ արտահայտմանը, ճշգրտությանն ու արտահայտչականությանը:

Հոռնը և գերմանական մյուս ֆունկցիոնալիստները դեռևս դգալի ուշադրություն են հատկացնում լեզվի պատմական քննության հարցերին՝ ֆունկցիայի գաղափարի միջոցով փորձելով կապ հաստատել լեզվի ստատիկ և դինամիկ (սինխրոնիկ ու դիախրոնիկ) ասպեկտների միջև: Լեզվի պատմական քննությունը պետք է նպատակ ունենա բացահայտել հենց ֆունկցիոնալ նպատակահարմարության պատմական զարգացման պրոցեսը: Այս դեպքում ոչ թե պետք է մնալ փաստերի մակարդակին, ինչպես անում են երիտքերականները, այլ թափանցել լեզվական երևույթների էության մեջ, բացահայտել հաղորդակցության պրոցեսի հետ կապված լեզվական ֆունկցիաները և ցույց տալ, թե ինչպես են դրանք ձևավորում ստանում, կապվում այս կամ այն լեզվական ձևի հետ: Այս քննությունը Հոռնը պահանջում է կատարել երևույթների փոխկապակցված (սիստեմային)՝ ուսումնասիրությամբ: Փաստերի տրոհված, առանձնակի քննությունը շի կարող ցույց տալ լեզվի ներսում կատարվող փոփոխությունների բնույթը: Հարկավոր է փաստերը համեմատել իրար հետ, կիրառել փոխազդեցությունների բացահայտման մեթոդը: Միայն այդպիսի քննության դեպքում կարելի է պարզել, թե ինչպես է այս կամ այն լեզվական միջոցը այս կամ այն ֆունկցիան կատարելուց անցնում մի այլ ֆունկցիայի կատարման: Յուրաքանչյուր լեզվական փաստ, յուրաքան-

<sup>1</sup> ES, LVIII, 1924.

չուր երևույթ պետք է արժեքավորել այն ֆունկցիայով, որ նա կատարում է լեզվական սիստեմի մեջ:

Իր «լեզվի ուսումնասկրության նոր ուղիներ» գրքում<sup>1</sup> Հոռնը, հենվելով իր ընդհանուր սկզբունքների վրա, փորձում է դրանք պատմական հետազոտության հիմք դարձնել, հնչյունական փոփոխությունների պատճառները բացատրել նրանց ֆունկցիայով. այսպես, ըստ նրա, հին անգլ. bindu «կապում եմ» ձևի դիմային -Ա վերջավորությունը կարող էր ընկնել միայն այն բանից հետո, երբ առաջացել էր ու bindu «ես կապում եմ» զուգորդումը, և ս-ի ֆունկցիան կարող էր իր վրա վերցնել ու «ես» դերանունը. այսպիսով, Հոռնը գտնում է, որ հնչյունաբանությունը սերտորեն կապված է ձևաբանության, սա էլ շարահյուսության հետ: Միաժամանակ, այս աշխատության մեջ հենվելով փորձառական հնչյունաբանության վրա, Հոռնը ցույց է տալիս, որ ձայնավորի որակական երանգավորումը կախված է տոնի շարժումից, սա էլ՝ հուզից (աֆեկտից): Հուզմունքից կախված արտահայտչական էներգիան դառնում է ընդհանրապես փոփոխությունների ազդակ, մինչդեռ նպատակահարմար գործունեությունը, ընդհակառակն, փոփոխությունները միասնականացնում է: Հնչյունական փոփոխությունները բարբառներում ավելի արագ են տարածվում, քան գրական լեզվում. անգերենի պատմության մեջ էլ մեծ փոփոխություններ եղել են քաղաքական-հասարակական մեծ տեղաշարժերի շրջանում, երբ գրական լեզվից ավելի քիչ են օգտվել: Ընդհանուր առմամբ Հոռնը դնում է լեզուն և կյանքը իրենց ամբողջության մեջ քննելու հարցը<sup>2</sup>:

Այս տեսակետը անգերենի պատմության կոնկրետ փաստական ընդարձակ նյութի վրա լուսաբանելու փորձ է կատարված Հոռնի հետմահու հրատարակված «Հնչյուն և կյանք» աշխատության մեջ<sup>3</sup>, որը նրա գործունեության յուրատեսակ ամփոփումն է: Հոռնն ընդհանուր առմամբ աշխատում է այժմյան կենդանի լեզվի վրա կատարված դիտողություններն ու եզրակացությունները կիրառել պատմական զարգացման նկատմամբ, մանավանդ որ ժամանակակից կենդանի լեզուն կարելի է ենթարկել մանրակրկիտ հետազոտության: Այս վերջին գրքում Հոռնը բարիմաստի դերի և

<sup>1</sup> V. Horn, Neue Wege der Sprachforschung, 1939.

<sup>2</sup> Հմա. В. Пизани, Общее и индоевропейское языкоznание, համանուն գրքում, М., 1956, էջ 124.

<sup>3</sup> W. Horn, Laut und Leben, bearbeitet und herausgegeben von Martin Lehnert, I-II, Berlin, 1954 (Հոռնը մեռել է 1952 թ.).

սրա հետ կապված հնչյունական ֆունկցիայի հետ միասին լեզվական հնչյունական փոփոխությունների մեջ կարևոր տեղ է տալիս «ակցենտին», այն է՝ բարձրության և ուժի բնույթին. ««Ակցենտը»,— գրում է Հոռնը, — մեզ բանալի է տալիս հնչյունական փոփոխությունը հասկանալու համար»<sup>1</sup>: Սրանով Հոռնը մոտենում է Ֆուլերի ուսմունքին՝ «ակցենտի»՝ լեզվի «ոգին» լինելու վերաբերյալ: Այսպիսով, Հոռնն ընդունում է բառի հնչյունական փոփոխության 2 կարևոր գործոն՝ ակցենտ և իմաստային ֆունկցիա: «Որևէ բառի հնչյունական կերպավորումը (Lautgestaltung) կախված է ոչ միայն «ակցենտից», այն է՝ տոնի բարձրությունից և արտասանության ուժից, այլև իմաստից, ավելի ճիշտ ասած՝ այն բանից, թե բառի կամ բառակապակցության (Wortverbindung) մասերը իմաստով լցված են թե ոչ: Առանձին ուշադրություն են պահանջում բառի այն մասերը, որոնք որևէ ֆունկցիա են ընդգծում, այսինքն՝ ծառայում են որևէ շարահյուսական հարաբերության իմաստի արտահայտությանը: Բառի այն մասերը, որոնք ֆունկցիայով աղքատ են, կարող են հնչյունապես թույնալ: Բառի այն մասերը, որոնք ֆունկցիայով աղքատ են, կարող են հնչյունապես թույնալ կամ անհետանալ: Եվ որպես դրա հակապատկեր (Gegenstück) բառի ֆունկցիայով կարել մասերը կարող են ուժի մեջ մնալ<sup>2</sup>:

Այս աշխատության մեջ Հոռնը ակնհայտորեն կրել է Սոսյուրի, գերմանական նեոհումբուլդտականների և Բյուկերի լեզվական ֆունկցիաների տեսության ազդեցությունը: Զարգացնելով իր վաղ գրքի միտքը՝ Հոռնը լեզվի պատմությունը պատկերացնում է որպես լեզվական նպատակի և արտահայտչական գործունեության (իմա՝ հաղորդակցման և արտահայտչական ֆունկցիաների) պայքարը: Երկրորդը ուսուցչին և փոփոխող սկզբունք է, առաջինը՝ ընտրող, հարթող, կարգավորող: Հաղորդակցումը պահանջում է պարզություն, համառոտություն և կարգ:

<sup>1</sup> W. H o r n, Laut und Leben, bearbeitet und herausgegeben von Martin Lehner, I-II, Berlin, 1954, էջ 55.

<sup>2</sup> Հմմտ. նույն տեղը, էջ 55—56.

## 7. ՖՈՐՄԱԼԻԳՄ

Ընդհանուր տեղեկություններ.—Ֆորմալիզմի առանձին տեսնդենցներ հանդես են եկել տարբեր երկրներում և ամենատարբեր հոսանքների ներկայացուցիչների մոտ, սակայն այն որպես լեզվաբանական հոսանք ձևավորվել է Ռուսաստանում՝ շարունակելով իր գոյությունը նաև սովետական իրականության սկզբնական շրջանում։ Ինչպես արդեն նշել ենք, ֆորմալիզմը արդեն ձևավորված կերպով հանդես է եկել Ֆ. Ֆ. Ֆորտունատովի մոտ, որը այն սերտորեն միահյուսում է XIX դ. երկրորդ կեսից լայն տարածում գտած հոգեբանական ըմբռնման հետ։ Հետագա քայլը կատարվում է Ֆորտունատովի ուղղակի և անուղղակի հետեւրդների կողմից, որոնք աշխատում են դուրս մղել լեզվի իմաստային կողմի տրամաբանական և հոգեբանական մեկնարանության փորձերը, լեզուն նկարագրել ըստ արտաքին-ձևական կողմի, մեկնակետ դարձնել ձևը, ձեկից գնալ դեպի բովանդակությունը, լեզվական արտաքին թաղանթից դեպի ներքին իմաստային կողմը։ Սա ունենում է մի կողմնակի հետեւանք. եթե տրամաբանական և հոգեբանական ուղղությունների ներկայացուցիչները աշխատում էին տալ բոլոր լեզուների վերլուծության ընդհանուր սկզբունքներ և դրանով իսկ փաստորեն քիչ էին ուշադրություն դարձնում լեզուների առանձնահատկություններին, ապա ֆորմալիզմի ներկայացուցիչները ուշադրությունը կենտրոնացնում են հենց այս կամ այն լեզվի առանձնահատուկ կողմերի վրա։ Հոգեբանական և տրամաբանական ընդհանուր վերացական սխեմաներին նրանք հակադրում են տվյալ լեզվի անկանխակալ, լեզվական առկա ձեւերից ելնող ուսումնասիրությունը։ Այսպիսով, ֆորմալիստական ուղղությունը իր հարվածն ուղղում է առաջին հերթին ընդհանրական քերականության երկարատև տիրապետությամբ հաստատված վերացական սխեմաների ու սկզբունքների դեմ՝ դրանց հակադրելով առանձին լեզուների մանրակրկիտ ուսումնասիրությունը, նրանց տարբերիչ կողմերի վերհանումը։ Ֆորմալիզմը հանդես է գալիս ինչպես այլ լեզուներին հատուկ կատեգորիաները և հայեցողական ճանապարհով մշակված ընդհանրական սկզբունքները տվյալ լեզվի նկատմամբ մեխանիկորեն կիրառելու, այնպես էլ լեզվի հին և նոր շրջանները շփոթելու, հին շրջանին հատուկ երևույթները նոր շրջանին վերագրելու դեմ։ Նրա համար մեկնակետ է դառնում լեզուն իր առկա վիճակով, իր առկա ձեւերով. սա էլ հասցնում է լեզվի ստատիկ

քննությունը պատմականից խնամքով անջատելուն, ընդհանուր լեզվականը տվյալ լեզվին հատուկ երևույթներից սահմանագատելուն:

Ֆորմալիզմը լեզվաբանության պատմության մեջ խաղում է լեզվակի գեր: Մի կողմից՝ այն հանդես է գալիս որպես դրական ուղղություն, որ լեզվի ուսումնասիրության մեջ մտցնում է թարմ հոսանք, հիմք տալիս առանձին լեզուների մանրակրկիտ ու անկանխակալ ուսումնասիրության և դրա հիման վրա արվելիք հետագա եզրակացությունների համար, լեզվի ուսումնասիրության մեջ ելնում իրեն իսկ լեզվից, հնարավորություն ստեղծում տեղից շարժելու քերականական ուսմունքը, որ երկար ժամանակ դոփում էր տեղում՝ ընդհանրական հայեցողական սխեմաների ստեղծման փորձերի մեջ: Մյուս կողմից՝ այն խաղում է որոշ բացասական գեր՝ ֆետիշացնելով լեզվական ձևը, անտեսելով լեզվի ներքին իմաստային կողմը և դրանով իսկ լեզվի ուսումնասիրությունը զրկելով իր բազմակողմանիությունից, տալով զուտ ձևական կողմի վրա հենվող զանազան միասնական դասակարգումներ ու սխեմաներ, որոնք հասցվում են ծայրահեղության, ինքնին դարձվում նպատակ և լեզվական իմաստից կտրվելու պայմաններում վերջիներջո զրկվում արձեքից, վերածվում անհեթեթության: Պատահական չէ, որ ժամանակակից ստրուկտուրալիզմի ներկայացուցիչները իրենց հոգեկոր ուսուցիչների թվում հիշում են ֆորմալիստական ուղղության այնպիսի ներկայացուցիչների, ինչպիսիք են Ֆորտունատովը, Պեղկովսկին և ուրիշները. ստրուկտուրալիզմը ևս ունի ֆորմալիստական ուղղության ներկայացուցիչների այս Արկվությունը՝ իր դրական ու բացասական կողմերով, իր բերած թարմ հոսանքով և իր սխեմատացման փորձերով:

Ֆորմալիստական ուղղության ձևավորումը մեծ շափով կապված էր տրագիցիոն դպրոցական քերականության թերությունների հաղթահարման, լեզվաբանական գիտության նորագույն նվաճումները նրա մեջ կիրառելու, դպրոցական քերականության և գիտական լեզվաբանության միջև եղած խզումը վերացնելու այն փորձերի հետ, որ լայն ծավալ են ստանում XX դարում, հատկապես: Ուսուաստանում: Ուսուական իրականության մեջ դպրոցական քերականության խիստ քննադատություն է կատարվում Ֆորտունատովի, Թոդուեն-դե-Կուրտենեի, Շերբայի, Կուդրյավսկու և ուրիշների կողմից: Այդ հեղինակները դպրոցական քերականությանը մեղադրում էին տրամաբանական և քերականական կատեգորիա-

ները շփոթելու, նկարագրական-ստատիկ և պատմական հայեցակետերը խառնելու, միայն գրավոր խոսքն ուսումնասիրելու և բանավոր խոսքն արհամարհելու մեջ<sup>1</sup>: Պեշկովսկին փորձում է վերացնել այդ խզումը և գիտական լեզվաբանության սկզբունքները կիրառել դպրոցական քերականության նկատմամբ:

Ֆորտունատովյան ձեր ըմբռնումը գրեթե նույնությամբ հանդես է գալիս Պորժեղինսկու, Ուշակովի աշխատություններում: Պեշկովսկին որոշ առումով շեղվում է այդ ըմբռնումից՝ փորձելով հաղթահարել Ֆորտունատովի ուսմունքի հակասությունները և այն լրացնել այլ լեզվաբանական ուսմունքների տվյալներով: Նշելի է, որ Ֆորտունատովի հետևորդները միայն մասսամբ են կարողանում հաղթահարել նրա որոշ հակասությունները: Այսպես, եթե Ֆորտունատովը քերականությունը դիտում էր որպես բառերի և նրանց ձևերի ուսմունք, իսկ բառակապակցության ձևերը հատկացնում էր միայն բառի ձևեր շունեցող լեզուներին (օրինակ՝ շինարենին), ապա Ուշակովը և Պեշկովսկին լայնացնում են այդ վերջին ըմբռունումը. Պեշկովսկին, ինչպես կտեսնենք, այն դարձնում է շարահյուսական ուսմունքի հիմքը:

Վ. Կ. Պորժեղինսկին Ֆորտունատովի քերականական վերլուծության սկզբունքները շարունակում է կիրառել համեմատական ուսումնասիրությունների մեջ<sup>2</sup>, թեև ավելի հաճախ է դիմում ժամանակակից ուսւերենից առնված օրինակներին: Հնդկրոպական լեզուների համար տարրերվում են բառափոխական ձևեր ունեցող և դրանցից զուրկ բառեր. ձևաբանության նպատակը համարվում է առանձին լրիվ բառերի ձևերի ուսումնասիրությունը, իսկ բառափոխական ձևերից զուրկ բառերի վերլուծությունը հատկացվում է իմաստաբանությանը: Բառափոխական ձևեր ունեցող բառերը խմբավորվում են հետևյալ կերպ. 1) հոլովվող բառեր, 2) հոլովվող բառեր՝ սեռային համաձայնության ձևերով հանդերձ, 3) խոնարհվող բառեր<sup>3</sup>:

<sup>1</sup> Հմմ. С. И. Бернштейн, Основные понятия грамматики в освещении А. М. Пешковского, Պեշկովսկու „Русский синтаксис в научном освещении“ գրքում, VI հր., М., 1938, էջ 8—10.

<sup>2</sup> В. К. Поржезинский, К истории форм спряжения в балтийских языках, М., 1901. Возвратная форма глаголов в литовском и латышском языках, М., 1904. Введение в языкоковедение, М., 1907, II հր., 1910.

<sup>3</sup> Հմմ. В. В. Виноградов, Современный русский язык, вып. I, М., 1938, էջ 59.

Դ. Ն. Ուշակովը կատարում է հաջորդ քայլը և Ֆորտունատովի քերականական վերլուծության սկզբունքներին ավելի լայն ասպարեզ հատկացնում։ Ուշակովը միևնույն բառի առանձին քերականական ձևերը դիտում է որպես առանձին բառեր։ Բառերի իմաստային խմբավորումը համարելով ընդհանրական բնույթ ունեցող՝ Ուշակովը առանձին լեզուների, հատկապես ոռւսաց լեզվի համար պիտանի է համարում ձևական-ձևաբանական դասակարգումը, որի համաձայն նա առանձնացնում է «քերականական խոսքի մասեր»։ Սակայն խոսքի մասերի «գուտ» ձևաբանական խմբավորումը նախ հասցնում է մի շարք կարեռ բառային տիպերի ուսումնասիրությունը ձևաբանությունից հանելուն, երկրորդ՝ իմաստային նույն խմբերի մեջ մտնող բառերը (օր. ճակատ, պատճեն) միանգամայն տարբեր ձևաբանական խմբերի հատկացնելուն և երրորդ՝ բոլորովին տարբեր կարգի բառերը, ընդհակառակն, միևնույն ձևաբանական խմբի մեջ խցկելուն, ուստի և Ուշակովն ստիպված է դիմել լրացուցիչ՝ իմաստային խմբավորումների։ Այսպես, նա նախ տարբերում է ըստ ձևի փոխվող և շփոխվող բառեր։ Հիմք ընդունելով ոռւսաց լեզվում առկա փոփոխության Յ տիպերը՝ ըստ հոլովի, սեռի և թվի՝ նա տարբերում է 1) հոլովվող բառեր, այն Յ՝ ա) միայն հոլովվողներ (գոյական անունները) և բ) հոլովվողներ ու միաժամանակ ըստ սեռի փոխվողներ (ածականները), 2) ըստ սեռի փոխվող, բայց չհոլովվող բառեր (բայերի անցյալ ժամանակի ձևերը) և 3) ըստ դեմքի փոխվող, այսինքն՝ խոնարհվող բայեր (բայերի ներկա և ապառնի ժամանակի ձևերը)։ Այս ձևական դասակարգման հետ միասին, որի դեպքում հիմք է ընդունվում ձևի նեղ ըմբռնումը՝ վերջավորությունների փոփոխությունը, Ուշակովը դիմում է նաև իմաստային դասակարգման, ընդ որում «բայց» տերմինը համարում է «գոյական» և «ածական» տերմինների համեմատությամբ պայմանական։ Վերջիններս, ըստ նրա, օգտագործվում են և՛ իմաստային, և՛ ձևական առումով, մինչդեռ առաջինը գործածվում է միանգամայն տարբեր ձևեր ունեցող բառերի (ըստ Ուշակովի՝ բայանունների, անորոշ գերբայի, ներկա ու ապառնի ձևերի, անցյալ ձևերի և եղանակային ձևերի) համար։

Ա. Մ. Պեշկովսկի.—Ֆ. Ֆորտունատովից հետո ոռւսական իրականության մեջ ֆորմալիզմի գլխավոր ներկայացուցիչը Ա. Մ. Պեշկովսկին է։ Սակայն Պեշկովսկին Ֆորտունատովի ուղղակի հե-

<sup>1</sup> Д. Н. Ушаков, Краткое введение в науку о языке, М., 1913, V հր., 1925. Русский язык, VI հր., 1929.

տեսորդը չէ. նախ՝ նա ոչ միայն հեռու է լեզվի հոգեբանական մեկնաբանությունից, այլև աշխատում է այն դուրս մղել, թեև նրան ոչ բոլոր դեպքերում է այդ հաջողվում. երկրորդ՝ Պեշկովսկին հանդես է բերում ակնհայտ էկլեկտիզմ՝ Ֆորտունատովի սիստեմը տարբեր ժամանակներում փորձելով լրացնել ամենատարբեր բնույթի ուղղությունների, այդ թվում Պոտեբնյայի, Օվսյանիկո-Կովկիկովսկու, Շախմատովի, Սոսյուրի դրույթներով. երրորդ՝ Պեշկովսկին ապրել է հայացքների ուժեղ էվոլյուցիա՝ կրելով տարբեր ազդեցություններ, անընդհատ ելք փնտրելով իր սիստեմի ներքին հակասություններից. ապրելով սովետական իրականության մեջ՝ նա աստիճանաբար հասնում է լեզվի և մտածողության, ձևի և բովանդակության գիալեկտիկական փոխհարարերության ըմբռնմանը, թեև, իհարկե, մինչև վերջ շի կարողանում հաղթահարել իր կոնցեպցիայի թերությունները:

Պեշկովսկու լեզվաբանական գլխավոր աշխատությունը «Ռուսերենի շարահյուսությունը գիտական լուսաբանությամբ» գործն է, որի առաջին հրատարակությունը լույս է տեսել 1914 թ.<sup>1</sup>: Այդ աշխատության մեջ Պեշկովսկին ձգտում է Ֆորտունատովի առաջքաշած քերականական վերլուծության սկզբունքները կիրառել դպրոցական քերականության մեջ և դրանով իսկ վերացնել գիտական և դպրոցական քերականությունների միջև եղած խզումը. սակայն հենց առաջին իսկ հրատարակության մեջ Պեշկովսկին հանդես է բերում ակնհայտ էկլեկտիզմ՝ փորձելով ֆորտունատովյան ուսմունքը լրացնել նրան միանգամայն հակադիր պոտեբնյայական ուսմունքով: Պեշկովսկու ազդեցությունը մեծ է լինում դպրոցական դասավանդման մեջ՝ երկար ժամանակ տիրապետող դարձնելով ձևական (Փորմալ) քերականությունը: Սակայն, ինչպես նշեցինք, Պեշկովսկին մինչև վերջ կանգնած շի մնում իր առաջքաշած սկզբունքների վրա, դրանք վերանայում է լեզվաբանական նորագույն տեսությունների երկան գալու հետ կապված: Շախմատովի շարահյուսական սկզբունքների ազդեցության տակ նա 1923 թ. սկսած վերանայում է իր աշխատությունը և 1928 թ. լույս ընծայում նրա արմատապես վերամշակված Յ-րդ հրատարակությունը: Պեշկովսկին լույս է ընծայել և այլ կարգի փորձեր, հատկապես մեթոդիկային վերաբերող: Պեշկովսկու անցած ճանապարհը վկայում է նրա

<sup>1</sup> М. А. Пешковский, Русский синтаксис в научном освещении, М., 1914.

մտքի անընդհատ որոնումների, սկզբնական նեղ ֆորմալիզմը հաղթահարելու, իր ուսմունքի հակասությունները վերացնելու, նորագույն լեզվաբանական ուսմունքների լավագույն կողմերը դպրոցական քերականության մեջ կիրառելու ձգտման մասին:

Պեշկովսկու քերականական մեկնակետը ձեի հասկացությունն է, որ նա սկզբնապես սահմանում է Ֆորտունատովի նման: Նրա ուշադրության կենտրոնում է գտնվում լեզվական արտաքին ձևը, արտաքին հատկանիշների ամբողջությունը, որից ենելով էլ նա կատարում է իր վերլուծությունը: Պեշկովսկին տարրերում է երկու կարգի ձևեր՝ բառի ձևեր (ձևաբանությունը) և բառակապակցության ձևեր (շարահյուսությունը), որոնք միասին կազմում են լեզվի ձևերը: Բառակապակցության ձևերի ուսմունքի հիման վրա էլ նա կառուցում է իր նախադասության ուսմունքը: Խոսքի մասերի տրադիցիոն իմաստային-տրամաբանական դասակարգման փոխարեն նա առաջ է քաշում բառերի (խոսքի մասերի) ձևական դասակարգումը:

Բառի ձևերը Պեշկովսկին բաժանում է երկու խմբի՝ բառափոխական ձևեր և բառակազմական ձևեր, որոնք հեթագայում կոչում է նաև շարահյուսական և ոչ-շարահյուսական ձևեր. բառափոխական կամ շարահյուսական ձևեր են համարվում գոյականի հոլովի, ածականի հոլովի, թվի և սեռի, բայի դեմքի, թվի, սեռի (ուսւական բայի անցյալ ժամանակի դեպքում), ժամանակի և եղանակի ձևերը. բառակազմական կամ ոչ շարահյուսական ձևեր են համարվում գոյականի սեռի, թվի, ածականի համեմատության աստիճանների, բայի սեռի և կերպի ձևերը և այլն<sup>1</sup>: Այսպիսով, քերականական կատեգորիաները Պեշկովսկին տարրերում է զուտ արտաքին-ձևական հատկանիշներով և դրանք բաժանում երկու խմբի՝ ըստ շարահյուսական զուգորդելիության (համաձայնության և խնդրառության) մեջ կատարած դերի: Քանի որ ոչ բոլոր բառերն ունեն քերականական արտաքին ձևական հատկանիշներ (բառաձևեր), ուստի և Պեշկովսկին բառերը բաժանում է ձևավոր կամ քերականական և անձև (ծեսֆորմենիու) կամ ոչ-քերականական խմբերի, ընդ որում անձև բառեր, ըստ Պեշկովսկու, կարող են լինել ոչ միայն շթեքվող խոսքի մասերը, այլև թեքվող խոսքի մասերի որոշ տեսակները (հմմտ. շնորվվող գոյականները և շխո-

<sup>1</sup> Ակելի ուշ Պեշկովսկին հանգում է այն մտքին, որ լեզվի մեջ բառարձակապես ոչ-շարահյուսական կատեգորիաներ չկան:

նարհվող բառերը՝ ուստի կադար և է այս բաժանումը խզում էր առաջացնում բառերի իմաստային և ձևական խմբերի միջև, ուստի և Պեշկովսկին ստիպված է մի կողմից՝ ընդունել մեծ թփով անցողիկ աստիճաններ, մյուս կողմից՝ անընդհատ որոնել այս ծայրահեղ ֆորմալիզմը հաղթահարելու միջոցներ:

Ֆորտունատովի նման պարբերելով լրիվ ու մասնակի բառեր և հիմք ընդունելով վերեռում նշված սկզբունքները՝ Պեշկովսկին տարբերում է լրիվ բառերի 7 խումբ՝ բայ, գոյական, ածական, ածականական գերբայ (որոշական), մակրայ, մակրայական գերբայ (դեօրիչառական), անորոշ (գոյականական) դերբայ (ինֆինիտիվ) և մասնակի բառերի նույնպես 7 խումբ՝ նախդիրներ, շաղկապներ, բայ-շաղկապներ, ուժեղացնող սպասարկու անդամներ, ժխտական սպասարկու անդամներ, հարցական սպասարկու անդամներ և հրամայական սպասարկու անդամներ: Դերանունները և որոշ կարգի այլ բառեր (СВЯЗКИ) Պեշկովսկին Օվսյանիկո-Կովիկովսկու ազգեցության տակ<sup>1</sup> դիտում է որպես յուրատեսակ միշանկյալ աստիճան և կոչում «անկյանք ձևական բառեր»: Խոսքի մասերը ձևական հատկանիշներով խմբավորելիս Պեշկովսկին դերանունները և թվականները բաշխում է մյուսների հետ միասին: Առանձնացնելով անձեռ բառերը՝ Պեշկովսկին ձևավոր բառերը բաժանում է երկու խմբի՝ շարահյուսական ձևեր ունեցողների և շարահյուսական ձևեր շունեցողների: առաջինների մեջ տարբերվում են հոլովող բառերի խումբը (անունները՝ գոյականները, բուն ածականները և ածականների ենթատիպ հանդիսացող դերբայները) և խոնարհվող բայերի խումբը (բայերը). Երկրորդների մեջ դրվում են մակրայները, մակրայական դերբայները (դեօրիչառական) և անորոշ դերբայները (ինֆինիտիվ): Քանի որ մասնակի բառերը քերականական ձևից զուրկ են, ուստի և Պեշկովսկին ստիպված է նրանց համար դիմել իմաստային դասակարգման:

Բուն շարահյուսության, այն է՝ հատկապես նախադասության ուսմունքի հարցում Պեշկովսկին գտնվում է Պոտեբնյայի և Օվսյանիկո-Կովիկովսկու ուժեղ ազգեցության տակ:

Իր շարահյուսական ուսմունքը կառուցելով բառակապակցության ձևերի ըմբռնման վրա՝ Պեշկովսկին նախադասությունը դիտում է որպես բառակապակցության՝ ստորոգյալով (լինի այն առկա թե զեղչված) արտահայտված տիպ: Այլ կերպ ասած՝ նախա-

<sup>1</sup> Հմատ. В. В. Виноградов, Современный русский язык, вып. I, М., 1938, էջ 74.

դասության տարբերիչ հատկանիշը նա համարում է ստորոգելիությունը, որ Պոտերնյայի նման նա չի տարբերում բայց կանությունից։ Ստորոգելիություն է համարվում բառի մեջ հանդես եկող այն երանգը, որ ցույց է տալիս, թե բառը համապատասխանում է ոչ թե պատկերացմանը միայն, այլ ամբողջ մտքին։ Այսպիսով, ըստ Պեշկովսկու, ստորոգելիությունը հանդես է գալիս մեկ բառի միշտով, այլ կերպ ասած՝ ստորոգյալը դիտվում է որպես ողջ նախադասության մտքի կրողը։ Դեռ ավելին. ընդունելով, որ կան մեկ բառից բաղկացած նախադասություններ՝ Պեշկովսկին հակասության մեջ է ընկնում նախադասության իր սահմանման հետ, որտեղ նախադասությունը դիտում է որպես բառակապակցության տեսակ։ Հակառակ իր սկզբունքին՝ շարահյուսության մեջ Պեշկովսկին հարցերը քննում է ըստ նախադասության տիպերի, որոնք առանձնացվում են, համենայն դեպս, ոչ ձևական սկզբունքով։ Միաժամանակ այստեղ նա նահանջ է կատարում ստորոգելիության հետ։ Բայց ականության՝ նախադասության տարբերիչ հատկանիշ լինելու իր ուսմունքից՝ ընդունելով նախադասության այնպիսի տիպեր, որոնք բայց ստորոգյալով չեն արտահայտված։ Բառակապակցության ձևերի քննությունը Պեշկովսկին կատարում է ըստ շարահյուսական կապակցության տիպերի՝ համաձայնության, խնդրառության և առդրության։ «Բարդ նախադասություն» անվանումը Պեշկովսկին փոխարինում է «բարդ ամբողջություն» (СЛОЖНОЕ ЦЕЛОЕ) անվանումով՝ նկատի ունենալով, որ առաջին անվանումով նախադասությունը համարվում է նախադասություններից բաղկացած։

Պեշկովսկու գիտավոր արժանիքներից մեկը պետք է համարել այն, որ նա զբաղվում է նախադասության ինտոնացիայի և ոիթմի հարցերով՝ դրանով իսկ գրավոր խոսքի ուսումնասիրությունը լրացնելով բանավոր խոսքի ուսումնասիրությամբ։

## II. ԼԵԶՎԱՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՐՈՒՅԹ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներածական տեղեկություններ.— Ինչպես տեսանք լեզվաբանական տարբեր կոնցեպցիաների քննությունից, այս ենթաշրջանում լեզվաբանական աշխատանքի բնույթի ու տիպերի մեջ կարեվոր տեղաշարժեր են կատարվում։ Եթե նախորդ ենթաշրջանում և ընդհանրապես ողջ XIX դարում ուսումնասիրության գիտավոր

բնագավառները մասնակի լեզվաբանություններն էին, ապա այս ենթաշրջանում առաջատար դերը պատկանում է ընդհանուր լեզվաբանությանը։ Պատմական (դիախրոնիկ) ուսումնասիրությունների կողքին սկսում են լայն ուշադրություն գրավել ստատիկ (սինխրոնիկ) ուսումնասիրության հարցերը, ընդ որում ոմանք, հասնելով ծայրահեղության, դադարում են պատմական հետազոտությանը քիչ թե շատ տեղ՝ հատկացնելուց։ Պատմահամեմատական լեզվաբանության մեջ էլ ուժեղանում են հնչյունական կառուցվածքի և քերականական ձևերի գենետիկական մեկնաբանության հարցերը, որոնք թոպագից հետո աստիճանաբար ետին պլանն էին մղվել և որոնց համար գրեթե մեկ դար տևող զարգացումից հետո լուծման նպաստավոր պայմաններ էին ստեղծվել։ Հիմքեր ձգելով *XIX* դ. վերջին քառորդում՝ այս ենթաշրջանում որպես դիսցիպլին ձևավորվում է լեզվաբանական աշխարհագրությունը (բարբառագրությունը), լեզվաբանական այս նոր դիսցիպլինը ոչ միայն հանգեցնում է բարբառների ուսումնասիրության մեթոդների վերանայմանը, այլև նպաստում է լեզուների ցեղակցության հարցի նոր մեկնաբանությանը։ Տեղաշարժ է կատարվում լեզվաբանության բաժինների ու լեզվաբանական դիսցիպլինների փոխհարաբերության մեջ, եթե նախորդ ենթաշրջանում առաջատար բնագավառը հնչյունաբանությունն էր, ապա այս Անթաշրջանում առաջին պլանն են քաշվում քերականության, այլև ոճաբանության ու իմաստաբանության հարցերը։ Ոճաբանությունը, որը մինչև *XVIII* դ. գոյություն ուներ ճարտասանության մեջ (*XVIII* դարում էլ այդ երկուսը խառնում էին) և որը *XIX* դ. անհրաժեշտ ուշադրություն չէր գրավում, այս ենթաշրջանում դառնում է լայն քննության առարկա. վերստին առաջ են քաշվում գրական լեզվի ու գրականության լեզվի պրոբլեմները։ Ոճաբանությունը գալով փոխարինելու ճարտասանությանը, ինչպես տեսանք, հանդես է գալիս երկու ձևով՝ 1) որպես արտահայտչականության ուսմունք, այն է՝ արտահայտչականության կամ նկարագրական ոճաբանություն (Բալլի) և 2) որպես անհատական ոճերի քննադատություն, այն է՝ անհատական կամ գենետիկական ոճաբանություն (Ֆուլեր)<sup>1</sup>. Փորձեր են արվում լեզվաբանական դիսցիպլինների և լեզվաբանության բաժինների նոր խմբավորումներ կատարելու, ստատիկ նկարագրության մեջ ազատվելու տրադիցիոն քերականության հակասություններից։

<sup>1</sup> Հմմտ. D. Guiraud, La stylistique, Paris, 1934.

Աեզվաբանական աշխարհագրություն (բարբառագրություն)։ Ժիլերոն, Վոեդե. — Ինչպես նշել ենք, գերմանական և ֆրանսիական բարբառագիտական ատլասների քիչ թե շատ ամբողջական հրատարակումը և տեսական լուրջ մշակումը տեղի է ունենում միայն XX դարում, երբ, այսպիսով, վերջնականապես ձևավորվում է բարբառագրությունը կամ լեզվաբանական աշխարհագրությունը որպես դիացիպիկին՝ հետազոտության իր որոշակի սկզբունքներով։ Լեզվաբանական աշխարհագրության ձևավորման մեջ վճռական դեր է խաղում ֆրանսիական բարբառագրական դպրոցի պուխ Ժիլ-յերոնը, որը կարևոր եղածացություններ է հանում բարբառագիտական ատլասի տվյալներից։

1) Ատլասի ուսումնասիրությունը պարզեց իմաստային-գիտակցական գործոնի դերը բարբառների ու բառերի պատմության մեջ։ Եթե երիտքերականները կարծում էին, որ հնչյունական հատկանիշները բարբառների տարբերման հիմնական շափանիշներն են, ապա ժիլյերոնը ցույց է տալիս, որ միայն հնչյունական շափանիշներ սահմանելը և հնչյունական օրենքներով գործելը խստ անբավարար է, և խոսում է «հնչյունական ստուգաբանության սնանկության» (la faillite de l'«étymologie phonétique») մասին։ Նախ՝ հնչյունական փոփոխությունները կարող են կատարվել նաև ժողովրդական ստուգաբանությամբ և կոնտամինացիայով։ Երկրորդ՝ այն դեպքերում, երբ հնչյունական փոփոխությունները կարող են հանգեցնել համանունության և դժվարացնել հասկանալը, կամ պահպանվում է անհետանալու ենթակա հնչյունը, կամ տեղի է ունենում փոխառություն հարևան բարբառներից և առանձնապես գրական լեզվից։ Խոսելով հնչյունական օրենքի զաղափարի մասին՝ Ժիլյերոնը նշում է, որ միատիպ հնչյունական շարք ներկայացնող բառերի սահմանները չեն համընկնում, որ հնչյունական օրենքները խախտվում են։

2) Բարբառային ատլասի ուսումնասիրությունը բացահայտեց բառերի պատմության հետ կապված մի շարք կարևոր մոմենտներ։ Նախ՝ բացահայտվեցին բարբառային բառապաշարի տարբեր հնություն ունեցող շերտեր։ Ցույց տրվեց, որ տեղի է ունենում տարբեր հնություն ունեցող տեղական հոմանիշների մրցակցություն (Ժիլյերոնն այս շերտավորումը կոչում է երկրաբանական տերմինով՝ «լեզվաբանական ստրատիգրաֆիա»)։ Երկրորդ՝ երեսց, որ խոշոր կենտրոններից դեպի ծայրամասերը բառերը տարածվում են որոշակի հաղորդակցման ուղիներով և կապված են իրար հետ։ Դրա-

նով իսկ հնարավորություն ստեղծվեց խոսելու բարբառների հասարակական պայմանավորվածության մասին:

3) Հնարավորություն ստեղծվեց լուծելու բարբառների ու լեզուների սահմանների մասին եղած վեճերը. պարզվեց, որ բարբառային որոշ սահմաններ կարելի է նշել, բայց ոչ կտրուկ գծերի ձևով. միատիպ լեզվական երևույթները (հատկանիշները) միացնելով գծերով (իզոգլուներ), կստանանք գծերի որոշ խիտ խմբեր, որոնք և նշում են առանձին բարբառները:

4) Վերջապես, հնարավորություն ստեղծվեց նոր ձևով դնելու գրական լեզվի և բարբառների փոխհարաբերության, բարբառների պատմության հարցերը. նախկինում կարծում էին, որ ժամանակակից ոռմանական բարբառները ներկայացնում են նախկին ժողովրդական լատիներենի անմիջական հաջորդները, նրա տերիտորիալ տարբերակները, զարգացումները, մինչդեռ ատլասի ստեղծումից հետո նրանց պատմությունը ներկայանում է նոր լուսի տակ, բացահայտվում է շատ ավելի բարդ պատկեր<sup>1</sup>:

Ժիլյերոնը որոշ հարցերում հասնում է ծայրահեղության և դրանով հիմք տալիս քննադատական դիտողությունների համար: Սակայն Ժիլյերոնի և նրա հակառակորդների վեճերը նպաստում են բարբառային երևույթների էլության խորացված ըմբռնմանը: Առանձնապես ծայրահեղության էր հասնում Ժիլյերոնը հետևյալ հարցերում. նախ՝ նա խիստ կտրուկ կերպով էր առարկում բարբառների տարբերակման հնչյունական շափանիշների դեմ՝ դրանք համարելով անպետք. երկրորդ՝ նա խիստ մեծ տեղ տալով խաչակից լեզուների՝ մեկ աղբյուրից ծագելու դրույթի ժիտմանը. երրորդ՝ Պարիսի և մյուսների օրինակով նա որոշ դեպքերում ժիտում էր բարբառների գոյությունն ընդհանրապես. նրա կարծիքով՝ կարելի է խոսել միայն առանձին բառերի սահմանների առկայության, այսպես կոչված, «իզոգլուների» մասին, ուստի բարբառների պատմությունը պիտի փոխարինվի բառերի պատմությամբ. «Դատողւթյուններն ու փաստերը,—գրում էր Ժիլյերոնը 1905 թ.,—համաձայնեցված կերպով քանդում են բարբառ կոչված կարծեցյալ լեզվաբանական ամրողությունը, այն կոնցեպցիան, որի համաձայն այս կամ այն համայնքը կամ նույնիսկ համայնքների խումբը ներկայացնում են լատինական ժառանգության հավատարիմ պահ-

<sup>1</sup> Հմա. Проф. М. В. Сергиевский, Введение в романское языкознание, М., 1952, № 258—261.

պանողները: Մենք պիտի դեն նետենք բարբառի ըմբռնումը որպես գիտական ուսումնասիրության հիմքի. բարբառի ուսումնասիրությանը մենք հակագրենք բառի ուսումնասիրությունը»<sup>1</sup>. Հորրորդ՝ Ժիլերոնը հանգում էր ակնհայտ ոելյատիվիզմի, ժխտում բառերի ուսումնասիրության գիտական ընդհանուր միասնական սկզբունք՝ ների սահմանման հնարավորությունը՝ տալով իր հայտնի բանաձեռ՝ «ամեն բառ ունի իր պատմությունը»:

Ժիլերոնի լեզվաբանական հայացքները աշքի շեն ընկնում կուր միասնականությամբ. նրա մոտ խառնվում են կուլտուրապատմական և բիոլոգիական հայեցակետերը:

Ժիլերոնի հետազոտությամբ վերջնականապես ձեավորվում է այն դիսցիպլինը, որ հայտնի է «լեզվաբանական աշխարհագրություն» անվամբ: Այս դիսցիպլինը նախ՝ տեսական բազա է ստեղծում լեզվաբանական որոշ ուղղությունների զարգացման համար և հիմք տալիս լեզուների ցեղակցության հարցերի լուծման նոր սկզբունքների առաջքաշմանը. Երկրորդ՝ այն բարբառների հետազոտության նոր մեթոդ է առաջ քաշում և հիմք տալիս բարբառագիտական ատլասների մի ամբողջ շարքի համար: Այս նոր դիսցիպլինի բնութագիրը ներկայացված է այնպիսի աշխատություններում, ինչպիսիք են Կ. Յաբերգի «Լեզվաաշխարհագրությունը» և «Լեզվի աշխարհագրական հայեցակետերը», Է. Գամիլշեգի «Լեզվաաշխարհագրությունը»<sup>2</sup> և այլն: Լեզվաբանական աշխարհագրության սկզբունքների մշակման հարցում կարևոր դեր է խաղում Մ. Բարտոլին:

Յուլերի նման Ժիլերոնը իր ուշադրության կենտրոնում է պահում ոչ թե լեզուն որպես սիստեմային ամբողջություն (սոսյուրյան իմաստով), այլ այդ լեզվի խոսքային դրսերումները տվյալ շրջանում, լեզվի անմիջական արտահայտությունները: Այս առումով նրա հայեցակետը որոշ իմաստով ներկայացնում է սոսյուրյան հայեցակետի հակադրությունը: Սակայն այսուհանդերձ և՛ Սոսյուրը, և՛ Ժիլերոնը ուշադրությունը կենտրոնացնում են լեզվի ստատիկ ուսումնասիրության հարցերի վրա:

Ի տարրերություն երիտքերականների՝ Ժիլերոնն աշխատում

<sup>1</sup> Gilleron et Mongin. Scier dans la gaule romain du Sud et de l'Est, 1905, t. 27.

<sup>2</sup> K. Jäberg, Die Sprachgeographie, 1908. Aspects géographique du langage, 1926. E. Gamischeg, Die Sprachgeographie, 1928. A. Dauzat, Le géographie linguistique, 1922.

է ոչ միայն արձանագրել, այլև բացատրել, որոնել պատճառները՝ կեզվական փոփոխության կարեռ պատճառներից մեկը նա համարում է խոսողի՝ պարզության և ճիշտ հասկացվելու ձգտումը:

Քանի որ լեզվական փոփոխությունների պայմանները մաքուր «բնական» վիճակով երևան են գալիս բարբառներում, ուստի և Ժիլերոնը լեզվաբանական իր եզրակացությունները հիմնում է առաջին հերթին սրանց վրա: Գրական լեզուն ունի համեմատաբար ստանդարտ ձևեր, և այնտեղ լեզվական փոփոխության պայմանների ուսումնասիրությունը դժվարանում է:

Լեզվական երեսութեան մեկնաբանության նպատակով Ժիլերոնը դիմում է այլ գիտությունների տվյալների մեջ անալոգիական երեսութեան որոնելուն և իր ուսումնասիրության մեջ է ներքաշում երկրաբանության, բժշկության և այլ բնագավառներից հայտնի գաղափարներ ու տերմիններ: Բառապաշարի ժամանակագրական շերտավորումը նա կոչում է լեզվաբանական ստրատիգրաֆիա: Խոսում է «բառերի ախտաբանության» և «թերապևտիկ միջցառումների» մասին՝ նկատի ունենալով բառերի անհետացման վտանգն ու դրանք կանխող լեզվական միջոցները: Բառիմաստի գերծանրաբեռնվածությունը և դրա հետևանքով արտահայտչական ուժը կորցնելը որակում է որպես «իմաստային հիպերտրոֆիա» և այլն: Ժիլերոնն ընդհանրապես իր նկարագրությունների ու որակումների մեջ հակում է ցույց տալիս բառերի փոփոխությունը քըննելու՝ անկախություն ունեցող կենդանի օրգանիզմների փոխհարաբերության անալոգիայով, թեև, իհարկե, հեռու է լեզվի «մաքուր» բիոլոգիական ըմբռնումից: Այսպես, օրինակ, նա հաճախ է դիմում «հոմանիշների ընդհարման» գաղափարին: Ըստ Ժիլերոնի՝ լեզվի կյանքը ենթակա է ախտաբանական (հիվանդացնող) և թերապևտիկ (բուժիչ, դարմանիչ) գործոնների անընդհատ ներգործությանն ու պայքարին: Որպես ախտաբանական գործոններ են հանդես գալիս մի կողմից՝ հնչումնական փոփոխությունները, մյուս կողմից՝ «իմաստային հիպերտրոֆիան»: Հնչումնական փոփոխությունները կարող են թուլացնել բառը մինչև անհետացում կամ առաջ բերել համանունություն: Վերջինս կարող է տանելի լինել (այդ դեպքում համանուն բառերը մնում են) կամ անտանելի (այդ դեպքում մեկը կորչում է): «Իմաստային հիպերտրոֆիան» կապված է բազմիմաստության հետ, որ նույնպես կարող է լեզվի մեջ շփոթություն առաջ բերել: Բուժիչ գործոնների թվին Ժիլերոնը հատկացնում է ժողո-

վրոդական ստուգաբանությունը՝ գերագնահատելով սրա և «իմաստային հիպերտրոֆիայի» դերը:

Գերմանիայում անկետային տվյալների արդյունքները առանձնապես լայն քննության են ենթարկել Վենկերի ասիստենտ Վոեդեն և սրա աշակերտ Ֆրինգը: Եղնելով ատլասի վրա կատարվող աշխատանքի արդյունքից՝ Վոեդեն հանդես է գալիս ծննդաբանական ծառի դեմ և որդեգրում Շմիդտի «ալիքների տեսությունը»: Վոեդեն կարծիքով՝ ատլասը կասկածի տակ է դնում հնչյունական օրենքների անխախտելիությունը և ցույց տալիս, որ դրանք խախտվում են բարբառների խառնվելու միջոցով՝ որպես հետևանք հաղորդակցման:

Հստ Վոեդեն՝ լեզվախառնուրդը և համահարթումը (Sprachmischung und Ausgleichung) բարբառների զարգացման հիմնական օրենքներն են: Նրա կարծիքով՝ բարբառների սահմանները որոշվում են հաղորդակցման պատմական սահմաններով, և բարբառագետի համար կարեռ պայման է տվյալ վայրի պատմության իմացումը: Երիտքերականների ինդիվիդուալիզմին Վոեդեն հակադրում է հասարակական հայեցակետը: Նշելի է, սակայն, որ Վոեդեն ևս ծայրահեղության է հասցնում իր սկզբունքները՝ կասկածի տակ առնելով հնչյունական փոփոխությունների օրինաշափականությունը:

«Իրերի և բառերի» պրոբլեմը.— Գրիմի և Շերերի կողմից դրված՝ բառերի և իրերի հարաբերության հարցը նոր սրությամբ սկսում է քննվել XX դարի սկզբներին: Ռ. Մերինգերը (1869—1931) այն լեզվաբաններից մեկն էր, որ գիտակցում է այդ հարցի առանձնահատուկ կարեռությունը և ձեռնարկում է «Բառեր և իրեր» («Wörter und Sachen») հանդեսի հրատարակությանը: Զի կարելի ասել, սակայն, որ այս կարգի վերլուծությունները միշտ հաջողակ էին, և լեզվական փաստերը միշտ հաջողությամբ զուգակցվում էին նյութական կուլտուրայի տվյալների հետ:

Մերինգերը լեզվի պատմությունը սերտորեն կապում է կուլտուրայի պատմության հետ. լեզվի պատմությունը նրա համար քաղաքակրթության պատմություն է, և քաղաքակրթության պատմության նպատակը՝ բառերի գիտության և իրերի գիտության կապի մեջ է: «Բառերի և իրերի» ուսումնասիրության համար ամենից ավելի կարեռ բնագավառները Մերինգերը համարում է «ազգագրությունն» ու «ազգաբանությունը»: Լեզվական (թե՝ հնչյունական և թե՝ իմաստային) փոփոխությունների հարցում Մերինգերը մեծ

տեղ է տալիս հուզական կողմին, այլև մանկական սխալներին, որոնք արդյունք են լեզվին դեռևս շտիրապետելուն:

«Բառերի և իրերի» պրոբլեմը տեսական և գործնական լուսաբանություն է ստանում նաև Շուխարդտի մի շարք հոդվածներում, առանձնապես «Իրեր և բառեր» հոդվածում: Շուխարդտը, թեև գրել է Մերինգերի գեմ, բայց այս քննադատությունն սկզբունքային չէ<sup>1</sup>: Նա ևս դնում է բառերի պատմությունը իրերի պատմության հետ կապելու հարցը և նշում իրի առաջնությունը բառի հանդեպ. ըստ Շուխարդտի՝ ինչպես որ փաստի և նախադասության միջն կած է միտքը, այնպես էլ իրի և բառի միջն ընկած է գաղափարը (իդեան): Շուխարդտը տվել է իր հայացքների տեսական հիմնավորումը հատկապես 1912 թ., բայց մինչ այդ էլ հարցին նվիրել է մի շարք հոդվածներ:

Եթե երիտքերականների ուշադրության կենտրոնում գտնվում էր բառերի արտաքին կեղևը՝ «Հնչյունների պատմությունը», ապա Շուխարդտը պահանջում է ուշադրությունը կենտրոնացնել ներքին կողմի՝ բառիմաստի ուսումնասիրության վրա: Երիտքերականների ստուգաբանական հետազոտությունները վերջիվերջո հենվում էին հնչյունաբանության վրա, մինչդեռ Շուխարդտը հնչյունական կողմի ուսումնասիրությունը և հնչյունական օրենքների բացահայտումը դիտում է լոկ որպես օժանդակ միջոց. ստուգաբանական հետազոտության կենտրոնում, նրա կարծիքով, պետք է դրվի բառիմաստների ուսումնասիրությունը, ընդ որում դրանք պետք է կապվեն կուլտուրայի պատմության հետ: Լեզվաբանական վերլուծությունը ինքնին բավարար չէ և պետք է լրացվի կուլտուրայի պատմության տվյալներով: Այս առումով «բառերի և իրերի» (Wörter und Sachen) ուսումնասիրությունը պիտի վերածվի «իրաբառերի» պատմության (Sachwortgeschichte): Այս կապակցությամբ Շուխարդտը տարբերում է շորս կարգի պատմություն՝ բառերի, իրերի, նշանակումների և նշանակությունների. սրանցից նշանակումները կապված են բառերի հետ և ստատիկ մոմենտում համընկնում են նրանց հետ. նշանակությունները կապված են իրերի հետ: Սակայն պատմական շարժման ընթացքում նշանակումները կարող են չհամընկնել բառերի հետ, նշանակությունները՝ իրերի հետ: Իրերն ու բառերը պետք է քննվեն ոչ թե որպես զուգահեռ զարգացող կողմեր, այլ որպես փոխադարձաբար խաչավոր-

<sup>1</sup> Հմայ. L. Spitzer, Meisterwerke der romanischen Sprachwissenschaft, I, էջ 370.

վող գծեր: Ինչպես որ իրը առաջնային է բառի նկատմամբ, այնպես էլ նշանակությունը՝ նշանակման նկատմամբ: Շուխարդտը քննում է այն դեպքերը, երբ բառը փոխվում է, իսկ իրը չի փոխվում և երբ, ընդհակառակն, իրը փոխվում է, իսկ բառը՝ ոչ: Նշանակումների փոփոխության պատճառը Շուխարդտը որոնում է անհատական կարիքի մեջ, ընդ որում այդ կարիքը, Շուխարդտի կարծիքով, ծագում է համապատասխանության, համառոտության, պարզության, հարմարության, արդյունավետության և այլ պահանջներից:

Իմաստաբանություն.— Եթե իմաստաբանական հետազոտությունների նշանակալից մասը այս ենթաշրջանում դեռևս կրում է Հերման Պաուլի և Վիլհելմ Վունդտի գաղափարների ուժեղ ազդեցությունը, ապա լեզվաբանների բավական ստվար խումբ որոնում է իմաստաբանության զարգացման նոր ուղիներ:

«Իրերի և բառերի» դպրոցը, ինչպես տեսանք, ուշադրությունը կենտրոնացնում է իմաստափոխության արտաքին պայմանների նկարագրության, բառերի նշանակած իրերի պատմության վրա՝ առանց, սակայն, հասնելու իմաստափոխության պատճառների քիչ թե շատ ծավալուն քննության:

Հանս Շպերբերը իր իմաստաբանական ուսումնասիրությունների մեջ<sup>1</sup> հենվում է մի կողմից՝ Ֆրեյդի հոգեբանական կոնցեպցիայի, մյուս կողմից՝ Շտյոկլայնի ու Էրդմանի առաջ քաշած իմաստաբանական սկզբունքների վրա: Հուզական մոմենտը նա դարձնում է իմաստաբանական բոլոր փոփոխությունները կատարվում են օրինաշափորեն, ընդ որում իմաստային օրենքը նա մեկնաբանում է որպես մեկ հուզական կոմպլեքս կազմող բառերի իմաստային կանոնավոր փոփոխություն: Ավելի ուշ էրդմանը, հենվերով Շտյոկլայնի վրա, շեշտում է նաև բառիմաստի փոփոխության պրոցեսը բառակապակցությունների հետ՝ կապելու անհրաժեշտությունը:


Էրիկ Վելլանդերը<sup>2</sup>, հրաժարվելով իմաստաբանական հարցերի տրամաբանական և հոգեբանական մեկնաբանության փորձերից, աշխատում է հետևողականորեն անցկացնել իմաստափոխության պրոցեսի պատմական օբյեկտիվ հետազոտության սկզբունքը, էմպիրիկ-գենետիկական մոտեցումը: Այս նպատակով նա նախապես

<sup>1</sup> H. Sperber. Über den Affekt als Ursache der Sprachveränderung, 1914. Einführung in die Bedeutungslehre, Bonn, 1923.

<sup>2</sup> E. Wellander. Studien zum Bedeutungswandel im Deutschen, Uppsala, 1917—1923.

սահմանագատում է ոչ-լեզվական պատճառներով կատարվող փոփոխությունները՝ 1) բառերի նշանակած առարկաների փոփոխությունները («փոխարինման» դեպքերը), 2) իմաստային փոխառությունները («անվանման» դեպքերը), 3) իմաստի գիտակցական փոփոխությունները («անվանման» դեպքերը), փոխարերական գործածությունները, էվֆեմիզմն ու թարուն, տերմինարանական գործածությունները և այլն. մնում են «իմաստի իսկական փոփոխությունները», որոնց մեջ Վելլանդերը դնում է զեղչման և համառոտ գործածության դեպքերը (այս կամ այն կապակցության փոխարեն մեկ բառի գործածությունը): «Իմաստային օրենք» ասելով Վելլանդերը հասկանում է, Հընչյունական օրենքի նման, իմաստային փոփոխությունների կանոնավորության հավաստումները: Այս բոլորով հանդերձ Վելլանդերը մի կողմից՝ շարունակում է մնալ բառիմաստի տրադիցիոն ըմբռուման սահմաններում, մյուս կողմից՝ շի հասնում իմաստարանական երևութների ընդհանուր օրինաշափությունների քիչ թե շատ համապարփակ ընդգրկման:

Օգդենի և Ռիչարդսի «նշանակության նշանակությունը» աշխատության մեջ՝ իմաստարանական հարցերի քննության հիմքում դրվում է երեք մեծությունների տարրերում՝ 1) լեզվական նշանը կամ սիմվոլ (symbol), 2) վերաբերումը (thought or reference), այն է՝ նշանակվող հասկացությունը, նշանակությունը և 3) վերաբերվողը (referent), այն է՝ վերաբերվող, անվանվող առարկան:



<sup>1</sup> C. A. Ogden and J. A. Richards, The Meaning of Meaning, London, 1923.

Սրանով էսկ փորձ է արվում ցույց տալ, որ նախ՝ նշանի ու առարկայի միջև այնպիսի ուղղակի հարաբերություն չկա, ինչպիսին կարնածայն բառերի, նկարների, ժեստերի դեպքում և երկրորդ՝ լեզուն ազդում է մտածողության վրա:

Հստ Օգդենի և Ռիչարդսի՝ բառերը ոչ միայն վերաբերման նըշաններ են, առարկաների նշանակումներ (սիմվոլներ), այլև խոսողի վերաբերմունքի և հետաքրքրությունների նշաններ։ Այսպիսով, ըստ Նրանց, լեզուն ունի երկու ֆունկցիա՝ նշանային (symbolic) և հուզական (emotive), ընդ որում նշանայինը ոչ միշտ գերիշխող է և ոչ էլ առաջնային։ Հուզական մոմենտի կարեորության մատնանշումը, հոգեբանական կոնտեքստի գաղափարից ելնելը այս տեսության գլխավոր կողմերն են, մի տեսություն, որ հիմունքով էլ համարվում է հոգեբանական։

Մտրուկտուրալ իմաստաբանության զարգացման համար կարելուր նշանակություն ունեցավ Ռ. Մ. Մայերի «Իմաստային սիստեմներ» հոդվածը, որի մեջ հեղինակը դնում է իմաստային կապերի սիստեմային բնույթի հարցը<sup>1</sup>:

Իմաստաբանության զարգացման հետագա ընթացքի վրա նշանակալից ազդեցություն են գործում նաև Սոսյուրի գաղափարները։ Այսպես, Բալլին, օգտագործելով լեզվի և խոսքի տարրերման սոսյուրյան գաղափարը, տարրերում է իմաստը և նշանակությունը (sens et signification). առաջինը նա հատկացնում է լեզվին, երկրորդը՝ խոսքին։

Լեզուների ընդհանուր դասակարգմանը նվիրված աշխատություններ.—Բացի Ն. Ֆինկի, Է. Սեպիրի, Վ. Շմիդտի աշխատություններից, որոնց մասին առանձին խոսել ենք, այս ենթաշրջանում հրատարակվում է նաև Ա. Մեյերի և Մ. Կոհենի խմբագրած «Աշխարհի լեզուները» ծավալուն գործը։

Հատուկ տեղ են բռնում իտալացի լեզվաբան-պոլիգլոտ Ա. Տրոմբետտիի (1866—1929) աշխատությունները<sup>2</sup>. Բերելով աշխարհի բոլոր լեզուների միջև եղած ընդհանրությունների փաստեր՝ Տրոմբետտին պաշտպանում է աշխարհի բոլոր լեզուների՝ մեկ աղբյուրից ծագելու (մոնոգենեզիսի) տեսակետը։

<sup>1</sup> R. M. Mayer, Bedeutungssysteme, KZ, XLIII, 1910, էջ 352—368.

<sup>2</sup> A. Trombetti, L'Unità d'origine del linguaggio, Bologna, 1905. Elementi di glottologia, Bologna, 1923.

## 2. ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր տեղեկություններ.— Այս ենթաշրջանի վերջում և հաջորդի սկզբում լույս է տեսնում Ա. Վալդեի և Յ. Պոկոռնու «Հնդկրոպական լեզուների համեմատական բառարանը»<sup>1</sup>, որ յուրատեսակ հանրագումարի է բերում այս բնագավառում կատարված աշխատանքի արդյունքները. բառարանը պարունակում է 2223 արմատ. աճականով և ածանցավոր ձևերը բերվում են տեքստում: Հնդկրոպական լեզուների ուսումնասիրության պատմության ամփոփման կարևոր փորձ է Շտրայտբերգի հրատարակությամբ լույս տեսած «Հնդկրոպական լեզվաբանության պատմություն» շարքը, որտեղ յարատեսակ հանրագումարի են բերվում հնդկրոպական առանձին լեզվայուղերի ու լեզուների ուսումնասիրության արդյունքները: Հնդկրոպական հատուկ անուններին աշխատություն են նվիրում Սոլմսենը և Ֆրենկելը<sup>2</sup>:

### ա) Հնդկրոպաբանության ընդհանուր պրոբլեմները

Գենետիկական պրոբլեմների առաջաշրջումը. հնդկրոպական լեզվակառուցվածքի արխայիկ շերտերի պրոբլեմը. Հերման Հիրտ.— Դեռևս *XIX* դ. վերջերին գրած իր աշխատությունների մեջ Հիրտը հակում է ցուցաբերում բացահայտելու հնդկրոպական հնչումական և ձևաբանական կառուցվածքի արխայիկ շերտերը, ցույց տալու հնդկրոպական լեզվական կառուցվածքի առանձին կողմերի ծագումը: Այս աշխատություններին արդեն իսկ հատուկ են ոչ բավարար հիմնավորվածությունը, վերացականությունը, սխեմատիզմը և որոշ ունիվերսալիզմը: Ձևաբանական երևույթների ծագումը Հիրտը կապում է գերազանցապես հնչումական բնույթի պատճառների հետ, ձևաբանական երևույթների քննությունը տանում դրանց հնչումական առանձնահատկությունների վերլուծման

<sup>1</sup> A. W a l d e. Vergleichendes Wörterbuch der indogermanischen Sprachen, hrsg. von J. Pokorný, I—III. 1927—1932. Ավելի ուշ՝ Պոկոռնին պրակներով հրատարակում է սրա հիման վրա կազմած իր ստուգաբանական բառարանը, որտեղ արմատները դասավորված են այբբենական կարգով և ոչ թե ըստ արմատների առաջին բաղաձայնների Փիդոլոգիական կազմավորման մերձագորության. J. P o k o r n y, Indogermanisches etymologisches Wörterbuch, 1948 և հետո:

<sup>2</sup> F. S o l m s e n — E. F r a e n k e l, Indogermanische Eigennamen als Spiegel der Kulturgeschichte, Heidelberg, 1922.

ուղղությամբ։ Այս գործերի մեջ Հիրտն արդեն սկսում է նահանջ կատարել երիտքերականության տրադիցիաներից և շոշափել թոպպի ժամանակից առաջ բաշված ու երիտքերականների կողմից մի կողմ դրված գենետիկական պրոբլեմները։ Հիրտի առաջին կարևոր աշխատությունը «Հնդկրոպական պարույկային ու սուր տոնը հնդկրոպական լեզուներում» դիսերտացիան էր<sup>1</sup>, որը իր բնույթով կապված էր պարույկային ու սուր շեշտերի բնույթի մասին ֆորմունատովի, Բեցցենբերգերի և Ֆ. Հանսսենի, առանձնապես վերջինիս ուսումնասիրությունների հետ։ Հիրտը այստեղ փորձում է ցույց տալ, որ գերմանական լեզուներում հին պարույկավոր վերջավանկը երկար է, հին սրաշեշտ վերջավանկը՝ կարճ։

Իր «Հնդկրոպական շեշտը» գրքում<sup>2</sup> Հիրտը փորձում է ի մի բերել հնդկրոպական շեշտի ուսումնասիրության արդյունքները և հաստատել հնդկրոպական շեշտի փոփոխությունների որոշ հարաբերական ժամանակագրություն։ Էլ ավելի ուշ Հիրտը շեշտի բնույթի ուսումնասիրությունից անցնում է դրա հետ կապվող մի այլ երևույթի՝ հերթագայության (ձայնդարձի) ուսումնասիրությանը։ 1900 թ. Հիրտը լույս է ընծայում «Հնդկրոպական ձայնդարձը՝ առնված գլխավորապես շեշտի հետ ունեցած հարաբերությամբ» աշխատությունը<sup>3</sup>։ Այս գրքում նա հենվում է Ֆիկի «բազաների» ուսումնքի և Դանիելսոնի ու Յոհանսոնի «սահող ձայնդարձի» դրույթի վրա<sup>4</sup>։ Այստեղ միավանկ արմատները կոշվում են «թեթև բազաներ», սոսյուրյան իռացիոնալ Ա (ա) ձայնավորով կազմված երկվանկները՝ «ժանր բազաներ»։ բոլոր «ժանր բազաների» դեպքերում Հիրտը ենթադրում է նախնական երկար վերջնաձայնավորի առկայություն՝ հենվելով այն սակավաթիվ դեպքերի վրա, որոնց մեջ երկվանկ արմատները հակադրվում են երկար վանկերով ձայնավորներին [օրինակ, թարշ-թառ-ի (στήπιθηνά) և ա-թրա-տ-ի համար (ειγρηցα)<sup>5</sup> \*թռէ-]: Հաստատելով նախնական որոշ տիպի «բազաներ»՝ Հիրտը հնդկրոպական զանազան լեզուների արմատ-

<sup>1</sup> H. Hirt, Yom schleifenden und gestossenen Ton in den indogermanischen Sprachen, IF, 1892.

<sup>2</sup> H. Hirt, Der indogermanische Akzent, 1895.

<sup>3</sup> H. Hirt, Der indogermanische Ablaut vornehmlich in seinem Verhältnis zur Betonung, 1900.

<sup>4</sup> Ф. Шпехт, „Индоевропейское“ языкознание от младограмматиков до первой мировой войны, „Общее и индоевропейское языкознание“, М., 1956, § 42.

Ները և Հիմքերը դիտում է որպես այդ «բազաների» ձայնավորների հետեղական մի շարք թուլացումների արդյունք, ընդ որում այդ թուլացումներն ել կապում է շեշտադրման տեղաշարժերի հետ:

Զբաղվելով Հնդկրոպական լեզվակառուցվածքի արխայիկ շերտերի բացահայտման հարցով՝ Հիրտը ուշադրություն է դարձնում նաև Հնդկրոպական Հնէարանության հարցերի վրա և նույնիսկ պոլեմիկայի մեջ մտնում Շոադերի հետ: Այս բնագավառում Հիրտն ուներ այն առավելությունը, որ լեզվական նյութը ավելի լավ գիտեր և այն էլ իր անմիջական ուսումնասիրությունների միջոցով: Իր «Հնդկրոպացիները, նրանց տարածումը, նախահայրենիքը և կուտարան» երկհատոր աշխատությամբ<sup>1</sup> Հիրտը փորձում է Հնդկրոպական ցեղերի կուլտուրական զարգացման ու տնտեսական կյանքի փոփոխությունների որոշ էտապներ գծել: Սակայն որոշ արժանիքներով հանդերձ նա հաճախ է դիմում քիչ հիմնավորված եղանակացությունների, ուստի և նրա գիրքը լայն ընդունելություն չգտավ:

Որոշ իմաստով Հիրտի գործունեության մեջ բեկում է սկսվում «Հնդկրոպական բայաթեքման ծագման մասին. գլուտոգոնիական փորձ» ուսումնասիրությամբ<sup>2</sup>: Սրան հետևում են «Հնդկրոպական քերականությունը»<sup>3</sup> և «Նախագերմաններնի ձեռնարկը»<sup>4</sup>, ապա Հ. Առնցի վերամշակած և Հիրտի մահից հետո հրատարակած «Հնդկրոպական լեզվաբանության գլխավոր պրոբլեմները» աշխատությունը<sup>5</sup>: Այս աշխատությունների մեջ Հիրտը նպատակ է դնում պատասխան տալու թոպպի կողմից դրված՝ թեքական ձևերի ծագման պրոբլեմին՝ հենվելով պատմա-համեմատական լեզվաբանության առկա նվաճումների վրա: Սակայն Հիրտն այս խնդիրը կատարում է խիստ մերձավոր կերպով:

Իր գործունեության երկրորդ էտապում Հիրտը ուշադրությունը կենտրոնացնում է գլխավորապես Հնդկրոպական ձևաբանական կառուցվածքի զանազան կողմերի կազմավորման հարցերի վրա: Հնչյունաբանական հարցերի քննությունը այս էտապում մղվում է

<sup>1</sup> H. Hirt, Die Indogermanen, ihre Verbreitung, ihre Urheimat und ihre Kultur. I—II, 1905—1907.

<sup>2</sup> H. Hirt, Über den Ursprung der Verbalflexion im Indogermanischen. Ein glottogonischer Versuch, IF, XVII, 1904—1905.

<sup>3</sup> H. Hirt, Indogermanische Grammatik, I—VII, 1927—1937.

<sup>4</sup> H. Hirt, Handbuch des Urgermanischen, I—III, 1931—1934.

<sup>5</sup> H. Hirt, Die Hauptprobleme der indogermanischen Sprachwissenschaft, 1939.

երկրորդ պլանը և ուշադրություն գրավում գերազանցապես որպես ձևաբանական հարցերի մեկնաբանության միջոց:

Հնդկրոպական հնչյունական կառուցվածքի հետազոտության մեջ Հիրտը առաջնորդվում է ժամանակագրական շերտերի հաստատման սկզբունքով<sup>1</sup>: Հիմք ընդունելով շեշտի կրած փոփոխությունները, Հիրտը հաստատում է հնդկրոպական լեզվակառուցվածքի պատմության 4 շրջան. առաջին երկու շրջանում տեղի է ունենում անշեշտ ձայնավորների թուզացում և մասնակի անկում. երրորդ շրջանում առաջանում է հնդկրոպական \*ē օ հերթագայությունը՝ որպես շեշտի կորուստի հետևանքով նախնական ե-ի՝ օ-ի փոխվելու արդյունք, այլև տեղի է ունենում ձայնավորների հետագա թուզացում. վերջապես, չորրորդ շրջանը բնութագրվում է ձայնավորների կայունությամբ և ձեռք բերված վիճակի պահպանությամբ: Քանի որ բարձրության (տոնիկական) շեշտը շատ ավելի քիչ է ազդում ձայնավորների որակի վրա, քան ուժայինը (դինամիկը), ուստի և Հիրտը ենթադրում է, թե վաղ շրջաններում տիրապետել է ուժային շեշտը, հետագա շրջաններում՝ բարձրությանը (երաժշտականը): Մինչև Հիրտի հետազոտությունները բնականաբար հնդկրոպական բարձրության շեշտին ուժային շեշտի նախորդելու մասին լուրջ խոսք չկար: Ըստ Հիրտի՝ ուժային շեշտը առաջ է բերում մի կողմից՝ անշեշտ վանկերի թուզացում, մյուս կողմից՝ ուժեղ շեշտված վանկերի երկարացում, որ հիմք է տալիս երկար ու կարճ ձայնավորների հերթագայության կամ քանակական ձայնդարձի (Abstufung) համար. բարձրության շեշտն, ընդհակառակն, հանգեցնում է առաջին և ետին շարքին ձայնավորների (ե-ի և օ-ի): Հերթագայության կամ որակական ձայնդարձի (Abtönung): Այս դրույթը որոշ հետազոտողների կողմից կիրառվում է հնդկրոպական լեզուների ձայնդարձի հարցերի մեկնաբանության մեջ<sup>2</sup>:

Հնդկրոպական ձևաբանական կառուցվածքի գենետիկական մեկնաբանության հարցում Հիրտն ամենից առաջ հենվում է այն բնական ենթադրության վրա, որ հնդկրոպական թեքականությունը կազմավորվել է մի նախնական ոչ-թեքական վիճակից: Ի տարրերու-

<sup>1</sup> Հմմա. H. Hirt. Indogermanische Grammatik. V 4 Handbuch des Urgermanischen, I:

<sup>2</sup> Հմմա., օրինակ, E. Prokosh. A Comparative Germanic Grammar. Philadelphia, 1939 (ռուս. թարգմ. Э. Прокош. Сравнительная грамматика германских языков, М., 1954):

թյուն թոպպի, որը ինքն էր առաջին անգամ լուրջ հիմքերի վրա դնում լեզուների համեմատությունը, Հիրտը իր առջև ուներ պատմա-համեմատական լեզվաբանության մեկ դարի արդյունքները, որոնց վրա հենվելով՝ նա հույս ուներ պատասխան տալու թոպպի դրած պրոբլեմներին։ Հնդկրոպական թեքականությանը մի նախաթեքական շրջանի նախորդած լինելու դրույթը ապացուցելու համար Հիրտը դիմում է Հնդկրոպական վերականգնված ձեերի փոխկապակցված վերլուծությանը և փորձում բացահայտել այդ նախաթեքական վիճակի հետքերը։ Ըստ Հիրտի՝ նման վերլուծությունը բացահայտում է մի վիճակ, երբ գոյություն են ունեցել հոլովական ձեավորում շատացած անուններ։ Իսկ ինչպե՞ս են այդ անուններից ծագել Հնդկրոպական թեքական ձեերը։ Հնդկրոպական հոլովական վերջավորությունների ծագման հարցում Հիրտը դիմում է մի կողմից՝ Ա. Լուդվիգի ադապտացիայի սկզբունքին, մյուս կողմից՝ Ֆիկի, Պերսոնի և այլոց աճականների տեսությանը։ Աճականները, որոնք, Հիրտի կարծիքով, սկզբնապես ցուցական արժեք են ունեցել և զուրկ են եղել որոշակի իմաստից, աստիճանաբար սկսել են հարմարվել զանազան հոլովական իմաստներ արտահայտելուն և վերածվել են որոշակի հոլովական մասնիկների. իր «Հնդկրոպական թեքականության» III հատորում Հիրտը թվում է այդ աճականները՝ օտ, առ, ա, ի, ս, կ, գ, տ, ձ, թ, ե, ո, ու, ր, լ, ս, վ, նշելով, որ, այսպիսով, որպես աճական հանդես են եկել գրեթե բոլոր հնդկրոպական հնչյունները։ Այդ աճականների՝ հոլովական վերջավորությունների և հիմքակազմ տարրերի վերածվելու պրոցեսը Հիրտը հետևյալ ձևով է պատկերացնում. «Թեքումը ծագել է ոչ թե իմաստավոր միավորների կցման ճանապարհով,—այդ կարելի է ցույց տալ միայն մի քանի դեպքում,— այլ այնպիսի տարրերի կցման հետևանքով, որոնք սկզբնապես հոլովական իմաստների հետ ոչ մի ընդհանուր բան չեն ունեցել։ Այդ ապացուցվում է արդեն իսկ նրանով, որ միևնույն տարրերը կարող են նշանակել տարրեր հոլովներ և որ այս կամ այն որոշակի հոլովը նշանակվում է բոլորովին էլ ոչ միևնույն տարրերով, ինչպես այդ կարելի էր սպասել։ Այն բանից հետո, երբ մի դեպքում կցվել է մի տարրը, մի ուրիշ դեպքում՝ մի ուրիշ տարր, առաջացել է հարմարեցում։ Կցված տարրն սկսել է ըմբռնվել որպես հոլովամասնիկ, ինչպես այդ միշտ տեղի էր ունենում և հետագայում։ Կարելի է ասել, որ հարմարեցումը հոլովակազմության նորմալ ձևն է հնդկրոպական լեզու-

ների զարգացման նաև պատմական շրջաններում<sup>1</sup>: Այս ճանապարհով է հենց բացատրում Հիրտը մակրայների առաջացման պրոցեսը:

Ինչ վերաբերում է բայական վերջավորությունների ծագման հարցին, ապա այս դեպքում էլ Հիրտը դիմում է հարմարեցման սկզբունքին և փաստորեն ամբողջովին հենվում կյուղվիգի եզրակացությունների վրա: Հիրտի կարծիքով՝ բայց անվանական ծագում ունի. անվանական ձեերը սկզբնապես գործածվելով բայական նշանակությամբ՝ աստիճանաբար վերածվել են բայական ձեերի. այլ կերպ ասած՝ բայական ձեերը ծագել են անվանականներից՝ անորոշի և դերբայական ձեերի պատահական հարմարեցման ճանապարհով:

Հնդկրոպական անվան թեքական ձեերի հիրտյան վերլուծությունը գնում է հոլովական ձեերի իմաստային, ձեական և շարահյուսական ընդհանրությունների բացահայտման ուղղությամբ, ընդորում Հիրտը այդ կարգի ընդհանրություններն ու համընկնումները համարում է նախնական հոլովական շտարբերակվածության ապացույց: Այսպես, ուղղական, հայցական և սեռական հոլովների ձեական, իմաստային և շարահյուսական առանձին գուգադիպումների հիման վրա Հիրտը խոսում է դրանց սկզբնական շտարբերակվածության մասին և գտնում, որ ուղղականի և սեռականի ընդհանուր և վերջավորությունը, շեզոք սեռի ուղղականի և հայցականի ընդհանուր օր վերջավորությունը ծագել են միևնույն աճականներից:

Հնդկրոպական բայական ձեերի հիրտյան վերլուծությունն էլ գնում է այն ուղղությամբ, որ ցույց տրվի. թե ո՞ր բայական ձեի հիմքում դերբայական (անորոշի և բուն դերբայների) ո՞ր ձևն է ընկած<sup>2</sup>:

Այս բոլոր դեպքերում Հիրտը ելնում է այն ենթադրությունից, որ հնդկրոպական քերականական կառուցվածքի մեջ կարելի է բացահայտել մի դիֆուզ վիճակ, երբ անորոշ իմաստով ամեն մի աճական կարող էր գործածվել այս կամ այն քերականական իմաստով, ընդորում Հիրտն այս դեպքում ենթադրում է այդ շրջանի խոսողների մեջ այս կամ այն կոնկրետ մասնիկի հետ շկապված քերականական իմաստների ապրիորի առկայություն. այդ իմաստները հե-

<sup>1</sup> H. Hirt, Indogermanische Grammatik, III, § 180.

<sup>2</sup> Հմամ. А. В. Десницкая, Вопросы изучения родства индоевропейских языков, М.—Л., 1955, § 225.

տագայում կապվում են այս կամ այն աճականի հետ և տալիս այս կամ այն քերականական մասնիկը:

Այսպիսով, 1) Հիրտը իր գլխավոր նպատակը տեսնում է Հնդկ-րոպական քերականական կառուցվածքի ծագման մեկնաբանության մեջ. 2) այս բանը կատարելու համար նա օգտագործում է Թոպափի, Լյուդովիգի, Ֆիկի և այլոց սկզբունքային դրույթները. 3) Հիրտի վերլուծությունն աշքի է ընկնում մակերեսայնությամբ և զգալի շափով հենվում է աճականների բնույթի ոչ հստակ—գիտական մեկնաբանության բացակայության վրա. 4) Հիրտը Հնդկոպական դիֆուզ վիճակի պատկերացման մեջ թույլ է տալիս իդեալիստական ապրիորիզմ. 5) ընդհանուր առմամբ Հիրտի կառուցումները հեռու են գիտական լուրջ համոզվությունից և հենվում են արտաքին փաստերի ոչ խոր մեկնաբանության վրա:

Հնդկերոպական—սեմական ցեղակցության պրոբլեմը, «կոկորդայինների ենթաօբեզի» առաջքանումը. Հ. Մյոլլեր, Ա. Կյունի.—Հնդկոպական հիմնալեզվի կառուցվածքի ժամանակագրության ուսումնասիրության պրոբլեմը սերտորեն կապվում է Հնդկ-րոպական հիմնալեզվի՝ այլ հիմնալեզուների հետ ունեցած փոխհարաբերության պրոբլեմի հետ։ Այդ պրոբլեմն անհրաժեշտ շափով ուշադրություն պետք է գրավեր մանավանդ հետևյալ պատճառներով. նախ՝ վաղուց ի վեր նկատվում էին Հնդկոպական և ոչ-Հնդկոպական լեզուների միջև այնպիսի նմանություններ, որոնք պարզ փոխառության արդյունք համարվել չէին կարող. Երրորդ՝ Հնդկոպական լեզվաբանությունը (մեծ շափով և սեմականը) նշանակալից նվաճումների էր հասել, և արդեն Հնարավոր էր դնել Հնդկոպական ու ոչ-Հնդկոպական լեզուների ցեղակցական կապի պրոբլեմը. Երրորդ՝ երիտքերականները լեզվաբանական իրարից խիստ կերպով սահմանազատում էին. Նրանց ծայրահեղությունների նկատմամբ քննադատական վերաբերմունքը նպաստում է և այս հարցի առաջքաշմանը. Չորրորդ՝ Հնդկոպական հիմնալեզվի նկատմամբ պատճական վերաբերմունքի խորացումը անհրաժեշտաբար պետք է կապվի այդ հիմնալեզվի ցեղակցական առնչությունների պրոբլեմի հետ. հինգերրորդ՝ լեզվաբանական աշխարհագրության սկզբունքների մշակումը պահանջ է առաջադրում նման կարգի հարցադրումների ևս։

Հնդկոպական և սեմական լեզուների ցեղակցության հարցը առաջին անգամ լուրջ կերպով դրվում է դանիացի գիտնական Հ.

**Մյոլերի կողմից:** 1907թ. նա լույս է ընծայում իր «Հնդկրոպերեն ու սեմիտերեն» աշխատությունը<sup>1</sup>, փորձելով հիմնավորել հնդկրոպական և սեմական լեզուների ցեղակցական ընդհանրության հիպոթեզը. սրա հետ կապվում է և **Մյոլերի «Հնդկրոպական—սեմական բառարանը»**<sup>2</sup>:

Հ. **Մյոլերի՝** այդ հարցին նվիրված ուսումնասիրությունները ունեցան նաև մի կողմնակի հետեանք. աշխատելով ընդհանրություններ հաստատել հնդկրոպական ու սեմական հնչյունական սիստեմների միջև և վերականգնել դրանց ընդհանուր նախատիպերը՝ **Մյոլերը նշում է 5 կոկորդային հնչյունի առկայություն**. նրա կարծիքով՝ հնդկրոպական ձայնավոր բառասկիզբը հնարավոր է դարձել այդ կոկորդային հնչյունների կորստի պատճառով, ընդորում այդ կոկորդայինները որոշ լեզուներում դարձել են վանկարար հնչյուններ (ձայնավորներ): Այս տեսակետը պարզ կերպով արտահայտված է **Մյոլերի «Սեմական—նախահնդկրոպական կոկորդային բաղաձայնները» ուսումնասիրության մեջ**<sup>3</sup>:

Հնդկրոպական սեմական լեզվական ցեղակցության ուսմունքի գլխավոր դեմքերից մեկը՝ Ա. Կյունին, ի տարբերություն **Մյոլերի**, ընդունում է 3 նախնական կոկորդային բաղաձայնի առկայությունը՝ նշելով, որ դրանցից մեկը եղել է քմային (պալատալ), որ տվել է ե, երկրորդը՝ ետնաքմային (վելյար), որ տվել է ա, երրորդը՝ շըրթնաետնաքմային (լաբիովելյար), որ տվել է օ<sup>4</sup>:

Հ. **Պետերսենը** դեռևս 1903թ.<sup>5</sup> խոսում է հնդկրոպական, ուրալա-ալթայան և քամա-սեմական լեզուների ցեղակցության մասին՝ դրանք միավորելով «նոստրատիկ լեզուներ» (nostratische Sprachen) անվամբ:

**Նարահյուսություն.** — Հնդկրոպական լեզուների համեմատական շարահյուսության բնագավառում նոր էտապ է նշանավորում Վակերնագելի «Դասախոսություններ շարահյուսության մասին» աշխատությունը<sup>6</sup>:

<sup>1</sup> H. Möller, Indogermanisch und Semitisch, 1907.

<sup>2</sup> H. Möller, Indoeuropaeisk-semitsk glossarium.

<sup>3</sup> H. Möller, Die semiticch-vorindogermanischen Konsonanten, 1917.

<sup>4</sup> A. Cuny, Notes de phonétique historique indo-européenne et semitique, RPh, XII, 1912.

<sup>5</sup> ZDMG, 57.

<sup>6</sup> J. Wackernagel, Vorlesungen über Syntax, I—II, 1920—1924, II հր., 1926—1928.

գ) ՀՅՈՒՐՈՎԱԿԱՆ առանձին լեզուների և լեզվախմբերի  
ուսումնական բարությունը

«Թոխարական» լեզուների հայտնագործումը.— 1892—1910 թթ. Սինծյանում (Զինական Թուրքեստան) կատարվող պեղումների ընթացքում, ի թիվս այլ տեքստերի, հայտնաբերվեցին երկու անձանոթ լեզուների տեքստեր, որոնք գրված են Հնդկական գուատա կոչված գրի ձևափոխված տարատեսակով։ Այդ տեքստերը, ինչպես պարզվեց, մեծ մասամբ թարգմանություններ էին սանսկրիտից և կրոնական, բժշկական ու այլ բնույթի էին։ XX դ. սկզբներին Քուչա և Կարաշար վայրերում գտնված այդ տեքստերի երկու լեզուները գերմանացի գիտնական Ֆ. Վ. Կ. Մյուլլերի<sup>1</sup>, ապա սրա հետեւ վողությամբ Զիգֆի ու Զիգլինգի կողմից կոչվեցին թոխարերեն (թոխարերեն Ա և թոխարերեն Բ). այդ անունը առնված էր այն ժողովրդի անունից, որը հանդիպում է Ստրաբոնի (Տόքար), չինացիների (tu—ho—lo), հնդիկների (tukhāra) և հայերի մոտ (թոխարի)։ Հետագայում պարզվեց, որ այդ անվանումը արված է թյուրիմացարար և որ այդ երկու լեզվով խօսող ժողովուրդը կապ չունի թոխարերի հետ<sup>2</sup>. այժմ ավելի նպատակահարմար է համարվում թոխարերեն Ա-ն կոչել կարաշարերեն, թոխարերեն Բ-ն՝ քուչերեն՝ դրանց հայտնաբերման վայրերի անունով (երկուսը միասին՝ քուչա-կարաշարյան լեզուներ): Ուսումնասիրությունները պարզեցին, որ երկու լեզուներն էլ հնդկրոպական բնույթի են և որ տեքստերը վերաբերում են մ.թ. VI—VII դարերին։ Առանձնապես կարևոր է «թոխարերենի» ուսումնասիրության հարցում Զիգֆի և Զիգլինգի դերը, որոնք որոշել են թոխարերենի հետ կապված գլխավոր հարցերը։ Թոխարերենի ուսումնասիրության մեջ կարևոր դեր են խաղացել նաև Ա. Մելին, Ս. Լին, Է. Լիդենը, Յու. Պոկոնին, Հ. Պեղերմանը և ուրիշներ։

Առանձին ուշադրության է արժանանում թոխարերենի և մյուս հնդկրոպական լեզուների մերձավոր կապերի հարցը։ Հ. Պե-

<sup>1</sup> Müller, Beitrag zur genaueren Bestimmung der unbekannten Sprachen Mittelasiens, SBPAW, III, 1907.

<sup>2</sup> Sieg und Siegling, Tochariseh, die Sprache der Indoskythen, SBPAW, XXXIX, 1908, էջ 913—934.

<sup>3</sup> Այս հարցի մասին տե՛ս Ա. Ա. Փրեյման, Տօχարский вопрос и его разрешение в отечественной науке, „Ученые записки МГУ“, № 128, 1952, էջ 123—135.

դերսենը փորձում է մերձավոր կապ հաստատել թոխարական ու կելտական լեզուների, ապա և թոխարական լեզուների ու խեթերենի միջև<sup>1</sup>: Ա. Մեյբն հայտնում է այն կարծիքը, որ թոխարերենը միշտն տեղ է բռնում իտալա-կելտական, ուալոնական և հայկական լեզուների միջև<sup>2</sup>: Յու. Պոկոռնին նման մերձավոր կապեր է տեսնում թոխարական և թրակա-փոյուգական լեզուների միջև, ընդ որում հայերենը մտցնում է վերջիններիս մեջ<sup>3</sup>:

Խեթական տեսատերի հայտնագործումն ու վերծանումը. Բ. Հոռզնի.— Թոխարական լեզուների հայտնաբերումից ավելի անսպասելի էին այն պեղումների արդյունքները, որ անցկացվում էին Հ. Վինկլերի գլխավորած հնագիտական արշավախմբի կողմից, Անկարայից 150 կմ արևելք գտնվող Բողազքոյ գյուղի շրջանում: Հայտնաբերվեցին խեթական թագավորների խաթուշա մայրաքաղաքի մնացորդները և, որ կարեոր է, խեթական թագավորների գրադարանը՝ 13 000 կավե թրծած աղյուսներով (ամբողջական կամ վնասված): Հետագա պեղումները այդ թիվը ավելացրին 3000 աղյուսվ: Աղյուսների մի մասը ակկադերենով էր. սակայն մեծ մասը գրված էր անծանոթ մի լեզվով, որ գիտնականները կոչեցին «խեթերեն»՝ այն համարելով խեթական թագավորության հիմնական լեզուն: Հետագայում հայտնաբերվեցին տեքստեր և այլ լեզուներով (խաթերեն կամ պրոտոխեթերեն, խուռի-միտաներեն, լուվերեն, պալայերեն): «Խեթերենի» վերծանման հարցով սկսեց զբաղվել շեխ գիտնական Բ. Հոռզնին, որը 1915 թ. հանդես եկավ իր գործի նախնական արդյունքների մասին հաղորդումով<sup>4</sup> և ապա 1917 թ. մի այլ գործով հաստատեց և ընդարձակեց իր նախնական ուսումնասիրության արդյունքները<sup>5</sup>:

Խեթական տեքստերը վերաբերում են մ. թ. ա. II հազարամյակին: Հոռզնու ուսումնասիրությունը ցույց տվեց, որ խեթերենը հնդկրոպական լեզու է: Այդ կարծիքը հաստատվեց նաև հետագա

<sup>1</sup> H. Pedersen, Vergleichende Grammatik der keltischen Sprachen, II, Göttingen, էջ 673 և էջ. Le groupement des dialectes indoeuropéens, DKDVS, HFM, XI, 3, København, 1925:

<sup>2</sup> A. Meillet, Le tokharien, IJ, I, 1914.

<sup>3</sup> J. Pokorný, Die Stellung des Tocharischen im Kreise der Indogermanischen Sprachen, BFJOO, Wien, 1919.

<sup>4</sup> B. Hrozny, Die Lösung der hethitischen Problems, MDG, LVI, 1915.

<sup>5</sup> B. Hrozny, Die Sprache der Hethiter, ihr Bau und Zugehörigkeit zum indogermanischen Sprachstamm, Leipzig, 1917.

ուսումնասիրություններով ու հրատարակություններով և ընդհանուր ընդունելություն գտավ: Ստեղծվեց մի նոր դիսցիպլին՝ խեթագիտությունը<sup>1</sup>:

Այն հանգամանքը, որ դեպի արևելք ընկած լեզուները՝ «թոխարերենն» ու խեթերենը, դուրս եկան centum խմբի լեզուներ, խախտեց Հնդկրոպական լեզուների դասակարգման հիմքերը և հիմք տվեց նոր պրոբլեմների առաջքաշման համար:

Հնդիրանական լեզուներ.— Հնդիրանական լեզուների ուսումնասիրության բնագավառում այս ենթաշրջանում առաջին հերթին հիշատակելի են «Հնդկաստանի լեզվաբանական տեսություն» բազմահատոր աշխատության<sup>2</sup> V—IX և XI հատորները, որոնց մեջ բերվում են Հնդկական լեզուների նմուշներ, և տրվում է դրանց քերականության համառոտ ուրվագիծը: Վեդայական Հնդկերենին են նըւվիրված Ա. Ա. Մակդոնելի աշխատությունները<sup>3</sup>. միշին և նոր Հնդկական լեզուներին և բարբառներին նվիրված աշխատություններից նշելի են Գայգերի, Բլոկի, Զատտերչիի և Սեմպսոնի գործերը<sup>4</sup>: Աշխատություն է նվիրվում նաև Հնդկաստանի հնագույն լեզվալիճակին<sup>5</sup>:

Իրանական լեզուների ուսումնասիրության արդյունքների ամփոփման յուրատեսակ փորձ էր «իրանական ֆիլոլոգիայի հիմունքները» աշխատությունը<sup>6</sup>, որի գրելուն մասնակցել են բազմաթիվ հմուտ իրանագետներ (Կ. Բարթոլոմեն, Վ. Գայգերը, Վ. Միլերը և ուրիշները). իրանական լեզուների վերաբերյալ տեղեկություններ է պարունակում վերևում հիշատակված «Հնդկաստանի լեզվաբանա-

<sup>1</sup> Խեթերն իրականում, ինչպես պարզվեց, իրենց լեզուն կոչում էին նեսերեն (nāšili, nešumnili)<sup>1</sup> ըստ խեթական թագավորության հնագույն ժայրաբաղաքի՝ նեսայի անվան:

<sup>2</sup> The Linguistic Survey of India, I—XI, Calcutta, 1903—1922.

<sup>3</sup> A. A. Macdonell, Vedic Grammar, Strassburg, 1910. Vedic Grammar for Students, Oxford, 1916.

<sup>4</sup> W. Geiger, Pali, Literatur und Sprache. Strassburg, 1916. J. Block, La formation de la langue marathe, Paris, 1923. S. K. Chatterji, Origin and Development of the Bengali Language. Calcutta, 1926. J. Sampson, The Dialect of the gypsies of Wales, Oxford, 1926 (*առողջաբանական բառարանով հանդերձ*):

<sup>5</sup> S. Lévy, J. Przyluski and J. Bloch, Pre-Aryan and Pre-Dravidian in India, թբդ. P. C. Bagchi-ի, Calcutta, 1929.

<sup>6</sup> Grundriss der iranischen Philologie, I—II և հագելվածային մեկ համար, Strassburg, 1895—1903.

կան տեսության» X հատորը: Երևան են գալիս հին և միջին լեզուներից ավեստայի լեզվին, հին պարսկերենին, պահավերենին, սոգդերենին, նոր լեզուներից՝ աֆղաներենին (փուշտու) և պարսկական բարբառներին նվիրված աշխատություններ<sup>1</sup>:

Բալթիկ-սլավոնական լեզուներ.— Բալթիկ-սլավոնական լեզուների ընդհանուր համեմատական ուսումնասիրությանը նվիրված են Տրաստմանի «Բալթիկ-սլավոնական բառարանը», Վան Վեյկի «Բալթիական և սլավոնական շեշտի և ինտոնացիայի սիստեմները», Էնձելինի «Բալթիկ-սլավոնական էտյուդները»<sup>2</sup>:

Բալթիական լեզուներից հին պրուսերենը և լիտվերենը շարունակում են ուսումնասիրության առարկա լինել. Տրաստմանը հրատարակում է «Հին պրուսական լեզվական հուշարձանները», Բենդերը՝ «Լիտվական ստուգաբանական ցուցիչը», Ֆրենկելը աշխատություն է նվիրում լիտվական հոլովների շարահյուսական քննությանը, ոռուսերեն հրատարակում է Յավնիսի «Լիտվերեն լեզվի քերականությունը»<sup>3</sup>: Լիտվերենի և մյուս բալթիական լեզուների համեմատական ուսումնասիրությամբ է զբաղվում Կ. Բուգան (1879—1924), որ այս բնագավառում մի շարք կարևոր աշխատություններ է ստեղծում<sup>4</sup>: Լատվերենը նույնպես այս ենթաշրջանում սկսում է անհրաժեշտ ուշադրություն գրավել. լույս են տեսնում էնձելինի «Լատվերենի քերականությունը» գերմաներեն (համեմատական տեղեկություններով), Պլակայի քերականական աշխատությունը լատվերեն, Մյուլենբախի «Լատվերեն—գերմաներեն բառա-

<sup>1</sup> H. Reichelt, Awestisches Elementarbuch, Heidelberg, 1909. C. Bartholomae, Altiranisches Wörterbuch, Strassburg, 1904. A. Meillet, Grammaire de vieux-perse, Paris, II հր., 1931. R. Gauthiot et E. Benveniste, Essai de grammaire sogdienne, I—II, Paris, 1914—1929. D. L. R. Lorimer, Syntax of Colloquial pashtu, Oxford, 1915. A. Christensen, Le dialecte de Sāmnān, Copenhagen, 1915. Les dialectes d'Awromān et de Pāwa, Copenhagen, 1921.

<sup>2</sup> R. Trautmann, Baltisch-slavisches Wörterbuch, Göttingen, 1923. N. van Wijk, Baltische und slavische Akzent- und Intonationssysteme, Amsterdam, 1923. Я. М. Эндзелин, Славяно-балтийские этюды, 1911.

<sup>3</sup> R. Trautmann, Die altpreussischen Denkmäler, Göttingen, 1910. H. H. Bender. A Lithuanian Etymological Index, Princeton, 1921. E. Fraenkel, Syntax der litauischen Kasus, Kaunas, 1928. К. Явнис, Грамматика литовского языка, пер. К. Буга, Петроград, 1916.

<sup>4</sup> К. Вūга, Kalba ir Senove, 1922. Lietuviai Kalbos Žodynos, 1924—1925. Lituanice, ИОРЯС АН, XVII, I, 1912.

րանը»՝ ստուգաբանական նմուշներով հանդերձ (հրատարակել է Էնձելինը և որոշ լրացումներ կատարել)։<sup>1</sup>

Լիտվական բարբառներին նվիրվում են մի քանի կարևոր աշխատություններ՝ Դորիշի «Լիտվական բարբառագիտության շուրջը» գիրքը, Բարանովսկու և Շպեխտի «Լիտվական բարբառները», Գոթոյի «Բուլղական լեզուածակը»<sup>2</sup>.

Սլավոնական լեզուների ընդհանուր համեմատական ուսումնասիրության բնագավառում մի շարք կարևոր աշխատություններ են երեան գալիս՝ Մելչեի «Ընդհանուր սլավոներենը», Վոնդուակի «Սլավոնական համեմատական քերականությունը», Միկոլայի «Նախասլավոներենի քերականությունը», Բրոխի «Սլավոնական հնյունաբանությունը», Ֆորտունատովի «աշակերտ Պորժեզինսկու «Սլավոնական լեզուների համեմատական քերականությունը», Մելչելի «Սլավոնական լեզուների համեմատական քերականության ներածությունը», Յագիշի «Սլավոնական ֆիլոլոգիայի պատմությունը», Տրաուտմանի և Ֆասմերի «Սլավոնական ֆիլոլոգիայի և կուլտուրայի պատմության ուրվագիծը», Նիդեռլեի «Սլավոնական հնությունները» և Բեռնեկերի «Սլավոնական ստուգաբանական բառարանը» (միայն մեկ հատոր. ընդհատվել է տօր բառի վրա)<sup>3</sup>.

Հին սլավոներենին (եկեղեցաւավոներենին) նվիրված են

1 J. Endzelin, Lettische Grammatik, Heidelberg, 1923. J. Plaška, Leišu valodas rokas grāmata, Riga, 1926. K. Mühlensbach, Lettisch-deutschsches Wörterbuch, I—IV, Riga, 1923—1932.

2 A. Doritsch, Beiträge zur litauischen Dialektologie, Tilsit, 1911. Fr. Specht, Litauische Mundarten gesammelt von A. Baranowski (I Texste, II Grammatische Einleitung mit lexikalischem Anhang), Leipzig, 1920—1922. R. Gothisot, Le parler de Bulvīdze, Paris, 1903.

3 A. Meillet, Le slave commun, Paris, 1924. Հր. А. Мейе, Общеславянский язык, М., 1931. W. Vondrák, Vergleichende slavische Grammatik, Göttingen, I—II, 1906—1908. II հր., 1924—1928. J. Mikkola, Uralslavische Grammatik, I, Heidelberg, 1913. O. Broch, Slavische Phonetik, Heidelberg, 1911. В. Поржезинский, Сравнительная грамматика славянских языков, I, М., 1914. А. М. Саллишев, Введение в сравнительную грамматику славянских языков, I, Казань, 1914. И. В. Ягич, История славянской филологии, СПб, 1910. R. Trautmann und M. Vasmer, Grundriss der slavischen Philologie und Kulturgeschichte, Berlin, I—X, 1925 և հջ., L. Niderle, Slovanské starožitnosti, Praha, 1901—1925 (Փր. համառությունը Manuel de l'antiquité slave, I—II, Paris, 1925—1926. E. Berneker, Slavisches etymologisches Wörterbuch, I և II-ի 1 պրակ, Berlin, 1908—1914).

Ієвікіні «Հին բուզարերենի (հին եկեղեցաւավոներենի) քերականությունը», Վոնդրակի «Հին սլավոներենի քերականությունը», այլև Ֆորտопінատопվի՝ հին եկեղեցաւավոներենի հնչյունաբանության վերաբերյալ դասախոսությունների հետմահու հրատարակությունը<sup>1</sup>:

Առանձին սլավոնական լեզուներին նվիրված աշխատություններից, — եթե զանց առնենք Շախմատովի, Պեշկովսկու և այլ ոռալեզվաբանների գործերը, որոնց մասին արդեն խոսել ենք, — հիշատակելի են՝ 1) արևելասլավոնական լեզուներից ոռւսերենի համար Սորոկսկու «Դասախոսություններ» ոռւսաց լեզվի պատմության վերաբերյալ» գիրքը, Մեյերի «Ռուսաց լեզվի պատմական քերականությունը» և Պրեորածենսկու «Ռուսաց լեզվի ստուգաբանական բառարանը. ուկրաիներենի համար՝ Սմալ-Շտոկիի ու Գարտների և Կոհմսկու «Ուկրաիներենի քերականությունը», Կուլքակինի «Ուկրաիներեն լեզուն», Գրինչենկոյի «Ուկրաիներեն լեզվի բառարանը». բելոռուսերենի համար՝ Կարսկու «Բելոռուսները»<sup>2</sup>. 2) արևմտասլավոնական լեզուներից լեհերենի համար՝ Լոսի «Լեհերենի քերականությունը», Բեննիի, Լոսի, Նիշի, Ռոզվադովսկու և Ուշշինի «Լեհերեն լեզվի քերականությունը», որ «Լեհական հանրագիտարանի», «Լեհերեն լեզուն և նրա պատմությունը» հոդվածի մի մասի հրատարակությունն է, Բրյուկների «Լեհերեն լեզվի ստուգաբանական բառարանը». պոմորյաների (Կաշուբերենի և սլովեներենի) համար՝ Լորենցի «Սլովեներենի քերականությունը» և «Պոմո-

<sup>1</sup> A. Leski en, Grammatik der althorvarischen Sprache, II—III հր., Heidelberg, 1919. (ռուս. հր. А. Лескин, Грамматика древнеболгарского (древнецерковнославянского) языка, Казань 1915. W. Vondrek, Altkirchenslavische Grammatik, II հր., Berlin, 1912. Ф. Ф. Фортунатов, Лекции по фонетике старославянского языка, Петроград, 1919.

<sup>2</sup> А. И. Соболевский, Лекции по истории русского языка, IV հր., М., 1907. К. Н. Мейер, Historische grammatischer russischen Sprache, I. Bonn, 1923. А. Преображенский, Этимологический словарь русского языка, М., 1910—1916. (մինչև սուլեյ բառը շարունակությունը, ոչ լրիվ, տպագրվել է 1949 թ.). Труды Института русского языка АН СССР, I. М.—Л.). S. Smal-Stocki und F. Gartner, Grammatik der ruthenischen (ukrainischen) Sprache, Wien, 1913. А. Крымский, Украинская грамматика, I—II, М., 1907—1908. Ст. Кульбакин, Украинский язык, Харьков, 1919. Б. Гринченко, Словарь української мови, I—IV, Київ, 1908—1909. Е. Ф. Карский, Белоруссы, I—III, Варшава, 1903—1908.

րաներեն (կաշուրերեն) լեզվի պատմությունը»։ պոլաբերենի համար՝ Լեր-Սպլավինսկու «Պոլաբերենի քերականությունը» և Տրուբեցկոյի «Պոլաբյան ուսումնասիրությունները»<sup>1</sup>։ Յ) Հարավսլավոնական լեզուներից բովածարերենի համար՝ Մլադենովի «Թուղարերեն լեզվի պատմությունը»։ սերբոխորվաթերենի համար՝ Լեսկինի «Սերբոխորվաթերեն լեզվի քերականությունը», Կուլբակինի «Սերբերեն լեզուն»։ սլավոներենի համար՝ Ռամովշի «Սլովեներեն լեզվի պատմական քերականությունը»<sup>2</sup>։

Հայերեն։— Այս ենթաշրջանում մեծ նվաճումներ են ձեռքբերվում հայերենի ուսումնասիրության բնագավառում։ Հայերենի համեմատական հետազոտությանն են նվիրված Մեյեի «Դասական հայերենի համեմատական քերականության ուրվագիծը», դեռևս նախորդ դարի վերջերից լույս տեսնող «Հայերենի համեմատական շարահյուսության վերաբերյալ ուսումնասիրությունները», Պետերսենի «Հայերեն լեզվի պատմության շուրջը», «Հայերենը և դրացի լեզուները», «Հին հայերենի ցուցական դերանունները» աշխատությունները, Լիդենի «Հայկական ուսումնասիրությունները»<sup>3</sup>։ Հիշատակելի է և Մեյեի «Հին հայերենի տարրական դասագիրքը», որը

<sup>1</sup> J. Los', Gramatyka polska, I—III, Lwow—Warszawa—Krakow, 1922—1927. T. Benni, J. Los', K. Nitsch, J. Rozwadowski, II. Ułaszyn, Gramatyka języka polskiego, Krakow, 1923. A. Brückner, Słownik etymologiczny języka polskiego, Krakow, 1927. Fr. Lorenz, Slovinzische Grammatik, SPeterburg, 1903. Geschichte der pomeranischen (kaschubischen) Sprache, Berlin, 1925. T. Lehr-Splawinski, Gramatyka polabska, Lwow, 1929. N. Trubetzkoy, Polabische Studien, Wien—Leipzig, 1929.

<sup>2</sup> St. Mladenov, Geschichte der bulgarischen Sprache, Berlin—Leipzig, 1929. A. Leskien, Grammatik der serbo-kroatischen Sprache, Heidelberg, 1914. Ст. Кульбакин, Сербский язык, Харьков, 1915. Fr. Kamovš. Historična gramatika slovenskega jezika, II, 1924.

<sup>3</sup> A. Meillet, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Paris, 1903, II հր., 1936. Recherches sur la syntaxe comparée de l'arménien, MSL, X—XVII, 1898—1911. H. Pedersen Zur armenische Sprachgeschichte, 1904 (հայ. հր. չ. Պեդերսեն, Նպաստ մը հայ լեզվի պատմության, Վիեննա, 1904). Armenian und die Nachbarsprachen, KZ, XXXIX, 1904 (հայ. հր. չ. Պեդերսեն, Հայերեն և դրացի լեզուները, Վիեննա, 1907). Les pronoms démonstratifs de l'ancien arménien, 1905 (հայ. հր. չ. Պեդերսեն, Հին հայերենի ցուցական դերանունները, Վիեննա, 1907). E. Liden, Armenische Studien, Göteborg, 1906.

թեև համեմատական բնույթի չէ, բայց գրաբարի լավագույն քերականությունն է օտար լեզվով։ Հայ լեզվաբան Աճառյանը տալիս է հայ բարբառների գրեթե ամբողջական ընդգրկում ունեցող գիտական դասակարգումը՝ ըստ ներկայի կազմության եղանակի, տարրերելով ում, կը և ել բարբառներ. նրա գրչին են պատկանում բարբառագիտական մի շարք կարեռը աշխատություններ<sup>1</sup>։ Դեեւերսը աշխատություն է նվիրել հայերենի և հարավյային կովկասյան լեզուների ցեղակցության հարցին<sup>2</sup>, նշելի են նաև Յ. Կարստի միջին հայերենին և Աբեղյանի՝ ժամանակակից հայերենին նվիրված գործերը<sup>3</sup>:

**Թրակա-փոյուգական լեզուներ.** — **Փոյուգերենին նվիրված են Ֆրեյգերի «Փոյուգիական ուսումնասիրությունները»<sup>4</sup>:**

**Իլիրիական լեզուներ.** — **Իլիրիական լեզուների ուսումնասիրության բնագավառում նշելի են Կրաեի՝ իլիրիական տեղանուններին և անձնանուններին նվիրված աշխատությունները<sup>5</sup>:**

**Ալբաներեն.** — **Այս ենթաշրջանում երևան են գալիս ալբաներենի նկարագրական մի շարք քերականություններ՝ մեծ մասամբ նվիրված նրա բարբառային տարատեսակներին<sup>6</sup>:**

**Հունարեն.** — **Այս ենթաշրջանում հրատարակվում են Հունարենի պատմա-համեմատական ուսումնասիրությանը նվիրված, այլև նրա պատմության տարբեր շրջանների լեզվավիճակը բնութագրող բազմաթիվ աշխատություններ՝ Հիրտի «Հունարենի հնչյունաբանությունն ու ձեւաբանությունը», Ռայտի «Հունարեն լեզվի հա-**

<sup>1</sup> Հ. Աճառյան, **Թուրքերենի ազգեցությունը հայերենի վրա** և **թուրքերենե փոխառյալ բառեր հայերենի մեջ**, Վաղարշապատ, 1902. Հայ բարբառագիտություն, Մոսկվա—Նոր-Նախիջևան, 1911. H. Adjarian, Classification des dialectes arméniens, Paris, 1909.

<sup>2</sup> G. Decters, Armenisch und Südkaufasisch, „Caucasica“, 3—4, 1926—1927.

<sup>3</sup> J. Karst, Historische grammatisches des Kilisch—Armenischen, Strassburg, 1901. Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912.

<sup>4</sup> J. Fraser, Phrygian Studies, I, TCPH.S, VI, 2, Cambridge, 1913.

<sup>5</sup> H. Krahe, Die alten Balkanillyrischen geographischen Namen, Heidelberg, 1925. Lexicon altillyrischer Personennamen, Heidelberg, 1929.

<sup>6</sup> G. Pekmezci, Grammatik der albanischen Sprache, Wien, 1908. A. Leotti, Grammatica elementare della lingua albanese (dialetto toscano), Heidelberg, 1915. G. Weigand, Albanesische grammatis im südgegischen Dialekt, Leipzig, 1913. A. Feizzi, Grammatica della lingua albanese, Napoli, 1929.

Ճեմատական քերականությունը», Հոֆմանի «Հունարեն լեզվի պատմությունը», Մեյերի «Հունարեն լեզվի պատմության տեսությունը», Թումբի «Հունարեն լեզվուն հելլենիզմի շրջանում» գիրքը, Մայսերի «Հունական պապիրուսների լեզուն», Մոռլիթոնի «Նոր կտակարանի հունարենի քերականությունը», Պալտեսի «Բյուզանդական ժամանակագրությունների քերականությունը»<sup>1</sup>:

Մեյեն և Վանդրիեսը գրում են հունարենի և լատիներենի համեմատական քերականությունը<sup>2</sup>: Հունարենի առանձին կողմեր քննության են առնված Վանդրիեսի, Դերրուների, Կյունիի, Մանյենի, Շանտրենի աշխատություններում<sup>3</sup>:

Երևան են գալիս հունարենի ստուգաբանական արժեքավոր բառարաններ՝ Մեյերի «Հունական ստուգաբանության ձեռնարկը», Պրելիցի «Հունարեն լեզվի ստուգաբանական բառարանի» վերամշակված հրատարակությունը և մանավանդ Բուազակի «Հունարեն լեզվի ստուգաբանական բառարանը»<sup>4</sup>: Ստուգաբանական տեղեկություններ են պարունակում նաև Մյուլերի և Պասսով-Կրյոներտի՝ հունարենի բառարանները<sup>5</sup>:

<sup>1</sup> H. Hirt, Handbuch der griechischen Laut- und Formenlehre, Heidelberg, 1902, II հր., 1912. J. Wright, Comparative Grammar of the Greek Language, Oxford, 1912. O. Hoffmann, Geschichte der griechischen Sprache, Berlin—Leipzig, 1911, II հր., 1916. A. Meillet, Aperçu d'une histoire de la langue grecque, Paris, 1913. A. Thumb, Die griechische Sprache im Zeitalter des Hellenismus, Strassburg, 1901. E. Mauerer, Grammatik der griechischen Papyri, I—II, Berlin—Leipzig, 1923—1934. J. H. Moulton, Grammar of New Testament greek (լրացված W. F. Howard-ի կողմէ), I—II, Edinburgh, 1908—1929. S. B. Psaltes, Grammatik der byzantinischer Chroniken, Göttingen, 1913.

<sup>2</sup> A. Meillet et J. Vendryes, Traité de grammaire comparée des langues classiques, Paris, 1925, II հր., 1927.

<sup>3</sup> J. Vendryes, Traité d'accentuation grecque, Paris, 1904. A. Debrunner, Griechische Wortbildungslehre, Heidelberg, 1917. A. Cuny, Le nombre dual en grecque, Paris, 1906. V. Magnien, Le futur grec, Paris, 1912. P. Chantraine, Histoire du parfait grec, Paris 1927.

<sup>4</sup> L. Meyer, Handbuch der griechischen Etymologie, I—IV, Leipzig, 1901—1902. W. Prellwitz, Etymologisches Wörterbuch der griechischen Sprache, II հր., Göttingen, 1905. E. Boisacq, Dictionnaire étymologique de la langue grecque, Paris, 1916, III հր. (բառացանկ), 1938.

<sup>5</sup> F. Müller, Grieksche Woordenboek, Groningens Gravenhage, 1920. Passow-Cronert, Wörterbuch der griechischen Sprache (հայոց բառարակություն, Fraenkel-ի ստուգաբանական նշումներով), Göttingen, 1912 և հզ.

Առանձնապես աշխույժ ուսումնասիրության առարկա են դառնում հունական բարբառները. լույս են տեսնում Թումբի, Բեխտելի, Բակի, Դոկինսի բարբառագիտական աշխատությունները<sup>1</sup>:

Մակեդոներենը քննության է ենթարկվում Հոֆմանի կողմից<sup>2</sup>:

Իտալական լեզուներ.— Իտալական հին լեզուներից լատիներենի ուսումնասիրության բնագավառում հանդես են գալիս. մի շարք նոր աշխատություններ, այլև վերամշակվում ու վերահրատարակվում են մի շարք գրքեր՝ լրացվելով գիտության նորագույն տվյալներով. սրանցից նշելի են Շտոլցի և Շմալցի «Լատիներենի քերականության»՝ կոյմանի և Հոփմանի կողմից արմատապես վերամշակված հրատարակությունը, Շտոլցի «Լատիներեն լեզվի պատմությունը», Զոմերի «Լատիներենի հնչյունաբանության և ձեաբանության» նոր հրատարակությունները՝ առանձին լույս տեսած լրացմամբ հանդերձ, Մեյերի «Լատիներեն լեզվի պատմության ուրվագիծը», Նիդերմանի «Լատիներենի պատմական հնչյունաբանության ուրվագիծը», Էռնուի «Լատիներենի պատմական ձեաբանությունը», Փյուրեի «Լատիներենի հնչյունաբանության ձեռնարկը»<sup>3</sup>: Երևան են գալիս նաև լատիներենի առանձին կողմերին նվիրված՝ Վանդրիսի, Մեյերի, Էռնուի, Փյուրեի, Ավերի, Լյոֆշտելտի ուսումնասիրությունները<sup>4</sup>: Ալոիզ Վալդեն հատուկ ուսումնա-

<sup>1</sup> A. Thum b., Handbuch der griechischen Dialekte, Heidelberg, 1909. Fr. Bechtel, Die griechischen Dialekte, I—III, Göttingen, 1921—1924. C. D. Buck, Introduction to the Study of the Greek Dialects, Boston, 1910, II հր., 1928. R. M. Dawkins, Modern greek in Asia Minor, Cambridge, 1916.

<sup>2</sup> O. Hoffmann, Die Makedonen, ihre Sprache. und ihr Volkstum, Göttingen, 1906.

<sup>3</sup> F. Stolz und Schmalz, Lateinische Grammatik, V հր., München, 1924—1928. F. Stolz, Geschichte der lateinischen Sprache, Berlin—Leipzig, 1913, II հր., 1922. F. Sommer, Handbuch der lateinischen Laut- und Formenlehre, II հր., Heidelberg, 1914. A. Meillet, Esquisse d'une histoire de la langue latine, Paris, 1928. M. Niedermann, Précis de phonétique historique du latin, Pariz, 1906 (**Բարգանգածէ գերմաներեն և ռուսարեն**). A. Ernout, Morphologie historique du latin, Paris, 1914. C. Juret, Manuel de phonétique latine, Paris, 1921.

<sup>4</sup> J. Vendryes, Recherches sur l'histoire et les effets de l'intensité initiale en latin, Paris, 1902. A. Meillet, De quelques innovations de la déclinaison latine, Paris, 1906. A. Ernout, Les éléments dialectaux du vocabulaire latin, Paris, 1909. C. Juret, Dominance et résistance dans la phonétique latine, Heidelberg, 1913. L. Havet, Manuel de critique verbale appliquée aux textes latins, Paris, 1911. E. Löfstedt, Syntactica, I—II, 1928—1933.

սիրության առարկա է դարձնում իտալակելտական լեզվական փոխարաբերությունների հարցը<sup>1</sup>:

Երևան են գալիս ժողովրդական լատիներենին նվիրված մի շարք ուսումնասիրություններ, որոնցից հիշատակելի են Գրանդշենտի, Կառնոյի, Պիրսոնի աշխատությունները<sup>2</sup>:

Լատիներենի ցեղակից օսկ-ումբրյան լեզուներին հատուկ աշխատություն է նվիրում Բակը<sup>3</sup>:

Բազմաթիվ աշխատություններ են նվիրվում առանձին ոռմանական լեզուների պատմությանը և բարբառագիտությանը, այլև ստուգաբանության հարցերին։ Ֆրանսերենի ուսումնասիրության բնագավառում հատուկ հիշատակության արժանի են Նիրոպի, Մեյբր-Լյուբեկի, Հերցոգի, Վարտբուրգի և Գամլիշեգի աշխատությունները<sup>4</sup>. իսպաներենի բնագավառում՝ Հանսենի և Մենենդեսի Պիրսոնի աշխատությունները<sup>5</sup>. պորտուգալերենի բնագավառում՝ Նունիեսի, Լիսանի դե Վասկոնսելոսի, Գուանալվես Վիանայի և Գարսիա դե Ռիեգոյի աշխատությունները<sup>6</sup>. իտալերենի բնագավառում՝ Գրանդշենտի, Բեյբր-Լյուբեկի և Շպիցերի աշխատություննե-

---

A. Walde, Über älteste sprachliche Beziehungen zwischen Kelten und Italikern, Innsbruck, 1917.

\* C. Grandgent, Introduction to Vulgar Latin, Boston, 1908.

A. Carnoy, Le latin d'Espagne d'après les inscriptions, II հր., Brussels, 1906. J. Pirson, La langue des Inscriptions latines de la gaule, Liège—Paris, 1906.

<sup>3</sup> C. D. Buck, Grammar of Oscan and Umbrian, Boston, 1904.

<sup>4</sup> K. Nyrop, Grammaire historique de la langue française, I—VI, Copenhagen, 1914—1930. W. Meyer-Lübke, Historische grammatic der französischen Sprache, II հր., I—II, Heidelberg, 1913—1921. E. Herzog, Neufranzösische Dialekttexte mit grammatischer Einleitung, Leipzig, 1906. W. von Wartburg, Französisches etymologisches Wörterbuch, Bonn, 1928. E. Gamillscheg, Etymologisches Wörterbuch der französischen Sprache, Heidelberg, 1928.

F. Hanssen, Spanische grammatic auf historischer Grundlage, Halle, 1910. R. Menéndez Pidal, Manuel de gramática histórica española, V հր., Madrid, 1929. El Idioma español en sus primeros tiempos, Madrid, 1927.

<sup>6</sup> J. J. Nuñes, Compendio de gramática histórica portuguesa, Lisboa, 1919. J. Leite de Vasconcellos, Esquisse d'une dialectologie portugaise, Paris, 1901. A. Gonçalver Vianna, Portugais. Leipzig, 1903. V. García de Viejo, Elementos de gramática histórica Gallega, Burgos, 1909.

րը<sup>1</sup>. ոռոմիներենի բնագավառում՝ Դենսուսիանուի և Գարտների աշխատությունները<sup>2</sup>. դալմատերենի բնագավառում՝ Մ. Բարտոլիի աշխատությունը<sup>3</sup>. կատալաներենի բնագավառում՝ Մեյեր-Լյուբերի աշխատությունը<sup>4</sup>. ուսու-ռոմաներենի բնագավառում՝ Գարտների աշխատությունը<sup>5</sup>. սարդիներենի բնագավառում՝ Վագների աշխատությունը<sup>6</sup>:

Ռոմանական լեզուների ուսումնասիրության բնագավառում հիշատակելի են Բուրսիեի «Ռոմանական լեզվաբանության տարերքը» և Յառների «Ռոմանական լեզվաբանությունը»<sup>7</sup>, այլև Գրյոբերի ու Մեյեր-Լյուբերի աշխատությունների նոր հրատարակությունները:

Կելտական լեզուներ.— Կելտական լեզուների համեմատական քերականության բնագավառում մեծ ներդրում է Պեդերսենի «Կելտական լեզուների համեմատական քերականությունը»<sup>8</sup>, որ գալիս է փոխարինելու Ցոյսի արդեն հնացած քերականությանը:

Կելտական առանձին լեզվախմբերի ու լեզուների ուսումնասիրության բնագավառում հանդես են գալիս բազմաթիվ աշխատություններ. գալլերենի բնագավառում՝ Հոլդերի աշխատության նոր հատորները և Դուտտինի աշխատությունը<sup>9</sup>. գաելական լեզուների

<sup>1</sup> Ch. H. Grandgent, From Latin to Italian, Cambridge, 1927  
G. Bertoni, Italia dialettale, Milano, 1916. W. Meyer-Lübke, Grammatica sterica-comparata della lingua italiana dei dialetti toscani, Torino, 1910. L. Spitzer, Italienische Umgangssprache, Bonn, 1922.

<sup>2</sup> O. Densusianu, Histoire de la langue roumaine, I—II, Paris, 1901—1938. Th. Gartner, Darstellung der rumänischen Sprache, Halle, 1904.

M. Bartoli, Das Lalmatische, I—II, Wien, 1906.

<sup>4</sup> W. Meyer-Lübke, Das Katalanische, Heidelberg, 1925.

<sup>5</sup> Th. Gartner, Handbuch der rätoromanischen Sprache und Literatur, Halle, 1910.

M. L. Wagner, Das ländliche Leben Sardiniens im Spiegel der Sprache, Heidelberg, 1921.

<sup>7</sup> E. Bourcier, Elements de linguistique romane, II հր., Paris, 1923. (ռուս. Բարդ. Է. Բուրչե, Основы романского языкоznания, М., 1952). A. Zauener, Romanische Sprachwissenschaft, I—II, Leipzig, 1914—1915.

<sup>8</sup> H. Pedersen, Vergleichende Grammatik der keltischen Sprachen, I—II, Göttingen, 1909—1913.

<sup>9</sup> A. Holder, Alt-celtischer Sprachschatz, I—III, 1896—1913 (անագարտ). G. Dottin, La langue gauloise, Paris, 1920.

բնագավառում՝ Թուռնայզենի, Վանդրիսի, Դոտտինի, Մակ-Բայնի, Քալդերի աշխատությունները<sup>1</sup>. բրիտանական լեզուների բնագավառում՝ Ջունզի, Թոդիչի, Ջեների, Լե-Կլերկի, Սոմերֆուլտի աշխատությունները<sup>2</sup>:

Գերմանական լեզուներ.— Բացի «Գերմանական ֆիլոլոգիայի ուրվագծի» նոր հրատարակությունից, այս ենթաշրջանում երևան են գալիս մի շարք կարևոր աշխատություններ. դրանցից նշելի են Կլուգի «Նախագերմաներենը», Մեյերի «Գերմանական լեզուների ընդհանուր հատկանիշները», Բոերի «Նախագերմաներենի ձեռնարկը», Կարստենի՝ գերմանաֆիննական բառական ընդհանրություններին վերաբերող ուսումնասիրությունները, Ֆալկի և Տորպի «Գերմանական լեզվամիասնության բառագանձր»<sup>3</sup>:

Գերմանական առանձին լեզուների պատմա-համեմատական և նկարագրական ուսումնասիրության բնագավառում երևան են գալիս բազմաթիվ նոր աշխատություններ. 1) արևելագերմանական լեզուներից գոթերենի համար՝ Կիկերսի «Գոթերենի համեմատական քերականության ձեռնարկը», Ելինեկի «Գոթերեն լեզվի պատմությունը», Ռայտի «Գոթերեն լեզվի քերականությունը», Ֆալմանի «Գոթերեն լեզվի ստուգարանական բառարանը»<sup>4</sup>. 2) հյուսիս-գեր-

<sup>1</sup> R. Thurneysen, Handbuch des altirischen, I—II, Heidelberg, 1909. J. Vendryes, Grammaire du vieil-irlandais, Paris, 1908. G. Dottin, Manual d'irlandais moyen, I—II, Paris, 1913. A. Mac-Bain, Etymological Dictionary of the Gaelic Language, II հր., Inverness, 1911. G. Calder, Gaelic grammar, Glasgow, 1923.

<sup>2</sup> J. M. Jones, Welsh Grammar, Historical and Comparative, Oxford, 1913. J. Baudiss, Grammar of Early Welsh, Oxford, 1924. H. Jenner, Handbook of the Cornisch Language, London, 1904. L. Le-Clerk, Grammaire brettone du dialecte de Tréguier, II հր., Tréguier, 1911. A. Sommerfelt, Le breton parlé à Saint-Pol-de-Léon, Rennes, 1920.

<sup>3</sup> F. Kluge, Urgermanisch, III հր., Strassburg, 1913. R. C. Boer, Oergermansch Handboek, II հր., 1924. T. E. Karsten, Germanisch-finnische Lehnwort-Studien, Helsingfors, 1915. Fragen aus dem gebiete der germanisch-finnischen Berührungen, Helsingfors, 1922. A. Torp und H. S. Falk, Wortschatz der germanischen Spracheinheit, Göttingen, 1909.

<sup>4</sup> E. Kickers, Handbuch der vergleichenden gotischen grammatis, München, 1928. M. H. Jellinek, Geschichte der gotischen Sprache, Berlin—Leipzig, 1926. J. Wright, Grammar of the gothic Language, 1910. S. Feist, Vergleichendes Wörterbuch der gotischen Sprache, II հր., Halle, 1923.

і'անական (սկանդինավյան) լեզուների համար՝ Ֆալկի և Տորպի «Նորվեգա-դանիական ստուգաբանական բառարանը», Յոհաննես-սոնի «Հին հյուսիսային ոռւնական արձանագրությունների քերականությունը», Դալուսի «Դանիերեն լեզվի պատմությունը», Բոերի «Հին սկանդինավերենի ձեռնարկը»<sup>1</sup> 3) արևելագերմանական լեզուներից գերմաներենի համար՝ Հիրտի «Գերմաներեն լեզվի պատմությունը», Բեհակելի «Գերմաներեն լեզվի պատմությունը» և «Գերմաներենի շարահյուսությունը», Բեղեկեի «Հին վերին գերմաներենի ներածությունը», Շացի «Հին վերին գերմաներենի քերականությունը»<sup>2</sup>. անգերենի համար՝ Հյուշոնի «Անգլերեն լեզվի պատմությունը», Ուայլի. «Անգլերենի համառոտ պատմությունը», Էմերսոնի «Անգլերեն լեզվի պատմությունը», Կրապպի «Անգլերեն լեզուն Ամերիկայում» աշխատությունը, Ռայտի «Հին անգլերենի քերականությունը», «Անգլիական բարբառների քերականությունը», և «Անգլիական բարբառների բառարանը», Ուիկլիի «Փամանակակից անգլերենի ստուգաբանական բառարանը» և «Փամանակակից անգլերենի համառոտ ստուգաբանական բառարանը», Սկիթի և Հոլտհաուզենի «Անգլերեն լեզվի ստուգաբանական բառարանները»<sup>3</sup>, Եսպերսենի՝ արդեն հիշատակված աշխատությունները. հին սաքսոներենի համար՝ Գալեի «Հին սաք-

<sup>1</sup> H. S. Falk und A. Törp, Norwegisch-dänisches etymologisches Wörterbuch, Heidelberg, 1910—1911. A. Johansson, Grammatik der umeindischen Runeninschriften, 1923. V. Dahlerup, Det danske sprogs historie, II հր., København, 1921. R. C. Boer, Oudnoorsch handboek, 1920.

<sup>2</sup> H. Hirt, Geschichte der deutschen Sprache, München, 1919, II հր., 1925. O. Behaghel, Geschichte der deutschen Sprache, V հր., Berlin—Leipzig, 1928. Deutsche Syntax, I—IV, Heidelberg, 1923—1932. G. Baesecke, Einführung in das Hochdeutsche, 1918. J. Schatz, Althochdeutsche Grammatik, 1927.

<sup>3</sup> R. Huchon, Histoire de la langue anglaise, I—II, Paris, 1923—1930. H. C. Wyld, Short History of English, III հր., London, 1927. O. F. Emerson, History of the English Language, New York, 1912. G. P. Krapp, The English Language in America, I—II, New York, 1925. J. Wright, Old English Grammar, III հր., 1925. English Dialect Grammar, Oxford, 1905. English Dialect Dictionary, I—VI, Oxford, 1898—1905. E. Weekley, Etymological Dictionary of Modern English, London, 1921. Concise Etymological Dictionary of Modern English, London, 1924. W. W. Skeat, Etymological Dictionary of the English Language, II գերանային և լնդլայնային հր., Oxford, 1910. F. Holthausen, Etymologisches Wörterbuch der englischen Sprache, II հր., Leipzig, 1927.

սոներենի քերականությունը»<sup>1</sup>. Հին Փրիզերենի համար՝ Շտելլերի «Հին Փրիզերենի քերականության ուրվագիծը»<sup>2</sup>. ստորին գերմաներենի և հոլանդերենի (նիդեռլանդերենի) ու նրա բազայի վրա ժագած լեզուների համար՝ Գրիմեի «Ստորին գերմանական բարբառները», Շյոնֆելդի «Նիդեռլանդերենի համեմատական քերականությունը», Ֆրանկի «Նիդեռլանդերեն լեզվի ստուգաբանական բառարանը», Ֆրիկի «Աֆրիկաանսը» և «Անտիլյան նեգրերի հոլանդերենը», Յուսելին դը Յոնգի «Այսօրվա նեգրական հոլանդերենը»<sup>3</sup>:

### Յ. ԱԶ-ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

**Սեմա-քամական լեզուներ.** — Սեմագիտության բնագավառում առանձնահատուկ տեղ ունի Կ. Բրոկելմանը, որը ի մի է բերում սեմական լեզուների համեմատական ուսումնասիրության արդյունքները<sup>4</sup>. Ցիմմենի աշխատությունից հետո նոր աստիճանի հասցնելով այդ լեզուների համեմատական քերականությունը<sup>5</sup>: Մեմական լեզուներին նվիրված այլ ուսումնասիրություններից կարելի է նշել Հ. Բաուերի և Պ. Լեանդերի, Մ. Կոհենի աշխատությունները<sup>6</sup>:

Քամական լեզուների համեմատական ուսումնասիրության բնագավառում հիշատակելի է Կ. Մայնհոֆի աշխատությունը<sup>6</sup>:

Փորձեր են արվում սեմա-քամական լեզուները կապելու ոչ միայն հնդկրոպական, այլև այլ կարգի լեզուների հետ:

<sup>1</sup> J. H. Gallé e, Altsächsische Grammatik, 1910.

<sup>2</sup> W. Steller, Abriss der altfriesischen Grammatik, 1928.

<sup>3</sup> H. Grimmel, Plattdeutsche Mundarten, II հր., Berlin—Leipzig, 1922. M. Schönfeld, Historiese Grammatica van het Nederlands, II հր., Zutphen, 1921. J. Frank, Etymologisch Woordenboek den nederlandsche taal, II հր., 1912. D. C. Hesselink, Het Afrikaans, II հր., Leyden, 1924. Het Negerhollandsch der Deense Antillen, Leyden, 1905. J. P. B. Josselin de Jong, Het huidige Negerhollandsch, Amsterdam, 1926.

<sup>4</sup> C. Brockelmann, Grundriss der vergleichenden Grammatik der semitischen Sprachen, I—II, Berlin, 1908—1913. Kurzgefasste vergleichende Grammatik der semitischen Sprachen, Berlin, 1908. Semitische Sprachwissenschaft, Berlin—Leipzig, 1906 (Փր. Բարգմ. 1910), II հր., 1916.

<sup>5</sup> H. Bauer und P. Leander, Historische Grammatik der hebräischen Sprache, I, Halle, 1922. M. Cohen, Le système verbal sémitique et l'expression du temps, Paris, 1924.

<sup>6</sup> C. Meinhof, Die Sprachen der Hamiter, Hamburg, 1912.

**«Ուրալա-ալբայան»** լեզուներ, նապոներեն, կորեերեն.—Ֆիննա-ուգրական լեզուների ուսումնասիրության բնագավառում այս ենթաշրջանում նշելի են Գոմբոցի, Միննեյի և ուրիշների աշխատությունները<sup>1</sup>: Ֆիննա-ուգրագիտության զարգացման գործում կարևոր դեր են խաղում 1900 թվից հրատարակվող «Keleti szemle» և 1901 թվից հրատարակվող «Finnisch-ugrische Forschungen» հանդեսները:

Թյուրքական, մոնղոլական և տունգուա-մանչուգական լեզուների ուսումնասիրության բնագավառում նշելի են Հ. Վինկելերի, Վ. Գրյոնբեկի, Ժ. Դենիի, Զ. Գոմբոցի և ուրիշների աշխատությունները<sup>2</sup>: Որոշ լեզվաբաններ հանդես են գալիս ոչ միայն ուրալա-ալբայան, այլև այդ լեզուների և ճապոներենի ցեղակցության գաղափարով (Վ. Պրյոլե, Հ. Վինկելեր և ուրիշներ): Կարծիքներ են հայտընվում նաև ուրալա-ալբայան և շումերա-ակադական (Ֆր. Հոմմել), հնդկրոպական (Ֆ. Ֆելդեն) ու այլ լեզուների ցեղակցության հնարավորության մասին:

Ճապոնացի լեզվաբան Կանաձավան հատուկ աշխատություն է նվիրում ճապոնա-կորեական ցեղակցության հարցին<sup>3</sup>, իսկ սովետական գիտնական Պոլիվանովը կորեերենը ևս մտցնում է ուրալա-ալբայան լեզուների ցեղակիցների մեջ:

Կովկասյան լեզուներ. բասկերեն.—Թեև կովկասյան լեզուների ուսումնասիրությունը լայն թափ է ընդունում ՍՍՌՄ-ում, բայց արտասահմանում ևս զբաղվում են-նրանց ուսումնասիրությամբ: Նշելի է, որ Ա. Բրաունը Մառի ազգեցության տակ նույնպես մեծ տեղ է տալիս կովկասյան լեզուներին հնդկրոպական լեզուների ձևակորման մեջ<sup>4</sup>: Կովկասյան լեզուների ուսումնասիրությանը նվիրված գործերից հիշատակելի է հատկապես Ա. Դիորի «Կովկասյան լեզու-

<sup>1</sup> Z. Gombocz, J. Melich, Magyar etymologai szłotar, Budapest, 1914. J. Szinnyei, Finnisch-ugrische Sprachwissenschaft, II հր., Berlin—Leipzig, 1922.

<sup>2</sup> H. Winckler, Der uralaltaische Sprachstamm; das Finnische und das Japanische, Berlin, 1909. Die altaische Völker- und Sprachenwelt, Berlin—Leipzig, 1921. Die altaischen Sprachen, Berlin, 1924. V. Grönbech, Forstudier til tyrkisk lydhistorie, Köbenhavn, 1902. J. Deny, Grammaire de la langue turque, Paris, 1921. Z. Gombocz, Zur Lautgeschichte der altaischen Sprachen, KSZ, 1912 և այլն.

<sup>3</sup> M. S. Kanazawa, The Common Origin of the Japanese and Korean Languages, Tokio, 1910.

<sup>4</sup> A. Braun, Die Urbevölkerung Europas und die Herkunft der Germanen, Berlin, 1922.

Ների ուսումնասիրության ներածությունը<sup>1</sup>: Գ. Դեետերսը աշխատություն է նվիրել հայ-կովկասյան լեզվական կապերի ուսումնասիրությանը, Ն. Ս. Տրուբեցկոյը՝ հյուսիսային կովկասյան լեզուների համեմատական հնչունաբանությանը<sup>2</sup>: Կովկասյան լեզուների ուսումնասիրության բնագավառում զգալի աշխատանք է կատարել 1825 թվից Լայպցիգում հրատարակվող «Zeitschrift für Erforschung der Sprachen und Kulturen des Kaukasus» հանդեսը:

Այս շրջանում ոչ միայն Ն. Յ. Մառը, այլև արտասահմանյան մի շարք գիտնականներ դնում են կովկասյան լեզուների և բասկերենի հնարավոր ցեղակցության հարցը (Ուլենբեկ)<sup>3</sup>: Բասկերենին կարեռ աշխատություններ են նվիրում Հ. Շուխարդտը, Հ. Վինկլերը և ուրիշները<sup>4</sup>: 1907 թվից Փարիզում լույս է տեսնում «Revue internationale des études basques» հանդեսը:

Զին-տիբեթական, դրավիդյան, մոն-քմեր լեզուներ.— Զին-տիբեթական, դրավիդյան և մոն-քմեր լեզուների մասին կարեվոր աեղեկություններ է պարունակում «Հնդկաստանի լեզուների տեսություն» բազմահատոր աշխատությունը<sup>5</sup>: Դրիերսոնի ընդհանուր ղեկավարությամբ: Համատիպ մի աշխատություն է նվիրել և. Ֆ. Թեյլորը Բիրմայի լեզուներին<sup>6</sup>: Զինական լեզվաբանության հարցերին նվիրված գործերից նշելի է Ի. Բ. Կառլգրենի «Բանասիրությունը և հին Զինաստանը»<sup>7</sup>: Տիբեթա-բիրմական լեզվական կապերին է նվիրված Ս. Վոլֆենդենի աշխատությունը<sup>8</sup>: Վ. Շմիդտը ոչ միայն առանձին աշխատություն է նվիրել աշխարհի լեզուների ընդհանուր տեսությանը, այլև մոն-քմեր լեզվաբանուանիքին<sup>9</sup>:

<sup>1</sup> A. Dírr, Einführung in das Studium der kaukasischen Sprachen, Leipzig, 1928.

<sup>2</sup> G. Deeters, Armenisch und Südkaufatisch, Leipzig, 1923. N. S. Trubetzkoy, Studien auf dem Gebiete der vergleichenden Lautlehre der nordkaufasischen Sprachen, „Caucasica“, III, 1926.

<sup>3</sup> C. C. Uhlenbeck, Over een mogelijke verwantschap van het Baskisch met de palaeo-kaukasische talen, Amsterdam, 1923.

<sup>4</sup> H. Schuchardt, Die iberische Deklination, Wien, 1907. H. Winckler, Das Baskische und der Vorderasiatische mittellandische Völker- und Kulturreis, Breslau, 1909.

<sup>5</sup> Linguistic Survey of India, II, 1903—1909, IV, 1906.

<sup>6</sup> L. F. Taylor, Linguistic Survey of Burma, Rangoon, 1917.

<sup>7</sup> B. Karlgren, Philology and Ancient China, Oslo, 1926.

<sup>8</sup> S. Wolfenden, Outline of Tibeto-Burmán Morphology, London, 1929.

<sup>9</sup> W. Schmidt, Die Mon-Khmer Völker, ein Bindeglied zwischen Völker Zentralasiens und Austronesien, Braunschweig, 1906.

Ամերիկյան, ավստրալո-օվկիանյան և աֆրիկյան լեզուներ.—  
ՍՍՌՄ ծայր հյուսիսի և Ամերիկայի ծայր հյուսիսի լեզուներից  
էսկիմոս-ալյուստյան լեզուների ձևարանությանը մի աշխատություն  
է նվիրել Ուկենբեկր<sup>1</sup>:

Ավստրալո-օվկիանյան լեզուներին նվիրված աշխատություն-  
ներից հիշատակելի են Դ. Մակդոնալդի, Ա. Թալհայմերի, Հ. Ենսե-  
նի, Ա. Հ. Ռեյի, Վ. Շմիդտի, Բ. Սպենսերի, Ֆ. Զ. Կիլբնի գործե-  
րը<sup>2</sup>,

Աֆրիկյան լեզուներին նվիրված ուսումնասիրություններից  
նշելի են Կ. Մայնհոֆի, Դ. Վեստերմանի, Ֆ. Լ. Միջիոդի, Ֆ. Լ.  
Գրիֆիթի, Է. Ցյուլպրցի, Լ. Հոմբուրգի, Հ. Հոնսոնի, Վ. Հ.  
Ստավլետոնի, Ա. Վեռների աշխատությունները<sup>3</sup>: Սուրանա-գլի-  
նեյան լեզուների դասակարգման երկու տարբեր փորձեր են պատ-  
կանում Մ. Դելաֆոսին և Ա. Դրեքսելին<sup>4</sup>: Աֆրիկյան լեզուների ու-  
սումնասիրությանը նվիրված են մի շարք պարբերական հանդեսներ:

<sup>1</sup> C. C. Uhlenbeck, *Ontwerp van eene vergelijkende vormleer der Eskimotalen*, Amsterdam, 1907.

<sup>2</sup> D. Macdonald, *Oceanic Languages; their Grammatical Structure, Vocabulary, and Origin*, London, 1907. A. Thalheimer, *Beiträge zur Kenntnis der Nomina Personalia und Possessiva der Sprachen Mikronesiens*, Stuttgart, 1908. H. Jensen, *Studien zur Morphologie der polynesischen Sprachen*, Kiel, 1923. S. H. Ray, *A Comparative Study of the Melanesian Island Languages*, Cambridge, 1928. W. Schmidt, *Die Gliederung der australischen Sprachen*, Wien, 1919. B. Spencer, *Native Tribes of the Northern Territory of Australia*, London, 1914. F. J. Gillen, *The Northern Tribes of Central Australia*, London, 1904.

<sup>3</sup> C. Meinhof, *Die Sprachen des dunklen Erdtheils*, Stuttgart, 1909. Die moderne Sprachforschung in Africa, Berlin, 1910. *Grundriss einer Lautlehre der Bantusprachen*, II հր., Berlin, 1910. *Grundzüge einer vergleichenden Grammatik der Bantu-Sprachen*, Berlin, 1906. D. Westermann, *Die Sudansprachen*, Hamburg, 1911. F. L. Migeod, *The Languages of West Africa*, I—II, London, 1911—1913. F. L. Griffith, *The Nubian Texts of the Christian Period*, Berlin, 1913. E. Zyhlaz, *Grundzüge der nubischen Grammatik*, Leipzig, 1928. L. Homberger, *Phonétique historique du bantou*, Paris, 1913. H. H. Johnson, *Comparative Study of the Bantu and Semi-Bantu Languages*, I—II, 1919—1922. W. H. Stapleton, *Comparative Handbook of Congo Languages*, Yakusu, 1903. A. Werner, *Bantu Languages*, London, 1913.

<sup>4</sup> Հմա. „Les Langues du monde“, 1924, էջ 403—500 & A. Drexel. *Die Gliederung der afrikanischen Sprachen*, „Anthropos“, XVI—XX, 1921—1925. Վ. Շմիդտ հետևում է Դրեքսելին:

Ամերիկյան բնիկների լեզուներին նվիրված ուսումնասիրություններից հիշատակելի են Ֆ. Բոուլզի, Ս. Ա. Լաֆոն-Քվեվեդոյի գործերը<sup>1</sup>; Ամերիկյան լեզուների ուսումնասիրության գործում նշանակալից դեր են կատարել «International Journal of American Linguistics» (Նյու-Յորք, 1917—1935 թթ.) և «Journal de la société des americanistes de Paris» (Փարիզ, 1904 թ. սկսած) հանդեսները:

---

<sup>1</sup> F. Boas, *Handbook of American Indian Languages North of Mexico*, I—III, Washington, 1911—1931. S. A. Lafone-Guevedo, *Las lenguas de tipo guayacuru y chiquito comparadas*, Buenos Aires, 1910.

---

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԾ

### 1. ՀԱՅԵՐԵՆ

Աղայան Է., Հայ լեզվաբանության պատմություն, I, Երևան, 1958,  
էջ 332—370 և 398—408.

### 2. ՌՈՒՍԵՐԵՆ

Белевицкий С. Л., Е. Сепир-ի „Язык“-ի թարգմանության տեսականը, М.—Л., 1934, էջ V—IX.

Белов А. И., Грамматическая система проф. А. М. Пешковского. Автореф. канд. диссерт., М., 1951.

Белов А. И., А. М. Пешковский как лингвист и методист, М., 1958.

Беляев М. В., Новая этнолого-лингвистическая теория, ИСОИЯ, Баку, 1927, № 5.

Беляев Н. И., Синтаксическая система А. Шахматова, 1939.

Бернштейн Н. С., Основные вопросы синтаксиса в освещении А. А. Шахматова, ИОРЯС АН, XXV.

Будагов Р. А., Բացիք մասին—Բալլի Շ., Общая лингвистика и вопросы французского языка, М., 1955, էջ 8—19.

Будагов Р. А., Из истории языкоznания (Соссюр и соцсиорианство), М., 1954.

Введенский Д. Н., Фердинанд де-Соссюр и его место в лингвистике, Ф. де-Соссюр-ի „Курс общей лингвистики“-ի ռուսականը, М., 1933, էջ 5—21.

Виноградов В. В., „Синтаксис русского языка“ акад. А. А. Шахматова, „Вопросы синтаксиса современного русского языка“, М., 1950, стр. 75—126.

Виноградов В. В., Учение акад. А. А. Шахматова о грамматических формах слов и о частях речи в современном русском языке, „Из трудов А. А. Шахматова по современному русскому языку“, М., 1952.

Звегинцев В. А., Эстетический идеализм в языкоznании, М., 1956.

Кон И. С., Об „историзме“ Бенедетто Кроче, ВИ, 1960, № 10.

Немировский М. Я., Альфред Тромбетти, Владикавказ, 1980.

- Немировский М. Я., Современное языкознание и его задачи, Владикавказ, „Известия Горского педагогического ин-та“, 1926.
- Немировский М. Я., Язык и культура, 1928 (*Յուլերի մասին*):  
Поспелов Н. С., О лингвистическом наследстве С. Карцевского, ВЯ, 1957, № 4, стр. 46—66.
- Сергиевский М., Антуан Мейе и его „Введение в сравнительное изучение индоевропейских языков“, „Введение...“—ի առաջարկն, М., 1988, էջ 5—26.
- Смирнов С. В., Проф. Д. Н. Кудрявский и вопросы славянского языкознания, УЗ Тартусского университета, 65, 1958, стр. 173—187.
- Сухотин А. М., Эдуард Сепир и его место в лингвистике, Сепир-ի „Язык“—ի առև. թարգմ. մեջ, М.—Л., 1934, էջ X—XX:
- Франк-Каменецкий, Первобытное мышление в свете яфетической теории и философии, ЯЛ, III (*Կամենեցի մասին*):
- Черных П. Я., Современные течения в лингвистике, Иркутск, 1929.
- Шахматова-Коплен О. А. и Коплен В. И., Алексей Александрович Шахматов, Л., 1926.
- Шор Р. О., Кризис современной лингвистики, ЯС, 1926.
- Шор Р. О., Ж. Вандриес-ի „Язык“—ի առև. թարգմ. առաջարկն, М., 1937, էջ 5—12.

### 3. ՕՑԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

- A Grammatical Miscellany Offered to Otto Jespersen on his Seventieth Birthday, London, 1930.
- Bally Ch., F. de Saussure et l'état actuel des études linguistique, Genève, 1913.
- Baumler A., B. Croce und die Ästhetik, ZAAK, 16, 1922.
- Buysseens E., Les six linguistiques de F. de Saussure, LV, 7, 1942.
- Bidney D., On the Philosophical Anthropology of E. Cassirer and its Relation to the History of Anthropological Thought, „The Philosophy of Ernst Cassirer“, Evanston, 1949.
- Eringa S., La méthode statique de l'école genevoise, „Neophilologus“, 16, 1931, էջ 58—64 & 136—146.
- Feist H., B. Croce, Gestalt und Werk, DVLG, 8, 1930, էջ 609—646.
- Friedrich H., Croces Ästhetik und Vosslers Sprachphilosophie, ZFEU, XXXI, 1932.
- Funke O., Innere Sprachform. Eine Einführung in A. Martys Sprachphilosophie, Prag, 1924.
- Funke O., Martys Sprachphilosophie und die neuere Sprachforschung, „Hochschulwissen“, 1924.
- Funke O., Studien zur Geschichte der Sprachphilosophie, 1927.
- Funke O., A. Marty-ի „Satz und Wort“—ի կրյաբան-հավելվածը, 1928, էջ 76—88.

- Ginneken L. van, De huidige stand der genealog taalwetenschap TNTL, 27, 1909.
- Günther H., Zum heutigen Stand der Sprachforschung, WS, XII, 1929.  
*tq 386—397.*
- Hjelmslev L., Nekrolog auf E. Sapir, AL, I, 1939.
- Hirt: Festschrift zu seinem 75. Geburtstag, Osterheld, 1920.
- Idealistische Neufilologie. Festgabe zu Vosslers 50. Geb., herausgegeben von V. Klemperer, E. Lerch. Heidelberg, 1922.  
— Festgabe zum 60. Geb., München, 1932.
- Ipseñ G., Sprachphilosophie der Gegenwart. Berlin, 1930.
- Jaberg K., Idealistische Neuphilologie, GRM, 1926.
- Josselin de Jong, J. P. R. de. In memoriam C. C. Uhlenbeck, „Lingua“, III, 3, 1953, *tq 243—268.*
- Karl Vossler, „Der Lesezirkel“—*μετωπη*, Zürich, 1930.
- Krieg M., Fritz Mauthners Kritik der Sprache, München, 1914.
- Kraus O., A. Marty.—A. Marty—*μετωπη* «Gesammelte Schriften»—*μετωπη*, hrsg. von Eisenmeier, Kastil, Kraus, Halle, 1916—1920.
- Melanges de linguistique offerts à Charles Bally. Genève, 1939 (*μετωπη*—*μετωπη*).
- Melanges de linguistique et de philologie offerts à Jacq van Ginneken, Paris, 1937 (*μετωπη*—*μετωπη*).
- Mikuš F., Jan v. Rozwadowski et la structuralisme syntagmatique, „Lingua“, V, I, 1955, *tq 1—44* & V, 2, 1956, *tq 145—204.*
- Mikuš F., Edward Sapir et la syntagmatique, CFS, II, 1953, *tq 11—30.*
- Montoliu M. de, El llenguatge com a fet estètic y com a fet lògic, Barcelona, 1921 (*μετωπη* *μετωπη*).
- Montoliu M. de, El lenguaje como fenómeno estético, Buenos Aires, 1926.
- Nencioni G., Idealismo e realismo nella scienza del linguaggio, Firenze (*μετωπη*).
- Otto E., A. Martys Sprachphilosophie, ASNSL, 179, 1941, *tq 89—101.*
- Pagliaro A., Sommario di neolinguistica arioeuropea. I. Cenni storici e questioni teoriche, Roma, 1930.
- Pestalozzi R., Syntaktische Beiträge. I. Systematik der Syntax Seit Ries, Leipzig, 1909.
- [Schmidt W.], Festschrift: Publication d'hommage offerte au P. W. Schmidt, Wien, 1928.
- Séchéhaye A., L'école genevoise de linguistique générale, IF, XLIV, 1927, *tq 217—241.*
- Séchéhaye A., Les trois linguistiques saussuriennes, VR, V, 1940. *tq 1—48.*
- Stand und Aufgaben der Sprachwissenschaft, Festschrift für W. Streitberg, Heidelberg, 1924.
- Taglavini C., L'opera glottologica di Alfredo Trombetti, Bologna, 1929.

- Terracher L. A., *L'histoire des langues et la géographie linguistique*, Oxford, 1929.
- Trombetti A., *Sullo stato presente della glottologia genealogica*, Bologna, 1914.
- Von Wenker zu Wrede, Marburg, 1933.
- Vossler K., B. Croces Sprachphilosophie, „Aus der romanischen Welt“, 4, 1942, *tgl 138—166*.
- Weidauer Fr., Kritik der Transzentalphenomenologie Husserls, Leipzig, 1933.
- Welch E. P., *The Philosophy of Husserl*, New York, 1941.
- Wells R. S., De Saussure's System of Linguistics, „Word“, 3, 1948, *tgl 1—31*.
- Winkler E., Von Sprachphilosophischen Denken der Franzosen, WS, 19, 1, 1938, *tgl 45—51 & 81—93*.

---

## **ԵՐԿՐՈՐԴ ԵՆԹԱՇՐՋԱՆ (1920-ական թվականների վերջերից մինչև այժմ)**

### **ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՑԻՑԻՆ (ՍՏՐՈՒԿՏՈՒՐԱՑԻՆ) ԴԵԼԻՄԻՏԱՑԻՈՆԻՑ**

#### **ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ենթաշրջանի լեզվաբանական հոսանքների ձևավորման նախադրյալները և պայմանները.— Այս ենթաշրջանում Սովետական Միությունից դուրս տարածված լեզվաբանական հոսանքները շարունակում են հենվել Սոսյուրի առաջ քաշած հիմնական սկզբունքների, այն է՝ լեզվի ու խոսքի, սինխրոնիայի ու դիախրոնիայի, սինտագմատիկ ու ասոցիատիվ հարաբերությունները տարբերման, և նշանի, ֆունկցիայի, ֆոնեմայի գաղափարների վրա:

Սոսյուրի մոտ գերակշռություն ստացած ստատիզմը (պատմական հետազոտությունից հեռանալը) ստրուկտուրալիստական առանձին հոսանքների ներկայացուցիչների մոտ հանգում է իր տրամաբանական վախճանակետին: Լեզվի քննության ձևականացման պահանջը ևս որոշ գեպքերում հասցվում է ծայրահեղության. այս տեսակետից հիմք է ընդունվում Սոսյուրի այն դրույթը, թե «լեզուն ձևէ և ոչ թե սուբստանց»:

Նշանի գաղափարն ընդհանուր առմամբ կարեոր դեր է խաղում ոչ միայն լեզվաբանության, այլև փիլիսոփայական-տրամաբանական և հոգեբանական զանազան տեսությունների մեջ: Այդ գաղափարը մեկնաբանության է ենթարկվում ոչ միայն Հուսելի, Կառսիրերի և Օգենի ու Ռիշարդսի արդեն հիշատակված աշխատություններում, այլև թերտրան Ռասսելի, Ռուդոլֆ Կառնապի, Կարլ Բրիտ-

տոնի, Ուկիլրուր Մարշալ Ուրբանի, Զառլզ Մոռիսի և ուրիշների դրբերում: Լեզվաբանության մեջ Սոսյուրից հետո նշանի գաղափարը հետագա քննության է ենթարկվում Շառլ Բալլիի, Էմիլ Թենվենիստի, Լեոնարդ Բլումֆիլդի, Էրիկ Բյուփսանսի, Ալան Գարդիների, Լուի Ելմալսի, Օյգեն Լորխի, Սերգեյ Կարցեսկու, Հենինդ Սպանգ-Հանս-սենի, Ցորգեն Յորգենսենի, Ալբեր Սեղենի, Լեո Վայսգերբերի, Անդրի Ֆրեյի և այլոց կողմից<sup>1</sup>, որոնց մասին մասամբ առիթ ենք ունեցել խոսելու և մասամբ կիսունք: Նշանի գաղափարի շուրջը հանդես եկող կարծիքները արձագանք են առաջացնում և սովետական իրականության մեջ (Լ. Օ. Ռեղնիկով<sup>2</sup>, Վ. Ա. Զվեգինցև, Մ. Ե. Գալկինա-Ֆեդոռովկ, Ս. Գ. Ախվլեդիանի և ուրիշներ):

Պատմա-համեմատական լեզվաբանության ներկայացուցիչները շարունակում են զբաղվել քերականական ձևերի ծագման և կառուցվածքային արխաիկ տարրերի բացահայտման հարցով: Վերջին հարցը աստիճանաբար սկսում է դառնալ գլխավոր խնդիրը: Դրան նպաստում է նաև հնդկրոպական մի շարք նոր մեռած լեզուների (խեթերենի, թոխարերենի և այլն) գրավոր տեքստերի հայտնադրումն ու վերծանությունը: Միաժամանակ համեմատական բավականաշափ մեծ նյութի կուտակումը հնարավորություն է տալիս ավելի վստահորեն խոսելու միջլեզվարնտանիքային կապերի մասին: Պատմական զարգացման մասին ստրուկտուրալիստների ունեցած հայացքների վրա ազդում է դե ֆրիզի մուտացիաների տեսությունը ևս:

Նորագույն լեզվաբանության բախտի համար կարենոր դեր են խաղում փիլիսոփայական-տրամաբանական նորագույն հոսանքները, հատկապես տրամաբանական պողիտիվիզմը, սեմանտիզմը, Հուսեղի ֆենոմենոլոգիական «գեշտալտ-փիլիսոփայությունը», մասամբ էլ պրագմատիզմը և Շպրենգլերի կուտուրայի փիլիսոփայությունը. նշելի է նաև նեռկանտականությունը, որի ներկայացուցիչներից մեկը՝ է. Կասսիրերը, ինչպես տեսանք, նշանակալից ուշադրություն է նվիրել լեզվաբանության հարցերին, հատկապես նշանների հարցին:

Տրամաբանական պողիտիվիզմի դպրոցը ձևավորվել է 1920—ական թվականներին, Վիեննայում: Նրա ներկայացուցիչներն էին Մորից Շլիկը, Ֆիլիպ Ֆրանկը, Ռուդոլֆ Կառնապը, Հերբերտ Ֆոյքը

<sup>1</sup> Հմմա. H. Spang-Hanssen, Recent Theories of the Nature of the Language Sign, Copenhagen, 1954:

<sup>2</sup> ИАН ОЛЯ, 1948, VII, էջ 401—418.

և ուգրիշները: Զ-րդ համաշխարհային պատերազմի նախօրյակին այդ խմբակի անդամները տեղափոխվեցին ԱՄՆ և Անգլիա:

Որոշ առումով տրամաբանական պողիտիվիզմի ներկայացուցիչների հայացքները սերտորեն կապված են թերտրան Ռասսելի «տրամաբանական էմպիրիզմի» հետ: Թերտրան Ռասսելը հայտնում է այն հայացքը, որ անցել է այն ժամանակը, երբ փիլիսոփաները կարծում էին, թե ապրիորի դատողություններով կարելի է բացահայտել տիեզերքի գաղտնիքները: Փիլիսոփայության նպատակը պետք է լինի զբաղվել սովորական ընկալմամբ և գիտության կողմից սահմանված դրույթների տրամաբանական վերլուծությամբ: Ռասսելը գտնում է, որ ժամանակակից էմպիրիզմը ի վիճակի է կատարելու այդ խնդիրը շնորհիվ մաթեմատիկայի ներդրման և տրամաբանական հզոր տեխնիկայի զարգացման: Տրամաբանությունը նա հայտարարում է փիլիսոփայության էությունը, և փիլիսոփայության խնդիրները հանգեցնում զգայական տվյալների տրամաբանական վերլուծությանը: Ընդսմին մտքերը համեմատվում են ոչ թե իրական առարկաների, այլ մտքերի հետ. պոստուլատներ են համարվում «տրամաբանական նախադասությունները»: Վիտգենշտայնը, առաջ տանելով Ռասսելի հայեցակետը, հանգում է այն եզրակացությանը, որ փիլիսոփայության նպատակը պետք է լինի մեր լեզվի վերլուծությունը, որովհետև այսպես կոչված փիլիսոփայական պրոբլեմները իրականում այդպիսի պրոբլեմներ չեն, նրանք հիմնված են «մեր լեզվի տրամաբանությունը» ոչ ճիշտ հասկանալու վրա: Այն հանգամանքը, որ կարելի է ասել «բարձր աղմուկ», բայց ոչ «կարմիր աղմուկ», Վիտգենշտայնը հնարավոր է համարում բացատրել շարահյուսական տվյալ գուգորդման անհնարինությամբ:

Լեզվաբանական առումով ամենից ավելի մեծ հետաքրքրություն են ներկայացնում տրամաբանական պողիտիվիզմի ականավոր ներկայացուցիչ Կառնապի հայացքները, որոնք մոտ են Ռասսելի և Վիտգենշտայնի հայացքներին: Փիլիսոփայության խնդիրը հանգեցնելով գիտության տրամաբանական վերլուծությանը՝ Կառնապը գտնում է, որ գիտության տրամաբանությունը «գիտության լեզվի տրամաբանական շարահյուսությունն է»: Կառնապը տարրերում է լեզվի երկու մոդուս՝ նյութական և ձևական. նյութական մոդուսը լեզվի հարաբերությունն է իրերինկատմամբ, բառիմաստների վերլուծությունը. լեզվի ձևական մոդուսը լեզվական ձևերի միջև եղած հարաբերությունն է. Կառնապը փիլիսոփայության խնդրի՝

տրամաբանական վերլուծության նպատակը համարում է ոչ թե օբյեկտների, այլ լեզվի, այն է՝ շարահյուսական վերլուծությունը. «Տրամաբանական շարահյուսություն ասելով մենք հասկանում ենք այդ լեզվի (իմա՝ գիտության լեզվի—Գ. Զ.) լեզվաբանական ձևերի ձևական տեսությունը՝ այն ձևական կանոնների սիստեմատիկ շարադրանքը, որոնք կառավարում են լեզուն, այլև այն հետևողունների զարգացումը, որոնք բխում են այդ կանոններից»<sup>1</sup>: Տրամաբանական շարահյուսությունը գործ ունի լոկ լեզվական սիմվոլների հետ՝ անկախ նշանակությունից. այն մի սիստեմ է, որ զբաղվում է ձևականորեն, անկախ իմաստից քննվող լեզվի ձևավորմամբ և ձևափոխությամբ, այսինքն՝ նախադասություններ կազմելու համար սիմվոլների կապակցման և որոշ նախադասություններից այլ նախադասություններ ստանալու կանոններով: Իր «Գիտության միասնությունը»<sup>2</sup> գրքում Կառնապը, նշելով, որ առանձին գիտություններն ունեն իրենց տարրեր լեզուները, առաջ է քաշում այն միտքը, որ կարող է գոյություն ունենալ գիտության համընդհանուր լեզու, որին կարելի է փոխանցել բոլոր մյուս գիտությունների դրույթները: Այդ լեզուն կոչվում է «Փիզիկական լեզու», իսկ նրա վերաբերյալ ուսմունքը՝ ֆիզիկալիզմ: Կառնապի այս հայացքները զարգացվում են նեյրատի և այլոց կողմից:

Տրամաբանական պողիտիվիզմի ներկայացուցիչները խիստ մեծ կարևորություն են տալիս մաթեմատիկական տրամաբանությանը, և գիտական դրույթների տրամաբանական-շարահյուսական վերլուծություն կատարելու նպատակով դուրս են մղում բովանդակային կողմը, կարենոր համարում միայն ձևական վերլուծությունը: Նշելի է, որ մաթեմատիկական տրամաբանության մեջ երևույթների միջև հաստատվող հարաբերությունների տիպերին ավելի կարենոր տեղ տալը, քան հարաբերվող կողմերին, իր ազդեցությունն է ունենում ստրուկտորալիստական լեզվաբանության որոշ հոսանքների վրա (Ելմոլեկի գլուսեմատիկան):

1930-ական թվականներին առաջանում է փիլիսոփայական մի ուղղություն՝ սեմանտիզմը, որին հարում են տրամաբանական պողիտիվիզմի շատ ներկայացուցիչներ, այդ թվում և Կառնապը: Սեմանտիկյան փիլիսոփայությունը հանդիսանում է տրամաբանական պողիտիվիզմի յուրատեսակ լրացումը. ճիշտ է, երկուսն էլ փիլիսո-

<sup>1</sup> R. Carnap, Logische Syntax, 1931, էջ 3:

<sup>2</sup> R. Carnap, The Unity of Science.

փայական պրոբլեմները հանգեցնում են լեզվականի, բայց եթե տրամաբանական պողիտիվիզմը դուրս էր մղում բառիմաստը, ապա սեմանտիկները փորձում են այն լրացնել իմաստային վերլուծությամբ: Սեմանտիկների այս իմաստային վերլուծությունը, իհարկե, քիչ ընդհանուր բան ունի լեզվաբանության բաժիններից մեկի՝ ինձաստաբանության հետ. եթե վերջինս մի բաժին է, որ նպատակ ունի նկարգապես ուսումնասիրել բառերի իմաստը և իմաստի պատմական փոփոխությունները, ապա սեմանտիկները փիլիսոփայական ողջ պրոբլեմների էությունը հանգեցնում են բառիմաստի հարցին, իմաստային վերլուծությամբ փորձում պատասխան տալ փիլիսոփայական բոլոր կարևոր պրոբլեմներին: Սեմանտիկների կարծիքով՝ մարդկային լեզուն ի վիճակի չէ ճիշտ կերպով արտահայտել գիտական գաղափարները. այն խանգարում է երևույթների ճշգրիտ ըմբռնմանը և առիթ տալիս վեճերի, թյուրիմացությունների ու կոհիվների. փիլիսոփայության բոլոր հիմնական հարցերը, այդ թվում նաև ոգու ու մատերիայի առաջնության հարցը լոկ մետաֆիզիկական հարց են՝ բառերի հարց, բառերի շուրջը տարվող ապարդյուն վեճ: Իրական աշխարհի գոյության հարցը հանվում է որպես կեղծ հարց, որովհետև դուրս է գալիս զգայական փորձի սահմաններից, լեզվի սահմաններից: Սեմանտիկների իմաստային վերլուծությունն էլ ոչ այլ ինչ է, եթե ոչ պայմանական նշանների վերլուծություն, որովհետև բառերը լոկ պայմանական նշաններ են: Որպեսզի վերանա բոլոր թյուրիմացությունների աղբյուրը, սեմանտիկները առաջարկում են լեզվի բարեփոխություն կատարել, գոյություն ունեցող լեզուն փոխարինել մի գիտական սիստեմով:

Սեմանտիկյան փիլիսոփայության մեջ առկա են նաև տարատեսակներ ու հոսանքներ, բայց այդ բոլորի համար ընդհանուր է լեզվական խնդիրներին գերակշռություն տալը, իրական աշխարհի գոյության հարցը պսկոպրոբլեմ համարելը, ընդհանուրի և առանձինի դիալեկտիկայի անըմբռնողությունը: Այսպես, Ուայթհեդը<sup>1</sup> լեզվի սկզբնական ֆունկցիան համարելով գործնականը՝ գտնում է, որ այդ պատճառով էլ այն ի վիճակի չէ բացահայտելու իրերի էությունը և պիտի փոխարինվի մաթեմատիկական տրամաբանության լեզվով. Ուրբանը, ընդհակառակը, լեզվի նախնական ֆոնկցիան է համարում ինտուիցիայի արտահայտությունը և այս կապակցությամբ տարբերում 3 կարգի կատեգորիաներ՝ 1) ինտուի-

<sup>1</sup> Հմամա. Witehead, Process und Reality, 1941.

ցիայի, որոնք կազմում են լեզվի ներքին, իմաստային առանցքը, 2) ձևական-տրամաբանական, որոնք ուղղակի կապ չունեն լեզվի հետ և 3) քերականական, որոնք գուտ արտաքին, իմաստային բովանդակությունից զուրկ կատեգորիաներ են: Եթե Ուայթհեղը խոսքի մասերը դեն է նետում (փոխարինում է 45 նոր կատեգորիայով)` գտնելով, որ նրանք սխալ պատկերացում են տալիս երեւլյթների մասին, ապա Ուրբանն, ընդհակառակն, խոսքի մասերը անհրաժեշտ է համարում, որովհետև, ըստ նրա, դրանցով է լեզվական ինտուիցիան ձեւավորում գգայական տվյալները: Մտածողության եղանակը անմիջական կախման մեջ դնելով լեզվի բնույթից՝ Ուրբանը ևս կարծում է, որ Արիստոտելի տրամաբանության բնույթը կախված է հունարենի բնույթից, որ Արիստոտելի տրամաբանությունն այլ կլիներ, եթե Արիստոտելը հունարեն չգրեր:

1938 թ. իր «Նշանների տեսության հիմունքները» գրքում, որի սկզբունքները նա հետագայում զարգացնում է «Նշանները, լեզուն և վարմունքը» գրքում (1946), Զառլզ Մորիսը փորձում է միավորել տրամաբանական պոզիտիվիզմի, սեմանտիզմի և պրագմատիզմի դրույթները մի համապարփակ նշանների ուսմունքի՝ սեմիոտիկայի մեջ, ընդ որում նշանների հիմունքների որոշման հարցում հենվում է բիճեկորիզմի վրա: Սեմիոտիկան, Մորիսի կարծիքով, պետք է փոխարինի փիլիսոփայությանը և միավորի՝ գիտական իմացության բոլոր բնագավառները, որովհետև բոլոր գիտությունները օգտվում են նշաններից: Մորիսը տարբերում է նշանների 3 կողմ՝ նշանների հարաբերությունը 1) դեպի մարդը (պրագմատիստական հայեցակետը՝ «պրագմատիկան»), 2) դեպի նշանակվողը (սեմանտիկական հայեցակետը՝ «սեմանտիկան») և 3) իրար հանդեպ (շարահյուսական հայեցակետը՝ «սինտակտիկան»՝ կառնապի տրամաբանական պոզիտիվիզմի դիրքերից առնված): Սեմիոտիկան զբաղվում է հատկապես նշանների ֆունկցիավորումով՝ «սեմիոգիսով»: Սեմիոտիկայի ուսումնասիրության առարկան հանդիսացող նշանները որոշվում են նպատակադիր վարմունքով: Նշանները, սկսած սովորական ազդանշաններից (օրինակ, ճաշի հրավիրող զանգից) մինչև լեզվական արտահայտությունները, իրենց նշանակությամբ պարտական են այն բանին, որ գործում են որպես վարմունքի կազմակերպիչներ: Լեզուն նշանների մի մասնահատուկ դեպք է. այն Մորիսի կողմից սահմանվում է որպես տարբեր իրադրություններում գործածվող այնպիսի «նշանակիցների» (consigns) մի շարք, որոնք սահմանափակված են նրանց կոմբինավորման հնարավոր եղանակ-

ներով, ընդ որում «նշանակիցներ» են համարվում այն նշանները, որոնք միևնույն նշանակությունն ունեն և դրանք գործածող, և դրանք ազդակող օրգանիզմների համար: Լեզվի նշանները օրգանիզմի ուսակցիաներ են, իսկ ուսակցիաները՝ վարմունքի մաս: Լեզվի նշանի և նշանակվողի միջև ներքին կապ չկա:

Նորագույն հոգեբանական հոսանքներից լեզվաբանության համար կարեռ դեր են խաղացել գեշտալտհոգեբանությունը և բիճելիորիզմը: Հոգեբանության մեջ ստրուկտուրայի կամ գեշտալտի (անգլ. pattern—մոդել կաղապար) գաղափարը գործածվում է, ըստ կալլանդի, նոր, մասնահատուկ իմաստով՝ «նշանակելու համար ամբողջը, որը բաղկացած է, ի հակադրություն տարրերի պարզ գուգորդման, փոխայիմանավորված երևույթներից, որոնցից յուրաքանչյուրը կախված է մյուսից և կարող է այդպիսին լինել միայն նրանց հետ կապված»<sup>1</sup>: Հաստատվում է այն միտքը, որ ամբողջը մասերի պարզ գումար չէ, որ ամբողջը ներկայացնում է որակական ամբողջություն. մասերը քննվում են ամբողջի դիրքից: Գեշտալտհոգեբանությունը երևան է եկել Գերմանիայում՝ XX դ. սկզբում և ամենատարածված իդեալիստական հոգեբանական ուղղություններից մեկն է: Այդ հոգեբանության ներկայացուցիչները առաջ են քաշում հոգեկան պրոցեսների ամբողջականության գաղափարը. ըստ նրանց՝ հոգեկան պրոցեսները ամբողջական կազմավորումներ են, «գեշտալտկազմավորումներ», որոնք որակապես նույնական չեն դրանք կազմող մասերի գումարի հետ: Սակայն ճիշտ կերպով դնելով ամբողջի մասերի պարզ գումար լինելու, այլ նոր որակ հանդիսանալու հարցը՝ գեշտալտհոգեբանության ներկայացուցիչները այդ ամբողջականությունը բխեցնում են ոչ թե իրական առարկաների ամբողջականությունից, այլ մարդու հոգուն ոկզրնապես հատուկ կարողությունից. ըստ նրանց՝ «գեշտալտի կազմավորման» կարողությունը հոգեկանի ներքին կազմակերպվածության դրսեւումն է, որի օրենքները կախված չեն փորձից:

Գեշտալտհոգեբանությանը մոտ է Վուցբրուգյան հոգեբանական դպրոցը, որի ներկայացուցիչ Կ. Բյուկերը կարեռ դեր է խաղացել լեզվաբանության պատմության մեջ, հատկապես ստրուկտուրալիզմի ձևավորման հարցում:

Բիճելիորիզմը XX դ. հոգեբանության իդեալիստական և մեխա-

<sup>1</sup> Vocabulaire technique et critique de la philosophie, III, Paris, 1932, structure բառի տակ:

Նիստական ուղղություններից մեկն է, որ առաջ է եկել Ամերիկայում և որի փիլիսոփայական նախադրյալները առկա են եղել արդեն մասիհյամի, պրագմատիզմի և նեռուեալիզմի փիլիսոփայական ուղղությունների մեջ: Նրա ներկայացուցիչները (Թորնդայկ, Ռուտսոն, որ 1913 թ. ձեակերպել է այս ուղղության ծրագրային դրույթները, Լեշի, Հանտեր, Վեյս և ուրիշները) հոգեբանության առարկան համարում են վարմունքը՝ այն հասկանալով որպես միջավայրի ազդակների (ստիմուլների) հանդեպ օրգանիզմի հակազդումների (ռեակցիաների) գումար: Վարմունքի հիմքում՝ դրվում են բնածին ռեակցիաները (բնազդները), որոնց կողքին կարեոր տեղ է հատկացվում ձեռքբերովի ռեակցիաներին: Մարդու գիտակցական գործունեությունը փաստորեն դադարում է որպես հոգեբանության առարկա դիտվելուց, և գիտակցական պրոբլեմները հանգեցվում են օրգանիզմի պարզ հակազդումներին: Հոգեբանության նպատակն է համարվում ազդակների և հակազդումների (ստիմուլների և ռեակցիաների) արտաքին պայմանների նկարագրությունը:

Ստրուկտուրալիստների հայացքների ձեավորման համար նշանակություն են ունենում նաև ֆիզիկայի և բիոլոգիայի զանազան ուսամունքներ՝ Թլանկի քվանտների տեսությունը, որով լրացի ալիքները դիտվում են որպես մասնիկավոր-հատվածային երևույթներ, Կյուվեի այն հայացքների օգտագործումը, որոնց համաձայն հատկանիշները փոխադարձ կապված են և փոխպայմանավորում են իրար և այլն:

Այս ենթաշրջանի տիրապետող լեզվաբանական ուղղությունը ստրուկտուրալիզմն է, որը հանդիսանում է նախորդ ենթաշրջանի իմաննենտիստական ու ֆորմալիստական տենդենցների հետագա զարգացումը, ընդ որում անցումը սոցիոլոգիզմից ու սոցիոլոգիական իմաննենտիզմից դեպի «մաքուր» իմաննենտիզմը և «մաքուր» ֆորմալիզմը կատարվում է տարբեր շափերով՝ ստրուկտուրալիզմի տարբեր տարատեսակների մեջ: Ստրուկտուրալիզմի կողքին շարունակում են գոյություն պահպանել նաև նախորդ ենթաշրջանի որոշ ուղղություններ, հատկապես սոցիոլոգիզմը և էսթետիզմը, որոնք ենթարկվում են ստրուկտուրալիստական հոսանքների ազդեցությանը: Քանի որ ստրուկտուրալիստական որոշ հոսանքներ հանդում են ծայրահեղ իմաննենտիզմի ու ֆորմալիզմի, ուսումնասիրության միակ իսկական առարկան համարում լեզուն ինքն իր մեջ, իր ֆորմալ կողմով, իր ստրուկտուրային հարաբերություններով,

ուստի և ստրուկտուրալ իմանենտիզմի անհրաժեշտ լրացումն են հանդիսանում լեզվաբանական այն միջդիսցիպլինները, որոնք դրավում են լեզվի «արտաքին» փաստերի ուսումնասիրությամբ, կամուրջ նետում լեզվաբանության և մյուս գիտությունների միջև։ Ամերիկյան լեզվաբանները, իսկական լեզվաբանական հայեցակետ համարելով լեզվի ներքին ստրուկտուրալ-ձևական նկարագրությունը, այս միջդիսցիպլինները և ուղղությունները միացնում են մետալինգվիստիկա կամ էքսոլինգվիստիկա (metalinguistics, exolinguistics—անդրլեզվաբանություն և արտալեզվաբանություն) անունների տակ։ Սակայն այդ դիսցիպլիններն ու հոսանքները շատ դեպքում ամենամերձավոր կերպով առնչվում են լեզվաբանության հետ և արծարծում այնպիսի պրոբլեմներ, որոնք չեն կարող լեզվաբանության տեսադաշտից դուրս մնալ։ Այդ պատճառով էլ բուն ստրուկտուրալիզմին հատկացնելով ստրուկտուրալ իմանենտիզմ կամ էնդոստրուկտուրալիստիկա (ներստրուկտուրալիստիկա) անվանումը՝ մենք գերադասում ենք սրանք կոչել էքսոստրուկտուրալիստիկա (արտաստրուկտուրալիստիկա)՝ նկատի առնելով և այն, որ սրանց ևս հատուկ են ստրուկտուրալիզմի շատ սկզբունքներ՝ ամբողջի, նշանի, լեզվական հակադրությունների և այլն։ Լեզվաբանական միջդիսցիպլինների ներկայացուցիչները հաճախ ոչ թե մասնագետ լեզվաբաններ են, այլ ուրիշ գիտությունների ներկայացուցիչներ (հոգեբաններ, ինժեներներներ և այլն), որոնք դիմում են լեզվին իրենց գիտությունների դիրքերից, նկատի առնում լեզվի՝ իրենց հետաքրքրող կողմը։ Լեզվաբանական գրականության մեջ գործածության մեջ են մտել պսիխոլինգվիստիկա (լեզվահոգեբանություն, անգլ. psycholinguistics, գերմ. Sprachpsychologie), սոցիոլինգվիստիկա կամ էթնոլինգվիստիկա (անգլ. sociolinguistics կամ ethnolinguistics, գերմ. Sprachsoziologie), բիոլինգվիստիկա (անգլ. biolinguistics, գերմ. Sprachbiologie) անվանումները այսպիսի միջդիսցիպլինների համար։ Մենք առաջարկում ենք տեխնոլինգվիստիկա տերմինը լեզվի՝ տեխնիկական առումով ուսումնասիրության համար (ինֆորմացիայի տեսություն, մեքենայական թարգմանություն)։ Ավելորդ չէ նշել, որ շատերը խոսում են կիրառական լեզվաբանության մասին՝ նկատի առնելով լեզվի ուսումնասիրության գործնական բնագավառները, այդ թվում և լեզվի ուսուցման մեթոդիկան։ Ինչպես կտեսնենք, սովետական լեզվաբանության զարգացման վաղ շրջանում լեզվաբաններից շատերը (Պո-

լիվանով և ուրիշները) հատուկ տեղ էին հատկացնում կիրառական լեզվաբանության հարցերին՝ կապված ամենաատարբեր ժողովուրդների համար այբուբենների ստեղծման, լեզվի մասսայական ուսուցման և այլ հարցերի հետ:

Լեզվաբանական ուսմունքների զարգացման էտապները.—Այս ենթաշրջանի լեզվաբանական ուսմունքների զարգացման մնչ կարելի է տարրերել 2 էտապ. 1) 1920-ական թթ. վերջերից մինչև 1950 թ., երբ լեզվաբանության զարգացումը բնութագրվում է հոգեբանության և տրամաբանության ազդեցությունից լիովին ազատագրվելու, որպես միանգամայն ինքնուրույն և անկախ գիտություն ձևավորվելու, լեզվաբանության առարկան ինամբով մեկուսացնելու տենդենցներով. այս ենթաշրջանում տիրապետող է ստրուկտուրալ իմանենտիզմը. 2) XX դ. II կեսը, երբ ուժեղանում են արդեն լիովին ինքնուրույնացած լեզվաբանության և մյուս գիտությունների փոխազդեցության, մեկի նվաճումները մյուսի նկատմամբ կիրառելու տենդենցները սկսում են տիրապետող դառնալ լեզվաբանական միջդիսցիպլինները:

## I. Լեզվաբանական ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿՈՆՑԵՊՑԻԱՆՆԵՐ

### 1. ՍՏՐՈՒԿՏՈՒՐԱԼԻԶՄ

(ՆԵՐՍՏՐՈՒԿՏՈՒՐԱԼԻՍՏԻԿԱ ԿԱՄ «ՄԻԿՐՈԼԻԳՎԻՍՏԻԿԱ» ԻՄԱՆԵՆՑ  
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)

Ընդհանուր տեղեկություններ.— Ստրուկտուրալիզմը ժամանակակից արտասահմանյան լեզվաբանության ամենաատարածված ուղղությունն է: Ստրուկտուրալ վերլուծության առանձին տարրեր կիրառվել են լեզվաբանության պատմության գրեթե ողջ տեսողության ընթացքում. բայց մեթոդի ձևավորումն ու ամբողջական գիտակցումը տեղի է ունեցել XX դարում, սկզբնապես 3 երկրում՝ Ամերիկայում, Չեխոսլովակիայում (Պրագայում) և Դանիայում (Կոպենհագենում), ապա և այլ երկրներում: Ոմանք ստրուկտուրալիզմի անվան տակ հասկանում են լոկ եվրոպական ստրուկտուրալիզմը: Ամերիկայում ստրուկտուրալիզմը հայտնի է նկարագրական լեզվաբանության անվան տակ, որ թեև սաղմնավորվել է դեռ 1911 թ., բայց իսկական առումով ձևավորվել է 1930-ական թվականներից՝ հանդես բերելով եվրոպական ստրուկտուրալիզմին մերձեցող տենդենցներ: Ստրուկտուրալիզմը նեղ իմաստով հանդես

Է Ակել ամերիկյան նկարագրական լեզվաբանության հատկապես այն թեր մեջ, որ հայտնի է ամենտալիզմ կամ անտիմենտալիզմ անունով և որի առաջին ներկայացուցիչը լեռնարդ Բլումֆիլդն է. Նրա հետեւրդները ավելի ու ավելի են մոտենում եվրոպական, հատկապես կոպենհագենյան ստրուկտուրալիզմին: Բլումֆիլդը և Սեպիրը ստրուկտուրալիզմի նախակարապետներն են. եվրոպական ստրուկտուրալիզմի ամենավաղ դրսեորումը Պրագայի լեզվաբանական խմբակն է, որն սկիզբ առնելով դեռ 20-ական թվականների երկրորդ կեսից՝ լայն գործունեություն է ծավալում և հայտնի դառնում 30-ական թվականներից սկսած: Կոպենհագենյան խըմբակը ձևավորվել է 30-ական թ. սկզբներին: Այսպիսով, կարելի է ասել՝ 1930-ական թվականներին է, որ ստրուկտուրալիզմը սկսում է տիրապետող ուղղություն դառնալ: Այն մեծ թվով հետեւրդներ է գտնում և Ֆրանսիայում (Մարտինե, Գուգինհեյմ և ուրիշները), Լիհաստանում (Ուլաշին, Կորիլովիչ և ուրիշները), Հոլլանդիայում (Վան Վեյկ, Ա. Վ. Գրոոտ և ուրիշները), Իտալիայում, Հարավսլավիայում (Բելիչ, Միկուշ և ուրիշները)<sup>1</sup> և այլուր: Իտալիայում 1945 թ. կազմակերպվում է այսպես կոչված ֆլորենտինյան խըմբակը՝ Պրագայի, Նյու-Յորքի, կոպենհագենի խմբակների օրինակով:

Ստրուկտուրալիզմի 3 հիմնական ուղղությունները, ունենալով մերձավոր գծեր, հանդես են բերում և նշանակալից տարրերություն. այդ տարրերությունն առանձնապես ուժեղ է Պրագայի դպրոցի և կոպենհագենյան ու ամերիկյան ստրուկտուրալիստների միջև. այս պատճառով էլ, փորձելով ընդգծել տարրերությունը, Պրագայի ստրուկտուրալիստները իրենց ուղղությունը բնորոշում են ոչ թե որպես ստրուկտուրալ, այլ ֆունկցիոնալ-ստրուկտուրալ լեզվաբանություն:

Ստրուկտուրալիստական տարրեր ուղղությունները գնահատելիս հարկավոր է նախ՝ տարրերակված մոտեցում հանդես բերել նրանց հանդեպ և երկրորդ՝ տարրերել նրանց տեսական հիմունքները այն մեթոդական սկզբունքներից, որոնք կիրառվում են լեզվաբանական վերլուծության մեջ. իհարկե, այս երկուազ հանդես են

<sup>1</sup> Մարտինեն, Բելիչը և ուրիշները ավելի մոտ են կոպենհագենի դպրոցին. Ֆ. Միկուշը կանգնած է այսպես կոչված սինտագմատիկային ստրուկտուրալիզմի դիրքերի վրա և իր հայացքներով մոտ է ժնեկի ֆունկցիոնալիստներին. հմտ. Փ. Միկուշ. Обсуждение вопросов структуро-рализма и синтагматическая теория, ВЯ, 1957, № 1, էջ 27—34:

գալիս գիրկընդիւառն, ստրուկտուրալիստները վերլուծման այս կամ այն մեթոդը կիրառելիս ենում են որոշակի մեթոդոգիական հիմքերից, սակայն նրանց մեթոդը զգալի հնարավորություններ է ընձեռում լեզվի ստատիկ ուսումնասիրության համար:

Ստրուկտուրալիզմը գրադել է նաև ոչ մասնագետ լեզվաբանների ուշադրությունը: Հոլլանդացի փիլիսոփա Հ. Պուր առաջին հեղինակներից մեկն է, որ զբաղվել է ստրուկտուրալիզմի հիմնավորման հարցով<sup>1</sup>: Ստրուկտուրալիստական կոնցեպցիան երևան է եկել նաև հոգեբան և լեզվի տեսության հարցերով զբաղվող Կ. Բյուկերի աշխատություններում: Տրուբեցկոյի հետ գրեթե միաժամանակ հնչույթի գաղափարն արձարձել է շինացի Յուեն Ռեն Զառոն: Ա. Վ. Գրոստը հատուկ ուշադրություն է նվիրում ստրուկտուրալ շարահյուսության հարցերին<sup>2</sup>:

### ա) Պրագայի լեզվաբանական դպրոցի ֆունկցիոնալ ստրուկտուրալիզմը

Պրագայի լեզվաբանական խմբակի ձեավորումը.— Պրագայի լեզվաբանական խմբակը, որ կազմվել է 1926 թ. աշնանը, ստրուկտուրալիստական լեզվաբանության ամենավաղ ծագած միավորումն էր: Այդ խմբակի կորիզը կազմում էին պրոֆ. Վ. Մատեղիուսի շուրջը ավելի վաղ խմբավորված լեզվաբանները՝ Բ. Հավրանեկը, թ. Տոնկան, Ս. Կարցևսկին, Ռ. Ցակորսոնը, որոնց միավորում էր ընդհանուր լեզվաբանական մի շարք կարևոր պրոբլեմների նկատմամբ ունեցած հետաքրքրությունը<sup>3</sup>: Այդ խմբակի առաջացման համար նշանակություն ունեցավ նաև ի. Զուբատիի (1855—1931) գործունեությունը, նրա պայքարը լեզվի մեխանիստական ըմբռնման դեմ. ի. Զուբատիի աշակերտներից էին Բ. Հավրանեկը, ի. Մ. Կորժինեկը և Պրագայի լեզվաբանական խմբակի այլ անդամներ<sup>4</sup>: Այս խմբակին հարում են և Վ. Սկալիչկան, Ն. Տրուբեցկոյը և ուրիշները: Պրագայի լեզվաբանական խմբակը

<sup>1</sup> Հմմա. H. J. Pos, Perspectives du structuralisme, TCLP, VIII, 1939,

<sup>2</sup> A. W. de Groot, Structurele Suntaxis, Den Haag, 1949.

<sup>3</sup> Հմմա. О. Лешка; К вопросу о структурализме, ВЯ, 1953, № 5, էջ 90:

<sup>4</sup> Հմմա. Б. Трика и др., К дискуссии по вопросам структурализма, ВЯ, 1957, № 3, էջ 47:

Համաշխարհային անուն է վաստակում գլխավորապես իր հնչույթաբանական (ֆոնոլոգիական) ուսմունքով։ Ն. Տրուբեցկոյը մշակում է ընդհանուր հնչույթաբանական ուսմունքի հիմունքները, Ռ. Յակոբսոնը կարևոր դեր է խաղում պատմական հնչույթաբանության ստեղծման՝ հնչույթաբանության սկզբունքները պատմական քննության նկատմամբ կիրառելու հարցում։ Պրագայի լեզվաբանական խմբակի անդամների հետաքրքրության կենտրոնում եղել են նաև գրական ու բանաստեղծական լեզվի ու ոճի և խոսքի կուտուրայի պրոբլեմները։ Ն. Տրուբեցկոյի, Ռ. Յակոբսոնի, Ս. Կարցևսկու հնչույթաբանական ուսմունքի ձևավորման համար նշանակություն է ունենում Շշերբայի ազդեցությունը։ Ինչպես որ ամերիկյան հնդիկների լեզուների ուսումնասիրությունը ամերիկյան լեզվաբանների առջև տրադիցիոն մեթոդները վերլուծության ավելի ռացիոնալ մեթոդներով փոխարինելու պահանջ առաջադրեց, այդպես էլ Տրուբեցկոյը և Յակոբսոնն ստիպված էին հրաժարվել տրադիցիոն մեթոդներից՝ ոչ-հնդկրոպական այլ լեզուների (կովկասյան, պալեոպահական և այլն) ուսումնասիրության արդյունքները նկատի ունենալով։

Պրագայի լեզվաբանական խմբակի անդամները դաշնում են ստրուկտուրալիզմի հիմնական սկզբունքները՝ ստրուկտուրայի և ֆունկցիայի, լեզվական նշանի և լեզվական շարժման իմանենտության գաղափարները, բայց տարբերություններ ունեն ստրուկտուրալիստական մյուս դպրոցներից ինչպես լեզվաբանական տեսության, լեզվաբանական հարցերի փիլիսոփայական հիմնավորման, այնպես էլ հետազոտության եղանակների ու նյութի սիստեմավորման հարցերում։ Պրագայի ստրուկտուրալիստներից ոմանք ուշադրությունը կենտրոնացնում են ընդհանուր լեզվաբանական պրոբլեմների շուրջը, մյուսները սահմանափակվում են ավելի նեղ շըրշանակներով։ Պրագայի լեզվաբանական խմբակի անդամների համար բնորոշ է ստրուկտուրալիզմի հիմնական սկզբունքների տեղափոխումը լեզվաբանության հետ այս կամ այն կողմով առնշվող այնպիսի գիտությունների բնագավառը, ինչպիսիք են գրականագիտությունը, ազգագրությունը և այլն։ Պրագայի ստրուկտուրալիստներից թ. Տոնկայի հայացքները զգալի շափով մոտենում էին կոպենհագենյան ստրուկտուրալիստների հայացքներին։

Պրագայի լեզվաբանական խմբակը 1929—1939 թթ. հրատարակում էր «Պրագայի լեզվաբանական խմբակի աշխատություննե-

րը» (8 հատոր)<sup>1</sup>, որոնցում աեղավորված են այս խմբակի հիմնական գործերը: 1934—1944 թթ. և 1947 թ. սկսած հրատարակվում էր նաև «*Slovo a slovesnost*» պարբերական հանդեսը:

Պրագայի լեզվաբանական խմբակը 1928 թ. I լեզվաբանական համագումարում հանդես է գալիս այն հիմնական դրույթներով, որոնք դրված են 1929 թ. հրատարակված թեզիսների հիմքում:

Չեխոսլովակյան Դեմոկրատական Ռեսպուբլիկայի հաստատումից հետո աշխատանք է տարվում ստրուկտուրալիզմի տեսական հիմունքների վերանայման ուղղությամբ: Առանձնապես կարևոր է 1951 թ. «*Tvorčba*» հանդեսի էջերում՝ բացված դիսկուսիան: Այս ուղղությամբ կարևոր դեր խաղաց և «*Вопросы языкоизнания*» հանդեսի էջերում բացված դիսկուսիան ստրուկտուրալիզմի գնահատման շուրջը, որին մասնակցեցին և չեխոսլովակյան լեզվաբանները՝ տալով Պրագայի լեզվաբանական խմբակի հայացքների բնութագիրը<sup>2</sup>:

Պրագայի լեզվաբանական խմբակի թեզիսները.— «Պրագայի լեզվաբանական խմբակի աշխատությունների» առաջին իսկ հատորում հրատարակվում են այդ խմբակի թեզիսները, որոնց մեջ տրված են Պրագայի ստրուկտուրալիստների հիմնական տեսական դրույթները: Հենվելով Սոսյուրի լեզվաբանական սկզբունքների վրա՝ Պրագայի ստրուկտուրալիստները փորձում են հաղթահարել նրա հիմնական հակասությունները: «Թեզիսներում» առաջ քաշված ծրագրային դրույթները Պրագայի ստրուկտուրալիստները մասամբ են միայն կարողանում իրականացնել: «Թեզիսները» գրված են սլավիստների I համագումարի կապակցությամբ, ուստի և ընդհանուր դրույթների հետ միասին խոսվում է նաև սլավիստների խնդիրների մասին:

«Թեզիսների» հեղինակները լեզվի սահմանման մեջ շեշտում են երկու կողմ՝ լեզվի կառուցվածքի բնույթը և լեզվական գործունեության նպատակադրումը: Հենվելով Սոսյուրի վրա՝ նրանք լեզուն դիտում են որպես սիստեմ, հենվելով լեզվի ֆոնկցիոնալիստական ըմբռնման վրա՝ որպես հաղորդակցումն իրականացնելու համար անհրաժեշտ արտահայտության միջոցների ամբողջություն. «Լինելով մարդկային գործունեության արդյունքը,— գրում են նրանք,— լեզուն միաժամանակ ունի նպատակային ուղղվածու-

<sup>1</sup> Travaux du Cercle Linguistique de Prague (TCLP).

<sup>2</sup> Б. Трика и др., К дискуссии по вопросам структурализма, ВЯ, 1957, № 3, էջ 44—52.

թյուն, Խոսքային գործունեության՝ որպես հաղորդակցման միջոցի՝ վերլուծությունը ցուց է տալիս, որ խոսողի ամենից ավելի սովորական նպատակը, որն ամենից ավելի հստակությամբ է դրանորվում, արտահայտությունն է: Ուստի և լեզվաբանական վերլուծությանը պետք է մոտենալ ֆունկցիոնալ հայեցակետից: Այս տեսակետից լեզուն արտահայտության միջոցների սիստեմ է, որ ծառայում է որևէ որոշակի նպատակի համար: Ոչ մի երեսույթ լեզվի մեջ չի կարող հասկացվել առանց այն սիստեմի հաշվառման, որին այդ լեզուն պատկանում է»<sup>1</sup>:

Ի տարբերություն Սոսյուրի, որը սինխրոնիան և դիախրոնիան լիովին կարում էր իրարից, զնում միանգամայն տարբեր հարթությունների վրա, «Թեզիսների» հեղինակները գտնում են, որ դրանք փոխափանցում են, սիստեմի գաղափարը կիրառելի է ոչ միայն սինխրոնիայի, այլև դիախրոնիայի նկատմամբ: Դեռ ավելին, դիախրոնիկ վերլուծությունը կարող է հաջող լինել միայն երեսույթների սիստեմային վերլուծության դեպքում: այսպիսով, սիստեմի և ֆունկցիայի գաղափարները պետք է անհրաժեշտաբար կիրառվեն դիախրոնիկ ուսումնասիրության մեջ: Սրա հետ միասին սինխրոնիան չի կարելի լիովին կտրել դիախրոնիայից, լեզվի էվոլյուցիայի պրոցեսից: յուրաքանչյուր սինխրոնիկ հատվածում առկա է այն բանի գիտակցումը, որ տվյալ ստադիան փոխարինվում է ձևավորման պրոցեսում գտնվող ստադիայով: այնպիսի դիախրոնիկ գաղափարները, ինչպիսիք են արխակղմների ոճական օգտագործումը և գործուն ու ոչ գործուն ձևերի տարբերությունը, չեն կարող հանվել սինխրոնիկ հետազոտությունից: Այսուհետեւ, Պրագայի ստրուկտուրալիստները մի կողմից՝ ավելի մեծ ուշադրություն են դարձնում սինխրոնիկ ուսումնասիրության հարցերին, մյուս կողմից՝ փաստորեն սինխրոնիան դնում են դիախրոնիայի հիմքում:

Այս կապակցությամբ «Թեզիսների» հեղինակների առջև կանգնել է պատմա-համեմատական մեթոդի և «ընդհանուր նախալեզվի» վերականգնման գնահատման հարցը: «Թեզիսների» հեղինակները ամենից առաջ պահանջում են մի կողմ թողնել փաստերի մեկուսացված քննությունը և դիմել փաստերի սիստեմային քննության: այս դեպքում նրանց կարծիքով՝ «գենետիկական» խնդիրների և «ընդհանուր նախալեզվի» վերականգնման փորձերի հետ միասին կարեոր նշանակություն պետք է ստանան մի կողմից՝ լեզվական

<sup>1</sup> Thèses, TCLP, I, 1929.

տարբեր սիստեմների (լինեն դրանք ոչ ցեղակից, հեռավոր ցեղակից թե մոտ ցեղակից) ստրուկտուրալ համեմատությունը՝ կոնվերգացնող և դիվերգացնող երկույթների ընդհանրությունների բացահայտմամբ և հարաբերական ժամանակագրության կիրառմամբ, մյուս կողմից՝ տերիտորիալ խմբավորումների մեջ մտնող ցեղակից ու ոչ ցեղակից լեզուների էվոլյուցիայի տեսնենցների զուգադրումը: Այս վերջին պահանջը հետագայում հիմք է տալիս «լեզվամիության» (Sprachbund) գաղափարին նվիրված հետազոտությունների համար: Սկսվում են ուսումնասիրվել տերիտորիալ խմբավորումների փոխազդեցության հետևանքով՝ առաջացած ընդհանրությունները: Լեզվական պրոցեսը «Թեզիսների» հեղինակները պահանջում են քննել որպես միանգամայն օրինաշափ պրոցես, որտեղ այս կամ այն երկույթի տարածումը մեխանիկական ու պատահական բնույթ չի կրում. «Լեզվաբանական սիստեմը փոխող լեզվական երկույթների տարածումը,—նշվում է «Թեզիսներում»,—մեխանիկորեն տեղի չի ունենում, այլ որոշվում է այդ փոփոխություններն ընկալող անհատների հակումներով. այդ հակումները դրսենորվում են էվոլյուցիայի տեսնենցներին լիովին համապատասխան»<sup>1</sup>: Այս կապակցությամբ «Թեզիսների» հեղինակները սկզբունքային տարբերություն չեն տեսնում միանույն աղբյուրից ծագող փոփոխությունների և կոնվերգացնող բնույթի փոփոխությունների միջև:

Բնույթագրելով լեզվաբանական երկույթների սինխրոնիկ վերլուծության բնագավառում կիրառելիք սկզբունքները՝ «Թեզիսների» հեղինակները կարեոր՝ տեղ են տալիս հնչույթաբանական (ֆոնոլոգիական) և ձևահնչույթաբանական (մորֆոֆոնոլոգիական, կրճատ՝ մորֆոնոլոգիական) հետազոտությանը: Նրանք ամենից առաջ տարբերում են հնչույնները «որպես օբյեկտիվ ֆիզիկական փաստ» և «որպես ֆունկցիոնալ սիստեմի տարր», այսինքն՝ որպես հնչույթ (ֆոնեմա). Վերջին գեպքում հնչույնների նյութական կողմը կարեոր չէ, այլ կարեոր է նրանց՝ «նշանակությունները տարբերող ֆունկցիան» և փոխադարձ կապը սիստեմի մեջ (ֆոնոլոգիական կոռելյացիաները): Հետազոտության ժամանակ պետք է 1) կազմել ֆոնեմաների ցանկը և դրանց հնչույթաբանական կոռելյացիաները, 2) պարզել տվյալ լեզվի հնչույթների կապակցությունների տիպերը՝ նման զուգորդումների համարավոր տիպերի համեմատությամբ և 3) սահմանել հնչույթների ու դրանց զուգորդումների օգտագործ-

<sup>1</sup> Thèses, TCLP, I, 1929.

ման աստիճանն ու իրացման ծավալը։ Զեահնչույթաբանական հետազոտությունը պետք է պարզի հնչույթաբանական տարրերությունների ձևաբանական օգտագործումը. սրան է վերաբերում հնչույնական հերթագայությունների քննությունը։

Լեզվի բառապաշարի և քերականական կառուցվածքի ֆունկցիոնալ քննության պահանջը «Թեզիսների» հեղինակներին հանգեցնում է նոմինացիայի (անվանողական) տեսության և սինտագմատիկայի առանձնացմանը. 1) առաջինին վերաբերում է բառերի և բառի արժեք ունեցող կայուն կապակցությունների ֆունկցիոնալ քննությունը, որովհետև «բառը, ֆունկցիոնալ հայեցակետից քննված, անվանական լեզվաբանական գործունեության արդյունքն է»։ Նոմինացիայի տեսությունը մասամբ քննում է նույն երևույթները, ինչ բառակազմությունը և շարահյուսությունը (խոսքի մասերի և բառաձևերի իմաստը), բայց դրանք քննում է տվյալ լեզվի «նոմինացիայի սիստեմի» դիրքերից, բացատրում է երևույթները. սրան են վերաբերում և իմաստաբանության հարցերը. 2) սինտագմատիկան քննում է բառերի ոչ կայուն (ազատ) կապակցությունները, առանձնապես ստորոգում (պրեդիկացիա) արտահայտող կապակցությունները՝ նախադասությունները (պրեդիկատիվ սինտագմաները): Զեաբանությունը հատկացնում է մասամբ նոմինացիայի տեսությանը, մասամբ սինտագմատիկական տեսությանը (սինտագմատիկային):

«Թեզիսների» մեջ կարևոր տեղ է տրվում լեզվի ֆունկցիաների, գրական լեզվի, բանաստեղծական լեզվի բնութագրմանը, լեզվաբանական աշխարհագրության սկզբունքներին ու դրանց կիրառությանը, այլև ֆունկցիոնալ լեզվաբանության նշանակությանը սլավոնական լեզուների ուսումնասիրության նորմավորման ու զարգացման համար, լեզվի մաքրության և խոսքի կուլտուրայի հարցերի համար։ Լեզվի ֆունկցիաների բնութագրման կապակցությամբ «Թեզիսների» հեղինակները պահանջում են տարրերել ներքին խոսողական գործունեությունը և արտահայտված խոսողական գործունեությունը, հաշվի առնել լեզվական արտահայտությունների ինտելեկտուալությունն ու աֆեկտիվությունը (հուզականությունը), նկատի առնել ինտելեկտուալ կողմի հասարակական բնույթը և աֆեկտիվ կողմի մասնակի հասարակական բնույթը։ Իր հասարակական դերով խոսքային գործունեությունը կատարում է կամ հաղորդակցական ֆունկցիա, այսինքն՝ ուղղված է դեպի նշա-

նակելին, կամ բանաստեղծական ֆունկցիա, այսինքն՝ ուղղված է դեպի նշանն ինքը: Լեզվաբանական արտահայտության ձևերն են բանավոր և գրավոր խոսքը. նշվում է և ժեստերի ուսումնասիրության կարևորությունը: Կարևոր են համարվում լեզվական շփման մեջ գտնվող խոսողների փոխհարաբերության, նրանց՝ հասարակական, պրոֆեսիոնալ, տերիտորիալ և ազգակցական կապերի աստիճանի, այլև սրա հետ կապված միջլեզվային կապերի (ընդհանուր լեզուների), հատուկ լեզուների, խառն լեզուների, քաղաքների լեզվական շերտերի բաշխման պրոբլեմները: Բանաստեղծական լեզվի բնութագրման հարցում «Թեզիսների» հեղինակները տուրք են տալիս ժամանակի բուրժուական իդեալիստական էսթետիկական ուսմունքներին, բանաստեղծական լեզուն հակադրում դրականին որպես իր հատուկ օրինաչափություններն ունեցող լեզվի. «Թեզիսների» հեղինակները գրական լեզվի նորմաների խախտման համար տեսական հիմք են փորձում ստեղծել՝ ներշընչված իրականությունը կամայական ձևափոխության ենթարկող գրական-էսթետիկական հոսանքների սկզբունքներով:

Մեծ տեղ է տրվում լեզվաբանական աշխարհագրության սկրզբունքներին. «Թեզիսների» հեղինակները անհրաժեշտ են համարում լեզվաբանական քարտեզների իզոգրուները զուգադրել «անթրոպո-աշխարհագրական» և ֆիզիկա-աշխարհագրական իզոգրուների հետ:

Վ. Մատեզիուս.—Պրագայի լեզվաբանական խմբակի հիմնադիր Վ. Մատեզիուսը (1882—1945), որ եղել է «Թեզիսների» հեղինակներից մեկը և զբաղվել է հատկապես քերականագիտական հարցերով, լեզվի ուսումնասիրության մեջ ելնում է հետևյալ սկզբունքներից. 1) լեզվի գիտական իմացությունը պահանջում է սինխրոնիկ և դիախրոնիկ մեթոդների կոմբինացիա, բայց գիտական քննության հիմքում պետք է ընկած լինի սինխրոնիկ վերլուծությունը, որն աշխաթող է արվել երիտքերականների կողմից. 2) կարևոր ուշադրություն պետք է տալ ցեղակից և ոչ ցեղակից յեզուների զուգադրական ուսումնասիրությանը՝ «վերլուծական համեմատության» մեթոդին, որի նպատակն է ցույց տալ այս կամ այն լեզվի էական գծերը՝ «լեզվաբանական բնութագիրը». 3) այս մեթոդը կարելի է հաջողությամբ կիրառել միայն ֆունկցիոնալ հայեցակետի դեպքում. 4) վերլուծությունը պիտի նպատակ դնի պարզել տվյալ լեզվի գոյակցող երևույթների պատճառական կապերը<sup>1</sup>:

<sup>1</sup> Հմմա. Օ. Լեշկա, Տիշ. աշխ., էջ 84.

Կանգնելով ֆունկցիոնալ հայեցակետի վրա՝ Մատեղիուսը լեզվական սիստեմի հիմքում դնում է հաղորդակցական և ոչ արտահայտչական ֆունկցիան։ Ամեն մի ասույթ, ասված բան իրականության պարզ նկարահանումը չէ. այն մի կողմից՝ պարզեցնում է արտահայտվող իրականությունը, մյուս կողմից՝ պարունակում է նաև այնպիսի կողմեր, ինչպիսիք են խոսողի վերաբերմունքը դեպի արտահայտվող իրականությունն ու դեպի անմիջապես ներկա կամ երեսակայական խոսակիցը։ Ասույթի իմաստի ձևավորման մեջ կարեոր է որոշակի սիտուացիայի առկայության փաստը։

Հաղորդակցման համար անհրաժեշտ միջոցներն են անվանումները (բառերը) և դրանցից նախադասություն կազմելու համար գործադրվող կապակցության միջոցները։ Ըստ այդմ էլ Մատեղիուսը տարբերում է օնոմատոլոգիան (բառ-անվանումների ուսմունքը) և ֆունկցիոնալ շարահյուսությունը (նախադասությունների ուսմունքը)։ Օնոմատոլոգիան ընդգրկում է իմաստաբանությունը, բառագիտությունը, խոսքի մասերի ուսմունքը։ Անվանումները կազմում են զանազան շարքեր՝ իմաստային և բառակազմական ընդհանրությունների հիման վրա։ Սակայն անվանումների սիստեմի էությունը կազմում է նրանց խոսքի մասային դասակարգումը. վերջինս հենվում է երկու խաչավորվող դասակարգման վրա՝ իրական առարկաների դասակարգումը և ըստ շարահյուսական ֆունկցիայի կատարվող դասակարգումը։ Ամեն լեզու ունի խոսքի մասերի իր սիստեմը, որի ներառմ տեղի ունեցող փոփոխություններն ու փոխանցումները լինում են երկու տեսակ՝ «հայեցակետային փոխակերպումներ» (ասպեկտային մոդիֆիկացիաներ), որոնց դեպքում բառիմաստի միջուկը չի փոխվում (թիվ, մասնականություն<sup>1</sup>, սեռ, որոշյալ և անորոշ առում, համեմատության աստիճաններ, ժամանակ, եղանակ, կերպ) և «կատեգորիալ փոխակերպումներ» (ալավ. լեզուներում շնչալորի և անշունչի, անցողականության և անանցողականության կատեգորիաները)։

Ավելի հայտնի է Մատեղիուսի ուսմունքը՝ նախադասության «ակտուալ անդամատման» մասին, որ հակադրվում է նախադասության քերականական անդամատմանը (նախադասության անդամների առանձնացմանը) և հենվում է նախադասության՝ կոնկրետ սիտուացիայի հետ ունեցած հարաբերության վրա։ Նախա-

<sup>1</sup> Այսպիս է կոչվում ամրողից առնվող մասը նշանակելու եղանակը. հմտ. Փրանս. du pain (=հացի մի մասը)։

դատության ձեւական-քերականական անդամատումը հենվում է ենթակայի և ստորոգյալի առանձնացման վրա, ակտուալ անդամատումը՝ «ելակետի» (հայտնի բանի) և «ասույթի միջուկի» («ելակետի» մասին ասվող նորության) առանձնացման վրա. այս կամ այն կոնկրետ սիտուացիայում մի դեպքում՝ քերականական ենթական կարող է համընկնել «ելակետի» հետ (հմմտ. «Հայրիկը գալի՛ս է»), մյուս դեպքում՝ «ասույթի միջուկի հետ» («Հայրի՛կն է գալիս»). կարելի է ասել, որ Մատեղիուսի «ելակետի» և «ասույթի միջուկի» հասկացությունները հարաբերակից են հոգեբանական ենթակայի և ստորոգյալի ուսմունքի հետ։ Նախադասության ակտուալ անդամատումը որոշում է շարադասության՝ բնույթը. պատմողական նախադասության մեջ գոյություն ունի «օբյեկտիվ շարադասություն» («ելակետ»+«ասույթի միջուկ»), մի շարք այլ (հարցական, հրամայական, բացականչական նախադասությունների) դեպքերում (ընդգծման անհրաժեշտություն)՝ «սուբյեկտիվ շարադասություն» («ասույթի միջուկ»+«ելակետ»). Նախադասության ակտուալ անդամատումը կարող է և այլ միջոցներով արտահայտվել:

Ոճի սահմանման հարցում ևս Մատեղիուսը կարևոր տեղ է տալիս կոնկրետ սիտուացիայի և ֆունկցիայի գաղափարներին. «Բառային բնագավառում ոճի տակ մենք հասկանում ենք այն որոշակի եղանակը, որով օգտագործվում են կամ որով սովորաբար օգտագործվում են լեզվական արտահայտության միջոցները որևէ կոնկրետ նպատակի հասնելու համար»<sup>1</sup>: Ոճի բնույթը տվյալ սիտուացիայում որոշում են՝ 1) տվյալ լեզվի հնարավորությունները, 2) խոսողի կամ գրողի անհատականությունը (անհատական ոճ) և 3) ասույթի նպատակագրումը (ֆունկցիոնալ ոճ):

Ն. Ս. Տրուբեցկոյ.—Ն. Ս. Տրուբեցկոյի (1890—1938) գլխավոր ծառայությունը ստրուկտուրալիստական լեզվաբանությանը հնչույթաբանությանը բնշույթաբանության բնագավառում է։ Այս բնագավառում նա առաջիններից մեկն է, որ հենվելով Սոսյուրի ուսմունքի վրա՝ փորձել է ստեղծել հնչույթաբանության (ֆոնոլոգիայի) ընդհանուր ուսմունքը։ Հնչույթաբանությունը հետագայում դառնում է ստրուկտուրալիստական լեզվաբանության գրեթե ամենամշակված բաժինը, և նրանում կիրառվող վերլուծության սկզբունքները սկսում են կի-

<sup>1</sup> Քաղաքածրը Օ. Լեշկա-ի հիշատակված հոդվածից, ՎՅ, 1953, № 5, էջ 98.

րառվել լեզվաբանության այլ բաժինների, այլև պատմական հետազոտությունների նկատմամբ:

Լեզվաբանության պատմության մեջ կարևոր դեր են խաղացել նաև Տրուբեցկոյի առաջ քաշած սկզբունքները լեզուների փոխհարաբերության ու ցեղակցության հարցերի բնագավառում:

Տրուբեցկոյն սկզբնապես զբաղվել է կովկասյան, ֆիննաստիգական և պալեոասիական լեզուներով, ապա անցել Հնդկրոպարանությանը: Աշակերտելով Ֆորտունատովի հետևորդներին, այլև Բրուգմանին, Լեսկինին և Վինդիշին՝ նա սկզբնապես հակած էր պատմա-համեմատական լեզվաբանության կողմը և պաշտպանում էր նրա ընդհանուր սկզբունքները, բայց շուտով սկսում է մեծ ուշադրություն հատկացնել ընդհանուր լեզվաբանության ու ստատիկ ուսումնասիրության հարցերին և լեզուների փոխհարաբերության հարցին մոտենում է այլ կերպ:

Հնչույթաբանության հարցերով Տրուբեցկոյն զբաղվել է իր գիտական գործունեության գեռ վաղ շրջանից: 1928 թ. Հասագայի միջազգային լեզվաբանական կոնգրեսում Պրագայի լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչները (Տրուբեցկոյ, Յակոբսոն, Կարցևսկի) դնում են հնչույթաբանությունը և հնչունաբանությունը խստորեն տարբերակելու պահանջ, առաջ են քաշում լեզվի հնչունական կողմի ստրուկտուրալ վերլուծության եղանակների հարցը, հակադրվում երիտքերականների ատոմիզմին նաև այս բնագավառում: 1929 թ. «Զայնավորների հնչույթաբանական սիստեմի ընդհանուր տեսության շուրջը» հոդվածում<sup>1</sup> Տրուբեցկոյը հանդես է գալիս հնչույթաբանության ընդհանուր սկզբունքների մշակման պահանջով ու ձգումով: 10 տարի անց (հետմահու) լույս է տեսնում այս բնագավառին վերաբերող նրա հիմնական աշխատությունը՝ «Հնչույթաբանության սկզբունքները»<sup>2</sup>, որը մեծ ազդեցություն է գործում հնչույթաբանության ընդհանուր տեսության զարգացման վրա և դառնում ստրուկտուրալիստական լեզվաբանության կարևոր տեսական աշխատություններից մեկը:

Լեզուների փոխհարաբերության և ցեղակցության հարցերին Տրուբեցկոյի նվիրած ուսումնասիրություններից առանձնապես հի-

<sup>1</sup> N. S. Trubetzkoy, Zur allgemeinen Theorie der phonologischen Vokalsysteme, TCLP, 1929, էջ 39—67.

<sup>2</sup> N. S. Trubetzkoy, Grundzüge der Phonologie, TCLP, VII, 1939. Փր. Բարզմ. Principes de phonologie, Paris, 1949.

շատակելի է «Մտքեր Հնդկրոպացիների պրոբլեմի մասին»<sup>1</sup> աշխատությունը, որտեղ նա, լեզուների ցեղացական ընդհանրությունը չժխտելով հանդերձ, խոսում է լեզուների ստրուկտուրալ ընդհանրությունների մասին, փորձում պարզել Հնդկրոպական լեզուների հիմնական ստրուկտուրալ առանձնահատկությունները, զբաղվում է «լեզվամիության» (Sprachbund) գաղափարի քննությամբ: «Լեզվամիության» գաղափարի հետ կապված Տրուբեցկոյը փորձում է կոնկրետ կերպով քննարկել և առանձին հարցեր. այսպիսի բնույթ ունի նրա «Մտքեր սլովակյան հոլովման մասին» ուսումնասիրությունը<sup>2</sup>:

Առանձնացնելով Հնչույթաբանությունը՝ լեզվի իմաստավոր սիստեմը Տրուբեցկոյը բաժանում է շարահյուսական, դարձվածարանական, ձևաբանական և բառային կանոնների ամբողջության:

Տրուբեցկոյի Հնչույթաբանական ուսմունքը հենվում է Ֆերդինանդ դը-Սոսյուրի և Բոդուեն-դե-Կուրտենեի առաջ քաշած լեզվաբանական դրույթների ու հասկացությունների վրա: Տրուբեցկոյի Հնչույթաբանական սկզբունքների ձևավորման մեջ որոշ դեր խաղացել են և Հ. Սյուֆտի անգլիական Հնչույնաբանական դպրոցի սկզբունքները (Հնչույնական տարբերիչ և ոչ տարբերիչ հատկանիշների առանձնացումը և Հնչույթի՝ որոշ տիպի Հնչույնների խումբ համարելը): Սոսյուրից Տրուբեցկոյը վերցնում է լեզվի և խոսքի հակադրության, լեզվի սիստեմային բնույթի գաղափարները, Բոդուենից՝ ֆոննեմայի (Հնչույթի) և Հնչույնի տարբերության գաղափարը, ֆոննեմայի (Հնչույթի) վերաբերյալ նրա ուսմունքի կորիզը, սկզբնապես և Հնչույթի նրա հոգեբանական ըմբռնումը: Ինքը Տրուբեցկոյը շի ժխտում իր կախումը և՛ մեկից, և՛ մյուսից: Մասնավորապես Բոդուենի հայացքների ունեցած ազդեցությունը Հնչույնաբանության (Հնչույնների ուսմունքի) և Հնչույթաբանության (Հնչույթների ուսմունքի) սկզբունքային այն հակադրության վրա, որ անցկացվում է իր կողմից՝ Տրուբեցկոյը նշել է հետևյալ կերպ. «Առաջինը Բոդուեն-դե-Կուրտենեն է հասել այն մտքին, որ Հնչույնների մասին երկու տարբեր նկարագրական ուսմունք պետք է լինի՝ ըստ այն բանի, թե պետք է քննվեն կոնկրետ Հնչույնները որպես ֆիզիկական երևույթ-

<sup>1</sup> N. S. Տրուբեցկոյ, Gedanken über das Indogermanenproblem ԱԼ, I, 2. ռուս. թարգմ. տե՛ս ՎՅ, 1958, № 1, էջ 65—77:

<sup>2</sup> N. S. Տրուբեցկոյ, Gedanken über die slowakische Deklination, SMS, XV, 1.

ներ, թե որպես հնչունական ազդանշաններ, որոնք օգտագործվում են կոլեկտիվի կողմից հաղորդակցման նպատակով<sup>1</sup>:

Բողունի անցկացրած այս տարբերակումը համաձայնեցնելով Սովորի ուսմունքի հետ Տրուբեցկոյը գտնում է, որ Փոնեմաները (հնչույթները) պետք է քննվեն լեզվի կամ լեզվակառուցվածքի (Sprachgebilde), իսկ հնչունները՝ անհատական խոսքի կամ խոսողական ակտի (Sprechakt) պլանով: Լեզուն որպես ստրուկտուրային ամբողջություն (Sprachgebilde), Տրուբեցկոյի կարծիքով, գոյություն ունի տվյալ լեզվական կոլեկտիվի բոլոր անդամների գիտակցության մեջ և ընկած է անթիվ կոնկրետ խոսքային ակտերի հիմքում: Այս առումով Տրուբեցկոյը, ենելով սուրյեկտիվ-իդեալիստական դիրքերից, հնչույթը ամբողջապես կտրում է հնչունից և համարում նյութական-ֆիզիկական ռեալությունից զերծ էություն, ֆունկցիա, որ արժեքավորվում է որպես լեզվի կառուցվածքային տարր: Այսպիսով, Տրուբեցկոյի մեկնաբանությամբ հնչույթը դիտվում է որպես անհատական խոսողական ակտերին նախորդող կոլեկտիվ գիտակցության հետ կապված վերացական, նյութականությունից զերծ էություն: Զերողանալով բացահայտել հնչույթի և հնչունի, լեզվի ու խոսքի, գիտակցության ու լեզվի դիալեկտիկան՝ Տրուբեցկոյը հասնում է հնչույթի և հնչունի բացարձակ հակադրությանը, հնչույթը համարում գուտ վերացական-ընդհանուր էություն, հնչունը զոտ կոնկրետ-առանձնական էություն: Այս հիման վրա էլ հնչունաբանությունը և հնչույթաբանությունը լիովին անշատվում են իրարից, հակադրվում իրար: Ըստ Տրուբեցկոյի՝ հրնակունաբանությունը քննում է հնչունները որպես ֆիզիկական-ֆիզիոլոգիական, նյութական էություններ. հնչույթաբանությունը՝ այս կամ այն լեզվի հնչույթները՝ որպես լեզվակառուցվածքի մեջ որոշակի ֆունկցիա կատարող, իմաստատարբերիչ ֆունկցիա ունեցող, նյութականությունից զերծ՝ տարրեր:

Հնչույթի գաղափարի սահմանման և հնչույթների առանձնացման հիմքում Տրուբեցկոյը դնում է «հնչույթաբանական հակադրության» գաղափարը՝ այդ անվան տակ հասկանալով հնչման այնպիսի տարբերությունները, որոնք տվյալ լեզվում կարող են տարբերակել իմաստները, այսինքն՝ իմաստատարբերիչ կամ դիստինկտիվ ֆունկցիա կատարել: Այդպիսի հակադրության անդամները Տրուբեցկոյը կոչում է «հնչույթաբանական միասնություններ»

<sup>1</sup> N. S. Trubetzkoy, Grundzüge der Phonologie, 1939, էջ 8:

(phonologische Einheiten) և Հնչույթը համարում տվյալ լեզվի նվազագույն հնչույթաբանական միասնությունը։ Տրուբեցկոյը մտցնում է և գերհնչույթի (արխիֆոննեմայի) գաղափարը՝ սրան հատկացնելով նույնպիսի վերացական գոյություն, ինչ հնչույթին. գերհնչույթ է անվանվում հակադրության երկու անդամների միավորումը։ Բանի որ հնչույթները տարբերակվում են հակադրության հիման վրա, ուստի և առաջին պլանի վրա են քաշվում այն հատկանիշները, որոնք տարբերում են տվյալ հնչույթը նրան հակադրվող հնչույթից։ Դրանք կոչվում են ոելեանտ կամ դիստինկտիվ հատկանիշներ և տարբերվում այդպիսի արժեք չունեցող (իոելեանտ կամ ինդիստինկտիվ) հատկանիշներից։ Այսպիսով, հնչույթը դադարում է որպես միասնական ամբողջություն դիտվելուց, և առաջին պլանի վրա են քաշվում ոելեանտ հատկանիշները։ Բանն այնտեղ է հասնում, որ սարուկտուրալիստ Մարտինեն հետագայում գրում է. «Ոչ թե հնչույթը, այլ էական հատկանիշն է կազմում հնչույթաբանության հիմնական միավորը»<sup>1</sup>։ Տրուբեցկոյը, սակայն, դեռևս այդպիսի ծայրահեղության շի հասնում. նա հնչույթը համարում է «լեզվակառուցվածքի հնչույթաբանորեն ոելեանտ հատկանիշների ամբողջություն»<sup>2</sup>, իսկ հնչյունը՝ նրա իրականացումը. միևնույն հնչույթն իրացնող հնչյունները կոչվում են տարբերակներ (Varianten)։ Հընչույթի հնչույթաբանորեն ոելեանտ հատկանիշների ամբողջությունը Տրուբեցկոյը կոչում է հնչույթի հնչույթաբանական բովանդակություն և այն կախման մեջ է գնում հնչույթային սիստեմից։

Տրուբեցկոյը հակադրությունները խմբավորում է 3 սկզբունքով՝  
 1) ըստ հակադրությունների՝ ողջ սիստեմի հետ ունեցած հարաբերության տարբերվում են միաշափ և բազմաշափ, մեկուսացած և համամասնական հակադրություններ. 2) ըստ հակադրության անդամների միջև եղող հարաբերության տարբերվում են բացառող, աստիճանական և հավասարաժեք հակադրություններ. 3) ըստ իրենց դիստինկտիվ արժեքավորության (Gültigkeit)<sup>3</sup> ծավալի (Ausmass) հետ ունեցած հարաբերության տարբերվում են կայուն և չեղութացող հակադրություններ։

Հնչույթաբանության գարգացման համար առանձնապես կարևոր նշանակություն ունեցավ հնչույթաբանական «հակադրություն-

<sup>1</sup> A. Martinet, Où en est la phonologie? „Lingua“, 1948, I, 1, էջ 46.

<sup>2</sup> N. S. Trubetzkoy, Grundzüge der Phonologie, 1939, էջ 35.

Ների շեղոքացման» (die Aufhebung der phonologischen Oppositionen,нейтрализация фонологических оппозиций) գաղափարը. այս անվամբ նշանակվում է այն դիրքը, որի դեպքում հնչույթների հակադրությունը շեղոքանում է. այսպես, օրինակ, ոռուսերենում բառավերջում ձայնեղները խլանում են, ուստի և ձայնեղ-խուլ հակադրությունը շեղոքանում է:

Աշխատելով հնչույթաբանության հարցերի վրա՝ Տրուբեցկոյը որոշ էվոլյուցիա է կատարել հնչույթի բողուենյան հոգեբանական ըմբռնումից դեպի զուտ ստրուկտուրալ ըմբռնումը։ Սկզբնապես Տրուբեցկոյը ևս հնչույթը համարում էր հնչունի պատկերացում։ Մակայն հետագայում նա հանդես է գալիս թողուենի այն սահմանման դեմ, ըստ որի հնչույթը հնչունի հոգեբանական համարժեքն է. այդ սահմանման մեջ Տրուբեցկոյը տեսնում է մի կարեռ թերություն. խոսքի ամեն մի հնչուն ունի իր «հոգեկան համարժեքը», առաջացնում է համապատասխան ակուստիկական և մոտոռային պատկերացում, մինչդեռ իրականում միենույն հնչույթին կարող են համապատասխանել խոսքի մի քանի հնչուններ (որպես տարրերակներ): Նշելի է, որ իդեալիստական հիմունքներից ենելով հանդերձ՝ Տրուբեցկոյը կարողանում է տեսնել հնչույթի հոգեբանական մեկնաբանության թերությունները։ Հնչույթը Տրուբեցկոյի համար առաջին հերթին ֆունկցիոնալ հասկացություն է, այն պետք է որոշվի իր կատարած ֆունկցիայով։

Առանձին հնչունները, որոնք խոսքի մեջ հանդես են գալիս որպես հնչուննական՝ հոսանքի տարրեր, թեև ինքնըստինքյան անսահման տարրերություններ ունեն, սակայն իրենց թվով սահմանափակված են հնչուննական նորմաներով։ Հնչուննական հոսանքը կազմակերպվում է այդ նորմաներով, որոնք էլ հենց կազմում են լեզվի սիստեմը. վերջինս գոյություն ունի իմանենտորեն, հակադրվում է առանձին խոսքային ակտերին և հնարավոր դրանում դրանք։

Տրուբեցկոյի հնչույթաբանական դրույթները հասկանալու համար հարկավոր է նկատի առնել Պրագայի ստրուկտուրալիստների, այդ թվում և Տրուբեցկոյի դաշտանած ընդհանուր սկզբունքները։ Նախ՝ ստրուկտուրալիստները առաջ տանելով Սոսյուրի ուսմունքը՝ մտցնում են ստրուկտուրայի գաղափարը և փորձում այն տարրերել սիստեմի գաղափարից. ոմանց մեկնաբանությամբ ստրուկտուրայի և սիստեմի տարրերությունը հնարավորության և իրականության պլանների տարրերություն է. ստրուկտուրան լեզվական ձևերի ըս-

տեղծման հնարավորությունների ամբողջությունն է, սիստեմը՝ այդ հնարավորությունների կոնկրետ ընտրությունը լեզվի մեջ: Երկրորդ՝ յուրաքանչյուր լեզու ունի իր հնչույթաբանական սիստեմը, որը հակադրվում է այլ լեզուների հնչույթաբանական սիստեմներին. այդ պատճառով էլ այս կամ այն լեզվի հնչույթաբանական սիստեմը, այդ լեզվի հնչույթների տարբերությունը կարելի է բացահայտել և ճշշտ նկատել այն դեպքում, երբ մենք նկատի ենք առնում այդ լեզուների հնչույթաբանական տարբերությունը. այս առումով՝ Պրագայի ստրուկտուրալիստները տարբերվում են Կոպենհագենի ստրուկտուրալիստներից, որոնք ուսումնասիրությունը կառուցում են միայն տվյալ լեզվի ներքին հակադրությունների • հիման վրա. պատճառական չէ, որ Տրուբեցկոյը իր քննության շրջանակի մեջ է առել ավելի քան երկու հարյուր լեզու Երրորդ՝ ստրուկտուրալիստները, կարենոր համարելով սիստեմի ուսումնասիրությունը՝ գերակշռություն են տալիս սինխրոնիային դիախրոնիայի հանդեպ, իսկ պատճառական հետազոտության հարցերով զբաղվելիս էլ սրա հիմքում դնում են սինխրոնիան:

Ինչպես նշեցինք, հնչույնի և հնչույթի հակադրման հետ կապված՝ Տրուբեցկոյը հակադրում է հնչույնաբանությունը և հնչույթաբանությունը: Տեղավորելով սրանք Սոսյուրի գծած սխեմայի մեջ՝ Տրուբեցկոյը հնչույնաբանությունը համարում է անհատական խոսքի վերաբերյալ գիտության բաժինը, հնչույթաբանությունը՝ լեզվի վերաբերյալ գիտության, նեղ առումով՝ լեզվաբանության բաժինը: Հնչույնաբանության համար կարենոր են հնչույնների ակուստիկական-ֆիզիորգիական տարբերությունները, նա զբաղվում է հընչյունների ֆիզիկական-ֆիզիոլոգիական կողմով. հնչույթաբանության համար կարենոր են հնչույնների ֆունկցիոնալ տարբերությունները, նրանց իմաստատարբերիչ դերը. հնչույթաբանությունը հնչույնների ֆունկցիաների ուսմունքն է: Այս դեպքում Տրուբեցկոյը հենվում է լեզվի ֆունկցիաների բյուզերյան ուսմունքի վրա. բուն հնչույթաբանության բնագավառը համարվում է հնչույնական կառուցվածքի՝ հաղորդման ֆունկցիայի հետ կապված կողմի ուսումնասիրությունը հատկացվում է հնչույնաբանական ոճաբանությանը (phonologische Stilistik), որը հնչույնական ոճաբանության (phonetische Stilistik) հետ միասին պետք է կազմի մի ընդհանուր հնչառճաբանության (Lautstilistik) երկու բաժիններից մեկը:

Տրուբեցկոյի և Պրագայի այլ ստրուկտորալիստների համար հնչույթաբանությունը հանդես է գալիս փաստորեն որպես լեզվաբանության գիխավոր բաժինը, որ դրվում է մյուս բաժինների հիմքում: Հնչույթաբանական սիստեմը որոշում է լեզվի բնույթը: Տրուբեցկոյը լեզվի «հնչույթային կահույքից», հնչույթների թվից կախման մեջ է դնում ոչ միայն լեզվի ինտոնացիոն միջոցների ընտրությունը, քերականական միջոցների բնույթը, այլև նույնիսկ բառապաշարի հարստությունը, մի բան, որ իրականում կախված է ժողովրդի զարգացման մակարդակից: Տրուբեցկոյի հնչույթաբանական իմաննենտիզմը վերջիվերջո ներկայացնում է լեզվի և ժողովրդի կապի բացարձակ խզում, լեզվի բնույթի և բոլոր կողմերի որոշում նրա ներքին հնարավորություններով, որոնց հիմքում էլ դրվում է հնչույթաբանական սիստեմը: Այս կապակցությամբ հնչույթաբանությանը վերագրվում է երկու խնդիր. 1) վերլուծության միջոցով սահմանել առանձին լեզուների հնչույթաբանական սիստեմները, նրանց հընչույթների բանակը և տարրերիշ հատկանիշները. այս խնդիրը կատարում է հնչույթաբանության այն բաժինը, որ կոչվում է «սիստեմի հնչույթաբանություն». 2) սահմանել տվյալ լեզվի հնչույթների հնարավոր զուգորդումները, ցույց տալ, թե ինչպես է տվյալ լեզուն օգտագործում եղած հնչույթները, լեզվի հնչույթաբանական սիստեմը՝ բառեր, ձևութներ (մորֆեմներ) և նախադասություններ կազմելու համար. այս խնդիրը կատարում են հնչույթաբանության այն բաժինները, որոնք կոչվում են «բառի հնչույթաբանություն», «ձևույթի հնչույթաբանություն» կամ «ձեռահնչույթաբանություն» (մորֆոնոլոգիա, կրճատ՝ մորֆոնոլոգիա) և «շարույթի (սինտագմայի) հնչույթաբանություն»:

Առանձնապես հարկավոր է կանգ առնել ձեռահնչույթաբանության (մորֆոնոլոգիայի) գաղափարի վրա: Զեահնչույթի (մորֆոնեմայի) գաղափարը լեզվաբանության մեջ առաջին անգամ մըտցըրել է լեհ լեզվաբան Հ. Ուզշինը<sup>1</sup>, որը ձեռահնչույթ ասելով հասկանում էր «հնչույթը իմաստաբանական-ձևաբանական ֆունկցիայում». ըստ նրա՝ հնչույթը հարաբերակից է վանկին (վանկի տարր է), ձեռահնչույթը՝ ձևույթին (ձևույթի տարր է). այսպես, շախ—շախ-կա[zapka] բառերում առկա են Յ—Ր հնչույթները, մինչդեռ ձեռ-

<sup>1</sup> H. Ułaszin, Kilka uwag terminologicznych, PF, XII, 1927, Laut, Phonema, Morphonema, TCLP, IV, 1931. Հմամատ. A. A. Рeфoрmaтcкий, О соотношении фонетики и грамматики, „Вопросы грамматического строя“, 1955, № 98—102, № 4 հեղինակը Ուլաշինի 1927 թ. հոդվածը չի նշում:

Հնչույթները նույնն են. Հնչույթները սիստեմ են կազմում ըստ արտաքին ակուստիկական-արտասահնական պրոցեսի սուբյեկտիվ համարժեքության, ձևահնչույթները՝ ըստ ներքին՝ ֆունկցիոնալ համասեռության:

Զեահնչույթաբանության գաղափարը Տրուբեցկոյն առաջ է քաշել փոքր-ինչ այլ նկատառումներով՝ փորձելով կապ հաստատել Հնչույնաբանության ու ձևաբանության միջև և այդտեղ կենտրոնացնել այն բոլոր հարցերը, որոնց քննությունն առնչվում է և՛ մեկի, և՛ մյուսի հետ. Զեահնչույթաբանությանը հատկացվում են 1) ձեռույթների հնչույթաբանական կառուցվածքի ուսմունքը. 2) տվյալ ձեռույթների՝ այլ ձեռույթների հետ զուգորդվելիս կրած փոխազդեցական Հնչույնափոխությունների (kombinatorische Lautveränderungen) ուսմունքը. 3) ձևաբանական ֆունկցիա կատարող հնչույնական հերթագայությունների ուսմունքը<sup>1</sup>:

Ուշաշինի ձևահնչույթի գաղափարն անցնում է նաև ամերիկացիներին՝ առաջին անգամ կիրառվելով Դ. Լ. Թրեյչերի կողմից և, Տրուբեցկոյի ուսմունքի հետ կապված, հիմք տալով մորֆոնեմիկայի (morphonemics) առանձնացման համար, որին ամերիկյան լեզվաբանները փոքր-ինչ այլ բովանդակություն են հատկացնում, քան Տրուբեցկոյը՝ մորֆոնուգիային (ձևահնչույթաբանությանը):

Եթե Տրուբեցկոյի հնչույթաբանական ուսմունքի ձևավորման համար վճռական դեր են խաղացել թողուեն-դե-Կուրտեների և Ֆերդինանդ դը-Սույյուրի ուսմունքների համապատասխան կողմերը, ապա լեզվամիության (Sprachbund) գաղափարի առաջքաշումը զգալի շափով կապված է «ալիքների տեսության» և «կուպտուրական շրջանների» ուսմունքների հետ: Անշուշտ որոշ դեր է խաղացել Տրուբեցկոյի հայացքների ձևավորման մեջ նաև Ֆորտունատովի դպրոցի քննադատական վերաբերմունքը Շլայխերի նախալեզվային սխեմաների հանդեպ<sup>2</sup>: Այս բոլորով հանդերձ, լեզվամիության գաղափարի ձևավորումը հիմնականում արդյունք է լեզուների, հատկապես կովկասյան լեզուների, այն ուսումնամիրության, որ 1920-ական թվականներից կատարում էր Տրուբեցկոյը:

<sup>1</sup> Բայ Ռեֆորմատոսկու հիշ. աշխ., հերթագայությունների ուսմունքը պետք է մնա այստեղ, բայց ներքին թերումը պետք է քննվի քերականության մեջ:

<sup>2</sup> Հմմ. Т. А. Дегтерева, Краткий обзор лингвистических учений (в XIX—XX веках в Европе), „Проблемы изучения языка“, М., 1957, էջ 37.

Տրուբեցկոյը լեզվական նյութի ուսումնասիրության ընթացքում հանգում է լեզուների փոխազդեցության ու շփման կարեռության գաղափարին, առաջ քաշում այն տեսակետը, թե լեզվական ընդհանրությունները կարող են ծագել շփման ճանապարհով։ Տերիտորիապես մերձակից լեզուների տեսական շփումը ըստ Տրուբեցկոյի կարող է հանգեցնել ոչ միայն բառապաշտարային, այլև հնչյունական ու ձեաբանական ընդհանրությունների, հասցնել լեզվամիության ստեղծման։ Այս հարցում Տրուբեցկոյը մերձենում է «լեզվի նոր ուսմունքի» հետևորդների (Մարի, Մեշշանինովի և այլոց) հայացքներին։

Լեզուների ցեղակցական ընդհանրությունը շժխտելով հանդերձ՝ Տրուբեցկոյը նախ՝ փորձում է «լեզվարնետանիքի» գաղափարը փոխարինել «լեզվամիության» գաղափարով, երկրորդ՝ ցեղակից համարվող լեզուների՝ միևնույն նախալեզվից ծագելու գաղափարը մի կողմ՝ է դնում որպես գիտականորեն չհիմնավորված ենթադրություն, երրորդ՝ լեզուների, այդ թվում և ցեղակից լեզուների ընդհանրությունը բացատրում է «լեզվամիության» գոյացմամբ, շորորորդ՝ լեզուների նյութական ընդհանրության կարեռության փոխարեն, որ պատմա-համեմատական հետազոտությամբ բացահայտվող ցեղակցական ընդհանրության պայմանն է, առաջ է քաշում լեզուների ստրուկտուրային ընդհանրությունների կարեռության գաղափարը։ Լեզվամիությունը կազմող լեզուների ստրուկտուրային ընդհանրությունները, Տրուբեցկոյի կարծիքով, ծագում են տեսական շփման ընթացքում և բոլորովին էլ արդյունք չեն նախալեզվից ժառանգած գծերի։ սկզբնապես լեզուները կարող են նման լինել, բայց շփման ընթացքում ձեռք բերել ընդհանուր գծեր և մտնել այս կամ այն լեզվամիության մեջ։ Որպեսզի այս կամ այն լեզվամիության բոլոր ստրուկտուրային գծերը ընդհակառակն, կորցնելով տվյալ լեզվամիության մեջ մտնող լեզուները բնորոշող ստրուկտուրային գծերից որևէ մեկը, լեզուն դադարում է այդ լեզվամիությանը պատկանելուց։ Անհրաժեշտ է նշել, որ լեզվական ընդհանրությունների մեջնաբանության և լեզվական որակի ըմբռնման մեջ հանդես բերելով որոշ դիալեկտիկական ըմբռնում, նշված դրույթների մեջ տարերայնորեն հանգելով լեզվական ընդհանրությունների քանակի՝ որոշ աստիճանում որակ կազմելու գաղափարին՝ Տրուբեցկոյը, այնուամենայնիվ, մեղանշում է դիալեկ-

տիկ քննության դեմ, լեզուների ընդհանրության բազմազանությունները վերածում սխեմատիկ ընդհանրությունների: Վերևում հիշատակված «Մտքեր հնդկրոպացիների պրոբլեմի մասին» իր ուսումնասիրության մեջ, որ լույս է տեսել նույնպես հետմահու, Տրուբեցկոյը հնդկրոպական լեզուների ստրուկտորային վեց հատկանիշ է թվում (հնչույթաբանական՝ 2, ձևահնչույթաբանական՝ 3 և ձևաբանական՝ 1), որոնց առկայությունը համարում է այս կամ այն լեզվի հնդկրոպական լինելու, հնդկրոպական դառնալու կամ հնդկրոպականությունը կորցնելու պայմանը. 1. ձայնավորների ներդաշնակության (սինհարմոնիզմի) բացակայությունը. 2. բառասկզբում բաղաձայնների զուգորդումների նույնպիսի հարստությունը, ինչ բառամիջում և բառավերջում. 3. նախամասնիկավորման առկայությունը կամ, այլ կերպ ասած, բառի՝ միայն արմատով սկսվելու սկզբունքի բացակայությունը. 4. ձևակազմության մեջ բացի մասնիկավորումից նաև արմատական ձևույթի ներսում գտնվող ձայնավորների հերթագայության հանդես գալը. 5. բացի ձայնավորների հերթագայությունից նաև բաղաձայնների հերթագայության՝ ձևաբանական դեր խաղալը. 6. ուղղական հոլովի որպես ենթակայի ընդհանուր ձև հանդես գալը՝ անկախ ստորոգյալի՝ անցողական թե անանցողական բայով արտահայտված լինելուց: Նշված դրույթներին համապատասխան Տրուբեցկոյը գտնում է, տր հնդկրոպական լեզուների մերձակցությունը արդյունք է տեսական շփման, փոխագեցության և փոխադարձաբար կատարվող փոխառությունների, որոնց միջոցով լեզուները մոտեցել են իրար՝ առանց սակայն, որևէ շրջանում լիովին նույնանալու: Այս հատկանիշներից մեկը կամ մի քանիսը կարող են հատուկ լինել և այլ լեզուների, բայց բոլորի առկայությունը բնորոշ է հնդկրոպական տիպի համար: Հնդկրոպական լեզվամիության առկայության մասին կարելի է խոսել այն մոմենտից, երբ գոյացել է այս վեց ստրուկտորային գծերի ընդհանրությունը: Բնականաբար այդ ընդհանրությունը գոյացել է այնպիսի ռեզվալընտանիքների» տերիտորիալ հարևանությամբ, որոնք ունեն նշված հատկանիշներից սրանք կամ նրանք այդպիսի լեզուներ են մի կողմից՝ կովկասյան և սեմական լեզուների նախորդները, որոնք տեղադրվում են միշերկրածովյան շրջանում և ունեն առաջին շորս ստրուկտորային հատկանիշները, մյուս կողմից՝ ուգալա-ալթայան լեզուները (հատկապես ֆիննական լեզուները), որոնք ունեն հինգերորդ և վեցերորդ հատկանիշները:

Տրուբեցկոյի կարծիքով՝ սկզբնական հնդկրոպական տիպը նման է եղել արևելյան կովկասյան լեզուների տիպին և հետագա գարգացման ընթացքում մոտեցել է ուրալա-ալթայան լեզուների տիպին:

Չնայած այն բանին, որ Տրուբեցկոյը և նրա կողմնակիցները «լեզվամիության» գաղափարին որոշ ունիվերսալ բնույթ են տալիս<sup>1</sup>, բայց այդ գաղափարը իրականում կարևոր գիտական արժեք է ստանում միայն այն դեպքում, եթե զուգորդվում է «լեզվարնտանիքի» գաղափարի հետ: Ցեղակցական ընդհանրությունը կարող է որոշվել միայն նյութական ընդհանրությամբ, այն է՝ կարեռագույն գլխավոր և երկրորդական ձևույթների նյութական-հնչյունական օրինաշափ համապատասխանություններով: Սակայն այս հանգամանքը չի բացառում ոչ-ցեղակից կամ ցեղակից, բայց ոչ այնքան մերձակլոր լեզուների՝ տեսական շփման ճանապարհով «լեզվամիություններ» կազմելը: Այս առումով «լեզվամիության» գաղափարը «լեզվարնտանիքի» գաղափարի անհրաժեշտ լրացումն է: Այլապես ցեղակից լեզուների ընդհանրությունները միայն «լեզվամիության» հիման վրա մեկնաբանելը հաճախ չի արդարացնում իրեն և թյուրիմացությունների տեղիք է տալիս: այս մեկնաբանությամբ, ասենք, հայերենը, որ մինչև այսպես կոշված հունարան դպրոցի կողմից բազմաթիվ նախածանցների ներմուծումը՝ գրեթե զերծ էր նախածանցումից, դադարել էր հնդկրոպական լինելուց և դարձավ այդպիսին, հենց որ հունարան դպրոցի հեղինակների արհեստական նախածանցները կիրառություն ստացան: Սակայն այլ բան է, երբ մենք շժիտելով հայերենի հնդկրոպականությունը նրա գոյության ողջ շրջանում՝ «լեզվամիութենային» կապեր տեսնենք սկրզբնապես կովկասյան, հետագայում թյուրքական լեզուների հետ նրա ձեռք բերած ստրուկտորային ընդհանրությունների մեջ: «Լեզվամիության» գաղափարը այս առումով գիտականորեն օգտակար է և լրացնում է լեզուների ցեղակցության մասին եղած տվյալները:

«Լեզվամիության» գաղափարն զբաղեցրել է շատ լեզվարների, որոնք հետազոտության են ենթարկել «բալկանյան» լեզվախումբը, խոսել «միջին եվրոպական լեզվամիության», «եվրոպական լեզվամիության» մասին և այլն: «Լեզվամիության» հետ

<sup>1</sup> Տրուբեցկոյը «լեզվամիության» գաղափարն առաջ է քաշել գեւես 1928 թ. Հաազայի լեզվարանական կոնգրեսում: Սակայն այդ գաղափարը նրա մոտ սկզբնապես ունիվերսալ բնույթ չուներ, և լեզուների ծագումարանական ընդհանրությունը չէր ժիտվում: Այդպիսի ունիվերսալիզմ հանդես է գալիս հատկապես «Մաքեր հնդկրոպացիների պրոլեմի մասին» հոգվածում:

կապված հարցերի մեկնաբանությանը աշխատություններ են նվիրել Ռ. Յակոբսոնը («Ֆոնոլոգիական լեզվամիությունների մասին»), Վ. Սկալիչկան («Եվրասիական լեզվամիության բնութագրման շուրջ»), Հատկապես Հ. Բեկերը («Լեզվամիությունը»)<sup>1</sup> և ուրիշները: Մկալիշկան, ինչպես կտեսնենք, նշում է քերականական կառուցվածքի պահպանողականությունը և ցույց տալիս, որ լեզվամիությունների բնութագրման համար այն անբավարար է: Մեծ դեր է հատկացվում ֆոնոլոգիական բնութագրմանը:

Ա. Կարցևսկի.—Կարցևսկին (1884—1955)<sup>2</sup> գրադպել է ընդհանուր լեզվաբանական հարցերով<sup>3</sup> և ուսաց լեզվի քերականական կառուցվածքի ուսումնասիրությամբ<sup>4</sup>, ընդ որում լեզվաբանական տեսության ընդհանուր հարցերը նա հաճախ զուգակցում է ուսաց լեզվի ուսումնասիրության հետ: Կարցևսկու համար բնորոշ է սինխրոնիկ պլանը դիախրոնիկ պլանի հետ զուգակցելու, նեղ սինխրոնիզմը հաղթահարելու ձգտումը. ամեն մի լեզվաբանական նշան տվյալ կոնկրետ իրադրության մեջ հանդես է քերում միաժամանակ և՝ կայունություն, և՝ փոփոխականություն, այլ կերպ ասած՝ գտնվում է հարաբերական կայունության մեջ:

Իր ամենից ավելի աշքի ընկնող ուսումնասիրության մեջ՝ «Լեզվաբանական նշանի անհամաշափ դուալիզմի մասին»<sup>5</sup>, Կարցևսկին լեզուն դիտում է որպես նշանային (սեմիոլոգիական) մի մեխանիզմ, որ տատանվում է ընդհանուրի և առանձինի, աբստրակտի և կոնկրետի միջև: Լեզվաբանական նշանի երկու կողմերը՝

<sup>1</sup> R. Jakobson, Über die phonologischen Sprachbünde, TCLP, IV. V. Skalicka, Zur Charakteristik des eurasischen Sprachbundes, „Archiv orientální“, 1933. H. Becker, Der Sprachbund, 1948.

<sup>2</sup> Հմմ. R. Jakobson, Serge Karcevskij, CFS, XIV. Н. С. Поспелов, О лингвистическом наследии С. Кацевского, ВЯ, 1957. О. С. Ахманова, Очерки по общей и русской лексикологии, М., 1957, № 81—83.

<sup>3</sup> S. Karcevskij, Les quatre plans semiologique du langage (communication), CFS, I. Du dualisme asymétrique du signe linguistique, CFS, XIV և այլն.

<sup>4</sup> S. Karcevskij, Système du verbe russe; essais du linguistique synchronique, Pragae, 1927. С. Кацевский, Повторительный курс русского языка, М., 1928. S. Karcevskij, Sur structure du substantif russe, „Charisteria Gulielmo Mathesio quinquagenerio“, Pragae, 1938 և այլն.

<sup>5</sup> S. Karcevskij, Du dualisme asymétrique du signe linguistique, CFS, XIV.

նշանակիչը և նշանակելին կոնկրետ գործածության մեջ հանդես են բերում հակասական տեսնենցներ. նշանակիչը ձգտում է հանդես գալ իրեն հատուկ ֆունկցիայից տարրեր ֆունկցիաներով և սրանով իմակ դառնում է «համանունային շարքի» անդամ. նշանակելին ձգտում է արտահայտվել իրեն հատուկ նշանակիչից (հնչյունական ձեից) տարրեր միջոցներով և դրանով իսկ դառնում է «հոմանշային շարքի» անդամ: Այսպիսով, լեզվական նշանի երկու կողմերը նրա մեջ գուգորդված են անհամաշափ կերպով և գունվում են անկայուն հավասարակշռության մեջ: Կարցեսկու քննությամբ լեզվաբանական նշանը պայմանավորվում է ոչ թե սոսկական հակադրությամբ, այլ միաժամանակ և՛ նմանությամբ, և՛ տարրերությամբ: Այսպես, ձուկ բառը ունենալով ձուկ կենդանին նշանակող ընդհանուր իմաստը, կոնկրետ գործածության մեջ կարող է գործածվել փոխաբերաբար՝ «ֆլեգմատիկ» իմաստով. այս դեպքում նա հանդես է գալիս 1) համանունային շարքում, որովհետև նույն հրնչյունական ձևը (նշանակիչը) հանդես է գալիս այլ իմաստ (նշանակելի, այն է՝ «ֆլեգմատիկ») արտահայտողի դիրքում, 2) համանշային շարքում, որովհետև այս կոնկրետ իմաստը կարող է փոխարինվել այլ հնչյունական ձև ունեցող (հոմանիշ) բառերով՝ «ֆլեգմատիկ», սառը, անգամ և այլն:

Իր անհամաշափ դուալիզմի սկզբունքը կարցեսկին փորձել է կիրառել շարույթի, ֆրազի և բարդ նախադասության կառուցվածքի էությունը բացահայտելու համար: Շարույթ ասելով նա հասկանում է, ինչպես թալլին, մի գուգորդում, որի անդամները հանդես են գալիս որոշիչ (T')—որոշյալ (T) հարաբերությամբ. սակայն շարույթը դառնալով ստորոգելական (պրեդիկատիվ) շարույթ, այսինքն՝ ըստ կարցեսկու հանդես բերելով հարաբերություն դեպի խոսող անձը, դառնում է նախադասություն և դրանով իսկ հանդես գալիս հոմանշային նոր շարքում. այսպիսով, ստորոգելական շարույթը և՛ շարույթ է, և՛ նախադասություն: Այս նույն ձևով էլ ֆրազը և՛ մոտ է նախադասությանը, և՛ մոտ չէ. նախադասությունը որոշվում է որոշակի քերականական կառուցվածքով, ֆրազը որոշակի հնչյունական կառուցվածքով՝ ինտոնացիայով: Ֆրազը նախադասության ակտուալացումն է: Որպեսզի նախադասությունն իրականանա, պետք է ձեռք բերի ֆրազի ինտոնացիա: Տարրեր քերականական կառուցվածքը ունեցող նախադասությունները կարող են ունենալ միևնույն հնչյունական կառուցվածքը (ինտոնացիան),

այսինքն՝ հանդես գալ հոմանշային շարքում, և միևնույն նախադասությունը կարող է ունենալ տարրեր հնչյունական կառուցվածքներ (ինտոնացիաներ), այսինքն՝ հանդես գալ համանունային շարքում: Նույն այդ անհամաշափ դուալիզմի սկզբունքով է լուծում կարցեսկին նաև համադասության ու ստորադասության հարցը: Մրանք, ըստ Կարցեսկու, ծագում են անշաղկապ կապակցություններից, որոնց մեջ առկա են և՛ առաջինը, և՛ երկրորդը, ընդ որում համադասությունն ու անշաղկապությունը ընկած են հորիզոնական գծում, անշաղկապությունն ու ստորադասությունը՝ ուղղահայաց գծում: Ավելորդ չէ հիշել, որ Յ. Կուրիլովիշը, օգտագործելով Կարցեսկու ուսումնասիրությունը, խոսում է ոչ թե համանունություննամանշություն, այլ բազմիմաստություն-հոմանշություն հակադրության մասին: Եթե Կարցեսկին ենում էր աբստրակտի և կոնկրետի հակադրությունից, ապա Կուրիլովիշը հրաժարվում է «ընդհանուր իմաստ» աբստրակտ արտահայտությունից և հենվելով բառի բազմիմաստության գաղափարի վրա, մտցնում գլխավոր և երկրորդային, առաջնային և երկրորդային իմաստների գաղափարները, այսինքն՝ հաստատում է բառի բազմիմաստության մեջ իմաստների որոշ հիերարխիա. բառի փոխաբերական գործածությունը դիտվում է որպես երկրորդային իմաստ:

Ո. Յակոբսոն.—Ռ. Յակոբսոնի, լեզվաբանական տեսությունը պետք է տարրերել նրա կիրառած ստրուկտուրալ վերլուծության մեթոդից. առաջինը ուսակցիոն բնույթ ունի, հենվում է և. Հուանովի ֆենոմենոլոգիական փիլիսոփայության վրա ու մերձենում Կոպենհագենյան ստրուկտուրալիստների լեզվաբանական տեսությանը. երկրորդը զերծ չէ ուսանելի կողմերից: Իր հետագա գործունեությունը ծավալելով Ամերիկայում՝ Յակոբսոնը դրանով իսկ նպաստում է Պրագայի և Ամերիկայի ստրուկտուրալիստների վերլուծության մեթոդների մերձեցմանը:

Ինչպես նշել ենք, Յակոբսոնի գործունեության գլխավոր բնագավառը հնչույթաբանությունն է: Փորձելով պարզել վերջինիս ու քերականության սահմանները և այդ հարցում հենվելով նշանի գաղափարի վրա՝ 1940-ական թվականների սկզբներին Յակոբսոնը գրում էր. «Քերականությունն զբաղվում է նշաններով, հնչույթաբանությունը՝ այդ նշանները կազմող մասերով»<sup>1</sup>:

Հենվելով ստրուկտուրային հակադրությունների սկզբունքի

<sup>1</sup> Բաղկածքը Օ. Լեշկա-ի հիշ. հոդվածից, ՎՃ, 1953, № 5, էջ 99.

վրա՝ Յակոբսոնը խոսում է «զրո նշանի» հնարավորության մասին<sup>1</sup>. այսպես է կոչվում այն նշանը, որ հակադրվում է ձևաբանական, շարահյուսական և ոճական որևէ հատկանիշ ունեցող նշանին. այսպես, մարդ ու ուղղականը հայերենում ունի «զրո նշան» (իմա՞ զրո վերջավորություն)՝ ի հակադրություն մարդու, մարդուց, մարդով թեք հոլովաձևերի. նախադասության սովորական շարադասությունը «զրո նշան» ունի՝ ի հակադրություն շրջուն շարադասության և այն:

Յակոբսոնը հատուկ ուշադրություն է նվիրել «լեզվամիությունների» հնչույթաբանական բնութագրման հարցին (հմմտ. «Հնչույթաբանական լեզվախմբերի մասին» աշխատությունը)<sup>2</sup>:

Պատմական հնչույթաբանության հարցերով Յակոբսոնն զբաղվել է շատ վաղ: Դեռևս 1931 թ. լույս է տեսնում նրա «Պատմական հնչույթաբանության հիմունքները» ուսումնասիրությունը<sup>3</sup>, որի մեջ դրվում է այդ դիսցիպլինի հիմքը:

«Պատմական հնչույթաբանության սկզբունքների» մեջ Յակոբսոնը զերծ չէ սովետական լեզվաբանության դիալեկտիկական հայեցակետը որդեգրելու փորձից. սինխրոնիայի և դիախրոնիայի, ստատիկայի և դինամիկայի հակասությունը Յակոբսոնը դիտում է որպես լեզվի բնորոշ հատկանիշը. սակայն լեզվի դիախրոնիկ ուսումնասիրության մեջ հանդես եկող նպատակավորության (Teleologie) և «մեխանիկական պատճառաբանվածության» (mechanische Kausalität) սկզբունքները նա ներկայացնում է որպես լեզվի պատմական ժամանակակից առինական դրսեվորումներ: Սրա հետ միասին նա հակված է լեզվի զարգացման էվոլյուցիոնիստական հայեցակետին հակադրելու մուտացիոնիզմը, պաշտպանելու լեզվի թռիչքածև (Sprunghaft) փոփոխության տեսակետը: Լեզվի հնչույթային սիստեմի փոփոխությունները նա ներկայացնում է որպես մուտացիոն փոփոխություններ:

<sup>1</sup> R. Jakobson, Signe zéro, „Mélanges de linguistique offerts à Ch. Bally“, Genève, 1937, էջ 143—152. բովանդակության համառոտ շարադրանքը տե՛ս Բ. Ազանի, հիշ. աշխ., էջ 92.

<sup>2</sup> R. Jakobson, Über die phonologischen Sprachbünde, TCLP, IV, 1931.

<sup>3</sup> S. Jakobson, Prinzipien der historischen Phonologie, TCLP, IV, 1931. Փր. Թարգմ. Principes de phonologie historique, 1949 (Տրուբեցյանի „Principes de phonologie“-ի վերջում, էջ 315—336). Յակոբսոնի աշխատությունների բիբլիոգրաֆիան տե՛ս „For Roman Jakobson“ ժողովածուում՝ նվիրված նրա ծննդյան 80-ամյակին, էջ 1—12:

Պատմական հնչույթաբանության առաջին կարևոր սկզբունքը նա համարում է լեզվի սիստեմային բնույթի հաշվառումը. հնչույնական յուրաքանչյուր փոփոխություն նա պահանջում է քննել իր սիստեմային կապերի մեջ: Յակոբսոնը տարբերում է հնչույթաբանական դեր շխաղացող փոփոխությունները այդպիսի դեր խաղացող փոփոխություններից՝ ուշադրովթյունը կենտրոնացնելով վերջիններիս վրա: Այստեղ նա ամենից առաջ տարբերում է հնչույթաբանական մուտացիաների երկու խումբ՝ հնչույթավորում (Phonologisierung) և ապահնչույթավորում (Entphonologisierung), որոնք համապատասխանում են Բոդուեն-դե-Կուրտենեի տարբերած դիվերգենցիային և կոնվերգենցիային. առաջին դեպքում հնչույթաբանական մուտացիայի ընդհանուր  $A > A_1 : B_1$  բանաձևի մեջ  $A : B$  հակադրությունը հնչույթաբանական չէ,  $A_1 : B_1$  հակադրությունը հնչույթաբանական է. երկրորդ դեպքում գոյություն ունի հակառակ կարգը: Մրանցից Յակոբսոնը տարբերում է այսպես կոչված վերահնչույթավորումը (Umphonologisierung). սրա դեպքում մի հնչույթային տարբերություն փոխակերպվում է մի այլ հնչույթային տարբերության, որը, սակայն, հնչույթային սիստեմի նկատմամբ այլ հարաբերության մեջ է գտնվում, քան առաջինը: Այս Յ տիպի գլխավոր փոփոխությունների մեջ տարբերվում են որոշ տեսակներ ըստ փոխվող զույգերի կամ փոխված զույգերի հակադրության՝ դիսյոնկտիվ (տարբերիչ) թե կոռելյատիվ (հարաբերակից) բնույթ ունենալու:

Քանի որ այս կամ այն լեզվի հնչույթային կառուցվածքը բնորոշվում է ոչ միայն առանձին հնչույթներով, այլև գրանց զուգորդումներով՝ Յակոբսոնը ուշադրությունը է դարձնում և այս վերջին կարգի փոփոխությունների վրա. մեկ հնչույթը հնչույթային մուտացիայի հետևանքով կարող է ճեղքվել հնչույթային զուգորդման (Phonemverbindung) և ընդհակառակը: Օգտվելով Պոլիվանովից՝ Յակոբսոնը նշում է, որ հնչույթային մուտացիաները տեղի են ունենում փոխկապակցված, մի փոփոխություն ուղեկցվում է մի այլ փոփոխությամբ:

Յակոբսոնը ուշադրությունը է դարձնում նաև այսպես կոչված «Փունկցիոնալ բարբառների», տարբեր լեզվառների հնչույթաբանական բնութագրման հարցին: Այս կապակցությամբ նա առաջ է քաշում ֆունկցիաների վերամիացման (Umschaltung der Funktionen) կամ ֆունկցիոնալ վերաբերեավորման (funktionelle Umwer-

ւոց) սկզբունքը. ըստ այս սկզբունքի՝ միանույն լեզվառնին պատկանող սիստեմի շրջանակներում հնչույթավորումներ տեղի չեն ունենում, որովհետև սրանք ուղեկցվում են նրանց ոճական արժեքի կորստով. այսպիսի հնչույթավորումները հարթվում են (ausgleichen) ապահնչույթավորումներով. այս ոճական սիստեմների ներսում կարող են տեղի ունենալ միայն վերահնչույթավորումներ: Հնչույթավորումը կարող է տեղի ունենալ միայն 2 տարբեր լեզվառների փոխազդեցության հետևանքով:

Սակայն Յակոբսոնը պատմական հնչույթաբանության խնդիրները չեն սահմանափակում միայն հնչույթային մուտացիաների նկարագրությամբ, այլ անհրաժեշտ է համարում և դրանց բացատրությունը, դրանց ուղղության ու գերի մեկնաբանումը: Այս գեպքում, ըստ նրա, մենք դիմախրոնիայից անցնում ենք սինխրոնիայի բնագավառը: Ոչ առանց Ժնևի սոցիոլոգիական դպրոցի և հատկապես Փունկցիոնալիստական թէի ազդեցության՝ Յակոբսոնը իր բացատրության մեջ հենվում է 2 հակադիր տեսնդենցների գործողության վրա. մուտացիաների ֆունկցիան նա կապում է սիստեմի հավասարակշռության լերականգնման պահանջի հետ. սրան հակառակ, ըստ նրա, գործում է մի այլ տեսնդենց՝ հավասարակշռության խախտումը. առաջինի շարժիչ ուժը ինտելեկտուալությունն է, երկրորդինը՝ հուզականությունն ու արտահայտչականությունը. «Եթե ինտելեկտուալ լեզվի հնչույթային սիստեմը իսկապես նորմալ ձևով հավասարակշռության է ձգտում, ապա հավասարակշռության խախտումը, ընդհակառակն, կազմում է հուզական և բանաստեղծական լեզվի հիմնադրական (konstituitiv) տարրը»<sup>1</sup>:

Յակոբսոնի հետագա շրջանի (Ամերիկայում գտնված ժամանակվա) աշխատություններից առանձնապես հիշատակելի են Ֆանտի և Հալլեի հետ միասին գրած «Խոսքի վերլուծության սկզբանքները», և Հալլեի հետ գրած «Լեզվի հիմունքները» գրքերը<sup>2</sup>:

Իրենց աշխատություններում Յակոբսոնը և մյուսները հնչույթաբանական վերլուծության հիմք են ընդունում տարրերիչ հատկանիշների գաղափարը՝ հնչույթի հասկացության մեկնաբանությունը հիմնելով նրանց նախնական քննության արդյունքների վրա:

<sup>1</sup> R. Jakobson, Prinzipien der historischen Phonologie, TCLP, IV, 1931, էջ 265—266.

<sup>2</sup> R. M. Jakobson, G. G. M. Fant and M. Halle, Preliminaries to Speech Analysis, 1952. R. Jakobson and M. Halle, Fundamentals of Language, 1956.

Հնչույթաբանության նկատմամբ կիրառելով երկատողական վերլուծության ընդհանուր եղանակը՝ նրանք տարբերիշ հատկանիշների առանձնացումը կատարում են այսպես կոչված երկանդամ հակադրության (binary opposition) սկզբունքով. ըստ այդ սկզբունքի՝ տարբերիշ հատկանիշները կազմում են իրար հակադրվող և փոխադարձաբար բացառող հատկանիշների սիստեմ։ Փորձառական վերլուծության ճանապարհով նրանք աշխարհի բոլոր լեզուների համար սահմանում են հնարավոր 12 հատկանիշ՝ նշելով, սակայն, որ դրանք ոչ մի լեզվում լիակատար շափով չեն դրսենում. այսպես, օրինակ, անգլերենը հնչույթները տարբերակելու համար այդ 12 հատկանշից օգտագործում է միայն ինը։

Տարբերիշ հատկանիշները, ըստ Յակոբսոնի և Հալլեի, կազմում են լեզվական վերլուծության երկրորդ մակարդակը. առաջին մակարդակը համարվում է իմաստայինը, որի գեպքում որպես նվազագույն միավոր առանձնացվում է ձևույթը։ Տարբերիշ հատկանիշները լեզվի այն ծայրագույն բաղադրիչներն են, որոնք հնարավորություն են տալիս ձևույթները իրարից տարբերելու Հնչույթները ոչ այլ ինչ են, եթե ոչ գոյակից տարբերիշ հատկանիշների փնջեր (bundles)։

Յակոբսոնը և մյուսները սահմանում են տարբերիշ հատկանիշների երկու խումբ՝ ներհատուկ (inherent) և առողանական (prosodic). Վերջիններիս մեջ նշվում են բարձրության (տոնի), ուժի (շեշտի) և քանակի (երկարության) տարբերությունները։

Իր «Մանկական լեզուն, աֆազիան և հնչունական ընդհանուր օրենքները» հոդվածում<sup>2</sup> Յակոբսոնը աշխատում է լեզուների հնչունական զարգացման որոշակի հաջորդականություն սահմանել՝ հենվելով այն սկզբունքի վրա, որ դա համընկնում է լեզվի հնչունները երեխայի կողմից յուրացվելու հաջորդականության հետ. Երեխայի լեզվում ամենից վաղ հանդես եկող հնչունները (Հմմտ. a, այլև թ, թ, ապա թ, ո) ամենավաղ ծագածներն են, որոնք տարածված են բոլոր լեզուներում։ Հետագայում երևան է գալիս լայն (a) և նեղ (e, i) ձայնավորների հակադրությունը, ապա հնչունների հե-

<sup>1</sup> Այս սկզբունքը քննադատության է ենթարկվել Փրանսիացի նշանավոր հնչյունագետ Ա. Մարտինեի կողմից. հմմտ. A. Martinet, Neutralisation et l'archiphonème, TCLP, VI, 1936. Economie de changement phonétique, Berne, 1955.

<sup>2</sup> R. Jakobson, Kindersprache, Aphasie und allgemeine Lautgesetze, SSUF, Uppsala Leipzig, 1942.

տագա յուրացման պրոցեսում շփականների օգտագործումը նախորդում է պայթականների յուրացմանը, ետնալեզվայինների յուրացումը ենթադրում է առաջնալեզվայինների յուրացում. լեզուներում ամենատարածված և ամենակայուն հնչյունները երեխայի կողմից վաղ յուրացվողներն են, և, ընդհակառակն, ախտաբանական խանգարումների դեպքում հնչյունների կորուստը տեղի է ունենում հակառակ հաջորդականությամբ:

VIII միջազգային լեզվաբանական համագումարում կարդացած «Տիպոլոգիական հետազոտությունները և նրանց նշանակությունը պատմա-համեմատական լեզվաբանության համար» զեկուցման մեջ<sup>1</sup> Յակոբոսոնը տարրերում է լեզուների ընդհանրությունների քրն-նության 3 մեթոդ՝<sup>2</sup> 1) գենետիկական, որը գործ ունի լեզուների ցեղակցության հետ, 2) տարածական (առեալային), որը նկատի ունի լեզուների նմանությունները, և 3) տիպոլոգիական, որը զբաղվում է լեզուների զուգաձևության (իզոմորֆիզմի) հարցերով՝ առանց ժամանակային և տարածական գործոնների հաշվառման. Տիպոլոգիական հետազոտության հիմքում ընկած է լեզվական սիստեմի՝ որպես տարրերի բարդ հիերարխիա կազմող ամբողջության վերուծությունը. այդ վերլուծությունը ենում է ենթադրականության (իմպլիկացիայի) օրենքից, ըստ որի A տարրը ենթադրում է B տարր։ Տիպոլոգիական հետազոտությունը հնարավորություն է տալիս որոշել լեզվի զարգացման հնարավոր ուղղությունը և օգնում է վերականգնման ճշգրտությանը։ Եթե լեզվավիճակի վերականգնումը չի համապատասխանում տիպոլոգիական հետազոտությամբ սահմանվող օրինաշափություններին, ապա այն կասկածելի է դառնում։

Երկանդամ հակադրությունների սկզբունքը Յակոբոսոնը կիրառում է նաև լեզվակառուցվածքի այլ կողմերի նկատմամբ։ Այսպես, քննության առնելով ուսերենի հոլովների սիստեմը<sup>3</sup> նա առանձ-

<sup>1</sup> R. Jakobson, Typological Studies and their Contributions to Historical Comparative Linguistics, „Reports for the Eighth International Congress of Linguists“, Suppl., Oslo, 1957.

<sup>2</sup> Յակոբոսոնի հայացքների քննադասությունը այս հարցում տե՛ս Բ. А. Серебренников, К критике некоторых методов типологических исследований, ВЯ, 1958 № 5. այսեղ հեզինակը հակադրվում է Վ. В. Иванов-ի „Типология и сравнительно-историческое языкознание“ հայվածքն (նույն տեղը):

<sup>3</sup> R. Jakobson, Beitrag zur allgemeinen Kasuslehre. Gesamtbedeutungen der russischen Kasus, TCLP, VI, 1936.

նացնում է 8 հոլով՝ ուղղական (N), հայցական (A), սեռական I և սեռական II (G I և G II), գործիական (I), տրական (D), ներգոյական I և ներգոյական II (L I և L II), ընդ որում դրանց միջև հաստատում է հետևյալ երկանդամ հակադրությունները՝

$$(N \sim A) \sim (G I \sim G II)$$

$$\begin{matrix} \backslash & \backslash & \backslash & \backslash \\ (I \sim D) \sim (L I \sim L II) \end{matrix}$$

Այս կապակցությամբ կոպենհագենյան ստրուկտուրալիզմի ներկայացուցիչ Սյորենսենը փորձել է պարզել Ելմսլեի և Յակոբսոնի սիստեմների փոխհարաբերությունը հոլովների հարցում<sup>1</sup>:

Վ. Սկալիչկա.—Վ. Սկալիչկայի քերականական վերլուծության մեթոդը հենվում է ստրուկտուրալ լեզվաբանության այն դրույթի վրա, որ լեզուն ներկայացնում է հակադրությունների մի սիստեմ։ Քերականական սիստեմի վերլուծությունը, Սկալիչկայի կարծիքով, պետք է սկսել այդ սիստեմը կազմող նվազագույն միավորից։ Այդպիսի նվազագույն միավոր համարվում է ձևույթը, որի բողունյան սահմանումն ընդունվում է և Պրագայի լեզվաբանական խմբակի կողմից։ Սակայն Սկալիչկան մի կողմից՝ վիճարկում է բողունյան դրույթը ձևույթի՝ անբաժանելի ձևաբանական միավոր լինելու մասին, մյուս կողմից՝ գտնում է, որ այդ սահմանմամբ հնարավոր չէ պարզել ձևույթի (մորֆեմայի) և իմաստույթի (սեմանտեմայի) տարրերությունը. ըստ Սկալիչկայի, ձևույթն «անբաժանելի» միավոր չէ, որովհետև քերականական իմաստը ձևականորեն կարող է արտահայտվել ձևույթի միայն մի մասով (հերթագայության դեպքում՝ հմմտ. անգլ. foot «ոտք» և feet «ոտքեր») կամ դուրս գալ տվյալ ձևույթի սահմաններից և անցնել մի այլ ձևույթի։ Այս նկատառումներով Սկալիչկան մտցնում է սեմայի գաղափարը. սեմանքերականական իրոք նվազագույն միավորն է, որ ձևական ու իմաստային առումով մեկ միասնություն է ներկայացնում և կարող է կիրառվել բոլոր լեզուների քերականական վերլուծության մեջ։ Զետվյթը, ըստ Սկալիչկայի, «սեմաների գուգորդում է, որ արտահայտված է միանշանակորեն, ինքնուրույնաբար կամ ուրիշ ձևույթների օգնությամբ, հնչույթների անընդհատ շարքով»<sup>2</sup>։ Սեման և մորֆեման տարրեր լեզուներում տարրեր փոխհարաբերության մեջ

<sup>1</sup> H. C. Sørensen, Contribution à la discussion sur la théorie des cas, „Recherches structurales“, TCLC, Copenhague, 1949, էջ 123—133։

<sup>2</sup> V. Skalička, Zur ungarischen Grammatik, էջ 66. քաղաքածքը ըստ Օ. Լեշկա-ի հիշատակության, ВЯ, 1953, № 5, էջ 99, ծանոթություն։

Ֆն. թեքական լեզուներում (որտեղ, ասենք, հերթագայությունը քերականական ֆունկցիա ունի), սեման հակադրվում է ձեռութին, կցականներում (օր. թուրքերնում՝<sup>1</sup> ոչ Սեման կազմում է սեմանձեռութ-բառ-նախադասություն շարքի նվազագույն աստիճանը: Լեզվի սիստեմը կառուցվում է մի կողմից՝ նշված սեմա-ձեռութ-բառ-նախադասություն միավորների («սեմաների»), մյուս կողմից՝ մի սեմա—մի այլ սեմա, մի ձեռութ—մի այլ ձեռութ և այլն հակադրությունների վրա:

Իր լեզվաբանական սիստեմի հիմքում Սկալիչկան դնում է սոսյուրյան «լեզվական գործունեություն» (langage) և «լեզու» հակադրությունը՝ այն հանգեցնելով լեզուների տիպոլոգիական տարբերություններին: Լեզվական տիպը որոշվում է լեզվի սիստեմի կառուցվածքային հատկանիշներով՝ այդ հատկանիշների որոշակի կոմբինացիոն հնարավորություններով հանդերձ: Լեզվական սիստեմի ստրուկտորալ վերլուծությունը, Սկալիչկայի կարծիքով, միասնական սկզբունքներ ունի. քերականական վերլուծությունը հենվում է նույն սկզբունքների վրա, ինչ Փոնոլոգիականը: Ստրուկտորալ քերականությունը Սկալիչկան հակադրում է նկարագրականին և նրա խնդիրը համարում սեմաների Փոնոլոգիական կառուցվածքի, սեմատիկ տարրերի հերթագայությունների ու նրանց օգտագործման, սեմատիկ ու մորֆեմատիկ գուգորդումների ու դրանց փոխհարաբերությունների, համանշության և համանության տարածման ու օգտագործման հարցերի ուսումնասիրությունը:

Նշելի է, որ Սկալիչկան ցույց է տալիս «լեզվամիությունների» քերականական բնութագրման անբավարարությունը՝ որպես հետեւյանք քերականության պահպանողականության, դժվար փոխվելու:

բ) Կոպենհագեն ստրուկտուրալիստական ընդհանրական քերականական բնութագրությունը եվ գլոսասեմատիկան (հարաբերությունների լեզվաբնությունը)

Կոպենհագենի լեզվաբանական խմբակի ձեավորումը.— Եթե ամերիկյան նկարագրական լեզվաբանության և Պրագայի լեզվաբանական խմբակի ներկայացուցիչներին պատկանում է ստրուկտորալ վերլուծության մեթոդների վաղ կիրառման պատիվը, ապա կոպենհագենյան ստրուկտուրալիստներն առաջիններն էին, որ հանդես եկան ստրուկտուրալիզմի դրույթների ընդհանուր տեսական հիմ-

նավորմամբ։ Վ. Բրյոնդալի «Ստրուկտուրալ լեզվաբանությունը» հոդվածը (1939) կոպենհագենյան ստրուկտուրալիզմի յուրատեսակ լեզվաբանական մանիֆեստն էր, որի մեջ հեղինակը տալիս էր լեզվի ստրուկտուրալ վերլուծության մեթոդների կիրառման անհրաժեշտության հիմնավորումը և ձևակերպումը էր այդ ուղղության հիմնական դրույթները։ Ստրուկտուրալիզմի անցած ճանապարհի և իր գործունեության արդյունքների յուրատեսակ համառոտ ամփոփում էր ներկայացնում կոպենհագենյան ստրուկտուրալիզմի այժմյան գլխավոր ներկայացուցչի՝ Լուի Ելմսլիի «Ստրուկտուրալին վերլուծության մեթոդը լեզվաբանության մեջ» հոդվածը (1950—1951 թթ.):

Կոպենհագենի լեզվաբանական խմբակը ձևավորվել է 1930—ական թ. սկզբներին, թեև առանձին ծրագրային դրույթների հիմնավորման և ստրուկտուրալ վերլուծման փորձեր կատարվել են Վ. Բրյոնդալի և Լ. Ելմսլիի կողմից ավելի վաղ շրջանում։ 1934 թ. սկսած՝ Կոպենհագենի լեզվաբանական խմբակը լույս է ընծայում իր պարբերական «Բյուլետենը»<sup>1</sup>, իսկ 1939 թ.<sup>2</sup> «Acta Linguistica» հանդեսը, որը նախատեսված է ավելի լայն նպատակների համար՝ որպես միջազգային ստրուկտուրալիզմի օրգան։ Այս հանդեսի առաջին իսկ համարում տպվում է Վ. Բրյոնդալի այն ծրագրային հոդվածը, որ հիշատակվեց վերևում։

Կոպենհագենյան ստրուկտուրալիզմի տարատեսակն է Լուի Ելմսլիի գլուսեմատիկան, որի սկզբունքների մասին կիսունք Ելմսլիի հայացքների քննության կապակցությամբ։

Վ. Բրյոնդալ.— Վ. Բրյոնդալը (1887—1942) Կոպենհագենի ստրուկտուրալիզմի ականավոր ներկայացուցիչներից մեկն է և մինչև Լուի Ելմսլիի հանդես գալը եղել է այդ ուղղության պարագությունը։ Ոմանք նրան որպես իսկական ստրուկտուրալիզմի ներկայացուցչի տարբերում են Ելմսլիից, որպես գլուսեմատիկայի ստեղծողի։ սակայն գլուսեմատիկան իրականում ստրուկտուրալիզմի տարատեսակներից մեկն է։

Վ. Բրյոնդալի «Ստրուկտուրալ լեզվաբանություն» հոդվածը տալիս է Կոպենհագենի ստրուկտուրալիստների հիմնական ծրագրային դրույթները և, չնայած իր փոքր ծավալին, կարևոր

<sup>1</sup> V. Brøndal, Linguistique structurale, AL, I, 1939.

<sup>2</sup> L. Hjelmslev, AL, VI, 2—3, 1950—1951.

<sup>3</sup> Bulletin du Cercle linguistique de Copenhague.

փաստաթուղթ է ստրուկտուրալիզմի պատմովիշյան համար։ Այս հոդվածը Ելմակի «Ստրուկտուրային վերլուծության մեթոդը» հոդվածի հետ միասին (1950—1951) Կոպենհագենի ստրուկտուրալիզմի բնութագրման համար ունի գրեթե նույն արժեքը, ինչ Պրագայի լեզվաբանության դպրոցի համար նրան նշանավոր թեզիսները։

Բրյոնդալի գլխավոր տեսական աշխատությունը «Ընդհանուր լեզվաբանության ուրվագծերն»<sup>1</sup> են (Հրատարակվել է ետմահու)։ Այստեղ ի մի են բերված հեղինակի կարեոր լեզվաբանական հոդվածները և ամբողջացված։

Բրյոնդալի վերոհիշյալ ծրագրային հոդվածին նախորդած հոդվածներից նշելի են նաև «Ձևաբանության սահմանումը» և «Լեզվաբանական հակադրությունները» հոդվածները<sup>2</sup>, 1928 թ. Բրյոնդալը լույս է բնծայել մի աշխատություն՝ նվիրված խոսքի մասիրին<sup>3</sup>, 1940 թ. մի այլ աշխատություն՝ նվիրված նախադրություններին. վերջինս 1950 թ. Հրատարակվել է ֆրանսերեն թարգմանությամբ<sup>4</sup>։ Նշելի է և նրա «Ֆրանսերենը վերացական լեզու»<sup>5</sup> գործը։

Բրյոնդալի ստրուկտուրալիզմը հենվում է մի կողմից՝ Սոսյուրի լեզվաբանական կարեոր դրույթների, հատկապես լեզվի և խոսքի հակադրության, մյուս կողմից՝ գերմանացի փիլիսոփա Էդմունդ Շուսեովի փիլիսոփայության վրա։

Հուսեովի օրինակով Բրյոնդալը, հեռանալով լեզվական երելույթների հոգեբանական մեկնաբանությունից, փորձում է ստեղծել յուրատեսակ ապրիորի լեզվաբանական գիտություն, որ գործ ունի իդեալական լեզվաբանական էությունների հիմ։ Բրյոնդալի կարծիքով՝ փոփոխվող ու շարժվող լեզվական երելույթների հիմքում ընկած են լեզվական անփոփոխ ու վերժամանակյա էությունները։ Լեզվական փաստերի իսկական քննությունը, այսպիսով, պետք է կատարվի վերժամանակյա ձևով, ոչ պատմականորեն, որովհետեւ այդպիսի քննությունն է բացահայտում լեզվական էությունները որ-

<sup>1</sup> V. Bröndal, Essais de linguistique générale, Copenhague, 1943.  
Մրան կցված է Հեղինակի աշխատությունների բերլինգրաֆիան։

<sup>2</sup> V. Bröndal, Définition de la morphologie, „Mélanges de linguistique et de philologie offerts à J. van Ginneken“, Paris, 1937. Les oppositions linguistiques, JP, 1938.

<sup>3</sup> V. Bröndal, Ordklasserne: Partes orationis. Studier over de sproglige Kategorier, København, 1928. Փր. ամփոփումը (Les parties du discours), էջ 221—272.

<sup>4</sup> V. Bröndal, Théorie des prépositions, 1950.

<sup>5</sup> V. Bröndal, Le français langue abstraite, Copenhague, 1936.

պես լեզվական անշարժ իդեալական վիճակի բաղադրիչներ: Քերականական կատեգորիաները թրյոնդաւը քննում է որպես համընդհանուր և անփոփոխ մտածողության դրսերումներ: Քերականությունն էլ դիտվում է որպես ապրիորի գիտություն: Խսկական լեզվաբանական քննությունը, թրյոնդալի կարծիքով, սինխրոնիկ քննությունն է: Ինչպես բոլոր ստրուկտորալիստները, թրյոնդալը բացարձակ գերակշռություն է տալիս սինխրոնիկ քննությանը դիմուրումիկ, պատմական քննության հանդեպ. վերջինս դադարում է ուշադրություն գրավելուց: Լեզվի այսպիսի ոչ պատմական, սինխրոնիկ քննությունը կառուցվում է լեզվասիստեմի բաղադրիչների հակադրությունների վրա: Այսպիսի հիմքերի վրա էլ թրյոնդալը փորձում է կառուցել իր համընդհանուր գերականությունը, որն իր ընդհանուր սկզբունքներով շատ քիչ է տարբերվում XVII—XVIII դրույցիոնալիստական ունիվերսալ գերականություններից. այն ես կառուցվում է ապրիորիզմով, ձևվում բոլոր լեզուների համար. տարբերությունը լոկ վերլուծության որոշ նոր եղանակների կիրառման մեջ է: Թրյոնդալը ևս իր ընդհանրական գերականությունը կառուցելիս կողմնորոշվում է դեպի տրամաբանությունը և գովասանքով խոսում, օրինակ, Կ. Վ. Լ. Հայզեի գերականական սիստեմի մասին:

Ընդունելով լեզվի և խոսքի սոսյուրյան հակադրությունը՝ թրյոնդալը լեզուն լիովին զրկում է նյութական էությունից: Լեզուն նրա համար «զուտ վերացական էություն» է, տվյալ լեզվական կոլեկտիվը կազմող բոլոր անհատների համար պարտադիր նորմա. Լեզուն գոյություն ունի որպես ներքին հակադրություններով որոշվող փակ սիստեմ, որպես իրար հետ գոյակցող կարեռագույն տիպերի ամբողջություն (հասարակագիտական իմաստով), որոնք ամենաբազմազան եղանակներով իրանում են խոսքի մեջ: Լեզուն, ըստ նրա, տարբերվում է խոսքից որպես հասարակական հիմնարկություն (հասարակագիտական իմաստով) և սեռ (բիոլոգիական իմաստով): Քերականական ձևերի էությունը որոշվում է երկու հատկանշով՝ նախ՝ գոյություն ունի սեռակազմից, այսինքն՝ դասակարգող տարր, որ սահմանում է բառի ձևաբանական միասնությունը կազմող անհրաժեշտ սահմանները. երկրորդ՝ այդպիսի կազմության ներսում բացակայում է որևէ շարահյուսական կապ<sup>1</sup>:

<sup>1</sup> V. Bröndal, Definition de la morphologie, „Mélanges de Linguistique et de Philologie offerts à J. van Ginneken, Paris, 1937, էջ 43.  
50. համառոտ շարադրանքը տե՛ս Բ. Պիզանի, Общее и индоевропейское языкознание, համանուն ժողովածուում, 1956, էջ 88:

Եթե Սոսյուրը լեզվագործունեությունը (langage) համարում էր լեզվի (language) և խոսքի (parole) ամբողջություն, ապա Բրյոնդալը այն դիտում է որպես յուրատեսակ վերացական էություն, որպես «նշաններ ստեղծելու և դրանք օգտագործելու ընդհանուր կարողություն»<sup>1</sup>, որն «իր բնույթով իդեալական է և ընդհանուր»<sup>2</sup>:

Յուրաքանչյուր լեզվի սիստեմ, ըստ Բրյոնդալի, կառուցվում է ժամանակից ու տարածությունից դուրս գոյություն ունեցող ռացիոնալ սկզբունքներով, որոնց ամբողջությունը կազմում է համընդհանուր «կոլեկտիվ գիտակցությունը»: Այսպես կոչված ունիվերսալ քերականությունը պետք է բացահայտի այն հավերժական ու անփոփոխ հասկացական-տրամարանական կատեգորիաները, որոնք ընկած են բոլոր լեզուների քերականական կառուցվածքների հիմքում: Բոլոր լեզուների քերականական կառուցվածքների հիմքում ընկած սինտագմատիկ և ասոցիատիվ հարաբերությունները, որոնք, ինչպես հայտնի է, Սոսյուրը դնում էր իր վերլուծության հիմքում, Բրյոնդալը դիտում է որպես այդ ընդհանրական հասկացական-տրամարանական կատեգորիաների դրսեռումները: Լեզվասիստեմի հավասարակշռությունը որոշող այդ երկու հարաբերությունները հիմնվում են սիստեմի բաղադրիչների հակադրության օրենքի վրա, մի օրենք, որ բացարձակ և արտաժամանակյա բնույթ ունի: Ժամանակից դուրս գոյություն ունեցող այդ կատեգորիաները հանդես են գալիս որպես հավերժական ու անփոփոխ մտածողության և կոնկրետ լեզուների միջնորդները, տարբեր ձևերով մարմնավորվում են տարբեր հնչյունական լեզուներում, սակայն կախված չեն ոչ լեզուների կոնկրետ նյութական-հնչյունական կողմից, ոչ էլ լեզվական տվյալ կոլեկտիվի մտածողական պրոցեսներից: Ընդհակառակը, կոնկրետ լեզուների բառերն ու բառաձեերը կարգավորվում են այդ մշտական ու անփոփոխ կատեգորիաների միջոցով: Խոսելով նախադասության և նրա անդամների մասին՝ Բրյոնդալը գրում է. «Նախադասության անդամների մեջ դրսեռում է նախադասության ներքին էությունը, որը միշտ և ամենուրեք մնում է իրեն հավասար, ունիվերսալ և անփոփոխ, որպես ունիվերսալ և անփոփոխ մարդկային մտածողությանը հատուկ մի բան»<sup>3</sup>:

<sup>1</sup> V. Bröndal, Essais de linguistique générale, 1943, էջ 57.

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 70.

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 14:

Հնդհանուր լեզվաբանության համար սահմանվում են երկու կարևոր սկզբունքներ՝ կոմպենսացիայի և վարիացիայի. 1. «Եթե տվյալ կատեգորիայի ներսում մի ձև սահմանված է ավելի բարդ ձևով, քան մի ուրիշը, այս վերջինը կլինի ամենից ավելի տարբերակվածը»<sup>1</sup>. 2. «Երկու զուգահեռ [միաժամանակյա և համերաշխ (solidaire) ու ավտոնոմ] սիստեմներ իրենց ընդհանուր շրջանակով (cadre) կձգտեն, սկսած բարգության մի որոշակի աստիճանից, փոխադարձաբար տարբերակվելով»<sup>2</sup>. այս սկզբունքներից առաջինը գործում է միևնույն սահմանման ներսում, երկրորդը անցնում է մեկից մյուսը. առաջինը քանակական բնույթ ունի, երկրորդը՝ որակական:

Համընդհանուր քերականությունը ոչ միայն պետք է բացահայտի բոլոր լեզվասիստեմների հիմքում ընկած սկզբունքներն ու հասկացական կատեգորիաները, այլև որոշի յուրաքանչյուր կոնկրետ լեզվի համար այդ կատեգորիաների դրսերման կոնկրետ քանակական արտահայտությունները: Համընդհանուր քերականությունը պետք է որոշի, օրինակ, խոսքի մասերի առավելագույն և նվազագույն քանակը այս կամ այն լեզվում, ըստ հակադրությունների սիստեմի ստեղծած հնարավորությունների, պետք է պարզի հոլովների հնարավոր թիվը, նախադասության անդամների պարտադիր տիպերն ու քանակը և այլն:

Խոսքի մասերի քննության հարցում Բրյոնդալը հիմք է ընդունում լեզվի սիստեմային բնույթը՝ մեղադրելով նախորդ լեզվաբաններին այդ բանը հաշվի շառներու մեջ: Խոսքի մասերը սրանց մոտ սովորաբար քննվում են ոչ որպես սիստեմի փոխկապակցված անդամներ, այլ առնվում են առանց այդպիսի կախման: Խոսքի մասերի առանձնացման, խմբավորման և սահմանման հարցում Բրյոնդալը հիմք է ընդունում 4 հասկացություն (concept), որոնք նա համարում է լեզվի կոնստանտ կատեգորիաները. սրանք անհրաժեշտորեն տրված են բոլոր լեզուներում և բավարար են բոլոր լեզուների բառերը դասակարգելու համար: Այդ հասկացություններն են՝ 1) հարաբերությունը (relator—r), և 2) հարաբերության առարկան (relatum—R), 3) նկարագրությունը (descriptor—d) և 4) նկարագրության առարկան (descriptum—D). այս 4 հասկացությունները Բրյոնդալի մոտ հարաբերակից են՝ 1) հարաբերության և 2)

<sup>1</sup> V. Bétonnai, Essais de linguistique générale, 1943, էջ 107.

<sup>2</sup> Նույն աեղը, էջ 111.

սուբստանցի, 3) որակի և 4) քանակի փիլիսոփայական-տրամարանական կատեգորիաներին, միայն թե թրյոնդալը մերժում է հիմքը ընդունել վերջիններս երկու նկատառումով. նախ՝ որանք պետք է զուրկ լինեն «մետաֆիզիկ» և բացարձակ բնույթից, որովհետեւ, ըստ թրյոնդալի, «լեզուն ոչ այլ ինչ է, եթե ոչ աշխարհի՝ մեր նշանների կամ սիմվոլների սիստեմը և ոչ թե ինքնին իրերի (chooses en éèles-mêmes) պատճենը կամ պատկերը»<sup>1</sup>. երկրորդ՝ լեզվաբանական հասկացությունները պետք է առնվեն սիստեմի դիրքերից՝ իրենց փոխկապակցության մեջ, իրենց նմանության ու տարրերության փոխադարձ հարաբերություններով, մինչդեռ փիլիսոփայության հիշյալ հասկացությունները, թրյոնդալի կարծիքով, այդպիսի սիստեմային փոխկապակցության շենք բերված: Այս սկզբունքները նկատի առնելով՝ թրյոնդալը գտնում է, որ խոսքի մասերը կարող են խմբավորվել ու սահմանվել կամ սրանցից որևէ մեկի, կամ սրանց տարրեր տիպի կոմբինացիաների հիման վրա, ընդ որում սրանց միշտ էլ կարող են այլ կարգի կապեր հաստատվել. թրյոնդալը սահմանում է 4 հնարավոր դասեր (classes). 1) վերացական դասեր, որոնք պարունակում են միայն մեկ հասկացություն՝ հարաբերական խումբ՝ <sup>ա)</sup> անխդիր (r) և <sup>բ)</sup> ածական (R), նկարագրական խումբ՝ <sup>գ)</sup> մակրայ (d) և թվական (D). 2) կոնկրետ կամ արիստոտելյան դասեր, որոնք պարունակում են երկու հասկացություն՝ <sup>ա)</sup> գոյական (Rd), <sup>բ)</sup> բայ (rd), <sup>գ)</sup> դերանուն (RD) և <sup>դ)</sup> շաղկապ (Dr). Թրյոնդալը սրանք կոչում է տարասեռ խմբեր (classes hétérogénes)<sup>2</sup> հնարավոր համարելով նաև երկու համասեռ (homogénes) խմբերի (rR, Dd) գոյությունը. 3) բարդ դասեր, որոնք պարունակում են 3 հասկացություն և առկա են միայն պրիմիտիվ տիպի լեզուներում. Թրյոնդալը հնարավոր է համարում այսպիսի 4 խումբ (Drd և DRd, rDR և RDr). 4) շտարբերակված դաս, որ պարունակում է 4 հասկացություն՝ միջարկությունը (rRdd):

Խոսքի մասերի կապակցությամբ դնելով 3 լուծելի խնդիր՝ թրյոնդալը սահմանում է հետևյալ 3 սկզբունքների համար խոսքի մասերի քանակի մինիմումը, ըստ թրյոնդալի, կարող է լինել 2-ը (փոխադարձաբար կոռելյատիվ դասեր), բացի միջարկությունից, մաքսիմումը՝ 15-ը (4՝ վերացական, 6՝ կոնկրետ, 4՝ բարդ և 1՝ շտարբերակված). 2) յուրաքանչյուր լեզու անհրաժեշտաբար բաժանված է բառադասերի (խոսքի մասերի), և այդ

<sup>1</sup> V. Brøndal, Ordklasserne, 1928, էջ 244.

դասերը սիստեմ են կազմում. 3) ինչպիսի լեզվական «Հնարավոր կամ իրականացած» տարբերացումներ էլ լինեն (լեզվատիպեր, նորմաներ, բարբառներ), բոլոր լեզուների համար գոյություն ունի միևնույն տրամաբանական հիմքը: Լեզվաբանական վերլուծությունը թրյոնդալը անբաժանելի է համարում տրամաբանական վերլուծությունից:

Դեռևս 1930 թ. գրած իր «Քերականության սիստեմը»<sup>1</sup> հոդվածում, քննության ենթարկելով առկա քերականական սիստեմները (Ռիս, Պորցիգ, Նորեեն, Եսպերսեն), թրյոնդալը նշում էր, որ քերականության համար մեկնակետ պետք է ծառայեն հնչյունը, բառը և նախադասությունը. սրան համապատասխան պետք է տարրերվի քերականության Յ բաժին՝ հնչյունաբանություն (հնչյունի ուսմունքը), ձևաբանություն (բառի ուսմունքը) և շարահյուսություն (նախադասության ուսմունքը): Հետագայում քննելով քերականության սահմանազատման և ենթաբաժանումների հարցը՝ թրյոնդալը քերականության անվամբ առաջարկում է կոչել մի որևէ լեզվի մեկ վիճակի (սինխրոնիկ վիճակի) նկարագրությունն ու բացատրությունը՝ «լեզվի տեսությանը» (théorie du langage) հատկացնելով լեզվի (langage) հիմնական հասկացությունների (կոնցեպտների) ու սկզբունքների քննությունը: «Լեզուն (le langage) ներկայացնում է 4 ասպեկտ, — նշում է թրյոնդալը: — Լեզվաբանական նշանը միաժամանակ ներքին է և արտաքին, նշանակվող և նշանակիչ, լեզուն (le langage) միաժամանակ սիստեմ է և ոիթմ, լեզու (langue) և խոսք: Կարելի է սրան ավելացնել, որ երկու առաջին ասպեկտները փոխլրացնող են (complémentaires), ինչպես և վերջին երկուսը: Միացնելով լեզվի (langage) այս 4 ասպեկտները, որոնք բոլորն էլ հավասարապես անհրաժեշտ են այն կազմելու համար (constituer), մենք կկարողանանք կազմել մի աղյուսակ, ուր կմտնեն միաժամանակ քերականության, լեզվի (langage) տեսության և հարևան գիտությունների տարրեր դիսցիպլինները»<sup>2</sup>. այստեղ՝ 1) ձևաբանությանը հատկացվում է լեզվի ներքին սիստեմների (խոսքի մասերի, բառախմբերի, թեքման և ածանցման սիստեմների) ուսմունքը. 2) շարահյուսությանը՝ լեզվի ներքին ոիթմի ուս-

<sup>1</sup> V. Bröndal, Le système de la grammaire, „A Grammatical Miscellany offered to Otto Jespersen“, 1930. ակադ. և Essais de linguistique générale, Copenhague, 1943, էջ 1—7.

<sup>2</sup> V. Bröndal, Essais de linguistique générale, 1943, էջ 185:

մունքը («Փրազի» բար. նախադասության, սրա անդամների և ենթաանդամների, նախադասությունների կոմբինացիաների ուսումնասիրությունը). 3) հնչույթաբանությունը (Փոնոլոգիան) համարվում է լեզվի արտաքին սիստեմների ուսմունք. 4) առողանությունը (պրոսոդիան)՝ լեզվի արտաքին ոիթմի ուսմունք. սահմանվում են և միջակա բաժիններ՝ ձևա-շարահյուսություն (մորֆո-սինտաքս), հնչապոգանություն (ֆոնո-պրոսոդիա), ձևահնչույթաբանություն (մորֆոնոլոգիա), շարահյուսական առողանություն կամ պրոսոդիա, ձևապոգանություն (մորֆո-պրոսոդիա), շարահյուսական հնչույթաբանություն կամ ֆոնոլոգիա:

Լեզվի ստրուկտուրալ վերլուծության պահանջների լույսի տակ իր «Ստրուկտուրալ լեզվաբանության» մեջ Բրյոնդալը լեզվի քննության որոշակի հաջորդականություն է սահմանում՝ ստրուկտուրայի որոշումը համարելով գլխավոր նպատակ. քննությունն, ըստ նրա, պետք է ընթանա՝<sup>1</sup> 1) սինխրոնիայի, 2) սիստեմի և 3) ստրուկտուրայի որոշմամբ, ընդ որում սինխրոնիայի հատկանիշն է համարվում նույնությունը, սիստեմինը՝ միասնությունը, կառուցվածքինը՝ ամբողջականությունը:

«Սինխրոնիայի (կամ տվյալ լեզվի նույնության) նշանի տակ,—գրում է Բրյոնդալը,— միավորվում է այն բոլորը, ինչ վերաբերում է միևնույն վիճակին: Լիովին սահմանվում են քերականության յուրաքանչյուր բաժնի բոլոր տարրերը, և անխնա կերպով դեն են նետվում այդ վիճակին խորթ բոլոր բաները:»

Լեզվի (կամ սինխրոնիկ ուսումնասիրության միջոցով նույնացված լեզվական միասնության) որոշման համար հավաքվում են բոլոր տարրերակները նվազագույն քանակությամբ՝ հիմնական և վերացական տիպերի ձևով, որոնց իրացումն են այդ տարրերակները: Վճռականապես բաց է թողնվում այն բոլորը, ինչ այս տեսակետից կարող է գնահատվել որպես աննշան կամ անկայուն և զուտ անհատական բան:

Որպեսզի հետո թափանցենք ստրուկտուրայի մեջ (կամ լեզվական ամբողջության մեջ, որի նույնությունը և միասնությունը արդեն հայտնի են), հարկավոր է արդեն նույնացված և միասնության բերված տարրերի միջև մշտական, անհրաժեշտ և, հետևաբար, որոշող հարաբերակցություններ սահմանելով:

Գիտության համար կարևոր համարելով լեզվական երևույթ-

<sup>1</sup> V. Bröndal, Essais de linguistique générale, 1943, էջ 94—95.

ների հիմքում ընկած հավերժական, անփոփոխ և նույնական կատեգորիաները՝ թրյոնդալը վերջիվերջո փորձում է հանգել լեզվի այնպիսի քննության, որտեղ շմասնակցի ժամանակը՝ «ամեն մի ռացիոնալականության խոչընդոտը», և առաջ է քաշում պանխրոնիայի ու ախրոնիայի գաղափարները: Նշելով, որ ժամանակը հանդես է գալիս նաև սինխրոնիայի ներսում՝ թրյոնդալը գրում է. «Այս պլանով հավասարապես կարող է ծագել և մի ուրիշ հարց. հնարավոր չէ՝ սինխրոնիայի և դիախրոնիայի հետ միասին ենթագրել պանխրոնիա կամ ախրոնիա, այն է՝ համամարդկային գործոններ, որոնք կայունաբար գործում են պատմության տեղության ընթացքում և իրենց զգացնել են տալիս ամեն մի լեզվի կառուցվածքում<sup>1</sup>:

Ենելով լեզվի սիստեմայնության գաղափարից՝ թրյոնդալը մյուս սարուկտուրալիստների նման կարևոր տեղ է տալիս լեզվական հակադրությունների գաղափարին: Լեզվաբանական հակադրությունների միջև նա անհրաժեշտ է համարում սահմանել որոշ հիերարխիա. դրանցից մի քանիսը ընդհանրական և անհրաժեշտ բնույթուննեն, երկրորդները մաքուր պայմանական են, երրորդները կախված են անհատական գործածությունից: Ընդհանրական և անհրաժեշտ են համարվում՝ 1) հնչունի (զգայական) և իմաստի (մտավոր) տարբերումը, որի վրա հենվում է հնչման (ρήονίκε) ու քերականության տարբերությունը, և սիստեմի ու ոիթմի (շափի) տարբերումը, որի վրա հենվում են հնչույթաբանության ու հնչունաբանության, ձևաբանության ու շարահյուսության տարբերությունները. 2) կենդանու և մեռածի, դատարկի ու լիի (այն է՝ հարաբերության ու առարկայի, պարունակողի ու պարունակելիի) հակադրությունները, որոնք ընկած են բառախմբերի, հոլովների, բայեղանակների, այլև տարբեր տիպի հարաբերությունների, հատուկ ձևերի հիմնավորության (ἰοնδեմենտ) և մասնահատուկ (speciale) համանշության հիմքում. 3) նախադասության ձևերի, այն է՝ ա) բևեռային (ρολայից) եղբերի՝ դրականի ու բացասականի, բ) երկու ոչ բևեռային եղբերի՝ շեզոքի կամ բարդի . և գ) բևեռային ու ոչ բևեռային եղբերի տարբերությունը: «Մաքուր պայմանական» թրյոնդալը համարում է պատմական հակադրությունները:

Այսպիսով, ա) ճիշտ կերպով մատնանշելով բոլոր լեզուների կուռուցվածքային՝ ընդհանրությունների և տիպերի բացահայտման անհրաժեշտությունը՝ թրյոնդալը այդ ընդհանրությունները կտրում

<sup>1</sup> V. Bröndal, Essais de linguistique générale, 1943, էջ օօ.

է լեզուներից, դարձնում բացարձակ, անփոփոխ, հավերժական, ապրիորի կատեգորիաներ. բ) ճիշտ կերպով նշելով լեզվասիստեմի ներքին հարաբերությունների բացահայտման մեջ հակադրությունների սկզբունքի կիրառման անհրաժեշտությունը՝ Բրյոնդալը այդ հակադրությունների օրենքին գոյություն է հատկացնում բացարձակ կերպով և ժամանակից դուրս. գ) ճիշտ կերպով տարբերելով լեզուն և խոսքը՝ լեզուն գրկում է նյութական հիմքից, դարձնում գուտ վերացական և անփոփոխ էություն՝ հակադրելով այն խոսքին. դ) ճիշտ կերպով տարբերելով սինխրոնիան և դիախրոնիան՝ փաստորեն գեն է նետում դիախրոնիկ քննությունը, սինխրոնիան դարձնում բացարձակ. ե) լեզուների սինխրոնիկ հարաբերությունների ամբողջությունը վերջիվերջո վերածում է ախրոնիկ, ժամանակից դուրս գտնվող օրենքների. դիալեկտիկայի տարբերը թեև առկա են թրյոնդալի մոտ, բայց նախ՝ իդեալիստական դիալեկտիկայի ձևով և երկրորդ՝ այդ պատճառով էլ ոչ մինչև վերջ կիրառված, սինխրոնիզմիցիցի ենթարկված, կիսատ-պոատ:

Լ. Ելմալն.—Դանիացի լեզվաբան Լուի Ելմալեր (ծնվ. 1899 թ.) ստրոկատուրալիստական լեզվաբանության ականավոր դեմքերից մեկն է և այսպես կոչված գլուսսեմատիկայի հիմնադիրը. Թեև ոմանք գլուսսեմատիկան տարբերում են ստրոկատուրալիզմից<sup>1</sup>, բայց իրականում, ինչպես արդեն նշել ենք, այն ստրոկատուրալիզմի մի տարատեսակն է: Ելմալեի գործունեության մեջ կարելի է տարբերել երկու շրջան, որոնց սահմանը մոտավորապես կարելի է համարել 1930-ական թվականների կեսը. 1935—1937 թթ. լույս են տեսնում Ելմալեի «Հոլովների կատեգորիան» աշխատության 2 հատորները, որոնք բնորոշ են առաջին շրջանի համար, բայց միաժամանակ 1935 թ. Լոնդոնի հնչունաբանական կոնֆրենսում Ելմալեն ազդարարում է իր տեսական սկզբունքների ինքնուրույնությունը, 1936 թ. համառոտակի խոսում գլուսսեմատիկայի մասին, որի հիմունքների ընդարձակ շարադրանքը տալիս է միայն 1943 թ.:

Կոպենհագենի Յ լեզվաբաններ՝ Լ. Ելմալեր, Պ. Լիերը (Lier) և Հ. Ուդալը դեռևս 30-ական թվականների սկզբներին կազմել էին «Հնչութաբանական» մի խմբակ: Շուտով նրանք հանգում են լեզվական արտահայտության մի նոր տեսություն ստեղծելու գաղափարին, որ նախապես կոշում են «Փոնեմատիկա». Վերջինիս

<sup>1</sup> Հմմտ. В. Пизани, Общее и индоевропейское языкознание, համանուն գրքում, Մ., 1966, էջ 88.

ակզբունքների և կիրառման մասին Ելմսլը և Ուղալլը հաղորդում են անում Հնչյունաբանական գիտությունների II միջազգային կոնգրեսում, Լոնգոնում, 1935 թ.: Հետազայում վերստին ձեռնարկելով քերականական հարցերի ուսումնասիրությունը՝ նրանք հատուկ ուշադրություն են դարձնում «ֆոնեմատիկ» և քերականական սիստեմների փոխհարաբերությանը և ստեղծում մի ընդհանուր ուսմունք՝ լեզվի բոլոր կողմերի մասին. այս ուսմունքը Ելմսլը դեռևս 1935 թ. անվանել է «գլոսսեմատիկա» (հուն. γλωσσική «լեզու» բառից)՝ ի տարրերություն նախորդ լեզվաբանության («լինգվիստիկայի»): Գլոսսեմատիկական հայեցակետը ընդունելություն է գտել նաև դանիացի ու ոչ դանիացի այլ հետազոտողների մոտ. կարելի է նշել Կ. Թոգեբյուին, Բ. Սյերցեմային, Է. Ֆիշեր-Յորգենսոնին և ուրիշներին<sup>1</sup>:

Լուի Ելմսլի առաջին շրջանի գլխավոր աշխատություններն են «Ընդհանուր քերականության հիմունքները» և վերևում հիշված «Հոլովների կատեգորիան»<sup>2</sup>: Սրանցից առաջինը լույս է տեսել Բրյոնդալի «Խոսքի մասեր» աշխատության հետ միաժամանակ և հարցադրումով առնչվում է նրա հետ՝ տարբեր լինելով, սակայն, լուծման եղանակով:

Երկրորդ շրջանի գլխավոր աշխատությունը «Լեզվի տեսության հիմնավորման շուրջը» գիրքն է<sup>3</sup>: 1936 թ. սկսած՝ Ելմսլը հանդես է եկել նաև մի շարք հոդվածներով, որոնց մեջ տվել է իր տեսության հետ կապված զանազան հարցերի շարադրանքը<sup>4</sup>: Նշելի է նաև, որ 1936 թ. նա Ուղալլի աշխատակցությամբ լույս է ընծայում «Գլոսսեմատիկայի համառոտ ուրվագիծը»<sup>5</sup>, որ հետազա ավելի ընդարձակ «Գլոսսեմատիկայի ուրվագծի»<sup>6</sup> համառոտ շարադրանքն է:

<sup>1</sup> Հմա. B. Siertsema, A Study of Glossematics, Critical Survey of its Fundamental Concepts, The Hague, 1955.

<sup>2</sup> L. Hjelmslev, Principes de grammaire générale, Copenhague, 1928. La catégorie des cas; étude de grammaire générale, AJ VII 4 IX, 1935—1937.

<sup>3</sup> L. Hjelmslev, Omkring sprogtteorienens grundlaegelse, 1943. անգլ. թարգմ. Prolegomena to a Theory of Language, 1953.

<sup>4</sup> Հմա. В. Пицани, հիշ. աշխ., էջ 85:

L. Hjelmslev and H. J. Uldall, Synopsis of an Outline of Glossematics, HSS, I, 1936.

<sup>5</sup> L. Hjelmslev and H. J. Uldall, Outline of Glossematics. A Study in the Methodology of the Humanities with Special Reference to Linguistics. Part I: General Theory—by H. J. Uldall, TCLC, X, Copenhagen, 1957.

Իր «Ընդհանուր քերականության սկզբունքները» աշխատության մեջ Ելմսլեր զարգացնելով՝ Սոսյուրի տեսական հայացքները՝ որոշ առումով դրանք հասցնում է իրենց տրամաբանական վախճանակետին։ Ինչպես տեսանք, Սոսյուրը, առաջնություն տալով սինխրոնիային դիախրոնիայի նկատմամբ և նշելով, որ տարբեր լեզուների սինխրոնիկ ուսումնասիրության հայեցակետերը ավելի մոտ են, քան միևնույն լեզվի քննության սինխրոնիկ ու դիախրոնիկ հայեցակետերը, — դրանով իսկ հիմք էր տալիս լեզվի պանխրոնիկ (համաժամանակյա) և վերջին հաշվով՝ արտաժամանակային քրննության համար։ Ելմսլեր այստեղ արդեն հանդես է գալիս որպես ձևավորված պանխրոնիստ։ Ընդհանրապես իր ողջ գործունեության մեջ նա բացարձակ առաջնություն է տալիս սինխրոնիկ քննությանը դիախրոնիկի հանդեպ և սինխրոնիկ ուսումնասիրություններն էլ համարում պանխրոնիկ ուսումնասիրության միջոցներ։ Դիախրոնիայի դեպքում էլ նա մուտացիոնիզմը հակադրում է էվոլյուցիոնիզմին և նույնիսկ գովաբանում Մատի հետևորդ Մեշշանինովին՝ թուշքածև զարգացման դրույթը ընդունելու համար։ Պանխրոնիկ լեզվաբանությունը, ըստ նրա, ոչ այլ ինչ է, եթե ոչ ընդհանուր սինխրոնիկ լեզվաբանություն։ Եթե սինխրոնիկը գործ ունի «լեզվի կոնկրետ վիճակների» հետ, ապա պանխրոնիկը ելնում է «վերացական վիճակից» (սոն état abstrait):

Լեզվաբանի խնդիրը Ելմսլեր տեսնում է այն բանում, որ նա ելնելով լեզվի, որպես ներփակ նշանների սիստեմի, ներքին տրամաբանությունից, վեր հանի այն բոլոր լեզվական վերացական կատեգորիաները, որոնք ապրիորի կերպով հատուկ են լեզվասիստեմին, բացահայտի «Փունկցիոնալ կատեգորիաների» պանխրոնիկ սիստեմը, «պանխրոնիկ հնարավորությունները»։ Գոյություն ունեցող լեզուների առկա կատեգորիաները նրա համար այդ վերացական, արտաժամանակյա և հավերժական կատեգորիաների տարբեր գրանորումներն են։ Ալատոնական և հուսեոլյան իդեալիզմի ոգով Ելմսլեր որոնում է մի իդեալական լեզվական սիստեմ, որ իրականանում է գոյություն ունեցող լեզուների մեջ։

Ըստ Ելմսլերի՝ ընդհանրական քերականությունը որպես դիսցիպլին պետք է պոստուլավորի մի ընդհանրական քերականական սիստեմ (վերացական վիճակ — սոն état abstrait), որը իրականանում է տարբեր լեզուների քերականական կառուցվածքների մեջ։ «Վերացական վիճակը ենթադրում է ոչ այլ ինչ, քան այն հնարա-

վորությունների ամբողջությունը, որոնք իրենց տրամադրության տակ ունեն մարդիկ լեզվի նյութի մեջ. կոնկրետ վիճակները ենթադրում են այս հնարավորությունների իրականացումը»<sup>1</sup>:

Դիմելով լեզվաբանության պատմությանը և փաստեր որոնելով իր տեսակետի հասաւատման համար՝ Ելմալկը փաստորեն գուգորդում է Սոսյուրի ուսմունքը ռացիոնալիստական ընդհանուր քերականության դրույթների հետ: Ելմալկի լեզվաբանական կոնցեպցիայի ձևավորման համար մեծ դեր է խաղացել նաև էղմունդ Հուսովի (1859—1938) ֆենոմենոլոգիական փիլիսոփայությունը: Ելմալկը նպատակ է դնում ստեղծել գիտական, թեր. իմանենտ և պանխրոնիկ քերականություն, որ զերծ լինի հոգեբանության և տրամաբանության ազդեցությունից. ըստ նրա՝ մինչ այդ եղած քերականությունները հենվում են կամ մեկի, կամ մյուսի վրա: Քերականության սահմանազատումը գիտական այլ դիսցիպլիններից Ելմալկը դիտում է ոչ միայն որպես իր իսկ քերականության, այլև նրա հետազոտության առարկայի անկախացում հարակից երեսությներից, իմանենտացում: Քերականական կատեգորիաների տարրերակումը, Ելմալկի կարծիքով, պետք է հենվի միայն ձևական հատկանիշների վրա. «Մի կատեգորիա, որ չի հենվում ձևական շափանիշների վրա, չի կարող նրան (=քերականությանը—Դ. Զ.) պատկանել»,— գրում է Ելմալկը<sup>2</sup>: Այստեղից էլ բխում է Ֆորտունատովի ու նրա հետեւրդների փորմալիզմի գովաբանումը: Այսպիսով, Ելմալկը հրաժարվում է Բրյոնդալի կողմից ընդհանրական քերականության հիմքում դրված տրամաբանական սկզբունքներից և դիմում ձևական սկզբունքներին: Ճիշտ է, այս շրջանում Ելմալկը դեռևս Սոսյուրի նման իր կապերը լիովին չի խզել լեզվի հոգեբանական ըմբռնումից. «Ինչպես լեզվաբանությունն ընդհանրապես,— գրում է նա,— քերականությունը կազմում է (fait en elle-même) հոգեբանության մասը: Այն կազմում է նրա մի առանձին ճյուղը (en fait une branche particulière). քերականական փաստերը հագերանական փաստեր են»<sup>3</sup>: Սակայն, քերականությունը որպես հոգեբանության մի մասը չպետք է շփոթել ողջ հոգեբանության հետ, ինչպես արել են. քերականության առարկան ոչ թե գիտակցու-

<sup>1</sup> L. Hjelmslev, Principes de grammaire générale, Copenhague, 1928, էջ 268.

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 28:

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 25:

թյունն ինքն է (conscience elle-même), այլ այդ «գիտակցության բովանդակությունը հաղորդելու արտաքին միջոցները, այսինքն՝ արտահայտությունը»<sup>1</sup>. սրանով իսկ Ելմսլեր սահմանագատում է քերականության առարկան հոգեբանության առարկայից՝ հարավոր համարելով նրա անկախ ուսումնասիրությունը։ Անհրաժեշտ համարելով տարբերակել արտահայտությունը և նշանակությունը (l'expression et la signification)՝ Ելմսլեր գիտական քերականության խնդիրն է համարում դրանց հարաբերության ուսումնասիրությունը, ընդ որում կարծում է, որ այս դեպքում արտահայտության քննությունից պետք է գնալ դեպի նշանակությունը և ոչ թե հակառակը։ Բնականաբար Ելմսլեր անհրաժեշտ է համարում ճշտիվ տարբերակել այնպիսի կարենոր լեզվաբանական հասկացությունները, ինչպիսիք են քերականական ձևը և քերականական ֆունկցիան. քերականական ձևը նա քննում է անկախ հնչյունական կողմից, հնչույթների սիստեմից. հնչյունական կողմը «կոնկրետ է և պայմանական» (conventionnel), քերականական ձևը՝ «վերացական և հանրահաշվական»։ քերականական ձևը այն գաղափարսիմվոլների սիստեմն է (le système des idées-symboles), որ իր տրամադրության տակ ունի իտոսող անձը։ Քերականական ձևը գաղմող այս գաղափար-սիմվոլները մեր գիտակցության մեջ բաժանված են որոշ կարգերի (classes), և քերականությունը «ոչ այլ ինչ է, եթե ոչ այս կատեգորիաների գիտությունը»<sup>2</sup>։ Այն հանգամանքը, որ ձևը կազմում է «նշանակիչի» և ոչ թե «նշանակելիի» (հմմտ. Սոսյուր) մասը, հենց քերականությունը դարձնում է փիլիսոփայությունից և հոգեբանությունից անկախ բնագավառ։ Քերականական ամեն մի ակտ ունի 3 կարգի տարրեր՝ նշանակությունը (la signification), ձևը և հնչույթը։ ձևը «մտածողության և բառի միջնորդն է»<sup>3</sup>։ Քերականական ֆունկցիան այս տեսակետից Ելմսլեր անհրաժեշտ է համարում տարբերել իմաստից կամ նշանակությունից, որոնց հետ սովորաբար այն շփոթում են, և դիտել որպես ձևի մի տեսակը։ «Քերականական ֆունկցիա ասելով,— գրում է նա, — մենք հասկանում ենք՝ 1) բացառապես (exclusivement) տվյալ որոշակի ձևույթների հետ զուգորդվելու (se combiner) ընդունակությունը և 2) բացառապես տվյալ որոշակի ձևույթների մի-

<sup>1</sup> L. Hjelmslev, Principes de grammaire générale, Copenhagen, 1928, էջ 26.

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 113։

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 120։

շոցով ուրիշ սեմանտեմների հետ զուգորդվելու կարողությունը<sup>1</sup>: Այլ կերպ ասած՝ ֆունկցիայի հարցում Ելմալեր հենվում է զուգորդելիության գաղափարի վրա:

Քննարկվող «Ընդհանուր քերականության սկզբունքները» աշխատության մեջ Ելմալեր տալիս է լեզվաբանության բաժինների հետևյալ խմբավորումը. 1) Հնչույթաբանություն (ֆոնոլոգիա) և հնչունաբանություն՝ հնչունների ուսմունքը, 2) քերականություն՝ սեմանտեմների ու ձևույթների և նրանց կապակցությունների ուսմունքը, 3) բառագիտություն և իմաստաբանություն՝ բառերի ուսմունքը: Իր ուշադրությունը կենտրոնացնելով այս բաժիններից քերականության վրա՝ Ելմալեր փորձում է նախ՝ դուրս մղել նրանից բառի գաղափարը և երկրորդ՝ բացահայտել լեզվի համաժամանակյա (պանխրոնիկ) վիճակի ֆունկցիոնալ կատեգորիաները: Քերականությունը սահմանվում է որպես «ձևերի ուսմունք», որ հակադրվում է հնչունների ուսմունքին: Քերականության երկու ենթաբաժինների՝ ձևաբանության և շարաջյուսության փոխհարաբերությունը Ելմալեր հասկանում է այն ձևով, որ դրանց միջև խիստ սահմանազատում չկա. շարաջյուսական երկույթները վերաբերում են միայն քերականական ձևին, ուստի և վերջիվերջո ունեն նաև ձևաբանական արժեք. ձևաբանական երկույթներն էլ հենվում են քերականական միավորների սինտագմատիկ կապերի վրա, ուստի ունեն նաև ձևաբանական արժեք: Զնայած սրան՝ Ելմալեր քերականական կատեգորիաների տարրերակման մեջ, այնուամենայնիվ, առաջնությունը տալիս է ֆունկցիոնալ հիմունքին, շարաջյուսական հատկանիշներին. այս հարցում նա հենվում է Սոսյոլիք և Ծագերսենի վրա: Ելմալեր խիստ ժխտողական դիրք է բռնում խոսքի մասերի տրադիցիոն ուսմունքի նկատմամբ, մանավանդ որ այդ ուսմունքի հիմքում ընկած է նրա կողմից քերականության մեջ՝ մերժվող բառի գաղափարը: Խոսքի մասերի այդ ուսմունքի փոխարեն Ելմալեն առաջարկում է տարրերել լեզվի «ֆունկցիոնալ կատեգորիաների» 2 խումբ՝ անուն և բայ. «սեմանտեմների» այս 2 խմբի առանձնացման հիմք է ընդունվում հոլովման ձևույթներ ընդունելու կամ ընդունելու հատկանիշը: Անվան «ֆունկցիոնալ կատեգորիայի» մեջ էլ առանձնացվում են գոյականը, ածականը և մակրայը՝ ըստ առաջնային, երկրորդային և երրորդային անդամի

<sup>1</sup> L. Hjelmslev, Principes de grammaire générale, Copenhague, 1928, էջ 123.

ֆունկցիայում հանդես գալու. այս վերջին բաժանման մեջ Ելմսլեր հենվում է ծապերսենի ուսմունքի վրա:

Քանի որ «ֆունկցիոնալ կատեգորիաների» երկու խմբի տարբերակման հարցում հիմք է ընդունվում հոլովների կատեգորիան, ուստի և Ելմսլեր հատուկ աշխատություն է նվիրում սրանց քըն-նարկմանը: «Հոլովների կատեգորիան» աշխատության մեջ Ելմսլեր իր նախորդ աշխատության սկզբունքները զարգացնում ու կիրառում է մի մասնավոր բնագավառի նկատմամբ՝ փորձելով դրանք հիմնավորել կոնկրետ լեզվական փաստերով: Եթե իր առաջին աշխատության մեջ նա համեմատաբար քիչ էր դիմում փաստերին և դրույթները մեծ մասամբ բխեցնում էր հայեցողական ճանապարհով, ապա այստեղ նա դիմում է ամենաբազմազան լեզուների և փորձում ստեղծել բոլոր լեզուների հոլովների սիստեմի նկարագրության ընդհանուր տեսական հիմքը: Հոլովների ուսմունքը Ելմսլեր հիմնում է իր ընդհանուր սկզբունքի վրա, ըստ որի լեզվաբանական քննության առարկա պիտի դառնան հարաբերությունները և ոչ թե հարաբերվող անդամները: Ելմսլեր հոլովը սահմանում է որպես «մի կատեգորիա, որ արտահայտում է երկու առարկայի հարաբերությունը»<sup>1</sup>: Լեզվական փաստերի, առանձնապես հյուսիսային կովկասյան հոլովառատ լեզուների փաստերի քննության և տրամաբանական վերլուծության հիման վրա Ելմսլեր փորձում է տալ հոլովների բոլոր սիստեմների համար կիրառելի սկզբունքներ: Հոլովներն առանձնացնելիս Ելմսլեր հիմք է ընդունում լեզվական հակադրությունների սիստեմը և, հավատարիմ մնալով լեզվի սահմանման իր ընդհանուր սկզբունքին, տալիս է հիերարխիկ խմբավորում: Գլխավոր բաժանումը հիմնվում է 3 «շափերի» սկզբունքի վրա. այդ «շափերն» ընդգրկում են հետեւալ 3 իմաստային գոտին՝ 1) ուղղություն, այն է՝ մերձեցում և հեռացում, 2) կոնտակտ, այն է՝ հարակցություն և անհարակցություն (cohérence-incohérence), 3) սուբյեկտիվություն-օբյեկտիվություն: Յուրաքանչյուր իմաստային գոտի հետևողաբար բաժանվում է 3 հոլովի, որոնք նշանակում են մերձեցումը, հեռացումը և հանգիստը: Այս ստորաբաժանման անդամներից մեկը համարվում է ինտենսիվ. այդ հոլովի նշանակությունը տենդենց ունի կենտրոնակալու միայն տվյալ հոլովի մեջ. մյուս հոլովները կլինեն էքստեն-

<sup>1</sup> L. Hjelmslev, La catégorie des cas. Étude de grammaire générale, I, էջ 80.

սիվ, այսինքն՝ նրանք տենդենց ունեն իրենց նշանակությունը տարածելու տվյալ գոտու մյուս հոլովների վրա. էքստենսիվ հոլովի բնտրությունը որոշում է շափի կողմնորոշումը որպես դրականի, բացասականի կամ չեզոքի. այսպես, օրինակ, անգերենի հոլովների սիստեմում որպես «ինտենսիվ անդամ» դիտվում է սեռականը՝ հակադրվելով «ոչ-սեռականին», որպես անորոշ, հոլովական տարրերիների նկատմամբ անտարբեր հոլովի:

Իր գործունեության երկրորդ շրջանը Ելմսլեր սկսում է նախորդ լեզվաբանական տրադիցիաներից սահմանագատվելու փորձով, թեև իրականում նա անհրաժեշտ կախում ունի և՛ Սոսյուրից, և՛ Պրագայի ստրուկտորալիստներից: Այս շրջանում նա իր հայացքներով մոտենում է տրամարանական պողիտիվիզմի ներկայացուցիչներին և որոշ շափով յուրացնում վերլուծման նրանց եղանակները: Է՛լ ավելի առաջ տանելով իր նախորդ շրջանի դրույթները՝ Ելմսլեր նպատակ է դնում լեզվական կառուցվածքը («ստրուկտորան»)՝ քննել որպես «մաքուր հարաբերակցությունների» սիստեմ, ընդ որում հարաբերակցվող միավորների հարցը կարևոր չի համարվում. գլխավորը Ելմսլեր համար հարաբերությունն է, իսկ հարաբերվող ներք փաստորեն գուրս են մղվում լեզվաբանական քննության բնագավառից: Լեզվաբանական քննության համար կարևոր են լոկ տեքստի բաժանվող մասերի փոխադարձ կախումները. «Ե՛վ ուսումնասիրության առարկան, և՛ նրա մասերը, — գրում է Ելմսլեր, — գոյություն ունեն միայն այս կախումների շնորհիվ»<sup>1</sup>: Լեզուն Ելմսլերի համար ինքն իր համար գոյություն ունեցող «մաքուր ձեռ» է, որ կարելի է լիովին անցատել նրա «իրացումներից»: Սիստեմի քննության ժամանակ առարկայական աշխարհը կարելի է բոլորովին հաշվի շառնել և լեզվաբանությունը դարձնել «լեզվի իմաննենտ հանրահաշիվ». իր երկրորդ շրջանի գլխավոր երկի՝ «Լեզվի տեսության հիմնավորման շուրջը» աշխատության մեջ Ելմսլեր հետազոտության ինդուկտիվ մեթոդին հակադրում է իր էմպիրիզմը և դեղուկտիվիզմը: Ելմսլերի էմպիրիզմը, նրա առաջ քաշած «էմպիրիկ սկզբունքը» հանգում է լեզվական հետազոտությանն առաջադրվող հետեւյալ պահանջներին՝ 1) նկարագրությունը պետք է ազատ լինի ներքին հակասությունից, 2) սպառիչ բնույթ ունենա և 3) հնարավորին շափով պարզ լինի: Դեղուկտիվիզմը Ելմսլերի ըմբռնմամբ

<sup>1</sup> L. Hjelmslev, Prolegomena to a Theory of Language, Baltimore, 1953, էջ 13.

Հանդես է գալիս մի ամբողջականություն ներկայացնող վերլուծելի տեքստի բաժաննելիության մեջ. լեզվական հետազոտությունը պետք է ընթանա ոչ թե հատվածներից դեպի դասերը (և վերջին հաշվով մասերից դեպի ամբողջը), այլ դասերից դեպի հատվածները (ամբողջից դեպի մասերը). այսինքն՝ վերլուծական և մասնավորող շարժում պետք է կատարի և ոչ թե համադրական ու ընդհանրացնող. տեքստը Ելմալկի համար մի կարգ է, որ կարելի է բաժանել հատվածների, որոնք կարգեր են իրենց հետագա հատվածների համար և այն՝ մինչև տեքստի սպառումը. ընդսմին այսպիսի վերլուծությունը պետք է հենվի բաժանվող մասերի փոխադարձ կախումների ու հարաբերությունների վրա: Այստեղից էլ լեզվի, որպես սեմիոտիկայի սահմանումը, որպես «մի հիերարխիայի, որտեղ յուրաքանչյուր հատվածը ենթակա է հետագա բաժանման փոխադարձ հարաբերությամբ որոշվող կարգերի, այնպես որ այդ կարգերից յուրաքանչյուրը ենթակա է բաժանման փոխադարձ մուտացիայով որոշվող ածանցյալների»<sup>1</sup>: Լեզվական տեսության դերը Ելմալկը տեսնում է հետազոտության այնպիսի եղանակներ ստեղծելու մեջ, որոնք հնարավորություն կտան համանելու քննության առարկայի սպառիչ և հակասություններից գերծ նկարագրության, որը հենց առարկայի իմացումն է: Նախորդ լեզվաբանական տրադիցիոն հայեցակետը համարելով «մետաֆիզիկական» և նշելով, որ այն նկատի ուներ առարկաները, տալիս էր ուեալ սահմանումներ, — Ելմալկը դրան հակադրում է իր գլուստեմատիկական հայեցակետը, որի համար գոյություն ունեն միայն հարաբերությունները և որը տալիս է միայն ձևական սահմանումներ: Նախորդ լեզվաբանությունը, ըստ Ելմալկի, ելնում էր անմիջական հայեցողությունից՝ որ տալիս է առարկաները, գլուստեմատիկան ելնում է գիտական քննությունից, որի համար առաջնայինը հարաբերություններն են. առարկաները կարևոր են լոկ հարաբերության տեսակետից՝ որպես հարաբերվող եզրեր: Այստեղից էլ բխում է Ելմալկի ձգտումը իր լեզվական վերլուծությունը հիմնելու հարաբերությունների ու կախումների հաստատման վրա: Իսկական գիտական լեզվաբանությունը (որպես այդպիսին դիտվում է Ելմալկի գլուստեմատիկան) պետք է լինի լեզվի իմանենտ հանրահաշիվ, այսինքն՝ կառուցվի ներքին ֆունկցիոնալ հիմունքով. այնպես, որ «արտահայտության ուս-

<sup>1</sup> L. Hjelmslev. Prolegomena to a Theory of Language, Baltimore, 1953, § 68.

մունքը» (սդյանագործական շնորհաբանության հետ, կառուցվի առանց նյութական-հնչյունական նախադրյալների, իսկ «բովանդակության ուսմունքը» (indholdsblaere) շնորհաբան իմաստաբանության (նշանակությունների ուսմունքի) հետ, կառուցվի առանց գոյաբանական նախադրյալների: Իր «գլուխեմատիկան» ծլմսլկը հակադրում է տրադիցիոն «լինգվիստիկային» և գտնում է, որ իր ընդհանուր սկզբունքները կիրառելի են նաև այլ գիտությունների նկատմամբ: Ելմսլկի մոտ լեզվական «մաքուր ձեզ» լիովին սահմանազատվում է սուբստանցային հիմքից: Լեզվական նշանրդիտվում է որպես մի միավոր, որ բաղկացած է բովանդակային ձեզ և արտահայտության ձեզ: Ա՛ բովանդակությունը, Ա՛ արտահայտությունը դիտվում են ձեւական առումով: Գլուխեմատիկային համապատասխանաբար հատկացվում է երկու բաժին, որոնցից մեկը քննում է բովանդակային կողմը (ոմանց կողմից պլերեմատիկա կոչված՝ հուն. πλήρης «լի» բառից), մյուսը՝ արտահայտության կողմը (ոմանց կողմից կոչված կենեմատիկա՝ հուն. κενός ուղարկա) բառից<sup>1</sup>: Ողջ լեզուն, այսպիսով իր Ա՛ բովանդակության, Ա՛ արտահայտության հայեցակետերով դիտվում է լոկ որպես ձեւ: Այս տեսակետից Էլ Ելմսլկը պնդում է, որ հնչյունական սուբստանցը կարող է փոխարինվել յուրաքանչյուր այլ սուբստանցով. միենույն «բովանդակությունների սիստեմին» կարող է համապատասխանել մի քանի «արտահայտությունների սիստեմ» (գրաւոր, հնչյունական և այլն): Քանի որ իր քննության մեջ Ելմսլկը լեզվական ձեզ քըննում է սուբստանցից անկախ և «արտահայտության» ու «բովանդակության» սիստեմների միջև որևէ անհրաժեշտ կապ չի տեսնում (ձևական Սոսյուր), ուստի և նա կարծում է, որ՝ ա) իր գիտական ձեռքբերումները կիրառելի են ամեն մի լեզվական «ստրուկտորայի» նկատմամբ, բ) կարելի է որոշել, թե բացի առկա «արտահայտության սիստեմներից» (իմա՝ առկա լեզուներից)<sup>2</sup> ուրիշ ինչ՝ «արտահայտության սիստեմներ» են հնարավոր տվյալ «բովանդակության սիստեմի» համար և ընդհակառակն: Այստեղից Էլ Ելմսլկը եզրակացնում է, որ լեզվաբանը պետք է ուսումնասիրի լեզվի՝ իր սահմանմանը ենթակա ամեն մի «ստրուկտորա». այլ կերպ ասած՝ Ելմսլկը կառնապի նման կարծում է, որ կարելի է ստեղծել լեզվի

<sup>1</sup> Համապատասխանաբար բովանդակային կողմի առըբերը կոչվում են պլերեմաներ, արտահայտական կողմի առըբերը՝ կենեմաներ: Պլերեմաները և կենեմաները որոշվում են իրենց հարաբերություններով, որոնք հենց նրանց փունկցիաներն են:

իդեալական մի սիստեմ, որի ուսումնասիրության տվյալները կարելի կլինի կիրառել սովորական հնչունական լեզուների նկատմամբ:

Ելմսլեր իր գլուսսեմատիկական կառուցումների մեջ փորձում է հակադրվել նաև Սոսյուրի դրույթին՝ լեզվի նշանների սիստեմ լինելու մասին: Ըստ Ելմսլերի՝ այդ սահմանումը նկատի է առնում լեզվի արտաքին և ոչ թե ներքին ֆունկցիաները, նրա արտալեզվական կապերը: Զգտելով լեզվական քննության իմանենտիզմը հասցնել մինչև վերջ՝ Ելմսլեր տարրերում է նշանը Փիդուրից և լեզուն սահմանում որպես Փիդուրների սիստեմ: Փիդուրը Ելմսլեր սահմանում է որպես «ոչ-նշան», որ մտնում է նշանի մեջ որպես նրա բաղկացուցիչ մասը. նշան ասելով Ելմսլեր հասկանում է նշանակավոր միավորներ՝ բառերը, «ոչ-նշան» ասելով՝ դրանց նշանագուրկ (հնչունական) բաղադրիչները՝ վանկերը. ամբողջական տեքստի վերլուծման ժամանակ անցումը նշանից ոչ-նշանին տեղի է ունենում ոչ ավելի առաջ, քան միավորների անսահմանափակ թվից սահմանափակներին անցնելիս, այսինքն՝ բառերից վանկերին անցնելիս:

Այսպիսով՝ իր գլխավոր աշխատության՝ «Լեզվի տեսության հիմնավորման շուրջը» գրքում Ելմսլեր փորձում է ստեղծել «մաքուր» հարաբերությունների քննության վրա հիմնվող լեզվարանական սիստեմ: Առաջ տանելով իր առաջին ծավալուն գործի մեջ տրված սկզբունքը ձևաբանության և շարահյուսության փոխհարաբերության մասին՝ Ելմսլեն այստեղ ընդհանրապես ժխտում է այդպիսի բաժանման նպատակահարմարությունը, որպես հին լեզվարանության սկզբունքներից մեկը: Նրա կարծիքով՝ բառակապակցության անդամների և բառի բաղադրիչների միջև առկա են միատեսակ փոխհարաբերություններ: Ելմսլեր հաստատում է այդպիսի հարաբերությունների կամ «կախումների» 3 խումբ՝ 1) փոխադարձ կախումներ (ինտերեպեդենցիաներ), 2) «միակողմանի կախումներ» (դետերմինացիաներ) և 3) ավելի ազատ կախումներ (կոնստելյացիաներ): Այդ կախումները, ըստ լեզվասիստեմի և տեքստի (իմա՝ լեզվի խոսքային դրսերման) նկատմամբ ունեցած հարաբերության, կարող են լինել 3 տեսակ՝ 1) եզրերի կախումներ շարժման մեջ, այսինքն՝ տեքստում, 2) եզրերի կախումներ սիստեմի մեջ և 3) թե՛ տեքստի և թե՛ սիստեմի նկատմամբ կիրառելի կախումներ:

Ինչպես նշեցինք, Ելմալկը փորձում է ավելի «մաքրել» նույնիսկ «հին լեզվաբանության» նշանի գաղափարը՝ նշելով, որ այն նկատի ունի լեզվից դուրս գտնվող բովանդակություն։ Գլուստեմատիկը, ըստ Ելմալկի, պետք է խոսի միայն ֆունկցիայի մասին։ Ցանկանալով միանգամայն որոշակի տերմինային իմաստ տալ «ֆունկցիա» բառին՝ Ելմալկը ֆունկցիայից անհրաժեշտ է համարում տարբերել ֆունկտիվը. ֆունկտիվ ասելով Ելմալկը հասկանում է ֆունկցիոնալ կախման մեջ գտնվող միավորները։ Նշանի ֆունկցիան միավորում է երկու ֆունկտիվ՝ արտահայտությունը և բովանդակությունը։ Տվյալ ֆունկցիայից դուրք ֆունկտիվը կոչվում է մեծություն։ Փոխադարձ ֆունկցիոնալ կախման մեջ գտնվող ֆունկտիվներից մեկը Ելմալկը կոչում է հաստատուն (կոնստանտ), մյուսը՝ փոփոխական (անվ. variable)։ Հաստատուն ֆունկտիվի առկայությունը անհրաժեշտ պայման է փոփոխականի առկայության, մինչդեռ փոփոխական ֆունկտիվի առկայությունը անհրաժեշտ պայման չէ մյուս ֆունկտիվի առկայության։ Յունկցիայի գաղափարի այս գլուստեմատիկական ըմբռնումը, Ելմալկի կարծիքով, վերացնում է լեզվաբանության այնպիսի բաժինների տարբերումը, ինչպիսիք են հնչյունաբանությունը, ձեւբանությունը, շարահյուսությունը և իմաստաբանությունը, որոնք տարբերում էր «հին դասական լեզվաբանությունը»։ Ելմալկը դիմում է բոլոր կարգի երևույթների քննության «իգորֆորմիզմի» (գուգածենության), միատեսակության սկզբունքին։ Յունկցիան այնպիսի մի կախում է, որ ստեղծում է բաժանման ընդհանուր նախադրյալներ և՝ տեքստի, և՝ սիստեմի նկատմամբ։ Յունկցիաները լինում են երկու կարգի։ 1) տեքստում հանդես եկող ֆունկցիաներ՝ ուելյացիաներ, որոնք ներկայացնում են տրամաբանական կոնյունկցիա (և-և') և 2) սիստեմում հանդես եկող ֆունկցիաներ՝ կոռելյացիաներ, որոնք ներկայացնում են տրամաբանական դիսյունկցիա (կա'մ-կա'մ)։

Վերևում հիշված կախման 3 տիպերից 1) առաջինը՝ փոխկախումը (ինտերդիպետնուցիա) տեքստի նկատմամբ Ելմալկը կոչում է ա) համերաշխություն (սոլիդարություն) և սիստեմի նկատմամբ՝ բ) փոխլրացում (կոմպլեմենտարություն)։ 2) երկրորդը՝ միակողմանի կախումը (դետերմինացիան) տեքստի նկատմամբ կոչվում է ընտրություն (սելեկցիա), սիստեմի նկատմամբ՝ մասնորոշում (սպեցիֆիկացիա)։ 3) երրորդը՝ ավելի ազատ կախումը (կոնստելյացիան, որի ժամանակ մի անդամը չի ենթադրում և չի բացառում

մյուսի գոյությունը) տեքստի նկատմամբ կոչվում է կոմբինացիա, սիստեմի նկատմամբ՝ ավտոնոմիա: Այս սիստեմը Ելմսլեր կիրառելի է համարում լեզվի բոլոր կողմերի նկատմամբ. այսպես, օրինակ, դետերմինացիայի (միակողմանի կախման) երկու արտահայտություններից առաջինը սելեկցիան (ընտրությունը) երևան է գալիս բառազուգորդման մեջ որպես խնդրառություն, բառի մեջ՝ որպես հիմքի և ածանցի հարաբերություն, վանկի մեջ՝ որպես վանկարար և ոչ վանկարար տարրերի հարաբերություն:

Գլուսեմատիկական վերլուծության էությունը Ելմսլեր տեսնում է այն բանի մեջ, որ մեծությունների բազմաքանակ և հոծ զանգվածները հանգեցվեն սահմանափակ թվով և սիստեմավորված մեծությունների, ընդ որում վերլուծությունը՝ բովանդակության, և՝ արտահայտության համար տարվում է միևնույն սկզբունքներով. լեզվական բոլոր միավորները կոմբինացվում են միևնույն սկզբանքներով. Հովատակը (արու ձի) տարբերվում է զամբիկի հեկից (էգ ձի) այնպես, ինչպես ՏԼ-Ն (Տ+Լ)՝ ՏԼ-ից (Լ+Լ), և Հովատակը (արու ձի) տարբերվում է տղամարդուց (արու մարդ) այնպես, ինչպես ՏԼ-Ն՝ ՏՈ-ից: Այս առումով հնչույթի և նրա տարբերակների (վարիանտների) հնչույթաբանական (ֆոնոլոգիական) գաղափարները, «իզոմորֆիզմի» (զուգաձևության) սկզբունքի համաձայն, տարածվում են լեզվական այլ երևույթների վրա. Հարաբերությունը այստեղ անվանվում է «անփոփոխակի» (ինվարիանտի) և «փոփոխակի» (տարբերակի, վարիանտի) հարաբերություն. սրանով Ելմսլեր փորձում է հասնել ձեւանության շարահյուսության տարբերակման վերացմանը՝ քննությունը տեղափոխելով «անփոփոխակի» և «փոփոխակի» հարաբերության պլանը. այսպես, անվան որպես անփոփոխակի (ինվարիանտի) փոփոխակներ (վարիանտներ) կլինեն նրա տարբեր շարահյուսական ֆունկցիաները որպես ենթակա և ստորոգելի: «Անփոփոխակների» (ինվարիանտների) բացահայտման համար կատարվող վերլուծությունը, որ արտահայտվում է մի պլանի կոռելյացիայի՝ մի այլ պլանի կոռելյացիայի հետ ունեցած հարաբերությունը որոշելու մեջ, Ելմսլեր կոչում է կոմուտացիա: Կոմուտացիայի գաղափարը խիստ կարևոր

դեր է խաղում Ելմալկի լեզվաբանական սիստեմում, որովհետև այն կապում է լեզվի երկու կողմերը՝ բովանդակությունը և արտահայտությունը, որոնք, ըստ Ելմալկի, գոյություն ունեն լոկ որպես հարաբերություն՝ միայն իրար հետ ունեցած փոխադարձ կապի մեջ<sup>1</sup>:

Իր գործունեության երկրորդ շրջանում գրված հոդվածներից մեկում («Դիտողություններ վերացնելի հակադրությունների մասին»<sup>2</sup>) Ելմալկը, ելնելով նույն զուգաձևության (իդոմորֆիզմի) սկզբունքից, Պրագայի լեզվաբանական դպրոցի հնչույթաբանական որոշ սկզբունքներին ընդհանուր տեսական արժեք է վերագրում՝ նշելով, որ այդ նոր սկզբունքները հնարավորություն են տալիս, ի տարրերություն նախորդ շրջանի, մաքուր ձևերից և ֆունկցիաներից գնալ դեպի սուբստանցի փաստերը, ընդհանուրից դեպի կոնկրետ փաստերը և ոչ թե ընդհակառակն: Առանձնակի քննարկման է ենթարկում Ելմալկը Պրագայի հնչույթաբանների «Հակադրությունների շեզորացման» (Ելմալկի հորջորջմամբ՝ «լերացնելի հակադրությունների») սկզբունքը. ըստ այդ սկզբունքի որոշ հնչույթների հակադրությունը որոշ դիրքում կարող է շեզորանալ, այսինքն՝ տվյալ դիրքում տարրերվող հնչույթները կարող են նույնանալ. Ելմալկն այս սկզբունքին ընդհանրական արժեք է վերագրում՝ նշելով, որ այդ երևույթը տեղի ունի և քերականության մեջ (հմմտ. լատ. ուղղական-հայցականի հակադրության շեզորացումը շեզոք սեղի անունների դեպում):

Ընդհանուր առմամբ նշելի է, որ Ելմալկը մտցնում է բազմաթիվ նոր տերմիններ ու սահմանումներ՝ առանց դրանք առատ օրինակներով օժտելու. գլուսսեմատիկական այսպիսի նոր տերմինների թիվը հարյուրից անցնում է: Հիմնական սխեմաների փոխհարաբերությունը կարելի է արտահայտել հետևյալ սխեմայով<sup>3</sup>.

<sup>1</sup> Հմմտ. О. С. Ахманова, Глоссематика Луи Ельмслева, ВЯ, 1953, № 3, էջ 42.

<sup>2</sup> L. Hjelmslev, Notes sur les oppositions supprimables, 1939.

<sup>3</sup> Հմմտ. B. Stiertsema, հիշ. աշխ., էջ 74.

<p><b>Տերմիններ՝ կիրառված տեքստի և սխաեմի նկատմամբ.</b></p>	<p><b>Տերմիններ՝ կի- րառված տեքստի նկատմամբ՝ պրո- ցես=սինտագմա- տիկա=ռելյացիոն հիերարխիա</b></p>	<p><b>Տերմիններ՝ կի- րառված սխաեմի նկատմամբ՝ պա- րագիմատիկա<sup>1</sup>= կոռելյացիոն հիե- րարխիա</b></p>	
<p><b>Ֆունկցիա</b></p>	<p><b>Ուլյացիա Կոնեկցիա «Ե՛վ-և» ֆունկ- ցիա</b></p>	<p><b>Կոռելյացիա Էքվիվալենցիա. «Համակամ» ֆունկցիա</b></p>	
<p><b>Փոխարձություն (reciprocity) (2-ը միենույն տե- սակի)</b></p>	<p><b>Խնտերդեպե- ղենցիա (2 հաստատուն)</b></p>	<p><b>Սոլիդարություն</b></p>	<p><b>Կոմպլեմենտարու- թյուն</b></p>
<p><b>Հարակցություն (cohesion) (1-ը հաստատուն)</b></p>	<p><b>Դեսերմինացիա (1 հաստատուն, 1 փոփոխական)</b></p>	<p><b>Սելեկցիա</b></p>	<p><b>Սպեցիֆիկացիա</b></p>
<p><b>Փոխարձություն (reciprocity)... (2-ը միենույն տե- սակի)</b></p>	<p><b>Կոնսասելյացիա (2 փոփոխա- կան)</b></p>	<p><b>Կոմբինացիա</b></p>	<p><b>Ավտոնոմիա</b></p>

«Գլոսսեմատիկայի ներածության» մեջ սահմանվում են հետև-  
յալ 5 սկզբունքները, որոնց վրա կառուցվում է գլոսսեմատիկական  
տեսությունը.

1) Է մ պ ի ր ի զ մ ի ս կ զ բ ո ւ ն ք (the Principle of Empiricism).— Նկարագրությունը պետք է լինի ինքնակա (self-consistent), սպառիչ և հնարավորին շափ պարզագույն։ Սկզբունքի երեք մասերը կարգավորված կախման մազ են, այնպես որ սպառ-  
չությունը ենթարկված է ինքնակայությանը (self-consistency) և  
պարզությունը պապությանը<sup>2</sup>:

2) Պ ա ր զ ո ւ թ յ ա ն ս կ զ բ ո ւ ն ք (the Principle of Simplicity).— Երկու ինքնակա և սպառիչ նկարագրություններից  
գերադասելի է այն, որ ավելի պարզ արդյունք է տալիս։ Հավասա-

<sup>1</sup> Այս բառը Ելմուկը և ուրիշները գործածում են Սոսյուրի շատոցիա-  
ցիայից փոխարեն և ի տարրերություն սինտագմատիկայից։

<sup>2</sup> L. Hjelmslev and H. J. Uldall, Outline of Glossematics. I. General Theory, Copenhagen, 1957, էջ 20—21:

րապես պարզ արդյունք տվող երկու ինքնակա (self-consistent) և սպառիչ նկարագրություններից գերադասելի է այն, որ ավելի պարզ գործողություն է պահանջում<sup>1</sup>:

3) Վերածման սկզբունք (the Principle of Reduction).— Նկարագրությունը գործողության ձևէ ընդունում: Յուրաքանչյուր գործողություն պետք է շարունակվի և կրկնվի մինչև նկարագրության սպառվելը և պետք է հասցնի արդյունավորիչների (resultants) հնարավոր փոքրագույն թվի գրանցմանը<sup>2</sup>:

4) Տնտեսման սկզբունք (the Principle of Economy).— Գործողությունը պետք է նպատակ ունենա տալու հնարավոր պարզագույն արդյունքը և պետք է դադարեցվի, եթե որևէ հետագա պարզեցում չի հետևում<sup>3</sup>:

5) Ընդհանրացման սկզբունք (the Principle of Generalisation).— Եթե մի օբյեկտ ենթարկվում է մի որոշակի նկարագրության առանց երկմտություն առաջացնելու և մի այլ օբյեկտ այդ միենալուն նկարագրությանը ենթարկվելիս երկմտություն է առաջ բերում, ապա, նկարագրությունը ընդհանրացվում է՝ երկու օբյեկտների նկատմամբ էլ կիրառվելու համար<sup>4</sup>:

«Գլուստեմատիկական հանրահաշվի» հետագա տեսությունն սկսվում է ֆունկցիայի գաղափարից, ընդ որում ֆունկցիայի գաղափարը և հետագա յուրաքանչյուր գաղափար համապատասխան հանրահաշվական նշանակում է ստանում: Ֆունկցիա (ֆ) ասելով հասկացվում է ամեն մի կախում. ֆունկցիայի (կախման) մեջ մտնող ամեն մի բան կոչվում է ֆունկտիվ (F). իրար հետ տվյալ ֆունկցիայով կապված ֆունկտիվները կոչվում են տվյալ ֆունկցիայի եզրերը (terminals). տվյալ ֆունկցիան իր եզրերի հետ միասին կոչվում է ֆունկցիոնալ դաշտ (functional field), իսկ ֆունկտիվը իր ֆունկցիաների հետ միասին՝ ֆունկտիվային դաշտ (functional field): Մրանց հետեւում են սինտագմատիկ ֆունկցիայի, վերլուծության, դեղուկցիայի, պարադիգմատիկ ֆունկցիայի ու բազմաթիվ այլ գաղափարների (54) սահմանումները՝ համապատասխան մեկնաբանություններով հանդերձ, և տրվում են գլուստեմատիկական հանրահաշվական գործողությունների օրինակներ:

<sup>1</sup> L. Hjelmslev and H. J. Uldall, Outline of Glossematics.  
I. General Theory, Copenhagen, 1957, էջ 25.

<sup>2</sup> Նույն աեղը, էջ 32:

<sup>3</sup> Նույն աեղը, էջ 33:

<sup>4</sup> Նույն աեղը, էջ 34:

**գ) Ամերիկյան ամենատալիստական ճկարագրական  
(զեսկրիպտիկ) լեզվաբանություն**

Ամերիկյան ճկարագրական լեզվաբանության ձևավորումը տեղի է ունեցել որոշ տեսական ու գործնական հիմքերի վրա: Նրա տեսական սկզբունքների հանդես գալը կապված էր փիլիսոփայական և հոգեբանական այն հոսանքների հետ, որոնց հիմնական դրույթների բնութագրությունը տրվեց քննարկվող ենթաշրջանի ընդհանուր բնութագրության հետ կապված: Այդ լեզվաբանության տեսական-լեզվաբանական հիմունքները և վերլուծական մեթոդների ակունքները կարելի է տեսնել Ֆերդինանդ դը-Սոսյուրի և Էդուարդ Սեպիրի լեզվաբանական դրույթների ու վերլուծական մեթոդների մեջ: Հատկապես վերջինս կարող է համարվել ամերիկյան նկարագրական լեզվաբանության վաղ ներկայացուցիչներից մեկը, թեև նրա վերլուծության մեթոդը շունեցավ այն տարածումը, ինչ ամերիկյան լեզվաբանության մի այլ ներկայացուցչի՝ Լեռնարդ Բլումֆիլդի մեթոդը: Ամերիկյան նկարագրական լեզվաբանության ձևավորումը կապված էր և որոշ գործնական պահանջմունքների հետ: Ինչպես հայտնի է, ամերիկյան լեզվաբանները, մարդաբանները և ազգագրագետները նշանակալից ուշադրություն էին հատկացնում ամերիկյան բնիկների (հնդկացիների) լեզուների ուսումնասիրությանը: Աշխատանքի ընթացքում պարզվեց, որ դասական լեզվաբանության կիրառած մեթոդները, որոնք կառուցված են հատկապես հունարենի և լատիներենի առանձնահատկությունների վրա, գրեթե անպետք են ամերիկյան հնդիկների լեզուների ուսումնասիրության համար: Այս տեսակետից կարենոր դեր խաղաց մարդաբան և ազգագրագետ, ազգագրության «պատմական դպրոցի» հիմնադիր Ֆրանց Բոուլզը (Boas, 1858—1942), որին համարում են ամերիկյան նկարագրական լեզվաբանության հիմնադիրը:

Զբաղվելով հյուսիս-ամերիկյան հնդիկների անթրոպոլոգիական (մարդաբանական) և ազգագրական հետազոտությամբ՝ Բոուլզն անհրաժեշտաբար պետք է զբաղվեր նաև լեզվական հարցերով: Աշխատանքի ընթացքում նա համոզվում է, որ իր ունեցած դասական լեզվաբանական պատրաստությունը ոչ միայն չի օգնում գործին, այլև նույնիսկ խանգարում է: Հնդկառապական լեզուների քերսկանությունից հայտնի այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են խոսքի մասերը, հոլովը, եղանակը և այլն, ամերիկյան լեզու-

Ների նկատմամբ կիրառելը հանգեցնում է այդ լեզուների առանձ-նահատկությունների աղջատման, հնարավորություն չի տալիս նկատելու նրանց իրոք հատուկ կատեգորիաները և ընդհակառակն, վերագրել է տալիս նրանց այնպիսի կատեգորիաներ, որոնք իրականում նրանց հատուկ շեն կամ ունեն դրսնորման ուժեղ տարրերություններ: 1911 թ. իր «Ամերիկյան հնդիկների լեզուների ձեռնարկի»<sup>1</sup> առաջարանում թուրքը կանգ է առնում այդ դժվարությունների վրա, խոսում նոր մեթոդների կիրառման անհրաժեշտության մասին և փորձում տալ այդ նոր մեթոդների կիրառման օրինակներ: Սակայն ամերիկյան նկարագրական լեզվաբանության հետագա ներկայացուցիչները, աշխատելով բոլոր լեզուների նկարագրության համար կիրառելի մեթոդներ գտնելու և դրանք կատարելագործելու ուղղությամբ, հասնում են ծայրահեղությունների, հանգում ակնհայտ ֆորմալիզմի, իրենց լեզվական հայացքների տեսական հիմնավորման մեջ անցկացնում ուսակցիոն-իդեալիստական և վուլգար-մեխանիստական տեսակետները: Այս առումով պետք է պուանձնացնել ամերիկյան նկարագրական լեզվաբանության մեթոդների դրական կողմերը այդ մեթոդի կիրառման մեջ հանդես բերած ֆորմալիստական ծայրահեղություններից և լեզվաբանական ուսմունքը տեսականորեն «հիմնավորելիս» առաջ քաշված ուսակցիոն փիլիսոփայական հայացքներից:

1920 թ. Ֆր. Բոուրզի նախաձեռնությամբ սկսում է հրատարակվել «Ամերիկյան լեզվաբանության միջազգային հանդեսը»<sup>2</sup>, որը լայն թափ է հաղորդում սկսված աշխատանքին: Ամերիկյան նկարագրական լեզվաբանության գլխավոր օրգանը դառնում է 1925 թ. մինչև այժմ հրատարակվող «Լեզու»<sup>3</sup> հանդեսը, որ հրատարակում է 1924 թ. վերջերին հիմնված Ամերիկյան լեզվաբանական ընկերությունը (Linguistic society of America): Կան և այլ լեզվաբանական պարբերական հանդեսներ<sup>4</sup>:

Ամերիկյան լեզվաբանության համար հետագայում էլ շարունակում է բնորոշ լինել կապը լեզուների գործնական ուսումնասի-

<sup>1</sup> F. Boas, Handbook of American Indian Languages, I-II, 1911, III, 1938.

<sup>2</sup> International Journal of American Linguistics.

<sup>3</sup> Language.

<sup>4</sup> „Language Monographs“ (1925 թվական), „Language Dissertations“ (1926 թվական), „Archivum Linguisticum“ (1939 թվական), „Word“ (1945 թվական) և այլն:

րության և այնպիսի բնագավառների հետ, ինչպիսիք են մարդարանությունը և ազգագրությունը<sup>1</sup>, թեև լեզվի «մաքուր վերլուծության» մեջ խորացող լեզվաբանները խզում են այդ կապը և լեզուն առնում իմանենտորեն:

Մենալիստները և մեխանիստները (ամենատարածվածները) ամերիկյան լեզվաբանության մեջ.— Ամերիկյան լեզվաբանության մեջ տարբերում են երկու հոսանք՝ մենալիստների (անգլ. *mental* «մտավոր, մտածողական» բառից) և մեխանիստների (ամենատարածվածների). առաջին հոսանքի կողմնակիցները լեզվաբանական վերլուծության մեջ կարենու տեղ են տալիս իմաստային կողմին, երկրորդները լեզվական պրոցեսները հանգեցնում են մեխանիկական ակտերի, ավելի ու ավելի առաջ տանում լեզվի առանց իմաստային կողմի միջամտության կատարվող վերլուծությունը: Այս երկու հոսանքների գնահատման հարցում հարկավոր է նկատի ունենալ երկու հանգամանք. 1) այս հոսանքները՝ միատարր ամբողջություն չեն ներկայացնում, և դրանց մեջ կարելի է՝ նկատել ամեն կարգի փիլիսոփայական, հոգեբանական ու լեզվաբանական հոսանքների արտահայտություններ. 2) այդ հոսանքները չի կարելի շփոթել մատերիալիստական ու իդեալիստական ուղղությունների հետ: Ճիշտ է՝ մեխանիզմը երբեմն բնութագրվում է որպես «մատերիալիստական լեզվաբանություն», բայց այդ «մատերիալիզմը», եթե այն որոշ գեպքերում էլ արտահայտվում է, վոլգար մեխանիստական մատերիալիզմ է, որը այնպիսի մի հասարակական երեսլիթի քննության մեջ, ինչպիսին է լեզուն, արտահայտվում է որպես իդեալիզմ. մենալիստների հոսանքն էլ միավորում է գանազան իդեալիստական ուղղությունների ներկայացուցիչների՝ կոնցեպտուալիստների, նեոֆուլկրականների և այլն: Պատահական չէ այն հանգամանքը, որ 1930-ական թվականներին Սևալիրի գլխավորած «մենալիստական» դպրոցը Բլումֆիլդի գիտավորած «մեխանիստական» դպրոցին մերձեցնելու փորձ է կատարվում. երկուսն էլ փաստորեն հանդես են գալիս որպես միևնույն «նկարագրական» (գեսկրիպտիվ) լեզվաբանության» տարատեսակներ: Մենալիստների հոսանքը կազմող հետագա դպրոցներից մեկը նեոֆուլկրյան է և Շպիցերի գլխավորած դպրոցն էր, որը է՛լ ավելի ռեակցիոն-ֆիդեիստական բնույթ էր տվել ֆուլկրականությանը:

<sup>1</sup> Հմայ. Г. Мюллер, Декриптивная лингвистика в США, „Общее и индоевропейское языкознание“, 1956, № 55—57.

«Մեխանիցիզմի» հետագա զարգացումն էլ տանում է դեպի «մաքուր ձևական վերլուծությամբ» զբաղվող լեզվաբանությունը, որը իր ողջ ուշադրությունը կենտրոնացնում է լեզվի ֆորմալ-իմանենտային վերլուծության վրա:

### ա) ՄԵԽԱՆԻՑԻԶՄ (ՖԻԶԻԿԱԼԻՑՄ)

Լ. Բլումֆիլդ.—Լեռնարդ Բլումֆիլդը (1887—1949) ժամանակակից ամերիկյան նկարագրական լեզվաբանության հիմնադիրներից մեկն է, որ «մենտալիստների» (Սեպիրի և ապա Փոսլերական Շափշերի կողմնակիցների) դեմ տարվող վեճերի մեջ գլխավորել է մեխանիցիզմի թեր: Նրա լեզվաբանական ուղղությունը հայտնի է որպես «մեխանիցիզմ» և նույնիսկ որպես «մատերիալիստական» լեզվաբանություն. ավելի ուշ ինքը Բլումֆիլդը գործածության մեջ է մտցրել «Փիզիկալիզմ» տերմինը: Հիմնական գծերով ձևագորգելով 1930-ական թվականներից՝ այդ ուղղությունը 40-ական թվականներից դառնում է տիրապետող լեզվաբանական ուղղությունը: Այս ուղղությանը հարում են Ջ. Հոքետը, Ջ. Հառիսը, Ռ. Ուելսը, Է. Նայդան, Ս. Ֆյոդելինը, Ք. Փայկը, Ջ. Թրեյչերը, Բ. Բլումը և ուրիշները, որոնք հանդես են գալիս «լեզվի մաքուր վերլուծության» պահանջով. այս վերջինների ուղղությունը նեղ առումով մենք հետագայում կկոչենք ֆորմալ-անալիտիզմ: Բլումֆիլդը երկար ժամանակ գլխավորել է «Language» («Լեզու») հանդեսը, որ ամերիկյան լեզվաբանության ամենից ավելի աշքի ընկնող օրգանն է:

Իր գործունեության վաղ շրջանում Բլումֆիլդը հանդես է եկել որպես այն ժամանակ լայն ազդեցություն ունեցող վունդայան պսիխոլոգիզմի հետեւրդ: Սակայն հետագայում Բլումֆիլդը ոչ միայն հրաժարվում է դրանից, այլև լեզվաբանության մեջ գլխավորում այդ պսիխոլոգիզմի դեմ տարվող պայքարը: 1920-ական թվականներին հոգեբանության և փիլիսոփայության մեջ իշխող բիճեվիորդիզմն ու պրագմատիզմը իրենց կնիքն են դնում նաև Բլումֆիլդի վրա, որի լեզվաբանական մեխանիցիզմի հիմնական դրույթներն արդեն ձևակերպված են «Մի շարք պոստուլատներ լեզվաբանության համար» հոդվածում<sup>1</sup>. այստեղ նա հանդես է բերում լեզվաբանության մաթեմատիկականացման, լեզվաբանական քննու-

<sup>1</sup> L. Bloomfield, A Set of Postulates for the Science of Language, „Language“, 1926, № 3.

թյունը որոշ պոստովատների վրա հիմնելու և Սեպերի նման բոլոր լեզուների նկարագրության համար ընդհանուր սկզբունքներ հաստատելու ձգտում: Իր գիխալոր աշխատության մեջ, որ նույն անունն ունի, ինչ Սեպերի գիրքը («Լեզու»)<sup>1</sup>, Բլումֆիլդը տալիս է իր լեզվաբանական հայացքների և լեզվաբանական վերլուծության իր եղանակների շարադրանքը, որ հետագայում լայն ազդեցություն է թողնում ամերիկյան (և ոչ միայն ամերիկյան) լեզվաբանության ընթացքի վրա: 1930-ական թվականների կեսերից Բլումֆիլդի հայացքները ենթարկվում են տրամաբանական պողիտիվիզմի ազդեցությանը. այդ բանն արդեն նկատելի է «Լեզու», թե՝ գաղափարներ» հոդվածում<sup>2</sup>, ապա ավելի մեծ չափով արտահայտվում է «Գիտության լեզվաբանական հայեցակետերը» գրքում<sup>3</sup>: Բլումֆիլդի վաղ աշխատություններից հիշատակելի են ««Լեզուի ուսումնասիրության ներածությունը», ավելի ուշ շրջանի գործերից՝ «Օտար լեզուների գործնական ուսումնասիրության ուղեցույցը»<sup>4</sup>:

Բլումֆիլդը ևս զբաղվել է ամերիկյան բնիկների լեզուների ուսումնասիրության հարցերով: Նշելի է, որ Բլումֆիլդը լայն ազդեցություն գործելով ամերիկյան լեզվաբանության վրա՝ Եվրոպայում երկար ժամանակ գրեթե անծանոթ է եղել:

Բլումֆիլդի մեխանիզմը իր հանդես գալու ժամանակից կապված էր ամերիկյան բիհկորիզմի հետ: Բիհկորիստներից ամենից ավելի ուժեղ ազդեցություն է թողել Բլումֆիլդի վրա Ալբրետ Վեյսը, որը հանդես է եկել որպես «հասարակական» բիհկորիզմի ներկայացուցիչ՝ բիհկորիզմի դրույթները կիրառելով հասարակական երևույթների, այդ թվում և լեզվի նկատմամբ<sup>5</sup>: Բլումֆիլդի վուգար ֆիզիոլոգիական մատերիալիզմն էլ կիրառվելով այնպիսի մի հասարակական երևույթի նկատմամբ, ինչպիսին լեզուն է, վերջիվերջո հիմք էր տալիս իդեալիստական ու ագնոստիկական եզրակացությունների համար:

<sup>1</sup> L. Bloomfield, Language, New York, 1933.

<sup>2</sup> L. Bloomfield, Language or Ideas, „Language“, 1936, № 2.

<sup>3</sup> L. Bloomfield, Linguistic Aspects of Science, New York, 1939.

<sup>4</sup> L. Bloomfield, Introduction to the Study of Language, 1914 (իր «Լեզու» գրքի առաջաբանում Բլումֆիլդը այն համարում է այս գրքի վերանայված վերսիան, բայց տարբերությունն այնքան մեծ է, որ Բլումֆիլդի ասածը կարելի է ընդունել մեծ վերապահությամբ). Outline Guide for Practical Study of Foreign Languages, 1942.

A. P. Weiss, Linguistics and Psychology, „Language“, 1925, № 52—57.

Բիհնիորիզմը Բլումֆիլդը էկլեկտիկորեն գուգորդում է Սոսյուրի ուսմունքի որոշ կողմերի հետ: Ամենից առաջ Բլումֆիլդը խոսում է լեզվի հաղորդակցական դերի մասին, այն ֆունկցիայի մասին, որ կատարում է լեզուն տվյալ լեզվական հանրության (speech-community) մեջ: Սակայն այդ հաղորդակցական ֆունկցիան Բլումֆիլդը դիտում է պրագմատիզմի և բիհնիորիզմի դիրքերից: Հաղորդակցումը նրա համար յուրատեսակ բիոլոգիական հակաղում (ռեակցիա) է արտաքին ազդակների (ստիմուլների) հանդեպ, մարդկանց՝ միջավայրին հարմարվելու ձևերից մեկը<sup>1</sup>: Սիածամանակ Բլումֆիլդը Սոսյուրից փոխ է առնում նշանի միասնության, կամայականության (չպատճառաբանվածության) և տվյալ կոլեկտիվի համար պարտադիր լինելու դրույթը: Սակայն Բլումֆիլդը հեռու է կանգնած լեզվի սիստեմային բնույթի իրական ըմբռնումից: Դեռևս 1926 թ. իր «Մի շարք պոստուլատներ» հոդվածում այս կամ այն խմբակցության լեզուն նա սահմանում է որպես «այն արտասանվածքների (utterance) ամբողջությունը, որոնք կարող են արվել տվյալ լեզվական խմբակցության մեջ»<sup>2</sup>: Արտասանվածք ասելով Բլումֆիլդը հասկանում է խոսքի՝ որոշ ամբողջություն ներկայացնող հատվածները: Այսպիսով, լեզուն հանգեցվում է խոսողական ակտերի (=արտասանվածքների) գումարին, ընդ որում այդ ակտերը դիտում են որպես այն միակ ռեալությունը, որի հետ կարող է գործ ունենալ լեզվաբանը: Լեզուն հանգեցնելով արտասանվածքների գումարին՝ Բլումֆիլդը վերջիններս էլ քննում է բիհնիորիզմի դիրքերից և բացատրում է ազդակների ու հակազդումների (ստիմուլների ու ռեակցիաների) մեխանիզմով. արտասանվածքն ընկած լինելով խոսողի և լսողի ներվային սիստեմների միջև, առաջ է բերում ազդակների ու հակազդումների շարք:

Այսպիսով, Բլումֆիլդը մարդկային լեզուն դիտում է որպես մարդու վարմունքի ձևերից մեկը և լեզվական մեխանիզմը հանգեցնում ազդակներին ու հակազդումներին. խոսքը համարվում է հակազդում (ռեակցիա) արտաքին ազդակի (ստիմուլի) հանդեպ, ընդ որում խոսքն էլ իր հերթին դառնում է ազդակ (ստիմուլ): Խողների մեջ հակազդում (ռեակցիա) առաջ բերելու համար: Սրանով իսկ Բլումֆիլդը մի կողմից՝ հաղորդակցումը հանգեցնում է ֆիզիոլո-

<sup>1</sup> Հմմ. Մ. Մ. Գ ү խ մ ա ն, Лингвистический механицизм Л. Блумфилда, ТИЯ, IV, 1954, էջ 125.

<sup>2</sup> L. Bloomfield, A Set of Postulates, „Language“, 1926, № 2, էջ 154.

գիական պահանջների բավարարման համար կատարվող ազդակների ու հակազդումների պարզ ակտերի, մյուս կողմից՝ դուրս է մղում գիտակցությունը, բացառում լեզվի և գիտակցության փոխհարաբերության պրոբլեմը։ Հեղուն իբրև այդպիսի ազդակների և հակազդումների ամբողջություն, ըստ Բլումֆիլդի, որակապես չի տարբերվում այլ կարգի ազդակներից ու հակազդումներից։ Այն որպես սովորական բիոլոգիական ակտ հավասարեցվում է այլ կարգի բիոլոգիական ակտերին, արտաքին ազդակների առաջացրած կենդանական ճիշերին, և, այսպիսով, լեզվի ծագման պրոբլեմը «լուծվում է» կախարդական գավազանի մի հարվածով, դադարում պրոբլեմ լինելուց։ Այս առումով Բլումֆիլդը լեզվի ազդանշանների հետ միասին նման տիպի ազդանշաններ է համարում և կենդանական այն ճիշերը, որոնք նույնպես հանգեցվում են ազդակների և հակազդումների։ Սկզբնապես դրանց միջև որակական տարբերություն չէր դրվում։ մարդկային լեզվի ազդանշանները տարբերվում են կենդանական այդ «ազդանշանակման ճիշերից» մեծաքանակությամբ, ավելի մեծ տարբերակվածությամբ ու ճշգրտությամբ<sup>1</sup>։

Սակայն հետագայում մարդկային լեզվի «ազդանշանների սիստեմի» և կենդանական «ազդանշանանման» ճիշերի բուն տարբերությունը Բլումֆիլդը փորձում է տեսնել մարդկային լեզվական միավորների նշանակություն ունենալու մեջ։ Նշանակությունը, ըստ Բլումֆիլդի, «լոկ այն իրադրությունն է (situation), որի մեջ խոսողը գործածել է այդ ձեզ, և այն հակազդումը, որ առաջացել է լսողի մոտ»<sup>2</sup>։ Այսպիսով, Բլումֆիլդը նախ՝ բառի նշանակությունն ըմբռնում է միշտ կոնկրետ իրադրության (սիստեմացիայի) հետ կապված, բառը զրկում է իր ընդհանրացնող արժեքից, երկրորդ՝ այս հարցի լուծման մեջ հանդես է բերում սուբյեկտիվ-ինդիվիդուալիստական մոտեցում, բառիմաստը կապում է միշտ առանձին անհատների հետ, երրորդ՝ բառիմաստը փորձում է դիտել որպես լեզվի կառուցվածքից դուրս գտնվող մի բան՝ հիմք տալով այն լեզվաբանական հետազոտությունից դուրս մղելու համար։ ըստ Բլումֆիլդի՝ լեզվական ձեփի ճիշտ նշանակությունը որոշելու համար պետք է իմանալ այն բոլորը, ինչ կա «խոսողի աշխարհում»։ քանի որ սա էլ գործնականորեն անհնար է, ուստի և լեզվաբանության հնարավորությունները համարվում են

<sup>1</sup> L. Bloomfield, A Set of Postulates, „Language“. 1926, № 2, էջ 121.

<sup>2</sup> L. Bloomfield, Language, 1933, էջ 139.

խիստ սահմանափակ. Բլումֆիլդը հանդես է գալիս «րպես ազնոս-տիկ»: Սակայն եթե բառիմաստր կապված է կոնկրետ իրադրության հետ, ապա ինչպես են մարդիկ իրար հասկանում, ինչպես է տեղի ունենում հաղորդակցումը: Այս հարցը լուծելու համար Բլումֆիլդն ստիպված է դիմել «ընդհանուր իրադրության» գաղափարին և խոսել «առարկաների ընդհանուր հատկությունների» մասին, այսինքն՝ հակասության մեջ մտնել իր իսկ մեկնակետի հետ. առարկաների ընդհանուր հատկությունները և ընդհանուր իրադրությունը, ըստ Բլումֆիլդի, հնարավորություն են տալիս տարբեր մարդկանց միատեսակ առարկա տեսնելիս արտասանել միկնույն հնչյունակոմպլեքսը, որին նրանք վարժվել են մանկությունից: Միաժամանակ՝ լեզվի հաղորդակցական ֆունկցիան բացատրելու նպատակով Բլումֆիլդը յուրացնում է Սոսյուրի դրույթը նշանի՝ տվյալ կոլեկտիվի սահմաններում պարտադիր լինելու մասին և այն դարձնում լեզվական ուսումնասիրության մեկնակետը, թեև լեզվի այդ հատկությունը իր բնույթով անբացատրելի է համարում: Բլումֆիլդը յուրացնում է նաև Սոսյուրի դրույթը լեզվական նշանի կամայականության (շպատճառաբանվածության) մասին՝ գտնելով, որ լեզվական նշանների սիստեմով՝ լեզվական «նշանների» սիստեմը լրիվ կտրվում է տվյալ լեզվով խոսող հանրության պատմությունից, առնվում լոկ սինխրոնիկ հայեցակետով, առանց իր պատմական պայմանավորվածության: Հասկանալի է, որ լեզվական նշանի՝ կամայականության, պարտադրականության և լեզվաբանական քննության միասնության հիմք տալու սոսյուրյան դրույթներից հեշտ է անցում կատարել դեպի բառի ու բառիմաստի, լեզվի ու մտածողության տարբերության ժմխտումը, եթե, մանավանդ, այս դրույթները անցկացվում են բիհկորիզմի և պրագմատիզմի բովով: Այդ քայլը կատարում է Բլումֆիլդը իր «լեզո՞ւ, թե՞ գաղափարներ» բնորոշ վերնագիրն ունեցող հոդվածում, որ ուղղված է «մենտալիստների» դեմ:

Բլումֆիլդը այս հոդվածում գտնում է, որ այն, ինչ մենք կոչում ենք հասկացություններ ու գաղափարներ, լոկ լեզվական երևույթների ոչ ճիշտ նշանակումներն են. այլ կերպ ասած՝ Բլումֆիլդը ոչ մի տարբերություն չի տեսնում բառաձեի և բառիմաստի միջև. հասկացություններն ու գաղափարները դիտվում են լոկ որպես խոսղական կոմպլեքսներ, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ ազդակների ու հակագումների մեխանիզմի դրսերում. հասկացություն կոչ-

վլածը խոսողական ձևի ավանդական՝ մթին հոմանիշն է. «Այն մարդը, որ ասում է, թե ինքն ունի ուղիղ գծի գաղափարը, հասկացությունը, — զրում է Բլումֆիլդը իր «լեզո՞ւ, թե՞ գաղափարներ» հոդվածում, — իրականում ասում է՝ ես բարձրածայն արտասանեցի կամ ներքին խոսողական շարժումների միջոցով ստեղծեցի «ուղիղ գիծ» բառը, միաժամանակ ինձ մոտ տեղի ունեցան մի քանի աղոտներքին ուսակցիաներ, որոնցով սովորաբար ուղեկցվում է ուղիղ հատվածի զգայությունը կամ «ուղիղ» բառի տեսողական և խոսողական ընկալումը»<sup>1</sup>: Այսպիսով, նախ՝ բառը և հասկացությունը, լեզուն և մտածողությունը նույնացվում են. երկրորդ՝ լեզվական ու մտածողական պրոցեսները հանգեցվում են ազդակների ու հակադրումների (ստիմուլների ու ուսակցիաների) շարքի. երրորդ՝ դրանով իսկ մտածողական ու լեզվական պրոցեսները դիտվում են որպես «մարմնական պրոցեսներ», չեն տարբերացվում ֆիզիոլոգիական մյուս կարգի պրոցեսներից. չորրորդ՝ բառի և հասկացության (բառիմաստի), լեզվի և մտածողության փոխհարաբերության պրոբլեմը համարվում է կեղծ պրոբլեմ: Այնպիսի հարցեր, ինչպիսիք բառիմաստի և հասկացության, բազմիմաստության, բառի և բառիմաստի փոխհարաբերության, բառի մեջ դրսնորվող ընդհանրացման և արստրակցիայի հարցերն են, ոչ միայն լուծում չեն ստանում, այլև նույնիսկ չեն դրվում: Պայքարելով «մենտալիստների» դեմ՝ Բլումֆիլդը վերջիվերջո հանդես է գալիս որպես ագնոստիկ և ձեռք մեկնում պրագմատիկներին ու սեմանտիկներին: Բլումֆիլդի լեզվաբանական կոնցեպցիան էլ կապվում է նրա մեթոդի բնույթի հետ. լեզվաբանական ուսումնասիրության նպատակը հանգեցվում է արտաքին լեզվական ձևերի դասակարգմանն ու նկարագրությանը. այստեղից էլ ամերիկյան նկարագրական (դեսկրիպտիվ) լեզվաբանության ողջ նպատակավորումը: Բլումֆիլդը ձգտում է լեզվաբանությունը լիովին առանձնացնել փիլիսոփայությունից, տրամաբանությունից, հոգեբանությունից, քննել ինքնակայորեն: Բլումֆիլդն այս առումով նույնիսկ փորձում է վկայակոչել Պանինիին որպես լեզվի էմպիրիկ նկարագրության լավագույն ներկայացուցչի:

Այստեղից բխում է այն գերադասությունը, որ տալիս է Բլումֆիլդը սինխրոնիային դիախրոնիայի հանդեպ: Նա լեզուն քննում է

<sup>1</sup> L. Bloomfield, Language or Ideas „Language“, 1936, № 2, էջ 95.

ոչ թե պատմական շարժման և տվյալ ժողովրդի պատմության հետ ունեցած կոնկրետ կապի մեջ, այլ որպես ազգակների ու հակազդումների մի մեխանիզմ. դիախրոնիկ հայեցակետը Բլումֆիլդի համար մղվում է հետին պլանը, լեզվի մեջ կատարվող փոփոխությունների հարցերը նրան քիչ են հետաքրքրում: Նա ոչ մի շանք չի գործադրում որոնելու լեզվի դիախրոնիկ վերլուծության ռացիոնալ եղանակներ և իր ողջ ուշադրությունը կենտրոնացնում է լեզվի սինխրոնիկ քննության վրա: Լեզվի ծագման ու զարգացման հարցերը մի կողմ են թողնվում: «Լեզուն նկարագրելու համար,— գրում է Բլումֆիլդը,— հարկավոր չէ ոչ մի պատմական գիտելիք. ենու ավելին, այն հետազոտողը, որ թույլ կտա այդպիսի գիտելիքներին ազդելու իր կողմից արվող սինխրոնիկ նկարագրության վրա, անպայմանորեն կաղավաղի իր ստացած տվյալները»<sup>1</sup>: Լեզվաբանության խնդիրը հանգեցնելով լեզվական երեսութների դասակարգմանն ու նկարագրությանը՝ Բլումֆիլդը տառապում է սիխեմատիզմով: Լեզուն կտրվելով իր կոնկրետ պատմությունից, հասարակության մեջ ունեցած իր ուսալ կապերից և վերածվելով մի ինքնականութիւն (ինչպես Սոսյուրի և Սեպիրի մոտ), Բլումֆիլդի և նրա հետեւրդների մեջ աստիճանաբար զրկվում է իր նյութական էռւիթյունից, վերածվում ապանյութական հարաբերությունների սիստեմի: Լեզվական հարաբերությունների քննությունը մաթեմատիկանացվում է, դառնում նյութականությունից զերծ վերացական հարաբերությունների մի ամբողջություն: Լեզվաբանության առարկան համարելով «մաքուր լեզվական փաստր»՝ Բլումֆիլդը մի կողմից՝ կրում է մաթեմատիկական տրամարանության ազդեցությունը, մյուս կողմից՝ հիմք տալիս ամերիկյան նկարագրական լեզվաբանության ներկայացուցիչների և եվրոպական ստրուկտուրալիստների միավորման համար. լեզվական հարաբերությունների քննությունը վերածվում է զանազան կառուցվածքային (ստրուկտուրալ) միավորների ու նրանց զուգորդելիության քննությանը, «զուտ» նկարագրությանն ու վերլուծությանը:

Բլումֆիլդի հետեւրդների մոտ «մաքուր լեզվական ձևի» քըննությունը, «զուտ լեզվական» վերլուծությունը սկզբունքորեն համընկնում է Կոպենհագենի ստրուկտուրալիստների «մաքուր հարաբերությունների» քննության դրույթի հետ:

Բլումֆիլդի մեթոդը սերտորեն կապված է նրա լեզվաբանա-

<sup>1</sup> L. Bloomfield, Language, 1933, էջ 19—20.

կան ընդհանուր կոնցեպցիայի հետ։ Սակայն եթե նրա կոնցեպցիան իր բնույթով ընդհանրապես արատավոր է, ապա նրա մեթոդը ունի դրական կողմեր, որոնք նշանակալից ազդեցություն են թողել լեզվաբանության հետագա ընթացքի վրա։ Ճիշտ է, Բլումֆիլդը լեզվի ֆունկցիավորումը հանգեցնում է ազդակների ու հակազդումների պարզ բիոլոգիական մեխանիզմի, բայց այդ մեխանիզմի նրա նկարագրության եղանակները զերծ չեն ընդհանուր հետաքրքրությունից։ Բլումֆիլդի մեթոդը գերաճում է նրա լեզվաբանական կոնցեպցիայի սահմանը։ Այսաեղ առկա է մոտավորապես նույն հարաբերությունը, ինչ Հեգելի փիլիսոփայական իդեալիզմի և նրա դիալեկտիկական մեթոդի միջև, թեև չի կարելի ասել, թե Հեգելի դիալեկտիկական մեթոդը սերտորեն չի կապված նրա իդեալիստական կոնցեպցիայի հետ։

Բլումֆիլդի լեզվաբանական կոնցեպցիայի ազդեցությունը նրա մեթոդի վրա արտահայտվում է ամենից առաջ այն բանում, որ նա իր վերլուծությունից աստիճանաբար դուրս է մղում վերլուծվող միավորների իմաստը։

Իր «Լեզուն» աշխատության մեջ Բլումֆիլդը նշում է, որ լեզվաբանությունը իդեալական ձևով պիտի ունենա երկու բաժին՝ հնչյունաբանություն և իմաստաբանություն. առաջինը պետք է ուսումնասիրի արտասանվածքը անկախ իմաստից, այսինքն՝ հետազոտության առարկա դարձնի խոսողի արտասանական օրգանների շարժումները, խոսողին ու լսողին կապող հնչյունական ալիքները և լսողի մեջ դրանց առաջ բերած ուսակցիան, իմաստաբանությունը պետք է ուսումնասիրի հնչյունների հարաբերությունը իմաստի հետ, այսինքն՝ ցույց տա, թե ինչպես են որոշակի հնչյուններ արտասանվում որոշակի իրադրության մեջ և լսողի մոտ որոշակի տիպի ուսակցիա առաջ բերում։ Իմաստաբանության մեջ Բլումֆիլդը տարբերում է երկու ենթաբաժին՝ քերականությունը և բառարանը (lexicon)։ Լեզվական ձևը սահմանելով որպես իմաստ ունեցող հնչյունական ձև և, այսպիսով, հնչյունական ձևը անխուսափելիութեն կապելով իմաստի հետ՝ Բլումֆիլդն, այնուամենայնիվ, մնում է մաքուր ֆորմալիզմի ու մեխանիզմի դիրքերում։ Նրա կարծիքով՝ ա) հնչյունական-հնչույթաբանական վերլուծությունը պետք է նախորդի իմաստաբանական վերլուծությանը. բ) հնչյունական վերլուծությունը լիովին ընկած է լեզվաբանության տնօրինության սահմաններում, և արտասանվածքի հնչյունական լրիվ վերլուծու-

թյունը հնարավոր է, մինչդեռ իմաստաբանական վերլուծությունը առնչվում է մյուս գիտությունների հետ, որովհետև լեզվական ձեի ճիշտ իմաստը տալ՝ նշանակում է իմանալ այն բոլորը, ինչ կատարվում է «խոսողի» աշխարհում։ Իմաստային վերլուծության միակ բնագավառը, որ կազմում է բուն լեզվաբանության առարկան և որտեղ իմաստային կողմը կարող է սահմանվել «լեզվաբանական տերմիններով», ըստ Թլումֆիլդի՝ այն բնագավառն է, որ վերաբերում է լեզվական միավորների դասակարգմանը, այսինքն՝ քերականական ձևերին ու կատեգորիաներին։ սպեցիֆիկ լեզվական իմաստը երևան է գալիս միայն այն դեպքում, եթե կարելի է խոսել ձևերի դասերի (խմբերի) մասին։ Սակայն այս դեպքում էլ Թլումֆիլդը, Սոսյուրի և նրա հետևորդների նման, նկատի ունի ոչ թե ձևերի բուն իմաստը, այլ ձևերի ֆունկցիոնալ արժեքը։ Իմաստի գաղափարը փաստորեն դուրս է մղվում ֆունկցիայի գաղափարով։ ձևերի ֆունկցիան սահմանվում է որպես «դիրքեր (positions), որոնց մեջ այն հանդես է գալիս»<sup>1</sup>։ Քերականական դասերն առանձնացվում են ըստ շարահյուսական ֆունկցիայի ընդհանրության։ շարահյուսական վերլուծությունը Թլումֆիլդի մոտ դառնում է քերականական վերլուծության հիմքը։

Քերականությունը սահմանվում է որպես «ձևերի իմաստավոր կարգավորում» (arrangement). Նրա խնդիրը համարվում է զանազան կառուցվածքների (construction) վերլուծությունը, ընդ որում ձևաբանությունն զբաղվում է կապված ձևերի, այսինքն՝ առանձին շգործածվող ձևերի (իմա՞ բառի կառուցվածքային տարրերի) վերլուծությամբ, շարահյուսական գաղափարը տիպերի վերլուծությամբ։ Քանի որ բառի կառուցվածքային տարրերը ձևույթներն են, ուստի և Թլումֆիլդն իր ուշադրությունը ձևաբանության մեջ կենտրոնացնում է դրանց վրա։ Բառը փաստորեն դադարում է ձևաբանական վերլուծության միավոր լինելուց։ Ձևույթների առանձին խմբերի իմաստային տարրերությունները ուշադրության շեն առնվում, և բոլոր ձևույթներն ընկնում են միենույն շարքի մեջ։ Զեռույթը Թլումֆիլդի համար քերականական վերլուծության նվազագույն միավորն է, ֆրազը (նախադասությունը)<sup>2</sup>՝ առավելագույն միավորը։ 1926 թ. Թլումֆիլդը այդ երկու միավորը սահմանում էր մաթեմատիկական հայեցակետով, որը հետագայում վերանայվում է միայն ըստ արտահայտման

<sup>1</sup> L. Bloomfield, Language, 1933, էջ 185.

ձեի. ձեռւյթը սահմանվում է որպես «նվազագույն ձև», «ֆրազը» (նախադասությունը՝ որպես «առավելագույն կառուցվածք (maxitum construction) արտասանվածքի մեջ»). այդ երկուսի համար տրվում են հետեւյալ մաթեմատիկական պոստովատները. 1) «Նվազագույն չ-ը այն չ-ն է, որ բաղկացած չէ ավելի փոքր չ-ից»<sup>1</sup>. 2) «Առավելագույն չ-ն այն չ-ն է, որը ավելի մեծ չ-ի մասը չէ»<sup>2</sup>; Բառարանը Բլումֆիլդը փաստորեն վերածում է քերականության հավելվածի. նրա խնդիրն է համարվում տալ տվյալ լեզվի բոլոր ձեռւյթների ցանկը, դրանցից յուրաքանչյուրի ձեռական խմբերը, այլև որևէ բանով արտասովոր բարդ ձեռերի ու զուգորդումների ցանկը<sup>3</sup>: «Լեզվի ձեռւյթների ողջ ֆոնդը նրա բառարանն է», — գրում է Բլումֆիլդը<sup>4</sup>: Նշելի է, որ ձեռարանական վերլուծության մեջ Բլումֆիլդը կարեոր չի համարում բառաթեքական և բառափոխական ձեռւյթների տարբերությունը, շարահյուսական վերլուծության մեջ՝ զուգորդման տարբեր միավորների տարբերությունը. վերլուծման մեջ գիխավորը համարվում է միավորների զուգորդելիությունը:

Լեզվաբանական վերլուծության հիմք ընդունելով արտասանվածքը՝ Բլումֆիլդը սրա հնչունական վերլուծությամբ հասնում է հնչունական (ավելի ճիշտ՝ հնչույթաբանական) նվազագույն միավորին՝ հնչույթին, քերականական վերլուծությամբ՝ քերականական նվազագույն միավորին՝ ձեռւյթին: Հնչունի ֆիզիկական և ֆիզիոլոգիական կողմերը Բլումֆիլդի ուշադրությունը գրավում են երկրորդաբար. գիխավորը հնչունների մեջ այն տարբերիչ հատկանիշներն են (distinctive feature), որոնք առանձնացվում են խոսողի և լսողի կողմից. հնչույթի սահմանվում է որպես «տարբերիչ հնչունական հատկանիշի նվազագույն միավորը» (a minimum unit of distinctive sound feature)<sup>5</sup>: Այս առումով զուտ հնչունական (ակուստիկական ու ֆիզիոլոգիական) կողմը կարեոր չի համարվում. կարեորը տարբերիչ կողմն է, այն, ինչ տարբերում է տվյալ հնչույթը մյուսներից. «Հնչույթի նշանակությունը նրա հնչունական ալիքների իրական կերպավորման (կոնֆիգուրացիայի) մեջ չէ, այլ բացառապես տվյալ լեզվի մյուս բոլոր հնչույթներից ունեցած

<sup>1</sup> L. Bloomfield, A. Set of Postulates, „Language“, 1926, № 3, էջ 155.

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 158.

<sup>3</sup> L. Bloomfield, Language, 1933, էջ 26.

<sup>4</sup> Նույն տեղը, էջ 162.

Նույն տեղը, էջ 78.

տարբերության մեջ»<sup>1</sup>: Այսպիսով, Բլումֆիլդը հնչույթը կտրում է նրա նյութական-ֆիզիկական հիմքից, դիտում գուտ փունկցիոնալ առումով, անկախ նյութական էությունից. սրանով իսկ հնչույթի ուսմունքը մի կողմից՝ կապվում է Սեպիրի «կաղապարների» ուսմունքի հետ, մյուս կողմից՝ հիմք տալիս հնչույթաբանության բնագավառում ամերիկյան նկարագրական լեզվաբանության և եվրոպական (հատկապես կոպենհագենյան) ստրուկտուրալիստների հայցքների մերձեցման համար:

Իր քերականական վերլուծության մեկնակետը համարելով արտասանվածքը՝ Բլումֆիլդը հիմք է ընդունում սովորական պարզ նախադասությունների մի շարք (John բառ away «Ձոնը վագեց հեռու»). John ունի «Ձոնն ընկավ» և այլն): Այդ վերլուծության մեջ Բլումֆիլդը նպատակ է դուռմ բացահայտել, Սոսյուրի տերմինով ասած, սինտագմատիկ հարաբերությունները: Նրա ուշագրությունը կենտրոնացած է զուգորդելիության հարցի վրա. զուգորդման բաղադրիչների (constituents) «ընտրությունը» (նրանց բնույթի հարցը) դիտվում է լոկ որպես զուգորդելիության որոշ առանձնահատկությունների պարզաբանման հիմք: Բլումֆիլդի որոշ հետանորդների (հատկապես Հառիսի) մոտ վերլուծությունն է՝ լ ալելի ձևական բնույթ է ստանում, և զուգորդման բաղադրիչների քերականական նշանակությունը դադարում է ընդհանրապես ուշագրություն գրավելուց<sup>2</sup>: Բլումֆիլդը տարբերում է, ինչպես նշեցինք, կապված և ազատ ձևեր. կապված ձև (a bound form) համարվում է «այն լեզվական ձևը, որ երբեք մենակ չի արտասանվում»<sup>3</sup>. մնացած «լեզվական ձևերը» (John բառ away և այլն) համարվում են «ազատ ձևեր»: Բառը սահմանվում է որպես «նվազագույն աղատ ձև», ֆրագր (phrase)<sup>4</sup> որպես երկու ազատ ձևերի զուգորդում: Այսուհանդերձ, բարդ բառերի և բառազուգորդումների տարբերակման հարցում Բլումֆիլդը անհրաժեշտ պարզության չի հասնում: Զուգորդման վերլուծության ժամանակ Բլումֆիլդը անհրաժեշտ է համարում տարբերել «անմիջական բաղադրիչներ» (immediate constituents) և «ծայրագույն բաղադրիչներ» (ultimate constituents). անմիջական բաղադրիչներ Բլումֆիլդը առանձնացնում է միշտ երկուսը (հմմտ. թօռ John//բառ away «Խեղճ Ձոնը //վագեց հեռու»), սրանց

<sup>1</sup> L. Bloomfield, Language, 1933, էջ 78.

<sup>2</sup> Հմմտ. M. M. Գյշման, Տիշ. աշխ., էջ 149.

<sup>3</sup> L. Bloomfield, Language, 1933, էջ 160.

մեջ էլ, ըստ հնարավորության, դարձյալ երկուար (հմմտ. քօօր//John, «խեղճ//Ձոնը», բառ//away «վազեց//Հեռու», վերջին բառի մեջ դարձյալ երկուար՝ ա//way) և այսպես մինչև «ծայրագույն բաղադրիչներին»՝ ձեռվյժներին հասնելը (քօօր John բառ away ֆրազի մեջ, այսպիսով, կա 5 «ծայրագույն բաղադրիչ» (ձեռվյժ)<sup>1</sup> 1. քօօր, 2. John, 3. բառ, 4. ա- և 5-way): Ձեռվյժների իմաստի («սեմեմաների») ուսումնասիրությունը թլումֆիլդը լեզվաբանի գործը շի համարում: Այսպես, շարահյուսության դերը, ըստ թլումֆիլդի, պետք է լինի տալ լոկ «զուգորդումների և ձեւական դասերի ձեւական սահմանումը»<sup>1</sup>:

Թլումֆիլդի արժանիքը պետք է համարել լեզվական վերլուծությանն ըստ հնարավորին լրիվ ընդգրկում տալու ձգտումը: Հիմք ընդունելով բանավոր խոսքի ակտը, արտասանվածքի վերլուծությունը՝ թլումֆիլդը փորձում է իր վերլուծության մեջ ընդգրկել ոչ միայն հնչույթներով արտահայտված իմաստային միավորները, այլև քերականական իմաստային միավորների դրսեորմանը ծառայող այնպիսի միջոցները, ինչպիսիք են շարադասությունը, ձայնի մոդուլյացիան (ուժը և բարձրությունը), բաղադրիչների այնպիսի հնչյունական ձեւափխությունը, որ պայմանավորված է նրանց միացման բնույթով (դադարի առկայությամբ կամ բացակայությամբ) և այլն, եթե բառարանի մեջ նվազագույն իմաստավոր միավորներ են «րառային ձեռվյժներ», ապա քերականության մեջ այդպիսի նվազագույն միավորներ են ծառայում «քերականական ձեռվյժները» կամ այսպես կոչված տագմեմաները. բառային ձեռվյժի (մորֆեմայի) իմաստը թլումֆիլդը կոչում է «սեմեմա», տագմեմայի իմաստը՝ «էպիսեմեմա»: Բառային ձեռվյժը կամ մորֆեման ու քերականական ձեռվյժը կամ տագմեման միավորվում են մի ընդհանուր «գլոսսեմա» անվան տակ. գլոսսեմայի իմաստը կոչվում է «նոեմա»: Միաժամանակ նշվում է, որ բառային ձեռվյժները այնպես են հարաբերում հնչույթներին, ինչպես քերականական ձեռվյժները կամ տագմեմաները՝ տաքսեմաներին: Այսպիսով, հնչույթները բառային նվազագույն իմաստագուրկ միավորներ են, տաքսեմաները՝ քերականական: Տաքսեմաները լինում են չորս տեսակ՝ 1) շարադասություն, 2) մոդուլյացիա, 3) հնչյունական ձեւափխություն (հերթագայություն) և 4) ընտրություն (selection). վերջին դեպքում թլումֆիլդը նկատի ունի զուգորդվող բաղադրիչների տի-

<sup>1</sup> „Language“, 1931, № 3, Թիսի գրքի զբախոսականը, էջ 204:

պը, այս կամ այն ձեւական խմբին պատկանող բառերի (իմա՝ խոսքի մասերի, օրինակ՝ բայի, ածականի) ընտրությունը, ընդ որում այդ խմբերը և ենթախմբերը որոշվում են ըստ շարահյուսական՝ ֆունկցիայի և զուգորդելիության (այս կամ այն ածանցի կամ վերջավորության հետ զուգորդվելու կամ չզուգորդվելու հմտության)։ «ուղղական արտահայտությունների ձեւական դաս», որ բաժանվում է եղակիի և հոգնակիի ձեւական ենթադասերի, «անձնական գոյական արտահայտությունների ձեւական դաս», «անորոշ արտահայտությունների ձեւական դաս» և այլն։ Բլումֆիլդը բողոքում է խոսքի մասերի տրադիցիոն ուսմունքի դեմ՝ գտնելով, որ այս դեպքում նկատի է առնվում բառերի իմաստը, մինչդեռ բառերի խմբավորման հիմք կարող է ծառայել նրանց շարահյուսական ֆունկցիան, զուգորդման մեջ կատարած դերը։

### 6) Յորմալ-անալիտիզմ

Յորմալ-անալիտիզմի ուղղության ձեւավորումը. — Բլումֆիլդի լեզվաբանական կոնցեպցիան և լեզվաբանական վերլուծության սկզբունքները հետագա ձեւափոխության են ենթարկվում «լեզվի մաքուր վերլուծության» դպրոցի ներկայացուցիչների կողմից. որոնք մեծ մասամբ Բլումֆիլդի աշակերտներն են։ Նրանք գրադարձում են գերազանցապես ձեւական վերլուծությամբ, աշխատում մի կողմից՝ լեզվաբանական վերլուծությունից դուրս մղել իմաստը, մյուս կողմից՝ այդ վերլուծությունը մեկուացնել լեզվի քննության հետ կապված մյուս բնագավառներից, քննության առնել միայն «զուտ լեզվաբանական փաստը»։ Այսպիսով, այս դպրոցի ներկայացուցիչներին հատուկ են ֆորմալիզմը և իմանենտիզմը։ Այս դպրոցի ներկայացուցիչները իրենց հայացքներով ու մեթոդներով աստիճանաբար մոտենում են ելքոպական ստրուկտուրալիզմներին։ Է. Հոգենը «Փամանակակից լեզվաբանության ուղղությունները» հոդվածում<sup>1</sup> և Ելմալեկի՝ դրբիվ գրած գրախոսականում<sup>2</sup> նշում է, որ ամերիկյան և կոպենհագենյան ստրուկտուրալիզմը համընկնում են ոչ միայն հիմնական գծերով, այլև էական մանրամասներով, և որ տարբերությունը գերազանցապես տերմինաբանության մեջ է։

<sup>1</sup> E. Haugen, Directions in Modern Linguistics, „Language“, 1951, № 3.

<sup>2</sup> IJAL, 1954, XX, № 3.

Ֆորմալ-անալիտիզմի ուղղության ներկայացուցիչները աշխատում են ինչպես թլումֆիլդի ստրուկտուրալ վերլուծության ընդհանուր մեթոդների կատարելագործման, այնպես էլ դրանք առանձին լեզուների նկատմամբ կիրառելու ուղղությամբ։ Նրանց ուշադրությունը կենտրոնացած է հնչույթային և ձևույթային վերլուծության բնագավառների վրա<sup>1</sup>։

Կարենոր նշանակություն տալով սիստեմին՝ ֆորմալ-անալիտիզմի ներկայացուցիչները ամեն ինչ զոհում են հանուն սիստեմի, հանուն նկարագրության սկզբունքների միասնության։

Իիստ հազվադեպ փորձեր են միայն կատարվում ամերիկյան նկարագրական լեզվաբանության վերլուծական սկզբունքները կիրառելու պատմական հայեցակետով, ընդ որում դրանք սահմանափակվում են փաստորեն միայն հնդախեթական պրոբլեմով և անգրեթենի պատմությամբ<sup>2</sup>։

Նկարագրական լեզվաբանության վերլուծական մեթոդները տեղ են գտնում և բարձրագույն դպրոցների տևուցման պրակտիկայում։ Փորձեր են արվում դրանց ուսուցման լայն հիմքեր տալու։

Նշելի է, որ ամերիկյան նկարագրական վերլուծության մեթոդները տեղ են գտնում և բարձրագույն դպրոցների տևուցման պրակտիկայում։ Փորձեր են արվում դրանց ուսուցման լայն հիմքեր տալու։

Ամերիկայում հնչունաբանության, հատկապես փորձառական հնչյունաբանության մեջ հանդես է եկել մի նոր ճյուղ՝ ակուստիկական հնչյունաբանությունը, որ հնչյունաբանական հարցերը քննում է լսողի դիրքերից՝ սրանով իսկ նպաստելով հնչույթաբանական տեսության հիմնավորմանը<sup>3</sup>. բուն հնչյունաբանական հարցերը ներկայացված են Ք. Վ. Փայկի և Ռ.-Մ. Ս. Հեֆների ամփոփիչ աշխատություններով<sup>4</sup>։

Առանձին ուշադրություն է հատկացվում լեզվական երևոյթ-

<sup>1</sup> Հմմտ. Մ. Մ. Գுխման, հիշ. աշխ., էջ 164.

<sup>2</sup> Հմմտ. G. Trager and H. Smith, Chronology of Indo-Hittite, SIL, VIII, 1950. The Chronology of North-European, AA, LV, 1953. M. L. Samuels, The Study of Old English Phonology, TPhS, 1952 և այլն։

<sup>3</sup> M. Joos, Acoustic Phonetics, Baltimore, 1948.

<sup>4</sup> K. L. Pike, Phonetics, Ann Arbor, 1942. R.-M. S. Heffner, General Phonetics, Madison, 1951.

Ների վիճակագրական ուսումնասիրությանը. այս բնագավառում առանձնապես հայտնի են Ցիպֆի աշխատությունները: Ազգրնապես Ցիպֆը փորձում էր որոշ հարաբերություն հաստատել հնչույթների հաճախականության և պատմական հնչունափոխության միջև, ապա ընդարձակում է իր քննության շրջանակները և ներառում լեզվական նաև այլ երեսություններ։ Լեզվական վիճակագրության հարցերով զբաղվում են և Մարտին Զուսն ու է. Հոգենը:

Ժեստերի ուսումնասիրության հետաքրքիր փորձ է կատարել Բիրդուիստելը<sup>1</sup> այսպես կոչված կինեսիկայի (cinesics) անվան տակ: Ֆոնի, ալլոֆոնի և ֆոնեմայի անալոգիայով նա տարբերում է կին, ալլոկին և կինեմա: Կինեսիկայի գոյությունը Բիրդուիստելը հնարավոր է համարում կինեմաների ձեռքբերովի լինելու գեպքում, բայց Դարվինից սկսած՝ ցույց է տրվում տարբեր կուտարանների ներկայացուցիչների մոտ արտահայտության եղանակների նմանությունը, մանավանդ ուժեղ հույզերի գեպքում:

Ամերիկյան նկարագրական լեզվաբանության ներկայացուցիչները վերլուծության եղանակների բարելավման փորձերի հետ կապված՝ ներմուծում են նոր տերմիններ ու ըմբռնումներ, որոնք զգալի շափով տարբերվում են ելքության լեզվաբանության տարրածված տերմիններից ու ըմբռնումներից: Նրանց տերմինաբանության կարևոր սկզբունքներից են՝ 1) լեզվաբանության բաժինները և լեզվաբանական դիսցիպլինները նշանակելու համար - լոգիա (-logy, -բանություն) բաղադրիչի փոխարեն -իկա (-ics) մասնիկի գործածությունը՝ ֆոն եմիկա (phonemics, փոխ. ֆոն ու լոգիա), մոռֆեմիկա (morphemics), մոռֆոֆոն եմիկա կամ մոռֆոն եմիկա (morphophonemics, morphophonemics, հմմտ. Պրագայի խմբակի մոռֆոնութիւն ու լոգիա կամ մոռֆոն ու լոգիա տերմինը), նույնիսկ տակ տիկա (tactics, ձայնի հատկությունների իմաստային արժեքի ուսմունքը) և սինտակսիկա (syntaxics). 2) լեզվաբանական վերլուծության գլխավոր միավորները նշանակելու համար - եմպե (-eme) մասնիկի գործածություն-

<sup>1</sup> G. K. Zipf. Relative Frequency as a Determinant of Phonetic Change, Cambridge, Harvard, University Press, 1929. Selected Studies of the Principles of Relative Frequency in Language, Cambridge, 1932. The Psycho-Biology of Language, Cambridge, 1935. Human Behaviour and the Principle of Least Effort, 1949.

<sup>2</sup> R. L. Birdwhistell, Introduction to Kinesics, an Annotation System for Analysis of Body Motion and Gesture, Washington, 1952.

նը (ինչպես Եվրոպայում, բայց ավելի լայն տարածմամբ)՝ ֆռն եմա (phoneme), մորֆեմա (morpheme), սեմեմա (sememe), գրաֆեմա (grapheme), տագմեմա (tagmeme) և այլն. 3) Հիշված միավորների տարրերակները նշանակելու համար մի կողմից՝ ալլո- (allo-, այլա-) նախաբաղադրիչով բառերի գործածությունը՝ ալլօֆոն (allophone), ալլօմորֆ (allomorph), ալլոսեմ (alloseme), ալլօգրաֆ (allograph) և այլն, մյուս կողմից՝ -եմանվ կազմված բառերի այդ մասնիկի բացթողումը՝ ֆոն (phone), մորֆ (morpheme) և այլն, ընդ որում որոշ տարրերակում է անցկացվում այս երկու կարգի տերմինների միջև (օր.՝ ֆոները նկատի ունեն հնչույթների դիրքային տարրերակները). 4) բազմաթիվ այլ կարգի տերմինների ու հասկացությունների ներմուծումը՝ սուբստիտուցիա (substitution), անմիշական բաղադրիչներ (immediate constituents), ծայրագույն բաղադրիչներ (ultimate constituents), բաղադրություններ (constituents), ալտերնանտ (alternant) և այլն:

Նկարագրական լեզվաբանության ներկայացուցիչների ողջ ուշադրությունը կենտրոնացված է լեզվի կառուցվածքի սինխրոնիկ նկարագրության տեխնիկան բարելազելու վրա. քննության տեխնիկացումը և ձեսկանացումը կազմում են նրանց գործունեության քվինտ-էսենցիան. քննության տեխնիկացման ձգտումն արտահայտվում է նույնիսկ տերմինների ընտրության մեջ (հմմտ. մի կողմից՝ ֆոնեմիկա, մորֆեմիկա և այլն և մյուս կողմից՝ տեխնիկա, մեխանիկա և այլն): Վերլուծության տեխնիկայի «բարելազման», միասնականացման, մաթեմատիկանացման և հասկացություններից զերծ նկարագրության այս ձգտումն է, որ Հառիսին, Ֆյոդերինին, Թրեյչերին, Բլուխին, Սմիթին հանգեցնում է իմաստը լեզվական վերլուծությունից լիովին դուրս մղելու գաղափարին. նշելի է, սակայն, որ ոչ բոլորն են վարվում նման «հետևողականությամբ»: Ամերիկյան ստրուկտորալիստները ևս լույսայն կամ ոչ լույսայն դիմում են իզդմորֆիզմի (զուգաձեռւթյան) սկրպունքին՝ հնչույթային վերլուծության սկզբունքները կիրառելով ձևույթային և շարահյուսական վերլուծության նկատմամբ: Նկարագրական ողջ տեխնիկան հանգեցվում է փաստորեն արտասանվածքի (utterance) բաժանումներին (երկատումներին) և քննվող ստացվող միավորների դասակարգմանը՝ ըստ ֆունկցիայի ընդհանրության. այս տեսակետից կարևոր դեր է խաղում սուբստիտուցիայի՝ նույնատիպ ֆունկցիա կատարող միավորները մեկ խմբի

մեջ դասելու, ընդհանուր ֆունկցիա ունեցող միավորները իրարով փոխարինելու սկզբունքը։ Ավելորդ չէ նշել, որ ամերիկյան ստրուկտուրալիստների ոչ միայն տերմինները, այլև այդ տերմինների արտահայտած իմաստները իրարից երբեմն բավականաշափ տարբեր են. այսպես, եթե Պրագայի խմբակի ներկայացուցիչների մորֆոնուգիան վերաբերում է միևնույն ձևովթի հնչունական տարբերակների ուսումնասիրությանը, ապա ամերիկյան ստրուկտուրալիստները մորֆոնեմիկայի անվան տակ մեկ խմբի մեջ են միավորում բոլորովին տարբեր ծագում ունեցող ձևույթների քննությունը, եթե այդ ձևույթները կատարում են միևնույն ֆունկցիան, ունեն նույն իմաստային ծավալը։

Յորմալ-անալիտիզմի ուղղության ներկայացուցիչների վերլուծական տեխնիկայի մեկնակետը Բլումֆիլդի վերլուծման եղանակն է։ Բլումֆիլդի «Լեզու» գրքի լույս տեսնելուց անմիջապես հետո սկսվում են հնչույթաբանական վերլուծության առանձին հարցերի քննարկման, Բլումֆիլդի վերլուծման տեխնիկայի բարելավման, լրացման, հակասական կողմերի հաղթահարման, կիրառման սահմանների ընդարձակման փորձերը։ Հնչույթային վերլուծության հարցերը ներգրավում են Մ. Սուողեշին, Ռ. Ֆ. Թուողելիին, Զ. Ֆ. Հոգեստին, Զ. Լ. Թրեյզերին, Հ. Լ. Սմիթին, Ք. Լ. Փայկին, Զ. Ս. Հառիսին, Է. Հոգենին, Ռ. Ս. Ուելսին և ուրիշներին<sup>1</sup>։ Քննության առարկա են դառնում հնչույթային արժեքի որոշման այնպիսի դըժ-

<sup>1</sup> M. Swadesh, The Phonetic Principle, „Language“, X, 1934, էջ 117—129. W. F. Twaddell, On Defining the Phoneme, LM, № 16, Baltimore, 1935. C. F. Hockett, A System of Descriptive Phonology, „Language“, XVIII, 1942, էջ 3—21. G. L. Trager and B. Bloch, The Syllabic Phonemes of English, „Language“, XVII, 1941. B. Bloch and J. L. Trager, Outline of Linguistic Analysis, 1942. Z. S. Harris, Simultaneous Components in Phonology, „Language“, XX, 1944. R. S. Wells, The Pitch Phonemes of English, „Language“, XXI, 1945, էջ 27—39. K. L. Pike, The Intonation of American English, Ann Arbor, 1945. M. Swadesh, The Phonetic Interpretation of Lang Consonants, „Language“, XIII, 1937, էջ 1—10. G. L. Trager, The Phonemic Treatment of Semi-Vowels, „Language“, XVIII, 1942, էջ 220—223. B. Bloch, Phonemic Overlapping, AS, XVI, 1941, էջ 278—284. B. Bloch, A Set of Postulates for Phonemic Analysis, „Language“, XXIV, 1948, էջ 3—46. K. L. Pike, Grammatical Prerequisites to Phonemic Analysis, „Word“, III, 1947, էջ 15—72. C. F. Hockett, Two Fundamental Problems in Phonetics, SL, VII, 1949. C. C. Fries and K. L. Pike, Coexistent Phonemic Systems, „Language“, XXV, 1945 և այլն։

վարին դեպքերը, ինչպիսիք են երկար ձայնավորները, կիսաձայնները, երկբարբառները, կրկնակ հնչյունները, ձայնի հատկությունները (ուժ, բարձրություն), դադարի ազդեցությունը, այլև հնչյունական ու քերականական կառուցվածքի փոխհարաբերության, գրական և բարբառային հնչույթային տարրերակների փոխհարաբերության հարցերը։ Մեծ ուշադրություն է հատկացվում հնչույթային վերլուծության մշակված սկզբունքները տարրեր լեզուների նկատմամբ կիրառելուն, հատկապես անգլերենի հնչույթային կառուցվածքի ուսումնասիրությանը։ Հնչույթային վերլուծությանը այսպիսի մեծ ուշադրություն հատկացնելը մասմբ էլ բացատրվում է անգլերենի հնչյունական կառուցվածքի առանձնահատկություններով։

Ամերիկյան ստրուկտուրալիստները զանց են առնում Պրագայի ստրուկտուրալիստների այնպիսի կարենոր սկզբունքները, ինչպիսիք են դիրքի շեղոքացման և արխիֆոննեմայի (գերհնչույթի) գաղափարները<sup>1</sup>։ Այս առումով Հառիսը փորձել է որոշել հարցը՝ մտցնելով հնչույթային միաժամանակյա բաղադրիչների (simultaneous components) գաղափարը<sup>2</sup>: Հառիսի բաղադրիչային վերլուծությունը կիրառվել է Հոքետի և ուրիշների կողմից: Բլոխը առաջ է բաշել այն սկզբունքը<sup>3</sup>, որ տվյալ հնչյունը չի կարող պատկանել մեկից ավելի հնչույթների (cannot belong to more than one phoneme):

Հնչույթային վերլուծության բնագավառում կատարվածի յուրատեսակ ամփոփում են տալիս «Փայկի «Ֆոնեմիկան», Հոքետի «Հընչույթաբանության ձեռնարկը», այլև Բլոխի ու Թրեյչերի և Թրեյչերի ու Սմիթի լեզվական վերլուծության ընդհանուր ձեռնարկները<sup>4</sup>:

Հնչույթային վերլուծության հարցերից անցում է կատարվում դեպի մորֆոֆոննեմիկան և ընդհանրապես ձեռւյթային ու շարահյուսական վերլուծության հարցերը, որոնցով գրաղվում են Զ. Ս. Հառիսը, Ք. Լ. Փայկը, Ռ. Ս. Ուելսը, Զ. Հոքետը, Ռ. Ս. Փիտմա-

<sup>1</sup> Հմմա. R. A. Hall Jr., American Linguistics, 1925—1950, AL, 1951, 3, էջ 117.

<sup>2</sup> L. S. Harris, Simultaneous Components in Phonology, „Language“, XX, 1944, էջ 181—205.

<sup>3</sup> B. Bloch, Phonemic Overlapping, AS, XV, 1941, էջ 278—284.

<sup>4</sup> K. L. Pike, Phonemics: A Technique for Reducing Languages to Writing, Ann Arbor, 1947. Ch. Hockett, A Manual of Phonology, Baltimore, 1955. B. Bloch and G. L. Trager, Outline of Linguistic Analysis, 1942. G. L. Trager and H. L. Smith, An Outline of English Structure, 1951.

նը, Յու. Ա. Նայդան, Բ. Բլոխը, Զ. Լ. Թրեյզերը, Հ. Լ. Սմիթը և ուրիշները: Մորֆոֆոնեմիկայի հարցերը, Բլումֆիլդից սկսած, առանձնապես զբաղեցնում են Մ. Սուոգեշին, Ս. Ֆ. Ֆյովելինին, Զ. Ֆ. Հոքետին, Ռ. Ս. Ուելսին և ուրիշներին: Գլխավոր զբաղեցնող պրոբլեմները ձևաբանական ու շարահյուսական միավորների վերլուծման (բաժանման, բաղադրիչների առանձնացման) և դասակարգման, ձևույթների հերթագայությունների ուսումնասիրության և այլն հարցերն են<sup>1</sup>:

Այս բնագավառում առանձին տեղ են գրավում Հառիսի հոդվածները և մանավանդ նրա ամփոփիչ աշխատանքը՝ «Մտրուկառարալ վերլուծության եղանակները»<sup>2</sup>: Հառիսը փորձում է տալ լեզվաբանական բոլոր միավորների վերլուծության ու դասակարգման ընդհանուր սկզբունքներ՝ հենվելով այդ միավորների ալտերնանտների (տարրերակների) և զուգորդումների (կոմբինացիաների) մանրամասն նկարագրության վրա: Այս գեպքում նա դիմում է մաթեմատիկական ձևակերպումների ու սիմվոլների: Ոմանք նրա վերլուծության համառոտության ու ճշգրտության ձգտումը համեմատում են Պանինի նկարագրության եզանակի հետ<sup>3</sup>:

Զեռվային և շարահյուսական վերլուծության եղանակների ամփոփման փորձերի մեջ նշելի են Յու. Ա. Նայդալի «Զեաբանությունը» և «Նարահյուսությունը»<sup>4</sup>, այլև Բլոխի ու Թրեյզերի և Թրեյզերի ու Սմիթի՝ արդեն հիշատակված ձեռնարկները:

<sup>1</sup> K. L. Pike, *Taxemes and Immediate Constituents*, „Language“, XIX, 1943, էջ 65—82. R. S. Wells, *Immediate Constituents*, „Language“, XXIII, 1947, էջ 81—117.

Ch. F. Hockett. *Problems of Morphemic Analysis*, „Language“, XXIII, 1947, էջ 313—343. R. S. Pittman, *Nuclear Structures in Linguistics*, „Language“, XXIV, 1948, էջ 287—292. E. A. Nida, *The Identification of Morphemes*, „Language“, XXIV, 1948, էջ 414—441. The Analysis of Grammatical Constituents, „Language“, XXIV, 1948, էջ 168—177.

L. Bloomfield, *Menomini Morphophonemics*, TCLP, VIII, 1939 էջ 105—115. M. Swadesh and C. F. Foegelin, *A Problem in Phonological Alternation*, „Language“, XV, 1939, էջ 1—11. C. F. Foegelin, *A Problem in Morpheme Alternants and their Distribution*, „Language“, 1947, № 3. Ch. F. Hockett, *Pelting Morphophonemics*, „Language“, XXVI, 1950, էջ 63—85. R. S. Wells, *Automatic Alternation*, „Language“, XXV, 1949, էջ 99—116.

<sup>2</sup> Z. S. Harris, *Methods in Structural Linguistics*, Chicago, 1951.

<sup>3</sup> R. A. Hall Jr., հետաքաջություն, էջ 121.

<sup>4</sup> E. A. Nida, *Morphology. The Descriptive Analysis of Words*, Glendale, 1944. *Syntax. A Descriptive Analysis*, Glendale, 1946.

Փայկը և Փիտմանը մտցրել են «միջուկի» և «արբանյակի» (nucleus and satellite) գաղափարները՝ տվյալ կապակցության հիմնական և լրացական անդամները տարրերակելու համար<sup>1</sup>. «The king of England» («Անգլիայի թագավորը») կապակցության մեջ the king-ը («թագավոր») «միջուկ» է, of England-ը («Անգլիայի») «արբանյակը», բայց «The king of England/opened Parliament» («Անգլիայի թագավորը//բացեց պառլամենտը») կապակցության նշված երկու մասերն էլ հավասարարժեք միջուկներ են:

Մ. Զուսը հանդես է բերում լեզվի մաթեմատիկական-տեխնիկական քննության ձգտում. նա փորձում է լեզվի իմաստային և հնչյունական ձևերը կտրել մի կողմից՝ իմաստի ու ելությունից, մյուս կողմից՝ ձայնի ու ելությունից և քննել մաթեմատիկական սիմվոլներով<sup>2</sup>: Սրանով նա մերձենում է Ելմսլեփի քննության եղանակին:

Բնութագրելով կոպենհագենյան և ամերիկյան ստրուկտորալիստների վերլուծական սկզբունքները՝ Հոգենը անցկացնում է հետեւյալ կարենոր զուգահեռները. «Սկզբունքորեն նրանք (ամերիկյան և կոպենհագենյան դպրոցները—Գ. Զ.) փորձում են տալ լեզվաբանական քննությունների մաթեմատիկական ձեակերպում (formulation),—գրում է Հոգենը: Հառիսը ինութագրել է իր շարահյուսական վերլուծությունը որպես «մաթեմատիկական». Ելմսլելը հայտարարում է, թե իր նպատակն է ստեղծել «լեզվաբանական հանրահաշիվ»: Հառիսը բացահայտորեն (expressly) մատնանշում է, թե իր վերլուծությունը զուտ ձեական է. Ելմսլելը բնութագրում է իր տեսությունը որպես հիմնված «բացառապես պոստուկատների ձեական սիստեմի վրա»: Երկուսն էլ փորձում են հեռանալ տրադիցիոն լեզվաբանության պատահական (haphazard) էմպիրիկ տերմինաբանությունից և հիմնել մի անդրլեզու (metalanguage), որ պետքական կիրնի ամեն մի լեզվի սինխրոնիկ նկարագրության մեջ: Սակայն նրանց բառապաշարը կարծես թե հնչույթ (rhöneme) բառից այն կողմը քիչ ընդհանուր բան ունի: Երկու խմբակն էլ կիրառում են վերլուծության մի սկզբունք, որ կարող է կոչվել երկմասնյա (bipartite) բաժանում. նրանք արտասանվածքը բաժանում են երկու (կամ երբեմն էլ ավելի) մասի և սրանցից յուրաքանչյուրը բաժանում են մինչև ծայրագույն բաղադրիչներին հասնելը:

<sup>1</sup> Pittman, Nuclear Structures in Linguistics, „Language“, 1948, էջ 287—292.

<sup>2</sup> M. Joos, Description of Language Design, JASA, XXII, 1950, էջ 701—709:

Ելմալկը սա կոչում է գեղուկտիվ եղանակ. Ուելսը կոչում է անմիջական բաղադրիչներով վերլուծություն: Այն, ինչ Ուելսը կոչում է բաղադրություն (constitute), Ելմալկը կոչում է դաս (class). այն, ինչ Ուելսը կոչում է բաղադրիչ (constituent), Ելմալկը կոչում է ածանցյալ (derivate): Այն, ինչ Ուելսը կոչում է կիզակետային դաս (focus class), Ելմալկը կոչում է պարագիպմ. այն, ինչ Ուելսը կոչում է հետեղական դաս (sequence class), Ելմալկը կոչում է շղթա: Այն տեխնիկան, որը երկու խմբակն էլ կիրառում են որևէ տվյալ բաղադրության բաղադրիչները որոշելու համար, հանդես է գալիս որպես մի բան (turns out to be one), որ ես այստեղ կկոչեմ փոխարինում (replacement): Փորձելով արտասանվածքի որևէ մասը փոխարինել այլ լեզվաբանական նյութով՝ անհրաժեշտ է որոշել, թե արտասանվածքը բաժանելի՞ է արդյոք և թե ինչպես պետք է լավագույն ձևով այն բաժանել: Այս տեխնիկան Հառիսի և Նրա հետեւրդների կողմից կոչվել է սուբստիտուցիա. Ելմալկը այն կոչում է կոմուտացիա (commutatōn test) և այն դարձնում իր ողջ տեսության հիմնական սկզբունքը (fundamental): Թերևս ամենակարենոր ընդհանուր գիծը այս հիմնական (basic) տեխնիկայի կիրառումն է ամեն տեսակ լեզվաբանական նյութի նկատմամբ՝ լեզվի ամեն մի մակարդակում՝ ամբողջական արտասանվածքից մինչև ֆոնը (phone):<sup>1</sup>

Ամերիկյան ստրուկտուրալիզմի մասին ավելի ամբողջական գաղափար տալու համար հետագա շարադրանքի մեջ կքննենք մի քանի աշքի ընկնող ներկայացուցիչների՝ կանգ առնելով նրանց կարենոր աշխատությունների վրա և անհրաժեշտ դեպքերում նշումներ անելով նաև այլ ներկայացուցիչների հայացքների մասին:

Զ. Հառիս.—Զ. Հառիսը մի շարք աշխատություններ է նվիրել ստրուկտուրալ վերլուծության սկզբունքներին. առանձնապես նշելի են նրա «Զեռույթի ալտերնանտները լեզվաբանական վերլուծության մեջ», «Զեռույթից արտասանվածք», «Խոսքի վերլուծությունը», «Հնչույթից ձևույթ», «Ապատեական ձևույթներ» հոդվածները և մանավանդ «Ստրուկտուրալ լեզվաբանության մեթոդները» գիրքը<sup>2</sup>:

<sup>1</sup> E. Haugen, Directions in Modern Linguistics, „Language“, 1951, № 3, էջ 212—214:

<sup>2</sup> Z. S. Harris, Morpheme Alternants in Linguistic Analysis, „Language“, 1942, XVIII, № 3. From Morpheme to Utterance, „Language“, 1946, XXII, № 3. Discourse Analysis, „Language“, 1952, XXXIII, № 1.

Իր այս աշխատությունների մեջ Հառիսն զբաղվում է ստրուկտուրալ վերլուծության մեթոդների հարցերով: Լեզվի տեսական հարցերը նրան քիչ են զբաղեցնում. այս տեսակետից որպես որոշ բացառություն կարելի է հիշատակել նրա գրախոսականը<sup>1</sup> Գրեյի «Լեզվի հիմունքները»<sup>2</sup> գրքի առթիվ, որտեղ նա պաշտպանում է ստրուկտուրալ վերլուծության մեթոդը և ընդհանրապես սինխրոնիկ վերլուծությունը՝ առավելություն տալով նրան դիախրոնիկ վերլուծության հանդեպ: Ստրուկտուրալ վերլուծության նպատակը Հառիսը սահմանափակում է լեզվի ձևական գծերի դասակարգմամբ՝ ըստ դրանց նմանության: Հնչույթները պիտի խմբավորվեն ըստ այդպիսի ձևական գծերի, ձևույթները՝ ըստ դրության և ըստ զուգորդելիության: Քանի որ ամեն մի լեզվի կառուցվածք (ստրուկտուրա) որոշվում է լեզվական միավորների ու դրանց հարաբերությունների բնույթով, ուստի և ստրուկտուրալ վերլուծության մեթոդի խնդիրը պետք է լինի ամենապարզ լեզվական միավորների՝ հնչույթների ու ձևույթների առանձնացումն ու դասակարգումը՝ դրանց ունեցած հարաբերությունների տիպերի հիման վրա: Լեզվական կառուցվածքի (ստրուկտուրայի) տարրերի հարաբերություններին այսպիսի կարեւոր նշանակություն տալը պետք է բացատրել եվրոպական ստրուկտուրալիստների, հատկապես կոպենհագենյան ստրուկտուրալիստների ազդեցությամբ<sup>3</sup>: Իր «Ստրուկտուրալ վերլուծության մեթոդները» գրքում Հառիսը նպատակ է դնում հենց այդ մեթոդների կոնկրետ բնութագրությունը: Նա ևս ստրուկտուրալ վերլուծությունը սահմանափակում է ձևական վերլուծությամբ՝ առանց վերլուծվող միավորների իմաստի հաշվառման: Միաժամանակ նա ևս պահանջում է լեզուն քննել իր մեջ և լեզվաբանությունը լիովին անշատել հոգեբանությունից, տրամաբանությունից ու փիլիսոփայությունից: Բանն այնտեղ է հասնում, որ Հառիսը բողոքում է լեզվական նշան և սիմվոլ գաղափարների դեմ, որովհետև այդ գաղափարները ենթադրում են լեզվի կառուցվածքից դուրս գտնվող բան: Լեզվական փաստերը պետք է առնվեն որպես լեզվի կառուցվածքի տարր՝ առանց հարաբերվելու

From Phoneme to Morpheme, „Language“, 1955, XXXI, № 2. Discontinuous Morphemes, „Language“, 1945, էջ 121—127. Methods in Structural Linguistics, Chicago, 1951.

<sup>1</sup> „Language“, 1940, XVI, № 3.

<sup>2</sup> L. H. Gray, Foundations of Language, New York, 1939.

<sup>3</sup> Հմմա. Ա. Մ. Գյուման, հիշ. աշխ., էջ 168.

որևէ արտաքին փաստի հետ. դրանք բացարձակ բնույթ ունեն: Քանի որ ստրուկտուրալ վերլուծության գլխավոր նպատակը դասակարգումն է, իսկ դասակարգումը հենվում է հարաբերակցություններ (կոռելյացիաներ) սահմանելու վրա, ուստի և Հառիսը վերջիշխությունների հանգում է հարաբերությունների ֆետիշացմանը, դրանց առաջին պլանի վրա մղելուն, հարաբերակից միավորներին երկրորդական տեղ տալուն, քննության առարկայի ապանյութականացմանը:

Նման ծայրահեղ գիծ է տանում և Ֆյոդելինը, որ իր «Լեզվաբանությունն առանց իմաստի և կուտուրան առանց բառերի» բնորոշ վերնագիրը կրող հոդվածում<sup>1</sup> լեզվական կառուցվածքը հանգեցնում է հնչույթների ու ձևույթների բաշխմանը տվյալ լեզվում, ընդ որում գտնում է, որ այդ միավորներն առանձնացնելիս շպետք է դիմել իմաստին: Այս առումով մարդու լեզվի և կենդանիների «արտասանվածքի» ողջ տարբերությունը հանգեցվում է նրան, որ կենդանական «արտասանվածքը» մեկ անվերլուծելի ձևույթ է, մինչդեռ մարդկային լեզուն բազմաձևույթ է, ուստի և վերլուծելի կառուցվածք ունի:

Լեզվական վերլուծության հիմնական միավորների առանձնացման ու սահմանման մեջ Հառիսը հետեւում է Բլումֆիլդին. նա այդպիսիներ է համարում ձևույթը՝ որպես նվազագույն իմաստավոր միավոր և արտասանվածքը՝ որպես առավելագույն իմաստավոր միավոր: Վերջինս բաղկացած է համարվում ոչ թե բառերից այլ ձևույթների հետևողական շարքից: Լեզվական ստրուկտուրա ասելով Հառիսը փաստորեն հասկանում է այդ ձևույթների ամբողջությունը և նրանց հաջորդական շարքը: Իր ուսումնասիրության մեջ Հառիսը նպատակ է դնում դասակարգել ձևույթներն ըստ նրանց դիրքի ու զուգորդելիության: Այսպիսի «ձեսականացված» վերլուծության դեպքում լեզվաբանին չի հետաքրքրում ձևույթի բնույթը՝ նյութական թե քերականական իմաստ ունենալը, որպես բառ, ածանց թե վերջավորություն հանդես գալը, այլ այն հանգամանքը, թե տվյալ ձևույթը ի՞նչ ձևույթներից առաջ կամ հետո կարող է հանդիպել, ի՞նչ դիրքում կարող է հանդես գալ, ի՞նչ ձևույթների հետ կարող է զուգորդվել: Իմաստային կողմի անտեսումը Հառիսը հիմնավորում է նրանով, որ այն կարող է լիովին փոխարինվել

<sup>1</sup> C. F. Føgelein, Linguistics without Meaning and Culture without Words, „Words“, V, № 1.

միավորների բաշխման ու զուգորդելիության գաղափարների կիրառությամբ. «Որևէ երկու A և B ձեռվթներ եթե տարբեր իմաստներ ունեն, — գրում է նա, — ապա ուրեմն որևէ տեղ տարբերվում են բաշխմամբ (distribution). Կան այնպիսի շրջապատներ, որոնց մեջ մեկը հանդիպում է, մյուսը՝ ոչ»<sup>1</sup>:

Հառիսը այսպես կոչված ձեահնչույթարանության կամ մորֆոնեմիկայի (կրճատ՝ մորֆոնեմիկայի)<sup>2</sup> բնագավառի առաջին հետազոտողներից մեկն է: Այդ բնագավառի ձեռվթային վերլուծության հիմքում դրվում են հնչույթային վերլուծության սկզբունքները, ձեռվթները քննվում են հնչույթարանական վերլուծության եղանակների անալոգիայով: Ինչպես որ հնչույթները հետեղական շարքի մեջ հանդես են գալիս դիրքային տարրերակների ձեռվ, և հնչույթային վերլուծության մեջ անհրաժեշտ է այդ տարրերակների փոխհարաբերության ու առաջացման պայմանների քննությունը, այնպես էլ ձեահնչույթարանությունը պետք է նկարագրի ու դասակարգի տարրեր ձեռվթների դիրքային տարրերակները և համեմատի դրանք իրար հետ: Զեահնչույթարանության քննության նյութը փաստորեն պետք է լինեն ձեարանական արժեք ունեցող հնչունական հերթագայությունները, բայց Հառիսը քննության բնագավառը լայնացնում է՝ ընդգրկելով գրեթե ողջ ձեռվթային վերլուծությունը: Լեզվաբանը, Հառիսի կարծիքով, պետք է նկարագրի, խմբավորի և համեմատի ձեռվթային բոլոր կարգի տարրերությունները: Զեռվթների հերթագայությունները Հառիսի կողմից քննվում են ըստ տվյալ ձեռվթների՝ այլ ձեռվթների հետ զուգորդվելու հնարավորության, այլ ձեռվթների նկատմամբ ունեցած դիրքի: ձեռվթների տարրերակները կամ հերթագայվող տիպերը համարվում են այդ ձեռվթների իրացաւմները տարրեր «լեզվաբանական շրջապատում», այսինքն՝ տարրեր բնույթի հարաբերակցությունների մեջ: Տվյալ ձեռվթի այսպիսի հերթագայվող տեսակները Հառիսը կոչում է ալտերնանտներ (հերթագայութներ): Զեահնչույթարանությունը հենց զրադշում է ձեռվթների ալտերնանտների հնչույթային կազմի տարրերություններով, դրանց համեմատությամբ և խմբավորմամբ: Սրանց խմբավորման մեջ Հառիսը հիմք է ընդունում ֆունկցիայի ընդհանրությունը: Միևնույն ֆունկցիան՝

<sup>1</sup> Z. S. Harris, Methods in Structural Linguistics, Chicago, 1951, էջ 7:

<sup>2</sup> Հմմա. Պրադայիք սաբուկտուրականատների մորֆոֆոնուողիան (կրճատ՝ մորֆոնուողիա):

կատարող միավորները խմբավորվում են՝ փաստորեն անկախ դրանց նյութական-հնչունական ձևավորումից։ Ֆունկցիայի ընդհանրության հիման վրա կարող են իրեն միևնույն ձևույթի ալտերնանտներ դիտվել ոչ միայն առանձնակի ձևույթները, այլև միևնույն ձևույթի հերթագայվող տարրերը։ Նման նիշերի բացակայության դեպքում իրեն ալտերնանտ կարող է դիտվել և զրոն. այսպես, օրինակ, անգլիական անցյալի ձևույթի տարրերակներ են համարվում ոչ միայն -id-ը, -d-ն և t-ն (հմմտ. want-ed [wɔnt-id] «ազգեց», answer-ed [ə:sənsə:d] «պատասխանեց», work-ed [wə:k-t] «աշխատեց», այլև, օրինակ, ei//u-ն (հմմտ. take [tɛik] «վերցնել» և took [tuk] «վերցրեց») և զրոն (հմմտ. cut «կտրել» և cut «կըտրեց»)։ Վերլուծության այս եղանակը տարածվում է նաև սուպլետիվ կազմությունների վրա, որոնք՝ որպես միևնույն ձևույթի ալտերնանտներ միավորելու համար հիմք է ժառայում ֆունկցիայի ընդհանրության և տարրեր ցեզվաբանական շրջապատում։ Տարրեր զուգորդումներում հանդես գալու փաստը. այսպես, I am «ես եմ» և we այց «մենք ենք» զուգորդումներում առ-ը և այց-ը Հառիսը դիտում է որպես միևնույն «լինել» ձևույթի ալտերնանտները, որովհետեւ դրանք ֆունկցիոնալ ընդհանրություն ունեն և հանդիպում են տարրեր լեզվաբանական շրջապատում։ Առ-ը «եմ», օրինակ, հանդիպում է միշտ I-ի («ես») հետ, մինչդեռ այց-ը («ենք») երբեք չի հանդիպում I-ի («եմ») մոտ։

Ձևույթային վերլուծությունը Հառիսը դիտում է որպես մի գործողություն, որի ժամանակ վերլուծողը առանձնացնում է նվազագույն իմաստավոր միավորները և քննում, թե ի՞նչ պայմաններում դրանք կարող են դասակարգվել որպես միևնույն ձևույթների ալտերնանտները։ Վերջիվերջո ձևույթները կտրվում են իրենց նյութական հիմքից ու դիտվում որպես որպես միավոր ֆունկցիայի մարմնավորող հարաբերակից տարրեր։

Իր «Ձևույթից արտասանվածք» հոդվածում Հառիսը նպատակ է դնում ըստ զուգորդելիության և դիրքային տարրերությունների ու ընդհանրությունների ձևույթային (NB ո՞չ բառային) խմբեր հաստատել. այս խմբերը նրա մոտ փոխարինում են խոսքի մասերին և հիմնված են զուտ ձևական հատկանիշների վրա։ Այսպես, մի խումբ են համարվում այն ձևույթները, որոնք հանդիպում են հոգնակերտ և մասնիկից ու նրա տարրերակներից առաջ և the հոդից

<sup>1</sup> Հմմտ. Ա. Ա. Գյուման. էջ. աշխ. էջ 178—180.

ու ածականներից հետո. այս խումբը Հառիսի մոտ համապատաս-  
խանում է գոյականներին և նշանակվում է N նիշով. մի այլ խումբ  
են համարլում այն ձևույթները, որոնք հանդիպում են անցյալի  
-ում կազմիչից ու -ուց մասնիկից առաջ և N (իմա՝ գոյականներ) +should, will և այլն կապակցություններից հետո. այս խումբը  
համապատասխանում է բայերին և նշանակվում է V նիշով. բայերի  
անցողական (Vd) և անանցողական (Ve) ենթախմբերն ել տար-  
բերացվում են նրանով, որ առաջինները հանդիպում են անուննե-  
րից առաջ, մինչդեռ երկրորդները չեն հանդիպում. Նման կարգի  
գործողություններով Հառիսը հաստատում է 33 ձեական խումբ,  
սրանք ել միավորում է ավելի մեծ խմբերի մեջ՝ նկատի ունենալով  
արդեն հիշված սուբստիտուցիայի կամ փոխարինման (substitution)  
սկզբունքը, այսինքն՝ այն, որ տվյալ միավորը կարող է տվյալ  
փունկցիայում փոխարինվել մի ուրիշով. Նման կարգի խմբավոր-  
ման մեջ են դրվում և բառազուգորդումները՝ նայած այն բանին,  
թե ի՞նչ ֆունկցիա են կատարում:

**Զ. Հռետա.**—Հոքետը հեղինակ է ինչպես հնչույթային, այնպես  
էլ ձևույթային վերլուծությանը նվիրված աշխատությունների: Հըն-  
շույթային վերլուծության հարցերին են նվիրված նրա բազմաթիվ  
աշխատանքները. սրանցից նշելի են «Նկարագրական հնչույթաբա-  
նության սիստեմը» հոդվածը<sup>1</sup> և առանձնապես «Հնչույթաբանու-  
թյան ձեռնարկը»<sup>2</sup>, որտեղ ի մի են բերված հեղինակի՝ այդ բնա-  
գավառի հետազոտության արդյունքները. սակայն այստեղ հեղի-  
նակը որոշ շեղում է կատարում ամերիկյան նկարագրական լեզվա-  
բանության սկզբունքներից և մոտենում Պրագայի ստրուկտորա-  
գիստներին, հատկապես Տրուբեցկոյին<sup>3</sup>: Զեռույթային վերլուծու-  
թյանը նվիրված ուսումնասիրություններից նշելի են նրա «Զեռույ-  
թային վերլուծության պրոբլեմները»<sup>4</sup> և «Դիտողություն «ստրուկ-  
տորայի»» մասին հոդվածները<sup>5</sup>:

<sup>1</sup> Ch. Hockett, A System of Descriptive Phonology, „Language“, XXIII, 1947, № 4.

<sup>2</sup> Ch. Hockett, A Manual of Phonology, Baltimore, 1955.

<sup>3</sup> Հմայ. Ա. Սլյուսարեա-ի գրախոսականը ՎՅ-ում, 1957, № 1, էջ 126—132:

<sup>4</sup> Ch. Hockett, Problems of Morphemic Analysis, „Language“, XXIII, 1947, № 4.

<sup>5</sup> Ch. Hockett, A Note on „Structure“, IJAL, XIV, 1948, էջ 269—271.

Իր հնչույթաբանական վերլուծության մեջ Հոքետը ելնում է լեզվի սիստեմայնության և լեզվի ու խոսքի հակադրության սույուղյան սկզբունքներից, ընդ որում սիստեմի հասկացությունը նրա մոտ, ինչպես այլ ստրուկտուրալիստների մոտ, հարաբերակցվում է սեպիրյան «կաղապարի» (pattern) ըմբռնման հետ: Լեզվի սիստեմը սահմանվում է որպես «սովորույթների» (habits) բարդ սիստեմ»<sup>1</sup>: Լեզվի սիստեմի մեջ Հոքետը տարբերում է 3 կենտրոնական և 2 եղրային ենթասիստեմներ: Կենտրոնական ենթասիստեմներն են՝ 1) քերականական սիստեմը (ձևույթների պաշարի և նրանց գուգորդումների ուսումնասիրությունը), 2) հնչույթային (ֆոնոլոգիական) սիստեմը (հնչույթների ու հնչույթային միավորների և դրանց գուգորդումների ուսումնասիրությունը) և 3) ձևահնչույթային (մորֆոնեմատիկ) սիստեմը: Եղրային ենթասիստեմներ են՝ 1) իմաստային (սեմանտիկ) սիստեմը, որը գուգորդում է ձևույթներն ու նրանց միացությունները մեզ շրջապատող աշխարհի առարկաների ու երեսույթների կամ առարկաների ու երեսույթների տեսակների հետ, և 2) հնչունական սիստեմը, որը ծառայում է որպես յուրատեսակ կողմ՝ հնչույթների անրնդհատ շարքը հնչունական ալիքների վերածելու համար: Լեզվի սիստեմը տարբերվում է ձայնարձակման այլ երեսույթներից նրանով, որ նախ՝ խոսքային ազդանշաններն ունեն միաժամանակ և՝ հնչույթային (ֆոնոլոգիական), և՝ քերականական կառուցվածք և երկրորդ՝ հենվում է այնպիսի հակադրությունների վրա, որոնց միջև անցողիկ գծեր չկան:

Խոսելով սիստեմի կամ «կաղապարի» և ստրուկտուրայի (կառուցվածքի) հարաբերության մասին՝ Հոքետը դրանց տարբերությունը հիմնում է լեզվի և խոսքի սոսյուգյան հակադրության վրա: «Կաղապարը սովորույթն է (habit), ստրուկտուրան՝ վարքը. կաղապարը լեզուն է, ստրուկտուրան՝ խոսքը. կաղապարը կուզտուրան է, կառուցվածքը՝ կուտուրայի դրսկորումը վարքի մեջ: Ստրուկտուրան հատուկ պատմական երեսույթի մասերի տարածածամանակային տեղադրությունն է, կաղապարն այն է, ինչին ավելի կամ պակաս մոտավորությամբ համապատասխանում է ստրուկտուրան»<sup>2</sup>:

Այսպիսով, հնչունական սիստեմը Հոքետը ներկայացնում է որպես վերացական սխեմա, կաղապար, որ իրանում է արտապահական շարժումների և հնչունական ալիքների միջոցով: Հոքետը

<sup>1</sup> Ch. Hockett, A Manual of Phonology, 1955, էջ 14.

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 176.

նպատակ է դնում կատարել այդ կաղապարի մաթեմատիկական փոխհարաբերությունների վերլուծությունը: Այս գեպքում, ինչպես ելամսկը և Կուրիլյավիչը, նա քննությունը կատարում է Հնչույթային սիստեմի հիերարխիկ բնույթի բացահայտման ձևով, ընդ որում վերլուծման մեջ դիմում է բլումֆիլդյան անմիջական բաղադրիչների օգնությանը: Նա վերլուծությունն սկսում է երկու դադարի միջև ընկած հատվածից՝ մակրոսեգմենտից: անմիջական բաղադրիչներով կատարվող վերլուծության հետ միասին Հոքետը նշում է և հնչույթաբանական վերլուծության այնպիսի հին մեթոդներ, ինչպիսիք են՝ 1) հակադրության ու լրացման, 2) հնչունական նույնության ու տարբերության, 3) կաղապարի հայասարակշունչային և 4) տնտեսման սկզբունքները:

Հնչույթը Հոքետն ըմբռնում է Պրագայի ստրուկտորալիստների նման և նշում է, որ ամերիկյան ստրուկտորալիստներն այդ ըմբռնումը խիստ լայնացնում են՝ դրա մեջ մտցնելով նաև ինտոնացիան, շեշտը, հնչունների կցույթը:

Հնչույթային վերլուծության հոքետյան եղանակը ներկայացնում է Հառիսի գործադրած եղանակի հետագա կատարելագործման մի փորձ: Ալտերնանտի փոխարեն Հոքետը գործածության մեջ է մտցնում «մորֆ» տերմինը, թեև որոշ տարբերություն է անցկացնում այդ երկու տերմինի միջև: ըստ նրա՝ ալտերնանտի մասին կարելի է խոսել որպես ձեռույթի արդեն ապացուցված դիքքային տարբերակի, այսինքն՝ երբ տվյալ տարբերակը որոշված է որպես այդպիսին, ակնհայտ բնույթ ունի: մորֆի մասին կարելի է խոսել այն դեպքում, եթե անհրաժեշտ է ապացուցել նրա՝ այս կամ այն ձեռույթի տարբերակ լինելը: Որպեսզի ձեռույթների կոնկրետ իրացումները խմբավորվեն որպես այս կամ այն ձեռույթի տարբերակները, անհրաժեշտ է, որ նրանք՝ 1) ունենան միենույն նշանակությունը, 2) շհանդիպեն միենույն լեզվաբանական շրջապատում և 3) դիպագոնով համընկնեն իրենց հակադրվող ալտերնանտների հետ: այսպես, անգլիական հոգնակիի -en և -s [z, s, ɪz] կազմիները կարող են դիտվել իրեն մորֆեր, որովհետև նույն նշանակությունն ունեն, չեն հանդիպում միենույն լեզվաբանական շրջապատում (-en-ը զուգորդվում է այնպիսի ձեռույթների հետ, որոնց հետ s-ը չի զուգորդվում: հմմտ. օքել «եզներ», բայց ոչ օքես. cowes «կովեր», բայց ոչ cowen) և դիպագոնով նույնն են իրենց հակադրվող եզակի թվի զրո ձեռույթի հետ: Այլ կերպ ասած՝ միենույն ձեռույթի

մորֆերը գտնվում են «ոչ հակադրական բաշխման մեջ» (in non-contrastive distribution)<sup>1</sup> և նշանակում են միևնույն բանը:

Զ. Թրեյչեր, Բ. Բլոխ, Հ. Սմիթ.—Զ. Թրեյչերը կրելէ և է. Սեպիրի, և Լ. Բլումֆիլդի ազդեցությունը. նա որոշ տարիներ աշխատել է է. Սեպիրի հետ միասին. բայց իր վերլուծության եղանակների մեջ անշուշտ տանում է Բլումֆիլդի գիծը: Նա աշխատում է վաշինգտոնի (Կոլումբիայի շտատ) համալսարանում և 1942 թ. հրատարակում է «Լեզվաբանական ուսումնասիրություններ» հանդեսը<sup>2</sup>: Թրեյչերը հեղինակ է ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձին լեզուների ուսումնասիրության հարցերին նվիրված աշխատությունների: Առանձնապես կարևոր են շարահյուսական վերլուծությանը նվիրված նրա ուսումնասիրությունները, որոնք Փայկի և Ուելսի հոդվածների հետ միասին այդ բնագավառի գլխավոր գործերն են: Որոշ գործեր Թրեյչերը հրապարակել է Բ. Բլոխի և Հ. Սմիթի հետ միասին: Նրա աշխատություններից հիշատակելի են Բ. Բլոխի հետ գրած «Աղյուսակներ հնչյունական նկարագրության սիստեմի համար», «Անգլերենի վանկային հնչույթներն» ու «Լեզվաբանական վերլուծության ուրվագիծը»<sup>3</sup>, Հ. Սմիթի հետ գրած «Անգլերենի կառուցվածքի ուրվագիծը»<sup>4</sup>, է. Հոլլի հետ գրած՝ «Կուլտուրայի վերլուծությունը»<sup>5</sup>, առանձին գրած՝ «Ակցենտուալ սիստեմի տեսությունը», «Կիսաձայնների հնչույթային քննությունը», «Լեզվաբանության առարկան»<sup>6</sup> և այլն:

Բ. Բլոխի այլ աշխատություններից նշելի են «Անգլիական բայի ներքին թեքումը», «Մի շարք պոստուլատներ հնչույթային վերլուծության համար» հոդվածները<sup>7</sup>:

<sup>1</sup> „Language“, 1947, № 4, էջ 328:

<sup>2</sup> Studies in Linguistics.

<sup>3</sup> B. Bloch and G. Trager, Tables for a System of Phonetic Description, New Haven, 1944. The Syllabic Phonemes of English, „Language“, 1941, էջ 223—246. Outlines of Linguistic Analysis, Baltimore, 1942.

<sup>4</sup> G. Trager and H. Smith, Outline of English Structure, Baltimore, 1942.

<sup>5</sup> G. Trager and E. T. Hall Jr., The Analysis of Culture, Washington, 1953.

<sup>6</sup> G. Trager, The Theory of Accentual System, „Language, Culture and Personality“, Menasha, Wis., 1941. The Syllabic Phonemes of English, „Language“, 1941, էջ 224—246. The Field of Linguistics, SIL Occasional Papers, № 1.

<sup>7</sup> B. Bloch, English Verb Inflection, „Language“, 1947, № 4. A Set of Postulates for Phonemic Analysis; „Language“, XXIV, 1948, № 1.

Հ. Սմիթի աշխատություններից նշելի են «Մետալինգվիստիկական վերլուծության ուրվագիծը», «Նարահյուսական վերլուծության հնչույթաբանական բազան»<sup>1</sup> և այլն:

Իր «Լեզվաբանության առարկան» աշխատության մեջ Թրեյշերը ի մի է բերում և դասակարգում լեզվաբանական այն դիսցիպլինները, որոնք հանդես են գալիս ամերիկյան լեզվաբանական պրակտիկայում: Լեզվաբանական աշխատանքի ողջ բնագավառը Թրեյշերը սահմանում է որպես մակրոլինգվիստիկա («Մեծ լեզվաբանություն»), որը բաժանում է երեք բնագավառի՝ 1) պրալինգվիստիկա («Ամախալեզվաբանություն»), 2) միկրոլինգվիստիկա («Փոքր լեզվաբանություն») և 3) մետալինգվիստիկա («Անդրլեզվաբանություն»): Լեզվաբանության հիմնական բնագավառը միկրոլինգվիստիկան է. պրալինգվիստիկային վերաբերում են ակուստիկական-ֆիզիոլոգիական այն հարցերը, որոնք առնշվում են լեզվի ուսումնասիրության հետ, հատկապես փորձառական հնչունաբանությունը և խոսքի հոգեբանությունը. մետալինգվիստիկային է վերաբերում լեզվական նշանների իմաստի ուսումնասիրությունը, որը տրադիցիոն լեզվաբանության մեջ կազմում է իմաստաբանության բնագավառը և առնշվում է կուլտուրայի զանազան բնագավառների հետ<sup>2</sup>; իմաստաբանության բնագավառի անջատումը լեզվական հետազոտության բուն բնագավառից խիստ հատկանշական է ֆորմալ-անալիտիկմի ուղղության համար, որը լեզվի ուսումնասիրությունը նահմանափակում է ձևական վերլուծությամբ:

Միկրոլինգվիստիկայի մեջ առանձնացվում են՝ 1) ընդհանուր լեզվաբանությունը, 2) նկարագրական (դեսկրիպտիվ) լեզվաբանությունը, որն զբաղվում է «լեզուների (կամ լեզվի) կրկնվող տիպացին երևույթների հանգեցումով նկարագրական ձևակերպումների՝ արտահայտված առավելագույն հետեղականությամբ, խնայողականությամբ և լրիվությամբ»<sup>3</sup>, 3) զուգադրական լեզվաբանությունը, որը բացահայտում է տարբեր լեզվասիստեմների ընդհանուր և

<sup>1</sup> H. L. Smith, An Outline of Metalinguistic Analysis, GUMSLLT, II, 1952. The Phonological Basis for Syntactic Analysis, Washington, 1954.

<sup>2</sup> Ինչպես տեսանք, մետալինգվիստիկական վերլուծությանը առանձին աշխատություն է նվիրել Սմիթը: «Մետալինգվիստիկայի» (metalinguistics) փոխարեն մի խումբ լեզվաբաններ և հոգեբաններ 1951 թ. առաջարկում են «էքոլինգվիստիկա» (exolinguistics) տերմինը:

<sup>3</sup> G. Trager, The Field of Linguistics, 1949, էջ 4. հմմտ. գլուսեմատիկայի էմպիրիկ սկզբունքը:

տարբերիչ գծերը (սրա մեջ է դրվում բարբառների ուսումնասիրությունը) և 4) պատմական լեզվաբանությունը, որն զբաղվում է մեկ կամ մի քանի ցեղակից լեզուների զարգացման տարրեր ժամանակաշրջաններով:

Լեզվի թրեյչերյան սահմանումը հենվում է մի կողմից՝ լեզվի՝ նշանների սիստեմ լինելու ըմբռնման, մյուս կողմից՝ լեզվի՝ կուտուրայի մյուս ձևերի հետ ունեցած կապի դրույթի վրա. լեզուն թրեյչերի և թլոխի կողմից դիտվում է որպես կամայական հնչունական սիմվոլների կամ նշանների մի սիստեմ, որի օգնությամբ հասարակության անդամները իրականացնում են համատեղ գործողությունները իրենց համար ընդհանուր կուլտուրայի սահմաններում: Թրեյչերը և թլոխը ևս լեզվաբանությունը սերտորեն առնչում են մարդարանության (անթրոպոլոգիայի) հետ, լեզուն մտցնում կուլտուրայի ընդհանուր սիստեմի մեջ: Լեզուն նրանք համարում են ոչ միայն կուլտուրայի տարր, այլև «բոլոր կուլտուրական գործողությունների (cultural activities) հիմք»<sup>1</sup>. Թրեյչերի և թլոխի վրա շարունակում է ազդեցություն գործել թլումֆիլդի դավանած բիհկորիզմը. լեզվական գործունեությունը դիտվում է որպես այնպիսի ազդակների և հակազդումների շղթա, որոնց միջոցով կոորդինացվում են մի խմբի անդամների գործողությունները. լեզուն, ըստ նրանց, կապող օղակ է խոսողի և լսողի ներվային սիստեմների միջև:

Թրեյչերի և նրա համախորհների գործունեության գլխավոր բնագագոր նկարագրական լեզվաբանությունն է, որի մեջ առյուծի բաժինն ընկննում է հնչույթային և ձևույթային վերլուծությանը: Խոսքի փաստերի վերլուծությունն ու դասակարգումը՝ ահա նկարագրական լեզվաբանության նպատակը. «Լեզվաբանի խնդիրն է,— գրում են թլոխը և Թրեյչերը,— դասակարգել խոսքի փաստերը և բացահայտել (reveal) լեզվի սիստեմը՝ տալով այնպիսի ընդհանուր ձևակերպումներ (formulating general statements), որոնք ծածկում են (covering) օբյեկտիվորեն տարրեր, բայց սոցիալապես հավասարարժեք մեծ թվով դեպքեր (events)»<sup>2</sup>:

Իրենց «լեզվաբանական վերլուծության ուրվագծում» թլոխը և Թրեյչերը ընդգրկում են հնչունաբանությունը, հնչույթաբանու-

<sup>1</sup> B. Bloch and G. Trager, Outline of Linguistic Analysis, 1942, էջ 5:

<sup>2</sup> Նույն աեղբ, էջ 39.

թյունը (phonemics); ձեաբանությունը և շարահյուսությունը; «Անգլիերենի կառուցվածքի ուրվագիծը» փոքր-ինչ այլ կառուցվածք ունի. այստեղ ողջ նյութը բաժանված է 3 մասի՝ «Հնչույթաբանություն» (Phonology), «Զեռույթաբանություն» (Morphemics) և «Անդրլեզվաբանություն» (Metalinguistics), ընդ որում «Զեռույթաբանության» տակ միավորվում են ձեռույթային վերլուծության, ձեահնչույթաբանության (morphophonemics) և շարահյուսության հարցերը:

Հնչույթաբանական վերլուծության հիմնական միավորը՝ հընչույթը թլոխը և թրեյչերը սահմանում են որպես «Հնչյունապես մերձավոր այնպիսի հնչյունների խումբ, որոնք հակադրվում են և փոխադաբար բացառում հնչյունների բոլոր նույնական խմբերը լեզվի մեջ»<sup>1</sup>: Հնչույթը կազմող խմբերի անդամները, այն է՝ հընչույթների տարրերակները, նրանց դրսեորման ձևերը, կոչվում են ալլոֆոններ, ընդ որում նկատի են առնվում հատկապես դիրքային տարրերակները. Հնչույթի անհատական տարրերակները համարվում են հնչույթի ազատ կամ ոչ-պարտադիր (ֆակուլտատիվ) տարրերակներ:

Թլոխի, թրեյչերի և ամերիկյան մյուս ստրուկտուրալիստների համար բնորոշ է հնչյունաբանական վերլուծության բացառիկ մանրամասնությունը. այսպես, ձայնավորների արտասանության ժամանակ լեզվի տարրեր բարձրացումները՝ վերինը, միջինը և ստորինը նրանք մանրատում են 7 աստիճանի (high, lower-high, higher-mid, mean-mid, lower-mid, higher-low, low). քանակային տարրերությունների 2 աստիճանի (երկար և կարճ) փոխարեն նշում են 5 աստիճան (overlong, long, half-long, short & half-short), տարրերում ուժային շեշտի (stress) 4 աստիճան՝ գրիավոր կամ ուժեղ (loud), երկրորդական կամ թուլացած ուժեղ (reduced loud), երրորդական կամ միջին (medial) և թույլ (weak)<sup>2</sup>, ընդ որում մանրամասն քննարկման ենթակա են համարվում վանկերի տարրեր քանակ ունեցող բառերն ըստ շեշտի տարրեր աստիճանների և այլն:

Հնչույթաբանական վերլուծության ժամանակ նկատի են առնըվում մի կողմից՝ հնչյունական երևույթների հնչույթային բնույթը, մյուս կողմից՝ հնչույթի ալլոֆոնները: Հնչույթային արժեք է վերա-

<sup>1</sup> B. Bloch and G. Trager, Outline of Linguistic Analysis, 1942, էջ 40.

<sup>2</sup> «Անգլերենի կառուցվածքի ուրվագծում» դրանք նշանակում են 1)՝ 2)՝ 3) և 4)՝ նշաններով:

գրվում նաև ձայնի այնպիսի հատկություններին (առոգանությանը), որոնք կարող են իմաստատարբերիչ արժեք ունենալ, այն է՝ քանակին (երկարությանը և կարճությանը), ակցենտին (ուժի և բարձրության կամ տոնի տարբերություններին) և այսպես կոչված՝ կցույթին (յունտեր). Կցույթ անվան տակ միավորվում են հնչունների միացման կամ կցման եղանակի հետ կապված երկույթները, հատկապես դադարի առկայության կամ բացակայության փաստերը: Բուն հնչույթները (ձայնավորներն ու բաղաձայնները) ամերիկյան ստրուկտուրալիստները, այդ թվում նաև Թրեյշերն ու Բլոխը կոչում են գծային (հատվածային սեգմենտային) հնչույթներ, ձայնի՝ հնչույթային արժեք ունեցող հատկությունները (առոգանության տարբերակումները): Առոգանական կամ վերգծային (վերհատվածային՝ սուպերսեգմենտային) հնչույթներ. այս վերջին անվան փոխարեն Հոգենը գործածում է «պրոսոդեմա» (առոգանույթ) տերմինը<sup>1</sup>: Տարբերվում է կցույթի 2 տեսակ՝ բաց և փակ. բաց կցույթը բնորոշվում է ոչ հարթ՝ սուր ու որոշակի անցմամբ կամ դադարով և կարող է ազդել տոնի վրա, փակը՝ առանց այդ հատկությունների. բայց կցույթն էլ կարող է լինել արտաքին (օրինակ՝ նախադասության սկզբում և վերջում) և ներքին (բանի մեջ կամ բառի ու նրան հարող մասնիկ-բառերի միջև. Հմմտ. night-rate և nitrate, an aim և a name): Թրեյշերը և Սմիթը «Անգլերենի կառուցվածքի ուրվագծում» տարբերում են բաց կցույթի 3 տեսակ՝ 1) միատակտ (/), որի գեպքում տոնի փոփոխություն չի կատարվում (վերջնային հարթ տոնը), 2) երկտակտ (//), որի գեպքում տոնը բարձրանում է (վերջնային բարձր տոնը), և 3) խաչաձեւող (??). որի գեպքում տոնն իջնում է (վերջնային իջնող տոնը):

Եթե «կեզվաբանական վերլուծության ուրվագծում» Թրեյշերը և Բլոխը հնչույթային վերլուծությունը սահմանվակում են գծային և վերջնային հնչույթների քննությամբ, ապա «Անգլերենի կառուցվածքի ուրվագծում» սրան միանում է և հնչունական շղթայի կամ, ավելի ճիշտ, արտասանվածքի (utterance) հնչունական կողմի քննությունը: Արտասանվածքի մեջ Թրեյշերը և Սմիթը հետևողաբար առանձնացնում են «հնչույթային նախադասություններ կամ ասույթներ» (phonemic clause), «հնչույթային ֆրազներ կամ (բառա)գուգորդումներ» (phonemic phrases) և «հնչույթային բառեր» (phonemic words): Հնչույթային նախադասությունը կամ ա-

<sup>1</sup> E. Haugen, Phoneme or prosodeme, „Language“, 1949, № 3.

սույթը» արտասանվածքի որոշակի ամբողջություն ներկայացնող հատվածն է, կամ նվազագույն լրիվ արտասանվածքը (a minimal complete utterance), որ բնորոշվում է վերջնային կցույթով և համապատասխան ինտոնացիայով (մեկ կամ մի բանի բարձրացումով): Հնչույթային ասույթների մեջ կարող են առանձնացվել հընչույթային ֆրազներ, որոնք ունեն մեկ առաջնային շեշտ ու հնարավոր այլ շեշտեր և նորմալ կցույթ կամ ներքին բաց (դրական) կցույթներ. հնչույթային ֆրազների մեջ էլ կարող են առանձնացվել հնչույթային բառեր, որոնք չունեն ներքին բաց (դրական) կցույթներ և համապատասխանաբար երկրորդային շեշտեր: Հնչույթային բառեր են համարվում հնչույթային շղթայի այնպիսի հատվածներ, ինչպիսիք են ոչ [nōw], taker [téykər], ta'ke it [teykit], psychological [sàykəla'jikel]. որպես այնպիսի հնչույթալին ֆրազների օրինակներ, որոնք հնչույթալին բառեր չեն, բերվում են հետեւալները՝ White House [wa'yt+həews], blackboard [blæék—bɒhrd], old maid [ðwld+méyd], slynes [slay nɪs], do you think so [d+yə+θɪŋk+sðow]:

Հնչույթաբանական վերլուծության բնագավառը Թրեյչերի և Բլոխի մոտ սահմանափակվում է հնչույթային հատկանիշների, հնչույթների ալլոֆոնների և դրանց շրջապատի ուսումնասիրությամբ. ձևաբանության բնագավառն սկսվում է այն ժամանակ, երբ խոսվում է հնչույթների և հնչույթային արժեք ունեցող միատիպ (գլխավոր) միավորների հետեւղական շարքի մասին:

Զնույթային վերլուծության մեջ Թրեյչերը և Սմիթը հանդես են բերում ձևական վերլուծության բոլոր հատկությունները. եթե Բլում-Ֆիլդը ձևույթը սահմանելիս նկատի էր ունենում նաև իմաստը, ապա Թրեյչերն ու Սմիթը աշխատում են այն բոլորովին դուրս մղել: Ճիշտ է, «լեզվաբանական վերլուծության ուրվագծում» Բլոխը և Թրեյչերը ձևույթը սահմանում են Բլումֆիլդի նման որպես «ազատ կամ կապված ձև», որ շի կարող բաժանվել ավելի փոքր իմաստավոր մասերի»<sup>1</sup>, բայց միաժամանակ նշում են, որ իմաստին ուշադրություն դարձնելու կարիքը գործնական դժվարություն է առաջացնում: Այս հանգամանքն է, որ վերջիվերջո հանգեցնում է ձևույթի թրեյչեր-սմիթյան սահմանմանը որպես սկրինվող կաղապարային մասնակիությունների (recurring patterned partials)<sup>2</sup>, որոնք բաղկա-

<sup>1</sup> B. Bloch and G. Trager, Outline of linguistic Analysis 1942, էջ 54.

<sup>2</sup> G. Trager and H. Smith, An Outline of English Structure, 1951, էջ 53.

ցած են մեկ կամ ավելի հնչույթներից, այլև երբեմն կաղապարի բացերը լրացնող զրո տարրերից:

Լիակատար անալոգիա է անցկացվում հնչույթային և ձևույթային վերլուծության միջև. «Լեզվի քերականության վերլուծության պրոցեդուրան, — զրում են Բլոխը և Թրեյչերը, — սկզբունքորեն նույնն է, ինչ Փոնեմիկայի մեջ: Այստեղ ևս մենք քննում ենք արտասանվածքների մի հավաքածու (a collection of utterances), ցուցակագրում կրկնվող հատվածամասերը (list the recurrent fractions) և կազմում ենք դասեր՝ միասին խմբավորելով տարբեր արտասանվածքների մասերը, որոնք նման են ձևով և ֆոնկցիայով»<sup>1</sup>: Քերականության երկու մասերից ձևաբանությունն, ըստ նրանց, զբաղվում է բառի կառուցվածքով, շարաշյուսությունը բառերի զուգորդումներով՝ բառակապակցությունների և նախադասությունների մեջ (in phrases and sentences): «Անգլերենի կառուցվածքի ուրվագերրում», որտեղ վերլուծության եղանակն է՝ ավելի է ձևականացված, քերականական և բառապաշտրային հիմնական հասկացությունները սահմանվում են հետեւյալ կերպ. «Զեռվյաները կարող են տարբերակներ ունենալ տարբեր դրություններում: Մրանք ալլո մոր ֆն եր ևն»<sup>2</sup>: Լեզվի ձևույթների բոլոր ձևերի քննությունը մոր ֆոր նեմի կան է: Զեռվյաների՝ հանդիպող հետեւղական շարքերի (sequences of morphemes that occur) քննությունը շարադասությունն է (arrangement) (կոշված նաև տակ տիկ աս): Անգլերենում, ինչպես շատ այլ լեզուներում, հարմար է համարվել ձևույթները երկատել հիմքերի ունման այլ միավորների (into bases and all others) (տե՛ս ստորև), և ապա ձևույթային հետեւղական շարքերը, որոնք ներառում են միայն մեկ հիմք, քննել մեկ վերնագրի տակ՝ ձևաբանություն, իսկ այն շարքերը, որոնք ներառում են մեկից ավելի հիմքեր, — մի այլ վերնագրի տակ՝ շարադասություն: Քերականության բառը կարող է օգտագործվել լեզվի վերլուծության ամբողջությունը՝ ֆոնոլոգիան և մորֆեմիկան ընդգրկելու համար: Մորֆոֆոնեմիկայի ուղեկիցներից մեկը տվյալ լեզվի բոլոր ձևույթների ցանկն է՝ լեքսիկոնը<sup>3</sup>: Հնչույթների գծային և վերգծային տեսակների անալոգիայով տարբերվում են

<sup>1</sup> G. Trager and H. Smith, հիշ. աշխ., էջ 53.

<sup>2</sup> Ալլոմարֆ տերմինի փոխարեն Թրեյչերը և Բլոխը «Լեզվաբանական վերլուծության ուրվագծերում» դորժածում են ալտերնատ տերմինը, որ, ինչպես տեսանք, առկա է նաև հառիսի և Հոքետի մոտ:

<sup>3</sup> G. Trager and H. Smith, հիշ. աշխ., էջ 54—55.

գծային (սեգմենտային՝ հատվածային) և վերգծային (վերսեգմենտային՝ վերհատվածային) ձևույթները. գծային ձևույթները սովորական ձևույթներ են (բաղկացած գծային հնչույթներից՝ ներառյալ և զրո ալլոմորֆները), վերգծայինները՝<sup>1</sup> շեշտերի հետևողական շարքեր՝ բաց (դրական) կցույթներով կամ առանց դրանց և 2) տոնային հնչույթների հետևողական շարքեր՝ վերջնային կցույթով. առաջին տիպի վերգծային ձևույթները կոչվում են վերմասնիկներ (superfixes), նախամասնիկների և վերջամասնիկների օրինակով, երկրորդ տիպի վերգծային ձևույթներ՝ ինտոնացիոն կաղապարներ (intonation patterns): Գծային ձևույթներ են «հիմքերը» և վերջամասնիկները (վերջածանցներն ու վերջավորությունները). նախամասնիկները համարվում են «նախահիմքեր»:

Խոսքի մասերի փոխարեն, որոնք դեռ են նետվում որպես իմաստի վրա հիմնվող դասակարգում, Թրեյչերը, Բլոխը, Սմիթը և ուրիշները օգտվում են այլ կարգի բաժանումներից ու դասակարգումներից. «Դասակարգումների մշակման ժամանակ,—գրում են Բլոխն ու Թրեյչերը,— չպետք է դիմել իմաստին, վերացական տրամաբանությանն ու փիլիսոփայությանը»:<sup>1</sup> Այս դեպքում էլ հաշվի է առնվում ոչ թե հարաբերությունների և զուգորդումների ողջ բազմազանությունը, այլ այս կամ այն տարբերիչ հատկանիշը: Բլոխը և Թրեյչերը իրենց «Հեղվարանական վերլուծության ուրվագծում» բառերի խմբավորման հիմք են ընդունում բառերի ձևաբանական կառուցվածքը և շարահյուսական ֆունկցիան՝ անուն, բայ և այլն անվանումները համարելով երկրորդական: Ավելի ուշ Թրեյչերը և Սմիթը այս հարցում հիմք են ընդունում հիմքերի և վերջամասնիկների զուգորդելիության հնարավորությունը. բառի այս կամ այն խմբին պատկանելը որոշվում է այն բանով, թե տվյալ բառը (հիմքը) ի՞նչ մասնիկ է ընդունում և ի՞նչ չի ընդունում:

Թրեյչերը և Սմիթը ձևաբանության և շարահյուսառության քննության առարկաների տարբերման հիմք են ընդունում ձևույթների հաջորդման շարքի մեջ հիմքերի առկա քանակը. միայն մեկ հիմք (մեկ հիմք և ցանկացած քանակությամբ վերջամասնիկները) ունեցող հաջորդման շարքը կոչվում է ձևույթային բառ (morphemic word) և հատկացվում է ձևաբանությանը. մեկից ավելի հիմքերի զուգորդումը կոչվում է ձևույթային ֆրազ (morphemic phrase) և հատկացվում է շարահյուսությանը: Վերջինիս բնագավառն է համարվում նաև այսպես կոչված ձևույթային ասույթների (morphemic clause)

<sup>1</sup> B. Bloch and G. Trager, հիշ. աշխ., էջ 68:

ուպումնասիրությունը. այսպես են կոչվում ձեռւյթային ֆրազների միացումները ինտոնացիոն կաղապարների հետ:

Շարահյուսական վերլուծության մեջ ևս Թրեյչերն ու Սմիթը առաջնորդվում են ձևական սկզբունքով. նախադասության սահմանը որոշվում է զուտ հնչույթաբանական սկզբունքով՝ ինտոնացիոն գծի վերջանալով, դադարով։ Արտասանվածքների շարահյուսական վերլուծության ժամանակ որպես «անմիշական բաղադրիչներ» (immediate constituents) առանձնացվում են «շարահյուսական նախադասությունները կամ ասույթները» (=«ձեռւյթային ասույթներին»), որոնք համապատասխանում են հնչույթաբանության բնագավառի «հնչույթային ասույթներին». «շարահյուսական ֆրազներն» էլ համապատասխանում են հնչույթաբանության բնագավառի հնչույթային ֆրազներին։ Շարահյուսական հատվածների բնույթի որոշման հիմք է ընդունվում նրանց ֆունկցիան, ընդորում լիակատար անալոգիա է անցկացվում սրանց և բառատեսակների (խոսքի մասերի) որոշման սկզբունքների միջև։ «Այնպիսի մի լեզվում, ինչպիսին անգլերենն է,— գրում են Թրեյչերը և Սմիթը,— հնարավոր է ձևաբանորեն նույնացնել ֆրազների շատ հատվածներ բառերի տարբեր խմբերի հետ։ Զբաղվելով շարահյուսությամբ, մենք առանձնացնում ենք (identify out) գոյականներ, անձնական դերանուններ, ածականներ և բայեր՝ օգտվելով ձևաբանության մեջ սահմանված շափանիշներից։ Այդ բանը մեզ հետագայում օգնում է կատարել մեր փոխարինումները (substitutions) ավելի դյուրին ու ուղղակի եղանակով և անվանում տալ ամբողջական ֆրազներին՝ ըստ առանձին բառերի ֆունկցիաների հետ նրանց ֆունկցիաների նմանության կամ նույնության»<sup>1</sup>։ Փոխարինումը կամ սուբստիտուցիան, ինչպես նշել ենք, նկարագրական լեզվաբանության կարևոր սկզբունքներից մեկն է։ Շարահյուսական ֆունկցիաների արտահայտության միջոցների մեջ կարևոր տեղ է տրվում շեշտերի դիրքի ու բնույթի, բառերի շարադասության ուսումնասիրությանը, մանավանդ որ դրանք խիստ կարևոր են խաղում անգլերենում՝ փոխարինելով թեքույթներին։

Իրենց «լեզվաբանական վերլուծության ուրվագծում» Բլոխը և Թրեյչերը շարահյուսական ծայրագույն բաղադրիչներ համարում են բառերը, որոնց վերլուծումն արդեն կազմում է ձևաբանության բնագավառը։

<sup>1</sup> G. Trager and H. Smith, հիշ. աշխ., էջ 73--74։

Իր «Մի շարք պոստուլատներ հնչույթային վերլուծության համար» հոդվածում՝ թլոխը պահանջում է հնչույթի սահմանման և առանձնացման հարցում տեղ շտալ իմաստային կողմին։ Այս տեսակետից նա մեղադրում է թլումֆիլդին այն բանի համար, որ վեցինս հնչույթը սահմանելիս նշում է նրա իմաստատարբերիչ դերը և ընդհանրապես տեղ է տալիս նշանակությանը։ Թլոխը փորձ է անում հնչույթային ողջ վերլուծությունը հիմնել զուտ արտասանական հատկանիշների վրա։

Թլոխը հնչույթային վերլուծության մեջ կիրառում է Հոքետի ձևաբանական վերլուծության սկզբունքը՝ հնչույթի ոչ հակադրական տարրերակները կոչելով ֆոներ (phone) և հնչույթը սահմանելով որպես «ոչ հակադրական և հնչյունապես նման ֆոների դասաւ»։

Չնայած հիշյալ պահանջին՝ իրենց վերլուծության մեջ թրին ու թրեցերն, այնուամենայնիվ, ստիպված են տեղ տալ իմաստային կողմին. այսպես, բայի դեպքում նշվում է նրա ժամանակային հարաբերականությունը. բայը սահմանվում է որպես մի խումբ, որի մեջ մտնող բառերը ածանցների և զանազան ձևափոխությունների օգնությամբ արտահայտում են ներկա և անցյալ ժամանակի տարրերությունը։

Ստրոկտուրալիստական գլխավոր հոսանքների ընդհանրություններն ու տարբերությունները. — Ստրոկտուրալիստական բոլոր հոսանքների համար բնորոշ են՝ լեզվի և խոսքի սոսյուրյան հակադրությունը, լեզվի սիստեմային բնույթի ընդունումը, լեզվի ստրոկտուրային (կառուցվածքային) որակական ամբողջականության դրույթը, սինխրոնիկ քննությանն առաջնություն տալը դիախրոնիկի հանդեպ, լեզվի փոփոխության մուտացիոն բնույթի ընդունումը, քննության ունիվերսալացումը և լեզուների տիպոլոգիական գուգադրմանը կարևոր նշանակություն տալը, ստրոկտուրալիստական լեզվաբանությունը ողջ նախորդ լեզվաբանությանը հակադրելը, լեզվական բոլոր կարգի միավորների (հնչյունական, ձևաբանական և այլն) միենույն սկզբունքներով քննելը (գուգածնություն կամ «իզոմորֆիզմ»), լեզվական քննության մեջ բառը գրեթե դուրս մղելը (հատկապես կոպենհագենյան և ամերիկյան ստրոկտուրալիզմի մեջ), քննության մաթեմատիկանացումը, նոր

<sup>1</sup> B. Bloch, A Set of Postulates for Phonemic Analysis, „Language“, XXIV, 1948, № 1.

<sup>2</sup> B. Bloch, Non-contrastive... „Language“, 1950, XXVI, № 1, էջ 90.

տերմինների ներմուծումը, տրադիցիոն բաժիններից հրաժարումը և այլն։ Ստրուկտուրալիստները, ի տարբերություն Սոսյուրի, հակված են ընդհանրապես լեզվական նշանը պատճառաբանված համարելու։

Մրա հետ միասին առկա են ակնհայտ տարբերություններ։

1) Եթե ամերիկյան և կոպենհագենյան ստրուկտուրալիստների համար բնորոշ է իմասնեստիզմը, լեզուն ինքնին քննելը, այն ժողովրդի պատմությունից և լեզվական նշանը արտալեզվական իրականությունից կտրելը, ապա Պրագայի ստրուկտուրալիստները լեզուն և լեզվական նշանը դիտում են արտալեզվական իրականության հետ կապված, լեզվական նշանը կապում նրա իրացման հետ։ Պրագայի լեզվաբանները պահանջում են լեզուն քննել գրականության և կուլտուրայի, հասարակության մեջ նրա կատարած ֆունկցիայի հետ սերտորեն կապված, թեև լեզվի ֆունկցիոնալ տարբերակումներին նրանք առաջնային տեղ են տալիս՝ գրեթե մինչև լեզվի ընդհանրության ժխտումը։ Այս կապակցությամբ ստարբեր է ֆունկցիայի ըմբռումը. Պրագայի լեզվաբանների համար ֆունկցիան լեզվական միավորների կիրառությունն է, կոպենհագենյան ստրուկտուրալիստների (Ելմալկի) համար՝ զուտ ներքին-ֆունկցիոնալ կապ։

2) Լեզվի և մտածողության, լեզվական ձևի ու լեզվական իմաստի փոխհարաբերության հարցում առկա են ակնհայտ տարբերություններ. ամերիկյան ստրուկտուրալիստները լեզվի և մտածողության պրոբլեմը համարում են կեղծ պրոբլեմ, լեզվական իմաստը դուրս հանում լեզվաբանական քննության պրոբլեմից. Եվրոպական ստրուկտուրալիստները լեզվական իմաստը դիտում են որպես լեզվաբանական քննության անհրաժեշտ տարր, ընդորում կոպենհագենյան ստրուկտուրալիստները իմաստը քննում են անկախ ու անհամար իրականությունից՝ լոկ լեզվական հակադրությունների հիման վրա, մինչեռ Պրագայի ստրուկտուրալիստները կարեվոր տեղ են տալիս լեզվական միավորների ու անհամար իրականության հետ ունեցած կապին, անվանման էության բացահայտմանը։

3) Կոպենհագենյան ստրուկտուրալիստները (Ելմալկը) պահանջում են տեքստի սպառիչ նկարագրություն, մինչդեռ Պրագայի ստրուկտուրալիստները այդ համարում են անհնար, որովհետև լեզուն չի կարող միայն ինքնին քննվել, այլ պետք է կապվի ու լեզվական երևույթների հետ։

4) Կոպենհագենյան ստրուկտուրալիստների համար լեզվական միավորը կարեոր է միայն հարաբերության միջցողվ՝ որպես հարաբերության մի կողմը, որպես այլ միավորներին հակադրվող միավոր, որի ինքնուրույն գոյությունը էական չէ (Ելմսլեի «Էմպիրիկ» սկզբունքը). Պրագայի ստրուկտուրալիստների համար լեզվական միավորը, ստրուկտուրալ հակադրությամբ արժեքավորվելով հանդերձ, կարող է քննվել և ինքնուրույն կերպով:

## 2. ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՃԴԻՍՑԻԳԼԻՆՆԵՐ

(ԱՐՏԱՍՏՐՈՒԿՏՈՒՐԱԼԻՍՏԻԿԱ ԿԱՄ «ՄԱԿՐՈԼԻՆԳՎԻՍՏԻԿԱ»)

Ներածական տեղեկություններ.— Այս անվան տակ մենք միացնում ենք այն բոլոր դիսցիպլիններն ու հոսանքները, որոնք ուսումնասիրության առարկա են դարձնում ոչ թե լեզվական ստրուկտուրայի ներքին փոխհարաբերությունները, այլ լեզվի «արտաքին» կապերն ու առնչությունները: Մի կողմից՝ դրանք յուրատեսակ միջդիսցիպլիններ են լեզվաբանության և այլ (հասարակական և բնական) գիտությունների միջև, մյուս կողմից՝ լեզվաբանական հոսանքներ, որոնք, ի տարբերություն բուն ստրուկտուրալիստների (ստրուկտուրալ իմանենտիզմի ներկայացուցիչների), լեզվի ուսումնասիրությունը բոլորովին էլ շեն սահմանափակում ներքին ստրուկտուրային կապերով, այլ լեզուն դիտում են իր տարրեր կողմերով՝ մարդու և մարդկային հասարակության հետ կապված: Եթե ստրուկտուրալ իմանենտիզմի ներկայացուցիչները խնամքով սահմանագատում են լեզվաբանությունը մյուս գիտություններից, լեզվաբանության բուն խնդիրը համարում լեզվական ստրուկտուրայի բաղադրիչների դասակարգումն ու կապակցության եղանակների՝ ուսումնասիրությունը, ապա այս միջդիսցիպլինների ու հոսանքների ներկայացուցիչները կամ, ընդունելով ստրուկտուրալ իմանենտիզմի ներկայացուցիչների այս սկզբունքը, կամուրջ են գցում լեզվաբանության և մյուս գիտությունների միջև՝ ուսումնասիրության առարկա դարձնելով այն բոլորը, ինչ դուրս է մնում լեզվական ստրուկտուրայի ներքին կապերից, կամ լեզվաբանությունը դիտում են որպես յուրատեսակ համապարփակ գիտություն, հատկապես որպես հասարակական գիտությունների հիմք և նրան նույն տեղը տալիս հասարակական գիտությունների մեջ, ինչ արվում է մաթեմատիկային բնական ու տեխնիկական գիտությունների մեջ:

Ամերիկյան լեզվաբանության ներկայացուցիչները սկզբնապես լայն առումով գործածում էին էթնոլինգվիստիկա տերմինը, բայց հետագայում այն փոխարինում են էթոլինգվիստիկա (արտալեզվաբանություն) տերմինով՝ այստեղ դնելով այն բոլորը, ինչ դուրս է մնում «ներքին» լեզվաբանության քննության սահմաններից: Քանի որ այս տերմինն արտացոլում է ամերիկյան նկարագրական լեզվաբանության այն կարծիքը, թե բուն լեզվաբանություն առարկան լոկ ձևութեաների ֆորմալ դասակարգումն ու փոխառնչությունների ուսումնասիրությունն է, թե լեզվի ուսումնասիրությունը պետք է ինամֆով առանձնացնել գիտակցության և մտածողության ուսումնասիրությունից, թե լեզվի և ժողովրդի, լեզվի և կուլտուրայի, լեզվի և գիտակցության և այլ կապերը լեզվաբանության տնօրինությունից դուրս են, ուստի և մենք ավելի ճիշտ ենք համարում այն փոխարինել «արտաստրուկտորալիստիկա» տերմինով. 1) սրանով իսկ նախ՝ մենք խոսափում ենք այս դիսցիպլինները բուն լեզվաբանությունից դուրս համարելու սխալ տեսակետից և ընդգծում, որ այս դիսցիպլիններն ու հոսանքները, սերտորեն կապված լինելով լեզվաբանության հետ ու նույնիսկ մտնելով նրա մեջ, տարրերիում են բուն ստրուկտորալիզմից նրանով, որ ուսումնասիրում են լեզվական ստրուկտորայի ոչ ներքին ֆորմալ կապերը. 2) երկրորդ՝ մենք սրանով իսկ նշում ենք, որ այս դիսցիպլիններն ու հոսանքները նույնպես հենվում են ստրուկտորալ հետազոտության մեթոդների վրա. այսպես, էթնոլինգվիստիկայի (նեղ իմաստով) ներկայացուցիչները փորձում են լեզվական կաղապարի ուսմոնքը տեղափոխել կուլտուրայի բնագավառը, կամ բարիմաստների ուսումնասիրությունը կատարել դրանց ներքին կապերի հաստատման հիման վրա:

Քանի որ լեզուն կապված է ամենաբազմազան հասարակական, բնական ու տեխնիկական գիտությունների հետ, ուստի և գոյություն ունեն լեզվի ուսումնասիրության ամենաբազմազան հայեցակետեր՝ լեզվի հոգեբանություն, լեզվի ֆիզիոլոգիա և բիոլոգիա<sup>1</sup>, լեզվի ուսումնասիրություն տեխնիկայի, (կապի կամ հաղորդակցման, մեքենայական թարգմանության և այլն) դիրքերից և այլն: Մենք այս բոլոր հայեցակետերի մասին խոսելու հնարավորություն չունենալով՝ ընտրում ենք ամենից ավելի ակ-

<sup>1</sup> Հմայ. J. H. Woodger, Biology and Language, Cambridge, 1952.

տուալ միջդիսցիպլիններն ու լեզվաբանական հոսանքները՝ դրանց համար մասամբ օգտագործելով եղած անվանումները (էթնոլինգվիստիկա, պսիխոլինգվիստիկա), մասամբ էլ անալոգիայով մտցնելով նոր անվանումներ (տեխնոլինգվիստիկա և այլն). էթնոլինգվիստիկա անվանումը, ի տարրերություն ամերիկյան լեզվաբանների, մենք օգտագործում ենք նեղ առումով՝ այստեղ դնելով լեզվի և ժողովրդի ու նրա կուլտուրայի կապի վերաբերյալ տեսությունները:

### ա) Կիբրոնական լեզվաբանություն

#### Տեխնոլինգվիստիկա

Կիբրոննետիկան, ինֆորմացիայի աեսությամբ և լեզվանությունը. մեքենայական քարգմանության պրոբլեմը.— Կիբրոննետիկան որպես գիտություն առաջացել ու ձևավորվել է յազմաթիվ գիտությունների զարգացման՝ և գիտական նորագույն պատկերացումների հետևանքով: «Կիբրոննետիկա» տերմինը որպես այդ գիտության անվանում առաջին անգամ օգտագործվել է ամերիկյան գիտական Ն. Ուիների «Կիբրոննետիկա կամ հակողությունն ու հաղորդակցումը կենդանիների ու մեքենաների մեջ» գրքում<sup>1</sup>: Կիբրոննետիկան անհատի և արտաքին աշխարհի փոխազդեցությունը գիտում է որպես հաղորդակցում և սրա նկատմամբ կիրապում հաղորդակցման տեխնիկայի սկզբունքները, հաղորդակցման տեսության տարրերը: Այդ պատճառով էլ հաղորդակցման տեսության շատ հեղինակներ հաճախ են դիմում Ուիների գրքի հեղինակությանը: Կիբրոննետիկայի կարևորագույն սկզբունքը այն բանի հավաստումն է, որ գոյություն ունի որոշակի անալոգիա մի կողմից՝ էնտրոպիայի և ինֆորմացիայի, մյուս կողմից՝ կենդանի սրգանիզմների և ավտոմատ կերպով ղեկավարվող մեքենաների միջև:

Էնտրոպիա ասելով թերմոդինամիկայի մեջ հասկանում են էներգիայի մի ձևի՝ մյուսին փոխարկվելու այն շափը, որի դեպքում վերջինս չի կարող ինքն իրեն փոխվել նախորդ ձևին: Հստ

<sup>1</sup> N. Wiener, Cybernetics, or Control and Communication in Animals and Machines, New York, 1948. Տե՛ս և Cybernetics and Society, London, 1954. ռուս. Բարգմ. Հ. Վիներ, Կիբեռնետիկա и общество, М., 1958. Հմտ. Է. Յ. Կոլյման, Կիբեռնետիկа, М., 1956. Վ. Վ. Սոլոդովնիկով, Некоторые черты Кибернетики, М., 1956 և այլն.

թերմոդինամիկայի երկրորդ օրենքի՝ յուրաքանչյուր փակ վերջ-սական մակրոսիստեմի (մեծ սիստեմի) էնտրոպիան միշտ ձգտում է աճելու, այսինքն՝ ամեն փակ սիստեմ միշտ ձգտում է իր ամենից ավելի հավանական վիճակին, որի ժամանակ նրա էնտրոպիան առավելագույնն է։ Այսպիսով, բոլոր փակ սիստեմները ձգտում են ավելի քիչ հավանական վիճակներից ավելի շատ հավանական վիճակների, այլ կերպ ապած՝ այն վիճակներից, որոնք բնորոշվում են տարբերակվածության և անմիատեսակության բարձր աստիճանով, անկազմակերպվածության և միատեսակության վիճակի։ Այս սկզբունքը կիրառելով կյանքի երևույթների նկատմամբ՝ կիրեռնետիկան նշում է, որ կենդանի օրգանիզմների փոխհարաբերությունը արտաքին աշխարհի հետ իրականացվում է համապատասխան ինֆորմացիայի ստացման և օգտագործման միջոցով։ Սրանից բխում է, որ մեր գոյության և արտաքին պայմանների վրա արդյունավետ կերպով ներգործելու համար համապատասխան ինֆորմացիա ստանալու բացարձակ անհրաժեշտություն է։ Կիրեռնետիկան գտնում է, որ էնտրոպիան և ինֆորմացիան կարելի է որոշ իմաստով հակադիր մեծություններ համարել։ առաջինը անկազմակերպվածության շափն է, երկրորդը՝ կազմակերպվածության։ Էնտրոպիան կարող է միայն աճել, ինֆորմացիան՝ միայն նվազել։ Որքան ավելի հավանական են տվյալ ազդանշանները, այնքան ավելի պակաս է դրանց՝ ինֆորմացիա պարունակելու հավանականությունը։ Հաղորդման յուրաքանչյուր տարր այնքան ավելի մեծ քանակի ինֆորմացիա է պարունակում, որքան ավելի մեծ է այն տարրերի թիվը, որոնցից նա կարող է բնարկել։ Եթե ընտրվող տարրերի թիվը նշանակենք  $n$ -ով, իսկ տարրերի ընդհանուր թիվը (որից ընտրվում են տվյալ տարրերը)՝  $m$ -ով, ապա հնարավոր հաղորդումների թիվը ( $N$ ) կարտահայտվի  $N = m^n$  բանաձևով։

Կիրեռնետիկան սովորեցնում է, որ կենդանի օրգանիզմների և ավտոմատ սիստեմների միջև առկա է որոշակի անալոգիա։ Այստեղից էլ բխում է, որ կենդանի օրգանիզմների ուսումնաժիրությունը հնարավորություն կտա ստեղծել այնպիսի մեքենաներ, որոնց մեջ կարելի կլինի կիրառել ինֆորմացիայի ստացման, փոխակերպման և օգտագործման այն կատարելագործված սկզբունքները, որոնք առկա են կենդանի օրգանիզմների մեջ։ Այստեղից էլ ծագում են տեխնիկական պրոցեսների ավտոմատ դեկավարման, ինքնալարվող ու ինքնակատարելագործվող և նույնիսկ ինքնավե-

բարտադրող մեքենաների ստեղծման փորձերը։ Էլեկտրոնային հաշվիչ մեքենաների ստեղծման հետ միասին սկսում են փորձեր արվել դրանք թարգմանության համար օգտագործելու։

1954 թ. հունվարի 7-ին նյու-Յորքում ցուցադրվում է էլեկտրոնային հաշվիչ մեքենայի միջոցով ոռւսերենից անգլերենի թարգմանելու փորձը, ընդ որում թարգմանվում է 60 նախադասություն տարրեր բնագավառներից՝ ամեն նախադասության թարգմանության պրոցեսի 6—8 վայրկյան տևողությամբ։ Թարգմանության համար ընտրվել էր 250 բառ, և կազմվել էին միայն պարզ ընդունակ նախադասություններ։ Սա միայն նման թարգմանության հնարավորության ապացուցման փորձ էր։ Հետագա աշխատանքը րնթանում է մեքենայական թարգմանության այնպիսի բարելավման ուղղությամբ, որ հնարավորություն ստեղծվի թարգմանելու ամեն տիպի դժվարության տեքստ։

Հրատարակվում է «Մեքենայական թարգմանություն» հանդեսը, որտեր պարբերաբար լուսաբանում են նման թարգմանության հետ կապված հարցերը։ Ոմանց կողմից նպատակահարմար է համարվում մի այնպիսի իդեալական միջնորդ-լեզվի ստեղծումը, որը հնարավոր կդարձնի հեշտացնել ամենատարբեր լեզուների միջև կատարվող թարգմանությունը՝ այդ միջնորդ լեզվի ռանդությամբ։ այլապես անհրաժեշտ կլինի մշակել ամենատարբեր սիստեմներ՝ մի լեզվից մի որևէ այլ լեզվի թարգմանելու համար, որ կդժվարացնի աշխատանքը։

Մեքենայական թարգմանության իրականացումը պահանջում է որոշ նախապատրաստական աշխատանք, որ հանգում է բառապաշտի (ներառյալ և դարձվածաբանությունը) և քերականական կանոնների սիստեմավորմանն ու համարակալմանը կամ այսպես կոչված կողավորմանը։ Մեքենայական թարգմանության պրոցեսը հանգում է 3 փուլի՝ 1) վերլուծությունը, այն է՝ ներմուծվող լեզվով (input language) տրվող հաղորդման կողավորումը նախապես մշակված կողի<sup>1</sup> համաձայն, 2) փոխակերպումը, այն է՝ տվյալ կողի փոխարինումը մի այլ կողով և 3) համադրությունը,

<sup>1</sup> Կող ասելով հասկանում են պայմանական նշանակումների կամ ազգանշանների տվյալ սիստեմը, ընդ որում դրանք սովորաբար համառոտված ու պարզեցված են լինում. այսպես, օրինակ, հեռագրման մեջ կիրառվում է Մորգեի կողը, Ելեկտրոնային հաշվիչ մեքենաների կողը ներկայացնում է «Հրամանների» այն սիստեմը, որը կիրառվում է հաշվումների ծրագիրը այդ մեքենաների մեջ ներմուծելու համար։

այն է՝ փախակերպված հաղորդման ապահովավորումը արտածվող լեզվի (outprint language) տեքստի<sup>1</sup>:

Կապի ընդհանուր տեսության կամ այսպես կոչված ինֆորմացիայի (կոմունիկացիայի) տեսության<sup>2</sup> զարգացումը պահանջամ է լեզվաբանության և տեխնիկայի Է՛լ ավելի սերտ կազ. լեզվաբանության համար կարենք են ինֆորմացիայի կամ կազի տեսության նվաճումները, կապի ինժեներների համար՝ լեզվաբանների գործակությունը։ Հեշտութեարի հեշտութանական քեռունյան հայեցակետը աշակեցություն է բանում ինֆորմացիայի (կոմունիկացիայի) տեսության կողմից։ Հաղորդակցման միջոցների անենախընթաց անը սրում է կազի ինժեներների ուշագրությունը ակտուարիկայի, լուզական բնկայման, խոսքի հեշտութեարի հասկանագության հարցերի ուղղությունը, որոնց ուսումնակրությունն ընտառվառում նրանք նշանակալից արգյունքների են հասնում։

Հաղորդակցման (կապի, ինֆորմացիայի) տեսության ռաացին պատճեամատիկ շարադրանքը տվել է Կոռ Է. Շանեներ զետեա 1948 թ.<sup>3</sup> այն հաշորդ տարին վերահրատարակվել է Շանեների և Ադմանի «Հաղորդակցման մաթեմատիկական տեսությունը» գրքում<sup>4</sup>. Հաղորդակցուածը՝ այն իմաստով բնագրիում է ոչ միայն բանավոր և գրավոր և գիտական հաղորդակցուածը, այլև արքեստի գանագան տեսակները (նրաժշտություն, նկարչություն, թատրոն, բարեկան) և բնօգնանքապահ մարդկան վարդանքը, որը անհրաժեշտարար պայմանագրագում է օրգանիզմի՝ արտաքին աշխարհի անհատի ստացած «հաղորդակցմանը» (անհատի և իրազրության

<sup>1</sup> Յան. Խ. Դ. Անդրես, Մաշинный перевод и проблема языка-посредника, ВЯ, 1957, № 5, էջ 117.

<sup>2</sup> Ինֆորմացիա (information, information) բառ նշանակում է ոչ միայն հաղորդումը, այլև հաղորդման բախտական թյունը, հաղորդող ուղեգործությունը, հաղորդող ուղեգործությունը, ուստի և մենք վերադասում ենք այն թողնել անփոփոխական հաղորդումը՝ բառով թարգմանելու։ Հաղորդակցումը կամ կոմունիկացիոնը միջոցաւության փոխանակումն է որպէս երկրագունդի սկա, և ինֆորմացիայի պահպանը համար կազմ են նաև հաղորդակցման կամ կոմունիկացիոն անալոգուն և նույնական, տօրեա անիմացիան՝ և տօրեա կոմունիկացիան՝ անիմացիոն։ Խուսները, տօրեա անիմացիան՝ և տօրեա կոմունիկացիան՝ անիմացիոն։ Խուսները, տօրեա անիմացիան՝ և տօրեա կոմունիկացիան՝ անիմացիոն։

<sup>3</sup> ИНГЛ, 1948.

<sup>4</sup> C. E. Shannon and W. Weaver, The Mathematical Theory of Communication, Urbana, 1949. Այս գրքի ճամփարակում է այն Տ. Ֆ. Նիկոլի կողմից „Language“-ում, 1952, XXIX, № 1, էջ 68—82.

փոխազգեցության) բնույթով։ Նեղ տեխնիկական իմաստով հազրդակցման տեսությունը վերաբերում է հազորդակցման կամ կապի տեխնիկական միջոցներին՝ հեռագիր, հեռախոս, ուղիք, հեռուստատեսություն և այլն։

Հազորդակցումը բնականարար ենթադրում է 3 բան՝ հաղորդող, հաղորդում և հաղորդման ստացող։ սակայն որպեսզի հաղորդումը հաղորդողից հասնի հաղորդումն ստացողին, անհրաժեշտ է կապի իրականացման մի ամրող սիստեմ, որի տարրերն են՝ 1) հազորգիչը, որ հաղորդումը կողավորում է՝ վերտածելով ազդանշանների, 2) հաղորդման գիծն ու հաղորդվող ազդանշանները և 3) բնդունիչը, որ ազդանշանները ապակողավորում է՝ փոխակերպելով։ հազորդման Մարդը սովորական հազորդակցման պրցեսի դիրքերից առնված ունի բոլոր բազագրիչները, որովհետեւ նա հանգես է գալիս և՝ որպես հազորդող, և՝ որպես բնդունող։

Կապի կամ հազորդակցման բնդհանուր տեսության հետ կապված՝ սովորաբար տարրերում են պրոբլեմների երեք խումբ՝ 1) տեխնիկական, այն է՝ կապի հուսալիությունը, հազորդվող նշանների փոխանցման ճշգրտությունը, բնդունվող և հազորդվող տեղեկությունների համապատասխանությունը. 2) արգյունավետության (էֆեկտիվության), այն է՝ ստացված հազորդման (աեղեկության) արգյունավետությունը. 3) իմաստաբանական, այն է՝ հազորգիչող նշանների՝ տվյալ իմաստը փոխանցելու ճշգրտամբյան աստիճանը. Կապի բնդհանուր տեսության բան բննության առարկան առաջին երկուան են, բնդ որում հուսալիությունն ու արգյունավետությունը հակառակ հարաբերության մեջ են. հօսափակյունը պահանջում է ազդանշանների ազելացում, արգյունավետությունը՝ գրանց պակասեցում, քիչ նշաններով շատ անզերաթյուններ հազորգելու հարավորության մեծացում. Կապի բնդիճանուր տեսությունը փորձում է գրանց միջն որոշ հավատարկացություն ստեղծել. Այս կապակցությամբ է, որ հանգիս են բնդիճան ազելարդայնության (redundancy, ազբյուտունություն) և բաժանվակալիության (հմատ, էնտրապիա) գաղափարները։ Հայտնի է, որ հազորդողին համարելու համար հաճախ բաժական է՝ հազորդվողը բաների կեսը. այսպես, հեռագրելիս մենք զանց ենք առառմ զննելու ուղարկությունները, բայց այդ չի խանգարում համահայւածման. որանոք իսկ այդ բաները գանձում են ամելարդացման. առանոք իսկ այդ բաները գանձում են ամելարդացման. առանոք առաջնականի «ամելարդացմանությունը» տարբեր գնահատվում առարելու շափի անհրաժեշտությունը ունի. կապի սիստեմի խթան-

այն է՝ փոխակերպված հաղորդման ապակողավորումը արտածվող լեզվի (օւրբուլ language) տեքստի<sup>1</sup>:

Կապի ընդհանուր տեսության կամ այսպես կոչված ինֆորմացիայի (կոմունիկացիայի) տեսության<sup>2</sup> զարգացումը պահանջում է լեզվաբանության և տեխնիկայի է՛լ ավելի սերտ կապ. լեզվաբանության համար կարեղոր են ինֆորմացիայի կամ կապի տեսության նվաճումները, կապի ինժեներների համար՝ լեզվաբանների գործակցությունը: Հնչյունների հնչույթաբանական քննության հայեցակետը աջակցություն է գտնում ինֆորմացիայի (կոմունիկացիայի) տեսության կողմից: Հաղորդակցման միջոցների աննախընթաց աճը սրում է կապի ինժեներների ուշադրությունը ակուստիկայի, լսողական բնկալման, խոսքի հնչյունների հասկանալիության հարցերի ուղղությամբ, որոնց ուսումնասիրության բնագավառում նրանք նշանակալից արդյունքների են հասնում:

Հաղորդակցման (կապի, ինֆորմացիայի) տեսության առաջին սիստեմատիկ շարադրանքը տվել է Կլոդ Է. Շաննոնը 1948 թ.<sup>3</sup>. այն հաջորդ տարին վերահատարակվել է Շաննոնի և Ուիվերի «Հաղորդակցման մաթեմատիկական տեսությունը» գրքում:<sup>4</sup> Հաղորդակցումը լայն իմաստով ընդգրկում է ոչ միայն բանավոր և գրավոր լեզվական հաղորդակցումը, այլև արվեստի զանազան տեսակները (երաժշտություն, նկարչություն, թատրոն, բալետ) և ընդհանրապես մարդկային վարմունքը, որը անհրաժեշտաբար պայմանավորվում է օրգանիզմի՝ արտաքին աշխարհի անհատի ստացած «հաղորդումների» (անհատի և իրադրության

<sup>1</sup> Հմմտ. Հ. Դ. Անդրեև, Մաшинный перевод и проблема языка-посредника, ВЯ, 1957, № 5, էջ 117.

<sup>2</sup> Ինֆորմացիա (information, информация) բառը նշանակում է ոչ միայն հաղորդումը, այլև հաղորդման բովանդակությունը, հաղորդվող տեղեկությունները, ուստի և մենք զերազասում ենք այն թողնել անփոփոխառնոց «հաղորդում» բառով թարգմանելու: Հաղորդակցումը կամ կոմունիկացիան ինֆորմացիայի փոխանակումն է որպես երկկողմանի ակտ, և ինֆորմացիայի տեսությունը հաճախ կոչում են նաև հաղորդակցման կամ կոմունիկացիայի տեսություն: Խուսները, «теория информации» և «теория коммуникации» անվանումներից չխուսափելով հանդերձ, գործածում են նաև «общая теория связи» (կապի ընդհանուր տեսություն) անվանումը՝ ավելի շատ կապի տեխնիկական միջոցների տեսության առումով:

<sup>3</sup> BSTJ, 1948.

<sup>4</sup> C. E. Shannon and W. Weaver, The Mathematical Theory of Communication, Urbana, 1949. Այս գրքի մասին գրախոսական է գրվել Զ. Յոքեակի կողմից „Language“-ում, 1953, XXIX, № 1, էջ 69—93.

փոխազդեցության) բնույթով։ Նեղ տեխնիկական իմաստով՝ հաղորդակցման տեսությունը վերաբերում է հաղորդակցման կամ կապի տեխնիկական միջոցներին՝ հեռագիր, հեռախոս, ուղիղություն և այլն։

Հաղորդակցումը բնականաբար ենթադրում է 3 բան՝ հաղորդող, հաղորդում և հաղորդման ստացող։ Սակայն որպեսզի հաղորդումը հաղորդողից հասնի հաղորդումն ստացողին, անհրաժեշտ է կապի իրականացման մի ամբողջ սիստեմ, որի տարրերն են՝ 1) հաղորդիչը, որ հաղորդումը կողավորում է՝ վերածելով ազդանշանների, 2) հաղորդման գիծն ու հաղորդվող ազդանշանները և 3) ընդունիչը, որ ազդանշանները ապակողավորում է՝ փոխակերպելով։ Հաղորդման Մարդը սովորական հաղորդակցման պրոցեսի դիրքերից առնված ունի բոլոր բաղադրիչները, որովհետև նա հանդես է գալիս և՝ որպես հաղորդող, և՝ որպես ընդունող։

Կապի կամ հաղորդակցման ընդհանուր տեսության հետ կապված՝ սովորաբար տարրերում են պրոբլեմների երեք խումբ՝ 1) տեխնիկական, այն է՝ կապի հումալիությունը, հաղորդվող նշանների փոխանցման ճշգրտությունը, ընդունվող և հաղորդվող տեղեկությունների համապատասխանությունը. 2) արդյունավետության (էֆեկտիվության), այն է՝ ստացված հաղորդման (տեղեկության) արդյունավետությունը. 3) իմաստաբանական, այն է՝ հաղորդվող նշանների՝ տվյալ իմաստը փոխանցելու ճշգրտության աստիճանը։ Կապի ընդհանուր տեսության բուն քննության առարկան առաջին երկուան են, ընդ որում հումալիությունն ու արդյունավետությունը հակառակ հարաբերության մեջ են. Հումալիությունը պահանջում է ազդանշանների ավելացում, արդյունավետությունը՝ դրանց պահանջում, քիչ նշաններով շատ տեղեկություններ հաղորդելու հնարավորության մեծացում։ Կապի ընդհանուր տեսությունը փորձում է դրանց միջև որոշ հավասարակշռություն ստեղծել։ Այս կապակցությամբ է, որ հանդես են բերվում ավելորդայնության (redundancy, ազբյուտունություն) և բովանդակալիության (հմմտ. էնտրոպիա) գաղափարները։ Հայտնի է, որ հաղորդողին հասկանալու համար հաճախ բավական է հաղորդելիք բառերի կեսը. այսպես, հեռագրելիս մենք զանց ենք առնում գրեթե բոլոր սպասարկու բառերը, բայց այդ չի խանգարում հասկանալուն. սրանով իսկ այդ բառերը դառնում են ավելորդային։ Սակայն որոշ աստիճանի «ավելորդայնությունը» տարբեր գեպքերում տարբեր շափի անհրաժեշտություն ունի. Կապի սիստեմի խիստ խան-

դարումների գեպքում ավելորդայնության աստիճանը ուղիղ համեմատական է հասկանալիության հավանականության աստիճանին: Հաղորդման բովանդակալիությունը տեղեկությունների այն քանակությունն է, որ ընկնում է հաղորդման յուրաքանչյուր տարրին: Հաղորդման բովանդակալիությունը կախված է ոչ միայն հաղորդման տարրերի քանակից, այլև տարրերի այն ընդհանուր ամբողջությունից, որից ընտրել ենք տվյալ տեքստի տարրերը: Ափածամանակ նշելի է, որ հաղորդման տարրերը նույն հաճախականությունը չունեն և որ նրանք հանդիպման անհավասար հավանականություն ունեն: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է լինում դիմել հավանականության տեսությանը և վիճակագրական հաշվումներ կատարել, որպեսզի պարզենք, թե հավանականությունների ինչպիսի բաշխման դեպքում կարելի է հասնել ամենաբարձր արդյունավետության: Այս կապակցությամբ երեան է գալիս այն կամ այն լեզվի հնչույթների հավանականությունը և էնտրոպիան (բովանդակալիությունը) հաշվելու անհրաժեշտությունը:

Հարկավոր է նկատի առնել հաղորդման մի կարևոր առանձնահատկությունը: Հաղորդումը տեխնիկապես ընդհատական (դիմերետային) բնույթ ունի. և՛ ընդհատական, և՛ անընդհատ հաղորդումները կապի (կոմունիկացիայի) սիստեմում վերածվում են ընդհատականների, այսինքն՝ հաղորդումը տարրալուծվում է բաղդրիչների:

## Բ) Լեզվի հոգեբանություն (պահուղինգվիստիկա)

Ընդհանուր տեղեկություններ.— Այս անվան տակ միավորվում են այն բոլոր ուսումնասիրությունները, որոնց մեջ արծարծվում են լեզվի հոգեբանության (գերմ. Sprachpsychologie) կամ լեզվաբանական հոգեբանության հարցերը: ԱՄՆ-ում այս երկու անվանումների հետ միասին գործածության մեջ է մտել նաև «պսիխոլինգվիստիկա» (psycholinguistics) տերմինը, որը աստիճանաբար ավելի լայն բաղաքացիություն է ձեռք բերում: ԱՄՆ-ում երեքմն պսիխոլինգվիստիկան համարում են էթնիկական հոգեբանության կամ սոցիալ-հոգեբանության (ethnopsychology կամ sociopsychology) մի ճյուղը<sup>1</sup>: Լեզվահոգեբանական հետազոտություններով զբաղվում են Գերմանիայում Կայնցը, ԱՄՆ-ում՝ Կանտորը և ուրիշներ: Կայնցը լեզվաբանու-

<sup>1</sup> Այսպես է վարգում, օրինակ, „Psychological Abstracts“ հանդեսը:

թյան և Հոգեբանության օբյեկտները սահմանափակում է նրանով, որ առաջինին հատկացնում է լեզվի, երկրորդին՝ խոսքի ուսումնասիրությունը<sup>1</sup>: Կիբեռնետիկայի և կոմունիկացիայի ու ինֆորմացիայի տեսության հետ կապված հանդես են գալիս լեզվահոգեբանական նոր պրոբլեմներ, որոնց լուծման փորձ է կատարված 1954 թ. լուս տեսած «Պահիսոլինգվիստիկայի» հեղինակների կողմից<sup>2</sup>:

Եթե պսիխոլինգվիստիկա անվան տակ դնենք այն բոլոր ու-  
սումնասիրությունները, որոնք առնչվում են լեզվի հոգեբանու-  
թյան հետ, ապա պսիխոլինգվիստիկայի վաղ ներկայացուցիչներ  
կլինեն նաև Շտայնթալը և Վունդտը. տարբերությունն այն է, որ  
նրանք լեզուն դիտում էին որպես հոգեբանական երկույթ և լեզ-  
վաբանությունը համարում հոգեբանության մի մասը, իսկ բուն  
պսիխոլինգվիստիկայի հետեւրդները լեզվաբանությունը և հոգե-  
բանությունը դիտելով որպես անկախ գիտություններ՝ փորձում են  
դրանց միջև կամուրջ նետել: Լեզվահոգեբանական պրոբլեմ-  
ներով զբաղվողները գերազանցապես հոգեբաններ են: «Պսիխո-  
լինգվիստիկայի» հեղինակները փորձում են ստեղծել մի միջդիս-  
ցիպին, որ զուգորդում է երկու գիտությունների նվաճումները և  
դրանք քննադատաբար օգտագործում:

Ներկա հատվածում մենք քննում ենք նաև հայտնի հոգեբան և լեզվաբան Կ. Բյուկերի հայացքները, որոնք կարենոր դեր են խաղացել ժամանակակից ստրուկտորալիստական տեսության ձևավորման համար:

Թիհկիորիստական Հոգեբանության սկզբունքները լեզվի նկատմամբ կիրառելու փորձեր կատարվել են և՛ հոգեբանների, և՛ լեզվաբանների կողմից. Աման փորձերից են Բլումֆիլդի և Մոռիսի արդեն հիշատակված աշխատությունները:

Կ. Բյուլերի ռացիոնալիստական պահիուախիոմատիզմը. — Կարլ Բյուլերը մասնագետ Հոգեբան է և պատկանում է վյուրց-

<sup>1</sup> F. Kainz, Psychologie der Sprache, Stuttgart, 1941-1943. Einführung in die Sprachpsychologie, Wien, 1946.

<sup>2</sup> Psycholinguistics. A Survey of Theory and Research Problems, by C. E. Osgood & T. A. Sebeok, XX, № 4 (Memoir 10). Міжнародна конференція з проблем психолінгвістики, ІІІ. У. Культурно-науковий інститут «О психолінгвістиці», М., 1957, альбом статей. Випуск 1. Академічна фундація ім. І. Н. Кірілова. У цьому випуску дружеють статті про проблеми психолінгвістики, які були публіковані в російській пресі та наукових виданнях за останні п'ять років.

բուրգյան հոգեբանական դպրոցին, որը մոտ լինելով գեշտալտ-հոգեբանությանը՝ վերջինից տարրերվում է գերազանցապես հիմնավորման եղանակով. եթե գեշտալտ-հոգեբանության ներկայացուցիչները իրենց հայացքների հիմնավորման մեջ դիմում են նշագրիտ գիտություններին, ապա վյուրցքուրգյան դպրոցի ներկայացուցիչները ենում են փորձի ուսցիության մեկնարանումից: Բյուլերը մտածողության հոգեբանության խոչոր մասնագետ Շ. Կյուլակի աշակերտն է: Բյուլերի հոգեբանական աշխատություններից առանձնապես հիշատակելի են «Գեշտալտ-ընկալումները», «Երեխայի հոգևոր զարգացումը» և «Արտահայտության տեսությունը»<sup>1</sup>, որոնք որոշ կողմերով նախապատրաստել են նրա գլխավոր լեզվաբանական աշխատության երեան գալը:

Բյուլերն զբաղվում է նաև լեզվաբանությամբ, ընդ որում նրա ուշադրության կենտրոնում գտնվում են շարահյուսության և լեզվի ընդհանուր տեսության պրոբլեմները: Լեզվական հարցերին նա մոտենում է հոգեբանական հայեցակետից: Դեռևս 1918 թ. գրած իր «Նախադասության նորագույն տեսությունների քննադատական զննություն» աշխատության մեջ<sup>2</sup> նա տալիս է շարահյուսական զանազան տեսությունների քննադատական տեսությունը և այս կապակցությամբ անդրադառնում լեզվի ֆունկցիաների հարցին: 1934 թ. լույս ընծայած իր «Լեզվի տեսությունը» աշխատության մեջ<sup>3</sup> նա նպատակ է զնում բացահայտել լեզվի աքսիոմատիկան, —այն աքսիոմաները, որոնցից ելնելով պետք է քննության ենթարկել լեզուն, —և այս կապակցությամբ հետագա մշշակման է ենթարկում լեզվի ֆունկցիաների իր տեսությունը:

Այս աշխատության մեջ, բացի հոգեբանական ուսմունքներից, Բյուլերը հենվում է մի կողմից՝ Կանտի և Հուսենլի (մասմբ նաև Մարտիի և Կասսիրերի) փիլիսոփայական սիստեմների, մյուս կողմից՝ Սոսյուրի և Սեպիրի լեզվաբանական կարևորագույն և կրթունքների վրա: Լեզվի ֆունկցիաների եռակի բաժանման սաղմերն առկա են արդեն է. Հուսենլի և Վ. Պորցիգի մոտ:

<sup>1</sup> K. Bühler, Gestaltwahrnehmungen, 1913. Geistige Entwicklung des Kindes, 1918. Ausdruckstheorie, 1933.

<sup>2</sup> K. Bühler, Kritische Musterung der neueren Theorien des Satzes, IJ, VI 1918.

<sup>3</sup> K. Bühler, Sprachtheorie, Jena, 1934. Համատիպ գերնազրով մի աշխատություն 1933 թ. հրատարակել է եղիպտագետ Ալան Հ. Փարզիները (A. H. Gardiner, Theory of Speech and Language, Oxford, 1932), որ, սակայն, իր արժեքով և ազդեցությամբ շատ բանով զիջում է սրան: Այնուեղ քննվում է լեզվի և խոսրի տարրերության հարցը, ընդ որում նախադատությունը հատկացվում է խոսքին:

Հենվելով Սոսյուրի բաժանման վրա և համեմատելով Բյուլերի ուսմունքը է. Կասպիրերի և լ. Վայսգերբերի ուսմունքների հետ՝ լեզվաբանության պատմաբան Հ. Արենսը նշում է, որ Կասպիրերի քննության առարկան մարդու խոսելու կարողությունն է (*langage*), Վայսգերբերինը՝ լեզուն (*langue*), Բյուլերինը՝ խոսքը (*parole*) իր անմիջական բանավոր դրսեորմամբ<sup>1</sup>: Սակայն Արենսի այս մեկնաբանումը միայն սխեմատիկ կերպով է համապատասխանում իրականությանը. այսպես, օրինակ, Վայսգերբերի քննության առարկան շատ հեռու է սոսյուրյան լեզուն լինելուց: Միաժամանակ Բյուլերը մեծ ուզադրություն է հատկացնում և լեզվի հարցերին:

Լեզվի ֆունկցիաների բյուլերյան տեսությունը սկզբնապես պենետիկ-էվոլյուցիոնիստական բնույթ ուներ. Բյուլերը նպատակ էր զնում պարզել լեզվի ֆունկցիաների էվոլյուցիան: Ըստ նրա՝ կենդանուն ի սկզբանե արդեն հատուկ է երկու ֆունկցիա՝ 1) ձայնարձակումը (Kundgabere) որպես չնպատակադրված, զուտ գգացական ձայն, ինչպես որ այն երեան է գալիս ցավի և կատաղության ճիշերի մեջ, և 2) կանչը (Auslösungs)<sup>2</sup> որպես հասարակական կոնտակտի նշան, ինչպես որ այն հանդես է գալիս հրապուրման և նախազգուշացման ճիշերի մեջ: Այս արտահայտչական նշանները մարդու մոտ ձեռք են բերում նոր «իմաստային ծավալ»՝ գործածվելով որպես առարկաների և իրավիճակների նկարագրություն կամ շարադրում (Darstellung), որը լեզվի երրորդ ֆունկցիան է և հատուկ է մարդուն<sup>2</sup>:

Իր «լեզվի տեսությունը» աշխատության մեջ, նպատակ դնելով տալ լեզվի ամբողջական մի քննություն՝ իր բոլոր կողմերով, Բյուլերը լեզվի ֆունկցիաների հարցը կապում է լեզվի կաղապարային բնույթի (առաջին աքսիոմայի) քննության հետ: Բյուլերի այս աշխատությունը բաժանվում է 4 մասի 1) լեզվի ուսումնասիրության սկզբունքները, 2) լեզվի ցուցական դաշտը և ցուցական բառերը, 3) լեզվի սիմվոլային դաշտը և անունները (Nennwörter) և 4) Մարդկային լեզվի կառուցվածքը՝ տարրերը և բաղադրումները (Kompositiven): Լեզվի ուսումնասիրության սկզբունքները Բյուլերը հանգեցնում է հետևյալ 4 աքսիոմային. 1) լեզուն


<sup>1</sup> H. Arends, Sprachwissenschaft, 1955, № 446.

<sup>2</sup> Հմմ. G. Pätzsch, Grundfragen der Sprachtheorie, Halle, 1955 № 34.

մի որոշ միջոց-կաղապար (*Organonmodell*) է. 2) լեզուն նշանացին բնույթ ունի, նշանների սիստեմ է. 3) լեզվի մեջ միասնաբար տրված են լեզուն և խոսքը (ըստ Սոսյուրի) կամ գործունեությունը (ներքեւ՝ Tätigkeit) և գործը (εργον, Werk) (ըստ Հումբռոլդտի). 4) ամեն մի լեզվական տիպ երկսիմտեմ է, այսինքն՝ հենվում է հավասարապես անհրաժեշտ երկու կատեգորիայի՝ բառի և նախադասության վրա, ամեն մի լեզվի մեջ այս երկու միավորը անհրաժեշտաբար տրված են: Լեզվական աքսիոմատիկային թյուկերն սկզբնապես առանձին ուսումնասիրություն է նվիրել<sup>1</sup>:

Լեզվի կաղապարի ըմբռնումը թյուկերի մոտ հենվում է լեզվական կոնկրետ հաղորդակցական ակտի քննության վրա: Ըստ Թյուլերի՝ լեզվի յուրաքանչյուր հաղորդակցական ակտ անհրաժեշտաբար ենթադրում է մի որոշակի կաղապար (Modell): Կապված լեզվի՝ մի բան հաղորդելու միջոց (*Organon*) լինելու հետ. յուրաքանչյուր այդպիսի ակտ ենթադրում է հաղորդող, ընդունող և հաղորդման առարկա: Այսպիսով, ամեն մի լեզվական երկույթ կարող է քննվել երեք հայեցակետով՝ հաղորդողի, ընդունողի և հաղորդման նյութի: Լեզվի քննության այս 3 հայեցակետերն էլ ենթադրում են լեզվի անհրաժեշտաբար տրված 3 ֆունկցիա, ընդ որում դրանց առանձնացման համար թյուկերը հիմք է ընդունում լեզվական նշանի հարաբերությունը դեպի խոսողի ներքնաշխարհը կամ ներքին ապրումը (արտահայտում), դեպի լսողը (հաղորդում) և դեպի արտաքին աշխարհը, նրա առարկաներն ու երկույթները (նկարագրություն): Այս աշխատության մեջ, ի տարրերություն նախորդի, թյուկերը լեզվի ֆունկցիաների հարցը քննում է անկախ գենետիկ հաջորդականությունից և այդ երեք ֆունկցիաները դնում իրար կողքի որպես մարդկային լեզվի երեք գոյակից ֆոնակցիաներ. որոշ փոփոխություն կատարված է առաջին երկու ֆունկցիաների անվանումների մեջ՝ ձայնարձակման (Kundgabe) փոխարեն արտահայտում (Ausdruck), կանչի (Auslösung) փոխարեն դիմում կամ հաղորդում (Appell), որչափով որ դրանք հանդես են գալիս որպես մարդկային լեզվին հատուկ ֆունկցիաներ: Լեզվի միջոց-կաղապար լինելու աքսիոման թյուկերն արտահայտում է հետեւյալ սխեմայով.

<sup>1</sup> K. Bühler, Axiomatik der Sprachwissenschaft, Kant-Studien, XXXVIII.



Լեզվական նշանը արտահայտման ֆունկցիայի դեպքում հանդիս է գալիս որպես հայտանիշ (Symptom), հաղորդման դեպքում, երբ հաղորդողը նպատակ ունի լսողի մոտ հակազդում (ռեակցիա) առաջ բերել,—որպես ազդանշան (Signal) և նկարագրության ֆունկցիայի դեպքում՝ որպես խորհրդանշան (Symbol): Նկարագրական ֆունկցիան, որպես միայն մարդկային լեզվին հատուկ ֆունկցիա, Բյուզերը համարում է այդ լեզվի համար ամենից ավելի բնորոշը: Սակայն իրականում այսպես կոչված նկարագրման ֆունկցիան ինքնին առկա է մյուս ֆունկցիաների մեջ, որովհետև և՛ արտահայտման ֆունկցիան, և՛ հաղորդման ֆունկցիան ինքնին ևնթադրում են, որ մի բան արտահայտվում է (այն է՝ մտքի բովանդակությունը, որ վերջինիրդու այլ բան չի կարող լինել, բան առարկայական աշխարհի հետ կապված մի բան) կամ մի բան հաղորդվում է (այն է՝ հաղորդման բովանդակությունը, որ նույնպես այլ բան չի կարող լինել, բան առարկայական աշխարհի հետ կապված մի բան):<sup>1</sup> Նշելի է, որ թեև հաղորդակցումն ունի 3 կողմ (հաղորդողը, ընդունողը և հաղորդվողը), արտահայտումը՝ երկու կողմ (արտահայտողը և արտահայտվողը), բայց չի կարելի միայն դրանց հիման վրա առաջին դեպքում առանձնացնել երեք ֆունկցիա, երկրորդ դեպքում՝ երկու (կամ երկու դեպքում էլ երեք՝ առաջինների տարածմամբ նաև երկրորդների վրա):

<sup>1</sup> Հմմ. А. С. Чикобава, Учение И. В. Сталина о языке как общественном явлении, „Вопросы языкоznания в свете трудов И. В. Сталина”, М., 1952, № 93—94, аյլև G. Pätsch, Grundfragen der Sprachtheorie, Halle, 1955, № 34—35.

լեզվի երկրորդ աքսիոմայի բննության մեջ Բյուլերը հենվում է Սոսյուրի լեզվաբանական կոնցեպցիայի վրա՝ այն անցկացնելով նեղանտականության և հուսեռոյան ֆենոմենոլոգիական գեշտալտ-փիլիսոփայության բովով։ Նա հեռու չէ նաև լեզվի կասսիրերյան ըմբռնումից որպես սիմվոլիկ ձեր։ Լեզուն Բյուլերի համար որոշակի նշանային բնույթ ունի. լեզվական երևույթները բազմակողմանի և բազմաստիճան նշանացի պատկերներ են (zeichenhafte Gebilde). «Լեզվական երևույթները,— գրում է Բյուլերը, — ամբողջովին նշանային են։ Որպես նշան և ի նշան (als Zeichen und zum Zeichen) է կառուցված արդեն որևէ բառի հնչապատկերը (Klangbild): Tische (=սեղաններ—Գ. Զ.) բառը որպես հնչում պարունակում է չորս տարրական բնութագրիչ, որոնցով մենք դրանք տարրերում ենք հնչանման կազմավորումներից (Gebilde)։ Այս բնութագրիչները՝ բառի հնչույթները ֆունկցիալորում են որպես նիշեր (notae, Merkmale). Դրանք հնչապատկերով տարրերից նշաններ են։ Այնուհետև. ամբողջ «Tische» հնչապատկերը իմաստալից խոսքի մեջ ֆունկցիավորում է որպես առարկայի նշան. այն ներկայացնում է մի իր կամ իրերի մի դաս (տեսակ)։ Վերջապես, «Tische» բառը կոնտեքստում ունի տեղական արժեք (ein Stellenwert) և երբեմն հնչույթապես վերջից հարստացվում է ս-ով (bereichert um ein s). այս բոլորը միասին (dies allgemein) դաշտային արժեքներ են (Feldwerte), որոնք բառը իմաստակից շրջապատում (synsemantisches Umfeld)։ Կարող է ստանալ»<sup>1</sup>։

Լեզուն Բյուլերի համար վերջիվերջո յուրատեսակ «սիմվոլիկ դաշտ» է. լեզվական նշանները գիտակցության ապրիորի կատեգորիաներ են, որոնք հանդես են գալիս որպես իրերի, երևույթների ու կապերի սիմվոլներ (խորհրդանշաններ)։ այս կապակցությամբ էլ հենց լեզվի նկարագրական ֆունկցիան, որի դեպքում լեզվական նշանները հանդես են գալիս որպես սիմվոլներ, համարվում է մարդկային լեզվի ամենաբնորոշ, այդ լեզվի էությունը որոշող ֆունկցիան։ Մարդկային գիտակցությունը, ըստ Բյուլերի, իր էությամբ սիմվոլիկ բնույթ ունի. լեզուն էլ ոչ այլ ինչ է, եթե ոչ գիտակցության կաղապարը։

Լեզվի երրորդ աքսիոմայի բննության մեջ Բյուլերը հանդես է բերում ակնհայտ էկլեկտիզմ՝ փորձելով զուգադրել Հումբուլդտի և Սոսյուրի հայեցակետերը։ Երականում Հումբուլդտի գործունեա-

<sup>1</sup> K. Bühler, Sprachtheorie, 1931, լ. 332

թյան ու գործի ըմբռնումները արմատապես տարբերվում են Սույուրի լեզվի ու խոսքի ըմբռնումներից. լեզուն և՛ իբրև գործունեություն Հումբուլդտի համար ժողովրդի ոգու արտահայտությունն է, մինչդեռ Սոսյուրի համար լեզուն հասարակական երեսույթ է, խոսքը՝ անհատական: Լեզվի հասարակական բնույթը Բյուլերի մոտ գիտական որևէ լուրջ մեկնաբանության շի ենթարկվում. ընդհանուր հասարակականը Բյուլերի համար լոկ հոգեբանական կատեգորիա է, որ արտահայտվում է ընդհանուր պատկերացումներով: Հումբուլդտի և Սոսյուրի տարբերած կողմերի (H—Handlung «գործողություն», W—Werk «գործ», A—Akt «ակտ, խոսողական ակտ»), G—Gebilde «կառուցվածք, իմա՞լեզվակառուցվածք») էկլեկտիկ զուրուղմամբ Բյուլերն ստանում է հետեւյալ սխեման:

	I	II
1	H	W
2	A	G

Բայտ Բյուլերի մեկնաբանման՝ այսաեղ 1-ը ցույց է տալիս սուբյեկտին վերաբերող (subjektbezogene), II-ը՝ սուբյեկտից անկախ (subjektsentbundene) երեւությունները. I-ը՝ ձեւականացման ստորին աստիճանը (niedere Formalisierungsstufe), 2-ը՝ ձեւականացման բարձր աստիճանը (höhere Formalisierungsstufe):

Լեզվի շորորդ աքսիոմայի քննության մեջ Բյուլերը նպատակ է դնում բացահայտել լեզվի՝ որպես նշանների սիստեմի տարբերությունը նշանների այլ սիստեմներից: Ըստ Բյուլերի լեզուն տարբերվում է մյուս կարգի նշանային սիստեմներից նրանով, որ դրանք միակարգ սիստեմներ են, մինչդեռ լեզուն երկկարգ սիստեմ է. լեզվական նշանների սիստեմը անհաժեշտաբար հանդիս է գալիս երկու կարգի միավորների՝ բառերի և նախադասությունների ձևով. լեզվի մեջ գոյություն ունեն սիմվոլներ (բառեր), որոնք լեզվի սիմվոլային դաշտում որոշակի հարաբերությունների մեջ են մտնում (նախադասություններ կազմում) և որոշակի շարադրության կատարում:

Լեզվի հետագա քննությունը Բյուլերի մոտ հենվում է հիշված աքսիոմաների հաշվառման վրա, ընդ որում Բյուլերը նախ քննում է բառերի՝ որպես լեզվական նշանների խմբերն ու գործածության պայմանները, ապա մարդկային խոսքի կառուցվածքը (խոսքի կառուցողական տարրերը և դրանց կոմպոզիցիան): Լեզվական

նշանների տեսակների ու գործածության ընդհանուր պայմանների քննությունը Բյուզերը հիմնում է երկու դաշտերի գաղափարի վրա. ըստ նրա՝ ինչպես որ նկարն ստեղծելիս գույների գործածության համար անհրաժեշտ են որոշակի իրադրություն և գույների ֆոն (Malfläche), այնպես էլ լեզվական նշանների իմաստային գործածության ու ճշուման համար հարկավոր են «ցուցադաշտ» (Zeigfeld) կամ իրադրություն և «սիմվոլային դաշտ» (Symbolfeld) կամ լեզվական կոնտեքստ. ցուցադաշտը այլ կերպ Բյուզերը կոչում է «այստեղ-այժմ-ես սիստեմ», այսինքն՝ այստեղ մտցնում է այն ոչ-լեզվական պայմանների կոնկրետ ամբողջությունը, որի մեջ տեղի է ունենում խոսքը. սիմվոլային դաշտը միավորում է իր մեջ լեզվական նշանների գործածության լեզվական պայմանների ամբողջությունը, և նրա գաղափարը հենվում է լեզվի շարահյուսական և լեքսիկական կողմերի հարաբերության բյուզերյան ըմբռուման վրա: Ցուցադաշտի քննության հետ կապված՝ Բյուզերը տարրերում է ցուցման 3 տեսակ, որոնք հենվում են անմիջական առկայության, ստեղծագործական երևակայության և հիշողության վրա՝ 1) ցուցադրում առ ակն (demonstratio ad oculos), 2) ցուցում երևակայությանը (deiksis am phantasma) և 3) վերաբերում (anaphora). առաջինը ենթադրում է անմիջաբար առկա առարկա, երկրորդը՝ երևակայությամբ պատկերացվող, երրորդը՝ խոսքի մեջ հիշվող. վերջինս, ըստ Բյուզերի, բուն լեզվական առումով ամենից ավելի նշանակալիցն է: Սիմվոլային դաշտի քննության հետ կապված՝ Բյուզերը տարրերում է լեզվական նշանների 3 տեսակ ֆոն (Umfeld): 1) սինպրակտիկական, 2) սինֆիզիկական և 3) սինսեմանտիկական. առաջին երկուսը նկատի ունեն լեզվական նշանների մեկուսացված գործածությունը, այսինքն՝ այն դեպքերը, երբ նրանք ունեն աղքատ կոնտեքստ կամ զորկ են կոնտեքստից. երրորդը նկատի ունի այն դեպքը, երբ լեզվական նշանները գործածում են նրանց իմաստը բավարար շափով ճշող կոնտեքստներում: Սինպրակտիկականը հանդես է գալիս այն դեպքում, երբ կոնկրետ իրադրությունը բավականաշափ ճշտում է ավյալ լեզվական նշանի գործածությունը՝ անկախ կոնտեքստից կամ աղքատ կոնտեքստի դեպքում (այսպես, օրինակ, երբ սրճարանում հաճախորդը մատուցողին ասում է «աև» կամ տաքսի վարձողը վարորդին՝ «ուղիղ»): սինֆիզիկականը հանդես է գալիս լեզվական նշանների նշած առարկայի անմիջական առկայության դեպքում, երբ, ասենք, բառն անմիջապես «ազդանշում է» առար-

կան (ինչպես, օրինակ, ապրանքների պիտակները, գրքերի անունները և այլն):

Բայտ նշված երկու դաշտի հետ ունեցած հարաբերության՝ Բյուլերը տարբերում է բառերի երկու հիմնական խումբ՝ ցուցական բառեր (Zeigwörter) և անվանական բառեր (Nennwörter): Ցուցական բառերը անձնական և ցուցական դերանուններն են, ցուցական մակրայները և ընդհանրապես ցուցական բառերը. անվանական բառերը գոյականներն են, ածականները և այլն: Ցուցական բառերը հանդես են գալիս որպես ազդանշաններ, անվանական բառերը՝ որպես սիմվոլներ: Ցուցական բառերի իմաստը ճշտվում է ցուցադաշտում, անվանական բառերի սպեցիֆիկ իմաստը՝ սիմվոլային դաշտում, սինսեմանտիկական շրջապատում. սակայն բայերի հրամայականը փաստորեն հանդես է գալիս որպես գործողության ազդանշան, գոյականներն էլ երբեմն կարող են դերանվանական ֆունկցիա կատարել: Զայնարկությունները Բյուլերը դիտում է որպես ցուցական և անվանական բառերի միջև գտնվող բառեր, որոնք իրենց բնույթով հատուկ են ոչ թե մարդկային լեզվի երկարգ նշանային սիստեմին, այլ միակարգ նշաններին (ճիշերին). Միակարգ նշանային սիստեմի տարրեր են համարվում նաև այս՝ և ո՛չ բառեր:

Անցնելով խոսքի կառուցվածքի (Ասիսաւ) քննությանը՝ Բյուլերը տարբերում է կառուցվածքային չորս շարք՝ հնչույթ, բառ, նախադասություն և նախադասությունների կապակցություն: Այստեղ առանձնապես ուշագրավ է վերջին երկու շարքի քննությունը, մանավանդ որ Բյուլերը հատուկ ուշադրություն է հատկացնում շարահյուսության հարցերին: Նկատի ունենալով Ծիսի սահմանումը՝ Բյուլերը այստեղ տեսնում է նշված նախադասության 3 հատկանիշ՝ «քերականական ձևավորվածությունը», «խոսքի նվազագույն միավոր լինելը», «հարաբերությունը դեպի իրականությունը», և փորձում է դրանք բացատրել ու ճշտել իր բնդհանուր սկզբունքների լույսի տակ, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձնում առաջին հատկանշի վրա. «Թե ինչո՞ւ են մարդկային ծանոթ լեզուները դարձել մի այլ բան, քան այդպիսի սիմվոլների հարուստ միակարգ-սիստեմներն են, բացատրվեց աքսիոմատիկայի մեջ,—գրում է Բյուլերը,— համենայն դեպս նրանք ինչ-որ տարբեր բան են, այն է՝ սիմվոլային դաշտ-սիստեմներ, և այդ պետք է նախադասության ուսմունքը հաշվի առնի: Ծիսի սահմանման այն ցուցումը՝ թե լրիվ նախադասությունը (Vollsatz) «քերականորեն ձևավորված» է, շատ անորոշ է և ճապաղ

(ist viel zu unbestimmt und wage). **Մենք** այն փոխարինում ևնք մի այլ ճշգրտված ցուցումով, որ լրիվ նախադասությունը ներկայացնում է (aufweisen) մի փակված և ամբողջովին կրագեցված սիմվոլային դաշտ (ein geschlossenes und wohlbesitzes Symbolsfeld): **Սա** այն հիմքն է, որի վրա պետք է կառուցվի նախադասության զուտ քերականական ուսմունքը<sup>1</sup>: Հստ թյուլերի՝ սինպրակտիկական և սինսեմանտիկական շրջապատների (Umfeld) գաղափարները հնարավորություն են տալիս թափանցելու նախադասության բնույթի մեջ: Նախադասության բյուկերյան ուսմունքը հենվում է նախադասության որոշակի սխեմաների, որոշակի կաղապարների ենթադրման վրա, ընդ որում դրանք բնականաբար դիտվում են որպես մտածողության ընդհանուր տրամաբանական սխեմաների դրսենորումներ: **Այդ** կաղապարները կամ սխեմաները հնարավորություն են տալիս բառերը զուգորդելու և նախադասություններ կազմելու: Նախադասությունների մեջ բառերի զուգորդելիությունը ենթակա է որոշակի կանոնների: այս կամ այն որոշակի կարգին պատկանող բառը, ըստ թյուլերի, իր մոտ ունի մեկ կամ մեկից ավելի ազատ տեղեր, որոնք գրաղեցվում են այս կամ այն որոշակի խմբի բառերով (այսակղից նախադասության բյուկերյան սահմանման մեջ «ամրացուիին զրաղեցված» բառերը). այն հանգամանքը, թե ինչ կարգի բառեր կարող են գրաղեցնել այդ աեղերը, որոշվում է այս կամ այն հարցական բառով, որն, այսպիսով, դառնում է բառերի կարգը որոշող նշան: քերականական այնպիսի տարրերը, ինչպիսիք հոլովանիշերն են, ոչ այլ ինչ են, եթե ոչ բառերի մի որոշակի կարգի՝ գոյականների կողմից զրաղեցվող տեղերի նշանները: Խոսսելով անդեմ նախադասությունների մասին՝ թյուլերը նշում է, որ այս կարգի նախադասությունների դեսլքում բայց մոտ գտնվող ազատ տեղերը լրացվում են որտե՞ղ և ե՞րբ հարցերով, մինչդեռ նույն բայց այլ դեպքում ունի ո՞վ (ի՞նչ) և ո՞ւմ (ի՞նչ) հարցերին պատասխանող ազատ տեղեր:

Նախադասությունների կապակցության, պարզ նախադասություններից բարդ ամբողջություններ կազմելու հարցի քննության մեջ թյուլերը ուշագրությունը կենտրոնացնում է «վերաբերական» (անաֆորիկ) տարրերի դերի վրա: **Սրանց** օգնությամբ է, որ ձևավորվում են նախադասությունների կապակցությունները, կապ է ստեղծվում տարրեր մասերի միջև, ցուց են տրվում նախորդն ու հաջորդը, ընդ որում անաֆորիկ ֆունկցիա կարող են կատարել

<sup>1</sup> K. Bühler, Sprachtheorie, 1934, § 26.

ու միայն անձնական և ցուցական դերանունները, այլև հարաբերական դերանուններն ու շաղկապները: Այս հարցում թյուկերը իր ուսումնասիրության հիմնական արդյունքը համարում է այն բանի հավաստումը, որ «կոնտեքստն ինքը դառնում է ցուցադաշտ վերաբերման միջոցով» (...der kontext selbst werde zum Zeigfeld in der Anafora)»<sup>1</sup>:

Այսպիսով, թյուկերը՝<sup>2</sup> 1) ձգուում է բացահայտել այն պարզ աքսիոմատիկ հիմքերը, որոնց հիման վրա կառուցվում են մարդկային տարրեր լեզուների նշանային սիստեմները. իրականում թյուկերյան աքսիոմաները կառուցվում են որոշ ապրիորի հիմքերի վրա. 2) թյուկերի ուշադրության կենտրոնում գտնվում է լեզվական երեսությների ներքին կողմը, որ բացատրվում է նրա հոգեբանական մոտեցմամբ. արտաքին կողմը հաշվի է առնվում միայն ներքին կողմի քննության հետ կապված. 3) այդ նույն հիմունքով թյուկերը իր ուշադրությունը կենտրոնացնում է խոսքի վրա, աշխատում պարզել լեզվական նշանների սիստեմի գործածության պայմաններն ու հիմունքները. այս կապակցությամբ նրա մոտ կորչում է լեզվի իսկական հասարակական ըմբռնումը՝ լուծվելով հաղորդակցման առանձին ակտի քննության մեջ. այս հողի վրա է, որ թյուկերի մոտ երեան է գալիս նկարագրության ֆունկցիայի գաղափարը, որ լեզվի, որպես հասարակական երեսութի, քննության դեպքում մտնում է լեզվի, որպես հասարակական երեսութի, հաղորդակցական և արտահայտչական ֆունկցիաների մեջ իրենքաղացուցիչ տարր. 4) թյուկերը իր գլխավոր աշխատության մեջ ուշադրությունը կենտրոնացնում է լեզվական սիստեմի ֆունկցիոնալիտյան վրա՝ պատմագենետիկական մոմենտը թողնելով մի կողմ. այս առումով թյուկերի լեզվի տեսությունը սերտորեն կապված է ստրոկտորալիզմի հետ. Թյուկերի՝ լեզվական ֆունկցիաների ուսմունքը օգտագործվել է զանազան ստրոկտորալիստների՝ կազմիուսի<sup>3</sup>, Տրուբեցկոյի և ուրիշների հնչունաբանական դրույթների համար. Տրուբեցկոյը մասնավորապես այդ ուսմունքի վրա է հիմնում հնչույթաբանական դիսցիպլինների իր դասակարգումը. Թյուկերն իր հերթին ողջունել է Տրուբեցկոյի հնչույթաբանական դրույթները<sup>3</sup>:

<sup>1</sup> K. Bühlert, Sprachtheorie, 1934, էջ 386.

<sup>2</sup> J. V. Laziczius, Probleme der Phonologie, „Ungarische Jahrbücher“, XV, 1935.

<sup>3</sup> K. Bühlert, Phonetik und Phonologie, TCLP, IV, 1931, էջ 22—53.

**Բյուլերի հետևորդներից նշելի է Բրունո Մնելլը:**

Հաղորդման տեսությունը և լեզվանգերանական (պսիխո-լիեզվիստիկական) պրոբլեմները.— Լեզվի նկատմամբ հետաքրքրության ընդհանուր աճը, այն ամենաբազմազան հայեցակետերով ուսումնասիրելու ժամանակակից պահանջները և այդ բնագավառում ձեռք բերված նվաճումները առաջ են բերում լեզվի հոգեբանական քննության նոր խնդիրներ, առաջադրում լեզվահոգեբանական նոր պրոբլեմներ։ Ինչպես հայտնի է, ընկալողի և ընկալվողի փոխհարաբերությունը վաղուց ի վեր գտնվում է փիլիսոփաների և հոգեբանների ուշադրության կենտրոնում։ Լեզվի հոգեբանները նպատակ դնելով լեզվական հաղորդակցման ներքին հոգեբանական կողմի քննությունը՝ զբաղվում են այնպիսի կարեոր հարցերով, ինչպիսիք են հաղորդակցողի (հաղորդողի և ընդունողի, խոսողի և լսողի, գրողի և ընթերցողի) և հաղորդվողի փոխհարաբերությունը։ Ինֆորմացիայի տեսությունը առաջ է բերում հետաքրքրության նոր ալիք լեզվական պրոբլեմների նկատմամբ և բնականաբար դնում լեզվահոգեբանական նոր պրոբլեմներ։ Եթե ամերիկյան նկարագրական լեզվաբանության ներկայացուցիչները ձգտում են լեզվական քննության հնարավոր շափիձեականացման ու իմաննենտացման, աշխատում են «բուն» լեզվաբանական քննությունից դուրս մղել նշանակության (իմաստի) հարցերը, ապա լեզվի հոգեբանները (պսիխոլինգվիստները) իրենց վրա են վերցնում դրանց քննությունը։ 1953 թ. ամռանը հրավիրված լեզվահոգեբանական սեմինարի ժամանակ երկու կարգի խնդիր է դրվում՝ 1) լեզվական պրոցեսի նկատմամբ 3 տարրեր մոտեցումների քննությունը. ա) լեզվի լեզվաբանական կոնցեպցիան՝ որպես սիստեմատիկորեն հարաբերակից (systematically interrelated) միավորների մի ստրուկտորայի. բ) լեզվի ուսուցման մեթոդիկայի կոնցեպցիան (the learning theorist's conception)\* որպես նշանները վարմունքին հարաբերող սովորույթների մի սիստեմի (as a system of habits relating signs to behaviour). զ) լեզվի՝ ինֆորմացիայի տեսության կոնցեպցիան որպես հաղորդման փոխանցման մի միջոցի. 2) լեզվի քննության այս երեք տարրեր հայեցակետերի հետ կապված՝ լեզվահոգեբանական պրոբլեմների քննությունը։ Որպես արդյունք լույս է ընծայվում «Պսիխոլինգվիստիկա» մենագրությունը՝ գրված սեմինարին մասնակցող մի խումբ լեզվաբանների, հոգեբանների և այլ մասնագիտության անձերի։

կողմից<sup>1</sup>: Կարելի է ասել, որ այդ գիրքը ամերիկյան լեզվահոգեբանության նվաճումների յուրատեսակ ամփոփումն է: Լեզվահոգեբանական առումով մենագրության հեղինակները նպատակ են դրում քննել հաղորդակցման պրոցեսի հոգեբանական կողմը, «կողավորման և ապակողավորման պրոցեսները, որոնք կապի մեջ են դնում հաղորդումների վիճակները հաղորդակցողների վիճակների հետ»<sup>2</sup>, այսինքն՝ այն պրոցեսները, որոնց օգնությամբ խոսողի մըտադրությունները վերածվում են տվյալ կողի ազդանշաններին և վերցիններս էլ հակառակ փոխակերպման են ենթարկվում՝ վերածվելով լսողին հասկանալու փաստի:

«Փսիխոլինգվիստիկայի» հեղինակները, նախքան բուն լեզվահոգեբանական պրոբլեմներին անցնելը, խոսում են հաղորդակցման պրոցեսի մողելների (ինչպես դրանք տրվում են ինֆորմացիայի տեսության մեջ), հաղորդակցումն ուսումնասիրող դիսցիլինների, լեզվի քննության՝ վերեւում հիշված Յ հայեցակետերի մասին և այլն, ապա փորձում պարզել լեզվաբանական և հոգեբանական միավորների փոխհարաբերությունը և սահմանել լեզվահոգեբանական միավորները: Լեզվի հետագա լեզվահոգեբանական քննությունը կատարվում է Յ պլանով՝<sup>1</sup> Ա սինխրոնիկ լեզվահոգեբանության, որ հենվում է սինխրոնիկ լեզվաբանության ու սինխրոնիկ հոգեբանության տվյալների վրա և ընդգրրկում է ինչպես միկրոստրուկտուրայի (միկրոլինգվիստիկայի կամ «բուն» լեզվաբանության քննության առարկայի), այնպես էլ մակրոստրուկտուրայի (էքզոլինգվիստիկայի կամ «արտաքին լեզվաբանության» քննության առարկայի) հարցերը. 2) դիախրոնիկ լեզվահոգեբանության, որ հենվում է դիախրոնիկ լեզվաբանության ու դիախրոնիկ հոգեբանության տվյալների վրա. 3) հաջորդային կամ անցումային լեզվահոգեբանության (sequential or transitional psycholinguistics), որ հենվում է հաջորդային լեզվաբանության ու հաջորդային հոգեբանության (հաջորդման հավանականության ու հաճախականության հարցերի) տվյալների վրա: «Փսիխոլինգվիստիկայի» հեղինակները լեզվահոգեբանական պրոբլեմները քննում են փոքր-ինչ այլ հաջորդականությամբ, քան վերեւում նըշվեց. Նախ խոսում են սինխրոնիկ լեզվահոգեբանությանը վերաբե-

<sup>1</sup> Psycholinguistics. A Survey of Theories and Research Problems. Խմբագրությամբ Ch. E. Osgood-ի և Th. A. Sebeok-ի. Baltimore, 1954. Համառ. О. С. Ахманова, О психолингвистике, М., 1957.

<sup>2</sup> Psycholinguistics, 1954, էջ 4.

բող միկրոստրուկտուրայի հարցերի՝ ապա հաջորդային լեզվահոգեբանության մասին, հետո անցնում դիախրոնիկ լեզվահոգեբանությանը և վերջացնում սինխրոնիկ լեզվահոգեբանության մյուս բնագավառի՝ մակրոստրուկտուրայի հարցերով:

Բնականաբար, ամերիկյան լեզվահոգեբանության ներկայացուցիչները լեզվաբանական քննության համար հիմք են ընդունում ամերիկյան նկարագրական լեզվաբանության տվյալները, հոգեբանական քննության համար՝ ամերիկյան բիհիորիստական հոգեբանության ըմբռնումները։ Հետագա շարադրանքի մեջ կխոսենք «Պահոլինգվիստիկայի» հեղինակների առաջ քաշած ու քննած կարևոր պրոբլեմների մասին։

Անշպես տեսանք, ամերիկյան նկարագրական լեզվաբանության ներկայացուցիչները վերլուծության գլխավոր միավորներ են համարում հնչույթը և ձեռւյթը։ Լեզվահոգեբանության ներկայացուցիչները հաղորդման քննության հետ կապված՝ փորձում են պաղպել, թե արդյոք հաղորդման, առաքման և ընկալման պրոցեսում, կողավորման և ապակողավորման ժամանակ հաղորդողն ու ընդունողը ի՞նչ հատվածների են բաժանում հաղորդվող աեքստր թե արդյոք համապատասխանում են այդ հատվածները լեզվաբանների կողմից առանձնացվող միավորների՝ հնչույթների և ձեռւյթների սահմաններին։ Լեզվահոգեբանները հաղորդման և ընկալման պրոցեսի հոգեբանական վերլուծության հետևանքով գալիս են այն եզրակացության, որ հատուկ լեզվաբանական պատրաստություն չունեցող հաղորդողի և ընկալողի համար բնական վերլուծության միավորներ են լեզվաբանության մեջ հավաստի սահմանման շենթարկվող այնպիսի միավորները, ինչպիսիք են մի կողմից՝ վանկը, մյուս կողմից՝ բառը և նախադասությունը։ Իսկ ի՞նչ միավորներ կարելի է առանձնացնել լեզվահոգեբանական հայեցակետով։ Այդպիսի միավորներ կարող են ծառայել, ըստ լեզվահոգեբանների, կողավորման և ապակողավորման պրոցեսում ֆունկցիոնալ տեսակետից ամբողջական միավորները, ընդ որում մարդու ներվային սիստեմի կազմակերպման տարրեր «մակարդակների» դեպքում այդ միավորները տարրեր են լինում։ 1) մոտիվացիոն (motivational level) մակարդակի դեպքում, երբ առկա է ընդհանուր որոշման անհրաժեշտություն (խոսել թե չխոսել, հարց տալ, կարգադրել և այլն), որպես միավոր է ծառայում նախադասությունը, որովհետև հաճախ ապակողավորելու համար հարկավոր է մինչև վերջ լսել հաղորդումը (այլապես կարող է լինել ինտոնացիայի

սխալ ընկալում և համապատասխանաբար նախադասության բնույթի ոչ ճիշտ մեկնաբանում). 2) իմաստային մակարդակով, երբ առկա է իմաստային տարրերման անհրաժեշտություն, ա) կողավորման դեպքում որպես միավորներ կարող են ծառայել «ֆունկցիոնալ խմբերը» (իմա շարույթները՝ նոր մեքենա, լայն թեսքն երով վերաբեր կուն և այլն), որովհետև այդ խմբերը, ասենք զարգացած համաձայնություն ունեցող լեզուներում միավորվում են որպես մի ամբողջություն, բ) ապակողավորման դեպքում՝ այսպես կոչված միջուկը (nucleus). Եթե հաղորդողն արդեն գիտե, թե ի՞նչ պետք է ասի և առնում է ամբողջ «ֆունկցիոնալ խումբը», ապա ապակողավորողը աստիճանաբար է ընկալում հաղորդվող հատվածները և դրանք ձևափոխում՝ նոր հատվածների հանդես գալուն զուգընթաց. որպեսզի հասկանանք «միջուկի» գաղափարը, հարկավոր է նկատի առնել հետևյալը. փորձելով պարզել բառի սահմանը, ձևույթի և բառի փոխհարաբերությունը՝ լեզվահոգեբանները ենում են «իրար փոխարինող մորֆերի խմբի» (իՓՄԽ) և «միջուկի» (nucleus) գաղափարներից. ԻՓՄԽ-ն այնպիսի առանձնակի մորֆերի (խոսքի նվազագույն իմաստավոր միավորների) շարքն է, որոնք տվյալ կոնտեքստում սինտագմատիկորեն կարող են իրար փոխարինել. Երկու կամ ավելի ԻՓՄԽ-երից բաղկացած այն շարքը, որ տվյալ առանձնակի ԻՓՄԽ-ին կարող է փոխարինել, կոչվում է «թեմատիկ շարք». թեմատիկ շարքի մաս չհանդիսացող առանձնակի ԻՓՄԽ-ն և ԻՓՄԽ-ից կազմված «թեմատիկ շարքը» կոչվում են «միջուկ». միջուկի սահմանը կարող է համընկնել բառի սահմանի հետ կամ ոչ. միջուկների միջև կարելի է մտցնել միայն սահմանափակ թվով միջուկներ, մինչդեռ բառերի միջև կարելի է մտցնել անսահմանափակ թվով միջուկներ. միջբառային սահմանում միջուկների ընտրությունը սահմանափակված է (կարող է ընտրվել միայն որոշակի ձևական խմբի անդամ), որովհետև միջուկը կապված է նախորդ և հաջորդ միջուկների հետ, իսկ բառերի սահմանում ընտրությունը կախված է խոսողի կամքից (կատարվում է իմաստային ընտրություն՝ հաղորդման բոլանդակության համապատասխան), որ և հնչյունապես հաստատվում է դադարների դասավորությամբ. այսպիսով, ստրուկտորալիստական վերլուծության շարքը լրացվում է նոր գաղափարներով, և խորացվում է բառի իմաստավոր մասերի ուսումնասիրությունը. 3) կարգասահմանչական մակարդակի դեպքում, երբ հարաբերություն է հաստատվում ասույթի փաստերի միջև հաղորդող և ընդու

նող ծայրերում, որպես միավոր է ծառայում բառը. կողավորման առումով բառը առանձնանում է կցույթի համեմատաբար երկար բնույթով, քան ձևութների դեպքում, և հնչույթների հերթագայության ունակությունների մշակվածությամբ. ապակողավորման առումով բառերի իմաստային սահմանների տարրերիշը կցույթի երկարությունն է, որ գրության մեջ նշանակվում է բառային սահմանների միջև արանք թողնելով. 4) ամբողջականացող մակարդակի դեպքում, եթե գործ ունենք լեզվի ամենափոքր տարրերի հետ, ա) կողավորման ժամանակ որպես միավոր է ծառայում վանկը, որովհետև այս դեպքում այն հանդես է գալիս որպես շարժողական վարժության բնական նվազագույն բաղադրիչ (եթե խոսքը դանդաղեցնենք, ապա վանկերի կրածանենք), բ) ապակողավորման ժամանակ՝ հնչույթը, որովհետև տարրեր հնչույթների գործածությունը իմաստային տարրերություն է առաջացնում և, հետևաբար, ապակողավորելիս դրանք չեն կարող շտարբերվել:

Պարզելով լեզվաբանական ու հոգեբանական միավորների փոխհարաբերությունը և սահմանելով լեզվահոգեբանական միավորների որոշ հիերարխիա՝ «Պսիխոլինգվիստիկայի» հեղինակները անցնում են սինխրոնիկ և դիխրոնիկ լեզվահոգեբանության հարցերին: Սինխրոնիկ լեզվահոգեբանության մեջ ևս տարրերվում են միկրոստրուկտորայի և մակրոստրուկտորայի հարցեր (հմմտ. միկրոլինգվիստիկա և մակրոլինգվիստիկա տերմինների արժեքը ամերիկյան նկարագրական լեզվարանության ներկայացուցիչների մոտ):

Միկրոստրուկտորայի լեզվահոգեբանական քննությունը պարունակում է հաղորդակցման 3 տիպերի ու նրանց փոխհարաբերության հետ կապված հարցերը: Ինչպես հայտնի է, մարդկանց անմիջական հաղորդակցումը կարող է լինել 3 տիպի՝ 1) ձայնալուղական, 2) ժեստա-տեսողական և 3) ձեռնա-իրադրական (manipulatory-situational): Սրանց լեզվահոգեբանական քրննությունը պարունակում է հետևյալ հարցերը՝ սրանցից ամեն մեկի դեպքում ի՞նչ շափով է կողավորումը ընդհատական կամ անընդհատական, ի՞նչ շափով է բնական, ինչպիսի՞ն է կիրառվող կողի կազմակերպումը կամ կառուցվածքը, հաղորդման կազմի մեջ մտնող փաստերի ո՞ր խմբերն են արտացոլում՝ մտադրության (ինտենցիայի) ընդհանրությունը, ի՞նչ հարաբերություն կա անընդհատ կողավորիող և ընդհատարար կողավորվող աղդանշանների միջև: 1) Զայնա-լսողական հաղորդակցման քննության

առնշությամբ «Պսիխոլինգվիստիկայի» հեղինակները անհրաժեշտ են համարում 3 կարգի, այսինքն՝ հնչունական, հնչույթային և գոգերանական տարածությունների փոխհարաբերության պարզաբանումը։ Հնչունական տարածությունը «իրական» է (իմա՝ անփոփոխ, տվյալ լեզվի գոյությունը այն չի կարող փոխել) և անընդհատ (մի հնչունը չի կարող բռնել մյուսի տեղը)։ Հնչույթային տարածությունը փոփոխական է (որոշվում է տվյալ լեզվի կողմից որոշված բաժանումներով) և ընդհատական ու ներքնապես չկարգավորված (երկու հնչուն կարող են պատկանել կամ նույն, կամ տարբեր խմբերի)։ Լեզվահոգեբանական քննության համար ամենակարևոր հարցը, այն է՝ լեզվաբանական միավորների նմանության հարցը այս երկուսից առաջինի դեպքում որոշվում է հնչունների դիրքերի միջև եղած տարածության շափումով, իսկ երկրորդ դեպքում երկրորդ պլանի վրա՝ է գտնվում։ Քանի որ ամեն մի լեզու ունի իր ընկալողական (պերցեպտիվ) սովորույթները, ուստի և հնչունական ու հնչույթային տարածությունների միջև ճշգրիտ համապատասխանություններ չկան. տվյալ լեզուն հաշվի է առնում որոշ տարբերիչ հատկանիշներ և անտեսում մյուսները։ Հոգեբանական տարածությունը հնչունականի նման անընդհատ է, բայց հնչույթայինի նման փոփոխական։ Հոգեբանական տարածության տարբերությունը հնչունական և հնչույթային տարածություններից հնչունների տեղաբաշխման փոխակերպման մեջ է, բայց առաջին դեպքում փոխակերպման հիմքում ընկած են տվյալ լեզվով խոսող կոլեկտիվի ընկալողական սովորույթները, երկրորդ դեպքում՝ տեղաբաշխման շափանիշները։ Հոգեբանական տարածությունը սրանով իսկ ընկնում է հիշյալ երկու տարածությունների միջև, հնարավորություն է տալիս պարզելու հնչույթային վերլուծության էությունը, վերլուծության տարբեր տիպերի նպատակահարմարությունը։ 2) Ժեստա-տեսողական հաղորդակցման հոգեբանական կողմի քննությունը պահանջում է նախ ժեստերի քննություն. այս բանը փորձել է կատարել թիրդուխստելը<sup>1</sup>՝ նկարագրական լեզվաբանական վերլուծության օրինակով ստեղծելով իր կինեսիկան (հմմտ. ֆոնեմիկա) և տարբերելով կիներ (հմմտ. ֆոն), կինեմաներ (հմմտ. ֆոնեմա) և ալլոկիններ (հմմտ. ալլոֆոն)։ Սակայն այս դիսցիպլինը լեզվաբանական վերլուծության

<sup>1</sup> R. L. Birdwhistell, Introduction to Kinesics. An Annotation System for Analysis of Body Motion Gesture, Washington, 1952.

սովորական եղանակներով կառուցելու դեմ խոսում է նախ՝ այն, որ թերևս հնարավոր շլինի առանձնացնել ընդհատական միավորներ և երկրորդ՝ այն, որ հալիանաբար «կինեմաները» բնական և «շե ձեռքբերովի երեսովթներ են: Լեզվահոգեբանության տեսանկյունից հարկավոր է պարզել, թե ժեստա-տեսողական հաղորդակցումը ինքնուրով լինուրով լինուրով ունի, թե՝ ավելորդային է մյուս երկուսի նկատմամբ: 3) Զեռնա-իրադրական կապը առաջին հերթին գրավոր հաղորդակցումն է, երբ գրողը (կողավորողը) ստեղծում է առարկայական այնպիսի իրադրություն, որին ուեագիրում է ընթերցողը (ապակողավորողը): Հաղորդակցման 3 տեսակների փոխհարաբերության հարցի քննությունը ամենից առաջ կապված է դրանց՝ իրար հանդեպ ունեցած ավելորդայնության հարցի հետ. ձայնա-լսողական և ժեստա-տեսողական կապերը կարող են կամ իրար լրացնել, կամ իրար հակադրվել. Նման հարաբերություններ կարող են լինել նաև ձայնա-լսողական ու ձեռնա-իրադրական և ձեռնա-իրադրական ու ժեստա-տեսողական տիպերի միջն՝ դրանցից միաժամանակ օգտվելու դեպքում:

Մակրոստրուկտորայի լեզվահոգեբանական քննությունը պարունակում է հետեւյալ հարցերը. 1) մոտիվացիոն վիճակների ազդեցությունը կողավորման և ապակողավորման վրա. մոտիվացիոն վիճակները կարող են ազդել հաղորդման միավորների տեղաբաշխման վրա (հմմտ. նախադասության ներգործական և կրավորական կառուցվածքները, ստորոգյալի և այլ անդամների դիրքը և այլն՝ կախված խոսողի վերաբերմունքից): 2) Նշանակության (իմաստի) քննությը. ինչպես հայտնի է, Զ. Մոռիսը նշանի ուսումնասիրության երեք կողմերը խմբավորել էր սեմանտիկայի, սինտակտիկայի և պրագմատիկայի կամ, ինչպես նշում են, «իրադրային», «լեզվական» և «վարմունքային» կողմերի. «Պահիխոլինգվիստիկայի» հեղինակները այս եռակի բաժանումը փոխարինում են զույգ հարաբերությունների սիստեմով՝ տարրերելով ա) «լեզվականը»—«արտալեզվականը», բ) «իրադրայինը»—«վարմունքայինը», այլև գ) «ներքինը»—«արտաքինը» և դ) «ընդհանուր կոնտեքստը»—«ընդհանուր կոնտեքստերի գումարը»—«այս բոլոր կոնտեքստերին հատուկ տարրերիշ հատկանիշները»: Այս հարաբերություններին տալով տառային նշանակումներ՝ նրանք փորձում են հասնել վերլուծության ավելի սպառի ու զիտական քննության և բոլոր տեսակետների վերագնահատման: 3) Ինֆորմացիայի փոխանցումը լեզվական հաղորդումների միջոցով. այս նպատակով

«Պսիխոլինգվիստիկայի» հեղինակները դիմում են ինֆորմացիայի տեսությանը, այլև խոսում թարգմանության պրոբլեմների մասին։ 4) կեզու, գիտակցություն և կուլտուրա։ «Պսիխոլինգվիստիկայի» հեղինակներն առաջարկում են տարբերել լեզուն որպես հաղորդումների կամ կողմիջկացիաների սիստեմ և գիտակցությունը որպես այդ լեզվից օգտվող «վիճակների» ամբողջություն։ Կուլտուրան որպես լայն տերմին «Պսիխոլինգվիստիկայի» հեղինակները առաջարկում են փոխարինել ավելի նեղ «վարմունք» տերմինով։ Նրանց կարծիքով՝ անհրաժեշտ է ստեղծել այնպիսի փորձնական վիճակներ, որոնք հնարավորություն կտան պարզելու լեզվի, գիտակցության և վարմունքի փոխհարաբերությունը։ այս 3 կողմի միահյուսումը հիմք է տալիս դրանք լավ շտարբերելու և իրար խառնելու համար (հմմտ. էթնոլինգվիստիկայի ամերիկյան ներկայացուցիչների, հատկապես Ռուրֆի տեսությունը)։ Այս կապակցությամբ ձեւակորդում են հետեւյալ հիմնական դրույթները։ ա) գիտակցության այն վիճակները, որոնք կապված են ազդակների հետ, ազդում են այդ ազդակների առաջացրած հակազդումների (ոեակցիաների) վրա. բ) այն վարմունքը, որ առաջանում է որոշակի ազդակներով, ազդում է գիտակցության՝ տվյալ ազդակների նշանների հետ զուգորդվող վիճակի վրա. գ) լեզվի այն հատկությունները, որոնք օգտագործվում են տվյալ ազդակների մասին խոսելու համար, ազդում են այդ ազդակների հետ կապված գիտակցության վիճակների վրա. դ) տվյալ ազդակների հետ կապված գիտակցության երեսույթները ազդում են այն լեզվի կողմիջկացիայի ձեւի վրա, որով խոսում են այդ ազդակների մասին։

Դիախրոնիկ լեզվահոգեբանության հետ կապված՝ քննվում է 3 հարց. 1) առաջին (մայրենի) լեզվին տիրապետելը. լեզվահոգեբանության դիրքերից սա հանգում է նշանակությունների կազմավորման պրոցեսի քննությանը. 2) երկրորդ լեզվին տիրապետելը և երկլեզվությունը. երկրորդ լեզվին տիրապետելը կապված է կողավորման և ապակողավորման նոր կարգի ունակությունների կազմավորման հետ, ընդ որում դրանք որոշ հակասության մեջ են մտնում նախորդների հետ. երկրորդ լեզվի յուրացումը կարող է կատարվել երկու ձևով՝ կոմբինավորված ձեռվ և հարաբերակից լեզվաբանական սիստեմների ստեղծումով. առաջին դեպքում մեծ դեր է կատարում թարգմանությունը, երկրորդ դեպքում յուրացումը կատարվում է այլ լեզվական կոլեկտիվի կուլտուրայի մեջ խորանարու միջոցով. 3) լեզվական փոփոխու-

թյումը. եթե լեզվաբանները մեծ նյութ են կուտակել լեզվի փոփոխթյան փաստերի կուտակման ուղղությամբ, ապա «Պահիվունքնախստիկայի» հեղինակները փորձում են խորանալ այդ փոփոխությունների պատճառների մեջ. լեզվական փոփոխությունները կատարվում են ներքին դինամիկայի երևույթների կամ արտաքին ձնշման տակ. լեզվահոգեբանների քննության գլխավոր առարկան առաջինն է: Հնչյունական փոփոխությունները լինում են պայմանավորված և ոչ պայմանավորված. առաջին դեպքում փոփոխությունը տեղի է ունենում հնչույթների դիրքային տարբերակների (ալլօֆոնների): Հնչույթների վերածվելու, այսինքն՝ դիրքից անկախ դառնալու միջոցով. այդ դեպքում տարբերվում են կանոնավոր և սաղմնային փոփոխություններ: Կանոնավորների դեպքում գործում են հետեւյալ կանոնները. ա) որպես պայմանավորող գործոն ավելի շատ հանդես է գալիս հաջորդող հնչույթը. բ) պայմանավորող գործոնը մեծ մասամբ գտնվում է փոփոխվող հնչյունի անմիջական հարևանությամբ. գ) առնմանական փոփոխություններն ավելի հաճախադեպ են, քան տարնմանականները. դ) վերջնային դիրքը ավելի հաճախ է հանդես գալիս որպես փոփոխող գործոն, քան առաջնայինը: Սաղմնային փոփոխությունների դեպքում գործում են հետեւյալ կանոնները. ա) ամենից հաճախ փոփոխվում են ր, լ, տ, ո, ս, չ հնչյունները. բ) պայմանավորող գործոնը ազդում է հեռվից (հմտ. լատ. *peregrinus* >իտալ. *pellegrino*). գ) տարնմանման երևույթները նույնքան տարածված են, որքան առնմանման երևույթները: Ոչ պայմանավորված փոփոխությունը տեղի է ունենում մի տարբերիչ հատկանիշը մյուառվ փոխարինելու միջոցով, ընդ որում կարող են առաջանալ կամ արդեն եղած հնչյուններ, կամ դեռ չեղածներ. երկրորդ դեպքում տեղի է ունենում հնչույթների ձուկում և լեզվի հնչույթների քանակի կրճատում. հնչույթների ձուլման համար նպաստավոր են՝ ա) հնչույթի արտակարգությունն ընդհանրապես, բ) նրա փոքր հաճախականությունը, գ) ձուկվող հնչույթների արտասանության կետերի մերձավորությունը: դ) նրանց համար մեծ թվով տարբերիչ հատկանիշների առկայությունը և ե) այդ հընչույթներով տարբերվող լեզվական ձևերի փոքրաքանակությունը: Զեւրանական փոփոխության հիմնական գործոնը անալոգիան է, որի դեպքում՝ ա) կամ միևնույն ձևույթի (մորֆեմայի) հերթագայման միջոցով մի կաղապարը (մոդելը) փոխարինվում է մյուսով,

սովորաբար ավելի տարածվածով, բ) կամ հերթագայությունը ոչնչանում է ձեերի փոխանցման միջոցով:

Որպեսզի կարողանան բացատրել լեզվական փոփոխությունների պատճառները՝ «Պսիխոլինգվիստիկայի» հեղինակներն անհրաժեշտ են համարում դիմել ինֆորմացիայի տեսությանը և հատկապես հաղորդումների կառուցվածքի վիճակագրական վերլուծությանը։ Այսպիսով, հաջորդային լեզվահոգեբանությունը գործ ունի առաջին հերթին հաջորդականությունների կառուցվածքային վերլուծության հետ, այն բանը պարզելու հետ, թե տվյալ կարգի միավորների (հնչույթների, ձևույթների և բառերի) հաջորդման ի՞նչ հավանականություն կա, տվյալ հնչույթին (ձևույթին, բառին) այլ հնչույթների (ձևույթների, բառերի) հաջորդման ի՞նչ հաճախականություն է առկա, ինչպիսի՞ զուգորդումներ են ավելի հավանական և հաճախադեպ:

Հաջորդային լեզվաբանությանը հատկացված բաժնում քննվում են հետեւյալ հարցերը. 1) անցումային (հաջորդման) հավանականությունը, լեզվաբանական կառուցվածքը և սովորույթային (habit-family) հիերարխիայի սիստեմները. 2) հնչույթային հաջորդումների հավաստի (certain) բնութագրումները. 3) էնտրոպիայի չափերի կիրառումները (applications of entropy measures) հաջորդական կառուցվածքի պրոբլեմների նկատմամբ. 4) անցումային կազմակերպությունը՝ զուգորդային տեխնիկաները (association techniques). 5) կանալի կարողությունը (channel capacity) իմաստային ապակոդավորման ժամանակ։ Այս հարցերի հանգամանալից շարադրանքը մեզ շատ հեռու կտաներ և կպահանջեր բազմաթիվ կողմնակի տեղեկություններ. այդ պատճառով էլ մենք կբավարարվենք միայն որոշ մասնակի հարցերի մատնանշմամբ։

1) Հաջորդման կառուցվածքային վերլուծության էությունը լեզվական տվյալ կարգի (հնչույթների, ձևույթների, բառերի) միավորների հաջորդման հավանականության պարզաբանումն է, այսինքն՝ տվյալ չ միավորին չ միավորին անհաջող աստիճանի որոշումը. Այսպիսի հաշվումներ առայժմ ամենից ավելի կատարվել են տառերի նկատմամբ։ Անհրաժեշտ է նկատի առնել, որ կառուցվածքի վիճակագրական և լեզվաբանական վերլուծման նպատակները միևնույնը չեն. նախ՝ եթե վիճակագրական վերլուծության ժամանակ գլխավորը տվյալ միավորի հանդես գալու հավանակ ակտուացուն է, և, հետեւար, ուշա-

ղրության կենտրոնում հաճախականությունն է, ապա լեզվաբառական վերլուծության առումով գլխավորը տվյալ միավորի հանդեւ զալու հնարա վորությունն է, ուստի և հաճախականությունը այս դեպքում ունեանտ շափանիշ չէ. երկրորդ՝ եթե վիճակագրական վերլուծության համար կառուցվածքային մակարդակների և հիերարխիայի հարցը կարեոր չէ, ապա լեզվաբանական վերլուծության համար խիստ կարեոր է (հմտ. ամերիկյան լեզվաբանության մեջ ընդունված վերլուծությունը «անմիջական բազադրիչների» սկզբունքով). շնայած սրան՝ վիճակագրական վերլուծությունն օգնում է լեզվաբանականին, որովհետև պարզվել է, որ տարբեր կարգի միավորների որակապես տարբեր սահմանները տարբեր հաճախականություն ունեն: Այսպես կոչված «սովորույթային հիերարխիան» «Պսիխոլինգվիստիկայի» հեղինակները սահմանում են որպես «ասոցիացիաների մի փունջ, որի մեջ անդամներից մեկը՝ S կամ R (սահմուլ կամ ուսակցիա—<sup>Դ.</sup> Ձ.) ընդհանուր է»<sup>1</sup>, կոնվերգենտ «սովորույթային հիերարխիայի» դեպքում՝ տարբեր ստիմուլները հանգեցնում են միևնույն ուսակցիային, դիվերգենտ «սովորույթային հիերարխիայի» դեպքում՝ միենալուն ստիմուլը զուգորդվում է տարբեր ուսակցիաների հետ: Զուգահեռ անցկացնելով ստիմուլ-ուսակցիա (հաղորդում-ընդունում) և կոդավորում-ապակոդավորում հասկացությունների միջև՝ «Պսիխոլինգվիստիկայի» հեղինակները փորձում են օգտագործել ինֆորմացիայի տեսության տվյալները լեզվակառուցվածքի վերլուծության համար. պարզվում է, որ կոնվերգենտ «սովորույթային հիերարխիաների» դեպքում առկա է լինում համեմատաբար ցածր էնտրոպիայի անցում, դիվերգենտների դեպքում՝ ընդհակառակն (առաջինի համար կարող է օրինակ ծառայել բազմազան հիմքերին սահմանափակ թվով մասնիկների հաջորդելը): «Պսիխոլինգվիստիկայի» հեղինակները այս կապակցությամբ հատուկ ուշադրություն են դարձնում կցույթի (juncture), դադարի և հապաղման երեւլյթների վրա՝ խստորեն տարբերակելով վերջին երկուսը և հաստատելով մի շարք (5) կանոններ, ընդ որում նշվում է, որ լեզվաբանական դադարները նախ՝ ավելի կարճ են, քան հապաղման երեսույթները (hesitation phenomena) և երկրորդ՝ նրանց համար, ի տարբերություն հապաղման երեւլյթների, կարեոր չեն կոնկրետ իրադրությունից կախված հանգամանքները (խոսդի՛նյութին ծանոթ լինելը թե շինելը, կարդալը թե հընթացս խոսելը):

<sup>1</sup> Psycholinguistics, 1954, էջ 96.

2) Հնչույթների հաջորդման հարցը տարբեր է խոսողի և լսողի դիրքերից քննելիս. խոսողի համար ամենահեշտ արտասանելին ամենից ավելի նման հնչույթների հաջորդումն է, լսողի համար ամենահեշտ հասկանալին՝ ամենից ավելի տարբեր հնչույթների հաջորդումը։ Այս դեպքում, բնականաբար, խոսքը ջանքերի տնտեսման սկզբունքով կառուցելու դեպքում սպասելի է, որ ցածր հաճախականություն լինի և շատ նման, և շատ տարբեր հնչույթների համար։

3) Հնչույթների հաջորդման հարցի քննության համար հեղինակները դիմում են հավանականության տեսությանը և ինֆորմացիայի տեսությանը, հատկապես «Մարկովի պրոցեսների» հակացությանը և այսպես կոչված ամբողջի կառուցվածքի մեթոդին (the cloze procedure):

4) Բնական խոսքի բնույթի վրա կարող են ազդել հետեւյալ շորս կարգի գործոնները՝ 1) խոսողի վիճակը, 2) առևիժտորիայի բնույթը, 3) ոեֆերենտների (նշանակվող առարկաների) ներկայությունը կամ բացակայությունը, դրանց ծանոթ լինելու աստիճանը և այլն, 4) բառերի կապակցությունները, այսինքն՝ տվյալ բառի՝ հաջորդ բառերի ընտրության վրա ազդելու աստիճանը։ Բառերի զուգորդման հավանականության հարցը պարզելու համար առաջարկվում է բառերի զուգորդման տեստը. տարբեր անձերի առաջարկվում են բառեր, և բառ դրանց (որպես ստիմուլների) պատասխանելու համար օգտագործվող բառերի հաճախականության՝ պարզվում է տվյալ կուլտուրական խմբին պատկանողների համար բառերի հաջորդման հավանականությունը։

5) Կանալի կարողությունը, բայց ինֆորմացիայի տեսության, տվյալ կանալի՝ տվյալ հաղորդումը նվազագույն աղավաղմամբ փոխանցելու առավելագույն արագությունն է։ Եթե արագությունը ավելին է, քան կանալի կարողությունը, ապա արագության ավելացմանը համապատասխան աճում է աղավաղումը։ Այս երեսույթը բնականարար տարածվում է և լեզվական հաղորդակցման պրոցեսի վրա՝ առաջ բերելով լեզվահոգեբանական կարևոր հարցեր։ Մարդկային անհատը որպես և հաղորդող, և ընդունող կանալ ենթակա է քննության այս առումով։ Ամեն մի իմաստային սիստեմ, որ ներառում է հաղորդման և բնակալման սիստեմները, ունի 1) առավելագույն կարողություն և 2) ֆունկցիոնալ կարողություն։ առաջինը նրա կարողությունն է լավագույն (իդեալական) պայմաններում, երկրորդը՝ տվյալ պայմաններում։ Ֆունկցիոնալ կարողու-

թյունը (տարողությունը) կարող է կամ հավասար լինել առավելագույնին, կամ պակաս լինել նրանից, ընդ որում վերջինիս որոշման համար հատուկ դրույթներ են սահմանվում:

Լեզվական փոփոխության հիմքերի քննության հետ կապված քննվում են փոփոխության անդի և պրոցեսի բնույթի հարցերը: Քննվում են փոփոխության պրոցեսի հետևյալ կողմերը. ա) փոփոխության իրականացումը, որ տարբեր խոսողների մոտ տարբեր շափ ունի (երեխաների ու մեծերի, տարբեր սերունդների մոտ, տարբեր պայմանների ազդեցության տակ և այլն): բատ ինքնավերահսկողության տարբեր աստիճանի. բ) հասարակական վերահսկողությունը, որ իրականացվում է գերազանցապես ավագ սերնդի միջոցով (ավագներն ավելի շատ են ուղղում երիտասարդներին, քան վերջիններս, սրանք էլ ավելի ու ավելի շատ են ենթարկվում ինքնավերահսկողության). գ) հաղորդման մաս կազմող՝ չուղղված փոփոխությունները դառնալով սովորական, մրցում են մյուսների հետ, ընդ որում փոփոխությունը կարելի է կանխատեսել՝ նկատի ունենալով ինքնավերահսկողության թուլացման տվյալ կետերում կամ վայրերում փոփոխության պատրաստ լինելու աստիճանը. դ) սովորույթների ուժեղացմամբ նոր տեսդենցները տարածվում են, ընդ որում սաղմնային փոփոխությունների՝ պայմանավորված դառնալուն նպաստող պայմանը հաճախականությունն է. ընդգծվող (էմֆատիկ) մասերը ավելի քիչ ենթակա կլինեն փոփոխության. ե) լեզվական փոփոխությունները տվյալ կոլեկտիվում աստիճանաբար են կուտակվում, ընդ որում հոգեբանները ենթադրում են երկու ձևերի տատանման շրջան (լեզվաբանները հոգեկան գործոնը և փոփոխության տարածումը միաժամանակյա են համարում). եթե դիմելու լինենք հաղորդման (ինֆորմացիայի) տեսությանը, ապա լեզուն կարելի է դիտել որպես անկայուն հավասարակշռության վիճակ արդյունավետության և ավելորդայնության գործոնների միջև. զ) որքան մեծ շափով է տվյալ լեզվական սիստեմի էնտրոպիան շեղվում արդյունավետության և ավելորդայնության գործոնների հավասարակշռության էնտրոպիայից, այնքան ավելի մեծ կլինի փոփոխության տեսդենցը հավասարակշռության ուղղությամբ: Այդպիսի հավասարակշռության մոտավոր արդյունավետությունը 50 տոկոս է: Եթե լեզուն ունի բարձր արդյունավետություն, ապա տեսդենց է նկատվում այն իշեցնելու և ընդհակառակն:

#### գ) Էթնոլինգվիստիկա

Ներածական տեղեկություններ.— Էնթոլինգվիստիկայի առաջցումը ևս կապված է լեզվաբանության և մերձավոր դիսցիպլինների, տվյալ դեպքում՝ ազգագրության, կուլտուրայի պատմության, մարդարանության և սոցիոլոգիայի միջև կապ ստեղծելու, մեկի տվյալները մյուսի համար օգտագործելու ձգտման հետ։ Այս առումով էթնոլինգվիստիկան համարվում է մի նոր գիտական դիսցիպլին, որ ընկած է լեզվաբանության և նշված գիտությունների միջև։ Էթն Սոսյուրը և ստրուկտուրալիստները խնամքով անջատում են ներքին լեզվաբանությունը արտաքինից, ապա էթնոլինգվիստիկան ուշադրության կենտրոնում է պահում հենց «արտաքին» լեզվաբանության հարցերը։ Էթնոլինգվիստիկան որոշ իմաստով և՛ նոր գիտական դիսցիպլին է, և՛ նոր լեզվաբանական ուղղություն։ Այս անվան տակ միավորվում են այն լեզվաբանական ուղղությունները, որոնք լեզուն ու նրա պատմությունը սերտորեն կապում են ժողովրդի ու նրա կուլտուրայի պատմության հետ։ Սակայն լեզվի ժողովրդի, լեզվի հասարակության, լեզվի ու կուլտուրայի կապի ըմբռնումը կատարվում է տարբեր հիմքերի վրա։ Մի դեպքում հիմք են ծառայում կուլտուր-պատմական դպրոցի, հատկապես նրա ականավոր ներկայացուցիչ Հումբոլդտի դրույթները, մի այլ դեպքում՝ Սոսյուրի ուսմունքը լեզվի հասարակական բնույթի մասին։ ոմանց մոտ էլ այդ երկու հիմունքներն էկլեկտիկորեն զուգորդվում են։

Էթնոլինգվիստիկայի վաղ ներկայացուցիչներից մեկը՝ Սեպիրը նշանավորում է անցումը էթնոպսիխոլոգիզմից և սոցիոլոգիզմից ստրուկտուրալիզմին։ Լեզվական կաղապարի նրա դրույթը տանում է մի կողմից՝ դեպի ամերիկյան ազգագրական լեզվաբանություն, մյուս կողմից՝ դեպի ստրուկտուրալիզմ։ Վերջինիս համար կարեոր դեր է խաղացել հնչյունական կաղապարի ուսմունքը ձևաբանականի վրա տարածելու միտքը։ Ի տարբերություն ամերիկյան ստրուկտուրալիստների, որոնք աշխատում են լեզվաբանական քննությունից դուրս մղել իմաստը, էթնոլինգվիստիկայի ներկայացուցիչները ուշադրությունը կենտրոնացնում են հենց սրա վրա։

Ամերիկյան էթնոլինգվիստիկայի բուն ներկայացուցիչների (Ռուռֆ. Դորոթի Լի, Թոմասոն և ուրիշներ) հայացքները մեծ շափով ձևավորվել են ամերիկյան հնդիկների լեզուների ուսումնա-

<sup>1</sup> H. Basilius, Neo-humboldtian Ethnolinguistics, „Word“, 1952, № 2.

սիրության, այդ ուսումնասիրության արդյունքների իդեալիստական մեկնաբանության վրա:

Եվրոպական էթնոլինգվիստիկան ներկայացնում է կուլտուրապատմական դպրոցի սկզբունքների վերածնման, Հումբուղտի լեզվափիլիստիկայական սկզբունքների կիրառության փորձ:

Որոշ հեղինակների մոտ Հումբուղտի և էթնոլինգվիստիկայի դրույթները օգտագործվում են բացահայտ ուսույական նկատառումներով (Է. Գլեսսեր և ուղիղներ):

Էթնոլինգվիստիկական ուսումնասիրություններով Անգլիայում զբաղվում են Թասսոնը և Օ'Կոննորը:

### ա) Եվրոպական (գերմանական) նեսեումբուղտական էթնոլինգվիստիկա

Ընդհանուր տեղեկություններ.— Գերմանական էթնոլինգվիստիկան մի միատարր ամբողջություն չէ: Այս անվան տակ մենք պայմանականորեն միացնում ենք այն բոլոր հոսանքների ներկայացուցիչներին, որոնք լեզուն սերտորեն կապում են այդ լեզվով խոսող ժողովրդի մատածողական առանձնահատկությունների և կուտուրայի հետ: Գերմանական էթնոլինգվիստիկան այս լայն առումով ձեւավորվել է ամենաբազմազան փիլիստիկայական, հոգեբանական և լեզվաբանական հոսանքների ազգեցության տակ: Փիլիսոփայական հոսանքներից նշելի են ամենից առաջ Հուսեոլի ֆենոմենոգիական փիլիստիկայությունը և ներկանտականությունը, որոնք արտահայտվել են հատկապես իմաստային վերլուծության հարցերի մեջ: Հոգեբանական հոսանքներից նշելի է առաջին հերթին գեշտալտ-հոգեբանությունը՝ իր մերձավոր հոսանքներով հանդերձ: այդ հոգեբանության ազգեցությունն արտահայտվում է հատկապես լեզուն որպես ամբողջություն, որպես միասնական մի սիստեմ քննելու մեջ, ընդ որում լեզվական ամբողջությունը դիտվում է որպես լեզվի կոնստիտուտիվ ուժ: այս հարցում որոշ շափով ազդել են նաև Հումբուղտը (լեզվի սիստեմի իր դրույթով), Սոսյուրը և ավելի ուշ շրջանում՝ ստրուկտորալիստները: Կարելի է ասել, որ գերմանական էթնոլինգվիստիկայի ներկայացուցիչները ստրուկտորալիզմի ձևավորումից անկախ իմաստաբանական ուսումնասիրությունների մեջ կիրառել են ստրուկտորալ վերլուծության սկզբունքները (Յ. Տրիր, Լ. Վայսգերբեր, Վ. Պորցիգ, Գ. Խալսեն): Ինչպես նշեցինք, գերմանական էթնոլինգվիստիկայի ներկայացուցիչները լեզուն դիտում

ևն որպես տվյալ ժողովրդի կուլտուրայի հետ սերտորեն կապված և որոշ առումով որպես տվյալ ժողովրդի մտածողական առանձնահատկությունները պայմանավորող գործոն։ Այստեղ երևան է զալիս Հումբուղտի և Ֆինկի, այլև Վոեդեի և Ֆր. Մառթների ազդեցությունը։ Այս կապակցությամբ վերստին հանդես է զալիս «ներքին ձեռ» պրոբլեմը, որի լուծման համար փորձել էր նախադրյալներ ստեղծել Կասսիրերը և որը լայն մեկնաբանության առարկա է դառնում և Վայսգերբերի, Վ. Պորցիգի և այլոց աշխատություններում։

Գերմանական լեզվաբաններին հետաքրքրող լեզվական պրոբլեմները վերաբերում են բացի լեզվական ամբողջության «ներքին ձեռ», լեզվի ու ժողովրդի, լեզվի ու կուլտուրայի փոխհարաբերության բնագավառներից՝ նաև իմաստաբանության և շարահյուսության բաժիններին, որոնց մեջ նրանց ունեցած նվաճումները, իրենց թերություններով հանդերձ, ակնհայտ են. այսուհանդերձ կարելի է ասել, որ այս պրոբլեմները շատ հեռու են վերջնական լուծում ստանալուց։

Թաոփամատի պրոբլեմը գերմանական լեզվաբաններին ամենից շատ գրադեցրած պրոբլեմներից մեկն է։ Թացի Յ. Տրիբից, Լ. Վայսգերբերից, Վ. Պորցիգից, որոնց մասին առանձին ենք խոսելու, այդ հարցով գրադիել են գերմանական գանազան փիլիսոփաներ և լեզվաբաններ։ Սրանցից նշելի են Հ. Շպերբերը, Յ. Շտենցելը, Հ. Հացֆելդը, Օ. Մայզինգերը, Է. Շտրուկը, Հ. Կրոնասսերը, Է. Լայցիին<sup>1</sup>։ Իմաստաբանական հետազոտությունների ուշադրության կենտրոնում են բառիմաստի և նրա փոփոխությունների պրոբլեմները։

Շարահյուսությունը, որպես մի բնագավառ, որ իմաստաբանության հետ միասին ամենից ավելի սերտորեն է կապվում լեզվի և նրանով խոսող ժողովրդի մտածողության եղանակի հարցի ու «ներքին ձեռ» գաղափարի հետ, նույնպես ուշադրության առարկա

<sup>1</sup> H. Sperber, Einführung in die Bedeutungslehre, Bonn Leipzig, 1923. H. Hatzfeld, Leitfaden der vergleichenden Bedeutungslehre. J. Stenzel, Sinn, Bedeutung, Begriff, Definition. P. Matthes, Sprachform, Wort und Bedeutungskategorie und Begriff. O. Meisinger, Vergleichende Wortkunde. Beiträge zur Bedeutungslehre, München, 1932. E. Struck, Systematik der Bedeutungslehre, Leipzig Berlin, 1940. H. Kronasser, Handbuch der Semasiologie: kurze Einführung in die Geschichte, Problematik und Terminologie der Bedeutungslehre, Heidelberg, 1952. E. Leisi, Wortinhalt, seine Struktur in Deutschland und England, Heidelberg, 1953.

Է մնում: Ռիսը 1931 թ. լույս է բնծայում մի նոր գիրք՝ այս անգամ նվիրված նախադասության պրոբլեմին: Շարահյուսության հարցերով զբաղվում են Վ. Պորցիգը, Կ. Բյուկերը, Վ. Հավերսը, Մ. Ռեգուլան, Է. Զայդելը, Բ. Զոննեկը, Է. Օտտոն և ուրիշն.<sup>1</sup>: Շարահյուսության հարցերը, ինչպես տեսանք, գրավում են նաև փիլիսոփաարամաբանների ուշադրությունը՝ արամաբանական պողիտիվիզմի հետ կապված (Ռ. Կառնապ):

Գերմանական նեոհումբուլտական էթնոլինգվիստիկային հարում են Լեռ Վայսգերբերը, Յոստ Տրիբը, Գունտեր Խասենը, Գեորգ Շմիդտ-Ռորը, Ֆրից Շտրոհը, որոշ առումով և Վ. Պորցիգը:

Ամենից ավելի ծայրահեղ դիրք գրավող լեզվաբաններից է Գ. Շմիդտ-Ռորը, որ լեզվին գրեթե միակ գործոնի գերն է հատկացնում ժողովրդի և մարդկության կազմավորման մեջ. իր «Լեզուն որպես ժողովուրդների կազմավորող» գրքում<sup>2</sup> նա գտնում է, որ լեզուն պայմանավորում է մտածողության, զգացողության, գնահատման և գործողության յուրահատուկ եղանակը: Այն որոշում է աշխարհի ընկալման բնույթը: Ժողովուրդների և ազգերի գրեթե միակ տարբերիչը Շմիդտ-Ռորի համար լեզուն է. ազգը նա համարում է «մարդկության՝ մի որոշակի լեզվի միջոցով անհատականացած հոգևոր ձև»: Լեզվի Կ նրա բնույթի ըմբռնումը Շմիդտ-Ռորի մոտ կապվում է մասամբ Հոմբուլտի, մասամբ է. Կասսիրերի լեզվափիլիսոփայության հետ:

Էթնոլինգվիստիկան ներկայացուցիչներ ունի և Եվրոպայի այլ երկրներում: Այսպես, շվեդացի լեզվաբան Ս. Օմանը ակնհայտ տուրք է տալիս դրան իր «Թառիմաստը և աշխարհի պատկերը» գրքում. այստեղ նա գրում է, որ «ոչ թե մարդն է ձևավորում լեզուն, այլ լեզուն է ձևավորում մարդուն»<sup>3</sup>:

<sup>1</sup> W. Porzig, Die Aufgaben der indogermanischen Syntax, „Stand und Aufgaben der Sprachwissenschaft, Festschrift für W. Streitberg“, Heidelberg, 1940. W. Havers, Handbuch der erklärenden Syntax: ein Versuch zur Erforschung der Bedingungen und Triebkräfte in Syntax und Stilistik, Heidelberg, 1931. M. Regula, Grundlegung und Grundprobleme der Syntax, Heidelberg, 1951. E. Seidel, Zur Geschichte und Kritik der wichtigsten Satzdefinitionen, Jena, 1935. B. Sonneck, Der Satz als Einheit und die Satzarten, AGP, XCIV, 1935. E. Otto, Sprache und Sprachbetrachtung: allgemeine Sprachlehre unter Berücksichtigung der Wortart, II հր., 1944.

<sup>2</sup> G. Schmidt-Rohr, Die Sprache als Bildnerin der Völker, Jena, 1932.

<sup>3</sup> S. Ohman, Wortinhalt und Wortbild, Stockholm, 1951, էջ 381.

Գերմանական էթնոլինգվիստիկայի ներկայացուցիչները ևս լայն ուշադրություն են դարձնում լեզվի և փիլիսոփայական ըմբռունումների կապի հարցին (Յ. Շտենցել, Ա. Շտեռը և այլն). այսպես, Շտենցելը դեռևս 1921 թ. հատուկ ուսումնասիրության առարկա է դարձնում հունարենի՝ փիլիսոփայական ըմբռումների կազմավորման վրա ունեցած ազդեցության հարցը, լուծելով այն Ֆ. Մառլիների և հետագա էթնոլինգվիստական լեզվաբանության ներկայացուցիչների ոգով:

Դեռևս 1923 թ. Նաումանը լույս է ընծայում «Գերմաներեն լեզվի պատմության՝ որպես գերմանական ոգու պատմության փորձը»<sup>1</sup>:

Ավելորդ չեն նշել, որ լեզվի և կուլտուրայի կապի դրույթը էթնոլինգվիստաներից անկախ դնում են և նեռֆիլոլոգիայի ու նեռլինգվիստիկայի ներկայացուցիչները (Հմմտ., օր., Լ. Շպիցերի ուսումնասիրությունները), որոնց և էթնոլինգվիստների միջև, չնայած տարբերություններին, կան և զգալի շփման կետեր. տարբերությունը հիմնականում սուբյեկտիվ և օբյեկտիվ իդեալիզմի մեջ է: Այս առումով հատկանշական են Ֆուլերի «լեզվասոցիոլոգիայի սահմանները»<sup>2</sup> և Լ. Շպիցերի ուսումնասիրությունները, որոնք յուրատեսակ կամուգ են զցում երկու ուղղությունների միջև. Շպիցերը ելնում է «ոճի» խիստ լայն ըմբռումից (Հմմտ. օր. «Եվրոպական ոճ» և այլն)՝ փորձելով գտնել կուլտուրական ոճի և լեզվական ոճի համապատասխանությունները: Այս հարցում որոշ դեր է խաղացել և Ֆուլերի ինդիվիդուալիզմի խիստ քննադատությունը: Ֆուլերը լեզվի սոցիոլոգիական քննությունը ընդունում է միայն որոշ սահմաններում:

Յ. Լ. Վայսգերբեր.—Ժամանակակից եվրոպական նեռումբուդտական էթնոլինգվիստիկայի գլխավոր ներկայացուցիչը Յոհանն Լեռ Վայսգերբերն է (ծնվ. 1899 թ.), որն իր բազմաթիվ աշխատություններում<sup>3</sup> փորձում է վերակենդանացնել կուլտուր-

<sup>1</sup> Naumann, Versuch einer Geschichte der deutschen Sprache als Geschichte des deutschen Geistes, DVLG, I, 1923.

<sup>2</sup> K. Vossler, Grenzen der Sprachsoziologie: Hauptprobleme der Soziologie, „Erinnerungsgabe für Max Weber“, München und Leipzig, 1923.

<sup>3</sup> J. L. Weisgerber, Muttersprache und Geistesbildung, Göttingen, 1929. Sprachwissenschaft und Philosophie zum Bedeutungsproblem, 1931. Die Stellung der Sprache im Aufbau der Gesamtkultur, 1933. Mutter-sprachliche Bildung, 1932. Deutsches Volk und deutsche Sprache, 1939.

պատմական դպրոցի կոնցեպցիան, հատկապես Հումբոլդտի լեզվափիլիսոփայության կարևոր դրույթները և դրանք դարձնել կոնկրետ լեզվարանական վերլուծության հիմք: Աշխատելով գերազանցապես գերմաներենի բնագավառում՝ Վայսգերբերը փորձում է բացահայտել գերմաներեն լեզվով խոսողների կուլտուրայի առանձնահատկությունները: Լեզվական իմաստների վերլուծության մեջ Վայսգերբերը մեծ շափով (հատկապես վաղ շրջանում) հենվում է Հուսենի վրա:

Իր տեսական կառուցումների մեջ Վայսգերբերը հակադրվում է մի կողմից՝ երիտքերականներին, մյուս կողմից՝ Սոսյուրին:

Երիտքերականների կոնցեպցիան. նրանց տեսությունն ու պրակտիկան Վայսգերբերը խոցելի է համարում այն պատճառով, որ այդտեղ ուշադրությունը կենտրոնացվում է ձևական-հնչունական գուգաղիպումների վրա և ներքին-բովանդակային կողմը անհրաժեշտ ուշադրություն չի գրավում. միաժամանակ, երիտքերականների մոտ համեմատության ընթացքում հանդես է գալիս քըն-նության «ատոմիզմ»: լեզուն մանրատվում է, դադարում իր ամբողջության մեջ որպես սիստեմ ըմբռնիելուց:

Վայսգերբերը սրան հակադրում է հումբոլդտյան սկզբունքների վրա հենվող այնպիսի քննությունը, որի դեպքում լեզուները գուգաղրվում են որպես լեզվական բովանդակությունների ամբողջական սիստեմներ: Համեմատական լեզվարանության նպատակը Վայսգերբերը համարում է տարբեր լեզուների «աշխարհապատկերների» (Weltbild) կառուցվածքի և յուրահատկության ուսումնասիրությունը: Ամեն մի լեզու սերտորեն միահյուսված է տվյալ լեզվի ժողովրդի հոգեկան առանձնահատկություններին, հանդես է բերում այդ ժողովրդի ոգին, ստեղծում է աշխարհի այլ պատկեր, քան մյուս ժողովրդների մոտ: Լեզուն Վայսգերբերի համար տվյալ հանրությանը պատկանողների կողմից աշխարհի՝ դարերի ընթացքում ստեղծված հասարակական օրյեկտիվ պատկնքն է կամ կուլտուրական ունեցվածքը, որ որոշում է հանրությանը պատկա-

Die Entdeckung der Muttersprache im europäischen Denken, 1948. Der Sinn des Wortes „deutsch“, 1949. Die Sprache unter den Kräften des menschlichen Daseins, 1949. Die Muttersprache im Aufbau unserer Kultur, 1950. Die geschichtliche Kraft der deutschen Sprache, 1950. Das Tor zur Muttersprache, 1951. Won Weltbild der deutschen Sprache, II հր., Düsseldorf, 1953.

\* Հմայ. Sprachwissenschaft und Philosophie zum Bedeutungsproblem, BDPH, IV, 1930:

նող անհատների մտածողության եղանակը և պարտադրում նրան իր «ներքին ձև», հասկացությունների և նախադասությունների կազմության իր եղանակը: Վայսգերբերը հատուկ ուշադրություն է դարձնում մայրենի լեզվի հարցերին, որովհետև ըստ Վայսգերբերի, մայրենի լեզուն է հենց այն բանալին, որով մարդիկ յացում են արտաքին աշխարհի դռները, ընկալում արտալեզվական իրականությունը: Լեզվական ընդհանրությունն է որոշում ազգային ընդհանրությունը. գերմանական deutsch «գերմաներեն, գերմանական» բառը սկզբնապես նշանակել է գերմանական լեզվական ընդհանրությունը, ապա միայն դարձել գերմանական ժողովրդի պատմությունն է դարձնում լեզվի պատմության հիմք, այլ լեզվի պատմությունը և առանձնահատկությունները՝ ժողովրդի ու նրա առանձնահատկությունների հիմք:

Նեռհումբոլդտական էթնոլինգվիստիկայի ներկայացուցիչների, այդ թվում և Վայսգերբերի, կողմից փորձ է արվում Հումբոլդտի ուսմունքը ներկայացնելու որպես մի լեզվաբանական տեսաւթյուն, որի մեջ արդեն կան տրված հետագա լեզվաբանական տեսությունների, այդ թվում և Սոսյուրի, կոնցեպցիայի բոլոր կարևոր կողմերը: Այս առումով նրանք Սոսյուրի լեզվաբանական ուսմունքը քննադատում են որոշ մատերիալիստական տարրերի համար: Նրանք բարիմաստը դիտում են որպես լեզվական նշանի կառուցղական տարր, որպես ինքնին տրված իդեալական էություն, որ ոչ թե ածանցվում է իրերի հիման վրա, այլ, ընդհակառակն, հնարավորություն է տալիս դրանք իմաստավորելու, ըմբռոնելու որպես «ոգու օբյեկտներ»: Եթե Սոսյուրի ուսմունքը հնարավորություն է տալիս բարիմաստն ածանցելու իրականությունից, ապա նեռհումբոլդտականների համար<sup>1</sup> այն որոշվում է «ոգու» առանձնահատկություններով, ածանցվում նրանից: Ըստ Վայսգերբերի՝ «...հայեցակետերն են միայն ընդհանրապես աշխարհի իրերն ու տվյալները (Gegebenheiten) որպես իմ գիտակցության «առարկաներ» ձևավորում»<sup>2</sup>:

Հենվելով Հումբոլդտի իդեալիստական կոնցեպցիայի վրա՝ Վայսգերբերը լեզուն համարում է անընդհատ գործոններություն և

<sup>1</sup> Հմայ. Fr. Slotty, Termini „Nennwert“ und „Deutwert“ in „Sprache“ und „Rede“, IF, LXI, 1954.

<sup>2</sup> L. Weisgerber, Vom Weltbild der deutschen Sprache, II Aufl., Düsseldorf, 1953, էջ 9.

աշ թե կանոնների ու ձևերի պատրաստի հավաքածու Լեզվական այդ գործունեությունը ինքնակա պրոցես է, որի մեջ լեզուն հանդիս է գալիս որպես ինքնասահմանող և ինքնագոյացող ստեղծագործ ուժ: Լեզուն իրականացնում է մարդու ներքնաշխարհի և արտաքին աշխարհի կապը, դրանց համադրումը, ընդ որում վճռական դերը պատկանում է ներքին կողմին: Լեզուն, բար. մայրենի լեզուն ոգի ստեղծող ուժ է, որ որոշիչ դեր է խաղում մարդու աշխարհը բռնման մեջ, հնարավորություն տալիս արտաքին իրականությունը ձեսփոխելու և ենթարկելու ոգուն: Եթե մարդը մտածում է, ապա մայրենի լեզուն է, որ «նրա համար մտածում է»: այստեղից մի քայլ է մնում դեպի լեզվի՝ տվյալ լեզվով խոսողների համար ճակատագրական ուժ լինելու դրույթը, և Վայսգերբերը կատարում է այդ քայլը՝ նշելով, որ «...մայրենի լեզուն առանձինի համար ճակատագիր է, ժողովրդի լեզուն՝ ճակատագրական ուժ հանրության համար»<sup>1</sup>:

Լեզվաբանության նպատակը Վայսգերբերը տեսնում է մի կողմից՝ լեզվի, որպես մարդու ներքնաշխարհը և արտաքին աշխարհը, սույնեկութը և օբյեկութը կապող «միջնաշխարհ» (Mittenwelt, Zwischenwelt), և մյուս կողմից՝ մայրենի լեզվի վրա հենվող աշխարհը բռնման բացահայտման մեջ: Սրա հետ կապված՝ նա սահմանում է լեզվի 3 հիմնական օրենք՝ 1) լեզվական հանրության (այն է՝ մարդկության՝ լեզվական հանրությունների բաժանված լինելու), 2) մայրենի լեզվի (այն է՝ անհատի՝ մայրենի լեզվին ննթակա լինելու) և 3) լեզվով պայմանագործող գոյի:

Հետ Վայսգերբերի, լեզվաբանի ուշադրության կենտրոնում պետք է լինեն առաջին հերթին բառապաշարի և ապա կառուցման առանձնահատկությունների (շարահյուսական կառուցվածքի) ուսումնասիրությունը. բառապաշարի մեջ է, որ երևան են գալիս լեզվի ուսումնասիրության հետ կապված երեք շերտերը (բառահնչումը, գիտակցական աշխարհն ու իրական գոյը) և դրանց փոխարաբերությունը: Լեզվի պատմական ուսումնասիրության նպատակը պետք է լինի առաջին հերթին լեզվի դարգացումը որոշող ուժերի հետագոտությունը:

Լեզվական ըմբռնումները ճիշտ սահմանազատելու նպատակով Վայսգերբերը տարբերում է 4 բան՝ 1) խոսքը (Sprechen), 2) անհատի լեզվական ունեցվածքը (der Sprachbesitz des ein-

<sup>1</sup> L. Weisgerber, Muttersprache und Geistesbildung, 1929, էջ 164.

zelenen), 3) լեզուն (Sprache) որպես մի հանրության կուտուրական ունեցվածք և 4) լեզուն որպես մարդկության համար հատկանշական լեզվառակություն, որպես համամարդկային սկզբունք: Սրանց միջև նա հաստատում է որոշ հիերարխիա՝ գտնելով, որ զգայականորեն ընկալելի խոսողական դրսերումը (խոսքը) լոկ անհատի լեզվառակությունը երևան գալու ձեռն է, սա էլ՝ ույլաւ ժողովրդի լեզվի արտադրոշմը (Ասրբացոց). Վերջինիս համար էլ որպես սկզբնաղբյուր, որպես «վերջին իրականություն» ծառայում է մարդու լեզվարնդունակությունը: Այսպիսով, ճիշտ սահմանազատում անցկացնելով՝ Վայսգերբերը հաստատում է իդեալիստական և ոչ դիալեկտիկական հարաբերություն. չկարողանալով ճիշտ կերպով լուծել կոնկրետի և աբստրակտի դիալեկտիկական կապը՝ Վայսգերբերը փորձում է ժխտել այն կարծիքը, որ ճիշյալ աստիճանավորությունը տանում է դեպի ավելի բարձր աբստրակցիա. Նրա կարծիքով՝ բարձր աբստրակցիան անիրական աշխարհն է, մինչդեռ այս դեպքում ևս մենք գործ ունենք իրականի հետ: Լեզվի՝ ինքնակա կուլտուրական ունեցվածքը լինելու սկզբունքը Վայսգերբերի համար հաղորդակցման հնարավորությունը բացատրելու նույնպիսի բանալի է, ինչպես Հումբոլդտի համար՝ մարդկային բնության ընդհանության և Ֆուլերի համար լեզվական շնորհի մետաֆիզիկական սկզբունքները: Քանի որ լեզուն Վայսգերբերի համար առաջին հերթին կուլտուրական ունեցվածք է, աշխարհի օբյեկտիվ պատկեր և ոչ թե իրար հասկանալու միջոց, ուստի և վերջին հաշվով Վայսգերբերը լեզվական իմաստների ընդհանությունը, իրար հասկանալու և հաղորդակցման հնարավորությունը բացատրում է հենց լեզվականով. Ժխտելով մարդկանց՝ համատիպ հասկացողություններով ծնվելու և առանձին անհատների կողմից սեփական փորձով ու ապրումներով դրանց համեմու հնարավորությունը՝ Վայսգերբերը ընդունում է միայն ռերրորդ հնարավորությունը՝ այն, որ «բովանդակությունների միատեսակությունը այնպես, ինչպես հնչյունական նշանների միատեսակությունը, միջնորդված է լեզվի միջոցով, այսինքն՝ որ այս բովանդակությունները պետք է դիտվեն որպես լեզվի կուլտուրական ունեցվածքի բաղկացուցիչ մասերը և սրանով իսկ ընդհանուր են որևէ լեզվական ընդհանության պատկանողների համար»<sup>1</sup>:

Բառի արտաքին ու ներքին կողմը Վայսգերբերը դիտում է որ-

<sup>1</sup> L. Weisgerber, Muttersprache und Gestesbildung, 1929, էջ 51.

պես անբաժանելի կապի մեջ գտնվող կողմեր. Հնչյունական նշանի և նրա իմաստի միջև եղած կապը, ըստ Վայսգերբերի, «արտաքին, ասոցիատիվ չէ, այլ երկուսն էլ անբաժանելիորեն իրար պայմանավորում են»<sup>1</sup>. Վայսգերբերը բառի ներքին բովանդակությունը նույնացնում է հասկացության հետ. Բառը նշանակում է ոչ թե առարկան որպես այդպիսին, այլ նրա մասին ունեցած մեր հասկացական բմբոնում, ընդ որում բառը լեզվի մեջ ստանում է իր որոշակիությունը սիստեմի միջոցով, ուստի և բառի բնույթն ըմբռոնելու համար պետք է ենել լեզվական սիստեմից:

Վ. Պորցիգ.— Վ. Պորցիգը (ծնվ. 1895 թ.) աշխատում է հասկապես բնդհանուր լեզվարանության և Հնդկրոպարանության բնագավառում. նրա ուշագրության կենտրոնում գտնվում են նախադասության, բառիմաստի, Հնդկրոպական լեզուների դասակարգման և այլ հարցերը<sup>2</sup>:

Լեզվաբանությունը համարելով հասարակական գիտություն (Geisteswissenschaft)<sup>3</sup> նա կարծում է, որ այն հիմնական հասարակական գիտությունն է, ինչպես մաթեմատիկան բնական գիտությունների մեջ: Այս ըմբռումը պայմանավորվում է լեզվի բնույթի լթուինգվիստիկական բնդհանուր ըմբռնմամբ. «Միայն (erst) նա է (= լեզուն — Գ. Զ.) հոգեկան պրոցեսները գարձնում մարդկային ապրումներ և հիմնադրում հասարակությունը, որի վրա կառուցվում է ողջ մարդկային կուլտուրան», գրում է Պորցիգը<sup>3</sup>: Ինչպես որ բնական գիտությունների նվաճումները իսկական գիտական արժեք ձեռք բերելու համար պետք է մաթեմատիկական ձևակերպում ստանան, այնպես էլ մարդկության հոգեոր նվաճումների (Leistungen) վերաբերյալ բոլոր գիտելիքները պետք է հանգեցվեն դրանց լեզուների կառուցվածքին և նվաճումին (Leistung)<sup>4</sup>: Պորցիգը ևս կարծում է, որ մարդկության բազմաթիվ լեզուներից ամեն մեկը կազմում է աշխարհի մի տարբեր պատկեր, ընդ որում լեզուների այդ տարբերությունները պայմանավորված են լեզվա-

<sup>1</sup> L. Weisgerber, Muttersprache und Geistesbildung, 1929, էջ 28.

<sup>2</sup> W. Porzig, Der Begriff der inneren Sprachform, 1923. Über die Aufgaben der indogermanischen Syntax, „Stand und Aufgaben der Sprachwissenschaft, Festschrift für W. Streitberg“, Heidelberg, 1924. Die Namen für Satzinhalte im Griechischen und im Indogermanischen, Berlin Leipzig, 1942. Die Gliederung des indogermanischen Sprachgebiets, Heidelberg, 1954. Das Wunder der Sprache, Bern, 1950. Sprachform und Bedeutung.

<sup>3</sup> W. Porzig, Das Wunder der Sprache, Bern, 1950, էջ 7.

<sup>4</sup> Նույն տեղը, էջ 368.

կան հանրության մեջ ապրող հոգեւոր ուժերով. «Ոչ միայն աշխարհի մի (առանձին) պատկեր, այլև սեփական հոգեւոր գոյության (Dasein) մի (առանձին) պատկեր են գծում ժողովուրդները իրենց լեզուների մեջ, հենց դրանով էլ նրանք դառնում են ժողովուրդներ»<sup>1</sup>:

Պորցիգի կարծիքով՝ լեզվի զարգացումը տանում է դեպի այն, որ մտածողությունն ըմբռնում է ոչ միայն իրերի հարաբերությունները, այլև հարաբերությունների հարաբերությունները, մի աստիճան, որտեղ այն չի կարող յոլա գնալ առանց սիմվոլների օգնության (հմմտ. Կասմիրեր): Արստրակցիայի պրոցեսը, բացի գայլական առարկաներից, ստեղծում է և «ավելի բարձր կարգի առարկաներ»:

Հասկանալի է, որ «ներքին ձևի» պրոբլեմը պետք է Պորցիգին հետաքրքրող գլխավոր պրոբլեմներից մեկը լինի: Դեռևս 1923 թ.<sup>2</sup> խոսելով «ներքին ձևի» մասին՝ Պորցիգն ընդգծում է սրա հետ կապված սիստեմայնության (ամբողջայնության) գաղափարը. Ներքին ձևը Պորցիգը պատկերացնում է որպես լեզվի հայեցողական ձև (Anschaungsweise), ստատիկ և դինամիկ վիճակների մեջ առկա «իմաննենտ սկզբունք», որ լեզվական երևույթներին տալիս է միասնություն (ամբողջականություն, սիստեմայնություն): Միաժամանակ ներքին ձևի գաղափարը, նրա կարծիքով, պետք է հնարավորություն տա պարզելու այն հարաբերությունը, որ լեզուն որպես «օբյեկտիվ հոգեւոր արտադրանք» (objektive Geisteserzeugnis) ունի այնպիսի հոգեւոր արտադրանքների հետ, ինպիսիք են արվեստը, կրոնը և այլն: Տվյալ լեզվական հանրության մեջ մտնող անհատների համար, ըստ Պորցիգի, «իր մայրենի լեզվի ձևերը ապերցեպցիայի իսկական ապրիորիկ ձևեր են». Ներքին ձևը բնականաբար Պորցիգի համար երևան է գալիս բուն իմաստացին կողմի և շարահյուսության մեջ, որոնք և նրա ուշադրության կենտրոնում են:

Հենվելով Հուաեոլի՝ իմաստային բնագավառի՝ ամեն մի ֆիզիկականից անկախ լինելու ապացուցման փորձի վրա՝ Պորցիգը փորձում է նոր ձևով դնել բառիմաստի և շարահյուսության հարցերը: Դեռևս 1924 թ.<sup>3</sup> նա փորձում է հնդկրոպական շարահյուսու-

<sup>1</sup> W. Porzig, Das Wunder der Sprache, Bern, 1950, էջ 366–367.

<sup>2</sup> W. Porzig, Der Begriff der inneren Sprachform, IF, IV, 1923.

<sup>3</sup> W. Porzig, Über die Aufgaben der indogermanischen Syntax, Heidelberg, 1924.

թյունը քննել ֆենոմենոգիական հայեցակետից։ Հստ Պորցիգի՝ այս առումով մեզ պետք է հետաքրքրի ոչ թե արտասանվածքի (Ausspruch) հոգեկան կողմը, այլ նրա հարաբերությունը դեպի իրականությունը, այն, ինչ որ արտահայտությունը նկատի ունի (meint): Իմաստը, ըստ Պորցիգի, արտասանվածքի՝ իրականության մի կտոր նկատի ունենալու (meinen) կարողությունն է։ Արտասանվածքի մեջ տարբերելով 3 կողմ՝<sup>1)</sup> 1) արտաքին արտահայտությունը հնչունակերի միջոցով, 2) այն հոգեկան իրականությունները (Geschehnisse), որ նա արտահայտում է (kundgibt) և 3) նրա իմաստը, — Պորցիգը համապատասխանաբար տարբերում է 1) քերականությունը (նկատի ունի միայն հնչունաբանությունը և ձեւբանությունը՝ ներառյալ նաև բառակազմությունը), որին վերաբերում է արտաքին կողմի նկարագրությունը, մասսամբ էլ հոգեբանական բացատրությունը, 2) լեզվի հոգեբանությունը և 3) իմաստի ուսմունքը (Bedeutungslehre): Իմաստի ուսմունքի մեջ նա տարբերում է երկու «դիսցիպլին»՝ իմաստաբանություն (Semasiologie կամ Semantik), որ գրաղվում է իմաստային բոլանդակությամբ (Bedeutungsinhalt) և շարահյուսություն, որ գրաղվում է իմաստային ձևերով (Bedeutungsweise):

Հարահյուսության բնագավառը Պորցիգը բաժանում է նախ՝ պարզ նախադասության կառուցվածքի (տիպերի), երկրորդ՝ իմաստային ֆունկցիաների, երրորդ՝ իմաստային կատեգորիաների և չորրորդ՝ նախադասությունների կապակցության քննության։ Պորցիգը տարբերում է, բացի ստատիկ շարահյուսությունից, նաև պատմական և համեմատական շարահյուսություններ՝ փորձելով գտնել սրանց նպատակները և վերլուծության եղանակները։ Նշելի է, որ մեկնակետ ընդունելով շարահյուսության ոիսյան ըմբռնումը, բայց խմբագրելով այն ըստ հոաեոլյան ֆենոմենոլոգիայի, Պորցիգը գտնում է, որ ոչ միայն «բառը» և «բառակապակցությունը», այլև «ձեզ» և «իմաստը» հակադիր հասկացություններ չեն։

Յստ Տրիր և նրա «իմաստային դաշտի» ուսմունքը։ — 3. Տրիրը իր մի շարք աշխատություններում նպատակ է դնում կիրառել իմաստաբանական հետազոտության որոշակի եղանակներ։ Սակայն իր ուսմունքը Տրիրը կառուցում է Հերդերի և Հում-

<sup>1)</sup> J. Trier, Der deutsche Wortschatz im Sinnbezirk des Verstandes, Heidelberg, 1931. Sprachliche Felder, ZB, VIII, 1932. Das sprachliche Feld, NJWB. Deutsche Bedeutungsforschung. „GPh, Festschrift für Otto Behaghel“, Heidelberg, 1934 և այլն։

բոլղտի իդեալիստական ուսմունքների հիման վրա։ Այդ ուսմունքի հիմքում ընկած է այն միտքը, թե նախ՝ ամեն մի լեզու յուրովի է կառուցում իրականությունը, և երկրորդ՝ բառերը մտքում մեկուսացված գոյություն չունեն, այլ գտնվում են սիստեմային հարաբերությունների մեջ։ Որպեսզի կարողանանք բացահայտել այս կամ այն լեզի մեջ առկա իմաստների բնույթի ու փոխհարաբերության առանձնահատկությունները, պետք է այդ լեզվի բառապաշտը բաժանենք առանձին «իմաստային դաշտերի», որոնց մեջ մտնող բառերը ունեն իմաստային այս կամ այն ընդհանրությունը (գոյների, հագուստների ու զարդարանքների, բարոյական հատկությունների, մտավոր կարողությունների, կլիմայական եղանակի դաշտերը և այլն և այլն)։ Տրիրն իր ուշադրությունը կենտրոնացնում է այն հարցի վրա, թե ինչպես պետք է առանձնացվեն այդ իմաստային դաշտերը, և տալիս է իմաստային դաշտի մեջ մտնող բառիմաստների վերլուծման օրինակներ։ Տրիրը լեզուն դիտում է որպես գոյություն ունեցող ավտոնոմ (ինքնակա) ստրուկտուրա, որ բաժանվում է մասնակի սիստեմների. լեզվի ողջ բովանդակությունը հանգեցվում է լեզվական բաղադրիչների հարաբերություններին։ «Յուրաքանչյուր լեզու ընտրության սիստեմ է, որ գտնվում է օբյեկտիվ իրականությունից վեր և հակադրվում է նրան։ Փաստորեն յուրաքանչյուր լեզու ստեղծում է իրականության ինքնարավ և ամբողջական վերարտադրություն։ Յուրաքանչյուր լեզու իրականությունը կառուցում է յուրովի, որին համապատասխան սահմանվում են և տվյալ լեզվի առանձնահատկությունը կազմող բաղադրիչները»<sup>1</sup>

Եթե գնահատելու լինենք Տրիրի «իմաստային դաշտերի» ուսմունքը, ապա կարելի է ասել, որ այն ներկայացնում է իմաստարանության նկատմամբ ստրուկտուրալ մեթոդի տարերային (դեռևս նախքան ստրուկտուրալիստական հոսանքի ձևավորումը) կիրառման փորձ։ այդ էլ հենց որոշում է նրա դրական ու բացասական կողմերը։ Այդ ուսմունքը հնարավորություն է տալիս նախ՝ բացահայտել տվյալ լեզվի իմաստային ստրուկտուրային առանձնահատկությունները սինիրոնիկ կտրվածքով, տվյալ էտապում, պարզել իմաստների քանակը, տիպերը և փոխհարաբերությունը, երկրորդ՝ ցույց տալ տվյալ լեզվի իմաստային կառուցվածքի մեջ կատարված պատմական տեղաշարժերը, «իմաստային դաշտերի»

<sup>1</sup> J. Trier, Das sprachliche Feld, NJWB, X, 1934, էջ 428.

տեսակների, կազմի ու փոխհարաբերության փոփոխությունները և երրորդ՝ տվյալ լեզվի իմաստային ստրուկտուրայի առանձնահատկությունները այլ լեզուների համեմատությամբ։ Սակայն այս դրական կողմերի հետ միասին՝ Տրիրի ուսմունքը ունի և իր բացասական կողմերը։ Նախ՝ ինչպես ստրուկտուրալիստները, Տրիրը ևս լեզվի իմաստային կառուցվածքը քննում է իմանենտորեն, կտրում արտաքին աշխարհից, դիտում լոկ ներքին հարաբերությունների հիման վրա, մինչդեռ բառիմաստները ոչ այլ ինչ են, եթե ոչ առարկայական աշխարհի հասարակական նշանակումները։ Երկրորդ՝ այս իսկ պատճառով «իմաստային դաշտերի» առանձնացումը կատարվում է որոշ կամայական հատկանիշների հիման վրա, որոնք այս կամ այն նկատառումով առանձնացնում է հետագոտողը։ Երրորդ՝ անհրաժեշտ շափով «հաշվի շեն առնվում հասարակական տարբեր խմբավորումների «իմաստային դաշտերի» կազմի և փոխհարաբերության տարբերությունները։

«Իմաստային դաշտերի» ուսմունքի այս արժանիքներն ու թերությունները հիմք են տվել ոմանց քննադատական դիրք բռնելու նրա նկատմամբ, որիշներին էլ՝ որոնելու ըստ «իմաստային դաշտերի» կատարվող ուսումնասիրության մեթոդիկան բարելավելու ուղիներ։

Տրիրի քննադատները նշում են, որ «իմաստային դաշտերը» ոչ թե օրյեկտիվ բնույթ ունեն, այլ սույբեկտիվ արստրակցիաներ են (Բեց), որ դրանց միջև որոշակի սահմաններ չկան (Շայդվայլեր), որ Տրիրը հանդես է բերում բիոլոգիական ըմբռնում՝ Դարմբատետերի նման խոսելով բառերի, կյանքի ու մահվան մասին (Դունզայֆ) և այլն։

Վայսգերբերը, սկզբնապես ընդունելով Տրիրի ուսմունքը, հետագայում հանդես է գալիս այն բարելավելու փորձով։ Եթե Տրիրը բառապաշտի ուսումնասիրության հիմքում դնում է հասկացական (կոնցեպտուալ) և լեքսիկական «դաշտերի» տարբերակումը, ապա Վայսգերբերը հիմք է ընդունում «Հնչյուն», «մտքի միջնորդավորող աշխարհ» և «իրական գոյ» եռանդամ հարաբերակցությունը։ Նա խոսում է «լեզվական դաշտի» մասին, այն դիտում շարժման մեջ որպես «դինամիկ իրականություն» և բառերի բաշխումը կատարում է ըստ «իրային խմբերի»։

Պորցիգը ի տարբերություն Տրիրի, որ ուշադրություն էր դարձնում այն բանի վրա, թե ինչպես պետք է տարբերվեն «իմաստային դաշտերը», փորձում է պարզել, թե ինչպես պետք է բառերը

մտցվեն այս կամ այն «իմաստային դաշտի» մեջ. Եթև Տրիրը ուսումնասիրում էր անունները, ապա Պորցիգը խոսում է և բայերի մասին, «իմաստային դաշտի» կենտրոնը համարում բայր կամ ածականը՝ որպես ստորոգելիի ֆունկցիա ունեցող և հետեւաբար իմաստով ավելի որոշակի բառեր:

Նշելի է, որ Խափենը և ուրիշները այսպիսի դաշտերի առանձնացման համար աշխատում են զուտ լեզվաբանական-ձևական շափանիշներ որոշելու:

## 6) Ամերիկյան էքնոլինգվիստիկա (ազգագրական լեզվաբանություն)

Ընդհանուր տեղեկություններ.— Ազգագրական լեզվաբանությունը ժամանակակից ամերիկյան լեզվաբանության ամենատարածված ուղղություններից մեկն է: Այդ ուղղությանը զուգորդում են Սեպիրի դրույթները, հատկապես նրա կաղապարների ուսմունքը Հումբոլդտի հայացքների հետ՝ հանդես գալով որպես նեռհումբոլդտականություն: Ինքը Սեպիրը հետագայում կրել է այդ ուղղության հակադարձ ազդեցությունը, մանավանդ իր ազգագրական ուսումնասիրություններում: Էթնոլինգվիստիկայի ներկայացուցիչները սեպիրյան կաղապարների ուսմունքը տեղափոխում են ազգագրության բնագավառը՝ հասնելով ռասայական և զրակացությունների: Նշելի է, որ էթնոլինգվիստիկան յուրահատուկ միջին ուղղություն է ազգագրության ու լեզվաբանության միջև, և նրա ներկայացուցիչները հաճախ նույն շափի ազգագրադեսներ են, եթե ոչ ավելի, որքան և լեզվաբաններ:

Ազգագրական լեզվաբանության ձևավորման համար կարենոր դեր են խաղացել Օգդենի և Ռիչարդսի «Նշանակությունների նշանակությունը»<sup>1</sup> գրքում արծարծված գաղափարները՝ միացած ազգագրագետ Բ. Մալինովսկու ռասայական մեկնաբանությունների հետ: Օգդենը և Ռիչարդսը հենվում են մասամբ Ռասելի և Վիտգենշտայնի, մասամբ էլ Ֆ. Մառլինների հայացքների վրա և իրենց հերթին նշանակալից դեր են խաղացել սեմանտիկների հայացքների ձևավորման մեջ: Հստ նրանց՝ լեզուն, որը նրանք դիտում են որպես «նշանային վարմունքի» ձևերից մեկը (արվեստի, փիլիսո-

<sup>1</sup> C. K. Ogden and I. A. Richards, The Meaning of Meanings, 1923. Պրեին կազմած է և Բ. Մալինովսկու հոգածը:

փայության, տրամաբանության հետ միասին), ոչ միայն նախորդել է մտածողությանը, այլև ստեղծել այն, ընդ որում լեզուն մտածողության պրոցեսի վրա բացասական ազդեցություն է գործում: Բ. Մալինովսկին այդ գրքին կցված «նշանակությունների պրոբլեմը նախնական լեզուներում» հոդվածում, փորձելով հաստատել Օգենի և Ծիչարդսի հայացքները, համեմատում է նախնական և կովտուրական ժողովուրդների լեզուները: Հստ նրա՝ լեզուն ծագել է որպես աշխարհի ստիմուլների նկատմամբ մարդու ռեակցիաների հնչյունական արտահայտություն: Հաղորդակցության ֆունկցիան երկրորդային է: Լեզվի այս նախնական բնույթով էլ Մալինովսկին բացատրում է նախնական ժողովուրդների լեզուների «սիտուացիոն» բնույթը: Հստ Մալինովսկու՝ լեզուն որոշում է գիտակցության բնույթը: Մեր գիտակցության բոլոր ձևերը դիտվում են որպես լեզվի ստեղծագործություններ:

Ազգագրագետներ Ռ. Բենեդիկտը, Քլուկհոնը առաջիններից են, որ Սեպիրի «կաղապարների» ուսմունքը տեղափոխում են ազգագրության բնագավառը և անում ուսայական եղրակացություններ: Հստ նրանց՝ ամեն մի ժողովուրդ կամ ցեղ ունի իր անփոփխ կառուցվածքային «կաղապարները», որոնք որոշում են նրա աշխարհը բոնումը, նրա կովտուրան, նրա հասարակական կազմակերպության ձևերը: Այսպես, հնդիկների հասարակական կազմակերպության ձևերը Բենեդիկտը դիտում է որպես «կովտուրական-վարմունքային կաղապարների» արտահայտություն: Տարբեր ուսաները ունեն իրենց տարբեր «կովտուրական-վարմունքային կաղապարները» և հետևաբար հավասարաթեք շեն:

Բ. Ուորֆ.—Բ. Ուորֆը ազգագրական լեզվաբանության գիտավոր ներկայացուցիչներից մեկն է: Իր բազմաթիվ եղրակացությունները նա հիմնում է ամերիկյան բնիկների լեզուներից մեկի՝ հոպի լեզվի ուսումնասիրության վրա, նրա հոդվածներից հատկապես նշելի են «Զորս ուսումնասիրություն մետալինգվիստիկայից» շարքում միավորվածները (1949 թ.): Ուորֆը ընդունելով Սեպիրի կաղապարների ուսմունքը՝ մերժում է, սակայն, նրա իմանենտիզմը և փորձում կապ հաստատել լեզվի և կովտուրայի միջև: Այս առումով նա հակադրում է հոպի լեզվի «կաղապարային ստանդարտը» «հվրոպական ստանդարտին», իր վերլուծությամբ փորձում պարզել այն գծերը, որոնք դրանք տարբերում են իրարից: Հոպիների «կովտուրական նորմաները» կապելով «լեզվական կաղապարների» հետ՝ Ուորֆը նրանց ողջ աշխարհայեցողությունն ու

ապրելակերպը որոշում է լեզվական կաղապարների բնույթով՝ թնությունը մենք ընկալում ենք մեր լեզվական կաղապարին համապատասխան. զգայական փորձը ձևավորվում է մեր լեզվական կաղապարով, որը որոշում է և «կուլտուրայի տիպը», և՝ վարմունքի ձևը: Քերականությունը համարվում է գաղափարների ստեղծողը: Ամեն մի կոնցեպտուալ սիստեմ հարաբերական բնույթ ունի և կախված է լեզվի բնույթից: Եթե այժմյան թուրքական կամ չինական գիտանականները նկարագրում են աշխարհը եվրոպացիների նման, ապա այդ լոկ նշանակում է, որ նրանք լիովին յուրացրել են եվրոպական եղանակը և ոչ թե բնածին հայեցակետով այն մշակել: Բ. Ուորֆի հայացքները իդեալիզմի և ռասիզմի յուրատեսակ խառնուրդ են:

## II. ԼԵԶՎԱՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԴԱՎԱՌՈՒՆԵՐ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներածական տեսլեկուրյուններ.—Լեզվաբանական դիսցիպլիններից այս ենթաշրջանում ամենից ավելի շատ ուշադրություն են գրավում, ինչպես տեսանք, ընդհանուր լեզվաբանությունը և նկարագրական քերականությունը. ինչպես որ *XIX* դ. ընդհանուր լեզվաբանությունը հենվում էր համեմատական քերականության վրա, և այդ երկուաը զարգանում էին գիրկընդիմառն, այս շրջանում էլ ընդհանուր լեզվաբանությունն ընթանում է նկարագրական քերականության հետ գիրկընդիմառն: Գանի որ լեզվաբանության գլխավոր նպատակը համարվում է բոլոր լեզուների կառուցվածքի վերլուծության համար միասնական սկզբունքներ ստեղծելը, ուստի և այս շրջանում ընդհանուր լեզվաբանության հարցերը բննության են ենթարկվում նոր հիմունքների վրա դրված ընդհանուր քերականության, նկարագրական լեզվաբանության, զուգադրական ուսումնասիրությունների հետ կապված:

Առաջանում են լեզվաբանական դիսցիպլինների և լեզվաբանության բաժինների նոր ըմբռնումներ, դրանց դասակարգման նոր փորձեր, որոնք կապված են նոր մեթոդների արմատավորման հետ և որոնց մասին մասսամբ խոսեցինք առանձին հոսանքների քննարկման հետ կապված: Նշենք, որ հատուկ կարենորություն է ձեռք բերում ֆոնոլոգիան (*հնչույթաբանությունը*), որը որպես ֆոնեմաների (*հնչույթների*) ուսմունք հակադրվում է հնչյունաբա-

նությանը որպես հնչյունների ֆիզիկական և ֆիզիոլոգիական նկարագրության. հանդես է գալիս նաև այսպես կոչված հնչաշափությունը (ֆոնոմետրիա), որ հանգում է հնչյունաբանության մեջ վիճակագրական մեթոդների կիրառմանը: Տարբեր բաժինների ու դիսցիպլինների միջև հաստատվում են սահմանակից բաժիններ ու միջդիսցիպլիններ: Նոր զարգացում են ստանում մի շարք այլ դիսցիպլիններ ու բաժիններ՝ տոպոնիմիկական և օնոմասութիկական ուսումնասիրությունները, բառագիտական և իմաստաբանական ուսումնքները և այլն. գիտության ու տեխնիկայի նոր ճյուղերի զարգացման հետ կապված ժագում են նոր հարցեր. առանձնապես նշելի են ինֆորմացիայի (կոմունիկացիայի) տեսության, կիրեռնետիկայի ու սրա հետ կապված մեքենայական թարգմանության հարցերը:

Նորագույն վերլուծական մեթոդներն արմատավորվում են նաև պատմա-համեմատական աշխատություններում, որոնց մեջ սկսում են հանդես գալ նոր տեխնիկաներ՝ կապված լեզվի սիստեմային ըմբռնման, լեզվաբանական աշխարհագրության տարածման, պատմա-համեմատական վերլուծման մեջ տարբեր ժամանակագրական շերտերի բացահայտման տեխնիկաների և ներքին վերականգնման մեթոդի կիրառման հետ:

Լեզվաբանության ինքնուրույնացման փորձերին զուգընթաց հանդես են գալիս լեզվաբանության և այլ գիտությունների միջև կամուրջ ստեղծելու, մեկի նվաճումները մյուսի նկատմամբ կիրառելու և միջակա դիսցիպլիններ ստեղծելու փորձեր. այդպիսի փորձերի հետ է կապված էթնոլինգվիստիկայի, պսիխոլինգվիստիկայի, մաթեմատիկական լեզվաբանության ստեղծումը և այլն:

Բացի ընդհանուր լեզվաբանական և ընդհանուր քերականական լուսաբանություններից, որոնց մասին մենք առիթունեցանք առանձին խոսելու, այս ենթաշրջանում հանդես են գալիս նաև բազմաթիվ այլ աշխատություններ. սրանցից հիշատակելի են Գրաֆի «Լեզուն և լեզուները», Գրեյի «Լեզվի հիմունքները», Կոհենի «Լեզու՝ կառուցվածքը և էվոլյուցիան», Սկոտի, Կաոփի և Ռիլկինսոնի «Լեզուն և նրա աճը», Պալմերի «Փամանակակից լեզվաբանության ներածությունը», Վարտբուգի «Լեզվաբանության պրոբլեմատիկայի և մեթոդիկայի ներածությունը», Ստոլտեանտի «Լեզվաբանական գիտության ներածությունը», Տալյավինի «Լեզվաբանության ներածությունը», Վ. Պորցիգի «Լեզվի հրաշալիքը», Գյունտերի «Լեզվաբանության հերածությունը», Վ. Պորցիգի «Լեզվի հիմնական հարցերը»,

Թատոյի «Ընդհանուր լեզվաբանության վիճակը և խնդիրները», Էստուգի «Լեզվի հայեցակետերը», Ուատմոռի «Լեզուն», Գարսիա Դե Գիեգոյի «Ընդհանուր և իսպանական լեզվաբանությունը» և այլն<sup>1</sup>, Ժողովրդական դեմոկրատիայի երկրներում լույս տեսած ընդհանուր լեզվաբանական աշխատությունների հեղինակները աշխատում են դրանք կառուցել դիալեկտիկա-մատերիալիստական հիմքերի վրա՝օգտվելով սովետական լեզվաբանության նվաճումներից (Գ. Պել, Ա. Գրաու և ուղիղներ)<sup>2</sup>: Լեզվաբանական տեսության կարևոր հարցեր են արծարծվում նաև մի շարք պարբերականներում<sup>3</sup>: 1928 թ. սկսած հրավիրվում են միջազգային լեզվաբանական կոնգրեսներ, որոնք կարևոր դեր են խաղում լեզվաբանական աշխատանքի կոռորդինացիայի բնագավառում:

**Սուլաստրատի պրոբլեմը.—Սուլաստրատի պրոբլեմն այս շրջանում զգալի առաջընթաց է կատարում: Նեոլինավիստների հայցքների քննությունից տեսանք, որ սուլաստրատի գաղափարը**

<sup>1</sup> W. L. Graff, Language and Languages: an Introduction to Linguistics, New-York London, 1932. L. H. Gray, Foundations of Language, New-York, 1939. II հր., 1950. M. Cohen, Le langage: structure et évolution, Paris, 1950. H. F. Scott, W. L. Carr and G. T. Wilkinson, Language and its Growth: an Introduction to the History of Language, Chicago, 1935. L. R. Palmer, An Introduction to Modern Linguistics, London, 1936. W. von Wartburg, Einführung in Problematik und Methodik der Sprachwissenschaft, Halle, 1943. Փր. Թարգմ. Problèmes et méthodes de la linguistique, Paris, 1946. F. H. Sturtevant, An Introduction to the Linguistic Science, New Haven, 1917. C. Taglavini, Introduzione alli glottologi, IV հր., Bologna, 1950. W. Porzig, Das Wunder der Sprache, Berne, 1950. H. Guntert und A. Scherer, Grundfragen der Sprachwissenschaft, Heidelberg, 1956. E. Otto, Stand und Aufgabe der allgemeinen Sprachwissenschaft, Berlin, 1954. W. J. Entwistle, Aspects of Language, London, 1953. J. Whitmough, Language: a Modern Synthesis, London, 1956. V. García de Diego, Lingüística general y española, Madrid, 1951. Հմայ. և .Bibliographie linguistique publiée par la Comité international permanent de linguistes, Utrecht Bruxelles, 1949—1957: աշխատություն:

<sup>2</sup> G. Pätsch, Grundfragen der Sprachtheorie Halle (Saale), 1955. A.I. Graur, Studii de lingvistica generală, Bucureşti, 1955.

<sup>3</sup> Bulletin de la Société de Linguistique de Paris (Փարիզում). Cahiers Ferdinand de Saussure (Ժնևում). Lingua (Հառլեմում). Acta Linguistica (Կոպենհագենում) և Բուդապեշտում). Word (Նյու-Յորքում). Language (Բայտիմորում). Archivum Linguisticum (Գլազգոյում). Archivo glottologico italiano (Ֆլորենցիայում) և այլն:

ժամանակակից լեզվաբանության մեջ տարբերակվել է՝ հանգեցնելով օտար տարրերի երեք շերտի առանձնացմանը (սուբստրատ, սուպերստրատ, ադստրատ). այս բանում կարենոր դեր են խաղացել Վարտբուրգը և Բարտոլին: Սուբստրատի տեսության ընդհանուր հարցերի մշակման և կիրառման փորձերի ուղղությամբ աշխատել են նաև Վ. Բրյոնդալը, Ա. Շմիտը, Վ. Բերտոլդին, Բ. Տեռաշինին, Յ. Պոկոռնին<sup>1</sup>: Վերջինս փորձում է ապացուցել իուլանդերենի մեջ հյուսիս-աֆրիկյան-քամական սուբստրատի առկայությունը, ընդորում սուբստրատի հարցի քննությունը փորձում է կապել հասարակության կառուցվածքի վերաբերյալ բուրժուական սոցիոլոգիական պատկերացումների հետ: Սուբստրատի տեսության և ստրուկտորալիզմի փոխհարաբերության հարցը քննվել է Ն. Ա. Նիելսենի կողմից<sup>2</sup>: Սուբստրատի տեսության համար իսկական գիտական հիմքի ստեղծումը պահանջում է հնագիտական, մարդաբանական և ազգագրական տվյալների խստիվ հաշվառում, մի բան, որ փորձում են անել սուբստրատի տեսության ժամանակակից հետևորդները:

Հնչյունաբանություն և հնչյունբանություն.—Հնչյունաբանությունը այս ենթաշրջանում ներկայացված է մի շարք դիսցիպլիններով՝ փորձառական և վիճակագրական հնչյունաբանությամբ, ստատիկ և պատմական հնչույթաբանությամբ: Փորձառական հնչյունաբանությունը այս ենթաշրջանում հետաք քայլեր է կատարում նոր մեթոդների արմատավորման, հնչյունի և հնչույթի փոխհարաբերության հարցի մեկնաբանության ուղղությամբ և այլն:

Որոշ լեզվաբաններ հանդես են գալիս հնչույթաբանությունը հնչաշափությամբ (ֆոնոմետրիայով) փոխարինելու պահանջով: ըստ այս դիսցիպլինի հիմնադիր է. Ցիլիների<sup>3</sup> և նրա հետևորդ-

<sup>1</sup> V. Bröndal, Substrater og laan, København, 1917. A. Schmidt, Die germanische Lautverschiebung und ihr Wert für die Frage nach Heimat der Indogermanen, „Hirts Festschrift“, II. V. Bertoldi, Substratprobleme: methodologischer Versuch auf dem prähistorischen Gebiete der Ortsnamen und des Wortschatzes, 1931. B. Terracini, Sostrato, „Scritti in onore di A. Trombetti“, 1937. J. Pokorný, Das nichtindogermanische Substrat im Irischen, ZCPH, XVI, 1927. Substrattheorie und Urheimat der Indogermanen, MAG, LVI, 1936.

<sup>2</sup> N. A. Nielsen, La théorie des substrats et la linguistique structurale, AL, VII, 1-2, 1952.

<sup>3</sup> E. Zwirner, Aufgaben und Methoden der Sprachvergleichung durch Mass und Zahle, Phonometrie, ZM, II. E. Zwirner und K. Zwirner, Grundfragen der Phonometrie, Berlin, 1936.

Ների՝ վիճակագրական վերլուծությունը պետք է դառնա և՛ հնչունաբանական, և՛ ձևաբանական վերլուծության գլխավոր մեթոդը: Նշելով, որ հնչույթի ուսմունքը գալիս է լեզվի հոգեբանական ըմբռոնումից՝ այս հեղինակները պահանջում են դեն նետել հոգեբանական և տրամաբանական բոլոր կարգի պատկերացումները լեզվական հարցերի ուսումնասիրության բնագավառից: Նրանք որպական տարրերություն չեն տեսնում հնչունի և հնչույթի միջև, ժխտում են ինչպես խոսքի և լեզվի, այնպես էլ հնչունի և հնչույթի տարրերման գիտական ու գործնական օգտակարությունը և աշխատում միավորել հնչունաբանությունն ու հնչույթաբանությունը: Հնչաշափական-վիճակագրական վերլուծության դեպքում, ըստ նրանց, այս տարրերությունը դադարում է էական նշանակություն ունենալուց: Բայտ է. Ցվիոների՝ կոնկրետ անհատական լեզվական ակտուները ինքնին առնված ու ոքի չեն հետաքրքրում: Հնչաշափությունը պեսք է դրանց ուսումնասիրությունը օգտագործի հնչունի միջին արժեքը և հնչունական նորման որոշելու, հնչունական վարիացիաները պարզելու համար:

Ընդհանուր առմամբ նշելի է, որ վիճակագրական վերլուծությունը և քննության մաթեմատիկականացումը ամերիկյան ստրոկտորալիստների բնորոշ գիծն են: Զեավորվում է նաև մի հատուկ դիսցիպլին՝ մաթեմատիկական լեզվաբանությունը:

Հնչյունաբանության հարցերում յուրահատուկ դիրք են բռնում անգլիական հնչունաբանները (Ջոննզը և ուրիշները):

Պատմական հնչույթաբանությունը հետագա զարգացում է ապրում: Ստրոկտորալ-հնչույթաբանական վերլուծությունը լեզվի պատմության հարցերի նկատմամբ կիրառելը նշանակալից արդյունքների է հասցնում: Պատմական հնչույթաբանության ստեղծման ուղղությամբ, ինչպես տեսանք, նշանակալից աշխատանք է կատարում Ռ. Յակոբսոնը: Սակայն ֆրանսիացի լեզվաբան Ա. Մարտինեին է պատկանում դիախրոնիկ հնչույթաբանության ստեղծման առաջին լուրջ փորձը<sup>1</sup>: Մարտինեն խոսում է հնչյունական փոփոխությունների մեջ տնտեսման սկզբունքի, փոփոխությունների շղթայաձևության և այլ երևույթների մասին:

Բառագիտություն և իմաստաբանություն.— «Սեմանտիկա» անվան տակ այս ենթաշրջանում հասկանում են երկու տարրեր բնագավառներ՝ լեզվաբանության բաժիններից մեկը, որ զբաղվում

<sup>1</sup> A. Martinet, *Economie des changement phonétique. Traité de phonologie diachronique*, Berne, 1955.

է գերազանցապես բառիմաստի ու նրա փոփոխության հարցերով և սեմանտիկյան փիլիսոփայությունը, որը փիլիսոփայական-տրամաբանական պրոբլեմները հանգեցնում է լեզվական-իմաստաբանական պրոբլեմներին<sup>1</sup>: Սեմանտիկյան փիլիսոփայության երեսն գալը բնականաբար ունենում է այն հետեւանքը, որ լեզվաբանական իմաստաբանությամբ զբաղվողները նեղացնում են իրենց քննության շրջանակը, ավելի ու ավելի սահմանափակվում բառիմաստների ներքին փոխհարաբերությունների և դրանց փոփոխությունների ուսումնասիրությամբ: Այս բանն ազակցություն: Է գտնում ստրուկտուրալիստական հոսանքների կողմից, որոնք փորձում են սահմանազատել զուտ լեզվականը, իմաստաբանության մեջ ևս արմատավորել ստրուկտուրալիստական իմանենտիզմի սկզբունքները:

Չնայած ոչ լեզվաբանական իմաստաբանության հետապնդած նպատակների տարրերությանը՝ այն հաճախ ազդում է բուն լեզվաբանական իմաստաբանության վրա: Այսպես, այս ենթաշրջանի լեզվաբանական մի շարք հարցերի մեկնաբանության մեջ կարեռ դեր են խաղում Օգդենի և Ռիշարդսի՝ արդեն հիշված եռակի տարրերակումը, Ա. Կորժիբսկու՝ վերացականության աստիճանների և հանգույցի բնույթի վերլուծությունը և այլն: Ա. Կորժիբսկին, մետաֆիզիկորեն նշելով, որ վերացական բառերը հեռանում են առարկայից, հաստատում է արստրակցիայի որոշ աստիճաններ. այս բանում նա հենցում է հանգույցի բնույթի վրա. ըստ նրա՝ է-ն, որ ծառայում է որպես հանգույց և մեծ դեր խաղում տրադիցիոն տրամաբանության մեջ, իրականում արտահայտում է 3 տարրեր իմաստ՝ նույնություն («Բողարը մսագործի շունն է»), պատկանելություն մի որոշակի կատեգորիայի («Բողարը շուն-

<sup>1</sup> Որոշ լեզվաբաններ տարրերում են 3 տեսակ սեմանտիկա՝ լեզվաբանականի կողմին առանձնացնելով ոչ լեզվաբանական մոտեցման ոչ թե մեկ, այլ երկու բնադրակառ՝ 1) լեզվաբանական՝ բառի և նրա ձևի ու իմաստի փոխհարաբերությունը, բառերի իմաստային հարաբերությունները, բառերի՝ իրենց ֆունկցիան ինչպես կտարելու հարցը և այլն. 2) փիլիսոփայական՝ նշանի և իրականության փոխհարաբերությունը, այն հարցերը, թե «ո՞ր պայմաններում է նշանը կիրառելի օրյեկտին», ի՞նչ կանոններ են ապահովում ճշգրիտ նշանակումը (Կառնապ, Մորիս). 3) հոգեբանական-սոցիոլոգիական՝ այն հարցերը, թե ինչո՞ւ ենք հաղորդակցվում, ի՞նչ է նշանը, ի՞նչ է կատարվում մեր հոգում հաղորդակցման ժամանակ, ինչպիսին է նշանային հազարդակցման հոգեբանական հիմքը և մեխանիզմը (Օգդեն և Ռիշարդս, Կորժիբսկի), հմմտ. Բ. Գուրաս, La sémantique, Paris, 1955.

կենդանի է») և առարկայից անջատված օբյեկտիվ ու սուբյեկտիվ հատկությունների վերագրում նրան («Բողարք սև է, գեղեցիկ է, շար է և այլն»):

Լեզվաբանական իմաստաբանության բնագավառում ստրուկտորալիստական վերլուծության եղանակների արմատավորումը նշանավորվում է մի կողմից՝ ստատիզմով, պատմականությունից կատարվող նահանջով, մյուս կողմից՝ իմաննենտիզմով, բառիմաստի զուտ լեզվաբանական քննության շափանիշներ սահմանելու որոնումներով։ Դեռևս 1938 թ. Ֆ. Բլեյկը նշելով<sup>1</sup>, որ մինչ այդ եղած իմաստաբանական ուսմունքները պատմական բնույթ են կրել, դնում է ստատիկ իմաստաբանության ստեղծման հարցը. բնականաբար այս դեպքում ծագող առաջին միտքն այն է, որ այդպիսի իմաստաբանության հիմքում պետք է դրվի տրամաբանական դասակարգումը. սակայն, քանի որ բոլոր իմաստները մեզ հայտնի չեն, ուստի և Բլեյկը խնդիր է դնում կատարելու ոչ թե դեղուկտիվ-տրամաբանական, այլ լեզվաբանական ուսումնասիրություն։

Սակայն ստրուկտորալիստական իմաստաբանության ստեղծումը, որի մեջ, ինչպես տեսել ենք, կարևոր դեր են խաղացել և գերմանական նեռհումբոլդտականները, չի բացառում պատմական իմաստաբանության զարգացման ուղղությամբ կատարելիք որոնումները։ Լեզվաբանների մի նշանակալից թիվ աշխատում է իմաստափոխության տիպերի դասակարգման ավելի ուսցիոնալ սկզբունքներ որոշելու ուղղությամբ, դրվում է պատմա-համեմատական ուսումնասիրությունների մեջ իմաստաբանությանն ավելի շատ տեղ տալու հարցը։

Պատմական իմաստաբանության ամենից ավելի զբաղեցնող բնագավառը իմաստափոխության տիպերի դասակարգման և իմաստային օրինաշափությունների բացահայտման պրոբլեմն է։ Այս բնագավառում հիշատակելի են Զ. Գոմբոչի, Գ. Ստենի, Կ. Սանդենի, Ս. Ուլմանի աշխատությունները<sup>2</sup>:

<sup>1</sup> F. R. Blake, The Study of Language from the Semantic Point of View, IF, LVI, 1938.

<sup>2</sup> Z. Gombocz, Velentéstan, Pecs, 1926, և հետագա մի շաբթ հոգածները. G. Stern, Meaning and Change of Meaning, Göteborg, 1931. K. Sanden, A New Etymological Group of Germanic Verbs and their Derivatives, Göteborg, 1943. S. Ullmann, The Principles of Semantics, Glasgow, 1951.

Հունգարացի նշանավոր լեզվաբան, ֆիննառուգրագետ Գոմբոցը իր իմաստաբանական հետազոտությունների մեջ հենվում է մի կողմից՝ Օգդենի և Ռիչարդսի, մյուս կողմից՝ Բլումֆիլդի վրա։ Տարբերելով անունը և իմաստը՝ վերջինիս նա տալիս է զուտ ֆունկցիոնալ մեկնաբանություն։ Իմաստափոխության տիպերի գոմբոցյան մեկնաբանությունը վերջիվերջո հիմք է ընդունում անվան և իմաստի հարաբերության փոփոխությունը՝ դրանցից մեկի կամ մյուսի ասոցիատիվ կապերի հիման վրա. 1) անվան փոխանցում՝ իմաստների ասոցիացիոնվ՝ ա) ըստ օբյեկտիվ և սուբյեկտիվ նմանության և բ) ըստ առընթերության, 2) իմաստի փոխանցում՝ անվան ասոցիացիայով՝ ա) ըստ նմանության և բ) ըստ առընթերության։

Ստեղնը էլլեկտիկորեն դուգորդում է Հ. Պաուլի, Օգդենի ու Ռիչարդսի ներքու կամ վելլանդերի տրամաբանական, հոգեբանական և պատմա-գենետիկական սկզբունքները՝ փորձելով ստեղծել իմաստափոխության համապարփակ մի ուսմունք։ Ստացվում է հետեւյալ սխեման.

- 1) Արտաքին պատճառներ — Կարգ 1 — սուբյեկտուցիա
- 2) Լեզվաբանական պատճառներ
  - ա) Բառային հարաբերության փոփոխություն — Կարգ 2 — անալոգիա
  - բ) Կառարկալական վերաբերության փոփոխություն — Կարգ 3 — համառոտում

- շ) Առարկալական վերաբերության փոփոխություն — Կարգ 4 — անվանում (դիտումնավոր փոխանցում)
- թ) Կարգ 5 — փոխանցում (ոչ դիտումնավոր փոխանցում)

- շ) Սուբյեկտիվ վերաբերության փոփոխություն — Կարգ 6 — տեղափոխություն
- կարգ 7 — համեմատություն

Սանդենը, հենվելով Ստեղնի վրա, տալիս է հետեւյալ դասակարգումը։

- 1) Բառիմաստի փոփոխություն.
  - 1 կարգ — անալոգիայով կատարվող իմաստափոխություն.
  - 2 կարգ — համառոտության դեպքում կատարվող իմաստափոխություն։

2) Արտահայտություն՝ մի ռեֆերենտից (անվանվող առարկայից) մյուսին փոխանցելու հետ կապված իմաստափոխություն.

3 կարգ— անվանման դեպքում կատարվող իմաստափոխություն.

4 կարգ— կանոնավոր փոխանցման դեպքում կատարվող իմաստափոխություն.

5 կարգ— նույնացման դեպքում կատարվող իմաստափոխություն:

3) Խոսողի կամ լսողի՝ ռեֆերենտի հանդեպ ունեցած վերաբերմունքի փոփոխության հետ կապված իմաստափոխություն.

6 կարգ— համեմատության դեպքում կատարվող փոփոխություն.

7 կարգ— տեղափոխության դեպքում կատարվող փոփոխություն.

8 կարգ— իմաստային ընդլայնման դեպքում կատարվող իմաստափոխություն:

Ուշանը, խոսելով Հ. Շպերբերի և Ա. Մեյեի դասակարգումների արժեքավորության մասին, այնուամենայնիվ, փորձում է նոր դասակարգում տալ.

1) Լեզվաբանական պահպանողականությունից կախված իմաստափոխություններ (նշանակություններ)<sup>1</sup>:

2) Լեզվաբանական նորագոյացումներից (իննովացիաներից) կախված իմաստափոխություններ (նշանակափոխություններ).

ա) անվան փոխանցում.

ա) իմաստների նմանությամբ,

բ) իմաստների առընթերությամբ.

բ) իմաստի փոխանցում.

ա) անունների նմանությամբ,

բ) անունների առընթերությամբ.

գ) խառը փոփոխություններ:

Ուշանը այն կարծիքին է, որ գոյություն ունեն իմաստային օրենքներ, ընդունում այդ օրենքները պահպանիկ բնույթ ունեն:

Ուշանը տալիս է լեզվաբանության բաժինների ստորադասական խմբավորում. 1) ամենից առաջ ըստ «լեզվաբանական միա-

<sup>1</sup> Ուշանը տարբերում է նշանակությունը և իմաստը՝ Վունդտի և Շուխարդտի հետևողությամբ նշանակությունը դիտելով որպես անվան և իմաստի փոխարարերություն:

վորների շափման», այն է՝ ըստ լեզվի կառուցվածքային 3 միավորներից որի՝ հնչույթի, բարի թե սինտագմայի ուսումնասիրության՝ նա տարբերում է հնչույթաբանությունը, բառագիտությունը և շարահյուսությունը. 2) ըստ «ձեւախմաստային շափման»՝ նա տարբերում է՝ ա) բառային ձեւաբանություն ու բառային իմաստաբանություն և բ) շարահյուսական ձեւաբանություն ու շարահյուսական իմաստաբանություն. հնչույթի նկատմամբ ձեւախմաստային շափումը կիրառելի չի համարվում. 3) ըստ «տարածա-ժամանակացին շափման»՝ հիշյալ բաժինները բաժանվում են սինխրոնիկ և դիախրոնիկ տիպերի:

Այնպիսի հետագոտողների պատմական իմաստաբանությանը նվիրված աշխատությունները, ինչպիսիք են Լեո Շպիցերը, Էթնոլինգվիստները և ուրիշներ, նպատակ ունեն իմաստափոխությունները կապելու կուլտուր-պատմական որոշ կարգի փոփոխությունների հետ։ Շպիցերի համար բառերի պատմությունը նաև իդեալ-ների պատմություն է։ Զուգորդելով Շուխարդտի և Ֆուլերի սկրպ-բունքները՝ նա փորձում է բառիմաստների պատմությունը կապել բաղաքակրթության ու կուլտուրայի առանձնահատկությունների և տեղաշարժերի հետ. այսպես, եվրոպական լեզուների մեջ տեղի ունեցած իմաստափոխությունների քննությունը, Շպիցերի կարծիքով, պետք է բացահայտի քրիստոնեական քաղաքակրթության, յուղաիզմի կամ դասական կուլտուրայի «ոճերի» ազդեցությունը. «Պատմական իմաստաբանության տակ,— գրում է Շպիցերը,— ես հասկանում եմ այն որոշակի իմաստների մեկնությունը, որոնք կոնկրետ բառերն ստանում են որոշակի քաղաքակրթությունների «ոճի» ազդեցության տակ»<sup>1</sup>։ Շպիցերը փաստորեն ձգտում է «ընդհանուր եվրոպական» իմաստաբանություն ստեղծել, ընդ որում պատմա-համեմատական լեզվաբանության տվյալներն անտեսավամ է։

Սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցիչ ֆրանսիացի Դ. Մատորեն բառագիտությունը սահմանում է որպես «հասարակագիտական մի գիտցիպիկին, որը օգտագործում է այնպիսի լեզվական նյութ, ինչպիսին բառերն են»<sup>2</sup>. Եթե Տրիբը և մյուս նեոհումբուդտականները փորձում են բացահայտել ժողովրդի «ոգին», նրա հո-

<sup>1</sup> L. Spitzer, Essays in Historical Semantics, New York, 1948, էջ 1.

<sup>2</sup> G. Matore, La méthode en lexicologie, Domaine française, Paris, 1950, էջ 50.

գեկան կյանքը, այդ հոդեկան կյանքի այս կամ այն շրջանի պատկերը, ապա Մատուեն հետաքրքրվում է բառապաշարի «նյութական» կողմով, այն բանով, թե տվյալ շրջանի տնտեսական, տեխնիկական, քաղաքական երեսովները ինչպես են արտացոլվել բառապաշարի մեջ: Ըստ Մատուենի՝ բառագիտական հետազոտությունը պետք է նպատակ դնի բառապաշարից ելնելով բացատրել հասարակությունը: Ֆրանսիայի պատմության մեջ վերածնությունից սկսած՝ առանձնացնելով 11 «հատված» (coupes), Մատուեն բառերի (նորաբանությունները և այլն) վկայություններով փորձում է պարզել այդ էտապներում եղած հասարակության հասկացողությունների շրջանակները և, այսպիսով, տալ ֆրանսիացիների հասկացողությունների շրջանակի պատմական փոփոխությունները:

Հաղորդակցման տեսության հանդես գալը առաջ է բերում իմաստաբանական նոր պրոբլեմներ<sup>1</sup>: Նշանի պարունակած հաղորդման քանակը, ինչպես հայտնի է, որոշվում է նրա հավանականությամբ, այսինքն՝ հաղորդումը նշանի հավանականության շափն է: Բառերը ներդաշնակորեն բաշխվում են ըստ հանդիպման հաճախականության, որը հանդես է գալիս որպես հաստատում մեծություն: Թվային կախում գոյություն ունի բառերի իմաստային ծավալի և նրանց հաճախականության միջև: Բառերի հաճախականության փոփոխությունների հետ: Այսպիսով, լեզվաբանական վիճակագրությունը հնարավորություն է տալիս լուծելու նաև փունկցիոնալ իմաստաբանության և պատմական իմաստաբանության մի շարք կարեռ հարցեր:

Բառարանագրության տեսության բնագավառում հիշատակելի է և. Կասարեսի «Ժամանակակից բառարանագրության ներածությունը»<sup>2</sup>:

**Շարահիյուսություն.** — Շարահիյուսական նորագույն ուսմունքների զարգացման համար վճռական դեր են խաղացել լեզվի սիստեմայնության գաղափարի ներթափանցումը լեզվաբանական աշխատանքի մեջ, ստրոկտուրալիստական վերլուծության մեթոդնե-

<sup>1</sup> Հմա. P. Guiraud, *Les caractères statistiques du vocabulaire. Essai de méthodologie*, PUF, 1954. *Language et communication. Le substrat informationnel de la sémantisation*, BSL, Paris, 1955. *La sémantique*, Paris, 1955.

<sup>2</sup> J. Casares, *Introducción a la lexicographía moderna*, Madrid, 1950. ռուս. թարգմ. X. Կասարես, *Введение в современную лексикографию*, М., 1958.

րի արմատավորումը, Կ. Բյուզերի կողմից հաղորդման խոսողական ակտի կառուցվածքի վերլուծությունը, Յոն Ռիսի կողմից շարահյուսության տեղի ու դերի պարզաբանումը:

Շարահյուսական կարևորագույն պրոբլեմներից մեկը նախադասության պրոբլեմն է: Յոն Ռիսը, որ խստորեն տարբերել է նախադասության ու բառագուգորդման ուսմունքը և բուն շարահյուսությանը հատկացրել բառագուգորդման ուսմունքը, հանդես է գալիս մի նոր աշխատությամբ՝ «ի՞նչ է նախադասությունը»<sup>1</sup>: Բերելով նախադասության բազմաթիվ սահմանումները (150)<sup>2</sup> Ռիսը փորձում է դրանք խմբավորել և հանգել որոշ ընդհանուր շափանիշների:

Նախադասության կառուցվածքի հիմքում ընկած հարաբերությունները երկու խմբի բաժանելը (խոսողի վերաբերմունք և օբյեկտիվ բովանդակություն) հատուկ է և այլ լեզվաբանների՝ Կ. Բյուզերին, Շ. Բալլիին և ուրիշների<sup>3</sup>: Դեռևս Պեշկովսկին տարբերում էր «օբյեկտիվ» և «օբյեկտիվ-սուբյեկտիվ» կատեգորիաները: Մոտավորապես այս նույն սկզբունքով էլ Բյուզերը առանձնացնում է ցուցադաշտը և սիմվոլային դաշտը, Բալլին՝ մոդուսը (խոսողի վերաբերմունքի արտահայտությունը բովանդակության հանդեպ) և դիկտումը (արտահայտության բովանդակությունը):

Լեզվաբանները սկսում են կարեոր նշանակություն տալ լեզուների կառուցվածքային ամենից ավելի բնորոշ առանձնահատկությունների շարահյուսական բնութագրմանը, այլև աշխատում են բացահայտել այդ առանձնահատկությունների ձևավորման պատմական հիմքերը<sup>3</sup>: Նման բնութագրման ավելի կամ պակաս հաջողված փորձեր են կատարում անգլերների համար Օ. Եսպերսենը և Վ. Ացցալինոն, գերմաններնի համար՝ Հ. Գրախը և Կ. Բոստը, Փրանսերներնի համար՝ Շ. Բալլին և Վ. Վարտբուրգը և այլն:

Լեզվի ստրուկտուրալիստական վերլուծության զանազան մեթոդները մեծ մասամբ բնութագրվում են նրանով, որ մեծ տեղ է տրվում շարահյուսական կողմին, վերլուծությունը սկսվում է առաջին հերթին տեքստի շարահյուսական անդամատումից: Շարահյուսական մոմենտին այսպիսի գերակշռություն տալը հատուկ է և կոպենհագենյան, և՝ ամերիկյան ստրուկտուրալիստներին: Տեքստի

<sup>1</sup> I. Ries, Was ist ein Satz? Prag, 1931.

<sup>2</sup> Հմմա. В. Т. Адмони, Развитие синтаксической теории на западе в XX в. и структурализм, ВЯ, 1956, № 1, էջ 50—51.

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 53—54.

անընդհատ երկատման սկզբունքը փաստորեն մի կողմն է թողնում նախ՝ նախադասության սուբյեկտիվ մոմենտի, խոսողի և լսողի հարաբերության վերլուծությունը, երկրորդ՝ նախադասության իմաստային կողմի վերլուծությունը։ Ամերիկյան նկարագրական լեզվաբանության միայն որոշ ներկայացուցիչներ են, որ քիչ թե շատ շեղվում են այս ընդհանուր տրադիցիալից (Զ. Կ. Ֆրիզի «Անգլերենի կառուցվածքը»)<sup>1</sup>:

Ոնաբանություն. — Ոճաբանության մեջ այս շրջանում շարունակում են գործել երկու հակադիր կոնցեպցիաներ, որոնցից մեկը հենվում է Ֆուլերի, մյուաք՝ Բալլիի առաջ քաշած սկզբունքների վրա։ Ֆուլերի հետեւրդներից մեկը՝ կեռ Շպիցերը հանդես է գալիս ոճաբանական մի ուսմունքով, որ կոչում են «գրական ոճաբանություն», «նոր ոճաբանություն» կամ «ոճաբանական քննադատություն»։ Իր ոճաբանական ուսմունքը Շպիցերը կառուցում է կրոշե-ֆուլերյան սկզբունքների և Բերգսոնի փիլիսոփայական դրույթների յուրատեսակ զուգորդմամբ։

Ոճաբանությունը համարելով յուրատեսակ կամուրջ լեզվաբանության և գրականագիտության միջև՝ Շպիցերը փորձում է պարզել գրական երկի ոճաբանական քննադատության սկզբունքները և ստեղծել այդպիսի քննադատության որոշակի մեթոդ։ Նա տալիս է իր մեթոդի հետեւյալ կողմերը<sup>2</sup>. 1) Քննադատությունը իման են ամբողջ նկատմամբ. այն պետք է ելնի հենց երկից և ոչ թե նրանից դուրս գտնվող ապրիորի սկզբունքներից. 2) ողջ երկը մի ամբողջ ուժություն է, որի կենտրոնում ընկած է այն ստեղծողի ոգին. 3) ամեն մի մանրամասնություն պետք է հնարավոր ուժություն տաթա փանցելու երկի կենտրոնը. 4) երկի մեջ թափանցում են ինտուիցիայով, որ հավաստվում է դիտողություններով և գեղուցիայով. 5) այս ձևով վերակառուցված երկը մտնում է մի ամբողջության մեջ (մեկ երկի կամ էպոխայի ամբողջության մեջ), կազմում է այդ ամբողջության մի մասը. 6) նման ուսումնասիրությունը ոճաբանական է, այն մեկնակետ է ընդունում լեզվի բնույթը (հատկությունը). 7) բնորոշ գիծը (հատկությունը) անհատական

<sup>1</sup> Ch. C. Fries, The Structure of English. An Introduction to the Construction of English Sentences, New York, 1952. Ֆրիզի շաբահյուսական սիստեմի վերլուծությունը տե՛ս Աղմանիկի հեղինակած հոգվածում, ՎՅ, 1950, № 6, էջ 59—63.

<sup>2</sup> L. Spitzer, Linguistics and Literary History, 1948.

ոճական շեղում է. 8) ոճաբանությունը պետք է լինի համակրանքի քննադատություն:

Շպիցերի «գրական ոճաբանությունը» կողմնակիցներ է գրտնում հանձիս Դամասոս Ալոնսոյի, Տ. Շպյոփի, Հ. Ա. Հացֆելդի<sup>1</sup>:

Ոճաբանությանը նվիրված աշխատություններից նշելի է Զայդերի «Ընդհանուր ոճաբանությունը»<sup>2</sup>:

Ընդհանուր դասակարգողական գործեր.— Այս ենթաշրջանում հիշատակելի են է. Կիկերսի «Երկրի լեզվաբները»<sup>3</sup> և Ա. Մեյերի ու Մ. Կոհենի խմբագրած «Աշխարհի լեզուների» երկրորդ լրացված հրատարակությունը (1952):

## 2. ՀԱԴԻՎՐՈՓԱԼԿԱՆ. ԼԵԶՎԻ ԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ:

Ներածական տեղեկություններ.— XX դ. 30—50-ական թվականները հնդկրոպական լեզվաբանության պրոբլեմների աշխառվծ հետազոտության տարիներ են. ճիշտ է, ստրուկտորալ լեզվաբանության տիրապետությունը արտասահմանում և Մասի ու Նրա հետեղորդների «լեզվի նոր ուսմունքի» տիրապետությունը մեզ մոռ լեզվաբանների ուշադրությունը երկար ժամանակ կենտրոնացնում են արտասահմանում ստատիկ վերլուծության և մեզ մոտ՝ նախապատմական լեզվավիճակի հարցերի վրա, բայց և այնպես լեզվաբանների մի նշանակալից թիվ շարունակում է հնդկրոպական լեզվաբանության կարևորագույն պրոբլեմների ուսումնասիրությունը: Լեզվի սիստեմային բնույթի ըմբռնումը և ստրուկտորալ վերլուծության սկզբունքների առաջքաշումը հիմք են տալիս նոր հաջողությունների համար:

Այս ենթաշրջանի ընդհանուր բնույթի աշխատություններից առաջին հերթին հիշատակելի են է. Կիկերսի «Հնդկրոպական լեզվաբանության ներածությունը», Ա. Վալդեի և Յու. Պոկոռնիի «Հնդկրոպական լեզուների համեմատական բառարանի» վերամշակումը Յու. Պոկոռնիի կողմից, Ա. Դոզայի «Լեզվաբանական եվրո-

<sup>1</sup> Վերջինս կազմել է ոճաբանության հանգամանալից բիբլոգրաֆիա. H. A. Hatzfeld, A Critical Bibliography of the New Stylistics applied to the Romance Literatures, 1900—1952.

<sup>2</sup> H. Saidler, Allgemeine Stilistik, Göttingen, 1953.

<sup>3</sup> E. Kieckers, Die Sprachräume der Erde, Heidelberg, 1931.

պան», Կ. Դ. Բակի «Գլխավոր հնդկրոպական լեզուների բնտիր հոմանիշների բառարանը»<sup>1</sup>:

Յ. Կուրիլովիչի, է. Բենվենիստի, Ֆ. Շպեխտի, Վ. Գորգիկի, է. Հ. Ստուրտեանտի և ուրիշների աշխատությունների մասին առիթ կունենանք խոսելու:

Այս ենթաշրջանում շարունակվում են փորձերը հնդկրոպական լեզուները կապելու սեմա-քամական լեզուների (Լ. Հայլման), ֆիննա-ուգրական լեզուների (Հ. Պեղբրսեն, Կոլինդեր, Սովաժո, Միկոլա, Պոստեկ), բասկերենի և էսկիմոսերենի հետ (Ուկենբեկ): Սակայն նկատի ունենալով այս կարգի կապերի բազմազանությունը՝ որոշ հետազոտողներ (Ուկենբեկ, Բարտոլի, Պիգանի) փորձում են դրանք բացահայտել ոչ թե բնդհանուր նախալեզվով, այլ լեզվաբանական աշխարհագրության դիրքերից, իգորլուսացին կապերով, երեսութեաների նախնական ներթափանցմամբ:

Համեմատաբար սակագ ուշադրություն են գրավում հնդկրոպական շարահյուսության հարցերը: Եթե մի կողմ թողնենք Հիրտի «Հնդկրոպական քերականության» մեջ շարահյուսությանը նվիրված մասը, ապա այս բնագավառի աշխատանքներից կարելի է նշել Ա. Շերերի հոդվածը՝ նվիրված հնդկրոպական համաձաւնության տարբերությանը դասանիշներ ունեցող լեզուների շարահյուսական կապակցության համապատասխան եղանակից և վանդրիսեի, Հոլտի, Կոշմիդերի ու Շերմանի ուսումնասիրությունները բայական կերպի վերաբերյալ<sup>2</sup>.

Այս ենթաշրջանում համեմատաբար ավելի մեծ ուշադրություն են գրավում հնդկրոպական լեզուների օնոմաստիկայի (հատուկ անունների ուսումնասիրության) հարցերը, հիմնագրվում են օնոմաստիկական հանդեսներ<sup>3</sup>:

<sup>1</sup> E. Kieckers, Einführung in die Indogermanische Sprachwissenschaft, 1933. J. Pokorný, Vergleichendes Wörterbuch der indogermanischen Sprachen, Bern, 1948 & 52. A. Dauzat, L'Europe Linguistique, Paris, 1940. C. D. Buck, A Dictionary of Selected Synonyms in the Principal Indo-european Languages, Chicago, 1949.

<sup>2</sup> A. Scherer, Wesen und Entstehung der indogermanischen Kongruenz, „Gymnasium und Wissenschaft. Festschrift des Maximiliangymnasium in München“, 1950, էջ 140—153. J. Vendryes, Les notions de „boire“ et „manger“ en indo-européen et l’aspect verbal, BSL, 41, 1940, էջ 25—38. J. Holt, Etudes d’aspect, AJ, XV, 2, 1943. E. Koschmidteder, Zu den Grundfragen der Aspekttheorie, IF, 53, 1935, էջ 262—264.

<sup>3</sup> Onomastica, Lyon, 1947—1948. Revue Internationale d’onomastique, Paris, 1949 & 52. Belträge zur Namenforschung, Heidelberg, 1949 & 52..

## ա) Ընդհանուր պրոբլեմներ

Լեզվաբանական հնէաբանություն.— Լեզվաբանական հնէաբանության հարցերով այս շրջանում զբաղվում են Կրաեն, Գյունտերտը և ուրիշները: Սրանցից առաջինը 1935 թ. լույս է բնծայում Շոադերի գիրքը նոր վերամշակմամբ: Լեզվաբանական հնէաբանության կարևորագույն խնդիրն այս շրջանում լեզվաբանության տվյալները հնագիտության և այլ բնագավառների տվյալների հետ առնչելն է: Կրաեն հնդկրոպացիներին հատկացնում է ձիու և մարտական տապարի (Streitaxt) օգտագործումը, առանձին գերեզմանները և թելային կերամիկան (Schnurkeramik): Հստկրաեի՝ Եվրոպայի հնագույն բնակիչների հնագիտական առանձնահատկությունները պետք է տարբեր եղած լինեն. Գերմանիայի հնագիտական տվյալներով սրանց հարավում հատուկ է եղել ժապավենային կերամիկան (Bandkeramik), հյուսիսում՝ մեգալիթային կուլտուրան՝ տապանաքարային բնդհանուր գերեզմաններով:

Օ. Շոադերի աշակերտ Ա. Ներինգը<sup>1</sup> հնդկրոպացիներին համարում է տրիպոլյան կուլտուրայի ստեղծողներ և ըստ այդմ նրանց սկզբնական տարածման կենտրոնը համարում աշակինյա Ուկրաինան և նրան հարող հարավարեկելյան Եվրոպայի շրջանները:

Վ. Բրանդենշտայնը<sup>2</sup> փորձում է վերականգնել հնդկրոպացիների արտադրության եղանակների պատկերը: Նույն Բրանդենշտայնը գտնում է, որ հնդկրոպացիների սկզբնական «նախահայրենիքը» եղել է հյուսիսային Ղազախստանը, որտեղից նրանք, հնդիրանցիների անջատվելուց հետո, հարավային Ռուսաստանի տափաստաններով շարժվել են «հարավային կեհաստան» (իմա՝ Թելոռուսիայի, Արևմտյան Ուկրաինայի և Վոլինի բռնած տարածությունը). այսպիսով, ըստ Բրանդենշտայնի, հնդիրանցիները երրեք Եվրոպայում չեն եղել:

Զ. Բոնֆանտեն և Յու. Պոկոռնին<sup>3</sup> հնդկրոպացիների «նախա-

<sup>1</sup> A. Nehring, Studien zur indogermanischen Kultur und Urheimat, WBKL, IV, 1936, էջ 10—220.

<sup>2</sup> W. Brandenstein, Die Lebensformen der „Indogermanen“, WBKL, IV, 1936, էջ 231—277. Die erste indogermanische Wanderung, Wien, 1936.

<sup>3</sup> G. Bonfante, La cuestión de los arcos, AUV, II, 1937. J. Polkony, Substrattheorie und Urheimat der Indogermanen, MAGW, 66, 1936, էջ 69—91.

Հայրենիքը» փորձում են որոշել ոչ-Հնդկրոպական սուբստրատի հետքեր որոնելու հիման վրա։ Ավելի ուշ շրջանում Պոկոռնին Հնդկրոպացիների սկզբնական բնակության կենտրոնը փնտրում է միջին Գերմանիայից մինչև Վոլգան ընկած տարածության մեջ և փորձում պարզել Հնդկրոպացիների սկզբնական հարաբերությունները այլ լեզվաընտանիքների հետ։

Է. Մեյերը Հնդկրոպացիների սկզբնական բնակավայրը միասնության շրջանում (ըստ նրա՝ մ. թ. ա. III Հազարամյակի կեսերին) տեղավորում է միջին Եվրոպայում, ընդ որում նրանց հատկացնում է և՛ թելային, և՛ ժապավենային կերամիկաների կուլտուրան։<sup>1</sup>

Ա. Շերերը, նշելով «նախահայրենիք» բառի մեջ դրվող Յ տարբեր իմաստները և տալով իր ըմբռնումը, որպես այդպիսին ընդունում է Ռուսաստանի միջին կամ հարավային մասը<sup>2</sup>։

Որոշ լեզվաբաններ (Մեյեր, Դյումեզիլ և ուրիշներ) ընդունում են Հնդկրոպացիների դասային, նույնիսկ Հնդիկների կաստաները հիշեցնող բաժանում. քրմական դասին վերագրվում է բարձր ոճի գրական լեզվի օգտագործումը. այդ գիտական լեզվի և բանաստեղծական խոսքի տիպական տարրերի հետքերը փնտրում են Վակերնագելը և Շպեխտը։

Հնդկրոպական լեզվամիասնության ժամանակի և տարածական բաշխման պրոլեմները. Վ. Գեորգիև. — Լեզվաբանական աշխարհագրության սկզբունքների (այդ թվում իզոգլոսաների ուսումունքի) կիրառումը, իտալական «տարածական լեզվաբանության» հանդես գալը, Հնդկրոպական նոր լեզուների հայտնագործումը և նրանց փոխհարաբերության հարցերի մեկնաբանումը, ներքին վերականգնման մեթոդի կիրառումը, Հնդկրոպական և այլ լեզուների ցեղակցության հարցերի առաջքաշումը և այլն, — այս բոլորը սրում են հետաքրքրությունը Հնդկրոպական լեզվավիճակի նախական տեղաբաշխման և ժամանակի հարցերի նկատմամբ։ Այս բնագավառում նշանակալից աշխատանք են կատարում Մ. Բարտուին, Վ. Պիգանին, Վ. Պորցիգը, Վլ. Գեորգիկը և ուրիշներ։

Ընդհանուր առմամբ հանդես են գալիս Հնդկրոպական նախալեզվի վերականգնման առկա փորձերի բազմաթիվ քննադա-

1 E. Meyer, Die Indogermanenfrage, Marburg, 1948.

2 A. Scherer, Das Problem der indogermanischen Urheimat vom Standpunkt der Sprachwissenschaft, AK, 33, 1950, էջ 1—10.

տություններ։ Լեյնը<sup>1</sup> նշում է, որ Բրուգմանի վերականգնած Հնդկրոպական նախալեզուն հին հունարենի և հին հնդկերենի խառնուրդ է, իսկ Հիբրահ աշխատության մեջ խեթերենի և թոխարերենի տվյալները հաշվի չեն առնված։ Նեղինգվիստիկայի ներկայացուցիչները, հատկապես Պիղանին<sup>2</sup>, հնդկրոպական նախալեզվի վերականգնածն փորձերին հակադրում են այն տեսակետը, որ ամեն ինչ այս դեպքում հանգում է բոլոր հնդկրոպական լեզուներն ընդգրկող իզոգլուսներ հաստատելուն։ Նրանք ժխտում են ընդհանրապես ինչպես հնդկրոպական, այնպես էլ նախագերմանական, նախասլավոնական և այլ նախալեզուներ վերականգնելու հնարավորությունը։ Նախալեզվի վերականգնումը ստրուկտուրային ընդհանրությունների սահմանմամբ փոխարինելու փորձ է նաև Տրութեցկոյի և մյուսների «լեզվամիության» գաղափարը։ Ե՛վ Պիղանին, և՛ Տրութեցկոյը փորձում են հնդկրոպական նախալեզուն դիտել լոկորպես անցողիկ ստաղիա, որով անցնում են բոլոր հնդկրոպական լեզուները (Պիղանի), կամ տիպ, որ մոտ է մի կողմից՝ հյուսիսային-կովկասյան, մյուս կողմից՝ ֆիննա-ուգրական և ալթայան տիպերին (Տրութեցկոյ)։

Երեսն են գալիս բազմաթիվ աշխատություններ նվիրված հնդկրոպական լեզուների փոխհարաբերությանը։ Հնդկրոպական «նախալեզվի» բարբառային տարրերակմանը, այդ բարբառների և հնդկրոպական լեզվանուղերի ու լեզուների փոխհարաբերությանը և այլն։ Դրանց մասին մասամբ կիսունք առանձին լեզուների ուսումնասիրության արդյունքները քննարկելիս։

Բուզդարացի լեզվաբան Վլադիմիր Գեորգիկը զգալի դեր է կատարել հնդկրոպական լեզվաբանության մի քանի կարեռ պրոբլեմների ուսումնասիրության ուղղությամբ։

Իր «նախահունական լեզվաբանությունը» աշխատության և մի շարք այլ գործերի մեջ<sup>3</sup> Գեորգիկը առաջ է քաշում

<sup>1</sup> G. S. Lane, On the Present Status of Indo-European Linguistics, «Language», XXV, 1949, էջ 333—342.

<sup>2</sup> Հմայ. В. Пизани, Общее и индоевропейское языкознание, «Академик», 1956, № 1, 166—167.

<sup>3</sup> V. Georgiev, Vorgriechische Sprachwissenschaft, I II, Sofia, 1941—1945. Etat actuel des études de linguistique préhellénique, SI, 1948, № 2. Contribution à l'étude de la toponymie grecque, noms des lieux pretendus préhelléniques, Sofia, 1948. В. Георгиев, Вопросы родства средиземноморских языков, ВЯ, 1954, № 4. Проблема возникновения индоевропейских языков, ВЯ, 1956, № 1. Исследования по сравнительнно-историческому языкознанию. М., 1958 և այլն։

Հնդկրոպական լեզվամիասնության ժամանակի, սկզբնական տարածման, բարբառային տարբերակվածության և վաղ լեզվական փոխհարաբերությունների հարցերը: Ի տարբերություն նախորդ կարծիքների, որոնք հնդկրոպական լեզուների առանձնացման սկիզբը դնում են մ.թ. ա. III հազարամյակի կեսերին և նույնիսկ վերջերին, Գեորգիկը գտնում է, որ այդ ժամանակը պետք է հետ տանել մինչև մ.թ. ա. V—IV հազարամյակները. իր այս տեսակետը Գեորգիկը հիմնավորում է նրանով, որ՝ 1) նախնադարյան հասարակարգում հասարակական կյանքի և լեզվի փոփոխությունների պրոցեսը «այնքան ավելի դանդաղ է տեղի ունենում, որքան մենք ավելի հեռու ենք թափանցում հազարամյակների խորքը»<sup>1</sup>. 2) մ.թ. ա. III հազարամյակում որոշ հնդկրոպական լեզուներ արդեն ձևավորված էին և, հետեւար, պետք է են թագրել, որ հնդկրոպական ցեղերը հնում ընդարձակ տերիտորիա էին զբաղեցնում, որի մեջ երկար ժամանակի ընթացքում կարող էին տարբերակվել հնդկրոպական լեզուները. 3) հնագիտական տվյալները ցույց են տալիս, որ մինչև մ.թ. ա. III հազարամյակը այժմյան ՍՍՌՄ-ի եվրոպական մասում արդեն առկա էին այն էթնիկական խմբերը, որոնք հայտնի են ուշ շրջանի պատմությանը. 4) լեզվական փաստերը, հատկապես տոպոնիմիկան (հիդրոնիմիկան) և անտիկ հեղինակների տվյալները ցույց են տալիս, որ այդ բնակչությունը պետք է լիներ 2 լեզվաբնտանիքի պատկանող՝ հնդկրոպական և ֆիննա-ուգրական. 5) XIX դարում նախահնդկրոպական համարված շատ ցեղերի լեզուներ ավելի մերձավոր հետազոտությամբ հնդկրոպական դուրս եկան կամ ամենայն հավանականությամբ այդպիսին են, թեև փաստերը ոչ միշտ են բավական այդ ապացուցելու:

Վլ. Գեորգիկը մեծ ծառայություն է մատուցել հնդկրոպական լեզվաբնությանը «նախահունարենի» հայտնաբերման և կրետեմեքենյան տեքստերի լեզվի մեկնաբանության բնագավառում: Հունարենի՝ նախահունական բառերի և տեղանունների ուսումնասիրությամբ Գեորգիկը ցույց է տվել, որ «նախահունարենը», հակառակ ընդունված կարծիքների, եղել է հնդկրոպական, և նրան հատուկ են բաղաձայնների տեղաշարժն ու օ>ձ անուամբ:

Ըստ Գեորգիկի՝ մ.թ. ա. V հազարամյակում հնդկրոպական լեզուն արդեն բարբառային տարբերակվածություն ուներ, և կարելի է տարբերել 3 բարբառախումբ՝ 1) հյուսիսային (բալթիկ-սլա-

<sup>1</sup> В. Георгиев, Проблема возникновения индоевропейских языков, ВЯ, 1956, № 1, с. 46.

վոնա-գերմանական), որ բնորոշվում է ու պարունակող հոլովական վերջավորությամբ, 2) կենտրոնական՝ ա) արևմտյան (կելտական, իտալական, վենետական), որ բնորոշվում է եզ. սեռականի - ի վերջավորությամբ ու բ) բուն կենտրոնական (հունական, թրակյան և հնդիրանական, ընդ որում հայերենը համարվում է հատուկ թրակյան բարբառ, իսկ փոյուգերենը՝ հունարենի և թրակերենի միջակա բարբառ), որ բնորոշվում է հնից պահպանված բնորոշ հատկանիշներով, այլև հնդիրանական-հունական դրամամբ, հուն.-ռու. հին. հնդկ. - և վերջավորություններով և այլն, 3) հարավային [պելասգերեն կամ «նախահունարեն», լիկիերեն, հիերոգլիֆյան խեթերեն, էտրուսկերեն, լիդիերեն (կարիերեն), լուվերեն և խեթերեն], որ բնորոշվում է բազաձայնների տեղաշարժով, ուշանցմամբ, կոկորդայինների պահպանմամբ և այլ ձևաբանական հատկանիշներով. հայերենը համարվում է կենտրոնական և հարավային խմբերի միջև անցումային բարբառու

Գեորգիկը նոր ձևով է դնում նաև centum և satem խմբերի փոխհարաբերության հարցը: Ըստ նրա՝ հնդկրոպական միասնության շրջանում գոյություն է ունեցել շրթնայնացած և շրթնայնացած ետնալեզվայինների հակադրություն. քմայնացումը և քմայինների վերածումը շփականների ու կիսաշփականների՝ այսպես կոչված սաթը խմբի լեզուների անկախ զարգացման արդյունք է:

Հնդկրոպական լեզվակառուցվածի արխայիկ շերտերի պրոբլեմը. ստրօւկտուրալ խրոնոլոգիզմ. «կոկորդայինների հիպորեզը». Յու. Կուրիլովիչ, Է. Բենվենիստ, Ֆ. Շպեխտ.— Հնդկրոպական լեզվակառուցվածի առանձին կողմմերի ուսումնասիրության մեջ առաջքաշված նոր պրոբլեմները կապված են մի կողմից՝ նախորդ ենթաշրջանում հանդես եկած մի շարք ուսմունքների (գենենտիկական պրոբլեմների առաջքաշումը, հնդկրոպական-սեմական ցեղակցության հարցը, լեզվաբանական աշխարհագրության սկզբունքների՝ հնդկրոպական լեզվաբանության մեջ կիրառելը), մյուս կողմից՝ ստրօւկտուրալ հետազոտության մեթոդների արմատավորման հետ: Այս նոր պրոբլեմների առաջքաշման ու լուծման մեջ կարեոր դեր են խաղում հատկապես Յու. Կուրիլովիչը, Է. Բենվենիստը և Ֆ. Շպեխտը:

Լեհ լեզվաբան Կուրիլովիչի աշխատությունները նվիրված են գերազանցապես հնդկրոպական լեզվաբանության հարցերին: Նրան

<sup>1</sup> Հմատ. В. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкоznанию, М., 1958, էջ 37 և 42.

ուշադրության կենտրոնում են եղել հատկապես Հնդկրոպական հնչույթաբանության, շեշտադրության, հերթագայությունների ժագաման և արմատի կազմության հարցերը։ Այս բոլոր դեպքերում Կուրիլովիչի քննության եղանակն աշքի է ընկնում սիստեմայնությամբ և ժամանակագրական սկզբունքի հետեղական պահպանմամբ։ Կուրիլովիչը լայն տարածում գտած «կոկորդայինների (լարինգալների) ուսմունքի» ակտիվ պաշտպաններից մեկն է։

Կուրիլովիչի առաջին ուսումնասիրությունը, որտեղ նա արծարծել է կոկորդայինների հիպոթեզը, «Հնդկրոպական Հ-Ն և խիե՛կական Հ-Ն» հոդվածն էր<sup>1</sup>։ Այս հարցին նա հետագայում անդրադարձել է իր «Հնդկրոպական էտյուդներում»<sup>2</sup>, որոնց մեջ տեղ է տըրպած հնդկրոպական հնչյունաբանության և ձևաբանության, հատկապես շեշտադրության և արմատի կազմության հարցերին։ Հնդկրոպական շեշտադրության հարցերը հատուկ քննության նյութ են դարձել նրա «Հնդկրոպական լեզուների շեշտադրությունը»<sup>3</sup> գրքում, որտեղ այդ հարցերը հեղինակը կապում է ձևաբանական պրոբլեմների հետ։ Ավելի ուշ Կուրիլովիչը մի ընդարձակ աշխատանք է լույս ընծայում հնդկրոպական հերթագայության մասին<sup>4</sup>։

Նշելի է, որ ձևաբանական հարցերին Կուրիլովիչն ընդհանրապես հնչյունաբանական-հնչույթաբանական հիմնավորում է տալիս, դրանք քննում փոխկապակցության մեջ։

Խոսելով հնդկրոպական հնչյունաբանության ու ձևաբանության պրոբլեմների մասին՝ Կուրիլովիչը գտնում է, որ «ինչպես հնչյունաբանական, այնպես էլ ձևաբանական փաստերի հարձաբերական ժամանակագրությունը պետք է կազմի ամեն մի այնպիսի ուսումնասիրության կենտրոնական պրոբլեմը, որը նպատակ է դրել հնդկրոպական մայր-լեզվի նկարագրությունը»<sup>5</sup>։ Հնդկրոպական հիմնալեզուն Կուրիլովիչը դիտում է որպես պատմական ամրողություն։ Այդ հիմնալեզվի վերականգնման հարցում Կուրիլով

<sup>1</sup> J. Kurylowicz, o indoeuropéen et hittite, „Symbolae grammaticae in honorem Io. Rozwadowski“, Krakow, 1927.

<sup>2</sup> J. Kurylowicz, Études indo-européennes, I, Krakow, 1935.

<sup>3</sup> J. Kurylowicz, L'accentuation des langues indo-européennes, Krakow, 1952; *ՏՒ» և Յ. Յ. Իվանով-ի գրախոսությունը ՎՃ-ում, 1954, № 4, էջ 125—136.*

<sup>4</sup> J. Kurylowicz, L'apophonie en indo-européen, Wrocław, 1956.

<sup>5</sup> J. Kurylowicz, Études indo-européennes, I, 1935, էջ III.

վիշն անհրաժեշտ է համարում «ներքին վերականգնման» մեթոդի կիրառումը, համեմատական ժամանակագրության հաստատումը, արխայիկ տարրերի բացահայտումը։ Հնդկրոպական շեշտադրությանը նվիրված իր աշխատության մեջ Կուրիլովիչը առաջ է քաշում ներքին վերականգնման մեթոդի այն սկզբունքը, ըստ որի նախալեզվային վիճակը երբեմն կարելի է վերականգնել մեկ լեզվի արխայիկ տարրերի հիման վրա՝ առանց դիմելու ցեղակից լեզուների տվյալներին։ «Ներքին վերականգնման» սկզբունքն ընդհանրապես լայն հնարավորություններ է բաց անում հետազոտողների առջև՝ կատարելագործելով ու ճշտելով պատմա-համեմատական մեթոդը։

Իր վերլուծության մեջ Կուրիլովիչը ելնում է լեզվի սիստեմային բնույթի սկզբունքից և կիրառում ստրուկտուրայ՝ վերլուծության մեթոդները։ Հնդկրոպական շեշտադրությանը նվիրված իր աշխատության մեջ Կուրիլովիչը նշանակալից աղղեցություն է կրում կոպենհագենյան ստրուկտուրալիստներից, հատկապիս ելմսլեց, բնդունում է ու փորձում կիրառել լեզվասիստեմի տարրերի հիերարխիայի, արտահայտության ու բովանդակության «հզոմորֆիզմի»։ (զուգաձևության) դրույթները։ Իր «լեզվաբանությունը և նշանների տեսությունը» հոդվածում<sup>1</sup> նա փորձում է որոշ օրինաշափ կապ սահմանել նշանի բովանդակության և գործածության ոլորտի ծավալի միջև՝ տալով հետեւյալ «սեմիոլոգիական» օրենքը. որքան նեղ է նշանային (սեմիոլոգիական) միավորի գործածության ոլորտը, այնքան հարուստ է նրա բովանդակությունը, և բնդհակառակն. այս օրենքը Կուրիլովիչը տարածելի է համարում և բովանդակության («պիերոլոգիական»՝ ելմսլեցան իմաստով), և արտահայտության (ֆոնոլոգիական) պլանների վրա։

Լեզվի սիստեմայնության դրույթը 1945 թ. հետո եկող շրջանում Կուրիլովիչը փորձում է կապել լեզվի հասարակական բնույթի հետ։ Նրա կարծիքով՝ պատմական հետազոտության հաշողության նախապայմանը լեզվի սիստեմայնության և հասարակական գործոնների հաշվառումն է. «Կոնկրետ քերականական սիստեմը, — գրում է նա, — որոշում է, թե ինչպիսի «անալոգիական» փոխակերպումներ են հնարավոր։ Սակայն միայն հասարակական գոր-

<sup>1</sup> J. Kurylewicz, Linguistique et théorie de signe, JP, 41, 1949.

ծոնն է որոշում, թե իրականանալո՞ւ են արդյոք այդ հնարավորությունները և եթե իրականանալու են, ապա ո՞ր շափով<sup>1</sup>:

Կուրիլովիչի անունը հայտնի է դարձել առաջին հերթին որպես կոկորդայինների հիպոթեզի առաջին հիմնավորման փորձի հեղինակներից մեկի: 1927 թ. Կուրիլովիչը ցույց է տալիս, որ Սոսյուրի առանձնացրած Ա հնչունին խեթերենում համապատասխանում է Ե-Ն. սրանով իսկ նախ՝ փորձ է կատարվում հնդկրոպական լեզուների տվյալներով հիմնավորելու Սոսյուրի առանձնացրած հնչունների առկայության փաստը և երկրորդ՝ ցույց է տրվում, որ այդ հնչունները ոչ թե ձայնավորներ են եղել, ինչպես սովորաբար կարծում էին, այլ կոկորդային հնչուններ. այսպես հունականդրիական բժևոյն-ի դիմաց առկա է խեթական թայլաշ-ը, որոնց համար վերականգնվում է, բայտ այս հիպոթեզի, \*περι-ο-ս ոնախածեր: Այս հիպոթեզը հետագա հիմնավորման է ենթարկվում «Հնդկրոպական էտյուդների» «Անհետացած բաղաձայնական տարրերի մասին» գրում:

Հենվելով իր հայտնագործության վրա՝ Կուրիլովիչն առանձնացնում է Յ տիպի Ժ՝ Թ, Կ ԹՑ, Ընդ որում այս դեպքում նա ևս հիմք է ընդունում հնդկրոպական հերթագայության տիպերը. Ծ-ի հետ հերթագայիպող Ժ-Ն նշանակվում է որպես Թ<sub>1</sub>, Ծ-ի հետ հերթագայիպող՝ Ժ-Ծ-ի հետ հերթագայիպող՝ Ժ-Ծ: Բայտ Կուրիլովիչի՝ հնդկրոպական երկար ձայնավորներն առաջացել են կարճ ձայնավորներին Ժ-ի տարրեր տեսակների միանալու հետեւնքով, ալ-ախնքն՝ Ե+Ժ-Ծ, Ե+Ժ-Ծ, Ե+Ժ-Ծ, Օ+Ժ-Ծ (մերջին դեպքում նկատի է առնվում Ե-ի հետ հերթագայվող Օ-ն): Այս տիսությամբ նա նախ՝ փորձում է բացատրել հնդկրոպական երկար ձայնավորների ծագումը, երկրորդ՝ հնարավորություն է ստեղծում բացահայտելու հնդկրոպական ձայնավորների պատմությունը, երրորդ՝ հիմք է տալիս հնդկրոպական արմատի կազմության ուսմունքը վերանայելու համար: Քանի որ բառասկզբի կարճ ձայնավորների ծագումն էլ բացատրվում է որպես նույն նախնական կոկորդայինների անկման արդյունք, ընդ որում ենթադրվում է, որ Ժ-ի տարրեր տեսակները անհետապնալով՝ պետք է ազդեին հաջորդ ձայնավորի որակի վրա,— ուստի և Կուրիլովիչը նախքան հնդկրոպական արմատի ձեավորվելը ենթադրում է միայն մեկ ձայնավորի՝ Ե-ի առկայությունը. սրա հետ կապված ենթադրվում է, որ

<sup>1</sup> J. Kurjelowicz, La nature des procès dits analogique, „Acta Linguistica“, Copenhague, 1945—1949, V, 1, էջ 37.

նախահնդերոպական արմատը ունեցել է բաղաձայն+e+բաղաձայն տիպը:

Կոկորդայինների հետ կապված իր առաջ քաշած սկզբունքները Կուրիլովիչը ձևակերպում է հետեւյալ կերպ.

1) Բաղաձայնից առաջ գտնված դիրքում կարճ ե-ի և նրան հաջորդող օ<sub>1</sub>, օ<sub>2</sub>, օ<sub>3</sub> կոկորդայինների շատ հնում տեղի ունեցած ամփոփման (կոնտրակցիայի) հետևանքով առաջացել են երկար ձայնավորները, ալսինքն՝ օ<sub>1</sub>>է, օ<sub>2</sub>>ա, օ<sub>3</sub>>օ. Ե ձայնավորի հետ հերթագալվող օ-ն ևս միանալով թ-ի հետ տվել է օ:

2) Միջձայնավորային օ-ն անհետացել է՝ հանգեցնելով իրար մոտ եղած (հորանջի մեջ գտնվող) ձայնավորների ամփոփման (կոնտրակցիայի):

3) Միջբաղաձայնական օ-ն անհետացել է՝ հետքեր թողնելով միայն հունարենում:

4) Բաղաձայնի և ձայնավորի միջև օ-ն անհետացել է՝ առաջացնելով հաջորդ ձայնավորի թուլացում, այսինքն՝ վերածում վանկալին օ-ի, որը հետագալում տալիք է ա կամ ն. թ, կ խուլ պայթականներին հաջորդող օ-ն հնդերանական լեզուներում առաջացրել է թի, թի, կի շնչլութիւնուն պայթականները:

5) Բառասկզբում ձայնավորներին նախորդող օ-ն անհետացել է՝ ազդելով դրանց որակի վրա, ալսինքն՝ օ<sub>1</sub>օ>է, օ<sub>2</sub>օ>ա, օ<sub>3</sub>օ>օ (վերջինս՝ օ-ի հետ չհերթագալվող օ-ի դեպքում). ալսպիսով, ձայնավորով սկսվող բոլոր հնդերոպական արմատները նախապես սկսվել են օ-ով. բաղաձայններից առաջ օ-ն անհետացել է՝ առանց ազդելու դրանց որակի վրա:

6) Խեթական լի-ն օ<sub>2</sub>-ի ձևափոխության արդյունք է, թեև ոչ բոլոր դեպքերում է հնդերոպական մյուս լեզուների անհետացնում լի համապատասխանում, վերջին դեպքում Կուրիլովիչը հնարավոր է համարում ենթադրել մի օ-ի առկայություն, որը օ-ի հետ զուգորդվելիս բոլոր հնդերոպական լեզուներում տվել է ձ, մինչդեռ օ<sub>2</sub>-ի զուգորդումը խեթերենում տվել է ոչ թե ձ, այլ լի: Կուրիլովիչը փորձում է որոշել և խեթական լի-ի ու լիլ-ի պատմական տարրերությունը՝ համապատասխանեցնելով առաջինը օ<sub>2</sub>-ին, երկրորդը՝ օ<sub>3</sub>-ին:

Հնդերոպական շեշտի հարցերը Կուրիլովիչը քննում է հատկապես ձևարանական հարցերի հետ կապված: Դեռևս 1925 թ. նա լույս է ընծալում «Ալբստայի» շեշտին նվիրված իր ուսումնասիրությունը: Այս բնագավառում կատարածի հանրագումարը վերե-

վում նշված «Հնդկրոպական լեզուների շեշտադրությունը» գիրքն է։ Այս գիրքը մեծ շափով նպաստում է շեշտի հնչույթային (Փոնոլոգիական) արժեքի ուսումնասիրությանը. սրա հետ է կապվում Կուրիլովիչի այն դրույթը, ըստ որի շեշտը հին հնդկերենում և բալթիկ-սլավոնական լեզուներում դրվում է բառի վրա ամբողջապես վերցրած և ոչ թե որոշում է առանձին վանկերը։

Նախահնդկրոպական վիճակի շեշտը բնութագրելիս Կուրիլովիչը նշում է երկու կարեռ հատկանիշ՝ շարժական շեշտ և թույլ հոլվների շեշտման պարտադիր բնույթ։ Այդ հին շեշտի փոխակերպումը Կուրիլովիչը կապում է հնչյունական և ձևաբանական գործոնների հետ։ Հնչյունական գործոններն են թուլացած ձայնավորների անհետացումը և ձայնորդների փունկցիայի փոփոխությունը, ձևաբանական գործոններ են թեքական ձևերի մեջ իրար հակագրովող վերջաշեշտավոր և ոչ-վերջաշեշտավոր տիպերի փոխազդեցությունը։

Զեաբանական հարցերի քննության մեջ Կուրիլովիչը ուշադրությունը կենտրոնացնում է հնչյունական կողմի վրա, ձևաբանական պրոբլեմները վերածում հնչյունաբանական պրոբլեմների։

Հնդկրոպական լեզվաբանության կենտրոնական պրոբլեմներից մեկը՝ արմատի պրոբլեմը փաստորեն վերածվում է հնչյունաբանական պրոբլեմի. ըստ Կուրիլովիչի՝ «արմատը զուտ հնչյունական հասկացություն է»<sup>1</sup>։ Մոտենալով այս կերպ՝ Կուրիլովիչը բացառում է աճականների պրոբլեմը. արմատ է համարվում միայն այն հնչյունակոմպլեքսը, որ համապատասխանում է արմատի սահմանմանը որպես բաղաձայն + e + բաղաձայն զուգորդման. մնացած դեպքերը ժխտվում են։ Այնպիսի վերականգնումները, ինչպիսիք են ուօգտ «գիշեր» և այլն, բացառվում են, որովհետև սրանց մեջ իրար կողքի հանդիպում են երկու պայմանական, — մի բան, որ ըստ Կուրիլովիչի, չի համապատասխանում հնդկրոպական արմատակազմության օրենքներին։ «Արմատը, — գրում է Կուրիլովիչը, — բառի այն մասն է, որ պարունակում է՝ 1) սկզբնային բաղաձայնը կամ բաղաձայնների սկզբնային խումբը, 2) հիմնական ձայնավորը և 3) վերջին բաղաձայնը կամ բաղաձայնների վերջնային խումբը։ Վերջնային խումբը կարող է բաղկացած լինել ոչ ավելի քան երկու բաղաձայնական տարրերից, որոնցից առաջինն ավելի մեծ բացվածք ունի, քան երկրորդը։ Այդ նշանակում է,

<sup>1</sup> J. Kurylowicz, Études indo-européennes, I, 1935, էջ 122.

“ր առաջին բաղաձայնական տարրը լ-ն, Ա-ն, Ր-ը, Լ-ը և  
Ա-ն են, իսկ երկրորդը՝ բաղաձայնը ալդ բառի նեղ իմաստով՝ պայ-  
թականը, Տ-ը կամ կոկորդայինը (Դ., Թ., Շ.)»<sup>1</sup>.

Լեզվաբանների *V* կոնգրեսում Կուրիլովիչն առաջարկում է  
արմատի մի այլ՝ պատմական-ձևաբանական սահմանում, ըստ որի  
արմատը «բառի մասն է, որ չի պայմանավորված բառակազմու-  
թյան գործուն կամ կենդանի պրոցեսով»<sup>2</sup>:

Արմատների առաջացման հարցը Կուրիլովիչը, Հիրտի նման,  
կապում է շեշտի դիրքի փոփոխության հետ կապված՝ ճայնավոր-  
ների հաջորդական թուլացումների հետ: Ըստ Կուրիլովիչի՝ ար-  
մատներն առաջացել են առաջին թուլացման հետևանքով՝ նախնա-  
կան հնչյունական կոմպլեքսներից՝ «բազաներից», որոնք Կուրի-  
լովիչը վերականգնում է ը-ի մասին արած իր ենթադրություննե-  
րի լույսի տակ և շեշտի առաջացրած հնարավոր փոփոխություննե-  
րի հաշվառմամբ: Հետագա թուլացումները, ըստ նրա, առաջաց-  
նում են մի կողմից՝ հնչյունական-ձևաբանական կոմպլեքսների  
հետագա տարրերակումներ, դրանց հնչյունական կառուցվածքի հե-  
տագա փոփոխություններ, մյուս կողմից՝ իմաստային տարրերա-  
կումներ ու փոփոխություններ: Մրանց հիման վրա Էլ տեղի է ու-  
նենում բառակազմական և բառաթեքական երեսույթների՝ թեմա-  
տիկ ու աթեմատիկ հիմքերի, հոլովածերի, ածականների և այլն  
առաջացումը: Առանձնապես նշելի է հնդկորպականի ուղղականի  
առաջացումը կապելու նախկին «ակտիվ» հոլովի հետ, որ, ըստ  
Կուրիլովիչի, եղել է ենթակայի հոլով անցողական բայերի մոտ.  
այս դեպքում, սակայն, բավարար փաստական հիմնավորում չի  
տրվում: Նոր հոլովների առաջացումը բացատրվում է որպես մի  
հոլովական ձևի փոխարինում մի ուրիշով, մի հոլովածեկի ֆունկ-  
ցիաների շրջանակի լայնացում մյուսի հաշվին: Նշելի է, որ ձայ-  
նավորների բնույթի (նրանց հերթագայության)՝ շեշտի դիրքի ու  
բնույթի հետ կապված լինելու և հատկապես բառի կազմիչների  
փոխհարաբերության՝ հնչյունական պատճառներ ունենալու այս  
տեսակետը ներկայացնում էր մի պրօբլեմի լուծման փորձ, որ դր-  
վել էր դեռևս Բոպպի կողմից. սրան էր վերաբերում «վերջավորու-  
թյունների ծանրության» օրենքը, որը Բոպպը ձևակերպել էր իր  
«Վոկալիզմը կամ լեզվահամեմատական քննադատություններ Յ.

<sup>1</sup> J. Kurylewicz, Études indo-européennes, I, 1935, էջ 121.

<sup>2</sup> V-ième Congrès International des Linguistes, Premier publication, Réponses au questionnaires, Bruges, 1940, էջ 12.

Գրիմի «Գերմանական քերականության» և Գրաֆի «Հին վերին գերմանական բառացանձի մասին՝ ձայնդարձի մի նոր տեսության հիմնավորմամբ» ուսումնասիրության մեջ: 1956 թ. լույս ընծայած իր «Զայնդարձը հնդկրոպականում» աշխատության մեջ<sup>1</sup> Կուրիլովիշը նոր տեսակետ է հայտնում հնդկրոպական ձայնավորների հերթագայության (ձայնդարձի) ծագման մասին՝ այն կապելով ձեւաբանական պատճառների հետ:

Ինչպես Կուրիլովիշը, Բենվենուստը հնդկրոպական արմատի քննության մեջ ելնում է կոկորդայինների հիպոթեզից և հարցը քննում հնչյունական կառուցվածքի առումով՝ ձեւաբանական հարցերի մեկնաբանությունը կատարելով հնչյունաբանության դիրքերից: Բենվենուստի համար ևս արմատը ոչ այլ ինչ է, եթե ոչ բառի՝ որոշակի հնչյունական կառուցվածք ունեցող տարր: Իր «Հնդկրոպական անվանական բառակազմության ծագումը» գրքում<sup>2</sup> Բենվենուստը ելնում է այն ենթադրաթյանից, որ օ-ն, ա-ն, օ-ն (օ-ի հետ չհերթագայնող) և ջ-ն, ա-ն, օ-ն ներկայացնում են օ, որին նախորդում կամ հաջորդում են օ-ի երեք ձեւերը. ալուգիսով, օ<sub>1</sub>+e=e, օ<sub>2</sub>+e=ə, օ<sub>3</sub>+e=o և օ օ<sub>1</sub>=ē, e+օ<sub>2</sub>=ā, օ օ<sub>3</sub>=ō: Զեաբանական արժեք է հատկացվում միայն օ օ հերթագալությանը, մեացածները դիտալում են որպես օ-ի և օ-ի տարրեր տեսակների զաւկորդութեանք:

Այս առումով Բենվենուստը նախ՝ Ժխտում է երկվանկ արմատների գոյությունն ընդհանրապես, երկրորդ՝ փորձում է հստակ սահման անցկացնել աճականների («արմատի որոշիչների») ու ածանցների միջև և երրորդ՝ աշխատում է օրինաշափ կապ հաստատել արմատական և ածանցական ձեւութեան հերթագայության տիպերի միջև<sup>3</sup>:

Իր վերլուծության մեջ Բենվենուստը ելնում է լեզվի սիստեմացին ամբողջականության և պատմականության գաղափարներից՝ տարածելով դրանք հնդկրոպական լեզվի ուսումնասիրության վրա: Նրա գրքում, իր իսկ խոսքերով, «Հնդկրոպական լեզուն քննվում է ոչ թե որպես անփոփոխ սիմվոլիկ նշանների հավաքածու, այլ որպես լեզու իր զարգացման մեջ, որն իր ձեւերի մեջ դրսեորում է

<sup>1</sup> J. Kurylowicz, L'apophonie en indo-européen, Wrocław, 1956.

<sup>2</sup> E. Benveniste, Origines de la formation des noms en indo-européen, Paris, 1935. ռուս. թարգմ. Ә. Бенвенист, Индоевропейское именное словообразование, М. 1955:

<sup>3</sup> Նույն տեղը, (ռուս. թարգմ.), էջ 148—149.

ժագման ու ժամանակագրության այնպիսի բազմադանություն, ինչպես պատմականորեն վկայված յուրաքանչյուր լեզու. այն քննվում է որպես լեզու, որը, թեկուզ և վերականգնված, բայց հնարավորություն է տալիս գենետիկական վերլուծություն կատարելու։

Ածանցների և արմատների ձեւաբանական կառուցվածքի փոխհարաբերության իր օրենքը թենվենիստը կապում է ինքնուրուցն բառերի՝ ածանցների վերածվելու և ձայնդարձի (ձայնավորների հերթագայության) պրոցեսների հետ։ Ածանցը, ըստ թենվենիստի, կարող էր ծագել միայն ձայնդարձի հնդկրոպական տարրերի առաջացումից հետո։ Նախկին անկախ բառերի՝ ածանցների վերածվելու հետ կապված ձայնդարձի օրենքները տարածվում են և սրանց վրա։ Այսպիսով, ածանցը որպես նոր, ձայնդարձի առաջացումից հետո ծագած տարր կարող էր ունենալ ձայնավորում, մինչդեռ աճականը, որը բառակազմական և բառաթեքական միջոց էր նախքան ձայնդարձի ծագումը, մնում է միշտ որպես բաղադայնական տարր։ Այստեղից էլ թենվենիստը հաստատում է իր օրենքը արմատական և ածանցական տարրերի հերթագայության տիպերի փոխհարաբերության մասին։ ըստ այդ օրենքի՝ արմատի ձայնավորման լիածայն (ե-ով և օ-ով) աստիճանին կարող է համապատասխանել ածանցի միայն զրո ձայնավորումը և հակառակը։

Թենվենիստը բացահայտում է հնդկրոպական արմատի կազմության հետևյալ կառուցվածքային գծերի ամբողջությունը.

1) Հնդկրոպական արմատը միավանկ է, եռահնչյուն՝ բաղկացած երկու տարրեր բաղաձայնների միջև գտնվող հիմնական ե-ից։

2) Բաղաձայն+թ+բաղաձայն մշտական սխեմայի մեջ բաղաձայնները իրար կարող են հիմնել ցանկացած կարգով, միայն թե տարրեր լինեն. բացառվում է միայն խոլի զուգորդումը շրնչեղ ձայնեղի հետ։

3) Արմատից ածանցի օգնությամբ կազմվում են երկու հերթագայվող հիմքեր՝ I. շեշտվող արմատի լիածայն ձայնավորումը+ածանցի զրո աստիճանը. II. արմատի զրո աստիճանը+շեշտվող ածանցի լիածայն աստիճանը։

4) Ածանցին կարող է միանալ միայն մեկ աճական, որը

<sup>1</sup> E. Benveniste, Origines de la formation des noms en indo-européen, Paris, 1935. ռուս. թարգմ. Յ. Բենվենիստ, Индоевропейское именное словообразование, М., 1955, էջ 26.

կամ ավելացվում է ածանցից հետո I հիմքին, կամ դրվում է արմատական տարրի և ածանցի միջև II հիմքի մեջ (միջածանցում):

5) Եթե արդեն ածանց և աճական պարունակող հիմքին ավելանում է մի աճական կամ մի ածանց ևս, ապա դրա հետեւանքով պարտադիր կերպով առաջանում է անվանական հիմք:

Իր գրքի մեջ Բենվենիստը կանգ է առնում նաև տարահիմք (հետերոկլիտիկ) հոլովման հարցի վրա: Քննադատելով այդ հոլովման բացատրության փորձերը՝ Բենվենիստը դրանց ընդհանուր թերությունը համարում է այն, որ արխայիկ այդ երեսությը փորձել էն բացատրել հաջորդ շրջանների նորմայով, կանոնավոր տիպերի հիման վրա, մինչդեռ դրանք պետք է քննվեն այն սիստեմի բնույթի հաշվառմամբ, որի մեջ նրանք գործել են: Բենվենիստը հաստատում է տարահիմք հոլովման 3 տիպ՝<sup>1)</sup> 1) ուղղական-հայցականում արմատի մաքուր ձև, իսկ թեք հոլովներում՝ -ո-ով հիմք. 2) ուղղական-հայցականում -ր-ով և թեք հոլովներում՝ -ո-ով հիմք. 3) ուղղական-հայցականում ի-ով հիմք և թեք հոլովներում -ո-ով հիմք. միաժամանակ ի-ով և ս-ով հոլովումների համեմատությամբ Բենվենիստը բացառում է ս/ո հերթագայության գոյցությունը:

Առանձին ուշադրություն է դարձնում Թենվենիստը նաև ներդոյական հոլովի հարցի վրա՝ Հիրտի նման այն կապելով «անորոշ հոլովի» հետ: Ներգոյականի զրո վերջավորությամբ ձևերը նա զուգադրում է բ-ով շեզօք հիմքերի և ո-ով մակրայական կազմությունների հետ, իսկ ի վերջավորությամբ ձևերը՝ ի-ով կազմությունների հետ: այսպիսով, այս բոլորը դիտվում են որպես նախաթեքական շրջանի անորոշ հոլովի մնացորդներ:

Թենվենիստի հետագա աշխատություններից նշելի է «Գործողի և գործողության հնդկրոպական անունները» գիրքը<sup>1)</sup>:

«Կոկորդայինների հիպոթեզը» կողմնակիցներ է գտնում հանձինս Վ. Կովրյորի, Է. Սեպիրի, Է. Ստուրտեանտի, Շենդրիկսենի, Լ. Գգուստայի և ուրիշների, ընդ որում սրանցից շատերը այդ հիպոթեզն բնդունում են այս կամ այն մեկնաբանությամբ:

Է. Սեպիրը և Է. Ստուրտեանտը պաշտպանում են չորրորդ կոկորդայինի գաղափարը, որ առաջադրվել էր Կուրիլովիչի կողմից, ընդ որում Սեպիրը օչ-ը և օչ-ը համարում է պայթականներ, օչ-ը ջ-ը՝ շփականներ:

<sup>1)</sup> E. Benveniste, Noms d'agents et noms d'action en indo-européen, Paris, 1948.

Սրան հակառակ, թ. Մաուրերն ընդունում է երկու կակորդագին՝ Ե և Ա, որոնցից երկրորդը, բատ նրա, հարեան ը-ն փառում է ա-ի: Միաժամանակ սրա հիման վրա Մաուրերն աշխատում է նոր ձեռվ բացատրել Հնդկրոպական ձայնգարձը:

Կոկորդայինների հիպոթեզն ունի այնպիսի հակառակորդներ, ինչպիսիք են ջ. Յոնֆանտեն, Յու. Պոկոռնին, Վ. Փետերսենը, Վ. Շտրայտբերգը և ուրիշները: Ջ. Բանֆանտեն նշում է, որ խեթական րառա և բարին լին կարող էր հնդկրոպական ծագում չտնենալ, իսկ բառամիջին լին կարող էր լոկ աղդագրական արժեք անհնալ: Խեթական լին ուշ ձեռքբերամ են համարում և այլ լեզվարաններ:

Յուրատեսակ դիրք է բոնում շեխ լեզվարան և. Զգուստան: Նախ՝ նա ընդունում է օ, օ, ա ձայնավորների նախնականությունը՝ մերժելով դրանք ը-ի հանգեցնելու փորձերը, երկրորդ՝ ընդունում է միայն մեկ կոկորդային (Ի), որը ավելի հարմար է համարում կաշել «ձայնորդային գործակից», որովհետև դրա հնչյունական արժեքը լիովին պարզ չէ:

Ֆ. Շպեկտը, որին համարում են ուշ երիտքերականների ներկայացուցիչ, իր «Հնդկրոպական հոլովման ծագումը» աշխատության մեջ՝ տարբերում է հոլովման ափակը ժամանակագրական շերտեր: Շպեկտը լեզուի դիտում է կուտուրայի հետ սերտորեն կապված՝ հնդկրոպական հիմնալեզվի կրողներ համարելով թելային կերամիկայի ստեղծողներին: Ըստ նրա՝ հնդկրոպացիներն սկզբնապես ապրել են որսորդությամբ և ձկնորսությամբ, ապա ուշ նեոլիթի շրջանում (III—II հազ. մ. թ. ա.) անցել անասնապահության և հողագործության<sup>2</sup>:

Ըստ Շպեկտի՝ հնդկրոպական անունների հոլովման տարածմք տիպը, որին պատկանում են ավելի մեծ հնության հասկացություններ արտահայտող բառեր (ոչ միայն շեզոք բառեր), նախորդել է օ-ով և ձ-ով հիմքերի կազմավորմանը: Վերջիններս սկզբնապես կապված են եղել բայերի հետ, հանդես եկել որպես գործող անձերի ու գործողության անուններ և վերացական բայանուններ: Օ-ով և ձ-ով հիմքերը աստիճանաբար բնդլայնում են իրենց գործածության շրջանակները, ընդ որում մի շարք հիմքեր ծագում են

<sup>1</sup> F. Spiecht, Der Ursprung der Indogermanischen Deklination, Göttingen, 1948.

<sup>2</sup> Շպեկտի այս հայացքները խունգում են որոշ նացիոնալիզմի հետ և առանձին կողմերով հերքել են սովետական ու ոչ սովետական բազմաթիվ հնագետների հետազոտություններով:

գերբարական ձեւից (հմմա. \*սլկոս «գիշատող զալլ»). այս հիմքերի տարածումը Շպեխութ կապում է անառնապահության և հոգագործության հարավից գալու հետ:

Տարահիմք տիպի տարածման պայմաններում հնդկոպացին բոլոր առարկաները շնչավորում էր. սրա հիման վրա առաջանում է արական, իգական և չեզոք սեռերի հետագա տարբերակումը: Տարահիմք տիպի տարածման շրջանում գոյություն է ունեցել միայն երկու «հոլով»՝ ուղիղ և թեք, ընդ որում ածանցի վերածված դերանունները ծառայել են նաև այս հոլովների տարբերակմանը: Այս երկու «հոլովից» աստիճանաբար զարգացել է 7 կամ 8 հոլովանոց սիստեմը, որի ժամանակ ուղիղ և թեք «հոլովների»՝ տարահիմքությամբ հակադրվելու անհրաժեշտությունը վերացել է: Շպեխութ ևս հոլովական իմաստների ծագման հարցում կանգնած է տարածական իմաստների նախնականության տեսակետի վրա:

### բ) Առանձին լեզուների և լեզվախմբերի ուսումնասիրությունը

Խեթական պրոբլեմը. լիկիերեն և լիդիերեն.—Այս ենթաշրջանում ավելի մեծ վեճերի տեղիք է տալիս խեթական պրոբլեմը, որ կարեոր նշանակություն ունի հնդկոպական լեզուների համեմատական քերականության համար:

1933 թ. ամերիկացի գիտնական է. Հ. Ստուրտենտը հանդես է դալիս «Խեթերենի համեմատական քերականություն»<sup>1</sup> աշխատությամբ, որի մեջ փորձում է ապացուցել, թե հնում գոյություն է ունեցել մի հնդախեթական լեզու և թե նախահնդկոպակերենն ու նախախեթերենը ներկայացնում են դրա հետագա ճյուղավորումները: Այս տեսակետը լայն քննադատության է ենթարկվում Հ. Պեղերսենի և Զ. Բոնֆանտի կողմից: Պեղերսենը իր «Խեթերենը և մյուս հնդկոպական լեզուները»<sup>2</sup> աշխատության մեջ ցույց է տալիս, որ խեթերենի ձևաբանական կառուցվածքի բոլոր տարրերը կարելի է բացատրել հնդկոպական հիմնալեզվի վերականգնված ձևով՝ որոշ ձևերի կորուստ և այլ ձևերի նորագոյացում ենթագրելով հանդերձ: Իր «Լիկիերենը և խեթերենը» աշխատության մեջ՝

<sup>1</sup> E. H. Sturtevant, A Comparative Grammar of the Hittite Language, Philadelphia, 1933. II հ. 1931 թ.: <sup>2</sup> E. A. Hahn-ի աշխատակցությամբ:

H. Pedersen, Hittitisch und die anderen indoeuropäischen Sprachen, HFM, XXV, København, 1938.

<sup>3</sup> H. Pedersen, Lykisch und Hittitisch, København, 1945.

այդ նույն հեղինակը փորձ է անում խեթերենը հին Փոքր Ասիայի հնդկրոպական համարվող մյուս լեզուների հետ միասին միավորել մի «անատոլիական» խմբի մեջ՝ հայերենից անջատելով և մտցնելով այստեղ նաև փոյուգերենը:

Խեթական լեզի հարցին հատուկ աշխատություն է նվիրել Կուվրյորը<sup>1</sup>: Ժյուրեի կազմած «Խեթերեն լեզվի ստուգաբանական բառարանը»<sup>2</sup>, չնայած այս բնագավառում առաջին փորձը լինելուն, չի կարող հաջողված համարվել. այն լի է բազմաթիվ շհիմնավորված ստուգաբանություններով:

Այս ենթաշրջանում ցույց է տրվում խեթական տեքստերում հանդիպող որոշ այլ լեզուների՝ լուվերենի և պալայերենի հնդկրոպական բնույթը: Կարաթափայում հայտնաբերված երկլեզվյան արձանագրությունների վերծանումից հետո հնարավոր դարձավ խոսել հիերոգլիֆյան խեթերենի հնդկրոպական բնույթի մասին, ընդ որում այդ լեզուն համարվում է սահմանական:

Խեթերենին և նրան մերձավոր ցեղակից հնդկրոպական լեզուներին (այսպես կոչված «հին անատոլիական» հնդկրոպական լեզուներին) կարեոր աշխատություններ են նվիրում նաև Յ. Ֆրիդրիխը, Ֆ. Զոմմերը, Բ. Ռոզենկրանցը, Հ. Օտաենը, Հ. Կրոնասերը<sup>3</sup>:

Լիկիերենին և լիդիերենին նվիրված են նաև Գ. Դեետը, Պ. Մերիգգի և Ա. Շերիչի ուսումնասիրությունները<sup>4</sup>:

Թոխարական պրոբլեմը.— Թոխարական լեզուների ուսումնասիրությունը այս ենթաշրջանում հետագա քայլեր է անում: Զիգր և Զիգինգը Շուլցեի աշխատակցությամբ հրատարակում են թոխարերեն Ա-ի հանգամանալից քերականությունը<sup>5</sup>: Է. Բենվենիսոր և

<sup>1</sup> W. Couvreur, Die hettitische Ա, Lieuwen, 1935.

<sup>2</sup> A. Juret, Vocabulaire étymologique de la langue hittite, Limoges, 1942.

<sup>3</sup> G. Bonfante and J. J. Gelb, The Position of „Hieroglyphic Hittite“ among the Indo-European Languages, JAOS, LXV, 1945.

<sup>4</sup> J. Friedrich, Hethitisches Elementarbuch, I-II, Heidelberg, 1940—1946. Hethitisches Wörterbuch, Heidelberg, 1952. F. Sommer, Hethiter und Hethitisch, Stuttgart, 1947. B. Rosenkranz, Beiträge zur Erforschung des Luvischen, Wiesbaden, 1952. H. Otten, Zur grammatischen und lexikalischen Bestimmung des Luvischen, Berlin, 1953. H. Kronasser, Vergleichende Laut- und Formenlehre des Hethitischen, Heidelberg, 1956.

<sup>5</sup> G. Deeters, Lykia (Sprache) և Lydia (Sprache und Schrift), RKA, էջ 2282—2291 և 2153—2161. P. Merigggi, Der Indogermanismus des Lykischen և Der indogermanische Charakter des Lydischen, „Festschrift für H. Hirt“, II, Heidelberg, 1936.

<sup>6</sup> W. Schulze, F. Sieg und W. Siegling, Tocharische Grammatik, Göttingen, 1931.

Հ. Պեղերսենը կրկին առաջ են քաշում թոխարերենի՝ Հնդկրոպական լեզվաընտանիքի մեջ գրաված տեղի հարցը: Հստ թենվենիստի՝ թոխարերենը նախապատմական մի խմբի անդամ է, որին թիրես պատկանել է խեթերենը և որը սահմանակցել է մի կողմից՝ բարիկ-սլավոնական, մյուս կողմից՝ հունական, հայկական և թրակա-փոյուգական լեզուներին<sup>1</sup>:

Թոխարերենին նվիրված աշխատություններից հիշատակելի են նաև Վան Վինդեկենսի, Պեղերսենի, Կուվրյորի և Վ. Կրաուզեի աշխատությունները<sup>2</sup>:

Թրակա-փոյուգական լեզուներ, հայերեն. թրակերենի պրոբլեմը.— Հնդկրոպական լեզվաբանության զարգացման հետ կապված անհրաժեշտություն է զգացվում վերանայել թրակերենի հարցը: Իր «Թրակերենի բնութագիրը»<sup>3</sup> աշխատության մեջ՝ փաստերի հնչյունական բազմակողմանի վերլուծության միջոցով բուզզարացի լեզվաբան Դեչեր ցույց է տալիս, որ թրակերենը սահման խմբի լեզու է և տարրերվում է տերիտորիապես մերձակից, բայց, ըստ Դեչերի, centum խմբին պատկանող իլիրերենից ու փոյուգերենից: Միաժամանակ Դեչեր ցույց է տալիս, որ թրակերենը ենթարկվել է բազմաձյնների տեղաշարժի, որ հիշեցնում է հայերենի բազմաձյնների տեղաշարժը<sup>4</sup>: Սակայն սրա հետ միասին Դեչեր հայտնում է կասկածելի մտքեր թրակա-իրանական սկզբնական մերձավոր ցեղակցության և թրակերենի՝ իրանականից ունեցած տարրերության՝ էտրուսկերենի ազդեցության արդյունք լինելու մասին:

<sup>1</sup> E. Benveniste, Tokharien et Indo-Européen, Hirt-Festschrift II, 1936, էջ 237.

<sup>2</sup> A. J. van Windekkens, Indo-Europeanische bestanddeelen in de Tocharische Deklinatie, Lieuwen, 1940. Lexique étymologique des dialectes tokharien, Lieuwen, 1941. Morphologie comparée du tokharien, Lieuwen, 1944. H. Pedersen, Tocharisch von Gesichtspunkt der indoeuropäischen Sprachvergleichung, Copenhagen, 1941. Zur tocharischen Sprachgeschichte, Copenhagen, 1941. W. Couvreur, Hoofdraken van de Tochaarse klanken vormleer, Lieuwen, 1947.

<sup>3</sup> Д. Дечев, Характеристика на тракийският език, София, 1952. *Տեսանկանք*, Die thrakische Sprachreste-ն, Wien, 1957.

<sup>4</sup> Այս և մի շարք փաստերի հիման վրա Ի. Դյակոնովը իր «Խեթերը, փեյուգիրները և հայերը» հոդվածում, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, 1956, № 11, գերստին առաջ է քաշում հայ-թրակա-փոյուգական մերձավոր կապերի հարցը, որ հայտնի էր հույն պատմիչների հաղորդումից:

<sup>5</sup> Հմմա. Բ. И. Надэль-ի գրախոսությունը ՎЯ-ում. 1953, № 2, էջ 138—143 և В. И. Абаев-ինը՝ ВДИ-ում, 1954, № 2, էջ 86—90:

Թրակերենին վերջերս մի կարևոր աշխատություն է՝ նվիրել Վ. Գեորգիկեր<sup>1</sup>: Այստեղ Գեորգիկեր հայտնում է հետևյալ կարծիքը. «Հայերենն ու փոյուգերենը հայ-փոյուգական լեզվախմբի երկու բարբառներն են. սրանով խոսել է (նախա)հայա-փոյուգական բնակչությունը, որը մ.թ. ա. III հազարամյակում բնակվելիս է եղել Բալկանյան թերակղու կենտրոնական մասում». շնայած իրենց մերձավորությանը՝ (հայա)-փոյուգերենը և թրակերենը երկու առանձին (ինքնուրույն) լեզուներ են եղել կամ իրարից էապես տարբերվող երկու բարբառների: Գեորգիկեր հենվում է հնդկրոպական օ-ի և ձայնավոր ձայնորդների՝ տվյալ լեզուներում արտացոլվելու աարբերությունների վրա. հմմտ. հայա-փոյուգերեն՝ \*օ>ո և \*լ, \*ր, \*դ, \*ց>ալ, ար, ամ. առ. թրակերեն՝ \*օ>ա և \*լ, \*ր, \*դ, \*ց>ալ, ար, ամ:

Հայերենին այս կամ այն շափով անդրադառնում են և Ա. Մեյեն, Հ. Պեղերսենը, է. Բենվենիստը, Ս. Լիոնեն, Մ. Լերուան, Ֆր. Ֆեյդին, Ժ. Ֆուրկեն, Ջ. Բոնֆանտեն, Վ. Պիզանին, Ջ. Բոլոնեզին, Վ. Բելարդին, Հ. Ենսենը, Հ. Ֆոգտը, Ռ. Գուսմանին, Ս. Ժ. Վան Վինդիկինսը, Գ. Կյուինդեն, Գ. Ռ. Ս. Սոլտան, Հ. Կարսուինը. Ու. Օստինը, Ս. Կեռնսը, Բ. Շվարցը, Ու. Ռինտերը, Օ. Հաասը, է. Պոլոմեն, Լ. Բրնրցյանուն, Վ. Զաբրոցկին/և ուրիշները<sup>2</sup>:

Հեղիրանական լեզուներ.— Այս ենթաշրջանում մի շարք կարևոր աշխատություններ են նվիրվում հին և միջին հնդկական լեզուներին, նոր հնդկական լեզուների հնագույն վիճակի ու զարգացման հարցերին, նախահնդկական լեզուների բնույթին և հին հընդկերենի հետ ունեցած կապիրին, հնդիրանական ցեղակցությանը և

<sup>1</sup> В. Георгиев, Тракийският език, София, 1957; *Փոյուգիացիների և թրակացիների ու նրանց լեզվի մասին տես'ն նաև N. Jokl-ի հոգած-ները („Phryger“ և „Thraker“). Reallexikon der Vorgeschichte—ում, 10 և 13, 1927 և 1929.*

<sup>2</sup> A Meillet, Esquisse d'une Grammaire comparée de l'arménien classique, II հր., 1936; G. Bonfante, Les isoglosses gréco-arméniennes, „Mélanges linguistiques offerts à H. Pedersen“, Copenhague, 1937, էջ 15—33. Armenians and Phrygians, „Armenian Quarterli“, I, 1, 1948. W. Austin, Is Armenian an Anatolian Language, „Language“, 1942, № 1. V. Pisani, La palatalizzazione armena, ASGM, I, 1948 (*այլև Richerche Linguistische*, I, 1950, էջ 105—103). E. Polomé, Reflexes laringales en arménien, AIPhOS, 10, 1950. W. Winter, Problems in Armenian phonology, „Language“, 1954, № 2. H. Karstien, Das slawische Imperfekt und der armenische aց-Աօրտ, „Festschrift für Max Vasmer“, Wiesbaden, 1956 և այլն.

այն<sup>1</sup>: Հնդիրանական սահմանային լեզուներին է նվիրված Մորգենշտիռների ծավալուն աշխատությունը<sup>2</sup>:

Իրանական լեզուներին նվիրված աշխատություններից նշելի են Ա. Մեյերի «Հին պարսկերենի քերականության»՝ Է. Թենվենիստի կողմից վերամշակված հրատարակությունը, Ս. Կոնովի «Սակյան ուսումնասիրությունները» և «Խոտանսակերենի քերականությունը», Ի. Գերշենչի «Մանիքեական սոգդերենի քերականությունը», Վ. Հինցի «Հին պարսկերենի բառագանձը», Ա. Գիլենի «Պարթևերեն լեզվի ուրվագիծը»<sup>3</sup> և այլն:

Բալթիկ-սլավոնական լեզուներ.— Բալթիկ-սլավոնական լեզուներին նվիրված բնդանուր բնույթի աշխատություններից նշելի է Շտանգի «Սլավոնական և բալթիական բայրունք»<sup>4</sup>:

Բալթիական լեզուներին են նվիրված Զենի և Ֆրենկելի աշխատությունները<sup>5</sup>:

Բազմաթիվ աշխատություններ են նվիրվում սլավոնական լեզուների համեմատական քերականության և պատմության հարցերին. դրանցից հիշատակելի են Վան Վեյկի, Վայանի, Տրաուտմա-

<sup>1</sup> L. Renou, Grammaire sanscrite, Paris, 1930. W. Wust, Vergleichendes und etymologisches Wörterbuch des Alt-Indoiranischen, Heidelberg, 1935 և ջ. T. Burrow, Language of the Kharosthi Documents from Chinese Turkestan, Cambridge, 1937. R. L. Turner, Comparative and Etymological Dictionary of the Nepali Language, London, 1931. J. Bloch, L'Indo-aryen du veda aux temps modernes, Paris, 1934. F. B. J. Kuitper, Proto-Munda Words in Sanskrit, Amsterdam, 1948, M. N. Mehendale, Historical Grammar of Inscriptional Prakrits, Poona, 1948. G. V. Fagare, Historical Grammar of Apabhramś'a, Poona 1948. B. Kakati, Assamese, Its Formation and Development, Gauhati, Assam, 1941. W. Geiger, A. Grammar of the Sinhalese Language, Colombo, 1938.

<sup>2</sup> G. Morgenstierne, Indo-Iranian Frontier Languages on the Indo-Iranian Frontier, I-II, Oslo, 1929-1938.

<sup>3</sup> A. Metillet E. Benveniste, Grammaire du vieux perse, Paris, 1931. S. Konow, Saka Studies, Oslo, 1932. Khotansakische Grammatik, Leipzig, 1941. J. Gershewitsch, A Grammar of Manichean Sogdian, Oxford, 1954. W. Hinz, Altpersischer Wortschatz, Leipzig, 1942. A. Ghilain, Essai sur la langue parthe, Louvain, 1939.

<sup>4</sup> C. S. Stang, Das slavische und baltische Verbum, Oslo, 1942.

<sup>5</sup> A. Senn, Handbuch der litauischen Sprache, Heidelberg, 1957. E. Fraenkel, Litauisches etymologisches Wörterbuch, Heidelberg-Göttingen, 1955 և ջ. Ծնաելինի աշխատությունների մասին տե՛ս սովետական լեզվաբանությանը հատկացված հասկածում:

նի, Լեր-Սպլավինսկու, Հորալեկի, Նիդեռլեի, Նահտիգալի աշխատությունները<sup>1</sup>:

Հին սլավոներենին կամ եկեղեցաւալավոներենին նվիրված աշխատություններից նշելի են Վայանի, Վան Վեյկի և Սադնիկի ու Այցետմյուլերի գրքերը<sup>2</sup>:

Արևելասլավոնական լեզուների ուսումնասիրությունը կենտրոնանում է գերազանցապես Սովետական Միությունում, և այդ մասին առիթ կունենանք խոսելու: Արտասահմանում ուսաց լեզվի ուսումնասիրության գործն ուժեղանում է հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Նշելի է Ֆասմերի «Ստուգաբանական բառարանը»<sup>3</sup>:

Արևելասլավոնական և հարավսլավոնական լեզուների ուսումնասիրությունը կենտրոնանում է գերազանցապես ժողովրդական դեմոկրատիայի երկրներում<sup>4</sup>. մի շարք կարեոր աշխատու-

<sup>1</sup> N. van Wijk, *Les langues slaves: de l'unité à la pluralité*, Paris, 1937. A. Vaillant, *Grammaire comparée des langues slaves*, Lyon, 1950. R. Trautmann, *Die slavischen Völker und Sprachen; eine Einführung in die Slavistik*, Cöttingen, 1947. T. Lehr-Sławinski, *O pochodzeniu i praojczewie slowian*, Poznań, 1946. T. Lehr-Sławinski, W. Kuraskiewicz, F. Sławski, *Przegląd i charakterystyka języków słowiańskich*, Warszawa, 1954. K. Horalek, *Uvod do studia slovanských jazyků*, Praha, 1955. L. Niederle, *Kukovět slovanských starožitnosti*, Praha, 1953. R. Nahtigal, *Slovanské jazyky*, II հր., Ljubljana, 1952.

<sup>2</sup> A. Vaillant, *Manuel du vieux slave*, Paris, 1948 (*ռուս. Բարգմ.* A. Вайян, *Руководство по старославянскому языку*, М., 1952). N. van Wijk, *Geschichte der altkirchenslawischen Sprache*, I, Berlin—Leipzig, 1931 (*ռուս. Բարգմ.* Н. Ван-Вейк, *История старославянского языка*, М., 1957). L. Sadnik und R. Alzettmüller, *Handwörterbuch zu den altkirchenslawischen Texten*, Heidelberg, 1955.

<sup>3</sup> M. Vasmer, *Russisches etymologisches Wörterbuch*, Heidelberg, 1950—1958.

<sup>4</sup> T. Lehr-Sławinski, *Język polski*, II հր., Warszawa, 1951 (*ռուս. Բարգմ.* Т. Лер-Славинский, *Польский язык*, М., 1954). W. Doroszewski, *Podstawy gramatyki polskiej*, I, Warszawa, 1952. St. Słon'ski, *Historia języka polskiego w zarysie*, Warszawa, 1953. St. Urbanczyk, *Zarys dialektologii polskiej*, Warszawa, 1953. F. Travníček, *Historická mluvnice československá*, Praha, 1935. *Mluvnice spisovné češtiny*, I, Praha, 1948 (*ռուս. Բարգմ.* Фр. Травничек, *Грамматика чешского литературного языка*, I, М., 1950). B. Navrálek, *Nařečí česká*, Wlastiváda, d. III, Praha, 1934. E. Pauliny, J. Ružič-

**թյուններ** են հանդիս գալիս և մի շարք այլ երկրներում<sup>1:</sup> Հունարեն.— Հունարենի ուսումնասիրության բնագավառում նշելի են է. Շվիցերի, Ֆ. Բլասի, Ժ. Հումբերտի, Պ. Շանտրենի, Մ. Լեժյոնի, Հ. Ֆրիսկի, Գ. Զոյտերի, Յ. Բ. Հոֆմանի, Ա. Միրարելի և այլոց աշխատություններն ու աշխատությունների նոր հրատարակությունները<sup>2:</sup> որոնց մեջ ուսումնասիրվում են Հունարենի տարրեր կողմերն ու տարրեր շրջանները:

Կարևոր նշանակություն է ձեռք բերում նախահունական լեզուների ու ժողովուրդների շերտերի որոշման հարցը: Վ. Գեորգիկը իր մի շարք աշխատություններում<sup>3:</sup> նախահունական բառերի շերտի և

կ, J. Stolc, Slovenská gramatika, II հր., Martin, 1955. E. Pauliny, Dejiny spisovnej slovenčiny, Bratislava, 1948. V. Važný, Nařečí slavenská, Praha, 1934. F. Poljanec, Istorija srpskohrvatskoslovenačkog Književnog jezika, Zagreb, 1836. M. Rešetar, Mluvnice jazyka srbocharvačského, Թարգմ. սերբերենից, Praha, 1946. F. Ramovš, Kratka zgodovina slovenskega jezika, I, Ljubljana, 1936. Л. А н д р е й ч и н, Основна българска граматика, София, 1944 (ռъсн. Թարգմ. Грамматика болгарского языка, М., 1949). К. Мирчев, Историческа граматика на българския език, София, 1956. С. Стойков, Българска диалектология, София, 1955. К. Кепески, Македонска граматика, Скопје, 1950. Б. Конески, Граматика на македонскиот литературен јазик, I—II, Скопје, 1952—1954. J. Holub, F. Korečný, Etymologický slovník jazyka českého, Praha, 1952. F. Sławski, Słownik etymologiczny języka polskiego, Kraków, 1952—1958.

<sup>1</sup> P. Wowčerk, Kurzgefasste obersorbische Grammatik, Leipzig, 1951. B. Swela, Grammatik der niedersorbischen Sprache, Bautzen, 1952.

<sup>2</sup> E. Schwyzer, Griechische Grammatik, I—III, München, 1934—1953 (II հատորը A. Debrunner-ի, III-ը՝ D. J. Georgacas-ի աշխատակցությամբ). F. Bläss, Grammatik des neutestamentlichen Griechisch, IX հր., Göttingen, 1954. J. Humbert, Syntaxe grecque, Paris, 1945. P. Chantaine, Morphologie historique du grec, II հր., 1947 (ռъсн. Թարգմ.). Т. Шантрен, Историческая морфология греческого языка, М., 1953). Grammaire homérique (phonétique et morphologie), II հր., Paris, 1949. M. Lejeune, Traité de phonétique grecque, Paris, 1947. H. J. Frisk, Griechisches etymologisches Wörterbuch, Heidelberg, 1954 և այլ. G. Soyer, Grammatik der neugriechisches Volks- und Schriftsprache, III հր., Wiesbaden, 1955. J. B. Hofmann, Etymologisches Wörterbuch des Griechischen, I, München, 1949. A. Mirabel, Grammaire du grec moderne, Paris, 1949.

<sup>3</sup> V. Georgiev, Die Träger der kritisch-mykenischer Kultur, ihre Herkunft und ihre Sprache, I—II, Sofia, 1937—1938. Vorgriechische Sprachwissenschaft, I—II, Sofia, 1941—1945. սեպանակ A. J. van Windekkens, Le pélasgique. Essai sur une langue indo-européenne préhellénique, Louvain, 1952. Contribution à l'étude de l'onomastique pelasgique, Louvain, 1954.

·τερηλωνπιννερή πισπιμνωσιροιթյան հիման վրա ռնախահունարենը», հակառակ ընդունված կարծիքների, սահմանում է որպես հնդկրոպական և նրան հատուկ համարում բաղաձայների տեղաշարժն ու օ>ա անցումը: Պ. Կրեչմերը իր նոր աշխատությունում<sup>1</sup> առանձնացնում է նախահունական լեզուների և ժողովորդների 5 շերտ՝ 1) անատոլիական, 2) դանուբյան կամ պելասգա-էտրուսկյան, ընդ որում էտրուսկերենը, հակառակ Գեորգիկի, համարում է ոչ-հնդկրոպական լեզու, բայց փաստորեն այն կապում է հնդկրոպական վիճակին նախորդող նախահնդկրոպական հիմքի հետ (այսինքն՝ ընդունում է էտրուսկա-հնդկրոպական նախալեզու), 3) հունական, 4) վենետյան և 5) իլիրիական. վերջին երկուսը խստորեն տարրերվում են:

Հունարենի ուսումնասիրության համար կարեոր նշանակության է ունենում կրետե-միֆենյան այսպես կոչված Յ գծային գրի վերծանումը Մ. Վենտրիսի կողմից (1953 թ.):<sup>2</sup> Այս բնագավառում փաստակ ունի նաև Վ. Գեորգիկը, թեև սկզբնապես նա զգալիորեն շեղվում էր ճիշտ ուղղուց: Վերծանումը պարզեց, որ այդ գրի լեզուն ոչ այլ ինչ է, եթե ոչ հունական մի բարբառ. սրանով իսկ հունարենի հուշարձանների հնությունը տեղափոխվեց մ. թ. ա. II հազարմյակը:

Կալերիսը ընդարձակ աշխատություն է նվիրում մակեդոնացիներին, որոնց լեզվից մնացել են լոկ հատուկ անուններ և բառեր:<sup>3</sup>

Ալբաներեն, իլիրիական լեզուներ.—Ալբանիանին այս ենթաշրջանում նվիրված աշխատություններից հիշատակելի են Մաննի, Տալյալիինիի և Ռոքեի գրքերը<sup>4</sup>:

Իլիրիական լեզուները քննվում են Քոնվեյի, Ուատմոուի ու

<sup>1</sup> Հմմտ. հատկապես P. Kretschmer, Die vorgriechischen Sprach- und Volksschichten, „Glotta“, 28, 1938 & 30, 1943.

<sup>2</sup> Հմմտ. M. Ventris and J. Chadwick, Evidence for Greek Dialect in the Mycenaean Archives, JHS, 73, 1953.

<sup>3</sup> J. N. Kalléris, Les anciens Macédoniens. Études linguistiques et historiques, I. Athènes, 1954.

<sup>4</sup> S. E. Mann, Short Albanian Grammar, London, 1932. C. Tagliavini, L’albanese di Dalmazia, Florentia, 1937. M. Roquet, Recherches sur les anciens textes albanais, Paris, 1932. Le dictionnaire albanais de 1635, Paris, 1932.

Զոնսոնի և Հ. Կրաեի ծավալուն աշխատություններում<sup>1</sup>: Լեզվաբանների մոտ (Կրեչմեր, Պիգանի) նկատվում է վենետերենը մյուս իլիրիական լեզուներից առանձնացնելու տենդենց: Վենետերենին հատուկ աշխատություն է նվիրել Բիլերը<sup>2</sup>:

Որոշ լեզվաբաններ (Յու. Պոկոռնի<sup>3</sup> և ուրիշներ) խիստ ընդարձակում են իլիրիացիների սկզբնական տարածման շրջանները: Իլիրիական սուբստրատի և կուլտուրայի հետքեր որոնվում են ելքոպայի հնդկրոպական զանազան ժողովուրդների մոտ:

Խտալական լեզուներ.— Լատիներենին նվիրված աշխատություններից առանձնապես նշելի են Էռնուի ու Մեյեի և Վալդեի ու Հոֆմանի «Լատիներեն լեզվի ստուգաբանական բառարանները», Դևոտի, Քենտի և Պիգանիի աշխատությունները<sup>4</sup>: Լատիներենին ցեղակից օսկ-ումբրյան լեզուները բննված են Քոնվեյի, Ռատտուուի և Ջոնսոնի՝ արդեն հիշված աշխատության մեջ:

Բազմաթիվ աշխատություններ են նվիրվում նոր-խտալական կամ ոռմանական լեզուներին. Ֆրանսերենի բնագավառում նշելի են Էվերտի, Փոռւպի, Գամիլշեգի, Վալկհովի, Դոզայի, Կոհենի, Սիլվենի, Պիշոնի և Դամուրետի աշխատությունները<sup>5</sup>. իսպաներե-

<sup>1</sup> R. Conway, J. Whatmough, S. E. Johnson, Prae-Italic Dialects of Italy, I—III, Cambridge, USA, 1933. H. Krahe, Die Sprache der Illyrer. I. Die Quellen, Wiesbaden, 1955.

<sup>2</sup> M. S. Bealer, The Venetic Language, Berkley—Los Angelos, 1949.

<sup>3</sup> J. Pokorný, Zur Urgeschichte der Kelten und Illyrer, Leipzig, 1938.

<sup>4</sup> G. Devoto, Storia della lingua di Roma, Bologna, 1940. A. Ernout et A. Meillet, Dictionnaire étymologique de la langue latine, Paris, 1932, III հր., 1951. A. Walde und J. B. Hofmann, Lateinsches etymologisches Wörterbuch, III neubearbeitete Auflage, I—III, Heidelberg, 1938—1956. K. G. Kent, The Sounds of Latin, III հր., Baltimore, 1945. The Forms of Latin, Baltimore, 1946. V. Pisani, Grammatica latina storica e comparativa, Turino, 1948.

<sup>5</sup> A. Ewert, The French Language, London, 1933. M. Pope, From Latin to Modern French, Manchester, 1934. E. Gamillscheg, Glossaire du parler français au Canada, Quebec, 1930. M. Valkhoff, Philologie et littérature wallonnes, Groningen—Batavia, 1938. A. Dauzat, Histoire de la langue française, Paris, 1930 (ռուս. թարգմ. А. Доза, История французского языка, М., 1956). Dictionnaire étymologique de la langue française, Paris, 1938. Les noms de famille de France, Paris, 1947. M. Cohen, Histoire d'une Langue: le français, Paris, 1947. S. Sylvain, Le créole haitien, Wetteren-Port-au-Prince, 1936.

նի բնագավառում՝ էնտվիսլի և Լապեսայի աշխատությունները<sup>1</sup>. պորտուգալերենի բնագավառում՝ Վիլհամսի և էպիֆանիո դա Սիլվա Դիասի աշխատությունները<sup>2</sup>. իտալերենի բնագավառում՝ Փերյի և Ռոլֆսի աշխատությունները<sup>3</sup>. ոումիներենի բնագավառում՝ Ռուստիի աշխատությունը<sup>4</sup>: Ռումանիստիկայի ընդհանուր քննությանն է նվիրված Ռոլֆսի «Ռումանական ֆիլոլոգիան»<sup>5</sup>:

Կելտական լեզուներ.— Կելտական լեզուների բնագավառում նշելի են Լյուիսի և Պեդերսենի «Կելտական լեզուների համառոտ համեմատական քերականությունը» և Հարդիի, Վայսգերբերի, Օ՛Նոլանի, Օ՛Ռահիլիի, Ջոունզի, Թուոնայզենի, Նինի, Մ. Գիեսի աշխատությունները<sup>6</sup>:

Գերմանական լեզուներ.— Գերմանական լեզուների փոխարարքության ընդհանուր ու մասնակի հարցերին նվիրված են Հիրտի, Պոոկոշի, Կոլինդերի, Ֆոխնզսի, Կրաեի, Շվարցի, Շտրոհի աշխատությունները, Լյովեի աշխատության նոր հրատարակությունը<sup>7</sup>: Բարբառագրության զարգացման հետ կապված՝ նոր ձևով են

<sup>1</sup> W. J. Entwistle. *The Spanish Language, together with Portuguese, Catalan, and Basque*. London, 1936. R. Lapesa, *Historia de la lengua española*, Madrid—Buenos Aires, 1942.

<sup>2</sup> E. B. Williams, *From Latin to Portuguese*. Philadelphia, 1938. A. Epiphâniao da Silva Dias, *Syntaxe histórica portuguesa*. II հր., Lisbon, 1933. E. Pischon et J. Damourette, *Essai de grammaire de la langue française*, I—VII. Paris, 1929—1939.

<sup>3</sup> M. Pei, *The Italian Language*, New-York, 1941. G. Rohffs, *Historische Grammatik der Italienischen Sprache und ihrer Mundarten*, I—II, Bern, 1949.

<sup>4</sup> A. Rossetti, *Istoria limbii româna*, I—III. Bucharest, 1938—1940.

<sup>5</sup> G. Rohffs, *Romanische Philologie*, I—II, Heidelberg, 1950—1952.

H. Lewis and H. Pedersen, *A Concise Comparative Celtic Grammar*, Göttingen, 1937. (ռուս. Քարգ. Գ. Լյուս և Խ. Պեդերսեն. Կրակա սպառական գրամմատիկա կելտական լեզուների, մ., 1954). D. W. F. Hardie. *Handbook of Modern Breton (Armorican)*, Cardiff, 1948. L. Wiesgerber, *Die Sprache der Festlandkelten*, BRGKDAJ, XX, 1930, էջ 147—226. G. O'Nolan, *New Era Grammar of Modern Irish*, Dublin, 1934. T. F. O'Rahilly, *Irish Dialects Past and Present*, Dublin, 1932. J. M. Jones, *Welsh Syntax*, Cardiff, 1931 (անագրան). R. Thurneysen, *A Grammar of Old Irish*, Dublin, 1946. J. J. Kneen, *A Grammar of Manx Language*, Oxford, 1931. M. Guyesse, *La langue bretonne*, Quimper, 1936.

H. Hirt, *Handbuch des Urgermanischen*, I—III, Heidelberg, 1931—1934. R. Loewe, *Germanische Sprachwissenschaft*, IV հր., I—II, Berlin—Leipzig, 1933. E. Prokosch, *Comparative Germanic Grammar*,

գրվում գերմանական բարբառների ու լեզուների փոխարաբերության, գերմանական լեզուների պատմության հարցերը:

Գերմանական առանձին լեզուների բնագավառում նշելի են հետեւյալ աշխատությունները. գոթերենի բնագավառում՝ Ֆայստի «Գոթերենի համեմատական բառարանի» նոր հրատարակությունը և Մոսեի, Կրաքի, Կրաուզեի աշխատությունները<sup>1</sup>. սկանդինավյան լեզուների բնագավառում՝ Սքոտոուպի, Հելքվիստի, Գուտենբերի, Յոհաննեսոնի, Հոլտհաուզենի աշխատությունները<sup>2</sup>. անգլերենի բնագավառում՝ Բոուի, Մենքենի, Հոլտհաուզենի. Զիվերսի և Քրունների, այլև ստրուկտուրալիզմի նշանավոր գեմքերի՝ արդեն հիշված աշխատությունները<sup>3</sup>. գերմաներենի բնագավառում՝ Ֆայստի «Գերմաներեն լեզվի» երկրորդ հրատարակությունը, Ֆոխնդուի, Մաուսերի, Կարստինի, Ժոլիվեի և Մոսեի աշխատությունները<sup>4</sup>.

Philadelphia, 1939 (ռուս. թարգմ. Յ. Պրօկօշ, Сравнительная грамматика германских языков, М., 1954). B. Collinder, Urgermanische Lehnwörter im Finnischen. Upsala, 1932. Th. Frings, Germania-Romania, 1932. H. Krahe, Germanische Sprachwissenschaft, I-II, 1948. E. Schwarz, Goten. Nordgermanen. Angelsachsen, 1951. Deutsche und germanische Philologie, Heidelberg, 1951. F. Stroh, Handbuch der germanischen Philologie, Berlin, 1952.

<sup>1</sup> S. Feist, Vergleichendes Wörterbuch der gotischen Sprache, III հր., Leyden, 1939. F. Mossé, Manuel de la langue gothique, Paris, 1942. H. Krahe, Historische Laut- und Formenlehre des Gotischen, 1948. W. Krause, Handbuch des Gotischen, München, 1953.

<sup>2</sup> P. Skautrup, Det danske sprogshistorie, I, Köbenhavn, 1944. E. Hellquist, Svensk etymologisk ordbok, I II, Lund, 1935-1939. S. Gutenbrunner, Historische Laut- und Formenlehre des Altländischen, Heidelberg, 1959. A. Johansson, Isländisches etymologisches Wörterbuch, Bern, 1956. F. Holthausen, Vergleichendes und etymologisches Wörterbuch des altwestnordischen, Altnorwegisch-Isländischen, Göttingen, 1948.

A. G. Baugh, History of the English Language, New-York, 1935. H. L. Mencken, The American Language, գերանաված հր., New-York, 1936. F. Holthausen, Altenglisches etymologisches Wörterbuch, Leipzig, 1934. E. Sievers und K. Brunner, Altenglische Grammatik, Halle, 1942.

<sup>4</sup> S. Feist, Die deutsche Sprache, II հր., München, 1933. O. Mausser, Mittelhochdeutsche Grammatik, I-II, München, 1932-1933. C. Karstien, Historische deutsche Grammatik, I, Heidelberg, 1939. A. Jolivet et F. Mossé, Manuel de l'allemand du moyen âge, Paris, 1942. Th. Frings, Grundlegung einer Geschichte der deutschen Sprache, 1948.

Սեմա-ժամական լեզուներ.— Սեմա-քամական և մի շարք այլ լեզուների ուսումնասիրության բնագավառը աստիճանաբար թափանցում են հնդկրոպական լեզվաբանության նորագույն գաղափարները: Հնդկրոպական լեզվաբանության նոր մեթոդները սեմական լեզուների ուսումնասիրության նկատմամբ կիրառելու նման մի փորձ է Լ. Հրեյի «Սեմական համեմատական լեզվաբանության ներածությունը»<sup>1</sup>: Քամա-սեմական լեզուներին կարենոր աշխատություններ են նվիրված Ա. Էմրերի, Ֆ. Կալիսի և Հ. Բաբեցի, Մ. Կոհենի, Կ. Հ. Գորգոնի, Գ. Ռիկմանսի, Զ. Հառիսի, Յ. Ֆրիդրիխի և ուրիշների կողմից<sup>2</sup>:

«Ուրալա-ալյայան» լեզուներ, նապոներեն, կորեերեն.— Ֆիննա-ուգրական լեզուների ուսումնասիրությունը համընթաց է գնում հնդկրոպական լեզուների ուսումնասիրության մեջ իշխող գաղափարներին: Գարոր Օրբանի և ավելի ուշ Լ. Հակովինենի՝ հունգարերենին և ֆիններենին նվիրված աշխատությունները<sup>3</sup> ունեն նույն բնույթն ու կառուցվածքը, ինչ Օ. Խապերսենի, Օ. Բեհազելի և Վ. Վարտբուրգի աշխատությունները՝ նվիրված անգլերենին, գերմաներենին և ֆրանսերենին<sup>4</sup>: Գրեթե համատիպ գործ է Կ. Գրյոնբեկի «Թյուրքական լեզվակառուցվածքը» աշխատությունը<sup>5</sup>:

լեզվաբանության մեջ ավելի ու ավելի տիրապետող է դառնում տարբեր ժամանակներում հանդես եկած այն գիտնականների կարծիքը, որոնք վիճարկում են ուրալյան և ալթայան լեզուներ:

<sup>1</sup> L. H. Gray, Introduction to Semitic Comparative Linguistics, New-York, 1934.

<sup>2</sup> A. Ember, Egypto-Semitic Studies, Leipzig, 1930. F. Calice und H. Babéz, Grundlagen des ägyptisch-semitischen Wortgleichungen, Wien, 1936. M. Cohen, Essai comparatif sur le vocabulaire et la phonétique du chamito-sémitique, Paris, 1947. C. H. Gordon, Ugaritic Handbook, Rome, 1947. G. Ryckmans, Grammaire accadienne, Louvain, 1938. Z. S. Harris, Development of the Canaanite Dialects, New Haven, 1939. J. Friedrich, Phönizisch-punische Grammatik, Rome, 1951.

<sup>3</sup> Gábor Orbán, A magyar nyelv, 1935. L. Hakulinen, Suomen kielen rakene ja kehitys, Helsingissä, 1941 (ռուս. Բաբադ. Լ. Հակուլինեն, Развитие и структура финского языка, I—II. М., 1953—1955).

<sup>4</sup> O. Jespersen, Growth and Structure of the English Language, 1919. O. Behaghel, Die deutsche Sprache, 1935. W. Wartburg, Evolution et structure de la langue française, 1939.

<sup>5</sup> K. Grönbeck, Der türkische Sprachbau, Copenhagen, 1936.

րի ցեղակցությունը և, բնդհակառակն, դնում են ուրալյան (Ֆին-նա-ուգրական) և Հնդկրոպական լեզուների ցեղակցության հարցը (Ն. Անդերսոն, Գ. Սվիտ, Գ. Բ. Վիկունդ, Հ. Պատառնեն, Է. Ն. Սետելի, Բ. Կոլինդեր, Գ. Ի. Ռամստեդտ): Գ. Ի. Ռամստեդտը, Ֆիննա-ուգրական լեզուները կապելով Հնդկրոպականների հետ, մյուս կողմից՝ ընդլայնում է ալթայան լեզուների ցեղակցության շրջանը և ներառում նաև ճապոներենն ու կորեերենը: Ալթայան լեզվաբանությանը նվիրված նրա բազմաթիվ աշխատություններից նշելի են «Ալթայան լեզվաբանության ներածությունը» և «Կալմիկերեն բառարանը»<sup>1</sup>. վերջինս փաստորեն ալթայան լեզուների համեմատական բառարան է: Այս բնագավառում նշելի է և Մ. Ռ. Ռյասանենի «Թյուրքական լեզուների հնչյունների պատմության նյութերը»<sup>2</sup>:

Ֆիննա-ուգրական լեզուների համեմատական քերականության և ցեղակցության հարցերին կարեոր աշխատություններ են նվիրվում Մ. Ժիրայի, Բ. Կոլինդերի, Փիննա-ուգրական և յուրագիրյան ցեղակցության հարցին՝ Բ. Կոլինդերի կողմից<sup>3</sup>:

Կովկասյան լեզուներ.— Կովկասյան լեզուների տվյալները հաճախ են օգտագործվում ստրուկտուրալիստների ընդհանուր լեզվաբանական կառուցումների մեջ (Ելմսլե, Տրուբեցկոյ): Հյուսիսային կովկասյան լեզուների ուսումնասիրության բնագավառում նշելի են Գ. Դյումեզիլի «Համեմատական ուսումնասիրությունները հյուսիսարևմտյան կովկասյան լեզուների վերաբերյալ» և «Հյուսիսային կովկասյան լեզուների համեմատական քերականության ներածությունը»<sup>4</sup>:

<sup>1</sup> G. J. Ramstedt, Einführung in die altaische Sprachwissenschaft, Helsinki, 1952 (ռուս. թարգմ. Г. И. Рамстедт, Введение в алтайское языкознание, М., 1957). Kalmickisches Wörterbuch, Lexica societatis Fennou-Ugricæ, 3, XXX.

<sup>2</sup> M. Räsänen, Materialien zur Lautgeschichte der türkischen Sprachen, „Studia Orientalia“, XV, Helsinki, 1949 (ռուս. թարգմ. М. Рясанен, Материалы по исторической фонетике тюркских языков, М., 1955).

<sup>3</sup> M. Zsirai, Magyar-finn összehazonlító nyelvtan, Budapest, 1936. Finnugor rokonságunk, Budapest, 1937. B. Collinder, Jukagiritisch und Uralitsch, Upsala, 1940. Fennou-Ugric Vocabulary. An Etymological Dictionary of the Uralic Languages, Stockholm, 1955.

<sup>4</sup> G. Dumézil, Études comparatives sur les langues caucasiennes du nord-ouest, Paris, 1932. Introduction à la grammaire comparée des langues caucasiennes du nord, Paris, 1933.

**Առաջավոր Ասիայի հին լեզուներ**. — Հին փոքրասիական մի շարք լեզուներ այժմ լեզվաբանների կողմից հատկացվում են հնդկրոպականներին<sup>1</sup>: Մյուս կարգի լեզուներին նվիրված և ընդհանուր բնույթի աշխատություններից նշելի են Յ. Ֆրիդրիխի, Ֆ. Բորկի և ուրիշների գործերը<sup>2</sup>: Էտրուսկերենին, որը ոմանք համարում են հնդկրոպական, նվիրված են է. Ֆիզելի և Հ. Լ. Շտոլտենբերգի աշխատությունները<sup>3</sup>: Խուռի լեզվին նվիրված է է. Ա. Սպեյզերի, շումերերենին՝ Ռ. Ժեստինի աշխատությունը<sup>4</sup>:

**Չին-տիբեթական, դրավիդյան, բուրուչակի լեզուներ**. — Շարունակվում է աշխատանքը չին-տիբեթական և հարավ-արևելյան բազմաթիվ լեզուների ուսումնասիրության ուղղությամբ՝ ինչպես տեղական, այնպես էլ եվրոպական ու ամերիկյան գիտնականների կողմից:

**Չին-տիբեթական լեզուների բնագավառում նշելի են Վ. Սիմոնի, Կ. Վուֆի և այլոց աշխատությունները<sup>5</sup>:**

**Դրավիդյան լեզուների ուսումնասիրության մեջ կարևոր ավանդ են մտցնում Ա. Ն. Նարասիմհան, Ժ. Բորկը, Գ. Ս. Գեյլը<sup>6</sup>:**

**Հնդկաստանի ծայր հյուսիս արևելքում գտնվող բուրուշակի լեզվին (վերշիկերենին, որ ոմանք համարում են դրավիդյան, մյուսները՝ մունդա լեզուներին ցեղակից) նվիրված է Դ. Լ. Ռուբիմերի ծավալուն աշխատությունը<sup>7</sup>:**

<sup>1</sup> Հմմ. В. Георгиев, Вопросы родства средиземноморских языков, ВЯ, 1954, № 4, էջ 42—75. Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958.

<sup>2</sup> J. Friedrich, Kleinasiatische Sprachdenkmäler, Berlin, 1932. Hethitisch und kleinasiatische Sprachen, Berlin Leipzig, 1932. F. Bork, Das Ukitutische, unbekannte Sprache von Ras Schamra: Grundlagen der Entzifferung, Leipzig, 1938.

<sup>3</sup> E. Fiesel, Etruskisch, Berlin—Leipzig, 1931. H. L. Stoltenberg, Etrusische Sprachlehre mit vollständigem Wörterbuch, Leverkusen, 1950. Etrusische Wortschatz. I. Etruskische Gottnamen, Leverkusen, 1957. Die Sprache der Etrusker, Leverkusen, 1958.

<sup>4</sup> E. A. Speiser, Introduction to Hurrian, New-Haven, 1941. R. Jestin. Le verbe sumérien, Paris, 1943.

<sup>5</sup> W. Simon, Tibetisch-chinesische Wortgleichungen, Berlin, 1930. K. Wulff, Chinesisch und Tai, Copenhagen, 1934.

<sup>6</sup> A. N. Narasimha, Grammar of the Oldest Kanarese Inscriptions, Mysore, 1941. J. Block, Structure grammaticale des langues dravidiques, Paris, 1946. G. S. Gai, Historical Grammar of the Old Kannada, Poona, 1946.

<sup>7</sup> D. L. K. Lorimer, The Burushaki Language, I III, Oslo, 1936—1938.

---

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ ԵՆԹԱԾՐՁԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### 1. ՀԱՅԵՐԵՆ

Քրուտյան Գ., Արդի ամերիկյան բուրժուական փիլիսոփայության ռեակցիոն էությունը, Երևան, 1954.

### 2. ԱՊԽՍԵՐԵՆ

- Адмони В. Г., Развитие синтаксической теории на Западе в XX в. и структурализм, ВЯ, 1956, № 6, стр. 44—64.
- Ахманова О. С., Глоссематика Луи Ельмслева, ВЯ, 1953, № 3.
- Ахманова О. С. О психолингвистике, М., 1957.
- Ахманова О. С., Очерки по общей и русской лексикологии, М., 1957.
- Ахманова О. С., О разграничении слова и словосочетания, автореф. доктор. дисс., М., 1954.
- Ахманова О. С., Основные направления лингвистического структурализма, М., 1955.
- Ахманова О. С., О методе лингвистического исследования у американских структуралистов, ВЯ, 1952, № 5, стр. 92—105.
- Винокур Г. О., Эпизод идеиной борьбы в западной лингвистике (о полемике между Л. Блумфилдом и Л. Шпицером), ВЯ, 1957, № 2, стр. 59—70.
- Граур А., Структурализм и марксистская лингвистика, ВЯ, 1958, № 1, стр. 62—64.
- Григорьев В. И., Несколько замечаний о структурализме и семантике, ВЯ, 1958, № 4, стр. 24—26.
- Гухман М. М., Лингвистический механицизм Л. Блумфилда и дескриптивная лингвистика, ТИЯ, 1954, стр. 111—189.
- Гухман М. М., Против идеализма и реакции в современном американском языкоznании Л. Блумфилда и «дескриптивная» лингвистика. ИАН ОЛЯ, 1952, № 4, стр. 281—294.
- Гухман М. М., Э. Сепир и «этнографическая лингвистика», ВЯ, 1954, № 1, стр. 110—127.
- Жирмунский В. М., Теодор Фрингс как германист. ИАН ОЛЯ, XV, 4, 1956, стр. 363—373.
- Зарубежные отклики на дискуссию о структурализме. ВЯ, 1958, № 2, стр. 66.

- Звегинцев В. А., Семасиология, М., 1957.
- Звегинцев В. А., Проблема знаковости языка, М., 1956.
- Коэи М., Современная лингвистика и идеализм, ВЯ, 1958, № 2, стр. 57—65.
- Лешка О., К вопросу о структурализме, ВЯ, 1953, № 5, стр. 88—103.
- Макаев Э. А., Ларингальная теория и вопросы сравнительной грамматики индо-европейских языков, ТИЯ АН Груз. ССР, 2, 1957, стр. 55—71.
- Мельничук А. С., К оценке лингвистического структурализма, ВЯ, 1957, № 6, стр. 34—49.
- Микуш Ф., Обсуждение вопросов структурализма и синтагматическая теория, ВЯ, 1957, № 1, стр. 27—34.
- Панфилов Е. Д., Против реакционной методологии современного структурализма, УЗ 1-го Ленинградского пед. ин-та иностран. языков, Новая серия, 1, 1954, стр. 246—258.
- Пиотровский Р. Г., Структурализм и языковедческая практика, ВЯ, 1957, № 4, стр. 26—35.
- Ревзин И. И., Структуральная лингвистика, семантика и проблемы изучения языка, ВЯ, 1957, № 2, стр. 31—41.
- Реформатский А. А., Что такое структурализм?, ВЯ, 1957, № 6, стр. 26—37.
- Родзевич Н. С., Реакція на суть сучасних буржуазних теорій у мовознавстві, Київ, 1954.
- Седельников Е. А., Несколько слов о синтагматической теории, ВЯ, 1958, № 4, стр. 51—54.
- Стеблин-Каменский М. И., Несколько замечаний о структурализме, ВЯ, 1957, № 1, стр. 35—40.
- Трика Б., Вахек И., Трост П. и др., К дискуссии по вопросам структурализма, ВЯ, 1957, № 3, стр. 44—52.
- Шаумян С. К., Против агностицизма в фонологии. Критика фонолог. теории Ельмслева, УЗМУ, 150, 1952, стр. 311—323.
- Шаумян С., Структурная лингвистика как имманентная теория языка, М., 1958.
- Шаумян С. К., О сущности структурной лингвистики, ВЯ, 1956, стр. 38—54.
- Шаумян С. К., Проблема фонемы, ИАН ОЛЯ, 1952, 4, стр. 324—343.
- Штибер З., Слово в дискуссии о структурализме, ВЯ, 1957, № 3, стр. 53—54.

### 3. ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԻՑ

- Carroll J. B., The Study of Language. A Survey of Linguistics and Related Disciplines in America. Cambridge, Mass., 1953.
- Cassirer E., Structuralism in Modern Linguistics. "Word", I, 2, 1945.

- Catalan Menendez-Pidal D., La escuela lingüística española y su concepción del lenguaje, Madrid, 1955.
- Collinson W. E., Some Recent Trends in Linguistic Theory with Special Reference to Syntactics, „Lingua“, I, 3, 1948, *čj 306—322*.
- Collinson W. E., An Account of De Groot's „Structurale Syntaxis“ in its Application to English, „Lingua“, III, 2, 1952.
- Congrès international de linguistes, I VIII, 1928—1957.
- Dickenmann E., La linguistique en Suisse de 1938 à 1947, Bern, 1947.
- For Roman Jakobson. Essays on the Occasion of his Sixtieth Birthday, The Hague, Mouton, 1956.
- Guiraud P., La stylistique, Paris, 1955.
- Guiraud P., La sémantique, Paris, 1955.
- Guiraud P., La grammaire, Paris, 1958.
- Guiraud P., Bibliographie critique de la statistique linguistique, Utrecht-Anvers, 1954.
- Hall R. A. Jr., American Linguistics 1925—1950, AL, III—IV, 1951—1952.
- Hall R. A. Jr., In Memoriam Leonard Bloomfield, „Lingua“, II, 2, 1950, *čj 117—128*.
- Hamm E. P., A Glossary of American Technical Linguistic Usage, 1925—1950.
- Haugen E., Directions in Modern Linguistics, „Language“, XXVII, 1951, № 3.
- Jakobson R., Nekrolog auf N. S. Trubetzkoy, AL, I, 1939.
- International Congress of Linguists, *м'къ Congres...*
- Klempener V., Zur gegenwärtigen Sprachsituation in Deutschland, Berlin, 1953.
- Kopal V., L'état actual des études linguistiques en Tchécoslovaquie, „Lingua“, II, 2, 1950, *čj 226—236*.
- Kronasser H., Handbuch der Semasiologie. Kurze Einführung in das Geschicht, Problematik und Terminologie der Bedeutungslehre, Heidelberg, 1952.
- Müller H., Sprachwissenschaft auf neuen Wegen. Die beschreibende Linguistik den USA, ZPhAS, VII, 1953. *м'къ. Рашев. Г. Мюллер, Языкоzнание на новых путях... „Общее и индоевропейское языкоzнание“, М., 1956.*
- Otto E., Stand und Aufgabe der allgemeinen Sprachwissenschaft, Berlin, 1954.
- Pätsch G., Grundfragen der Sprachtheorie, Halle (Saale), 1955.
- Pisani V., Linguistica generale e indoeuropea. Saggi e discorsi, Milano, 1947. *м'къ. Рашев. Allgemeine und vergleichende Sprachwissenschaft—Indogermanistik, WF, 2, 1953. м'къ. Рашев. В. Пизани, Общее и индоевропейское языкоzнание, бакалавриат филологиe, М., 1956.*

- Recherches structurales 1949. Copenhague, 1949.
- Schwidetzky G. W. A., Ergebnisse der ersten 30 Jahre biologischen Sprachforschung, Markleeberg, 1946.
- Siertsema B. A., Study of Glossematics. Critical Survey of its Fundamental Concepts. The Hague, 1955.
- Sommerfelt A., V. Bröndal, „Lingua“. I, 2, 1948, *kg 261—262*.
- Spang-Hanssen H., Recent Theories on the Nature of the Language Sign, Copenhagen, 1954.
- Tražníček Fr., Česky' Jezykoputny' strukturalismus ve světle stalinova učení o jezyce, Praha, 1956.
- Trypućko J., La linguistique polonaise après la guerre. Essais de bibliographie, Stockholm, 1948.
- Togeby K., Structure immanente de la langue française, Copenhague 1951.

---

## ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

### ՍՈՎԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սովետական լեզվաբանության ձևավորման նախադրյալներն ու պայմանները. Մարքսը, էնգելսը, լենինը և լեզվի հարցերը.— Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեռլյուցիան արմատական տեղաշարժեր առաջ բերեց իդեոլոգիական բնագավառում: Դիալեկտիկական մատերիալիզմը դարձավ միակ տիրապետող աշխարհայցքը: Առաջնահերթ խնդիր էր դրված, ի թիվս այլ հասարակական գիտությունների, վերակառուցել նաև լեզվաբանական գիտությունը դիալեկտիկական մատերիալիզմի փիլիսոփայական հիմքի վրա: Դիալեկտիկական մատերիալիզմի սկզբունքները լեզվաբանության մեջ կիրառելու նախկին հատուկենու փորձերի փոխարեն, որոնց մեջ առանձին հիշատակության արժանի է Լաֆարգի «Լեզու և ռեռլյուցիա» գիրքը, այժմ հանդես է գալիս սովետական լեզվաբանների հետևողական աշխատանքը: Անհրաժեշտ էին տեսական ստեղծագործական համար ջանքեր, նախորդ լեզվաբանական ողջ ժառանգության քննադատական վերանայում և լավագույն կողմերի ստեղծագործական յուրացում: Սակայն լեզվաբանության մեջ մարքսիզմի արմատավորումը միանգամից ու հարթ կերպով տեղի չունեցավ: Հանդես եկան երկու կարգի ծայրահեղություններ, որոնց հաղթահարումը պահանջեց երկար ժամանակ և տեղի ունեցավ ջանքերի մեծ լարումով: Լեզվաբանների մի մասը՝ հեշտությամբ շէր կարող հարժարվել այն իդեալիստական հայացքներից, որոնք ընկած էին նրանց լեզվաբանական կոնցեպցիաների հիմքում: Փորձեր էին արվում մարքսիզմը հարմարեցնելու սեփական կոն-

ցեպցիաներին, էկլեկտիկորեն զուգակցելու դրանք մարքսիզմի հետ կամ նույնիսկ լուսնաթյամբ անցնելու մարքսիզմի կողքով՝ այն համարելով լեզվարանության հետ կապ չունեցող մի բան։ Լեզվարանների մի այլ մասը հանդես էր գալիս լեզվի միանգամայն «նոր ուսմունքի» ստեղծման պահանջով, բոլոր կողմերով փորձում հակադրվել նախորդ լեզվարանությանը, սովետական լեզվարանությունը կտրել նախորդ ողջ լեզվարանական տրադիցիայից, փաստորեն հրաժարվում նախորդ լեզվարանական ժառանգությունից։ Լեզվական երևույթների գիտական խոր վերլուծությունը այս լեզվարանների մեջ հաճախ փոխարինվում էր դեկլարացիաներով. այս դեպքում էլ մարքսիզմի հիմունքների ոչ խոր և ոչ ստեղծագործական յուրացումը հանգեցնում էր մարքսիզմի գոեհկացված րմբունման, վոլգար սոցիոլոգիական մեկնաբանության։ Այսուհանդերձ, սովետական լեզվարանությունը քայլ-առ-քայլ առաջ էր գնում՝ անցնելով երկու ծայրահեղությունների դեմ մղած պայքարի բովով։

Սովետական Միության կողքին ժողովրդական դեմոկրատիայի երկրների առաջացումը մարքսիստ լեզվարանների բանակը համալրում է նոր ուժով և է՛լ ավելի լայն հնարավորություններ ստեղծում լեզվարանության հարցերի մարքսիստական լուծման համար։

Մարքսիստական դիալեկտիկա-մատերիալիստական փիլիսոփայության ստեղծումը հեղաշրջում էր գիտության պատմության մեջ, միանգամայն նոր էտապ բնության, հասարակության և մտածողության գարգացման օրենքների գիտական բացարության մեջ։ Դիալեկտիկական մատերիալիզմի կիրառումը հասարակության նկատմամբ, այն է՛ պատմական մատերիալիզմի սահեծումը, Մարքսի և Էնգելսի մեծագույն ծառայություններից մեկն էր։ Պատմական մատերիալիզմը որակապես լիովին տարրերվում էր բուրժուական սոցիոլոգիայի ամենաբազմազան արտահայտություններից և առաջին անգամ իսկական գիտական բազա էր ստեղծում հասարակության գարգացման օրինաշափությունների ճանաշման համար։ Այն հնարավորություն էր տալիս մինչև վերջ թափանցելու մի այնպիսի հասարակական երեսութիւն էության մեջ, ինչպիսին լեզուն է՛ լեզվարանության ուսումնասիրության առարկան։

Դիալեկտիկական մատերիալիզմը հակադրվում է առաջին հերթին ամեն կարգի իդեալիստական ու դուալիստական (վերջին հաշվով՝ նույնպես իդեալիստական) փիլիսոփայական հոսանքներին՝ որպես հետեղական մատերիալիստական մոնիզմ, որ ելնում

է աշխարհի նյութականության, մատերիալի առաջնության և գիտակցության ածանցայնության ու երկրորդայնության զաղափարներից: Ի տարբերություն ազնոստիկական զանազան հոսանքների՝ նա գտնում է, որ աշխարհը ճանաշելի է, որ կան միայն շճանաշված, բայց ոչ անճանաշելի երեսություններ: Տարածելով այս ըսկը բունքները հասարակության նկատմամբ՝ մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմը գտնում է, որ հասարակության զարգացումը նույնպիսի օրինաշափ երեսությունը է, ինչպես բնությանը, որ մարդկանց հասարակական կեցությունն է որոշում նրանց գիտակցությունը, որ հասարակության օրենքները միանգամայն ճանաշելի են և օբյեկտիվ բնույթ ունեն: Պատմական մատերիալիզմը ելնում է այն բանից, որ հասարակության զարգացումը որոշող վճռական գործոնը ոչ թե աշխարհագրական միջավայրը կամ ազգաբնակության խտությունն են, այլ հասարակական արտադրության եղանակը, գոյամիջոցներ հայթայթելու եղանակը: «Իրենց կյանքի հասարակական արտադրության ժամանակ,— գրում է Կ. Մարքսը իր «Քաղաքատնտեսության քննադատության շուրջը» աշխատության առաջարանում՝ տալով պատմական մատերիալիզմի հիմունքների շարադրանքը, — մարդիկ մտնում են որոշ, անհրաժեշտ, իրենց կամքից անկախ հարաբերությունների՝ արտադրական հարաբերությունների մեջ, որոնք համապատասխանում են իրենց նյութական արտադրողական ուժերի զարգացման որոշ աստիճանին: Այդ արտադրական հարաբերությունների ամրողացությունը կազմում է հասարակության տնտեսական ստրուկտուրան, այն իրական բազիսը, որի վրա բարձրանում է իրավական ու քաղաքական վերնաշենքը և որին համապատասխանում են հասարակական գիտակցության որոշ ձևեր: Նյութական կյանքի արտադրուման եղանակը պայմանավորում է կյանքի սոցիալական, քաղաքական ու հոգեկան պրոցեսներն ընդհանրապես: Ոչ թե մարդկանց դիտակցությունն է որոշում նրանց կեցությունը, այլ, ընդհակառակն, նրանց հասարակական կեցությունն է որոշում նրանց գիտակցությունը: Իրենց զարգացման որոշ աստիճանի վրա հասարակության նյութական արտադրողական ուժերը հակասության մեջ են ընկնում գոյություն ունեցող արտադրական հարաբերությունների կամ—ինչ որ դրա իրավաբանական արտահայտությունն է միայն—սեփականության հարաբերությունների հետ, որոնց ներսում նրանք զարգանում էին մինչև այժմ: Արտադրողական ուժերի զարգացման ձևերից այդ հարաբերությունները վեր են ածվում

Նրանց կապանքների: Այն ժամանակ սկսվում է սոցիալական ռեռլյուցիայի դարաշրջանը: Տնտեսական հիմքի փոփոխվելու հետ միասին շատ կամ քիչ արագ հեղաշրջում է տեղի ունենում ամբողջ վիթխարի վերնաշենքում<sup>1</sup>: Տարբերվում են նախնադարյան-համայնական, ստրկատիրական, ֆեոդալական, կապիտալիստական և սոցիալիստական հասարակական ֆորմացիաներ (հասարակական արտադրական հարաբերությունների տիպեր): Նախնադարյան համայնական հասարակությունը դեռևս դասակարգային կառուցվածք չունի. դասակարգերը նրա ընդերքում զարգանում են աստիճանաբար. հետագա ֆորմացիաների պատմությունը դասակարգային հակամարտության, շահագործող և շահագործվող դասակարգերի պայքարի պատմություն է. սոցիալիստական հասարակության մեջ վերանում են շահագործող և շահագործվող դասակարգերը:

Մատերիալիստական դիալեկտիկական մեթոդը հակադրվում է մետաֆիզիկային, որ երեսույթները դիտում է որպես մեկընդհշտ տրված անփոփոխ էություններ, վուլգար էվոլյուցիոնիզմին, որ տեսնում է միայն աննկատ քանակական փոփոխություններ, և մուտացիոնիզմին, որ զարգացումը դիտում է որպես անընդհատ որակական թոփշներ՝ առանց քանակական նախապատրաստման: Նա երեսույթները դիտում է շարժման ու զարգացման մեջ, որտեղ քանակական փոփոխությունները հանգեցնում են որակական թոփշների, որտեղ երեսույթները ծնում են իրենց հակադրությունները, վերջիններս էլ՝ իրենց հակադրությունները՝ առանց սակայն, նույնանալու ելակետի հետ: Զարգացման աղբյուրը դիալեկտիկան տեսնում է հակադրությունների պայքարի, երեսույթների ներքին հակասությունների մեջ. ամեն մի երեսույթ հակասական է, ամեն մի երեսույթ վերջիվերջո ներկայացնում է որոշ հակադրամիանություն: Սակայն սրանով հանդերձ դիալեկտիկան հեռու է երեսույթների պարզունակումից, սխեմատացումից և մեխանիզմից: Նա երեսույթները դիտում է որպես փոխադարձաբար պայմանավորվող տարրերի ամբողջություն, ամեն երեսույթ քննում է իրեն շրջապատող երեսույթների հետ կապված. սրանով դիալեկտիկական մեթոդը հենվում է երեսույթների փոխայմանավորված և պատճառական քննության վրա, բայց տարբերվում է նեղ ստրուկտուրա-

<sup>1</sup> Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտեր երկեր, հ. 1, Երևան, 1950, էջ 427—428.

լիստական մոտեցումից, որի դեպքում երևույթների փոխադարձ կախումը սխեմատացվում է և ձեւականացվում։ Դիալեկտիկական մեթոդը անհրաժեշտ է համարում երևույթների բազմագողմանի քննությունը, նրա բոլոր կարգի կապերի հաշվառումը։ Նա ենում է այն սկզբունքից, որ առանձինը և ընդհանուրը, ձեզ և բովանդակությունը, երևույթը և էությունը, անհրաժեշտությունը և պատահականությունը, հնարավորությունը և իրականությունը և այլն,— այս բոլորը բազմաթիվ անցումներով կապված են, փոխադարձաբար իրար պայմանավորում են, որոշակի հակադրամիասնություն ևն ներկայացնում։ Դիալեկտիկական մոտեցումը խուսափել է տալիս դրանց հարաբերության ըմոնման միակողմանի ուղղագծությունից։

Մարքսիստական լեզվաբանության ընդհանուր փիլիսոփայական սկզբունքները ստեղծելու հետ միասին մարքսիզմի կլասիկները լեզվի մասին արած իրենց դիտողություններով դրել են այն հիմքերը, որոնց վրա պետք է կառուցվի մարքսիստական լեզվաբանության շենքը։ Ինչպես տեսանք սույն աշխատության I հատորում, էնգելսը իր «Ֆրանկյան բարբառով» ժամանակին տվել է բարբառագիտական ուսումնասիրության օրինակելի նմուշ։

Մարքսիզմի կլասիկները իրենց բազմաթիվ ասույթներում ելնում են ամենից առաջ այն դրույթից, որ լեզուն հասարակական-երևույթ է, իսկ այն ուսումնասիրող գիտությունը՝ լեզվաբանությունը՝ հասարակական գիտություն։ «Լեզուն,— գրում է Մարքսը,— որպես առանձին մարդու արտադրանք անմտություն է։ Խոսքը որոշակի կոլեկտիվի արտադրանքն է»<sup>1</sup>։ Հասարակության էության ու զարգացման օրինաշափությունների գիտական-մարքսիստական մեկնաբանությունը հիմք է տալիս լեզվի էության ու զարգացման օրինաշափությունների իսկական գիտական ըմբռնման համար։ Լեզվի և նրանով խոսող ժողովրդի պատմության կապի դրույթը սրանով իսկ հանդես է գալիս նոր լույսի տակ, հնարավորություն է ստեղծվում կատարելու լեզվի էության ու զարգացման օրինաշափությունների իսկական գիտական վերլուծություն։ Լեզվի հասարակական բնույթի մարքսիստական դրույթը ուղղվում է, այսպիսով, մի կողմից՝ լեզվի ինդիվիդուալիստական մեկնաբա-

<sup>1</sup> К. Маркс, Формы, предшествующие капиталистическому производству. „Пролетарская революция“, № 3, 1939, с. 164.

նությունների դեմ, որոնք երևան էին գալիս երիտքերականների մոտ, մյուս կողմից՝ լեզվի իմաննետ, ինքնակա, հասարակության պատմությունից կտրված այն քննության դեմ, որ առկա է ստրուկտուրալիստական լեզվաբանության որոշ հոսանքների մեջ. իհարկե, սա չի խանգարում օգտագործելու լեզվի պատմական և ստատիկ վերլուծության նրանց մեթոդները՝ դրանց բարելավման ու տեսական նոր մեկնաբանության՝ պայմանով հանդերձ: Միաժամանակ մարքսիստական լեզվաբանությունը տարրերվում է և՛ Սույուրի ու նրա հետեւրդների պսիխոսոցիոլոգիզմից, որ արտահայտվում է հասարակության հոգեբանական ըմբռնմամբ, հասարակականի ու անհատականի հակադրությամբ, դրանց փոխհարաբերության ոչ մինչև վերջ հասցրած գիտական ըմբռնմամբ, և՛ ֆունկցիոնալիզմից, որը ֆունկցիայի գաղափարը վերջիվերջո ֆետիշացնում է և դարձնում ինքնակա մի բան, հակադրում նյութական ձևավորմանը: Մարքսիզմը ենում է հասարակության բնույթի ու զարգացման դիալեկտիկա-մատերիալիստական ըմբռնումից, հասարակականի ու անհատականի փոխհարաբերության դիալեկտիկական բնույթից, լեզվի հաղորդակցական ֆունկցիայի՝ նրա էությունը որոշելու փաստից: «Լեզուն մարդկային հաղորդակցման կարեռագույն միջոցն է», — գրում է Լենինը<sup>1</sup>: Խոսելով լեզվի և հասարակության կապի մասին և միաժամանակ հասարակության զարգացման հիմքում դնելով տնտեսական պատճառները՝ մարքսիզմի կլասիկներն զգուշացնում են այս դրույթի գոնեհկացումից: Տնտեսականը վճռականն է, բայց ոչ միակը և ոչ միշտ և, անմիշականորեն, առանց միշնորդող օղակների ազդում. «Հազիվ թե որեւ մեկին հաջողվի, առանց ծիծաղելի դրության մեջ ընկնելու, — գրում է Էնգելսը Բլոխին ուղղված նամակում, — տնտեսական տեսակետից բացատրել յուրաքանչյուր փոքր գերմանական պետության գոյությունն անցյալում և ներկայումս, կամ թե տնտեսական տեսակետից բացատրել հնչյունների վերին գերմանական տեղաշարժի ծագումը, տեղաշարժ, որը Սույետներից մինչև Տառնու ձգվող լեռնաշղթայի ստեղծած աշխարհագրական բաժանումը լայնացրեց՝ հասցնելով մինչև մի իսկական ճեղքի, որն անցնում է ամբողջ Գերմանիայով»<sup>2</sup>:

Մարքսիզմի կլասիկները հանդես են գալիս լեզվի և գիտակ-

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 492—493.

<sup>2</sup> Կ. Մաքքա և Տ. Ենգելս, Հնակիր Երկեր, Ա, Երևան, 1950, էջ 620:

ցության դիալեկտիկական կապի դրույթով։ Նրանք ենում են այն փաստից, որ լեզուն և գիտակցությունը իրենց ծագմամբ ու ֆունկցիավորմամբ սերտորեն կապված են միմյանց հետ և պայմանավորում են միմյանց։ «Լեզուն նույնքան հին է, որքան և գիտակցությունը, — գրում են Մարքսը և Էնգելսը «Գերմանական իդեոլոգիայում»։ — լեզուն է գործնական, ուրիշ մարդկանց համար գոյություն ունեցող և միայն դրանով իսկ նաև հենց ինձ համար գոյություն ունեցող իրական գիտակցություն և, գիտակցության նման, լեզուն առաջանում է միայն կարիքից, այլ մարդկանց հետ հաղորդակցվելու ստիպողական անհրաժեշտությունից»<sup>1</sup>։ Մարքսի և Էնգելսի այս դրույթը հնարավորություն է տալիս սահմանազավելու լեզուն գիտակցությունից կտրելու և գիտակցության հետ նույնացնելու փորձերից, որոնց հիմքում ընկած է լեզվի և գիտակցության փոխհարաբերության դիալեկտիկական բնույթի անըմբը։ Նողությունը։ Լեզուն ու գիտակցությունը, լեզուն ու մտածողությունը կապված լինելով միմյանց հետ՝ ինքնակա, իմանենու երեւույթներ չեն, այլ իրական կյանքի արտացոլումը։ Դրանց բնույթըն ու զարգացման օրինաչափությունները կարելի է հասկանալ միայն կյանքի հետ ունեցած կապի միջոցով։ «Ոչ միտքը, ոչ էլ լեզուն, — գրում են Մարքսը և Էնգելսը, — ինքնըստինքյան առանձին թագավորություն չեն կազմում... Նրանք միայն իրական կյանքի արտահայտություններն են»<sup>2</sup>։ Լեզվական ձեր ինքնին վերցրած ոչինչ չի տալիս, եթե նկատի չի առնվում նրա հարաբերությունը դեպի առարկայական աշխարհի այս կամ այն կողմը։ Անվանումը կապ չունի առարկայի բնույթի հետ, ուղղակիորեն չի դրսեռում իր նշանակած առարկայի բնույթը։ «Որևէ իրի անվանումը, — գրում է Մարքսը «Կապիտալում», — ոչ մի ընդհանուր բան չունի նրա բնության հետ։ Ես բացարձակապես ոչինչ գիտեմ տվյալ մարդու մասին, եթե միայն գիտեմ, որ նրա անունը Հակոբ է»<sup>3</sup>։

«Մաքուր» մտածողություն գոյություն չունի. մտածողությունը արտահայտվում է նյութական-զգայական ձևերով։ Իրենց գոյության հետ սկզբից գիտակցությունը և մտածողությունը նյութական ձևավորում են ստացել, կապվել զգայական էության հետ։ «Նույնիսկ մտածողության հիմնական տարրը, — գրում են Մարքսը

<sup>1</sup> К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, IV, § 20—21 (II кн., § 29).

<sup>2</sup> Նույն տեղը, § 435.

<sup>3</sup> Կ. Մարքս, Կապիտալ, I, 1954, § 110.

և էնգելսը, — այն տարրը, որի մեջ արտահայտվում է մտքի կյանքը՝ լեզուն՝ զգայական բնույթի է»<sup>1</sup>: Մտածողությունը առանձնակի «մաքուր» բնագավառ չէ, ինչպես այն պատկերացվում է կյանքի հետ, որոշվում նրանով. «Փիլիսոփաների համար, — գրում են Մարքսը և էնգելսը, — ամենադժվարին խնդիրներից մեկն է մտքի աշխարհից իշնել իրական աշխարհը: Մտքի անմիշական իրականությունը լեզուն է: Քանի որ փիլիսոփաները առանձնացրել են մտածողությունը, ապա նրանք և լեզուն պետք է առանձնացնեին որպես մի ինչ-որ ինքնուրույն թագավորություն: Սրա մեջ է փիլիսոփայական լեզվի գաղանիքը, որի մեջ մտքերը որպես բառեր ունեն իրենց սեփական բովանդակությունը: Մտքերի աշխարհից իրական աշխարհն իշնելու խնդիրը դառնում է լեզվից կյանք իշնելու խնդիրը»<sup>2</sup>:

Լեզուն և մտածողությունը մարքսիզմի կլասիկները դիտում են որպես իրականության ընդհանրացնող արտահայտությունը. այս է, որ հնարավորություն է տալիս բարձրանալու զգայական իմացության աստիճանից և ընդգրկելու ու արտահայտելու առարկայական աշխարհի անհուն բազմազանությունը. «Զգայությունները ցույց են տալիս իրականությունը. միտքը և բառը՝ ընդհանուրը», — նշված է Լենինի «Փիլիսոփայական տետրակներում»: — «Ամեն բառ (խոսքը) արդեն ընդհանուր ացնում է»<sup>3</sup>: Լեզվի և գիտակցության, լեզվի և մտածողության սերտ կապի սկզբունքի վրա է հիմնված Լենինի այն գրույթը, ըստ որի իմացության թեորիան և դիալեկտիկան կազմող գիտելիքների բնագավառի մեջ առանձնահատուկ տեղ ունի լեզուն. լեզվի պատմությունը իմացության պատմության կարևոր բնագավառներից մեկն է:

Լեզվի ծագումն ու զարգացումը մարքսիզմի կլասիկները քըննում են հասարակության ծագման ու զարգացման, գիտակցության ծագման ու զարգացման հետ կապված: Էնգելսը, որ հատուկ ուսումնասիրություն է նվիրել կապկի՝ մարդու վերափոխվելու պրոցեսի բնութագրմանը, լեզվի ծագումը կապում է մարդկանց համատեղ աշխատանքի հետ: Աշխատանքի պրոցեսում է, որ մարդիկ պահանջ զգացին «միմյանց ինչոք բան ասելու Պահանջը ստեղծեց իր օրգանը, կապկի անզարգացած կոկորդը»

<sup>1</sup> К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, III, § 630.

<sup>2</sup> Նույն տեղը, IV, § 434.

<sup>3</sup> В. И. Ленин, Философские тетради, 1947, § 256.

մոդուլյացիայի միջոցով դանդաղ, բայց անշեղորեն փոխակերպվում էր ավելի ու ավելի զարգացած մոդուլյացիայի համար, իսկ բերանի օրգաններն աստիճանաբար սովորում էին արտասանել մեկ հողորոշ հնչյուն մյուսի հետեւցաւ։ Աշխատանքը և հետո դրա հետ միասին հողաբաշխ խոսքը ազդում են մարդկային ուղեղի զարգացման վրա, որն իր հերթին հակադարձ ազդեցություն է գործում աշխատանքի և լեզվի վրա։ Կապկից զատկելուց հետո մարդու հետագա ողջ զարգացումը կապված է հասարակության հետ։ «Տարրեր ժողովուրդների մոտ և տարրեր էպոխաներում աստիճանով և ուղղությամբ տարրեր լինելով, երբեմն նույնիսկ ընդհարվելով տեղական ու հետադարձ շարժումներով, այդ զարգացումն ընդհանուր առմամբ և ամբողջությամբ հզոր քայլվածքով առաջ էր ընթանում, ստանալով, մեկ կողմից՝ նոր հզոր խթան, իսկ մյուս կողմից՝ ավելի որոշ ուղղություն այն բանի շնորհիվ, որ պատրաստի մարդու երեան գալով ի լրումն առաջացավ ևս մի նոր տարր՝ հասարակությունը»<sup>2</sup>։

Առարկաների անվանման պրոցեսը սերտորեն կապված է մարդու առօրյա կյանքի պահանջների հետ։ Ամեն մի առարկա բավարարում է մարդկանց այս կամ այն պահանջը. տվյալ պահանջը բավարարող առարկաները մարդիկ սկսում են տարրերել մյուս կարգի առարկաներից, դրանց առանձին խմբերին առանձին անվանումներ են տալիս։ Անվանման պրոցեսի ելակետը մարդկային պահանջների բավարարման պրոցեսն է։ «Մարդիկ փաստորեն սկսում են նրանից, որ իրենց համար յուրացնում են արտաքին աշխարհի առարկաները որպես իրենց սեփական պահանջմունքները բավարարելու միջոցներ և այլն, և այլն. ավելի ուշ նրանք հանգում են այն բանին, որ բառային որպես իրենց պահանջմունքների բավարարման միջոցներ, — որպիսին դրանք նրանց համար արդեն ծառայում են պրակտիկ փորձում, — որպես առարկաներ, որոնք նրանց «բավարարում են»... Մարդիկ ոչ միայն պրակտիկայում են վերաբերվում նման առարկաներին որպես իրենց պահանջմունքների բավարարման միջոցների, այլև պատկերացման մեջ և այնուհետև բառային արտահայտության մեջ նշանակում են դրանք որպես առարկաներ, որոնք «բավարարում են» իրենց պահանջները և դրանով իսկ հենց իրենց»<sup>3</sup>։

<sup>1</sup> Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Հնակելու, Հնակեր երկեր, II, 1950, էջ 95։

<sup>2</sup> Նույն աեղը, էջ 97։

<sup>3</sup> Կ. Մարքս և Փ. Էնգելս, Сочинения, XV, էջ 462։

Ինչպես է ընթանում լեզվի զարգացման և տարբեր լեզուների փոխարարերության պրոցեսը։ Լեզուներին հատուկ են մի կողմից՝ ընդհանուր օրենքներ ու կատեգորիաներ, մյուս կողմից՝ առանձնահատուկ կողմեր. առանձին լեզուների զարգացումը կազմում է հենց այն տարրերությունը, որ կա առանձինի և ընդհանուրի միջև. «... թեև ամենից ավելի զարգացած լեզուները ունեն օրենքներ և սահմանումներ, որոնք ընդհանուր են ամենից ավելի քիչ զարգացածների հետ, բայց հենց տարրերությունը այդ համընդհանուրից և ընդհանուրից այն է, ինչ կազմում է նրանց զարգացումը»<sup>1</sup>:

Լեզվի զարգացման բաժանող ու միասնականացնող տեղենցների բնույթն ու շափր տարրեր է լինում պատմական տարրեր էպոխաներում։ Տոհմատիրական կարգերում իշխում է բաժանման, տրոհման պրոցեսը, որը հանգեցնում է լեզվական տարրերությունների գոյացման։ «Թաժանման մը շատ ան տական տենդենցը, — գրում է Մարքսը, — արմատավորված էր տոհմական կազմակերպության տարրերի միջ. այն ուժեղանում էր լեզվի մեջ տարրերությունների կազմականությունը, որը անխուսափելի է նրանց (այն է՝ վայրենի ու բարբարոսական ցեղերի) հասարակական դրությամբ և նրանց զրադեցրած տերիտորիայի բնդարձակությամբ։ Թեև բանավոր խոսքը հիանալի կերպով կայուն է իր բառային կազմով և է՛լ ավելի կայուն իր քերականական ձևերով՝ բայց այն շի կարող անփոփոխ մնալ։ Տեղային մասնատվածությունը՝ տարածության մեջ՝ ժամանակի ընթացքում հանգեցնում էր լեզվական տարրերությունների երկան գալուն. սա էլ հասցնում էր շահերի առանձնացման և լիակատար ինքնուրույնության»<sup>2</sup>:

Առանձնապես կարեռ տեղ են հատկացնում մարքսիզմի կլասիկները ազգային լեզուների կազմավորման հարցերին։ Մարքսը և էնգելսը ազգային լեզուների կազմավորման երեք տարրեր ուղիւն նշում՝ կապված ազգերի կազմավորման պրոցեսի առանձնահատկությունների հետ. «... Յուրաքանչյուր ժամանակակից զարգացած լեզվում, — գրում են նրանք, — բնականորեն առաջացած

<sup>1</sup> К. Маркс, К критике политической экономии, 1953, № 195.

<sup>2</sup> К. Маркс, Конспект книги Г. Моргана „Древнее общество“, Архив Маркса и Энгельса, IX, 1941, № 79.

խոսքը բարձրացել է մինչև ազգային լեզու մասամբ շնորհիվ լեզվի պատմական զարգացման պատրաստի նյութի, ինչպես ոռմանական և գերմանական լեզուներում, մասամբ շնորհիվ ազգերի խաչավորման ու խառնման, ինչպես անգլերեն լեզուում, մասամբ շնորհիվ բարբառների համակենտրոնացման միասնական ազգային լեզվի մեջ՝ պայմանավորված տնտեսական ու քաղաքական համակենտրոնացմաբ»<sup>1</sup>: Կապիտալիզմի՝ ֆեոդալիզմի դեմ տարած հաղթանակի էպոխան բնութագրվում է լեզվական միասնականացման ուժեղ տենդենցների առկայությամբ, որովհետև լեզվական միասնությունը կապիտալիստական հարաբերությունների զարգացման անհրաժեշտ պայմանն է: Կապիտալիստական հարաբերությունների ձևավորման պրոցեսը ուղեկցվում է մեկ լեզվով խոսող տերիտորիաների միավորման ու լեզուն գրականության մեջ ամրապնդելու պրոցեսով. «Ամբողջ աշխարհում ֆեոդալիզմի դեմ կապիտալիզմի տարած վերջնական հաղթանակի շրջանը,— գրում է Լենինը,— կապիտած է ազգային շարժումների հետ: Այդ շարժումների տնտեսական հիմքն այն է, որ ապրանքային արտադրության վերջնական հաղթանակի համար անհրաժեշտ է, որ բոլոր տագիան նվաճի ներքին շուկան, անհրաժեշտ է պետական համախմբում այն տերիտորիաների, որոնց բնակչությունը խոսում է միանուն լեզվով, վերացնելով այդ լեզվի զարգացման և գրականության մեջ այն ամրապնդելու դեմ եղած բոլոր արգելքները: Լեզուն մարդկային հաղորդակցման կարևորագույն միջոց է: Լեզվի միասնությունը և անարգել զարգացումը իրոք ազատ ու լայն, ժամանակակից կապիտալիզմին համապատասխանող առեւտրական շրջանառության, բնակչության բար բոլոր առանձին դասակարգերի ազատ և լայն խմբավորման կարևորագույն պայմաններից մեկն է, վերջապես սերտ կապի պայման է շուկայի և ամեն կարգի ու յուրաքանչյուր տնտեսատիրոջ և տնտեսատիրիկի, վաճառորդի և գնորդի միջև»<sup>2</sup>:

Նշելի է, որ մարքսիզմի կլասիկների համար լեզվի ուսումնասիրությունը սերտորեն կապվում է հասարակական պրակտիկայի հետ: Լեզվաբանությունը ոչ միայն պետք է նկարագրի ու բացատրի երեսությունները, այլև օգնի հասարակության կոնկրետ խնդիրների իրագործմանը, մշակի այն սկզբունքները, որոնցով պետք է ընթա-

<sup>1</sup> К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, IV, § 414 (II հ.р., § 427).

<sup>2</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, § 492—493.

նա ազգային գրական լեզուների գարգացման ու մշակման պրոցեսը: Լեզվական տեսության սերտ կապ լեզվական պրակտիկայի հետ—ահա մարքսիստական լեզվաբանության կարևոր դրույթներից մեկը:

Սովետական լեզվաբանության զարգացման հիմնական էտապները.—Սովետական լեզվաբանությունը դիմեկտիկական մատերիալիզմի փիլիսոփայական հիմքերի վրա ձեռվորվելու պրոցեսում անցնում է 3 հաջորդական էտապներ. 1) 1917—1923 թթ., երբ դեռևս առկա են գրեթե այն բոլոր ուղղությունները, որոնք գործում էին նախասովետական շրջանի Ռուսաստանում, այլև նկատվում է արտասահմանյան լեզվաբանության որոշ հոսանքների ազդեցությունը. սակայն սովետական գիտության մարքսիստական վերակառուցման ընդհանուր խնդրի հետ կապված՝ սկսում են հանդես գալ լեզվական երեսութների մարքսիստական մեկնաբանության և նախասովետական ու ժամանակակից արտասահմանյան լեզվաբանական ուղղությունների մարքսիստական քննադատության փորձեր: 2) 1924—1950 թթ., երբ իդեոլոգիական քնագավառի ընդհանուր տեղաշարժերի հետ կապված՝ ուժեղանում են մարքսիզմը լեզվաբանության մեջ արմատավորելու փորձերը, թեև զրանք ոմանց մոտ հանգեցնում են մարքսիզմի գուհակացման և նախորդ լեզվաբանության նվաճումների նիհիլիստական ժխտման: Տիրապետող լեզվաբանական ուղղության՝ «լեզվի նոր ուսմունքի» ներկայացուցիչների ուշադրությունն ուղղված է լեզուների հնէարանական վերլուծության և ստագիալ զարգացման ու տիպավորման հարցերի վրա, ընդ որում ստագիաների և ստագիալ անցումների ըմբռնման մեջ երևան է գալիս մատերիալիստական դիալեկտիկայի խեղաթյուրված մեկնաբանությունը: «Լեզվի նոր ուսմունքի» դրույթները ազդեցություն են գործում նույնիսկ այդ ուսմունքի նկատմամբ քննադատաբար տրամադրված անձերի վրա: 3) 1950 թ. մինչև մեր օրերը, երբ հաղթահարվիմ են «լեզվի նոր ուսմունքի» սիմաները, աշխատանք է տարվում մարքսիզմը առանց խեղաթյուրումների լեզվաբանության մեջ արմատավորելու ուղղությամբ. մարքսիզմի ուղենիշ լույսի տակ ի մի են բերվում և քննադատաբար ու ստեղծագործաբար օգտագործվում լեզվարանական ողջ ժառանգության լավագույն կողմերը:

Լեզվաբանական աշխատանքի բնույթն ու տիպերը. սովետական լեզվաբանության գործնական ու տեսական խնդիրները.—Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեռլուցիայից անմիջապես

Հետո սովետական լեզվաբանության առջև դրվեցին մի շարք գործնական ու տեսական խնդիրներ: Գործնական խնդիրները կապված էին առաջին հերթին նախկին ոուսական կայսրության բազմաթիվ մեծ ու փոքր ժողովուրդների ազգային վերածնության և Սովետական պետության ազգային քաղաքականության հետ: Ոչ մի լեզվաբանության առջև դեռևս այդպիսի լայն մասշտաբի խնդիրներ չէին դրվել: Այդ գործնական խնդիրները հետևյալներն էին.

1) Նոր այբուրենների ստեղծում և ուղղագրական հարցերի մշակում.—Սովետական լայնածավալ երկրում գտնվող շատ ժողովուրդներ ընդհանուրապես զուրկ էին գրից ու գրականությունից. այդպիսի գրազուրկ լեզուներից էին աբխազերենը, թարասարաներենը, աղբյուրենը, նանայերենը, չուկուրենը, կոմին, տունգուսերենը, գոլգերենը և այլն: Անհրաժեշտ էր լայն աշխատանք ծավալել այդ լեզուների հնչյունական կառուցվածքի, հնչույթային կազմի ու առանձնահատկությունների ուսումնասիրության ուղղությամբ. այս բանը հաջողությամբ կատարելու համար կային բոլոր անհրաժեշտ նախապայմանները, մանավանդ որ մեր երկիրը ուներ որակյալ հնչյունագետուններ և հնչույթի ուսմունքի հայրենիքն էր: Զգալի թիվ էին կազմում և այն ժողովուրդները, որոնք օգտվում էին իրենց լեզուների հնչյունական կառուցվածքը բավարար շափով շարտացող գրությունից (հատկապես արաբական գրությունից). զրանք գերազանցապես թյուրքական ժողովուրդներն են՝ աղբբեշանցիները, ուզբեկները, թաթարները և այլն: Այբուբենների ստեղծման ուղղությամբ կատարված աշխատանքի հետեանքով շուրջ 50 ժողովուրդներ ստացան գրության համապատասխան սիստեմներ. արաբական գրությունից օգտվող ժողովուրդներն անցան լատինական, ապա ոուսական հիմքի վրա կառուցված այբուբենների: Հին գիր ու գրականություն ունեցող լեզուների ուղղագրությունը ժամանակակից արտասանությանը մոտեցնելու նպատակով կատարվում են ուղղագրական բարեփոխություններ Ռուսաստանում և Հայաստանում:

2) Նոր գրական լեզուների բարբառային հիմքի որոշում.—Գրի և գրականության ստեղծման աշխատանքը սերտորեն կապվում էր նոր գրական լեզուների բարբառային հիմքի որոշման աշխատանքի հետ: Այս խնդրի լուծումը իր հերթին պահանջում էր կատարել բարբառների տեսակարար կշիռը և առանձնահատկությունները, որոշել բարբառների տեսակարար կշիռը և առանձնահատկությունները, մշակել գրական լեզվի զարգացման անհրաժեշտ նորմաներ

և՝ ուղղագրության, և՝ ուղղախոսության, և՝ քերականության, և՝ բառակազմության ու բառափոխառության բնագալառների համար:

3) Նորմատիվ և նկարագրական քերականությունների ըստեղծում.—Նորագիր ժողովուրդների համար դպրոցական քերականությունների ստեղծումը առաջնահերթ անհրաժեշտություն էր: Սրա հետ միապին անհրաժեշտ էր գիտական քերականություններ ստեղծել այն լեզուների համար, որոնք թեև երկարատև գրական տրադիցիա ունեին, բայց չունեին գիտական քերականություններ: Պետք է նշել, որ դպրոցական և գիտական քերականությունների ստեղծման աշխատանքը զերծ չի մնում որոշ թերություններից. առանձնապես նշելի է ուսական քերականությունների մեխանիկական ընդօրինակման փաստերի առկայությունը. սրա հետեւ վանքով որոշ դեպքերում անհրաժեշտ լուսաբանություն չեն ստանում տվյալ լեզուների կառուցվածքային որոշ առանձնահատկությունները և, ընդհակառակն, ներմուծվում են այնպիսի համագություններ ու տերմիններ, որոնք այդ լեզուների համար ավելորդ են:

4) Բառարանների տարրերի տիպերի ստեղծում.—Բառարանագրական աշխատանքի ծավալումը սովետական լեզվարանության կարևոր խնդիրներից մեկն էր: Խուսաց լեզվի կուլտուրական կարեւոր գերր անհրաժեշտ էր դարձնում ոսուսերենի հետ առընչվող թարգմանական բառարանների ստեղծումը: Սրա հետ միասին ազգային գրական լեզուների զարգացումը պահանջում էր ստեղծել բացատրական, տերմինաբանական, ուշագրական և այլ տիպի բառարաններ: Այս աշխատանքը զուգակցվում է բառարանագրական-բառագիտական տեսական խնդիրների մշակման հետ:

5) Խուսաց լեզվի և սեփական գրական լեզվի ուսուցման մեթոդիկայի մշակում.—Ազգային դպրոցներում ոսուսաց լեզվի ուսուցումը, այլև ազգային գրական լեզուների դասավանդումը անհրաժեշտարար կապվում էին դասավանդման մեթոդիկայի մշակման խնդրի հետ: Հարկավոր էր խոր կերպով ուսումնասիրել ոսուսաց լեզվի և տվյալ ազգային լեզվի կառուցվածքային առանձնահատկությունները, մշակել ազգային գրական լեզուների դասավանդման ուսցիունալ մեթոդներ, մանավանդ որ խնդիր էր դրվում անգրագիտության վերացման և գրագիտության մասսայական տարրածման: Կարեւոր էր նաև օտար լեզուների դասավանդման հարցերի մշակումը, որշափով որ օտար լեզուների ուսուցումը կազմում էր սովետական կրթական սիստեմի անհրաժեշտ մասը:

6) Բուհական դասագրքերի ու ձեռնարկների և լեզվաբանական տրակավորումը բարձրացնող աշխատությունների ստեղծում.— Նախկին հատուկնությունների փոխարեն համալսարանների ու ինստիտուտների (մանավանդ ազգային ուսուցչության կազմության գանակական ամբ պահանջում էին ստեղծել համապատասխան դասագրքեր, ձեռնարկներ ու աշխատություններ, հրապարակել մասսայական ամսագրեր։ Ստեղծվում են ընդհանուր լեզվաբանության, լեզվի պատմության, համեմատական քերականության դասագրքեր, մշակվում են առանձին հարցեր, թարգմանվում են լեզվաբանական կարեռագույն բազմաթիվ աշխատություններ և այլն։ Լեզվական հարցերին տեղ է տրվում ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի և առանձին ուսուցչության հարցեր, թարգմանվում են լեզվաբանական կարեռագույն բազմաթիվ աշխատություններ և այլն։ Լեզվական հարցերին տեղ է տրվում «Հարցեր, թարգմանվում են լեզվաբանական կարեռագույն բազմաթիվ աշխատություններ և այլն։ Լեզվական հարցերին տեղ է տրվում «Վորոս յազык в школе» և «Иностранный язык в школе» ամսագրերում։ 1952 թ. սկսած՝ յուս է տեսնում «Вопросы языковедения» երկամսյա պարբերական հանդեսը։

7) Օգնություն այլ գիտություններին.— Սովետական լեզվաբանության կարեռ գործնական խնդիրներից մեկն էլ մյուս գիտություններին գործնական օգնություն ցույց տալն էր նրանց ամենարյա աշխատանքում։

Սովետական լեզվաբանության առջև դրված տեսական խրնդիրները կապվում էին մի կողմից՝ իդեոլոգիական բնագավառում կատարվող ընդհանուր տեղաշարժերի, մյուս կողմից՝ հիշված գործնական խնդիրների լուծման հետ։ Նախորդ լեզվաբանության տեսական հիմունքների քննադատական վերանայման և մարքսիզմի արմատավորման աշխատանքը սովետական լեզվաբանների մոտ չէր կարող սնրուորեն չգույքակցվել գործնական խնդիրների հետ, որոնց իրագործումը պահանջում էր համապատասխան տեսական բազա։ Սովետական լեզվաբանության առջև դրված տեսական խնդիրները հետևյալներն էին։

1) Մարքսիզմի արմատավորում լեզվաբանության մեջ, լեզվաբանական տեսության և պրակտիկայի վերակառուցում մարքսիզմի պահանջներին և սովետական կուլտուրական շինարարության խնդիրներին համապատասխան։— Այս խնդրի լուծումը, ինչպես նշվեց, հարթ լընթացավ։ Երկար ժամանակ տիրապետություն հասաւուեց Ն. Յանցուածուական պահանջում էր համապատասխան տեսական բազա։ Սառի և նրա հետևորդների վուլգար սոցիոլոգիական «լեզվի նոր ուսմունքը»։ սրա հետ միասին շատ

լեզվաբաններ շարունակում էին մարքսիզմի ինքնուրույն ստեղծագործական կիրառման աշխատանքը, որն աննախընթաց ծավալ ու թափ է ստանում «Պրավդա» թերթում սովետական լեզվաբանության վիճակին նվիրված դիսկուսիայից (1950 թ.) հետո, երբ վոլգար սոցիոլոգիզմը լվերջնականապես հաղթահարվում է: Ե՛վ «լեզվի նոր ուսմունքի», և՝ մարքսիզմի ինքնուրույն ստեղծագործական կիրառման փորձերի մասին կիսուենք բուն շարադրանքի մեջ:

2) Պատմական ու ստատիկ վերլուծության եղած մասնահատուկ մեթոդների մշակում ու կատարելագործում, դրանց համապատասխան եցում դիալեկտիկական մեթոդի պահանջներին, լեզվաբանական վերլուծության նոր մեթոդների ստեղծում.—Այս խնդիրը սովետական լեզվաբանության ամենակարևոր խնդիրներից մեկն էր, և սրա լուծումը խիստ անհրաժեշտ էր սովետական լեզվաբանության հիշված գործնական խնդիրների լուծման համար: Այս մասին ևս կիսուենք առաջիկայում:

3) Արտասահմանյան լեզվաբանական հոսանքների իդեալիստական հիմքերի քննադատություն, նրանց ազդեցության հաղթահարում, նրանց նվաճումների քննադատական օգտագործում.—Այս խնդիրի իրագործման հետ կապված լույս են տեսնում բազմաթիվ հոդվածներ ու գրքեր, որոնց մեջ արծարծվում են արտասահմանյան լեզվաբանական հոսանքների քննադատական օգտագործման հարցերը, տրվում է լեզվական հարցերի իդեալիստական ու մեխանիկական մեկնաբանությունների քննադատությունը: Հրավիրվում են դիսկուսիաներ՝ նվիրված լեզվաբանության զանազան ակտուալ հարցերին:

4) Հայրենական լեզվաբանության նվաճումների քննադատական օգտագործում, գոյություն ունեցող լեզվաբանական հոսանքների իդեալիստական կողմերի հաղթահարում, այդ հոսանքներին հարող լեզվաբանների հայացքների մարքսիստական վերակառուցում, նրանց ներքաշում սովետական լեզվաբանության առջև դրված տեսական և գործնական խնդիրների լուծման մեջ.—Սովետական լեզվաբանների ուշադրության կենտրոնում եղած կարևոր խնդիրներից մեկը հայրենական լեզվաբանության նվաճումների, այդ թվում և ուսուցչություն գենոկրատների լեզվաբանական ժառանգության քննադատական օգտագործումն է: Սովետական կարգերի համատումից անմիջապես հետո, բացի այն ուղղությունից, որ հենվում էր մարքսիզմի վրա և աստիճանաբար տիրապետող դառ-

նում, կային նաև լեզվաբանական այլ կոնցեպցիաներ, մեթոդոգիական այլ հիմքեր ունեցող հոսանքներ: Սովետական շրջանում աշխատանք է տարվում այս ուղղությունների մեթոդոգիական-փիլիսոփայական հիմքերի իդեալիստական կողմերի հաղթահարման և լեզվաբանական տեսության ու մեթոդների բնագավառում նրանց ձեռք բերած նվաճումների օգտագործման գծով: Այդ աշխատանքը գնում է մասամբ իրենց իսկ՝ այս կամ այն ուղղության հարող հեղինակների հայացքների էվոլյուցիայի և սեփական իդեոլոգիական սխալների հաղթահարման, մասամբ էլ սովետական այլ գիտնականների կողմից ծավալված քննադատության միջոցով: Վերջին դեպքում ուշադրության են առնվում ոչ միայն կենդանի լեզվաբանների աշխատանքները, այլև նախորդ լեզվաբանական ժառանգության քննադատական վերանայման հարցերը: Այս աշխատանքը լայն ծավալ է ստանում հատկապես «լեզվի նոր ուսմունքի» հաղթահարումից հետո, երբ վերացվում են նախորդ լեզվաբանական ժառանգության նկատմամբ նիհիլիստական լիերարմունքի հետքերը:

5) Սերտ համագործակցություն այլ գիտությունների ու գիտական դիսցիպլինների հետ.— Սովետական լեզվաբանները չեն կարող շգործակցել գրականագետների, հոգեբանների, ազգագրագետների, փիլիսոփաների, տրամաբանների, հնագետների և այլ մասնագետների հետ: Նշելի է, որ լեզվի ծագման, լեզվի և մտածողության փոխհարաբերության ու այլ հարցերում սովետական լեզվաբաններին փոխադարձաբար օգնում են հնագետները, հոգեբանները և այլն:

Սովետական լեզվաբանության առջև դրված տեսական խրնդիրները միանգամից լուծում ստանալ չեն կարող: Պահանջվում էր որոշ ժամանակ, մինչև որ լեզվաբանների հին սերունդը անհրաժեշտ չափով կծանոթանար դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի հիմունքներին, մարքսիզմը կդարձներ լեզվաբանական հարցերի մեկնաբանության հիմք, կհրաժարվեր նախորդ կոնցեպցիաներից, կկարողանար քննադատական լուրջ վերաբերմունք ցույց տալ ամեն կարգի իդեալիստական մեկնաբանությունների հանդեպ: Ոչ պակաս ժամանակ էր պահանջվում լեզվաբանական այնպիսի նոր կադրերի հանդես գալու համար, որոնք ոչ միայն կյուրացնեին մարքսիզմը և կիործեին այն հետեղականորեն կիրառել լեզվաբանության մեջ, այլև կյուրացնեին լեզվաբանության նախորդ նվաճումները, անհրաժեշտ լեզվաբանական պատրաստա-

կանություն կստանային՝ սովետական լեզվաբանության տեսական և գործնական խնդիրների լուծման նախաձեռնությունը իրենց ձեռքը վերցնելու համար։ Սրանց միանում էր և այն, որ սովետական լեզվաբանության առջև դրված գործնական խնդիրների վիթխարի ժավալը սկզբնապես կարծես փոքր-ինչ ավելի ետին պլանն էր մղում տեսական հարցերը. լեզվաբանների հին ու նոր սերունդների ներկայացուցիչները գործնական հարցերի լուծման որոնումների մեջ կարծես մոռանում էին տեսական հարցերի սրության մասին, կիրառական լեզվաբանությունը դառնում էր լեզվաբանների ուշադրության գլխավոր առարկան։ Սակայն այս վիճակը երկար շարունակվել շեր կարող. շուտով տեսական հարցերը սկսում են գրավել իրենց արժանի տեղը, թեե դրանց լուծումը սկզբնապես դեռ շատ հեռու էր մարքսիզմի իսկական պահանջներին համապատասխանելուց։

Լեզվաբանության վիճակը սովետական կարգերի գոյության սկզբնական շրջանում.— 1917 թ. հետո շարունակվում է հայրենական լեզվաբանության մեջ գոյություն ունեցող լեզվաբանական հոսանքների գործունեությունը, այլև հանդես է գալիս արտասահմանյան լեզվաբանական նորագույն կոնցեպցիաների ազդեցությունը: Եթե ոմանք փորձում են դրանց նվաճումներն օգտագործել անհրաժեշտ մարքսիստական քննադատությունից հետո, ապա մյուսները պարզապես նույնությամբ յուրացնում են այդ կոնցեպցիաները կամ յոկ էկլեկտիկական գուղորդում են կատարում: Քննարկվող շրջանում գործում են մի կողմից՝ հայրենական լեզվաբանության այնպիսի հոսանքների ներկայացուցիչներ, ինչպիսիք են պսիխոէսթետիզմը (պոտերնյայականությունը), պսիխոֆունկցիոնալիզմը (Բողուէն-դե-Կուրտենեի դրագուրոցը), պսիխոլոգիզմը (Շախմատովը և նրա հետեւորդները), պսիխոֆորմալիզմը և ֆորմալիզմը (Ֆորտառնատովի հետեւորդները, Պեցկովսկին ու նրա աշակերտները), մյուս կողմից՝ արտասահմանյան լեզվաբանության այնպիսի ուղղությունների հետեւորդները, ինչպիսիք են սոցիոլոգիզմը (սոսյուրականությունը), էսթետիզմը (Փոսլերականությունը): Հաճախ հանդես են գալիս սրանց սկրզբունքները էկլեկտիկորեն զուգորդելու փորձեր, ինչպես, օրինակ՝ Պեշկովոկու մոտ, որ աշխատում է հաղթահարել սկզբնական ծայրահեղ ֆորմալիզմի թերությունները: Այս ուղղությունների ազդեցությունը շարունակում է գործել և հաջորդ ենթաշրջանում: Քանի որ այս ենթաշրջանի լեզվաբանական հիշյալ կոնցեպցիաները ա-

ուանձին օրիգինալություն շռնեն, ուստի և ավելորդ ենք համարում նրանց հանգամանալից լնութագիրը. կբավարարվենք դրանց համառու տեսությամբ:

Այս շրջանում հնից եկող լեզվաբանական հոսանքների մեջ ամենից ավելի ազդեցիկն ու նշանավորը Բողուեն-դե-Կուրտենեի դպրոցն էր: Սովետական տարիներին շարունակում էին դեռևս գործել ոչ միայն ինքը Բողուեն-դե-Կուրտենեն և Բոգորոդիցին, այլև Շերբան և Պոլիվանովը, որոնց լեզվաբանական գործունեությունը լայն թափ ու ծավալ է ընդունում հենց Սովետական իշխանության տարիներին: Այս ուղղության ներկայացուցիչների մոտ 1920-ական թվականների կեսերից հետո բեկում է նկատվում. փորձեր են արգում սուբյեկտիվ հոգեբանական ըմբռնումը հաղթահարել, լեզվի նկատմամբ կիրառել դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմի հիմնական սկզբունքները, հետեղականորեն անցկացնել լեզվի հասարակական ըմբռնումը: Այս ուղղության ներկայացուցիչները մեծ դեր են խաղացել կիրառական լեզվաբանության գործնական խնդիրների լուծման ուղղությամբ:

Տեղական հիմքեր ունեցող հոսանքների ներկայացուցիչներից Բողուեն-դե-Կուրտենեի ազդեցությունը հանդես էր գալիս համապատկես ընդհանուր տեսական և հնչյունաբանական հարցերի լուսաբանության, Պոտերնյայի ազդեցությունը՝ քերականագիտության, գրական լեզվի պատմության և ոճաբանության, Ֆորտունատովի և Պեշկովսկու ազդեցությունը՝ քերականության և պատմահամեմատական հետազոտության բնագավառում:

Պսիխոֆորմալիզմի և Փորմալիզմի ազդեցությունը առանձնապես տեսական բնույթ է ընդունում քերականության բնագավառում: Պեշկովսկին, Մ. Ն. Պետերսոնը, Դ. Ն. Ուշակովը և ուրիշները հանդես են գալիս լեզվական հարցերի նեղ «ձեւական»-ձեւաբանական ըմբռնմամբ: Քերականական հարցերի շուրջը 1920-ական թվականներին ծավալվում են սուր վեճեր ու դիսկուսիաներ, որոնց մասնակցում են Ա. Մ. Պեշկովսկին, Դ. Ն. Ուշակովը, Մ. Ն. Պետերսոնը, Լ. Վ. Շերբան, Ն. Ն. Դուռնովոն և ուրիշները: Պեշկովսկու կոնցեպցիան քննադատության է ենթարկվում Բուդդեի և Բուլախովսկու կողմից: Զնայած սրան՝ ձեւական ուղղության ներկարյացուցիչները կարողանում են հասնել այն բանին, որ դպրոցում

նրանց սկզբունքները ամուր հիմքեր են գցում. Ռուսաստանում՝ լուսժողկոմատը հատուկ ցուցում է տալիս ուսուցչությանը «ձեղական» ուղղության սկզբունքների կիրառման, քերականության ուսուցման մեջ դրանք արմատավորելու մասին։ Ֆորմալիզմը իր ծայրահեղությանն է հասնում Պետերսոնի աշխատություններում<sup>1</sup>.

Պետերսոնը առանձին բառեր է համարում միևնույն բառի բերականական տարբեր ձևերը, առաջարկում բառերի խմբերը տարրերելիս հիմք ընդունել միայն ձևական հատկանիշները և այն էլ յուրաքանչյուր դեպքում միայն մեկը։ «Մաքուր» ձևը ֆետիշացվում է և լիովին խզվում իմաստից. լեզվի և մտածողության, ձևի և բովանդակության խզումը հասնում է իր վերջին աստիճանին։ Եթե Ֆորտունատովը և նրա հետեւորդները գեռես գտնվում էին լեզվի հոգեբանական ըմբռնման ազդեցության տակ, հաճախ տառանվում ձևական և հոգեբանական ըմբռնումների միջև, ապա Պետերսոնը դեն է նետում լեզվի հոգեբանական ըմբռնման ամեն մի նշույլ. իր «Ռուսաց լեզվի շարահյուսության ուրվագծում» (1923 թ.) նա հրաժարվում է նախադասության գաղափարից՝ այն համարելով ոչ թե լեզվական, այլ հոգեբանական կատեգորիա. շարահյուսության ուսմունքը Պետերսոնը կառուցում է բառակապակցության ձևերի ուսմունքի հիման վրա։

Ձևական քերականությունը սովորական դպրոցներում իշխում է մինչև դպրոցի վերաբերյալ պարտիայի և կառավարության 1931—1932 թթ. որոշումները։

Սովետական կարգերի հաստատումից մեկ տարի առաջ լուս է տեսնում Սոսյուրի գիրքը։ Քանի որ մարքսիստական լեզվաբանությունը ենում էր լեզվի հասարակական բնույթի ըմբռնումից, ուստի և սովետական լեզվաբանները լեզվի և հասարակության փոխհարաբերության հարցի որոնումների մեջ չէին կարող լուսնաբան անցնել սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցիչների հայացքների կողքով։ 1920-ական թվականներին, երբ «լեզու և հասարակություն» թեման ընդհանուր ուշադրության առարկա է դառնում, նկատվում են այդ դպրոցի ազդեցության

<sup>1</sup> М. Н. Петерсон, Очерк синтаксиса русского языка, М., 1923. Русский язык, пособие для преподавателей, М., 1925.

տարբեր դրսեորումներ. այդ ազդեցությունն արտահայտվում է մասսամբ սոցիոլոգիական դպրոցի դրույթների անքննադատ յուրացման, մասսամբ նրա սկզբունքները էկլեկտիկորեն այլ սկզբունքների հետ զուղորդելու ձեռվ. սակայն արդեն նկատվում է հետեղական մարքսիզմի դիրքերից այդ ուղղությունը զնահատելու և քնննադատորեն օգտագործելու ձգտում:

Սույուրականության և Բողուևն-դե-Կուրտենեի ազդեցությունը արտահայտվում է նաև այն բանում, որ ոմանց կողմից ակնհայտ գերադասություն է տրվում սինխրոնիկ հետազոտությանը դիախրոնիկի հանդեպ: Թանի որ սովետական լեզվաբանության գործնական խնդիրները առաջին հերթին կապվում էին սինխրոնիկ հետազոտության հետ, ուստի և ոմանց մոտ ընդհանրապես նկատվում է նեղ պրակտիցիզմի և նեղ սինխրոնիզմի զուգորդման տեսդենց: Մրան շուտով միանում է և այն, որ Մաոր և նրա հետեղորդները ընդհանրապես բացասական դիրք են բռնում պատմա-համեմատական մեթոդի նկատմամբ:

Այս ենթաշրջանի հուզող հարցերի մեջ նշելի են լեզվի ֆունկցիոնալ տարրերակների, բանաստեղծական լեզվի, արձակի լեզվից ու խոսակցական լեզվից նրա ունեցած տարրերության, լեզվի կուտուրայի հարցերը: Այս հարցերով զբաղվում են տարրեր լեզվաբաններ՝ սրանով իսկ հանգելով լեզվի հաղորդակցական ֆունկցիայի խորացված ուսումնասիրության: Լ. Պ. Ցակուրինսկու հոդվածը դիալոգային խոսքի, Բ. Ա. Լարինի հոդվածը գեղարվեստական խոսքի տարրերակների, Վ. Վ. Վինոգրադովի հոդվածը ոճարանության խնդիրների մասին սրա լավագույն նմուշներից են<sup>1</sup>: Պատմական չէ, որ ժամանակակից ինֆորմացիոն տեսության մշակողները մեծ արժեք են տալիս սովետական շրջանի այս տեսություններին<sup>2</sup>: Ոճարանությանը հատուկ ուշադրություն է դարձնում և Պեշկովսկին, որը փորձում է բացահայտել իր ժամանակի լեզվական ճաշակի նորմաները, մշակել նորմատիվ ոճարանության հարցերը<sup>3</sup>:

<sup>1</sup> Русская речь, Сборник, I, 1923.

<sup>2</sup> Հմա. G. P. Springer, Early Soviet Theories in Communication, Cambridge, Mass., 1956.

<sup>3</sup> А. М. Пешковский, Методика, лингвистика, статистика. Сб. статей, М., 1923.

## «ԼԵԶՎԻ ՆՈՐ ՈՒՍՄՈՒՆՔԻ» ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ. ՏԻՐՈՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՏԱՊ (1924—1950 թթ.)

1. ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԿՈՆՑԵՊՑԻԱՆԵՐ — ԼԵԶՎԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ  
ԴԻԱԼԵԿՏԻԿԱ-ՄԱՍԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ  
ՓՈՐՁԵՐ

### 1. ՊՈՒԼԳԱՐ ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍՈՑԻՈՆԻՍՏԻՑՄ («ԼԵԶՎԻ ՆՈՐ ՈՒՍՄՈՒՆՔ»)

«Լեզվի նոր ուսմունքի» ձևավորման հախադրյալներն ու պայմանները. — Մարքսիզմի արմատափորումը սովետական լեզվաբանության մեջ հարթ ու հավասար չի կատարվում: Քառորդ դարից ավելի տիրապետող ուղղություն է դառնում Ն. Յա. Մառի ստեղծած «լեզվի նոր՝ ուսմունքը», որը իր բնույթով վուգար սոցիոլոգիական ուսմունք էր, մարքսիզմի հիմունքների գոեհիկ մեկնաբանություն լեզվի ուսումնասիրության բնագավառում: Վուգար սոցիոլոգիզմի՝ սովետական լեզվաբանության մեջ տիրապետող դիրքեր հաստատելը կապված էր մի շարք հանգամանքների հետ:

1) Ն. Յա. Մառի մինչ այդ դաշնամած լեզվաբանական ուսմունքի՝ «Հարեթաբանության» մեջ, որ 1923 թ. վերջերից վերամկրտվում է «լեզվի նոր ուսմունք» անունով, արդեն առկա էին լեզվի վուգար սոցիոլոգիական մեկնաբանության սաղմեր և բնդհանրապես այն սկզբունքների տարրերը, որոնք կազմում են «լեզվի նոր ուսմունք» հիմքը: Այսպես, օրինակ, գեռնես 1903 թ. իր «Հին հայերենի քերականություն» աշխատության մեջ նա գրում էր. «Գծագրվում են փաստեր հօգուտ այն բանի, որ նա ( հին հայկական գրական լեզուն, գրաւարը — Գ. Զ.) առաջներում ծառայել է որպես կենդանի հազորդակցության գործիք, որ մշակվել է քաղաքականորեն իշխող հասարակության շրջանում հայ արքունիքի, քուրմերի և տեղական իշխանների, նախարարների հեթանոսականորեն կրթված դասի խոսքի միջոցով»<sup>1</sup>: Հասկանալի է, որ այս ըմբռնումը հեշտ էր հետագայում վերածել լեզվի դասակարգյնության գաղափարի, գրաւարը համարել ֆեոդալական դասակարգի լեզուն և այն հակադրել գյուղացիական լեզու-բարբառներին: Այդ նույն ձևով էլ Ն. Յա. Մառի սկզբնական ուսմունքի մեջ արդեն կային լեզուների զարգացման պրոցեսում լեզուների ու բարբառ-

<sup>1</sup> Н. Я. Марр, Грамматика древнеармянского языка, СПб., 1903, § XXIII.

ների անընդհատ նվազման, լեզուների խաշավորման դերի շափազնցված ըմբռնման, բոլոր լեզուների խառն ու խաշավորված լինելու, հաբեթական լեզուների հատուկ դերի և ընդհանրահանության դրույթների սաղմերը։ Մրան միանում էր և այն, որ Մառը երբեք հետևողականորեն չի կիրառել պատմա-համեմատական մեթոդը, դեռ շատ վաղուց դիմել է կամայական ստուգաբանությունների և այսպես կոչված էլեմենտային վերլուծության։ Այսպիսով, Մառի նախորդ գործունեությունը, մարքսիզմը կիսատպուտ յուրացնելու պայմաններում, նրան հնարավորություն էր տալիս իր նախորդ ուսմունքը հայտարարելու տարերացին «մարքսիստական» ուսմունք։ 1923 թ. վերջերին նա ի լուր ամենքի հայտարարում է հաբեթաբանության մեջ կատարված նոր շրջադարձի մասին, որով, ըստ նրա, այն լիովին սկսում է համբնկնել մարքսիզմի հետ։ Հաբեթաբանությունը վերանվանվում է «լեզվի նոր ուսմունք»։ Այս «շրջադարձը» սկսում են ներկայացնել իրեւ մարքսիստական լեզվաբանության սկիզբը։

2) Վոլգար սոցիոլոգիզմը իր երկվորյակներն ուներ նաև այլ բնագավառներում՝ պատմագրության, գրականագիտության, արվեստագիտության մեջ։ Պատահական չէ, որ Մառի «լեզվի նոր ուսմունքը» մեծ դրվատանքով ընդունեցին այդ բնագավառների այնպիսի հեղինակություններ, ինչպիսիք էին Պոկրովսկին, Ֆրիչեն և ուրիշները։ Պոկրովսկին, որ հայտնի էր պատմության հարցերի վոլգար սոցիոլոգիական իր ըմբռնմամբ, «Խզվեստիա» թերթի 1928 թ. մայիսի 23-ի համարում գրում էր. «Եթե էնգելսը դեռևս ապրելիս լիներ մեր մեջ, Մառի տեսությամբ այժմ կզբաղվեր ամեն մի կոմբուհական, որովհետև այն կմտներ պատմության մարքսիստական ըմբռնման երկաթյա կահույքի մեջ»։ Նույնպիսի դրվատանքով էր խոսում Մառի «լեզվի նոր ուսմունքի» մասին նաև դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի հարցերի մեկնարանության մեջ իր իդեալիստական շեղումներով։ Հայտնի Դերորինը։ Մառն ինքը մարքսիզմի և մարքսիստական փիլիսոփայության հիմունքները «յուրացրել» էր ոչ այնքան մարքսիզմի կլասիկներից, որքան Թուխարինի, Դերորինի, Ֆրիչեի և այլոց աշխատություններից։ Մառի հաջողությունն ապահովում էր և այն, որ նա իր բոլոր կարգի լեզվաբանական մարզանքները քողարկում էր բարձրագույն մարքսիստական ֆրազներով՝ ստեղծելով մարքսիստական լեզվաբանության մշակման պատրանք։

3) Օգտագործելով սովետական լեզվաբանության մեջ իդեա-

լիզմի հաղթահարման ուղղությամբ տարվող պայքարը՝ Մառը և նրա հետեւրդները աստիճանաբար ղեկավարող դիրքեր են գրավում սովետական լեզվաբանական կարեւրագույն հիմնարկներում, «լեզվի նոր ուսմունքը» հրամցնում որպես լիովին մարքսիստական ուսմունք, ճշշում նրա դեմ ուղղված քննադատության ամեն մի փորձ: Մայրահեղության հասնելով այս պայքարի մեջ, «լեզվի նոր ուսմունքի» դեմ ուղղված ամեն մի քննադատություն ներկայացնելով որպես բուրժուական դիրքերից եկող քննադատություն՝ Մառը և նրա «աշակերտները» փաստորեն սկսում են մի կույտի մեջ նետել նախորդ լեզվաբանության, այդ թվում և հայրենական լեզվաբանության դրականն ու բացասականը, հրաժարվել նախորդ քոլոր նվաճումներից, բոլոր դեպքերում նախորդ լեզվաբանությունը փոխարինել սեփականով: Մարքսիստական էր համարվում այն բոլորը, ինչ այս կամ այն շափով հակադրվում էր նախորդ լեզվաբանությանը, լիներ այն ծից թե սիսալ, փաստերով հիմնավորված թե անհիմն: Մառին և սրա հետեւրդներին հատուկ էր ծայրահեղ նիհիլիզմը. լեզվաբանական գրեթե ողջ ժառանգությունը հայտարարվում էր բուրժուական, դատապարտվում նրանից օգտվելու ամեն մի փորձ, հավասար մակարդակի վրա էին դրվում նախորդ գրեթե բոլոր լեզվաբանները, անպետք էր համարվում ոչ միայն ողջ նախորդ լեզվաբանական տեսությունը, այլև մեթոդը. պատմահամեմատական մեթոդը համարվում էր ֆորմալիստական մեթոդ: Եւսոի «լեզվի նոր ուսմունքի» տարածմանը նպաստում է և այն, որ սովետական իրականության մեջ դեռևս հնից մնացած լեզվաբանական ուղղությունների ներկայացուցիչների մի մասը հեռու էր կանգնած մարքսիզմից և ակնհայտ անբարյացակամությամբ էր վերաբերվում լեզվարանության մեջ մարքսիզմի արմատավորման փորձերին, երկրորդ մասը մարքսիզմը իր լեզվաբանական կոնցեպցիային հարմարեցնելու վեհերու փորձեր էր կատարում միայն, վերջապես երրորդ մասը թեև շարժվում էր դեպի մարքսիզմ, բայց դանդաղ կերպով: Մրանց հակառակ Մառի կատարած կրտրուկ շրջադարձը նրան դրեց ավելի նպաստավոր պայմանների մեջ: Քերականության բնագավառում ֆորմալիզմի դեմ տարվող պայքարը է՛լ ավելի ամրացրեց Մառի և նրա հետեւրդների դիրքերը, որոնք սկսեցին այդ պիտակից շատ ավելի օգտվել իրենց հակառակորդների դեմ պայքարելիս, քան պետք է:

Այս բոլորով հանդերձ, մարքսիզմի անբավարար յուրացումը և լեզվի վուգար սոցիոլոգիական ըմբռնումը Մառին ու նրա հետե-

վորդներին հիմք են տալիս յուրացնելու բոլոժուական արևմուտքի այնպիսի փիլիսոփայական, լեզվաբանական ու այլ կարգի կոնցեպցիաներ, որոնք նրանց թվում են մարքսիզմին մոտ: Մառն ինքը յուրացնում է դե-Ֆրիզի մուտացիաների տեսությունը որպես դիալեկտիկական բնույթի ուսմունք, մեծ շափով օգտագործում նեռկանտական իդեալիստ փիլիսոփա Կասսիրերին, ֆրանսիացի սոցիոլոգ Լիի-Բրյուլին և ուրիշներին: Մառի հետևորդները ևս այս հարցում գերծ չեին իրենց ուսուցչի ոյուրահավատությունից. նրանք հաճախ էին դիմում Սեպիրի, Ուզենբեկի, Սոմբերֆելտի և ուրիշների բերած փաստերին ու եզրակացություններին, լեզվի ստագիալ-թոփչքածն զարգանալու ուսմունքը փորձում հիմնավորել նրանց տվյալներով: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ «լեզվի նոր ուսմունքը» բավարար հիմքեր չեր տալիս արտաքահմանյան բոլոժուական լեզվաբանական ուսմունքների քննադատության համար, և այդ ուսմունքի տիրապետության շրջանում դրանց կազմակերպված քընադատություն չեր տարվում:

Վուգար սոցիոլոգիզմի վերջնական հաղթահարումը կատարվում է 1950 թ. «Պրավդայի» դիսկուսիայից հետո, որի մասին կիսունք ստորև: Սակայն մարքսիզմի գուշհկացման, դիալեկտիկական մատերիալիզմի վուգար-սոցիոլոգիական մեկնարանության դեմ պայքարելու փորձեր առկա էին դեռևս «լեզվի նոր ուսմունքի» տիրապետության շրջանում, մինչև 1950 թ.: Այդպիսի փորձեր առանձնապես շատ էին տեղի ունենում 1920—1930-ական թվականներին (մանավանդ 1920-ական թթ. վերջերին և 1930-ական թթ. սկզբներին), երբ «լեզվի նոր ուսմունքը» նոր էր տիրապետող դիրքեր գրավում: Սակայն այդ շրջանում «լեզվի նոր ուսմունքի» քննադատության փորձերը շհասցրին նրա վուգար սոցիոլոգիական սխալների հաղթահարմանը. բացի այն բանից, որ լեզվաբանական վուգար սոցիոլոգիզմը աջակցություն էր գտնում պատմության, արվեստի, փիլիսոփայության բնագավառի որոշ հեղինակավոր անձնավորությունների կողմից, այսուեղ դեր խաղացին նաև մի շարք այլ հանգամանքներ:

ա) «լեզվի նոր ուսմունքի» դեմ պայքարը սկզբնապես տարվում էր հատկապես զանազան իդեալիստական հոսանքների և մարքսիզմը մինչև վերջ շյուրացրած լեզվաբանների կողմից: Այս դեպքում պետք է նշել հատկապես սուրյեկտիվ հոգեբանական ուղղության ներկայացուցիչներին (Ե. Դ. Պոլիկանով և ուրիշներ): Հասկանալի է, որ այդ պայմաններում «լեզվի նոր ուս-

մունքի» ներկայացուցիչների համար հեշտ էր նման պայքարը եքննադատությունը ներկայացնել որպես մարքսիստական լեզվաբանություն ստեղծելու փորձերի դեմ ուղղված պայքար:

բ) «Հեղվի նոր ուսմունքի» քննադատությունը մի շարք սովետական երիտասարդ լեզվաբանների կողմից նույնպես հաջողությամբ շպակվեց, որովհետև այդ լեզվաբանները նախ՝ չունեին անհրաժեշտ հեղինակություն և լեզվաբանական պատրաստականություն, երկրորդ՝ իրենք էլ պայքարի ընթացքում թույլ էին տալիս սիալներ, համառում ծայրահեղությունների, հանդես չէին բերում անհրաժեշտ հետեղականություն։ Այսպիսի բնույթ ուներ, օրինակ, «լեզվաճակատայինների» պայքարը: «Հեղվաճակատը» («Յազկուեդունի ֆրոնտ» կամ կրճատ՝ «Յազկոֆրոնտ») մի շարք երիտասարդ լեզվաբանների (Ի. Աբաև, Կ. Ալավերդով, Ս. Բելմիցկի, Մ. Գուս, Գ. Դանիլով, Է. Դրեգեն, Ե. Կոմշիլովա, Ֆ. Կուրե, Տ. Լոմտե, Յ. Ալոյան) խմբավորում էր, որը պայքար էր մզում «լեզվի նոր ուսմունքի» դեմ՝ գտնելով, որ տվյալ էտապում այն ավելի մեծ խոշորնոտ է իսկական մարքս-լենինյան լեզվաբանության ճանապարհին, քան «զարդված հնդկրոպաբանության մնացորդները»:

«Հեղվաճակատայինները» ճիշտ կերպով նշում էին, որ «լեզվի նոր ուսմունքը» բավարար շափով կապված չէ ժամանակակից լեզուների ուսումնասիրության և սովորական լեզվաբանության գործնական հարցերի հետ։ Նրանք նշում էին, որ Ն. Յան. Մաոր և Նրա հետեւրդները ուշադրությունը կենտրոնացնում են լեզվի նախապատմության և հնէաբանական վերլուծության վրա՝ աշքաթող անելով ստատիկ ուսումնասիրության հարցերը։

«Մեր լեզվաբանական ճակատի արդի վիճակը, — գրում էին «լեզվաճակատայինները» դեռևս իրենց մանիթեստում (1930 թ.), — ակնհայտորեն անբարեհաջող է։ Լեզվի տեսության բնագավառում, այլև մեր գպրոցներում ու բուհերում, մինչև այժմ տիրապեսում են իդեալիստական ու ֆորմալիստական ուղղությունները և նրանցից աճող անսկզբունք էլեկտրիզմը (հնդկրոպական գպրոցը):

Պրոլետարական դիկտատորայի գոյությունը, իհարկե, անհետանք շանցավլ լեզվաբանական գիտության համար։ Սովետական Միության մեջ առաջացավ լեզվի նոր ուսմունքը մատերիալիստական հիմքի վրա (հարեթական տեսությունը): Սակայն այդ ուսմունքը դեռևս դիալեկտիկա-մատերիալիստական կառուցում չէ, այլ միայն առաջին քայլը դեպի այդ կառուցումը։

Լեզվաբանական ճակատի վիճակը անհրաժեշտություն է ստեղծում ամենավճռական, անսպոռ պայքար մղելու հնդկրոպարանության և ամեն տեսակ էկլեկտիզմի դեմ՝ մի կողմից և ծավալուն հարձակման անցնելու ժամանակակից լեզվաբանության մեխանիստական տեսնենցների դեմ՝ մյուս կողմից։ Միայն ժամանակակից լեզվաբանության մեջ եղած մեխանիստական տեսնենցների հաղթահարումն է պահպանովում իսկական հաղթանակը իդեալիզմի, ֆորմալիզմի դեմ և հող է մաքրում լեզվի իսկական դիալեկտիկա-մատերիալիստական գիտության ստեղծման համար՝ լեզվաբանական մտքի ողջ նախորդ նվաճումների հաշվառումով<sup>1</sup>։

Սակայն ճիշտ քննադատությանը միանում էին (ինչպես մասսամբ երեաց և քաղվածքից) սիհիլիստական մոտեցումը լեզվաբանական ժառանգությանը, նեղ պրակտիցիզմի պաշտպանությունը, ազգային հարցում թույլ տված սխալները, սովետական հասարակության դասակարգային կառուցվածքի սխալ ըմբռնումը և այլն (Գ. Դանիլով և ուրիշները): Այս բանը հենց հնարավորություն տվեց «լեզվի նոր ուսմունքի» ներկայացուցիչներին հեշտությամբ հաշիվ մաքրելու «լեզվաճակատայինների» հետ։ 1930 թ. աշնանը Մոսկվայի Կոմ. ակադեմիայի լեզվի և գրականության սեկցիայում տեղի ունեցած դիսկուսիան անհաջող է վերջանում «լեզվաճակատայինների» համար։

Մասմամբ էլ այս նույն պատճառներով պետք է բացատրել հարեթաբանության և մարքսիզմի շուրջը Բաքվի դիսկուսիայի արդյունքները։ 1929 թ. Բաքվում ի. ի. Մեշչանինովի կարգացած «Հարեթաբանություն և մարքսիզմ» թեմայով զեկուցման<sup>2</sup> և 1930 թ. Մառի այս կապակցությամբ ունեցած ելույթի<sup>3</sup> առթիվ խոսողները, հարեթաբանության դրական գնահատման փորձերի հետ միասին, Մառին քննադատում էին քառատարր վերլուծության շիմնավորման, լեզվի մոգական ծագման սխալ գրութիւ առաջբաշման, դասակարգի մարքս-լենինյան ըմբռնման ուկիզիայի և այլ հարցերի մեջ։ Մառի պատասխանները ոչ միայն շկարողացան ինչպես հարկըն է բացասել նրան ուղղված քննադատության ճշտությունը,

<sup>1</sup> Обращение группы „Языковедный фронт“. ЛИ. 1930, № 1.

<sup>2</sup> И. И. Мещанинов, Яфетиология и марксизм (доклад проф. И. И. Мещанинова и прения по нему на заседании НИАМ-а при АзТНИИ 18-го октября 1929 года), Баку, 1930.

<sup>3</sup> Н. Я. Марр, К бакинской дискуссии о яфетиологии и марксизме, Баку, 1932.

ազեւ փաստորեն ցույց տվեցին քննադատության իրավացիությունը։ Այնուամենայնիվ, Մառին ու նրա հետևորդներին հաջողվեց ճռնշել «Հարեթաբանության» հակառակորդների ու քննադատների գիմադրությունը։

գ) Անկախ «լեզվի նոր ուսմունքին» հարելուց կամ չհարելուց՝ յեզի վերնաշենքայնության դրույթը մինչև 1950թ. ընդունվում էր բոլոր սովետական լեզվաբանների կողմից։ Լեզվաբանները կարծում էին, որ հասարակական երեսութները կարող են հատկացվել կամ բազիսին, կամ վերնաշենքին և որ Մարքսի և Էնգելսի ցուցումները հիմք են տալիս խոսելու լեզվի՝ վերնաշենքային կատեգորիա լինելու մասին։ Միաժամանակ լեզվաբանների մեծ մասը սրա հետ կապված ընդունում էր լեզվի դասակարգայնության դրույթը, իհարկե, ոչ բոլոր դեպքերում այդ ըմբռնելով այնպիսի գուեհիկ ձևով, ինչպես Մառը. այս դեպքում՝ մատնանշում էին սովորաբար կամ այն, որ լեզուն (հատկապես գրական լեզուն) ծառայում է առաջին հերթին այս կամ այն դասակարգի շահերին, կամ այն, որ տարբեր դասակարգերը տարբեր կերպ են վերաբերվում լեզվին, տարբեր իմաստ դնում բառերի մեջ։ Կային և լեզվաբաններ, որոնք ընդունելով լեզվի վերնաշենքայնության դրույթը՝ ժիտում էին լեզվի դասակարգային երեսութ լինելու կարծիքը այսպես. Ա. Չիքոբավան լեզուն համեմատում էր հրացանի հետ, որ հավասարապես կարող է ծառայել հակառակորդ դասակարգերին։

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ սովետական լեզվաբաններին զարդեցնող կարեւոր հարցերից էին տարբեր հասարակական ֆորմացիաներում լեզվի զարգացման օրինաշափությունների և հասարակական տարբերակվածության հարցերը, որոնք ամենաբազմազան մեկնաբանությունների տեղիք էին տալիս։ Լ. Պ. Յակուբինսկին և Վ. Մ. Ժիրմունսկին<sup>1</sup> առաջին անգամ լուրջ ուշադրություն են դարձնում ազգային լեզուների կազմավորման հարցերին։ Յակուբինսկին նկարագրում է լեզվական փոփոխությունները ֆեռայիզմից կապիտալիզմին անցնելիս, աշխատում բացահայտել լեզվի զարգացման հասարակական պայմանների պատկերը։ Փեղալական հասարակության լեզվական կատեգորիան նա համարում է բարբար, բուրժուական հասարակու-

<sup>1</sup> А. Иванов, Л. Якубинский, Очерки по языку, М., 1932. В. М. Жирмунский, Национальный язык и социальные диалекты, М., 1936.

թյանը՝ ազգային լեզուն։ Սրա հետ միասին տրվում է լեզվի բնութագիրը կապիտալիզմի զարգացման տարբեր էտապներում, գրծվում կապիտալիստական հասարակության լեզվական տարբերակումների պատկերը։ Լ. Պ. Ցակուբինսկու տեսակետը լեզվի շարահյուսական կառուցվածքի փոփոխությունների բնույթի մասին մեծ շափով ազդում է «լեզվի նոր ուսմունքի հետևորդների» ստադիալ-շարահյուսական կոնցեպցիայի ձեավորման վրա։

Մեծ թիվ էին կազմում սովետական այն լեզվաբանները, որոնք «լեզվի նոր ուսմունքի» նկատմամբ քննադատական դիրք էին գրավում, չէին ընդունում նրա հիմնական դրույթներից գոնեմի քանիսը, որոնում էին մարքսիստական լեզվաբանության ստեղծման ինքնուրույն ուղիներ։ Եթե «լեզվի նոր ուսմունքի» կողմնակիցների գլխավոր ջանքերն ուղղված էին լեզուների ստադիալ դասակարգման և լեզուների մեջ տարբեր ստադիաների հատկանիշներ որոնելու գործին, ապա նրանց հակառակորդները ձրգուում էին պահպանել լեզվաբանության նախորդ ժառանգությունից մնացած լավագույնը՝ առնելով այն, ինչ համապատասխանում է դիալեկտիկական մատերիալիզմի սկզբունքներին։ Կարելի է ասել, որ «լեզվի նոր ուսմունքի» հակառակորդների և նրանից շեղողների ջանքերն ուղղված էին լեզվի տարբեր ֆունկցիաների, նրա հաղորդակցական և արտահայտչական կողմերի բազմակողմանի ուսումնասիրությանը։ Թերևս «լեզվի նոր ուսմունքի» նկատմամբ քննադատական դիրք գրաված լեզվաբանների հիմնական ուղղությունը կարելի լինի որպես մատերիալիստական սոցիոլոգիզմ, թեև ոչ բոլորն էին հետևողականորեն հանգում սրան։

«լեզվի նոր ուսմունքի» զարգացման մեջ կարելի է տարբերել 2 փուլ. 1) 1924—1934 թթ., երբ դեռ կենդանի էր ն. Յա. Մառը և տղղություն էր տալիս «լեզվի նոր ուսմունքի» հետևորդների-գործունեությանը. այս փուլում լեզվի ստադիալ զարգացման պրոցեսը բնութագրվում է ձեաբանական կառուցվածքի բնորոշ գծերով, կիրառվում են Մառի ուսմունքի գրեթե բոլոր կողմերը. 2) 1935—1950 թթ., երբ Մառի «աշակերտները» ուշադրությունը կենտրոնացնում են շարահյուսական տիպոլոգիայի հարցերի վրա, գրեթե դադարում Մառի քառատարր վերլուծության մեթոդին դիմելուց. այս փուլում ն. Յա. Մառի «լեզվի նոր ուսմունքը» ներկայացվում է որպես միակ մարքսիստական ուսմունքը, և նույնիսկ նրան շհետևողները այս կամ այն շափով տուրք են տալիս այդ ուսմունքին։

«Էլեգիի նոր ուսմունքի» հետևորդները ուշադրությունը կենաւրովացնում են լեզվաբանական հնէաբանության հարցերի վրա. լեզուների դասակարգումը և ձեւաբանական ու շարահյուսական ախպավորումը ձեռք են բերում առաջնակարգ պրոբլեմների նշանակություն։ Մասր և նրա «աշակերտները» համեմատաբար հեռու էին կանգնած հնչյունաբանության ու ձեւաբանության հարցերից, քիչ էին ուշադրություն դարձնում դպրոցական քերականության հարցերին. սրանք մշակվում են գերազանցապես «լեզվի նոր ուսմունքին» անմիջականորեն հարող լեզվաբանների կողմից։

Ն. Յա. Մասր.— Մասրի գիտական գործունեության մեջ տարբերում են երկու շրջան, որոնց բաժանման կեար համարվում է 1924 թ.: Այս թվականին նա լույս է բնծայում իր «Միջերկրածովքի հնդկրոպական՝ լեզուները» հաղորդումը, որ նա արել էր 1923 թ. նոյեմբերի 21-ին։ Այստեղ նա հայտնում է այն միտքը, թե հնդկրոպական լեզուները փոխարինել են հարեթական լեզուներին իրեք նոր ստաղիա, և այդ ստաղիալ փոփոխությունը կապում է արտադրաեղանակի փոփոխության հետ։ այս շրջանից ել սկսում են խոսել «լեզվի նոր ուսմունքի» գոյության մասին՝ հակադրելով այն ողջ նախորդ լեզվաբանությանը։

Մասր իր գործունեությունն սկսել էր գեռևս նախորդ գարի 80-ական թվականների վերջին՝ հանդիս զալով վրացերենի և սեմական լեզուների ազգակցության գաղափարով։ Հետագայում նա է՛լ ավելի է ծավալում այդ գաղափարը և աշխատում խոսել այսպես կոչված նոյական նախալեզվի մասին, որի ժառանգներն են հանդիսանում, նրա կարծիքով, և՛ Կովկասի հարեթական, և՛ սեմական լեզուները։ Այս շրջանում, ինչպես տեսնում ենք, նա հանդես է գալիս հնդկրոպական լեզվաբանության հետազոտության միենույն եղանակներով, թեև հենց սկզբից աշքի է բնկնում պատմա-համեմատական մեթոդի սկզբունքների ոչ հետեղական կիրառմամբ։ Նրա նշած համապատասխանությունները հնչյունական որոշակի օրինաշափությունների շեն ենթարկվում, մեծ մասամբ բռնագրուիկ բնույթ ունեն և հենվում են բառարմատների կամայական մեկնարանությունների վրա։ Համեմատությունների այս կամայական բնույթն էլ հետագայում հիմք է տալիս նրա էլեմենտային վերլուծության եղանակի համար, որտեղ այդ կարգի համեմատությունները հասցվում են ծայրահեղության։

Նախապես զբաղվելով հայ-վրացական բանասիրությամբ, այդ թվում և հայ-վրացական լեզվական կապերով՝ Մառը աստիճանաբար ընդալում է իր ուսումնասիրած լեզուների շրջանակը: Աւենենալով վրացերենի և սեմական լեզուների ցեղակցության գաղնիքարը, հենվելով լեզուների ծննդաբանական դասակարգման վրա և սպատագործելով՝ աստվածաշնչի անվանումները՝ Մառը վրացերենը՝ նրան ցեղակից մենքուներենի, ճաներենի և սլաներենի հետ միասին անվանում է հարեթական լեզվայցուղ, և այդ լեզվայցուղը՝ հայտարարում սեմական լեզուներին ցեղակից (Հմմտ. Նոյի և նրա որդիների՝ Սիմի, Քամի և Հաքեթի անունները): Հետագայում նաև արխազերենը, աղբգեյերենը և Դաղստանի լեզուները է՛լ ավելի ուշ Մառը հարեթական լեզուներ է որոնում Կովկասի սահմաններից դուրս (բասկերենը Պիրենյան թերակղզում և վերշիկերենը Պամիրում) և հին մեռած լեզուների մեջ (Էտրուսկերենը, պելասգերենը, խեթերենը, ուրարտերենը, էլամերենը): 1920 թ. Մառը հանգում է այն մաքին, թե հարեթական տարրը միջերկրածովյան կուլտուրայի ստեղծման մեջ եղել է կրրորդը՝ հնդկրոպականի և սեմականի հետ միասին՝ ժամանակագրականորեն նախորդելով նրանց:

Մակայն Մառի հարեթական տեսությանը բախտ էր վիճակված հայտարարվելու ընդհանուր լեզվաբանական տեսություն և վերամկրտվելու «լեզվի նոր ուսումնք» անունով: 1924 թ. Մառը ի լուր ամենքին հայտարարում է հարեթական տեսության մեջ կատարված շրջադարձի մասին: Հարեթական լեզուները դիտվում են իբրև լեզուների զարգացման մի ստադիա, և պրանով նախկին ծննդաբանական դասակարգումը փոխարինվում է ստադիալ դասակարգումը, որի էությունը մինչև վերջ էլ մնաց շպարզված: Մառը և նրա «աշակերտները» անրնդհատ փոխում էին լեզվի ստադիալ դասակարգման սխեմաները՝ շկարողանալով հասնել քիչ թե շատ հստակ, որոշակի ու միասնական բրոնման: Սակայն ստադիալ դասակարգման դրույթին անհրաժեշտորեն միանում էին և այլ դրույթներ, որոնք կապված էին մի կողմից՝ Մառի նախորդ լեզվաբանական պրակտիկայի, մյուս կողմից՝ նախորդ լեզվաբանության դրույթը ների վերանայման պահանջի հետ: Մառի կարծիքով, «նոր ուսումնութը» պետք է բոլոր մնացած կետերում ևս հակադրվիր էին լեզվաբանությանը, մանավանդ որ ստադիալ դասակարգման դրույթը և հարեթական լեզուները աշխարհի բոլոր լեզուներին

շեղակից հայտարարելը պահանջում էին վերանայել այդ լեզ-վարանության մեթոդը և ունեցած պատկերացումները:

Հայտնի է, որ մարքսիզմ-լենինիզմը լեզուն դիտում է իրեւ հասարակական կատեգորիա: Մառը շէր կարող չընդունել այս դրույթը: Բայց ընդունելով այն՝ նա պետք է պարզեր այն տեղը, որ լեզուն բոնում է մյուս հասարակական կատեգորիաների շարքում: Մառն այս հարցում շկարողացավ մինչև վերջ որոշակի միասնական կարծիք հայտնել: Նա մեծ մասամբ պաշտպանում էր այն: Միտքը, թե լեզուն վերնաշենքային երեւույթ է, սակայն գտնում էր, որ նախքան հնչյունական լեզվի տիրապետությունը, երբ, ըստ նրա, գործում էր ձեռք-լեզուն, այն դեռ չէր առանձնացել իրեւ վերնաշենք և ուներ արտադրության գործիքի արժեք: Մի կողմից՝ նա լեզուն և մտածողությունը դիտում էր որպես վերնաշենքային ամենապարզ կատեգորիաներ, որոնց հիման վրա և որոնցից աստիճանաբար ձևավորվել են հասարակական իդեոլոգիաների ավելի բարդ ձեւերը, մյուս կողմից՝ գտնում էր, որ «լեզուն նույնպիսի վերնաշենքային հասարակական արժեք է, ինչպես գեղարվեստը և ընդհանրապես արվեստները»<sup>1</sup>: Լեզուն վերնաշենքային կատեգորիա համարելու դրույթի հետ կապված՝ անհրաժեշտ էր պարզել մի շարք հարցեր, որոնք սակայն Մառի և նրա հետեւորդների մոտ հարկ եղած լուսաբանությունը շտացան: Առանձնապես կարևոր էր լուծել հետեւյալ հարցերը: 1) Հայտնի է, որ արտադրության պրոցեսը և արտադրական հարաբերությունները անհնար են առանց մարդկանց հաղորդակցման. այսպիսով, լեզուն թափանցում է ոչ միայն վերնաշենքային կատեգորիաների մեջ, այլև անհրաժեշտ է մարդկանց հասարակական կյանքի բոլոր կողմերի, այդ թվում և արտադրական հարաբերությունների համար. հետեւաբար լեզուն հավասարապես կապված է ոչ միայն վերնաշենքի, այլև բազիսի՝ արտադրական հարաբերությունների հետ և երեան է գալիս այն բոլոր դեպքերում, երբ անհրաժեշտ է հաղորդակցությունը՝ մտքերի փոխանակությունը: Զգալով լեզվի վերնաշենքայնության դրույթի ու լեզվի հասարակական այս համապարփակ ֆունկցիայի միջև եղած հակասությունը և ցանկանալով ազատվել այս հակասությունից՝ Մառի որոշ հետեւորդներ լեզվին հատկացնում էին երկու ֆունկցիա՝ հաղորդակցական և իդեոլոգիական: Վերջին դեպքում լեզուն դիտվում էր իրեւ իդեոլոգիաների գոյության ձև և դր-

<sup>1</sup> Н. Я. Марр, Избранные работы, II, № 107.

վում էր վերնաշենքային երեսլթների շարքը՝ որպես ամենալայն վերնաշենքային կատեգորիան։ Մառի որոշ այլ հետեւողներ գրտնում էին, որ «սկզբնապես նախնադարյան համայնքի զարգացման նախնական էտապում մարդկանց նյութական գործունեության հետ լեզվի և մտածողության ունեցած անմիջական կապի շնորհիվ՝ տրամաբանական և քերականական կատեգորիաները համընկնում էին։ Դասակարգային հասարակության մեջ, լեզվի՝ վերնաշենքի վերածվելու շնորհիվ, քերականական ձևերը և մտածողության ձեւերը հակասության մեջ են ընկնում ինչպես իրար, այնպես էլ նրանց ուսալ բովանդակության հետո<sup>1</sup>։ Այնուամենայնիվ, այս դրույթը չէր խանգարում Մառին և նրա հետեւորդներին քերականական կատեգորիաները անմիջաբար կապելու դասակարգային հասարակության բոլոր կարգի հարաբերությունների հետ։ 2) Լեզուն իրեւ վերնաշենք դիտելը անհրաժեշտ էր դարձնում պարզել լեզվի տեղը վերնաշենքային այլ կարգի կատեգորիաների մեջ։ Անհրաժեշտ էր պարզել լեզվի և իդեոլոգիական վերնաշենքերի տարրերությունն ու ընդհանրությունը, ցույց տալ լեզվի, մտածողության և իդեոլոգիաների փոխհարաբերությունը, այլև մտածողության, իդեոլոգիաների և աշխարհայացքի կապն ու տարրերությունը. այլապես լեզվի վերնաշենքային էությունը մնում էր լոկ հայտարարություն։ Այս առավել ևս դժվարանում էր այն պատճառով, որ լեզուն մի կողմից՝ դիտվում էր որպես հասարակական գիտակցության որոշ ձևերի՝ որոշ կարգի իդեոլոգիաների գոյության ձև, մյուս կողմից՝ որպես գիտակցության և մտածողության գոյության ձև։ Այս հարցի լուծման որոնումների մեջ Մառը և սրա հետեւորդները ջնջում էին սահմանը մտածողության, գիտակցության, իդեոլոգիայի ու աշխարհայացքի միջև։

Լեզվի և վերնաշենքի, բազիսի ու արտադրության, լեզվի և մտածողության, գիտակցության, իդեոլոգիայի ու աշխարհայացքի փոխհարաբերությունների մասին ունեցած խառնաշփոթ պատկերացումները Մառի և նրա հետեւորդների մոտ կապվում էին լեզվագերականական կատեգորիաների վուգար սոցիոլոգիական բմբոնման հետ։ Լեզվի քերականական կառուցվածքի և քերականական կատեգորիաների փոփոխաւթյունները անմիջաբար բխեցվում էին բազիսում կատարված տեղաշարժերից, արտադրության

<sup>1</sup> Проф. Н. Ф. Яковлев, Грамматика литературного кабардинско-черкесского языка, 1948, էջ 26.

և արտադրական հարաբերությունների յուրաքանչյուր փոփոխությունների անմիջապես կապվում էր քերականական կատեգորիաների հետ. «Եեզուն իր ողջ կազմով,— գրում էր Մառը, — մարդկային կուլեկտիվի ստեղծագործությունն է, ոչ միայն նրա մտածողության, այլև նրա հասարակարգի և տնտեսության արտացոլումն է տեխնիկայի և կառուցվածքի, հավասարապես և իմաստաբանության մեջ»<sup>1</sup>. ապա՝ «Ոչ միայն բառերով արտահայտված հասկացողությունները, այլև իրենք բառերն ու նրանց ձևերը, նրանց փաստական կերպարանքը բխում են հասարակական կառուցվածքից, նրա վերնաշենքային աշխարհներից և նրանց միջացով՝ էկոնոմիկայից, տնտեսական կյանքից»<sup>2</sup>:

Այստեղից էլ բխում է գոյություն ունեցող տրադիցիոն «ձեաւ կան» քերականությունը դեն նետելու, այն իդեոլոգիական դարձնելու և լեզվի կառուցվածքի դինամիկայի շարադրմամբ փոխարինելու պահանջը: «Ֆորմալ իդեալիստական ուսմունքը, որի վրա կառուցված է այսպես կոչված քերականությունը, — գրում է Մառը, — բացարձակապես շի հարմարեցված ո՛չ իսկական կենդանի խոսքի, ո՛չ նրա (խոսքի) բազայի, արտադրության և արտադրական հարաբերությունների և ո՛չ էլ նրանց հետ աճող հասարակության և աշխարհայացքի հետ ունեցած աղերսին»<sup>3</sup>: Իրականում սա հանգում էր քերականական կատեգորիաները իրեն անմիջական իդեոլոգիական արտահայտություններ բազիսի հետ առնչելու, բազիսի մեջ կատարված բոլոր կարգի տեղաշարժերն ու շրջադարձերը անմիջապես լիզվի մեջ «ցույց տալու» պահանջին: Այս ուղղությամբ էլ բնթանում էին Մառի քերականական «հետազոտություններ»: Լեզվի դարգացումը ըստ Մառի, իր ստադիալ փոխանցումներով, իր անշատական, կցական և թեքական ստադիաներով առնչվում է բազիսում կատարված փոփոխությունների հետ. նախադասության անդամների համաձայնությունն արտացոլում է «արտադրական կազմակերպության անդամների» համաձայնեցվածությունը, ուղիղ և թեք հոլովները՝ «կոլեկտիվի երկու տարրեր կատեգորիաները», համեմատության աստիճանները՝ հասարակության դասային և դասակարգային տարրերությունները, հոգնակի թիվը՝

<sup>1</sup> Н. Я. Марр, Избранные работы, II, § 421.

<sup>2</sup> Նույն աեզը, IV, § 46.

<sup>3</sup> Նույն աեզը, II, § 374—375.

տվյալ հասարակական խմբավորումը՝ այս կամ այն առարկայի տիրողին և այլն։ Այսպիսով, քերականական բոլոր կատեգորիաներն ստանում էին վուլգար սոցիոլոգիական մեկնաբանություն, անպայմանորեն և անմիջաբար կապվում հասարակական արտադրական հարաբերությունների, հասարակության դասակարգային և դասային կառուցվածքի, հասարակական կյանքում կատարվող աեղաշարժերի հետ, ընդ որում Մառն ուներ այդ տեղաշարժերի յուրօրինակ մուտացիոնիստական ըմբռնում։

Լեզուն իդեոլոգիաների հետ միասին դնելով վերնաշենքի մեջ՝ Մառը բնականաբար պետք է դիմեր հաջորդ քայլին և ընդուներ այն իրրե դասակարգային երեսովի։ Բայց այս դեպքում էլ Մառը դիմում էր ծայրահեղության՝ լեզվին հաղորդելով դասակարգային բնույթ նույնիսկ նախադասակարգային հասարակության մեջ։ Լեզվի դասակարգային բնույթի իր ըմբռնման մեջ Մառն այնքան էր հեռու գնում, որ վերանայման էր ենթարկում մարքսիզմի դրույթները դասակարգերի ու նրանց ծագման և լեզվի ընդհանուր հասարակական բնույթի մասին։

ա) Հարեթարանության և մարքսիզմի վերաբերյալ Բարվի դիսկուսիայում Մառին առարկում էին «դասակարգ» բառը ոչ մարքսիստական իմաստով գործածելու մեջ։ Մառը դրան պատասխանում էր. «Ես լիովին համաձայն եմ ձեզ հետ, բայց բնկել եմ դժվարին դրույթյան մեջ։ Ես տեսնում եմ, որ դուք նկատի ունեք գասակարգի մարքսիստական ըմբռնումը։ Բայց Ես, ի՞ւարկե, նկատի շունեմ դասակարգի այնպիսի սահմանում, ինչպես այժմ, երբ ասում են «դասակարգ»։ Ես տերմին եմ փնտրում, և ոչ ոք չի կարող ինձ այն նշել։ Երբ կար ոչ արյան վրա հիմնված կոլեկտիվ կազմակերպություն, ապա այստեղ ես գործածում էի «դասակարգ» տերմինը, ահա թե յանն ինչումն է։ Այստեղ կոլեկտիվը կազմվել է արտադրության պրոցեսով... բայց ոչ այն պատճառով, որ կար ցեղակցական կապ։ Այստեղ զուտ անտեսական հիմունքներ են, և լեզուն մեզ այդ ազդանշում է... Ես համառոտության համար ցանկանում էի կոշել հասարակական-տնտեսական կամ արտադրական խմբավորում։ Բայց այդ չափազանց դժվար է։ Ես վերցնում էի այդ տերմինը և օգտագործում այլ նշանակությամբ։ Նշո՞ւ այն չգործածել։ Այդպիսին է իսկական վիճակը և ոչ թե ցանկու-

**Р**յпин կա Հակաղրել իմ դասակարգերը նրանց՝ մարքսիստորեն սահմանված ըմբռնմանը»<sup>1</sup>:

բ) Դասակարգի այս ոչ մարքսիստական ըմբռնումը Մառին Հնարավորություն է ընձեռում խոսել դասակարգերի առկայության ժաման նախադասակարգային հասարակության մեջ։ Մարքսիզմը դասակարգերը դիտում է իրեւ պատմական կատեգորիա, նրանց ծագումը կապում է տոհմատիրական կարգերի քայլայման հետ։ Բայց այս բանը ակնհայտորեն հակասում էր Մառի այն դրույթին, թե «չի կարելի ոչ միայն լոել, այլև անվճռականորեն խոսել այն մասին, որ արտադասակարգային լեզու մինչև այժմ չի եղել, լեզուն դասակարգային է եղել իր ծագման մոմենտից... այդ եղել է այն էպոխաների արտադրության բոլոր գործիքներին, այդ թվում և մոգություն-արտադրությանը տիրապետած դասակարգի լեզուն»<sup>2</sup>։ Իմանալով այս դրույթի ակնհայտ հակասությունը մարքսիզմին՝ Մառը գրում էր. «Հաբեթարանության լեզվաբանական եզրակացությունները ստիպում են նրան ամենավճռական ձեռնարկ ասել, որ էնգելսի այն հիպոթեզը, թե դասակարգերը ծագել են տոհմատիրական կարգի քայլայման հետևանքով, կարիք է զգում լուրջ ուղղումների»<sup>3</sup>։

գ) Հնչունական լեզուն հենց իր ծագման սկզբից դիտելով իրեւ քուրմերի և մոգերի սեփականությունը՝ Մառը ելնում էր լեզվի՝ ի սկզբանե հաղորդակցման միջոց լինելու մարքսիստական ըմբռնման դեմ։ Նրա կարծիքով՝ լեզվի մոգական ֆունկցիան նախորդել է հաղորդակցական ֆունկցիային. «...Ամենախորը թյուրիմացություն է, եթե լեզվի սկիզբը դնում են Հնչունական խոսքի ծագումից, բայց ոչ պակաս էական մոլորություն է, եթե լեզուն ենթադրում են հենց սկզբից այժմ առաջնային՝ խոսակցական ֆունկցիայով։ Լեզուն մոգական միջոց է, արտադրության գործիք՝ մարդու կողմից կոլեկտիվ արտադրություն ստեղծելու առաջին էտապներում, լեզուն արտադրության գործիք է։ Լեզուն իրեւ հաղորդակցման միջոց օգտագործելու պահանջն ու Հնարավորությունը հետագա գործ է»<sup>4</sup>։

<sup>1</sup> Н.-Я. Марр. К бакинской дискуссии о яфетидологии и марксизме. Баку, 1982, № 39.

<sup>2</sup> Նույն աեղբ, № 10.

<sup>3</sup> Н.-Я. Марр. Избранные работы, III, № 75.

<sup>4</sup> Н.-Я. Марр. К бакинской дискуссии о яфетидологии и марксизме, № 7.

դ) Այս բոլորից հետո Մառն ակնհայտորեն պետք է հանդեմ գար տոհմի, ժողովրդի, ազգի լեզվի ըմբռնման դեմ՝ այդ ըմբռունումները համարելով Փիկցիա. միակ իրականը նա համարում էր դասակարգային լեզուները: Եթե մարքսիզմի կամակեները խոսում էին ազգային լեզվի մասին, ապա Մառը գրում էր. «Զկա ազգային, համազգային լեզու, այլ դասակարգային լեզու, և տարբեր երկրների միենույն դասակարգերի լեզուները, հասարակական կառուցվածքի նույնության դեպքում, ավելի շատ տիպոլոգիական հարակցություն (օրոճտեա) են հանդես բերում, քան միենույն երկրի, միենույն ազգի տարբեր դասակարգերի լեզուները»<sup>1</sup>:

Լեզվի դասակարգայնության դրույթը, իհարկե, չէր հիմնվում լեզվական լուրջ ապացույցների վրա. Մառն այս դեպքում մի կողմից՝ հիմք էր ընդունում գիխավորապես բարբառային տարբերակների առկայությունը լեզվի մեջ՝ այդ տարբերակները դիտելով իրեն դասակարգային լեզուներ, մյուս կողմից՝ արհամարհում էր նյութական նույնություններն ու նմանությունները և հենվում տիպոլոգիական նմանությունների վրա:

Լեզվական տիպերի պատմական փոփոխություններն ել նա կապում էր հասարակության դասակարգային տեղաշարժերի և բազիսում կատարվող հեղաշրջումների հետ: Լեզվի այս կամ այն տիպը, արտահայտության այս կամ այն եղանակը համարելով այս կամ այն դասակարգին հատուկ՝ Մառը հեշտությամբ այդ տիպի կամ այդ եղանակի փոփոխությունը կապում էր դասակարգային հեղաշրջման հետ: Դասակարգային տարբերությունները Մառը փորձում էր արտացոլված տեսնել քերականական կատեգորիաների մեջ (համեմատության աստիճաններ և այլն): Այստեղից էլ բխում է «Հին, բուրժուական քերականությունը»՝ «նոր, պրոլետարական քերականությամբ» փոխարիննելու պահանջը:

Լեզվի վերնաշենքային և դասակարգային բնույթի մառականը մբռնման հետ սերառեն զուգակցվում է Մառի ստադիալականության ուսմունքը: Քանի որ լեզուն վերնաշենքային երևույթ է, որը մեխանիկորեն արտացոլում է բազիսում կատարված փոփոխությունները, քանի որ յուրաքանչյուր դասակարգ ունի իր լեզուն, — ուստի և արտադրական հարաբերությունների մեջ կատարված ուժովուցիոն տեղաշարժերը, մի դասակարգի՝ մյուս դասակարգի դեմ տարած հաղթանակը պետք է համապատասխանորեն արտահայտվի լեզվի մեջ: Լեզուն, այսպիսով, ըստ Մառի, զարգանում է

<sup>1</sup> Н. Я. Марр, Избранные работы, II, § 415.

թոիշքածեն, ստադիալ թոիշքներով։ Լեզվի ստադիալ զարգացման իր դրույթը նա աշխատում էր ներկայացնել որպես մատերիալիստական դիալեկտիկայի կիրառման փորձ։ Մակայն իրականում է կազմական պատկերացնում էր իբրև լեզվի անընդհատ արմատական վերակառուցումների պրոցես։ Ստադիալ անցումը նա ներկայացնում էր որպես լեզվի հին կառուցքածքի փոխարինում միանգամայն նորով, լեզվի հին կառուցվածքի պայմանի և արմատական հեղաշրջման պրոցես։ Մառի մոտ փաստորեն հանդես է գալիս դիալեկտիկայի խեղաթյուրված ըմբռնում։ ա) դասակարգային «լեզուներ», ինչպես տեսանք, նա դիտում է իբրև միանգամայն տարրեր տիպոլոգիայի կրողներ։ ըստ այդ ըմբռնման՝ այս կամ այն դասակարգի համար փաստորեն մեկընդմիշտ կանխորոշված է այս կամ այն լեզվական տիպը, այսինքն՝ տվյալ «դասակարգային լեզուն» մնում է իբրև հաստատուն և անփոփոխ, կանխորոշված կառուցվածքով մեծություն։ այդ դասակարգային լեզուն էլ սոցիալական հեղաշրջման մեջ ոչ թե փոխակերպվում է, այլ պարզապես իր տեղը զիջում մի այլ դասակարգային լեզվի, որը ունի նրանից տարրեր տիպոլոգիա։ պարզ է, որ այս դեպքում մենք գործ ունենք լեզվական պրոցեսի բացահայտ մետաֆիզիկ ըմբռնման հետ։ բ) ըստ Մառի լեզուները գտնվում են ստադիալ զարգացման տարրեր աստիճանների վրա, ընդ որում Մառը հաճախակի փորձեր էր անում որոշելու աշխարհի լեզուների գրաված դիրքը ստադիալ հաջորդականության այս կամ այն աստիճանում։ այս ըմբռնման համաձայն աշխարհի տարրեր լեզուները, ներկայացնելով համաշխարհային լեզվական պրոցեսի այս կամ այն աստիճանը, փաստորեն քարացել են այդ աստիճանի հատուկ տիպի մեջ և այլևս ոչ մի զարգացում չեն ալլուրում։ շինարենը ներկայացնում է, օրինակ, ըստ Մառի, լեզուների ստադիալ տիպոլոգիայի ամենասարին աստիճանը և այդպիսին էլ մնում է. պարզ է, որ ստադիալ տիպոլոգիայի այս ընբռնումը ոչ մի ընդհանուր բան չունի լեզուների զարգացման իրական պատմական ընթացքի հետ։ գ) քանի որ յուրաքանչյուր լեզվական տիպ, յուրաքանչյուր դասակարգային լեզու զրկվում է ներքին զարգացումից, դառնում մեկընդմիշտ ձեավորված և կայուն հատկանիշներով տիպ, ուստի և լեզուների զարգացման պրոցեսը Մառը դիտում է իբրև չնախապատրաստված թոիշքների ու հեղաշրջումների մի շղթա։ ստադիալ անցումները չեն պայմանավորվում այդ ստադիայի մեջ կատար-

ված քանակական աստիճանական փոփռխություններով։ Այսպիսով, Մառը դիալեկտիկան նենգափոխում է մուտացիոնիզմով, մի տեսությամբ, որ ընդունում է միայն թուշքների՝ առանց այդ թոհշքների միջև փոխանցիկ օղակներ որոնելու. և իրոք, Մառը չէր միառում, որ իր ստադիալականության ուսմունքի հիմքում ընկած է դե-Ֆրիզի մուտացիաների բիոլոգիական ուսմունքը, որը հանդես էր եկել որպես դարվինիզմի էվոլյուցիոն զարգացման ուսմունքի հակադրությունը. նա գտնում էր, որ «մուտացիոն կարգի հեղաշրջումային շարժումները» հանգեցնում են «լեզվի վերամիավորմանը հերթական նորագույն տիպի մեջ»<sup>1</sup>: «Այդ հեղաշրջումային տեղաշարժերը,— գրում էր նա, — այնքան հզոր, այնքան միթխարի են տեղաշարժերից հետո ստեղծագործող փոփռխություններով (ոո հուզականացնելու համար այլ աշխարհից եկած՝ այն նախորդների համեմատությամբ, որոնցից նրանք առաջացել են»<sup>2</sup>. դ) ստադիալ սխեմաները Մառը կառուցում էր միանալամայն ֆանտաստիկ ձևով՝ անկախ լեզուների կոնկրետ պատմությունից. լեզուների կոնկրետ պատմությունը հակադրվում էր ստադիալ տիպոլոգիային, և վերջինս գրկվում էր ամեն մի պատմականությունից՝ դառնալով վերերկրային, ժամանակից ու տարածությունից դուրս մի բան. «Հարեթական տեսությունը,— գրում էր Մառը, — իր լեզվարանական հետագոտություններում լիովին սահմանագատվում է պատմականությունից», նրա ստադիալ որակումները սահմանվում են «կուտուրական և գրային լեզուների ժամանակագրական նորմաներից անկախ»<sup>3</sup>:

Լեզվի զարգացման դիալեկտիկան Մառը փորձում էր պատկերացնել հեգելյան տրիադայի ձևով՝ փաստորեն հանգելով, սակայն, լեզվի և մտածողության իդեալիստական խզման լեզվի զարգացման մեջ նա տարրերում էր Յ Հիմնական շրջան՝ ձեռք-լեզվի («կինետիկ», «գծային» լեզվի) շրջան, Հնչյունական լեզվի շրջան և «ապագա լեզվի՝ մտածողության շրջան, որն աճում է բնական մատերիայից ազատ տեխնիկայի մեջ»<sup>4</sup>: Ի միջի այլոց նշենք, որ այս տրիադան Մառի մոտ խախտվում է. որոշ դեպքերում նա խոսում է Հնչյունական լեզվին Էլ «կոմպլեքս լեզվի», շղթերենցված

<sup>1</sup> Ա. Я. Մառը, Избранные работы, I, էջ 236.

<sup>2</sup> Նույն աեղը, III, էջ 96.

Նույն աեղը, II, էջ 187.

<sup>4</sup> Նույն աեղը, III, էջ 121.

շեզվական վիճակի նախորդելու մասին։ Առանձնացնելով լեզվի գարգացման այդ 3 շրջանները (ստադիաները)՝ Մառը փորձում է ստադիաներ հաստատել նաև հնչունական լեզվի գարգացման մեջ։ Խակայն, մինչև վերջ էլ Մառը և նրա աշակերտները շկարողացան որևէ միասնության հասնել ոչ ստադիաների թվի, ոչ էլ լեզուների ստադիալ դասակարգման հիմունքի որոշման մեջ։ Մառը տալիս էր մերթ 3 ստադիա, մերթ 4, նրա աշակերտները թվում էին 3—7 ստադիա և այլն։ Լեզուների ստադիալ դասակարգման համար Մառը հիմք էր ընդունում մերթ ձևարանական տիպերը (անջատական, կցական, թեքական), մերթ լեզուների ծննդաբանական դասակարգմամբ հաստատված ընտանիքները՝ շարելով դրանք ժագաման որոշ հաջորդականությամբ, մերթ էլ միաժամանակ և' այս, և' այն։ Նրա «աշակերտները», ինչպես կտեսնենք, ստադիալ դասաւարգման հիմքում դրեցին շարահյուսական սկզբունքը։ Զկարողանալով դուրս գալ ստադիալ տիպոլոգիայի փորձերի կախարդական շրջանակից և ընկնելով անելանելի դրության մեջ՝ Մառը և նրա հետևորդներն ստիպված էին խոսել անցումային ստադիայի լեզուների (ինչպես հայերենը), միշանցիկ ստադիան բաց թողած լեզուների (ինչպես գերմաներենը), «բազմաստադիալ» լեզուների մասին (ինչպես հաբեթական լեզուները) և այլն։ Զկար որոշակիություն և ստադիալ սիստեմում լեզուների ունեցած հաջորդականության մասին։ Հարեթական լեզուները մերթ դիտվում էին իբրև նախապատմական՝ բոլոր լեզուների գարգացմանը նախորդած շրջանի մնացորդներ, մերթ դրվում էին սեմական ու հնդկրոպական լեզուներից անմիշապես առաջ և մյուս բոլոր լեզուներից հետո (քամական լեզուների հետ)։ Մառի ստադիալ սիստեմներում նրանք մի դեպքում ստադիալ դիրքով նախորդում են ֆիննա-ուգրական, թյուրքական և մոնղոլական լեզուներին, մի այլ գեպքում, ընդհակառակրն, հաջորդում։ Ավելորդ չէ նշել, որ լեզվի գարգացման անջատական, կցական և թեքական ստադիաները Մառը փորձում էր կապել՝ ասարակության տնտեսական գարգացման աշարեր փուլերի հետ՝ դրսենորելով ակնհայտ վուլգար սոցիոլոգիզմ։

Քանի որ լեզուն մտածողության հետ միասին դիտվում էր որպես վերնաշնթային երեսութ, ուստի և բնականարար համապատասխան ստադիալ տեղաշարժեր էին հաստատվում և մտածողու-

<sup>1</sup> Հմմտ. В. В. Виноградов, Критика концепции стадиальности в развитии языка и мышления, „Против вульгаризации и извращения марксизма в языкоznании“, I, 1951:

թյան զարգացման մեջ։ Չունենալով հարցի դիալեկտիկական ըմբռում՝ Մառը լեզուն մերթ նույնացնում էր մտածողության հետ, մերթ լիովին անջատում։ «Լեզուն պարզապես հնչում չէ, այլև մտածողություն,— գրում էր Մառը,— բայց ոչ միայն մտածողություն, այլ մտածողության հերթափոխումների, աշխարհայացքի հերթափոխումների կուտակում»<sup>1</sup>։ Մառի մոտ ինչպես լեզվի, այնպես էլ մտածողության ստագիալ զարգացման միասնական ըմբռում չկար. ընդհանուր առմամբ նա հենվում էր իդեալիստ գիտնական կերպով սիստեմայի վրա, ըստ որի մտածողությունը իր զարգացման պրոցեսում անցնում է 2 փու՝ նախատրամաբանական և տրամաբանական։ Մառը տարբերում է տոտեմական, կոսմիկական և տեխնոլոգիական (ֆորմալ տրամաբանական) մտածողության ստագիաներ, որոնցից առաջին երկուսը համապատասխանում են Հեփ Բրյուլի նախատրամաբանական փուլին, երրորդը՝ տրամաբանականին։ Տոտեմական շրջանը Մառի մոտ ընդհանուր առմամբ համընկնում է ձեռք-լեզվի տիրապետության շրջանի հետ, թեև Մառը, այս հարցում ևս հետեղական վիճելով, մերթ այն հասցնում է մինչև հնչունական լեզվի շրջանը, մերթ, ընդհակառակն, կոսմիկական մտածողությունը բերում մինչև ձեռք-լեզվի շրջանը։ Տոտեմական շրջանում, ըստ Մառի, մարդիկ դեռևս չունեն տրամաբանական մտածողություն, առարկայական աշխարհն ընկալում են ֆանտաստիկ ձեռվ, արտադրողական ուժերն ըմբռում դիցաբանորեն, հասարակական կոլեկտիվն իր արտադրական-մոդական գործունեությամբ դիտում իբրև տոտեմի մարմնացում։ Կոսմիկական մտածողության ստագիայում նախնական շղիֆերենցված մտածողությունը տարբերակվում է, և երեսն է գալիս տարբերակված պատկերացումը վերին երկնքի, ներքին երկնքի և սոորին երկնքի մասին (=բուն երկինք, գետին և ջուր), որոնց հետ կապվում են երկնքի, գետնի և ջրի հետ առնչվող առարկաները և համապատասխան անվանում ստանում։ Միաժամանակ, հենվելով կասսիրերի վրա, Մառը կարծում է, որ այս շրջանում մարդը իր մարմնի մասերով ու հատկություններով՝ իբրև միկրոկոսմ զուգադրվում է մակրոկոսմին՝ բուն կոսմոսին, և առարկաներին անալոգիական անուններ են տրվում։ Վերջապես, տեխնոլոգիական ստագիայում երեսն է գալիս ֆորմալ տրամաբանական մտածողության մեջ։

<sup>1</sup> Н. Я. Марр. Язык и современность, Известия ГАИМК, 1932, вып. 60, № 9.

թյունը։ Այս սխեման Մառը փորձում է հարմարեցնել ոչ միայն շեղական ստագիաներին, այլև հաստրակության զարգացման փուլերին, թեև, ինչպես բոլոր դեպքերում, կապում է մեկ այս, մեկ այն շրջանի հետ։ այսպես, օրինակ, տեխնոլոգիական մտածողությունը նա կապում է դասակարգային հասարակության հետ, բայց այդ չի խանգարում դասակարգային տարրերություններ որոնելու շեղվի ծագման հենց սկզբից, և սրանով խախտելու սխեման։

Մառի այս ստագիալ սխեման ակնհայտորեն հակասում է Հարբսիզմի կլասիկների ասուլյթներին։ ա) Ամենից առաջ՝ ի հակադրություն լենինյան արտացոլման տեսության, ըստ որի մարդկային մտածողությունն ընդհանուր առմամբ ճիշտ է արտացոլում արտաքին աշխարհը, թեև արտացոլման պրոցեսի գիգագագածեռության պատճառով այն ունի իր մեջ երեակայության՝ իրականությունից կտրվելու հնարավորություն։ — Մառը ընդունում է մարդկային մտածողության մեջ զարգացման մի երկարատև շրջան (շատ ավելի մեծ, քան տրամաբանական մտածողության շրջանը), երբ մարդկային մտածողությունն ընդհանուր առմամբ ֆանտասիկ ձևով էր արտացոլում իրականությունը։ պարզ է, որ այս դեպքում անհնար է պատկերացնել արտագրական պրոցեսի հնարավորությունը<sup>1</sup>։ բ) Խոսելով Հեգելի այն դրույթի մասին, թե միայն դիալեկտիկական մտածողությունն է բնական, էնգելսը գրում է. «Մեզ և կենդանիներին ընդհանուր են դատողական գործունեության բոլոր տեսակները՝ ին դուկ ցի ի ան, դե դուկ ցի ի ան, հետեւաբար և արստրահումը (սեռային հասկացությունները. Դիգրոյի մոտ՝ շորքուտանիներ և երկոտանիներ), անձանոթ առարկաների անաւական գործելն արդեն անալիզի սկիզբ է), սինթեզը (կենդանիների խորամանկ արարքների դեպքում) և, իբրև այդ երկուամ միացում, էքսպերիմենտը (նոր խոշընդուների և դժվարին դրույթունների դեպքում)։ Ըստ տիպի այս բոլոր մեթոդները ուրեմն սովորական տրամաբանության կողմից ճանաշված՝ դիտական հետազոտության բոլոր միջոցները, — միանգամայն նույն են մարդու և բարձր կենդանիների մոտ։ Միայն աստիճանով (համապատասխան մեթոդի զարգացմամբ) նրանք տարբեր են։ Մեթոդի հիմնական գծերը նույն են մարդու և կենդանու մոտ և

<sup>1</sup> Հմմ. Б. А. Серебренников, Сравнительно-исторический метод и критика так называемого четырехэлементного анализа Н. Я. Марра, „Вопросы языкоznания в свете трудов И. В. Стасина“, 1950, էջ 168—169.

Հասցնում են միևնույն արդյունքներին, որքանով երկուսն էլ դիտվում և բավարարվում են միայն այդ տարրական մեթոդներով։ Ընդհակառակն, դիալեկտիկական մտածողությունը, — հենց այն պատճառով, որ նա իրեն նախադրյալ ունի իրենց հասկացությունների բնության ուսումնասիրությունը, — հնարավոր է միայն մարդու համար, և այն էլ վերջինիս միայն համեմատաբար բարձր զարգացման աստիճանի վրա (բուդդհայականները և հույները) և լիակատար զարգացման է հասնում միայն նշանակալիորեն ավելի ուշ՝ նորագույն փիլիսոփայության մեջ։<sup>1</sup> Հասկանալի է, որ անհնար է հաշտեցնել այս տեսակետը Մառի կարծիքի հետ. եթե նույնիսկ կենդանիներին հատուկ են տրամաբանական դատողության եղանակները, ապա ինչպես կարելի է մարդուն զրկել զրանցից երկարատև ժամանակաշրջանում. մյուս կողմից, ինչպես կարելի է մտածողության զարգացման ողջ վերջին շրջանը բնութափել իրեն ֆորմալ տրամաբանության շրջան՝ ոչինչ շասելով դիալեկտիկական մտածողության մասին։

Լեզվի զարգացման մառական ըմբռնումը շեր կարող շնանգեցնել պատճառ-համեմատական մեթոդի լիակատար բացասման, որովհետեւ, Մառի կարծիքով, ի հակադրություն ստադիալականության ուսմունքի՝ վերջինս հենվում է լեզվական պրոցեսի աստիճանականության դրույթի վրա, միևնույն լեզվախմբին պատկանող լեզուները դիտում է իրրև տարբերակումների աստիճանական խորացման արդյունք. «Համեմատական մեթոդը, — գրում է Մառը, — ընդհանրապես խարուսիկ է, հնդկուպարանների գոյություն ունեցող մեթոդն էլ գուրս եկավ լոկ ձեւական ուսմունք, որը մոռանում է որ մարդկությունը փոխել է ձեերը, լեզվի հենց տիպերը, նրանց հետ փոխել է ոչ միայն բառերի նշանակությունները, այլև նշանակությունների բաշխման հիմունքները և նույնիսկ նրանց ստեղծագործումները կապված տնտեսական և հասարակական կյանքի արմատական վերակառուցումից, կախված մտածողության սիստեմների փոփոխության հետո»<sup>2</sup>: Իր գործունեության սկզբնական շրջանում իսկ հետեւղականորեն շկիրառելով այդ մեթոդը և հետագայում հանգելով ստադիալականության ուսմունքին՝ Մառը «ձեւական» հայտարարված պատմա-համեմատական մեթոդին հակադրվում է քառատարր վերլուծության «հնէարանական» մեթոդով։

<sup>1</sup> Ф. Энгельс, Диалектика природы, 1941, № 178.

<sup>2</sup> Н. Я. Марр, Избранные работы, V, № 326.

ա) Եթե պատմա-համեմատական մեթոդը ելնում է հնչյունական օրենքները խստիվ կերպով պահպանելու սկզբունքից, արմատների և քերականական մասնիկների համեմատությունը կատարում է սրոշակի հնչյունական համապատասխանություններ հաստատելու հիման վրա, ապա այսպես կոչված քառատարր վերլուծությունը ներկայացնում է այդ կարգի ամեն տեսակ օրինաշափությունների բացասում։ Բառերի համեմատությունը կատարվում է նրանց կամայական տրոհումների և այդ տրոհվող մասերը իրար հետ զուգազելու հիման վրա, ընդ որում Մառի մոտ յուրաքանչյուր հնչյուն կարող է համեմատվել մյուսի հետ՝ անկախ տեղից, ժամանակից և սլայմաններից։ բ) Պատմա-համեմատական մեթոդը հենվում է լեզուների կոնկրետ պատմության տվյալների վրա, արմատների վերլուծությունը կատարում պատմական հիմունքով, փաստերի մանրակրկիտ ուսումնասիրությամբ։ Այդ մեթոդը ելնում է լեզուների ցեղակցության դաշտագրից, նրանով օգտվողները նպատակ են դում բացահայտել ցեղակից լեզուների ընդհանրությունները՝ ամենայն խնամքով առանձնացնելով եկամուտ տարրերն ու տվյալ լեզվին հատուկ նորագոյացումները։ Մառը համեմատությունները կատարում է անկախ լեզուների ցեղակցությունից, առանց հաշվի առնելու ցեղակցության մոտ կամ հեռավոր բնույթը, արհամարհելով լեզուների կոնկրետ պատմության տվյալները։ Նրա մոտ յուրաքանչյուր լեզվի յուրաքանչյուր բառ կարող է համեմատվել մի այլ լեզվի որևէ բառի հետ՝ կախված համեմատողի քմահաճույքից։ գ) Պատմա-համեմատական մեթոդը հենվում է համեմատվող արմատների կամ քերականական մասնիկների իմաստի նույնության կամ նմանության վրա, ընդ որում իմաստի փոփոխություններն ու տարրերությունները բացատրվում են հայտնի օրենքներով (բառի-մաստի նեղացում կամ լայնացում, նմանության, առընթերության և հակադրության զուգորդություններ), ինչպես և ժողովուրդների ու նյութական կուլտուրայի պատմության հայտնի տվյալներով։ Իհարկե, շատ հարցերում պատմա-համեմատական մեթոդի կողմնակիցները ստիպված են խոստովանել, որ իմաստային փոփոխությունների բոլոր տիպերը չեն որոշվել, և դեռևս շկան լիովին գոհացուցիլ իմաստաբանական ուսմունքներ։

Մառը, ունենալով մտածողության զարգացման վերաբերյալ միանգամայն ֆանտաստիկ սխեմաներ, իրար հետ է համեմատում բոլոր կարգի իմաստները։ Այդ առավել ևս հե-

առաջնում էին Մառի «Հաստատած» համընդհանուր իմաստաբանական «օրենքները»՝ 1. նշանակությունների բենացման օրինքը, այն է՝ շղիքերենցված իմաստից բենուային (հակագիր) իմաստների առաջացման հնարավորությունը, 2. մասն ըստ ամրողի կոչելու և 3. պատկերավոր մտապատկերի ամբողջության օրենքները, ըստ որոնց հնարավոր էր դառնում բոլոր անվանումները կապել 3 տարերքի՝ օդի (երկնքի), հողի (գետնի) և ջրի (ծովի) հետ, 4. ֆունկցիոնալ իմաստափոխության օրենքը, որը հնարավոր էր դարձնում միացնել ֆունկցիայի միասնությամբ կապված առարկայական իմաստները. կամայականությունն է՝ ավելի էր խորացնում ստաղիալականության ուսմունքը, որով իմաստային բոլոր կտրուկ անցումները կարող էին դիտվել որպես ստաղիալ տեղաշարժերի հետևանք: Եթե պատմա-համեմատական մեթոդը հենվում էր հրնացունական օրենքների վրա, ապա Մառը, այդ համարելով ֆորմալիզմ, արհամարհում էր հնչյունական օրենքները և բառերի համեմատության դեպքում շեշտը դնում իմաստի վրա՝ դիմելով իր ֆանտաստիկ սխեմայից բխող մերձեցումներին:

Ո՞րն էր քառատարր լերլուծության էությունը: Մառը գտնում էր, որ աշխարհի բոլոր լեզուների բոլոր բառերի բոլոր արմատները և իմաստակիր մասերը կարելի է հանգեցնել 4 շտարորոշված էլեմենտի, որոնք նա պայմանականորեն նշանակում էր A, B, C, D տառերով կամ սալ, բեր, յոն, ոոշանանումներով: Այս շրոս նախնական էլեմենտները հատուկ են եղել, ըստ Մառի, մարդկային հասարակական բոլոր նախնական խմբավորումներին, և բոլոր լեզուների բոլոր բառերը ներկայացնում են այդ տարրերի ձևափոխությունները, կրկնություններն ու խաչավորումները: Այդ էլեմենտների թվի հարցը (ինչո՞ւ 4 և ոչ թե ավելի կամ պակաս) Մառը թողնում էր անբացատրելի՝ բավարարվելով հայտարարությամբ «այդ այդպես լինելու» մասին: Նախապես Մառը ընդունում էր էլեմենտների ավելի մեծ թիվ, բայց աստիճանաբար պակասեցնում է դրանք՝ կանգնելով 4 թվի վրա: Երբեմն միայն Մառը փորձ է անում բացատրելու այդ թիվը նրա նախնական մոգական բնույթով: Այդ էլեմենտների առանձնացումը Մառը կատարել էր ցեղանունների մեջ հաճախ հանդիպող հնչյունական գուգորդումների հիման վրա, բայց հետո դրանք սկսեց դիտել որպես նախնական դիֆուզ տարրերի պայմանական նշանակումներ: Անբացատրելի մնաց նաև այն, թե ինչու բոլոր հասարակական խմբավորումներին պետք է հատուկ լինեին հենց այդ էլեմենտները և ոչ ուրիշները.

այդ բանը տնտեսական պայմանների նույնությամբ բացատրելը լոկ վուգար սոցիոլոգիական արյուկ էր:

Իր էլեմենտային վերլուծությունների մեջ Մառն ակնհայտորեն արհամարհում կամ անգիտանում էր լեզուների կոնկրետ պատմությունը. նրա որոշ տրոհումները առաջին իսկ հայացքից գարմացնում են ծայրահեղ անմտությամբ ու ֆանտաստիկությամբ. այսպես, օրինակ, նա բերում էր ըս-կա, «ձեռք», թե-կա «զետ» և ըս-ալ-կա «ջրահարս, հավերժահարս» շարքը, որոնց առաջին էլեմենտները դիտում էր որպես ոռչ էլեմենտի վարիացիաները և բատ իմաստի կապում ձեռք-զուր-կին շարքի հետ՝ իբր որպես ձեռք-լեզվի և նախնական կոսմիկական մտածողության փուլի գոյության ապացույց. այն հանգամանքը, որ ըս-կա բառի ըս մասը, բատ պատմա-համեմատական լեզվաբանության տվյալների, նախապես հնչել է թօհ, Մառին չի շփոթեցնում. Այդպես էլ նա համեմատում է ոռւս. బօր «խիտ փշատերեա անտառ» և լատ. այօց «ծառ» բառերը՝ անտեսելով, որ այօց-ը նախապես ունեցել է \*այօս ձեզ և հետագայում ենթարկվել է ոռտացիզմի. Այս նույն ձեռք համեմատվում են թուրք. ցյու «օր», հայ. կին, ոռւս. օ-կոն-ատ «ընկղմել», ՕԿՕ «աշք», կոհ-որա «շան բույն», օ-գոնի «կրակ», կօն «ձի, նժույգ», գերմ. Hund «շուն» բառերը որպես Ը կամ յոն էլեմենտի տարբերակները՝ իրար հետ կապված կոսմիկական մտածողությամբ և ֆունկցիոնալ իմաստով<sup>1</sup>:

Լեզուների այսպիսի խառը համեմատությունը անկախ ցեղակցական կապերից, բոլորովին աարբեր տիպի լեզուների բառերի մեջ միևնույն էլեմենտի աարատեսակներ գնարելիս, ոչ ցեղակից լեզուների միշտ կամայական ընդհանրություններ հաստատելը՝ քերականական և բառապաշարային անսիստեմ և անօրինաշափ զուգադրությունների հիման վրա, միայն դասակարգային լեզուներն իրական համարելը, լեզուների ստադիալ փոխակերպումների ուսամունքը,—այս բոլորը Մառի մուս սերտորեն առնշվում էին լեզուների ցեղակցության բնույթի ու խաչակորման արդյունքների յուրօրինակ ըմբռնման հետ։ ա) Պատմա-համեմատական մեթոդը ելնում էր այն բանից, որ լեզուների ցեղակցությունը արդյունք է նրանց՝ մի նախնական աղբյուրից ծագելու, որ ցեղակից լեզուների ընդհանրությունը տարբերը ավելի հին են, քան տարբերիչ գծերը. Մառը ժխտում է այս տեսակետը և առաջ քաշում լեզուների ընդհանրու-

1 Հմմա. Բ. Ա. Սերեբրենիկով, էլլ. աշխ., էջ 166—168.

թյունների՝ հետագա ձեռքբերում լինելու տեսակետը. «Լեզվի բնական հատկությունները կամ որակները,—գրում էր նա, —ժառանգական գծեր չեն, —այլ ձեռքբերումներ»<sup>1</sup>: Մի այլ տեղ, ավելի լընդարձակելով իր այս միտքը, նա գրում էր. «Մի շարք ցեղերի ընդհանուր լեզուն, առավել ևս միասնական լեզուն, հետագա նվաճում էր, ի միջի այլոց, լիովին չի իրականացել, այլ տվել է լեզուների տարրեր ընտանիքներ: Լեզուների ընտանիքի կազմավորումն ինքը լեզուների զարգացման հետնագույն ստադիում է»<sup>2</sup>: բ) Եթե պատմա-համեմատական մեթոդը ենթադրում է, որ ցեղակից լեզուները պատմական զարգացման ընթացքում պահպանում են ընդհանուր աղբյուրից ժառանգած քերականական և բառապաշտարային ազդեցությունները, խաչավորումներն ու խառնուրդները չեն խախտում նրանց ծագումաբանական ինքնատիպությունը, —ապա Մառը, ոչ առանց Շուխարդտի և այլոց ազգեցության, հայտնում է այն միտքը, թե աշխարհի բոլոր լեզուները խաչավորված են, թե խաչավորումը տալիս է նոր լեզու, նոր լեզվական որակ՝ լինելով լեզուների առաջացման և զարգացման հիմնական գործոնը. «Առանց խաչավորման չէր կարող ծագել ոչ մի լեզու, — գրում է նա, — առավել ևս չէր կարող հետագա զարգացում ունենալ որևէ լեզու»<sup>3</sup>: Մրանով փաստորեն միտվում է լեզուների զարգացման ներքին գործոնների դերը, և այդ զարգացման հիմնական շարժիչը որոնվում է արտաքին գործոնների՝ խաչավորման ու փոխազդեցության մեջ: Լեզուների ինքնատիպության դրույթը մերժվում է, և յուրաքանչյուր լեզվի քերականության ու բառապաշտիք բոլոր տարրերը դիտվում են որպես տարրեր աղբյուրներից եկող ձեռքբերումներ՝ կապվելով որակական ստադիու ձևափոխումների հետ. «Լեզուների ամբողջական կազմավորումներ չկան, — գրում էր Մառը, — լեզուն խաչավորված է, հյուսված բազմաթիվ թելերից, որոնցից յուրաքանչյուրը առանձին արտադրական-հասարակական առանձին խալի ներդրումն է, և մի շարք լեզուների, ամբողջ խմբի, ամբողջ այսպես կոչված ընտանիքի ընդհանուր բառերը մի հետագա խա-

Քաղվածքն ըստ Վ. А. Миханкова-ի .Н. Я. Марр. գրքի, 1949,  
էջ 448:

<sup>2</sup> Н. Я. Марр. Избранные работы, II, էջ 3—4.

<sup>3</sup> Նույն տեղը. II, էջ 399.

վի, հետագա հասարակական խմբավորման ներդրումն են»<sup>14</sup> կ) Եթե պատմա-համեմատական լեզվաբանությունը սովորաբար ընդունում է սահմանափակ թվով լեզվաընտանիքներ՝ դրանց մեջ մտնող լեզուները կապելով սկզբնական ընդհանրությամբ, ապա Մառը միակողմանիորեն բացասում է լեզուների տարրերակման ու միևնույն աղբյուրից ծագելու հնարավորությունը և, հակառակ պատմական ամեն կարգի փաստերի (Հմմտ. սլավոնական և ոռմանական լեզուների ծագումը), ընդունում միայն լեզուների միավորման ու խաչավորման ռեալությունը. լեզուների խաչավորումն էլ, ըստ Մառի, տալիս է լեզվական նոր որակ՝ իր զարգացման նոր ըրինաշափություններով: Լեզուների զարգացման համաշխարհային պրոցեսը Մառը միակողմանիորեն դիտում է իրոք լեզուների թվի անընդհատ նվազեցման և բազմաթեզվայնությունից գեպի միալեզվայնություն գնացող պրոցես, որի ընթացքում հին լեզուները որակական վերախմբավորումների ու վերակառուցումների միջոցով փոխվում են նոր լեզուների:

Այս բոլոր դրույթները Մառի մոտ վերջիվերջո հանգում էին մի ընդհանուր դրույթի՝ «համաշխարհային լեզվաստեղծական պրոցեսի միասնության» դրույթին, որ կազմում էր Մառի ուսմունքի հիմքը: Ունենալով այն վոլգար սոցիոլոգիական ըմբոնումը, թե լեզվի զարգացումը մեխանիկորեն արտացոլում է բազիսում կատարիված փոփոխությունները՝ Մառը բնականարար մտածում է, թե ինչպես որ կան հասարակական-տնտեսական տարրեր ֆորմացիաներ, որոնցով որոշվում են ժողովուրդների պատմության համաշխարհային պրոցեսի ընդհանուր օրինաշափությունները, այնպես էլ պետք է լինեն լեզուների զարգացման ընդհանուր ստաղիաներ. լոլոր լեզուները, ըստ Մառի, անկախ տեղից ու դիրքից, անցնում են այդ ստաղիաները և հանդես գալիս որպես համաշխարհային միասնական լեզվապրոցեսի այս կամ այն ստաղիայի արտահայտությունը: Լեզուների միջև եղած ընդհանրությունները դիտվում են իրոք միևնույն հասարակական-տնտեսական հարաբերությունների արդյունք, տարրերությունները՝ կապվում են նրանց գոյության հասարակական-տնտեսական պայմանների տարրերությունների հետ:

Լեզուների զարգացման համաշխարհային պրոցեսի միասնության դրույթը Մառի մոտ վերացական և սխեմատիկ բնույթ ունի:

<sup>1</sup> Մառի արխիվից. քաղաքածքն ըստ „Против вульгаризации и извращения марксизма в языкоизнании“ ժողովածուի առաջարանի, 1, էջ 6—7.

ա) Բստ այդ դրույթի լեզուները համարվում են միևնույն էլեմենտային ատաղձից ծագած. բոլոր լեզուների քերականական և բառապաշարային տարրերին հատկացվում է միևնույն էլեմենտային (մառական իմաստով) ծագումը, և բոլոր լեզուների հիմքում դրվում են 4 ընդհանուր էլեմենտները: Պայքարելով նախալեզուների գաղափարի դեմ՝ Մառը փաստորեն ավելի հեռու է գնում և նախալեզվային ընդհանրության գաղափարը փոխարինում էլեմենտային ընդհանրության գաղափարով: բ) Բոլոր լեզուներին, բայց Մառի, հատուկ են ձևաբանական, շարահյուսական և իմաստային միևնույն կարգի օրինաշափությունները, և նրանց տարբերությունները ներկայացնում են այս կամ այն ստաղիային հատուկ դրսեռումները: Բոլոր լեզուների զարգացմանը նախորդել է ձեռք-լեզվի փուլը, բոլոր լեզուներն անցել են մտածողության միևնույն ստադիաները, բոլոր լեզուների մեջ կարելի է գտնել միևնույն իմաստային օրինաշափությունների դրսեռումները, բոլոր լեզուները գտնվում են այս կամ այն տիպոլոգիական ստաղիայում: գ) Վերջապես, բայց Մառի, բոլոր լեզվական ընդհանրությունների և տարբերությունների հիմքը կազմում են արտադրական հարաբերությունների, հասարակական-տնտեսական պայմանների ընդհանրություններն ու տարբերությունները: Դրանց հեղաշրջումներն էլ առաջ են բերում լեզվական ստաղիալ անցումներ, որակական վերակազմումներ:

Մառի «լեզվի նոր ուսմունքի» այս հիմնական դրույթները բացասական ազդեցություն են թողնում լեզվաբանական ընդհանուր մի շարք սկզբունքների, առանձին լեզուների պատմության, ժամանակակից լեզուների ուսումնասիրության հարցերի գիտական հետազոտության վրա. 1) Մառի ֆանտասիկ լեզվա-մտածողական սիեմաները, անընդհատ զբաղվելը լեզվի ծագման, լեզվական ընդհանուր տարրերի և իմաստային օրենքներ որոնելու հարցերով՝ բացասարար էին անդրադառնում առանձին լեզուների ուսումնասիրության կոնկրետ հարցերի լուծման վրա, ժամանակակից լեզուների ուսումնասիրության սկզբունքները մնում էին չպարզաբանված. 2) քերականությունը դատարկ ձևականություն համարելը հանգեցնում էր քերականությունն արհամարհելուն, բուն քերականական որոշակի հարցերով զբաղվելու փոխարեն առանձին լեզուների ստաղիալ սխեմաներ հաստատելու փորձերին. 3) ջնջվում էր լեզվի մեջ գլխավորի և երկրորդականի սահմանը, լեզվի բոլոր տարրերը դիտվում էին որպես հայասարարժեք բաներ, քերակա-

նությունը և բառապաշարը, այլև բառապաշարի բոլոր մասերը դիտվում էին միևնույն ձևով. 4) իմաստաբանությունը դիտվում էր իբրև լեզվաբանական գլխավոր դիտցիպլինը. մնացած բաժինների մեջ գլխավոր դերը հատկացվում էր շարահյուսությանը, որովհետեւ լեզվի շարահյուսական կառուցվածքը համարվում էր հասարակական-տնտեսական հարաբերությունների ընդօրինակումը. ձեւաբանությունը Մառ համարում էր շարահյուսության, իսկ հնչյունաբանությունը՝ ձեւաբանության տեխնիկան:

Ներածական ընդհանուր տեղեկություններ ն. Յա. Մառի նետեսորդների գործունեության մասին.—ն. Յա. Մառի հարեթաբանությունը, վերամկրտվելով «լեզվի նոր ուսմունք» անունով և ներկայացվելով որպես միակ մարքսիստական լեզվաբանական ուսմունքը, մեծ թվով հետևող սովետական լեզվաբանները ստիպված էին տուրք տալ նրա առանձին դրույթներին: Մառի կենդանության օրոք նրա հետևորդներն ու աշակերտները բնդունում էին «նոր ուսմունքի» գրեթե բոլոր կողմերը՝ փորձելով «զարգացնել» դրանք կամ կիրառել առանձին լեզուների ուսումնասիրության նկատմամբ: Մակայն Մառի մահից հետո, 1930-ական թվականների կեսերից բարեկարգ նկատմամբ, նկատվում է որոշ փոփոխություն նրա հետևորդների հետաքրքրության շրջանակների մեջ: Զգալով Մառի բառատարր վերլուծության անպատճությունը, բայց շհամարձակվելով հրաժարվել նրանից,—որովհետև Մառի ուսմունքի մի շարք դրույթները (լեզվաստեղծական պրոցեսի միասնության, հնէաբանական վերլուծության և այլն) հենվում էին հենց նրա վրա,— Մառի հետևորդների մեծ մասը դադարում է այն կիրառելուց. սրանով իսկ նահանջ է կատարվում Մառի հարեթաբանությունից, և մի կողմ թողնը վկում Մառի ձեւաբանական ստագիալ տիպոլոգիան: Մառի հետեւ վորդները ուշադրությունը կենտրոնացնում են գերազանցապես շարահյուսական ստագիալ տիպոլոգիայի հարցերի վրա՝ շարունակելով իսկական պատմականությունից հեռանալու գիծը. շարահյուսությունն առաջին պլանի մղելը նրանք հիմնավորում են Մառի դրույթով շարահյուսության առաջնության մասին՝ նշելով, որ Մառը մտադիր էր խորացնել հենց այդ կողմը: Նրանք զուգագրում են ամենատարբեր կառուցվածքի լեզուները, փորձում ըստ շարահյուսական հատկանիշների դրանք դասավորել որոշ հաջորդական գծի վրա և պարզել այս կամ այն ստագիայից մյաւսին անցնելու տնտեսական հիմքերն ու մտածողության ստագիալ փոփոխությունները,

ընդ որում մտածողությունը շարունակում են նույնացնել իդեոլոգիայի հետո: Լեզուների ստադիալ-շարահյուսական տիպավորմանը զուգընթաց աշխատանք է տարվում այս կամ այն ստադիային հատկացվող առանձին լեզուների և լեզվախմբերի մեջ նախորդ ստադիաների մնացորդները որոնելու ուղղությամբ: Զկարողանալով լեզուները մտցնել իրենց ստադիալ կաղապարների մեջ՝ Մասի հետեւորդները ստիպված են լինում խոսել բազմաստադիալականության և անցողիկ ստադիալ տիպերի մասին:

1930-ական թվականների կեսերից հետո տարվող աշխատանքը կապված էր գեռնս 1930-ական թվականների առաջին կեսում կատարված մի շարք ուսումնասիրությունների հետ: Ինչպես հայտնի է, այսպես կոչված հարեթական լեզուների կարեռը հատկանիշը համարվում է էրգատիվ կառուցվածքը. կոլիկասյան «հարեթական» լեզուներում, բասկերենում, Ասիայի և Ամերիկայի որոշ լեզուներում անցողական բայի ենթական դրվում է ոչ թե ուղղականով (ինչպես անանցողական բայերի դեպքում), այլ այսպես կոչված էրգատիվ հոլովով, իսկ ուղիղ խնդիրը դրվում է ուղղականով. էրգատիվ կառուցվածքի լեզուներում հայցական հոլովը բացակայում է. այս կառուցվածքը գրավել է Ա. Մ. Դիոի, Հ. Շուխարդտի, Հ. Կ. Ուկենբեկի, Ա. Սոմմերֆելտի և ուրիշների ուշադրությունը<sup>1</sup>: Ն. Յա. Մաոր այդ կառուցվածքը կապում է «հասարակական պասսիվի» հետ<sup>2</sup>: Գեռնս 1930—1934 թթ. գրած իր մի շարք հոդվածներում<sup>3</sup> Ս. Լ. Բիխովսկայան տարբերում է երկու ստադիա՝ էրգատիվ և նոմինատիվ (ուղղական): Հենվելով Ուկենբեկի վրա՝ նա պնդում է, որ հնդերոպական ուղղական ու հայցական հոլովները ծագում են նախկին ակտիվ ու պասսիվ հոլովներից. սակայն էրգատիվ կառուցվածքը նա բնորոշում է ոչ թե որպես պասսիվ, այլ որպես ակտիվ-պասսիվ, որտեղ դիֆուզորեն տրված են և ակտիվությունը, և պասսիվությունը: Էրգատիվ և նոմինատիվ կա-

<sup>1</sup> Հմմ. Эргативная конструкция предложений, составил Е. А. Бокарев, вступительная статья проф. А. С. Чикобава, М., 1950.

<sup>2</sup> Հմմ. В. В. Виноградов, Критика концепций стадиальности в развитии языка и мышления, „Против вульгаризации и извращения марксизма в языкоznании“, I, М., 1951, էջ 107.

<sup>3</sup> С. Л. Быховская, Падежи в грузинском и армянском древнелитературных языках в палеонтологическом освещении, ЯС, VI, 1930. К вопросу о трансформации языка, „Доклады АН СССР“, 1930. Пассивная конструкция в югетических языках, „Язык и мышление“, II, 1934.

ուղղվածքներին Բիխովսկայան 1934 թ. նախորդել է տալիս մինախնական ստագիա, երբ մարդը բայերը զուգորդում է ըստ կոնկրետ բովանդակության՝ տարրերելով, այսպիսով, Յ կառուցվածք՝ սպացական բայերի (հմմտ. մու խուեցա), գործողության բայերի և վիճակի բայերի հետ:

Վ. Ի. Արակը Ն. Յա. Մառի հետևորդների միտքն ուղղում է այսպես կոչված «իդեոսեմանտիկայի» հարցերի կողմը՝ հենվելով մտածողության և իդեոլոգիայի նույնացման մառական սկզբունքի վրա: Նրա ուշադրության կենտրոնում են ստադիալ բառագիտության հարցերը, թեև նա ավելի ուշ (1948 թ.) հնարավոր է համարում «իդեոսեմանտիկայի» սկզբունքները կիրառել և ձեաբանության ու շարահյուսության նկատմամբ: 1934 թ. սկսած իր մի շարք հոդվածներում<sup>1</sup> Արակը, լեզուն համարելով իդեոլոգիա և նշելով, որ իդեոլոգիան պատասխանում է ոչ թե «ինչ», այլ «ինչպես» հարցին, լեզվի այս «իդեոլոգիական ֆունկցիան» հակադրում է հաղորդակցականին, գտնում, որ լեզվի գործածության ընդարձակումը, նրա գործածությունը որպես հաղորդակցման մեխանիզմի հանգեցնում է ապահովողացման, ապահմաստավորման, տեխնիկացման (технизация), երբ կարեոր է դառնում «ինչը». «Ամեն մի լեզվական կազմավորման՝ բառային, ձևաբանական, շարահյուսական՝ իդեոլոգիական բովանդակությունը,—գրում է Արակը, — գիտակցվում է խոսողի կողմից միայն նրա գոյության առաջին շրջանում, քանի դեռ ուժի մեջ է մնում հասարակական պրակտիկայի և աշխարհայացքի նրան սնող սիստեմը: Դրանից հետո խոսքային կազմավորման իդեոլոգիան մահանում է (отживаєт) և մոռացվում, իսկ ինքը կազմավորումը, նրա նյութական ձևը կարող է դեռ անորոշ երկար ժամանակ շարունակել իր գոյությունը, բայց արդեն ուժասպառ (выдохшийся), ապահմաստավորված, տեխնիկացված տեսքով»<sup>2</sup>: Քերականության գոյությունը Արակը համարում է հենց տեխնիկացման հետևանք. ինքնուրույն բառերի վերածումը սպասարկու մասնիկների այդ տեխնիկացման արտահայտություններից մեկն է. ձևաբանության վերակառուցումն էլ

<sup>1</sup> В. И. Абаев, Язык как идеология и язык как техника, „Язык и мышление“, II, 1934. Еще о языке как идеологии и как технике, „Язык и мышление“, VI—VII, 1936. Понятие идеосемантика, „Язык и мышление“, XI, 1948. Հմմտ. В. В. Виноградов, հիշ. աշխ. էջ 117—121:

<sup>2</sup> В. И. Абаев, Язык как идеология и язык как техника, էջ 39—

Հանգեցնում է շարահյուսության տեխնիկացման: Լեզվի զարգացումը, Արակե կարծիքով, որոշվում է երկու կարգի գործոններով՝ հասարակականացման օրենքով (լեզվի փոփոխությունը հասարակական գործոնների, հատկապես խաչավորման ազդեցությամբ) և ժառանգորդության օրենքով (законы социализации и преемственности): Իր «տեսությունը» Արակե փորձում է դիալեկտիկական բացասման բացասումի օրենքով (թեզիս-անտիթեզիս-սինթեզ)՝ ներկայացնել որպես լեզվաբանության վերջին նվաճումը (սինթեզ)՝ ձեական-համեմատական քերականությունից (թեզիս) և խոսքի հնէարանությունից (անտիթեզիս) հետո: Լեզուն մյուս իդեոլոգիաներից Արակե տարբերում է նրանով, որ նրանց մեջ տեսնում է ապահովաստավորում, բայց ոչ տեխնիկացում, տեխնիկական օգտագործում. ապահիմաստավորումն էլ հանգեցնում է այդ իդեոլոգիաների կորստին. լեզուն սրանով իսկ, ըստ Արակե, մոտենում է նյութական կուլտուրայի առարկաներին:

Ստաղիալ-շարահյուսական տիպոլոգիզմի զարգացումը կատված էր նաև երկու այլ հանգամանքի հետ՝ պալեոասիական լեզուների տվյալների օգտագործման և արտասահմանյան լեզվաբանների՝ Ուկենբեկի, Սոմմերֆելտի, Սեպիրի և այլոց ազդեցության: Ուկենբեկի ազդեցությունը նկատվում է էրգատիվ և նոմինատիվ կառուցվածքների փոխհարաբերության մեկնաբանման, Սոմմերֆելտինը՝ լեզվի և հասարակության վաղ շրջանի կապի ըմբռնման, Սեպիրինը՝ էական (ներգործողի և ներգործվողի) և ոչ էական շարահյուսական հարաբերությունների տարբերակման, շարահյուսական կառուցվածքի «միջուկի» (ենթակայի և ստորոգյալի շարաբերության) գաղափարի առաջքաշման մեջ և այլն: Մասի միջնորդությամբ կամ առանց դրա շարունակում են ազդեցություն գործել նաև Լիի Բրյուլը, Կասպիրերը և ուրիշները: Ավելորդ չէ նշել, որ Մասի հետեւորդների տիպոլոգիական վերլուծությունը, լեզվի ուսումնասիրության բաժինների փոխհարաբերության ըմբռնումը և այլն, զուգահեռներ ունեն արտասահմանյան-լեզվաբանության, հատկապես ստրոկտուրալիստների մի շարք որույթների հետ. Մասի ու նրա հետեւորդների խաչավորման դրույթը հարաբերակից է Պրագայի ստրոկտուրալիստների «լեզվամիության» դրույթին, մառականների ստագիալ տիպոլոգիան՝ ստրոկտուրալիստների մուտացիոնիզմին, պանխրոնիային, ունիվերսալիզմին, տիպոլոգիական զուգադրման պահանջին, մառականների՝ լեզվաբանության բաժինների փոխհարաբե-

րության վերանայումը՝ ստրուկտուրալիստների համատիպ փորձերին և այյն «էեզվի նոր ուսմունքի» որոշ հետեւողներ առանձին մանրամասների մեջ զերծ չեն հետաքրքիր մտքերից և երբեմն հանգել են դրական արդյունքների<sup>1</sup>:

Ստադիալ-շարահյուսական տիպոլոգիայի և բերականության գլխավոր հարցերը Ի. Ի. Մեշչանինովի, Ս. Դ. Կազնելսոնի, Ա. Պ. Ռիֆտինի աշխատություններում.— Մեշչանինովի ուշադրության կենտրոնում եղել են շարահյուսության հարցերը, իր աշխատություններում<sup>2</sup> նա պաշտպանել ու զարգացրել է Ն. Յա. Մառի «լեզվի նոր ուսմունքի» կարևորագույն դրույթները:

1930-ական թվականների 1-ին կեսին գրած իր աշխատություններում Մեշչանինովը գրեթե նույնությամբ ընդունում է Ն. Յա. Մառի ուսմունքի բոլոր կողմերը, այդ թվում քառատարր վերլուծությունը և ձեաբանական ստադիալականությունը. լեզոն համարելով վերնաշենք՝ անձեռ, կցական և թեքական տիպերը Մեշչանինովը կապում է նախնադարյան հասարակարգի, ստրկատիրական ու ֆեոդալական բազիսների հետ, ընդ որում նշում է, որ բուրժուական հասարակության մեջ շարունակվում է թեքական ստադիան՝ շնորհիվ վերնաշենքի զարգացման որոշ ինքնուրույնության<sup>3</sup>: Սրա հետ միասին նա փորձում է ապացուցել, որ անգիրեն ու ֆրանսերեն լեզուների վերլուծական կառուցվածքը ներկայացնում է կապիտալիստական հասարակարգի զարգացման պահանջի դրսերման ցուցանիշը: Նկատի առնելով նաև նախապատրաստական դիֆուզ տիպը և անցումային տիպերը՝ Մեշչանինովը ասհմանում է 7 ստադիա՝ 1) ազդանշանային, նույնը և դիֆուզ.

<sup>1</sup> Հետաքրքիր է նշել, որ Է. Բւնվենիստը և Ս. Դ. Կազնելսոնը հնգերոպական դասական թվականների և համեմատության աստիճանն կազմող մասնիկների ուսումնասիրության մեջ հասել են միատեսակ արդյունքների համար. Пути развития советского языкоznания, ВЯ, 1957, № 5, էջ 13:

<sup>2</sup> И. И. Мещанинов, К вопросу о языковых стадиях, ИАН ОЛЯ, 1931, № 7. К вопросу о стадиальности в письме и языке.-Изв. ГАИМК, 1931, VII, 5. 6. Проблема классификации языков в свете нового учения о языке, IV изд., М.-Л., 1936. Новое учение о языке, стадиальная типология, Л., 1936. Общее языкоzнание, к проблеме стадиальности в развитии слова и предложения. Л., 1940. Члены предложения и части речи, М., 1945. Глагол, М. Л., 1949 և այլն.

<sup>3</sup> Հմամատ. В. В. Виноградов, Критика концепций стадиальности в развитии языка и мышления, „Против вульгаризации и извращения марксизма в языкоzнании“, I, М., 1951, էջ 91 և հաջող:

Երբ առկա են ազդանշան հանդիսացող բառ-ֆրազները («զանգ», «հեռախոս» տիպի). 2) անձեւ-համադրական, երբ բառերն անձեւ են, և նրանց իմաստը որոշվում է տեղով. 3) անձեւ-կցական կամ որոշ-չային (դետերմինիրույթայ), երբ առկա են սպասարկու բառեր (օրինակ՝ հեռավոր արևելյան լեզուները, աբխազերենը՝ հաջորդ ստադիային անցնելու նշաններով). 4) կցական, երբ սպասար-կու բառերի մի մասը, կորցնելով շեշտր, կցվում է հիմնական բա-ռերին (օրինակ՝ թյուրքական լեզուները՝ հաջորդ ստադիային անց-նելու նշաններով). 5) մասնիկավոր, երբ սպասարկու բառերը վե-րածվում են մասնիկների (օրինակ՝ ոռւսերենը՝ հաջորդ ստադիա-յին անցնելու նշաններով). 6) թեքական, երբ հանդես է գալիս ներքին թեքումը (օրինակ՝ մի կողմից՝ գերմաներենը՝ մասնիկա-վորման, կցականության և նույնիսկ համարականության տար-րերով, մյուս կողմից՝ սեմական լեզուները). 7) նախդրավոր, այն է՝ վերլուծական, որի մեջ նախորդ ստադիաների գծեր կան, բայց «որակապես» ձեւափոխված (օրինակ՝ ֆրանսերենը և անգլերենը):

Իր «Հեղվի և գրի ստադիալականության հարցի շուրջը» աշ-խատության մեջ Մեշշանինովը տալիս է լեզուների ստադիալ խրմ-բագորման նոր փորձ՝ աշխատելով լեղվի և նրա զարգացման ստադիաները կապել հնագիտական տվյալների հետ:

Իր «Հեղուների դասակարգման պրոբլեմը լեղվի նոր ուսմուն-քի լույսի տակ» հոդվածում Մեշշանինովը լեզուների ծագումա-րանական դասակարգմանը հակադրում է ստադիալ-շարահյուսա-կան տիպոլոգիան: Հենվելով Ս. Լ. Թիխովսկայայի կառուցումների վրա՝ նա տարբերում է նախադասությունների կառուցվածքային-զարգացման 3 շրջան՝ 1) ակտիվ-դիցարանական, 2) էրգատիվ կամ ակտիվ-պասսիվ և 3) նոմինատիվ կամ ակտիվ-տրամաբա-նական:

Ավելի ուշ «Հեղվի նոր ուսմունքը, ստադիալ տիպոլոգիա» աշ-խատության մեջ (1936 թ.) Մեշշանինովը ուսումնասիրության մեջ է ներքաշում պալեոասիական լեզուները և փոփոխություն մտցնում հիշյալ սխեմայի մեջ: Մեշշանինովի կարծիքով՝ լեղվի զարգացման ստադիաները նույնությամբ չեն համընկնում մտածողության ստադիաների հետ, որովհետև լեզուն բնորոշվում է իր «ձեւական մասով» և որպես ձեւ է մնում բովանդակությունից: Հենվելով լեզվաստեղծական պրոցեսի միասնության դրույթի վրա՝ Մեշշա-նինովը լեղվի ստադիաները կապում է հասարակական-տնտեսա-կան կառուցվածքի փոփոխությունների հետ: Իր նախորդ ստա-

գիալ-շարահյուսական սխեմայի մեջ Մեշշանինովը որոշ փոփոխություն է մտցնում. էրգատիկ կառուցվածքը բնութագրելով որպես պասսիվորեն ակտիվացված ստաղիա՝ նա առանձնացնում է ակտիվ-պասսիվ ստաղիան որպես երկրորդ ստաղիա. ակտիվ-դիցաբանական ստաղիայի գերապրուկ է համարվում Հյուսիսային Ամերիկայի հնդկացիների որոշ լեզուների մեջ առկա ներմարմնավորումը՝ նախադասության արտահայտությունը մեկ բառով. ակտիվ-պասսիվ ստաղիան բնութագրվում է որպես սինթետիզմ, երբ ներմարմնավորված ամբողջությունը տրոհվում է մասերի, ինչպես պալեոասիական որոշ լեզուներում, և այդպիսով առանձնանում են սուբյեկտը, օբյեկտն ու ստորոգյալը և համապատասխանաբար անունն ու բայր՝ երկու հոլովի առկայությամբ:

«Ընդհանուր լեզվաբանություն, բառի և նախադասության գարգացման ստաղիալականության շուրջը» աշխատության մեջ (1940 թ.) Մեշշանինովը իր կառուցումների հիմքում դնում է շարահյուսական այնպիսի մի հատկանիշ, ինչպիսին է սուբյեկտա-օբյեկտային հարաբերությունը: Ընդհանուր առմամբ այստեղ նկատվում է ձևաբանությունը վերացնելու տեսնդենց. լեզվի գիխավոր միավորներ համարելով բառը և նախադասությունը՝ Մեշշանինովը տարբերում է քերականության երկու բաժին՝ 1) լեքսիկան, որի մեջ մտցվում են իմաստաբանությունը ու ձևաբանության՝ բառակազմությունը ուսումնասիրող մասը, և 2) շարահյուսությունը, որի մեջ մտցվում է նախադասության իմաստի և ձեկի վերաբերյալ ուսմունքը: Այսպիսով, բայց Մեշշանինովի, ընդհանուր առմամբ պեսք է տարբերել 1) հնչյունարանությունը (ուսմունքը հասարակայնորեն նշանակավոր (չնականական մասին), 2) լեքսիկան (ուսմունքը առանձին բառի և լեքսիկական կարգի բառազուգորդումների մասին) և 3) շարահյուսությունը (ուսմունքը բառի մասին նախադասության մեջ և նախադասության մասին՝ ամբողջությամբ վերցրած): Լեզուների ստաղիալ-շարահյուսական տիպուղիան ձեռք է բերում ֆորմալիստական ակրն-հայտ երանգ, կտրվում լեզուների պատմությունից, դառնում նախադասությունների կառուցվածքային տիպերի արտաժամանակային զուգադրում: Մեշշանինովը տարբերում է հետեւյալ կառուցվածքային տիպերը՝ 1) ներմարմնավորում, որից տրոհմամբ առաջանում է մասնակի ներմարմնավորումը. 2) ենթակայի և ստորոգ-

<sup>1</sup> И. И. Мещанинов, Общее языкознание, 1940, № 37:

զալի ներմարմնավորված ամբողջությունների առկայություն.  
3) նախադասության հետագա զարգացում ստացական (պոսեսիվ) և էրգատիվ կառուցվածքների ուղիղով. 4) նոմինատիվ կառուցվածք, որ ծագում է էրգատիվ կառուցվածքից: Ինչպես նշում էին և «լեզվի նոր ուսմունքի» մյուս հետեւրդները՝ ստադիալ տիպուգիայի առումով այստեղ որևէ նորություն չկար նախորդ գրքի համեմատությամբ:

«Ընդհանուր լեզվաբանության» մեջ արդեն առկա են այն հայցքի սաղմերը, որ հետագայում հանդես է գալիս Մեշանինովի «Նախադասության անդամները և խոսքի մասերը» և «Թայ» աշխատություններում. «Թայը դուրս է եկել անունից և բայ դարձել այն պատճառով, որ ստորոգյալն ամրացրել է նրան իր ցուցիչները, որոնք հետո դարձել են բայական»<sup>1</sup>: Այդ աշխատությունների մեջ Մեշանինովը որոշ նահանջ է կատարում ստադիալ-շարայցուսական տիպուգիայի հարցերից և գրադվում նախադասության անդամների ու խոսքի մասերի բնույթի ու կազմավորման հարցերով: Ենելով Մատի ուսմունքից և այն էկլեկտիկորեն զուգորդելով նախադասության անդամների ու խոսքի մասերի ոռումնասիրության այլ հայեցակետերի հետ<sup>2</sup>, Մեշանինովը խոսքի մասերը բիեցնում է նախադասության անդամներից: Խոսքի մասերը, ըստ Մեշանինովի, «ներկայացնում են լեքսիկական մի խմբավորում, որը բնորոշվում է համապատասխան շարայցուսական հատկություններով: Դրանք ձեռք են բերվում նրանց կողմից նախադասության մեջ, որտեղ բառերի մի որոշակի խումբ հարմարեցվում է առավելապես հանդես գալու այս կամ այն նախադասության անդամի նշանակությամբ կամ մտնում է նրա կազմի մեջ: Միաժամանակ, ինչպես նախադասության անդամը, այնպես էլ խոսքի մասը ունեն իրենց հատկությունները, որոնցով և նրանք առանձնանում են՝ նախադասության անդամը՝ նախադասության մեջ, խոսքի մասը՝ լեզվի լեքսիկական կազմի մեջ: Նրանք երկուսն էլ ունեն իրենց իմաստային նշանակումը և իրենց ձևական տարրերությունները: Նրանց իմաստային նշանակումը հանդես է գալիս որպես նրանց ընդհանուր հատկանիշը՝ հատուկ բոլոր լեզուներին, որոնց մեջ գոյություն ունեն նախադասության և լեզվի բա-

<sup>1</sup> И. И. Мещанинов, Общее языкознание, 1940, № 235:

<sup>2</sup> Հմամ. М. Н. Петерсон, Эклектизм взглядов И. И. Мещанинова на члены предложения и части речи, «Против вульгаризации и извращения марксизма в языкоznании», I, М., 1952, № 383—397.

հապաշարի տվյալ տիպի անդամատումները։ Այդ ընդհանուր հատկանիշները երեան են գալիս ամեն մի լեզվում առանձին և այդտեղ ուղեկցվում են լրացուցիչ, ամեն մի լեզվում նրանց բնորոշող հատկանիշներով, որոնք այդ լեզվում հանդես են գալիս»<sup>1</sup>։ Այդ բնորոշ հատկանիշները հենց քերականական կատեգորիաներն են։ Մասնաւոր հատկանիշները կատարվում են այսպես կոչված «հասկացական կատեգորիաներից» (ПОНЯТИЙНЫЕ категории). «Հասկացական կատեգորիաներով արվում են իր իսկ լեզվի մեջ տվյալ հասարակական միջավայրում գոյություն ունեցող հասկացությունները։ Այդ հասկացությունները չեն նկարագրվում լեզվի մեջ, նրա բառապաշարի և քերականական կառուցվածքի մեջ։ Այն հասկացական կատեգորիաները, որոնք լեզվի մեջ ստանում են իրենց շարահյուսական կամ ձեաբանական ձևը, դառնում են, ինչպես վերևում նշվել է, քերականական կատեգորիաներ»<sup>2</sup>։ Այսպես, օրինակ, տրամաբանական սուլբյեկտը և պրեդիկատը հասկացական կատեգորիաներ են, որոնք հանդես գալով նախադասության մեջ՝ դառնում են ենթակայի և ստորոգյալի քերականական կատեգորիաներ։ Հասկացական կատեգորիաները գիտակցության կատեգորիաներ են և միաժամանակ լեզվական կատեգորիաներ, որշափով հանդես են գալիս լեզվի մեջ։ Հանգելով լեզվի ու գիտակցության մետաֆիզիկական խզման՝ Մեշանինովը պնդում է, որ «առանց լեզվի մեջ երեան գալու, դրանք մնում են գիտակցության բնագավառում»<sup>3</sup>։

Իր այս աշխատության մեջ Մեշանինովը հատուկ ուշադրություն է դարձնում շարահյուսական հարաբերությունների արտահայտման եղանակներին՝ այս դեպքում, սակայն, առանց դրանց ստադիալ հաջորդականության հարցի սրման։ Միաժամանակ Մեշանինովը այդ միջոցների այլ կարգի խմբավորումներ չի կատարում՝ ի մի բերելով ամենատարրեր բնույթի երեւյնները։ Որպես այդպիսի միջոցներ նշվում են՝ 1) լրիվ ներմարմնավորումը (инкорпорирование полное), 2) մասնակի ներմարմնավորումը (инкорпорирование частичное), 3) սինթետիզմը, այն է՝ բառերի կապն արտահայտող հատուկ մասնիկների (դասանիշերի) գործածությունը, 4) համաձայնությունը, 5) ներփակումը (замыка-

<sup>1</sup> И. И. Мещанинов. Члены предложения и части речи. М., Л., 1945, էջ 11.

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 196.

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 198.

ниe), аյн է՝ նախադասության անդամի բաժանումը իր կազմի տարրերին (հոգ և գոյական, նախդիր և գոյական և այլն) և դրանց միջև տվյալ անդամին վերաբերող բառերի ներմուծումը (հմմտ. դերմ. դեր բարբառական կապի արտահայտումը շարադասական պարզ առդրությամբ, 7) վարումը (խնդրառություն, հոլովառություն, ուղարկություն), 8) առանձնացումը (սեպարատիզացիա), այն է՝ նախադասության ինքնուրույն անդամների առանձնացումը շարադասությամբ ու ձևավորմամբ, 9) տեղաբաշխումը (լոկալիզացիա, մետավայրություն), այն է՝ բառերի շարադասական բաշխումը, 10) ոիթմիկ խմբերը և շարույթները (ритмические группы и синтагмы), այն է՝ նախադասության անդամների խմբավորումները հնչյունական և իմաստային որոշ հատկանիշներով, 11) ինտոնացիան: Սրանց մեջ տարբերվում են այն միջոցները, որոնք ժառանգում են ողջ նախադասության ձևավորմանը, և այն միջոցները, որոնք հանդես են գալիս առանձին խմբավորումների մեջ՝ 1) լրիվ ներմարմնավորում և մասնակի ներմարմնավորում, 2) սինթետիզմ և համաձայնություն, 3) առանձնացում և վարում (խնդրառություն), 4) տեղաբաշխում և հարում, 5) ինտոնացիա և շարույթ. ներփակումը Փունկցիայով հարաբերակից է համարվում մասնակի ներմարմնավորմանը:

Առանձին օրիգինալությամբ աշքի չեն ընկնում «լեզվի նորուամունքի» մյուս տեսաբանների, հատկապես Ս. Դ. Կացնելսոնի, Ա. Պ. Ռիֆտինի և ուրիշների ստադիալ կառուցումները:

Ս. Դ. Կացնելսոնը իր «Նորմատիվ նախադասության ծագման շուրջը» և «Լեզվաբանության համառոտ ուրվագիծ» աշխատություններում<sup>1</sup> գծում է ստադիալ-շարահյուսական 3 ստադիա, փորձելով համապատասխան կապ ստեղծել մտածողության զարգացման ստադիաների հետ՝ 1) բառ-նախադասության ստադիա՝ տոտեմական մտածողությամբ, 2) էրգատիվ ստադիա՝ պատկերավոր-դիցաբանական մտածողությամբ և գործողության ակտիվ սուբյեկտի ու վիճակի պասսիվ սուբյեկտի, անվան ու բայի, բայի անցողականության ու անանցողականության տարբերակմամբ, 3) նոմինատիվ ստադիա. վերջինիս մեջ Կացնելսոնը տարբերում է 2 աստիճան՝ վաղ և ուշ. եթե այս երկու աստիճանի տարբերման

<sup>1</sup> С. Д. Кацнельсон, К генезису номинативного предложения, М.—Л., 1936. Краткий очерк языкоznания, Л. 1941.

Հիմքում ընկած է Պոտերնյայի ուսմունքը, ապա նոմինատիվ ստադիայի առաջացման հարցում Կացնելսոնը հենվում է Դոյչբայնի այն կարծիքի վրա, թե նախադասության նոմինատիվ կառուցվածքը ծագել է իրականության առարկաները որպես սուբստանցիաներ գիտակցելու հետ կապված<sup>1</sup>:

Եր «Քերականական կատեգորիայի մասին» և «Պատմա-քերականական հետազոտություններ» աշխատություններում<sup>2</sup> Կացնելսոնը հանդես է գալիս քերականության մի շարք տեսական գործնական հարցերի մշակման փորձով։ Հենվելով Մառի ու Մեշշանինովի վրա և գերադասություն տալով նախադասությանը բառի հանդեպ՝ նա փաստորեն վերացնում է ձեւբանությունը։ Բայտ Կացնելսոնի՝ բառը առաջանում է կապակցված խոսքից, նախադասությունից, բառազուգորդումից։ Հետեարար բառի առանձնակի քըն-նությունը պետք է հանգեցվի նախադասության կառուցվածքային քննության։ Դեռևս «Լեզվաբանության համառոտ ուրվագծում» Կացնելսոնը գրում էր, որ «բառի ձեր բառակապակցության ձեր մասնակի դեպքն է» և որ, հետեարար, այն «պետք է հանգեցվի բառակապակցության ձերին, այնպես, ինչպես ձեւբանությունը ամբողջովին ենթակա է շարահյուսությանը հանգեցվելու»<sup>3</sup>։ Այս-տեղից էլ Կացնելսոնը քերականական կատեգորիաները կապում է ոչ թե առանձին բառերի, այլ լեզվակառուցվածքի հետ։ Նա առաջ է քաշում «շարահյուսական ձեւբանության» գաղափարը և հակադրում «թեքական ձեւբանության» տրադիցիոն գաղափարին։ Նրա կարծիքով՝ «շարահյուսական ձեւբանության» խնդիրը պետք է լինի բառաձեերի հանգեցումը բառազուգորդման ձերին։ այս հարցում Կացնելսոնը հետեւում է Մեշշանինովին, որը «Ընդհանուր լեզվաբանության» մեջ վերացնելով ձեւբանությունը՝ այն հատկացնում էր մասամբ լեբսիկային («լեբսիկական ձեւբանություն»), մասամբ՝ շարահյուսությանը («շարահյուսական ձեւբանություն»)։ Վերջինիս հատկացվում էր այն ձեռւյթների վերլուծությունը, որոնք հանդես են բերում բառի փոփոխությունները՝ կախված նրա դերից նախադասության մեջ։ Շարահյուսական ձեւբանության հետ

<sup>1</sup> M. Deutscher, Satz und Urtheil, Kötten, 1919, էջ 35.  
հմտ. և В. В. Виноградов, հիշ. աշխ., էջ 129—130.

<sup>2</sup> С. Д. Кацнельсон, О грамматической категории, ВЛУ, 1948, № 2. Историко-грамматические исследования, I, М. Л., 1949.

<sup>3</sup> С. Д. Кацнельсон, Краткий очерк языкоznания, Л., 1941, էջ 34.

Է կապվում Կացնելսոնի փորձը՝ լայնացնելու սպասարկու բառերի և սուպլեմենտիվմի շրջանակը: Միաժամանակ պայքարելով՝ «ձեական քերականության» դեմ և փորձելով քերականական կատեգորիաները կապել ստաղիալ վերլուծության ու իդեոլոգիական փոփոխությունների հետ՝ Կացնելսոնը հանգում է «լեզվի իմացաբանություն» ստեղծելու գաղափարին<sup>1</sup>: «Քերականական կատեգորիաների կամ, որ նույնն է, քերականական իմաստների մասնահատուկ վերլուծությունը,— գրում է նա,— պետք է աջակցի նրանց Հիմքում ընկած մտածողության կատեգորիաների և տվյալ լեզվում նրանց դրսեռման սպեցիֆիկ առանձնահատկությունների բացահայտմանը: Մտածողության կատեգորիաների առանձնացմամբ պետք է, վերջապես, սկսվի «լեզվի իմացաբանության» հարցերի մշակումը, քերականական ձևերի իմացաբանական էության պարզաբանումը որպես աշխարհի օրինաշափ կապի յուրատեսակ արտացոլման»<sup>2</sup>:

Ա. Պ. Ռիֆտինը ևս ստաղիաներն առանձնացնում է սուրյեկտի, օբյեկտի և նրանց փոխհարաբերության ըմբռնման Հիման վրա<sup>3</sup>: Նա տարբերում է 4 ստաղիա՝ 1) նախադասության «երկսուրյեկտային» կառուցվածք՝ տոտեմային մտածողությամբ և ակտիվ սուրյեկտի ու պասսիվ սուրյեկտի միջև նույնության-պատկանելության հարաբերության արտահայտությամբ (օրինակ՝ Ա. Սոմմերֆելտի վերլուծած ավստրալիական արանտա լեզուն, որտեղ օբյեկտը դիտվում է որպես պասսիվ «սուրյեկտ»). 2) «նախադասության օբյեկտային» կառուցվածքը, եթե և՝ սուրյեկտը, և՝ օբյեկտը դիտվում են որպես օբյեկտ, սուրյեկտը կախված է զգում իրեն օբյեկտից, անտեսանելի աշխարհը իշխում է տեսանելիի վրա. 3) նախադասության էրդատիվ կառուցվածք՝ սուրյեկտի և օբյեկտի որակական խիստ հակադրությամբ, բնդ որում անանցողական գործողության դործողը դիտվում է որպես օբյեկտ (Ռիֆտինը սրահամար տիպական է համարում ոչ թե կովկասյան լեզուների, այլ

<sup>1</sup> Կացնելսոնից առաջ «իմացաբանական քերականության» ստեղծման փորձով հանդես է եկել հայ լեզվաբան Գ. Սեսկը իր «Խոսքի մասերի ուսմունքը» աշխատության մեջ (1939 թ.), որտեղ խոսքի մասերի և նախադասության անդամների տարրերությունը կապվում է լեզու-խոսք հակադրության հետ:

<sup>2</sup> С. Д. Кацнельсон. Историко-грамматические исследования, էջ 21:

<sup>3</sup> А. П. Рифтин, Основные принципы построения теории стадий в языке, „Труды юбилейной научной сессии ЛГУ“ 1946.

շումերերենի կառուցվածքը). 4) նախաղասության նոմինատիվ կառուցվածք՝ սուրյեկտի և օբյեկտի միասնությամբ և ձևական տարբերակմամբ։ Այս ստաղիաները Ռիֆտինը փորձում է կապել հասարակական-տնտեսական զարգացման փուլերի հետ։

Զգալի ազդեցություն է գործում Ռիֆտինի մշակած դրույթը բարդ նախաղասության առաջացման երկու ուղիների մասին՝ 1) պարզ նախաղասությունների միացման և 2) պարզ նախաղասության մեջ գտնվող դերբայական դարձվածների ծավալման ուղիով (ոչ առանց Լ. Պ. Յակովինսկու ազդեցության)։

## 2. ԱՅԼ ԿՈՆՑԵՊՑԻՈՆԵՐ

Ընդհանուր տեղեկություններ.— Այս վերնագրի տակ մենք միավորում ենք այն բոլոր լեզվաբանների ուսմունքները, որոնք չեն հարում «լեզվի նոր ուսմունքին» կամ քննաղատարար էին նայում նրա գանազան սկզբունքներին։ Այս լեզվաբանների մեջ կային ինչպես հին, այնպես էլ նոր սերնդի ներկայացուցիչներ։ Հին սերնդի լեզվաբանների մի մասը, ծանոթանալով մարքսիզմին, փորձում էր նրա սկզբունքները ինքնուրույն կերպով արմատավորել լեզվաբանության մեջ, խուսափել «լեզվի նոր ուսմունքի» ակընհայտ գոեհկացումներից և դեկլարատիվությունից։ Սակայն որոշ մասն էլ «լեզվի նոր ուսմունքին» հակադրվում էր ոչ թե մարքսիզմի, այլ նախկին լեզվաբանական կոնցեպցիաների դիրքերից։ Նոր սերնդի ներկայացուցիչները տեսնում էին Մառի և նրա հետեւողների ակնհայտ վրիպումներն ու շեղումները, փորձում ցուց տալ դրանք, ստեղծել իսկական մարքսիստական լեզվաբանություն։ Այն հանգամանքը, որ «լեզվի նոր ուսմունքի» հակառակորդների միջև շկար միասնականություն, և որ նրանք ոչ բոլոր դեպքերում էին ենում մարքսիզմի շահերից, մեծ շափով թուլացնում էր նրանց ընդհանուր դիրքերը և հասարակություն տալիս «լեզվի նոր ուսմունքի» ներկայացուցիչներին իրենց դիրքերն ամրապնդելու։

Դեռևս 1920-ական թթ. կեսերից սովետական գրեթե բոլոր լեզվաբանների մեջ արմատանում է լեզվի հասարակական ընույ-

<sup>1</sup> А. П. Рифтин. О двух путях развития сложного предложения в аккадском языке. „Советское языкознание“, III, Л., 1937-  
Քննաղատությունը տե՛ս Գ. Ս. Կնարեի „Еще раз о двух путях развития сложного предложения“ Հողածում, ВЯ, 1955, № 1, էջ 108—116։

մի բմբոնումր: Այս բանը կատարվում է մարքսիզմի բազայի վրա, բայց սկզբնապես նշանակալից աղղեցություն է գործում նաև Սույնորի ու Մեյեի սոցիոլոգիզմը: Գրեթե բոլոր լեզվարանական հոսանքների ներկայացուցիչների մոտ շրջադարձ է կատարվում դեպի լեզվի հասարակական ըմբռնումը. բացառություն չեն կազմում և հոգեբանական դպրոցի ներկայացուցիչները, հատկապես ի. Ա. Բողուեն-դե-Կուրտենեն, Լ. Վ. Շշերբան, Ե. Դ. Պոլիվանովը և ուրիշները, որոնցից վերջին երկուսը կարենոր աշխատանք էն կատարում սովետական լեզվաբանության առջև դրված տեսական ու գործնական խնդիրների լուծման ուղղությամբ: Որոշ լեզվաբանների մոտ էլ, ինչպես, օրինակ, Ա. Մ. Պեշկովսկու աշխատություններում, հանդես է գալիս տարբեր լեզվաբանական հոսանքների և դորժադրվող մեթոդների էկեկտիկական զուգորդման փորձ: «Էզու և հասարակություն» թեման զբաղեցնում է գրեթե բոլոր սովետական լեզվաբանների միաբար. պայքար է տարվում սուբյեկտիվիզմի և ինդիվիդուալիզմի դեմ, փորձ է արվում օգտագործելու սոսյուրական սոցիոլոգիզմի նվաճումները մարքսիստական լեզվաբանության ստեղծման ճանապարհին: Այս հարցերն առանձին սրությամբ դրվում են Ռ. Օ. Շորի, Մ. Ն. Պետերսոնի, Յա. Վ. Լոյայի, Ա. Մ. Սելիշչևի, Գ. Օ. Վահոնովի և այլոց աշխատություններում:

Ն. Յա. Մառի հետ միասին ընդունելով լեզվի վերնաշնքայնության, մասսամբ և լեզվի դասակարգայնության դրույթները՝ սովետական լեզվաբանների՝ «լեզվի նոր ուսմունքին» շնարող կամ այն վերապահումներով ընդունող մասը լեզվի վերաշենքայնության դրույթը ոչ միշտ էր հասկանում այնպես, թե բազիսում կատարված փոփոխությունները անմիջական արտացոլում են գըտնում լեզվի մեջ և թե լեզուն իր բոլոր կողմերով հավասարապես է կապված բազիսի հետ. նշվում էր լեզվի հարցերական անկախությունը, լեզվի ու բազիսի կապի բարդ դիալեկտիկական

1 Р. О. Шор, Язык и общество. М., 1926. Кризис современной лингвистики, „V яфетический сборник“, Л., 1927. М. Н. Петерсон, Язык как социальное явление, „Ученые записки ИЛЯ РАНИОН“. 1. Я. В. Лоя, Против субъективного идеализма в языковедении, „Языковедение и материализм“ 1. 1929, № 131—217. А. М. Селишев, Язык революционной эпохи. М., 1928. Г. О. Винокур, Культура языка, М., 1925, II հր. 1930. П. Я. Черных, 1. Современные течения в лингвистике. 2. Русский язык и революция. Иркутск, 1929.

բնույթը, փորձ էր արվում ճշտելու լեզվի տեղը մյուս վերնաշենքային կատեգորիաների մեջ:

Լեզվի դասակարգայնության դրույթն ընդունող լեզվարանների մի զգալի մասն էլ այսուհանդերձ նախ՝ և լուսում էր դասակարգի մարքսիստական ըմբռնումից և դասակարգային լեզվի մասին խոսում էր միայն դասակարգային հասարակության հետ կապված. Երկրորդ՝ դասակարգային լեզվի ըմբռնումը շէր բացարձակացնում և չէր հասցնում տոհմի, ցեղի, ժողովրդի, ազգի համար բնդշանուր լեզվի ժխտման. Երրորդ՝ ի տարրերություն Մասի և Նրա որոշ հետեղոդների՝ դասակարգային տարրերությունները տեսնում էր գերազանցապես բառապաշտի, բառերի իմաստի, լեզվի նկատմամբ ունեցած գերաբերմունքի, զրական լեզվի մշակման սկզբունքների տարրերության մեջ:

Լեզվի հասարակական ըմբռնման հետ կապված՝ վերանայվում են որոշ կարեոր տեսական ու մեթոդական հարցեր: Այսպես, արմատական վերանայման է ենթարկվում հնչույթի ուսմունքը: Դեռևս 1920-ական թվականներին Ն. Ֆ. Ցակովլիք, որը «լեզվի նոր ուսմունքին» հարելով հանդերձ՝ զերծ շէ դրական հայացքներից՝ հրաժարվում է հնչույթի գաղափարի հոգերանական մեկնաբանությունից<sup>1</sup>: 1930-ական թվականներին այս հայացքը դառնում է տիրապետող: Նշելի է միայն, որ սովետական ոչ բոլոր լեզվարաններն են միասնական կարծիք հայտնում հնչույթի ուսմունքի գանազան կողմերի մասին: Եթե Մոսկվայի հնչույթաբանները՝ Ռ. Խ. Ավանեսովը, Վ. Ն. Սիդորովը, Պ. Ս. Կուզնեցովը, Ա. Ա. Ռեֆորմատոսկին կազմում են մի թեր, ապա մյուս թերում հանդես են գալիս Շշերբան և Նրա աշակերտներն ու հետեղոդները՝ Լ. Ռ. Զինդերը, Ս. Ի. Բեռնշտեյնը, Մ. Ի. Մատուսկիչը: Հնչույթաբանության բնագավառում զգալի տարրերություններ են հանդես գալիս նաև Ա. Ի. Սմիռնիցկու, Գ. Ա. Ախվլեղիանու և ուրիշների հայացքների մեջ:

Լեզվի հասարակական ըմբռնման հետ կապված՝ սովետական լեզվարանները առաջին պլանի վրա են բաշխում լեզվի հաղորդակցական ֆունկցիայի առաջնության հարցը: Եթե Մասր և Նրա-

<sup>1</sup> Н. Ф. Яковлев, Таблицы фонетики кабардинского языка, „Труды подразделения исследования северокавказских языков при Ин-те востоковедения в Москве“, вып. I, М., 1928. Математическая формула построения алфавита, „Культура и письменность Востока“, I-м., 1928.

Հետեւրդները հաղորդակցական ֆունկցիան համարում էին ոչ սկզբնական, խոսում էին լեզվի՝ սկզբնական մոգական բնույթի մասին, ապա սովետական լեզվաբանների գրեթե ողջ մնացած մասը շեշտը դնում էր լեզվի հենց այս հաղորդակցական ֆունկցիայի վրա, որպես լեզվի հասարակական էությունը որոշող ֆունկցիայի: Այս կապակցությամբ սովետական լեզվաբանների ձեռք բերած արդյունքները կանխում են արտասահմանյան լեզվաբանության մեջ ինֆորմացիայի տեսության հետ կապված ուսումնասիրությունները լեզվի հաղորդակցական ֆունկցիայի բնագավառում<sup>1</sup>: 1950 թ. սկսած՝ լեզվի հաղորդակցական ֆունկցիայի առաջնության դրույթը ընդհանուր ճանաշում է գտնում:

Լեզվի հասարակական ըմբռնումը անհրաժեշտ է դարձնում Սոսյուրի կողմից դրված լեզվի և խոսքի փոխհարաբերության քննությունը: Սովետական լեզվաբանները փորձում են այս հարցը լուծել դիալեկտիկական մատերիալիզմի դիրքերից և այսուեղ մեծ մասամբ տեսնում են ընդհանուրի և առանձինի դիալեկտիկան: Այս հարցի լուծումը Սմիռնիցկու մոտ կբննվի նրա լեզվաբանական գործունեության բնութագրման հետ կապված: Հայ լեզվաբան Գ. Սկակը փորձում է խոսքի մասերի և նախադասության անդամների փոխհարաբերության հարցը լուծել լեզվի և խոսքի փոխհարաբերության պահանով: Ընդհանուր առմամբ ճիշտ գնելով այդ երկու կարգի կատեղորիաները հստակ կերպով տարրերակելու անհրաժեշտության հարցը<sup>2</sup> Գ. Սկակը, սակայն մի կողմից՝ գրեթե անտեսում է դրանց լեզվական սպեցիֆիկան և փորձում հարցը լուծել միայն «իմացաբանական» հիմունքով, մյուս կողմից՝ բավարար շափով հաշվի շի առնում դրանց անցումները, դնում է կողք-կողքի, անշատում իրարից, խստորեն հակադրում միմյանց:

Գ. Կ. Դանիլովը, քննադատելով Սոսյուրին, նրա ուսմունքի ամենից ամենի խոցելի կողմերից մեկը համարում է այն, որ լեզվական պրոցեսների նյութական-ֆիզիոլոգիական հիմքը Սոսյուրը շի պարզաբանում, այլ մնում է հոգեբանական մեկնաբանության համաններում: Դանիլովի կարծիքով՝ լեզվական պրոցեսների նյութական կողմի պարզաբանումը կազմում է «մարքսիստական սոցիոլոգիայի» գլխավոր խնդիրը, ընդ որում այդ նյութական կողմի պարզաբանման հիմքում նա դնում է Պավլովի ոեֆեքտների

<sup>1</sup> Հմմա. G. P. Springer, Early Soviet Theories in Communication, Cambridge, Mass., 1956.

*ուսմունքը: Սոսյուրի «լրացումը» շի խանգարում Գանիլովին գրեթե նույնությամբ յուրացնելու լեզվի սոսյուրյան սահմանումը. նա լեզուն սահմանում է որպես որոշակի կարգի պայմանական այն նշանների (բառերի, ժեստերի և միմիկական նշանների) սիստեմը, որոնք ընդհանուր են տվյալ մարդկային կոլեկտիվի համար<sup>1</sup>:*

*Պավլովի ոեֆլեքսների ուսմունքը (ոեֆլեքսոլոգիան) լեզվի նկատմամբ կիրառելու փորձեր կատարում են և ուրիշները՝ Ա. Բոգդանովը, ի. Պրեզենտը, Ս. Մ. Դոբրոցակը<sup>2</sup>: Սակայն եթե մի կողմից՝ այս փորձերը գիտական արժեք էին ներկայացնում խոսքի ֆիզիոլոգիական հիմունքների ուսումնասիրության տեսակեալից (Ս. ի. Դոբրոցակ), ապա մյուս կողմից՝ որոշ դեպքերում դրանց մեջ հանդես էր գալիս բիոլոգիզմը մարքսիզմի հետ էլեկտրակորեն գուգորդելու տեսնենց: Այս հեղինակները խոսքը դիտում են որպես պայմանական ոեֆլեքսների պարզ կոմպլեքս: Որոշ տուրք է տրվում նաև նուարեի՝ լեզվի աշխատանքային ծագման տեսությանը: Այս է պատճառը, որ նրանք քննադատության են ենթարկվում և մառականների, և ոչ մառականների կողմից. Շորք Դոբրոցակի ուսմունքը դիտում է որպես սոցիոլոգիզմի և բիոլոգիզմի էլեկտրակական գուգորդում, Ասմուսը Բոգդանովի և Պրեզենտի ուսմունքը որակում է որպես վուզար սոցիոլոգիական նատուրալիզմ:*

*Ի. Օ. Շորք իր «Լեզու և հասարակություն» գրքում Սոսյուրի սոցիոլոգիզմի փոխարեն առաջ է քաշում Մեյեի սոցիոլոգիզմը՝ այն ամենից ավելի մոտ համարելով մարքսիզմին: Մեյեի սոցիոլոգիզմը լրացվում է նրանով, որ վերջինիս նշած կուլտուրական գործոնի կողքին տեղ է հատկացվում և տնտեսական գործոնին: Շորք աշխատությունը ևս ներկայացնում է արտասահմանյան սոցիոլոգիզմի և մարքսիզմի դրույթների էլեկտրական գուգորդման փորձ: Դեռ ավելին, Շորք նեոկանտական Մառթներին համարում է մա-*

<sup>1</sup> Г. К. Данилов, К вопросу о марксистской лингвистике, Л.—М., 1928.

<sup>2</sup> А. Богданов, Учение о рефлексах и загалки первого бытного мышления, ВКА, 1925, № 10. И. Презент, Происхождение речи и мышления, М., 1928. С. М. Доброгаев, Физиологический и социальный элементы в учении о речи человека, „Труды лаборатории физиологии речи ИЛЯЗВ“, Л., 1929. Учение о рефлексе в проблемах языковедения, „Языковедение и материализм“, вып. II, Л., 1931. *и т. д.*  
4 Речевые рефлексы, М. Л., 1947.

առերիալիստ՝ նշելով, որ վերջինս քերականական կատեգորիաների մեջ որոնում է հասարակական-տնտեսական կողմը:

Պետերսոնը քերականության բնագավառում ֆորտունատովի վերլուծության սկզբունքները հասցնելով ծայրա՛հղության՝ լեզվի հասարակական բնույթի մեկնաբանության մեջ հենվում է Սոսյուրի վրա: Նա փորձում է Սոսյուրին հաշտեցնել ֆորմալիստների հետ:

Որոշ լեզվաբաններ էլ, Սոսյուրի ուսմունքը դիտելով որպես ֆորմալ-իմաննենտային ուսմունք՝ փորձում են օգտագործել ֆուլերի ուսմունքի դրական կողմերը (լեզվի և կուլտուրայի կապի, գրական լեզվի և ոճի հարցերի դրումը և այլն) մարքսիստական լեզվաբանություն կառուցելու հարցում: Այստեղ առաջին հերթին պետք է հիշել Վ. Մ. Վոլոշինովին, որ հատուկ տեղ է նվիրել նաև լեզվի նշանայնության գաղափարի մատերիալիստական հիմնավորման փորձին. սրա հետ միասին նա տուրք է տալիս իդեոլոգիական երևույթների նշանայնության գաղափարին, լենինի կողմից քննադատված հիերոգլիֆիզմին<sup>1</sup>:

Հասկանալի է, որ պայքար էր գնում ոչ միայն «լեզվի նոր ուսմունք» հետևորդների ու հակառակորդների, այլև այս բոլոր կարգի հայացքների կողմնակիցների միջև. այսպես, Շշերբան և ուրիշները հանդես էին գալիս քերականության հարցերի նեղ ձեմական-ձևարանական բմբունման դեմ. Շորը և մյուսները քննադատում էին Վոլոշինովին՝ մարքսիզմից թույլ տված շեղումների համար և այլն:

Ավելորդ չեւ նշել, որ Սոսյուրի և մասամբ Բողուեն-դե-Կուրտենեի որոշ հետևորդներ հարձակումներ էին գործում պատմա-համեմատական լեզվաբանության դեմ, առաջ քաշում սինխրոնիկ ուսումնասիրության առաջնության հարցը:

Հետագա քննության մեջ կանգ կառնենք այն լեզվաբանների վրա, որոնք առանձնահատուկ դեր են խաղացել սովետական լեզվաբանության պատմության մեջ:

Լ. Վ. Շշերբա.—Լ. Վ. Շշերբայի (1880—1944) լեզվաբանական գործունեությունը կարելի է բաժանել երկու շրջանի՝ 1900-ական թվականներից մինչև 1920-ական թվականների կեսերը և հետագա տարիները՝ մինչև մահը: Առաջին շրջանում նա հանդես է գա-

<sup>1</sup> В. И. Волошинов, Марксизм и философия языка, Л. 1930.

լիս որպես սուբյեկտիվ պահիսողգիզմի հետևորդ և լեզվաբանական հետազոտության գլխավոր մեթոդը համարում սուբյեկտիվ մեթոդը. սրա նպատակը Շերբան համարում է տվյալ լեզվով խոսող անհաների խոսքային գործունեության հոգեկան-գիտակցական պայմանների պարզաբանումը: Երկրորդ շրջանում նա հաղթահարում է սուբյեկտիվ պահիսողգիզմը և աստիճանաբար կանգնում լեզվի դիալեկտիկա-մատերիալիստական ըմբռնման դիրքերի վրա, երնում լեզվի հաղորդակցական ֆունկցիայի առաջնությունից, լեզուն դիտում որպես հասարակական երևոյթ, դնում լեզվի և մտածողության դիալեկտիկական կապի հարցը, հնչույթի ուսմունքը վերանայում այդ սկզբունքների լույսի տակ: Շերբան այս շրջանում մեծ դեր է տալիս լեզուների խառնմանը և դնում տիպուգիական համեմատությունների կարևորության հարցը: Հիմք ընդունելով լեզվի սիստեմայնության գաղափարը՝ Շերբան պահանջում է լեզվի տարրերի փոխկապակցված քննություն, լեզվական սիստեմը դիտում է անընդհատ շարժման մեջ, լեզվական նորմայի անրնդհատ փոփոխության մեջ, փնտրում լեզվի նկարագրության ուսցիունալ եղանակներ:

Շերբայի գլխավոր ծառայությունը լեզվաբանությանը հընչույթի ուսմունքի հետագա մշակման մեջ է: Ճիշտ է, Շերբան երկար ժամանակ մնում է հնչույթի հոգերանական ըմբռնման դիրքերում՝ որպես հնչունի պատկերացման, բայց դեռևս 1911—1912 թթ. նա տալիս է հնչույթի իմաստային ընութագիրը, նշում՝ հնչույթի իմաստատարքերի ֆունկցիան, կարեռ դեր հատկացնում հնչույթի ֆունկցիոնալ կողմին: 1911 թ. նա խոսում է «իմաստատարքերի ուժի»<sup>1</sup> հնչույթի գլխավոր հատկանիշ լինելու մասին, իսկ հաջորդ տարին հնչույթը սահմանում է որպես «տվյալ լեզվի նվազագույն ընդհանուր հնչունական պատկերացում, որն ի վիճակի է զուգորդվել իմաստային պատկերացումների հետ ու տարրերակել բառերը և կարող է առանձնացվել խոսքից՝ առանց բառի հնչունական կազմի աղավաղման»<sup>2</sup>:

Իր գործունեության երկրորդ շրջանում Շերբան վերանայում է հնչույթի ուսմունքը դիալեկտիկական մատերիալիզմի դիրքերից: Ընդունելով հնչունի Յ կողմ Փիզիկական, բիոլոգիական և լեզվա-

<sup>1</sup> L. Ščerba, Court exposé de la prononciation russe, 1911, էջ 2:

<sup>2</sup> Л. Шерба, Русские гласные в качественном и количественном отношении, СПб. 1912, էջ 14.

раинавкаун կամ հասարակական՝ Շերբան հնչույթը դիտում է հենց այդ հասարակական կողմի դիրքերից։ Այս առումով Շերբան տարրերում է հնչույթը, որպես հնչունի հասարակական զողմը, հնչույթի տարրերակից (վարիանտից), որպես այդ հնչույթի կոնկրետ իրացումից՝ դրանց միջև տեսնելով ընդհանուրի և առանձինի դիալեկտիկական կապ. հնչույթի տարրերակները, ըստ Շերբայի, «իրապես արտասանվող տարրեր հնչուններն են, որոնք հանդիսանում են այն մասնավորը, որի մեջ իրացվում է ընդհանուրը (հնչույթը)»<sup>1</sup>. Հնչույթը, որպես արտասանվող տարրերակների ընդհանուր կողմ, հնարավորություն է տալիս հաղորդակցման արցեսում տարրերակելու բառերն ու բառաձեկերը, ըստ իմաստային ֆունկցիայի բնդհանրության՝ արտասանական տարրերակները միավորելու մեկ հնչույթի մեջ։ Միաժամանակ Շերբան նշում է տվյալ լեզվի հնչույթների սիստեմայնությունը, հակադրությունների որոշ սիստեմ կազմելը. «Ամեն մի հնչույթ որոշվում է նրանով,— գրում է Շերբան,— ինչ նրան տարրերում է միենույն լեզվի ուրիշ հնչույթներից։ Դրա շնորհիվ յուրաքանչյուր տվյալ լեզվի հնչույթները կազմում են հակադրությունների մի միասնական սիստեմ, որտեղ ամեն մի անդամ որոշվում է տարրեր հակադրությունների շարքով, ինչպես առանձին հնչույթների, այնպես էլ դրանց խմբերի»<sup>2</sup>: Շերբան խոսում է նաև հնչույթների հերթագայության մասին։ Ավելորդ չեղել, որ Շերբան բողոքում է հնչունի և հնչույթի, հնչունաբանության և հնչույթաբանության մետաֆիզիկական այն հակադրության դեմ, որ անցկացվում է ստրուկտորալ լեզվաբանության ներկայացուցիչների կողմից։ «Խնչի գեմ հարկավոր է ամեն կերպ բողոքել այդ՝ հնչույթաբանությունը հնչունաբանությունից, այդ բառի նեղ իմաստով, կըսրբելու դեմ է։ Ուսումնասիրել տվյալ լեզվի հնչույթների սիստեմը, որոշել նրանցից ամեն մեկի «իմաստավորված» («семантизированное») հատկանիշները, կարելի է միայն տվյալ լեզվի կոնկրետ արտասանության, այդ արտասանության առանձին տարրերի ոչ պակաս կոնկրետ պատճառական կապերի ուսումնասիրության միջոցով»<sup>3</sup>:

<sup>1</sup> Л. В. Шерба, Фонетика французского языка, II հր., 1939, էջ 17 (1 հրատարակությունը՝ 1937 թ.).

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 18.

<sup>3</sup> Л. В. Шерба, Очередные проблемы языкоковедения, ИАН О.Я., IV, 6, 1945, էջ 185—186.

Շշերբայի հնչույթաբանական ուսմունքը գնահատելիս՝ նրա հետեւրդները նշում են 3 կողմ՝ 1) հնչույթի նոր սահմանում տալը, 2) հնչույթի երանգների ուսմունքը և 3) հնչույթի պատմականության հաշվառումը<sup>1</sup>:

Հնչյունաբանության հարցերի հետ միասին Շշերբան կարեոր տեղ է տվել նաև լեզվի ընդհանուր տեսության ու բառագիտության, մասամբ և շարահյուսության հարցերին: Քերականության մեջ Շշերբան առանձնացնում է 4 բաժին՝ 1) բառակազմությունը, 2) ձևակազմությունը, 3) շարահյուսությունը և 4) խոսքի մասերի կամ բառա-քերականական կատեգորիաների ուսմունքը: Տարբերելով լեզուն և խոսքը՝ Շշերբան նշում է, որ խոսքի մեջ առանձին բառերը չեն տրված. «խոսք-մտքի»՝ «առանձին առարկաներ» արտահայտող և տվյալ իրադրության մեջ այլևս շբաժանվող (նվազագույն-կրատչայան) միավորները շարույթներն են (սինտագմաները), որոնք կազմված են բառակապակցություններից կամ բառերից. «լեզվի» մեջ դրանց համապատասխանում են բառերը՝ որպես լեզվի՝ այլևս շբաժանվող միավորներ և տվյալ կոլեկտիվի մեջ մշակված առանձին հասկացությունների արտահայտություններ:

Ե. Դ. Պոլիվանով<sup>2</sup>.— Ե. Դ. Պոլիվանովը եղել է այն լեզվաբաններից մեկը, որոնք Սովետական իշխանության տարիներին սրոնել են մարքսիստական լեզվաբանության զարգացման ինքնուրբույն ուղիներ, ակտիվ պայքար մղել «լեզվի նոր ուսմունքի» վուգար սոցիոլոգիական դրույթների դեմ և զերծ եղել անցյալի լեզվաբանական ժառանգության օգտագործման հարցում ն. Յա. Մառի ու նրա հետեւրդների ցուցաբերած նիհիլիզմից: Պոլիվանովն զբաղվել է և՛ ընդհանուր լեզվաբանության (հատկապես հնչույթաբանության տեսության) հարցերով, և՛ առանձին լեզվախմբերի ու լեզուների ուսումնասիրությամբ. նա եղել է աշքի րնկնող պոլիգլոտ, մեծ դեր կատարել շինարենի, ճապոներենի, կորեերենի, թյուրքական լեզուների (հատկապես ուզբեկերենի), ուսւերենի և այլ լեզուների

<sup>1</sup> Հմմտ. Լ. Բ. Զինդեր. Общая фонетика, докторская диссертация, 1954, № 691а: Զինդերը վիճարկում է Տրուբեցյովի այն կարծեքը, թե Շշերբան առաջինն է նշել հնչյունի բառատարրերի: Փունկցիան՝ այդ համարելով վաղուց հայտնի մի բան:

<sup>2</sup> Հմմտ. В. В. Иванов, Лингвистические взгляды Е. Д. Поливанова, ВЯ, 1957, № 3, № 55—73. Հողվածին կցված է Պոլիվանովի գիտական աշխատությունների ցանկը, № 73—76:

ուսումնասիրության մեջ։ Տեսական խոր գիտելիքները նա զուգորդել է գործնական աշխատանքի հետ։

Պոլիվանովի լնդհանուր տեսական աշխատություններից հիշատակելի են հատկապես «Լեզվաբանության ներածություն և ընդհանուր հնչյունբանության կոնսպեկտ» (վերահրատարակված «Լեզվաբանության ներածություն և լնդհանուր հնչյունաբանության դասախոսություններ» վերնագրի տակ)<sup>1</sup>, «Լեզվաբանության ներածություն արևելագիտական բուհերի համար»<sup>2</sup>, «Հանուն մարքսիստական լեզվաբանության»<sup>3</sup> աշխատությունները և այլն։

Պոլիվանովի լեզվաբանական գործունեության մեջ ես կարելի է տարբերել 2 շրջան։ Առաջին շրջանում, գտնվելով Թողուեն-դե-Կուրտենեի և Շշերբայի լեզվաբանական հայացքների ազդեցութան տակ, նա դեռևս հանդես է գալիս որպես սուլբեկտիլ պսիխոլոգիզմի հետեւրդ։ Նշելի է, որ հնչույթաբանության բնագավառում Շշերբան ավելի վաղ է ազատվում պսիխոլոգիզմի ազդեցությունից, քան Պոլիվանովը, որը մինչև 1937 թ. շարունակում էր հնչույթը դիտել որպես «հնչյունապատկերացում», հնչույթաբանությունը՝ որպես «պսիխոֆոնետիկա»։ Պոլիվանովի գործունեության առաջին շրջանը, սակայն, զերծ չէ ուսանելի կողմերից. պատահական չէ, որ Պրագայի լեզվաբանական խմբակի ներկայացուցիչները, հատկապես Տրուբեցյոյը, հնչույթաբանական տեսության գարգացման մեջ Թողուեն-դե-Կուրտենեի և Շշերբայի հետ միասին հիշատակում են և Պոլիվանովին։ Իր գործունեության այս շրջանում է, որ Պոլիվանովը Սոսյոգրից միանգամայն անկախ կերպով առաջ է քաշում լեզվական արժեքի գաղափարը, ընդ որում այդ գաղափարը հիմնում է լեզվի հաղորդակցական ֆունկցիայի վրա. «Հարկավոր է նկատի առնել, — գրում է նա, — որ 1) հնչյունների ոչ բոլոր ֆիզիոլոգիական և ֆիզիկական տարբերությունները (այսինքն՝ տարբերություններն ըստ հնչարտադրական և ակուստիկական կազմի) միևնույն արժեքն ունեն լեզվի համար որպես հաղորդակցման միջոցի և որ 2) տարբեր լեզուներում երկու հնչյունների որևէ տարբերության արժեքը կարող է տարբեր լինել»<sup>4</sup>։

<sup>1</sup> Е. Д. Поливанов, Конспект лекций по введению в языкоznание и общей фонетике, читанных в 1915—1916 уч. году, I. Петроград, 1916. Лекции по введению в языкоznание и общей фонетике, Берлин, 1923.

<sup>2</sup> Е. Д. Поливанов, Введение в языкоznание для востоковедных вузов, Л., 1928.

<sup>3</sup> Е. Д. Поливанов, За марксистское языкоznание, М., 1931.

<sup>4</sup> Е. Д. Поливанов, Конспекты лекций по введению в языкоznание и общей фонетике, I, 1916, № 87.

Հոկտեմբերյան Սոցիալիստական ռեզլյուցիայից հետո, իր գործունեության երկրորդ շրջանում Պոլիվանովը աստիճանաբար հեռանում է լեզվական երևոյթների առլրյեկտիվ հոգերանական մեկնաբանությունից և կանգնում լեզվի հասարակական ըմբռուման հողի վրա։ Այդ առանձնապես ցայտուն կերպով երևան է զալիս «Հանուն մարքսիստական լեզվաբանության» հոդվածների ժողովածում։

Նշելով, որ նախորդ շրջանի լեզվաբանները եթե ուշադրություն էլ դարձել են լեզվի հասարակական բնույթի վրա, ապա լեզվաբանական պրակտիկայում այդ կողմը անուշադրության են մատնել, Պոլիվանովը պովետական լեզվաբանության առանձնահատկությունը տեսնում է ծանրության կենտրոնը լեզվի ուսումնասիրության սոցիոլոգիական կողմի վրա տեղափոխելու մեջ։ Այս կապակցությամբ լեզվի գոյության պայմանը և նպատակը նա տեսնում է հասարակության հաղորդակցական կարիքների բավարարման մեջ և լեզվական նշանները համեմատում է հաղորդակցման ծառայող այլ կարգի նշանների հետ։ Լեզուն Պոլիվանովի համար հասարակական հաղորդակցման նշանների մի սիստեմ է։

Ի տարբերություն «լեզվի նոր ուսմունքի» ստադիալականության տեսաբանների՝ Պոլիվանովը գտնում է, որ լեզվական փոփոխությունները կատարվում են աննկատ, որով և հնարավոր է դառնում հաղորդակցումը տարբեր սերուղների միջև։ Հասարակական տեղաշարժերի դեպքում լեզուն արմատական հաղաշըրջման շի ենթարկվում։ Լեզվի ոչ բոլոր կողմերն են հավասարապես զգայուն հասարակական տեղաշարժերի հանդեպ։ Եթե բառապաշարը և դարձվածաբանությունը ամենազգայուն բնագավառներն են, ապա նույնը շի կարելի ամել հնչյունական և քերականական կողմերի մասին։ Հասարակական-տնտեսական գործոնները վերջին դեպքում նախ՝ որոշում են ոչ թե հնչյունական կամ ձեւրանական կոնկրետ փաստերը, այլ տվյալ փոփոխության՝ տվյալ կոլեկտիվում իրականանալու հնարավորությունը (կատարվելը կամ չկատարվելը) և երկրորդ՝ ձեւափոխում են լեզվական փոփոխության ելակետները։ Լեզվի պատմության և հասարակության պատմության կապը Պոլիվանովը պահանջում է հիմնել փաստերի կոնկրետ ուսումնասիրության վրա։

Պոլիվանովը որոշ իմաստով փորձում է Բողուեն-դե-Կորտենեի հոգեբանական դպրոցի դրույթները վերահմաստավորել մարք-

սիստական տեսանկյունից: Եթե Բոդուենը խոսում էր «անհատական խոսվածքների» (ինձնականություն ունեցող բառեր) մասին, ապա Պոլիվանովը դրանց միավորման հիմքում դնում է «կոլեկտիվի կոռպերատիվ պահանջմունքը»: Նա ընդունում է լեզվի փոփոխության Յ գործոն՝ ֆիզիոլոգիական, հոգեբանական և կուտուրական. վերջինիս կապակցությամբ նա խոսում է նաև այնպիսի գործոնների ազդեցության մասին, ինչպիսիք են դասակարգացին պայքարը, արտադրական հարաբերությունների փոփոխությունը և այլն: Ֆիզիոլոգիական գործոնի կապակցությամբ Պոլիվանովը, ոչ առանց ծագերսենի ազդեցության, խոսում է շարժման տնտեսման՝ արտասանական փոփոխության վճռական գործոն լինելու մասին:

Պոլիվանովը մեծ ուշադրություն էր հատկացնում հասարակական բարբառագիտության հարցերին՝ հասարակա-խմբային բարբառներ համարելով ծածկալեզուները (կրիպտոլալիческие жаргоны), դասակարգային և մասնագիտական (պրոֆեսիոնալ) խոսվածքները. սակայն, որոշ դեպքերում, Պոլիվանովը սրանց շարքն էր դասում ժողովրդի ընդհանուր ստանդարտ լեզուն՝ կոյնեն, որպես գերազանցապես տիրապետող դասակարգի կողմից օգտագործվող լեզու: Փնտրելով բարբառների ուսումնասիրության նոր մեթոդներ՝ Պոլիվանովը հանգում է բարբառագիտական վիճակադրության և բարբառագիտության մեջ մաթեմատիկական մեթոդների (ֆունկցիաների տեսության) կիրառման գաղափարին: Բարբառների ստատիկ նկարագրությունը Պոլիվանովը կապում է պատմական զարգացման հետագա սաղմերի ուսումնասիրության հետ, անհրաժեշտ համարում որոշել այն հակասությունները, որոնք հանգեցնում են լեզվական փաստերի փոփոխությանը, որպես հակասության լուծման:

Պոլիվանովը հատուկ ուշադրություն է դարձնում պատմահամեմտական հետագոտության հարցերին, պաշտպանության տակ առնում պատմա-համեմտական մեթոդը, անհրաժեշտ համարում պատմա-համեմտական լեզվաբանության նվաճումների օգտագործումը սովորական լեզվաբանության կողմից: Այս տեսակետից նա հակադրում է պատմա-համեմտական մեթոդը Մասիքառատարը վերլուծությանը՝ ցույց տալով այս վերջին «մեթոդով» կատարված ստուգաբարանությունների անհեթեթությունը: Սրա հետմիասին նա պահանջում է պատմա-համեմտական ուսումնասի-

րության արդյունքները, հատկապես «Հնդկրոպական հնությունները» գնահատել սոցիոլոգիական տեսանկյունով։ Պոլիվանովի պատմա-համեմատական հետազոտությունների համար բնորոշ են՝ 1) պատմա-համեմատական հետազոտությունների մեջ նկարագրական լեզվաբանության արդյունքների, այլև երևույթների հարաբերական ժամանակագրության հաստատման ու ներքին վերականգնման սկզբունքների կիրառումը, 2) պատմա-համեմատական լեզվաբանության տվյալները սուբստրատի, խաչավորման ու սրա հետ կապված՝ «լեզվամիությունների» տեսությամբ լրացնելու պահանջը, 3) լեզվասիստեմների գուգադրական ուսումնասիրության միջոցով երևույթների՝ տվյալ սիստեմների մեջ ունեցած տեղի պարզաբանման ձգտումը։

Լեզվական էվոլյուցիայի պատճառները որոշելիս Պոլիվանովը, հետեւելով Բոդուենին, առանձին տեղ է տալիս լեզվական միջոցների տնտեսման սկզբունքին։ Այս սկզբունքի դրսենորումը նա կապում է լեզվի հաղորդակցական ֆունկցիայի հետ՝ նշելով, որ լեզվական միջոցների տնտեսումը և ջանքերի խնայումը կիրառվում են։ այն շափով, որ շափով շեն խանգարում հաղորդակցմանը՝ խոսղական գործունեության նպատակին։ Հնչյունական բնագավառում Պոլիվանովն ընդհանուր տենդենց էր համարում նեղ ձայնավորների անկումը, ձայնեղ բաղաձայնների ավելի արագ շփականացումը, քան խուլերինը և այլն։

Կարեռ են Պոլիվանովի նվաճումները հնչույթաբանության բնագավառում։ Նա ոչ միայն կիրառել է Բոդուենի, Շշերբայի հընչույթաբանական սկզբունքները բազմազան լեզուների նկատմամբ, այլև առաջ տարել հնչույթաբանական տեսությունը։ Նա դեռևս 1925 թ. պրյու-պրյու տիպի գուգադրման հիման վրա առաջ է քաշում «ապոտենցիալ» բառատարբերման գաղափարը, որը կանխում է Պրագայի լեզվաբանական խմբակի հնչույթաբանական հակադրությունների շեղութացման դրույթը։ Նա առաջին հնչույթաբանն է, որ գրադղել է վանկի հնչույթաբանական գերի բնութագրմամբ։ Հենվելով Շշերբայի վրա՝ նա որոշել է հնչույթի ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) և զուգորդային (կոմբինատոր) տարբերակների փոխհարաբերությունը։ Պոլիվանովը հատուկ ուշադրություն է դարձրել շեշտի դերի հնչույթաբանական բնութագրմանը՝ զարգացնելով Բոդուենի հայացքները։ Առանձնապես կարևոր է Պոլիվանովի դերը պատմական հնչույթաբանության սկզբունքների-

մշակման մեջ, այստեղ նա հետագա մշակման է ենթարկում դիվերգենցիայի և կոնվերգենցիայի ուսմունքը՝ դրանց միջև սահմանելով փոխադարձ կախման հարաբերություն. այս ուսմունքն օգտագործվելով Ռ. Յակոբսոնի կողմից, հետագայում լայն ընդունելություն է գտել: Հնչույթները դիտելով որպես փոխկապակցված սիստեմի տարրեր, Պոլիվանովը նախ՝ ցույց է տալիս, որ մի փոփոխությունը պայմանավորում է մյուսը (հետագայում Ա. Մարտինեի՝ «շղթայաձեռնակացիա» կոչած երևույթը). Երկրորդ՝ օգտագործում է վիճակագրական տվյալները՝ հնչույթների տարրերակեան կարողության աստիճանը (հետագայում «ֆունկցիոնալ բեռնավորում» կոչված երևույթը) որոշելու համար. երրորդ՝ հենվելով հնչույթների սիստեմային շարքերի վրա՝ դիմում է ներքին վերականգնման եղանակին, որոշում բացակայող անդամը:

Լեզվի ուսումնասիրության մյուս բաժինները ևս գրավել են Պոլիվանովի ուշադրությունը. Հնչույթարանական վերլուծության արդյունքները նա փորձում է կիրառել ձեւբանական վերլուծության՝ նկատմամբ, քերականական երևույթների՝ ուսումնասիրությունը կապում հնչյունական սիստեմի ուսումնասիրության հետ: Պոլիվանովը տարրերում է ձեռույթների երկու տիպ՝ բառային և ձեւվական (լեքսիческие и формальные), ընդ որում սրանց տարրերակման համար հիմք է ընդունում ինչպես իմաստը, այնպես էլ բառերի մեջ մասնակցելու, կամ, ինչպես ինքն է կոչում, ֆունկցիայի, հաճախականությունը: Խոսքի մասերի դասակարգումը Պոլիվանովը կատարում է ըստ բառային ձեռույթների՝ տարրեր ձեւկան ձեռույթների հետ զուգորդվելու առանձնահատկությունների, ընդ որում հաշվի է առնում և խոսքի մասերի փոխանցումները: Պոլիվանովը բառը տարրերում է ձեռույթից, նախ՝ նրանով, որ բառը մեկուսացման (ԱՅՈՒՅԱՅԱ) պոտենցիալ ընդունակություն ունի և երկրորդ՝ նրանով, որ բառը որպես շարահյուսական միավոր հնչյունական որոշ հատկություններով այս կամ այն լեզվում առանձնանում է:

Լեզվի ուսումնասիրության բաժինների մեջ, բացի հնչյունաբանությունից, ձեւբանությունից, շարահյուսությունից և բառագիտությունից (լեքսիկա), Պոլիվանովն առանձնացնում է նաև դարձվածաբանությունը: Միաժամանակ Պոլիվանովը հատուկ ուշադրություն է դարձնում այսպես կոչված «կիրառական լեզվաբանությանը»՝ սովետական լեզվաբանության գլխավոր առանձնահատկություններից մեկն էլ համարելով գործնական աշխատանքը

այբուրենների ստեղծման, բառարաններ, ձեռնարկներ, դասագրեր կազմելու ուղղությամբ: Ինքը Պոլիվանովը նշանակալից աշխատանք է կատարել այրութենների ստեղծման և բարեփոխման գործում: Նշելի է նաև այն հետաքրքրությունը, որ Պոլիվանովը ցուցաբերում էր դեպի ոճի հարցերը, հատկապես դեպի բանաստեղծական լեզուն:

## II. ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒԵՐ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներածական տեղեկություններ.—Ընդհանուր լեզվաբանության հարցերին նվիրված դասագրերում, մենագրություններում ու հոդվածներում այս ենթաշրջանում ավելի ու ավելի է զգացվում «լեզվի նոր ուսմունքի» ազդեցությունը: Ի. Ի. Մեշշանինովի «Ընդհանուր լեզվաբանությունը», Ս. Դ. Կացնելյանի «Լեզվաբանության համառոտ ուրվագիծը», Լ. Ա. Գորբուշինայի և Վ. Գ. Յակովլեսկի «Լեզվաբանության տարերքը», Ռ. Օ. Շորի և Ն. Ս. Չեմոդանովի «Լեզվաբանության ներածությունը», Է. Աղայանի «Լեզվաբանության ներածություն ըստ լեզվի նոր ուսմունքի» աշխատությունը և այլն<sup>1</sup>,—այս բոլորը ներկայացնում են «լեզվի նոր ուսմունքի» կիրառման փորձեր: Ֆիշտ է, նրանցից ոչ մեկին չի հաջողվել և չեր էլ կարող հաջողվել, «լեզվի նոր ուսմունքի» սկզբունքները հետևողականորեն տարածել լեզվաբանության բոլոր հարցերի վրա, բայց և այնպես հեղինակների մեծ մասի մոտ այդպիսի ձգությունը առկա է: Սրանց կողքին առկա են ընդհանուր լեզվաբանության այնպիսի դասագրեր և ամփոփիչ շարադրանքներ, որոնց մեջ կամ բացահայտ հակադրություն կա «լեզվի նոր ուսմունքի» հանդեպ, կամ այն անտեսված է, կամ նրան տուրք է տրված միայն այն շափով, որ շափով հեղինակները ստիպված են եղել այդ անելու: Այսպիսի աշխատություններից հիշատակելի են Ե. Դ. Պոլիվանովի «Լեզվաբանության ներածությունը», Ս. Ն. Պետերսոնի «Լեզվաբանության ներածությունը», Գ. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվա-

<sup>1</sup> И. И. Мещанинов, Общее языкознание, Л., 1940. С. Д. Кацнельсон, Краткий очерк языкоznания, Л., 1941. Л. А. Горбушина и В. Г. Яковлев. Элементы языкоznания и сведения из истории русского языка и письма, М., 1941. Р. О. Шор и Н. С. Чемоданов, Введение в языковедение, М., 1945. Է. Աղայան, Լեզվաբանության ներածություն ըստ լեզվի նոր ուսմունքի, Երևան, 1949.

բանությունը», Ա. Զիքորավայի «Ընդհանուր լեզվաբանությունը», Ա. Ա. Ռեֆորմատսկու «Լեզվաբանության ներածությունը» և այլն<sup>1</sup>:

Մեծ թիվ են կաղմում ընդհանուր լեզվաբանական զանազան հարցերին նվիրված մենագրություններն ու հոդվածները՝ մեծ մասամբ գրված «լեզվի նոր ուսմունքի» ազդեցության տակ: Շատ հարցեր տեղի են տալիս աշխույժ վեճերի և մեկնաբանությունների, հանդես են գալիս տարբեր մեկնաբանության փորձեր: Հատկապես լայն վեճեր են առաջացնում հնչույթի և սինտագմայի հարցերը, որոնց մասին անհրաժեշտ ենք համարում առանձնապես խոսել: Նշենք, որ հնչույթի հարցը լուծելիս Մառի հետեւրդները ելնում էին իրենց ուսուցչի պատահական մի սահմանումից (որ հնչույթը «հասարակայնորեն մշակված հնչուն» է), իսկ սինտագմայի հարցը թողնում էին առանց լուրջ միջամտության, որովհետև այստեղ ն. Յա. Մառի ցուցումը չկար:

1930-ական թվականներին ուսերեն են թարգմանվում և առաջարաններով ու առանձին մեկնություններով լույս տեսնում Ֆ. դը-Սոսյուրի, Փ. Վանդրիեսի, Ա. Մեյեի, Է. Սեպիրի կարևորագույն աշխատությունները<sup>2</sup>: Առաջարանների մեջ տրվում էր այդ լեզվաբանների կոնցեպցիայի գնահատականը և լեզվաբանական մեթոդի վերլուծությունը: Այդ թարգմանությունները կարևոր դեր խաղացին սովորական լեզվաբանական կազմերի դաստիարակման գործում:

Հնչույթի ուսմունքը.—Հնչույթի բնույթի հասարակական մեկնաբանության առաջին փորձը, ինչպես նշել ենք, տվել է Ն. Յ.

<sup>1</sup> Е. Д. Поливанов. Введение в языкознание для востоковедческих вузов, Л., 1928. М. Н. Петерсон. Введение в языкокведение, задания 1—16, М., 1928—1929. Գ. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, Երևան, 1939. Ա. Զիքորավայ, Ընդհանուր լեզվաբանություն, I—II, Թրիլիսի, 1947—1952 (գրացերեն). А. А. Реформатский. Введение в языкокведение. М., 1947:

<sup>2</sup> Ф. де-Соссюр. Курс общей лингвистики, под. ред. и примеч. Р. О. Шор, вводная статья Д. Н. Введенского. М., 1933. Ж. Вандриес. Язык, лингвистическое введение в историю, примеч. П. С. Кузнецова, под. ред. и предисл. Р. О. Шор, М., 1937. А. Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков, под. ред. и примеч. Р. О. Шор, вступит. статья М. Сергиевского. М. Л., 1938. Э. Сепир. Язык, введение в изучение речи, пер с англ., примеч. и вводн. статья А. М. Сухотина, предисл. С. Л. Белевицкого. М.—Л., 1934.

Յակովլեր: Հետագայում կարելի է նկատել հնչույթի հարցի նկատմամբ 3 տարրեր մոտեցում:

«Լեզվի նոր ուսմունքի» ներկայացուցիչները փորձում են հրնչույթի գաղափարը՝ մեկնաբանել լեզվի վերնաշենքայնության և դասակարգայնության դիրքերից: Նման մեկնաբանության վաղ փորձերից մեկը պատկանում է Ի. Սունցովային, որը 1934 թ. գրում էր. «Հնչույթը հասարակայնորեն-իմաստավոր տիպ է, դասակարգային լեզվի ակուստիկորեն և ֆիզիոլոգիապես մերձավոր մի շարք խոսքային հնչույնների ընդհանրացում, որ այդ ձևով է հարաբերում իր մասնակիններին և կարող է տարբերակել ու քանդել բառիմաստր»<sup>1</sup>: Մասի մյուս հետեւրդները ևս այս կամ այնշափով առողք են տալիս հնչույթի՝ նման ըմբռնմանը, փորձում հնչույթի ողջ ուսմունքը կառուցել Մասի՝ ի միջի այլոց հայտնած կարծիքի հիման վրա, բայց որի հնչույթը «հասարակայնորեն մշակված հնչույնն» է: Այս մոտեցումը հանդես է եկել հնչույթի շուրջը ծավալված դիսկուսիաներում ու վեճերում:

Լ. Վ. Շշերբան, ոչ առանց Յակովլերի և Սունցովայի ազդեցության, վերանայելով իր նախկին հոգեբանական մոտեցումը, հասնում է հնչույթի բնույթի, հնչույթի և հնչույնի դիալեկտիկական փոխհարաբերության ըմբռնմանը՝ առանց վուգար սոցիոլոգիական շեղումների:

Ինչպես նշել ենք, Լ. Վ. Շշերբայի և նրա հետեւրդների հրնչույթաբանական ուսմունքը առարկության է հանդիպում Մոսկվայի հնչույթաբանների կողմից, որոնց հայացքների շարադրանքը կարելի է գտնել. Ի. Ավանեսովի և Վ. Ն. Սիդորովի «Խուսացորական լեզվի քերականության ուրիշագիծ», Ռ. Ի. Ավանեսովի «Ժամանակակից ուսաց գրական լեզվի հնչույնաբանություն» և Ա. Ա. Ռեֆորմատսկու «Լեզվաբանության ներածություն» և այլ աշխատություններում<sup>2</sup>: Լ. Վ. Շշերբայի և նրա հետեւրդների հա-

<sup>1</sup> И. Сунцов. Фонема, „Мовознавство“, 1934, № 2, էջ 123.

<sup>2</sup> Р. И. Аванесов и В. Н. Сидоров. Очерк грамматики русского литературного языка. М., 1945. Р. И. Аванесов. К вопросу о фонеме, ИАН ОЛЯ, 1952. XI. Фонетика современного русского литературного языка, М., 1956. Кратчайшая звуковая единица в составе слова и морфемы, „Вопросы грамматического строя“, М., 1955. А. А. Реформатский, Проблема фонемы в американской лингвистике, УЗНТПИ, 1941, V. Введение в языкознание, М., 1947, II հր., 1956. К проблеме фонемы и фонологии, ИАН ОЛЯ, 1952, XI. О соотношении фонетики и грамматики (морфологии), „Вопросы грамматического строя“, М., 1955 և այլն.

շացքների շարադրանքը տրված է Լ. Վ. Շերբայի «Ֆրանսերենի հնչունաբանություն», Մ. Ի. Մատուսկիլի «Ընդհանուր հնչունաբանության ներածություն», Լ. Ռ. Զինդերի «Հնչունաբանության հարցերը» և այլ աշխատություններում<sup>1</sup>: Հնչույթի շուրջը տարվող մեճերն արտացոլված են ՍՍՌՄ ԳԱ «Տեղեկագրի» լեզվի և գրականության շարքում և ավելի ուշ «Вопросы языкоznания» հանդեսում:

Մոսկվայի հնչույթաբանական դպրոցի ներկայացուցիչների և Շերբայի ու նրա հետեւրդների գլխավոր տարբերությունը լեզվական մեկնակետային միավորների ընտրության մեջ է, մի հանգամանք, որ իթ հերթին կապված է այլ կարգի հարցերի հետ: Շերբայի և նրա հետեւրդների մեկնակետը բառաձեն է, Մոսկվայի հնչույթաբանական դպրոցի ներկայացուցիչներինը՝ ձեռութրառացինները կողմնորոշվում են հնչույթների ֆիզիոլոգիականակուստիկական արժեքի ընդհանրություններով ու տարբերություններով, երկրորդները՝ հնչույթների ֆունկցիոնալ ընդհանրություններով ու տարբերություններով. առաջինները հատուկ ուշադրություն շեն դարձնում հնչունական հերթագայությունների վրա, երկրորդները, ընդհակառակն, ենում են հենց դրանց առկայության փաստից. առաջինները ուշադրություն շեն դարձնում ուժեղ և թույլ դրություններում (сильные и слабые позиции)<sup>2</sup> հնչույթների ցուցաբերած տարբերությունների վրա, երկրորդները խիստ կարեոր են համարում այդպիսի տարբերությունները. այսպես, օրինակ, Շերբայի և նրա հետեւրդների համար միևնույն հնչույթն է առկա TOT, որպեսի սկզբում և առ սա [սա] բառերի վերջում, մինչդեռ բառասկզբում բաղաձայն հնչույթները շեն փոխվում, իսկ բառավերջի դիրքում կարող են փոխվել. Մոսկվայի հնչույթաբանները սադ-ի տ-ն նույնը շեն համարում TOT-ի տ-ի հետ, որովհետև առաջին դեպքում Տ-ն ստացվում է միայն բառավերջում՝ Ձ-ից, այսինքն՝ առկա է Ճ/Տ հերթագայությունը:

<sup>1</sup> Л. В. Шерба, Фонетика французского языка, Л.—М., 1937, V հր., 1955. М. И. Матусевич, Введение в общую фонетику, Л. 1941, II հր., 1948. Л. Р. Зиндер и М. И. Матусевич, К истории учения о фонеме, ИАН ОЛЯ, 1953. Л. Р. Зиндер, Вопросы фонетики, Л., 1948. Существуют ли звуки речи? ИАН ОЛЯ, 1948, VII. Общая фонетика, Л., 1960.

<sup>2</sup> Հմամատ. Р. И. Аванесов, Кратчайшая звуковая единица..., Հջ. 133 և 52:

Երկու ուղղություններն էլ ունեն թերություններ: Շերտայի և նրա հետեւողների մոտ՝<sup>1)</sup> բավարար շափով հաշվի չեն առնդում հնչունական հերթագայությունները, ուժեղ և թույլ դիրքերը. 2) անհրաժեշտ ուշադրություն չի հատկացվում հնչույթների հերթագայության ընթացքում ծագած տարբերակների ֆիզիոլոգիական-ակուստիկական տարբերությունների վրա. այսպես Յաձա-ի շ-ն և Ձ-ն համարվում են միևնույն ա հնչույթը. 3) հնչույթային կողմը կտրվում է քերականական կառուցվածքից և բառապաշարից: Մոսկվայի հնչույթաբանների մոտ չկա հնչույթի հստակ ըմբռոնում, հնչույթը դառնում է ֆունկցիայով նույնական, բայց ամենատարբեր ակուստիկական բնութագիր ունեցող տարբերակների գումար. այստեղ զգացվում է Պրագայի ստրուկտուրալիստների ազգեցությունը, և նկատվում է հնչույթը իր հնչունական հիմքից խզելու վտանգ: Մոսկվայի հնչույթաբանները տարբերում են հնչույթի տարբերացումները (вариации) և տարբերակները (варианты). տարբերացումներ են կոչվում հնչույթի դիրքային փոփոխակները կամ նրբերանգները, հիմնական տիպից կատարվող շեղումները, այլ կերպ ասած՝ «հնչունական հօմանիշները». այսպես, օրինակ, ուսուերենում Ե-ն և -ի դիրքային տարբերացումն է. տարբերակներ են կոչվում տարբեր հնչույթների՝ տվյալ դիրքում համընկնող արժեքները, այլ կերպ ասած՝ «հնչունական համանաները». այսպես, օրինակ, ուսուերենում Ե-ն և Ձ-ն ներկայացնում են Ձ-ի և Ը-ի ընդհանուր տարբերակները տակով [ՏԵԿԼՅՈՒ] և տօկօվոյ [ՏԵԿԼՅՈՒ] բառերի մեջ: Վերջիվերջու Մոսկվայի հնչալիթաբանների մոտ հնչույնների տարբերակից ֆունկցիան ենթարկվում է դիրքերին, և հնչույթները տարբերակելիս հիմք բնդունվում միայն մեկ դիրքը (ինչպես Ա. Ա. Ռեֆորմատսկու մոտ):<sup>2)</sup>

Սինտագմայի (շարույթի) ուսմունքը.— «Սինտագմա» տերմինը գործածության մեջ է մտել դեռևս նախասովետական շրջանում<sup>1)</sup>. Բողուն-դե-Կուրտենեն «սինտագմա» ասելով հասկանում էր բառը կապակցված խոսքի մեջ՝ ի տարբերություն մեկուսացված կերպով առնված բառի՝ «լեքսեմայի»: Ֆ. դր-Մոսյուրը, ինչպես նշել ենք, տարբերում էր ասոցիատիվ ու սինտագմատիկ հա-

<sup>1)</sup> Հմատ. Ա. Ն. Գվոզդեվ, Обладают ли позиции различительной функцией?, ВЯ, 1957, № 6, էջ 59—63.

<sup>2)</sup> Հմատ. Վ. В. Виноградов, Понятие синтагмы в синтаксисе русского языка, „Вопросы синтаксиса современного русского языка“ М., 1950.

րաբերություններ և «սինտագմա» անվանում լրացուցչի և լրացյալի հարաբերության մեջ գտնվող հետևողական միավորները (լինեն դրանք ածանցյալ բառերի, բարդությունների, բառակապակցությունների թե բարդ նախադասությունների կազմիչներ):

Սովետական շրջանում Սոսյուրի ըմբռնումը արտացոլում է գտել Ս. Ի. Կարցեսկու «Ռուսաց լեզվի կրկնողական դասընթացում»<sup>1</sup>: Այսպես տարբերվում են որոշային, խնդրային և պարագայական սինտագմաններ, իսկ նախադասությունը սահմանվում է որպես ստորոգյալ (կամ նրան համարժեք անորոշ դերբայ) ունեցող սինտագմա: Կարցեսկու հայացքին մերձ է Ա. Ա. Ռեֆորմատսկու հայացքը, որ շարադրված է նրա «Լեզվաբանության ներածության» մեջ<sup>2</sup>: Վերջինս օգտվելով նաև Շախմատովից, սինտագման դիտում է որպես «Հաղորդման (կոմունիկացիայի) հատիկ». Նախադասությունը նա սահմանում է որպես «ստորոգելիական (պրեգիկատիվ) սինտագմա»: Միաժամանակ փորձելով հաշտեցնել սույուրյան սինտագմայի ուսմունքը միակազմ և երկկազմ նախադասությունների շախմատովյան ուսմունքի հետ՝ Ռեֆորմատսկին խոսում է թաքնված սինտագմանների մասին, որոնք կարող են կազմված լինել հաղորդում պարունակող մեկ բառից («Մօրօզիտ», «Պոյար» և այլն) և որոնց մեջ լրացուցչի դեր են խաղում քերականական միջոցները (ներառյալ և ինտոնացիան). բառերի զուգորդում ներկայացնող սինտագման համարվում է արտաքին, բաղադրյալ բառ ներկայացնողը՝ ներքին:

«Սինտագմա» տերմինի այլ գործածություն է առկա Լ. Վ. Շշերայի մոտ, որը թեև իր ուսմունքը կառուցում է Բողուեն-դեկուտենների և Գրամմոնի որոշ ազգեցության տակ, սակայն այդ տերմինին հաղորդում է այլ արժեք՝ այն դիտելով որպես իմաստաշարահյուսական միավոր: Դեռևս 1927 թ. նա օգտագործում է այդ տերմինը «պարզագույն շարահյուսական ամբողջությունը» նշանակելու համար<sup>3</sup>: Ավելի ուշ այն սահմանում է որպես «հնչյունական այնպիսի միասնություն, որ խոսք-մտքի պրոցեսում արտահայտում է միասնական իմաստային ամբողջություն և կարող

<sup>1</sup> С. И. Карцевский, Повторительный курс русского языка, М., 1928.

<sup>2</sup> А. А. Реформатский, Введение в языкоковедение, М., 1947, II հր., 1953.

<sup>3</sup> Л. В. Щерба. О частях речи в русском языке. «Русская речь», вып. 1. 1927.

է բաղկանալ բառից, բառազուգորդումից և նույնիսկ բառազուգորդումների խմբից<sup>1</sup>: Շշերայի հայացքների ոչ բավարար պարզությունը հիմք է տվել տարրեր մեկնաբանությունների համար. ոմանք այն գրեթե նույնացնում են խոսողական տակտի հետ (թերևոյ ТАКТ)՝ որպես խոսքի հնչյունական վերլուծման միավորի, ուրիշները՝ բառազուգորդման, երրորդները՝ նախադասության անդամի հետ (լինի այն մեկ թե մի քանի բառով արտահայտված):

Սինտագմայի ուսմունքը հատուկ քննության նյութ է դարձրել Վ. Վ. Վինոգրադովը, որի կարծիքի մասին կիսուենք հետո:

Նշենք միայն, որ սինտագման, սովետական լեզվաբանության մեջ ընդունված առումով, պետք է տարրերել բառակապակցությունից. նախ՝ սինտագման կարող է մեկ բառով արտահայտվել, բառակապակցություն՝ ոչ. երկրորդ՝ սինտագման արտահայտում է միայն ստորադասական հարաբերություն, բառակապակցությունը՝ նաև համադասական. երրորդ՝ սինտագման կապված է նախադասության կոնկրետ կառուցվածքի հետ և ինտոնացիոն ձևավորվածություն ունի, բառակապակցությունը կապված է բառի հետ ևս, անվանական արժեք ունի, կարող է դիտվել և նախադասությունից դուրս:

## 2. ՀԱՐԻԿՐՈՊԻԿԱԼՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներածական տեղեկություններ.— Ն. Յա. Մառի կենդանության օրերին նրա և մյուս մառականների ուշադրության կենտրոնում գտնվում էին Կովկասի «հարեթական» լեզուները, այլև Կովկասից դուրս գտնվող այն լեզուները, որոնք «հարեթական» էին համարվում: Նրա մահից հետո, իրենց ջանքերը կենտրոնացնելով ստադիալ-շարահյուսական տիպոլոգիայի հարցերի վրա, «լեզվի նոր ուսմունքի» հետեւորդները սկսում են մեծ ուշադրություն հատկացնել նաև պալեոսախական լեզուներին (ի. ի. Մեշշանինով), մասսամբ էլ ներքաշել ամերիկյան ու ավստրալիական բնիկների լեզուների տվյալները (Ա. Պ. Ռիֆտին, Ս. Գ. Կացնելսոն)<sup>2</sup> վերջին դեպքում ոչ անմիջական ուսումնասիրությամբ: Այս բոլոր լեզուները օգտագործվում են գերազանցապես ընդհանուր լեզվաբանական ուսմունք ստեղծելու, հնէաբանական վերլուծության և ստադիալ տիպոլոգիայի նկատառումով: Սակայն բավական մեծ թիվ են

<sup>1</sup> Л. В. Шерба, Фонетика французского языка, 1937, № 80.

կազմում այն աշխատությունները, որոնք նպատակ ունին առանձին լեզուների ուսումնասիրության մեջ կիրառելու «լեզվի նոր ուսմունքի» սկզբունքները:

Պատմական հետազոտության բնագավառում կատարված ուսումնասիրությունները մեծ արդյունքների չէին կարող հասցնել, որովհետև մի կողմից՝ քառատարր վերլուծությունը գիտական որևէ հավաստի եղրակացության չէր կարող հանգեցնել, մյուս կողմից՝ հետազոտական պրակտիկայից դուրս էր մղվում պատմա-համեմատական մեթոդը որպես «ֆորմալիստական» մեթոդ: Առանձին դեպքերում միայն տիպոլոգիական զուգադրումները և սուբստրատի տեսության կիրառումները որոշ ուշագրավ արդյունքներ են տալիս: Ստատիկ ուսումնասիրության բնագավառում ևս որոշակի մեթոդներ չկային: Մասն ընդհանրապես հեռու էր ստատիկ վերլուծության նկատմամբ որևէ հետաքրքրություն ցուցաբերելուց և բավարարվում էր միայն առանձին նշումներով: «Լեզվի իմացաբանություն» ստեղծելու բնագավառում նրա աշակերտների որոնումները, ձևաբանությունը վերացնելու փորձերը, լեզվաբանության բաժինների փոխհարաբերության խառնաշփոթ ըմբռնումները և այլն,— այս բոլորը նույնպես չէին կարող ապահովել ստատիկ ուսումնասիրությունների քիչ թե շատ բարձր մակարդակ:

Հնդկրոպական լեզուների համեմատական քերականության բնագանուր հարցերը գրեթե դադարում են ուշագրություն գրավելուց, մի հանգամանք, որ հանգեցնում է այդ բնագավառում ձեռք բերված ընդհանուր արդյունքների անտեսմանը: 1938 թ. լույս է տեսնում Ա. Մեյեի «Հնդկրոպական լեզուների համեմատական քերականության ուսումնասիրության ներածությունը», բայց այն այլևս չէր կարող ազդել ընդհանուր տրամադրության վրա: Սակայն հնդկրոպական առանձին լեզուների և լեզվաճյուղերի ուսումնասիրության աշխատանքը ոչ միայն կանգ չի առնում, այլև շատ դեպքերում նշանակալից արդյունքներ է տալիս: Այս լեզուների մեջ առանձնապես հիշատակելի են սլավոնական լեզուները:

Մառի և սրա հետեւորդների ազդեցությունը լեզուների համեմատական ուսումնասիրության և ծագման ու զարգացման հարցերի մեկնարանության մեջ արտահայտվում է նրանով, որ պայքար է տարվում նախալեզվի գաղափարի և լեզուների զարգացման ու փոխհարաբերության իշխող պատկերացումների դեմ, փորձեր են

արվում այդ հարցերը քննել խաչակորման, ստադիալ զարգացման, տիպոլոգիական և հնէբանական վերլուծության սկզբունքներով:

Սլավոնական լեզուներ.— Սլավոնական լեզուներից ուշադրության կենտրոնում են բնականաբար ՍՍՌՄ տերիտորիայում գտնվողները՝ ոռուսերենը, ուկրաիներենը, րելոռուսերենը: Չի դադարում նաև սլավոնական լեզուների ընդհանուր հարցերի մշակման աշխատանքը: Սլավոնական լեզուների պատմա-համեմատական ուսումնասիրության բնագավառում աշխատում են Ն. Ս. Դերժավինը, Ա. Մ. Սելիչչերը, Ն. Ն. Դուռնովոն, Գ. Ա. Խյինսկին, Լ. Ա. Բուլախովսկին, Պ. Ս. Կուզնեցովը, Ս. Բ. Բեռնշտեյնը և ուրիշները<sup>1</sup>: Հատուկ հիշատակության արժանի են սլավոնական լեզուների համեմատական ուսումնասիրության սելիչչեյան փորձը<sup>2</sup>, բուլղարական պատմական բարբառագիտության հարցերի ուսումնասիրությունը Սելիչչերի և Բեռնշտեյնի կողմից, շեշտադրության հարցերի մշակումը Բուլախովսկու կողմից և այլն: Սլավոնական լեզուների համեմատական ուսումնասիրության բնագավառը զերծ չի մնում «լեզվի նոր ուսմունքի» ազդեցությունից, որ նկատվում է, օրինակ, Ն. Ս. Դերժավինի աշխատություններում:

«Լեզվի նոր ուսմունքի» ազդեցությունը ուսուաց լեզվի ուսումնասիրության բնագավառում արտահայտվել է առաջին հերթին ուսուաց լեզվի ծագման, գարգացման և բարբառների փոխհարաբերության հարցերի մեկնարանության, այլև շարահյուսական ու բառագիտական հարցերի քննության մեջ: Ուսուաց լեզվի ծագման ու գարգացման հարցերի մառական մեկնարաններից առանձնապես հիշատակելի է Ֆ. Պ. Ֆիլինը<sup>3</sup>:

<sup>1</sup> Ներկա աշխատության ծագալը շափից ավելի շրջարձակելու նպատակով այստեղ և այլուր խուսափում ենք հիշատակված լեզվարանների աշխատությունների մանրամասն թվարկումից՝ բավարարվելով միայն մասնակի նշումներով: Այդ պարտականությունից մեղ ազատում է նաև այնպիսի բիբլիոգրաֆիկ աշխատության գոյությունը, ինչպիսին է „Библиографический указатель литературы по языкоznанию, изданной в СССР с 1918 по 1957 г.”, (вып. 1, М., 1957):

А. М. Сеанишев, Славянское языкоznание, I, М., 1941 (հաջորդ երկու հատորները լույս չեն տեսել):

<sup>2</sup> Ф. П. Филин, Генетические взаимоотношения русского языка с языками других народностей СССР в работах Н. Я. Марра, „Всесоюзный Центральный Комитет нового алфавита Н. Я. Марръ”, 1936. Н. Я. Марр и изучение русского языка, ЯМ, VII, 1937. Очерк истории русского языка, Л., 1940. К вопросу о происхождении аканья. „Диалектологический сборник”, II, Вологда, 1942. Лексика русского-литературного языка древнекиевской эпохи, Л., 1949.

թյունը նկատելի է նաև հնագետների, պատմաբանների, ազգագրագետների՝ սլավոնական ժողովուրդների հին շրջանին նվիրած հետազոտություններում (Դերժավին, Տրետյակով, Արցիխովսկի, Տոլստով, Ռեգալցով և ուրիշներ): «Լեզվի նոր ուսմունքի» սկզբունքները փորձում են կիրառել ուսական շարահյուսության բնագավառում Ա. Գ. Ռուդոներ, Վ. Վ. Մատվեևա-Խանսան և ուրիշները, բարբառագիտության բնագավառում (ոչ առանց լեզվաբանական աշխարհագրության սկզբունքների ազդեցության): Ֆ. Պ. Ֆիլինը, Մ. Գ. Մալցեր, Ն. Պ. Գրինկովան, բառագիտության բնագավառում՝ Ֆ. Պ. Ֆիլինը, Ն. Պ. Գրինկովան և ուրիշներ<sup>1</sup>:

Ուսական բարբառների ուսումնասիրության մեջ հանդես են գալիս նոր գծեր, առաջ քաշվում նոր պրոբլեմներ ու խնդիրներ: Այս տեսակետից առաջին հերթին պետք է նշել քաղաքային բարբառների, ժարգոնների և արգոնների ուսումնասիրությունը (Բ. Ա. Լարին, Ն. Մ. Կարինսկի և ուրիշներ), այսպես կոչված «սոցիալական բարբառների» ու պրոֆեսիոնալ լեզուների զարգացման հարցերի, վերջիններիս բառապաշտի հետազոտությունը, ուսական բարբառագիտական ատլասի կազմման նախապատճենումը: Ուսական բարբառների ուսումնասիրության ու նկարագրության հարցերով զբաղվում են, բացի արդեն հիշվածներից, Ա. Մ. Սելիցևը, Վ. Ի. Չեռնիշևը, Պ. Յա. Չեռնիխը, Պ. Ա. Ռաստրովիչը, Ի. Գ. Գորյանովը, Ռ. Ի. Ավանեսովը, Պ. Ա. Կուզնեցովը, Վ. Գ. Օղովը, Վ. Ն. Սիդորովը և ուրիշները: 1947 թ. Ռ. Ի. Ի. Ավանեսովը լույս է ընծայում «Ռուսական բարբառագիտության ուրվագծերի» առաջին մասը<sup>2</sup>, որտեղ փորձում է ի մի բերել ուսական բարբառների ուսումնասիրության արդյունքները:

Ռուսաց լեզվի պատմության հարցերի մեջ հատուկ ուշադրության առարկա են դառնում ուսաց լեզվի ծագման և ոռու գրական ինքի ծագման ու զարգացման հարցերը: Ռուսաց լեզվի ծագման հարցում նկատվում են երկու հակադիր տեսնենցներ, որոնցից մեկը սկիզբ է առնում ուսաց լեզվի ծագման նախորդ տեսակետներից (Ա. Ի. Սոբուսկի և ուրիշներ), մյուսը հենվում է «լեզվի նոր ուսմունքի» վրա (Ն. Յա. Մառ, Ֆ. Պ. Ֆիլին): Ռուսաց գրական լեզվի ծագման հարցում, անկախ «լեզվի նոր ուսմունքից», դրսերդիում են նույնպես երկու տեսակետներ. տրադիցիոն հայեցակետը գալիս

<sup>1</sup> Против вульгаризации и извращения марксизма в языкоznании, I, М., 1951, № 200—304.

Р. И. Аванесов, Очерки русской диалектологии, I, М., 1949.

Էր Ա. Ա. Շախմատովից, ըստ որի հին ոռւսական գրական լեզվի հիմքում ընկած է հին սլավոներենը. նոր տեսակետը զարգացնում է Ս. Պ. Օբնորսկին. հենվելով Շախմատովի տեսակետի հիմունքները խախտող ուսումնասիրությունների և իր սեփական հետազոտության արդյունքների վրա՝ նա գալիս է այն եզրակացության, որ ոռւսաց գրավոր լեզվի կուլտուրան գոյություն ուներ գեուս X—XI դդ. և որ նրան սկզբնապես խորթ էր բուլղարա-բյուզանդական կուլտուրայի ազդեցությունը. վերջինս երևան է գալիս XIV դարից ոչ վաղ: Ռուսաց գրական լեզվի ինքնատիպության, սկզբնապես «լիովին ոռւսական կերպարանք» և ժողովրդական խոսակցական հիմունքներ ունենալու տեսակետը Օբնորսկին վերջնականապես ապացուցել է իր «Ռուսաց գրական լեզվի պատմության ուրվագծերում»<sup>1</sup>: Ռուսաց գրական լեզվի զարգացման պրոցեսի ուսումնասիրության առաջին լուրջը բայլը կատարել է Յակովինսկին, որ հատուկ աշխատություն է նվիրել նաև հին ոռւսերենի ուսումնասիրությանը<sup>2</sup>: Ռուսաց գրական լեզվի պերիոդիզացիայի և պատմական զարգացման հարցերը գրավել են առաջին հերթին Վ. Վ. Վինոգրադովի ուշադրությունը, որը մշակել է հատկապես ոռւսաց գրական լեզվի նոր շրջանի պատմությունը: Վինոգրադովի ժառայությունը մեծ է նաև եկեղեցաւալավոնիզմների դերի վերաբերյալ նոր հարցադրման, գրողների լեզվի և ոճի ուսումնասիրության բնագավառում<sup>3</sup>: Ռուսաց լեզվի պատմության, պատմական քերականության և Հնչունաբանության հարցերը քննության են ենթարկվում Ս. Պ. Օբնորսկու, Վ. Վ. Վինոգրադովի, Ե. Ֆ. Կարսկու, Ե. Ս. Խստրինացի, Ա. Մ. Սելիցյանի, Լ. Ա. Բուլախովսկու, Լ. Պ. Յակովինսկու, Ռ. Ի. Ավանեսովի, Պ. Յանիսիի, Վ. Ի. Բորկովսկու և ուրիշների աշխատություններում:

Ժամանակակից ոռւսաց լեզվի ուսումնասիրության բնագավառառում ևս նշանակալից աշխատանք է կատարվում:

Ռուսաց լեզվի հասարակական-քաղաքական և կուլտուրական կարևոր նշանակությունը հիմք է տալիս նրա ուսումնասիրության հարցերը սովետական (և ոչ միայն սովետական) լեզվարանների

<sup>1</sup> Акад. С. П. Обнорский, Очерки по истории русского литературного языка, М., Л., 1946.

<sup>2</sup> Հրատարակվել է հետմահու. Լ. Պ. յակուբինսկի, История древнерусского языка, М., 1953:

<sup>3</sup> Վ. Վ. Վինոգրադովի աշխատությունների ընդհանուր բնութագիրը կտրվի հաջորդ հատվածում թյամբ:

ուշադրության կենտրոնում պահելու համար։ Ըուսաց լեզվի գիտական ուսումնասիրության սկզբունքները կարենոր դեր են խաղում։ Նաև այլ ժողովուրդների լեզուների համապատասխան հարցերի մշակման համար, մանավանդ որ ոսւսաց լեզվի ուսումնասիրությունը երկարատև տրադիցիա և մեծ փորձ ունի։

Ըուսաց լեզվի բառապաշտիքի ուսումնասիրության հարցում կարենոր ավանդ են մտցրել առաջին հերթին բացատրական բառարանները<sup>1</sup> Դ. Ն. Ուշակովի խմբագրած «Ըուսաց լեզվի բացատրական բառարանը»<sup>1</sup>, Ս. Ի. Օժեգովի «Ըուսաց լեզվի բառարանը»<sup>2</sup>; Ուշակովի բառարանի բերած նորությունն այն է, որ նա կառուցված է նորմատիվ հիմունքներով։ Մեծ թիվ են կազմում ոսւսաց լեզվի հետ առնչվող երկլեզվյան ընդհանուր և մասնագիտական բառարանները, այլև տերմինաբանական, հանրագիտական, ուղղագրական և այլ կարգի բառարանները։

Ուսագետների մեծաքանակ մի կողեկտիվ աշխատում է ոսւսաց լեզվի բառագիտության, բերականության, հնչյունաբանության բնագավառում։

Սովետական տարիներին լույս են տեսնում շարահյուսական այնպիսի կապիտալ աշխատություններ, ինչպիսիք են Ա. Ա. Շախմատովի «Ըուսաց լեզվի շարահյուսությունը», Պեղկովսկու շարահյուսական աշխատության արմատաքես վերամշակված Յ-րդ հրատարակությունը, Պետերսոնի շարահյուսական աշխատությունները. Վ. Վ. Վինոգրադովի «Ժամանակակից ոսւսաց լեզու» և «Ըուսաց լեզու» աշխատությունները հանրագումարի են բերում ոսւսաց լեզվի բերականական կառուցվածքի ուսումնասիրության արդյունքները. Վեճեր են գնում արտասանության՝ Մոսկվայի նորմաների հարցի շուրջը։

Նշանակալից աշխատանք է տարվում նաև ուկրաիներենի ու բելոռուսերենի ուսումնասիրության ուղղությամբ։ Ուկրաինական ուղղագրության մշակումն ու միասնականացումը, միջնակարգ ու բարձրագույն դպրոցների դասագրքերի կազմումը, բարբառների ուսումնասիրությունն ու բարբառագիտական ատլասի կազման ուղղությամբ կատարվող աշխատանքները, բազմազան տիպի բառարանների կազմումը, ուկրաինական գրողների լեզվի ուսումնասիրությունը, ուկրաիներենի պատմության հարցերի մշակումը, —

<sup>1</sup> Толковый словарь русского языка, под. ред. Д. Н. Ушакова, I—IV, М., 1935—1940.

Словарь русского языка, составил С. И. Ожегов, М., 1949.

ահա այն գլխավոր խնդիրները, որոնք զբաղեցնում են ուկրաինագետների՝ Լ. Ա. Բուլախովսկու, Ֆ. Տ. Ժիլկովի, Ն. Կ. Գրունսկու, Վ. Կ. Դեմյանչովի, Ա. Ե. Կրիմսկու, Մ. Յա. Յալինովիչի և ուրիշների ուշադրությունը։ Ժիլկովի «Ուկրաինական բարրառագիտությունը», այդ բնագավառում կատարված աշխատանքի յուրատեսակ ամփոփման փորձ էր։ Բելոռուսերենի ուսումնասիրության բնագավառում նշելի են Ե. Ֆ. Կարսկու, Պ. Ա. Ռաստորգուևի, Ե. Ռ. Ռոմանովի աշխատությունները։

Ռումանա-գերմանական լեզուներ.—Ռումանական և գերմանական լեզուները, հատկապես ֆրանսերենը, իսպաներենը, անգլերենը և գերմաներենը դառնում են բուհական ուսուցման առարկա։ Այս կապակցությամբ առաջնահերթ խնդիրներ են դառնում բուհական դասագրքերի ստեղծումը և ոռմանա-գերմանական լեզվաբանության կարեռագույն հարցերի մշակումը։ Գերմանական լեզուների ուսումնասիրության բնագավառում աշխատում են Վ. Մ. Ժիրովսկին, Ա. Ի. Սմիռնիցիին, Մ. Մ. Գուխմանը, Ս. Դ. Կացնելսոնը, Ա. Վ. Դեսնիցկայան, Լ. Ռ. Զինդերը, Տ. Վ. Սարուեա-Սոկոլսկայան, Ն. Ս. Զեմոդանովը, Բ. Ա. Խլիշը, Վ. Ն. Յարցեան և ուրիշները, ոռմանական լեզուների բնագավառում՝ Վ. Ֆ. Շիշմարյովը, Լ. Վ. Շշերբան, Մ. Վ. Սերգիևսկին, Օ. Ի. Բոգոմոլովան, Ռ. Ա. Բուտաղովը, Կ. Ա. Գանշինան, Մ. Ն. Պետերսոնը և ուրիշների։ Այս երկու բնագավառն էլ, հատկապես գերմանագիտությունը, գերծ չեն մնում «լեզվի նոր ուսմունքի» ընդհանուր ազգեցությունից։ Մ. Մ. Գուխմանը, Ս. Դ. Կացնելսոնը, Ա. Վ. Դեսնիցկայան և ուրիշները, հետևելով Մառին, շարունակում են գերմանական լեզուների ստադիալ-տիպոլոգիական մեկնաբանությունը, փորձում նրանց նկատմամբ կիրառել «լեզվի նոր ուսմունքի» ըսկըզբունքները, իրենց ընդհանուր լեզվաբանական դրույթները հիմնավորել նրանց պատմությունից բերած տվյալներով։

Դասական լեզուներ։—Այն հանգամանքը, որ դասական լեզուները մեզ մոտ միջնակարգ դպրոցի ուսումնասիրության առարկա չեն, իշեցնում է գործնական հետաքրքրությունը նրանց նկատմամբ։ Սակայն այդ լեզուների բուհական ուսուցումը և լեզվաբանական հարցերի լուծման մեջ նրանց ունեցած կարևորությունը անհրաժեշտորեն նպաստում են այդ լեզուների ուսումնասիրությանը։ Այս բնագավառում հատուկ հիշատակության արժանի են Ս. Ի. Սոբոլևսկու աշխատությունները։ Կատարվում են հունարենի

և լատիներենի պատմական քերականության առանձին կողմերին նվիրված մի շարք աշխատությունների թարգմանություններ:

Հնդիրանական լեզուներ.— Հնդիրանական լեզուներից բազմակողմանի ուսումնասիրության և մշակման առարկա են դառնում՝ հատկապես ՍՍՌՄ տերիտորիայում գտնվածները:

Հնդկական լեզուներից բնականաբար ուշադրություն է գրավում առաջին հերթին սանսկրիտը, որը հատուկ կարևորություն ունի Հնդկապական լեզվաբանության, Հնդկական լեզուների ու Հնդկաստանի պատմության, Հնդկական կուլտուրայի ուսումնասիրության մեջ: Զգալի ծավալ է ընդունում սանսկրիտական տեքստերի հրատարակումը: Թեև սանսկրիտից ավելի պակաս չափով, բայց և այնպես ուսումնասիրվում են և նոր Հնդկական լեզուները: Սովորական Հնդկագիտության զարգացման մեջ առաջին հերթին պետք է նշել Ա. Պ. Բարաննիկովին:

Իրանական լեզուների ուսումնասիրության բնագավառում նշելի են հ. հ. Զարուբինի, Վ. Ի. Արակե, Բ. Վ. Միլերի, Յ. Է. Թերտելսի, Ա. Ա. Ֆրեյմանի, Ա. Կ. Արենդսի, Ն. Ա. Թելգորոդսկու, Լ. Ի. Ժիրկովի, Վ. Ս. Սոկոլովյահի, Ա. Ա. Ռոմասկեշի և այլոց աշխատությունները: Մեռած իրանական լեզուների ուսումնասիրության ուղղությամբ նշանակալից աշխատանք են կատարել Ա. Ա. Ֆրեյմանը, Յ. Ի. Կլիմչիցին, Ֆ. Ա. Ռոզենբերգը: Հանդես են գալիս և տեղական կադրեր, որոնք աշխատանք են ծավալում տաշիկական, օսական, քրդական քերականության, բարբառագիտության և այլ կողմերի ուսումնասիրության ու մշակման ուղղությամբ: Հնդհանուր առմամբ իրանական լեզուների ուսումնասիրության բնագավառում աշխատանք են տանում՝ ա) տաշիկերենի քերականության բնագավառում՝ հ. Ի. Զարուբինը, Ա. Ա. Սեմյոնովը, Օ. Ա. Սուխարևան. բարբառագիտության բնագավառում՝ հ. Ի. Զարուբինը, Ա. Ա. Սեմյոնովը, Օ. Ա. Սուխարևան. բարբառագիտության բնագավառում՝ հ. Ի. Զարուբինը, Վ. Ս. Անդրեևը, Ն. Ա. Կիսլյակովը, Ա. Զ. Ռոզենֆելդը, Լ. Թուզուրգողան, Օ. Զալիխովը, Բ. Նիյազմուհամեդովը, Վ. Ս. Ռաստրովիսան, Հնչյունաբանության բնագավառում՝ հ. Ի. Զարուբինը, Վ. Կ. Օբիխնսկայան, Լ. Բուզուրգողան, Վ. Ս. Սոկոլովան. բ) օսերենի բնագավառում՝ Վ. Ի. Արակե, Ա. Մ. Կասակը, Կ. Ե. Գագկակը, Վ. Ֆ. Միլերը. գ) քրդերենի բնագավառում՝ հ. Ի. Զարուբինը, Վ. Կ. Վիլշերը. դ) Պամիրի իրանական լեզուների բնագավառում՝ հ. Ի. Զարուբինը, Ս. Ի. Կլիմչիցիկին. է) բելուզերենի բնագավառում՝ հ. Ի. Զարուբինը. զ) թալիշերենի բնագավառում՝ Բ. Վ. Միլերը. է) թա-

թերենի բնագավառում՝ Վ. Ֆ. Միլլերը, Բ. Վ. Միլլերը. թ) պարսկերենի բնագավառում՝ Ա. Ա. Ռոմասկեհլը (պարսկական բարբառագիտություն), Ն. Յա. Մառը, Բ. Վ. Միլլերը, Ե. Է. Թերտելսը, Լ. Ի. Ժիրկովը. թ) աֆղաներենի բնագավառում՝ Ե. Է. Թերտելսը, Մ. Գ. Ասլանովը. ժ) մեռած իրանական լեզուների բնագավառում՝ Ֆ. Ա. Ռոզենբերգը (սոգդերեն), Ա. Ա. Ֆրեյմանը (Սամարգանդի մոտ՝ Մուգ լեռան վրա գտնված սոգդերեն տեքստերի վերծանում 1933 թ., խորեզմերեն, պահլավական բառարանագրություն, ավեստայի լեզվի, միջին և նոր պարսկերենի ստուգաբառություն, իրանա-սլավոնական լեզվական կապեր և այլն), Ս. Ի. Կիմշչեցին (սոգդերենի և յաղնորերենի հարաբերությունը):

Իրանական լեզուների ուսումնասիրության բնագավառը ևս զերծ չի մնում «լեզվի նոր ուսմունքի» ազգեցությունից (Վ. Ի. Արակ, Ի. Գ. Ցուկերման). իր «Օսական լեզուն և ֆոլկլորը» աշխատության մեջ՝ Վ. Ի. Արակը, քննելով օսերենի լեզվական կապերը, հատկապես օսերենի նախորդը համարվող սկյութերենի հետ նրա ունեցած հարաբերությունը, գալիս է այն եզրակացության, որ «օսերենը իրանական լեզու է՝ ձեավորված կովկասյան սուբստրատի հիման վրա, իրանական և կովկասյան տարրերի խաչավորմամբ»: Ավելորդ չէ, սակայն, նշել, որ օսերենի իրանական բնույթը որոշելիս նա ելնում է «հիմնական բառային ֆոնդի» (основной лексический фонд) և քերականական կառուցվածքի բնույթից:

Հայերեն.— Հայերենի պատմա-համեմատական ուսումնասիրության բնագավառում նշելի են առաջին հերթին Հ. Աճառյանի աշխատությունները, հատկապես «Հայերեն արմատական բառարանը» (I—VII, 1926—1935) և «Հայոց լեզվի պատմությունը» (I—II, 1940—1951). Հ. Աճառյանը ելնում է հայերենի հնդկրոպական բնույթից և շարունակում ու զարգացնում Հ. Հյուբշմանի, Ա. Միլյեի սկզբունքները: Հայերենի ծագման հարցի լուծման մեջ հանդես են դալիս երկու այլ կարծիքներ ևս. Ն. Յա. Մառը և նրա հայ հետեւյորդները՝ Ա. Ղարիբյանը և ուրիշները նշում են հայերենի խառնիաչավորված բնույթը (հնդկրոպական և կովկասյան տարրերով). Գ. Ղափանցյանը, հայերենի խաչավորված բնույթը նշելով հանդերձ, գտնում է, որ հայերենի մեջ գերակշռում են փոքրասիական («ասիանիկ») տարրերը. և մեկ, և մյուս կողմերի կարծիքները զուրկ

<sup>1</sup> В. И. Абаев, Осетинский язык и фольклор, М.—Л., 1949.

են լուրջ գիտական հիմնավորումից, թեև անկախ սրանից՝ Գ. Ղափանցյանի աշխատությունները որոշ արժեք ունեն Հայ-խեթական, Հայ-ուրարտական, Հայ-ակաղական կապերի ուսումնասիրության տեսակետից:

Թարբառագիտության բնագավառում նշելի են Հ. Աճառյանի, Ա. Ղարիբյանի, Է. Աղայանի աշխատությունները։ Ա. Ղարիբյանը հենվելով Հ. Աճառյանի ձևաբանական դասակարգման վրա (ըստ ներկայի կազմության), փորձում է Հաստատել Հայ բարբառների մի նոր՝ շորորդ ճյուղի առկայությունը։

Ժամանակակից Հայերենի ուսումնասիրության բնագավառում նշելի են առաջին հերթին Մ. Արեգյանի, այլև Ա. Ղարիբյանի, Գ. Սեակի և այլոց աշխատությունները։

### 3. ՈՉ-ՀԱՅԻ ՎՐԱՊԱԿԱՆ ԼԵզուներու ՈՒՍՈՒՄՆԱԿԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆիննա-ուգրա-սամոյեդական լեզուներ.— Ֆիննա-ուգրական լեզուների ուսումնասիրության բնագավառում բեղմնավոր աշխատանք է կատարում սովետական ֆիննա-ուգրագիտության հիմնադիր Դ. Վ. Բուբրիխը։ Նա զբաղվում է ֆիննա-ուգրական լեզուների ներքին և արտաքին կապերի համեմատական ուսումնասիրությամբ, աշխատություններ նվիրում առանձին լեզուների պատմության, քերականության ու բարբառագիտության հարցերին։ «Լեզվի նոր ուսմունքի» և Պրագայի լեզվաբանական դպրոցի ազդեցության տակ նա առաջ է քաշում ֆիննա-ուգրական լեզուների «կոնտակտի» դրույթը՝ փորձելով խուսափել նախալեզվի ըմբռնումից։ Նրա խմբագրությամբ ու գործուն մասնակցությամբ են լույս տեսակ՝ «Սովետական ֆիննա-ուգրագիտություն» ժողովածուները։ Նա տվել է ֆիններենի, ուդմուրտերենի, էրզյաներենի պատմական քերականությունների ուրվագծերը։

Ֆիննա-ուգրա-սամոյեդական լեզուների ուսումնասիրության բնագավառում նշանակալից աշխատանք են կատարում նաև Վ. Ի. Լիտկինը (Կոմի, հին պերմերեն), Ա. Զուրովը, Ա. Ս. Սիդորովը (Կոմի), Պ. Արիստեն, Ի. Ի. Մայշկը, Վ. Ա. Մոլողցովը, Պ. Ն. Պերելլիկովը, Վ. Մ. Վասիլկը, Գ. Գ. Կարամզինը, Ն. Մ. Տերեշչենկոն, Գ. Ն. Պրոկոֆիև և ուրիշներ։

Ալբայան (թյուրքական, մոնղոլական, տունգուսա-մանջուրական) լեզուներ.— Սովետական Միության տերիտորիայում և նրանից դուրս գտնվող բազմաթիվ թյուրքական լեզուների պատ-

ժա-համեմատական ուսումնասիրությունը սովետական լեզվաբանության կարեռ խնդիրներից մեկն էր, մանավանդ որ ուսական լեզվաբանությունն այդ լեզուների ուսումնասիրության մեծ տրադիցիա ուներ: Ինչպես տեսանք, թյուրքական լեզուների ուսումնասիրության մեջ նշանակալից ավանդ են մտցրել ոռու լեզվաբաններ Բոգորոդիցին, Պոլիվանովը և ուրիշները: Պոլիվանովը առաջիններից մեկն է եղել, որ մատնացույց է արել կորեերենի և «ալթայական» լեզուների ցեղակցության հարցի վրա<sup>1</sup>, մի հարց, որ, ինչպես նշել ենք, մանրամասն քննության է ենթարկվել ֆինն լեզվաբան Գ. Ի. Ռամստեդտի աշխատություններում:

Սովետական թյուրքագիտության ուշադրության կենտրոնում գտնվում են առաջին հերթին սովետական մի շարք ուսպուրլիկանների և ավտոնոմ ուսպուրլիկանների լեզուների քերականության և տերմինաբանության հարցերը: Նշանակալից ուշադրություն են գրավում նաև թյուրքական լեզուների պատմության ու բարբառագիտության, հին գրավոր հուշարձանների հրատարակության և ուսումնասիրության հարցերը: Այս բոլոր հարցերի լուծման մեջ սովետական թյուրքագիտության բնագավառում աշխատում են նաև տեղական կադրեր՝ Ազգրեզանում՝ Մ. Ա. Շիրալիկը, Ա. Դեմիրշի-զադեն, Ղազախստանում՝ Ս. Կ. Կենեսրակը, Ն. Տ. Սառուրանբակը, Մ. Բ. Բալկակը, Ս. Ա. Ամանժոլովը, Թուրքմենստանում՝ Պ. Ա. Ազիմովը, Մ. Ն. Խրդըրովը, Ուզբեկստանում՝ Ա. Գ. Գուլյամովը, Ֆ. Կ. Քյամալովը, Կարակալպակիայում՝ Ն. Դ. Դավկարակը, Կ. Ա. Այմբետովը, Ա. Կ. Կրդըրակը, Թաթարիայում՝ Լ. Զալյայը, Ռ. Ա. Հաքիմովը, Բաշկիրիայում՝ Կ. Զ. Ահմեդովը, Տ. Գ. Թափեկը, Ա. Ի. Խարիսովը, Կիրգիզիայում՝ Բ. Մ. Յունուսալիկը, Ժ. Շ. Շուրուբեկովը, Հ. Կ. Կարասակը և ուրիշներ:

Ժամանակակից թուրքերենի (օսմաններենի) քերականության հարցերով, այլև օսմանական տեքստերի հրատարակությամբ ու թարգմանությամբ են գրադպում Վ. Ա. Գորդեսկին, Ն. Կ. Դմիտրիկը, Ա. Ն. Կոնոնովը և ուրիշներ: Ս. Ե. Մալովը հրատարակում է հին թյուրքական գրական մի շարք հուշարձաններ, ույղուրական բարբառագիտական տեքստեր, աշխատություններ նվիրում զազախերենի և կարակալպակերենի պատմության հարցերի ուսումնասիրությանը:

Սովետական Միության տերիտորիայում գտնվող թյուրքական

<sup>1</sup> Е. Д. Поляеванов, К вопросу о родственных отношениях корейского и „алтайских“ языков, ИАН СССР, 1927, № 1193—1204.

Հեղուների պատմության ու բարբառագիտության հարցերով զբաղվում է լեզվաբանների մի նշանակալից թիվ՝ Մ. Ա. Շիրալիկը, Ն. Ի. Աշմարինը (աղբբեջաններեն), Ն. Կ. Դմիտրիկը, Թ. Գ. Բաիջկը (բաշկիրերեն), Կ. Կ. Յուղախինը, Ի. Ա. Բաթմանովը (կիրգիզերեն), Վ. Վ. Ռասկակովը (ուզբեկերեն), Ն. Ա. Բասկակովը (նողայերեն), Ս. Ա. Ամանժոլովը (դազախերեն), Լ. Զալյայը (Զալյալետդինովը) (թաթարերեն), Ն. Գ. Դոմոժակովը, Ա. Խնկիժեկովը (խակասերեն) և ուրիշներ:

Ժամանակակից լեզուների քերականության հարցերով զբաղվում են Ն. Կ. Դմիտրիկը (բաշկիրերեն և կումիկերեն), Ի. Ա. Բաթմանովը (կիրգիզերեն), Վ. Ա. Բոգորոդիցկին (թաթարերեն և այլ թյուրքական լեզուներ), Ս. Վ. Յաստրեմսկին, Ե. Ի. Ուբրյատովը (յակուտերեն), Ն. Ա. Բասկակովը (նողայերեն, կարակալպակերեն), Ե. Դ. Պոլիվանովը, Ա. Ն. Կոնոնովը, Վ. Վ. Կոնչետինովը (ուզբեկերեն), Ն. Ա. Դիռենկովան (ալթայերեն, շորերեն, խակասերեն), Ն. Տ. Սառուանբակը, Ս. Կ. Կենսերաբակը (դազախերեն), Ա. Դեմիրչի-զադեն (աղբբեջաններեն), Պ. Ի. Ազիմովը, Մ. Ն. Խոդրովը (թուրքմեններեն) և ուրիշներ:

Մեծ թափ է ընդունում բառարանագրությունը, հատկապես ռուսերենի հետ առնչվող բառարանների կազմումն ու հրատարակումը:

Թյուրքական լեզուների ուսումնասիրության բնագավառը և զերծ չի մնում «լեզվի նոր ուսմունքի» ազդեցությունից: Այսպես, աղբբեջանական լեզվաբանները, շափազանցնելով տեղական շերտի և խաչավորման դերը, սկսում են խոսել աղբբեջաններենի մեղական (մարական) ծագման մասին, այն դեպքում, երբ աղբբեջաններենը իր կառուցվածքային առանձնահատկություններով և հիմնական բառաֆոնդով տիպիկ թյուրքական լեզու է:

Մոնղոլական լեզուների և բարբառների ուսումնասիրության բնագավառում աշխատում են Բ. Յա. Վլադիմիրովը, Ն. Ն. Պոպչեն, Գ. Դ. Սանժեեր, Ի. Ա. Կոյուկինը և ուրիշները: Սրանց ուշադրության կենտրոնում են զտնվում համեմատական քերականության, հին գրական լեզվի և ժամանակակից լեզուների քերականության, մոնղոլական բարբառագիտության հարցերը:

Տունգուսա-մանջուրական լեզուների բնագավառում աշխատում են Վ. Ա. Ավրորինը, Օ. Պ. Սունիկը, Վ. Ի. Ցինցիուսը, Տ. Ի. Փետրովան, Ա. Ֆ. Բոյցովան, Գ. Մ. Վասիլիկչը, Մ. Կ. Մակսիմովան, Վ. Ի. Լիխնը և ուրիշները: «Լեզվի նոր ուսմունքի» ազդեցու-

թյունը մեծ շափով զգացվում է այս լեզուների ուսումնասիրության մեջ, հատկապես Ավրորինի և Սունիկի աշխատություններում:

Կովկասյան լեզուներ.— Կովկասյան լեզուները, որոնք Ն. Յա. Մառի և նրա հետևորդների կողմից կոչվում էին հարեթական, ինչպես նշեցինք, գտնվում էին ուշադրության կենարոնում: «Լեզվի նոր ուսմունքի» կողմնակիցները իրենց ընդհանուր տիպուոգիական մարզանքների մեջ հաճախ էին դիմում նրանց: Սակայն կողք-կողքի գործում էին նաև այն լեզվաբանները, որոնք հեռու էին կանգնած «լեզվի նոր ուսմունքից»:

Կովկասյան լեզուների ցեղակցության հարցերը դեռևս բավարար շափով չեն լուծված: Ոչ միայն այդ լեզուների ներքին փոխհարաբերության, այլև արտաքին կապերի մասին հաճախ են հայտնվել ոչ բավարար շափով հիմնավորված կարծիքներ:

Կովկասյան լեզուների և Առաջավոր Ասիայի ու Միջերկրածովքի ոչ-հնդկրոպական լեզուների, փոխհարաբերության հարցերով զբաղվել են Ն. Յա. Մառը, Ի. Ա. Զավախիշվիլին, Ա. Ս. Զիքորավան, Ս. Ն. Զանաշիան, Գ. Վ. Շերեթելին: Կովկասյան լեզուների պատմա-համեմատական ուսումնասիրության բնագավառում նշանակալից աշխատանք են կատարում Ի. Ա. Զավախիշվիլին, Ա. Ս. Զիքորավան, Ս. Ն. Զանաշիան: Կովկասյան լեզուների ցեղակցությունը համարելով հավաստի փաստ՝ վրացի լեզվաբանները դրանք միավորում են «իրերա-կովկասյան ընտանիք» անվանտակ, մի անվանում, որ տարածվել է և այլուր: «Իրերա-կովկասյան» լեզուների ցեղակցության հարցերին են նվիրվում հատուկ ժողովածուներ:

Կովկասյան լեզուները գրի և գրականության առումով ներկայացնում են խայտարղետ պատկեր: Հին գիր և գրականություն ունեցող վրացերենի կողքին կան նորագիր լեզուներ: Հասկանալի է, որ երեսն են գալիս դրանց ուսումնասիրության և մշակման հարցերի միանգամայն տարրեր մոտեցումներ: Տարրեր խորությամբ են ուսումնասիրված կովկասյան տարրեր լեզվախմբերի ցեղակցական փոխհարաբերությունները: Այս տեսակետից ամենից ավելի նպաստավոր վիճակում են քարթվելական լեզուները՝ վրացերենը, մենգրելաճաներենը և սվաներենը, որոնց ցեղակցությունը ակնհայտ է և լավ ուսումնասիրված: Քարթվելական և ընդհանրապես կովկասյան լեզուների մեջ հատուկ տեղ է բռնում վրացերենը, որի քերականության, հնչյունաբանության, բարբա-

տագիտության, պատմության հարցերը հանգամանալից մշակման են ենթարկվում: Հրատարակվում են բարբառագիտական բառարաններ և ուսումնասիրություններ: Հնչյունաբանության ուսումնասիրության բնագավառում նշանակալից ավանդ են մտցնում Ն. Յա. Մառը, Ի. Ա. Դիփիձեն, Ա. Ս. Զիբորավան, Ա. Գ. Շանիձեն, Վ. Տ. Թոփուրիան, Կ. Գ. Դունդուան, Վ. Գ. Ռուդենկոն: Սովետական տարիներին լայն ծավալ է ընդունում բառարանագրական-տերմինաբանական աշխատանքը:

Մյուս կովկասյան լեզուների ուսումնասիրության բնագավառում ևս աշխատում է լեզվաբանների մի մեծ բանակ՝ մշակման ենթարկելով բարբառագիտության, քերականության, բառապաշտում և այլ հարցեր: Արխագա-աղրգեյական լեզուների բնագավառում աշխատում են Ն. Յա. Մառը, Ի. Ա. Ջավախշվիլին, Գ. Ի. Գուլիան, Ս. Ն. Ջանաշիան, Ա. Ս. Զիբորավան, Կ. Վ. Լոմթատիձեն, Գ. Վ. Ռոգամվան, Ա. Ն. Գենկոն, Ն. Ֆ. Յակովլիք, Գ. Ա. Աշխամաֆը, Գ. Ֆ. Ֆ. Տուրշանինովը, Գ. Պ. Սերդյուչենկոն և ուրիշները: Բացրիա-կիստինյան (վեյնախյան) լեզուների բնագավառում աշխատում են Զ. Կ. Մալսագովը, Ն. Ֆ. Յակովլիք, Յու. Գ. Գեշիրիկը, Գ. Ա. Իմնայշվիլին, Ռ. Ռ. Գագուան և ուրիշները: Դաղստանյան լեզուների բնագավառում աշխատում են Ա. Ս. Զիբորավան, Լ. Ի. Ժիրկովը, Վ. Տ. Թոփուրիան, Ա. Ա. Բոկարյովը, Ե. Ա. Բոկարյովը, Ս. Լ. Բիխովսկայան, Ռ. Մ. Շահումյանը, Ի. Ի. Յերշվածեն, Վ. Ն. Պանչվածեն, Շ. Գ. Գափրինդաշվիլին, Ե. Յ. Զեյրանիշվիլին, Է. Ա. Լոմթատիձեն, Տ. Ե. Գուղավան, Ա. Ա. Մահումետովը, Մ. Մ. Հաջիկը, Ս. Ն. Աբգուլակը, Գ. Բ. Մուրկելինսկին, Մ. Ս. Սահիդովը, Շ. Ի. Միքայիլովը և ուրիշները:

«Լեզվի նոր ուսմունքի» դրույթները կովկասյան լեզուների նկատմամբ կիրառելու մեջ առանձին շանքեր են թափում Ի. Ի. Մեշշանինովը, Ս. Լ. Բիխովսկայան, Ն. Ֆ. Յակովլիք, Լ. Ի. Ժիրկովը, Գ. Պ. Սերդյուչենկոն:

Փալենասիական լեզուներ.—Փալենասիական լեզուների համար գրի ու գրականության ստեղծման և դպրոցների հիմնադրման աշխատանքը անհրաժեշտ է դարձնում մտածել դասագրքերի և ուսուցչական կաղըերի մասին: 1922 թվից հանդես են գալիս դասագրքեր, այս լեզուները դառնում են բուհական ուսուցման առարկա, հիմնադրվում է Հյուսիսի ժողովուրդների ինստիտուտը:

Պալեոասիական լեզուների ուսումնասիրության բնագավառում՝ աշխատում են Վ. Գ. Բոգորազը, Ս. Ն. Ստեբնիցկին, Գ. Մ. Կորսակովը, Ե. Ա. Կրեյնովիչը, Պ. Յան. Սկորիկը և ուրիշները: Պալեոասիական լեզուների տվյալները լայն կերպով օգտագործվում են «լեզվի նոր ուսմունքի» զարգացման երկրորդ էտապում, հատկապես Ի. Ի. Մեշշանինովի աշխատություններում:

Զին-տիբեթական լեզուներ. ճապոններեն. կորեերեն.— Զին-տիբեթական լեզուներից ամենից ավելի շատ ուսումնասիրվողը՝ չինարենն է: Այս բնագավառում, բացի Ե. Պ. Պոլիվանովից, աշխատում են Ա. Ա. Դրագունովը, Վ. Մ. Ալեքսեևը, Ա. Ի. Իվանովը, Ա. Վ. Մարակուեր, Բ. Կ. Պաշկովը, Ի. Մ. Օշանինը, Ն. Ն. Կորոտկովը, Վ. Մ. Կոլոկոլովը և ուրիշները: Օշանինը, Պաշկովը, Կորոտկովը փորձեր են կատարում չինագիտական հարցերի ուսումնասիրության մեջ արմատավորել «լեզվի նոր ուսմունքի» սկրզբունքները: Մյուս լեզուներից նշելի է վյետնամերենը (աննամերենը), որի նկարագրության փորձ է կատարում Յա. Կ. Շուցկին:

Ճապոնագիտության մեջ առաջին հերթին նշելի են Ե. Գ. Պոլիվանովի և Ի. Ն. Կոնուադիի անունները: Մյուս հետազոտողներից հայտնի են Ե. Մ. Կոլպակչին (լեզվի պատմություն), Ա. Ա. Խոլոդովիչը, Ն. Ի. Ֆելդմանը, Ա. Ա. Պաշկովսկին, Պ. Մ. Պոգդնեկը (քերականություն), Օ. Պ. Պետրովան, Ե. Լ. Նավրոնը և ուրիշները: Մեծ շափով տուրք է տալիս «լեզվի նոր ուսմունքին» Ա. Ա. Խոլոդովիչը, որը, բացի ճապոներենից, զբաղվում է և կորեերենի ուսումնասիրությամբ:

Սեմա-թամական, աֆրիկյան և ավստրալա-օվկիանյան լեզուներ.— Սեմա-քամական կենդանի լեզուներից ամենից ավելի մեծ ուշադրություն գրավողը արաբերենն է, որը բուհական ուսումնասիրության առարկա է: Սովետական արաբագիտությունը տալիս է մի շարք անուններ՝ Ի. Յու. Կրաշկովսկի, Պ. Վ. Սեմյոնով, Կ. Վ. Օդե-Վասիլեա, Ն. Վ. Յուշմանով: Սրանք գրաղվում են քերականությամբ ու բարբառագիտությամբ, տիբուտերի հրատարակությամբ, և այլն: Այս բնագավառը ևս գերծ չի մնում «լեզվի նոր ուսմունքի» ազդեցությունից. այսպես, Ն. Վ. Յուշմանովը զբաղվում է արաբերենի քերականության ստադիալ շերտավորման հարցով: Ի. Յու. Կրաշկովսկին և Ն. Վ. Յուշմանովը մշակում են նաև եթովպական լեզուների հետ կապված հարցեր:

Որոշ աշխատանք է կատարվում նաև Հին եգիպտերենի և սրա հետնորդի՝ ղպտերենի ուսումնասիրության բնագավառում:

Հառուսա լեզվին առանձին աշխատանքներ են նվիրում Դ. Ա. Օլդեռոգգեն և Ն. Վ. Յուշմանովը, որոնք զբաղվում են և աֆրիկյան այլ լեզուների (սուահիլի, զուլու և այլն) ուսումնասիրության հարցերով։ 1937 թ. հրատարակված «African» ժողովածուում տեղ գտած հոդվածների հեղինակները (ի. և. Սնեգիրյով, Ն. Վ. Յուշմանով) աշխատում են այս բնագավառում կիրառել «լեզվի նոր ուսմունքի» դրույթները։ Ընդհանրապես նշելի է, որ սուահիլին, զուլուն, հառուսան և ամհարերենը բուհական դասավանդման և գիտական մշակման առարկա են դառնում Լենինգրադում (Դ. Ա. Օլդեռոգգեն, Ն. Վ. Յուշմանով, Պ. Մ. Կուզնեցով, ի. Պ. Ստրոգանովա)։

Փոքր Ասիայի և Միջագետի հին լեզուներ.— Այս լեզուների ուսումնասիրության բնագավառում ուժեղ կերպով արտահայտվում է «լեզվի նոր ուսմունքի» ազդեցությունը։ Առանձնապես լայն ուշադրության առարկա է ուրարտերենը (խալդերենը), որին նվիրվում են Ն. Ցա. Մառի, ի. ի. Մեշանինովի, Գ. Ա. Ղափանցյանի, Գ. Վ. Շերեթելու աշխատանքները։

## ԱՐԴԻ ԼԵզվ

(1950 թ. մինչև մեր օրերը)

Ի. ՎՈՒՂԱՐ ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԶՄԻ  
ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ  
ԴԻԱԼԵԿՏԻԿԱ-ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ  
ԿՈՆՑԵՊՑԻԱՅԻ ԱՐՄԱՏԱՎՈՐՈՒՄԸ

Ընդհանուր տեղեկություններ. «Պրավդայի» 1950 թ. դիսեմբեռական լեզվաբանության հարցերի շուրջը. սովետական լեզվաբանության վիճակը դիսեմբեռական պարտիան և Սովետական կառավարությունը չէին կարող երկար ժամանակ աչք փակել սովետական լեզվաբանության մեջ տիրող անբարեհաջող վիճակի հանդեպ։ «Լեզվի նոր ուսմունքի» երկարամյա տիրապետությունը մեծ վնաս էր հասցնում լեզվաբանական աշխատանքին և լեզվաբանական կադրերի պատրաստմանը, վտանգի տակ դնում լեզվի ուսուցման գործը, խանգարում մարքսիստինյան լեզվական քաղաքականության իրականացմանը, դրվագացնում լեզվաբանական գործնական հարցերի լուծումը։ «Լեզ-

վի նոր ուսմունքի» վուգար սոցիոլոգիական դրույթների հաղթահարման և մարքսիզմը անբասիր կերպով լեզվաբանության մեջ արմատավորելու գործում բացառիկ դեր խաղաց «Պրավդայի» էջերում 1950 թ. մայիսի 9-ից մինչև հունիսի 4-ը տևող դիսկուսիան։ Թանալով դիսկուսիան՝ «Պրավդայի» խմբագրությունը գրում էր. «Այն անբավարար վիճակի կապակցությամբ, որի մեջ գտնվում է սովետական լեզվաբանությունը, խմբագրությունը անհրաժեշտ է համարում «Պրավդա» թերթի էջերում կազմակերպել ազատ դիսկուսիա այն նպատակով, որ քննադատության և ինքնաքննադատության ճանապարհով հաղթահարվի սովետական լեզվաբանության լճացումը և ճիշտ ուղղություն տրվի այդ բնագավառի հետագա գիտական աշխատանքին»։

Դիսկուսիան սկսվեց Ա. Զիբորավայի «Սովետական լեզվաբանության մի քանի հարցերի մասին» հոդվածով, որն ուղղված էր «լեզվի նոր ուսմունքի» հիմնական դրույթների դեմ։ Նշելով, որ «Ն. Յ. Մառի անվիճելի ժառայությունը սովետական լեզվաբանությանը լեզվի վերնաշենքա անքայի ն բնույթի պրոբլեմի դրումն է», Զիբորավան առարկում էր այս դրույթի վուգար սոցիոլոգիական մեկնաբանության, լեզվի բոլոր տարրերը անմիշականորեն բազիսի հետ կապելու, լեզուն արգեստի հետ հավասարեցնելու դեմ։ Նա մարքսիզմի հետ անհամատեղելի էր համարում լեզվի դասակարգայնության դրույթը՝ նշելով, որ մարքսիզմը ելնում է ազգային լեզվի՝ ողջ ազգի համար միասնական լինելու փաստից։ Զիբորավան հատկապես խիստ կերպով էր քննադատում քառատարր վերլուծության մեթոդը, ձեռք-լեզվի առաջնության, լեզվի՝ սկզբնագես մոգական արարողությունների միջոց լինելու, լեզվաստեղծական պրոցեսի միասնության, լեզվի ստադիալ զարգացման դրույթները։

Զիբորավայի հոդվածին հետևեց ի. ի. Մեշշանինովի «Ակադեմիկոս Ն. Յ. Մառի ժառանգության ստեղծագործական զարգացման համար» հոդվածը, որի մեջ հեղինակը, նշելով Մառի ուսմունքի մի շարք խոցելի կողմերը, թերություններն ու անմշակ հարցերը, այնուամենայնիվ, կարծում էր, որ սովետական լեզվաբանությունը պետք է զարգանա այդ ուսմունքի հիման վրա։

Զիբորավայի և Մեշշանինովի հոդվածներից հետո լույս տեսան «լեզվի նոր ուսմունքի» հակառակորդների ու քննադատների և կողմնակիցների ու հետևորդների մի շարք այլ հոդվածների Ն. Յ. Մառի ուսմունքի քննադատությամբ հանդես եկան մաս-

նավորապես Վ. Վինոգրադովը, Լ. Բուզախովսկին, Բ. Սերեբրեննիկովը, Գ. Ղափանցյանը և ուրիշները. պաշտպանության դերը իրենց վրա վերցրեցին Ն. Զեմողանովը, Յ. Ֆիլինը և ուրիշները:

Հունիսի 20-ին «Մարքսիզմի վերաբերյալ լեզվաբանության մեջ» հոդվածով հանդես եկավ ի. Վ. Ստալինը՝ փորձելով պատասխան տալ հետևյալ 4 հարցին. 1) ճիշտ է արդյոք, որ լեզուն վերնաշենք է բազիսի վրա. 2) ճիշտ է արդյոք, որ լեզուն միշտ եղել է և մնում է դասակարգային, որ հասարակության համար ընդհանուր ու միասնական ոչ դասակարգային, համաժողովրդական լեզու գոյություն չունի. 3) որո՞նք են լեզվի բնորոշ հատկանիշները. 4) ճիշտ վարվեց արդյոք «Պրավդան»՝ ազատ դիսկուսիա բանալով լեզվաբանության հարցերի շուրջը: Դիսկուսիոն հոդվածին հետևեցին «Լեզվաբանության մի քանի հարցերի շուրջը» և «Պատասխան ընկերներին» հոդվածները, որոնց մեջ նա պատասխան էր տալիս լեզվաբանության վերաբերյալ՝ իրեն ուղղված որոշ հարցերի: Այդ բոլոր հոդվածները միավորվեցին «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» ընդհանուր խորագիրը կրող աշխատության մեջ: Ի. Վ. Ստալինի գլխավոր նպատակներից մեկը այն բանի հիմնավորման փորձն էր, թե չի կարելի լեզուն համարել վերնաշենք բազիսի վրա, որ լեզուն որպես հասարակական երեսվթյուն ունի իր ուրույն տեղը և տարերեւ է բազիսից ու վերնաշենքից: Լեզվի և վերնաշենքի տարրերության դրույթը հիմնավորվում է հետևյալ կերպ.

1) Ամեն մի բազիս ունի իր համապատասխան վերնաշենքը. նոր բազիսի ստեղծման հետ միասին ստեղծվում է նոր վերնաշենք. Հին բազիսի լիկվիդացման հետ միասին լիկվիդացվում է հին վերնաշենքը. մինչդեռ լեզուն մնում է հիմնականում նույնը՝ պահպանելով իր բերականական կառուցվածքը և հիմնական բառային ֆոնդը:

2) Վերնաշենքը ակտիվորեն օգնում է նոր բազիսին հին բազիսի դեմ, օգնում է մի դասակարգին մյուսի դեմ. մինչդեռ լեզուն հավասարապես սպասարկում է ինչպես հին բազիսին, այնպես էլ նորին, ինչպես իշխող դասակարգին, այնպես էլ մյուսներին:

3) Վերնաշենքը արդյունք է մեկ դարաշրջանի, երբ գործում է տվյալ բազիսը. լեզուն արդյունք է մի շարք դարաշրջանների և ապրում է ավելի երկար, քան որևէ բազիս և որևէ վերնաշենք:

4) Վերնաշենքը արտադրության հետ կապված է ոչ թե ան-

միջականորեն, այլ բազիսի միջոցով. մինչդեռ լեզուն ինչպես մարդու արտադրական գործունեության, այնպես էլ նրա գործունեության այլ բնագավառների հետ կապված է անմիջականորեն:

Ի. Վ. Ստալինը ժխտում է նաև լեզվի դասակարգայնության դրույթը: Ըստ նրա՝ լեզուն համաժողովրդական բնույթ ունի, և շի կարելի խոսել առանձին դասակարգային լեզուների գործության մասին: Լավագույն դեպքում կարելի է խոսել դասակարգային բարբառների կամ ժարգոնների մասին, որոնք արմատապես տարրերվում են տերիտորիալ բարբառներից. դասակարգային բարբառները (ժարգոնները), ի տարրերություն տերիտորիալների, շունեն սեփական քերականական կառուցվածք ու հիմնական բառային ֆոնդ (այդպիսիները փոխ են առնում համաժողովրդական լեզվից) և շեն կարող ընկնել ազգային լեզուների կամ ավորման հիմքում:

Հենվելով վաղուց ի վեր հայտնի դրույթների վրա՝ Ի. Վ. Ստալինը նախ՝ նշում է լեզվի և հասարակության սերտ կապը, երկրորդ՝ գտնում է, որ լեզվի էությունը որոշում և նրա կայունությունն ապահովում են քերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը, երրորդ՝ ժխտում է լեզվի հանկարծակի հեղաշրջումների և լեզվական «պայթյունների» հնարավորությունը, չորրորդ՝ նշում է, որ լեզուների խաչավորումը շի հանգեցնում նոր որակի լեզվի ստեղծման, այլ պահպանում է լեզուներից մեկը, որը, հարստանալով պարտված լեզվի հաշվին, շարունակում է զարգանալ իր զարգացման ներքին օրենքներով:

Ի. Վ. Ստալինի հոդվածներում, «լեզվի նոր ուսմունքի» տիրապետության շրջանում անտեսվող մի շարք հանրահայտ ճշշմարտությունների հետ միասին, քիչ շէին հակասական տեղերն ու բավարար շափով չհիմնավորված դրույթները, ակնհայտ սխալներն ու վրիպումները: Եր գլխավոր դրույթի՝ լեզվի և վերնաշենքի տարրերության հարցի հիմնավորման մեջ Ի. Վ. Ստալինը հանդես է քերում միակողմանի մոտեցում, անհրաժեշտ շափով հաշվի շի առնում բազիսի և վերնաշենքային կատեգորիաների փոխհարաբերության ողջ բազմազանությունը, մեխանիկորեն է պատկերացնում բազիսում տեղի ունեցած փոփոխությունների՝ վերնաշենքում արտացոլվելու պրոցեսը, գրեթե լիովին անտեսում է վերնաշենքի տարրեր տեսակների սպեցիֆիկ կողմերը, լեզուն քննում է ընդհանուր կերպով՝ առանց նրա պատմական և հասարակական տարրերակումների բնույթի հաշվառման և այլն: Այս նույն ձևով էլ լեզվի դասակարգայնության հարցը քննելիս նա հաշվի շի առնում:

տարբեր լեզուների պատմության տվյալները, հարկ եղած շափով՝ չի բացահայտում համաժողովրդական լեզվի ներսում դրական և այլ տարբերակների գոյության հասարակական հիմքերը, կամայական ձևով՝ է մեկնաբանում Մարքսի, էնգելսի և Լենինի մտքերը և այլն և այլն: Սրանց միանում են լեզվի զարգացման հարցերի ուղղագիծ ու պարզեցված մեկնաբանությունը, համաժողովրդական լեզվի և լեզվի զարգացման ներքին օրենքների հասկացությունների գործածության, այլև նախալեզվի հանդեպ ունեցած վերաբերմունքի անհստակությունը, պատմա-համեմատական մեթոդի թերությունների վերաբերյալ դրույթի անպարզորոշությունը, ոռուսաց ազգային լեզվի բարբառային հիմքի և լեզվի ու մտածողության փոխհարաբերության հարցերում թույլ տրված սխալները և այլն<sup>1</sup>: Անհատի պաշտամունքի պայմաններում այս թերությունները առիթ են տալիս հակասական կարծիքների ու մեկնաբանությունների համար, տեղ են գտնում նույնիսկ սխալ դրույթները հիմնավորելու փորձեր:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ «լեզվի նոր ուսմունքը» տիրապետող դիրքերից զրկելը մեծապես նպաստում է սովետական լեզվաբանության ընդհանուր վերելքին: Անհատի պաշտամունքի հետևանքների լիկվիդացիայից հետո այդ վերելքը աննախրնթաց բնույթ է ստանում: Կարճ ժամանակում արվում է այնքան բան, որ սովետական լեզվաբանությանը հնարավորություն է տալիս քայլելու համաշխարհային լեզվաբանության առաջավոր դիրքերում:

Սովետական լեզվաբանության զարգացման այս էտապի համար ամենից ավելի բնորոշ է իր ունեցած սխալների գիտական քննադատությունն ու հաղթահարումը, նախորդ լեզվաբանական ժառանգության և ժամանակակից արտասահմանյան լեզվաբանության (առաջին հերթին ստրուկտուրալիզմի) քննադատական վերագնահատումը, լեզվաբանական գիտության նվաճումների համադրումն ու քննադատական օգտագործումը՝ մարքսիստական դիալեկտիկա-մատերիալիստական փիլիսոփայության սկրզբունքների լույսի տակ: Պատմական և ստատիկ վերլուծության բոլոր մեթոդների գնահատման հիմքը մատերիալիստական դիակտիկական մեթոդն է, լեզվաբանական բոլոր կոնցեպցիաների գնահատման հիմքը՝ դիալեկտիկական մատերիլիզմը: Դիալեկտի-

<sup>1</sup> Այս թերություններն ու սխալները հանդամանորեն քննված են գեռակ 1958 թ. գրքած մեր „Օ ոքորոյք առօքական անդամանության հոգածում, որ հանձնված է տպագրության:

կական մատերիալիզմը սովետական լեզվաբանության ընդհանուր փիլիսոփայական հիմքն է:

Մարքսիստական դիալեկտիկա-մատերիալիստական փիլիսոփայությունը դառնում է լեզվաբանական հայացքների հիմք նաև ժողովրդական դեմոկրատիայի երկրներում։ Լեզվական երևոյթների մարքսիստական մեկնաբանության փորձեր առկա են և այլ երկրների որոշ լեզվաբանների մոտ. որպես օրինակ կարելի է նշել ֆրանսիացի կոմունիստ-լեզվաբան Մարտել Կոհենին<sup>1</sup>:

Չնայած «Պրավդայի» դիսկուսիայից հետո եկող շրջանի՝ դեռևս կարճ ժամանակ ընդգրկելուն, կարելի է տարբերել երկու փուլ. 1) 1950—1955 թթ., երբ սովետական լեզվաբանության մեջ իշխում է ընդհանրապես դոգմատիկ մոտեցում ի. վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատության նկատմամբ. անհատի պաշտամունքի պայմաններում բացակայում է որևէ քննադատական վերաբերմունք, բոլոր դրույթներն ընդունվում են առանց որևէ վերապահության. 2) 1956 թ. մինչև այժմ, երբ XX Համագումարի որոշումներից և «Պրավդայի»՝ անհատի պաշտամունքի դեմ ուղղված հոդվածներից հետո սկսվում է գոյություն ունեցող դոգմատիկ մոտեցման հաղթահարումը, վերանայվում են առանձին սխալ դրույթներ, ավելի մեծ տեղ է սկսում տրվել այն հարցերին, որոնք մինչև այդ հեռու են գտնվել սովետական լեզվաբանների ուշադրությունից:

Լեզվաբանական աշխատանքի բնույթն ու տիպերը մնում են հիմնականում նույնը, բայց նշանակալից տեղաշարժ է կատարվում նրանց տեսակարար կշռի մեջ։ Հնչյունաբանական և ձեաբանական հարցերը կրկին գրավում են իրենց պատշաճ տեղը, անհրաժեշտ պայմաններ են ստեղծվում համեմատական և պատմական քերականության հարցերի զարգացման համար։

Սովետական լեզվաբանության գլխավոր օրգանը դառնում է 1952 թ. լույս տեսնող «Вопросы языкоznания» երկամսյա հանդեսը։

Սովետական լեզվաբանության կարևորագույն պրոբլեմների թվում շարունակվում են առաջնակարգ տեղ գրավել լեզվի և հասարակության փոխհարաբերության պրոբլեմները։ Հաղթահարե-

<sup>1</sup> M. Cohen, Linguistique et matérialisme dialectique, 1948. La discussion sur la linguistique en Union Soviétique, „L'Humanité“, 1950, հունիս, և այլն։ Հմտ. M. Cohen, Cinquante années de recherches, Paris, 1955.

լով լեզվի զարգացման պրոցեսի՝ հասարակության զարգացմանը լինվին համբնթաց փոխվելու վուլգար սոցիոլոգիական տեսակետը, ընդունելով լեզվի զարգացման ներքին օրենքների դրույթը և միաժամանակ դնելով լեզվի ու հասարակության սերտ կապի դրույթը՝ սովետական լեզվաբանությունը անհրաժեշտաբար պետք է լուծեր այնպիսի հարցեր, ինչպիսիք են համաժողովրդական լեզվի բնույթի և համաժողովրդական խոսակցական լեզվի, գրական լեզվի ու բարբառների փոխհարաբերության ու փոխազդեցության, տարրեր պատմական էպոխաներում նրանց ունեցած տեսակարար կշռի ու օրինաշափությունների, էթնիկական և ազգային լեզուների ծավալի և կազմավորման պրոցեսի առանձնահատկությունների, հասարակության սոցիալական տարրերակումների ու դրանց փոփոխության պրոցեսի լեզվական արտացոլման, լեզուների պատմական փոխհարաբերության ու փոխազդեցության, լեզուների պատմության, այդ թվում և գրական լեզուների պատմության պերիոդիզացիայի, լեզվական նորմայի բնույթի ու փոփոխության հարցերը։ Այս հարցերի լուծումը ունի հաճախ ոչ միայն տեսական, այլև գործնական, քաղաքական ու կուլտուրական կարևոր նշանակություն, եթե նկատի ունենանք Սովետական Միության բազմաթիվ ժողովուրդների զարգացման բնույթն ու առանձնահատկությունները։ Այս հարցերը հատուկ կարևորություն են ստանում նաև այն տեսակետից, որ նախորդ լեզվաբանության կողմից դրանք կամ շեն լուսաբանվել, կամ անբավարար չափով են լուսաբանվել, իսկ ու լեզվի նոր ուսմունքի» կողմնակիցների կողմից «լուծվել են» ուղղագիծ միակողմանիությամբ, սխալ կերպով և հաճախ միայն գեկլարատիվորեն։ մինչդեռ դրանց լուծումը պահանջում է երկարատես ու բազմակողմանի աշխատանք, բազմաթիվ լեզուների մանրակրկիտ ուսումնասիրություն և այդ ուսումնասիրության արդյունքների անկողմնակալ ընդհանրացում։ Այս կապակցությամբ անցկացվում են դիսկուսիաներ ու քննարկումներ, լույս են տեսնում մենագրական ուսումնասիրություններ ու հոդվածներ, բնդ որում հանդես են գալիս պրոբլեմների պարզաբանման ամենաբազմազան փորձեր, հայտնվում են հակադիր ու հակասական կարծիքներ։ Հարցերի լուծումը հաճախ բարդանում է նրանով, որ ոչ բոլոր լեզուներն են հավասար շափով ու խորությամբ ուսումնասիրված։

Սովետական լեզվաբանության մեջ վեճերի տեղիք է տալիս հենց համաժողովրդական լեզվի գաղաքարի ծավալի ու բովան-

դակության, պատմական տարբեր ժամանակաշրջաններում նրա ունեցած բնույթի հարցը: Համաժողովրդական լեզվի հարցը տարբեր ձևով է լուծվում պատմական տարբեր ժամանակաշրջանների և տարբեր լեզուների համար՝ կապված դրանց զարգացման բնույթի առանձնահատկությունների հետ, մանավանդ որ ոչ բոլոր դեպքերում գոյություն ունեն հասարակական տարբեր միավորների (տոհմ, ցեղ, ցեղային միություն, էթնոս, ազգ) սահմանագատման որոշակի շափանիշներ, դրանց գոյացման ժամանակի վերաբերյալ ճշգրտորեն որոշված տվյալներ:

Լեզվի զարգացումը կապելով հասարակության զարգացման հետ՝ մարքսիստական լեզվաբանությունը այդ զարգացումը շի դիտում որպես հասարակության զարգացմանը համբնթաց ավտոմատ տեղաշարժեր: Լեզուն ունի իր զարգացման ներքին և արտաքին գործոնները, ընդ որում գլխավորը ներքին գործոններն են՝ կապված լեզվի հասարակական ֆունկցիայի, լեզվասիստեմի ներքին հակասությունների հետ. արտաքին գործոնները (խաչափորումն ու խառնումը) խաղում են լոկ եղած պրոցեսներն արագացնողի կամ տարածողի դեր, այլև ազդում լեզվի որոշ կողմերի վրա՝ առանց անմիջական որակական փոփոխություններ առաջ բերելու նրա մեջ: Լեզվի զարգացումն ընթանում է երկու հակաղիր տենդենցների փոխազդեցության տակ՝ տարբերակում (դիֆերենցիացիա) և միասնացում (ինտեգրացիա). սրանց տեսակարար կշռի տարբերությունները կապված են հասարակության զարգացման բնույթի ու աստիճանի հետ: Լեզվի զարգացումն ընթանում է անհավասարաշափ, լեզվի կառուցվածքային տարբեր կողմերը փոփոխվում են ոչ նույն տեմպով. այս հանգամանքը հանգեցնում է լեզվասիստեմի անրնդհատ հակասությունների, լեզվի մեջ միշտ լինում են անցյալի հետքեր և ապագայի սաղմեր: Դնելով լեզվի մեջ քանակական աննկատ փոփոխությունների որակական անցումները տալու հարցը՝ մարքսիստական լեզվաբանությունը այդ անցումները շի հասկանում ոչ որպես սիստեմի «պայման», ոչ էլ որպես մուտացիոն փոփոխություններ:

Առանձնապես մեծ վեճերի տեղիք է տալիս ազգային լեզվի բնույթի ու զարգացման առանձնահատկությունների հարցը: «Լեզվի նոր ուսմունքի» ներկայացուցիչները, ենելով ազգերի՝ կապիտալիստական հասարակության ծնունդ լինելու դրույթից, ազգային լեզուն դիտում էին որպես միանգամայն նոր ֆորմացիա, լեզվի զարգացման նոր ստաղիա. նրանք շափազանցնում էին ազգա-

յին լեզվի՝ էթնիկական լեզվից ունեցած տարբերությունները և, ընդհակառակն, անտեսում կառուցվածքային բազմաթիվ ընդհանրությունները։ 1950 թ. հետո սովետական լեզվաբանները ստիպված էին պայքարել և այս վուզար սոցիոլոգիական տեսակետի, և՝ բուրժուական լեզվաբանության շատ ներկայացուցիչների այն տեսակետի դեմ, թե բացակայում է որևէ կապ լեզվի և հասարակության զարգացման միջև։ Սովետական լեզվաբանների մի մասը, տարվելով «լեզվի նոր ուսմունքի» քննադատությամբ և ծայրահեղության հասցնելով ի. Վ. Ստալինի դրույթը, հայտնում է այն միտքը, որ ազգային լեզուն իր կառուցվածքային առանձնահատկություններով, իր քերականական կառուցվածքով և հիմնական բառային ֆոնդով ընդհանրապես չի տարբերվում էթնիկական լեզվից<sup>1</sup>։ Սակայն սովետական լեզվաբանների մեծ մասը հանգում է այն մտքին, որ ազգային լեզուն, իր կառուցվածքային առանձնահատկություններով էապես (որակապես) շտարբերվելով էթնիկական լեզվից, այնուամենայնիվ, որոշ տարբերություն ունի, որ ազգային լեզուն էթնիկական լեզվի համեմատությամբ ավելի է զարգանում ու կատարելագործվում նաև իր կառուցվածքով<sup>2</sup>։

Ազգային լեզվի գաղափարի մեկնարանության հարցում հայտնրվել են սխալ տեսակետներ ու կարծիքներ։ Ոմանք ազգային լեզու ասելով հասկանում են լոկ ազգային գրական լեզուն. սրանով նեղացվում է ազգային լեզվի բմբոնումը, բարբառներով խոսողների ու հետեւաբար ազգը կազմողների թվից, և ազգը զրկվում է լեզվական միասնության հատկանշից։ Երկրորդները ազգային լեզուն դիտում են որպես գրական լեզվի պատճեն և որպես գրական լեզվի պարզ մեխանիկական գումար. սրանով էլ ջնջվում է ազգային և էթնիկական լեզուների տարբերությունը, ժխտվում ազգի որակապես նոր բնույ-

<sup>1</sup> Հմմ. Г. Д. Санжеев, Образование и развитие национальных языков в свете учения И. В. Сталина, „Вопросы языкоznания в свете трудов И. В. Сталина“, М., 1952, էջ 332. И. С. Миллер, К вопросу о формировании польской буржуазной нации, ВИ, 1952, № 7, էջ 53.

<sup>2</sup> Հմմ. Р. И. Будагов-ի և В. Н. Ярцева-ի գրախոսականը „Вопросы языкоznания в свете трудов И. В. Сталина“ ժողովածուք մասին, ВЯ, 1952, № 4, էջ 112—113. В. И. Панов, Об отлиниях национального языка от языка народности, ВЯ, 1952, № 6, էջ 120—125. К вопросу о развитии от языка народности к национальному языку“, ВЯ, № 6, էջ 126—135 և այլն։

թր, ազգային լեզվի կազմավորման հարցը դիտվում է ուղղագիծ պարզությամբ։ Հաղթահարելով «լեզվի նոր ուսմունքի» դրույթը՝ ազգային լեզվի՝ լոկ բուրժուական դասակարգի ստեղծագործություն լինելու մասին, այլև մերժելով թված տեսակետները՝ սովետական լեզվաբանների մեծ մասը կատարած աշխատանքի հետևանքով զարգացնում է այն միտքը, որ «ազգային լեզուն ներկայացնում է լեզվի ֆունկցիոնալ-ոճական, հասարակական և տերիտորիալ տեսակետից որակապես տարբերվող ձևերի բարդ ճյուղավորված սիստեմ՝ լեզվի գրականորեն մշակված տիպի՝ որպես ազգային լեզվի բարձրագույն ձևի գլխավորությամբ, որի կազմի մեջ միաժամանակ մտնում է բանավոր-խոսակցական լեզվի (քեզ) ողջ բազմազանությունը։ Ազգային լեզվի համաժողովրդական բնույթը կայանում է նրանում, որ նա հանդիսանում է տվյալ ազգի բոլոր անդամների սեփականությունը, որոնք գործնականապես օգտվում են պատմականորեն պայմանավորված նրա մի քանի տարատեսակներից»<sup>1</sup>։

Լեզվի և հասարակության կապի պրոբլեմի հետ սերտորեն առնչվում է լեզվի պատմության պերիոդացիայի հարցը։ Այս հարցի լուծումը կարենոր նշանակություն ունի այս կամ այն լեզվի պատմության պրոցեսի գիտական մեկնաբանության համար։ Սովետական Միության և ժողովրդա-դեմոկրատական երկրների լեզվաբանական գրականության մեջ հանդես են եկել այս հարցի լուծման երկու կարգի տենդենցներ։ Լեզվաբանների մի մասը, ելնելով լեզվի և հասարակության պատմության սերտ կապի դրույթից, առաջարկում է պերիոդացիայի հիմք բնդունել լեզվի օպրատաքին» պատմության փուլերը, այսինքն՝ որպես լեզվի պատմության պերիոդներ դիտել նրա զարգացումը որպես ցեղային, էթնիկական և ազգային լեզու։ Լեզվաբանների մի այլ խումբ (այդ թվում բուլղարացի լեզվաբան Վլ. Գեորգիկը) գտնում է, որ այս կամ այն լեզվի պատմական զարգացումը տալիս պետք է ելնել տվյալ լեզվի կրած առանձնահատուկ փոփոխություններից, նկատի առնելով առաջին հերթին լեզվի կառուցվածքի փոփոխությունները։ Որոշ լեզվաբաններ էլ պերիոդացիայի հիմքում դնում են մեկից ավելի հատկանիշներ՝ ավելի կամ պակաս սերտ կապ

<sup>1</sup> Вопросы советской науки. Закономерности исторического развития общенародного разговорного языка и местных диалектов. Составили Р. И. Аванесов, Н. А. Баскаков, Е. А. Бокарев, М. М. Гухман, Ю. Д. Дешериев, М., 1958, № 12.

Հաստատելով դրանց միջև: Հետազոտողների մեծ մասը հայտնում է այն կարծիքը, որ այս հարցը լուծելիս պետք է նկատի առնել համաժողովրդական խոսակցական լեզվի և գրական լեզվի տարբերությունը, այն հանգամանքը, որ վերջինիս զարգացումը ենթակա է գիտակցական միջամտության. «Համաժողովրդական լեզվի զարգացումը հատկապես հնագույն ժամանակաշրջաններում և նրա անգիր ձևում ամբողջովին վերաբերում է լեզվի ներքին զարգացման ոլորտին, այլև—որոշակի պատմական պայմաններում— միջլեզվային փոխազդեցություններին (սուբստրատի ազդեցությունը): Հնչյունական օրենքները, քերականական պրոցեսները, անալոգիայի ազդեցությունը վերաբերում են ամենից առաջ համաժողովրդական լեզվի զարգացմանը: Իսկ գրական լեզվի՝ որպես կուլտուրայի սպեցիֆիկ երևույթի զարգացման համար բնորոշ են ամենից առաջ այնպիսի գործոններ, ինչպես ընտրությունը և կանոնարկումը (рեգլамենտացիա)՝ տվյալ լեզվի նորմաների կազմի մեջ որոշակի շրջանում որոշ երևույթների ներմուծումը և նրանցից համապատասխան այլ երևույթների բացառությունը: Սրանով, իհարկե, չի հանգում գրական լեզվի՝ իր ներքին օրենքներով զարգանալու հարցը, միայն թե պետք է դրովի այն հարցը, թե գրական լեզվի կառուցվածքի ո՞ր կողմերում և ի՞նչ շափով է տեղի ունենում նրա զարգացումը ըստ, իր ներքին օրենքների<sup>1</sup>:

Այս բոլոր հարցերը բնականաբար սուր կերպով կապվում են լեզվի զարգացման ներքին օրենքների բնույթի պարզաբանման խնդրի հետ: Այս պրոբլեմին նվիրված զանազան աշխատություններում և դիսկուսիաներում լեզվաբանները փորձում են լուծել այն ինչպես մարքսիզմի ընդհանուր տեսական սկզբունքների, այնպես

<sup>1</sup> Вопросы советской науки..., М., 1958, № 13—14. Այս կապակցությամբ ազելորդ շենք համարում նշել հետեւյալը: Դեռևս 1956 թ. մեր «Հայոց լեզվի պատմության պերիոդիզացիայի հարցերը» հոդվածում, ՊԱՆԹ հ. 57, 1 մաս, հայ համաժողովրդական լեզվի պատմության պերիոդիզացիան մենք առաջարկել ենք հիմնել նրա բոլոր տարատեսակների փոխհարաբերության հաշվառման վրա. այս պերիոդիզացիայի հիմքում մենք դնում ենք լեզվի զարգացման օրենքները. միաժամանակ ինչպես այստեղ, այնպես էլ մեր «Հայ լեզվաբանական միտքը և աշխարհաբարի հարցերը» դոկտորական դիսերտացիայում մենք սահմանագատում ենք համաժողովրդական լեզվի և գրական լեզվի պատմության պերիոդիզացիայի սկզբունքները. գրական լեզվի պատմության պերիոդիզացիայի հիմքում մենք դնում ենք «նրա Փունկցիաների ընդլայնման պրոցեսը և այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում նրա մեջ զարգացման և մշակման ընթացքում»:

Էլ առանձին լեզուների կոնկրետ նյութի ուսումնասիրության արդյունքների բազմակողմանի համարման հիման վրա (Վ. Վ. Վինոգրավը, Ա. Ա. Զիբորավա, Վ. Ա. Զվեգինցև, Բ. Ա. Սերեբրենիկով, Վ. Ն. Յարցևա, Վ. Մ. Ժիրմունսկի, Մ. Մ. Գուխման և ուրիշներ): Լեզվի զարգացման ներքին օրենքների ընդհանուր պրոբլեմի հետ կապված՝ քննվում՝ են հետեւյալ հարցերը. 1) «լեզվաբանական օրենք» և «լեզվի զարգացման ներքին օրենք» հասկացությունները մարքսիստական լեզվաբանության ընդհանուր սիստեմում. 2) լեզուների զարգացման ընդհանուր և մասնակի ներքին օրենքների հարաբերակցությունը՝ կապված լեզուների ինքնատիպության և նրանց զարգացման ուղիների հետ. 3) լեզվի տարրեր կողմերի զարգացման, նրանց փոխկապակցության և փոխպայմանավորվածության առանձնահատկությունները. 4) լեզվի զարգացման ներքին օրենքների և լեզվի ֆունկցիավորման հարաբերակցությունը սիստեմի մեջ. 5) լեզվի զարգացման ներքին օրենքների ուսումնասիրությունը ժողովրդի պատմության հետ անխղելիորեն կապված. 6) ցեղակից լեզուների ընտանիքում լեզվի զարգացման ներքին օրենքների հետ<sup>2</sup>: լեզվի զարգացման ներքին օրենքների հետ կապված հարցերի քննարկման հետևանքով արվում են հետեւյալ ընդհանուր եզրակացությունները. 1) լեզվի զարգացման ներքին օրենքները լեզվի կառուցվածքի տարրեր օղակների փոփոխության փոխկապակցության դինամիկ օրենքներ են. ուստի և չի կարիի սահմանափակվել միայն լեզվի պատմության առանձին փաստերի հավաստմամբ՝ առանց պարզելու լեզվի բոլոր կառուցվածքային կողմերի կապերը. 2) լեզվի զարգացման ներքին օրենքները

Հմտ. Հատկապես Постановление Ученого совета Института языкоznания АН СССР от 7 февраля 1952 г., ВЯ, 1952, № 3, էջ 148—149, այլև В. В. Виноградов, Понятие внутренних законов развития в общей системе марксистского языкоznания, ВЯ, 1952, № 2, էջ 3—41. В. А. Звегинцев, Понятие внутренних законов развития в свете работ И. В. Сталина по языкоznанию, „Вопросы языкоznания в свете трудов И. В. Сталина“, М., 1952, էջ 183—217. Внутренние законы развития языка, М., 1954 և այլն: Տե՛ս նաև լեզվի զարգացման ներքին օրենքը շուրջը տեղի ունեցած դիսկուսիայի վերաբերյալ հազորումը ВЯ—ում, 1953, № 3, էջ 141—149.

<sup>2</sup> ВЯ, 1953, № 3, էջ 148—149.

շնդգրկում են լեզվի կառուցվածքի բոլոր տարրերը՝ հնչյունական, քերականական, լեքսիկական, բայց ոչ ամեն մի առանձին փոփոխություն կամ նույնիսկ զարգացման ավալի ընդհանուր տեսլենց է կերաճում զարգացման օրենքի. 3) լեզվի զարգացման ներքին օրենքները, որպես դինամիկ օրենքներ, պետք է սահմանադատել լեզվի ֆունկցիավորումից՝ սիստեմի մեջ, բայց ֆունկցիավորման օրենքները չի կարելի կտրել լեզվի զարգացման ներքին օրենքներից, որոնց հետևանքն են հանդիսանում դրանք, այնպես ինչպես զարգացման ներքին օրենքների ուղղությունն ինքը որոշվում է տվյալ լեզվի առկա սիստեմով. 4) լեզվի զարգացման ներքին օրենքները ապահովում են առանձին լեզուների զարգացման աղգային ինքնատիպությունը և որոշում նրանց որակը. լեզվի զարգացման ընդհանուր ներքին օրենքները որոշում են լեզվի կառուցվածքի փոփոխությունների ընդհանուր ուղղությունն ու տիպը՝ դրսեորվելով ամեն մի կոնկրետ լեզվի նյութի և ձեզ մեջ ն ձուլվելով նրա զարգացման ներքին օրենքների հետ. ուստի և հիմք չկա խզելու լեզվի զարգացման ընդհանուր և մասնակի ներքին օրենքները. 5) լեզվի զարգացման ուսումնասիրությունը պետք է անցկացվի ժողովրդի՝ այդ լեզուն կրողի և ստեղծողի պատմության հետ անխզելիորեն կապված. այստեղ միևնույն ձևով անդնդունելի են ինչպես Մարի ու նրա հետեւորդների վուզգար սոցիոլոգիզմը, այնպես էլ այդ պատմական օրինաշափությունների սահմանումից հակապատմական հրաժարումը, որ բնորոշ է ժամանակակից բուրժուական լեզվաբանությանը. Հարկավոր է հիշել, որ անցումը տոհմային լեզուներեց ցեղայինների, ժողովուրդների լեզուներից ազգայինների՝ կապված է տարբեր ժանրերի ու ոճերի մշակման հետ, որոնք անմիջականորեն արտացոլում են հաղորդակցման ձևերի զարգացումը հասարակության փոխակերպման պայմաններում. 6) ցեղակից լեզուների զարգացման ներքին օրենքների ուսումնասիրությունը պետք է դառնա պատմա-համեմատական լեզվաբանության անբաժան մասը<sup>1</sup>:

Ընդհանուր առմամբ, խոսելով լեզվի զարգացման ներքին օրենքների մասին, սովետական լեզվաբանները կարծում են, թե լեզվի զարգացումը կատարվում է այնպիսի ուղղությամբ, որ համապատասխանում է հասարակության զարգացմանը, կուտակում է այնպիսի տարրեր, որոնք օգնում են նրան ավելի լավ կատարելու իր ֆունկցիան<sup>2</sup>:

<sup>1</sup> ВЯ, 1953, № 3, էջ 149.

<sup>2</sup> Вопросы советской науки..., М., 1958, էջ 9.

լեզվի զարգացման պրոցեսի լուսաբանության մեջ՝ կարևոր տեղ են բռնում բարբառների բնույթի ու փոփոխության, ազգային լեզվի բարբառային հիմքի, լեզուների փոխազդեցության, տարրերակման ու միասնականացման պրոցեսների՝ տարրեր պատմական էպոխաներում ունեցած տեսակարար կշռի, սուրստրատի պրոբլեմները։ Վերջին հարցը դառնում է հատուկ դիմուսայի առարկա և տեղիք է տալիս հակադիր կարծիքների բախման համար։

Բարբառների զարգացման հարցի լուսաբանության մեջ մեծ դեր են խաղացել Ռ. Ի. Ավանեսովի աշխատությունները։ Բարբառները համարելով պատմական կատեգորիա՝ նա քննում է դրանց փոխհարաբերությունը համաժողովրդական լեզվի հետ՝ պատմական տարրեր պայմաններում։ Նա տարրերում է ցեղային բարբառները հետագա տերիտորիալ բարբառներից։ Ֆեոդալիզմի պայմաններում Ավանեսովը նշում է երկու կարգի պրոցեսների առկայությունը՝ մի կողմից՝ եղած բարբառների տարրերակումը։ Մյուս կողմից՝ նույն ֆեոդալական միավորի կազմում գտնվող բարբառների միավորումը։

Սուրստրատի տեսության գնահատման հարցում կարևոր նշանակություն ստացավ 1955 թ. փետրվարին տեղի ունեցած դիմուսակուսիան<sup>1</sup>։ Այստեղ հանդես են գալիս Բ. Ա. Սերեբրեննիկովի և Վ. Ի. Աբասի հակադիր տեսակետները սուրստրատի հարցի մասին։ Սերեբրեննիկովը պաշտպանում է այն միտքը, որ «մի լեզվի ազդեցությունը մյուսի վրա սուրստրատ-լեզվի ազդեցության պայմաններում ըստ էության ոչնչով չի տարրերվում լեզուների ազդեցության մյուս տիպերից»<sup>2</sup>։ Ըստ Սերեբրեննիկովի՝ իրականության մեջ երբեք տեղի չի ունենում մի լեզվական հարթության դրում մյուսի վրա, մի լեզվի մակաշերտում (наслаждение) մյուսի վրա, այլ պարզապես լեզուների շփում (контактирование) և փոխազդեցություն։ Սերեբրեննիկովը տարրերում է լեզուների շփման երկու տիպ՝ եզրային (маргинальное контактирование) և միջերկրային (внутрирегиональное контактирование). առաջին դեպքում տեղի է ունենում եզրային շփում (пистиф և տոպոնի միկայի ընդհանրություն չի նկատվում), երկրորդ դեպքում՝ էթնիկական ներթափանցում. առաջինի համար օրինակ են ծառայում ուղմուրտերենն ու թաթարերենը, երկրորդի համար՝ մարիերենն ու

<sup>1</sup> Հմատ. ՏԾИЯ, IX, 1956 և ВЯ, 1955, № 5, էջ 170—176։

<sup>2</sup> ՏԾИЯ, IX, 1956, էջ 52։

Հուվաշերենը: Սուբստրատ-լեզուն կարող է անհետանալ լիովին կամ մասամբ: Սերերեննիկովի կարծիքով՝ սուբստրատի հարցը գտնվում է բուն պատմա-համեմատական լեզվաբանության սահմաններից դուրս և պետք է ուսումնասիրվի լեզվաբանության հատուկ դիսցիպլինների կողմից (համեմատական իմաստաբանության, համեմատական փորձառական հնչյունաբանության և լեզուների փոխազդեցության տարրեր տիպերի արդյունքներն ուսումնասիրող հատուկ դիսցիպլին):

Վ. Ի. Աբանը ենում է այն գաղափարից, որ սուբստրատի երեսությը հակադրվում է լեզուների փոխազդեցության երկու այլ տիպերին՝ ցեղակցությանը և փոխառությանը՝ միջանցիկ դիրք գրավելով նրանց միջև: Հենց դրանով էլ սուբստրատի հարցը լեզվական արժեք է ստանում. իսկ ընդհանրապես սուբստրատի գաղափարը լեզվաբանական գաղափար չէ, սուբստրատի մասին կարելի է խոսել այն դեպքում, եթե տեղի է ունենում էթնիկական խառնման և բնակչության տեղափոխման պրոցես. սուբստրատը էր էությամբ էթնոգենետիկական պրոցես է, որ ունենում է և լեզվական հետևանքներ: Լեզվական սուբստրատը միշտ ենթադրում է էթնիկական սուբստրատ: Սուբստրատի երեսությը հանդես է գալիս այն դեպքում, եթե տեղի է ունենում տեղական բնակչության կողմից օտար լեզվի մասսայական յուրացում՝ որպես հետևանք նվաճման, էթնիկական կլանման, քաղաքական տիրապետության, կուտուրական գերակշռության և այլն: Սուբստրատը հարցը սովետական լեզվաբանության համար հատուկ նշանակություն ունի որպես լեզվի պատմության և ժողովրդի պատմության սերտ կապի դրսերումներից մեկը: Սուբստրատը տարրերվում փոխառությունից որպես ավելի խոր ներթափանցման պրոցես. սուբստրատը՝ ցեղակցության նման և ի հակադրություն փոխառության՝ էթնոգենետիկ պրոցես է ենթադրում. այն տողորում է լեզվի ողջ կառուցվածքը (այդ թվում և ձեւբանական տիպը, թեև ոչ ձեւբանական մասնիկները), մինչդեռ փոխառությունը ընդգրուկում է լոկ բառապաշարի որոշ շերտեր. ի տարրերություն փոխառության այն ենթադրում է երկարատև երկլեզվայնություն:

Լեզվաբանների գերակշռող մեծամասնությունը պաշտպանում է Աբանի տեսակետը:

Սովետական լեզվաբանների գերակշռող մեծամասնությունը պրոբլեմներից են գլոտոգոնիական և էթնոգլոտոգոնիական, մարդկային լեզվի և լեզվաբանականիքների, լեզվախմբերի ու առանձին լեզուների ծագ-

ման հարցերը: Այս հարցերի լուծման մեջ սովետական լեզվաբանները փորձում են սերտ կոնտակտ հաստատել փիլիսոփաների, պատմաբանների, հնագետների, մարդաբանների և ազգագրագետների հետ:

Լեզվի ծագման հարցը լուծելիս սովետական լեզվաբանները ենում են էնգելիստ ցուցումներից, լեզվի ծագումը կապում մարդու հասարակական աշխատանքային գործունեության հետ: Սովետական լեզվաբանները գտնում են, որ լեզուն ու մտածողությունը ծագել են միաժամանակ, և պայքարում են լեզուն մտածողության և մտածողությունը լեզվին նախորդել տալու փորձերի դեմ: Ի տարբերություն «լեզվի նոր ուսմունքի»՝ սովետական լեզվաբանությունը գարգացման արդի էտապում առաջնային է համարում հնչյունական լեզուն, մերժում է հնչյունական լեզվի ծագման հենց սկզբից դասակարգային բնույթը ունենալու հակագիտական տեսակետը: Քննադատության ենթարկելով լեզվի ծագման ինդիվիդուալիստական, իդեալիստական ու մեխանիստական ուսմունքները՝ սովետական լեզվաբանները ենում են լեզվի և մտածողության, լեզվի. և հասարակության կապի դիալեկտիկական բնույթից, օգտագործում ի. Պավլովի ուսմունքը լեզվի երկրորդ ազդանշանային սիստեմ հանդիսանալու մասին<sup>1</sup>:

Սովետական մարդաբան Վ. Վ. Բունակը<sup>2</sup> ելնելով լեզվի (խոսքի) և մտածողության սերտ կապի, առաջին բառերի՝ մտածողության հետ միաժամանակ ծագելու գաղափարից՝ փորձել է գծել լեզվի ծագման հիմունքների և գարգացման սկզբնական ստադիանների պատկերը: Մարդոր, ըստ Բունակի, անցնելով գործիքների մտադրված պատրաստմանը՝ հասնում է բնդհանրացման և վերլուծության գարգացման այն աստիճանին, որն արտահայտվում է բնդհանուր հասկացությունների ձևավորման բնորոշության մեջ. վերջիններիս ձեավորումն էլ տեղի է ունենում խոսողական և ձայնա-շարժողական գրգռումների հիման վրա: Առաջին-

<sup>1</sup> Հմմ. Н. А. Кондрашов и А. Г. Спиркин, Происхождение языка и мышления, „Вопросы языкоznания в свете трудов И. В. Сталина“, М., 1952, № 372-410. А. Г. Спиркин, Происхождение языка и его роль в формировании мышления, „Мышление и язык“, М., 1957, № 3-72. Է. Բ. Աղայան, լեզվի ծագման հարցը ստալինյան լեզվաբանական ուսմունքի լույսի տակ, ԵՊՀԱ, XXXIV, № 41-83.

<sup>2</sup> В. В. Бунак, Происхождение речи по данным антропологии, „Происхождение человека и древнее расселение человечества“, М., 1951, № 205-290.

բառերը ծագում են կապիկների փոխակերպված կինսական աղմուկներից՝ հնչյունական ազդանշանների այն հատուկ կատեգորիայից, որ տարրերվում է հուզական ճիշերից։ Պետք է տարրերել առաջնային և երկրորդային ժեստեր. առաջնային ժեստերը ծագել են լեզվի հետ միաժամանակ։ Սկզբնական խոսքը կազմված է եղել առանձին ասուլյթներից (քենիա), որոնք ունեցել են բովանդակության լրիվություն, միաժամանակ արտահայտել գործողության առարկան, նպատակը և միջոցը։ Մասնագիտացված մանր գործիքների պատրաստումը նշանավորում է լեզվի (խոսքի) զարգացման երկրորդ փուլը, երբ մարդոք ձեռք է բերում առանձին հասկացություններ և, հետեաբար, բառերը կապակցելու ունակություն։ Լեզվի (խոսքի) հնչյունական և իմաստային կողմերը զարգանում են միաժամանակ։ Առաջին փուլը համապատասխանում է ստորին պալեոլիթին, երկրորդը՝ վելին։

Լեզվախմբերի, լեզվաընտանիքների և առանձին լեզուների ծագման հարցերը լուծելիս սովետական լեզվաբանները պայքարում են ինչպես «լեզվի նոր ուսմունքի» ու նրա ուղղիղիվների, այնպես էլ երիտքերականական միակողմանիության դեմ, նշում լեզուների ցեղակցական կապերի ողջ բազմազանությունը։ Դրովում են նախալեզվի կամ հիմնալեզվի և նրա հետ կապված հիմնաժողովրդի պրոբլեմը, հնարավոր է համարվում լեզուների՝ մեկ աղյօնություն ծագելը։ Մերժվում է սովետական ազգագրագետ Տոլստովի «սկզբնական լեզվական անընդհատականության» տեսակետը, որը «լեզվի նոր ուսմունքի» հարցադրման մի տարատեսակն է։

Լեզվի և մտածողության, ձևի և բովանդակության, տրամաբանական, հոգեբանական և լեզվական կատեգորիաների, հասկացության և բառի (բառիմաստի), դատողության և նախադասության փոխհարաբերության հարցերը միշտ էլ գտնվել են սովետական լեզվաբանների ուշադրության կենտրոնում, արծարծվել ինչպես ընդհանուր լեզվաբանության դասագրերում ու ձեռնարկներում, այնպես էլ զանազան մենագրություններում ու հոդվածներում։ Լեզվի և մտածողության փոխհարաբերության հարցը լուծելիս մարքսիստ լեզվաբանները նախ՝ խնդիր են դնում տարրերակել այնպիսի կատեգորիաները, ինչպիսիք են մտածողությունը, գիտակցությունը, իդեոլոգիան և աշխարհայացքը, մի բան, որ չէ պատարվում Մաոի ու նրա հետեւորդների մոտ։ Երկրորդ՝ ելնում են լեզվի և մտածողության ինչպես նույնացման, այնպես էլ իրա-

րից կտրելու դրսեռքումների դեմ, ծագմամբ ու գոյությամբ դրանք պայմանավորում միմյանցով, նշում դրանց կապի դիալեկտիկա-կան բնույթը. երրորդ՝ խոսելով մարդու մտածողության զարգաց-ման մասին՝ նրանք ժխտում են նախամարդու կողմից աշխարհը սկզբնապես միայն ֆանտաստիկ ձևով արտացոլելու դրույթը, գտնում, որ իրականության ավելի ու ավելի առաջ գնացող ճանաշողության զարգացումը մարդու գոյության անհրաժեշտ պայմանն է:

Բարի և հասկացության, նախադասության և դատողության, լեզվի նշանային բնույթի հարցերն արծարծված են Սմիռնիցկու, Գալկինա-Ֆեղոռուկի, Զվեգինցկի, Ախմանովայի և ուրիշների աշխատություններում, թեև չի կարելի ասել, թե այդ հարցերը լուծ-ված են հավասար խորությամբ և հաջողությամբ<sup>1</sup>: Այս հարցերը լուծելիս լեզվաբաններն աշխատում են հենվել մատերիալիստական դիալեկտիկայի վրա՝ օգտագործելով լեզվաբանության և այլ գիտությունների նվաճումների արդյունքները:

Լեզվի պատմական և ստատիկ վերլուծության մեթոդների հետ կապված հարցերը, պատմա-համեմատական և ստրոկտուրալ վերլուծության մեթոդների նկատմամբ մարքսիստական լեզվաբանության ունենալիք վերաբերմունքի հարցերն արծարծված են Սմիռնիցկու, Սերեբրենիկովի, Ախմանովայի, Գուխմանի, Գոր-նունգի, Վ. Վ. Իվանովի և ուրիշների աշխատություններում:

Սովորական լեզվաբանները, ստատիկ ուսումնասիրության մեջ կարեոր տեղ հատկացնելով ձևույթային վերլուծությանը, այ-նուամենայնիվ, կարծում են, որ լեզվաբանական հետազոտության գլխավոր միավորը բառն է, որպես այս կամ այն լեզվով խոսողներէ կողմից իրավես գիտակցվող միավոր. բառը, ի տարրերություն ձևույթի, հանդես է գալիս որպես ինքնուրույն քերականական (ձեաբանական) միավոր, մինչդեռ ձևույթը այդպիսի ինքնուրույնություն չունի և կարող է որպես անկախ միավոր հանդես գալ միայն որպես բառ ձևաբորվելով: Ինարկե, բառի և ձևույթի փոխհարաբերության հարցը ղեռես վերջնական լուծում ստացած հարց չի կարելի համարել: Բառի այս մեկնակետային բնույթի ըմբռնումը արտահայտվել է Ա. Ի. Սմիռնիցկու հետեւյալ տողերում. «... բառը, — գրում է նա, — հանդես է գալիս որպես լեզվի անհրաժեշտ միավոր և' լեքսիկայի (բառային կազմի), և' քե-

● <sup>1</sup> Հմմա., օրինակ, Գալկինա-Ֆեղոռուկի . Суждение и предложение в речи языка, գրախոսական՝ զրված Ն. Ի. Կոնդակովի կողմից, ԲՓ, 1957, № 5.

բականության քերականական կառուցվածքի բնագավառում, և հետևաբար բառը պետք է համարվի ընդհանրապես հմտական լեզվական միավորը. լեզվի բոլոր մյուս միավորները (օրինակ՝ ձեղույթները, դարձվածաբանական միավորները, այլեալլ քերականական կառուցումները) այս կամ այն կերպ պայմանավորված են բառի առկայությամբ և, հետևաբար, ենթադրում են այնպիսի միավորի գոյությունը, ինչպիսին բառն է»<sup>1</sup>:

Սրանով սովետական դիալեկտիկա-մատերիալիստական լեզվաբանությունը հակադրվում է և ստրուկտորալիստական ձեսկան վերլուծությանը, որի մեջ զիսավոր միավոր է դարձել ձեռութը, և «լեզվի նոր ուսմունքին», որի մեջ փորձ էր արվում այդպիսի հիմնական միավոր դարձնել նախադասությունը:

Բառի ուսմունքը անմիջականորեն կամ միջնորդված կերպով առնշվում է մի շարք հարցերի հետ, որոնք անհրաժեշտաբար գրավում են սովետական լեզվաբանների ուշադրությունը՝ բառի իմաստային և հնչյունական, օբյեկտիվ և սուբյեկտիվ, լեզվական և խոսքային, լեքսիկական և քերականական կողմերի փոխհարաբերությունը, բառիմաստի պրոբլեմը, խոսքի մասերի ուսմունքը և այլն:

Ի տարբերություն ամերիկյան ստրուկտորալիստների ամենատարական կամ մեխանիստական ըմբռնման, սովետական լեզվաբանները բառիմաստր համարում են բառի անհրաժեշտ մասը: Սակայն նշելի է, որ բառիմաստի և հասկացության փոխհարաբերության հարցում հանդես են զալիս երկու հակադիր տեսակետներ. ոմանց կարծիքով բառիմաստր համընկնում է հասկացության հետ, մյուսների կարծիքով՝ ոչ:

Սովետական լեզվաբանները նոր մեկնաբանություն են տալիս շարույթի (սինտագմայի) և բառագուգորդման ուսմունքին, շարահյուսության մեջ առանձնացնում բառագուգորդումների, պարզ նախադասությունների և բարդ նախադասությունների ուսմունքը: Բառը համարելով լեզվական վերլուծության մեկնակետը՝ ո՞րոշ հնչույթաբաններ, այնուամենայնիվ, հնչույթաբանական վերլուծության մեջ ենում են ձեռութից:

Պատմա-համեմատական հետազոտության մեջ կարեոր տեղ տալով պատմա-համեմատական մեթոդին՝ մարքսիստական լեզվաբանությունը նախ՝ ելնում է ստատիկ և պատմական վերլու-

<sup>1</sup> А. И. Смирницкий, Лексическое и грамматическое в слове, „Вопросы грамматического строя”, М. 1955, № 11.

ծության ոչ թե հակադրությունից, այլ փոխադարձ կապից, երկրորդ՝ անհրաժեշտ է համարում պատմա-համեմատական մեթոդի կատարելագործումը, երրորդ՝ այդ մեթոդի տված արդյունքները գնահատում է դիալեկտիկական մատերիալիզմի լույսի տակ, փորձում սերտորեն շաղկապել լեզվաբանության տված արդյունքները պատմության, հնագիտության, ազգագրության և այլ դիսցիպլինների տվյալների հետ:

1954 թ. հուլիսին տեղի ունեցած դիմուսիան խոսքի մասերի հարցի շուրջը հանդես է բերում երկու հակադիր տեսակետ. Ն. Ս. Պոսպելովը և ելույթ ունեցողների մեծ մասը պաշտպանում են խոսքի մասերի՝ բառերի լեքսիկա-բերականական կարգեր լինելու գաղափարը. Ա. Բ. Շապիրոն խոսքի մասերը նույնպես դիտում է որպես բառերի լեքսիկա-բերականական խմբեր, բայց նրանց առանձնացման հիմքում դնում է ձևաբանական հատկանիշները, պաշտպանում Ֆ. Ֆ. Ֆորմունատովի մոտեցումը. Ընդհանրապես սովետական լեզվաբանության մեջ իշխում է այն կարծիքը, որ խոսքի մասերը բառա-բերականական (լեքսիկա-բերականական) կատեգորիաներ են, այն է՝ բառախմբեր, որոնք տարրերվում են և՝ բառիմաստային, և՝ բերականական իմաստով։ Այս տեսակետից անհրաժեշտ ենք համարում նշել, որ բերականական իմաստը բառային իմաստից կտրված մի բան չէ, այլ սերտորեն կապված է նրա հետ։

Այժմ անցնենք սովետական մի բանի ականավոր լեզվաբանների հայացքների բնութագրմանը։

Վ. Վ. Վինօգրադով. — Ակադ. Վ. Վ. Վինօգրադովը զբաղվում է գլխավորապես ոռուսաց լեզվի հարցերով։ Սակայն ոռուսաց լեզվին նվիրված իր աշխատություններում նա արծարծում է լեզվաբանական տեսության բազմաթիվ կարևոր հարցեր. քիչ շեն և նրա այն ուսումնասիրություններն ու հոդվածները, որոնց մեջ նա զբաղվում է մարքսիստական լեզվաբանության պրոբլեմներով։ Վ. Վ. Վինօգրադովը հատուկ ուշադրություն է դարձնում գրական լեզվի (հատկապես ոռուսաց գրական լեզվի) պրոբլեմներին և ոճի հարցերին։ Իր աշխատություններում նա փաստորեն ի մի է բերել, վերագնահատել և համարել ոռուս լեզվաբանական մտքի, հատկապես ոռուսական բերականագիտության կարևորագույն նվաճումները։ Վինօգրադովը կարևոր դեր է խաղացել «լեզվի նոր ուսմունքի» վուլգար սոցիոլոգիական դրույթների քննադատության ու լիկվիդացման գործում։

Ակադ. Վ. Վինոգրադովի՝ «Ժամանակակից ոռուսաց լեզվին նվիրված աշխատություններից նշելի են «Ժամանակակից ոռուսաց լեզուն», «Ռուսաց լեզուն», «Մեծ ոռուսաց լեզուն» և այլն<sup>1</sup>; Վինոգրադովը մասնակցել է և ոռուսաց լեզվի ակադեմիական քերականությունը գրելուն ու խմբագրելուն<sup>2</sup>:

Ռուսաց գրական լեզվի պատմությանը նվիրված աշխատություններից հիշատակելի են «XVII—XIX դդ. ոռուսաց գրական լեզվի պատմության ուրվագծերը», «Պուշկինի լեզուն», «Պուշկինի ոճը» և այլն<sup>3</sup>:

Ռուսական լեզվաբանության պատմությանը Վ. Վ. Վինոգրադովը անդրադարձել է ինչպես «Ժամանակակից ոռուսաց լեզվի» 1-ին մասում, այնպես էլ բազմաթիվ հոդվածներում՝ նվիրված Շախմատովի, Շերրայի, Պեշկովսկու, Յակուրինսկու և ուրիշների հայացքների բնութագրմանը. զգալի տեղ է տալիս Վինոգրադովը նաև առանձին հարցերի ուսումնասիրության պատմությանը:

Նշանակալից թիվ են կազմում լեզվաբանական տեսության առանձին հարցերին, հատկապես բառի հետ կապված հարցերին, բառակազմությանը, ոճի հարցերին, դարձվածաբանությանը նվիրված ուսումնասիրությունները<sup>4</sup>:

Վինոգրադովը հետեւղականորեն անց է կացնում գրական լեզվի՝ լեզվի բնդհանուր պատմությունից առանձնացնելու գաղափարը: Նշելով գրական լեզվի պատմության կապը լեզվի պատմության բոլոր կողմերի հետ՝ նա միաժամանակ բնդգծում է գրա-

<sup>1</sup> В. В. Виноградов, Современный русский язык, I II, 1938. Русский язык, 1947. Великий русский язык, М., 1945.

<sup>2</sup> Грамматика русского языка, М., I II, 1953—1954.

<sup>3</sup> В. В. Виноградов, Очерки истории русского литературного языка XVII-XIX вв., 1938. Язык Пушкина, 1935. Стиль Пушкина, М. 1941.

<sup>4</sup> В. В. Виноградов, Основные понятия русской фразеологии как лингвистической дисциплины, Труды юбилейной сессии ЛГУ, Л., 1946. Об основных типах фразеологических единиц в русском языке, сборник А. А. Шахматовъ, 1947. Понятие синтагмы в синтаксисе русского языка, Вопросы синтаксиса современного русского языка, 1950. Об основном словарном фонде и его словообразующей роли в истории языка, Вопросы языкоznания в свете трудов И. В. Сталина, 1952. Основные типы лексических значений слова, ВЯ, 1953, № 5. Основные вопросы синтаксиса предложения, Вопросы грамматического строя, 1955 և այլն.

կան լեզվի՝ որպես տվյալ լեզվի մշակված ձևի, ուսումնասիրության կարևորությունը և մատնանշում առանձին գրողների՝ այս հարցում կատարած դերը։ Այս առումով Վինոգրադովի հատուկ ուշադրություն է դարձնում ոճաբանության հարցերին՝ այդ հարցերի հաշվառումը կարեղ համարելով ոչ միայն գրական լեզվի պատմության, այլև քերականության ու բառապաշտիքի ուսումնասիրության համար։ Գրական լեզուն փոխկապակցված հարաբերակից ոճերի սիստեմ է, և նրա պատմությունը մեծ շափով նաև ոճական տարբեր ուղղությունների ձևավորումների, փոխազդեցությունների ու տեղաշարժերի պատմություն է։ գրական լեզվի պատմության մեջ էլ հատուկ ուշադրություն պետք է գրավին գեղարվեստական գրականության լեզվի (լեզվի, որպես գեղարվեստական գրականության հիմնական գործիքի) հարցերը։

Վինոգրադովի լեզվա-քերականական վերլուծության մեկնակետը բառն է. ժամանակակից ոռուաց լեզվի կառուցվածքի վերլուծությունը նա կատարում է բառի ուսմունքի հիման վրա, ընդորում պայքարում է բառի ինչպես նեղ ձեւաբանական (ձեւական), այնպես էլ սուբյեկտիվ հոգեբանական ըմբռնումների դեմ։ «Բառը որպես ձեերի և իմաստների սիստեմ,—գրում է Վինոգրադովը, — լեզվի քերականական կատեգորիաների միավորման և փոխազդեցության կիզակետն է»<sup>1</sup>։ Բառը դիտվում է հնչյունական և իմաստային կողմերի անխղելի կառուցվածքային միասնության, բառային և քերականական, օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի փոխկապակցության մեջ։ Այն սահմանվում է որպես «բառային (լեксический) և քերականական իմաստների ներքին, կառուցվածքային միասնություն»<sup>2</sup>։ սակայն սրանով բառի էությունը շի սպառվում։ բառը արտահայտում է նաև կոլեկտիվ կամ անհատական սուբյեկտի գնահատականը, այլ կերպ ասած՝ հանդես է գալիս նաև որպես արտահայտչականություն կրող։ Վինոգրադովը անհրաժեշտ է համարում տարբերել բառի իմաստը և գործածությունը. «Ի մաս ստները կայուն են և ընդհանուր բոլորի համար, որոնք տիրապետում են լեզվասիստեմին։ Գործածությունը բառի իմաստներից մեկի միայն հնարավոր կիրառությունն է, երբեմն շատ անհատական, երբեմն ավելի կամ պակաս տարածված»<sup>3</sup>։ Վինոգրադովը առանձնացնում է բառերի 4 իմաս-

<sup>1</sup> В. В. Виноградов, Русский язык, 1947, № 15.

<sup>2</sup> Նույն տեղը, № 18.

<sup>3</sup> Նույն տեղը, № 21.

տա-քերականական կատեգորիա՝<sup>1)</sup> բառ-անվանումներ կամ խոսքի մասեր, 2) սպասարկու բառեր կամ խոսքի մասնիկներ, .3) եղանակի բառեր և 4) միջարկություններ։ Այս խմբավորումը նա դնում է բառերի խոսքի մասային դասակարգման հիմքում՝ նշելով, որ այս դասակարգումը կատարելիս պետք է նկատի առնվեն բառի կառուցվածքի բոլոր կողմերը, որ քերականությունը միշտ կառուցվածքային է (конструктивный) և ենթակա չէ մեխանիկական բաժանումների, որ քերականական ձեւերն ու իմաստները սերտ փոխազդեցության մեջ են գտնվում բառային (лексический) իմաստների հետ։

Զգալի ազդեցություն է գործել սովետական լեզվաբանության մեջ կատարվող դարձվածաբանական ուսումնասիրությունների վրա դարձվածաբանական զուգորդումների այն դասակարգումը, որ տվել է Վինոգրադովը։ Այս դասակարգումը հիմնված է դարձվածաբանական զուգորդման կառուցվածքի անդամների կապի սերտության աստիճանի վրա։ Նա տարբերում է դարձվածաբանական սերտածումներ (фразеологические сращения) (իդиомներ), դարձվածաբանական միասնություններ (фразеологические единства) (ասացվածքներ, առածներ և այլն) և դարձվածաբանական զուգորդումներ (фразеологические сочетания) (բառերի ոչ ազատ զուգորդումները)։

Քերականության մեջ առանձնացնելով ձևաբանությունը և շարահյուսությունը՝ Վինոգրադովը առաջինին հատկացնում է բառաձևերի և բառակազմության ուսմունքը, երկրորդին՝ բառակապակցության և նախադասության ուսմունքը։ Բառակապակցության ուսմունքի՝ որպես շարահյուսության առանձին բաժնի տարբերումը Վինոգրադովի շարահյուսական ուսմունքի առանձնահատուկ կողմն է։ Բառակապակցությունը Վինոգրադովը անհրաժեշտ է համարում տարբերել շարույթից (սինտագմայից՝ վերջին տերմինին սովետական լեզվաբանության մեջ տրվող իմաստով և ոչ թե սոսյուրյան առումով): «Եարույթը,— գրում է նա,— խոսքի իմաստային-շարահյուսական միավոր է, որ արտացոլում է «իրականության մի կտորը»՝ լի տվյալ հաղորդման ինտոնացիայով և կենդանի արտահայտչականությամբ։ Նա գտնվում է սերտ իմաս-

<sup>1)</sup> В. В. Виноградов, Русский язык, 1947, № 21.

·стажи́н կապի մեջ նույն այդ ասույթի (высказывание), նույն այդ խոսքի մյուս բոլոր այդպիսի իմաստային-շարահյուսական միավորների հետո<sup>1</sup>: «Շարույթը և բառակապակցությունը տարրեր շարահյուսական պլանների հասկացություններ են: Բառակապակցության ուսմունքի անհրաժեշտ լրացումն է: Այն սերտորեն կապված է ուսաց լեզվի կազմում դարձվածքանական միավորների բառահմաստային ուսումնասիրության հետ: Բառակապակցության ուսմունքն անհրաժեշտ է ուսաց լեզվում շարույթների տարրեր տեսակների կառուցվածքային (конструктивныи) յուրահատկությունները հասկանալու համար»<sup>2</sup>: Բառակապակցությունը, բառ վիճոգրադովի, կարող է դիտվել խոսքից դուրս՝ որպես երկու կամ ավելի բառերից բազկացած կապակցություն, որ նախադասության համար ծառայում է որպես շինանյութ. «Բառակապակցությունները միայն նախադասության կազմում և նախադասության միջոցով են մտնում լեզվի հաղորդակցական միջոցների սիստեմի մեջ: Բայց նախադասությունից դուրս դիտված, որպես նրա շինանյութ, բառակապակցությունները նույնպես, ինչպիս բառերը, պատկանում են լեզվի անվանական միջոցներին, առարկաների, երևույթների, պրոցեսների և այլնի նշանակման միջոցներին»<sup>3</sup>: Խոսքի մեջ, նախադասության կազմի մեջ բառակապակցությունը կարող է հանդես գալ ոչ միայն որպես մեկ շարույթ, այլև բաժանվել երկու շարույթի կամ մտնել մի այլ շարույթի կազմի մեջ՝ նրա հետ ավելի բարդ շարույթ կազմելով. այսպես, օրինակ, пленик с ногами в путях броширует синтагму в синтаксисе русского языка, «Кибернетика шароуида яиин գործածության մեջ» կարող է բաժանվել երկու մասի՝ «Печальные, с осунувшимися лицами, (с ногами в путях), гонимые «незнаемою» страною, (мучимые жаждой и голодом) пленники со слезами говорили друг другу».

**Ա. Ի. Սմիռնիցկի.— Ա. Ի. Սմիռնիցկին զբաղվել է ինչպես**

<sup>1</sup> Акад. В. В. Виноградов, Понятие синтагмы в синтаксисе русского языка, «Вопросы синтаксиса современного русского языка», М., 1950, էջ 253:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 254:

<sup>3</sup> Грамматика русского языка, II, 1, М., 1954, էջ 10.

լեզվաբանության ընդհանուր տեսական հարցերով<sup>1</sup>, այնպես էլ անգլերենի պատմության ու տեսության խնդիրներով<sup>2</sup>:

Իր «լեզվի գոյության օրյեկտիվությունը» ուսումնասիրության մեջ ճիշտ համարելով լեզվի և խոսքի սոսյուրյան տարրերակում՝ Սմիռնիցկին, սակայն, քննադատում է լեզվի բնույթի և լեզվի ու խոսքի փոխհարաբերության սոսյուրյան ըմբռնումը. ըստ Սոսյուրի՝ լեզուն հոգեկան երեսով է, գոյություն ունի խոսողների հոգեկանի (ուսիսկա) մեջ, որովհետև լեզվական նշանի երկու կողմն էլ՝ և՝ իմաստը, և՝ ակուստիկական պատկերը, հոգեկան են. սրանով իսկ Սոսյուրը հանդես է գալիս որպես իդեալիստ. Ելմալկի մոտ լեզվական նշանը զրկվում է նաև հոգեկան հիմքից, վերածվում «մաքուր» հարաբերությունների կամ ձևերի միացության. Սմիռնիցկին, աշխատելով հաղթահարել և՝ Սոսյուրի, և՝ ստրուկտուրալիստների իդեալիզմը, հարցը լուծում է այն ձևով, որ լեզուն գոյություն ունի խոսքի մեջ որպես օրյեկտիվորեն տրված հասարակական երեսով, որը, սակայն, կարող է առանձնացվել խոսքից հատուկ լեզվաբանական քննության համար. լեզուն այլ կերպ չի կարելի ուսումնասիրել, քան խոսքային դրսեորումների մեջ: Բնութագրելով Սոսյուրի և իր մեկնաբանությունների տարրերությունը՝ Սմիռնիցկին գրում է. «Տարրերություն կար արդեն այն բանի մեջ, թե ի՞նչն է առաջ քաշվում որպես կարևորագույն հարաբերակցություն. դր-Սոսյուրի մոտ՝ langue-parole, մինչդեռ այստեղ՝ խոսք-լեզու, որ ավելի շուտ համապատասխանում է դր-սոսյուրյան langue-langue-ին: Հետեարար դր-Սոսյուրի մոտ langue-ը հանդես է գալիս գերազանցապես որպես language-ի և parole-ի միացում (թեև նա սկսում է այդ միացության քննությունից որպես ամբողջի, l'ensemble du langage). իսկ այստեղ այն, ինչ կա խոսքի մեջ (այսինքն՝ մոտավորապես դր-սոսյուրյան language-ի իմաստով), բացի լեզվից, որպես այդպիսինից, քննությունը է հենց որպես «մնացորդ», այսինքն՝ որպես մի բան,

<sup>1</sup> А. И. Смирницкий. К вопросу о сравнительно-историческом методе в языкоznании, ВЯ, 1952, № 4. Об особенностях обозначения направления движения в отдельных языках, ИЯШ, 1953. Объективность существования языка, М., 1954. Сравнительно-исторический метод и определение языкового родства, М., 1955. Значение слова, ВЯ, 1955, № 2. Лексическое и грамматическое в слове, „Вопросы грамматического строя“, 1955.

<sup>2</sup> А. И. Смирницкий, Древнеанглийский язык. М., 1955. Лексикология английского языка, М., 1956. Синтаксис английского языка, М., 1957. Морфология английского языка, М., 1959.

որ լեզվաբանական տեսակետից շի բնութագրվում ինչ-որ դրական հատկանիշներով, այլ առանձնացվում է որպես իսկական իմաստով լեզվին չվերաբերող բան»<sup>1</sup>: Սոսյուրյան լեզուն ավելի շուտ լեզվի իմացումն է, քան բուն լեզուն: Լեզվի ամեն մի միավորի գոյությունը նրա կանոնավոր վերաբառությունն է հասարակական մասշտաբով: Լեզվի և խոսքի մեջ առկա է փոխադարձ կապ, ընդ որում շարժում է կատարվում խոսքից լեզու. «Խոսքի առանձին հատկությունները կարող են վերածվել լեզվի գծերի և լեզվի առանձին արտադրանքները (քրուզացիա)՝ խոսքի մեջ կազմող նոր բառերից մինչև ամբողջ նախադասությունները՝ կարող են դառնալ խոսքի միավորներ»<sup>2</sup>:

Ինչպես տեսանք, Սմիռնիցկին ևս լեզվական մեկնակետային միավոր է համարում բառը: Այս կապակցությամբ նրան զբաղեցնում են բառիմաստի, բառի բառային և քերականական կողմերի փոխհարաբերության և այլ հարցեր: Եթե Սոսյուրի համար լեզվական նշանը, լինելով հոգեկան երևույթ, ուներ երկու կողմ՝ հասկացություն և ակուստիկական պատկեր, ապա Սմիռնիցկին անհրաժեշտ է համարում այնպիսի մի հարցի լուծումը, ինչպիսին բառի հնչման (ձայնացույց) և բառի հնչապատկերի (այդ հնչման՝ գիտակցության մեջ արտացոլվելու) փոխհարաբերության հարցը. բառիմաստր կապված է և՛ առաջինի, և՛ երկրորդի հետ, բայց բառիմաստի կապը հնչման հետ («արտաքին խոսքի» ժամանակ) առաջնային է, հնչապատկերի հետ («ներքին խոսքի ժամանակ»): Երկրորդային. սրանով իսկ Սմիռնիցկին բառիմաստի և բառի արտաքին կողմի փոխհարաբերության հարցը փորձում է լուծել մատերիալիստական դիրքերից: Սրա հետ կապված՝ Սմիռնիցկին կարեռ է համարում զնել այն հարցը, թե բառիմաստը արդյոք բառի կազմի մեջ է մտնում, թե նրա նկատմամբ ինչ-որ արտաքին բան է. այս հարցը Սմիռնիցկին փորձում է լուծել՝ հենցելով նախորդ հարցադրման վրա. «... բառիմաստը ունեալ հնչման և գիտակցության մեջ սրա արտացոլման հետ ունեցած կապով կարծես թե երկրորդ կապ է ստեղծում մեկի ու մյուսի միջև և բառի հնչապատկերին տալիս, այսպես ասած, ավելի մեծ ֆունկցիոնալ կշիռ, քան այն, որը սովորաբար հատուկ է գիտակցության մեջ որևէ երեսովի արտացոլմանը: Սրա շնորհիվ

<sup>1</sup> А. И. Смирницкий, Объективность существования языка., 1954, № 13, 14:

<sup>2</sup> Նույն տեղը, № 30:

բառիմաստը ոչ թե պարզապես «կապված» է նրա հնշման (և հընշապատկերի) հետ, այլ կարծես «ընդերված» հենց բառի կառուցվածքի մեջ<sup>1</sup>: Այս բոլորի հետ կապված՝ Սմիռնիցին արծարծում է բառի արտաքին և ներքին կողմերի (հնշման և իմաստի) կապի հարցը. այդ կապը համարելով պայմանական, կամայական, հնշման և իմաստի բնույթով շրոշվող՝ նա միաժամանակ նշում է, որ «այդ կապի պայմանականությունը, իհարկե, պայմանականություն է իրենց իսկ երեսովինների բնույթի տեսակետից, նրանց ֆիզիոլոգիական և տրամաբանական-հոգեբանական կողմից: Հասարակական-պատմական կողմից լեզվի գոյության ամեն մի տվյալ մոմենտում այդ կապը պայմանավորված է լեզվի նախորդ պատմությամբ»<sup>2</sup>: Պատմականությունը, շպատճառաբանվածությունը, ըստ Սմիռնիցիու, վերաբերում է անվերլուծելի միավորներին՝ ձևույթներին, իսկ մյուս դեպքերում հանդես է գալիս պատճառաբանվածությունը. իհարկե, և՛ պայմանականությունը, և՛ պատճառաբանվածությունը հարաբերական բնույթ ունեն: Նկատի առնելով այս բոլորը՝ Սմիռնիցին բառիմաստը սահմանում է որպես «գիտակցության մեջ առարկայի, երեսովի կամ հարաբերության արտացոլում [ կամ իր բնույթով անալոգիական հոգեկան գոյացում՝ կազմված (կոնստրույրովանիան) իրականության առանձին տարրերի արտացոլումներից ], որ մտնում է բառի կառուցվածքի մեջ որպես նրա այսպես կոչված ներքին կողմը, որի նկատմամբ բառի հնշումը հանդես է գալիս որպես նյութական թաղանթ՝ անհրաժեշտ ոչ միայն իմաստի արտահայտման և այն ուրիշներին հաղորդելու, այլև հենց նրա առաջացման, ձևավորման, գոյության և զարգացման համար»<sup>3</sup>: Այս առումով բառիմաստի հասկացությունը Սմիռնիցին բնդիայնում է՝ դնելով այստեղ և այն, ինչ արտահայտվում է միշարկություններով:

Բառը, լինելով լեզվի հիմնական միավոր և՛ բառապաշարի, և՛ քերականական կառուցվածքի տեսակետից, ըստ Սմիռնիցիու, հանդես է գալիս որպես բառային և քերականական կողմերի միասնություն: Բառային կողմով բառը Սմիռնիցին համեմատում է թվաբանական մեծության հետ (1, 2, 3 և այլն), քերականական կողմով՝ հանրահաշվական մեծության հետ (ա

<sup>1</sup> А. И. Смирницкий, Значение слова, ВЯ, 1955, № 2, էջ 86–87.

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 87:

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 89:

կամ և այլն), որը կոնկրետ թիվ շինելով հանդերձ, այնուամենայնիվ, թիվ է ներկայացնում: Բառի բառային և քերականական կողմերի հարաբերության բնույթից բխում է բառագիտության և քերականության փոխհարաբերության բնույթը. Եթե քերականությունը,— գրում է Սմիռնիցկին,— բերում է կոնկրետ բառերը որպես նյութ՝ կամ օրինակներ, ապա բառագիտությունը պետք է բերի տվյալ բառերի հետ կապված քերականական փաստերը այն չափով, որ չափով այդ փաստերը բնութագրում են այդ բառերը որպես այդպիսիք կամ որպես բառերի այս կամ այն խմբի, կարգի կամ տիպի մեջ մտնողներ»<sup>1</sup>:

Սմիռնիցկին տարբերում է շարահյուսական կապակցության Յ տիպ՝ որոշային (առիբուտիվա ս্বազ), խնդրային (կոմպլետիվա ս্বազ) և ստորոգելիական (պредикативա ս্বազ): Սրանցից առաջինը միշտ ներկայանում է բառակապակցության մեջ, երրորդը՝ միշտ նախադասության մեջ, երկրորդը՝ յուրատեսակ միշտին դիրք է գրավում կապակցության երկու տիպերի միջև. սրա դեպքում կապակցության կազմիներն ավելի ազատ կապի մեջ են, քան մյուսների դեպքում. այս կապակցությունը գործում է ստորոգելիի հետ պրոցեսա-առարկայական հարաբերությամբ կապվող երկրորդական անդամ ներմուծելու դեպքում:

Իր «Լեզվաբանության մեջ պատմա-համեմատական մեթոդի հարցի շուրջը» և «Պատմա-համեմատական մեթոդը և լեզվական ցեղակցության որոշումը» ուսումնասիրությունների մեջ Սմիռնիցկին քննության է առնում լեզվի պատմական հետազոտության կարևորագույն հարցերը. ցեղակցից լեզուների՝ նույն ծագումն ունեցող տարրերի համար Սմիռնիցկին գործածության մեջ է մտցրնում «գենետիկական նույնության» գաղափարը: Պատմա-համեմատական մեթոդը Սմիռնիցկին հասկանում է նեղ առումով, նույնացնելով այն վերականգնման եղանակի հետ: «Պատմա-համեմատական մեթոդը լեզվաբանության մեջ այդ տերմինի մասնահատուկ իմաստով շամրագրված նախկին լեզվական փաստերի վերականգնման (ուկոնստրուկցիայի) եղանակն է՝ այն երկու կամ մի քանի կոնկրետ լեզուների նյութապես իրար համապատասխանող ավելի ուշ փաստերի պլանաշափ համեմատության ճանապարհով, որոնք հայտնի են գրավոր հուշարձաններով կամ ան-

<sup>1</sup> А. И. Смирницкий, Лексическое и грамматическое в слове, „Вопросы грамматического строя“, 1955, № 53.

միջական կենդանի գործածությամբ բանավոր խոսքի մեջ<sup>1</sup>: Այս կապակցությամբ Սմիռնիցին պատմա-համեմատական մեթոդից տարրերում է այսպես կոչված «Հնչաձևույթաբանական վերլուծության մեթոդը» (метод фономорфологического анализа), որը փաստորեն նույնանում է ներքին վերականգնման մեթոդի հետ<sup>2</sup>: Սմիռնիցին մատնանշում է և հնչյունական ու ձևաբանական պրոցեսների փոխարաբերության ողջ բարդությունը՝ տալով այս դրույթի համար օրինակներ գերմանական լեզուներից<sup>3</sup>:

Ա. Զիբորավա. — Վրացի լեզվաբան Ա. Զիբորավան զբաղվում է լեզվաբանական ընդհանուր տեսական հարցերով<sup>4</sup> և կովկասյան լեզուների ցեղակցական փոխարաբերության պրոբլեմով: Զիբորավան այն լեզվաբաններից մեկն է, որ գրեթե իր ողջ գործունեության ընթացքում պայքարել է ն. Յա. Մառի վուզար սոցիոլոգիական դրույթների գեմ՝ գուգորդելով այդ պայքարը արտասահմանյան իդեալիստական լեզվաբանական ուղղությունների քննադատության հետ: Ինչպես նշել ենք, «Պրավդայի» 1950 թ. դիսկուսիան բացվեց հենց նրա հոդվածով:

Ըստ Զիբորավայի՝ լեզուն այնպիսի նշանների սեստեմ է, որոնք նյութով ֆիզիկական են (հնչյունը), նշանակմամբ (значимость) և օգտագործմամբ՝ հասարակական (հաղորդակցման միջոց հանդիսանալը): Առարկայի և բառ-անվանման կապը պայմանավորված է ոչ թե առարկայի բնույթով, այլ հասարակական կոլեկտիվի տրադիցիայով: Լեզուն սիստեմային երևույթ է, ընդորում այդ սիստեմայնությունը երևան է գալիս նաև լեզվի առանձին կողմերում՝ ինչպես նյութական, այնպես էլ կառուցվածքային, այսպես, Զիբորավան խոսում է հնչյունական սիստեմի, լեզվական սիստեմի մասին և այլն: Լեզվի սիստեմային բնույթն է հենց, որ որոշում է լեզվի ներքին ամբողջականությունը:

<sup>1</sup> А. И. Смирницкий, Сравнительно-исторический метод и определение языкового родства, 1955, № 11.

<sup>2</sup> Հմմտ. Вопросы методики сравнительно-исторического изучения индоевропейских языков, 1955, № 33.

А. И. Смирницкий, Редукция гласных и история грамматической системы имени в германских языках, ИАН ОЛЯ, 1951, X, 1.

Ա. Զիբորավա, Լեզվաբանության ներածություն (վրացերեն), Թրիլիսի, 1952. Բնդիանուր լեզվաբանություն (վրացերեն), Թրիլիսի, 1947.

Ա. Чикобава, Введение в языкознание, I, М., 1952. К вопросу об историзме в языкознании. Против вульгаризации и извращения марксизма в языкознании. II, М., 1952. Проблема языка как предмета языкоznания, М., 1959 և аյլն:

Զիքորավան տարբերում է լեզվի երկու ֆունկցիա՝ հաղորդակցական և արտահայտչական. վերջին անվան տակ նա հասկանում է լեզվի ֆունկցիան որպես մտածողության միջոցի: Ենելով լեզվի հասարակական բնույթի մարքսիստական դրույթից՝ Զիքորավան այս ֆունկցիաներից առաջնային է համարում հաղորդակցականը, որպես լեզվի էությունը որոշող ֆունկցիայի: Այստեսակետից նա քննադատության է ենթարկում ինչպես Ֆուլերի ինդիվիդուալիստական կոնցեպցիան, որի մեջ առաջնությունը տրվում է արտահայտչական ֆունկցիային, այնպես էլ Բյուլերի ուսմունքը լեզվի Յ ֆունկցիաների մասին՝ նշելով, որ այսպես կոշված շարադրման ֆունկցիան (Darstellungsfunction) ներառվում է արտահայտչական ֆունկցիայի մեջ<sup>1</sup>: Նշելի է, սակայն, որ Զիքորավան լեզվի երկու ֆունկցիաների փոխհարարերության հարցը անհրաժեշտ չափով չի պարզաբանում, որով ստացվում է դրանք խզելու տպավորություն. միաժամանակ նա կարծես հակում ունի մերժելու լեզվի և խոսքի տարբերման անհրաժեշտությունը, թեև հենվում է այն ճիշտ դրույթի վրա, որ խոսքի մեջ ոչ բոլորն է անհատական, և որ լեզուն երևան է գալիս անհատների խոսքային գործունեության մեջ:

Լեզվի մարքսիստական տեսության կարևոր կողմերից մեկը Զիքորավան համարում է հետեղողական պատմականության սկրդրությի անցկացումը: Լեզվի ժամանակակից ստատիկ ուսումնասիրությունը (նկարագրական լեզվաբանությունը) ոչ միայն չի հակասում այս սկզբունքին, այլ ներկայացնում է նրա անհրաժեշտութացումը. այս դեպքում բնտրվում է լեզվի զարգացման մի որոշակի մոմենտ և դրանով իսկ հենակետ տալիս պատմական ուսումնասիրության համար<sup>2</sup>: Սակայն, Զիքորավայի կարծիքով, չնայած լեզվի պատմական զարգացման զաղափարի՝ գիտական լեզվաբանության կարևոր սկզբունքը լինելուն, դեռևս չի մշակված: Լեզվի պատմական զարգացման տեսությունը:

Լեզվի զարգացումը, ըստ Զիքորավայի, պայմանավորված է հասարակության զարգացմամբ. լեզվի զարգացման բնդհանուր տեմպը կախված է հասարակության զարգացման ահմագից: Սա-

<sup>1</sup> А. Чикобава, Учение И. В. Сталина о языке как общественном явлении, „Вопросы языкоznания в свете трудов И. В. Сталина“, 1952, № 94 96.

<sup>2</sup> А. Чикобава, К вопросу об историзме в языкоznании. Против вульгаризации. II, 1952, № 43.

Հայն լեզվի զարգացումն ավտոմատ կերպով շի արտացոլում հասարակության զարգացման էտապները. լեզուն ունի իր զարգացման ներքին օրենքները, որոնք վերջին հաշվով պայմանավորված են հասարակության զարգացմամբ: Լեզվի զարգացման ներքին օրենքները հակառակում են «արտաքին օրենքներին», որոնք առաջանում են այլ լեզուների ազդեցությամբ: Լեզվի զարգացման օրենքները լինում են ընդհանուր՝ բոլոր լեզուներին հատուկ և մասնակի՝ միայն տվյալ լեզվին կամ տվյալ լեզվախմբին հատուկ. որպես լեզվի զարգացման գիխավոր ընդհանուր օրենք Զիքորավան նշում է բառապաշարի և քերականական կառուցվածքի անհավասարաշափ զարգացման օրենքը: Այս անհավասարաշափ զարգացման հետ են կապված լեզվի սիստեմի հակասությունները, որոնք կազմում են լեզվի զարգացման էությունը: Լեզվի զարգացումն ընթանում է տարրերակման և միասնականացման պրոցեսներով, ընդ որում սրանց տեսակարար կշիռը տարրեր է պատմական էպոխաներում: Լեզուների խաչավորումը միասնականացման պրոցեսի մասնակի դեպքն է:

## II. ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱԾՈՒՆԵՐ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներածական տեղեկություններ.— 1950 թ. լեզվաբանական դիսկուսիայից հետո լույս են ընծայվում բազմաթիվ ժողովածուներ, հոդվածներ, մենագրություններ՝ նվիրված մասամբ սովետական լեզվաբանության մի շարք կարևորագույն հարցերի և դրույթների շարադրմանը, պարզաբանմանն ու մասսայականացմանը, մասամբ էլ. «լեզվի նոր ուսմունքի» քննադատությանը: Աստիճանաբար հանդես են գալիս նաև ընդհանուր լեզվաբանության և լեզվաբանության ներածության ամփոփիչ աշխատություններ ու դասագրքեր ինչպես ուսուերեն, այնպես էլ այլ լեզուներով, ընդ որում դրանց մի մասը ներկայացնում է նախկին աշխատությունների վերամշակումը: Այս կարգի աշխատություններից են Ա. Ս. Զիքորավայի, Լ. Ա. Բուլախովսկու, Ռ. Ա. Բուդաղովի, Մ. Ն. Պետերսոնի, Ա. Ա. Ռեֆորմատրոսկու, է. Բ. Աղայանի և այլոց դասագրքերն ու ձեռնարկները<sup>1</sup>:

<sup>1</sup> А. С. Чикобава, Введение в языкознание, ч. I, М., 1952.  
Л. А. Булаховский, Введение в языкознание, ч. II, М., 1953.  
Л. А. Булаховский, Нарисы з загального мовознавства, Київ, 1955.

**Թարգմանվում և լույս է ընծայվում Շ. Բալիի «Ընդհանուր լեզվաբանություն և ֆրանսիական լեզվաբանություն» գիրքը:**

Կիրառական լեզվաբանություն. մեքենայական թարգմանության բացառության մեջ մոտական լեզվական թարգմանության փորձեր են արգում մեզ մոտ: Այդ կապակցությամբ աշխատանք է տարգում թարգմանվող լեզուների կողավորման սկզբունքները որոշելու ուղղությամբ: Մեքենայական թարգմանության վերաբերյալ պարբերական նյութեր են տպվում «Եօրոքու յազկոնան» հանդեսում, 1957 թ. սկսած՝ լույս է տեսնում «Եօրոքու յազկոնան» առաջնորդությամբ: 1958 թ. սկսած՝ լույս է տեսնում «Եօրոքու յազկոնան» առաջնորդությամբ: Ակուստիկայի հանձնաժողովի Խոսքի ուսումնասիրության սեկցիային կից ստեղծվում է կիրառական լեզվաբանության կոմիտե, որի առաջին խոկ նիստում որոշվում է այդ բնագավառի պրոբլեմների շրջանակը՝ 1) մաթեմատիկական մեթոդները կիրառական լեզվաբանության մեջ, 2) լեզվաբանական վիճակագրություն, 3) մեքենայական թարգմանության ալգորիթմների մշակումը, 4) փորձառական հնչյունաբանությունը, 5) ֆիզիոլոգիական և հոգեբանական մեթոդները կիրառական լեզվաբանության մեջ, 6) տառադարձությունը, գրադարձությունը և փորձառական ուղղագրությունը, 7) արհեստական լեզուներն ու կոդերը<sup>1</sup>:

Հնչյունաբանություն և հնչույթաբանություն.— Այս ենթաշրջանում հետագա քայլեր է անում փորձառական հնչյունաբանությունը: Փորձառական ուսումնասիրության շրջանակի մեջ են առնընթառ ՍՍՌՄ բազմաթիվ լեզուներ: Օտար լեզուների ուսուցումը, այլև ուսուաց լեզվի ուսուցումը ազգային դպրոցներում պահանջ են առաջարկում մի կողմից՝ անգլերենի, գերմաներենի, ֆրանսերենի հնչյունական առանձնահատկությունների բացահայտման, մյուս կողմից՝ ուսուաց լեզվի և ՍՍՌՄ մյուս ազգային լեզուների հնչյունական զուգագրման: Զգալի աշխատանք է տարգում փորձառական հնչյունաբանության լաբորատորիաներում: Մոսկվայի Օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտին կից Փորձառական հնչյունաբանության և խոսքի հոգեբանության լաբո-

Р. А. Булагов, Очерки по языкоизнанию, М., 1953. Введение в науку о языке, М., 1958. М. Н. Петерсон, Введение в языкоизнание, М., 1952 (բազմացնող ապարատով). А. А. Реформатский. Введение в языкоизнание, М., 1955. Լ. Բ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1952 (սուս. թարգմ. 1960):

<sup>1</sup> ВЯ, 1958, № 3, էջ 136–137:

րատորիան, որը մինչև 1950 թ. հրատարակում է օտար լեզուների ուսուցման հարցերին նվիրված ընդամենը 2 ժողովածու, 1950 թ. լույս է ընծայում մի քանի ժողովածու՝ ավելի լայն բովանդակությամբ։ Գրվում են բազմաթիվ դիսերտացիաներ՝ նվիրված օտար լեզուների և ՍՍՌՄ լեզուների հնչունական առանձնատկությունների փորձառական ուսումնասիրությանը<sup>1</sup>։ Այս բնագավառի գործերից հատկապես հիշատակելի է Վ. Ա. Արտյոմովի «Փորձառական հնչունաբանությունը»։

Հանդես են գալիս ընդհանուր հնչունաբանության հարցերին նվիրված աշխատություններ՝ Ախվլեդիանիի աշխատությունը վրացերեն և Լ. Ռ. Զինդերի «Ընդհանուր հնչունաբանություն» դոկտորական դիսերտացիան։

Հնչույթաբանության (ֆոնոլոգիայի) բնագավառում երևան են գալիս նոր աշխատանքներ։ Հնչույթի և հնչույթաբանության ըմբռնման մեջ շարունակվում են եղած տարածայնությունները Ելերբայի հետեւրդների և Մոսկվայի հնչույթաբանական դպրոցի ներկայացուցիչների միջև։ Ֆոնոլոգիական հարցերի մեկնաբանության նայահեղ գիծ է նկատվում Ս. Կ. Շահումյանի մոտ, որը դեռևս 1952 թ. ընդունելով հնչույթների տարրերի հատկանիշների ակուստիկական բնութագրման անհրաժեշտությունը<sup>2</sup>, հետագայում հանդես է գալիս հնչույթի ուսմունքը և ֆոնոլոգիան. իրարից լիովին տարրերակելու պահանջով, ֆոնոլոգիական հարցերի ուսումնասիրության մեջ հիմք է ընդունում Ելմակի լեզվաբանական կոնցեպցիան, հնչունները և իմաստները ինքնին վերցրած համարում լեզվի նկատմամբ արտաքին մի բան<sup>3</sup>։

## 2. ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱԽՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ներածական դիտողություններ.— «Լեզվի նոր ուսմունքի» վուզար սոցիոլոգիական դրույթների հաղթահարումից հետո պատմա-համեմատական մեթոդը վերստին գրավում է իր արժանի

<sup>1</sup> Հմմտ. սրանց ցանկը Վ. Ա. Артемов-ի .Экспериментальная фонетика\*. գրքում, Մ., 1956, էջ 221–223.

<sup>2</sup> С. К. Шаумян, Проблемы фонемы, ИАН ОЛЯ, 4, էջ 330.

<sup>3</sup> С. К. Шаумян, О сущности структурализма, ВЯ, 1956, № 5. S. K. Schaumyan, Der Gegenstand der Phonologie, ZPhAS, X, 3, 1957; Շահումյանի հայացքների բնադատությունը տե՛ս՝ Վ. Ի. Григорьев-ի „Несколько замечаний о структурализме и семантике“ հոդվածում, ВЯ, 1958, № 4. Աչելի է, սակայն, որ Գրիգորեց գանց է առել Շահումյանի գերմաներեն հոդվածը։

տեղի լեզվաբանական հետազոտության մեջ։ Երեան ևն գալիս հնդկրոպական և ոչ-հնդկրոպական լեզուների պատմա-համեմատական ուսումնասիրությանը նվիրված բազմաթիվ հողվածներ, մենագրություններ և դիսերտացիաներ։ Միաժամանակ է՛լ ավելի լայն թափ է ստանում ՍՍՌՄ-ում և նրա սահմաններից դուրս գտնվող լեզուների ստատիկ ուսումնասիրությունը։

Սլավոնական լեզուներ։— Սլավոնական լեզուների համեմատական ուսումնասիրության հարցերը այս ենթաշրջանում ուժեղացված քննության առարկա են։ Այս հանգամանքը բացատրվում է մի կողմից՝ պատմա-համեմատական մեթոդի նկատմամբ «լեզվի նոր ուսմունքի» տիրապետության շրջանում գոյություն ունեցող ժխտողական վերաբերմունքի հաղթահարմամբ, մյուս կողմից՝ Սովետական Միությունից դուրս գտնվող սլավոնական երկրներում ժողովրդա-դեմոկրատական կարգերի հաստատման հետ կապված՝ այս բնագավառի աշխատանքի կորողինացման հնարավորությունների աճմամբ։ Հատուկ դեր խաղաց 1958 թ. Սոսկվացում տեղի ունեցած սլավոնագետների միջազգային համագումարը, որտեղ ի մի բերվեցին սլավոնական լեզուների ուսումնասիրության արդյունքները և նշվեցին սլավոնագիտության առաջատար պրոբլեմները։

Սլավոնական լեզուներին և նրանց համեմատական քերականության հարցերին բազմաթիվ ուսումնասիրություններ են նվիրվում (Լ. Ա. Բուլախովսկի, Ս. Բ. Բեռնշտեյն, Ա. Ն. Կոնդրաշով, Ա. Գ. Շիրոկովա և ուրիշներ), թարգմանվում են Լ. Դ. Անդրեյչինի, Տ. Լեռ-Սպլավինսկու, Ֆ. Տրավնիչեկի աշխատությունները՝ նվիրված բուլղարերնին, լեհերենին, չեխերենին։ Լույս են տեսնում սլավոնական լեզուների ուսումնասիրության հարցերին նվիրված ժողովածուներ, թարգմանվում է Ա. Մեյեի գիրքը՝ նվիրված սլավոնական լեզուների համեմատական քերականությանը։ Լույս են տեսնում մի շարք ինքնուրույն և թարգմանական գործեր՝ հին սլավոներենին նվիրված։

Ուսացած լեզվի ուսումնասիրության բնագավառում նույնպես աննախընթաց աշխատություն է տիրուա։ Արագ լիկվիդացվում են «լեզվի նոր ուսմունքի» տիրապետության շրջանում տարածված սիալ պատկերացումները, հրատարակվում են ուսացած լեզվի պատմության, համեմատական քերականության, բարբառագիտության, ժամանակակից ուսացած լեզվի քերականության, հնչյունաբանության, բառապաշտին և նվիրված

բազմաթիվ աշխատություններ: Հատուկ հիշատակության արժանի են «Ժամանակակից ոռւսաց գրական լեզվի բառարանը», որի 15 հատորներից մի քանիսը արդեն լույս են տեսել, ոռւսաց լեզվի ակադեմիական քերականությունը, «Մոսկվայից արևելք ընկած կենտրոնական շրջանների ոռւսական ժողովրդական խոսվածքների ատլասը»<sup>1</sup> և այլն:

Ոռւսաց լեզվի պատմության ու պատմական քերականության և ոռւսաց լեզվի պատմության բնագավառի աշխատություններից նշելի են Լ. Պ. Յակուբինսկու «Հին ոռւսերենի պատմության» հետմահու հրատարակությունը, այլև Վ. Վ. Վինոգրադովի, Լ. Ա. Բուլախովսկու, Պ. Յա. Զեռնիխի, Պ. Ս. Կուզնեցովի, Տ. Պ. Լոմտեկի, Ս. Դ. Նիկիֆորովի, Բ. Ա. Լարինի, Ա. Ի. Եֆիմովի և ուրիշների աշխատությունները: Ոռւսաց լեզվի պատմության համար հատուկ արժեք ունեին նովգորոդի պեղումների ժամանակի հայտնաբերված գրությունները կեշակեղեկի վրա:

Ժամանակակից ոռւսաց գրական լեզվի հնչյունաբանության և ուղղափոսության բնագավառում նշելի են առաջին հերթին Ռ. Ի. Ավանեսովի, քերականության բնագավառում՝ Վ. Վ. Վինոգրադովի, Ս. Պ. Օքնորսկու, Ե. Մ. Գալկինա-Ֆեղոռուկի, Ն. Ս. Պոսպելովի աշխատանքները, ոճաբանության և առանձին հեղինակների լեզվի ուսումնասիրության բնագավառում՝ Վ. Վ. Վինոգրադովի, Ա. Ն. Գվոզդեկի, Ա. Ի. Եֆիմովի և ուրիշների, ուղղագրության բնագավառում՝ Ա. Ն. Գվոզդեկի, Մ. Ն. Պետրոսոնի, Ա. Բ. Շապիրոյի և ուրիշների աշխատությունները:

Այլ ենդերովական լեզուներ.— Սովետական Միության հրնդարապական լեզուների ուսումնասիրության հարցերը «լեզվի նոր ուսմունքի» լիկիդացիայից հետո ավելի լայն ուշադրության ու մեկնաբանության են արժանանում: Սլավոնական լեզուներին մերձավոր ցեղակից բալթիական լեզուների համեմատական ուսումնասիրության բնագավառում հատուկ վաստակ ունի Էնձելինը, որը 1951 թ. լույս տեսած իր «Լիտվերեն լեզվի քերականություն» աշխատության մեջ<sup>2</sup> ի մի է բերում բալթիական և սլավոնական լեզուների բնագավառում իր կատարած աշխատանքը: Ավելի վաղ

<sup>1</sup> Словарь современного русского литературного языка, I и 49., М.—Л., 1950 и 49. Грамматика русского языка, I—II, 1953—1954. Атлас русских народных говоров центральных областей к востоку от Москвы, М., 1957.

<sup>2</sup> J. Endzelīns, Latviešu valodas Gramatika, Rīga, 1951.

(1944 թ.) նա լույս է բնձայել իր «Հին պրուսերենի քերականությունը»<sup>1</sup>:

Իռմանա-գերմանական լեզուների բնագավառում լիկվիդացվում է «լեզվի նոր ուսմունքի» ազդեցությունը, լույս են տեսնում այդ լեզուների համեմատական քերականությանը, պատմության և ժամանակակից վիճակներին նվիրված մի շարք ինքնուրուցն ու թարգմանական գործեր: Գերմանական լեզուների բնագավառում նշելի են Վ. Մ. Ժիրմունսկու, Ա. Ի. Սմիռնիցկու, Մ. Մ. Գուխմանի, Մ. Ի. Ստերլին-Կամենսկու, Վ. Դ. Արակինի, Օ. Ս. Ախմանովայի, Վ. Գ. Աղմոնիի, Մ. Դ. Ստեպանովայի է. Ա. Մականի, Ի. Ի. Ռեզինի և ուրիշների աշխատությունները: Խոմանական լեզուների բնագավառում նշելի են Վ. Ֆ. Շիշմարյովի, Մ. Վ. Սերգիևսկու, Վ. Ն. Անդրեևայի, Մ. Մ. Գերշենզոնի և ուրիշների աշխատությունները:

Հին հունարենի և լատիներենի ուսումնասիրության բնագավառը հարստանում է Ա. Ա. Թելեցկու, Պ. Վ. Եռնշտեղտի, Ի. Մ. Տրոնսկու և այլոց աշխատություններով:

Հնդիրանական լեզուների ուսումնասիրության բնագավառում ևս զգալի աշխատացում է նկատվում. Հրատարակվում են սանսկրիտի և նոր հնդկական լեզուների դասագրքեր ու բառարաններ, գրվում են մենագրություններ ու հոդվածներ: Իրանական լեզուների հնչյունաբանության, բարբառագիտության, քերականության բնագավառը հարստանում է նոր գործերով՝ Վ. Ս. Սոկոլովայի, Ա. Ա. Ֆրեյմանի, Բ. Ս. Ռաստորգուևայի, Ա. Դ. Զալալովի, Բ. Նիյազ-Մուհամեդովի, Դ. Թ. Թաշիկի, Բ. Վ. Միլերի, Վ. Ի. Աբակի, Գ. Ե. Գագկանի և ուրիշների աշխատություններով:

Հայոց լեզվի պատմության և պատմա-համեմատական քերականության բնագավառը հարստանում է Հ. Աճառյանի, Է. Բ. Աղայանի, Ս. Ղազարյանի, Գ. Զահուկյանի, Ա. Ա. Արրահամյանի աշխատություններով, որոնց մեջ դրվում են լուծվում են մի շարք պրոբլեմներ:

Հայ բարբառագիտության բնագավառում երեսն են գալիս նոր աշխատություններ (Հ. Աճառյանի, Ա. Ղարիբյանի, Է. Աղայանի, Հ. Մկրտչյանի, Ս. Բաղդասարյանի և ուրիշների), այլև կատարվում է Հայ բարբառների դասակարգման նոր փորձ: Բարբառառների նոր ճյուղեր երևան գալու կապակցությամբ է. Աղայանը և Ա. Ղարիբյանը առաջարկում են տարբերել 2 բարբառա-

<sup>1</sup> J. Endzelin, Altpreußische Grammatik, Riga, 1944.

խումբ՝ գրաբարատիպ-նախամասնիկավոր (գրաբարատիպ կր-ով, կա-ով, ճա-ով) և ղերբայակազմ (ու-ով, -ել-ով, -ս-ով)<sup>1</sup>:

Լայն վեճերի տեղիք է տալիս հայ բարբառների ծագման հարցը<sup>2</sup>:

Փամանակակից գրական լեզվի և նրա պատմության բնագավառում հանդես են գալիս նոր աշխատություններ՝ Գ. Սեակի, Ա. Մուրվալյանի, Գ. Զահուկյանի, Վ. Առաքելյանի և այլոց հեղինակությամբ:

### Յ. ՌԶ-ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱԽՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆիննա-ուգրա-սամոյեդական, բյուրժական, մոնղոլական և տունգուսա-մանջուրական լեզուներ.— Այս լեզուների ուսումնասիրության բնագավառում ևս «լեզվի նոր ուսմունքի» ազդեցության վերացումը նպաստում է լեզվաբանական աշխատանքի նորմալ պայմանների հաստատմանը, այդ լեզուների պատմա-համեմատական ուսումնասիրության վիճակի բարելավմանը: Թարգմանվում են ուրալա-ալթայան լեզուների ցեղակցության հարցին նվիրված Ռամստերտի աշխատությունը, Քիննա-ուգրական լեզուների և թյուրքական լեզուների վերաբերյալ պատմա-համեմատական և այլ կարգի ուսումնասիրություններ (Հակովինենի, Ռյասյանենի, Հ. Բալաշայի), գրվում են բազմաթիվ ինքնուրույն աշխատություններ, հրատարակվում են թուրքիսի և այլոց գործերը:

Ֆիննա-ուգրական լեզուների բարբառագիտության, պատմության, քերականության բնագավառում հիշատակելի են Է. Պյալլի, Վ. Ի. Լիտկինի, Ա. Ս. Սիդորովի, Բ. Ա. Սերեբրեննիկովի, Կ. Ի. Մայտինսկայայի և այլոց աշխատությունները:

Թյուրքական լեզուների համեմատական ուսումնասիրության բնագավառում կարենոր էտապ պետք է համարել այդ լեզուների հա-

<sup>1</sup> Հետագայում Ա. Ղարիբյանը առանձնացնում է իրարից գրաբարատիպ և նախամասնիկավոր խմբերը: Մեր «Հայոց լեզվի պատմության պերփողիզացիայի հարցերը» հոդվածում, ՊՀԱՖ, 1 մաս, էջ 86, այս բաժանումները մենք փորձել ենք հիմնափորել պատմականորեն՝ 1) սրանց համար օգտագործելով՝ նախկին շարեմտահայ և արեկյահայ բարբառները՝ անվանումները՝ բայտ պատմական-աշխարհագրական բաժանման և 2) միաժամանակ՝ առաջարկելով՝ նյութերը տարրերելիս հիմք ընդունել ծագման մեկնակետային ձեռւյթները՝ և ոչ թե նրանց ձեռափոխումները (կու և ոչ թե կը, ել-ալ և ոչ լիս և ոչ ս):

<sup>2</sup> Հմմտ. Ա. Ղարիբյանի, Յ. Աղայանի, Գ. Սեակի, Գ. Զահուկյանի հոդվածները ՊԲՀ-ում, 1 5, 1958-1959; Տե՛ս և ՅԱ, 1958-1961.

մեմատական հնչյունաբանությանը և ձեաբանությանը նվիրված ժողովածուները<sup>1</sup>, որոնք նպատակ ունեն ամփոփ գաղափար տալու հիշատակվող բնագավառների կարեռագույն հարցերի մասին։ Թյուրքական լեզուների պատմա-համեմատական ուսումնասիրության բնագավառում նշելի են Ն. Կ. Դմիտրիկի, Է. Վ. Սեղոյանի, Ն. Ա. Բասկակովի, Ֆ. Գ. Խսխակովի, Ս. Պ. Գորսկիի, Վ. Գ. Եղորովի և ուրիշների անունները։ Շարունակվում է հին թյուրքական տեքստերի հրատարակության և ուսումնասիրության գործը (Մ. Ե. Մալով), հրատարակվում են ժամանակակից լեզուների քերականությանը և բարբառագիտությանը նվիրված բազմաթիվ աշխատություններ, մշակվում են թյուրքական և ոուսական զուգադրական քերականության հարցերը, գրվում են բառարաններ, գրվում են տերմինաբանական հարցեր (Մ. Ա. Շիրալիկ, Ս. Ա. Զաֆարով, Տ. Գ. Բահչեկ, Ն. Կ. Դմիտրիկ, Ռ. Ն. Տերեգովիվա, Կ. Զ. Արմետով, Մ. Բ. Բալակաև, Հ. Հ. Մահմուդով, Գ. Գ. Մուսաբակ, Ն. Ա. Բասկակով, Ն. Ա. Ալպիկ, Ի. Ա. Բաթմանով, Կ. Դիյկանով, Բ. Օ. Օրուզբակա, Ք. Ք. Սարթբակ, Դ. Շուքուրով, Բ. Մ. Յունուսալիկ, Է. Մ. Ախունզյանով, Ռ. Ս. Գագիզով, Լ. Զ. Զալյայ (Զալյայետդինով), Է. Վ. Սեղոյան, Ա. Գ. Գուլյամով, Ի. Ա. Կիսսեն, Վ. Վ. Ռեշետով, Ֆ. Գ. Խսխակով, Ս. Պ. Գորսկի, Ն. Ա. Ռեզյուկով, Պ. Պ. Բարաշկով, Լ. Ն. Խարիտոնով և ուրիշներ)։

Մոնղոլական լեզուների համեմատական ուսումնասիրության բնագավառում նշելի է առաջին հերթին Գ. Պ. Սանժեեի «Մոնղոլական լեզուների համեմատական քերականությունը»<sup>2</sup>։

Տունգուսա-մանջուրական լեզուների քերականության բնագավառում նշելի են Բ. Կ. Պաշկովի, Վ. Ա. Ավրորինի և ուրիշների աշխատությունները։

Կովկասյան լեզուներ.— Կովկասյան լեզուների ցեղակցության հարցը տեղի է տալիս դիսկուսիայի՝ «Вопросы языкоznания» հանդեսի էջերում։ Գրվում են կովկասյան լեզուների առանձին խմբերին նվիրված պատմա-համեմատական ուսումնասիրություններ, մշակվում են առանձին լեզուների բարբառագիտության, քերականության հարցերը, գրվում են զանազան տիպի

<sup>1</sup> Исследования по сравнительной грамматике тюркских языков, под общей редакцией Н. К. Дмитриева, I—II, М., 1955—1956.

<sup>2</sup> Г. Д. Санжеев, Сравнительная грамматика монгольских языков, М., 1953.

բառարաններ. վերջիններիս մեջ հատուկ հիշատակության արժանի է Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Կողմից հրատարակվող՝ վրացերենի բացատրական բառարանը (Դ հատորով): Կովկասյան լեզուներից վրացերենի բնագավառում շարունակում է աշխատել լեզվաբանների մի ստվար թիվ:

Արխազա-ադրգեյական լեզուների բնագավառում նշելի են Գ. Պ. Սերդյուչենկոյի, Մ. Կ. Դելբայի, Բ. Մ. Կարդանովի և ուրիշների, բացրիա-կաստրինյան և դաղստանյան լեզուների բնագավառում՝ Յու. Գ. Դեշիրիկի, Ս. Արդուլլակի, Ե. Ա. Բոկարյովի, Գ. Բ. Մուրկելինսկու և ուրիշների աշխատությունները:

Պալեոասիական լեզուներ.— Նշանակալից աշխատանք է տարվում այս լեզուների ցեղակցական փոխարաբերության հարցերի ճշտման և «լեզվի նոր ուսմունքի» տիրապետության շրջանում տարածված պատկերացումների հաղթահարման ուղղությամբ: Լույս է տեսնում Ե. Ս. Ռուբցովայի աշխատությունը՝ նվիրված էսկիմոսերենի շապիկնյան բարբառին: Ի. Ս. Վեդովինը գրում է պալեոասիական լեզուների ուսումնասիրության պատմությունը<sup>1</sup>:

Չին-տիբերական լեզուներ, նապոներեն, կորեերեն.— Չինական ժողովրդական Ռեսպուբլիկայի և Կորեական ժողովրդա-դիմոկրատական Ռեսպուբլիկայի ստեղծումը նոր ազդակ են ծառայում շինարենի ու կորեերենի ուժեղացված ուսումնասիրության համար: Հրատարակվում են այդ լեզուների և ուսւերենի հետ առնչվող երկլեզվյան բնդարձակ մի շարք բառարաններ, գրվում շինարենի ու կորեերենի քերականություններ ու դասագրքեր, բազմաթիվ աշխատություններ են նվիրվում դրանց պատմության ու քերականության հարցերին: Չինագիտական կարևորագույն հետազոտություններից նշելի են Ա. Ա. Դրագոնովի, Ի. Մ. Զշանինի, Ն. Ի. Կոնոպի, Ս. Ե. Յախոնտովայի, Տ. Պ. Զադոյենկոյի, Վ. Մ. Սոլնցեկի, Բ. Իսայենկոյի աշխատությունները: Հատուկ ուշադրության առարկա են խոսքի մասերի և բառի սահմանների պրոբլեմները:

Կորեերենի բնագավառում հիշատակելի են Ա. Ա. Խոլոդովիշի, Յու. Ն. Մազուրի աշխատանքները:

Ճապոներենի բնագավառում նշելի են Ա. Ա. Խոլոդովիշի, Ե. Ի. Ֆելդեմանի, Ե. Մ. Կոլպակչիի աշխատանքները:

Սեմա-համական, աֆրիկյան, ավստրալա-օվկիանյան, ամե-

<sup>1</sup> И. С. Вдовин, История изучения палеоазиатских языков, М. Л. 1954.

րիկյան հնդիկների լեզուների — Սևմա-քամական լեզուների բնագավառը հարստանում է մի շարք նոր աշխատություններով։ Հրատարակվում են ի. Յու. Կրաչկովսկու «Մուսական արաբագիտության պատմության ուրվագծերը», «Եթովպական ֆիլոլոգիայի ներածությունը» և երկերի ժողովածուի առաջին հատորը<sup>1</sup>; Լույս են տեսնում Գ. Վ. Մերեթելու, Գ. Շարբաթովի բարբառագիտական գործերը, Խ. Կ. Բարանովի «Արաբերեն-ուսերեն բառարանը», Դ. Ա. Օլդեռովգերի «Հառաւա լեզուն», Ն. Ս. Պետրովսկու «Եգիպտերեն լեզուն»<sup>2</sup> և այլն։

Աֆրիկյան լեզուների ուսումնասիրության բնագավառի նորույթներից նշելի է ի. Պ. Ստրոգանովսկոյի «Սուահիլի լեզվի քրեստոմատիան»<sup>3</sup>։

Ամերիկյան հնդկացիների ուսումնասիրության բնագավառում հատկապես պետք է նշել Յու. Վ. Կոնովովին, որը վերծանել է մայա կոչված ժողովրդի հին գրությունը։

Առաջավոր Ասիայի ենին լեզուներ.— Լույս են տեսնում Փոքր Ասիայի և Միջագետքի լեզուներին նվիրված մի շարք աշխատություններ, որոնց հեղինակները աշխատում են հաղթահարել «լեզվի նոր ուսումնագի» ազգեցությունն այս բնագավառում և ի մի բերել այդ լեզուների գիտական հետազոտության արդյունքները։ Հին փոքրասիհական հնդկրոպական լեզուների ուսումնասիրության բնագավառում նշելի են Վ. Վ. Իվանովի, Ա. Վ. Դեսնիցկայայի, ի. Մ. Դունաևսկայայի և ուրիշների աշխատությունները։

Ուրարտերենի բնագավառում նշելի են Գ. Ա. Մելիքիշվիլու, ի. ի. Մեշշանինովի, Գ. Վ. Մերեթելու, ի. Մ. Դյակոնովի, Ն. Հարությունյանի, Մ. Իսրայելյանի, Տ. Վ. Գամկրելիձեի աշխատանքները։

Ակկադերենի բնագավառում նշելի է Լ. Ա. Լիպիկի «Ակկադերեն լեզուն»<sup>4</sup>։

<sup>1</sup> И. Ю. Крачковский, Очерки по истории русской арабистики, М.-Л., 1950. Введение в эфиопскую филологию, Л., 1955. Избранные сочинения, I, М., Л., 1955.

<sup>2</sup> Г. В. Церетели, Арабские диалекты в Средней Азии, М., 1954. Арабские диалекты Средней Азии, I, Тбилиси, 1956. Г. Шарбатов, Хрестоматия по египетскому диалекту, М., 1954 (*բազմացնող աշաբառառով*). Х. К. Баранов. Арабско-русский словарь, М., 1957. Д. А. Ольдерогге, Язык хауса, Л., 1954. Н. С. Петровский, Египетский язык, Л., 1954.

<sup>3</sup> И. П. Стroganova, Хрестоматия языка суахили, I, Л., 1950.

<sup>4</sup> Л. А. Липиев, Аккадский язык, I—II, Л., 1957.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԲԵՐՅԱԼ

### 1. ՀԱՅԵՐԵՆ

- Աղայան Է., Հայ լեզվաբանությունը 25 տարում, ՀԳԱՏ, 1946, 1,  
էջ 61—73.
- Աղայան Է., Հայ լեզվաբանության պատմություն, 1, Երևան, 1958.
- Հրաչյա Հակոբի Աճառյան. Ներածականը պրոֆ. հ. Աղայանի, Երևան, 1956.
- Գասպարյան Գ., Սովետահայ բառարանագրությունը, ԼիԱԺ, II, Երևան,  
1948, էջ 295—310.
- Լեզվաբանության հարցերը, Երևան, 1952:
- Հայ լեզվաբանությունը Սովետական հայաստանում 40 տարում, «Լեզվի և  
ոճի հարցեր», I, Երևան, 1960, էջ 7—49.
- Դադարյան Ա., Բազմավաստակ հայագետը (Հ. Աճառյան), ՊՀԱԱ, Երե-  
վան, 1954, էջ I—XVII:
- Դադարյան Ա., Լեզվաբանական գիտության գորգացումը Սովետական  
հայաստանում, ԼիԱԺ, III, Երևան, 1948, էջ 65—124:
- Դարիբյան Ա., Հին և նոր հայագիտություն, ԼիԱԺ, I, Երևան, 1946,  
էջ 51—76:
- Դարիբյան Ա., Մանուկ Արեգյանի քերականագիտական ժառանգու-  
թյունը, «Գրական-բանասիրական հետախուզումներ», Երևան, 1946,  
էջ 149—160:
- Դարիբյան Ա., Հայագիտության պատմության հիմնական փուլերը,  
ՀԳԱՏ, 1945, № 1—2, էջ 35—57:
- Գրիգոր Այվաղի Դափանցյան. Ներածականը Կոստանյանի, Երևան,  
1959:
- Դափանցյան Գ., Մասը և հնդկրոպարանությունը, ՄԱԿԱ, № 1, Երևան;  
1945, էջ 1—34:
- Մեշտանինով Ի. Ի., Լեզվի նոր ուսմունքը զարգացման արդի փուլում,  
ԼիԱԺ, III, Երևան, 1948, էջ 5—40:

<sup>1</sup> Ցանկում բերվում են նաև «լեզվի նոր ուսմունքի» տիրապետու-  
թյան շրջանում լույս տեսած մի շարք ուսումնասիրություններ, որոնք օգ-  
տագործելիս բնականարար պետք է քննադատական մոտեցում հանդես բերել:

- Միանկով Վ. Ա., Լեզվի հին և նոր ուսմունքները, ՀԱՖ, 1, Երևան, 1946, էջ 7—50.*
- Մովիսյան Ա. Ն., Ն. Յա. Մարի կյանքն ու գործունեությունը, Երեւան, 1946.*
- Զահոռակյան Գ., Հայոց լեզվի պատմության պերիոդիզմիայի հարցերը, ՊՀԳԱ, № 57, մաս I, 1956, էջ 42—102.*
- Բ. Հ. Վերդյան, Վ. Ա. Քոոյան, Սովետահայ լեզվաբանությունը 40-ամառում, ՊԲՀ, 1960, № 4, էջ 79—91.*
- Տեր-Միանոյան Ե., Մանուկ Արեգյան, «Գրական-բանասիրական հետախուզումներ», Երևան, 1946, էջ 9—21.*

## 2. ՈՂԻՄԵՐԵՆ

- Аворин В. А., Очередной этап развития „теории“ стадиальности, ДСИЯ, 3, 1953, стр. 32—50, 105—106.
- Аворин В. А. и Щербак А. М., И. И. Мещанинов, ИАН ОЛЯ, XVII, 5, 1958, стр. 461—467.
- Агаян Э. Б., Языкоzнание в Армении, ВЯ, 1952, № 5, стр. 110—116.
- Академику В. В. Виноградову к его шестидесятилетию. Сборник статей, М., 1956, стр. 299—309.
- Алекберли Г. Г., Идеалистическая основа понимания фонемы в концепции Л. В. Щербы и его последователей, УЗ Аз. ин-та, № 4, 1955, стр. 91—97.
- Аптекарь В. Б., Современное положение на лингвистическом фронте и очередные задачи марксистов-языковедов, М.—Л., 1931.
- Бархударов С. Г., Академик С. П. Обнорский, ВЯ, 1958, № 4, стр. 63—77.
- Батманова Л. В., История изучения киргизского языка, автореф. канд. дисс., Л., 1952.
- Белодед И. К., А. А. Булаховский. К 70-летию со дня рождения. ИАН ОЛЯ, XVII, 2, 1958, стр. 176—182.
- Бескровный В. М. и Кальянов В. И., Памяти академика А. П. Баранникова (1870—1952), ИАН ОЛЯ, XII, 1, 1958, стр. 78—83.
- Борковский В. И., Семидесятилетие Л. А. Булаховского, ВГ, 1958, № 2, стр. 81—86.
- Борковский В. И., С. П. Обнорский, РЯШ, 1958, № 3, стр. 99—106.
- Боровков А. К., Изучение языков народов Средней Азии и Казахстана, УЗИВ, IV, 1952, стр. 126—148.
- Бухене Т. И., Языкоzнание в Советской Литве, ВЯ, 1954, № 1, стр. 173—175.

- Виноградов В. В., Языковедческая деятельность акад. С. П. Обнорского, ИАН ОЛЯ, XVII, 3, 1958, стр. 247—262.
- Виноградов В. В., Вступительное слово на расширенном заседании Уч. совета Ин-та языкоznания АН СССР по обсуждению книги И. М. Мещанинова „Члены предложения и части речи“, ДСИЯ, 3, 1953, стр. 7—19, 108—110.
- Виноградов В. В., Изучение русского литературного языка за последние десятилетия в СССР, М., 1955.
- Виноградов В. В., Основные проблемы изучения образования и развития древнерусского культурного языка, М., 1958.
- Виноградов В. В. и Бархударов С. Г., Итоги перестройки языковедческой работы в свете трудов И. В. Сталина по языкоznанию, ВАН, 1952, № 1, стр. 16—31.
- Виноградов В. В., Проф. Л. П. Якубинский как лингвист и его история древнерусского языка (Л. П. Якубинский, История древнерусского языка. М., 1953).
- Виноградов В. В. и Серебренников С. А., О состоянии и задачах советского языкоznания, ИАН ОЛЯ, XIII, 4, 1954, стр. 317—329.
- Вопросы языкоznания в свете трудов И. В. Сталина, 1950, II изд., 1952.
- Гаджиева Н. З., Азербайджанское языкоznание за 40 лет, ИАН Аз. ССР, 1957, № 12, стр. 208—217.
- Галкина-Федорук Е. М., Антимарксистские пороки грамматической концепции И. И. Мещанинова, ДСИЯ, 3, 1953, стр. 20—31, 107.
- Галкина-Федорук Е. М., К 60-летию акад. В. В. Виноградова, РЯШ, 1955, № 1, стр. 78—82.
- Галкина-Федорук Е. М., Успехи русского языкоznания за 40 лет Советской власти, РЯШ, 1957, № 6, стр. 8—10.
- Гарифян А. С., Развитие арmenистики в советский период, ИАН ОЛЯ, XVII, 1, 1958, стр. 27—31.
- Гинзбург Р. З., Заседание Учен. Совета отделения языкоznания филологического ф-та МГУ, посвященное памяти проф. А. И. Смирницкого, ИЯШ, 1954, № 5, стр. 113—117.
- Дешириев Ю. Д., Развитие младописьменных языков народов СССР в советскую эпоху, ВЯ, 1957, № 5, стр. 18—30.
- Дешириев Ю. Д., Развитие младописьменных языков народов СССР, М., 1958.
- Десницкая А. В., О влиянии „Нового учения“ о языке на исследование вопросов сравнительной грамматики индоевропейских языков, ИАН ОЛЯ, 1952, 4, стр. 305—323.
- Дослідження з мовознавства в Українській РСР за сорок років. Збірник статей, Київ, 1957.
- Дурново Н. Н., Общее и славянское языкоznание в России с 1914 по 1925 год. „Јужнословенски филолог“, V, Београд, 1925—1926, стр. 240—297.

- Звегинцев В. А., Языкоzнание в Московском университете после Великой Октябрьской революции, ИЯШ, 1955, № 3, стр. 8—20.
- Зиндер Л. Р. и Матусевич М. И., К истории учения о фонеме, ИАН ОЛЯ, XII, 1, 1953, стр. 62—75.
- Иванов В. В., Лингвистические взгляды Е. Д. Поливанова, ВЯ, 1957, № 3, стр. 55—76.
- Иванов П. Г., Вопросы языка в высказываниях Маркса, Энгельса, Ленина, академика Марра и Максима Горького, Саранск, 1934, II изд., 1935.
- Исаев М. И., М. И. Абаев как крупнейший иранист-осетиновед. Известия Юго-Осет. Научно-исследоват. ин-та, 9, 1958, стр. 396—414.
- Кальянов В. И., Об изучении санскрита в Советском Союзе. ВЛУ, 1957, № 8, стр. 23—36.
- Карский Е. Ф., Очерк научной разработки русского языка в пределах СССР, Л., 1926.
- Каск А. Х., Состояние эстонского языкоzнания и задачи языковедов республики..., „Труды“ Ин-та языка и лит. АН Латв. ССР, 2, 1953, стр. 23—32.
- Кенесбаев С. К. и Сырыбаев Ш. Ш., Казахское языкоzнание за 40 лет. ВАН Казахской ССР, 1957, № 11, стр. 55—66.
- Колпанов А. П., Языкоzнание в Таджикистане, ОЯ, 1957, № 5, стр. 156—158.
- Копыленко М. М., Теории сложноподчиненного предложения в русском языкоzнании, автореф. канд. дисс., Одесса, 1954.
- Кунин А. В., Достижения советской англистики в области лексикологии. ИЯШ, 1958, № 2, стр. 3—14.
- Ларин Б. А., Состояние и задачи литовского языкоzнания..., „Труды“ Ин-та языка и литературы АН Латв. ССР, 2, 1953, стр. 33—45.
- Мельничук А. С., Понятие предложения в Советском языкоzнании, автореф. канд. дисс., Киев, 1952.
- Мещанинов И. И., Очерки по истории АН—Лингвистические и литературоведческие науки. М.—Л., 1945.
- Михайлов Г. И., Послевоенные работы советских филологов-монголистов. КСИВ, 24, 1958, стр. 17—31.
- Михаэльчи Д. Е., Языкоzнание в Академиях союзных республик и в филиалах АН СССР, ВЯ, 1957, № 1, стр. 161—169.
- Миханкова В. А., Н. Я. Марр, Очерк его жизни и научной деятельности, М.—Л., 1948.
- Момджян Х., Лафарг и некоторые вопросы языкоzнания, ИАН Арм. ССР, 1952, № 5, стр. 45—59.
- Ниязмухamedов Б. Н. и Эдельман А. С., Развитие таджикской филологии за 25 лет, ИООН АН Тадж. ССР, 6, 1954, стр. 11—28.

- Обращение группы „Языковедный фронт“, ЛИ, 1950, № 1.
- Озол А., Выдающийся латинский лингвист (к 85-летию со дня рождения Я. Эндзелина), „Коммунист Сов. Латвии“, 1958, № 2, стр. 53—57.
- О рузбаева Б., Киргизская языковедческая наука за 40 лет, „Труды“ Ин-та языка и лит. АН Киргизской ССР, 9, 1957, стр. 5—14.
- Очерки по истории языкоznания в СССР. Проспект, М., 1953.
- Памяти академика Л. В. Щербы (1880—1944), М., 1951.
- Панов В. И., Об отличиях национального языка от языка народности, ВЯ, 1952, № 6, стр. 120—125.
- Пельше А. А., Состояние латышского языкоznания и задачи языкоzевдов республики..., „Большевик Сов. Латвии“, 1952, № 5, стр. 7—24 и „Труды“ Ин-та языка и лит. АН Латв. ССР, 1953, № 2, стр. 5—22.
- Поспелов Н. С., В. В. Виноградов, ИАН ОЛЯ, XIV, 1, 1955, стр. 83—92.
- Попов А. И., Памяти Д. В. Бубриха, УЗЛУ, № 157, вып. 2, 1953, стр. 257—245.
- Против вульгаризации и извращения марксизма в языкоznании, ч. I—II, М., 1951—1952.
- Пути развития советского языкоznания (передовая), ВЯ, 1957, № 5, стр. 3 17.
- Решетов В. В., Узбекское языкоznание на новом этапе развития. ИАН Уз. ССР, 1953, № 4, стр. 19—26.
- Реформатский А. А., А. И. Смирницкий (1903—1954), ИАН ОЛЯ, XIII, 6, 1954, стр. 571—573.
- Рыт Е. М., Ленин о языке и языке Ленина, М., 1936.
- Санжеев Г. Д., Монгольское языкоznание в СССР, LP, IV, 1953.
- Сантадзе Р. О., Основные этапы истории арmenистики, автореф. канд. дисс., Ереван, 1951.
- Сарыбаев Ш. Ш., Языкоznание в Казахстане. ВЯ, 1958, № 2, стр. 140—144.
- Сборник статей по языкоznанию. Проф. Московск. ун-та академику В. В. Виноградову, М., 1953.
- Севорян Э. В., Советская тюркология в последискуссионные годы (1950—1958), ИАН ОЛЯ, XII, 6, 1953, стр. 510—519.
- Севорян Э. В., Языкоznание в Узбекистане. ВЯ, № 5, стр. 116—121.
- Севорян Э. В., Из истории развития советской тюркологии (памяти Н. К. Дмитриева), ИАН ОЛЯ, XIV, 2, 1955, стр. 156—162.
- Севорян Э. В., Н. К. Дмитриев и советская тюркология, ВЯ, 1956, № 3, стр. 101—107.
- Серебренников Б. А., О марристских ошибках в трудах В. И. Абаева по вопросам языкоznания, ДСИЯ, 3, 1953, стр. 112—134.

Сорок лет советской филологической науки (передовая), ИАН ОЛЯ, XVI, 1957, стр. 397—406.

Степанов Г. В., История изучения романских языков в России и в СССР, УЗЛУ, № 232, 35, 1954, стр. 165—184.

Тридцать пять лет Октября и советское языкознание (передовая), ВЯ, 1952, № 6, стр. 7—24.

Туров Т., Хрестоматия по языковедению. Вып. 1. Высказывания классиков марксизма-ленинизма о языке, Благовещенск, 1932.

Чикобава А. С., Церетели Г. В. и Беридзе В. М., Языковедческая работа в Советской Грузии, ВЯ, 1952, № 2, стр. 138—151.

Чистякова А. Л., Марксистско-ленинское учение о языке, М., 1957.

Шор Р. О. На путях к марксистской лингвистике, М.—Л., 1931.

### 3. ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

Knobloch J., La situation actuelle de la linguistique soviétique, „Linguistica“, III, 2, 1952, № 219—223.

Manning C. A., Japheticology, „Language“, 7, 1931, № 143—146.

Manning C. A., Nikolay Marr and Armenian Studies, AQ, I, № 214—220.

Matthews W. K., The Japhetic Theory, SER, XXVII, 68, № 172—192.

Mihaila G., Aspecte din lingvistica sovietica, Bucuresti, 1958.

Milewski T., LP, I, 1949.

Murra J. V., Hankin R. M. and Holling F., The Soviet Linguistic Controversy, New York, 1951.

Rubenstein H., The Recent Conflict in Soviet Linguistics, „Language“, 27, 1951, № 281—287.

Sauvageot A., Linguistique et marxisme, „A la lumière du marxisme“, I, № 160—168.

Springer G. P., Early Soviet Theories in Communication, Cambridge, Mass., 1956.

Taglavini C., La linguistica nell'Unione Sovietica, „Scienza e cultura nell'URSS“, 1951, № 222—276.

Thomas L. L., The Linguistic Theories of N. Ja. Marr, Berkley-Los Angeles, 1957 (գրախոսականը „Language“-ում, 1958, 34, № 1, № 89—91).

Unbegau B. O., Some Recent Studies in the History of the Russian Language, OSP, V, 1954, № 117—132.

Vendryes J., La théorie japhétique de M. Marr, RC, XII, 1924, № 201—203.

## ՀԱՄԱՊՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

### 1. ՀԱՅԵՐԵՆ

- ՀԻԱԺ—ՀՍՍՌ ԳԱ Լեզվի ինստիտուտի աշխատությունների ժողովածու։  
ՀՓԱՏ—ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», հասարակական գիտություններ։  
ՄԱԿԱ—Երևանի Գետական համալսարանի Ն. Մառի անվան կարինետի աշխատություններ։  
ՊՀԲ—Պատմաբանասիրական հանդես։  
ՊՀԳԱ—Երևանի Գետական համալսարանի գիտական աշխատություններ։

### 2. ՌԱՊԻՍԵՐԵՆ

- ВАН—Вестник Академии Наук.  
ВИ—Вопросы истории.  
ВКА—Вестник Коммунистической Академии.  
ВЛУ—Вестник Ленинградского университета. Серия истории, языка и литературы.  
ВСЯ—Вопросы славянского языкознания.  
ВЯ—Вопросы языкоznания.  
ДСИЯ—Доклады и сообщения Института языкоznания АН СССР.  
ИАН ОЛЯ—Известия Академии наук СССР. Отделение литературы и языка.  
ИООИА—Известия Общества обследования и изучения Азербайджана.  
ИООН—Известия Отделения общественных наук.  
ИОРЯЛ АН—Известия Отделения русского языка и литературы Академии наук.  
ИЯЗ—Иностранные языки в школе.  
КСИВ—Краткие сообщения Института востоковедения АН СССР.  
КСИС—Краткие сообщения Института славяноведения АН СССР.  
ЛИ—Литература и искусство.  
ЛМ—Литература и марксизм.  
ТИЯ—Труды Института языкоznания АН.  
РЯШ—Русский язык в школе.

**СФ**—Советское финноугроведение.

**УЗ**—Ученые записки.

**УЗИВ**—Ученые записки Института востоковедения АН СССР.

**УЗЛУ**—Ученые записки Ленинградского университета. Серия филологических наук..

**УЗМУ**—Ученые записки Московского университета. Серия филологических наук.

**ЯЛ**—Язык и литература.

**ЯМ**—Язык и мышление.

**ЯС**—Яфетический сборник.

### 3. ՕՏԱՐ ՀԵԶՈՒՆԵՐՈՎ

**AA**—American Anthropologist.

**AIPhOS**—Annuaire de l'Institut de Philologie et d'Histoire Orientales et Slaves.

**AJ**—Acta Jutlandica.

**AK**—Archiv für Kulturgechichte.

**AL**—Archivum Linguisticum.

**AL**—Acta Linguistica.

**ALASH**—Acta Linguistica Academiae Scientiarum Hungaricæ.

**AQ**—Armenian Quarterly.

**ARANL**—Atti della Reale Accademie Nationale dei Lincei.

**ARION**—Annali del Reale Istituto Orientale di Napoli.

**AS**—Année Sociologique.

**ASGM**—Atti del sodalizio glottologico Milanese.

**ASNSL**—Archiv für das Studium der neueren Sprach- und Literatur.

**ASNSP LSF**—Annali della Scuola Normale Superiore di Pisa. Lettere, storia e filosofia.

**AUV**—Anales de la Universidad de Valencia.

**BSTJ**—Bell System Technical Journal.

**CFS**—Cahiers Ferdinand de Saussure.

**CQ**—Classical Quarterly.

**DVLG**—Deutsches Vierteljahrbuch für Literaturwissenschaft und Geistesgeschichte.

**FS**—Englische Studien.

**GRM**—Germ. R. Monatsschrift.

**GUMSLLT**—Georgetown University Monograph Series on Linguistics and Language Teaching.

**HFM**—Historisk-filologiske Meddelelser.

**HO**—Handbuch der Orientalistik.

**IF**—Indogermanische Forschungen.

**JASP**—Journal of Anormal and Social Psychology.

**JP**—Journal de Psychologie.

**LM**—Language Monographs.

- LP—*Lingua Posnaniensis*.  
LV—*Langues vivantes*.  
NGAW—*Nachrichten der Göttingischer Akademie der Wissenschaften, Philologisch-historische Klasse*.  
OSP—*Oxford Slavonic Papers*.  
PF—*Prace filologiczne*.  
PL—*Psychologie du langage*.  
RC—*Revue celtique*.  
RKA—*Realencylopädie der klassischen Altertumskunde*.  
RLR—*Revue des langues romanes*.  
RM—*Revue du mois*.  
SL—*Studia Linguistica*.  
SMS—*Sborník Mettske Slovenskej*.  
SR—*The Slavonic and East-European Review*.  
TCPH—*Transactions of the Cambridge Philological Society*.  
TPhS—*Transactions of the Philological Society*.  
TNTL—*Tydschrift v. Nederlandche Taal- en Letterkunde*.  
VR—*Vox romanica*.  
WF—*Wissenschaftliche Forschungsberichte (geisteswissenschaftliche Reihe)*.  
WM—*Westermanns Monatshefte*.  
WS—*Wörter und Sachen*.  
ZAAK—*Zeitschrift für Ästhetik und allgemeine Kunswissenschaft*.  
ZFEU—*Zeitschrift für französischen und englischen Unterricht*.

## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱԽԿ

- Աբակ Վ. ի. 391, 432, 458, 459, 495, 496, 516, 517, 538, 546, 547; Աշխամաֆ Դ. Ա. 501;  
Աբդուլլակ Ս. ն. 501, 541; Ապտեկար Վ. թ. 544;  
Աբեղյան Մ. 187, 497, 543, 544; Առաքելյան Վ. Դ. 539;  
Աբրահամյան Ա. Ա. 538; Առնեց Հ. 174;  
Ագմանի Վ. Գ. 370, 371, 403, 538; Ասլանով Մ. Գ. 496;  
Ազիմով Պ. Ա. 498, 499; Ասկոլի Գ. ի. 62, 64, 65;  
Ալավերդով Կ. Ա. 432; Ասմուշ Վ. Յ. 9, 12, 472;  
Ալեկըրջի Գ. Գ. 544; Ավանեսով Ռ. ի. 470, 484, 485, 491,  
Ալեքրսեն Վ. Մ. 502; 492, 512, 516, 537;  
Ալոնսո Դամասո 372; Ավուստինոս 74;  
Ալյափին Ն. Ա. 540; Ավել Լ. 189;  
Ախմանովա Թ. Ա. 234, 266, 319, 331, Ավորին Վ. Ա. 499, 500, 540, 544;  
403, 520, 538; Արակին Վ. Դ. 538;  
Ախմետով Կ. Զ., տե՛ս Ահմեդով Կ. Զ.; Արենդս Ա. 495;  
Ախմեդիանի Գ. Ա. 204, 470, 501, Արենս Հ. 321;  
535; Արիստեր Պ. 497;  
Ախունզյանով Է. Մ. 540; Արիստոտել 35, 131, 208;  
Ակկերման 14; Արտուրով Վ. Ա. 535;  
Ահմեդով (Ախմետով) Կ. Զ. 498, 540; Արցիխովսկի Ա. Վ. 491;  
Աղայան Է. թ. 199, 482, 497, 518, Ացցալինո Վ. 370;  
533, 534, 538, 539, 543, 544; Բաբեց Հ. 400;  
Աճառյան Հ. Հ. 77, 187, 496, 497, Բաղիլիուս Հ. 343;  
538, 543; Բաթմանով Ի. Ա. 499, 540;  
Աժմանժոյն Ա. Ա. 498, 499; Բաթմանով Լ. Վ. 544;  
Այմբետով Կ. Ա. 498; Բաիշ Տ. Գ. 498, 499, 540;  
Ալցետմուլյեր Ռ. 394; Բալաշան Յ. 539;  
Անրիգոն թ. Օ. 548; Բալական Մ. թ. 498, 540;  
Անդերսոն Ն. 401; Բալի Շ. 75, 76, 79, 93—99, 142,  
Անդրեյին Լ. Դ. 395, 536; 162, 171, 199—201, 204, 235,  
Անդրեև Մ. Ա. 495; 370, 371, 534;  
Անդրեև Ն. Դ. 316; Բակ Կ. Պ. 189, 190, 373;  
Անդրեևա Վ. Ն. 538; Բաղդասարյան Ս. Հ. 538;

- Բառու Թ.** 393:  
**Բասկակով** Ն. Ա. 499, 512, 540:  
**Բասսոն** 344:  
**Բարանիկով** Ա. Գ. 495, 544:  
**Բարաշկով** Պ. Պ. 540:  
**Բարանով** Խ. Կ. 542:  
**Բարանովսկի** Ա. 184:  
**Բարթոլոմե** Կ. 182, 183:  
**Բարխուդարյան** Ա. Գ. 544, 545:  
**Բարտոլի** Մ. 62, 63, 64, 66, 71, 73,  
74, 75, 117, 165, 191, 362, 373,  
375:  
**Բառեր** Հ. 194:  
**Բառմեր** Ա. 200:  
**Բեզեկի** Գ. 193:  
**Բելարդի** Վ. 392:  
**Բելգորոդսկի** Ն. Ա. 495:  
**Բելեցկի** Ա. Ա. 538:  
**Բելեխյոկի** Ա. Լ. 133, 199, 432, 483:  
**Բելիչ** Ա. Ի. 213:  
**Բելյակ** Մ Վ. 199:  
**Բելոբեդ** Ի. Կ. 544:  
**Բելով** Ա. Ի. 199:  
**Բեխտել** Ֆ. 189:  
**Բեկեր** Հ. 234:  
**Բեկաբել** Օ. 144, 148, 193, 400:  
**Բենդեր** Հ. Հ. 183:  
**Բենեդիկտ** Ռ. 358:  
**Բենի Տ.** 185, 186:  
**Բենվենիստ** Է. 75, 109, 183, 204, 373,  
378, 385, 386, 387, 390—393,  
460:  
**Բեռնեկեր** Է. 184:  
**Բեռնշտեյն** Ն. Ա. 199:  
**Բեռնշտեյն** Ա. Բ. 490, 536:  
**Բեռնշտեյն** Ա. Ի. 156, 470:  
**Բեսկրպնի** Վ. Մ. 544:  
**Բերգսոն** Ա. Գ. 371:  
**Բերիձե** Վ. Մ. 548:  
**Բերտելս** Ե. Է. 495, 496:  
**Բերտոլի** Վ. 362:  
**Բերտոնի** Ջ. 62, 63, 64, 190, 191:  
**Բեց 356:**  
**Բեցցենբերգեր** Ա. 173:  
**Բելըյանու** Լ. 392:  
**Բիեր** Մ. Ս. 397:  
**Բիգնի** Դ. 200:  
**Բիխովսկայա** Ա. Լ. 457, 458, 461,  
501:  
**Բիրդուհստել** Ա. Լ. 286, 335:  
**Բլաս** Ֆ. 395:  
**Բլեյկ** Ֆ. Ռ. 365:  
**Բլինի** Բ. 272, 287—290, 300, 303—  
309, 412:  
**Բլոկ Ժ.** 182, 393, 402:  
**Բլումֆիլդ** Լ. 20, 45, 47, 131, 135,  
204, 213, 269, 271, 272—285,  
288, 290, 294, 300, 303, 305,  
309, 319, 366, 403:  
**Բլուիսանս** Է. 200, 204:  
**Բյուլեր** Կ. 153, 209, 214, 319—330,  
346, 370, 532:  
**Բռաս Ֆ.**, տե՛ս Բռուրզ Ֆ.:  
**Բռդանով** Ա. Ա. 472:  
**Բռգոմլովա** Օ. Ի. 494:  
**Բռորազ** Վ. Գ. 502:  
**Բռորոդիցի** Վ. Ա. 22, 425, 498,  
499:  
**Բռդի** Յ. 192:  
**Բռուեն-դե-Կուրտենե** Ի. Ա. 22, 155,  
224, 225, 227, 230, 238, 424,  
425, 427, 469, 473, 477—480,  
486, 487:  
**Բռեր Ռ. Կ.** 192, 193:  
**Բռիներ** Դ. Հ. 285:  
**Բռլոնեզի** Զ. 392:  
**Բռկարյով** Ա. Ա. 501:  
**Բռկարյով** Ե. Ա. 457, 501, 512, 541:  
**Բռյովա** Ա. Ֆ. 499:  
**Բռնֆանտե** Զ. 62, 63, 65, 66, 67, 69,  
70, 74, 374, 388, 389, 390, 392:  
**Բռուտ Կ.** 370:  
**Բռպազ** Ֆ. 161, 173, 174, 176, 178,  
384:  
**Բռրկ Ֆ.** 402:  
**Բռրկովսկի** Վ. Ի. 492, 544:  
**Բռրովկով** Ա. Կ. 544:  
**Բռու Ա. Գ.** 399:  
**Բռուրզ (Բռաս) Ֆր.** 127, 197, 198,  
269, 270, 272:

- Բոռման Ա. 4. 23:  
 Բրանդենշտեյն Վ. 374:  
 Բրաուն Ա. 195:  
 Բրենտան Ֆր. 20, 23, 24, 26:  
 Բրիտտոն Կ. 203:  
 Բրյոնդալ Վ. 149, 244—252, 254,  
     256, 362:  
 Բրյուկներ Ա. 185, 186:  
 Բրյուն Ֆ. 36, 38, 97:  
 Բրոխ Օ. 184:  
 Բրոկեման Կ. 194:  
 Բրուգման Կ. 79, 223, 376:  
 Բրուներ Կ. 399:  
 Բրուտյան Գ. 403:  
 Բրւազակ Է. 185, 188:  
 Բրւըրիի Դ. Վ. 497, 539, 547:  
 Բրւգ Կ. 183:  
 Բրւղաղով Ռ. Ա. 199, 494, 511, 533,  
     534:  
 Բրւդե Ե. Ֆ. 425:  
 Բրւուրդգողա Լ. 495:  
 Բրւլ Ջ. 14:  
 Բրւախովսկի Լ. Ա. 425, 490, 492,  
     494, 505, 533, 536, 537, 544:  
 Բրւխարին Ն. 429:  
 Բրւինեն Տ. Ի. 544:  
 Բրւնակ Վ. Վ. 518:  
 Բրւըրի Է. 191:  
  
 Գարելենց Գ., ֆոն դեռ 83, 144,  
 Գագկակ Կ. Ե. 495, 538:  
 Գագուա Բ. Բ. 501:  
 Գաղիկով Ռ. Ա. 540:  
 Գալիս Յ. Հ. 193, 194:  
 Գալինա-Ֆեռոռուկ Ե. Մ. 204, 520,  
     537, 545:  
 Գամիլեկ Է. 165, 190, 397:  
 Գամկրելձե Տ. Վ. 542:  
 Գալգեր Վ. 182, 393:  
 Գանջինա Կ. Ա. 494:  
 Գասպարյան Գ. 543:  
 Գարդիներ Ա. Հ. 204, 320:  
 Գարտներ Թ. 185, 191:  
 Գափրինդարիի Ծ. Գ. 501:  
 Գելք Ջ. Ջ. 390:  
  
 Գեյ Գ. Ա. 402:  
 Գենկո Ա. Ն. 501:  
 Գեորգիկ Վ. Լ. 373, 375—378, 392,  
     395, 396, 402, 512:  
 Գերշենզոն Մ. Մ. 538:  
 Գերշել Ի. 393:  
 Գիես Մ. 398:  
 Գիլբերտ Դ. 14:  
 Գիլեն Ա. 393:  
 Գիլին Ֆ. Զ. 196, 197:  
 Գինգբուրգ Ռ. Ջ. 545:  
 Գիրո Պ. 162, 364, 369:  
 Գլսսեր Է. 344:  
 Գյունտեր Հ. 201:  
 Գյունտերտ Հ. Է. 360, 361, 374:  
 Գոթիո Ռ. 183, 184:  
 Գոլանով Ի. Գ. 491:  
 Գոմբոց Ջ. 195, 365, 366:  
 Գորբուշինա Լ. Ա. 482:  
 Գորդևսկի Վ. Ա. 498:  
 Գորդոն Կ. Հ. 400:  
 Գորկի Մ. 546:  
 Գորնունգ Բ. Վ. 520:  
 Գորսկի Մ. Գ. 540:  
 Գվողեն Ա. Ն. 486, 537:  
 Գրամմոն Մ. 76, 123—125, 487:  
 Գրանդշենտ Ջ. Հ. 190, 191:  
 Գրաուեր Ա. 361, 403:  
 Գրաֆ Վ. Լ. 360, 361, 385:  
 Գրեյ Լ. Հ. 285, 293, 360, 361, 400:  
 Գրիգորյ Վ. Ի. 403, 491, 535:  
 Գրիերսոն Գ. Ա. 196:  
 Գրիմ Յ. 167, 384—385:  
 Գրիմե 194:  
 Գրինկովա Ն. Գ. 491:  
 Գրիշենկո 185:  
 Գրիֆիթ Ֆ. Լ. 197:  
 Գյոյորեր Գ. 191:  
 Գյոյորներ 137:  
 Գյոյոնբեկ Կ. 400:  
 Գյոյոնբեկ Վ. 195:  
 Գրոստ Ա. Վ., դեռ 213, 214:  
 Գրունսկի Ն. Կ. 494:  
 Գուգենհայմ 218:  
 Գուդավա Տ. Ե. 501:

- Գուլիա Դ. Ի. 501;  
 Գուլյամով Ա. Գ. 498, 540;  
 Գուխման Մ. Մ. 135, 274, 282, 285,  
     293, 296, 403, 494, 512, 514,  
     520, 538;  
 Գուս Մ. 432;  
 Գուսման Ռ. 392;  
 Գուտենբրուներ Զ. 399;  
  
 Գալոուպ Վ. 193;  
 Գամուրեա Ժ. 397, 398;  
 Գանիելյոն 173;  
 Գանիով Գ. Կ. 432, 433, 471, 472;  
 Գա Սիլվա Դիաս Է. 398;  
 Գալեարակ Ն. Գ. 498;  
 Գարմստեներ Ա. 356;  
 Գարվին Զ. 286;  
 Գառզատ Ա. 373;  
 Գերորին Ա. Մ. 429;  
 Գերուններ Ա. 188;  
 Գեգտերևս Տ. Ա. 147, 230;  
 Գի Դիեզո Գ. 190, 361;  
 Գետերս Գ. 187, 196, 390;  
 Գեաֆոս Մ. 197;  
 Գելքա Մ. 541;  
 Գելուուկ Բ. 22;  
 Գեմիրյի-զադե Ա. 498, 499;  
 Գեմահուուկ Վ. Կ. 494;  
 Գենի Ժ. 195;  
 Գենսուսիանու 191;  
 Գեղրիկ Յու. Դ. 501, 512, 541, 545;  
 Գեղկ Դ. 391;  
 Գենիհոնայա Ա. Վ. 177, 494, 542,  
     545;  
 Գը Սոսյուր Ֆերդինանդ, տե՛ս Սոս-  
     յուր Ֆ.;  
 Գերժավին Ն. Ա. 490, 491;  
 Գե-Ֆրիկ Հ. 16, 204, 431, 445;  
 Գիռ Ա. Մ. 195, 196, 457;  
 Գիռենկովա Ն. Ա. 499;  
 Գյիտոյին Ն. Կ. 498, 499, 540, 547;  
 Գյակոնով Ի. Մ. 391, 540, 542;  
 Գյուի Զ. 12;  
 Գյումեղիլ Գ. 375, 401;
- Գյուրկչյալ Է. 15, 16, 75, 79, 82, 84,  
     88, 91, 119, 143;  
 Գորբոգակ Ս. Մ. 472;  
 Գողա Ա. 165, 372, 397;  
 Գոկինս Ռ. Մ. 189;  
 Գոմոժակով Ն. Գ. 499;  
 Գոյցայն Մ. 36, 37, 466;  
 Գոնդուա Կ. Դ. 501;  
 Գոռնզայֆ Ֆ. 356;  
 Գոտտին Գ. 191, 192;  
 Գորիլ Ա. 184;  
 Գորշեսկի Վ. 394;  
 Գրագանու Ն. 28, 37, 43;  
 Գրագունով Ա. Ա. 502, 541;  
 Գրախ Է. 370;  
 Գրեգեն Է. 432;  
 Գրեբսել Ա. 197;  
 Գունաեսկալա Ի. Մ. 542;  
 Գուլոնով Ն. Ն. 425, 490, 545;  
 Գևոտ Գ. 397;
- Եգորով Վ. Գ. 540;  
 Ելինեկ Մ. Ն. 192;  
 Ելմակ Լ. 201, 204, 206, 242, 244,  
     245, 253—268, 284, 291, 292,  
     299, 310, 311, 380, 401, 403,  
     404, 427, 535;  
 Ենսեն Հ. 197, 392;  
 Եռնշտենտ Պ. Վ. 538;  
 Եսպերսին Օ. 36, 38—48, 200, 259,  
     250, 370, 400, 479;  
 Եֆիմով Ա. Ի. 537;
- Զարբոգի Վ. 392;  
 Զառոյենկո Տ. Պ. 541;  
 Զալյալետուինով, տե՛ս Զալյալ-  
     յալ (Զալյալետուինով) Լ. Զ.՝  
     499, 540;  
 Զայդել Է. 346;  
 Զայդեր Հ. 372;  
 Զարուրին Ի. Ի. 495;  
 Զգուստա Լ. 387, 388;  
 Զեն Ա. 393;  
 Զիգ Ֆ. 180, 390;  
 Զիգինգ Վ. 180, 390;

- Զինդեր Լ. Ռ. 470, 476, 485, 494,  
     535, 546;  
 Զիզերս Է. 399:  
 Զյուտտերլին Լ. 22, 36:  
 Զոմմեր Ֆ. 189, 390:  
 Զոյտեր Գ. 395:  
 Զոննեկ Բ. 346:  
 Զվեգինց Ա. Ա. 199, 204, 404, 514,  
     520, 546:  
 Զուբատի Ի. 214:  
 Զուբով Ա. 497:  
  
 Էղեման Ա. Ս. 546:  
 Էմբեր Ա. 400:  
 Էմերսոն Օ. Ֆ. 193:  
 Էնգելս Ֆ. 407, 408, 410—417, 429,  
     434, 442, 448, 449, 507, 518,  
     546:  
 Էնձեին Յ. 183, 184, 393, 537, 538,  
     547:  
 Էնտուիս Վ. Ջ. 361, 398:  
 Էռեն Ա. 109, 189, 397:  
 Էվերտ Ա. 397:  
 Էրեման Կ. 169:  
 Էրինգա Ա. 200:  
  
 Թալհայմեր Ա. 197:  
 Թաղիկ Դ. թ. 538:  
 Թեյյոր Լ. Ֆ. 196:  
 Թոգերյու Կ. 254:  
 Թոմաս Լ. Լ. 548:  
 Թոմպսոն 343:  
 Թորնդայկ Է. Լ. 210:  
 Թոփուրիա Վ. Տ. 501:  
 Թրեյքեր Ջ. Լ. 230, 272, 285, 287—  
     290, 300, 301, 303—309:  
 Թումբ Ա. 188, 189:  
 Թուողելլ Ու. Ֆ. 288:  
 Թուոնայզեն Ռ. 192, 398:  
  
 Ժեստեն Ռ. 402:  
 Ժիլկո Ֆ. Տ. 494:  
 Ժիլերան Ժ. 62, 64, 115, 163—166:  
 Ժիրայ Մ. 401:  
 Ժիրար 38:  
  
 Ժիրկով Լ. Ի. 495, 496, 501:  
 Ժիրմունսկի Վ. Մ. 403, 434, 494,  
     514, 538:  
 Ժյուրե Ա. 390:  
 Ժյուրե Կ. 189:  
 Ժոլիվ Ա. 399:  
  
 Խլինսկի Գ. Ա. 490:  
 Խլիչ Բ. Ա. 494:  
 Խմայշվիլի Դ. Ա. 501:  
 Խնկիժեկով Ա. 499:  
 Խպսեն Գ. 201, 344, 346, 357:  
 Խսայենկո Բ. 541:  
 Խսակ Մ. Ի. 546:  
 Խխակով Ֆ. Գ. 540:  
 Խտրինա Ե. Ա. 492:  
 Խորաւելյան Մ. 542:  
 Խվանով Վ. Վ. 241, 379, 434, 476,  
     502, 520, 542, 546:  
  
 Լազիցիուս Յ. Վ. 329:  
 Լալանդ 209:  
 Լայզի Է. 345:  
 Լապեսա Ռ. 398:  
 Լարին Բ. Ա. 427, 491, 537, 546:  
 Լաֆարդ Պ. 407, 546:  
 Լաֆոն-Թվեկոն Ա. Ա. 197, 198:  
 Լեանդեր Պ. 194:  
 Լեջոն Մ. 395:  
 Լե-Կյերկ Լ. 192:  
 Լեին Գ. Ա. 376:  
 Լետե դե Վասինսես Ժ. 190:  
 Լեներտ Մ. 148, 153:  
 Լենին Վ. Ի. 407, 412, 414, 417, 473,  
     507, 546, 547:  
 Լեյյի Կ. 210:  
 Լեզկա Օ. 214, 220, 222, 236, 242,  
     404:  
 Լեստի Ա. 187:  
 Լևկին Ա. 185, 186, 223:  
 Լիի-Բյուլ Լ. 126, 127, 431, 447,  
     459:  
 Լիկ Ա. 180, 182:  
 Լիին Վ. Ի. 499:  
 Լեր-Սպլավինսկի Տ. 186, 394, 536:

- Լերիս Օ. 51, 204;  
 Լերուա Մ. 392;  
 Լի Դ. 343;  
 Լիեր Պ. 253;  
 Լիդեն է. 180, 186;  
 Լիոնն Ս. 392;  
 Լիպիկ Ա. Ա. 542;  
 Լիտկին Վ. Ի. 497, 539;  
 Լյովե Ռ. 398;  
 Լյոֆշտեդտ է. 189;  
 Լյուիկ 151;  
 Լյոււլիկ Ա. 176, 177, 178;  
 Լյուիս Հ. 398;  
 Լոմթատիձե է. Ա. 501;  
 Լոմթատիձե Կ. Վ. 501;  
 Լոմտև Տ. Պ. 432, 537;  
 Լոյա Յ. Վ. 432, 469;  
 Լոյման 189;  
 Լոս Յ. 185, 186;  
 Լորենց Ֆր. 185, 186;  
 Լորիմեր Գ. Լ. Ռ. 183, 402;  
  
 Խարիսով Ա. Ի. 498;  
 Խարիտոնով Լ. Ն. 540;  
 Խլդրով Մ. Ն. 498, 499;  
 Խոլոդովիչ Ա. Ա. 502, 541;  
  
 Մերիթելի Գ. Վ. 500, 503, 542, 548;  
  
 Կալեպիկի Թ. 21;  
 Կալիս Յ. 409;  
 Կալերիս Յ. Ն. 396;  
 Կալյանով Վ. Ի. Ի. 544, 546;  
 Կակատի Բ. 393;  
 Կայնց Ֆ. 318, 319;  
 Կանաձափա Մ. Ա. 195;  
 Կանտ է. 12, 15, 16, 82, 127, 320;  
 Կանտոր Գ. 318;  
 Կառ Վ. Լ. 360, 361;  
 Կառլգրեն Ի. Բ. 196;  
 Կառնապ Ռ. 203—206, 208, 346,  
     364;  
 Կառնուա Ա. 190;  
 Կասարես Խ. 369;  
 Կասակ Ա. Մ. 495;
- Կասկ Ա. Խ. 546;  
 Կասսիրեր է. 12, 125, 127—132, 200,  
     203, 204, 320, 321, 345, 346,  
     353, 431, 447, 559;  
 Կարամզին Գ. Գ. 497;  
 Կարսասե Հ. Կ. 498;  
 Կարդանով Բ. Մ. 541;  
 Կարինսկի Ն. Մ. 491;  
 Կարսկի Ե. Ֆ. 185, 492, 494, 546;  
 Կարստ Յ. 187;  
 Կարստեն Տ. Ե. 192;  
 Կարստին Կ. 399;  
 Կարստին Հ. 392;  
 Կարցևսկի Մ. 75, 200, 204, 214, 215,  
     223, 234, 235, 236;  
 Կացնելսոն Ա. Դ. 460, 465, 466,  
     467, 482, 488, 494;  
 Կենեսրակ Ս. Կ. 499, 546;  
 Կեպեսկի Կ. 395;  
 Կեռնս Ա. 392;  
 Կըղըրրակ Ա. Կ. 498;  
 Կիկերս Է. 192, 372, 373;  
 Կիւլյակով Ն. Ա. 495;  
 Կիսեն Ի. Ա. 540;  
 Կիմշիցկի Ա. Ի. 495, 496;  
 Կլուկին Ի. Ա. 499;  
 Կլուգե Յ. 192;  
 Կլուենով Գ. 392;  
 Կլուլակ Ո. 320;  
 Կլունի Ա. 178, 179, 188;  
 Կլուփին Ժ. 210;  
 Կնարե Գ. Մ. 468;  
 Կնորլին Յ. 548;  
 Կնոռողով Յ. Վ. 542;  
 Կոլինդեր Բ. 45, 373, 398, 399, 401;  
 Կոլման Ժ. է. 313;  
 Կոլոկուով Վ. Ա. 502;  
 Կոլպակով Ա. Պ. 546;  
 Կոլպակչի Ե. Մ. 502, 541;  
  
 Կոհեն Մ. 12, 75, 108, 127, 131,  
     171, 194, 360, 361, 372, 397,  
     400, 404, 508;  
 Կոմշիլովա Ե. 432;  
 Կոն Ի. Ա. 498, 499;

- Կոնդակով Ն. ի. 520;  
 Կոնդրաշով Ա. Ն. 518, 536;  
 Կոնեսկի Բ. 395;  
 Կոնոնով Ա. Ն. 498, 499;  
 Կոնով Ս. 393;  
 Կոնուդի Ի. Ն. 502, 541;  
 Կոնտ Օ. 84, 100;  
 Կոշմիդեր Է. 373;  
 Կոպիլենկո Մ. Մ. 546;  
 Կոպղեն Վ. ի. 200;  
 Կոստանյան Հ. Հ. 543;  
 Կորժիբսկի Ա. 364;  
 Կորժինեկ Ի. Մ. 214;  
 Կորոտկով Ն. 502;  
 Կորսակով Գ. Մ. 502;  
 Կոհմսկի Ա. 185;  
 Կրաք Հ. 187, 374, 397, 398, 399;  
 Կրաչկովսկի Ի. Յ. 502, 542;  
 Կրապ Գ. Պ. 193;  
 Կրատիլոս 74;  
 Կրառուզ Օ. Ա. 201;  
 Կրառուզ Վ. 391, 399;  
 Կրեյնովիչ Ե. Ա. 502;  
 Կրեմեր Պ. 396, 397;  
 Կրիգ Մ. 201;  
 Կրիմսկի Ա. Ե. 185, 494;  
 Կրոնասեր Հ. 345, 390;  
 Կրոշ Բ. 48, 49, 52, 53, 62, 64, 66,  
     95, 132, 199;  
 Կուդրյավսկի Դ. Ն. 21, 22, 155, 200;  
 Կուզնեցով Պ. Մ. 470, 483, 490, 491,  
     503, 537;  
 Կուլրակին Մ. 185, 186;  
 Կուպեր Ֆ. Բ. Ի. 393;  
 Կուն Ա. 63;  
 Կունին Ա. Վ. 546;  
 Կուտիկյան Հ. Կ. 543;  
 Կուվրյոր Վ. 387, 390, 391;  
 Կուրասկեվիչ Վ. 394;  
 Կուրե Յ. 432;  
 Կուրիովիչ Յ. 213, 236, 299, 373,  
     378—385, 387;  
  
 Հասս Օ. 392;  
 Հալ Ռ. Ա. 289, 290;
- Հալլե Մ. 126, 239, 240;  
 Հակովինեն Լ. 400, 539;  
 Հայզե Կ. Վ. 246;  
 Հայլման Լ. 373;  
 Հանկին Ռ. Մ. 548;  
 Հանսեն Ֆ. 173, 190;  
 Հանտեր 210;  
 Հաշիկ Մ. Մ. 501, 545;  
 Հաշիկա Ն. Զ. 545;  
 Հառիս Ջ. 272, 282, 287—297, 299,  
     400;  
 Հավերս Վ. 346;  
 Հավրանեկ Բ. 214, 394;  
 Հարդի Դ. Վ. 398;  
 Հարությոնյան Ն. Վ. 542;  
 Հացիակին Գ. Ն. 144;  
 Հացիելգ Հ. Ա. 345, 372;  
 Հարիմով Ռ. Ա. 498;  
 Հեգել Գ. Վ. Յ. 279, 284, 448;  
 Հելքիստ Է. 399;  
 Հենդրիկսեն 387;  
 Հեռանդ 137;  
 Հեսելինգ Դ. Կ. 194;  
 Հերդեր Յ. Գ. 354;  
 Հերցոգ 190;  
 Հեֆներ Ռ.-Մ. Մ. 285;  
 Հինց Վ. 393;  
 Հիրս Հ. 147, 172, 173, 175—178,  
     187, 188, 193, 201, 373, 376,  
     384, 387, 398;  
 Հյուրշման Հ. 496;  
 Հյուշոն Ռ. 193;  
 Հղեն Է. 286, 288, 291, 292, 304;  
 Հղղեր Ա. 191;  
 Հղինգ Ֆ. 548;  
 Հղլ Է. 300;  
 Հղլտ Ժ. 373;  
 Հղտհառուզեն Ֆ. 193, 399;  
 Հղուր Յ. 395;  
 Հղմրուրգեր Լ. 197;  
 Հղմմել Ֆր. 195;  
 Հղպիներ 358;  
 Հղոն Վ. 144, 146, 148, 149—153;  
 Հղրալեկ Կ. 394;

- Հոքես Զ. Ֆ. 272, 288, 289, 290,  
     297, 298, 299, 309, 316:  
 Հոֆման Յ. Բ. 395, 397:  
 Հոփման Օ. 188, 189:  
 Հռոզնի Բ. 181:  
 Հումբեր Ժ. 395:  
 Հումբոլդտ Վ., Քոն 25, 52, 58, 62,  
     86, 119, 125, 126, 129, 130, 322,  
     324, 325, 343—346, 348, 349,  
     351, 354—355, 357:  
 Հուսեղլ է. 9—12, 36, 203, 204, 236,  
     245, 256, 320, 344, 348, 353:  
  
 Ղազարյան Ս. Ղ. 543:  
 Ղարիբյան Ա. Ս. 496, 497, 538, 539,  
     543, 545:  
 Ղափանցյան Գ. Ա. 482, 483, 496,  
     497, 505, 543:  
 Ղիփշիձե Ի. Ս. 501:  
  
 Մազուր Յու. Ե. 541:  
 Մալիխնվակի Բ. 357, 358:  
 Մալով Ս. Ե. 498, 540:  
 Մալսագով Զ. Կ. 501:  
 Մալցե Մ. Դ. 491:  
 Մալի է. 13, 14:  
 Մական է. Ա. 146, 404, 538:  
 Մակ-Թեյն Ա. 192:  
 Մակդոնալդ Գ. 197:  
 Մակդոնել Ա. 182:  
 Մակսիմովա Մ. Կ. 499:  
 Մահմուդով Հ. Հ. 540:  
 Մահմումետով Ա. Ա. 501:  
 Մայեր է. 188:  
 Մայեր Կ. Հ. 148:  
 Մայեր Ռ. Մ. 171:  
 Մայզինգեր Օ. 345:  
 Մայնհոֆ Կ. 194, 197:  
 Մայշկ Ի. Ի. 497:  
 Մայտինսկայա Կ. Ե. 539:  
 Մանինդ Ս. Ա. 548:  
 Մանյեն Վ. 188:  
 Մանն Ս. է. 396:  
 Մառ Ն. Յ. 17, 37, 126, 127, 139,  
     141, 195, 196, 231, 255, 372,
- 427—460, 463, 466, 468, 469,  
     470, 476, 479, 483, 484, 488—  
     491, 494, 496, 500, 501, 503,  
     504, 515, 519, 531, 543, 544,  
     546, 548:  
 Մասլովա-Լաշանսկայա Ս. Ս. 38:  
 Մատեղիուս Վ. 214, 220, 221, 222:  
 Մատթես Ռ. 345:  
 Մատթյուս Ու. Կ. 548:  
 Մատոռե Գ. 368, 369:  
 Մատվեև-Խակա Վ. Վ. 491:  
 Մատուսելի Մ. Ի. 470, 485, 546:  
 Մարակուկ Ա. Վ. 502:  
 Մարկով Ա. Ա. 341:  
 Մարտի Ա. 11—12, 20, 21, 23—27,  
     35, 200, 201, 320:  
 Մարտինե Ա. 213, 226, 240, 363,  
     481:  
 Մարտուզ Ժ. 75:  
 Մարբս Կ. 407—417, 434, 507, 546:  
 Մառնիներ Յ. 131, 136, 345, 347,  
     357, 472:  
 Մառսեր Օ. 399:  
 Մառերեր Թ. 388:  
 Մեծենդելլ Մ. Ե. 393:  
 Մելիչ Յ. 195:  
 Մելիքիշվիլ Գ. Ա. 542:  
 Մելինդուկ Ա. Ս. 404, 546:  
 Մելյե Ա. 64, 75, 76, 77, 108—118,  
     121, 124, 125, 171, 180, 181,  
     182, 184, 186, 188, 189, 192,  
     200, 367, 372, 375, 392, 393,  
     397, 469, 472, 483, 489, 496,  
     536:  
 Մելիք է. 375:  
 Մելիք-Լյուրկե Վ. 54, 65, 144, 188,  
     190, 191:  
 Մենենդս Պիդալ Ռ. 190:  
 Մենքն Հ. Լ. 399:  
 Մեշշանինով Ի. Ի. 231, 255, 433,  
     460—464, 466, 482, 488, 542—  
     546, 501—504:  
 Մերինգեր 167, 168, 169:  
 Մերիշշի Պ. 390:  
 Միլեր Բ. Վ. 495, 496, 538:

- Միլեր Ի. Ս. 511;  
 Միլեր Վ. Ֆ. 182, 495, 496;  
 Միլևսկի Թ. 548;  
 Միխալչի Դ. Ե. 546;  
 Միխայլա Գ. 548;  
 Միխայլով Գ. Ի. 546;  
 Միխանովսկա Վ. Ա. 453, 544, 546;  
 Միկոլա Յ. 184, 373;  
 Միկուշ Ֆ. 213, 404;  
 Միջիող Յ. Լ. 197;  
 Միրաբել Ա. 395;  
 Միրզ Կ. 395;  
 Միքայիլով Շ. Ի. 501;  
 Մլադենով Ստ. 186;  
 Մկրտչյան Հ. Մ. 538;  
 Մյոլեր Հ. 178, 179;  
 Մյուլենբախ Կ. 183, 184;  
 Մյուլյեր Գ. 271;  
 Մյուլյեր Վ. Ֆ. 180, 188;  
 Մոլոցով Վ. Ա. 497;  
 Մոմբան Խ. 546;  
 Մոռիս (Մորիս) Զ. 204, 208, 319,  
     364;  
 Մոսե Ֆ. 399;  
 Մովսիսյան Ա. Ն. 544;  
 Մորգան Ա. 14;  
 Մորգան Գ. Լ. 416;  
 Մորգենշտեն Գ. 393;  
 Մորգե 315;  
 Մորիս Զ., տե՛ս Մոռիս Զ.;  
 Մոռլիթոն Հ. 188;  
 Մուսաբակ Գ. Գ. 540;  
 Մուրկելինսկի Գ. Բ. 501, 541;  
 Մուրվալյան Ա. Ա. 539;  
 Մուռա Զ. Վ. 548;  
  
 Ցաքերգ Կ. 51, 165, 201;  
 Ցագիշ Ի. Վ. 184;  
 Ցալինովիշ Մ. Յ. 494;  
 Ցախոնտովա Մ. Ե. 541;  
 Ցակրսոն Ռ. 214, 215, 223, 234,  
     236, 237—241, 363, 481;  
 Ցակովյան Ն. Յ. 439, 470, 484, 501;  
 Ցակովյան Վ. Գ. 482;
- Ցակուրինսկի Լ. Պ. 427, 434, 435,  
     468, 492, 523, 537, 545;  
 Ցաստրեմսկի Ա. Վ. 499;  
 Ցավիս Կ. 183;  
 Ցարցևա Վ. Ն. 494, 511, 514;  
 Ցոկ Ն. 392;  
 Ցոհաննեսոն Ա. 193, 399;  
 Ցոհանսոն 173;  
 Ցուելին Ջը Ցոնդ Յ. Պ. 194, 201;  
 Ցորգենսեն Յ. 204;  
 Ցորդան Յ. 64;  
 Ցուղախին Կ. Կ. 499;  
 Ցուեն Ռեն Չառ 214;  
 Ցունուսալիկ Բ. Մ. 498, 540;  
 Ցուշմանով Ն. Վ. 502, 503;
- Նաղել Բ. Ի. 391;  
 Նահատիգալ Ռ. 394;  
 Նայդա Յու. Ա. 272, 290;  
 Նավիլ Ա. 100;  
 Նավրոն Ե. Լ. 502;  
 Նատորդ Պ. 12, 127;  
 Նարասիմիա Ա. Ն. 402;  
 Նատման 347;  
 Նեմիրովսկի Մ. Յ. 199, 200;  
 Նելրատ 206;  
 Նենչոնի Զ. 201;  
 Ներինգ Ա. 374;  
 Նիբեռլի Լ. 184, 394;  
 Նիբերման Մ. 189;  
 Նիելսեն Ն. Ա. 362;  
 Նիկիֆորով Ս. Դ. 537;  
 Նիշամուհամեդով Բ. Ն. 495, 538,  
     546;  
 Նին Զ. Զ. 398;  
 Նիշ Կ. 185, 186;  
 Նիրոպ Կ. 190;  
 Նորեն Ա. 36, 38, 143, 250;  
 Նուարե Լ. 472;  
 Նունիես Ժ. Ժ. 190;  
  
 Շախմատով Ա. Ա. 31, 32, 33, 158,  
     185, 199, 200, 424, 487, 492,  
     493, 523;  
 Շախմատովա-Կոպլին Օ. Ա. 200;

- Ծահումյան Ռ. Մ. 501:  
 Ծահումյան Ա. կ. 404, 535:  
 Ծայդվալիկը Յ. 356:  
 Ծանիձե Ա. գ. 501:  
 Ծանոն Կ. է. 316:  
 Ծանտրեն Պ. 188, 395:  
 Ծապիրո Ա. Բ. 522, 537:  
 Ծարրաթով Գ. 542:  
 Ծաց Յ. 193:  
 Ծելի Պ. Բ. 67:  
 Ծերեր Ա. 360, 361, 373, 375:  
 Ծերեր Վ. 144, 167:  
 Ծերսպիր Վ. 67:  
 Ծիլի Յ. 12:  
 Ծիշմարլով Վ. Յ. 494, 538:  
 Ծիրալին Մ. Ա. 498, 499, 540:  
 Ծիրոկվա Ա. գ. 536:  
 Ծլայխեր Ա. 27, 67, 150, 230:  
 Ծլեզել Ա. 44:  
 Ծլիկ Մ. 204:  
 Ծմալց 189:  
 Ծմիդտ Ա. 362:  
 Ծմիդտ-Կոպպերս 137, 138:  
 Ծմիդտ-Ռոր Գ. 346:  
 Ծմիդտ Վ. 115, 137—141, 167, 171,  
     196, 197, 201:  
 Ծյոնֆելդ Մ. 194:  
 Ծյուռ 51:  
 Ծոր Ռ. Օ. 77, 130, 200, 469, 472,  
     473, 482, 483, 548:  
 Ծլերրա Լ. Վ. 22, 155, 215, 425, 469,  
     470, 473, 474, 475, 477, 480,  
     484—488, 494, 523, 535, 544,  
     547:  
 Ծլերրակ Ա. Մ. 544:  
 Ծպելիս Յ. 173, 184, 373, 375, 378,  
     388, 389:  
 Ծպերրեր Հ. 23, 169, 345, 367:  
 Ծպենցեր Բ. 197:  
 Ծպենցեր Լ. 51, 61, 62, 168, 190, 191,  
     271, 272, 347, 368, 371, 372,  
     403:  
 Ծպյոռի Տ. 372:  
 Ծպրենգեր 204:  
 Ծռադեր Օ. 174, 374:  
 Ծռեղեր Է. 14:  
 Ծվարց Բ. 392, 398:  
 Ծվիցեր Է. 395:  
 Ծտայնթալ Հ. 20, 25, 26, 35, 41, 129,  
     319:  
 Ծտանգ Կ. Մ. 393:  
 Ծտելցեր Վ. 194:  
 Ծտենցել Յ. 345, 347:  
 Ծտեոր Ա. 347:  
 Ծտեռնբերգ Լ. Յա. 137:  
 Ծտիրեր Զ. 404:  
 Ծտյոկլայն 169:  
 Ծտոլտենբերգ Հ. Լ. 402:  
 Ծտոլց Յ. 395:  
 Ծտոլց Յ. 189:  
 Ծտրայտրերգ Վ. 172, 201, 388:  
 Ծտրոհ Յ. 346, 398, 399:  
 Ծտրոմայեր 96:  
 Ծտրուկ է. 345:  
 Ծուխարդս Հ. 16, 35, 40, 62, 64, 71,  
     168, 196, 367, 368, 453, 457:  
 Ծուլց Վ. 390:  
 Ծուցկի Յա. Կ. 502:  
 Ծուքուրով Դ. 540:  
 Ծուքուրով Ժ. 498:  
 Զադվիկ Զ. 396:  
 Զատերջի Ա. կ. 182:  
 Զեմոդանով Ն. Ա. 482, 494, 505:  
 Զենիխ Պ. Յա. 200, 469, 491, 492,  
     537:  
 Զենիչկ Վ. Ի. 491:  
 Զիբորավա Ա. Ա. 223, 434, 457,  
     483, 500, 501, 504, 514, 531—  
     533, 548:  
 Զիստյակովա Ա. Լ. 548:  
 Պասոնեն Հ. 401:  
 Պաղոս 14:  
 Պալմեր Լ. Ռ. 360, 361:  
 Պալյարո Ա. 201:  
 Պանինի 277, 290:  
 Պանզ Վ. Ի. 511, 547,

- ♦անշվածե Վ. Ն. 501:  
 ♦անֆիլով Ե. Դ. 404:  
 ♦աշկով Բ. Կ. 502, 540:  
 ♦աշկովսկի Ա. Ա. 502:  
 ♦աստով-Կրյոներս 188:  
 ♦ավով Ի. Պ. 471, 472, 518:  
 ♦արիս Գ. 60, 164:  
 ♦առու Հ. 22, 29, 35, 52, 169, 366,  
     373:  
 ♦առվինի Է. 394—395:  
 ♦եանն 14:  
 ♦եղերսեն Հ. 179, 180, 181, 186, 373,  
     389, 391, 392, 398:  
 ♦ելշ Ա. Ա. 547:  
 ♦եկմեցի Գ. 187:  
 ♦եշկովսկի Ա. Մ. 155—161, 185, 199,  
     370, 424, 425, 427, 469, 493,  
     523:  
 ♦ել Գ. 130, 131, 321, 323, 361:  
 ♦եստալոցցի Ռ. 201:  
 ♦ետերսեն Վ. 388:  
 ♦ետերսոն Մ. Ն. 425, 426, 463, 469,  
     473, 482, 483, 493, 494, 533,  
     534, 537:  
 ♦ետրովա Տ. Ի. 499:  
 ♦ետրովա Օ. Պ. 502:  
 ♦ետրովսկի Ն. Ս. 542:  
 ♦երսոն Պ. 176:  
 ♦երևոլչիկով Պ. Ն. 497:  
 ♦իզանի Վ. 31, 62, 63, 65, 69, 99,  
     152, 237, 246, 253, 373, 375,  
     376, 392, 397:  
 ♦իկե Կ. Լ. 285, 288, 289, 290:  
 ♦իշոն Է. 397, 398:  
 ♦իոտրովսկի Ռ. Պ. 404:  
 ♦իրս Պ. 12, 14:  
 ♦իրսոն Ժ. 190:  
 ♦լակա Յ. 183:  
 ♦լանկ Մ. Կ. է. Լ. 210:  
 ♦լատոն 11:  
 ♦լեխանով Պ. Վ. 16:  
 ♦լալ Է. 539:  
 ♦ողդնեկ Դ. Մ. 502:  
 ♦ոլիքանով Ե. Պ. 195, 211—212, 238,
- 425, 431, 469, 476—483, 498,  
     499, 502, 546:  
 ♦ոլլանեց Յ. 395:  
 ♦ոլոմե է. 392:  
 ♦ոկոնի Յ. 172, 180, 181, 362,  
     372—375, 388, 397:  
 ♦ոկովսկի Մ. Ն. 429:  
 ♦ոպով Ա. Ի. 547:  
 ♦ոպակ Ն. Ն. 499:  
 ♦ոս Հ. 214:  
 ♦ոսպելով Ն. Ս. 200, 234, 522, 537,  
     547:  
 ♦ոստեկ 373:  
 ♦ոտերնյա Ա. Ա. 20, 21, 22, 33, 35,  
     146, 158, 160, 161, 425, 466:  
 ♦որժեգինսկի Վ. Կ. 156, 184:  
 ♦որցիկ Վ. 250, 320, 344, 345, 346,  
     352, 353, 354, 356, 357, 360,  
     361, 375:  
 ♦ոռկող Է. 175, 398, 399:  
 ♦սալտես Ա. Բ. 188:  
 ♦ըրեցնութ Ի. 472:  
 ♦ըրեցից Վ. 188:  
 ♦ըրոբրաժենսկի Ա. 185:  
 ♦ըրոլ Վ. 195:  
 ♦ըրկոֆե Պ. Ն. 497:  
 ♦ըժիլուսկի Յ. 182:  
 ♦ուշկին Ա. Ո. 523:  
 ♦տալառվ Ա. 538:  
 ♦տալիով Օ. 495:  
 ♦տհուկյան Գ. Բ. 538, 539, 544:  
 ♦տնաշիա Ա. Ն. 500, 501:  
 ♦տափսիշվիլի Ի. 500, 501:  
 ♦տափրով Ս. Ա. 540:  
 ♦եյրանիշվիլի Ե. Յ. 501:  
 ♦եներ Հ. 192:  
 ♦ենտիլ 64:  
 ♦ոնսոն Հ. Հ. 197:  
 ♦ոնսոն Ս. է. 397:  
 ♦ոռւնզ Ջ. Մ. 192, 363, 398:  
 ♦ուս Մ. 285, 286, 291:  
 Ռաբլ Յ. 61:

- Թամով Յ. 186, 395:  
 Թամստեղու Գ. Ի. 401, 498, 539:  
 Թայխելու Հ. 183:  
 Թայտ Զ. 187, 188, 192, 193:  
 Թասել Բ., տե՛ս Թասսել Բ.:  
 Թասսել Բ. 14, 203, 205, 357:  
 Թաստորգուկ Պ. Ա. 491, 494:  
 Թաստորգունա Բ. Ա. 495, 538:  
 Թատցել Յր. 137:  
 Թեգուլա Մ. 346:  
 Թեզյուկով Ն. Ա. 540:  
 Թեզնիկով Լ. Օ. 204:  
 Թեյ Ս. Հ. 197:  
 Թենու Լ. 393:  
 Թեշետար Մ. 395:  
 Թեշետով Վ. Վ. 499, 540, 547:  
 Թեզին Ի. Ի. 404, 538:  
 Թեփորմատսկի Ա. Ա. 229, 230, 404,  
     470, 483, 484, 486, 487, 533,  
     534, 547:  
 Թեզկերտ Հ. 12:  
 Թիկմանս Գ. 400:  
 Թիշարդս Ի. Ա. 135, 136, 170, 171,  
     357, 358, 364, 366:  
 Թիս Ց. 250, 283, 327, 346, 370:  
 Թիտ Ե. Մ. 547:  
 Թիտին Ա. Պ. 460, 465, 467, 468,  
     488:  
 Թյասանեն Մ. Ո. 401, 539:  
 Թոգավա Գ. Վ. 501:  
 Թոձելի Ն. Ա. 404:  
 Թողենրերգ Յ. Ա. 495, 496:  
 Թողենկրաց Բ. 390:  
 Թողենֆելդ Ա. Պ. 495:  
 Թողվաղովսկի Յ. 22, 23, 185, 186:  
 Թողի Գ. 398:  
 Թովմանով Բ. 494:  
 Թովմասկիլ Ա. Ա. 495, 496:  
 Թովստոփ Ա. 398:  
 Թոքե Մ. 396:  
 Թուբենշտեյն Հ. 548:  
 Թուբովա Ե. Ա. 541:  
 Թուդենկո Վ. Պ. 501:  
 Թուդենկ Ա. Պ. 491:  
 Թուժիլկա Յ. 394:  
 Թոււալու Պ.-Ժ. 123:  
 Թոււսոս Ժ. Ժ. 43:  
  
 Մադնիկ Լ. 394:  
 Մահով Մ. Ա. 501:  
 Մամուելս Մ. Լ. 285:  
 Մանդեն Կ. 365, 366:  
 Մանֆեկ Գ. Դ. 499, 511, 540, 547:  
 Մանտած Հ. Օ. 547:  
 Մառանբակ Ն. Տ. 499:  
 Մարթան Ք. Ք. 540:  
 Մարիբակ Ծ. Ծ. 547:  
 Մեդելնիկով Ե. Ա. 404:  
 Մելիշև Ա. Մ. 184, 469, 490, 491,  
     492:  
 Մեմպսոն Զ. 182:  
 Մեմյոնով Ա. Ա. 495:  
 Մեմյոնով Դ. Վ. 502:  
 Մեշե Ա. 22, 35, 36, 75, 76, 79, 99—  
     108, 142, 201, 204:  
 Մեպիր Է. 77, 131—137, 199, 200,  
     201, 213, 269, 271, 272, 273,  
     278, 282, 300, 320, 343, 357,  
     358, 387, 403, 431, 459, 583:  
 Մեփորդյան Է. Վ. 540, 547:  
 Մետել Է. Ն. 401:  
 Մերգիկսկի Մ. Վ. 164, 200, 483, 494,  
     538:  
 Մերդյուշենկո Գ. Պ. 501, 541:  
 Մերբրեննիկով Բ. Ա. 241, 448, 452,  
     505, 514, 516, 517, 520, 539,  
     545, 547:  
 Միքիոկ Թ. Ա. 319, 331:  
 Միդորով Ա. Ա. 470, 484, 491, 497,  
     539:  
 Միլվեն Ա. 397:  
 Միմոն Վ. 402:  
 Մինիե Յ. 195:  
 Միրիբակ Ծ. Ծ. 546:  
 Մլավսկի Յ. 394, 395:  
 Մլոնսկի Մտ. 394:  
 Մոռտի Յ. 349:  
 Մլուսարեն Ն. Ա. 297:  
 Միրիյնեն Ի. 77:  
 Մկալիլկա Վ. 214, 234, 242, 243:

- Սկիբ** Վ. Վ. 193:  
**Սկոռ** Ֆ. 360, 361:  
**Սկորիկ** Պ. Յա. 502:  
**Սմալ-Շտոկի** Ա. 185:  
**Տմիթ** Հ. 285, 287—290, 300, 301,  
304—308:  
**Մյունիցիկի** Ա. Ի. 470, 471, 494, 520,  
521, 526—531, 538, 545, 547:  
**Մյունով** Ա. Վ. 200:  
**Մյերցեմա** Բ. 254, 266:  
**Մյորենսեն** Հ. 242:  
**Մյուիտ** Հ. 224:  
**Մնեգիրով** Ի. Լ. 503:  
**Մնեց** Բ. 330:  
**Մորոլսկի** Ա. Ի. 185, 491:  
**Մորոլսկի** Ա. Ա. 32:  
**Մորոլսկի** Ա. Ի. 494:  
**Մոլման** Ֆ. 172:  
**Մոլոգովիկով** Վ. Վ. 313:  
**Մոլնց** Վ. Ա. 541:  
**Մոլտա** Գ. Բ. 392:  
**Մոկոլովա** Վ. Ա. 495, 538:  
**Մոլմերֆելտ** Ա. 77, 192, 431, 457,  
459, 467:  
**Մոոյուր** Ֆ. 20, 21, 27, 42, 75—78,  
80—92, 94, 96, 98, 99, 103, 104,  
106, 107, 108, 110, 118, 125,  
136, 141, 142, 143, 153, 158,  
165, 171, 199, 203, 204, 216,  
217, 222, 224, 225, 227, 228,  
230, 245, 247, 255—258, 260,  
263, 267, 269, 274, 276, 278,  
280, 282, 310, 320, 321, 322,  
324, 325, 343, 344, 349, 361,  
381, 412, 426, 469, 471, 472,  
473, 477, 483, 486, 487, 527,  
528:  
**Մովաժու** Ա. 373, 548:  
**Մպանգ-Հանսեն** Հ. 204:  
**Մպեյզեր** Ա. 402:  
**Մպենսեր** Բ. 197:  
**Մպիրկին** Ա. Գ. 518:  
**Մպիրնշեր** Զ. Գ. 427, 471, 548:  
**Մքելա** Բ. 395:  
**Միտ** Գ. 401:  
**Մտալին** Ի. Վ. 505, 506, 508, 511,  
514, 518, 323, 532, 545:  
**Մտալին** Վ. Հ. 197:  
**Մտերլին-Կամենսկի** Մ. Ի. 404, 538:  
**Մտերնիցկի** Ա. Ն. 502:  
**Մտեպանով** Գ. Վ. 548:  
**Մտեպանովա** Մ. Դ. 538:  
**Մտեռն** Գ. 365, 366:  
**Մտեսոն** Բ. Հ. 285:  
**Մտոյկով** Մ. 395:  
**Մտրոգանովա** Ի. Պ. 503, 542:  
**Մտրոկա-Մոկուկայա** Տ. Վ. 494:  
**Մտորտանտ** Է. Հ. 360, 361, 373,  
387, 389:  
**Մուխարկա** Օ. Ա. 495:  
**Մուխոսին** Ա. Մ. 133, 200, 483:  
**Մունիկ** Օ. Պ. 499, 500:  
**Մունցովա** Ի. Պ. 484:  
**Մուոդեց** Մ. 288, 290:  
**Մքոտուուց** 399:  
**Մևակ** Գ. Գ. 467, 471, 497, 539:  
**Վագներ** Մ. Լ. 191:  
**Վամնի** Վ. 395:  
**Վալեն** Ա. 172, 189, 190, 372, 397:  
**Վալկոնֆ** Մ. 397:  
**Վախեկ** Յ. 404:  
**Վակերնագել** Յ. 149, 179, 375:  
**Վայան** Ա. 393, 394:  
**Վայգանդ** Գ. 187:  
**Վայդաուեր** Ֆ. 202:  
**Վայսգերբեր** Յ. Լ. 204, 321, 344—  
352, 356, 398:  
**Վան-Գիննեկեն** Յ. 21, 22, 27—31,  
97, 201:  
**Վանդրիես** Ժ. 45, 75, 118—123, 188,  
189, 192, 200, 373, 483, 548:  
**Վան-Վեյկ** Ն. 183, 213, 393, 394:  
**Վան-Վինդեկենս** Ա. Յ. 391, 392, 395:  
**Վասիլկ** Վ. Մ. 497:  
**Վասիլկիչ** Գ. Մ. 499:  
**Վարտրուդ** Վ., Գոն 71, 190, 400,  
360, 361, 362, 370:

- Վեռովին Ի. Ա. 541:  
 Վերդյան Բ. Հ. 544:  
 Վելլանդեր Է. 169, 170, 366:  
 Վելիս Ե. 202:  
 Վեյս Ա. 210, 273:  
 Վենկեր Գ. 167, 202:  
 Վենտիսի Մ. 396:  
 Վեռներ Ա. 196, 197:  
 Վեստերման Դ. 197:  
 Վիաննա Գ. 190:  
 Վիգոսի Զ. 62, 63:  
 Վիլհամս Է. Բ. 398:  
 Վիլկսկի Օ. Լ. 495:  
 Վիկունդ Կ. Բ. 401:  
 Վինդելբանդ Վ. 12:  
 Վինդիշ 223:  
 Վինկեր Է. 202:  
 Վինկեր Հ. 181, 195, 196:  
 Վինդրադով Վ. Վ. 37, 156, 199,  
     427, 446, 457, 458, 460, 466,  
     486, 488, 492, 493, 505, 514,  
     522—526, 537, 544, 545, 547:  
 Վինկուր Գ. Օ. 77, 403, 469:  
 Վիտքենշտայն Լ. 205, 357:  
 Վլադիմիրց Բ. Յ. 499:  
 Վոլշինով Վ. Մ. 473:  
 Վոլֆենդեն Ս. 196:  
 Վոնդռակ Վ. 184, 185:  
 Վուչերկ Պ. 395:  
 Վուդե Ֆ. 163, 167, 345:  
 Վվեդենսկի Դ. Ն. 141, 199, 483:  
 Վուդքեր Զ. Հ. 312:  
 Վուլֆ Կ. 402:  
 Վունդտ Վ. 20, 22, 25, 100, 125, 127,  
     129, 130, 169, 319, 367.  
 Վուստ Վ. 393:  
  
 Տալլավինի Կ. 201, 360, 361, 396,  
     548:  
 Տարդ Գ. 16, 71:  
 Տեգեներ 143:  
 Տեռալինի Բ. 362:  
 Տերաշի Լ. Ա. 202:  
 Տերեգուլովա Ռ. Ն. 540:  
 Տերելենկո Ն. Մ. 497:  
  
 Տեր-Մինասյան Ե. Գ. 544:  
 Տումանով Ս. Պ. 491, 519:  
 Տորպ Ա. 192, 193:  
 Տռնկա Բ. 214, 215, 216, 404:  
 Տրավնիչեկ Ֆ. 394, 536:  
 Տրավուման Ռ. 183, 184, 393, 394:  
 Տրետյակով Պ. Ն. 491:  
 Տրիբ Յ. 344, 345, 346, 354—357,  
     368:  
 Տրոմբետի Ա. 171, 199, 201, 202:  
 Տրոնսկի Ի. Մ. 538:  
 Տրոստ Պ. 404:  
 Տրուբեցյով Ն. Ա. 186, 196, 214, 215,  
     222—233, 297, 329, 376, 401,  
     476, 477:  
 Տուոներ Ռ. Լ. 393:  
 Տուրով Տ. 548:  
 Տուրշանինով Գ. Ֆ. 501:  
  
 Ցառոներ Ա. 191:  
 Ցեղվածե Ի. Ի. 501:  
 Ցիմեն Հ. 194:  
 Ցիցիոս Վ. Ի. 499:  
 Ցիպֆ Գ. Կ. 286:  
 Ցյուլարց Է. 197:  
 Ցոյս Ի. Կ. 191:  
 Ցիռոներ Է. 362, 363:  
 Ցիռոներ Կ. 362:  
 Ցուկրման Ի. Գ. 495, 496:  
  
 Ուայթհեդ Ա. Ն. 14, 207, 208:  
 Ուայլ Հ. Կ. 193:  
 Ուրյատով Ե. Ի. 499:  
 Ուղարցով Ա. Դ. 491:  
 Ուկու Ռ. Ա. 202, 272, 288, 289, 290,  
     292, 300:  
 Ուկիփնսոն Գ. Տ. 360, 361:  
 Ուկիլի Է. 193:  
 Ուիներ Ն. 113:  
 Ուինտեր Ու. 392:  
 Ուիզեր Ու. 316:  
 Ուլաշին Հ. 185, 186, 213, 229, 230:  
 Ուլդալ Հ. Յ. 253, 254, 267, 268:

- Աւելիքեկ Խ. Կ. 196, 197, 201, 373, 431, 459;  
 Ավման Ս. 365, 367;  
 Աշակով Դ. Ն. 156, 157, 425, 493;  
 Աստմոռու Ջ. 361, 396, 397;  
 Աստառոն Ջ. Բ. 210;  
 Ասորֆ Բ. 137, 337, 343, 358, 359;  
 Աւրբան Ու. Մ. 204, 207, 208;  
 Աւրբանչիկ Ստ. 394;  
  
 Փայկ Ք. Լ. 272, 285, 289, 291, 300;  
 Փեյ Մ. 398;  
 Փիտման Ռ. Մ. 289, 291;  
 Փուղ Մ. 397;  
  
 Քալդեր Գ. 192;  
 Քենտ Կ. Գ. 397;  
 Քլուկոն 358;  
 Քյամալով Ֆ. Կ. 498;  
 Քոնվեյ Ռ. 396, 397;  
 Քույան Վ. Ա. 544;  
 Քրիստենսեն Ա. 183;  
 Քուրդու Կ. Կ. 495;  
  
 Օբնորսկի Մ. Պ. 492, 537, 544, 545;  
 Օգդեն Կ. Ա. 135, 136, 170, 171, 203,  
     357, 358, 364, 366;  
 Օդե-Վասիլև Կ. Վ. 502;  
 Օզոլ Ա. 547;  
 Օժեգով Մ. Ի. 493;  
 Օլենովսկի Դ. Ա. 503, 542;  
 Օնոննոր 344;  
 Օման Մ. 346;  
 Օնոլան Գ. 398;  
 Օշանին Ի. Մ. 502, 541;  
 Օթահիլի Տ. Ֆ. 398;  
 Օլովկ Վ. Գ. 491;  
 Օսկուդ Ջ. է. 319, 331;  
 Օստին Ու. 392;  
 Օվզյանիկո-Կուլիկովսկի Դ. Ն. 21, 22,  
     35, 158, 160;  
 Օտտեն Հ. 390;  
 Օտտո Է. 201, 346, 361;  
 Օբրան Գ. 400;  
 Օբուղբակա Բ. Օ. 540, 547;
- Թրփինսկայա Վ. Կ. 495;  
 Յագարե Գ. Վ. 393;  
 Յալկ Հ. Մ. 192, 193, 293;  
 Յայստ Հ. 200;  
 Յայստ Ջ. 192, 399;  
 Յայզի Ա. 187;  
 Յանտ Գ. Գ. Մ. 239;  
 Յասմեր Մ. 184, 194;  
 Յելդին Ֆ. 195;  
 Յելման Ն. Ի. 502, 541;  
 Յելդի Ֆ. 392;  
 Յիզել է. 402;  
 Յիլին Ֆ. Գ. 490, 491, 505;  
 Յինկ Ֆ. 125, 126, 171, 173, 176,  
     178, 345;  
 Յիշեր-Յորգենսոն է. 254;  
 Յյոգելին Մ. 272, 287, 290, 304;  
 Յոգտ Հ. 392;  
 Յոյդ Հ. 204;  
 Յոն Վարտրուրդ Ա., տե՛ս Վարտրուրդ  
     Ա.;  
 Յոնադ Ի. 401;  
 Յուսեր Կ. 49—62, 64, 66, 95, 126,  
     153, 162, 165, 200, 201, 202,  
     347, 351, 368, 371, 473, 532;  
 Յորտոնասով Ֆ. Ֆ. 33, 154—160,  
     173, 184, 185, 223, 230, 256,  
     424, 425, 426, 473, 522;  
 Յուեգ 14;  
 Յորինգ Թ. 398, 399;  
 Յրանկ-Կամենեցկի Ի. Գ. 200;  
 Յրանկ Յ. 194;  
 Յրանկ Յ. 204;  
 Յրել Ա. 76, 142, 143, 144, 204;  
 Յրելդ Ջ. 23, 169;  
 Յրեգեր Ջ. Գ. 187;  
 Յրեյման Ա. Ա. 180, 495, 496, 538;  
 Յրենկել է. 172, 183, 393;  
 Յրիդրիխ Յ. 390, 400, 402;  
 Յրիզ Ջ. Կ. 288, 371;  
 Յրինգս Թ. 167, 403;  
 Յրիշ Վ. Մ. 429;  
 Յրիսկ Հ. 395;  
 Յուկ Օ. 26, 27, 200;  
 Յուրկ Ժ. 392;

## ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎ ԼԵԶՎԱՆՄԲԵՐԻ ՑԱՆԿ

- Արխազա-ադրգեյական լեզուներ 541,  
501:  
Արխազերեն 419, 437, 461:  
Ադրգեյերեն 419, 437:  
Ադրբեջաներեն 499:  
Ալբաներեն 187, 396:  
Ալգոնկինյան լեզուներ, տե՛ս Հնամե-  
րիկյան լեզուներ:  
Ալթայական (ալթայան) լեզուներ 400,  
401, 497, 498:  
Ալթայան լեզուներ, տե՛ս ալթայ-  
կան լեզուներ:  
Ալթայերեն 499:  
Ակադերեն 181, 542:  
Ամերիկյան բնիկների լեզուներ, տե՛ս  
ամերիկյան լեզուներ:  
Ամերիկյան լեզուներ 132, 197, 198,  
215, 269—270, 273, 343, 358,  
457, 488, 541—542:  
Ամերիկյան հնդկացինե-  
րի լեզուներ, տե՛ս ամերիկյան  
լեզուներ:  
Այնարերեն 503:  
Անատոլիական լեզուներ 396:  
Անգերեն 39, 40, 47, 57, 69, 111,  
148, 152, 193, 209, 240, 260,  
285, 289, 300, 303, 304, 306,  
308, 315, 370, 371, 399, 400,  
460, 461, 494, 534:  
Անգլիական բարբառներ 193:  
Աննամերեն, տե՛ս վյետնամերեն:  
Անտիլյան նեղուերի հոլանդերեն 194:  
Աշխարհաբար 513:
- Առաջավոր Ասիայի հին լեզուներ 402,  
500, 503:  
Ասիայի լեզուներ 457:  
Ասիանիկ լեզուներ, տե՛ս հին փոք-  
րասիական լեզուներ 402:  
Ավետարյի լեզու (ավեստերեն) 183,  
496:  
Ավստրալա-օվկիանյան լեզուներ 197,  
502, 541:  
Ավստրալիական բնիկների լեզուներ,  
տե՛ս ավստրալիական լեզուներ:  
Ավստրալիական (ավստրալիական բը-  
նիկների, Ավստրալիայի) լեզուներ  
139, 488:  
Ավստրալիայի լեզուներ, տե՛ս ավս-  
տրալիական լեզուներ:  
Արարերեն 70, 502, 542:  
Արանտա լեզու 467:  
Արևելագերմանական լեզուներ 192,  
193:  
Արևելալավոնական լեզուներ 185,  
394:  
Արևլյան կովկասյան լեզուներ 233:  
Արևմտասլավոնական լեզուներ 185,  
394:  
Աֆղաներեն (փուշտու) 183, 496:  
Աֆրիկյան լեզուներ 197, 502, 503,  
541, 542:  
Բալթիական լեզուներ 183, 393, 537:  
Բալթիկ-սլավոնական լեզուներ 183,  
383, 391, 393:

- «Բալկանյան» լեզվախումբ («լեզվամիություն») 233:
- Թաշկիրերեն 499:
- Թասկերեն 195, 196, 373, 437, 457:
- Թացբիա-կիստինյան (վեյնախյան) լեզուներ 501:
- Թելոռուսերեն 185, 490, 493, 494, 541:
- Թելուչերեն 495:
- Թիրմայի լեզուներ 196:
- Թրիտական լեզուներ 192:
- Թուղարերեն 148, 186, 536:
- Թուրքիծի խոսվածք 184:
- Թուրուչակի լեզու, տե՛ս վերշիկերեն:
- Գաելական լեզուներ 191:
- Գալլերեն 191:
- Գերմանական բարբառներ 399:
- Գերմանական լեզուներ 173, 192, 398, 399, 494, 531, 538:
- Գերմաներեն 70, 148, 183, 193, 211, 347, 348, 349, 370, 399, 400, 446, 461, 494, 534, 535:
- Գոթերեն 192, 399:
- Գուլգերեն 419:
- Գրաբար (տե՛ս և Հին հայերեն, դասական հայերեն) 187, 428:
- Դալմատերեն 191:
- Դակուտայի լեզու 131:
- Դաղստանի լեզուներ, տե՛ս դաղստանյան լեզուներ:
- Դաղստանյան լեզուներ 437, 501, 541:
- Դանիերեն 193:
- Դանուբյան (պելասգա-էտրուսկյան) լեզուներ 396:
- Դասական լեզուներ 118, 494:
- Դասական հայերեն (տե՛ս և գրաբար) 186:
- Դրավիդյան լեզուներ 196, 402:
- Եգիպտերեն 542:
- Եթովպական լեզուներ 502:
- Եկեղեցալավոներեն, տե՛ս Հին սլավոներեն:
- «Եվրասիական լեզվամիություն» 234:
- Եվրոպական լեզուներ 95, 368:
- Զուլու լեզու 503:
- Էլամերեն 437:
- Էսկիմոսա-այեռտյան լեզուներ 197:
- Էսկիմոսերեն 373:
- Էսկիմոսերենի շապինյան բարբառ 541:
- Էտրուսկա-հնդկրոպական նախալեզու 396:
- Էտրուսկերեն 378, 391, 396, 402, 437:
- Էրզյաներեն 497:
- Բարասարաներեն 419:
- Բաթարերեն 499, 516:
- Բաթերեն 495—496:
- Բալիշերեն 495:
- Բասմանիայի լեզուներ 139:
- Բյուրքական լեզուներ 195, 233, 401, 446, 461, 476, 497, 498, 499, 539, 540:
- Բոխարական լեզուներ (բուլշա-կարաշարյան լեզուներ, թոխարերեն A և B) 177, 180, 181, 182, 204, 376, 390, 391:
- Բոխարերեն A և B, տե՛ս թոխարական լեզուներ:
- Բրակա-փոյուգական լեզուներ 181, 187, 391:
- Բրակերեն 378, 391, 392:
- Բուրքերեն (օսմաներեն) 243:
- Բուրքմեներեն 499:
- Ժամանակակից անգլերեն 193:
- Ժամանակակից թուրքերեն (օսմաներեն) 498:
- Ժամանակակից թյուրքական լեզուներ 499:
- Ժամանակակից հայերեն 187:
- Ժամանակակից ոռմանական բարբառներ 164:
- Ժամանակակից ռուսաց գրական լեզու 537:

- Ժամանակակից** ռուսաց լեզու 156, 492, 493, 523, 524, 536:
- Ժողովրդական** լատիներեն 115, 190:
- Իրերա-կովկասյան** լեզուներ, տե՛ս կովկասյան լեզուներ:
- Իրերա-կովկասյան** ընտանիք (տե՛ս և կովկասյան լեզուներ) 500:
- Իլիթերեն** 391, 396:
- Իլիթիերական** լեզուներ 187, 396, 397:
- Իլիթիերական** լեզու, տե՛ս իլիթերեն:
- Իռլանդերեն** 362:
- Խապաներեն** 70, 190, 397, 494:
- Խտալական** լեզուներ 397:
- Խտալական-կելտական** լեզուներ 117, 181:
- Խտալերեն** 69, 70, 190, 398:
- Խրանական** լեզուներ 182, 393, 495, 496, 538:
- Լատիներեն** 70, 74, 115, 117, 164, 188, 189, 190, 397, 494, 538:
- Լատվիերեն** 183:
- Լեհերեն** 185, 536:
- Լիդիերեն** 389, 390:
- Լիկիերեն** 378, 389, 390:
- Լիտվական** բարբառներ 184:
- Լիտվիերեն** 183, 537:
- Լուվիերեն** 181, 378, 390:
- Խաթերեն**, տե՛ս նախախեթերեն:
- Խալդիերեն**, տե՛ս ուրարտերեն:
- Խակասերեն** 499:
- Խառն** (Հիբրիդային) լեզուներ 42:
- Խեթերեն** 117, 181, 182, 204, 376, 378, 381, 382, 389, 390, 391, 437:
- Խեթերեն** լեզու, տե՛ս խեթերեն:
- Խոտանսակերեն** 393:
- Խորեզմերեն** 496:
- Խուռ(ռ)ի** լեզու 181, 402:
- Խուռ(ռ)ի-միտաներեն**, տե՛ս խուռ(ռ)ի:
- Կարարդինա-շերեզերեն** 439:
- Կաշուրերեն** (պոմորյաներեն) 185, 186:
- Կատալաներեն** 191:
- Կարակալպակերեն** 498, 499:
- Կարաչարերեն** (թոխարերեն A) 180:
- Կարիերեն** 378:
- Կելտական** լեզվախմբեր 191:
- Կելտական** լեզուներ 118, 181, 191, 398:
- Կիրգիզերեն** 499:
- Կոմի** լեզու 419, 497:
- Կոյնե** (ստանդարտ լեզու) 479:
- Կովկասի** (կովկասյան) «Հարեթական» լեզուներ, տե՛ս կովկասյան լեզուներ:
- Կովկասյան** (իրերա-կովկասյան) լեզուներ (լեզվաընտանիք) 195, 196, 223, 232, 401, 457, 467, 488, 500, 501, 531, 540, 541:
- Կորեերեն** 195, 400, 401, 476, 498, 502, 541:
- Կրետե-միթենյան** հունական բարբառ 377:
- Կումիկերեն** 499:
- Հաբեթական** լեզվաճյուղ 437:
- Հարեթական** լեզուներ 139, 429, 436, 437, 446, 457:
- Հայ բարբառներ** 187, 497, 538, 539:
- Հայ-փոյուգական** լեզվախումբ 392:
- Հայերեն** (Հայոց լեզու) 117, 181, 186, 187, 199, 233, 237, 378, 390, 391, 392, 446, 496, 538, 544:
- Հայկական** լեզու, տե՛ս Հայերեն:
- Հայոց լեզու, տե՛ս Հայերեն:**
- Հարավային** կովկասյան լեզուներ 187:
- Հարավ-արևելյան** լեզուներ 402:
- Հարավավոնական** լեզուներ 186, 394:
- Հառւսա** լեզու 503, 542:
- Հեռավոր արևելյան** լեզուներ 461:
- Հիերոգլիֆյան** խեթերեն 378, 390:
- Հին անգլերեն** 152, 193:
- Հին բարելերեն** 115:

- Հին բուզղարերեն (հին եկեղեցաւալավոներեն. տե՛ս նաև հին սլավոներեն) 185:  
 Հին եգիպտերեն 115, 502:  
 Հին եկեղեցաւալավոներեն, տե՛ս հին բուզղարերեն:  
 Հին իտալական լեզուներ 189:  
 Հին հայերեն (տե՛ս և գրաբար) 186, 428:  
 Հին հնդկական լեզուներ 392:  
 Հին հնդկերեն 376, 383, 392:  
 Հին հունարեն 376, 383, 538:  
 Հին պարսկերեն 183, 393:  
 Հին պերմերեն 497:  
 Հին պրուսերեն 183, 538:  
 Հին ռուսերեն 492, 537, 545:  
 Հին սաքսոներեն 193, 194:  
 Հին սլավոներեն 184, 185, 394, 492, 536:  
 Հին սկանդինավերեն 193:  
 Հին վերին գերմաներեն 193:  
 Հին փոքրասիական հնդկրոպական լեզուներ (տե՛ս և անտառլիական լեզուներ) 402, 542:  
 Հին ֆրիզերեն 194:  
 Հյուսիսային գերմանական (սկանդինավյան) լեզուներ 192, 193, 399:  
 Հյուսիս-արևմտյան կովկասյան լեզուներ 401:  
 Հյուսիսային Ամերիկայի հնդկացիների լեզուներ 462:  
 Հյուսիսային կովկասյան լեզուներ 196, 259, 401:  
 Հնամերիկյան (ալգոնկինյան) լեզուներ 139:  
 Հնասիական լեզուներ, տե՛ս պալեոասիական լեզուներ:  
 Հնդա-խեթական լեզու 389:  
 Հնդկրոպական բարբառներ 65, 108, 377—378:  
 Հնդկրոպական լեզվաբնտանիք 377:  
 Հնդկրոպական լեզվախմբեր (լեզվաճյուղեր) 172, 180, 489:  
 Հնդկրոպական լեզվաճյուղեր, տե՛ս հնդկրոպական լեզվամբեր:  
 Հնդկրոպական լեզվի արևմտակենտրոնական բարբառներ (կելտական, իտալական, վենետական) 378:  
 Հնդկրոպական լեզվի բունկենտրոնական բարբառներ (հունական, թրակյան և հնդիրանական) 378:  
 Հնդկրոպական լեզվի կենտրոնական բարբառախումբ 378:  
 Հնդկրոպական լեզվի հարավային բարբառախումբ (պելասգերեն, լիկիերեն, լիդիերեն, լուսերեն և խեթերեն) 378:  
 Հնդկրոպական լեզվի հյուսիսային բարբառախումբ (բալթիկ-սլավոնականական) 377—378:  
 Հնդկրոպական լեզու (հիմնալեզու, նախալեզու, մայր-լեզու, հնդկրոպակերեն) 65, 69, 115, 117, 178, 179, 181, 376, 377, 379, 384, 388:  
 Հնդկրոպական լեզուներ 65, 69, 74, 77, 108, 109, 115, 116, 156, 172, 173, 175, 176, 178, 179, 180, 182, 194, 195, 204, 232, 269, 352, 372, 373, 375, 376, 377, 379, 381—383, 389, 390, 400, 401, 404, 436, 437, 446, 488, 489, 535, 536, 537, 545:  
 Հնդկրոպական հիմնալեզու, տե՛ս հընդերոպական լեզու:  
 Հնդկրոպական մայր-լեզու, տե՛ս հընդերոպական լեզու:  
 Հնդկրոպական նախալեզու, տե՛ս հընդերոպական լեզու:  
 Հնդկրոպական նոր լեզուներ 375:  
 Հնդկրոպակերեն, տե՛ս հնդկրոպական լեզու:  
 Հնդիրանական լեզուներ 182, 392, 393, 495, 538:  
 Հնդկական լեզուներ 182, 196, 495:  
 Հոլլանդերեն (նիդերլանդերեն) 194:

- Հոպի լեզու 358;  
 Հոտենտոտա-բուշմենյան լեզուներ 139;  
 Հրո երկրի լեզուներ 139;  
 Հունական բարբառներ 189;  
 Հունական լեզու, տե՛ս Հունարեն;  
 Հունարեն 70, 187, 188, 208, 377,  
     378, 391, 395, 396, 400, 494;  
  
 Դագախերեն 498, 499;  
 Դպտերեն 502;  
  
 Ճապոներեն 195, 400, 401, 437, 476,  
     502, 541;  
  
 Մակեդոներեն 189;  
 Մանիքեական սոգդերեն 393;  
 Մարիերեն 516;  
 Մենգրելա-ճաներեն 437;  
 Մենգրելա-ճաներեն 500;  
 Մեռած իրանական լեզուներ 495, 496;  
 Միջագետքի հին լեզուներ 503, 542;  
 Միջերկրածովլքի ոչ-ճանդերոպական լե-  
     զուներ 500;  
 «Միջին ելյուպական լեզվամիություն»  
     233;  
 Միջին հայերեն 187;  
 Միջին հնդկական լեզուներ 182, 392;  
 Միջին պարսկերեն 496;  
 Մոնղոլական լեզուներ 195, 446, 497,  
     499, 539, 540;  
 Մոն-բմեր լեզուներ (լեզվարնտանիք)  
     196;  
 Մոնդա լեզուներ 402;  
  
 Յակուտերեն 499;  
 Յուրագիրյան լեզուներ 401;  
  
 Նախագերմանական նախալեզու 376;  
 Նախագերմաներեն 174, 192;  
 Նախախեթերեն (պրոտոխեթերեն, խա-  
     թերեն) 181, 389;  
 Նախաճնդերոպերեն 389;  
 Նախահնդկական լեզուներ 392;  
 Նախահունական լեզուներ 395, 396;  
 Նախահունարեն 377, 378, 396;
- Նախասլավոնական նախալեզու 376;  
 Նախասլավոներեն 184;  
 Նանայերեն 419;  
 Նեգրական Հոլլանդերեն 194;  
 Նիդերլանդերեն, տե՛ս Հոլլանդերեն-  
 Նողայերեն 499;  
 Նոյական նախալեզու 436;  
 «Նոստրատիկ լեզուներ» 179;  
 Նոր իտալական լեզուներ 397;  
 Նոր հնդկական լեզուներ 182, 392,  
     495, 538;  
 Նոր պարսկերեն 496;  
  
 Շորերեն 499;  
 Շումերա-ակիադական լեզուներ 195;  
 Շումերերեն 402, 468;  
  
 Չեխերեն 536;  
 Չինարեն 129, 131, 156, 444, 476,  
     502, 541;  
 Չին-սիբերական լեզուներ 196, 402,  
     502, 541;  
 Չուկուտերեն 419;  
 Չուվաշերեն 517;  
  
 Պալայերեն 181, 390;  
 Պալեռասիական (հնասիական) լեզու-  
     ներ 215, 223, 459, 461, 462, 488,  
     501, 502, 541;  
 Պահակերեն 183;  
 Պամիրի իրանական լեզուներ 495;  
 Պապուաների լեզու 139;  
 Պարսկական բարբառներ 183;  
 Պարսկերեն 496;  
 Պելասգա-էտրուսկյան լեզուներ, տե՛ս  
     դանուրյան լեզուներ;  
 Պելասգերեն 378, 437;  
 Պոլարերեն 186;  
 Պոմորյաներեն, տե՛ս Կաշուրերեն;  
 Պորտուգալերեն 190, 398;  
 Պրոտոխեթերեն, տե՛ս նախախեթերեն-  
  
 Ռետո-ռոմաներեն 191;  
 Ռոմանա-գերմանական լեզուներ 494,  
     538;

- Թումանական լեզուներ** 51, 63, 115,  
190, 191, 397, 454, 494, 538,  
548:
- Թումիներեն** 70, 191, 398:
- Թուսական բարբառներ** 491:
- Թուսաց գրական լեզու** 491, 492, 522,  
545:
- Թուսաց գրավոր լեզու** 492:
- Թուսաց լեզու, տե՛ս ուսաերեն:**
- Թուսերեն (ուսաց լեզու)** 32, 70, 86,  
157, 158, 183, 185, 199, 227,  
234, 315, 394, 461, 476, 490,  
492, 493, 499, 523, 526, 533,  
534, 536, 537, 541, 542, 546:
- Սամոյեդական լեզուներ** 139:
- Սանսկրիտ** 117, 180, 495, 538:
- Սարդիներեն** 191:
- Սևմական լեզուներ** 178, 179, 194,  
232, 400, 436, 437, 446, 461:
- Սևմարամական լեզուներ** 179, 194,  
373, 400, 502, 541, 542:
- Սեմիտերեն** 179:
- Սերբոխորվաթերեն** 186:
- Սլավոնական լեզուներ** 181, 184, 185,  
221, 393, 454, 489, 490, 536,  
537:
- Սլավոներեն** 70, 186:
- Սլովիներեն** 185:
- Սկանդինավյան լեզուներ, տե՛ս Հյու-  
սիսային գերմանական լեզուներ:**
- Սկոոթերեն** 496:
- Սոգդերեն** 183, 496:
- Սվաներեն** 437, 500:
- Ստորին գերմանական բարբառներ**  
194:
- Ստորին գերմաներեն** 194:
- Սուսահիլ լեզու** 503, 542:
- Սուտանա-գվինեյան լեզուներ** 197:
- Վեդայական հնդկերեն** 182:
- Վեյնախյան լեզուներ, տե՛ս բացրիա-  
կիսահինյան լեզուներ:**
- Վենետերեն** 396, 397:
- Վենետյան լեզու, տե՛ս վենետերեն:**
- Վերշիկերեն (բուրուշակի)** 402, 437:
- Վյետնամերեն (աննամերեն)** 502:
- Վրացերեն** 436, 437, 500, 501, 535,  
541:
- Տաղիկերեն** 495:
- Տունգուսա-մանջուրական լեզուներ**  
195, 497, 499, 539, 540:
- Տունգուսերեն** 419:
- Ուգմուրտերեն** 497, 516:
- Ուգրեկերեն** 476, 499:
- Ուկրաիներեն** 185, 490, 493:
- Ուրալա-ալթայան լեզուներ** 179, 195,  
232, 233, 400, 539:
- Ուրալյան (ֆինա-ուգրական) լեզու-  
ներ** 400, 401:
- Ուրարտերեն (խալդերեն)** 437, 503,  
542:
- Փոքր Ասիայի հին լեզուներ** 402:
- Փայուղերեն** 187, 378, 390, 391, 392:
- Փուշտու, տե՛ս աֆղաներեն:**
- Քամական լեզուներ** 194, 446:
- Քամա-սեմական լեզուներ, տե՛ս սե-  
մա-քամական լեզուներ:**
- Քարթվելական լեզուներ** 500:
- Քրդերեն** 495:
- Քուչա-կարաշարյան լեզուներ, տե՛ս  
Բոխարական լեզուներ:**
- Քուչերեն (Բոխարերեն B)** 180:
- Օսերեն** 495, 496:
- Օսկ-ումբրյան լեզուներ** 70, 190, 397:
- Օսկա-ումբրերեն, տե՛ս օսկ-ումբրյան  
լեզուներ:**
- Օսմաներեն, տե՛ս թուրքերեն:**
- Զիննա-ուգրական լեզվարնտանիք, տե՛ս  
ֆիննա-ուգրական լեզուներ:**

**Յիննա-ուգրական լեզուներ** (*լեզվաբնագիր*) 195, 223, 373, 377, 400, 401, 446, 497, 539:

**Յիննա-ուգրա-սամոյեդական լեզուներ** 497, 539:

**Յիննական լեզուներ** 232:

**Յիններեն** 400, 497:

**Յրանկերեն** 70:

**Յրանսերեն** 51, 60, 61, 69, 70, 86., 95, 190, 245, 370, 397, 400, 460, 461, 494, 534:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գ.

### ՍԻՍՏԵՄԱՅԻՆ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆ

(Նորագույն լեզվաբանություն, XX դար)

#### ԱՐԱՋԻՆ ՀԱՏՎԱԾ

### ՆԱԽԱՍՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՋԻՆ ԵԽԹԱՇՐՋԱՆ  
(1900—1920-ական թվականներ)

Եջ

Ֆունկցիոնալիստական սինխրոնիզմ

Ներածական տեղեկություններ .

7

Ենթաշրջանի լեզվաբանական ուղղությունները և նրանց

7

ձևագործման նախաղրայներն ու պայմանները

19

Լեզվաբանական ուսմունքների զարգացման էտապները

20

1. Լեզվաբանական ուղղություններ և կոնցեպցիաներ

20

1. Պահիողիզմ և պահիոֆիզիոլոգիզմ

20

Հնդհանուր տեղեկություններ

20

Անտոն Մարտի

23

Յա. Վան-Գիննեկեն

27

Ա. Ա. Շախմատով

31

2. Լոգիզմ

34

Հնդհանուր տեղեկություններ

34

Օ. Եսպերսեն

38

? Էսթետիզմ

48

Հնդհանուր տեղեկություններ. Բ. Կրոչե

48

ա) Իդեալիստական նեոՓիլոլոգիա

50

Կարլ Ֆուլեր

50

<b>Հեռ Շպիցեր</b>	<b>61</b>
բ) Նեոլինգվիստիկա (տարածական լեզվաբանություն)	62
Հնդհանուր տեղեկություններ	62
Մ. Բարտոլի, Զ. Բնշետոնի, Զ. Վիդոսի, Զ. Բոնֆանտե,	
Վ. Պիգանի	62
<b>4. Սոցիոլոգիզմ</b>	<b>73</b>
Հնդհանուր տեղեկություններ	73
ա) Ժնեկի դպրոց	77
Ֆերդինանդ դը-Սոսյուր	77
Շառլ Բալի	93
Ալբեր Սելեն	99
բ) Փարիզի դպրոց	108
Անտուան Մեյե	108
Ժակ Վանգրիես	118
Մորիս Գրամմոն	123
<b>5. Կուլտուր-էրնոլոգիզմ</b>	<b>123</b>
Հնդհանուր տեղեկություններ	123
Է. Կասսիբեր	127
Ֆ. Մաութներ	131
Էդուարդ Մեպիր	131
Վ. Շմիդտը և նրա «կուլտուրական շրջանների» ուսմունքը	137
<b>6. Ֆունկցիոնալիզմ</b>	<b>141</b>
ա) Շվեյցարական ֆունկցիոնալիզմ	141
Հնդհանուր տեղեկություններ	141
Անրի Ֆրեյ	143
բ) Գերմանական ֆունկցիոնալիզմ	144
Հնդհանուր տեղեկություններ	144
Վ. Հոռն	149
Ֆորմալիզմ	154
Հնդհանուր տեղեկություններ	154
Ա. Մ. Գեշկովսկի	157
<b>II. Լեզվաբանական աշխատանքի առանձին բնագավառներ</b>	<b>161</b>
1. Ընդհանուր լեզվաբանություն	161
Ներածական տեղեկություններ	161
Լեզվաբանական աշխարհագրություն (բարբառագրություն)	
Ժիլյերոն, Վոնդե	163
Շիրերի և բառերի պրոբլեմը	167
Իմաստարանություն	169
Լեզուների ընդհանուր դասակարգմանը նվիրված աշխա-	
տություններ	171
2. Հեղեկոպական լեզվաբանություն	172
Հնդհանուր տեղեկություններ	172
ա) Հնդկարոպականության ընդհանուր պրոբլեմները	172
Գենետիկական պրոբլեմների առաջքաշումը. հնդկարոպա-	
կան լեզվակառուցվածքի արխայիկ շերտերի պրոբ-	
լեմը. Հերման Հիրտ	172

Հնդկրոպական-սեմական ցեղակցության պրոբլեմը, «Կո- կորդայինների հիպոթեզի» առաջբաշումը. Հ. Մյոլ- լեր, Ա. Կյունի	178
<b>Շարահյուսություն</b>	179
Դ) Հնդկրոպական առանձին լեզուների և լեզվախմբերի ու- սումնասիրությունը	180
«Թոխարական» լեզուների հայտնագործումը Խեթական տեքստերի հայտնագործումն ու վերծանումը.	180
Բ. Հոռոգնի	181
Հնդիրանական լեզուներ	182
Բալթիկ-սլավոնական լեզուներ	183
Հայերեն	186
Թրակա-փոյուգական լեզուներ	187
Իլլիրիական լեզուներ	187
Ալբաներեն	187
Հունարեն	187
Հ) Բաւական լեզուներ	189
Կելտական լեզուներ	191
Գերմանական լեզուներ	192
3. Աշ-հնդիրոպական լեզուների ուսումնասիրությունը	194
Սեմա-քամական լեզուներ	194
«Աւրալա-ալթայան» լեզուներ, ճապոներեն, կորեերեն Կովկասյան լեզուներ. բասկերեն	195
Չին-արեբթական, դրավիդյան, մոնղոմեր լեզուներ	196
Ամերիկյան, ավստրալո-օվկիանյան և աֆրիկյան լեզուներ	197
Գրականություն առաջին ենթաշրջանի գերաբերյալ	199
<b>ԵՐԿՐՈՐԴ ԵՆԹԱԾՐՁԱՆ</b>	
(1920-ական թվականների գերշերից մինչև այժմ)	
Կառուցվածքային (ստրուկտուրային) դելիմիտացիոնիզմ	
Ներածական տեղեկություններ .	203
Ենթաշրջանի լեզվաբանական հոսանքների ձևագործան նախագրյալները և պայմանները	203
Լեզվաբանական ուսմունքների զարգացման էտապները	212
1. Լեզվաբանական ուղղություններ և կոնցեպցիաներ	212
1. Ստրուկտուրալիզմ (Ենթատրուկտուրալիստիկա կամ «միկրո- լինգվիստիկա»՝ իմաննետ լեզվաբանություն)	212
(Հնդկանուր տեղեկություններ	212
ա) Պրագայի լեզվաբանական դպրոցի ֆունկցիոնալ ստրուկ- տուրալիզմը	214
Պրագայի լեզվաբանական խմբակի ձևագործումը	214
Պրագայի լեզվաբանական խմբակի թեզիսները	216
Վ. Մատեղիսուս	220
Ն. Մ. Տրուբեցոյ	222

<b>Ա. Կարցեսկի</b>	<b>234</b>
<b>Բ. Ցակորսոն</b>	<b>236</b>
<b>Վ. Մկալիշկա</b>	<b>242</b>
<b>բ) Կոպենհագենյան ստրուկտուրալիստական ընդհանրական քերականությունը և զլուսեմատիկան (հարաբերությունների լեզվաբանությունը)</b>	<b>243</b>
Կոպենհագենի լեզվաբանական խմբակի ձևավորումը	243
Վ. Բրյոնդալ	244
Լ. Ելմալի	253
<b>դ) Ամերիկյան ամենտալիստական նկարագրական (գեսկրիպտիվ) լեզվաբանությանը</b>	<b>269</b>
Ամերիկյան նկարագրական լեզվաբանության ձևավորումը	269
Մենտալիստները և մեխանիստները (ամենտալիստները)	
ամերիկյան լեզվաբանության մեջ	271
a) <b>Մեխանիզմը (Փիզիկալիզմ)</b>	<b>272</b>
Լ. Բլումֆիլդ	272
b) <b>Ֆորմալ-անալիտիզմ</b>	<b>284</b>
Ֆորմալ-անալիտիզմի ուղղության ձևավորումը	284
Զ. Հառիս	292
Զ. Հոքետ	297
Զ. Թրեյջեր, Բ. Բլում, Հ. Սմիթ	300
Սարուկտուրալիստական գլխավոր հոսանքների ընդհանրություններն ու տարբերությունները	300
<b>2. Լեզվաբանական միջինիցիպիլիններ (արտաստրուկտուրալիստիկա կամ «մակրոլինգվիստիկա»)</b>	<b>311</b>
Ներածական տեղեկություններ	311
ա) Կիրառական լեզվաբանություն. տեխնոլինգվիստիկա	313
Կիբեռունետիկան, ինֆորմացիայի տեսությունը և լեզվաբանությունը. մեքենայական թարգմանության պրոբլեմը	313
բ) Լեզվի հոգերանություն (պսիխոլինգվիստիկա)	318
Ընդհանուր պեղեկություններ	318
Կ. Բյուլերի ռացիոնալիստական պսիխոագսէմատիզմը	319
Հազորդման տեսությունը և լեզվահոգեբանական (պսիխոլինգվիստիկական) պրոբլեմները	330
շ) Էթնոլինգվիստիկա	343
Ներածական տեղեկություններ	343
ա) Եղբողական (գերմանական) նեոնումբուլգատական էթնոլինգվիստիկան	344
Ընդհանուր տեղեկություններ	344
Յ. Լ. Վայսգերբեր	347
Վ. Պորցիդ	352
Ցուսա Տըիբը և նրա «իմաստային գաշտի» ուսմունքը	354
б) Ամերիկյան էթնոլինգվիստիկան (ազգագրական լեզվաբանությունը)	357

<b>Հնդհանուր տեղեկություններ</b>	<b>357</b>
<b>Բ. Ուրբֆ</b>	<b>358</b>
<b>II. Լեզվաբանական աշխատանքի առանձին բնագավառներ</b>	<b>359</b>
<b>1. Ընդհանուր լեզվաբանություն</b>	<b>359</b>
Ներածական տեղեկություններ	359
Սուբստրատի պրոբլեմը	361
Հնչունարանություն և հնչույթաբանություն	362
Բառագիտություն և իմաստաբանություն	363
Շարահյուսություն	369
Ոճաբանություն	371
Հնդհանուր դասակարգողական փորձեր	372
<b>2. Հեղեկրոպական լեզվաբանություն</b>	<b>372</b>
Ներածական դիտողություններ	372
ա) Հնդհանուր պրոբլեմներ	374
Լեզվաբանական հնէարանություն	374
Հնդկրոպական լեզվամիասնության ժամանակի և տարածական բաշխման պրոբլեմները. Վ. Գեղրզիկ	375
Հնդկրոպական լեզվակառուցվածքի արխայիկ շերտերի պրոբլեմը. ստրուկտուրալ խրոնոլոգիզմ. «Կոկորդայինների հիպոթեզը». Ցու. Կուրիլովիչ, Ե. Բենգենիստ, Ֆ. Շպեխտ	378
բ) Առանձին լեզուների և լեզվախմբերի ուսումնասիրությունը	389
Խեթական պրոբլեմը. լիկիերեն և լիդիերեն	389
Թոխարական պրոբլեմը	390
Թրակա-փոյուղական լեզուներ. հայերեն. թրակերենի պրոբլեմը	391
Հնդիրանական լեզուներ	392
Բալթիկ-սլավոնական լեզուներ	393
Հունարեն	395
Ալբաներեն. իլիրիական լեզուներ	396
Իտալական լեզուներ	397
Կելտական լեզուներ	398
Գերմանական լեզուներ	398
<b>3. Ոչ-հնդկրոպական լեզուների ուսումնասիրությունը</b>	<b>400</b>
Սեմա-քամական լեզուներ	400
«Ռւրալա-ալթայան» լեզուներ, ճապոներեն, կորեերեն	400
Կովկասյան լեզուներ	401
Առաջավոր Ասիայի հին լեզուներ	402
Չին-տիբեթական, դրավիդյան, բուրուշակի լեզուներ	402
Դրականություն երկրորդ ենթաշրջանի գերաբերյալ	403

## ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

### ՍՈՎԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

<p>Ներածական տեղեկություններ</p> <p>Սովետական լեզվաբանության ձևավորման նախադրյալներն ու պայմանները. Մարքսը, Էնգելսը, Լենինը և լեզվի հարցերը</p> <p>Սովետական լեզվաբանության զարգացման հիմնական էտապները</p> <p>Լեզվաբանական աշխատանքի բնույթն ու տիպերը. սովետական լեզվաբանության գործնական ու տեսական խնդիրները</p> <p>Լեզվաբանության վիճակը սովետական կարգերի գոյության սկզբնական շրջանում</p>	<p>407</p> <p>407</p> <p>418</p> <p>418</p> <p>424</p>
<p>«Լեզվի նոր ուսմունքի» ձևավորման և տիրապետության էտապ (1924—1950 թ.)</p>	
<p>I. Լեզվաբանական կոնցեպցիաներ—լեզվական երևույթների դիալեկտիկա-մատերիալիստական մեկնաբանության տարբեր փորձեր</p>	
<p>1. Վուլգար մատերիալիստական սոցիոլոգիզմ («լեզվի նոր ուսմունք»)</p> <p>«Լեզվի նոր ուսմունքի» ձևավորման նախադրյալներն ու պայմանները</p> <p>Ն. Յառ. Մառ</p> <p>Ներածական ընդհանուր տեղեկություններ Ն. Յառ. Մառի «Հետերզների գործունեության մասին»</p> <p>Մտադիլ-շարահյուսական տիպոլոգիայի և քերականության գլխավոր հարցերը Ի. Վ. Մեշչանինովի,</p> <p>Ս. Դ. Կացնելսոնի, Ա. Գ. Ռիֆտինի աշխատություններում</p>	<p>428</p> <p>428</p> <p>436</p> <p>456</p>
<p>2. Այլ կոնցեպցիաներ</p> <p>Ընդհանուր տեղեկություններ</p> <p>Լ. Վ. Շչերբա</p> <p>Ե. Դ. Պոլիվանով</p>	<p>468</p> <p>468</p> <p>473</p> <p>476</p>
<p>II. Լեզվաբանական աշխատանքի առանձին բնագավառներ</p>	
<p>1. Բնդիանուր լեզվաբանություն</p> <p>Ներածական տեղեկություններ</p> <p>Հնչույթի ուսմունքը</p> <p>Մինագմայի (շարույթի) ուսմունքը</p>	<p>482</p> <p>482</p> <p>483</p> <p>486</p>
<p>2. Հնդկաբանական լեզուների ուսումնասիրությունը</p> <p>Ներածական տեղեկություններ</p> <p>Ալավոնական լեզուներ</p>	<p>488</p> <p>488</p> <p>490</p>

<b>Ծովանագերմանական լեզուներ</b>	<b>494</b>
<b>Դասական լեզուներ</b>	<b>494</b>
<b>Հնդիրանական լեզուներ</b>	<b>495</b>
<b>Հայերեն</b>	<b>496</b>
<b>3. Ոչ-հնդիրոպական լեզուների ուսումնասիրությունը</b>	<b>497</b>
<b>Ֆիննա-ուզբրա-սամոյեդական լեզուներ</b>	<b>497</b>
<b>«Ալթայան» (թյուրքական, մոնղոլական, տունգուսա-մանջուրական) լեզուներ</b>	<b>497</b>
<b>Կովկասյան լեզուներ</b>	<b>500</b>
<b>Պայեռասիրական լեզուներ</b>	<b>501</b>
<b>Չին-տիբեթական լեզուներ. ճապոներեն, կորեերեն</b>	<b>502</b>
<b>Սիմա-քամական, աֆրիկյան և ավստրալա-օվկիանյան լեզուներ</b>	<b>502</b>
<b>Առաջավոր Ասիայի հին լեզուներ</b>	<b>503</b>



**Արդի էտապ  
(1950 թ. մինչև մեր օրերը)**

<b>I. Վուլգար մատերիալիստական սոցիոլոգիզմի հաղբահարումը և հետեւղական մարքսիստական դիալեկտիկա-մատերիալիստական լեզվաբանական կոնցեպցիայի արմատավորումը</b>	<b>503</b>
<b>Հնդհանուր տեղեկություններ. «Պրագտայի» 1950 թ. դիւ-կուսիան լեզվաբանական հարցերի շուրջը. սովետական լեզվաբանության վիճակը դիսկուսիայից հետո</b>	<b>503</b>
<b>Վ. Վ. Վինոգրադով</b>	<b>522</b>
<b>Մ. Ի. Միքոնիցկի</b>	<b>526</b>
<b>Ա. Զիբորավա</b>	<b>531</b>
<b>II. Լեզվաբանական աշխատանքի առանձին բնագավառներ</b>	<b>533</b>
<b>1. Ընդհանուր լեզվաբանություն</b>	<b>533</b>
<b>Ներածական տեղեկություններ</b>	<b>533</b>
<b>Կիրառական լեզվաբանություն. մեքենայական թարգմա-նության հարցը</b>	<b>534</b>
<b>Հնչյունարանություն և հնչույթարանություն</b>	<b>534</b>
<b>2. Հնդկրոպական լեզուների ուսումնասիրությունը</b>	<b>535</b>
<b>Ներածական դիտողություններ</b>	<b>535</b>
<b>Սլավոնական լեզուներ</b>	<b>536</b>
<b>Այլ հնդկրոպական լեզուներ</b>	<b>537</b>
<b>3. Ոչ-հնդիրոպական լեզուների ուսումնասիրությունը</b>	<b>539</b>
<b>Ֆիննա-ուզբրա-սամոյեդական, թյուրքական, մոնղոլական և տունգուսա-մանջուրական լեզուներ</b>	<b>539</b>
<b>Կովկասյան լեզուներ</b>	<b>540</b>
<b>Պայեռասիրական լեզուներ</b>	<b>541</b>
<b>Չին-տիբեթական լեզուներ. ճապոներեն, կորեերեն</b>	<b>542</b>

<b>Սեմա-քամական,</b>	<b>աֆրիկյան,</b>	<b>ավստրալա-օվկիանյան,</b>			
ամերիկյան	հնդիկների	լեզուներ	<b>541</b>		
<b>Առաջավոր</b>	<b>Ասիայի</b>	<b>հին լեզուներ</b>	<b>542</b>		
<b>Դրականություն</b>	<b>սովետական</b>	<b>լեզվաբանության վերաբերյալ</b>	<b>543</b>		
<b>Համառոտագրությունների</b>	<b>ցանկ</b>		<b>549</b>		
<b>Աճճանութեների</b>	<b>ցանկ</b>		<b>552</b>		
<b>Լեզուների</b>	<b>և</b>	<b>լեզվախմբերի ցանկ</b>	<b>557</b>		
<b>I</b>	<b>և</b>	<b>II հատորների</b>	<b>բովանդակությունը</b>	<b>ռուսերեն</b>	<b>582</b>

<b>Թումանա-գերմանական լեզուներ</b>	<b>494</b>
<b>Դասական լեզուներ</b>	<b>494</b>
<b>Հնդիրանական լեզուներ</b>	<b>495</b>
<b>Հայերեն</b>	<b>496</b>
<b>3. Ոչ-հնդիրոպական լեզուների ուսումնասիրությունը</b>	<b>497</b>
<b>Ֆիննա-ռուզբա-սամոյեդական լեզուներ</b>	<b>497</b>
<b>«Ալթայան» (թյուրքական, մոնղոլական, տունգուսա-մանջուրական) լեզուներ</b>	<b>497</b>
<b>Կովկասյան լեզուներ</b>	<b>500</b>
<b>Պալեոասիրական լեզուներ</b>	<b>501</b>
<b>Չին-տիբեթական լեզուներ. ճապոներեն, կորեերեն</b>	<b>502</b>
<b>Սեմա-քամական, աֆրիկյան և ավստրալա-օվկիանյան լեզուներ</b>	<b>502</b>
<b>Առաջավոր Ասիայի հին լեզուներ</b>	<b>503</b>
 Արդի էտապ (1950 թ. մինչև մեր օրերը)	
<b>I. Վուլգար մատերիալիստական սոցիոլոգիզմի հաղբանարումը և հետեւ-վողական մարքսիստական դիալեկտիկա-մատերիալիստական լեզվաբանական կոնցեպցիայի արմատավորումը</b>	<b>503</b>
<b>Հնդհանուր տեղեկություններ. «Պրագմայի» 1950 թ. դիս-կուսիան լեզվաբանական հարցերի շուրջը. սովետական լեզվաբանության վիճակը դիսկուսիայից հետո</b>	<b>503</b>
<b>Վ. Վ. Վինոգրավով</b>	<b>522</b>
<b>Մ. Ի. Միկոնիցկի</b>	<b>526</b>
<b>Ա. Զիբորավագ</b>	<b>531</b>
<b>II. Լեզվաբանական աշխատանքի առանձին բնագավառներ</b>	<b>533</b>
<b>1. Ընդհանուր լեզվաբանություն</b>	<b>533</b>
<b>Ներածական տեղեկություններ</b>	<b>533</b>
<b>Կիրառական լեզվաբանություն. մեքենայական թարգմա-նության հարցը</b>	<b>534</b>
<b>Հնչյունաբանություն և հնչույթաբանություն</b>	<b>534</b>
<b>2. Հեղերոպական լեզուների ուսումնասիրությունը</b>	<b>535</b>
<b>Ներածական դիտողություններ</b>	<b>535</b>
<b>Սլավոնական լեզուներ</b>	<b>536</b>
<b>Այլ հնդկոպական լեզուներ</b>	<b>537</b>
<b>3. Ոչ-հնդիրոպական լեզուների ուսումնասիրությունը</b>	<b>538</b>
<b>Ֆիննա-ռուզբա-սամոյեդական, թյուրքական, մոնղոլական և տունգուսա-մանջուրական լեզուներ</b>	<b>538</b>
<b>Կովկասյան լեզուներ</b>	<b>540</b>
<b>Պալեոասիրական լեզուներ</b>	<b>541</b>
<b>Չին-տիբեթական լեզուներ. ճապոներեն, կորեերեն</b>	<b>542</b>

<b>Սեմա-քամական, աֆրիկյան, ավստրալա-օվկիանյան,</b>	<b>541</b>
ամերիկյան հնդիկների լեզուներ	542
<b>Առաջավոր Ասիայի հին լեզուներ</b>	<b>543</b>
<b>Համառոտագրությունների ցանկ</b>	<b>549</b>
<b>Աճճանութեների ցանկ</b>	<b>552</b>
<b>Լեզուների և լեզվախմբերի ցանկ</b>	<b>567</b>
<b>Է և Խ հատորների բոլորնակությունը ռուսերեն</b>	<b>582</b>

---

## ОГЛАВЛЕНИЕ

### I ТОМ

#### *Введение*

Стр.-

<b>1. Краткий обзор историографии языкоznания</b>	VII
История языкоznания и вопросы ее изучения	VII
Работы по общей истории языкоznания	VII
Работы по отдельным периодам истории языкоznания	XII
Вопросы истории языкоznания в общеязыковедческих работах и пособиях	XIV
Работы по истории частных языкоznаний	XV
Монографии и статьи по отдельным вопросам истории языкоznания	XVII
<b>2. Вопросы периодизации истории языкоznания</b>	XVIII
Традиционная периодизация истории языкоznания	XVIII
. Принципы периодизации истории языкоznания в настоящей работе	XX
Характерные черты трех периодов истории языкоznания	XXX
<b>3. Доязыковедческие представления человечества о языке</b>	XXXVII
Представления о языке в устном народном творчестве	XXXVII
Мифы о происхождении языка	XXXVIII
Мифы о происхождении многообразия языков и представления об их взаимоотношении .	XL
Представления о „языке“ („языках“) животных и его отношении к человеческому языку	XLIII
Представления о сущности, ролях и свойствах языка	XLV
Представления о взаимоотношении вещи и имени	XLV
Представления о взаимоотношении слова-названия и его значения. Ранние попытки этимологии	XLVI

# А

## ПЕРИОД ФОРМИРОВАНИЯ СТАТИЧЕСКОГО АНАЛИТИЧЕСКОГО ЯЗЫКОЗНАНИЯ

**(Старое языкознание—с возникновения языковедческих  
знаний до конца XVIII в.)**

### ПЕРВЫЙ ПОДПЕРИОД (Древние века)

#### *Апостериористический изоляционизм*

<b>Вводные замечания</b>	<b>3</b>
Предпосылки и условия возникновения самостоятель- ных языковедческих центров	3
Этапы развития языковедческих учений	5
Характер и виды языковедческой работы	5
<b>I. Египетское языкознание</b>	<b>8</b>
1. Общие сведения	8
Предпосылки возникновения языковедческих знаний •	8
Египетское письмо	9
2. Дидактическое и филологическое языкознание	10
Обучение египетскому письму (грамоте)	10
Обучение другим аспектам родного языка	10
Обучение иностранным языкам	10
Развитие языковедческих знаний	11
<b>II. Шумеро-аккадское языкознание</b>	<b>12</b>
1. Общие сведения	12
Предпосылки возникновения языковедческих знаний	12
Система письма	12
2. Дидактическое и филологическое языкознание	14
Графистика	14
Лексикография	14
Филологическо-грамматическое толкование текстов	15
Библиотечное дело	16
<b>III. Китайское языкознание</b>	<b>16</b>
1. Общие сведения	16
Предпосылки возникновения языковедческих знаний	16
Китайское письмо	17
2. Иероглифистико-филологическое языкознание	17
Китайская иероглифистика	17
Лексикография	18

<b>3. Философское языкознание</b>	<b>19</b>
Общие сведения	19
Языковые вопросы в монистической философии	19
<b>IV. Индийское языкознание</b>	<b>21</b>
1. Общие сведения	21
Значение индийского языкознания	21
Веды и их роль в возникновении индийского языко- знания	21
2. Филологическое языкознание	22
Вопросы языка в ведантах	22
Панини	23
Толкователи Панини—Катьяяна, Патанджали, Бхар- трхари	25
Общая характеристика индийской грамматической системы	25
Лексикография	30
Вопросы стилистики	30
3. Философское языкознание	30
Вопросы языка в индийских философских системах	30
Джайнизм	32
Философия ньяя	33
Философия санкхья	35
Философия миманса	35
<b>V. Античное (греко-римское) языкознание</b>	<b>36</b>
1. Философское языкознание	36
а) Споры о φύσει и θέσει в древней Греции	36
Предпосылки возникновения языковедческих учений и их первоначальный характер	36
Споры о φύσει и θέσει	38
Гераклит	39
Школа элеатов (элейская школа)	39
Демокрит	40
Платон и его диалог „Кратил“	40
Аристотель	41
Стоики	41
Скептики	42
Эпикурейцы	42
Попытки обобщения и классификации	43
б) Споры аналогистов и аномалистов в эпоху эллинизма	44
Сущность спора	44
Значение спора для формирования греческой грам- матики	44
Попытки примирения спорящих сторон	45
в. Теории происхождения языка (имен) в древней Греции	45
Зачатки теории междометий	45

Зачатки теории звукоподражания	46
Зачатки теории социального происхождения языка	46
Вопрос о приобретенности или прирожденности языка	47
г. Вопросы философского языкоznания в древнем Риме	47
Греческое влияние	47
Отголоски споров о φωνή и θέση, аналогии и аномалии в древнем Риме	48
Вопрос о происхождении языка у Лукреция Кара	49
д. Патристико-теологическое языкоznание	50
Вопрос о взаимоотношении имен и вещей. Августин	50
Вопрос о происхождении языка	51
е. Этимологические учения	52
Условия возникновения этимологических учений	52
Недостатки античной этимологии	52
Сторонники φωνή и θέση и этимология	53
Попытки этимологии у греческих философов	53
Особенности этимологического анализа у древних греков	54
Этимология в древнем Риме	55
Принципы античной этимологии	55
<b>2. Вопросы языка и стиля в риторике („риторическом искусстве“)</b>	<b>57</b>
Обучение родному языку и „риторическое искусство“	57
Роль элеатов и софистов в развитии риторики и стилистики	57
Пособия Исократа и Анаксимена по риторике	58
Аристотель	59
Теофраст	61
Вопросы риторики и стилистики в эпоху эллинизма	62
Вопросы риторики и стилистики в древнем Риме	66
<b>3. Грамматика („грамматическое искусство“)</b>	<b>68</b>
а. Грамматические вопросы в греческом дидактическом и философском языкоznаниях	68
Греческая грамматика и предпосылки ее возникновения	68
Обучение грамоте и „учение о буквах“	69
Демокрит	71
Платон	72
Аристотель	72
Стоики	76
б. Филологическая грамматика в эпоху эллинизма	79
Филологическая работа и ее роль в формировании грамматики	79
Пергамская иalexандрийская грамматические школы	90

<b>Дионисий Фракийский и его „Грамматическое искусство“</b>	81
<b>Последующие грамматисты в эпоху эллинизма</b>	86
<b>Аполлоний Дискол и его работа „О синтаксисе“</b>	87
<b>в. „Грамматическое искусство“ в древнем Риме</b>	90
<b>Первые сведения по грамматике у римлян</b>	90
<b>Варрон</b>	91
<b>Реммий Палемон. Применение системы Александрийской грамматики к латинскому языку</b>	91
<b>Последующие грамматисты латинского языка. Донат и Присциан</b>	91
<b>Особенности латинской грамматики</b>	93
<b>Попытки критики античной грамматической теории. Секст Эмпирик</b>	97
<b>4. Разработка диалектологических вопросов</b>	98
<b>Греческие диалекты и первые диалектологические понятия у древних греков</b>	98
<b>Диалектологические исследования</b>	98
<b>Литература по первому подпериоду</b>	100

## ВТОРОЙ ПОДПЕРИОД (Средние века)

### *Априористический догматизм*

<b>Вводные замечания</b>	103
<b>Предпосылки и условия образования ограниченных сфер языковедческого влияния</b>	103
<b>Этапы развития языковедческих знаний</b>	108
<b>Характер и типы языковедческой работы</b>	110
<b>I. Сфера латинского влияния</b>	111
<b>1. Дидактическо-филологическое языкознание</b>	111
<b>Обучение языку</b>	111
<b>Средневековая грамматика</b>	113
<b>Лексикография</b>	116
<b>2. Схоластическо-философское языкознание</b>	117
<b>Общие сведения</b>	117
<b>Споры номиналистов, реалистов и концептуалистов</b>	119
<b>Философские „спекулятивные“ грамматики</b>	120
<b>Вопрос об искусственном языке</b>	123
<b>3. Генетическое естественно-историческое языкознание</b>	123
<b>Языковедческая деятельность Данте</b>	123
<b>Роджер Бекон</b>	125



<b>Еврейская грамматика и лексикография</b>	<b>150</b>
6. Изучение тюркских, монгольского, персидского языков	152
Общие сведения	152
Махмуд аль-Кашгари и его роль в тюркологии	153
Изучение монгольского языка	154
<b>IV. Сфера индийского влияния</b>	<b>154</b>
1. Изучение индийских языков ( <i>индийское языкознание</i> )	154
Грамматика и лексикография	154
2. Изучение неиндийских языков	157
Изучение дравидских языков	157
<b>V. Сфера китайского влияния</b>	<b>157</b>
1. Китайское языкознание	157
Вопросы фонетики	157
Вопросы лексикологии и семантики, грамматики и стилистики	158
2. Изучение некитайских языков	159
Японское языкознание	159
Корейское языкознание	163
Литература по второму подпериоду	164

**ТРЕТИЙ ПОДПЕРИОД**  
**(Эпоха Возрождения и XVII—XVIII вв.)**

<b>Эмпирико-технический и рационалистический универсализм</b>	<b>.</b>
<b>Вводные замечания</b>	<b>167</b>
Предпосылки и условия ликвидации языковедческой ограниченности	167
Этапы развития языковедческих знаний	170
Характер и типы языковедческой работы	170
<b>VI. Филологическое нормативно-описательное языкознание</b>	<b>176</b>
1. <i>«Палеофиология»</i>	176
а. Классическая филология	176
Изучение греческого языка	176
Изучение латинского языка	177
б. Славянская филология	179
Изучение старославянского языка	179
2. <i>Неофилология</i>	182
Латинотипные и нелатинотипные грамматики	182
а) Романская филология	182
Первая грамматика, словарь и правила орфографии испанского языка, составленные Антонием де Лебрихом	182
Первые итальянские грамматисты—Фортунато, Бембо, Буоматтеи	183

Первые грамматисты французского языка—Пальсграв, Жак Дюбуа, Мегре, Рамус	184
Вопросы письменной нормализации романских языков. Лексикография	185
6) Германская филология .	186
Первые грамматисты, лексикографы и теоретики немецкого языка—Клаюс, Шоттель, Готтшед, Аделунг	186
Грамматисты, лексикографы и теоретики английского языка в XVI—XVIII вв.—Гилял, Уоллис, Джонсон и др.	188
Первая грамматика и первый словарь голландского языка	189
Свидетельство о крымском готском языке	189
Грамматисты, лексикографы и теоретики датского языка в XVI—XVIII вв.	189
Грамматики и словари шведского языка в XVII—XVIII вв.	190
г) Неославянская филология	190
Грамматики и словари польского языка XVI—XVIII вв.	190
Грамматики и словари чешского языка	191
Грамматики, словари и работы по орфографии русского языка в XVII—XVIII вв. „Российская грамматика“ Ломоносова. „Словарь Академии Российской“	191
д) Изучение других языков Европы	192
Индоевропейские языки	192
Неиндоевропейские языки	193
3. Восточная и „колониальная“ филология	194
а) Семитская филология	194
б) Арmenистика	195
в) Индоиранистика	197
г) Кигаеведение	198
д) Японоведение	199
е) Изучение других восточных языков	199
ж) Американистика и африканстика, изучение океанийских языков	200
<b>II. Этимологизирующее-классифицирующее языкознание</b>	201
1. Этимологические учения .	201
2. Еврейская гипотеза и учение о „гармонии языков“	202
Постановка вопроса о еврейском происхождении языков в XVI в.	202
Попытки доказать положение о еврейском происхождении языков в XVII—XVIII вв.	204

<b>3. Ранние попытки сравнительно-исторического изучения родственных языков</b>	205
а) Индоевропейские языки	205
Романские языки	205
Германские языки	207
Славянские языки	208
Вопрос об общих элементах армянского и других языков	209
Постановка вопроса о родстве санскрита с некоторыми европейским языками	209
б) Неиндоевропейские языки	211
Вопрос о родстве семитских языков. И. Лудольф	211
Вопрос о родственных связях „урало-алтайских“ языков. Ф. Страненберг. С. Дьярмати	211
<b>4. Работы по собиранию и сопоставлению языковых фактов</b>	212
Собирание и сопоставление фактов разных языков	212
Многоязычные словари П. С. Палласа. Рецензия Х. Ю. Клауса	213
<b>5. Попытки общей географико-генеалогической классификации языков</b>	215
Попытки классификации языков Европы	215
Лейбниц и его идея восстановления „праязыка“	217
Работа Эрваса по общей классификации языков	218
<b>III. Логико-философское языкознание</b>	219
<b>1. Философско-глоттологические учения</b>	219
а) Эмпирико-материалистические учения XVII в.	219
Вводные замечания	219
Френсис Бэкон	220
Гоббс	221
Джон Локк	221
б) Рационалистико-идеалистические учения в XVII в.	225
Вводные замечания	225
Вопросы языка в картезианской философии. Декарт	226
Лейбниц	227
в) Механистические учения XVII в.	230
Вводные замечания	230
Кондильяк	230
Де-Бросс	234
Попытки создания „общего (философского) языка“	236
г) Историко-антропологические учения в XVIII в.	236
Вводные замечания	236
Жан Жак Руссо	238
Мопертюи	241
Адам Смит	242
Монбоддо .	243
Гердер	244

Тидеман	248
Тетенс	248
Зюльцер	249
Аделунг	249
Дж. Вико	250
<b>2. Универсально-философские грамматики</b>	<b>251</b>
Вводные замечания	251
Грамматика Пор-Рояля	252
Универсально-философские и рационально-логические грамматики в XVIII в. Жирар, Бозе, Гаррис, Пристли, Горн Тук	254
<b>Литература по третьему подпериоду</b>	<b>259</b>

## Б

### ПЕРИОД ФОРМИРОВАНИЯ СРАВНИТЕЛЬНО-ИСТОРИЧЕСКОГО ЯЗЫКОЗНАНИЯ

**(Новое или „классическое“ языкознание—XIX век)**

#### ПЕРВЫЙ ПОДПЕРИОД (I половина XIX века)

##### *Генетический компаративизм*

<b>Вводные замечания</b>	<b>265</b>
Языковедческие концепции подпериода, общие предпосылки и условия их формирования	265
Этапы развития языковедческих учений	269
Характер и виды языковедческой работы	270
Работы по общей классификации языков в начале XIX в. Аделунг и Фатер	274
Изучение санскрита. Морфологическая классификация языков. Ф. и А. Шлегели	275
Статически-аналитическое языкознание в I половине XIX в. Логическая грамматика	278
А. Ф. Бернарди и его общеязыковедческое и грамматическое учение	281
Грамматическое учение К. Беккера	283
<b>I. Заложение основ сравнительно-исторического языкознания.</b>	
Языковедческие направления и концепции	287
<b>1. Механистический натурализм</b>	
Вводные замечания	287
Франц Бопп	289
<b>2. Культурно-историческое направление</b>	
	301

Вводные замечания	301
Расмус Раск	303
Яков Гримм	313
Вильгельм фон-Гумбольдт	325
Критика концепции Гумбольдта Чернышевским	349
<b>3. Филологизм</b>	350
Александр Христофорович Востоков	350
<b>II. Отдельные области языковедческой работы</b>	353
<b>1. Общее языкознание и философия языка</b>	353
Учения о развитии языка. Я. Н. Бредсдорф, И. Н. Мадвиг, Ф. Вюльнер	353
Фонетика	356
<b>2. Индоевропейское языкознание</b>	356
а) Изучение общих вопросов	356
Вопросы этимологии индоевропейских языков. А. Ф. Потт	356
Заложение основ лингвистической палеонтологии. Адальберт Кун	358
Изучение индоевропейских фонетических чередований и ударения	359
б) Изучение отдельных языков и групп	360
Индо-иранские языки. Расшифровка древнеперсидских клинообразных надписей	360
Армянский язык.	362
Классические языки (древнегреческий и латинский)	362
Романские языки. Ф. Диц	363
Германские языки	365
Балтийско-славянские языки	365
Албанский язык.	366
<b>3. Изучение неиндоевропейских языков</b>	367
Хамито-семитские языки. Расшифровка египетских иеро- глифов и ассирийской клинописи. Зарождение египтологии и ассириологии	367
„Урало-алтайские“ языки. Вопрос о родстве финно- угорских и самоедских языков	369
Другие языки	369
<b>Литература по первому подпериоду</b>	371

## ВТОРОЙ ПОДПЕРИОД (III четверть XIX в.)

### *Реконструктивный компаративизм*

<b>Вводные замечания</b>	374
Языковедческие направления подпериода, предпосыл- ки и условия их формирования	374

Этапы развития языковедческих учений	377
Характер и виды языковедческой работы	378
<b>I. Языковедческие направления и концепции</b>	378
1. <i>Натурализм и биологизм</i>	378
Вводные замечания	378
а) Биологический натурализм	381
Август Шлейхер	381
б) Биологизм	400
Макс Мюллер	400
2. <i>Психологизм</i>	405
Вводные замечания	405
Гейман Штейнталь	406
Александр Афанасьевич Потебня	419
3. <i>Культурно-эволюционистическое направление</i>	427
Уильям Дуайт Уитни	427
Вильгельм Шерер	430
Федор Иванович Буслаев	433
Арсен Айтнян	433
Погос Овнанян	436
<b>II. Отдельные области языковедческой работы</b>	438
1. <i>Общее языкознание</i>	438
Фонетика. Брюкке	438
2. <i>Индоевропейское языкознание</i>	439
а) Изучение общих вопросов	439
Лингвистическая палеонтология	439
Сравнительная фонетика. Закон Грассмана	440
б) Изучение отдельных языков и групп	441
Индо-иранские языки	441
Греческий и латинский языки. Г. Курциус	443
Германские языки	447
Кельтские языки	447
Армянский язык	448
Балтийско-славянские языки	450
3. <i>Изучение неиндоевропейских языков</i>	451
Хамито-семитские языки	451
„Урало-алтайские“ языки	451
Другие языки	452
<i>.Литература по второму подпериоду</i>	453

**ТРЕТИЙ ПОДПЕРИОД**  
(Последняя четверть XIX в.)

*Номотетический эволюционизм*

<i>Вводные замечания</i>	455
Господствующее направление подпериода, предпосылки и условия его формирования	455
	<b>455</b>

Этапы развития языковедческих знаний	459
Характер и виды языковедческой работы	459
<b>I. Языковедческие направления и концепции</b>	460
1. Психофизиологизм •	460
а) Младограмматики и их критики	460
а) Младограмматики (неограмматизм)	460
Вводные замечания	460
Роль А. Лескина, Э. Зиверса, К. Вернера, Г. Асколи в формировании младограмматического направления. Закон Вернера . . .	461
Предисловие к „Морфологическим исследованиям“ Г. Остгофа и К. Бругмана	466
Карл Бругман	470
Герман Остгоф	477
Бертольд Дельбрюк	478
Герман Пауль	482
Общие выводы	495
б) Критики младограмматиков	497
Вводные замечания	497
Г. Курциус	501
Фр. Мистели, Л. Тоблер	502
Г. И. Асколи	502
Иоганн Шмидт и его „теория волн“	504
Гуго Шухардт	507
6) Московская лингвистическая школа	516
Филипп Федорович Фортунатов	516
в) Казанская лингвистическая школа	525
И. А. Бодуэн-де-Куртенэ	525
Н. В. Крущевский	537
В. А. Богородицкий	540
2. Этнопсихологизм	542
Вильгельм Вундт	542
<b>II. Отдельные области языковедческой работы</b>	555
1. Общее языкознание	555
Попытка обобщения достижений и классификации проблем общего языкознания. Г. фон дер Габеленц	555
Теории происхождения языка. Л. Нуаре	556
Проблема субстрата	556
Фонетика. Экспериментальная фонетика	558
Синтаксис. И. Рис	559
Семантика. М. Бреаль, М. М. Покровский	562
Диалектология. Начало работы над немецким и французским диалектологическими атласами. Г. Вен-	562

кер и Ж. Жильерон. „Францкий диалект“ Ф. Энгельса	564
Работы по общей классификации языков. Фр. Мюллер. Фр. Мистели	570
<b>2. Индоевропейское языкознание</b>	571
а) Изучение общих вопросов	571
Вопросы этимологии, фонетики и морфологии индоевропейских языков в работах А. Фика и С. Тервишяна	571
Лингвистическая палеонтология и проблемы прародины и культуры индоевропейцев. Исследования О. Шрадера, И. Шмидта и др.	573
Принцип адаптации А. Людвига	575
Вопросы изучения индоевропейского ударения. Я. Вакернагель, Ф. Ф. Фортунатов, А. Бецценбергер, Ф. Ганссен. „Закон Михельса“	576
б) Изучение отдельных языков и групп	577
Пересмотр принципов сравнительных и исторических грамматик отдельных языков и групп	577
Индо-иранские языки	578
Армянский язык	579
Албанский язык	581
Балтийско-славянские языки	581
Фракийский язык	582
Греческий язык	583
Италийские языки	583
Кельтские языки	585
Германские языки	585
<b>3. Изучение неиндоевропейских языков</b>	586
Семито-хамитские языки	586
„Урало-алтайские“ языки	587
Китайско-тибетские и „австроазиатские“ языки	587
Другие языки	589
Литература по третьему подпериоду	591
<i>Список сокращений</i>	593
<i>Указатель имен</i>	597
<i>Список языков и языковых групп</i>	613

---

## II ТОМ

### В

#### ПЕРИОД ФОРМИРОВАНИЯ СИСТЕМНО- АНАЛИТИЧЕСКОГО ЯЗЫКОЗНАНИЯ

(Новейшее языкознание—XX век)

##### Первый раздел

###### Досоветское и зарубежное языкознание

ПЕРВЫЙ ПОДПЕРИОД  
(1900—1920-ые годы)

Стр.

###### *Функционалистический синхронизм*

<i>Вводные замечания</i>	7
Языковедческие направления подпериода, предис- сылки и условия их формирования	7
Этапы развития языковедческих учений	19
<i>I. Языковедческие направления и концепции</i>	20
1. <i>Психологизм и психофизиологизм</i>	20
Общие сведения	20
Антон Марти	23
Я. Ван-Гиннекен	27
А. А. Шахматов	31
2. <i>Логицизм</i>	34
Общие сведения	34
О. Есперсен	38
3. <i>Эстетизм</i>	48
Общие сведения. Бенедетто Кроче	48

а) Идеалистическая неофилология	50
Карл Фослер	50
Лео Шпицер	61
б) Неолингвистика (пространственная или ареальная лингвистика)	62
Общие сведения	62
М. Бартоли, Дж. Бертони, Дж. Видосси, Дж. Бонфанте, В. Пизани	
4. Социологизм	75
Общие сведения	75
а) Женевская школа	77
Фердинанд де-Соссюр	77
Шарль Балли	93
Альбер Сешеэ	99
б) Парижская школа	108
Антуан Мейе	108
Жак Вандриес	118
Морис Граммон	123
5. Культурно-этнологическое направление и „этнопсихологизм“	125
Общие сведения	125
Э. Кассирер	127
Ф. Маутнер	131
Э. Сепир	131
В. Шмидт и его учение о „культурных кругах“	137
6. Функционализм	141
а) Швейцарский функционализм	141
Общие сведения	141
Анри Фрей	143
б) Немецкий функционализм	144
Общие сведения	144
В. Горн	149
7. Формализм (морфологизм)	154
Общие сведения	154
А. М. Пешковский	157
<i>II. Отдельные области языковедческой работы</i>	161.
1. Общее языкознание	161
Вводные замечания	161
Лингвистическая география (диалектография). Жильерон, Вреде	163
Проблема „слов и вещей“	167
Семантика	169
Работы по общей классификации языков	171
2. Индоевропейское языкознание	172
Вводные замечания	172

<b>а) Общие проблемы индоевропеистики</b>	<b>172</b>
Постановка генетических проблем. Проблема архаичных слоев индоевропейской языковой структуры. Герман Гирт	172
Проблема индоевропейско-семитского родства. „Ларингальная гипотеза“. Г. Меллер, А. Кюни	178
<b>Синтаксис</b>	<b>179</b>
<b>б) Изучение отдельных языков и групп</b>	<b>180</b>
Открытие „тохарских“ языков	180
Открытие и расшифровка хеттских текстов. Б. Гроздный	181
Индо-иранские языки	182
Балтийско-славянские языки	183
Армянский язык	186
Фракийский и фригийский языки	187
Иллирийские языки	187
Албанский язык	187
Греческий язык	187
Италийские языки	189
Кельтские языки	191
Германские языки	192
<b>3. Изучение неиндоевропейских языков</b>	<b>194</b>
Семито-хамитские языки	194
„Урало-алтайские“ языки, японский, корейский	195
Кавказские языки. Баскский язык	195
Китайско-тибетские, дравидские языки и языки монголов	196
Американские, австралийско-океанийские и африканские языки	197
<b>Литература по первому подпериоду</b>	<b>199</b>
 <b>ВТОРОЙ ПОДПЕРИОД</b>	
(С конца 1920-ых годов по настоящее время)	
<i>Структурный делимитационизм</i>	
<b>Вводные замечания</b>	<b>203</b>
Предпосылки и условия формирования языковедческих направлений подпериода	203
Этапы развития языковедческих учений.	212
<b>I. Языковедческие направления и концепции</b>	<b>212</b>
<b>1. Структурализм (эндоструктуралистика или „микролингвистика“—иммацентное языкознание)</b>	<b>212</b>
Общие сведения	212
а) Функциональный структурализм пражской лингвистической школы	214

Формирование Пражского лингвистического кружка	214
Тезисы Пражского лингвистического кружка	216
В. Матезиус	220
Н. С. Трубецкой	222
С. Карцевский	234
Р. Якобсон	236
В. Скаличка	242
<b>б) Копенгагенская структуральная универсальная (всеобщая) грамматика и глоссематика</b>	243
Копенгагенский лингвистический кружок	243
В. Брендаль	244
Л. Ельмслев	253
<b>в) Американская аменталистическая описательная (дескриптивная) лингвистика</b>	269
Формирование американской дескриптивной лингвистики	269
Менталисты и аменталисты (механицисты) в американской лингвистике	271
<b>а) Механицизм (физикализм)</b>	272
Л. Блумфильд	272
<b>б) Формально-аналитическое направление</b>	284
Формирование формально-аналитического направления	284
З. Харрис	292
Ч. Хокет	297
Дж. Трейджер, Б. Блох, Г. Смит	300
Общие и различительные черты основных структуралистических направлений	309
<i>Межевые языковедческие дисциплины (экзоструктуралистика или „макролингвистика“)</i>	311
Вводные замечания	311
<b>а) Технолингвистика</b>	313
Кибернетика, теория информации и языкоизмание. Проблема машинного перевода	313
<b>б) Психология языка</b>	318
Вводные замечания	318
Рационалистический психоаксиоматизм К. Бюлера	319
Теория информации и психолингвистические проблемы. Американская психолингвистика	330
<b>в) Этнолингвистика</b>	343
Вводные замечания	343
<b>б) Европейская (немецкая) неогумбольдтианская этнолингвистика</b>	344
Общие сведения	344
И. Л. Вейсгербер	347

<b>В. Порциг</b>	<b>352</b>
И. Трир и его учение о „семантическом поле“	354
<b>в) Американская этнолингвистика (этнографическая лингвистика)</b>	<b>357</b>
Общие сведения	357
Б. Уорф	358
<b>II. Отдельные области языковедческой работы</b>	<b>359</b>
<b>1. Общее языкознание</b>	<b>359</b>
Вводные замечания	359
Проблема субстрата	361
Фонетика и фонология	362
Лексикология и семантика	363
Синтаксис	369
Стилистика	371
Работы по общей классификации языков	372
<b>2. Индоевропейское языкознание</b>	<b>372</b>
Вводные замечания	372
Общие проблемы	374
Лингвистическая палеонтология	374
Проблемы хронологии и территориального распределения индоевропейской языковой общности. В. Георгиев	375
Проблема архаичных слоев индоевропейской языковой структуры. Структуральная хронология. Ю. Курлович, Э. Бенвенист, Ф. Шпехт	378
<b>6) Изучение отдельных языков и групп</b>	<b>389</b>
Хеттская проблема	389
Тохарская проблема	390
Фракийский и фригийский языки. Фракийская проблема. Армянский язык	391
Индо-иранские языки	392
Балтийско-славянские языки	393
Греческий язык	395
Албанский язык. Иллирийские языки	396
Италийские языки	397
Кельтские языки	398
Германские языки	398
<b>3. Изучение неиндоевропейских языков</b>	<b>400</b>
Семито-хамитские языки	400
„Уральско-алтайские“ языки, японский, корейский	400
Кавказские языки	401
Древние языки Передней Азии	402
Китайско-тибетские, дравидские языки, бурушаки (буришский или вершинский язык)	402
Литература по второму подпериоду	403

## Второй раздел

### *Советское языкоzнание*

<b>Вводные замечания</b>	<b>407</b>
Предпосылки и условия формирования советского языкоzнания. Маркс, Энгельс, Ленин и вопросы языка	407
Основные этапы развития советского языкоzнания	418
Характер и виды языковедческой работы. Практические и теоретические задачи советского языкоzнания	418
Состояние языкоzнания в первые годы существования советского строя	424
<b>Этап формирования и господства „нового учения о языке“ (1924—1950 гг.)</b>	
<b>I. Языковедческие концепции. Различные попытки диалектико-материалистического толкования языковых явлений</b>	428
1. Вульгарно-материалистический социологизм („новое учение о языке“)	428
Предпосылки и условия формирования „нового учения о языке“	428
Н. Я. Марр	436
Общие вводные сведения о деятельности последователей Н. Я. Марра	456
Основные вопросы стадиально-синтаксической типологии и грамматики в работах И. И. Мещанинова, С. Д. Кацнельсона, А. П. Рифтина	460
2. Другие концепции	468
Общие сведения	468
Л. В. Щерба	473
Е. Д. Поливанов	476
<b>II. Отдельные области языковедческой работы</b>	482
1. Общее языкоzнание	482
Вводные замечания	482
Учение о фонеме	483
Учение о синтагме	486
2. Изучение индоевропейских языков	488
Вводные замечания	488
Славянские языки	490
Романо-германские языки	494
Классические языки	494
Индо-иранские языки	495
Армянский язык	496

<b>3. Изучение неиндоевропейских языков</b>	<b>497</b>
Финно-угорско-самоедские языки	497
„Алтайские“ (туркские, монгольские, тунгусско-манчжурские) языки	497
Кавказские языки	500
Палеоазиатские языки	501
Китайско-тибетские языки. Японский язык. Корейский язык	502
Семито-хамитские, африканские, австралийско-океанийские языки	502
Языки Передней Азии	503
 <i>Современный этап</i> (С 1950 г. по настоящее время)	
<b>I. Преодоление вульгарно-материалистического социологизма и внедрение последовательной марксистской диалектико-материалистической языковедческой концепции</b>	<b>503</b>
Вводные замечания. Дискуссия на страницах „Правды“ по вопросам языкоznания. Положение советского языкоznания после дискуссии	503
В. В. Виноградов	522
С. И. Смирницкий	526
А. С. Чикобава	531
<b>II. Отдельные области языковедческой работы</b>	<b>533</b>
1. Общее языкоzнание	533
Вводные замечания	533
Прикладная лингвистика. Вопросы машинного перевода	534
Фонетика и фонология	534
2. Изучение индоевропейских языков	535
Вводные замечания	535
Славянские языки	536
Другие индоевропейские языки	537
3. Изучение неиндоевропейских языков	539
Финно-угорско-самоедские, тюркские, монгольские и тунгусско-манчжурские языки	539
Кавказские языки	540
Палеоазиатские языки	541
Китайско-тибетские языки. Японский язык. Корейский язык	541
Семито-хамитские, африканские, австралийско-океанийские, американские языки	541
Языки Передней Азии	542
Литература по советскому языкоzнанию	543
Список сокращений	549
Список личных имен	552
Список языков и языковых групп	567

ՆԿԱՏՎԱԾ ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

<i>հջ</i>	<i>Տող</i>	<i>Տպած է</i>	<i>Պետք է լինի</i>
26	գ. 10—11	Qemütstätigkeiten	Gemütstätigkeiten
27	ն. 5	բնագիրը	հրատարակություններ
39	ն. 5	Wiev	View
40	ն. 3	Über	Über
	ն. 7	ffered	offered
50	ն. 2	Schöpfung	Schöpfung
79	գ. 18	Hautas	Hautes
82	գ. 6 և ն. 16—18	խռովային	խռովական
89	ն. 18	ստուգաբանության վրա	ստուգաբանության վրա
90	ն. 14—15	գոյության հարցը	գոյությունը
108	գ. 17 և 18	լեզվաբանության	լեզվաբանություն
181	ն. 19	պրոտոթաթերեկն	պրոտոթեթերեկն
182	ն. 2	մի	մեկ
184	գ. 19	точъ	тогъ
	ն. 16	Litanische	Litauische
	ն. 14	Buividre	Buividze
185	ն. 19—18	սլովիներեն	սլովիներեն
186	ն. 12	Gramatik... Sprache	Grammatik... Sprache
	ն. 8	Kecherches	Recherches
	ն. 3	լ'ancien	l'ancien arménen
187	գ. 18	բառային	բառային
188	ն. 11	parfeit	parfait
	ն. 8	Prelluritz	Prellwitz
189	ն. 2—1	E. Löfstedt, Sun-tactica	E. Löfstedt, Syntactic
190	գ. 19	Kaiten	Kelten
192	ն. 20	Uanual	Manuel
	ն. 17	grammar, Historical	Grammar, Historical
202	ն. 2	Won	Von
225	գ. 7	SpTechakt	Sprechakt
233	ն. 3	ուներ	չուներ
324	գ. 7	zelchenhafte	zeichenhafte
	գ. 13	Gebilden	Gebilde
335	գ. 8	ընդհանրական	ընդհանուրական
402	գ. 1	չին փորբասիական (չա-սիանիկ) լեզուներ	Առաջավոր Ասիայի չին լեզուներ
403	ն. 4	Фринге	Фрингс
421	ն. 2	ն. 8ա. Մասի	Ն. 8ա. Մասի
474	գ. 19	Շշերբայի	Շշերբայի
498	ն. 11	1928	1928
542	գ. 16	Փոքր Ասիայի և Միջ-գետի	Առաջավոր Ասիայի
552, 2-րդ	ն. 5	Բալլի Ծ.	Բալլի Ծ.
սյունակ			

ԳԵՎՈՐՔ ԲԵԳԼԱՐԻ  
ՀԱՅՈՒԹԵՍՆ

Լեզվաբանության պատմություն  
Համար II

Հրամ. իմբողիք՝  
Արտ. Հ. ՊԱՊՈՅԱՆ  
Տեխն. իմբողիք՝  
Հ. Ա. ՀՈՎԱՍԱԿՓԵԱՆ  
Վերսուազագ սբրուգիէ՝  
Հ. Ա. ՎԱՐԴԱՅԱՆ

ԽՄԲ.-Հրամ. իմբողիք որոշում N 3, 8/V-1969 թ.  
Հանձնված է բառագրության 3/III-1961 թ.  
Սահմանված է ոպոգրության 12/IV-1962 թ.  
ՎՃ 08047. Գումար 275. Տիքոֆ 2000.  
Բաւզ՝ 60×92<sup>1</sup>/<sub>16</sub>. Տպագր. 37,75 ժամանուլ.  
Հաշվ.-հրամ. 33,6 ժամանուլ.  
Գինը 2 կ. 11 կ.

Երեսնի Գետական համալսարանի  
Հրամանակչության աղաքան,  
Երևան, Աբովյան փողոց N 104.